

# ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ֆուլատրված է ՍՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մեթոդական կողմից որպես դասագիրք համալսարանների պատմության ֆակուլտետների ուսանողների համար

Խմբագրությամբ Վ. Ի. ԱՎԴԻԵՎԻ, Ա. Գ. ԲՈՆԵՉՉԱՆԻՆԻ և

**Ն. Ն. ՊԻԿՈՒՍԻ**

Ք ա ր գ մ ա ն ի շ Պ. Մ. Հարությունյան  
 Ք ա ր գ մ. խ մ ր ա գ ի ր՝ պատմ. գիտ. թեկն. Ս. Մ. Գրգաշարյան  
 Ք ա ր գ մ. գ ր ա խ ո ս՝ պատմ. գիտ. թեկն. Վ. Մ. Վարդանյան

Հ 590 Հին Հունաստանի պատմություն: Դասագիրք բուհերի  
 պատմ. մասնագիտ. համար/Երևանի պետ. համալս.,  
 Վ. Ի. Ավդիևի խմբ. (Քարգմ.՝ Գ. Մ. Հարությունյան).—  
 Եր.: Երևանի համալս. հրատ., 1982.— 584 էջ, 67 նկ.  
 Վերնախորագր.՝ Երևանի պետ. համալս.

Դասագիրքը գրված է ուսումնական դասընթացին համապատաս-  
 խան. նրանում շարադրված է Հունաստանի պատմությունը՝ սկսած  
 կրետե-միկենյան շրջանից մինչև հելլենիզմի շրջանը:

0504010000—42  
 Հ  $\frac{0504010000-42}{704 (02)-82}$  12—82

ԳՄԴ 63.3(0)3y72  
 9 (M) 03

## ИСТОРИЯ ДРЕВНЕЙ ГРЕЦИИ

Под редакцией В. И. Авдеева, А. Г. Бокшанина и Н. Н. Пикуса

У ч е б н и к .

(Перевод с русского. На армянском языке)

Издательство Ереванского университета

Ереван—1982

© Издательство «Высшая школа», 1972

© Երևանի համալսարանի հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1982

## Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հին հունական հասարակության պատմությունը տոհմային հարաբերությունների քայքայման և առանձնապես ցայտուն արտահայտված, սովորաբար անտիկ կոչվող սալըկատիրական հարաբերությունների զարգացման պատմությունն է: Այդ պատմության տեղն ու նշանակությունը, որպես համաշխարհային պատմական պրոցեսի անհրաժեշտ և կարևոր փուլ, բնութագրել է Ֆ. էնգելսը. «Միայն ստրկությունն էր, որ ավելի մեծ շահով հնարավոր դարձրեց աշխատանքի բաժանումը հողագործության ու արդյունաբերության միջև և դրանով պայմաններ ստեղծեց հին աշխարհի կուլտուրայի՝ հունական կուլտուրայի ծաղկման համար: Առանց ստրկության չէր լինի հունական պետությունը, հունական արվեստն ու գիտությունը. առանց ստրկության չէր լինի նաև Հռոմեական կայսրությունը: Իսկ առանց Հունաստանի ու Հռոմի դրած հիմքի՝ չէր լինի նաև ժամանակակից Եվրոպան: Մենք երբեք չպիտի մոռանանք, որ մեր ամբողջ տնտեսական, քաղաքական ու մտավոր զարգացման նախադրյալն այն հասարակարգն է, որի ժամանակ ստրկությունը նույնքան անհրաժեշտ էր, որքան և ընդհանուր ճանաչում գտած: Այս իմաստով մենք իրավունք ունենք ասելու՝ առանց անտիկ ստրկության չէր լինի և ժամանակակից սոցիալիզմը»<sup>1</sup>:

Հին Հունաստանի պատմությունը կարելի է բաժանել հինգ շրջափուլերի՝

1. էգեյան կամ Կրետե-միկենյան (մ. թ. ա. III—II հազարամյակներ).

<sup>1</sup> Ֆրիդրիխ էնգելս, Անտի-Գյուրինգ, Երևան, 1967, էջ 240—241:

2. Մ. թ. ա. XI—IX դդ. Հունաստանը (մինչպոլիսային շրջան)։

3. Արխաիկ (մ. թ. ա. VIII—VI դդ.)։

4. Դասական (մ. թ. ա. V—IV դդ.)։

5. Հելլենիստական (մ. թ. ա. IV դ. երկրորդ կեսից մ. թ. ա. I դ. կեսը)։

Քաղկանյան թերակղզու հարավը, Կրետե կղզին ու էգեյան ծովի բազմաթիվ կղզիները, ինչպես և նրա ասիական ծովափի մի մասը, ալսինքն՝ հույների հնագույն բնակատեղիները, կազմում էին հին արևելյան ստրկատիրական աշխարհի արևմտյան մասը։ Այդ աշխարհին հատուկ սոցիալական առանձնահատկությունները բավականին հստակորեն դրսևորվում են էգեյան կամ Կրետե-միկենյան ժամանակաշրջանում։ Այդ ժամանակ հնագույն Հունաստանի մայրցամաքային և կղզային տարածքներում տեղի էր ունենում տոհմային հարաբերությունների քայքայման ու դեռևս նախնադարյան կարգերի շատ մնացուկները պահպանող վաղ դասակարգային հասարակության գոյացման պրոցեսը։ Մի շարք շրջաններում ծագեցին և զարգացան ստրկատիրական փոքր պետություններ։ Այդ պետությունները տնտեսական և մշակութային կապեր ունեին իրենց ժամանակակից Եգիպտոսի, Ասորիքի\*, փոքրասիական երկրների հետ՝ արևելքում, Սիկիլիայի\*\*, Ապենինյան, անգամ Պիրենեյան թերակղզիների հարավի հետ՝ արևմուտքում, և իրենց հյուսիսային և հարավային հարևանների հետ։

Մեր թվարկությունից առաջ II հազարամյակի վերջում էգեյան ավազանի գրեթե բոլոր պետությունները ջախջախվեցին Քաղկանյան թերակղզու հյուսիսային շրջաններից հարավ տեղափոխված և դեռ տոհմատիրական կարգերով ապրող իրենց ազգակից հին հունական ցեղերի կողմից ու դադարեցին գոյություն ունենալ։

Պահպանված տեղական ցեղերի ու նվաճող ցեղերի տոհմային հասարակարգի քայքայումը և նրանց կողմից կրետե-միկենյան մշակույթի նվաճումների դանդաղ յուրացումը շարունակվում էր մ. թ. ա. XI—IX դարերում։ Այդ շրջանը երկար ժամանակ անվանում էին հոմերոսյան, քանի որ նրա մասին հիմնական տեղեկությունները համարյա մինչև մեր դարի վերջին տասնամյակները գիտությունը հայտնի էին միայն հին հունական «Իլիական» և «Ոդիսական» էպիկական պոեմներից, որոնց հեղինակը համարվում է Հոմերոսը։ Ներկայումս հնագիտության հաջողությունների առնչությամբ և հատկապես կրետե-միկենյան «Ք» գծային գրի վերծանումից հետո»

\* Հետ հունական ազբյուրների՝ Սիրիա (ծանոթ.՝ թարգմ.)։

\*\* Հստ ժամանակակից արտասանության՝ Սիցիլիա։

«հոմերոսյան» տերմինը, որպես հունական պատմության դարաշրջանի անվանում, հնացել է:

Արխաիկ շրջանը մ. թ. ա. XI—IX դդ. հասարակական զարգացման անմիջական շարունակությունն էր: Այն բնութագրվում է Հունաստանում համարյա ամենուրեք ստրկատիրական հասարակության հաստատումով, որի ընթացքում առաջացան նոր, ոչ մեծ քաղաք-պետություններ (պոլիսներ): Հետագայում այդ պետությունների տարածքներում անտիկ ստրկատիրական տնտեսությունն մեջ հանդես եկան ստրկության առանձնապես զարգացած ձևեր:

Հունաստանի պատմության դասական շրջանում անտիկ ստրկատիրական տնտեսությունը պոլիսների շրջանակներում հասավ իր զարգացման գագաթնակետին: Մաղկում էր ապրում նաև հելլենական հիանալի մշակույթը: Ստրկատիրական էկոնոմիկայի հետագա զարգացումը, էկոնոմիկա, որը մ. թ. ա. V դ. վերջին դուրս եկավ պոլիսների նեղ սահմաններից, հին հունական ստրկատիրական հասարակությունում և նրա քաղաք-պետություններում մ. թ. ա. IV դարում առաջ բերեց սոցիալական և քաղաքական ծանր ճգնաժամ, որը հանգեցրեց Հունաստանի ենթարկվածությանը նրա հյուսիսային հարևան Մակեդոնիային: Հետագայում հույների և մակեդոնացիների կողմից Պարսկական տերության նվաճման շնորհիվ ճգնաժամը ժամանակավորապես հաղթահարվեց: Սկսվեց վերջին՝ հելլենիստական շրջանը, որի ընթացքում Մերձավոր Արևելքում, պարսկական տերության կործանումից հետո ծագած հելլենիստական միապետությունների հսկայական տարածքներում, Հունաստանի տարածքում, որտեղ հանդես եկան հունական պոլիսների ֆեոդերատիվ միություններ, ինչպես և Մակեդոնիայում, շարունակվում էր ստրկատիրական հարաբերությունների հետագա զարգացումը:

Այդ դարաշրջանն ավարտվեց Հռոմի կողմից Հունաստանի, Մակեդոնիայի և Եփրատից արևմուտք գտնվող մյուս հելլենիստական պետությունների, իսկ հզոր պարթևական տերության կողմից՝ Եփրատից արևելք ընկած պետությունների նվաճմամբ:

\* \* \*

Հին Հունաստանը այն երկիրն էր, որի նվաճումները շատ կողմերով ընկան եվրոպական մշակույթի հիմքում: Ժամանակակից գիտությունների շատ ճյուղեր զարգացան հին հունական գիտնականների և փիլիսոփաների աշխատությունների հիման վրա: Հին հունական ճարտարապետության տարրերն օգտագործվում են ժամանակակից շենքերը զարդարելու համար: Այսօր էլ համընդհանուր ուշադրություն են գրավում և հիացմունք պատճառում Հին Հունաստանի

էպոսը, գրականութիւնը և արվեստը: Գիտական տերմինաբանութեան զգալի մասը, շատ գիտութիւնների անվանումները, այդ թվում և «պատմութիւն» տերմինը, տղամարդկանց և կանանց անունների մեծ մասը, նոր լեզուներում առկա մի շարք բառեր, արտահայտութիւններ, առածներ և ասույթներ սկիզբ են առնում հին հունական լեզվից: Վերջապես, հին հույների փիլիսոփայութեան մեջ դեռևս նախնադարյան պարզութեամբ հանդես եկած դիալեկտիկական մտածողութիւնը «մեկն է այն պատճառներից, որոնք մեզ ստիպում են փիլիսոփայութեան մեջ, ինչպես և շատ այլ բնագավառներում, կրկին ու կրկին վերադառնալ այն փոքր ժողովրդի նվաճումներին, որի բազմակողմանի օժտվածութիւնն ու գործունեութիւնը մարդկութեան զարգացման պատմութեան մեջ նրա համար ապահովեցին այնպիսի մի տեղ, որպիսին չի կարող հավակնել և ոչ մի այլ ժողովուրդ»<sup>2</sup>:

## ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԲՆՈՒԹՅՈՒՆՐ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ Բալկանյան թերակղզու հարավային մասի, էգեյան ծովի կղզիների և Փոքր Ասիայի արևմտյան ծովափի տարածքը բնակեցված էր դեռևս հին քարի դարի ժամանակաշրջանից: Այդ շրջանները մ. թ. ա. VII—VI հազարամյակներում բնակեցված էին տարբեր, վաղ նորքարեդարյան ոչ հունական ծագում ունեցող ցեղերով: Հնագետները գտել են նոր քարի դարի ժամանակաշրջանի բնակավայրեր Թեսալիայում, Մակեդոնիայում, Թրակիայում, Իլիրիայում և Պելոպոնես թերակղզու ամենահարավային մասում:

Հույն գրողները այդ մինչհունական կամ մասամբ նախահունական բնակչութեանը անվանում էին լելեգներ, դրիոպներ, պելասգներ, կարիացիներ:

Հունական ցեղերի թափանցման սկիզբը Բալկանյան թերակղզի և էգեյան ծովի կղզիներ ըստ երևույթին վերաբերում է մ. թ. ա. XX դարին: Հույները մասամբ դուրս մղեցին տեղական բնակչութեանը դեպի հարավ, մասամբ ձուլվեցին նրա հետ՝ յուրացնելով նրա մշակույթի որոշ գծեր:

Մայրցամաքային կամ Բալկանյան Հունաստանը Բալկանյան լեռների ճյուղավորումներով բաժանվում է երեք մասի՝ Հյուսիսային, Միջին և Հարավային: Հյուսիսային Հունաստանի մեջ են մտնում էպիրոսը՝ արևմուտքում, և Թեսալիան՝ արևելքում. նրանց

<sup>2</sup> Յրիզրիս Էնգելս, Բնութեան դիալեկտիկա, Երևան, 1969, էջ 34:

բաժանում է Պինդոս լեռնաշղթան: Էպիրոսը լայնատարած լեռնային մարզ է, որը երկրի այլ շրջաններից մեկուսացված է Պինդոսի բարձրը, ժայռոտ ճյուղավորումներով. այն ունի առավել խիստ ցամաքային կլիմա: Այստեղ հաճախակի են անձրևները, ամպրոպները և ձնաբքերը: Հնում լեռնալանջերը ծածկված էին խիտ անտառներով, էպիրոսի բնակիչները լեռնային հովիտները օգտագործում էին իբրև արոտավայրեր: Էպիրոսը հայտնի էր իր կաթնատու անասուններով:

Այլ տեսք ունի Քեսալիան: Այն մեծ հարթավայր է, որն արևմուտքից շրջապատված է Պինդոսի լեռնային համակարգով, արևելքից՝ Օսսայի լեռնաշղթաներով: Հյուսիսից այն սահմանափակված է հավերժական ձյունով ծածկված Օլիմպոս լեռնագագաթ (շուրջ 2985 մ) ունեցող լեռնաշղթայով: Պենեսոս գետը ոռոգում է Քեսալիայի ամենաարգավանդ մասը՝ Տեմպե դաշտավայրը: Քեսալիան համարվում էր Հունաստանի շտեմարանը. այն ցորեն էր արտահանում այլ մարզեր: Նրա բնակիչները զբաղվում էին հացահատիկի մշակումով, խաղողագործությամբ, այգեգործությամբ: Բարձր զարգացման էր հասել անասնապահությունը, հատկապես՝ ձիաբուծությունը:

Հյուսիսային Հունաստանը միանում էր Միջինի հետ Քերմոպիլեի կիրճով, որը ձգվում էր ծովափին ուղղաձիգ բարձրացող լանջի երկայնքով: Միջին Հունաստանի մեջ մտնում էին հետևյալ մարզերը՝ արևելքում Ատտիկան՝ Աթենք կենտրոնով, նրանից հյուսիս-արևմուտք՝ Բեոտիան՝ Քեբե կենտրոնով, դեպի ավելի արևմուտք՝ Փոկիսը, որի տարածքում գտնվում էր Դելփիքի սրբազան մարզը՝ Ապոլլոն աստծու տաճարով և համահունական պատգամատնով, դեպի հյուսիս՝ Դորիսը, Լոկրիսը (Օգոլյան և Օպոնտյան), իսկ արևմուտքում՝ էտոլիան ու Ակարնանիան:

Հուլյն ժողովրդի պատմության մեջ հատուկ նշանակություն ունեցավ քարքարոտ և շորային, սակայն հումքով (արծաթ, կապար, մարմար, կավ) հարուստ, ծովագնացության համար հարմար դիրք ունեցող Ատտիկան: Այդ մարզի արևելյան ափին կային մի քանի հարմար նավահանգիստներ: Դա նպաստեց հումքի և արհեստագործական արտադրանքի ծովային առևտրի զարգացմանը: Արիստիկ շրջանի վերջերից Աթենքը վերածվեց Հունաստանի առևտրաարհեստավորական կենտրոնի: Հացահատիկի մշակումը Ատտիկայում թույլ էր զարգացած. հիմնականում ցանում էին գարի (գարու և ցորենի ցանքերի հարաբերությունը կազմում էր 10:1), մեծ ուշադրություն էր հատկացվում խաղողագործությանը, այգեգործությանը, ձիթենու մշակմանը, Ատտիկան արտահանում էր խաղող, գինի և մեղր (հի-

մետոսյան մեղր՝ լեռնաշղթայի անունով), որը հայտնի էր նրա սահմաններից շատ հեռու: Ատտիկայում մեծ քանակությամբ բուծում էին բնատանի մանր եղջերավոր անասուններ, առանձնապես՝ այծեր:

Միջին Հունաստանին արևելքից հարում է Եվբեա մեծ ու արգավանդ կղզին, որը իր բնական պայմաններով շատ նման է մայրցամաքին: Նրա կրային լեռնազանգվածները, որոնք հաճախ զառիվայր իջնում են դեպի ծովը, ծածկված էին շագանակենու, կուենու, սոճու (պինիաներ), եղևնու և կաղնու անտառներով, ինչպես նաև ցածրիկ թփերի մացառուտներով: Եվբեան հայտնի էր այգիներով, ձիթենու անտառակներով, խաղողի այգիներով: Կղզու հյուսիսային մասում մշակվում էր ցորեն:

Միջին Հունաստանի ամենաբերրի մարզը Բեովտիան էր: Պառնասոսի, Հելիկոնի ու Կիթերոնի լեռներով շրջափակված նրա հովիտները ոռոգում էր Կեփիսոս գետը: Բեովտիայում հատկապես շատ կային պարբերաբար անհետացող գետեր և կարստային լճեր: Կոպաիս լիճն այն ժամանակ հայտնի էր իր ձկնային հարստություներով: Բեովտիայի տնտեսության հիմնական ճյուղը հողագործությունն էր՝ հացահատիկային կուլտուրաների (ցորեն, գարի) գերակշռությամբ, ու անասնապահություներ՝ հատկապես ձիաբուծությունը և խոզաբուծությունը:

Պակաս տնտեսական նշանակություն ունեին ծովափնյա մարզերը՝ Փոկիսը, Լոկրիսը ու Դորիսը, Միջին Հունաստանի արևմտյան մարզերը՝ էտոլիան ու Ակարնանիան իրենց բնական պայմաններով խիստ տարբերվում էին իրարից: էտոլիան դժվարամատչելի լեռնային երկիր էր, խոր ձորերով հոսող գետակներով: էտոլիայի բնակիչները զբաղվում էին անասնապահությամբ: Ակարնանիան բավականին բերրի առափնյա հովիտ էր, որը ոռոգվում էր Աքելոոս գետով և ուներ համեմատաբար հարմար ծովախորշեր:

Միջին Հունաստանը Կորնթոսյան պարանոցի (կամ Իսթմոսիկ) միջոցով միանում է Հարավային Հունաստանի կամ Պելոպոնեսի՝ թովի մակերևույթից ամենաբարձր տարածքի հետ: Հնում այդ մարզը բնագործակ, փշատերև խիտ անտառներով ծածկված մի բարձրավանգակ էր: Հատկապես անտառոտ էին Պելոպոնեսի հյուսիսային և կենտրոնական շրջանները: Իսթմոսի վրայով էր անցնում քեռնափոխման ճանապարհը էգեյան ծովից դեպի Հոնիական ծովը: Պարանոցի վրա գտնվում էին խոշոր առևտրաարհեստավորական քաղաքներ՝ հյուսիսային մասում՝ Մեգարան, պարանոցի հարավային վերջավորության մոտ՝ Կորնթոսը:



Պելոպոնեսը բաղկացած էր հետևյալ մարզերից. հյուսիսում՝ Աքայան, արևմուտքում՝ էլիսը, հյուսիս-արևելքում՝ Արգոլիսը, կենտրոնում՝ Արկադիան, հարավ-արևմուտքում՝ Մեսսենիան, հարավ-արևելքում՝ Լակոնիան:

Աքայան համեմատաբար նեղ ծովափնյա մարզ էր, որի բնակչությունն զբաղվում էր հացահատիկի մշակությամբ: Հարավից այն սահմանափակվում էր լեռնային զանգվածներով, որոնք անջատում էին նրան Արկադիայից: Արկադիայի կլիման աչքի է ընկնում խրստությամբ. այստեղ ձմեռը ձյունառատ ու համեմատաբար ցուրտ է: Արկադիան կտրված է ծովից, հողագործությամբ այստեղ կարելի էր զբաղվել միայն Ալփեոս գետի հովտում: Մարզի լեռնային մասերում բուծում էին անասուններ, գերազանցապես՝ ոչխարներ:

Արգոլիսը լեռնային ու բավականին քիչ բնակեցված մարզ էր՝ կենտրոնում արգավանդ հովտով: Այս հովտում մշակվում էին հացաբույսեր: Սակայն հաճախակի երաշտները այստեղ խանգարում էին հողագործության զարգացմանը: Արգոլիսի ծովափը հարմար է առափնյա նավագնացության համար: Հնագույն ժամանակներից այստեղ առաջացան այնպիսի կենտրոններ, ինչպիսիք էին՝ Միկենեն, Տիրինսը, Արգոսը:

Պելոպոնեսի արևմտյան մարզը՝ էլիսը, ցածր է, հարմար հողագործության (հատկապես Ալփեոս և Պենեոս գետերի հովիտները), ինչպես նաև անասնապահության զարգացման համար: Էլիսի տարածքում էր գտնվում հռչակավոր Օլիմպիա սրբազան պուրակը:

Պելոպոնեսի հարավային մարզերը՝ Մեսսենիան ու Լակոնիան, զբաղեցված էին գարու և ցորենի դաշտերով, մրգաստաններով, խաղողի այգիներով ու ձիթենու անտառակներով: Այստեղ հողագործության զարգացմանը նպաստում էին արգավանդ հողերի առկայությունը և տաք ու խոնավ կլիման: Լակոնիան անջատվում էր Մեսսենիայից Հունաստանի ամենաբարձր լեռնաշղթաներից մեկով՝ Տայիգետոսով, իսկ ծովից՝ Պարնոն լեռնաշղթայով:

Հին Հունաստանի, այսինքն Բալկանյան թերակղզու հարավային մասի, էգեյան ծովի կղզիների ու Փոքր Ասիայի արևմտյան ծովափի աշխարհագրական պայմաններն ընդհանուր առմամբ բարենպաստ էին և նպաստում էին հունական ցեղերի համեմատաբար արագ զարգացմանը: Դրան նպաստում էր նաև Հին Արևելքի՝ իրենց կայունացած տնտեսական կապերով ու բարձր մշակույթով ժողովուրդների մոտիկ լինելը: Քարթարոտ ու Հունաստանի շրջանների մեծ մասում դժվար մշակելի հողի ցածր բերրիությունը բարենպաստ ալլ պայմանների առկայության դեպքում չէր խանգարում հույների տնտեսական կյանքի զարգացմանը, արհեստների և առևտրի

ածին: Կ. Մարքսը գրում էր. «Ոչ թե հողի բացարձակ պտղաբերությունը, այլ նրա բաժանվածությունը տարբեր տեսակների, նրա բնական արդյունքների բազմազանությունն է կազմում աշխատանքի հասարակական բաժանման բնական հիմքը. շնորհիվ բնական այն պայմանների փոփոխության, որոնց մեջ մարդը ստիպված է վարելու իր տնտեսությունը, այդ բազմազանությունը նպաստում է նրա սեփական պահանջմունքների, ընդունակությունների, աշխատանքի միջոցների ու աշխատանքի եղանակների բազմացմանը»<sup>3</sup>:

Հունական ցեղերի բնակեցրած շրջանները թեև տարբերվում էին կլիմայական և բնական տեսակետից, այնուհանդերձ ունեին շատ ընդհանուր գծեր: Դրանք բոլորը մերձարևադարձային տաք կլիմայի շրջաններ են: Կլիման հատկապես մեղմ է էգեյան ծովի ձյղջիներում, Սովորաբար ամառն այստեղ չորային է ու շոգ, իսկ ձմեռը կարճ է ու տաք: Սակայն չպետք է մոռանալ, որ Հունաստանը յեռնային երկիր է:

Լեռներն ու ծովի ազդեցությունը որոշակի յուրահատկություն են: Իսթորդում առանձին շրջանների կլիմային: Հյուսիսային շրջաններին, ինչպես նաև Բալկանյան Հունաստանի լեռնային մարզերին բնորոշ է ավելի խիստ կլիման. այստեղ ձմռանը ջերմաստիճանը համեմատաբար իջնում է, երբեմն լինում են սառնամանիքներ: Բալկանյան Հունաստանի արևմտյան ու արևելյան շրջաններում մթնոլորտային տեղումները բաշխվում են անհավասարաչափ: Ընդհանրապես Հունաստանում անձրևները սակավադեպ են, բայց արևմտյան մասում դրանք տեղում են ավելի հաճախ, քան արևելքում, որտեղ երաշտը սովորական երևույթ է: Բուսականությունը կենդանանում է միայն աշնանը: Հողագործությունը Հունաստանի շրջանների մեծ մասում պահանջում է մեծ ջանքեր, հաճախ զգացվում է արհեստական ոռոգման անհրաժեշտությունը, որի կազմակերպումը, սակայն, դժվարանում է մեծ գետերի բացակայության պատճառով: Շատ գետեր ոչ միայն մանր են, այլև ամռանը ընդհանրապես չորանում են:

Հին Հունաստանի բուսական և կենդանական աշխարհը շատ հարուստ էր և բազմազան: Բալկանյան Հունաստանի, հատկապես Պելոպոնեսի, հյուսիսային ու արևմտյան շրջանները ծածկված էին կաղնու, վայրի ընկուզենու, նոճենու, շագանակենու, կուենու և եղևնու խիտ անտառներով: Անտառներում կային առյուծներ, արջեր, գայլեր, վարազներ, եղնիկներ: Հետզհետե անտառները ոչնչացվեցին. դրանք մաքրվում էին շինությունների, ցանքսերի համար:

<sup>3</sup> Կ. Մարքս, Կապիտալ, Երևան, 1954, էջ 537:

կտրվում վառելիքի համար. դրանց ոչ քիչ վնաս էին պատճառում այծերը, որոնք ուտում էին ծառերի մատղաշ շիվերը: Թփուտային բույսերը (մրտենի, դափնի, դափնեվարդ, գիհի) միահյուսվում, վերածվում էին անանցանելի մացառուտների: Արդեն վաղ գարնանը սարալանջերն ու հովիտները ծածկվում էին բուրավետ ու գույնը գույն մանուշակներով, նարգիզներով, հակինթներով, կակաչներով:

Հուլյները ձգտում էին մշակել ու ցանքի համար զբաղեցնել յուրաքանչյուր պիտանի հողակտոր՝ գետահովիտները, ծովափնյա հարթավայրերը, զառիվայր դարավանդները և սարալանջերը: Հունաստանում գյուղատնտեսության հիմնական ճյուղերն էին՝ խաղողագործությունը, ձիթենու մշակումը և այգեգործությունը: Հուլյները շատ վաղ զգացին սեփական հացի պակասն ու այն սկսեցին ներմուծել Իտալիայում, Սիկիլիայում, Հյուսիսային մերձսևծովյան շրջաններում ու Եգիպտոսում եղած գաղութներից: Հունաստանում հատկապես մեծ տարածում ունեւր ձիթենու բավական աշխատատար մշակումը, որի պտուղներն օգտագործվում էին իբրև սնունդ ու ձիթայուղի արտադրման համար:

Հունաստանում մշակում էին նաև թզենի, տանձենի, խնձորենի, սերկևիլենի, նոնենի, սալորենի, նշենի և ընկուզենի: Որպես սնունդ օգտագործվում էր այծի ու ոչխարի պանիրը, զանազան բանջարեղեն:

Երկրի կերաբույսերով հարուստ սարալանջերն օգտագործվում էին որպես արոտավայրեր հիմնականում մանր եղջերավոր անասունների՝ այծերի ու ոչխարների համար: Խոշոր եղջերավոր անասունների, ձիերի, ջորիների ու խոզերի բուծման համար ավելի հարմարավետ էին հարթավայրերը:

Հուլյներն օգտվում էին նաև ծովի բարիքներից. նրանք հատկապես զնահատում էին թյունոսը, սարդինաձուկն ու ոստրենները:

Հունաստանը հարուստ է զանազան օգտակար հանածոներով, մի բան, որ նպաստում էր արհեստագործության, ինչպես նաև հումքի ու արհեստավորական իրերի առևտրի զարգացմանը: Հատկապես շատ կային օգտակար հանածոներ Բալկանյան Հունաստանի արևելյան շրջաններում: Երկաթի շերտերը գտնվում էին հարավում, կակոնիայում ու կղզիներում, պղնձի պաշարները՝ Եվբեա (Քաղկիս քաղաք) ու Կիպրոս կղզիներում: Ոսկին արդյունահանվում էր հյուսիսում, Թրակիայում (Պանգոնի հանքերը), Թեսալիայում, Մակեդոնիայում, ինչպես նաև Սիփոսս ու Քասոս կղզիներում: Ատտիկայի լեռները (Լավրիոն), Քասոս, Սիփոսս կղզիներն ու Փոքր Ասիան հայտնի էին արծաթի հանքավայրերով: Մեծ քանակությամբ հիանալի սպիտակ մարմար կար Ատտիկայում (Պենտելիկոն լեռնա-

պար) ու Պարոս կղզում: Բարձրորակ կաթմիր ու գորշ նուրբ կավն օգտագործվում էր սկահակների, արձառիկների, կղմինդրների արտադրության համար. վերջիններս շատ վաղ դարձան արտահանման առարկաներ: Նշանակություն ունեին աղի հանքերը Ատտիկայում ու Եվբեա կղզում: Աղը մեծ քանակությամբ օգտագործվում էր ձուկն ու ձիթապտուղը աղը դնելու համար:

Իսլական թերակղզու ու Փոքր Ասիայի արևմտյան ափի խիստ կտրտվածությունը, հարմարավետ ու լավ պաշտպանված ծովախորշերի մեծ քանակությունը, ինչպես նաև հսկայական թվով կղզիները էգեյան ծովի ավազանում թեթևացնում էին ծովագնացության պայմաններն ու նպաստում առևտրի զարգացմանը: Հույները վաղ ընտելացան ծովային ճանապարհորդություններին: Նրանք նավարկում էին էգեյան ծովում՝ ափը շրջանցելով տեսադաշտից, քանի որ կղզիները գտնվում էին իրարից 50 կմ ոչ հեռու, իսկ հիանալի տեսանկյունությունը նավագնացության ժամանակ թույլ էր տալիս լավ նշմարել հեռավոր լեռներն ու ջրից վեր բարձրացող ժայռերը: Այդ պայմանները ապահովում էին մայրցամաքային Հունաստանից կղզիների վրայով դեպի Փոքր Ասիայի ծովափը ձեռնարկվող ճանապարհորդությունների հնարավորությունն ու անվտանգությունը: Ավելի բարդ էր նավարկումը դեպի Աֆրիկա, Իտալիա ու Սիկիլիա:

էգեյան ծովի ավազանով էր անցնում հույներին արևելյան երկրների հետ կապող առևտրական ճանապարհը: Արևելք գնացող նավերի համար միջնակետեր էին էգեյան ծովի կղզիները՝ Կիկլադները (200-ից ավելի կղզիներ), որոնք ձգվում էին ձվաձև զուգահեռ գծերով Ատտիկայի ափերից ու Եվբեայից դեպի արևելք, իսկ հետո Սպորադների խումբը (շուրջ 80 կղզիներ), որոնք հարում էին Փոքր Ասիայի ափերին:

Կիկլադների խմբի մեջ մտնում են՝ Նաքսոս, Պարոս, Անդրոս, Միփնոս, Սերիփոս, Թերա ու Մելոս կղզիները: Հույների կյանքում իբրև կարևոր առևտրական կետ հատկապես մեծ նշանակություն ունեցավ Դելոս փոքր կղզին, որը գտնվում էր Կիկլադների կենտրոնում: Այստեղ էր գտնվում Ապոլլոն աստծու համահունկան սրբաբանը:

Սպորադների խմբում մեծ դեր ունեին Հոդոս, Սամոս, Քիոս, Լեսբոս, Լեմնոս կղզիները: Շատ կղզիներ հայտնի էին խաղողի բարձրատեսակ գինիների արտադրությամբ:

Աշխարհագրական հարմար դիրքն ու արհեստների զարգացումը հատկապես նպաստեցին Հոնիայի փոքրասիական քաղաքների (Եփեսոս, Միլետոս), ինչպես նաև Եվբեա, էգինա, Դելոս, Սամոս,

Հոռոտս կղզիների ու Բալկանյան Հունաստանի արևելյան շրջանների (Կորնթոս, Մեգարա, Աթենք քաղաքներ) միջև առևտրական կապերի հաստատմանը: Ճանապարհը դեպի հյուսիսային մերձսևծովյան շրջանի գաղութները անցնում էր էգեյան ծովը Պրոպոնտիսի (Մարմարա ծով) հետ միացնող նեղ Հելլեսպոնտոս (ժամանակակից Դարդանելը) նեղուցով, ուր մեծ նշանակություն ձեռք բերեց հունական առևտրական Կյուզիկոս քաղաքը, և ավելի նեղ Բոսֆորի նեղուցով, որը տանում էր Սև ծով: Բոսֆորի մուտքի մոտ կարևոր կետ էր հունական Բյուզանդիոն քաղաքը:

Հյուսիսից (Բալկանյան Հունաստան) ու արևելքից (Փոքր Ասիա) եկող և Հունաստանը Հյուսիսային Աֆրիկայում Եգիպտոսի ու Կիրենաիկայի հետ կապող առևտրական ուղիների խաչման կետում գտնվում էր Կրետե մեծ կղզին: Կղզու հյուսիսային ափը, որն ավելի թեք էր, քան հարավայինը, ուներ լավ ծովախորշեր: Կրետեի հյուսիսարևելյան մասը հատկապես հարմար էր հողագործության, խաղողագործության ու այգեգործության համար: Հացի մշակմամբ զբաղվում էին արգամանդ Մեսարյան դաշտավայրում, որը գտնվում էր կղզու կենտրոնական մասում: Հարավից կղզին քիչ մատչելի էր:

Դեպի «Մեծ Հունաստանի» (Հարավային Իտալիա ու Սիկիլիա) հացով, դիմիսներով և ձկով հարուստ բերրի շրջանները տանող ճանապարհը անցնում էր Հոնիական ծովի կղզիներով (Լևկաս, Իթակե, Կեփալլենիա, Կերկիրա), որոնք ձգվում են Բալկանյան թերակղզու արևմտյան ծովափի երկարությամբ: Կերկիրա կղզին հատկապես արգամանդ էր. այն հարուստ էր մրգատու ու խաղողի այգիներով:

Հնագիտական տվյալները ավանդույթի հետ մեկտեղ հիմք են տալիս ենթադրելու, որ հույների առաջին ներթափանցումը Հելլադա կապված էր մ. թ. ա. XXI դ. աքայական ցեղերի գաղթի հետ. հետըզհետե նրանք թափանցեցին հարավ՝ հասնելով մինչև Պելոպոնես: Հունական ցեղերի գաղթի երկրորդ մեծ ալիքը դորիացիների տեղաշարժն էր. նրանք հետ մղեցին աքայացիներին և զավթեցին Պելոպոնեսի զգալի մասը, էգեյան ավազանի մի շարք կղզիներ, Կրետե կղզին: Դա տեղի ունեցավ մ. թ. ա. XII—XI դդ.:

Հին Հունաստանի, կամ հնում Բալկանյան թերակղզու հարավային մասը, էգեյան ծովի ու Միջերկրական ծովի արևելյան մասի կղզիները և Փոքր Ասիայի արևմտյան ծովափը, ինչպես նաև Հարավային Իտալիան ու Սիկիլիայի մի մասը, Սև ծովի առափնյա քաղաքները բնակեցնող հունական ցեղերի բուն պատմությունն ընդգրկում է մի ժամանակաշրջան, որը սկսվում է համայնական-տոհմային կարգերի քայքայումից ու նշված տարածքում հնագույն պետությունների կազմավորումից և ավարտվում է հունական պետու-

թյունների անկախութեան անկումով ու Հոռոմեական տերութեան կազմի մեջ նրանց ներգրավումով:

«Հունաստան» և «հույներ» տերմինները հանդես են եկել համեմատաբար ուշ, և ոչ թե Հին Հունաստանում, այլ Հռոմում: Իրենք՝ հույները, սովորաբար իրենց անվանում էին «հելլեններ»: Սակայն այս հասկացութիւնը ևս ծագեց ոչ միանգամից, այլ հետզհետեւ, միասնական հունական ազգութեան կազմավորմանը զուգընթաց:

Հնագույն հունական ազգաբնակչութիւնն իրենից ներկայացնում էր էթնիկական ու մշակութային տեսակետից իրար մոտ կանգնած մի շարք առանձին ցեղեր: Այդ ցեղերին մերձեցնում էր նաև պատմական զարգացման ընդհանրութիւնը: Սակայն երկար ժամանակ չկար տնտեսական ու քաղաքական ընդհանրութիւն, ինչը խանգարում էր այդ ցեղերի միավորմանը մի միասնական հունական: ազգութեան մեջ:

Մեր թվարկութիւնից առաջ XII—XI դդ. վերջում տեղի ունեցած դորիական գաղթից հետո հունական հիմնական ցեղերը տարբնակվում էին հետևյալ կերպ: Աքայացիները մղվել էին դեպի Պելոպոնեսի հյուսիսային մասը (Աքայա մարզ), Բալկանյան թերակղզու հյուսիսային շրջանները գրավել էին էոլացիք (Քեսալիա), ուրոնք բնակեցրել էին նաև Միջին Հունաստանի մի մասը (Բեոլիտիա), էգեյան ծովի հյուսիսային մասի կղզիները (Լեսբոս և այլն) ու Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան ծովափը (էոլիս մարզը): Միջին Հունաստանի արևելյան մասում բնակութիւն հաստատեցին հոնիական ցեղերը՝ զբաղեցնելով Ատտիկան, Եվբեա կղզին: Նրանք զբաղեցրին նաև արշիպելագի կենտրոնական մասը (Լեմնոս, Քիոս, Սամոս և այլ կղզիները) ու Փոքր Ասիայի արևմտյան մասը (Հոնիա մարզը): Դորիացիները զավթեցին Պելոպոնեսի մեծ մասը (Արգոլիս, Մեսսենիա, Լակոնիա մարզերը), էգեյան ավազանի հարավային կղզիներն ու Կրետե, Հոռոս կղզիները, Փոքր Ասիայի հարավային վերջավորութիւնը:

Հունական ցեղերի աշխարհագրական տեղադրմանը համապատասխանում էր նաև հունարեն լեզվի հիմնական բարբառների՝ էոլականի, հոնիականի ու դորիականի տարածումը: Երկար ժամանակ, բնական է, գոյութիւն չունեցան միասնական հունարեն լեզու, յուրաքանչյուր ցեղ խոսում էր իր բարբառով: Ճիշտ է, բարբառները շատ մոտ էին, և հոնիացիք, դորիացիք, քայացիք ու էոլացիք հեշտութեամբ հասկանում էին իրար: Համահունական լեզուն՝ կոյնեն, ծագեց միայն հելլենիզմի դարաշրջանում, երբ ընդլայնվեցին ու ամրապնդվեցին տնտեսական, քաղաքական ու մշակութային կապերը առանձին հունական պետութիւնների միջև: Հնդեվրոպական

լիզուների հատուկ ճյուղը կազմող հունարեն լեզուն բաժանվում էր երեք հիմնական բարբառների՝ հոնիական, էոլական ու դորիական: Ժամանակակից լեզվաբանները հոնիական բարբառից առանձնացնում են նրա մի հատուկ ճյուղը՝ ատտիկյան բարբառը: Պահպանվել է զգալի գրականություն, և կան մի շարք վիճազիր արձանագրություններ՝ բոլոր նշված բարբառներով:

## ՀԻՆ ՀՈՒՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

### ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Բալկանյան թերակղզու հարավում, Միջերկրական ծով: ու նրա հետ միացված ծովերի կղզիներում և ծովափում պահպանվել են Հին Հունաստանի նյութական մշակույթի մնացորդները: Նրանք հանդիպում են նաև Մերձավոր Արևելքի խորքերում գտնվող շրջաննեյում և անգամ Միջին Ասիայում: Դրանք լիովին կամ կիսով չափ հողով ծածկված քաղաքների ու բնակավայրերի ավերակներն են, գերեզմանատներ և այլն: Հին հունական շինությունների մնացորդները պահպանվել են նաև գետնի մակերեսին: Դրանցից առաջին հերթին պետք է նշել աթենական միջնաբերդի՝ Ակրոպոլիսի ու Միլենեում եղած հնագույն փառահեղ ամրոց-պալատի ավերակները: Տարբեր երկրների պատմաբան-հնագետները արդեն շուրջ երկու դար ուսումնասիրում են այդ մնացորդները: Ռուս նախահեղափոխական ու հատկապես սովետական պատմաբանները կառավարել ու կատարում են հին հունական քաղաքների և անտիկ այլ հուշարձանների կանոնավոր պեղումներ հյուսիսային և արևելյան Մերձսևծովյան շրջաններում ու Միջին Ասիայում: Այսպես, Ղրիմում, Սևաստոպոլի մոտ, պեղվել է հին հունական Քերսոնեսոս քաղաքի զգալի մասը, Դնեպր-բուզյան լիմանի ափին բացված է հին հունական Օլվիա քաղաքի մի մասը: Այստեղ և մի շարք այլ տեղերում ստեղծվել են թանգարան արգելանոցներ, որտեղ տեղական նյութի հիման վրա մշտական աշխատանք է կատարվում անտիկ հնություն ուսումնասիրության գծով:

Բազմաքանակ հնագիտական նյութերի հիման վրա ուսումնասիրված են հին հունական տաճարներ, թատրոններ, բուկտերիաներ (շենքեր, որտեղ տեղի էին ունենում քաղաքային խորհուրդների նիստերը), ամրություններ, արհեստանոցներ, պահեստներ, բնակելի տներ, հին հույների խաղաղ և ռազմական կենցաղի իրեր (գործիքներ, զենք, ամանեղեն, զարդեր, հագուստի մնացորդներ), ինչպես և հին հունական քաղաքների հատակագծեր: Հնագետները հայտնաբերել են հնում ջրասույզ եղած ու տարբեր իրերով բեռնված

նավերի մնացորդներ (այդ նպատակով ձեռնարկվել են ստորջրյա հետազոտություններ):

Մեծ քանակությամբ քանդակներ ու կերպարվեստի այլ ստեղծագործություններ հասել են մեզ հին պատճեններով և մասամբ բնօրինակներով: Պահպանվել է հին հունական գեղանկարչությունը: Այն զլխավորապես ի հայտ է գալիս որպես կավե անոթների նկարազարդում, անոթներ, որոնց վրա վարպետ-նկարիչները պատկերել են դիցաբանական ու կենցաղային տեսարաններ, դրվագել տարբեր նախշեր և այլն: 1960-ական թվականներին Հարավային Իտալիայում հայտնաբերվեցին որմնանկարներով զարդարված հին հունական դամբարաններ:

Նյութական մշակույթի հսկայական քանակության մնացորդները հնարավորություն են տալիս պատկերացնելու հին հույների արտաքին տեսքը, մանրամասնորեն ուսումնասիրել նրանց տեխնիկան ու տնտեսությունը, հին հունական աշխարհի հասարակական հարաբերություններն ու գաղափարախոսությունը:

#### ՀԱՊԻՏԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԸ

Հին Հունաստանի պատմական աղբյուրների մյուս կարևոր տեսակը բազմաթիվ արձանագրություններն են: Դրանց բովանդակությունը նույնքան բազմազան է, որքան Հին Արևելքի երկրներում գտնված արձանագրությունների բովանդակությունը:

Մեզ հայտնի հին հունական արձանագրություններից ժամանակագրական տեսակետից ամենավաղ արձանագրությունները, ինչպես դա հաստատվել է XX դ. 50-ական թվականներին, կրետեմիկենյան ժամանակաշրջանին պատկանող կավե տախտակներն են: Դրանք վերաբերում են մ. թ. ա. II հազարամյակի երկրորդ կեսին:

Տեքստերը գրված են հունարեն լեզվի հնագույն տարատեսակով՝ աքայան բարբառով, այսպես կոչված, «Բ» գծային վանկագրով, որը իր տիպով հիշեցնում է հիերոգլիֆներն ու տարբերվում է փյունիկյան հիմքի վրա ավելի ուշ շրջանում զարգացած հունական գրաձևից (Կրետե կղզում հայտնաբերված, ավելի վաղ՝ մ. թ. ա. II հազարամյակի կեսին վերաբերող կավե տախտակների արձանագրությունները, որոնք պայմանականորեն կոչվում են «Ա» գծային վանկագրի արձանագրություններ, այժմ վերծանվում են: Ավելի հին հիերոգլիֆի գրերը դեռևս պարզ չեն):

Գծային «Բ» վանկագրով գրված արձանագրությունները բաղկացած են տնտեսական գրառումներից, հարկային ցուցակներից և



այլն: Իրենց բովանդակութեամբ դրանք մի փոքր հիշեցնում են Առաջավոր Ասիայի հին արևելյան ժողովուրդներից պահպանված կալե և աղյուսիկների բազմաթիվ գրառումները:

Նախնադարյան հին հունական դրացի ցեղերի՝ Բալկանյան թերակղզու հարավը ու Կրետե կղզի գաղթելու և հին հունական աքայան մշակույթի անկման պատճառով գծային «Բ» վանկագիրը հետզհետե մոռացվեց<sup>4</sup>:

Մեր թվարկությունից առաջ I հազարամյակի սկզբում հույները սկսեցին օգտագործել փյունիկացիներից փոխառնված, սակայն աստիճանաբար ձևափոխված ու հին հունական լեզվի պահանջներին հարմարեցված այբուբեն: Այդ այբուբենով գրված, ցարդ հայտնաբերված հնագույն արձանագրությունները վերաբերում են մ. թ. ա. VIII դարին: Դրանք փորագրված են Թերա կղզու ժայռերի վրա ու պատկանում են մոնումենտալ արձանագրությունների խմբին, այսինքն փորագրված են կարծր նյութի, սովորաբար քարի վրա: Մոնումենտալ արձանագրությունները հաճախ անվանում են «Հելլադայի քարե արխիվ»: Դրանք մեծ քանակությամբ փորագրվել են հատուկ պատրաստված քարե տախտակների՝ ստելաների վրա, որոնք հաճախ մարմարից էին (պահպանվել են արձանագրություններ նաև բրոնզե տախտակների վրա): Հայտնի են շինությունների քարե պատերի, արձանների հիմքերի ու քարե այլ մոնումենտալ շինվածքների վրա արված արձանագրություններ: Այդ վիճագրությունները շատ արժեքավոր են հին հունական աշխարհի պատմության ուսումնասիրության համար:

Արխաիկ շրջանից շատ քիչ արձանագրություններ են պահպանվել: Դրանց հիմնական զանգվածը վերաբերում է մ. թ. ա. I հազարամյակի կեսին ու երկրորդ հատվածին, այսինքն դասական և հելլենիստական շրջաններին: Քանի որ արձանագրությունները փորագրվում էին կարծր նյութի վրա, ուստի միշտ ձգտում էին դրանք կազմել կարճ, առանց ավելորդ բառերի ու նոր արձանագրության նախաձեռնողների տեսակետից՝ որևէ կարևոր առիթով: Անգամ ծագեց շարադրման, այսպես կոչված, լապիդար, այսինքն վիճագիր (լատիներեն *lapidarius*՝ քարե բառից) հակիրճ ոճը: Մոնումենտալ արձանագրությունները կարելի է բաժանել երկու մեծ խմբերի՝ պաշտոնական ու մասնավոր: Առաջին, առավել կարևոր խմբին պատկանում են՝ օրենքները, քաղաքային իշխանությունների որոշում-

<sup>4</sup> Բացառությամբ Կիպրոս կղզուց, որի հունական բնակչությունն ավելի ուշ ժամանակներում օգտագործում էր կրետե-միկենյան գրաֆիկայից ժառանգված գիրը:

ման վերաբերյալ ստացականների տեքստով, մեծ քանակությամբ պահպանվել են հելլենիստական Եգիպտոսի ժամանակներից: Դրանց բովանդակության վերլուծությունը հնարավորություն տվեց գիտականորեն վերականգնելու և ուսումնասիրելու հարկային համակարգն ու ֆինանսական կառավարման կազմակերպումը հելլենիստական Եգիպտոսում և ստանալու բազմաթիվ կարևոր տեղեկություններ բնակչության տարբեր խմբերի սոցիալական դրության մասին: Արձանագրությունները համարյա միշտ ժամանակակից են այն իրադարձություններին ու միջոցառումներին, որոնց մասին հաղորդում են. դա զգալիորեն մեծացնում է դրանց արժեքը իբրև պատմական աղբյուրների: Սակայն արձանագրությունները, որպես աղբյուրներ, գերծ չեն նաև թերություններից: Այսպես, դրանց հաղորդումները կրում են տեղական բնույթ, իսկ պաշտոնական ոճի տակ հաճախ քողարկվում է միտումնավորությունը: Արձանագրությունները խիստ անհավասար են բաշխված ըստ ժամանակի ու տարածության: Թեև արդեն հայտնաբերված են հարյուր հազարից ավելի արձանագրություններ, միայն դրանց, ինչպես և համը հնագիտական հուշարձանների հիման վրա անհնարին է վերստեղծել Հին Հունաստանի շատ թե քիչ մանրամասն ու կապակցված պատմությունը:

Արձանագրությունների ուսումնասիրությունը կապված է որոշակի դժվարությունների հետ: Հին հունարեն լեզվի ու նրա բարբառների իմացությունից բացի պետք է կարողանալ հասկանալ քարերի ու խեցիների՝ ժամանակի ընթացքում վնասված մակերեսի վրա եղած հին գրաֆիկան. այդ քարերն ու խեցիներն ունեն փոսիկներ, կոտրատված եզրեր և, հետևապես, բնագրի բացթողումներ: Հայտնաբերված արձանագրությունների մեծ մասը գտնվում է թանգարաններում, սակայն դրանցից շատերը, անշուշտ, դեռևս սպասում են իրենց հետազոտողին: Արձանագրությունների ուսումնասիրությամբ զբաղվում է հատուկ պատմական գիտություն՝ էպիգրաֆիկան (վիմագրագիտություն) (անվանումը ծագում է «էպիգրաֆի»՝ հունական բառից, որը նշանակում է արձանագրություն): Նրա խընդիրներն են՝ արձանագրության իսկության հաստատումը (երբեմն հանդիպում են կեղծումներ), դրա ստեղծման ժամանակի ու տեղի հաստատումը (եթե դրանք հայտնի չեն), արձանագրության վնասված տեքստի վերականգնումը և այլն:

Հին Հունաստանի պատմության ու գլխավորապես հելլենիստական Եգիպտոսի և հելլենիստական աշխարհի այլ երկրների պատմության ուսումնասիրության գործում XIX դարի վերջից մեծ նշանակություն ձեռք բերեցին փաստաթղթերը, որոնք գրված են հունարեն լեզվով եղեգնի՝ պապիրոսի միջուկից պատրաստված հատուկ

տեսակի գրեւանյութի թերթերի վրա: Պապիրուսներն, ինչպես կըր-  
ճատ անվանում են այդ փաստաթղթերը, հնագույն ժամանակնե-  
րից լայնորեն տարածված էին Եգիպտոսում: Հետագայում պապի-  
րուսի թուղթը սկսեց արտահանվել Միջերկրականի այլ երկրներ: Այն  
օգտագործում էին որպես գրառումների համար նյութ նաև Հունաս-  
տանում, գլխավորապես մ. թ. ա. I հազարամյակի երկրորդ կեսին: Սակայն  
անկայուն լինելու պատճառով պապիրուսները պահպանվել  
են գրեթե միայն չորային Եգիպտոսում, Այստեղ XIX դ. վերջին ու  
XX դ. ընթացքում կատարված պեղումների շնորհիվ հայտնաբերվե-  
ցին հսկայական քանակությամբ հունական պապիրուսե փաստա-  
թղթեր, որոնց թիվը այժմ հասնում է 200000-ի: Հունական պապի-  
րուսների հիմնական մասը վերաբերում է մ. թ. ա. վերջին երեք  
հարյուրամյակներին, երբ մակեդոնացիներն ու հույներն իշխում էին  
Եգիպտոսում, և մեր թվականության առաջին հարյուրամյակներին,  
երբ հելլենիստական Եգիպտոսն ընկավ Հռոմի տիրապետության  
տակ: Արձանագրությունների նման, պապիրուսները ևս պաշտոնա-  
կան ու մասնավոր բնույթի էին:

Պապիրուսները պարունակում են հին հիմնարկների ու մաս-  
նավոր անձանց գործնական գրագրություն, քաղվածքներ օրենքնե-  
րից, դատական գործեր, առուծախի ակտեր, հողերի նկարագրու-  
թյուններ, շինարարական գրառումներ, հարկերի, մաքսերի մուծ-  
ման ստացականներ, հարկատուների ու որոշակի պարտույթներ  
կատարող անձանց ցուցակներ: Առավել կարևոր պաշտոնական  
փաստաթղթերից է մի երկար պապիրուս՝ թագավոր Պտղոմեոս II  
Փիլադելփոսի հարկային կանոնագիրքը, որը հրատարակվել էր  
մ. թ. ա. 259—258 թթ.: Այն պարունակում է հարկերը կապալով  
հանձնելու ու հավաքելու, արհեստագործական արտադրության կազ-  
մակերպման, ձեթի, քաթանի վաճառքի կանոններ ու մի շարք այլ  
գրույթներ:

Մասնավոր պապիրուսային փաստաթղթերի բովանդակու-  
թյան կարևորության վառ օրինակ է «Զննոնի արխիվը»՝ բաղկա-  
ցած մի քանի հազար գործարար նամակներից, կարգադրույուն-  
ներից, հաղորդումներից, հաշվետվություններից, հաշիվներից, բո-  
ղոքներից, պայմանագրերից և այլն: Այդ փաստաթղթերը պահում  
էր Զենոնը՝ մ. թ. ա. III դ. կեսի մի խոշոր մեծատոհմիկի կալված-  
քի կառավարիչը:

Պապիրուսը, լինելով հարմար ու փոքրածավալ նյութ, հնարա-  
վորություն էր տալիս գրելու մանրամասնորեն և տարբեր նպատակ-  
ներով: Մինչև մեր օրերը պահպանված պապիրուսներում հանդի-  
պում են անգամ ազգականների միջև նամակագրություն, սիրային

նամակներ, մանկական գրավարժություններ և այլն: Իրենց ամբողջության մեջ Եգիպտոսի հունական գործարար ու կենցաղային բնույթի պապիրուսները հնադարից մեզ հասած եզակի և յուրահատուկ նյութ են, որոնք շատ են հիշեցնում նոր ժամանակի արխիվային փաստաթղթերը: Մանրամասնորեն լուսաբանելով սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարաբերությունները հելլենիստական Եգիպտոսում, պապիրուսները դրանով տեղեկություններ են հաղորդում այդ հարաբերությունների մասին նաև մյուս հելլենիստական երկրների համար, քանի որ իրենց հիմքում նման էին իրար և նույնիսկ ընդհանուր: Փոքր քանակությամբ պապիրուսներ ու մագաղաթի վրա գրված համանման բովանդակություն ունեցող փաստաթղթեր գտնվել են պեղումների ժամանակ Միջագետքում ու այլ վայրերում:

Բավականին կարևոր ու բազմաքանակ խումբ են կազմում հունական այն պապիրուսները, որոնց վրա գրված են հին հույների գրական և գիտական գործերը: Եգիպտոսում ապրող հույները արտագրում ու կարդում էին իրենց գրողների և գիտնականների ստեղծագործությունները, Եգիպտոսից մեզ հասած հունական պապիրուսները պահպանել են շատ հատվածներ էպոսից, հին հունական բանաստեղծների, դրամատուրգների, փիլիսոփաների երկերից, որոնք մեզ հայտնի չեն ուրիշ աղբյուրներից և այլն: XIX դ. վերջին հայտնաբերվեց մի մեծ պապիրուս, որը պարունակում էր «Աթենական պոլիտեայի» տեքստը, Արիստոտելի՝ Աթենական պետության պատմությունն ու կառուցվածքը շարադրող ու վաղուց կորած քննախոսությունը:

Հայտնաբերված հունական պապիրուսների առատությունն ու կարևորությունը XIX դ. վերջին կյանքի կոչեցին նոր հատուկ գիտություն՝ պապիրուսաբանություն, որը զբաղվում է, որպես կանոն, վատ պահպանված պապիրուսային բնագրերի քննությամբ ու վերականգնմամբ, նրանց ժամանակագրությամբ և այլն:

Պատմական աղբյուրների հատուկ, կարևոր տեսակ են դրամները, որոնք առաջին անգամ սկսեցին հատվել մ. թ. ա. VII դարում կյուդիական թագավորությունում՝ Փոքր Ասիայում ու Հունաստանում՝ էգինա կղզում: Հետագայում դրամների թողարկումը տարածվեց նաև պարսկական տերությունում ու բազմաթիվ հունական պետություններում: Դրամների վրա եղած նկարներն ու արձանագրությունները հաճախ պարունակում են քաղաքական, մշակութային, սոցիալ-տնտեսական բնույթի արժեքավոր նյութեր, որոնք հայտնի չեն այլ աղբյուրներից: Դրամի վերածած մետաղի կտորներով, օրինակ, կարելի է դատել մետաղագործության զարգացման մակար-

դակի, հնադարի մետաղային ու կշռային համակարգերի մասին: Հին դրամների հայտնաբերման վայրերի ուսումնասիրությունը այլ տեղեկությունների հետ այն համադրելու դեպքում հնարավորություն է ընձեռում լուսաբանելու հին հունական պետությունների առևտրական և այլ կապերը միմյանց հետ ու նրանց ոչ հունական դրացիների հետ: Դրամները մեծ նշանակություն ունեն անցքերի թվագրությունը ճշտելու համար: Առանձին պետությունների, օրինակ, հելլենիստական Բակտերիայի, պատմությունը ճշտվել է զուտ դրամների հայտնաբերման շնորհիվ: Վերջապես, ճարտարապետության ու քանդակագործության ոչնշացված որոշ ստեղծագործություններ մեզ հայտնի դարձան դրամների վրա եղած պատկերներից: Իրենք՝ դրամները նույնպես կերպարվեստի յուրօրինակ հուշարձաններ են: Դրամների ուսումնասիրության հետ կապված բոլոր հարցերը հետազոտում է հատուկ պատմական գիտություն՝ դրամագիտությունը (նումիզմատիկան):

\* \* \*

Հնագիտական համր ու գրավոր բազմազան նյութերի ամբողջության զուգորդված ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բավական մանրամասն ու ստույգ վերականգնել հին հունական աշխարհի պատմական զարգացման սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային առանձնահատկությունները: Դրան նպաստում է նաև Հին Հունաստանի ու հելլենիստական պետությունների պատմության վերաբերյալ եղած տեղեկությունների վերլուծությունը, տեղեկություններ, որոնք պահպանվել են արևելյան հնագիտական հուշարձաններում, այդ թվում կերպարվեստի գործերում, արևելյան լեզուներով կազմված արձանագրություններում, պապիրուսներում ու դրամների վրա:

#### ԳՐԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հին հունական ու հելլենիստական աշխարհի պատմության ուսումնասիրության համար առաջնակարգ նշանակություն է ունեցել և ունի հին հունական հարուստ ու բազմազան գրականությունը: Հռոմից ու Բյուզանդիայից ժառանգված բազմադարյան ավանդույթի համաձայն այդ գրականությունը միշտ կարդում էին Ծվրոպայի կրթված մարդիկ: Սերնդե-սերունդ ուսումնասիրում էին հին հունարեն լեզուն, արտագրում իրենց նախորդներից հին հունական հեղինակների երկերը: Այդ ավանդույթը պահպանվեց ամբողջ միջնադարում: Դարերի ընթացքում բազմիցս կատարվող արտագրումների հետևանքով ձեռագիր գրքերի նոր օրինակներում աննկատե-

լիորեն կուտակվում էին վրիպակներ ու սխալներ, նրանց մեջ թափանցում էին հին տեքստի աղավազումներ. հանդես եկան տարրն-թերցվածքներ միևնույն հեղինակի գործերի տարբեր ընդօրինակու-թյուններում: Բացի այդ, հին հույների ոչ բոլոր գործերն էին հե-տաքրքրում միջին դարերի կրթված ընթերցողներին: Ժամանակի ընթացքում շատ հին հեղինակների դադարեցին կարդալ ու հետևա-պես՝ արտագրել: Գրատպության գյուտի նախօրեին գրադարաննե-րում ու մասնավոր անձանց մոտ պահպանվել էին հների միայն ա-ռավել ընթերցվող ստեղծագործությունները: Վերածնության դարա-շրջանում հին հունական պատմության նկատմամբ ծագած հետա-քրքրությունը բավարարվում էր առաջին հերթին հին հունական գրականության անվնաս մնացած գործերի ուսումնասիրությամբ, գործեր, որոնք սկսեցին հրատարակել ու օգտագործել միջնադար-յան սխոլաստիկայի դեմ մղվող գաղափարական պայքարում: Ընդ որում առաջին անգամ ձեռնարկվեց պահպանված հին հունական բնագրերի քննադատական ուսումնասիրությունն ու դարերի ընթաց-քում նրանց մեջ թափանցած աղավաղումների հնարավորության շրջանակներում ուղղումը:

Նոր շրջանում, XIX դարի վերջից ու XX դարում, գրական ա-վանդույթին օգնության եկավ հնագիտությունը: Եգիպտոսում հայտ-նաբերված հունական պապիրուսներում պահպանված բազմաթիվ գրական հատվածները հետազոտողների ձեռքը հանձնեցին հենց իրենց՝ հին հույների կողմից ստեղծված բնագրերը: Այդ գրական հատվածների մի զգալի մասը մեզ առաջ էլ էր հայտնի, բայց միջ-նադարյան արտագրողների կողմից ավելի ուշ շրջանի ընդօրինա-կություններով: Համեմատելով պապիրուսների գրական հատված-ները միջնադարյան ցուցակներում եղած նույնական տեղերի հետ, ժամանակակից հետազոտողները ճշտեցին հին հունական գրակա-նության մեզ հասած հուշարձանները:

Գրական հուշարձանները որպես պատմական աղբյուրներ կա-րելի է բաժանել մի քանի խմբերի: Ամենահին խումբը կազմում են՝ առասպելները, եեֆրաթները, էպիկական պոեմներն ու ժողովրդա-կան բանավոր ստեղծագործության այլ գործերը, որոնք հետագա-յում ենթարկվել են գրական մշակման: Առասպելները՝ ֆանտաս-տիկ պատմվածքներ աստվածների ու հերոսների մասին, ստեղծվել են խոր հնադարում, նախնադարյան-համայնական հասարակարգի ծաղկման ու քայքայման շրջանում: Առասպելների ֆանտաստիկ կեր-պարները մարմնավորում էին հույների փորձերը՝ հասկանալու բնության երևույթներն ու իրենց հարաբերությունները նրա հետ, ինչպես նաև կողմնորոշվելու ավելի ու ավելի բարդացող հասարա-

կական հարաբերություններում, Առասպելները՝ ի տարբերություն հեքիաթների, ունեն պատմական հիմք, սակայն այն կարելի է հայտնաբերել միայն երկարատև հետազոտությունից հետո: Այդ հետազոտությունը բարդանում է այն պատճառով, որ առասպելները հասել են մեզ ուշ խմբագրումներով ու հին հունական և հռոմեական գրողների վերաշարադրանքով, իսկ այդ գրողներն իրենց ստեղծագործություններում արտահայտում էին շատ ավելի զարգացած հասարակության գաղափարներ: Համեմատելով հին հույների առասպելները հարևան ցեղերի ու ժողովուրդների առասպելների հետ, կարելի է բացահայտել հնագույն շրջանում նրանց միջև եղած փոխադարձ կապերն ու փոխազդեցությունը: Հատկապես ամուր էին հույների կապերը Փոքր Ասիայի ու Կովկասի ժողովուրդների, ինչպես նաև փյունիկեցիների ու եգիպտացիների հետ: Առասպելաբանական կարևոր սյուժեներ կապված են Կրետե կղզու և մասամբ Սիկիլիա կղզու հետ: Առասպելները տալիս են առատ նյութ հնագույն հույների աշխարհայացքը ուսումնասիրելու համար:

«Ելիական» ու «Ողիսական» էպիկական մեծ պոեմները, որոնք ստեղծվեցին դարերի ընթացքում, մ. թ. ա. II հազարամյակի վերջում և I հազարամյակի սկզբում, պահպանել են ավելի վաղ խմբագրումների արդյունք հանդիսացող առասպելներ: Երկու պոեմներն էլ պարունակում են հսկայական նյութ, որը վերաբերում է Հունաստանի պատմության երկու հնագույն ժամանակաշրջաններին՝ կրետե-միկենյան ու մ. թ. ա. XI—IX դդ. շրջանին: Այս երկրորդ շրջանը դեռ վերջերս անվանում էին հոմերոսյան: Պոեմներում մանրամասն արտացոլված են այն ժամանակի կենցաղը, ուղմական հաջողություններն ու գաղափարական պատկերացումները: Պոեմներում եղած շատ տեղեկությունների արժանահավատությունը հաստատվում է նոր հնագիտական տվյալներով: «Ելիականի» ու «Ողիսականի» ուսումնասիրության օրինակով պատմական գիտությունը համոզիչ ձևով հաստատեց գրական աղբյուրները հնագիտական, իսկ հնագիտական աղբյուրները՝ գրական հուշարձաններով փոխադարձաբար ստուգելու գործի ողջ արդյունավետությունը: Կրետե-միկենյան «Բ» գծային վանկագրի վերծանումը բարձրացրեց պոեմների արժեքը որպես միկենյան Հունաստանի պատմության աղբյուրի: Պոեմներում հանդիպող մի ամբողջ շարք անուններ ու տերմիններ կարգացվեցին նաև վերծանված արձանագրություններում:

Պատմական աղբյուրների շարքին են դասվում նաև գրականության այլ հուշարձանները, առաջին հերթին՝ արխաիկ շրջանի բանաստեղծների գործերը, որոնք իրենց պոեզիայում արտացոլում էին

ստրկատիրական հասարակութեան առաջացման ու զարգացման ավելի ու ավելի բարդացող պրոցեսները: Մ. թ. ա. VIII դ. վերջի—VII դ. սկզբի բանաստեղծ Հեսիոդոսի «Աշխատանք և օրեր» դիդակտիկ, այսինքն ուսուցողական պոեմի գեղարվեստական կերպարներում պատկերվում է միջին գյուղացու կյանքը, հաղորդվում են բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ գյուղատնտեսության տեխնիկայի մասին: Պոեմը ցույց է տալիս հասարակության բաժանումը հարուստների ու աղքատների, ստրկատերերի ու ստրուկների, աճած դասակարգային հակամարտությունը: Մ. թ. ա. VII դ. կեսի քնարական բանաստեղծ Արքիլոքոսի գործերից մեկ հասած հատվածներում պահպանվել են գաղութացման նկարագրություններ՝ նվիրված աղքատացած հույների՝ այլ երկրներ արտագաղթին ու այնտեղ տեղական բնակչության հետ նրանց պայքարի առանձին էտապներին: Հույն գինվոր-վարձկանների դեպի արևելք ուղղված արտագաղթի մասին իր ոտանավորներում պատմում է մ. թ. ա. VII դ. բանաստեղծ Ալկեոսը: Ալկեոսի բանաստեղծություններում սուր կերպով հնչում են դասակարգային պայքարի մոտիվներն ու պարտություն կրած արիստոկրատի շարությունը: Նույնպիսի մոտիվներ հատուկ են մ. թ. ա. VI դարի բանաստեղծ Քեոգնիսին: Մ. թ. ա. VI դարի սկզբի նշանավոր աթենական քաղաքական գործիչ ու օրենսդիր Սոլոնը նաև շնորհալի բանաստեղծ էր: Մեկ հասած նրա ոտանավորների հատվածներում գովերգվում են իր կողմից անցկացված բարեփոխումները, որոնք արտացոլեցին աթենական հասարակության ու պետության զարգացման շրջադարձային փուլը: Կարելի է բերել նման բազմաթիվ օրինակներ, որոնք ցույց են տալիս հին հունական պոեզիայի, որպես պատմական աղբյուրի նշանակությունը:

#### Մ. Թ. Ա. V Դ. ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ: ԼՈԳՈԳՐԱՖԻԱՆԵՐԸ

Գրական աղբյուրների ամենակարևոր խումբը կազմում են հին հունական գրողների՝ պատմագիրների ստեղծագործությունները, որոնցից հնագույնները գրվել են դեռևս արիստիկ շրջանի վերջում: Այդ գործերի արմատները նույնպես հասնում են ժողովրդական էպոսին. սկզբում դրանք կարծես թե կազմում էին նրա շարունակությունը, բայց ոչ չափածո, այլ որպես արձակ:

Առաջին արձակագիր գրողները, հունարեն՝ լոգոգրաֆները, մանրամասնորեն նկարագրում էին առասպելական ժամանակները և հակիրճ ձևով՝ ավելի ուշ շրջանի անցքերը: Նրանք փորձում էին համակարգել հին առասպելները, սակայն, ըստ էության, միշտ չէ, որ տարբերում էին առասպելը իրականությունից: Նրանց ստեղծագործություններում զգալի տեղ էր հատկացվում ազգագրական ու



աշխարհագրական նկարագրություններին: Իրենց երկերը լոգոգրաֆները սովորաբար գրում էին կամ ժամանակագրությունների ձևով՝ պատմելով հայրենի քաղաքների առասպելական ու կիսաառասպելական անցյալի մասին, կամ էլ ծագումաբանության ձևով, այսինքն որպես առասպելական հերոսների տոհմաբանություն: Պատմական գրականությունը ծագել է փոքրասիական Հոնիայում: Մշտապես առնչվելով ոչ հունական ցեղերի ու ժողովուրդների հետ, լոգոգրաֆները ուշադրություն էին նվիրում նաև «բարբարոսների», այսինքն հույների համար անհասկանալի լեզվով խոսող, ինչ-որ բան «բարբար» քրթմնջացող մարդկանց աշխարհի նկարագրությանը: (Այն ժամանակ բարբարոս բառը շուներ վիրավորական իմաստ, այն լոկ նշանակում էր այլազգի), լոգոգրաֆների գործերից մեղ հասել են միայն փոքր հատվածներ ավելի ուշ շրջանի գրողների մեջբերումներում կամ վերապատումներում: Որոշ լոգոգրաֆների մենք գիտենք միայն նրանց անուններով կամ առանձին գործերի վերնագրերով:

Տարբերում են լոգոգրաֆների ավագ սերունդ, որը գրել է մ. թ. ա. VI դ. ու V դ. առաջին կեսին և կրտսեր սերունդ՝ մ. թ. ա. V դ. երկրորդ կես: Լոգոգրաֆներից սովորաբար ամենանշանավորն է համարվում Հեկատեոս Միլետացին (մոտ մ. թ. ա. 540—մոտ մ. թ. ա. 478): Նա հայտնի է որպես երկու աշխատությունների հեղինակ՝ պատմական, որը կոչվում է «Ծագումաբանություն»՝ 4 գրքով (գիրքը համապատասխանում է այժմյան մեծ զխին) ու աշխարհագրական՝ «Երկրի նկարագրություն» խորագրով: Հեկատեոսը փորձում է քնննադատորեն վերլուծել առասպելները, սակայն նրա քննադատությունը վերածվում է առանձին առասպելական անցքերի կամայական մեկնաբանմանը՝ նրանց ճշմարտացի լինելը պարզելու տեսակետից: Հեկատեոսը շատ էր ճանապարհորդել Հունաստանի սահմաններից դուրս ու նկարագրել տարբեր երկրներ՝ ըստ իր դիտումների ու դրանց մասին պատմածների: Հեկատեոսը Միլետոսի քաղաքական գործիչ էր ու բանակցություններ էր վարում Պարսկաստանի հետ հակապարսկական անհաջող ապստամբությունից հետո:

Կրտսեր սերնդի լոգոգրաֆներից առավել հայտնի էր Հելլանիկոս Միտիլենացին (ծնվել է մ. թ. ա. մոտ 480 թ., մահացել մ. թ. ա. V—IV դդ. սահմանագծին): Նա մի քանի «Տոհմաբանությունների» հեղինակ էր և մեծ ուշադրություն նվիրեց ժամանակագրության ճշտմանը: Ինչպես մյուս լոգոգրաֆները, Հելլանիկոսը ձգտում էր համակարգել առասպելները: Նա առաջինը գրեց հատուկ աշխատություն՝ նվիրված Աթենքի պատմությանը, որը անվանեց «Ատթիս»: Հետագայում Աթենական պետության պատմությունով զբաղ-

վեցին շատ հեղինակներ, որոնք հայտնի են ատտիստգրաֆներ անունով:

Հուլյն-պարսկական պատերազմների ահեղ անցքերն ու հաղթանակից հետո ստրկատիրական Հելլադայի ծաղկումը ուժեղացրին հուլյների հետաքրքրությունը իրենց ու հարևան երկրների անցյալի նկատմամբ: Հուլյն-պարսկական պատերազմները տվեցին սյուժեներ մ. թ. ա. V դ. գեղարվեստական գրականության գործերի համար: Այդ աշխատություններում հին հունական հեղինակները փորձեցին իմաստավորել վիթխարի պատմական իրադարձությունները: Գասական ողբերգությունների մեծ հեղինակ էսքիլեսը երգեց հուլյների հաղթանակը «Պարսիկներ» ողբերգությունում: Նա ինքը պատերազմների ակտիվ մասնակից էր ու գեղարվեստական կերպարներում նկարագրեց անկախության համար մարտնչող հելլենների հայրենասիրական վերելքը: Սակայն ընդգծելով հուլյների զինվորական ու քաղաքացիական առաքինությունները, էսքիլեսը՝ որպես իր դարի զավակ, փոքրիկ Հունաստանի հաղթանակը հսկայական պարսկական տերության նկատմամբ վերջին հաշվով բացատրում էր աստվածների օգնությամբ:

Հին հունական գրականության յուրահատուկ ճյուղը՝ պատմագրությունը, ստացավ հզոր խթան ոչ թե հնագույն առասպելները, այլ մերձավոր վիթխարի պատմական անցքերը խորությամբ ուսումնասիրելու ու ընդհանրացնելու համար: Եթե լոգոգրաֆներն իրենց գլխավոր ուշադրությունը նվիրում էին առասպելական հնությունը, իսկ շոշափելով մոտ անցյալը, նկարագրում էին այն հակիրճ ձևով, ապա մ. թ. ա. V դ. պատմագիրները սկսեցին մանրամասնորեն շարադրել հատկապես իրենց ժամանակի անցքերը:

Հին հունական պատմագրության նոր ուղղության առաջին նշանավոր ներկայացուցիչը Հերոդոտոսն էր (մ. թ. ա. մոտ 484—425 թթ.), որը դեռևս անտիկ ժամանակներում կոչվեց «պատմահայր»: Հերոդոտոսը ծնվել էր դորիական Հալիկաոնասոս քաղաքում՝ միջնորդային առևտրի աշխույժ կենտրոնում, որը գտնվում էր Փոքր Ասիայի հարավարևմտյան ափին, հելլենական ու «բարբարոսական» աշխարհների սահմանում: Հերոդոտոսի վաղ մանկության օրոք Հալիկաոնասոսը կախման մեջ էր գտնվում պարսկական տերությունից, որից այն ազատվեց հուլյն-պարսկական պատերազմների ժամանակ: Հերոդոտոսը պատկանում էր տեղական ազնվականությանը: Երիտասարդ տարիքում նա մասնակցեց բռնապետության գեմ մղված պայքարին ու ստիպված եղավ հեռանալ հայրենի քաղաքից: Նա շատ է ճանապարհորդել: Եղել է Փոքր ու Առաջավոր Ասիայի տարբեր տեղերում ու, ըստ ամենայնի, արևելքում հասել

Մարաստան ու Պարսք: Հերոդոտոսը այցելել է Միջագետք, Եգիպտոս, Լիբիա, հնարավոր է, եղել էր Սիկիլիալոս: Բացի այդ, Հերոդոտոսը ճանապարհորդել է Բալկանյան Հունաստանում, Մակեդոնիայում, Թրակիայում, ապրել Օլվիայում ու հնարավոր է, եղել է նաև Կողքիսում: Նրա դիտումների շրջանակը բավական լայն էր: Հերոդոտոսը երկար ապրեց Աթենքում՝ Պերիկլեսի կառավարման օրոք ու մերձեցավ նրա «խմբակի» հետ, որը միավորում էր այն ժամանակի մշակույթի առաջավոր գործիչներին: Մ. թ. ա. 443 թ. Հերոդոտոսը մեկնեց Հարավային Իտալիա ու մասնակցեց Աթենքի ղեկավարութչյաժբ նոր՝ Թուրիա գաղութի հիմնադրմանը: Այստեղ նա ապրեց իր կյանքի վերջին տարիների մեծ մասը: Հերոդոտոսի մահվան տեղը ստույգ հայտնի չէ. ըստ որոշ տվյալների նա վախճանվել է Թուրիայում, այլ հաղորդումների համաձայն՝ Աթենքում:

Հերոդոտոսը պատկանում էր պարսիկներին հաղթելուց հետո մ. թ. ա. V դ.) Աթենքում ու այլ քաղաք-պետութչյուններում ստրկատիրական տնտեսութչյան և մշակույթի սկսված ծաղկման շրջանի գործիչների ավագ սերնդին: Այդ սերնդին բնորոշ էր մի կողմից եռանդ, հետաքրքրասիրութչյուն, նորարարութչյուն, իսկ մյուս կողմից նրա գիտակցութչյունը ծանրաբեռնված էր հին կրոնական աշխարհայացքով: Բոլոր այդ գծերը հատուկ են մ. թ. ա. V դ. երկրորդ կեսի գեղարվեստական ու գիտական արձակի մեծ ստեղծագործութչյանը՝ Հերոդոտոսի անտիկ աշխարհում լայնորեն հայտնի «Պատմութչյանը»: Հետագայում «Պատմութչյունը» բաժանվեց ինը մասերի (գրքերի) ըստ գիտութչյան ու արվեստի հովանավորուհիների՝ մուսանների թվի: Յուրաքանչյուր գիրքը կոչվում էր մուսաններից մեկի անունով: Հերոդոտոսի պատմվածքի հիմնական թեման հույն-պարսկական պատերազմներն են: Գրանք նկարագրված են վերջին հինգ գրքերում (5-ից—9-ը), ընդ որում 9-րդ գիրքը հասցված է մ. թ. ա. 478 թ.՝ մինչև պարսկական զորքերը Եվրոպայից Ասիա հետ մղելու ժամանակները: Գործում շկա ընդհանուր եզրափակում: Ըստ երեվոլութչին, Հերոդոտոսը չէր հասցրել ավարտել իր աշխատութչյունը, որը նա գրում ու վերամշակում էր իր կյանքի մայրամուտին, Պելոպոնեսյան պատերազմի նախօրյակին և սկզբին: Առաջին շորս գրքերը կազմում են ներածութչյուն, որը շարադրում է Հունաստանի ու հարևան տարածքների և երկրների՝ Փոքր Ասիայի, Լիբիայի, Եգիպտոսի և այլոց պատմութչյունը մինչև հույն-պարսկական պատերազմները: Նկարագրված է նաև պարսկական տերութչյան առաջացումն ու կազմակերպումը:

«Պատմութչյունում» կան բազմաթիվ նահանջներ ու ներմուծված

պատմվածքներ, որոնք, սակայն, չեն խախտում աշխատության ընդհանուր միասնությունը: Մերձավոր Արևելքի երկրների ու Հունաստանի փոխադարձ կապերի գաղափարը մնում է իշխող: Առանձին էքսկուրսներ կապված են պարսկական նվաճումների ու արշավանքների պատմության շարադրանքի հետ: Պատմելով պարսկական թագավոր Դարեհի կողմից սկյութների դեմ ուղղված անհաջող արշավանքի մասին, Հերոդոտոսը նկարագրում է հյուսիսային մերձսևծովյան շրջանների բնական պայմանները, սկյութների ու նրանց հարևանների ապրելակերպը: Այսպիսով, նրա աշխատությունը պարունակում է տեղեկություններ նաև ՍՍՀՄ-ի հարավի պատմության մասին:

«Հերոդոտոս Հալիկաոնասցին ժողովեց պատմությունն այս, որպեսզի ժամանակը չընջի մարդկանց արարքները և անհայտ չմնան այն մեծ և հիասքանչ գործերը, որ կատարել են մասամբ հելլենները, մասամբ բարբարոսները. մանավանդ չմոռացվի և այն, թե ինչ պատճառով նրանք պատերազմեցին իրար դեմ»<sup>\*</sup> այսպես է սկսում Հերոդոտոսը իր պատմությունը, որը դրա բովանդակության գրավչության ու մանրամասնության տեսակետից անտիկ ընթերցողները համեմատում էին Հոմերոսի պոեմների հետ: Հերոդոտոսը չէր հավակնում պնդելու իր պատմածի լրիվ արժանահավատությունը: Այդ մասին նա արտահայտվում է ուղղամտորեն. «Ես պարտավոր եմ հաղորդել այն ամենը, ինչ պատմում են, բայց այդ ամենին հավատալ, իհարկե, ես պարտավոր չեմ: Այս սկզբունքին ես կհետևելեմ իմ ամբողջ պատմության մեջ» (VII, 152): Հերոդոտոսը մեծ ուշադրություն է նվիրում «բախտին», «ճակատագրին» ու աստվածների միջամտությանը մարդկանց գործերին:

Նա հավատում էր գործած հանցանքների համար հատուցման անխուսափելիությանն ու չափից ավելի երջանիկ և հպարտ մարդկանց չհանդուրժող աստվածների նախանձին՝ աստվածները նման մարդկանց վերիջվերջ ուղարկում էին որևէ դժբախտություն: «Աստված չի հանդուրժում, որ որևէ մեկը, բացի իրենից, բարձր կարծիք ունենա սեփական անձի մասին» (VII, 10): Հերոդոտոսը հավատում էր հրաշքներին ու նախանշաններին: Նա հատկապես հարգում էր դելփյան պատգամախոսին ու բազմիցս բերում էր նրա ասույթները: Չնայած կրոնական աշխարհայացքի այս գծերին, Հերոդոտոսը ձգտում է իր ժամանակի առաջավոր մարդկանց առողջ դատողության տեսանկյունից մեկնաբանել ու քննադատել, ինչպես նաև առասպելները և անհավանական պատմվածքները: Դրանում արտահայտ-

<sup>\*</sup> Այստեղ և այսուհետև Հերոդոտոսից կատարված թարգմանությունները՝ Ս. Գրքաշարյանի:

վեց սոփեստների՝ մ. թ. ա. V դ. երկրորդ կեսին մոդայական դարձած քննական փիլիսոփայության ազդեցությունը:

Հերոդոտոսի աղբյուրները բազմազան են, սակայն շատ դեպքերում դրանք հիմնվում են բանավոր ավանդույթի ու անձնական դիտումների վրա: Հերոդոտոսն օգտագործել է նաև իր նախորդների՝ լոգոգրաֆների, հատկապես Հեկատեոսի աշխատություններն ու վավերագրական գրառումները: «Պատմահոս» կողմից հավաքված վիթխարի ու բազմազան փաստական նյութի արժանահավատությունը կախված է օգտագործված սկզբնաղբյուրներից, սակայն այդ նյութը մեծ մասամբ լավորակ է ու ժամանակի ընթացքում ավելի է հաստատվում հնագիտական տվյալներով: Ճիշտ է, այդ նյութն ընդմիջարկվում է առասպելներով, տարբեր անհավատալի դեպքերի, իսկ երբեմն անգամ անհեթեթությունների շարադրանքով: Հերոդոտոսը աթենական ստրկատիրական դեմոկրատիայի ջերմ կողմնակից էր ու հելլեն հայրենասեր: Քանի որ նա գրում էր այն շրջանում, երբ պարսիկների դեմ պայքարի մասին եղած հիշողություններն արդեն դուրս էին մղվում Աթենքի ու Սպարտայի միջև հարաբերությունների սրման, իսկ հետո և պատերազմի հետևանքով, ապա պարսիկների հանդեպ նա վերաբերվում էր առանց թշնամանքի: Նկարագրելով հույն-պարսկական պատերազմները, Հերոդոտոսը ընդգծում է, որ փխավոր դերը պատերազմներում խաղում էր Աթենքը: Սպարտայի նկատմամբ նրա վերաբերմունքը զուսպ էր: Հերոդոտոսի վերաբերմունքը հունական այլ պետությունների հանդեպ որոշվում էր ոչ միայն նրանց քաղաքականությամբ հույն-պարսկական պատերազմների ժամանակ, այլ նաև Պելոպոնեսյան պատերազմի շրջանում Աթենքի նկատմամբ նրանց գրաված դիրքով:

Հին հունական պատմագրության խոշորագույն ներկայացուցիչն էր Հերոդոտոսի կրտսեր ժամանակակիցը՝ Թուկիդիդեսը, Օլոնբսի որդին (մ. թ. ա. մոտ. 460—396 թթ.): Նա արիստոկրատական ծագում ունեցող աթենական հարուստ քաղաքացի ու պետական գործիչ էր: Պելոպոնեսյան պատերազմի ժամանակ Թուկիդիդեսը որպես ստրատեգոս անհաջող ղեկավարեց աթենական ռազմածովային նավատորմի թրակիայի ափերի մոտ, որի համար արտաքսվեց Աթենքից ու աքսորում մնաց շուրջ 20 տարի: Նա բնակություն հաստատեց Թրակիայում, որտեղից ուշադիր հետևում էր Պելոպոնեսյան պատերազմի անցքերին՝ մտադրվելով նկարագրել դրանք: Նա ջանասիրաբար հավաքում էր նյութեր ու այդ նպատակով այցելեց շատ ճակատամարտերի վայրերը, այդ թվում հնարվոր է, եղավ նաև Սիկիլիայում: Պատերազմի ավարտից առաջ Թուկիդիդեսը ներում ստացավ ու վերադարձավ Աթենք:

Համաձայն իր սեփական հավաստման, «Պատմության» վրա աշխատանքը սկսվել էր դեռևս մինչև Աթենքից նրա արտաքսումն ու, ըստ երևույթին, ընդմիջումներով շարունակվեց նրա ամբողջ կյանքի ընթացքում: Հետագայում «Պատմությունը» բաժանվեց 8 գրքերի. 1-ին գիրքը պարունակում է Հունաստանի պատմության հակիրճ, բայց խնամքով կազմված ակնարկ՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև Պելոպոնեսյան պատերազմի սկիզբը: Քուկիդիդեսը կասկածանքով էր վերաբերվում հին ժամանակներից պահպանված տեղեկություններին ու հնարավոր չէր համարում մանրամասնորեն գրել դրանց մասին: 1-ին գիրքը նաև կարևոր աղբյուր է մ. թ. ա. V դարի կեսի անցքերի ուսումնասիրության համար, քանի որ շեն պահպանվել դրան քիչ թե շատ ժամանակակից կամ ժամանակով մոտ այլ պատմական գործեր: «Պատմության» մյուս յոթ գրքերը նկարագրում են Պելոպոնեսյան պատերազմը: 8-րդ գիրքն ընդհատվում է մ. թ. ա. 411 թ. իրադարձությունների շարադրանքով: Հավանաբար Քուկիդիդեսը մահացավ՝ չհասցնելով ավարտել իր աշխատանքը:

Քուկիդիդեսը Աթենքի ծաղկման ժամանակաշրջանի գործիչների կրտսեր սերնդի ներկայացուցիչն էր, սերունդ, որը լավ ծանոթ էր սոփիստների ու Սոկրատեսի փիլիսոփայությանը (տե՛ս էջ 497): Համեմատելով Քուկիդիդեսի ու Հերոդոտոսի աշխատությունները, Պլարիի է հստակ պատկերացնել այն արագ առաջընթացը, որ այն ժամանակ ապրում էին Հելլադայի առաջավոր պետություններն ու առաջին հերթին՝ Աթենքը:

Քուկիդիդեսի «Պատմության» հիմնական աղբյուրներն էին ականատեսների՝ իր կողմից ստուգված ու համեմատված պատմությունները, անձնական դիտումները և վավերագրային տվյալները: Նա ձգտում էր ճշտության ու օբյեկտիվության: Խնամքով պարզում էր անցքերի պատճառներն ու շարժառիթները, կատարում էր հմուտ քաղաքական վերլուծություն, շարադրանքը վարում էր ժամանակագրական տեսակետից ճշտորեն, ըստ յուրաքանչյուր տարվա ամառային ու ձմեռային ռազմարշավների: Պատգամախոսների, նախանշանների ու աստվածների միջամտության մասին պատմությունները նա համարում էր միայն մարդկանց վարքի վրա ազդող հոգեբանական գործոն: Պատմական զարգացման ընդհանուր ըմբռնման գործում Քուկիդիդեսը մի մեծ քայլ առաջ կատարեց Պատմությունը, ըստ Քուկիդիդեսի, զարգանում է որպես հոգեբանական պատճառականությամբ պայմանավորված պրոցես, այսինքն որպես մարդկանց տարբեր խմբերի, այդ թվում նաև առանձին ղեկավար գործիչների շահերի բախման արդյունք. շահեր, որոնք ծնվում են

Նրանց բնավորությամբ կամ, ինչպես արտահայտվում է Թուկիդիդեսը՝ «մարդկային բնության հատկությամբ» (1, 22): Այսպիսով, կարողանալով մատերիալիստորեն բացատրել առանձին կոնկրետ պատմական իրադարձությունները, նա իր ընդհանուր պատմական ըմբռնմամբ մնաց իդեալիստ, մի բան, որ ընդհանրապես բնորոշ է անտիկ աշխարհի պատմիչներին: Իր հիմնական ուշադրությունը Թուկիդիդեսը նվիրեց ռազմական ու արտաքին քաղաքական անցքերի շարադրմանն ու բացատրությունը, ընդ որում ընդգծում էր պատերազմի պատճառած աղետները: Թուկիդիդեսը հնում պատմագրության մեջ լայնորեն տարածված դիդակտիկ ուղղության առաջին ու խոշորագույն ներկայացուցիչն էր: Այդ տեսակետից նրա «Պատմությունը» ոչ միայն գիտական, այլև ուսանելի ու որոշ շահով գեղարվեստական պատմվածք էր՝ անցյալի ծանր անցքերի մասին: Թուկիդիդեսը կենդանացնում է շարադրանքը քաղաքական գործիչների ու զորահրամանատարների հատուկ կազմած ճառերով: Այդ հնարանքը հետագայում մեծ ժողովրդականություն ձեռք բերեց անտիկ պատմաբանների մոտ: Իր քաղաքական հայացքներով Թուկիդիդեսը շահավոր օլիգարխիայի կողմնակից էր, թեև խոնարհվում էր Պերիկլեսի առաջ: Թուկիդիդեսի քաղաքական հայացքներն իրենց արտահայտումը ունեցան օլիգարխիայի որոշ իդեալականացման ու Կլեոնի՝ Աթենքի արմատական դեմոկրատական ղեկավարի բացասական գնահատման մեջ:

Որոշ պատմական տեղեկություններ են պարունակվում մ. թ. ա. V դ. հույն գրողների գեղարվեստական գործերում՝ էսփիլեսի, Սոֆոկլեսի ու Եվրիպիդեսի ողբերգություններում և հատկապես Արիստոփանեսի կատակերգություններում: Սակայն դրանք ուսումնասիրելիս պետք է հաշվի առնել այդ հեղինակների քաղաքական միտումները, մասնավորապես՝ բնապետության հակառակորդ, բայց հին հաստատությունների պահպանման կողմնակից էսփիլեսի հայացքների որոշակի պահպանողականությունն ու մանր և միջին հողատերերի՝ գյուղացիների շահերի արտահայտիչ Արիստոփանեսի բացասական վերաբերմունքը արմատական աթենական քաղաքային դեմոկրատիայի նկատմամբ: Նշված գյուղացիները հատկապես տուժում էին ձգձգվող Պելոպոնեսյան պատերազմից և ցանկանում էին խազազություն: Արիստոփանեսի մի շարք քաղաքական սուր կատակերգություններ տողորված են խաղաղության գաղափարով:

Մ. թ. ա. V դ. Հելլադայի աշխույժ քաղաքական կյանքը նպաստում էր հրապարակախոսական գործերի՝ ճառերի ու պամֆլետների լայն տարածմանը: Անհայտ հեղինակի այդպիսի պամֆլետներից մեկը հասել է մեզ Կեղծ-Քսենոֆոնի, «Աթենական պոլիտես» անու-

նող: Այն պայմանականորեն այդպես է կոչվում, որովհետև երկար ժամանակ, ըստ ավանդույթի, վերագրվում էր մ. թ. ա. IV դ. առաջին կեսի գրող ու պատմիչ Քսենոֆոնին: Պամֆլետի հեղինակը, որը օլիգարխ էր ու աթենական արիստոկրատական դեմոկրատիայի թշնամի, քննադատում է աթենական կարգերը, բայց նրա կողմից հավաքված է մ. թ. ա. V դ. երկրորդ կեսի աթենական հասարակութայն ու պետութայն բնութագրման համար բացառիկ արժեքավոր նյութ:

#### Մ. Թ. Ա. IV Դ. ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մ. թ. ա. IV դ. Հունաստանում խիստ սրվեցին քաղաքական ու սոցիալական հակասությունները: Եթե մ. թ. ա. V դ. գրողները գիտակցաբար չէին խեղաթյուրում իրականությունը, ձգտում էին օբյեկտիվորեն նկարագրել իրադարձությունները, ապա այդ արդեն չի կարելի ասել մ. թ. ա. IV դ. գրողների մասին: Այդ դարի առաջին կեսին է վերաբերում Քսենոֆոնի (մ. թ. ա. 430—355 թթ.)՝ խոշոր պատմիչի, գրողի, հրապարակախոսի, Սոկրատեսի փիլիսոփայության տարածողի բազմակողմանի գործունեությունը: Քսենոֆոնը պատկանում էր երիտասարդ աթենական ստրկատիրական դեմոկրատիայի նկատմամբ թշնամաբար տրամադրված աթենական հարուստ օլիգարխների թվին: Երիտասարդ հասակում նա որոշ ժամանակ սովորել էր փիլիսոփա Սոկրատեսի մոտ, որը հայտնի էր իր հակադեմոկրատական հայացքներով, հետո որպես վարձկան ծառայել էր Կլուրոս Կրտսերի զորքերում. վերջինս պայքարում էր իր ավագ եղբոր՝ Արտաքսերքսես արքայի դեմ հանուն պարսկական գահի: Կլուրոսի կործանումից ու 10.000 հույն վարձկանների նահանջից հետո, որը Քսենոֆոնը հետագայում նկարագրեց իր հայտնի, հուշագրային բնույթ ունեցող, հույժ միտումնավոր «Անաբասիս» աշխատության մեջ, նա իր վարձկանների մի մասի հետ մտավ սպարտական բանակի շարքերը: Աթենքի դեմ ռազմական գործողություններին մասնակցած լինելու համար աթենական կառավարությունը հեռակա կարգով դատապարտեց Քսենոֆոնին ցմահ արտաքսման՝ որպես դավաճանի: Փոխված քաղաքական կացությունը՝ Թերեի ուժեղացումից երկյուղ կրած Աթենքի ու Սպարտայի ժամանակավոր մերձեցումը, հնարավորություն տվեց Քսենոֆոնին կյանքի վերջում ներում ստանալ:

Քսենոֆոնը, լինելով Թուկիդիդեսի երկրպագու, հանձն առավ շարունակել նրա՝ Պելոպոնեսյան պատերազմին նվիրված անավարտ «Պատմությունը»: Քսենոֆոնը այդ կատարեց «Հունաստանի պատմություն»-ում՝ իր առավել կարևոր պատմական երկում: Այն



բաղկացած է յոթ գրքից ու սկսվում է մ. թ. ա. 411 թ. դեպքերի շարադրությամբ: Քսենոֆոնը անգամ որոշ չափով համաձայնեցրեց իր աշխատության առաջին նախադասությունը այն բառերի հետ, որոնցով ընդհատվում էր Թուկիդիդեսի «Պատմությունը»: Քսենոֆոնի աշխատությունն ավարտվում է Մանտինեայի մոտ եղած ճակատամարտով (մ. թ. ա. 362 թ.), երբ բեռվտացիների ու նրանց դաշնակիցների զորքերը շախչախեցին սպարտացիներին: Այսպիսով, Քսենոֆոնը նկարագրում է միայն իրեն ժամանակակից անցքերը:

Իբրև պատմաբան Քսենոֆոնը շատ բանով զիջում էր իր մեծ նախորդին: Նա հավատում է նախանշաններին, գուշակումներին ու երազներին, կարևորություն է տալիս աստվածների միջամտությանը պատմական իրադարձություններին, որոնք հաճախ վեր է ածում առանձին անձանց միջև եղած երկպառակությունների: Ի տարբերություն «Ճշմարտությանը ձգտող» Թուկիդիդեսի, Քսենոֆոնը շատ միտումնավոր է: Ժամանակի քաղաքական ու սոցիալական իրավիճակը ցայտուն կերպով արտահայտվեց Քսենոֆոնի ստեղծագործության մեջ: Ի տարբերություն Թուկիդիդեսի, նա իդեալականացնում էր Սպարտան ու գովերգում հետադիմական սպարտական կարգերը: Իր աշխատությունում զլխավոր ուշադրությունը նվիրելով անկման շրջանի Սպարտայի պատմությանը, Քսենոֆոնը լուռության էր մատնում Սպարտայի համար հատկապես տհաճ անցքերը: Կամ, թեթևակի հիշատակելով դրանք, նա ընթերցողի ուշադրությունը շեղում էր քիչ կարևոր իրադարձությունների վրա՝ հանգամանորեն նկարագրելով դրանք: Քսենոֆոնի «Հունաստանի պատմությունը» ունի հուշագրության բնույթ: Այս առումով էլ այն արժեքավոր է ժամանակակից հետազոտողի համար: Չնայած շարադրանքի անհամաչափությանը, բացթողումներին ու միտումնավոր լուռությանը, աշխատությունը հագեցված է արժեքավոր հավաստի փաստերով, որոնք հեղինակը հավաքել էր որպես ականատես ու որպես այն ժամանակի նշանավոր քաղաքական գործիչների հետ շփվող մարդ:

Քսենոֆոնը գրել է տարբեր թեմաներով մի շարք գործեր: «Լակեդեմոնյան պոլիտես» փոքր քննախոսությունում նա նկարագրել է Սպարտայի պետական կարգը: «Տնտեսության մասին» քննախոսությունում կան հետաքրքիր տեղեկություններ մ. թ. ա. IV դարի առաջին կեսի Հունաստանի տնտեսության, սոցիալական ու կենցաղային առանձնահատկությունների մասին: Քննախոսությունը զբրված է զրույց-երկխոսության ձևով: Գլխավոր զրուցակիցը Սոկրատեսն է: Քսենոֆոնը մի շարք երկերում հատուկ շարադրում է Սոկ-

րատեսի փիլիսոփայական հայացքները: Քսենոֆոնին է պատկանում նաև պատմավեպի նմանվող մի մեծ գործ՝ «Կյուրոպեդիան» («Կյուրոսի դաստիարակութունը»), որտեղ նա իդեալականացնում է պարսկական տերութւյան հիմնադիր Կյուրոս II-ին ու քարոզում միապետական գաղափարներ:

Ուշագրավ է Քսենոֆոնին վերագրվող Աթենք քաղաքի «Եկամուտների մասին» քննախոսութւյունը, որի հեղինակը հանդես է գալիս ստրկատիրոջ տեսանկյունից, կավրիոնի հանքերում ստրուկներին առավել օգտավետ ձևով շահագործելու դեղատոմսերով:

Քսենոֆոնի ժամանակակիցների շարքում, որոնց գործերը պարունակում են որոշակի պատմական նյութ, առաջին հերթին պետք է հիշաակել Սոկրատեսի մյուս աշակերտին՝ հետադիմական փիլիսոփա-իդեալիստ Պլատոնին: Լինելով ստրկատիրական դեմոկրատիայի հակառակորդ, Պլատոնը, Քսենոֆոնի նման, իդեալականացնում էր սպարտական կարգերը: Նա զբաղվեց իր տեսակետից լավագույն հասարակական ու պետական կառուցվածքի նախագծի տեսական մշակմամբ: Այս հարցի կապակցութւյամբ նա գրեց երկու քննախոսութւյուն՝ «Պետութւյուն» ու «Օրենքներ»: Այստեղ կան տեղեկութւյուններ իրապես գոյութւյուն ունեցող հունական պետութւյունների պետական կառուցվածքների մասին, որոնք Պլատոնը քննադատում է: Որոշ պատմական նյութեր կան նաև նրա այլ աշխատութւյուններում:

Ստրկատիրական պոլիսների հասարակական ու պետական համակարգի ճգնաժամը կյանքի կոչեց պոլիսների ներքին: Կառուցվածքին նվիրված աշխատութւյուններ: Այս թեմայով գրված ամենանշանավոր գործերը պատկանում են հին հունական խոշորագույն փիլիսոփա Արիստոտելին (մ. թ. ա. 384—322 թթ.): Իր աշակերտների հետ միասին նա կազմեց, 158 «պոլիտեաներ»՝ այսինքն հունական և որոշ ոչ հունական պետութւյունների պետական կառուցվածքի պատմական նկարագրութւյուններ: Մեզ հասել է միայն «Աթենական պոլիտեան» (տե՛ս էջ 518), մյուսները պահպանվել են աննշան հատվածներով: «Պոլիտեանների» նյութերի հիման վրա Արիստոտելը կազմեց մի ընդհանրացնող աշխատութւյուն պետութւյան էութւյան մասին՝ «Պոլիտիկա»: Այստեղ քննարկվում են պետական կառուցվածքի տարբեր ձևերը, և դատողութւյուններ են արվում ազատ քաղաքացիների՝ ստրկատերերի համար իդեալական քաղաքական կարգի վերաբերյալ: Արիստոտելը օլիգարխիային մոտեցող շափավոր ստրկատիրական դեմոկրատիայի կողմնակից էր:

Իր պատմական աշխատութւյուններում նա աղբյուրների նկատմամբ ցուցաբերեց մեծ գիտակութւյուն ու քննադատական մոտե-

ցում: Այդ առումով ավելի, քան մյուս պատմիչները նա մտտ է թուկիդդեսին: Սակայն օլիգարխների հանդեպ տաժած համակրանքը ստիպեց Արիստոտելին ավելորդ դյուրահավատությամբ օգտագործել նրանց կողմնակալ քաղաքական քննախոսությունները: Այս վերջին հանգամանքը որոշ չափով նվազեցնում է նրա պատմական աշխատությունների արժեքը:

Մ. թ. ա. V դ. վերջին և IV դ. հունական գրականության մեջ մեծ նշանակություն ձեռք բերեցին դատական ու քաղաքական ճանաչումը: Հոնտորները մշտապես հանդես էին գալիս ժողովրդական ժողովում, ճառեր էին կազմում դատարաններում ելույթ ունենալու համար: Ճառերը վերածվեցին գեղարվեստական-հրապարակախոսական գրականության հատուկ ժանրի: Դրանց բովանդակությունն արտացոլում է սուր քաղաքական անցքերը, հին հույների տարբեր հասարակական խավերի միջև եղած սոցիալական հարաբերությունները ու կենցաղային առանձնահատկությունները: Ճառերը ծնվում էին անցքերի բովում, արտացոլում հենց այն ժամանակի իրադրությունը, ուստի նրանց բովանդակությունն ու անգամ նրանց ծայրահեղ կողմնակալությունը արժեքավոր են պատմական գիտության համար:

Մ. թ. ա. V դ. վերջին—IV դ. սկզբին ականավոր դատական հոնտոր էր Լիսիասը: Մ. թ. ա. IV դարում հայտնի էին Իսոկրատեսը, Դեմոսթենեսը, Եսքինեսը և այլ դատական ու քաղաքական հոնտորներ: Մ. թ. ա. IV դարի բարդ պատմությունը զգալի չափով կարող է ուսումնասիրվել հոնտորների ճառերում պարունակվող նյութերի միջոցով: Ցանկանալով ներգործել ունկնդիրների վրա, հոնտորները հոգ էին տանում իրենց ճառերի ոճի մասին. նրանք մշակեցին հոնտորական արվեստի հնարանքների մի ամբողջ համակարգ՝ ճարտասանություն: Փորձառու ճարտասանները գրում էին շատ ճառեր նաև այլ անձանց համար. վերջիններս այդ ճառերը արտասանում էին իրենց անունից: Նման դեպքերում ճարտասանն ուսումնասիրում էր իր պատվիրատուին՝ կազմվելիք ճառը նրա շարժումներին, կուլտուրական մակարդակին, հայացքներին և այլնին համապատասխանեցնելու նպատակով: Շատ ճառեր չէին արտասանվում, այլ կատարում էին հրապարակախոսական հողվածների դեր: Խոշոր աթենական ճարտասան-հրապարակախոս էր Իսոկրատեսը: Նրա ճառերն ընթերցողին տանում են մ. թ. ա. IV դարի քաղաքականության խորքերը: Իսոկրատեսը Հունաստանի միավորման համար մղվող պայքարի գաղափարական ոգեշնչողն էր, միավորում, որը պետք է ապահովեր այդ շրջանում արդեն թուլացած Պարսկաստանի նվաճումը միացյալ ուժերով: Նրա գործունեու-

Քյունը գազափարապես նախապատրաստում էր մակեդոնական թագավորներ Փիլիպպոսի ու Ալեքսանդրի նվաճումները:

Հոնտորական հրապարակախոսութեան լայն ժողովրդականութունը ազդեցութուն գործեց պատմիչների աշխատանքի բնույթի վրա: Մ. թ. ա. IV դարում հունական ստրկատիրական քաղաք-պետութունների (պոլիսների) ճգնաժամային վիճակի շրջանում հունական պատմագրության մեջ հանդես է գալիս հոնտորական ուղղութունը: Պատմիչ-ճարտասանների գործերում զարգացան ձևապաշտական միտումներ: Նրանք մեծ ուշադրութուն էին հատկացնում գրական ոճի գեղեցկութեանը՝ ի վնաս հետազոտական խնդիրների: Ծարտասանական պատմագրության առավել հայտնի ներկայացուցիչներն էին Եփորոսը ու Թեոպոմպոսը, որոնց գործունեությունը վերաբերում է մ. թ. ա. IV դարի երկրորդ կեսին: Նրանց աշխատություններից մեզ հասել են միայն աննշան հատվածներ:

\* \*

Մ. թ. ա. IV դարում սիկիլիական պատմագիր Տիմոսը, որի երկերը նույնպես մեզ չեն հասել, սկսեց թվագրել անցքերն ըստ քառամյակների՝ օլիմպիադաների, հաշիվը սկսելով առաջին օլիմպիադայի առաջին տարվանից (մ. թ. ա. 776 թ.): Նա կատարեց ժամանակագրական հաշվարկներ օլիմպիական խազերում հաղթողների ցուցակների հիման վրա: Հետագայում ժամանակի հաշվումը ըստ օլիմպիադաների լայնորեն կիրառվեց պատմիչների կողմից:

#### ՉԵԼԵՆԻՍԱԿԱՆ ՈՒ ՀՈՒՄԵՆԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներն ու հելլենիզմի շրջանը նկարագրել են անցքերին ժամանակակից բազմաթիվ գրողներ և պատմիչներ: Նրանց գործերը պահպանվել են լոկ փոքր հատվածների ձևով:

Հելլենիզմի շրջանի ականավոր պապմիչ էր Պոլիբիոսը (մ. թ. ա. մոտ 201—120 թթ.): Նա ծնվել է Արկադիայում, Մեգալոպոլիս քաղաքում և Աքայան միութեան ստրատեգոսի որդին էր: Պոլիբիոսը հոռմեացիների կողմից Մակեդոնիայի նվաճման ժամանակ հեծելազորի հրամանատար էր, այսինքն այդ պատերազմում շեղջութուն պահպանող Աքայան միութեան ստրատեգոսի օգնականն էր: Այնուհետև Պոլիբիոսը հազար անվանի աքայացիների կազմում իբրև պատանդ ստիպված էր մեկնել Հռոմ: Հռոմում Պոլիբիոսը ապրեց 16 տարի, մ. թ. ա. 166-ից մինչև 150 թ.: Նա շփվում էր ստրկատիրական հոռմեական հասարակության կառավարող շրջանների ներկայացուցիչների հետ: Ժամանակի ընթացքում Պոլիբիոսը դարձավ Հռո-

մի ջերմ երկրպագու ու ձեռք բերեց հոռմեական պետական գործիչների վստահությունը: Հունաստանում անհաջող հակահոռմեական ապստամբությունից ու Կորնթոսի ավերումից հետո Պոլիբիոսը հոռմեացիների հանձնարարությունամբ հանդես եկավ որպես միջնորդ Հունաստանի ու Հռոմի միջև:

Պոլիբիոսը շատ էր ճանապարհորդել ու հավաքել էր մեծաքանակ նյութ իր 40 գրքից բաղկացած «Ընդհանուր պատմության» համար: Լրիվ պահպանվել են հինգ գրքերը, մյուսները հասել են հատվածաբար: Իր աշխատությունները Պոլիբիոսը սկսում է Իտալիայից մ. թ. ա. մոտ 272 թ. Պյուռոսի հեռանալուց հետո տեղի ունեցած անցքերով ու ավարտում մ. թ. ա. 146 թ. Կարթագենի և Կորնթոսի կործանմամբ ու Հռոմին Հունաստանի ենթարկումով: «Ընդհանուր պատմության» հիմնական թեման մ. թ. ա. II դարի առաջին կեսին Հռոմի հզորության արագ աճի ու նրա նվաճումների պատճառների բացահայտումն է: Այդ պրոբլեմը քննարկված է որպես միջերկրածովային երկրների ընդհանուր պատմության մի մաս, որը շարադրվում է ըստ օլիմպիադաների: Պոլիբիոսին է պատկանում «պրագմատիկ պատմություն» տերմինի ներմոծումը: Նրա կարծիքով, որը հիմնականում փոխ է առնված Թուկիդիդեսից, պատմությունը զարգանում է մարդկանց գործունեության հետեւանքով, ընդ որում մարդիկ գործում են ելնելով իրենց շահերից, այսինքն վերջին հաշվով հետևելով իրենց բնավորություններին: Անցքերը շարադրելու, հետազոտելու ու բացատրելու իր մեթոդներով Պոլիբիոսը բուլբոսից ավելի մոտենում է Թուկիդիդեսին: Նա լայնորեն օգտագործում է վավերագրական տվյալները, ձգտում է լայն ընդհանրացումների ու պատմության ընթացքի ընդհանուր հաջորդականության բացահայտմանը: Նա թերահավատ է պատմության մեջ աստվածների դերի հանդեպ: Պոլիբիոսը ուսուցանում է ընթերցողին ու ձգտում է գործնականում օգտակար լինել նրան «պատմությունից քաղած դասերով» (I, 1—2): Նա ուսուցողական ուղղության ներկայացուցիչն էր հին հունական պատմագրության մեջ: Պոլիբիոսը հմուտ քաղաքական ու ռազմական գործիչ էր ու գտնում էր, որ միայն փորձառու մարդիկ իրենց երկարամյա պրակտիկ գործունեության շնորհիվ կարող են ձեռք բերել պատմության հարցերում ճիշտ կողմնորոշվելու և հասարակության համար օգտակար պատմական գործեր ստեղծելու անհրաժեշտ հատկություններ: Սակայն նա մի շարք դեպքերում ի վիճակի չեղավ համոզիչ կերպով բացատրել պատմական անցքերը: Նման դեպքում նա օգնության էր կոչում «ճակատագրին», որը զգալի տեղ է գրավում նրա շարադրանքում: Պոլիբիոսի քաղաքական հայացք-

ներն իրենց կնիքը դրեցին նրա «Ընդհանուր պատմութեան» վրա: Լինելով արիստոկրատ, նա բացասաբար էր վերաբերվում դեմոկրատիային ու թշնամի էր ժողովրդական շարժումներին: Պոլիբիոսի աշխարհայացքի վրա ազդեցություն գործեց հելլենիզմի դարաշրջանում լայնորեն տարածված արտիկների իդեալիստական փիլիսոփայական դպրոցը: Հենց այդ դպրոցի ազդեցությամբ նա գրում է «Ճակատագրի» մասին ու առաջադրում վարկած միևնույն պետական ձևերի՝ միապետության, բռնակալության, արիստոկրատիայի, օլիգարխիայի, դեմոկրատիայի ցիկլային զարգացման և կրկնման մասին: Միապետությունը կրկին գալիս էր փոխարինելու դեմոկրատիային, ու ցիկլը նորից կրկնվում էր:

Պոլիբիոսի «Ընդհանուր պատմությունը» շարունակեց պատմագիր ու փիլիսոփա Պոսիդոնիոսը, որը գրել է մ. թ. ա. II դարի վերջին ու I դարի առաջին կեսին: Նրա աշխատությունը կորել է: Գրողների ու բանաստեղծների պահպանված երկերը և հելլենիստական ոչ պատմաբան գիտնականների աշխատությունները գալիս են լրացնելու մեր գիտելիքները այդ շրջանի վերաբերյալ:

Հունական պատմագրությունը զարգանում էր նաև Միջերկրականում հաստատված հռոմեական տիրապետության շրջանում, Մ. թ. ա. I դարում նրա ներկայացուցիչներից էր Իսոդորոսը: Նա ծնվել է Սիկիլիայում, մ. թ. ա. I դարի սկզբին, մահացել Օգոստոսի կառավարման ժամանակ, նույն դարի վերջին քառորդում: Նա շատ է ճանապարհորդել և երկար ժամանակ ապրել է Հռոմում, ուր շուրջ 30 տարի աշխատել է իր վիթխարի գործի՝ 40 գրքից կազմված «Պատմական գրադարանի» վրա: Ըստ մտահղացման այն համաշխարհային պատմություն էր Պահպանվել են աշխատության առաջին հինգ գրքերը. այստեղ հեղինակը իր շարադրանքն սկսում է անմիջապես երկրի վրա կյանքի առաջացումից, հետո տալիս է հին արևելյան երկրների պատմությունն ու դիցաբանությունը: 11-ից մինչև 20-րդ գրքերը նվիրված են Հին Հունաստանի պատմությանը՝ սկսած Քսերքսեսի արշավանքից, Մակեդոնիայի ու մասամբ Հռոմի պատմությանը: 20-րդ գիրքը ավարտվում է Ալեքսանդրի ժառանգների՝ դիադոքոսների միջև մ. թ. ա. IV դարի վերջում տեղի ունեցած պատերազմների նկարագրությամբ: Մյուս գրքերը մեզ են հասել հատվածաբար: «Պատմական գրադարանը» ավարտվում էր Հուլիոս Կեսարի կողմից Գալլիայի նվաճման պատմությամբ:

Իսոդորոսը բանաբաղ էր, ընդ որում չի ցուցաբերել անհրաժեշտ քննադատական վերաբերմունք աղբյուրների հանդեպ: Նա օգտագործել է իր նախորդների աշխատությունները, այդ թվում նաև մեզ չհասած գործերը: Իրանում է «Պատմական գրադարանի» որ-

պևս գրական պատմական աղբյուրի գլխավոր արժեքը: Պատմությունից քաղած օրինակների միջոցով Դիոդորոսը, ձգտել է ուսուցանել իր ընթերցողներին ու հրապուրել նրանց պատումի գրավչությամբ:

Հունաստանի ու հելլենիստական երկրների կյանքի մասին կարևոր տեղեկություններ է պարունակում մ. թ. ա. I դարի երկրորդ կեսին ու մ. թ. I դարի սկզբին ապրած հին հունական խոշորագույն աշխարհագետ Ստրաբոնի «Աշխարհագրությունը»:

«Աշխարհագրության» հիմքը կազմում են Ստրաբոնի անձնական ճանապարհորդական դիտումներն ու ուսումնասիրությունները, հելլենիստական աշխարհագետների ու պատմիչների աշխատությունների տվյալները, որոնք ձեռք էին բերվել հոմալեգիսների՝ հեռավոր վայրեր ձեռնարկած նվաճողական արշավանքների ու առևտրական նպատակներով կատարված ճանապարհորդությունների ընթացքում: Ստրաբոնը ձգտում էր աշխարհագրական նկարագրությունների ճշտությանը, վկայաբերում էր պատմական ու կենցաղային տեղեկություններ յուրաքանչյուր վայրի մասին և այլն: Իր աշխատությունն ստեղծելիս Ստրաբոնը հետապնդում էր նաև գործնական նպատակ՝ ըստ հնարավորին օգնել հոմեակական նահանգների աստիճանավորներին՝ կողմնորոշվելու տեղական պայմաններում:

Հունաստանի և այլ հելլենիստական երկրների պատմության մասին տեղեկություններ կան մ. թ. ա. I դարի հոմեակական պատմագիրների գործերում, որոնք նկարագրում են հոմեակական քաղաքականությունն արևելքում ու հոմեակական նվաճումները: Նմանօրինակ նյութը հատկապես շատ է Տիտոս Լիվիոսի «Հռոմի պատմությունը սկսած քաղաքի հիմնադրումից» աշխատության մեջ: Նրա տեղեկությունները լրացնում ու շարունակում են Պուլիբիոսի գործը:

Հունաստանի պատմության վերաբերյալ մի շարք տեղեկություններ կան հոմեակական հայտնի քաղաքական գործիչ, փիլիսոփա ու հոետոր Կիկերոնի գործերում:

Հելլենիստական դարաշրջանի ամբողջ պատմության միակ կապակցված շարադրանքը պահպանվել է մ. թ. ա. I դարի վերջում ապրած հոմեակական պատմիչ Պոմպեոս Տրոգոսի աշխատության հատընտիր համառոտագրության մեջ, որը կատարել է մ. թ. II դարի վերջի հոմալեգի գրող Հուստինոսը: Պոմպեոս Տրոգոսը գրել է լատիներեն, սակայն հունական աղբյուրների հիման վրա, գերազանցապես տալով արևելյան Միջերկրականի շրջանի ընդհանուր պատմությունը: Գլխավոր ուշադրությունը նա նվիրել է Հունաստանին, Մակեդոնիային ու հելլենիստական երկրներին:

Հին Հունաստանի պատմության ուսումնասիրության համար

շափազանց կարևոր են հույն գրող ու փիլիսոփա, բարոյագետ Պլուտարխոսի (մոտ. 46—126 թթ.) երկերը: Պլուտարքոսը ծնվել է Բեոլիտիայում, Քերոնեա քաղաքում: Նա պատկանում էր տեղական ստրկատիրական ավագանուն: Կրթությունը ստացել է Աթենքում ու այցելել է Ալեքսանդրիա: Պլուտարքոսը գրավել է պատասխանատու պաշտոններ ու կատարելով իր հայրենի քաղաքի հանձնարարությունները, հաճախ եղել է Հռոմում, որտեղ ընդունվել է արիստոկրատական միջավայրում ու անգամ շահել Տրայանոս և Ադրիանոս կայսրերի բարեհաճությունը: Հունաստանում դելփյան քրմերը ընդունեցին նրան իրենց կոլեգիայի կազմի մեջ: Իր հռոմեական կապերը Պլուտարքոսն օգտագործեց հանուն Հունաստանի շահերի: Նա շատ կրթված ու գիտուն մարդ էր, սակայն պահպանողական էր ու խորհրդապաշտ: Լինելով օրինապահ հռոմեական քաղաքացի, նա հպարտանում էր Հունաստանի մշակութային նշանակությամբ, բայց լավ հասկանում էր նրա այն ժամանակի ենթակա վիճակն ու հաշտվում էր դրա հետ:

Բազմակողմանի գրող Պլուտարքոսը, անտիկ տվյալների համաձայն, ստեղծել է 200-ից ավելի երկեր, որոնց մեծ մասը հասել է մեզ: Պատմաբանի համար դրանցից առավել հետաքրքիր են կենսագրությունները: Պահպանվել են 50 կենսագրություններ, այդ թվում՝ 23 հունական ու 23 հռոմեական քաղաքական գործիչների կյանքի 46 «զուգահեռ» նկարագրություններ: Շատ կենսագրություններ ավարտվում են համեմատական եզրափակումներով այն մասին, թե նրա հերոսների կյանքից ընթերցողը ինչ դրական ու բացասական օրինակներ կարող է քաղել, ինչը կարելի է ընդօրինակել և ինչից պետք է խուսափել:

Պլուտարքոսի գրչին են պատկանում Սոլոնի, Թեմիստոկլեսի, Արիստիդեսի, Պերիկլեսի, Լիսանդրոսի և այլ հին հունական քաղաքական գործիչների կենսագրությունները: Պլուտարքոսը գրել է նաև Ալեքսանդր Մակեդոնացու կենսագրությունը՝ Ալեքսանդրի ժամանակակիցների և հելլենիստական այլ հեղինակների չպահպանված աշխատությունների հիման վրա: Ընդհանրապես Ալեքսանդր Մակեդոնացու գործունեության ու նրա դարաշրջանի նկարագրությունները մեզ հասել են միայն ավելի ուշ շրջանի հունական ու հռոմեական գրողների աշխատություններում, որտեղ օգտագործված են հին նյութերը:

Պլուտարքոսը պատմաբան չէ, այլ գրող-բարոյախոս: Գլխավոր ուշադրությունը նա դարձնում է ոչ թե պատմական փաստերին, այլ իր հերոսի բարոյական կերպարին: Պատմությունը նրա համար նախ և առաջ անցյալի պանծալի գործերի հայեցման մեջ խորա-



սուզվելն է, երբեմն նրանցով հիացումը՝ հանուն մարդու բարոյական կատարելագործման: Նրան գրավում է փառասեր անհատների պայքարը: Պլուտարքոսի կազմած կենսագրություններին հատուկ է հոգեբանական տեսակետը պատմության զարգացման վերաբերյալ, ուժեղ անհատների առջև խոնարհվելը: Կենսագրությունների սովորական բաղկացուցիչ մասն են կազմում նաև տարբեր հրաշալիքներն ու անեկզոտային մանրամասնությունները: Պլուտարքոսի երկերի պատմական արժեքը այն է, որ դրանցում պահպանվել են մեզ չհասած անտիկ պատմական աշխատություններից քաղած շատ տեղեկություններ:

Ժամանակակից պատմական գիտությունը Ալեքսանդրի կյանքի ու գործունեության ամենաարժանահավատ նկարագրությունն է համարում մ. թ. II դարի հույն պատմիչ Արրիանոսի «Ալեքսանդրի անաբասիսը» աշխատությունը: Արրիանոսը քննադատաբար է օգտագործել Ալեքսանդրի ժամանակակիցների գործերը, անգամ՝ «Քագավորական էփեմերիսներ» ամսագիր-օրագիրը, որը կազմվում էր մակեդոնական թագավորի արքունիքում:

Պլուտարքոսի ու Արրիանոսի աշխատությունները վերստեղծում են Ալեքսանդրի վերաբերյալ եղած դրական ավանդույթը: Մ. թ. ա. I դարի հռոմեացի գրող Կվինտոս Կուրցիոս Ռուփուսը թողել է մեզ Ալեքսանդրի կյանքի նկարագրությունը, որը կազմված է մակեդոնացի նվաճողի վերաբերյալ եղած բացասական ավանդույթի հիման վրա:

Պատմական գիտության համար մեծ նշանակություն ունի մ. թ. II դարի հույն գրող Պավսանիասի «Հելլադայի նկարագիրը» պատմաաշխարհագրական երկը: Դա մանրամասնորեն կազմված ուղեցույց է, որը տեղեկություններ է բովանդակում կրոնի ու արվեստի հուշարձանների մասին: Աշխատությունը հարուստ է արժեքավոր պատմական ու առասպելաբանական էքսկուրսներով: Պավսանիասն օգտագործել է անտիկ հեղինակների մեզ չհասած աշխատությունները:

Հելլենիստական Ասիայի պատմության ուսումնասիրության համար կարևոր է մ. թ. ա. II դարի հույն պատմիչ Ապիանոսի աշխատությունը. այստեղ նկարագրված են Հռոմի պատերազմները Սելևկյան պետության դեմ:

Մեծ թվով հունական ու հռոմեական հեղինակներ տարբեր թեմաներով գրված իրենց գործերում պահպանել են Հին Հունաստանի ու հելլենիստական պետությունների պատմությանը վերաբերող արժեքավոր նյութեր:

Պատմական ազբյուրների հատուկ տեսակ են նաև հին հունարեն լեզվի բարբառները՝ նրանց պատմական զարգացման, տերիտորիալ տարածման ու փոխազդեցության մեջ: Տեղանքի հին անվանումները, զանազան հին տերմինները, դրանց փոփոխությունները, մեկի փոխարինումը մյուսով՝ այդ ամենը կարևոր նյութ է հին ցեղերի ու ազգությունների տեղաշարժերի, նրանց փոխադարձ կապերի, սոցիալական ու քաղաքական փոփոխությունների և այլ հարցերի ուսումնասիրության համար:



## Բաժին I

### ՀՆԱԳՈՒՅՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

XIX և հատկապես XX դարում ձեռնարկված հնագիտական ուսումնասիրությունները զգալիորեն ընդլայնեցին Հին Հունաստանի պատմության ժամանակագրական շրջանակները: Այժմ հայտնի է, որ մ. թ. ա. III հազարամյակի վերջին երեք հարյուրամյակներում Կրետեում, որոշ կղզիներում ու Պելոպոնեսում ծագեցին Հունաստանում առաջին դասակարգային հասարակություններն ու պետությունները, և որ մարդկության հասարակական զարգացումը Բալկանյան թերակղզու հարավում ընթացել է նույն ուղղությամբ, ինչ և հին Հնդկաստանի, Միջագետքի, Փոքր Ասիայի, Ասորիքի ու Եգիպտոսի հասարակությունների պատմությունը: Մ. թ. ա. III հազարամյակը Հունաստանի, ինչպես նաև Հին Արևելքի մի շարք երկրների համար նախնադարյան համայնական կարգերից դասակարգային հարաբերություններին անցնելու շրջանն էր:

Բալկանյան թերակղզու տարածքը բնակեցված էր դեռևս հին քարի դարաշրջանում: Արտադրող տնտեսության սկիզբը մինչևեցեգործական նոր քարի դարի շրջանում այստեղ համընկնում է Առաջավոր Արևելքի հարևան երկրներում նման կարգի տնտեսության առաջացման հետ: Ռադիո-ածխածնային տարեթվերի համաձայն մ. թ. ա. VII հազարամյակի ընթացքում բալկանյան հողերի բնակիչները անցում կատարեցին դեպի տեղական վայրի ընդհանրության մշակումն ու եղջերավոր անասունների (սկզբում մանր) բուծումը: Բրուտագործության առաջացումով մ. թ. ա. VII հազարամյակի վեր-

ջում՝ ընդհուպ մինչև մ. թ. ա. IV հազարամյակի վերջը Դանուբից հարավ ընկած տարածքներում զարգանում էին նոր քարի դարի փայլուն ու հզոր մշակույթներ, որոնք վկայում էին մեծ առաջընթացի մասին հողագործության, անասնապահության ու տնային արհեստների բնագավառներում: Արտադրող տնտեսության բարձր վերելքն ապահովեց բալկանյան ցեղերի զգալի մշակութային զարգացումը: Այսպես, Դանուբի վրա, Լեպենսկի Վիրի մոտ գտնվող ավանի (Հարավսլավիա) բնակիչները մ. թ. ա. VI հազարամյակում կրաքարից կերտում էին մոնումենտալ քանդակներ, որոնք, ըստ երևույթի, պատկերում էին ցեղի աստվածային պաշտպաններին: Բալկանների ու էգեյան ծովի կղզիների առավել արգավանդ մարզերում արագ աճում էր բնակչությունը, սակայն Կիկլադյան ու Սպորադյան որոշ լեռնոտ կղզիներ բնակեցվեցին միայն ուշ նոր քարի դարում: Մ. թ. ա. IV հազարամյակի վերջում հնդեվրոպական զանգվածի ճյուղերից մեկը կազմող բալկանյան ցեղերը հասան նոր քարի դարի տեխնիկայի բարձրագույն աստիճանի: Այդ ժամանակ ներանք սովորեցին ձուլել պղինձ: Պղնձյա գործիքների աստիճանական արմատավորումը վճռական բեկում էր նախապատրաստում բնակչության կյանքում, բնակչություն, որն այդ շրջանում հասել էր զարգացած նախնադարյան համայնական կարգերի մակարդակին:

Նշված փոփոխությունները հատկապես արագ էին կատարվում Հունաստանի տարածքում: Այսպես, ուշ նոր քարի դարում Թեսալիայում արդեն առաջացել էին ամրացված բնակավայրեր (օրինակ, Օձակի ու Սեսկլո), մի բան, որ վկայում էր տեղի ունեցող միջցեղային պատերազմների մասին: Հիշատակենք նույն ժամանակաշրջանի ամրացված բնակավայրը Սալիագոս կղզում, որի բնակիչները օբսիդիանից պատրաստում էին նետերի բարձրորակ ծայրապանակներ:

Պղնձյա գործիքների տարածումը Հունաստանում, սկսած մ. թ. ա. IV հազարամյակի վերջից, հանգեցրեց մեծ տեղաշարժերի հասարակական արտադրության բնագավառում մ. թ. ա. XXX—XXXI դդ.: Բարձրացավ տոհմի յուրաքանչյուր անդամի աշխատանքի արտադրողականությունը: Հենց այդ շրջանում «արտադրության աճը բոլոր ճյուղերում՝ անասնապահության, հողագործության, տնային արհեստների մեջ մարդու աշխատանքային ուժը ընդունակ դարձրեց արտադրելու ավելի մեծ քանակությամբ արդյունքներ, քան անհրաժեշտ էր այդ ուժը պահպանելու համար»<sup>1</sup>:

<sup>1</sup> Կ. Մաբս և Ց. էնգելս, Ընտիր երկեր երեք հատորով, հ. 3, Երևան, 1978, էջ 420:

Այսպիսով, տոհմային համայնքների անդամների միջև առաջ եկան անհավասարության առաջացման նյութական պայմանները: Նախնադարյան համայնական հարաբերությունների քայքայման պրոցեսը շարունակվեց շատ հարյուրամյակներ, ընդ որում Հունաստանի որոշ մարզերում՝ Կրետեում ու Հելլադայի ծովափնյա մասերում այն ընթացքով ավելի արագ, որը և հանգեցրեց այնտեղ դասակարգային հասարակությունների շատ վաղ առաջացմանը:

Այդ հասարակությունների ու նրանց հարեան ցեղերի պատմությունը հայտնի դարձավ միայն վերջերս՝ հնագիտական հետազոտությունների շնորհիվ: «էգեյան քաղաքակրթությունը» (այդ հավաքական տերմինով սովորաբար կոչում են Հունաստանի ու էգեյան ծովի կղզիների բնակչության մշակույթը մ. թ. ա. III—II հազարամյակներում) ուսումնասիրող հնագետները կազմեցին էգեյան մշակույթի տարբեր հատվածների զարգացման ժամանակագրական աղյուսակներ՝ գերազանցապես հիմնվելով խեցեգործության մեջ տեղի ունեցած փոփոխությունների վրա: Հիմնական աշխատանքը կատարեց անգլիացի հնագետ Ա. էվանսը, որը հայտնաբերեց Կրետեի հնագույն մշակույթն ու հանգամանորեն ուսումնասիրեց այն: էվանսը Կրետեի ամբողջ պատմությունը՝ նոր քարի դարի վերջից մինչև մ. թ. ա. XI դ. համադրելով ավանդական եգիպտական ժամանակագրության հետ, բաժանեց երեք մեծ շրջանների ու անվանեց դրանք Կրետեի արքա Մինոսի անունով: Դրանք են՝ վաղ մինոսյան (մ. թ. ա. 3000—2200 թթ.), միջին մինոսյան (մ. թ. ա. 2200—1600 թթ.) և ուշ մինոսյան (մ. թ. ա. 1600—1100 թթ.) շրջանները: Յուրաքանչյուր շրջանը բաժանվում է երեք ենթաշրջանների:

Կրետական ժամանակագրության օրինակով կատարված է նաև մայրցամաքային Հունաստանի բրոնզի դարի պատմության ստորաբաժանումը՝

3000—2000 թ.— վաղ հելլադական շրջան:

2000—1550 թթ.— միջին հելլադական շրջան:

1550—1100 թթ.— ուշ հելլադական շրջան:

էգեյան ծովի կղզիների հնագիտական մշակույթը կոչվեց Կիկլադյան ու նույնպես բաժանվեց երեք շրջանների: Այս հարաբերական ժամանակագրական սխեմաները դեռևս ելակետային են մ. թ. ա. III—II հազարամյակների Հունաստանի պատմության բացարձակ ժամանակագրությունը որոշելու համար:

**Գլուխ 1. ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ  
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆ ՈՒ ՎԱՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԿՐԵՏԵ ԿՂՁՈՒՄ**

Հունաստանում դասակարգային հասարակության ծագման մասին հնագույն տեղեկությունները կապված են էգեյան ծովի կղզիների ու ծովափի հետ:

XXX դ. մինչև XXVI դ. ներառյալ ընկած ժամանակաշրջանում Հունաստանի բնակչությունը, կատարելագործելով հողագործությունն ու տնային արհեստները, դեռևս սահմանափակ շափերով էր օգտագործում մետաղները (պղինձ, կապար ու արծաթ), պատրաստելով դրանցից գերազանցապես զարդեր ու մանր իրեր: Զգալի բեկում տեղի ունեցավ մ. թ. ա. մոտ 2500 թ.: Այդ ժամանակ էգեյան ծովի շատ կղզիներում առաջացան խոշոր մետաղագործական կենտրոններ, որտեղ պատրաստվում էին տեղական ավանդական ձևեր ունեցող գործիքներ ու զենք: Մ. թ. ա. XXV դարից մինչև XX դարն ընկած շրջանում նկատվեց արագ առաջընթաց տեխնիկայի տարբեր բնագավառներում: Օրինակ, ձուլողները զսոփայալին բերրոնդից անցան բրոնզի ձուլմանը պղնձից ու անագից. կավագործները ստեղծեցին ու կատարելագործեցին բրուտի դուրզի մեխանիզմը: Վիթխարի տեղաշարժ տեղի ունեցավ ծովային գործում՝ կրկնային Հունաստանի բնակիչները սկսեցին կառուցել 10—12 զույգ թիակներ ունեցող արագընթաց երկարուկ նավեր: Մովազնացությունը ապահովում էր էգեյան ավազանի բնակչության ինտենսիվ տնտեսական կապերը: Մայրցամաքի մի շարք մարզերում ու կղզիներում մ. թ. ա. III հազարամյակի երկրորդ կեսին առաջացան նշանակալից քաղաքներ: Այդ տնտեսական ու մշակութային կենտրոններում հատկապես ինտենսիվ էին զարգանում նոր սոցիալական հարաբերությունները:

**ԿՂՁԱՅԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԸ Մ. թ. Ա. III ՀԱՋԱՐԱՄՅԱԿՈՒՄ**

Լեմնոս կղզու արևելյան ափին, ժամանակակից Պոլիոքնի քաղաքի մոտ, դեռևս մ. թ. ա. III հազարամյակի առաջին կեսին գոյություն ուներ մի մեծ բնակավայր: Մոտավորապես 2500 թ. այն վերածվեց քաղաքի, որն ամրացված էր հաստ պարիսպներով և ուներ սալարկած փողոցներ: Տների մնացորդները վկայում են այն մասին, որ քաղաքացիների գույքային վիճակի մեջ կային բավականին խիստ տարբերություններ: Հայտնաբերված բարձրարվեստ ոսկյա զարդերի գանձը հաստատում է, որ Պոլիոքնու ավազանին արդեն ուներ զգալի արժեքներ: Մ. թ. ա. մոտ 2200 թվականից հետո

քաղաքը կործանվեց երկրաշարժից: Նման խոշոր կենտրոնը ստեղծվել էր այնպիսի հասարակութայն կողմից, որում արհեստը վաղուց անջատվել էր հողագործութունից: Այդպիսի քաղաքի բնակչութայն սոցիալական կառուցվածքը կարող է բնութագրվել որպես վաղ դասակարգային:

Սիրոս կղզում, այժմյան Խալանդրիանու մոտ պեղվել է մի մեծ կենտրոն, որի ծաղկման շրջանը վերաբերում է մ. թ. ա. 2500—2000 թթ.: էգեյան ավազանի հարավային մասում՝ Մելոս կղզում, այժմյան Ֆիլակոպու մոտ հայտնի է վաղ բրոնզի դարի քաղաք: Ֆիլակոպի I քաղաքի բարդ հատակագծումը պետք է համապատասխաներ խորացած սոցիալական շերտավորում ունեցող հասարակութայն պահանջներին:

Կրետեում հասարակական տեղաշարժերը սկզբում ընթանում էին դանդաղ: Կրետեի բնակիչները գտնվում էին ավելի բարենդպաստ պայմաններում մայրցամաքային Հունաստանի ու էգեյան ծովի այլ կղզիների բնակչութայն համեմատութայն: Կղզու արևելյան ու կենտրոնական մասերում կային շատ բերրի հողեր: Մովը պաշտպանում էր կրետացիներին արտաքին ասպատակումներից, նրանց տալիս էր անունդ ու հաղորդակցութայն հարմարավետ ուղիներ: Այս պատճառով Կրետեում ավելի վաղ սկսվեց անցումը տոհմային հասարակութունից դեպի դասակարգայինը: Դրա կարևոր պայմաններից էր արտադրութայն վերելքը, որը կապված էր մետաղյա գործիքների երևան գալու հետ: Պղնձից բրոնզին անցնելու շրջանի վերջում (այդ շրջանը տևեց մ. թ. ա. XXX—XXIII դդ.) կրետական ցեղերը հասան սոցիալական զգալի զարգացման: Տոհմային համայնքների ներսում հանդես եկան առանձին ընտանիքներ, մի բան, որ պարզորոշ արտահայտվեց ճարտարապետութայն մեջ. մ. թ. ա. III հազարամյակի առաջին կեսին դեռևս գոյութուն ունեցող մեծ շենքերի փոխարեն սկսեցին կառուցել փոքր տներ, որոնք հատկացվում էին մեկ ընտանիքի: Ընտանիքների առանձնացումը նուպաստեց տոհմային սեփականութայն կազմալուծմանն ու անհատական սեփականութայն առաջացմանը: Դրա վառ ապացույցն է քարե կնիքների օգտագործումը կրետացիների կողմից արդեն մ. թ. ա. III հազարամյակի կեսերին: Այդ կնիքները սկզբում զարդարված էին հասարակ պիկտոգրամներով (իրերի պատկերումներով), որոնց մեջ հատկապես հաճախակի էին հանդիպում մարդկային կերպարանքի կոպիտ պատկերներ: Դժվար է ասել, պատկանում էին արդյոք այդ կնիքները սկզբում առանձին ընտանիքների գլխավորներին, թե առավել հարուստ մարդկանց, սակայն անվիճելի է, որ դրանց

տարածումը կապված էր անհատական ու ընտանեկան սեփականության զարգացման հետ:

Առանձին մարդկանց ձեռքում հարստությունների կուտակման փաստը հաստատվում է թանկարժեք իրերի հանդես գալով (թեև դրանք հազվագյուտ էին), ինչպիսիք էին տերևուկների, կախոցների, փոքր ճակտոնների ձևեր ունեցող նուրբ ոսկյա զարդերը ու ընծային բյուրեղապակուց (սերդոլիկից), հախճապակուց պատրաստված տարբեր տեսակի ուլունքները: Շարքային համայնականների զանգվածից հատկորեն անջատվեց հարուստ տոհմացեղային ավագանին. առաջացավ դասակարգային հասարակությունը: Այս կապակցությամբ ցեղային առաջնորդների իշխանությունը ձեռք բերեց առանձնահատուկ բնույթ: Արդեն մ. թ. ա. մոտ 2200 թ. առաջ եկան Կնոսոսի, Մալիայի ու Փեստոսի հզոր կառավարիչները: Այս վայրերում կառավարող առաջնորդները ավելի վաղ, քան ուրիշները, դարձան արքաներ, որոնք հունարեն կոչվում էին բասիլևսներ: Սկզբում բասիլևսների իշխանությունը խիստ սահմանափակ էր, որովհետև հասարակությունում դեռևս մեծ ուժ ունեին համայնական հիմնարկները:

Չնայած աճող սոցիալական շերտավորմանը, կրետացիների կրոնական հայացքներում երկար ժամանակ պահպանվում էին տոհմային հասարակարգի հետ կապված պատկերացումները: Օրինակ, տոհմի անդամներին թաղելու նպատակով կառուցում էին դամբարաններ՝ կամ ուղղանկյուն, մի քանի սենյակներ ունեցող, կամ իրենց հատակագծով կլոր, շատ հաստ պատերով (1,5 մ—2 մ հաստությամբ), որոնք շինված էին կավով ծեփած ու կոպիտ հրդեհված քարերից: Հնագետները որոշ կլոր դամբարաններում հայտնաբերել են հարյուրավոր կմախքներ, մի բան, որ վկայում է մեծ տոհմերի կողմից գերեզմանները երկար ժամանակ օգտագործելու մասին:

Կրետեի հետագա թագավորությունները մ. թ. ա. XXII դարում թևակոխեցին մեծ վերելքի շրջանը:

### ՄԱՅՐՅԱՄԱՔԱՅԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԸ Մ. թ. Ա. III շԱՋԱՐԱՄՅԱԿՈՒՄ

Մայրցամաքային Հունաստանի բնակչությունը բրոնզե գործիքներ սկսեց օգտագործել մի փոքր ավելի ուշ, քան կղզիների բնակիչները, որովհետև նոր տեխնիկան զգալիորեն դանդաղ էր թափանցում ներքին շրջանները: Այդ ժամանակ Հունաստանը բնակեցնող ցեղերը զբաղվում էին հողագործությամբ ու անասնապահությամբ:



Երկրի բնակիչների էթնիկական պատկանելիության հարցը մ. թ. ա. III հազարամյակում մինչև այսօր առաջացնում է վեճեր: Կա երկու տեսություն: Մեկը, որը առաջադրվել էր դեռևս XIX դ., պնդում է, որ Հունաստանի հնագույն բնակիչները հույներ չէին ու անգամ որևէ չափով ազգակից չէին նրանց: Հունաստանի բնակչության ոչ հնդեվրոպական ծագման այդ տեսությունն այժմ պաշտպանում են միգրացիոն տեսությունների կողմնակիցները, որոնք գտնում են, որ հույները Հելլադայում երևացին միայն մ. թ. ա. մոտ 2000 թ.:

Մյուս տեսությունը հիմնված է խեթական ու այլ հնագույն հընդեվրոպական լեզուները ուսումնասիրող Բ. Հրոզնու և մյուս գիտնականների աշխատությունների վրա: Այդ ուղղությանը պատկանող հետազոտողները, հատկապես բուլղարացի լեզվաբան Վ. Գեորգիևը հաստատել են, որ հունական լեզվում պահպանված մեկ այլ, ավելի հին լեզվի տարրերը հնդեվրոպական լեզվի մնացորդներ են, որոնք շատ մոտ են հունարենին: Այդ տեսության օգտին է խոսում Բալկանյան թերակղզու հարավային ու միջին շրջանները մ. թ. ա. IV—III հազարամյակներում բնակեցրած ցեղերի մշակույթի նմանությունը:

Ըստ երևույթին այն ժամանակ Հունաստանի տարածքում ապրում էին հույներին ազգակից ցեղեր, իսկ իրենք՝ հույները, լինելով դեռ փոքրաթիվ մի ցեղախումբ, բնակվում էին հյուսիսային շրջաններում, գուցե Իլլիրիայում կամ Մակեդոնիայում: Հելլենները հիշում էին այն մասին, որ իրենց երկրի հնագույն բնակիչները՝ պելասգները, ինչպես վերջիններիս անվանում են հունական աղբյուրները, ազգակցական տեսակետից իրենց մոտ կանգնած ցեղեր էին: Հերոդոտոսը հույներին անգամ համարում է պելասգների ցեղերի մի ճյուղ: Հույների մշակույթում պահպանվել են շատ երևույթներ, որոնք սկիզբ են առել պելասգների մշակույթից: Հույների դեպի հարավ ուղղված տեղաշարժի ընթացքում պելասգների արտամղումն ու կլանումը հույների կողմից նախնադարյան-համայնական կարգերի քայքայման շրջանում ցեղերի միջև եղած փոխհարաբերությունների մի սովորական միջադեպ էր:

Արդեն մ. թ. ա. III հազարամյակի երկրորդ կեսին Հունաստանի որոշ առափնյա շրջաններում առաջացան ամրացված կետերի ու արհեստի կենտրոնների դեր կատարող բնակավայրեր: Մի այդպիսի վաղ քաղաք էր այժմյան Ռաֆինայի մոտ (Ատտիկա) գտնվող բնակավայրը, որը կառուցված էր ծովից 2 կմ հեռավորության վրա, բարձունքում: Բնակավայրը պաշտպանված էր քարե հիմքի վրա հում աղյուսից կառուցված ամուր պարսպով: Պաշտպանական պա-

րիսպաների ներսում պեղված են քարով սալարկված փողոցներ, որոնց հրկայնքով տեղավորված էին սովորաբար երեք սենյակից բաղկացած, հատակագծով ուղղանկյուն տներ: Քաղաքի մոտ հայտնաբերվել են երկու մետաղագործական արհեստանոցներ, որտեղ արդեն ձուլվում էին ոչ թե պղնձյա, այլ բրոնզե իրեր: Հասարակական արտադրության բարձր մակարդակն ուղեկցվում էր տոհմային կարգերի քայքայման ու վաղ դասակարգային հարաբերությունների առաջացման խորացող պրոցեսով, որի պայմաններում երկրի ամենազարգացած մասերում գոյանում էին փոքրիկ թագավորությունների ձև ունեցող պետություններ:

Նման վաղ թագավորություն առաջացավ Լեոնայում (Արգոլիսյան ծոցի արևմտյան ափին, Պելոպոնես): Դա հաստատվում է XX դ. 50-ական թվականներին կատարված պեղումներով, որոնց ժամանակ հայտնաբերվեցին մ. թ. ա. III հազարամյակի վերջին երրորդամասով թվագրվող պալատական կառույցների մնացորդներ: Ամենահին պալատը, որից պահպանվել են պատերի հիմքեր, բաղկացած էր մի քանի մեծ սենյակներից, որոնցից մեկում կար հանդիսավոր արարողությունների համար հատկացված օջախ: Մ. թ. ա. XXII դ. Լեոնայում կառավարող թագավորը հին պալատի տեղում կառուցել է նոր, ավելի ընդարձակ, երկհարկանի պալատ՝ 25×12 մ մակերեսով: Պալատի մեկ մետր հաստություն ունեցող պատերը շարված էին հում աղյուսից, քարե հիմքի վրա: Պալատը ծածկված էր կղմինդրով, որի գործածումը մ. թ. ա. III հազարամյակի վերջին դարերում արմատավորվեց նաև Հունաստանի այլ կենտրոններում: Վերին, չպահպանված հարկում տեղադրված էին հանդիսասրահները: Ներքին հարկը նախատեսված էր մթերքներ ու տարբեր տնտեսական իրեր պահպանելու համար: Ներքևի սենյակներից մեկի հատակին գտնվեցին շուրջ 140 կավե գնդիկներ՝ կնիքների դրոշմվածքներով: Դրանք պալատական մատաններում անոթների ու զամբյուղների վրա սովորաբար դրվող հատուկ կնիքների հետքեր էին: Արքայական տան շուրջը տեղավորված էր բավականին մեծ բնակավայր: Լեոնայի պալատը նկարագրվող շրջանի ոչ մեծ պետություններից մեկի սովորական կենտրոնն էր:

Մ. թ. ա. XXII դ. մոտ Հունաստանի պատմությունում տեղի ունեցան խոշոր անցքեր: Լեոնայի պալատը ավերվեց ու կործանվեց կրակից, ըստ երևույթին, տեղական ինչ-որ պատերազմների ժամանակ: Որոշ ժամանակ անց, մ. թ. ա. III ու II հազարամյակների սահմանագծին Թեսալիայից դեպի Հունաստանի հարավային շրջանները շարժվեց գաղթող ցեղերի ալիքը, ընդ որում ավերվեցին ու կործանվեցին Միջին ու Հարավային Հունաստանի շատ ծաղկող

կենտրոններ Ռաֆինայում, Ելեվսիսում, Կորնթոսում, Կորակևում, Ասինեում և այլուր: Լիովին ամայացավ Լեոնայի բնակավայրը: Նրա տիրակալների երբեմնի հզորությունից ուշ շրջանի հույների մոտ մնացին սոսկ առասպելական բնույթի ազոտ հուշեր լեոնեյան հիդրայի մասին: Հաղթանակը լեոնեյան հիդրայի նկատմամբ համարվում էր Հերակլեսի գլխավոր սխրագործություններից մեկը:

Հին նախահունական բնակչությունը մասամբ սրի քաշվեց, մասամբ էլ ձուլվեց էթնիկապես նրան մոտ կանգնած եկվորների հետ: Մ. թ. ա. II հազարամյակի Հունաստանի բնակիչներն իրենց կոչում էին մի քանի անուններով՝ աքայացիներ, դանայացիներ, պելասգներ: Առավել տարածված էր առաջին անվանումը. այն հանդիպում է նաև խեթական վավերագրերում. դրանցում Եգիպտոսի ու Միտանիի հետ մեկտեղ հիշատակվում է Աքիյավա թագավորությունը: Այս պատճառով Հունաստանի պատմության այն ժամանակաշրջանը, որը սկսվում է մ. թ. ա. XXI դ. ու տևում է մինչև դուրիացիների ներգաղթը՝ մ. թ. ա. XII—XI դդ., կոչվում է աքայան շրջան:

Պետությունների առաջացումը ցամաքային Հունաստանի ծովափնյա մարզերում ու էգեյան ծովի կղզիներում մ. թ. ա. III հազարամյակի վերջին երեք հարյուրամյակներում նախնադարյան համայնական հարաբերությունների կազմալուծման արդյունք էր: Այդ տեական պրոցեսը ընթանում էր անհավասարաչափորեն. ներքին մարզերում, դրանց ավելի մեկուսացված լինելու հետևանքով, տոհմական կարգերի հիմքերը պահպանվում էին ավելի երկար: Սակայն պետական համակարգ մշակած հասարակությունների մեծ վերելքը զգալի ազդեցություն գործեց նաև մյուս վաղ հունական ցեղերի վրա:

Հունական պետությունների հնագույն պատմությունը բնորոշվում է Կրետի տնտեսական ու քաղաքական առաջնությամբ: Մ. թ. ա. III հազարամյակի վերջին երեք հարյուրամյակներից մինչև մ. թ. ա. XV դ. կեսը կրետացիները գրավում էին առաջատար դիրք հույների շրջանում: Դրան նպաստում էին կղզու բնական հարստություններն ու այն, որ էգեյան կղզային աշխարհի հարավային եզրի մոտ գտնվող Կրետեն ստիպված էր զարգացնել մեծ ծովագնացություն՝ իր ցեղակիցների հետ կասյեր պահպանելու նպատակով: Նման ճանապարհով ստեղծվեցին անհրաժեշտ նյութական պայմաններ նաև ավելի հեռավոր հարևանների ու հատկապես Եգիպտոսի հետ շփվելու համար, իսկ Եգիպտոսը այն ժամանակ Արևելյան Միջերկրականի խոշորագույն պետությունն էր:

ԳՅՈՒՂԱՏՆՏՆՍՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴ ԱՐՉԵՍՆԵՐԸ

III հազարամյակի երկրորդ կեսին Կրետեում մեծ առաջընթաց է նկատվում արտադրության բոլոր բնագավառներում, որը պայմանավորված էր նախորդ 700—800 տարիների ընթացքում կատարված տեխնիկական գյուտերի լայն ներդրումով: Գյուղատնտեսության մեջ կուտակված էմպիրիկ գիտելիքների ակտիվ կիրառումը նպաստեց դրա արդյունավետության բարձրացմանը:

Կրետացիները ցանում էին ցորեն ու այնպիսի բույսեր, ինչպիսին էր զաֆրանը, որը օգտագործվում էր և՛ խրատ սուր համեմունք, և՛ որպես ներկ: Տարածված էր այգեգործությունն ու խաղողագործությունը: Կրետացիների կյանքում մեծ տեղ էր գրավում անասնապահությունը: Կովերի, ոչխարների ու այծերի պատկերներ հաճախ են հանդիպում այն ժամանակի արվեստի իրերի վրա: Ինչպես ցույց է տալիս մ. թ. ա. XXII—XXI դդ. վերաբերող մի սկահակի վրա եղած նկարը, առանձին մարդիկ ունեին 100—150 ոչխարներից բաղկացած հոտեր: Հայտնի էր նաև հողագործի տնտեսությունում այնքան անհրաժեշտ քառանիվ սայլը:

Ավելի լրիվ են մեր պատկերացումները արհեստների զարգացման մասին: Արդեն մ. թ. ա. XXIII դ. մոտ կրետացիները լայնորեն օգտագործում էին բրուտի դուրզը, մի բան, որ արտացոլում էր աշխատանքի՝ հասարակությունում կատարված երկրորդ խոշոր բաժանումը՝ արհեստի անջատումը հողագործությունից: Մետաղագործության մեջ արդեն մ. թ. ա. 2200—2100 թթ. լիովին հաստատվեց բրոնզը, որից պատրաստում էին զանազան իրեր՝ դաշույններ, հասարակ ու երկտակ սակեր, սրեր, նիզակների ծայրեր, դանակներ, քերիչներ և այլն: Կրետեի ոսկերիչները սկսեցին պատրաստել ծաղիկների, միջատների ու այլ ձևեր ունեցող ոսկյա նրբագեղ զարդեր: Նրանք այն աստիճան տիրապետում էին արծնի տեխնիկային, որ այդ տեսակետից գերազանցում էին անգամ այն ժամանակի եգիպտական ոսկերիչներին:

Զգալիորեն բարդացավ շինարարական գործը: Սկսած մ. թ. ա. III հազարամյակի վերջին քառորդից, կրետացիները կառուցում էին տներ կոպիտ մշակված ոչ մեծ քարերից, որոնք ամրացված էին կավով: Պատեր շարելու համար օգտագործվում էր նաև հում աղյուսը: Ավելի ունևոր մարդկանց տներն ու բասիլևսների պալատները երեսապատվում էին լավ հղկված քարով: Հարուստ կրետացիների տների արտաքին տեսքի մասին մ. թ. ա. XIX—XVII դդ. կարելի է

դատել՝ ելնելով Կնոսսոսում գտնված հախճապակու սալիկների պատկերներից:

Կրետացի շինարարների վարպետության վառ ապացույց են պալատները Կնոսսոսում, Մալիալում, Փեստոսում ու Զակրոսում: Այդ պալատների բարդ հատակագիծը հայտնաբերում է փոխադարձ նմանության շատ գծեր, մի բան, որ հաստատում է ինչ-որ կայուն ճարտարապետական ընդհանուր կանոնների գոյությունը: Պալատների կառուցումը սկսվեց մ. թ. ա. 2200 թ. մոտ: Հետագա դարերում դրանք վերակառուցվում ու վերաշինվում էին: Մ. թ. ա. XVIII դ. սկզբին Կնոսսոսի պալատը լայնատարած, գրեթե ուղղանկյուն մի շինություն էր, որի կոմպոզիցիոն կենտրոնն էր ուղղանկյուն ներքին բակը (6×30 մ): Բակի կողմերում գտնվում էին բազմաթիվ շինություններ՝ բնակելի սենյակներ, նվիրաբերումների հրապարակ, պահակային աշտարակներ, տարբեր տեսակի պահեստներ ու մառաններ, լուսի անցքեր շինությունների միջև, միջանցքներ, սյունասրահներ և այլն: Կրետացի ճարտարապետները օգտագործում էին սյուներ. դա նրանց հնարավորություն էր տալիս տանիքով ծածկել մեծ տարածություններ: Կնոսսոսի պալատում անցկացված էր թըրծած կավից պատրաստած խողովակների համակարգ, որը ապահովում էր կեղտոտ ջրի հոսքը: Ի տարբերություն հարուստների տրների, որոնց պատերը ծածկված էին ծեփով (հաճախ կարմիր), բասիլևաների բնակարանները նկարազարդվում էին զանազան որմնանկարներով: Այսպես, օրինակ, ծեփի մի կտորի վրա (Կնոսսոսի պալատ, մ. թ. ա. XX—XVIII դդ.) պատկերված է զաֆրանի ծաղիկները հավաքող կապիկ:

Կատարելագործելով ու զարգացնելով դեռևս մ. թ. ա. III հազարամյակի սկզբից ծառանգված ձևերը, կրետացի բրուտագործները XXII—XVIII դդ. ստեղծեցին նրբագեղ նախշերով զարդարված հիանալի շքեղ խեցեղեն: Հատկապես գեղեցիկ են հիմնականում Կնոսսոսում ու Փեստոսում պատրաստված անոթները: Դրանք նկարազարդված են ծաղկաթերթերից, ալիքաձև գծերից և այլ սյուժեներից կազմված բարդ բուսական նախշով: Պահպանվել են նաև այնպիսի նկարներ, որտեղ նկարիչները ձգտում էին պատկերել իսկական բնանկարներ: Կամարես քարայրում գտնված անոթներից մեկի վրա նկարված են ալիքաձև գծերով լեռներ, որոնց վրա կան զաֆրանի սպիտակ ծաղիկներ՝ կարմիր վարսանդներով ու առէջներով (այստեղից այդ ոճի ամբողջ խեցեղենը կոչվում է կամարես ոճի ամանեղեն): Կրետացի բրուտագործները պատրաստում էին ոչ միայն բարակապատ ամանեղեն, այլ նաև ամենօրյա գործածության համար զանազան անոթներ, ինչպես նաև կավե կարասներ՝

պիթղղիներ՝ հազարհատիկ, յտաշ և այլ մթերքներ պահելու համար: Բրուտապործուիթյան հատուկ ճյուղ էր աստվածներ, ինչպես և աղամարդկանց, կոստանց, անասուններ պատկերող կազե կերպա-անբների՝ տեոտիստների պատրաստումը:

Այդ շրջանում բազմական դարգացած էր քարի ու փղոսկրի վրա փորագրուիթյան արվեստը: Կնիքների վրա պատկերում էին բարդ բազմակերպարանք կոմպոզիցիաներ կամ, ինչպես և առաջ՝ պիկտուրամներ, որոնք զարձան կրեոտացիների գրի սկզբնական ձևը: Մ. թ. ա. XLI ՎՎ. պիկտուրափիկ նշանները փորագրում էին ոչ միայն կնիքների, այլև անոթների ու, որպես քարտաշների նշումներ, քարերի վրա:

#### ԿՐԵՏԱԿԱՆ ԶԻՆԱՔԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐ Խ Ա. XXII—XVIII ԿԿ.

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Կրետեի բնակչության սոցիալական կառուցվածքի մասին կարելի է կազմել միայն ընդհանուր պատկերացում: Դասելով անտեսուիթյան զարգացումից, չասարակուիթյունը արտադրում էր զգալիորեն ավելի շատ արժեքներ, քան անհրաժեշտ էր նրա անպամներին սպառման համար: Արտադրանքի այդ ավելցուկը յուրացվում էր արխատկրատիայի կողմից: Ավագանին ուներ երկու—երեք հարկանի տներ, որոնց մեծ մասամբ պատուհաններից գտրվ ներքին հարկերը ծառայում էին որպես պահեստարաններ: Աշտարակների շնորհիվ այդ տները դառնում էին փոքր ամրուիթյուններ:

Բնակչության լայն խավերի, գյուղացիների ու արհեստավորների դրուիթյան մասին առայժմ շատ քիչ բան է հայտնի, որովհետև փոքր բնակավայրերն ու քաղաքները անբավարար են պեղված: Անշուշտ, ինչ ուսմային բնակավայրերից առաջացած գյուղական համայնքներում զարգացող գույքային անհավասարուիթյունը ծնում էր անտեսական ու սոցիալական կախման նոր ձևեր: Զարգանում էր ստրուկուիթյունը: Ստրուկների թիվը անձում էր նախ և առաջ ի հաշիվ ռազմագերիների, որոնց սգաստործում էին ավագանու ու թագավորների սնանեսուիթյուններում: Սակայն արտադրուիթյան մեծ տիրապետում էր պլատ արտադրողի՝ գյուղացու կամ արհեստավորի աշխատանքը: Մենք ունենք ավելի շատ ավայաներ Կրետեի վաղ թագավորական հարստուիթյունների մասին: Այժմ հայտնի են շորս պալատներ՝ Կնոսոսում, Մալիայում՝ կղզու Նյուտրասյին ծովափին, Փնոտոսում՝ չարավում ու Զակրոսում՝ արևելյան ծովափին: Այդ կենտրոններում հայտնաբերվել է դեռևս մինչպալատական շրջանին աչխներ՝ մ. թ. ա. XXV—XXIII դդ. վերաբերող մեծ շինարարուիթյուն: Սկսած մ. թ. ա. XXII դարից, նշված կրետեում կատուց-

վեցին բնակարաններ կառավարիչների համար: Հետագա շորս հար-  
յուր տարիների ընթացքում պալատների ու թագավորական կենցա-  
ղի իրերում տեղի ունեցած փոփոխությունները խոսում են թագա-  
վորի իշխանության խիստ ուժեղացման մասին: Աներնդհատ աճում  
էր թագավորական հարստությունը. նրանք շրջապատում էին իրենց  
շքեղ իրերով: Մալիայի պալատում գտնված է հիանալի զենք, որը,  
հավանաբար, պատկանում էր թագավորներից մեկին: Դրանց թվում  
են՝ գրեթե մեկ մետր երկարություն ունեցող բրոնզե սուրը՝ փղոս-  
կերյա բռնակով, որը պատված էր ոսկով ու վերջանում էր բյուրեղ-  
ապակյա գլխիկով, ոսկյա բռնակով դաշույնը և պարուրած և նախ-  
շով, ճոխ զարդարված ու հղկված քարե կացիներ: Կացնի մի կողմին  
տրված է բնծառյուծի զլխի ու առաջին թաթերի ձևը: Նման զենքը,  
բոստ ամենայնի, արքայական արժանիքի նշան էր:

Բասիլևսների հողորության աճի վառ արտահայտությունն էր  
նաև նրանց նստավայրի տեսքի փոփոխությունը հատկապես Կնոս-  
տոսում: Մ. թ. ա. XX—XIX դարերում կնոստոսյան կառույցը վերած-  
վեց պալատի, որը ուներ տափակ քարերով սալարկված մեծ ներքին  
բակեր, բազմաթիվ շքեղ նախասենյակներ, բնակելի սենյակներ ու  
ավելի հասարակ պահեստային սրահներ. դրանք միացված էին  
սանդուղքներով: Մեծ մառաններում շարված էին վարպետորեն  
նկարազարդված մեծածավալ պիթոսներ՝ լի գինով, յուղով, հացա-  
հատիկով: Առանձին սենյակներում պահվում էին շքեղ, միայն պա-  
լատում գործածելու համար պատրաստված ամանիղեն ու կահույք:  
Հատկանշական է, որ ունեցվածքի հաշվառման համակարգերը բո-  
լոր պալատական տնտեսություններում նմանվում էին իրար. այս-  
պես, անոթները կամ պարկերը փակում ու կնքում էին՝ դրոշմվածք  
դնելով կավե գնդիկի վրա կամ նրանց վրա կախում էին կավե պի-  
տակներ կնիքների դրոշմվածքներով կամ էլ իդեոգրաֆիկ նշաննե-  
րով:

Կնոստոսի, Մալիայի, Փեստոսի ու Զակրոսի բասիլևսների տըն-  
տեսության ու կենցաղի նմանությունը թույլ է տալիս ենթադրելու,  
որ նշված ժամանակաշրջանում Կրետևում գոյություն ունեին շորս  
փոքր, իրար հետ սերտորեն կապված թագավորություններ, որոնց  
գլխավորում էին ազգակից դինաստիաներ: Նման համակարգի առա-  
ջացումը, հավանաբար, ազգակից ցեղերի վաղեմի միությունն՝ մանր  
անկախ պետությունների միության վերածելու արդյունք էր: Ներ-  
քին պատերազմներն այդ թագավորությունների միջև կամ խիստ  
հազվադեպ էին, կամ կրում էին մանր ընդհարումների բնույթ: Հնա-  
րավոր է նաև, որ պաշտպանության շահերն ստիպում էին Կրետեի  
բասիլևսներին պահպանել դաշնակցային սերտ հարաբերությունե-

ներ ու դրանով ապահովել կղզու անվտանգությունը արտաքին ու տրնձգություններին: Համենայնդեպս, այդ շրջանում Կրետեում չըկան պատերազմական ավերածությունների հետքեր:

Այն հարցը, թե ո՞վ է ստեղծել Կրետեի բարձր մշակույթը, մինչև այժմ լիովին լուծված չէ: Կղզու տարածքում հայտնաբերված հնագիտական հուշարձանների նմանությունը թույլ է տալիս ենթադրել, որ Կրետեի բնակչութունը կազմված էր սերտ շփման մեջ գտնվող ազգակից ցեղերից: Առավել հավանական է, որ կրետացիները պատկանում էին հելլենական ցեղերից մեկին: Նման տեսակետի օգտին է խոսում այն, որ «Ողիսական»-ում կրետացիները սովորաբար հիշատակվում են հելլենների շարքում: Հատկապես հատկանշական են XIX երգի 175—177 տողերը. այստեղ «էտեոկրետացիները»՝ իսկական կրետացիները, թվարկվում են այլ հունական ցեղերի՝ դորիացիների ու քաջացիների հետ միասին: Հույն պատմիչներ Քուկիդիդեսն ու Դիոդորոսը նույնպես կրետացիներին համարում են հելլեններ: Անտիկ ավանդույթի նշված վկայությունները հաստատվում են մի շարք գիտնական-լեզվաբանների նորագույն աշխատություններով: Նրանք հայտնաբերեցին, որ Կրետեի այսպես կոչված վանկալին (գծալին) «Ա» գրի միջոցով կազմված հնագույն արձանագրությունները գրված են հունարենի վաղ բարբառներից մեկով: Կրետացիների մեկուսացումը կարելի է բացատրել նրանով, որ կղզում ապրող ցեղերը շատ վաղ անջատվեցին մյուս հելլեններից:

Կրետեի մշակույթի տեղական առանձնահատկությունները ու ժողանում էին կրետացիների՝ Եգիպտոսի ու Առաջավոր Արևելքի այլ ժողովուրդների հետ շփման շնորհիվ:

Հնագիտական մի շարք հայտնագործումներ հաստատում են Փոքր Ասիայում Տրոյական թագավորության ու խեթերի հետ Կրետեի կապերի առկայությունը: Ավելի ուժեղ էր Կրետեի շփումը Կիպրոսի ու Ասորիքի թագավորությունների հետ, որոնց միջնորդությամբ կղզի էին բերվում շինվածքներ Բաբելոնիայից, օրինակ՝ Համմուրաբի թագավորի ժամանակ (մ. թ. ա. XVIII դ.) հեմատիտից պատրաստված գլաններ: Սակայն այդ շրջանում ամենալայն կապերը պահպանվում էին Եգիպտոսի հետ: Կրետեի տարբեր բնակավայրերում գտնվել են եգիպտական իրեր՝ կոյաբղեզներ, համալիչներ, ուլունքներ: Ընդ որում հենց այդ լավ թվագրած իրերը դարձան Ա. էվանսի ժամանակագրության հիմքը: Հատկապես սերտ էին կրետա-եգիպտական հարաբերությունները եգիպտական XII հարրստության կառավարման ժամանակ (մ. թ. ա. մոտ 2000—1785 թթ.), երբ եգիպտացիք կրետացիներից գնում էին անտառանյութ ու մեծ



քանակությամբ շքեղ գունազարդ ամանեղեն: Ըստ երևույթին, եգիպտական փարավոնները ժամանակ առ ժամանակ դեսպաններ էին ուղարկում կրետական բասիլեանների մոտ: Կնոսսոսում գտնված է Ուսեր անունով եգիպտացու դիրքիտե արձանիկի ներքին մասը. այն վերաբերում է XII հարստության ժամանակաշրջանին: Հավանաբար, իբրև դեսպան Կնոսսոս ժամանած Ուսերը նվիրաբերել էր այդ արձանիկը պալատական սրբարանին: Եգիպտոսի հետ կապերը արտացոլվել են նաև կրետական արվեստում. որոշ եգիպտական մոտիվներ, ինչպես, օրինակ, լոտոսի պատկերը, հայտնաբերվել է կրետական կավե իրերի վրա: Իսկ Եգիպտոսում սկսեցին ընդօրինակել կրետական խեցեղենը: Դժվար է որոշել, արդյո՞ք հարաբերությունները երկու երկրների միջև միշտ խաղաղ էին, թե ոչ: Հնարավոր է, որ Եգիպտոսի ռազմական հզորության թուլացման շրջանում կրետացիները հարձակումներ էին գործում նրա ափերի վրա, կողոպտում բնակչությանն ու ստրկության էին տանում գերի վերցրած մարդկանց:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԿՐԵՏՆՈՒՄ Մ. Ք. Ա. 1800 ՈՒ  
1750 ՔՔ. ՄԻՋԵՎ ԸՆԿԱՍ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Մ. թ. ա. XVIII դ. առաջին կեսին Կրետեում տեղի ունեցան ինչոր անցքեր, որոնց հետևանքով քանդվեցին Կնոսսոսի ու Փեստոսի պալատները և բնակավայրեր կղզու այլ մասերում, ընդ որում դրանցից ոմանք, ինչպես, օրինակ, բնակավայրը Վասիլիկիում՝ հարավում, բոլորովին լքվեց բնակիչների կողմից: Հետազոտողներ Ա. էվանսն ու Ջ. Պենդերին, իսկ նրանց հետևելով՝ նաև բոլոր բուրժուական հետազոտողները, ենթադրում են, որ դրա պատճառը խոշոր երկրաշարժն էր և ոչ թե պատերազմական գործողությունները, քանի որ չկա թշնամու կողմից քաղաքների ավերման ժամանակ սովորաբար ծագող հրդեհների և ոչ մի հետք: Սակայն «երկրաշարժի» ժամանակաշրջանի շերտերում բացակայում են այնպիսի արժեքավոր իրեր, ինչպիսիք են բրոնզե ու ոսկե իրերը և տեռակոտաները: Նշված հանգամանքը վկայում է այն մասին, որ բասիլեանների պալատները Կնոսսոսում, Մալիայում ու Փեստոսում, բնակավայրերը Փսիրայում, Մոխլոսում, Դուրնիում ու Պալեկաստրոնում կողոպտվել են դեռևս մինչև ավերումը, մի բան, որ անհնարին էր անել երկրաշարժի ժամանակ: Բնական է, պահանջվում է այլ կերպ մեկնաբանել մ. թ. ա. XVIII դ. առաջին կեսի իրադարձությունները:

Կրետական թագավորությունների աճն ու ամրապնդումը ուղեկցվում էին նրանց միջև հակասությունների գոյացումով, հակա-

սություններ, որոնք ուժեղանում էին վաղ դասակարգային հասարակութուններին հատուկ սովորական ձգտման՝ հարևաններին կողոպտելու միջոցով հարստանալու շնորհիվ: Արտաքին նվաճումների ձգտումը բխում էր նրանից, որ կրետական ավագանին չէր կարող անվերջ խստացնել ազատ գյուղացիների ու արհեստավորների ճնշումը: Ավելի հեշտ էր հարստութուններ հայթայթել հարևաններին նվաճելու միջոցով: Այսպիսով, հնարավոր է, որ մ. թ. ա. XVIII դ. սկզբում Կրետեում եղած մեծ ավերածութունների պատճառը կրետական թագավորութունների միջև տեղի ունեցած երկպառակտիչ պատերազմներն էին:

Կարճ ժամանակ անց պալատները Կնոքսոսում ու Փեսոսոսում վերականգնվեցին, անգամ հանդես եկան նոր պալատներ Ագիա-Տրիասում ու Տիլիսոսում:

Հաջորդ 300 տարիները կազմում են կրետական հասարակության բարձրագույն վերելքի ժամանակաշրջանը: Այդ շրջանը, որը սահմանափակված էր մոտավորապես մ. թ. ա. 1750—1450 թվականներով, վառ արտահայտություն գտավ ոչ միայն հին հույների առասպելներում, այլ նաև Հերոդոտոսի, Քուկիդիդեսի, Ստրաբոնի ու Դիոդորոսի կողմից պահպանված պատմական ավանդույթների մեջ: Հետագա սերունդները Կրետեն համարում էին հելլենական ծովերում տիրապետություն հաստատած մեծ ու հզոր պետություն (հունարեն՝ թալասոկրատիա):

#### ԿՐԵՏԱՑԻՆԵՐԻ ԱՐՉԵՍՅՆԵՐԸ, ՀՈՂԱԳՈՐԾՈՒՔՑՈՒՆ ՈՒ ԱՌԵՎՏՈՒՐԸ Մ. Ք. Ա. XVIII—XV ԴԴ.

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում արհեստագործական արտադրությունը Կրետեում հասել էր բարձր զարգացման: Բրոնզը դարձավ գործիքների ու զենքի պատրաստման համար հիմնական ու լայն տարածված նյութ: Դա հանգեցրեց դրանց կատարելագործմանը, հանդես եկան բազմատեսակ շատ նոր գործիքներ, բարելավվեցին հները: Օրինակ, մ. թ. ա. XVI—XV դդ. կրետացիներն օգտագործում էին մանրատամ, 1,6 մ երկարություն ունեցող բրոնզե սղոցներ, լայն տարածում ունեցան սրերը, մեծացավ բրոնզե ամանեղենի քանակը:

Բրուտագործությունը ևս զգալիորեն կատարելագործվեց, բարձրացավ ամանների թրծման որակը, երևան եկավ հախճապակյա իրերի նոր տեսակ: Ոչ պակաս առաջընթաց էր նկատվում շինարարական գործում՝ շինությունները կառուցում էին տաշած քարից, մեծ տարածում ստացան գաջից պատրաստած շինարարական իրերը,

որմանակարչութիւնը: Կատարելագործութեան հասան քարի փորագրումն ու ոսկերչութիւնը:

Հատուկ դեր սկսեցին խաղալ նավաշինութիւնն ու ծովային գործը: Նավերի բաղմաթիւ պատկերները վկայում են, որ այդ բնագավառում կրետացիները գրավում էին առաջին տեղը Միջերկրականում: Նրանք կառուցում էին նավեր, հաճախ՝ խոյահարելու համար հարմարանք ունեցող բարձր քթով ու նավախելի բարձր վերնակառուցով: Նավերը շարժման մեջ էին դրվում թիակների կամ առագաստների միջոցով, կառավարվում էին երկու ղեկաթիակներով: Մանր բեռնատար նավերը փոխադրում էին ապրանքներ, ռազմանավերը ավելի թեթև էին:

Մ. թ. ա. XVII—XVI դդ. կրետացիները ստեղծեցին շատ գլուղական բնակավայրեր նախկինում ամալի լայնածավալ տարածքներում. դա վկայում էր հողագործութեան աճի մասին: Հողագործի աշխատանքը, հավանաբար, հարգված էր Կրետեում: Ագիա-Տրիասում գտնված թանկարժեք քարե անոթներից մեկի վրա («հնձվորներով սկահակը») պահպանվել է գլուղական երգչախմբի մի հիանալի պատկեր՝ մի քանի խումբ գլուղացիներ, եղանները ուսերին, յուրաքանչյուր շաքբում շորսական մարդ, քայլում են ու երգում սիստրա նվագող երաժշտի նվագակցութեամբ: Ենթադրում են, որ նկարիչը այստեղ պատկերել է կրտսական երթ՝ գլուղատնտեսական տոնի ժամանակ:

Կրետեում զգալիորեն աճեց արտադրութեան ընդհանուր ծավալը: Կողմնակիորեն դա հաստատվում է մ. թ. ա. XVIII—XV դդ. հնագիտական շերտերում՝ քանակով ավելի հարուստ, քան վաղ շերտերում, տարբեր իրերի հայտնաբերումով: Անմիջականորեն փոխանակութեան համար գործող արտադրութեան գոյութեան վառ ապացույցն է մետաղյա, իբրև համընդհանուր փոխանակային արժեքի՝ բրոնզե, ալյուրե, կշռային մետաղյա դրամի գործածութիւնը: Կրետեում մի քանի տեղերում (Ագիա-Տրիասիում, Տիրխոսում, Մոխլոսում ու Կնոսոսում (գտնվել են շորացած եզան կաշվի կեռացած եզրերի պես ծոմոված պղնձյա ձուլակտորներ, որոնց մեծ մասն ունեւր շուրջ 29 կգ կշիւ: Հնարավոր է, որ դրանք կատարում էին դրամի դեր: Նույն քաշն ունեւր Կնոսոսում գտնված կշռաքարը՝ պատրաստված ծիրանագուլն գիպսից և նախշված ութտոնիկի բարձրաքանդակ պատկերով: Այդ շրջանի կրետական որոշ կշռաքարեր արդեն ունեւին թվային նշումներ: Կշռային մետաղյա դրամների երևան գալը, թեկուզ նման պրիմիտիւ ձևով, ցույց է տալիս, թե որքան բարձր էր դասակարգային հասարակութեան կազմակերպումը Կրետեում մ. թ. ա. XVIII—XV դդ.:

Արտադրութեան աճն ուղեկցւում էր Կրետեի բնակչութեան թվի ավելացումով: Բազմաթիվ նոր գյուղական բնակավայրերից բացի, հանդես եկան նոր քաղաքներ, մեծացան հները: Որոշ քաղաքներ իսկական ծովային բնակավայրեր էին, ինչպիսին էր փոքրիկ կղզու վրա տեղադրված Պսիրա ավանը:

ԿՐԵՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ

Մ. Ք. Ա. XVIII—XV ԳԴ.

Մ. թ. ա. II հազարամյակի կրետական հասարակութունը ձևավորված դասակարգային հասարակութուն էր: Կրետական արհեստում մ. թ. ա. XVIII—XV դդ. տիրապետում էր ազատ արհեստավորի աշխատանքը, գյուղատնտեսութեան մեջ հիմնական աշխատողը հավանաբար նույնպես գյուղացին էր՝ այդ շրջանում Կրետեում հայտնի են հողագործների բազմաթիվ բնակավայրեր:

Առայժմ շկան տեղեկութուններ արհեստում ու հողագործութունում ստրուկների աշխատանքի կիրառման մասին, սակայն կարելի է ենթադրել, որ ավելի ունևոր արհեստավորները, առևտրականներն ու հողագործներն օգտագործում էին ինչ-որ քանակութեամբ ստրուկներ: Կասկածից վեր է, սակայն, ստրուկների լայն օգտագործումը կրետական ավագանուն սպասարկելու նպատակով հատկապես թագավորական ընդարձակ նստավայրերում: Պատմական նյութերի այժմյան վիճակի պայմաններում դժվար է որոշել ստրուկության աղբյուրները Կրետեում: Ենթելով աթենական այն առասպելից, որ յուրաքանչյուր 9 տարին մեկ Կրետե էին ուղարկվում յոթ պատանիներ ու յոթ աղջիկներ, կարելի է ենթադրել, որ ստրուկները բերվում էին դրսից, նվաճված տարածքներից: Հստ երևույթին, այդ ստրուկների մի մասը պատկանում էր թագավորներին: Որոշ քանակութեամբ ստրուկներ կրետացիք ստանում էին պատերազմների ու այլ երկրների դեմ ուղղված ասպատակումների միջոցով:

Գրեթե ոչինչ հայտնի չէ ազատ բնակչութեան լայն զանգվածների դրութեան մասին: Հավանաբար, այդ ժամանակ տեղի էր ունենում գյուղացիների ու արհեստավորների լարված պայքար հանուն իրենց ազատութեան պահպանման: Հունական ավանդույթը պատկերում է կրետական արքա Մինոսին որպես օրենսդրական համակարգ հաստատած իմաստուն կառավարչի: «Ողիսականում» Մինոսի սովերը դատ է կատարում ստվերների աշխարհում՝ Հադեսում: Արիստոտելն անգամ ենթադրում էր, որ Սպարտայի պետական կարգը ընդօրինակված էր հին կրետականից, որի ստեղծողը համարվում էր Մինոս արքան: Հունական ավանդույթի կողմից կրետական

առասպելական թագավորի օրենսդրական գործունեությանը տրվող նշանակությունը, անշուշտ, արտահայտել էր վաղ դասակարգային հասարակությունում նոր իրավական նորմերի հաստատման համար մղված բարդ պայքարը: Վերջինս ծագեց այն պատճառով, որ նախնադարյան համայնական հասարակարգի հին չգրված օրենքներն ու դրույթներն այժմ սնանկ դուրս եկան: Ըստ երևույթին, Միևսոի օրենսդրությունը պաշտպանեց Կրետեի ազատ բնակչության զգալի զանգվածին ավագանու կողմից ստրկացվելուց, և դրա շնորհիվ էլ այդ թագավորը ձեռք բերեց իմաստուն ու արդարամիտ օրենսդրի հռչակ:

Գյուղացիների ու արհեստավորների զանգվածը միատարր չէր: Հողի նկատմամբ անհատական սեփականության հաստատումը հանգեցրեց ոչ միայն թագավորի ու ավագանու խոշոր տիրույթների, այլ նաև զգալի ծաղկում ապրող միջին տնտեսությունների առաջացմանը: 1953—1954 թթ. պեղվեց նման հարուստ հողագործներից մեկի դաստակերտը: Լավ հղկված քարերից կառուցած երկհարկանի տունը (ներքին հարկում կային 5 սենյակներ) տեղադրված էր աղբյուրի մոտ, Պիսկոկեֆայի (Արևելյան Կրետե) բնակավայրից զգալի տարածության վրա: Տան շափերն ու ամանեղենի մնացորդները վկայում են տիրոջ ունևոր լինելու մասին:

Քաղաքային բնակչության մեջ արհեստների ու առևտրի զարգացումը նույնպես ուղեկցվում էր ունևոր տարրերի անջատումով: Անշուշտ, տնտեսական տեսակետից պետք է ուժեղ լինեին արտաքին առևտրի ու արքունի տնտեսության հետ վապված առևտրաարհեստավորական խավերը: Անգամ Կնոսոսում, պալատի մոտ աշխատող համեմատաբար համեստ արհեստավորները աչքի էին ընկնում իրենց բարեկեցիկ վիճակով: Օրինակ կարող է ծառայել քարե կանթեղներ տաշող վարպետը, որի՝ մ. թ. ա. մոտ 1580 թ. երկրաշարժի ժամանակ ավերված տունը ամուր քարե շինություն էր՝ բաղկացած չորս սենյակներից:

Ասկայն բարձրագույն ավագանու հարստություններն անհամեմատ մեծ էին տնևոր հողագործների ու արհեստավորների կարողությունից: Կրետական արիստոկրատների կալվածքները խոշոր տնտեսական վեներտներ էին: Օրինակ կարող է ծառայել վերջերս վաթիտպետրիում (Կնոսոսից 11—12 կմ հարավ) քացված պալատական տիպի շենքը, որը վերաբերում է մ. թ. ա. XVI դ.: Դրա սենյակների մի մասը հատկացված էր արտադրական գործունեությանը. այստեղ պատրաստում էին գործվածքներ ու ճմլում էին խազող: Մեծ տան կողքին տեղավորված էր բրուտագործական արհեստանոցը:

Այն մեծ շահույթները, որոնք ստանում էին նման տնտեսու-

թյունների տերերը, զգալի շափով ծախսվում էին անարտադրողաբար: Թե՛ բաղաբային և թե՛ գյուղական ավագանու կենցաղում հատկապես զարգացավ շքեղությունը: Անգամ այնպիսի սովորական իրեր, ինչպիսիք էին սերդուլեկից, տալկից, քաղկեդոնից, հեմատիտից, ագաթից, օնիքսից ու օձաքարից պատրաստված կնիքները արվեստի գործեր էին: Բավական բազմազան են նրանց վրա պատկերված տեսարանները՝ լարախաղացը ցատկում է ցուլի վրայից, լեռնային այծը կանգնած է ժալոի եզրին, իսկ ներքևից նրա վրա է նետվում որսորդական շունը: Մեծ տեղ էր տրվում կրոնական թեմաներին, օրինակ՝ զոհաբերություններին և այլն: Լեռնային բյուրեղապակյա կնիքով շատ շքեղ ոսկյա մատանի գտնվել է Սֆունգարոսում: Այստեղ հայտնաբերվել է նաև գերեզմանոց, որտեղ թաղումները կատարվել են կարասներում, մի սովորություն, որը հատուկ էր մ. թ. ա. XVIII—XVII դդ. Կրետեին: Ավելի ուշ, մ. թ. ա. XVI—XV դդ., ավագանու մոտ տարածվեց քարե դամբարաններում թաղում կատարելու սովորությունը:

Կնոսոսի պալատի բազմաթիվ որմնանկարները ցույց են տալիս շքեղության զարգացումը պալատական ավագանու միջավայրում: «Երկնագույն զգեստով տիկնայք» կոչվող որմնանկարի (մ. թ. ա. XVII դ.) վրա պատկերված են մանյակներով խաղացող, գեղեցիկ հագնված կանայք: Այդ շրջանի այսպես կոչված մանրիկ որմնանկարների վրա նույնպես պատկերված են շքեղ հագնված կանայք: Մ. թ. ա. XVI—XV դդ. որմնանկարչական արվեստը հասավ կատարելության, և դրա շնորհիվ մենք կարող ենք բավական ստույգ պատկերացում կազմել պալատականների արտաքինի մասին: «Աթոռակներով որմնանկարի» վրա ներկայացված են կապույտ ու դեղին երկար զգեստներ հագած պատանիներ: Պահպանվել է նաև աղջկա մի պատկեր, այսպես կոչված՝ «Փարիզուհին»:

Սակայն պալատական ավագանու շքեղությունը նսեմանում էր թագավորների հարստության առջև: Կրետական թագավորների կենցաղի ճոխության մասին կարելի է դատել, ելնելով Կնոսոսի պալատի՝ մոտավորապես մ. թ. ա. 1750—1570-ով թվագրվող շերտերում հայտնաբերված շախմատի շքեղ տախտակից: Տախտակի շերջանակը (0,50×1,00 մ.) պատրաստված է փղոսկրից, շրջանակի երկարութամբ ցայտաբանդակ մարգարտածաղիկներից կազմված է եզրակ: Տախտակի նկարը կատարված է թերթավոր ոսկով ծածկված փղոսկրից, արանքները լցված են կապույտ մածուկի կամ արծաթի հիմքի վրա ամրացված լեռնային բյուրեղապակով: Կրետական թագավորների նստավայրի շքեղությունը իր վառ արտահայտությունն ունեցավ Կնոսոսում, որը ըստ Ստրաբոնի հաղորդման

(X, 4, 7), Մինոս արքայի ու նրա նախորդների մայրաքաղաքն էր: Հսկայական բազմահարկ պալատի բազմաթիվ շինությունները տեղադրված էին ներքին մեծ բակերի շուրջը, որոնց միջոցով միմյանց կապվում էին հանդիսավոր սրահները, կրոնական արարողությունների համար նախատեսված սյունազարդ դահլիճները, բնակելի սենյակները, զինանոցները, պահեստները, միջանցքները, սանդուղքները, ավազանները:

Կնոսոսի պալատում, Փեսոսում, Ջակրոսում և այն ժամանակի թագավորական այլ նստավայրերում կուտակված էին զգալի քանակությամբ թանկարժեք իրեր, ճոխ կահ-կարասի, ինչպես նաև պարենի, հումքի, աշխատանքի գործիքների ու զենքի մեծ պաշարներ:

ԿՐԵՏԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՆՍՍՅԱՆ ԳԵՐԻՇԵԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ (Մ. թ. Ա. XVIII դ.—XV դ. ԿԵՍԸ)

Մ. թ. ա. XVIII—XV դդ. Կրետի մշակույթի միասնությունը, կղզու ամբողջ տարածքով մեկ շամբացված բնակավայրերի կառուցումը, Կնոսոսի վառ արտահայտված գերիշխանությունը, որի մասին վկայում է ուշ շրջանի գրավոր ավանդույթը, ցույց են տալիս, որ մ. թ. ա. XVIII դ. կեսից հետո Կրետեն միավորվեց Կնոսոսում վառավարող դինաստիայի գերագույն իշխանության ներքո: Մ. թ. ա. XVI—XV դդ. ամբողջ կղզու տարածքով մեկ ձգվում էր Կնոսոսից ելնող ճանապարհների ցանց, որը միացնում էր մայրաքաղաքը ամենահեռավոր կետերի հետ: Ամեն ինչի կենտրոնը արքունի պալատն էր: Այստեղ էին հավաքվում ինչպես Կրետեից, այնպես և կրետացիներին ենթակա այլ շրջաններից գանձվող բազմաթիվ եկամուտները: Կնոսոսի պալատի հսկայական պահեստներում պահվում էին հացահատիկի, յուղի, զենքի, կահ-կարասու, գործվածքների, թանկարժեք իրերի պաշարներ: Այդ բոլոր հարստությունների մասին տվյալները գրվում էին կավե սալիկների կամ պապիրուսների վրա, պաշտոնյա անձանց կողմից: Այդ պաշտոնյաները վարում էին բարդ ֆինանսական տնտեսությունը:

Կրետի պետական կարգը պահպանում էր որոշ յուրահատուկ արխաիկ գծեր: Թեև Կնոսոսի թագավորը գերագույն տիրակալ էր, սակայն իշխանության մի մասը պատկանում էր ավանդական տեղական դինաստիաներին, ինչպես նաև թագավորական ընտանիքի կրտսեր անդամներին: Թուկիդիդեսը պատմում է, որ Մինոս թագավորը իր որդիներին նշանակեց նվաճված կղզիների կառավարիչներ: Նուրնպիսի կարգ գոյություն ուներ, ըստ երևույթին, և ամբողջ Կրետեում, որի առանձին մարզերը գլխավորում էին տե-

դական կառավարիչները: Նոր պալատները Ագիա-Տրիասում և Տրիխոսում և հները Փեստոսում, Զակրոսում ու Մալիայում թագավորական այդպիսի հարստությունների նստավայրերն էին:

Կղզու միավորումը ուժեղագույն թագավորի գլխավորությամբ կրետացիներին հնարավորություն տվեց համեմատաբար արագ անցնել գործուն արտաքին քաղաքականության: Կրետեի էքսպանսիան, բնական է, ուղղված էր դեպի հյուսիս, որովհետև հեռավոր Եգիպտոսն ու էլ ավելի հեռավոր Ասորիքն անմատչելի էին: Արդեն մ. թ. ա. XVIII—XVII դդ. կրետացիները տիրապետություն հաստատեցին Կիկլադյան արշիպելագի վրա՝ բնակեցնելով մինչ այդ ամայի կղզիները: Այդ համեմատաբար փոքր տարածքների հպատակեցումը զգալիորեն ուժեղացրեց Կրետեն: Մ. թ. ա. II հազարամյակի սկզբին Կիկլադյան կղզիների բնակչությունը զարգացրել էր ինքնատիպ ու հարուստ մշակույթ: Ժայռոտ կղզիների վրա ապրող կիկլադցիները դեռևս մ. թ. ա. III հազարամյակում սովորել էին օգտագործել իրենց հողի գլխավոր հարստությունը՝ օբսիդիանը, իսկ հետագայում՝ մարմարը, որից նրանք պատրաստում էին մեծ ու փոքր արտահայտիչ արձանիկներ: Նրանք ստեղծեցին առաջնակարգ խեցեգործություն. նրանց իրերը երբեմն գերազանցում էին Կրետեի բրուտագործների արտադրանքին: Կղզիներից մեկում՝ Մելոսում կատարված պեղումները ցույց տվեցին, որ կրետացիներին հաջողվեց իրենց ենթարկել նաև խոշոր Փիլակոպի բաղաբը, որը ծաղկում էր ապրում հատկապես մ. թ. ա. II հազարամյակում:

Ըստ երևույթին, Կիկլադյան կղզիների բնակչության վրա զորված էր հարկ, որը մուծվում էր մթերքներով ու արհեստավորական իրերով: Կնոսոսի «տաճարային մառաններում», մ. թ. ա. XVIII—XVII դդ. շերտերում հայտնաբերվել են կիկլադյան խեցեղենին բնորոշ կուտակումներ: Կղզիներում ապրող հմուտ ծովագնացները, որոնց մեջ կային և կարիացիներ, պարտավոր էին Մինոսին տրամադրել անձնակազմեր նավերի համար: Այդ հանգամանքը զգալիորեն մեծացրեց կրետական նավատորմի հզորությունը: Հավանաբար, կղզիներից Կրետե էին ուղարկվում նաև որոշ քանակությամբ ստրուկներ:

Իրենց տիրույթների միջև կապ ապահովելու նպատակով Կրետեի արքաները պայքար սկսեցին այն ժամանակ էգեյան ծոցում աճող ծովահենության դեմ: Թուկիդիդեսն ու Հերոդոտոսը հաղորդում են, որ Կրետեի վերջին թագավոր Մինոսը որքան կարողացավ, մաքրեց ծովը ծովահեններից, դարձավ հելլենական, այսինքն էգեյան ծովի տիրակալը, և որ Մինոսի շնորհիվ հատկապես ուժե-



դացան ծովային կապերը ժողովուրդների միջև (Թուրքիդիդես, I, 8, 1—2): Իհարկե, Կրետեի ծովային տիրապետությունը հաստատվեց վերջին Մինոսից (որին հունական ավանդույթը վերագրեց նրա նախորդների բոլոր գործերը) շատ ավելի վաղ: Չէ՞ որ հնարավոր չէր կարճ ժամկետում կառուցել մեծ նավատորմ ու վարժեցնել բազմաթիվ նավաստիներ:

Կրետացիները տարածեցին իրենց իշխանությունը նաև մայրցամաքային Հունաստանի մի փոքր մասի վրա: Հրեշ Մինոտավրոսին կերակրելու համար թագավոր Մինոսին ուղարկվող պատանիների ու աղջիկների և Մինոտավրոսին սպանող Թեսևսի սրխրագործությունն մասին առասպելը անշուշտ այն բանի վկայությունն է, որ կրետացիներին հաջողվեց իրենց ենթարկել նաև Ատտիկան՝ այն ժամանակվա Հելլադայի ամենաթույլ մարզը: Հայտնի է, որ կրետական ջոկատները հարձակվում էին նաև Մեգարայի վրա: Ավելի թույլ էին Կրետեի տիրույթները Միջերկրական ծովի ավազանի այլ մասերում: Կրետացիների զուտ առևտրական կամ առևտրական-ազմական բնակավայրերի գոյությունն մասին են վերկայում «Մինոս» անունը կրող բազմաթիվ բնակավայրերը Դելոսում, Լակոնիկայում, Ասորիքի ծովափին: Դիողորոսը պատմում է, որ կրետացիները ներթափանցեցին Սիկիլիա ու նկարագրում է այնտեղ թաղված Մինոս արքայի դամբարանը: Հստ երևույթին, այնտեղ խոսվում է կղզում կրետական բնակավայրը գլխավորած զորավարներից մեկի, արքայական տոհմի անդամի գերեզմանի մասին:

Մ. թ. ա. II հազարամյակի առաջին կեսին հզոր Կրետեն ուներ ընդարձակ արտաքին կապեր: Եգիպտոսի հետ վաղեմի շփումները դարձան ավելի ուժեղ. դա հաստատվում է հնագիտական զանազան հայտնագործումներով: Կրետական բարձրագույն ավազանու դամբարաններում գտնվել են եգիպտական անոթներ ու կնիքներ (թաղումներ Իսոպատայում ու Ագիա-Տրիատում). կրետական նկարիչներն օգտագործել են նեղոսի հովտից փոխառնված որոշ մոտիվներ: Կրետացիները ներթափանցում էին նաև Աֆրիկայի այլ մասերը. այդ մասին են վկայում նեգրերի պատկերները որմնանկարների վրա Կնոսոսում: Եգիպտոսում նույնպես հանդիպում են Կրետեի հետ շփման շատ հետքեր: Գտնված է, օրինակ, մ. թ. ա. II հազարամյակի կրետական խեցեղեն ու մետաղյա ամանեղեն (Ամենեմհեթ II-ի ժամանակին վերաբերող հայտնագործումները Մոնտու տաճարում): Մ. թ. ա. XVI—XV դդ. եգիպտական մեծատոհմիկները պարծենում էին, որ Կեփտիու երկրի, այսինքն՝ Կրետեի մարդիկ նվերներ էին բերում փարավոններին: Այդ օտար-

երկրացիներին նրանք պատկերում էին իրենց դամբարանների պատերին (ճարտարապետ Սենմուտ, վեզիր Ռենմիրա, գանձարանի պետ Մենհեպերասենեբ): Կրետացիների ազդեցության շնորհիվ Եգիպտոսի արվեստում հայտնվեցին նոր մոտիվներ: Կրետեի ու մայրցամաքային Հունաստանի ազդեցությունը հատկապես ուժեղ արտահայտվեց ամառնյան շրջանի (մ. թ. ա. XV դ.) եգիպտական արվեստում:

Ամփոփելով բոլոր մեզ հայտնի տեղեկությունները, կարելի է ասել, որ Կրետեի ու Եգիպտոսի մշակույթների փոխազդեցությունը մեծ նշանակություն ունեցավ երկու երկրների համար:

Վերջին տասնամյակներում կատարված պեղումները ցույց են տալիս, որ Կրետեն պահպանում էր սերտ կապեր նաև Միջերկրականի արևելյան երկրների՝ Կիպրոսի ու Ասորիքի հետ: Ասորիքի թագավորության մայրաքաղաք Ուգարիտում պեղված է մ. թ. ա. XVIII դ. պատկանող մի թաղամաս, որտեղ ապրել են էգեացիներ: Տնարավոր է, դրանք կրետացիներ էին: Կրետական արվեստի ազդեցությունը նկատվում է նաև ավելի հեռու, դեպի արևելք գտնվող (ծովափից 250—300 կմ. տարածության վրա) Մարիի պալատի որմնանկարներում (մ. թ. ա. XVIII դ.): Կրետեում հայտնաբերվել են ոչ միայն Ասորիքից բերված իրեր, այլ նաև այնտեղից փոխառնված գեղարվեստական մոտիվներ: Այս բոլոր տվյալներն ապացուցում են Կրետեի աշխույժ շփումը Առաջավոր Արևելքի երկրների հետ:

Բարդ է Կրետեի ու մայրցամաքային Հունաստանի միջև եղած հարաբերությունների բնույթի հարցը, որի վերջնական լուծման համար դեռևս պետք է շատ բան անել: Սակայն պարզ է, որ մի շարք հարյուրամյակների ընթացքում Կրետեի ու Պելոպոնեսի շրփումն այնքան ուժեղ էր, որ ընդհանուր մշակութային երևույթների զարգացումը այդ երկու մարզերում հաճախ զուգահեռ էր ընթանում: Վառ օրինակ կարող է ծառայել կրետական գրի հիման վրա վանկային «Բ» գրի ստեղծումը քայացիների կողմից ու նրա շատ արագ տարածումը Կնոսոսյան գրասենյակներում: Դա էգեյան ավազանի ներսում եղած մշակութային կապերի երկար շղթայի օղակներից մեկն էր:

#### ԿՐԵՏԱԿԱՆ ԳԻՐԸ

Վերը հիշատակվեց, որ արդեն մ. թ. ա. III հազարամյակի վերջում կրետացիները լայնորեն օգտվում էին նկար-գրի (պիկտոգրաֆիկ գրի) համակարգից: Կրետական պիկտոգրաֆիկ գրի նշանները հստակ են, պարզ հաղորդում են ինչպես առարկաների

(ծառ, եռաժանի, կրկնակի կացին), այնպես և մարդու ու կենդանիների պատկերները: Հետզհետե պիկտոգրաֆիկ գիրը զարգացավ ու վերածվեց գաղափարագրի, ըստ որի նշաններն արդեն արտահայտում էին ոչ թե կոնկրետ առարկաներ, այլ հասկացություններ: Մ. թ. ա. XVIII—XVII դդ. կրետացիները կատարելագործեցին այդ գիրն ու անցան գրի վանկային համակարգին, որի յուրաքանչյուր նիշը նշանակում էր որոշակի վանկ: Այդ այսպես կաշված գծային գիրը իր ավելի վաղ ձևով (գիր «Ա») ընդգրկում էր հին գաղափարագրի նշանների շուրջ  $\frac{1}{3}$ -ը: Մ. թ. ա. XV դ. կեսին Կնոսոսում՝ Կրետեում ու Հարավային Հունաստանում տարածվեց ավելի Կատարելագործված վանկային «Բ» գիրը, որը պահպանեց «Ա» գրածային գրի նշանների շուրջ 50 տոկոսը: Վանկային նշանների հետ մեկտեղ կրետացիներն օգտագործում էին նաև հասկացություններ նշանակող որոշ թվով գաղափարագրեր, օրինակ՝ «գումար», «տըղամարդ», «կին», «ծիակառք», «վահան» և այլն: Կրետական գրում նշանները միշտ գրվում էին ձախից աջ, ընդ որում կրետացիները ճշտորեն պահպանում էին տողերն ու առանձնացնում էին բառերը: Հաշվի համակարգը կրետացիների մոտ բավականին զարգացած էր. նրանք գիտեին ոչ միայն թվաբանական կանոններ, այլև կարող էին հաշվարկել տոկոսներ: Կրետական արձանագրությունները պահպանվել են տարբեր առարկաների վրա՝ կնիքների, զմուռների, անոթների, զոհարանների, քարերի: Սակայն կրետացիների գրավոր հուշարձանների գլխավոր զանգվածը կազմում են կավե սալիկները: Դրանց վրա նշաններ գծում էին սուր գործիքով, խոնավ կավի վրա: Կրետացիները գրում էին նաև թանաքով: Կրետացիների վանկային գիրը կարգացվեց շատ գիտնականների ջանքերի շնորհիվ: Դեռևս Ա. էվանսը, հետո չեխ Բ. Հրոտզինն ու բուլղարացի Վ. Գեորգիևը պարզեցին մի շարք նշանների իմաստը: Նրանցից հետո անգլիացիներ Մ. Վենտրիսն ու Դ. Չադվիկը 1953 թ. առաջարկեցին վանկային «Բ» գրի նշանների մեծ մասի համոզիչ վերծանում: Նրանք պարզեցին, որ կրետական վավերագրերի լեզուն հնագույն հունական բարբառներից մեկն է:

#### ԿՐԵՏԱՑԻՆԵՐԻ ԿՐՈՆՆ

Կրետացիների կրոնական պատկերացումները մ. թ. ա. III ու II հազարամյակների ընթացքում քիչ փոխվեցին: Կրետացիների բարձրագույն աստվածն էր համարվում բնությունը մարմնավորող Մայր-Աստվածուհին: Նրան պատկերացնում էին որպես հողի ու երկրի վրա բոլոր ապրողների ու բուսնողների տիրուհի: Մայր-

Աստվածուհին՝ պտղաբերութեան խնամակալուհին, ռաներ որդի՝ տղա-աստված, որին հաճախ պատկերում էին մոր հետ միասին: Մեծ աստվածուհին ուներ ուղեկիցներ՝ կենդանիների գլուխներով ու մարդու մարմնով էակներ: Աստիճանաբար կրետացիների կրոնում ուժեղացան պատկերացումները արևի հետ կապված երիտասարդ աստծու հզորություն մասին: Այդ աստվածին հաճախ պատկերում էին ցուլի կերպարանքով: Նրա պաշտամունքի կենտրոնն էր Կնոսոսը: Մինոտավրոսի առասպելն ու արվեստի հուշարձանները խոսում են այն մասին, որ Կնոսոսում տեղի էին ունենում կրոնական մեծ արարողություններ, որոնց թվում էին ցուլի դիմակ հագած արքայի ծիսային ամուսնությունն ու մարմնամարզական խաղերը: Սկզբում կրետացիները մեծարում էին Մայր-Աստվածուհուն տարբեր քարայրներում ու անձավներում, որոնցով այնքան հարուստ են կղզու լեռնաշղթաները: Մ. թ. ա. II հազարամյակի սկզբից ինչպես մեծ պալատներում, այնպես և մասնավոր տներում ստեղծվում են սրբարաններ: Այնտեղ դրվում էին աստվածների պատկերներն ու պաշտամունքի հետ կապված սուրբ իրերը (կըրկնակի կացիներ), կենդանիների ու թռչունների՝ ցուլի, օձի, աղավնու արձանիկները:

Կրետացիների աշխարհայացքում զգալի տեղ էր գրավում մեռյալների պաշտամունքը: Հանգուցյալներին թաղում էին քարե դամբարաններում, կավե կարասներում: Մ. թ. ա. II հազարամյակի կեսին գործածության մեջ մտան հատուկ կավե սարկոֆագներ, որոնք հաճախ հմտորեն զարդարված էին: Հանգուցյալի հետ նրա անդրժիրիմյան կյանքի համար դնում էին զենք, զարդեր, ամանեղեն:

Կրետացիների կրոնի բնորոշ գիծը նրանց մոտ առանձին տաճարային համալիրների ու քուրմ-կրոնավորների հատուկ խմբի բացակայությունն էր: Ըստ երևույթին, բոլոր կրոնական ծեսերը կատարում էին ընտանիքների գլխավորները, իսկ համապետական պաշտամունքի արարողությունների կատարումը մտնում էր թագավորի պարտականությունների շրջանակի մեջ:

#### ԿՐԵՏԵԻ ՔՈՒԼԱՑՈՒՄԸ ՈՒ ՆՐԱ ԵՎԱՃՈՒՄԸ ԱՔԱՅԱՑՆՆԵՐԻ ԿՈՂՄԵՑ

Մ. թ. ա. XV դ. կեսին Կրետեն ենթարկվեց վիթխարի ուժի երկրաշարժի: Քաղաքներն ու պալատները դարձան ավերակներ, որոնց տակ զոհվեցին բազմաթիվ մարդիկ: Այդ տարերային աղետը կապված էր Կրետեից 110 կմ հեռավորության վրա գտնվող Քերա կղզում հրաբխի աղետաբեր ժայթքման հետ: Այդ աղետից հետո վերածնվեց միայն առավել ուժեղ Կնոսոսոսյան թագավորությունը, մյուս պալատական կենտրոնները մնացին ավերակ վիճակում:

Այդ ժամանակ ընկավ Կրետեի արտաքին հզորությունը, նրա տիրապետությունից ազատվեցին և՛ կղզիները, և՛ մայրցամաքային Հունաստանում նրան ենթակա հողերը: Ատտիկական ավանդույթը առասպելների ձևով հիշողություն է պահպանել այդ իրադարձությունների մասին: Դրանց համաձայն Թեսևսը՝ Աթենքի արքա էգևսի որդին, ժամանեց Կրետե, իր հետ բերելով այն պատանիներին ու աղջիկներին, որոնց աթենացիները որպես տուրք ուղարկում էին Կրետեի թագավոր Մինոսին: Կնոսոսում Թեսևսը տեսավ ու սիրեց Մինոսի դուստր Արիադնեին: Արքայադստեր օգնությամբ Թեսևսը սպանեց մարդկանցով սնվող Մինոտավրոս կոչվող հրեշի ու Մինոսի մոտից նավով փախավ Աթենք: Այդ ավանդությունը ինչ-որ չափով արտացոլում է մ. թ. ա. XV դ. երկրորդ կեսին Կրետեում տեղի ունեցած անցքերը: Ըստ հնագիտական տվյալների, մ. թ. ա. XV դ. 50-ական թվականներից հետո վերականգնված Կնոսոսում կառավարում էր Մինոսների թագավորական ընտանիքին փոխարինած, արայան ժագում ունեցող հարստություն: Հավանաբար, երկրաշարժից մի փոքր անց Կրետեի հյուսիսը բնակեցվեց մայրցամաքային Հունաստանից ժամանած եկվորներով: Կրետեն կորցրեց իր տիրապետող դիրքն ու դարձավ արքայան Հունաստանի սոսկ մի մասը:

## Գլուխ 2. ԱՔԱՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՔԱՅԱՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԸ Մ. Թ. Ա. II ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ  
ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ

Արքայացիների գաղթից հետո մեկուկես-երկու հարյուրամյակները Հունաստանում կատարված լուրջ փոփոխությունների ժամանակաշրջան էին: Մի կողմից նախորդ դարաշրջանի շատ խոշոր կենտրոններ մնացին ավերակ վիճակում կամ նրանց տեղում առաջացան ավելի համեստ բնակավայրեր: Մյուս կողմից տեղական (ավտոխթոն) ու եկվոր բնակչության զարգացման մոտավորապես միևնույն մակարդակը ապահովեց երկու հասարակություններում էլ, մինչև նրանց խառնումը, տեղի ունեցող տնտեսական ու սոցիալական պրոցեսների անընդմիջությունը: Միաժամանակ արքայացիների գաղթը արագացրեց սոցիալական անհավասարության սրումը, որը անհատական սեփականության աճի հետևանք էր: Գաղթերի նշանակությունը մասնավոր սեփականության զարգացման գործում նշել էր Կ. Մարքսը: Նա ցույց տվեց, որ «որքան ավելի է ցեղը հեռանում իր սկզբնական բնակավայրից ու օւտիչի հողեք է զավթում, հետևաբար աշխատանքի էապես նոր պայմանների մեջ է ընկնում, և

յուրաքանչյուր առանձին մարդու եռանդը ավելի է զարգանում..., այնքան ավելի շատ պայմաններ կան, որպեսզի առանձին մարդը դառնա հողի մասնավոր սեփականատեր...»<sup>2</sup>:

Հենց այդ ժամանակ, մ. թ. ա. III ու II հազարամյակների սահմանագծին նկատվում է արտադրութայն հետագա աճ՝ կապված բրոնզի լայն օգտագործման ու տարբեր արհեստների զարգացման հետ: Մ. թ. ա. XX—XIX դդ. երկիրը ծածկվեց հողագործական բնակավայրերի խիտ ցանցով: Դրանք հաստատվում էին լավ աղբյուրների մոտակայքում, սովորաբար բլուրների գագաթներին, որոնք իրենցից ներկայացնում էին բնական ամրություններ: Արդեն այդ ժամանակ բնակավայրերը Միկենեում, Տիրինսում, իսկ հաջորդ դարաշրջանում՝ այլ խոշոր կենտրոններում զգալիորեն տարբերվում էին Կորակուի ու Զիգուրիայի նման համեստ ավաններից: Միկենեն հատկապես մեծացավ մ. թ. ա. XVIII—XVII դդ.: Նրա կրոնապաշտ (վերին քաղաքը) պարսպապատ էր: Ակրոպոլիսի ու հարևան բլուրների լանջերին տեղավորված էին բնակելի թաղամասեր:

Խոշոր բնակավայրեր էին առաջանում նաև Հունաստանի այլ մասերում: Դրանք դառնում էին կենտրոններ, ուր բնակվում էին կառավարիչներն ու ավագանին, և հետզհետե վերածվում էին արհեստավորական ու հողագործական բնակչություն ունեցող քաղաքների: Աքայան արհեստագործների բազմաթիվ արհեստանոցներում պատրաստվում էին իրեր, որոնք տարածվում էին Հունաստանից հեռու գտնվող վայրերում: Ինչպես վկայում են հնագիտական հայտնագործումները, արդեն այդ ժամանակ աքայացիների արտաքին ձևերը նշանակալից էին: Հարավում նրանք շփվում էին Կրետեի հետ ու նրա միջնորդությամբ կապեր էին պահպանում Եգիպտոսի հետ: Կիկլադյան կղզիները կապող օդակ էին Հունաստանի ու փոքրրասիական ծովափի միջև: Դատելով խեցեղենից, աքայացիները կապեր ունեին Մակեդոնիայի, Իլլիրիայի ու Թրակիայի հետ:

Արտադրության ու փոխանակության արագ զարգացման պայմաններում դասակարգային հասարակության ու պետական կազմակերպման առաջացման երկարատև պրոցեսը մայրցամաքային Հունաստանի տարածքում ավարտվեց մ. թ. ա. XVII դ. սկզբին: Այստեղ, ինչպես Կրետեում, վաղ պետությունները սկզբում առաջանում էին փոքր տարածքներում, աճելով տեղական ավանդական ցեղային միավորումներից: Հելլադայի աշխարհագրական պայմանները նպաստում էին անգամ մանր ցեղերի անկախության երկարատև

<sup>2</sup> Կ. Մարքս, Կապիտալիստական արտադրությանը նախորդող ձևերը, Երեան, 1941, էջ 11:

պահպանմանը, և այդ հանգամանքը դարձավ առանձին թագավորական տոհմերի կողմից կառավարվող բազմաթիվ մարզերի առաջացման պատճառը: Կառավարիչների ուժերը բավականին անհավասար էին, սակայն յուրաքանչյուր մարզում նրանք ձգտում էին պահպանել իրենց անկախությունը: Հին հույների առասպելները շատ հստակորեն խոսում են աքայացիների քաղաքական կյանքի այս առանձնահատկության մասին: Պատմագիր Թուկիդիդեսը նույնպես ընդգծում է երկրի մասնատվածության փաստը: «Եվ այսպես, հելլենները, որոնք ապրում էին առանձին քաղաքներում, հասկանում էին իրար ու հետագայում բոլորը կոչվեցին մի ընդհանուր անունով, մինչև Տրոյական պատերազմը ոչ մի համատեղ բան չարեցին իրենց թուլության ու փոխադարձ շփման բացակայության պատճառով» (I, 3): Նշելով, որ Հելլադայի բնակիչները նման վիճակում էին բավական երկար ժամանակ, Թուկիդիդեսը պատմում է, որ ծովահենության հետևանքով այդ շրջանում քաղաքները կառուցում էին ծովից որոշ հեռավորության վրա (I, 7): Եվ իրոք, համարյա բոլոր աքայական քաղաքները, ինչպես ցույց են տալիս այժմյան պեղումները, գտնվում էին ծովափնյա շերտից մի քանի կիլոմետր հեռավորության վրա:

Աքայան թագավորությունները զարգանում էին տարբեր կերպ: Մովամերձ հողերում գտնվող քաղաքներն աճում ու ամրանում էին ավելի արագորեն, քան ներքին մարզերի քաղաքները: Այդ մասին հաղորդում է Թուկիդիդեսը (I, 8), վկայում են նաև հնագիտական աղբյուրները: Բոլորից վաղ ուժեղ ու հզոր դարձավ Պելոպոնեսի հյուսիսարևելյան մասում՝ Արգոլիս կոչվող մարզում գտնվող պետությունը:

#### ԱՐԳՈՒՍԸ Մ. Ք. Ա. XVII—XV ԴԴ.

Արգոսը բնակեցրած աքայացիների պատմությունը մեզ հայտնի է ոչ միայն հնագիտական տվյալներից, այլև հունական առասպելական ավանդության շարադրանքից: Այդ ավանդույթը պահպանել է բասիլևսների անուններն ու պատումներ նրանց սխրագործությունների մասին. այստեղ պատմական փաստերը խառնված են հեթաթայի մոտիվներին:

Արգոլիսում գոյություն ունեին մի քանի ինքնուրույն հարստություններ, որոնք կառավարում էին Միկենեում, Տիրինսում, Արգոսում ու այլ մանր թագավորություններում: Միկենեի թագավորները, որոնք տիրում էին շատ արգավանդ հողերի, վաղ աչքի ընկան իրենց հարստություններով: Արդեն մ. թ. ա. 1650 ու 1500 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում Միկենեի բասիլևսները տիրում էին

հսկայական գանձերի: Այդ են վկայում այն ժամանակի արքայական երկու դամբարանների պեղումները: Գրանցից յուրաքանչյուրը պատված էր շրջանակաձև քարե պարսպով: Գերեզմանային Ա ու գերեզմանային Բ շրջանակների ներսում հայտնաբերված են թագավորների ու թագավորական ընտանիքի անդամների 30 գերեզմաններ: Յուրաքանչյուր թաղման վրա բարձրանում է հողի բլրակ, ոմանց վրա, բացի դրանից, կանգնած էին քարե հուշարձաններ: Տապանաքարերը զարդարված էին ճակատամարտերի ու որսի տեսարանների բարձրաքանդակ պատկերներով: Դամբարանային կառույցներն իրենցից ներկայացնում են ժայռափոր ուղղանկյուն գերեզմաններ: Յուրաքանչյուր փոս ուներ գերաններով շինված ծածկ, որի վրա շարված էին քարեր ու լցված էր անջրանցիկ կավ: Ամենաուշ շրջանի գերեզմաններից մեկի պատերը գաջած էին ու նախշված կարմիր ու սև շերտերով:

Որոշ դամբարաններում կային մեկական կմախք, մյուսներում՝ երկուական, մեկում էլ՝ չորս կմախք: Հանգուցյալների հետ դրել էին բավականին բազմազան ու հարուստ անդրշիրիմյան ընծաներ: Տղամարդկանց թաղումներում գտնվել են թանկարժեք բրոնզյա սրեր ու դաշույններ՝ լեռնային բյուրեղապակուց, փղոսկրից կամ ոսկուց պատրաստած բռնակներով ու զլխիկով, Հատկապես հիանալի են հանդիսավոր սրերն ու դաշույնները, որոնց սայրերը զարդարված են ոսկու ու արծաթի բարձրարվեստ դրվագազարդերով: Աքայան հմուտ զինագործներն այդ դրվագազարդերից ստեղծել են բարդ կոմպոզիցիաներ՝ վայրի կենդանիներ, բույսեր կամ էլ որսի տեսարաններ: Հանգուցյալներից ոմանց դեմքերին կային ոսկյա դիմակներ, որոնք բավականին նրբորեն հաղորդում էին մահացածի դիմագծերը: Թաղումներում թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց, գտնված են ճոխ զարդեր՝ ոսկյա ճակտոններ, ապարոշներ, գինդեր, կախոցներ, ճարմանդներ ու բազմաթիվ զարդեր կիսաթանկարժեք քարեֆից, սաթից, հախճապակուց, փղոսկրից: Գրեթե բոլոր դամբարաններում հայտնաբերված է նրբագեղ կավե ամանեղեն, որոշ թաղումներում՝ ոսկուց, արծաթից կամ բրոնզից պատրաստված անոթներ: Մի գերեզմանում գտնվել է բաղի կերպարանք ունեցող նրբագեղ բյուրեղապակյա եգիպտական անոթ: Միկենյան արքայական թաղումների ճոխության օրինակով կարելի է եզրակացնել գույքային այն խոր անհավասարության մասին, որը շեշտակիորեն անջատում էր բասիլևսի շարքային աքայացուց: Հասարակության շարքային անդամներն իրենց ննջեցյալներին թաղում էին ոչ խոր բնահողային գերեզմաններում կամ սալերից պատրաստված արկղներում, ընդ որում այդ թաղումների գույքը շատ համեստ էր:



Հնագույն միկենյան հարստութեան (պայմանականորեն այն անվանում են հորանային դամբարանների հարստություն) անընդմեջ կառավարումն ու նրա հարստությունների աճը խոսում են Միկենյան թագավորության աստիճանական ամրապնդման մասին մ. թ. ա. XVII—XVI դդ.: Դա տեղի էր ունենում ռազմական հաճախակի ընդհարումների պայմաններում. այդ մասին միաբերան վկայում են Արգոլիսի հնագույն թագավորությունների վերաբերյալ պահպանված ավանդություններն ու միկենյան արքաների զինվորական կենցաղը: Միկենյան թագավորության ծագումնաբանական առասպելները պատմում են, որ Տրոյական պատերազմի նախաշեմին (պատերազմը եղավ մ. թ. ա. մոտ 1240 թ.)<sup>3</sup> Միկենեում կառավարում էր Պելոպսի տոհմից սերված երկրորդ թագավորը: Մինչև Պելոպյանների այդ հարստությունը (որը հավանաբար իշխանութեան գլուխ անցավ մ. թ. ա. մոտ 1270 թ.) թագավորում էին Պերսևսի տոհմին պատկանող բասիլևսները: Ավանդությունը հաղորդում է, որ Պերսևսյանների դինաստիան ուներ 8 թագավոր, այնպես որ այդ արքայական տոհմը սկիզբ է առնում հորանային դամբարանների շրջանին պատկանող դինաստիայի վերջին թագավորի ժամանակներից: Առասպելը պատմում է, որ Պերսևսյանների ժամանակ Արգոլիսում հաճախակի տեղի էին ունենում պատերազմներ, Միկենե, Տիրինս ու Արգոս խոշոր քաղաքների արյունակից բասիլևսները պայքարում էին իրար դեմ: Այդ երեք թագավորությունները ունեին մոտավորապես հավասար ռազմաքաղաքական հզորություն, մի բան, որ պայմանավորեց դրանց, որպես ինքնուրույն միավորների երկարատև գոյությունը Արգոլիսի շրջանակներում:

Նույնանման էր հասարակության զարգացումը երկրի մյուս մասերում: Մ. թ. ա. XVI դ. վերջում նկատելիորեն բարձրացավ Պելոպոնեսի արևմտյան մասում, Մեսսենիայում գտնվող մի թագավորություն, որի կենտրոնն էր Պիլոսը: Պիլոսյան թագավորների՝ մ. թ. ա. մոտ 1500 թ. վերաբերող ճոխ գերեզմանը վկայում է այն մասին, որ այդ տիրակալներն իրենց հարստությամբ կարող էին մրցել միկենյան թագավորների հետ, այլ կերպ ասած, այստեղ ևս բավականին զարգացած էր հասարակ ժողովրդի շահագործումը տիրող խավերի կողմից:

<sup>3</sup> Հին հեղինակների մի մասը այդ թվականին է վերագրում Տրոյական պատերազմը, ու այդ են հաստատում հնագիտական նոր տվյալները: Առաջ ընդունված էր այլ ասարեթիվ՝ մ. թ. ա. մոտ 1194 թ.:

Մոտավորապես մ. թ. ա. XV դ. սկսվում է աքայան հասարակության բարձրագույն զարգացման ժամանակաշրջանը, երբ բավականին բարձր մակարդակի հասան արհեստը, առևտուրը, ծովագնացությունը: Այդ շրջանի վերջում եղած իրադարձությունները վառ կերպով նկարագրված են Հոմերոսի «Իլիականում» ու «Ոդիսականում»: Աքայան գրական վավերագրերը լուսաբանում են այն ժամանակի Հունաստանի հասարակության տնտեսական և քաղաքական կառուցվածքը:

Աքայացիների տնտեսական կյանքը մ. թ. ա. II հազարամյակի երկրորդ կեսին բնորոշվում էր հողագործության ու աբսեստների հետագա զարգացմամբ: Դասական Հունաստանում հայտնի համարյա բոլոր հողագործական կուլտուրաները՝ հացաբույսերը, խաղողը, պտղաբույսերը ծառերը մշակվում էին աքայացիների կողմից: Երանք բուծում էին խոշոր ու մանր եղջերավոր անասուններ, ձիեր, էջեր, շորիկներ:

Էպոսի ու աքայական արձանագրությունների ավյալները թույլ են տալիս պատկերացում կազմել այն ժամանակի ագրարային հարաբերությունների մասին: Հողը աքայան պետություններում երկու կարգի էր՝ համայնական դաշտեր, որոնք պատկանում էին ժողովրդին, դեմոսին, ու անհատական դաշտեր, որոնց տիրում էին առանձին մարդիկ: Սովորաբար գյուղի հողն ընդգրկում էր հողասեփականության այդ երկու տեսակները: Մասերի՝ կոտոնների բաժանված հողը դառնում էր զանազան գործաբքների առարկա: Յուրաքանչյուր կոտոնի շահը հաշվարկվում էր ըստ նրանում ցանվող հացահատիկի քանակի ու ստույգ նշվում էր գրանցումներում: Ըստ երևույթին, համայնական հողատարածքները կազմում էին այն ժամանակ հողային ֆոնդի մեծ մասը: Հաճախ դեմոսը ժամանակավոր օգտագործման էր հանձնում տարբեր շահերի հողակտորներ: Պիլոսյան վավերագրերում որպես համայնական հողերի վարձակալներ հիշատակված են հողագործներ, լրաբեթներ, քրմեր, արհեստավորներ: Մ. թ. ա. մոտ XIII դ. լայնորեն զարգացավ անհատական հողատիրությունը, ընդ որում առանձին մարդկանց հողաբաժինների շահերը միմյանցից խիստ զանազանվում էին: Խոշոր հողատերերը քաղմիցս վարձակալության էին հանձնում տարբեր քանակությամբ կոտոններ: Գյուղական բնակչության բոլոր կատեգորիաները, ինչպես հողատերերը, այնպես և հողը մշակող վարձակալները պետք է կատարեին մի շարք բնապարտույթներ:

Հողային վավերագրերի զարգացած ու բարդ տեղմիներանու-

թյունը ցույց է տալիս, որ աքայան հասարակությունում գործում էին նրբորեն մշակված իրավական նորմեր, որոնք կարգավորում էին հողային հարաբերությունների համակարգը: Աքայացիների իրավական մտքի այդ ջանքերը լավ արտահայտում են համայնքի ներսում ծագած գույքային անհավասարության զարգացումը, որի մասին խոսում է նաև էպոսը: Աքայական հեքիաթասացները, ռապսոդները մանրամասնորեն նկարագրում էին ավագանուն պատկանող պարարտ արտերը, պտղաբեր այգիներն ու խաղողի տնկարանները: Նույնպիսի ոգևորությամբ նրանք երգում էին հողակտորներից զուրկ մարդկանց դժբախտությունների մասին, մարդիկ, որոնք կազմում էին օրվա աշխատանքի վարձվող «թետերի» հատուկ խավը: Էպիկական բանաստեղծների մոտ գյուղական բնակչության այդ կատեգորիայի հանդեպ եղած հատուկ ուշադրությունը թույլ է տալիս ենթադրելու, որ ուսումնասիրվող շրջանում աքայան գյուղում թետերի շերտը գնալով ավելանում էր:

Հողագործության հետ մեկտեղ բարձր զարգացման հասավ արհեստագործական արտադրությունը: Արհեստի նշանակությունը մ. թ. ա. II հազարամյակի երկրորդ կեսի աքայան տնտեսության մեջ հաստատվում է գրավոր ու հնագիտական աղբյուրներով: Հոմերոսի պոեմներում մանրամասնորեն ու սիրով նկարագրվում է արհեստավորների արտադրանքը՝ զենք, անոթներ, գործվածքներ, զարդեր և այլն: Հատուկ գովաբանվում է ստրկուհին հմուտ ձեռագործ անելու համար: Արհեստավորը էպոսում հարգանք է վայելում: Քաղաքային ամրությունների, պալատների, տների ու դամբարանային կառույցների մնացորդների, առօրյա առարկաների, ոսկերչական իրերի, արվեստի հուշարձանների և այլնի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ ժամանակաշրջանի աքայան արվեստը իրոք բարձր էր կանգնած, որ վարպետները գիտեին հմուտ տեխնիկական հնարանքներ:

Աքայացի վարպետները զարմանալի նրբությամբ ընկալում և հաղորդում էին կենդանի բնությունը: Դա նրանց գեղարվեստական ստեղծագործության հատկությունն էր: Փղոսկրյա գեղեցիկ արձանիկները, ոսկերչական նրբագեղ իրերը, մոնումենտալ որմնանկարները պալատներում կամ ողնու արագ արված նկարը բացահայտում են վարպետ-նկարիչների ու արհեստավորների գեղարվեստական բարձր ճաշակն ու կարողությունը: Մոտավորապես մ. թ. ա. II հազարամյակի կեսից աքայան Հունաստանի արվեստը առաջատար տեղ գրավեց էգեյան ավազանում: Աքայան արհեստը ոչ միայն որակապես, այլ նաև քանակապես, արտադրանքի ծավալով զգալիորեն գերազանցեց կրետական արհեստին: Դա հնարավորություն

տվեց աքայացի վաճառական-ծովագնացներին ծավալելու ավելի լայն գործունեություն, քան նրանց նախորդները՝ կրեոտացիները: Աքայացիների ռազմական էքսպանսիան, հավանաբար, միայն նպաստում էր նրանց առևտրի զարգացմանը:

Աքայացիներն ավելի սերտ կապեր հաստատեցին Արևմուտքի երկրների՝ Սիկիլիայի ու Հարավային Իտալիայի (այստեղ գտնվել են ավելի շատ իրեր Հելլադայից, քան Կրեոտեից) և, ըստ երևույթին, Իսպանիայի հետ: Աքայան վարպետների բրոնզյա հիանալի գեներ ներթափանցեց Նվրոպայի խորքը: Առանձնապես վառ բացահայտվում են աքայան Հելլադայի կապերը Փոքր Ասիայի ծովափի հետ, հենց իսկ ծովափի հետ, քանի որ հարաբերությունները հեռավոր հզոր խեթական պետության հետ թույլ էին զարգացած: Հելլադայի սահմաններից ներս համարյա չեն հայտնաբերվել խեթական ծագում ունեցող առարկաներ: Աքայացիները շատ սերտորեն կապված էին Սամոս, Հոդոս ու Կիպրոս կղզիների հետ: Այստեղի արհեստավորներն արդեն մ. թ. ա. XV—XIV դդ. իրենց խեցեղենը պատրաստում էին Հելլադայից վերցրած նմուշների օրինակով: Այդ կղզիների միջնորդությամբ հաստատվեցին սերտ հարաբերություններ աքայացիների ու Փոքր Ասիայի և Ասորիքի բնակչության միջև: Այդ մասին են վկայում բրուտագործական հայտնագործումները (Թել-ել-Դուվել, Հեզեր, Բիբլոս, Ռաս-Շամրա՝ Ասորիքում, Միլետոսի տեղում եղած խոշոր աքայական քաղաքը, բնակավայրերը փոքրասիական ծովափի այլ կետերում, հատկապես՝ Կիլիկիայում): Իլիոնի՝ Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում գտնվող Տրոյական թագավորության մայրաքաղաքի ավերակներում ևս հայտնաբերված է աքայան խեցեղեն, մի բան, որ վկայում է երկու երկրների միջև խաղաղ հարաբերությունների մասին: Այդ հարաբերությունները պահպանվեցին մինչև մ. թ. ա. XIII դ. կեսերը:

ԱՔԱՅԱՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱՄՔԸ Մ. թ. ա. XV—XII ԴԴ.

Մ. թ. ա. II հազարամյակի երկրորդ կեսի աքայան հասարակությունը վաղ ստրկատիրական հասարակություն էր: Արագորեն տարածվող ստրկությունը, այնուամենայնիվ, դեռ պահպանում էր նահապետական հարաբերությունների շատ գծեր: Ստրուկները, գերազանցապես ստրկուհիները, հիմնականում պատկանում էին ավագանուն, որը ռազմական ավարը՝ գերիներ, գույք, անասուններ բաժանելու ժամանակ միշտ ստանում էր առյուծի բաժինը: Ստրուկները մեծ մասամբ ավագանու անձնական ծառաներն էին. նրանց հանձնարարում էին նաև զանազան տնային աշխատանքներ՝ մանեկ, գործել, զամբյուղներ հյուսել և այլն:

Բասիլևանների ավելի խոշոր տնտեսություններում եղած ստրուկների քանակության հարցը այժմ պարզ չէ։ Որոշ ժամանակակից հետազոտողներ ենթադրում են, որ Պիլոսի բասիլևսը մ. թ. ա. XIII դ. կարող էր ունենալ մինչև 500 ստրուկոհիներ։ Սակայն այս հավումները հիմնված են սոսկ աքայան արձանագրությունների դեռևս ոչ միշտ ստույգ վերծանման վրա, իսկ Թեբեում, Սիկենեում, Տիրինսում, Պիլոսում պեղված թագավորական պալատների շփերը բնավ չեն համապատասխանում այդ ուռճացված թվերին։

Դժվար է որոշել, թե որքան լայն կիրառում ուներ ստրկական աշխատանքը տնից դուրս։ Էպոսը նշում է, որ հովիվները սովորաբար ստրուկներ էին, այն ժամանակ, երբ ավելի բարդ գյուղատնտեսական աշխատանքները, օրինակ, այգեգործությունը, նրանց չէր վստահվում։ Գյուղացու տնտեսությունում ստրուկներ սովորաբար չկային, համենայն դեպս, դաշտային աշխատանքները կատարում էր ինքը՝ հողամասի տերը։ Ստրկական աշխատանքի լայն օգտագործման հետքեր չեն հայտնաբերվել նաև արհեստագործական արտադրության մեջ, թեև ստրուկները կարող էին կատարել կոպիտ օժանդակ աշխատանքներ։ Կասկածից վեր է, որ ոչ թե ստրուկը, այլ ազատ գյուղացին ու արհեստավորն էին աքայացիների արտադրական կյանքի հիմնական դեմքը. ստրկական աշխատանքը դեռևս լայն տարածում չուներ։

Ազատ աքայացիների դասակարգի կառուցվածքը բարդ էր։ Ազատ բնակչությունը բաժանվում էր մի քանի խմբերի, որոնց ունեցվածքն ու իրավունքները տարբեր էին։ Էպոսի տվյալների համաձայն, բասիլևաններն ու ավագանին վճռորոշ դեր ունեին քաղաքական կյանքում, թեև ձևականորեն յուրաքանչյուր ազատ ռազմիկ օժտված էր բոլոր իրավունքներով։ Ավագանու արտոնյալ վիճակը աքայացիների տակավին դեռահաս դասակարգային հասարակությունում պահպանված տոհմային կարգի ընդունված սահմանումների կենսունակության հետևանք էր։ Շատ կարևոր էր նաև այն հանգամանքը, որ այդ արտոնյալ վիճակը նյութապես ամրապնդվում էր ավագանու հարստությամբ։ Արիստոկրատիայի առավելությունների հաստատման գործում ոչ պակաս դեր էր խաղում այդ խավի աճող ռազմական նշանակությունը։ Անվանի աքայացիներն ունեին հարձակողական ու պաշտպանական ավելի լավ զենք, նրանք շատ հաճախ կռվում էին հատուկ մարտական ձիակառքերի վրա։ Շարքային մարտիկների համար անմատչելի ավելի կատարյալ ռազմական տեխնիկական ապահովում էր անվանի աքայացիների առաջնակարգ դիրքը բանակում։

Արիստոկրատիայից ու գյուղացիությունից բացի, մ. թ. ա. II

հազարամյակի կեսից գնալով աճում էր քաղաքային բնակչության՝ ազատների երրորդ խմբի նշանակությունը: Քաղաքներում մշտապես ապրող արհեստավորներն ու վաճառականները կուտակում էին նշանակալից հարստություններ: Միկեննում, պալատից ոչ հեռու, բացված են արհեստավորների մի քանի տներ, որոնք վերաբերում են մ. թ. ա. մոտ 1340—1210 թթ.: Երկու տներում՝ «Վահանների տանը» ու «Սֆինքսների տանը», որոնք պատկանում էին փղոսկրի վրա փորագրիչներին, հայտնաբերվեցին նրբագույն աշխատանքի շատ առարկաներ: Այդ առարկաների թանկ արժեքն ու տների պատկառելի շահերը վկայում են այն մասին, որ նրանց տերերը եղել են հարուստ քաղաքացիներ: Այդ է վկայում նաև «Գինեվաճառի տունը». նրա մասունում դրված էին 0,45 մ բարձրություն ունեցող ավելի քան 50 մեծ սափորներ ու մոտ 1,70 մ բարձրության կավե 8 կարասներ՝ պիթոսներ, «Յուդավաճառի տանը» գտան վաճառքի համար կնիքված 30 սափորներ՝ լցված ձիթայուղով: Միկենյան այդ վաճառականները վարում էին լայն գրագրություն. դա են հաստատում հաշվառման գրանցումների սալիկները: Չեռագրերի տարբերությունը թույլ է տալիս ենթադրելու, որ միկենյան յուդավաճառը նամակագրություն էր պահպանում առնվազն վեց անձանց հետ:

Արհեստավորների տներ պեղված են ոչ միայն խոշոր աքայան կենտրոններում, այլ նաև համեմատաբար մանր բնակավայրերում, մի քան, որ հաստատում է բնակչության այդ խմբի բազմաքանակ լինելը:

Առևտրի զարգացման հետևանքով առաջացավ դրամը: Սկզբում դրամի դեր էին կատարում առավել կարևոր արժեքները, գերազանցապես՝ անասունները: Հոմերոսյան էպոսը վկայում է, որ աքայացիների մոտ եզները հանդիսանում էին արժեքի ընդունված շահանիշ: Սակայն արդեն մ. թ. ա. XVI դ. աքայացիները սկսեցին օգտագործել ոսկին, որը կշռում էին հատուկ կշեռքով: Հնագետները հայտնաբերել են այդպիսի շատ կշեռքներ:

Աքայան բասիլևսները ազատ բնակչությունից հավաքում էին հարկեր. դրանք գանձվում էին բնատուրքի ձևով: Դրա շնորհիվ աքայական պալատների պահեստներում կուտակվում էին մեծ քանակությամբ արհեստավորական իրեր ու մթերքներ: Պիլոսի պալատի մասնաններից մեկում պահպանվում էին շուրջ 600 մանր կավանոթներ, մեկ այլ սենյակում՝ ավելի քան 800 սափորներ ու գավաթներ: Հատուկ մասուններում պատերի տակ շարված էին մոտ 1,20 մ բարձրության տասնյակ կարասներ, որոնց մեջ պահում էին ձիթայուղ: Բասիլևսների հարստությունը աճում էր ռազմական ա-

վարի շնորհիվ, քանի որ դրա մեծ մասը անցնում էր թագավորի ու ավագանու տնօրինութեանը:

Թագավորական իշխանութեան զարգացումը աքայան հասարակութեանում մ. թ. ա. II հազարամյակի երկրորդ կեսին ակնառու կերպով հաստատվում է արքունի պալատների աճի փաստով:

Մ. թ. ա. XIV—XIII դդ. բոլոր խոշոր քաղաքներում տեղի էր ունենում պալատական շինութեանների վերակառուցում: Որոշ վայրերում կառուցվում էին նոր պալատներ: Աքայան բոլոր թագավորներն իրենց նստավայրերը տեղադրում էին բարձունքների վերա, դրանց մոտենալու ուղին փակում էին բարդ պաշտպանողական ամրութեաններով: Նման ամրոցներ հայտնի են Հունաստանի բոլոր մասերում: Երկրի հյուսիսում՝ Թեսալիայում, հին Իոլկոսի մոտ գտնվում էր կառավարչի մի մեծ պալատ: Միջին Հունաստանում նույնպիսի կառույցներ հայտնի են Ատտիկայում՝ Աթենքի ակրոպոլիսում, ու Բեոլիսիայում՝ մի ժամանակ գոյություն ունեցած Կոպաիսյան լճի ափին:

Բեոլիսիայի ամրոցը, որը այժմյան վայրի անունով կոչվում է Արնե, իր պաշտպանական գծերի շահերով գերազանցում է մյուս բոլոր աքայան ամրոցներին: Դրա պատերի երկարութունը հասնում է 3 կմ, այն ժամանակ, երբ Միկենեի պարսպի շրջագիծը կազմում է ընդամենը 900 մ: Հատկապես լավ են ուսումնասիրված պալատները Միկենեում, Տիրինսում ու Պիլոսում:

Միկենեի պալատը գրավում էր զանազան բլրի եռանկյուն գագաթը, որը լայնացվել էր անկանոն ձև ունեցող մեծ, կոպիտ հրդեհված քարերից շարված արհեստական դարավանդի միջոցով: (Այդ ու դրանց նման այլ քարե հսկայական զանգվածները, հին հույների կարծիքով, կարող էին շրջել միայն հսկաները՝ կիկլոպները, այստեղից էլ նման շինությունները կոչվեցին կիկլոպյան): Կիկլոպյան քարերից, որոնցից յուրաքանչյուրը կշռում էր 5—6 տոննա, կառուցված էին պալատը օղակող՝ 1 կմ երկարութուն ունեցող պաշտպանական պարիսպները: Միկենեի ակրոպոլիս կարելի էր մտնել Պավսանիասի նկարագրած (II, 16, 5) Առյուծների դարպասով: Պալատային կառույցն ուներ բարդ հատակագիծ ու շատ շինություններ: Հանդիսավոր սենյակների պատերը զարդարված էին որմնանկարներով, սակայն դրանք համարյա չեն պահպանվել: Պալատի բնակիչները կարող էին դիմանալ երկարատև պաշարման. հարմար ուղին ստորերկրյա խոր սանդղաղբով տանում էր դեպի ստորգետնյա աղբյուրի ջրով լցվող ավազանը:

Տիրինսի պալատը մի փոքր ավելի լավ է հայտնի: Նրա հիմնական կորիզը կառուցվել էր մ. թ. ա. XIV դ., իսկ հաջորդ դա-

րում կատարվել էին պաշտպանական համակարգի զգալի լրացուցիչ կառուցումներ: Պալատը, որի մուտքը պաշտպանված էր երեք դարպասներով, բաղկացած էր կենտրոնական ուղղանկյուն դահլիճից՝ մեզարոնից, որի ներսում, շորս սյուների միջև գտնվում էր կրակարանը: Մեզարոնի առջևի մասում կային զանազան շինություններով շրջապատված երկու բակ: Ինչպես և Միկեննում, տիրինսյան պալատի պատերը զարդարված էին հիանալի որմնանրկարներով, որոնցից մեզ են հասել բազմաթիվ հատվածներ: Նկարիչները որմնանկարներում վարպետորեն պատկերել են աքայան ավազանու կյանքի տեսարանները: Մի նկարում երիտասարդ, շքեղ հագնված կինը ձեռքում բռնել է ռուսկա աշկղիկ, մյուսի վրա պահպանվել է ձիակառքով ընթացող աղջիկների պատկերը: Զափազանց արտահայտիչ է վարագրի որսը պատկերող որմնանկարը: Նկարագրողված էին ոչ միայն պատերը, այլև որոշ սենյակների՝ ծեփով ծածկված հատակը:

Ամբողջ պալատը շրջապատված է եղել բարձր պարսպով, որի հաստությունը հասնում է 8 մ: Այն շարված է կրաքարի կիկլոպյան խոշոր բեկորներից, որոնք ամրացված են շաղախով: Պատի հարավային ու արևելյան մասերում կառուցված էին սրահներ, հավանաբար զենքի համար: Այստեղ պատերի հաստությունը հասնում է 17 մ: Մարդիկ ոտքով կարող էին ակրոպոլիս բարձրանալ թեք անցքով կամ կողքի սանդուղքով:

Պիլոսի պալատը, որը կործանվել է հրդեհից մ. թ. ա. մոտ 1200 թ., իր հատակագծով ու շինությունների տեխնիկայով նման է Միկենեի ու Տիրինսի պալատներին: Նրա գահադահլիճը, բնակելի սենյակները, մեծ պահեստները, հարմար լողարանը, ներքին բակերը, ջրատար առուների ճյուղավորված համակարգը կառուցված են նույն թափով ու հիմնավորապես, ինչպես և մյուս պալատները: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Պիլոսյան արխիվներում գտնված մի քանի հարյուր սալիկները: «Բ» վանկագրով գրված այդ փաստաթղթերը վկայում են այն մասին, որ բասիլևսի տնտեսությունում կատարվում էր գուլքի ճշգրիտ հաշվառում: Այդ փաստաթղթերի այժմ ձեռնարկված վերծանումն ու ընթերցումը հետաքրքիր տեղեկություններ են տալիս մ. թ. ա. XIII դ. պիլոսյան պալատի վարչական ու տնտեսական կառուցվածքի մասին:

Գիտնականները այդ վավերագրերում կարդացին շատ աշխարհագրական տեղանուններ, օրինակ՝ Պիլոս, Կիպարիսիա, Միլետոս, Կնոսոս, Տիրիսոս, Փեսոս և այլն: Վերլուծելով պաշտոնական անձեր նշանակող տերմինները, լեզվաբանները բացահայտեցին «վանակտոս» անվանումը թագավոր բառի համար ու «լավագետոսը»՝



զորավար բառի համար: Պիլոսյան սալիկներում նշված երրորդ բարձրագույն պաշտոնական անձը կոչվում էր «տելեստոս»․ այդ պաշտոնի բնույթը դեռևս պարզված չէ: Կարդացված են նաև աշխատողների զբաղմունքները որոշող մի շարք տերմիններ:

ԱՔԱՅԱՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ Մ. Ք. Ա. XV—XIII ԴԴ.

Աքայան հասարակության սոցիալական կառուցվածքը բարդանում էր նրա տնտեսական ու քաղաքական զարգացմանը զուգընթաց: Հունաստանի շատ մարզերի աշխարհագրական մեկուսացածության հետևանքով նոր առաջացող պետությունները կազմվեցին ոչ մեծ տարածքներից, որոնք կառավարվում էին ինքնուրույն կամ գրեթե ինքնուրույն թագավորների ու իշխանների կողմից: Հնարավոր չէ ճիշտ որոշել աքայան Հունաստանի թագավորությունների սահմանները մ. թ. ա. XV դ.: Սովորաբար երկրի առանձին մարզերում առաջատար էին դառնում մեկ կամ երկու թագավորություններ: Այսպես, Ատտիկան ենթարկվում էր աթենական ակրոպոլիսում փոքր պալատ ունեցող բասիլևսի իշխանությանը: Բեոպոլիսում գլխավոր քաղաքն էր Քերեն, որի բասիլևսը կառուցեց բարձրարվեստ որմնանկարներ ունեցող պալատ: Պելոպոնեսում հայտնի են մի քանի տիրույթներ. Արգոլիսում՝ Միկենեն ու Տիրինսը, Մեսսենիայում՝ Պիլոսը, Լակոնիայում՝ Սպարտան: Այդ թագավորությունները մեզ հայտնի են ոչ միայն հոմերոսյան պոեմներում նրանց մասին եղած հիշատակումներից, այլ նաև արձանագրություններից ու պալատների մնացորդներից և թագավորների շքեղ թաղումներից: Փոքր թագավորություններ կային նաև էգեյան ծովի որոշ կղզիներում: Շատ տիրույթների մասին մենք առայժմ կարող ենք պատկերացում կազմել սոսկ առասպելաբանական ավանդության միջոցով:

Աքայան Հունաստանի խոշոր ու մանր պետությունները սերտորեն կապված էին իրար հետ: Քաղաքական մերձեցման հիմքեր էին նաև ցեղային ընդհանրությունը և հաճախ՝ կառավարող հարստությունների ուղղակի ազգակցությունը: Բուլոբից հզոր էին արգոսյան բասիլևսները: Հավանաբար Միկենեի բասիլևսները իրենց ենթարկեցին մերձավոր շրջանների մանր իշխաններին, իսկ Քեսալիայում ու Էլիսում տիրող դինաստիաները ինքնուրույն էին ու ընդունում էին միայն իրավահավասար դաշնակցային հարաբերություններ: Աքայացիները, շնայած մշտական շփումներին ու էթնիկական ընդհանրության պարզ գիտակցմանը, հաճախ վարում էին երկպառակտիչ պատերազմներ, որոնք սահմանները խախտե-

լու կամ ավազակային ասպատակումներ ձեռնարկելու հետևանք էին: Պատերազմի մշտական սպառնալիքը բասիլևաներին ստիպում էր կառուցել պալատ-ամրոցներ, որտեղ նրանք կկարողանային դիմանալ երկարատև պաշարման:

Հարևանների միջև եղած մանր պատերազմներից բացի տեղի էին ունենում ավելի լուրջ ընդհարումներ, երբ մի քանի բասիլևաներ միավորվում էին մի որևէ թագավորութայան վրա հարձակվելու նպատակով: Այսպես, Տրոյական պատերազմից 30—20 տարի առաջ, այսինքն մ. թ. ա. մոտ 1270—1260 թթ. Բեովտիայում հարձակման ենթարկվեց Թեբեն: Այդ պատերազմի մասին տեղեկություն է պահպանվել «Յոթը Թեբեի դեմ» անվանումը կրող ավանդությունում: Այն պատմում է, որ Թեբեի դեմ ձեռնարկվեցին 15-ամյա ժամանակամիջոցով միմյանցից անջատված երկու արշավանքներ:

Երբեմն աքայան բասիլևաները միավորվում էին խոշոր արտաքին արշավանքներ ձեռնարկելու նպատակով: Ըստ երևույթին, կրետական թագավորությունը թուլացնելու միտում պարունակող քայլերը ձեռնարկվեցին ծովերում մեծ գործունեություն ծավալած արգոսյան թագավորների նախաձեռնությամբ: Արդեն մ. թ. ա. XIII դ. կեսին Միկենեն, ինչպես վկայում է Թուկիդիդեսը, տներ ամբողջ Հելլադայում ամենախոշոր նավատորմն, ու կասկածից վեր է, որ Կրետեի հետ ունեցած նրա մրցակցությունը սկսվել էր շատ վաղուց: Հենց Միկենենին Կրետեի ենթակայության մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ կրետական թագավոր Իդոմենեսը մասնակցեց տրոյական պատերազմին որպես միկենյան թագավորին ենթակա կառավարիչ:

Հնարավոր է, որ աքայացիների առանձին ջոկատներ մասնակցել են Արևելյան Միջերկրականում տեղի ունեցող մեծ պատերազմներին: Այսպես, որպես խեթերի դաշնակիցներ, Ռամսես II փարավոնի (մ. թ. ա. 1317—1251 թթ.) դեմ հանդես եկան Փոքր Ասիայի տարբեր մարզերից եկած զորքեր: Եգիպտական աղբյուրներում հիշատակվում են լուկու (լիկիացիք), ինչպես նաև աքայվաշա (աքայացիներ) անունները:

Աքայան Հունաստանի դերը Արևելյան Միջերկրականի միջազգային կյանքում փոքր չէր. այդ են հաստատում խեթական աղբյուրներում Աքիյավա երկրի մասին եղած հիշատակումները: Մ. թ. ա. XII դ. վերջում աքայացիները «ծովի ժողովուրդների» հետ միասին կործանիչ հարվածներ հասցրեցին խեթական թագավորությանը:

## ԱՔԱՅԱՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Աքայան Հունաստանի բնակչության ընդհանրությունը հատկապես վառ արտահայտվեց նրա բարձր մշակույթի միասնականության մեջ: Երկրի տարբեր մասերում միևնույն արհեստավորական ու գեղարվեստական հնարանքներն ու կանոններն էին կիրառվում ճարտարապետության, շինարարության, կերպարվեստի, կիրառական արվեստի, գեղարվեստական արհեստների՝ բրոնզ ձուլելու, քար կտրելու, խեցեղեն պատրաստելու մեջ:

Աքայան Հունաստանի մշակույթը մ. թ. ա. II հազարամյակի երկրորդ կեսին հասավ բարձր զարգացման՝ դառնալով առաջատար նաև էգեյան ծովի կղզիների բնակչության համար, ներառյալ Կրետեն: Մ. թ. ա. XIV—XII դդ. կղզային Հունաստանի արվեստի վրա աքայան ազդեցությունը շատ ուժգին էր զգացվում: Կրետեում, օրինակ, սկսեցին կառուցել աքայան բոլորածև դամբարաններ (թուլոսներ), խեցեղենի արտադրության մեջ մեծ տարածում ունեցավ աքայացիների կողմից նախասիրված նախշը՝ կազմված թռչունների ու կենդանիների կերպարներից: Նույն երևույթները նկատվում էին նաև Մելոսում, Եվբեայում, Քերայում, Դելոսում ու այլ կղզիներում: Այսպիսով, մ. թ. ա. XV—XII դդ. աքայան Հունաստանը, չնայած նրա մարզերի քաղաքական ինքնուրույնությունը, ուներ վառ արտահայտված մշակութային միասնություն:

## ԱՔԱՅԱՆ ԹԱԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Մ. թ. ա. XIV—XIII ԴԴ.

Հունաստանի պատմությունը մ. թ. ա. XIV—XIII դդ. լուսաբանվում է առասպելների ու ավանդությունների միջոցով, որոնցից շատերը հաստատվում են աքայան կենտրոններում կատարված պեղումներով: Ըստ երևույթին, հույների հիշողություններում պահպանվել են հուշեր իրականում տեղի ունեցած անցքերի մասին:

Աքայան մյուս տիրակալների նկատմամբ միկենյան թագավորների առաջնության մասին էպոսում ու ավանդություններում եղած տվյալները բավական պերճախոս ձևով հաստատվում են հրեճագիտական տվյալներով: Այսպես, Միկենեի ու հարևան Տիրինսի պալատների ու քաղաքային տարածքների պեղումները խոսում են այդ քաղաքներում ծավալված շինարարական լայն գործունեության մասին: Միկենեի հարուստ թաղամասերում կային ունևոր արհեստավորների ու վաճառականների հարմարավետ ու ընդարձակ բրնակարաններ: Քաղաքի լայն փողոցները սալարկված էին և ունեին ջրհոսքի ճյուղավորված համակարգ: Քաղաքից ելնում ու Արգոլիսով մեկ ձգվում էին բարեկարգ հարթավայրերում խմբերով պատնեշված ճանապարհներ:

Միկենյան տիրակալների հզորությունը վառ արտահայտվեց արքայական պալատի շքեղության ու դամբարանային մոնումենտալ կառուցներում: Աքայան տիրակալները սկսած XV դարից ամբողջ երկրով մեկ կառուցում էին իրենց ու իրենց ընտանիքների համար հատուկ ձև ունեցող դամբարաններ: Դրանք կլոր գմբեթային շինություններ էին (այսպես կոչված՝ թոլոսներ), որոնց հիմքի տրամագիծը հավասար էր դրանց բարձրությանը: Թոլոսում սովորաբար թաղվում էին միայն բասիլեսն ու նրա մերձավոր ազգականները: Իրենց ճոխությամբ հատկապես աչքի են ընկնում միկենյան թագավորների մ. թ. ա. XIV դ. այժմ հայտնի դամբարանները: Առավել ուշագրավ դամբարանը կրում է «Ատրեսի գանձարան» պայմանական անունը: Սակայն այդ անվանումը ճիշտ չէ, որովհետև դամբարանը կառուցվել է Ատրեսից 90 տարի առաջ: Դամբարան կարելի էր մտնել 36 մ երկարություն և 6 մ լայնություն ունեցող միջանցքով (դրոմոս): Դրոմոսի պատերը շարված էին խոշոր գանգվածներից: Կլոր խուցը տանող դրոմոսի մուտքի դռան բացվածքը զարդարում էին նուրբ փորագրությամբ ծածկված կանաչագույն մարմարե երկու կիսասյուներ: Թոլոսի խուցը ունի 14,5 մ տրամագիծ, նրա գմբեթի բարձրությունը հավասար է 13,2 մ: Կամարի շարվածքը բավական յուրօրինակ է, գմբեթը շարված էր համարյա ուղղանկյուն հղկված գանգվածներից, որոնք իրար հըպվում էին միայն ներքին կողերով: Զանգվածների միջև եղած, դեպի դուրս լայնացող կցվածքները լցված են մանր քարերով: Ներսից գմբեթը զարդարում էին բրոնզե վարդանախշերը: Հյուսիսային կողմից մի փոքր մուտք տանում էր դեպի ուղղանկյուն խուցը: Ցավոք, դամբարանը կողոպտվել է դեռ հին ժամանակներում, ու արևտեղ թաղված բասիլեսի հարստության մասին կարելի է դատել միայն դրա մոնումենտալ ճարտարապետությունից:

Սակայն միկենյան թագավորների իշխանության ուժեղացումը բնավ էլ հարթ չէր ընթանում: Դատելով հնագիտական տվյալներից, մ. թ. ա. XIII դ. առաջին կեսին Միկենեի ու Տիրինսի պալատները կործանվեցին հրդեհից, որից հետո լրիվ վերականգնվեց միայն միկենյան պալատը: Ըստ հունական ավանդության, Միկենեում այդ ժամանակ տեղի ունեցավ Պերսեյանների, այսինքն Պերսեսի ժառանգների արքայական տոհմի փոխարինումը Պելոպսի ժառանգների՝ Պելոպսյաններին ազգակից տոհմին պատկանող կառավարիչներով: Հավանաբար, հարստությունների փոփոխումը ուղեկցվեց երկպառակտիչ պատերազմով ու արևպիսի հզոր ստորադրյալի թուլացումով, ինչպիսին Տիրինսի թագավորի էր: Միկենեում գահակալած Պելոպսի որդիներ Ատրեսը ու Թիեմ-

տեսը (որոնք կառավարում էին, ըստ ավանդության, մ. թ. ա. XIII դ. առաջին կեսին) զգալիորեն ուժեղացրեցին իրենց թագավորությունը: Հպոտում առանձնապես ընդգծվում է նրանց հզորությունը, ընդ որում նշվում է, որ Թիեստեսը կառավարում էր ոչ միայն Արգոսում, այլ նաև շատ կղզիներում: Ըստ երևույթին, հենց առաջին Պելոպոնեսները կառուցեցին Պելոպոնեսը Միջին Հունաստանի հետ միացնող Իսթմոսի պարանոցի լայնքով մեկ մի հզոր պարիսպ: Մ. թ. ա. 1250 թ. նախօրյակին կանգնեցրած այդ պարիսպը հուսալիորեն պաշտպանում էր Արգոսը հյուսիսային հարեւանների հարձակումներից:

Հաջորդ կառավարչի՝ Ատրևսի որդի Ագամեմնոնի օրոք միկենյան թագավորության հզորությունը էլ ավելի մեծացավ: Խոշոր դիվանագիտական հաջողություն էր հարևան Սպարտայում Ագամեմնոնի եղբայր Մենելաոսի գահ բարձրանալը: Մենելաոսն ամուսնացավ սպարտական արքայադուստր Հեղինեի հետ: Այժմ Սպարտան դարձավ Միկենեի վստահելի դաշնակիցը, մի բան, որ ստիպեց մյուս աքայան բասիլևսներին լրջորեն հաշվի նստել մեծահզոր միկենյան կառավարչի հետ: Հատկապես մեծ էր վերջինիս ծովային գերակշռությունը (Թուկիդիդես, I, 9): Ունենալով նավատորմի, Ագամեմնոնը կարողացավ իր տիրապետությունը հաստատել էգեյան ծովի շատ կղզիների, այդ թվում և Կրետեի կամ առնվազն նրա մի մասի վրա:

Ագամեմնոնի հզորությունը խոր հետք թողեց ժողովրդական հիշողության մեջ: Հոմերոսի պոեմներում Միկենեի թագավորը միշտ կոչվում է «աքայացիների տիրակալ» ու «շատ ժողովուրդների թագավոր», իսկ նրա մայրաքաղաքը կրում է «Ոսկեառատ Միկենե» անունը: Հպոտում նաև արտահայտվել է աքայացիների բացասական վերաբերմունքը միկենյան տիրապետության հանդեպ: Տրոյական արշավանքին նվիրված երգերի հեղինակները կշտամբում են Ագամեմնոնին ու նրա եղբայր, Սպարտայի թագավոր Մենելաոսին ագահության ու շահամոլության համար: Ըստ երևույթին, Միկենեի գերակշռող դիրքը արևելյան Պելոպոնեսում ու Ագամեմնոնի ձգտումը՝ հաստատելու իր գերիշխանությունը ամբողջ Հելլադայում, առաջացնում էին այլ մարզերի տիրող շրջանների դժգոհությունը: Չէ որ այն ժամանակ, մ. թ. ա. XIII դարում, աքայական որոշ թագավորություններ գրեթե չէին զիջում Միկենեին: Թեսալիայում, ըստ ավանդության, իր հզորությամբ աչքի էր ընկնում Փթիոտիս մարզի կառավարիչը: Այդ տեղեկությունները հաստատվում են Իոլկոսի աքայան պալատի պեղումներից, որոնք հավաստում են այնտեղ մ. թ. ա. XIV—XIII դդ. ուժեղ թագավոր

բության գոյութիւնը: Այն, որ Արգոյի նաւը, համաձայն ավանդութեան, հենց Իոլիոսից մեկնեց Կողքիս՝ ոսկյա գեղմին տիրանալու համար, վկայում է, որ նրա տիրակալները միկենյան արքաների նման իրենց հարստութիւնները բազմապատկում էին ծովահենութեան միջոցով:

Միջին Հունաստանում աչքի էք ընկնում Թեբեն: Սակայն Ատտիկայում ևս կար ինքնուրույն թագավորութիւն, որի տիրակալները մ. թ. ա. 1250 ու 1200 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում ձեռնարկեցին մեծ շինարարական աշխատանքներ Աթենքը ամրապնդելու ուղղութեամբ: Ակրոպոլիսի շուրջը կառուցվեցին հզոր պաշտպանական պարիսպներ, պատրաստվեց երկար ստորգետնյա էջք դեպի Ակրոպոլիսի ժայռի տակ գտնվող աղբջուրը:

Հարավային Հունաստանում՝ Մեսսենիայում, առաջվա նման աչքի էք ընկնում Պիլոսյան թագավորութիւնը: Նրա պատմութիւնը դեռևս քիչ է հայտնի: Մ. թ. ա. XIV դ. պետութեան մաքրաքաղաք Պիլոսում բռնկվել է մեծ հրդեհ: Հնարավոր է, որ դա պատահել է երկպառակտիչ պատերազմի ժամանակ: Ավանդութեան համաձայն, Տրոյական պատերազմից շորս սերունդ առաջ իշխանութիւնը Պիլոսում բռնի ուժով զավթել է Թեսալիայից Մեսսենիա եկած Նելևսը: Նելևսի ու նրա որդի Նեստորի օրոք պիլոսյան թագավորութիւնը բավական ուժեղացավ: Այդ ժամանակ, մ. թ. ա. XIII դ., արքայական պալատը Պիլոսում լրիվ վերակառուցվեց: Ակրոպոլիսում եղած հին շինութիւնները քանդվեցին, նրանց փոխարեն կառուցվեց պալատի մեծ շէնքը, որի կողքին մի քանի տասնյակ տարի անց կանգնեցվեց նոր, ավելի շքեղ պալատ:

Թագավորական իշխանութեան ուժեղացման ու պետական ապարատի զարգացման վառ վկայութիւնն է այն փաստը, որ Պիլոսում կատարվում էր թագավորական գույքի մանրակրկիտ հաշվառում: Պիլոսյան սալիկներում ստույգ թվարկվում են գինու, յուղի անոթները, նշվում է հացահատիկի քանակութիւնը: Պետք է ենթադրել, որ նման արխիվներ վայելն նաև Միկենեի ու Տիրինսի պալատներում: Պիլոսյան պալատի շուրջը, բլրի ստորին լանջերի վրա մ. թ. ա. XIII դարում տարածվում էր բավականին մեծ քաղաք, որը, ինչպես և Միկենեն նույն դարաշրջանում, բնակեցված էր ազնվատոհմիկներով, արհեստավորներով ու հողագործներով:

Էպոսի տվյալները չեն հակասում շարադրված փաստերին: Հոմերոսի պոեմներում պիլոսյան զառամյալ արքա Նեստորը տիրում է ինը քաղաքների, նրա հարստութիւնները քիչ են գիջում միկենյան տիրակալի հարստութեանը: Թեև արքա Նեստորը ճանաչում է Ագամեմնոնի ռազմական առաջնութիւնը, սակայն իր խել-

քով, իմաստութեամբ ու աքայան թագավորների խորհրդում ունեցած հեղինակութեամբ նա խիստ գերազանցում էր միկենյան արքային: Ըստ երևույթին, Պիլոսյան թագավորությունը մ. թ. ա. XIII դ. վերջին զգալի քաղաքական ուժ էր ներկայացնում և միայն որոշ շահով էր ընդունում Միկենեի առաջնությունը:

Այդպիսի քանակութեամբ անկախ և ուժեղ աքայան պետությունների առկայությունը ստեղծում էր անհաղթահարելի արգելքներ հարևան տարածքների վրա միկենյան թագավորների փշխանության տարածման գործում: Դա ստիպեց Միկենեին իր նվաճողական ու կողոպտիչ արշավանքները ուղղել կղզիների ու ավելի հեռավոր երկրների բնակիչների դեմ:

Մովահենությունը զբաղվում էին նաև ծովափնյա աքայան այլ բասիլևսները: Դա հարստությունները ավելացնելու ամենադյուրին միջոցն էր և հնաքավորություն էր տալիս զավթել գերիներ, որոնց դարձնում էին ստրուկներ, զավթել թանկարժեք կահկարասի, մետաղներ և այլն: Մովահենության նշանակությունը աքայան հասարակությունում այնպիսին էր, որ Թուկիդիդեսը հատուկ գրում է այդ մասին (I, 7): Առանձնապես կարևոր դեպքերում աքայան թագավորները միավորում էին իրենց ծովային ուժերը համատեղ ուղմական գործողություններ վարելու համար: Այդպիսի համատեղ ծովային ձեռնարկում էր Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում գտնվող ծաղկող Տրոյական թագավորությունը նվաճելու նպատակով կազմակերպված արշավանքը: Այն մ. թ. ա. մոտ 1240 թ. ձեռնարկեց Միկենեի տիրակալ Ազամեմոնոսի գլխավորությամբ գրեթե բոլոր աքայան բասիլևսների միությունը:

#### ՏՐՈՅԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Տրոյացիների գլխավոր քաղաք Տրոյան գտնվում էր բլրի վրա (այժմյան Հիսարիկ): Հնագետները այստեղ բացել են մ. թ. ա. III—II հազարամյակներում իրար հաջորդաբար փոխարինած քաղաքային ինը շերտեր (նշանակվում են՝ «Տրոյա I», «Տրոյա II» և այլն):

Արդեն մ. թ. ա. III հազարամյակի երկրորդ կեսին Տրոյայի հին բնակիչներն ունեին բարձր զարգացած հողագործություն ու արհեստներ: Մեծ չափերի հասավ բնակչության գույքային շերտավորումը, հասարակության ներսում սկսվեց դասասարգերի բաժանումը:

Տրոյացիների պետությունն ուներ միապետության ձև, ընդ որում նրանց թագավորները ունեին հսկայական հարստություններ: Տրոյական թագավորներին ենթակա ժողովրդից հավաքվող

արժեքների մեծութեան մասին կարելի է դատել տրոյական գանձի պարունակութունից: Գանձը բաղկացած էր ոսկյա զարդերից ու անոթներից, ինչպես նաև բարձրարվեստ քարե կացիններից: Թանկարժեք իրերի թագավորական այդ գանձը գտնվել է մ. թ. ա. XXIV—XXII դարերով թվագրվող «Տրոյա II» շերտում: Այդ ժամանակաշրջանի քաղաքն իրենից ներկայացնում էր հզոր ամրոց, որի քարե պատերն ունեին 6-ից մինչև 10 մետր հաստութիւն, քսկ նրանց բարձրութիւնն անգամ այժմ կազմում է 8,5 մ: Ամրոցի ներսում բարձրանում էր թագավորի մեծ պալատը:

Մ. թ. ա. մոտ XXI դ. Տրոյական թագավորութիւնը ենթարկվեց թշնամիների հարձակմանը. նրա մայրաքաղաքը հրդեհվեց: Մի քանի հարյուրամյակներ տրոյական բլրի վրա գոյութիւն ունեին փոքր ավաններ, և միայն մ. թ. ա. XVIII դ. սկսվեց Տրոյայի նոր վերելքը: Մ. թ. ա. XVIII—XIII դդ. Տրոյական թագավորութիւնը հասավ մեծ ծաղկման. դա արտահայտվեց մայրաքաղաքի արտաքին տեսքում՝ ամրոցի երկու անգամ աճած տրամագիծը այժմ հասնում էր 200 մ, պատերը նորից շարվեցին քարից ու աղյուսից, ամրոցի ներսում բլրի շուրջը կառուցվեցին լայն դարավանդեր, որոնց վրա տեղավորվեցին ավագանու տները: Դուռնացից վերև բարձրանում էր թագավորի պալատը:

էգեյան ծովից Սև ծովը տանող կարևոր ծովային ուղու մոտ տեղադրված Տրոյան մեծ առևտուր էր անում մոտակա ու հեռավոր ժողովուրդների՝ խեթերի, աքայացիների, Կիպրոսի ու էգեյան այլ կղզիների բնակիչների հետ: Ներմուծվող բազմաթիվ աքայան առարկաները վկայում են, որ տրոյացիներն ու աքայացիները երկար ժամանակ սերտորեն կապված էին իրար հետ:

#### ՏՐՈՅԱԿԱՆ ԱՐՇԱԿԱՆՔԸ

Մ. թ. ա. մոտ 1240 թ. Տրոյայի դեմ աքայացիների ձեռնարկած պատերազմի նպատակը, հավանաբար, ոչ միայն մեծ ավաք գավթելն էր, այլև հողագործութեան ու ծովային առևտրի համար հարմար տեղում գտնվող այդ հարուստ պետութիւնը նվաճելը: Աքայան թագավորների միութիւնը («Ելիականում» ցույց է տրված Տրոյա բերված նավերի խիստ շահագանցված թիվ՝ 1200-ից ավելի) մտադիր էր արագ նվաճել Տրոյան, որովհետև քիչ պաշար էր վերցված զորքը կերակրելու համար (Թուկիդիդես, I, 11):

Սակայն տրոյական թագավոր Պրիամոսը կարողացավ օգնութիւն ստանալ մի շարք հարևաններից: Նրա զորքում, հոմերոսյան պատումի համաձայն, կային փռուգիացիներ, լյուսիացիներ, անգամ՝ թրակիացիներ: Տրոյայի սրաշարումը խիստ ձգձգվեց, ու աքա-



յացիներն ունեցան շատ կորուստներ, մինչև որ նրանց հաջողվեց գրավել քաղաքը: Տրոյական պատերազմի անցքերն ու աքայացիների վերադարձը Տրոյացից դարձան Հոմերոսի ստեղծած «Իլիական» ու «Ոդիսական» պոեմների նյութը:

Տրոյայի դեմ ուղղված արշավանքը ծանր հետևանքներ ունեցավ աքայան Հունաստանի համար: Դրա արդյունքը եղավ ոչ միայն երկրի ուժերի սպառումը, այլ նաև երկպառակությունների բռնկումը աքայան թագավորություններում: Ավանդությունը պատմում է, որ Միկենե վերադառնալուց հետո Ագամեմնոնը սպանվեց իր մերձավոր ազգական էգիսթոսի ու իր կնոջ՝ Կլիտեմնեստրայի կողմից: Աքայան պետությունների թուլացումը համընկավ Բալկանյան թերակղզու հարավում ցեղերի նոր տեղաշարժի՝ դորիացիների գաղթի հետ:

#### ԴՈՐԻԱՑԻՆԵՐԻ ԳԱՂՔԸ

Դորիացիք՝ Թուրիդիդեսի վարժիբույ (I, 12) հյուսիսային հունական ցեղերից մեկը, Հունաստան եկան Տրոյական պատերազմի ավանդական տարեթվից ութսուն տարի անց, այսինքն մ. թ. ա. XII դ. վերջին—XI-ի սկզբին: Նախապես հարավային Իլլիրիայում բնակվող դորիական ցեղերը ապրում էին նախնադարյան համայնական կարգերով, նրանց ցեղային միությունների գլուխ կանգնած էին առաջնորդներ: Հավանաբար, գաղթի դարաշրջանում դորիացիները դեռ մոտենում էին դասակարգային հասարակության աստիճանին ու շունեին պետական կազմակերպություն: Սակայն արտադրության բնագավառներից մեկում՝ դորիացիները առաջ էին անցել իրենց հարավային ցեղակիցներից՝ նրանք կարող էին օգտվել պղնձից ավելի կատարյալ մետաղից՝ երկաթից: Այդ հանգամանքը վճռական նշանակություն ունեցավ հունական հասարակության հետագա զարգացման համար:

Հունական ավանդությունը պահպանել է բազմաթիվ տեղեկություններ դորիական գաղթի վերաբերյալ: Դրանք պատմում են, թե ինչպես Պերսեսյանների միկենյան տոհմին պատկանող Հեքակլեսի ժառանգները վերադարձան իրենց նախնիների երկիրը: Քսոս երևույթին, դորիացիների առաջին ասպատակումները տեղի ունեցան դեռևս մ. թ. ա. XIII դ. վերջում, սակայն այն ժամանակ նրանք հաջողությամբ ետ մղվեցին աքայացիների փողմից: Ավելի ուշ, մ. թ. ա. XII դարում դորիացիները երկու զանգվածներով շարժվեցին դեպի Միջին ու Հարավային Հունաստան: Նրանց մի մասը գրավեց էպիրոսը, Ակարնանիան, էտոլիան, էլիսը: Մյուսները, անցնելով Միջին Հունաստանով, հաստատվեցին Կորնթո-

սում, Արգոլիսում, Լակոնիայում ու Մեսսենիայում: Եկվորների՝ տեղական բնակչության դեմ մղած պայքարում հատկապես վնասվեց Արգոլիսը: Դորիացիները ավերեցին ու հրդեհեցին նրա շատ քաղաքներ, այդ թվում և Միկենեն: Այլ էր Ատտիկայի ճակատագիրը. այն գրավվեց Պելոպոնեսից դուրս մղված աքայան բնակչության մի զանգվածի կողմից, բայց դորիական նվաճմանը Ատտիկան չենթարկվեց:

Դորիական գաղթի հետևանքով Հելլադա եկան նոր ցեղեր: Այդ գաղթի արդյունքը եղան նաև աքայացիների զգալի տեղաշարժերը: Աքայան բնակչության մի մասը մնաց հին տեղում, մյուսը գաղթեց էգեյան ծովի կղզիները, Կիպրոս ու Փոքր Ասիայի հարավարևմտյան մասը: Կիպրոսում աքայացիների առաջին բնակավայրերը առաջացան դեռևս մ. թ. ա. XIV դ. վերջին ու XIII դ. սկզբին, և կղզու հետագա բնակեցումը աքայացիների համար, հավանաբար, դժվարություն չէր ներկայացնում: Ըստ հնագիտական տրվյալների, արդեն մ. թ. ա. XII դ. վերջում Կիպրոսի մարզերից մեկում կառավարում էր աքայական թագավոր:

Անհամեմատ դժվար է պարզել աքայացիների ճակատագիրը Փոքր Ասիայի ու Ասորիքի ծովափում: Նրանց մի մասը, ըստ երևվույթի, հաստատվեց այստեղ. ուշ շրջանի աղբյուրներում նրանք հիշատակվում են փղշտացիներ (Աստվածաշունչ) կամ դանանուների (արձանագրություններ Ղարա-Թեփեից) անունով: Աքայացիների մի մասը գաղթեց արևմուտք:

### Գլուխ 3. ՀՈՒՆԱՍՏԱՆԸ Մ. թ. Ա. XI—IX ԴԴ. (ՆԱԽԱՊՈՒԽԱՅԻՆ ՇՐՋԱՆ)

Որքան որ թույլ են տալիս դատել համեմատաբար աղքատիկ գրական ու հնագիտական աղբյուրները, դորիական գաղթից հետո հունական ցեղերի նյութական մշակույթի շատ բնագավառներում նկատվում է զգալի անկում: Վերանում են միկենյան շրջանին բնորոշ մեծ ու խիստ ամրացված պալատները, դրանց հետ մեկտեղ՝ արհեստի ու առևտրի այն բնագավառները, որոնք սպասարկում էին աքայան ավագանուն: Այդ պատճառով մ. թ. ա. II ու I հազարամյակների սահմանագծում հելենների կյանքը զգալի չափով դարձավ ավելի պարզ: Սակայն այդ անկումն ընդգրկեց նյութական մշակույթի ոչ բոլոր հատվածները: Մ. թ. ա. I հազարամյակի սկզբի խեցեղենը, օրինակ, թե՛ կավի ողակի տեսակներից և թե՛ թրծվածքով համարյա չէր զիջում լավագույն միկենյան նմուշներին: Իսկ երկաթի օգտագործումով դորիացիները զգալիոր-

րեն առաջ անցան իրենց նախորդներին: Երկաթի տարածումը, ինչպես ասվել է, ունեցավ վճռական նշանակություն հունական հասարակության արտադրողական ուժերի հետագա զարգացման համար. այն ստեղծեց նոր հնարավորություններ ոչ միայն արհեստներին, այլև հողագործության զարգացման համար:

#### ՀԱՆՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ԴՈՐԻԱՑԻՆԵՐԻ ԳԱՂԹԻՑ ՀԵՏՈ

Դորիական ցեղերի գաղթը ավարտվեց մ. թ. ա. XI դարում: Այն լուրջ փոփոխություններ մտցրեց մայրցամաքային Հունաստանի ու էգեյան ծովի ամբողջ ավազանի հունական տարբեր ցեղերի տեղաբնակեցման մեջ: Քանի որ հետագա ժամանակներում այդ մարզերում զգալի գաղթեր այլևս չեղան, ապա մ. թ. ա. II հազարամյակի վերջին վերաբերող տեղաշարժերի մասին կարելի է դատել հունական լեզվի բարբառների տարածումից արխաիկ ու դասական դարաշրջաններում:

Առավել շատ փոխվեց Պելոպոնեսի բնակչության կազմը: Անկախությունը կարողացան պահպանել թերակղզու կենտրոնում գտնվող լեռնային Արկադիան ու Աքայան: Ամիկլեն Լակոնիայում մնաց անկախ հավանաբար մինչև մ. թ. ա. IX դ.: Դորիացիների իշխանության հիմնական կենտրոնն էր սկզբում Արգոսը, և միայն մի քանի դար հետո այդպիսին դարձավ մ. թ. ա. X դ. կեսին հիմնրված Սպարտա քաղաքը (այն չպետք է շփոթել Մենելաոսի ու Հեղինեի ժամանակաշրջանի հին քաջան Սպարտայի հետ): Պելոպոնեսից բացի դորիացիները զավթեցին մի շարք կղզիներ էգեյան արշիպելագի հարավային մասում՝ Կիթերան, Մելոսը, Կրետեի մեծ մասը, Հոռոսը և որոշ մարզեր Փոքր Ասիայի հարավարևմուտքում:

Անկախ քաջան բնակավայրեր պահպանվեցին նաև հելլենական աշխարհի ծայրամասերում՝ Կրետեի լեռներում, Կիպրոսում, հարևան Պամփիլիայում: Իբրից հեռու գտնվող այդ շրջանների բնակչության բարբառների մոտիկ լինելը վկայում է նրանց էթնիկական ազգակցության մասին: Կիպրոս տեղափոխված մեծ թվով քաջացիները այստեղ հիմնեցին մի քանի փոքրիկ թագավորություններ, որոնք մ. թ. ա. XII—X դդ. ապրեցին զգալի վերելք: Կիպրոսում մ. թ. ա. I հազարամյակում ևս պահպանվեցին քաջան շրջանի շատ ավանդույթներ:

Միջին Հունաստանում քաջացիներն իրենց ձեռքում պահեցին սակավ արգավանդ Ատտիկա մարզը: Աթենացիները դասական շրջանում հպարտանում էին, որ իրենք բնիկներ են: XX դ. 30-ական թվականներին կատարված պեղումները լիովին հաստա-

տեցին դորիացիների դեմ աթենացիների մղած համառ պայքարի մասին եղած ավանդությունը: Մ. թ. ա. XI դ. Աթենքի ակրոպոլիսում կառուցվեցին հզոր պաշտպանական ամրություններ: Պաշտպանական պայքարի հաջողության գործում, հավանաբար, որոշակի դեր խաղաց նաև բնակչության ներհոսքը Պելոպոնեսից:

Ատտիկայի փոքր շափերն ու սակավ միջոցները չէին կարող կերակրել Հարավային Հունաստանից այստեղ գաղթած բոլոր աքայացիներին: Նրանց մի մասը՝ հոնիացիներ անունով (Իոն թագավորի անունից) տեղափոխվեց էգեյան արշիպելագի կենտրոնական մասի կղզիներն ու ավելի հեռու՝ Փոքր Ասիայի արևմտյան ծովափը: Միլետոսում, Եփեսոսում, Կոլոփոնում, Սամոսում ու Քիոսում ծագեցին ծաղկում ապրող հոնիական բնակավայրեր: Որոշ ժամանակ անց այստեղ սկսվեց հունական մշակույթի նոր վերելք: Հոնիան բարերար կլիմայի, հողի բերրիության, Փոլուգիայի, իսկ հետո և Լյուդիայի հետ հաստատած սերտ կապերի, ինչպես նաև վաղ ծագած ծովափնային շնորհիվ իր զարգացումով արագ առաջ անցավ մայրցամաքային Հունաստանից:

Փոքր Ասիայի էգեյան ծովափի հյուսիսային մասը, այսպես կոչված էոլիսը, ներառյալ Լեսբոս կղզին, բնակեցված էր, ըստ երևույթին, Թեսալիայից եկած հույներով: Հունական ավանդության համաձայն էոլիս մեկնեցին Նեստորի՝ Պիլոսի առասպելական թագավորի ժառանգները:

Հնարավոր է, որ հենց Պիլոսից գաղթածները Փոքր Ասիա բերեցին տրոյական արշավանքի մասին երգերը, որոնք ընկած են հոմերոսյան վիպերգության հիմքում:

#### ՀՈՄԵՐՈՍԱՆ ՀԱՐՑԸ

Մինչև XX դարի տկիզբը մ. թ. ա. XI—IX դդ. Հունաստանի պատմության ուսումնասիրության միակ աղբյուրը Հոմերոսի հրոշակավոր երկերն էին՝ «Իլիականը» և «Ոդիսականը», ինչպես և ավելի ուշ շրջանին պատկանող հույն հեղինակների մի քանի կրցկըտուր հաղորդումները: Սակայն հնագիտական պեղումները, որոնք գրեթե անընդհատ կատարվում էին Հելլադայի տարածքում, հատկապես վերջին շրջա տասնամյակների ընթացքում, հնարավորություն տվեցին կուտակելու մի շարք կաթևոր տվյալներ: Նոր հայտնագործումները մի կողմից թույլ տվեցին զգալիորեն լրացնել էպոսի տվյալները, իսկ մյուս կողմից ակնառու կերպով ցույց տվեցին, որ Հոմերոսի պոեմներում, ինչպես նաև շատ այլ էպիկական ստեղծագործություններում, կան ժամանակային մեծ տարածություններ իրարից անջատված տարբեր շրջաններին վերաբերող

շերտեր: Հոմերոսյան վիպերգութեան մեջ պահպանվել են շատ տվյալներ այն ժամանակաշրջանի մասին, որին վերաբերում են պոեմներում նկարագրված իրադարձությունները (մոտավորապես մ. թ. ա. XIII—XII դդ.): Սակայն այնտեղ քիչ չեն նաև հենց պոեմների ստեղծման շրջանին (մ. թ. ա. IX դ. վերջ—VIII դ. սկիզբ) վերաբերող հաղորդումները: Հույների դուցազնավեպը պարունակում է նաև ավելի հին կտորներ՝ աքայացիների դեռ մ. թ. ա. II հազարամյակի առաջին կեսի բանավոր ստեղծագործության հատվածներ: Այսպիսով, ելնելով մեր գիտելիքների այժմյան մակարդակից, այլևս հնարավոր չէ խոսել միասնական, պատմականորեն կոնկրետ հոմերոսյան հասարակության մասին: «Իլիականում» ու «Ոդիսականում» անհրաժեշտ է տարբերել երկու հիմնական շերտեր՝ վաղ (միկենյան կամ աքայան) և ուշ: Բացի դրանից, ինչպես ցույց են տվել հետազոտությունները, պոեմներում կան ավելի ուշ շրջանին պատկանող շատ ընդմիջարկումներ: Սակայն, շնայած Հոմերոսի պոեմներում պարունակվող պատմական նյութի ուսումնասիրության դժվարությանը, դրանք այսօր ևս մ. թ. ա. XIII—IX դդ. հույների կյանքը բնութագրող վառ հուշարձաններ են:

«Իլիականում» նկարագրվում է ամենահզոր աքայան հերոսի՝ Աքիլլեսի ցասումը (Տրոյական պատերազմի տասներորդ տարում նրան անարգել էր աքայան զորքի առաջնորդ Ագամեմնոնը) ու այդ ցասման հետևանքները աքայացիների ու տրոյացիների համար: Պոեմի ամբողջ գործողությունը կատարվում է մի քանի օրվա ընթացքում: Փոքրիկ ընդմիջարկում — պատմվածքների օգնությամբ հաղողվում են նաև ավելի վաղ, ինչպես և ավելի ուշ ժամանակների անցքերը: «Ոդիսականում» նկարագրվում է աքայան հնարամիտ հերոս Ոդիսևսի 10-ամյա ծովային ճանապարհորդությունը, որը ձեռնարկվեց Տրոյայի կործանումից հետո, ու նրա վերադարձը հայրենիք: Նա զայրացրեց ծովի աստված Պոսիդոնին, որի համար և դատապարտվեց երկարատև թափառումների: Պոեմի գործողությունը ևս տեղի է ունենում մի քանի օրվա ընթացքում, Ոդիսևսի կրած փորձանքների վերջին տարում: Ոդիսևսը հայրենիք՝ Իթակե կղզի վերադառնալուց առաջ ինքը պատմում է նախորդ տարիների անցքերի մասին:

Երկու պոեմների սյուժեները ծավալվում են հասարակական հարաբերությունների մանրամասն ու վառ նկարագրի ֆոնի վրա:

«Իլիականը» և «Ոդիսականը», անշուշտ, ոչ միայն հին հունական, այլև համաշխարհային գեղարվեստական գրականության խոշորագույն ստեղծագործություններն են: Ընում երկու պոեմներն էլ վայելում էին հսկայական ժողովրդականություն. նրանք հա-

ճախ արտագրվում էին ու հասել են մեզ մեծաթիվ ձեռագրերով: Անտիկ շրջանով զբաղվող պատմաբանի համար այդ պոեմների նշանակությունը ավելի է մեծանում այն պատճառով, որ դրանք Հունաստանի հնագույն գրական հուշարձաններ են: Պոեմներում ոչ միայն արտացոլված են պատմական մեծ անցքեր, այլև պահպանվել են հիրավի անսպառ քանակությամբ ամենատարբեր տեսակի տեղեկությունների հունական ցեղերի կենցաղի, մշակույթի ու լեզվի մասին: Այդ տեղեկությունների ընտրությունը, նրանց համեմատումը այլ պատմական աղբյուրների տվյալների հետ ու վերլուծությունը այդ շրջանի պատմության ուսումնասիրության կարեւոր միջոցներ են:

Հնում կասկածներ չկային Հոմերոսի պատմականության վերաբերյալ: Նա համարվում էր ոչ միայն այդ երկու պոեմների, այլև մի շարք ուրիշ ստեղծագործությունների հեղինակ: Հոմերոսի կյանքի ժամանակաշրջանը թվագրվում էր տարբեր ձևով՝ սկսած Տրոյական պատերազմի ավանդական տարեթվից (մ. թ. ա. 1194—1184) ընդհուպ մինչև մ. թ. ա. VIII դ.: Առավել տարածված էր Հերոդոտոսի այն տեսակետը (II, 53), թե Հոմերոսը ապրել էր Հերոդոտոսի ժամանակաշրջանից 400 տարի առաջ, հետևապես՝ մ. թ. ա. IX դ. կեսին: Հին հեղինակների մեծամասնությունը մեծ բանաստեղծի ձևնդամայր էր համարում Ջմրտունեն (Փոքր Ասիա):

Երկար ժամանակ հոմերոսյան պոեմներից առանձին երգեր տոնախմբություններին կատարում էին թափառաշրջիկ բանաստեղծներն ու ասացողները: Հավանաբար նրանք երբեմն փոխում էին տեքստը լսողների կազմին համապատասխան: Անգամ այդ պոեմները գրի առնելուց հետո էլ տարբեր վարկածների բնագրերը զգալիորեն տարբերվում էին իրարից: Ըստ երևույթին, միայն մ. թ. ա. VI դ. երկրորդ կեսին Աթենքում ճանաչում գտավ հոմերոսյան պոեմների համահավաք բնագիրը:

Հելլենիզմի շրջանում, մ. թ. ա. III—I դդ., այսպես կոչված Ալեքսանդրյան դպրոցի բանասերները շատ զբաղվեցին «Իլիականի» և «Ոդիսականի» տեքստերի քննադատությամբ: Յուրաքանչյուր պոեմը նրանք բաժանեցին 24 երգերի (հունական այբուբենի տառերի թվին համապատասխան), բացահայտեցին շատ ընդամիջարկություններ (ուշ շրջանի հավելումներ) և ուղղեցին արտագրողների մի շարք սխալներ: Ալեքսանդրյան բանասերների կողմից ստուգված բնագիրը դարձավ պոեմների մեզ հասած միջնադարյան ձեռագրերի հիմքը: Բնորոշ է, որ «Իլիականի» ու «Ոդիսականի» հատվածները, որոնք գտնվել են ուշ հելլենիստական շրջանի պապիրուսներում, քիչ են տարբերվում ձեռագրերի բնագրերից:

«Հոմերոսյան հարցը», այսինքն հոմերոսյան պոեմների հեղինակի ու առաջացման հարցը, գիտության մեջ սուր ձևով դրվեց փաստորեն միայն XVIII դ. վերջից: Սակայն սկսած այդ ժամանակվանից նա չի դադարում լինել անտիկ դարաշրջանի պատմության ամենալիճելի հարցերից մեկը: 1795 թ. գերմանացի գիտնական Ֆ. Ա. Վոլֆը, զարգացնելով իր ֆրանսիացի ու փոսլացի նախորդների հայացքները, հրատարակեց «Ներածություն Հոմերոսի հարցի շուրջը» գիրքը, նշեց էպոսում մեծ թիվ կազմող հակասությունների գոյությունը: Վոլֆը, ենթադրելով, որ հունական գիրք հանդես է եկել միայն մ. թ. ա. մոտ VI դ., քիչ համոզիչ էր համարում, որ անգրագետ բանաստեղծը, թեկուզև տաղանդավոր, կարող էր հորինել երկու այդչափ մեծ պոեմներ: Առավել ևս անհնար էր, գտնում էր Վոլֆը, որ այդ պոեմները կարող էին պահպանվել բանավոր հաղորդման մեջ հարյուրամյակների ընթացքում: Ուստի Վոլֆը առաջադրեց այն ենթադրությունը, թե պոեմների հեղինակի գործունեությունը սահմանափակվել է ժողովրդի մեջ պահպանված բազմաթիվ երգերի միացմամբ: Պոեմների ակնհայտ միասնությունը նա բացատրում էր այն բանով, որ նրանց ամբողջ թեմատիկան պատվում է իրական անցքերի շուրջը:

XIX դարում «հոմերոսյան հարցի» հետազոտողները բաժանվեցին երկու խմբի: Ուսումնասիրողների առաջին խումբը՝ ունիտարները, հակառակ Վոլֆի փաստարկներին, երևում էին «Իլիականի» ու «Ոդիսականի» լեզվի ու ոճի կառուցվածքային ամբողջականությունից ու միասնությունից: Երկրորդ խումբը կազմեցին վերլուծողները («անալիտիկները»): Նրանց զգալի մասը, հատկապես ծայրահեղները, պատկանում էին արևմտաեվրոպական պատմագրության մեջ այն ժամանակ մոդայական դարձած գերքննադատական («հիպերկրիտիզիզմ») ուղղությանը: Հոմերոսյան պոեմներին նրանք մոտենում էին սոսկ նոր ժամանակում մշակված ու հնության հանդեպ օտար հանդիսացող գրական պատկերացումների դիրքերից: Վերլուծողները կատարեցին մեծ ու աշխատատար գործ հոմերոսյան բնագրի ուսումնասիրության ու նրանում ամեն կարգի հակասությունների բացահայտման ուղղությամբ: Սակայն նրանց եզրակացությունները, որոնք հանգում էին պոեմները ավելի ու ավելի մեծ քանակությամբ (մինչև չորս տասնյակ) մանր երգերի մասնատելուն, գիտնականների մոտ հետզհետե սկսեցին առաջացնել Եւթեղացող առարկություններ: Վերլուծողների եզրակացությունների հանդեպ վստահությունը թուլանում էր նաև այն պատճառով, որ նրանք հանգում էին տարբեր, հաճախ լիովին հակադիր արդյունքների, որոնք կախված էին նրանցից յուրաքանչ-

յուրի կողմից կիրառվող մեթոդներին: Այսպես, օրինակ, «նավերի ցանկը» «Իլիականի» 2-րդ երգից երկար ժամանակ համարվում էր պոեմի՝ առավել ուշ շրջանում ստեղծված մասերից մեկը, իսկ այժմ շատ հետազոտողներ հակված են այն դիտելու գրեթե ամբողջովին միկենյան շրջանին հարող հատված:

Հոմերոսյան պոեզիանի ուսումնասիրության գործում նոր նյութ տվեց ֆիննական, ռուսական, սերբական, ղազախական ժողովրդական էպիկական ստեղծագործության պատմահամեմատական ուսումնասիրությունը: Պարզվեց, որ շատ ասացողներ հեշտությամբ պահպանում են իրենց հիշողության մեջ բանաստեղծական տեքստի տառնյակ հազար տողեր, ընդ որում դրանք բազում անգամ կրկնելիս թույլ են տալիս սոսկ աննշան շեղումներ: Այս ճանապարհով ապացուցվեց, որ հնարավոր է բանավոր ձևով սերնդից սերունդ հաղորդել անգամ «Իլիականին» ու «Ոդիսականին» չզիջող մեծ պոեմներ: Մեր օրերում պատմագրության մեջ նկատելի են ինչպես ունիտարների, այնպես էլ վերլուծողների ծայրահեղությունների դեմ ուղղված առարկությունները: Այժմ ընդունված է համարվում այն տեսակետը, որ «Իլիականի» ու «Ոդիսականի» հեղինակը (կամ հեղինակները) շատ մեծ չափով օգտագործել է Տրոյական պատերազմի (իսկ երբեմն նաև ավելի վաղ պատերազմների) առանձին միջադեպերին նվիրված ժողովրդական երգերի խիստ հարուստ շարքը, սակայն ենթարկել է այդ երգերը մշակականության ստեղծագործական վերամշակման: Այստեղից էլ հետևում է վերը նշված կարևոր եզրակացությունը այն մասին, որ էպոսում առկա են տարբեր ժամանակներին պատկանող շերտավորումներ:

Ինչպիսի՞ մեթոդներով է որոշվում այն ժամանակը, որին վերաբերում են պոեմների այս կամ այն մասերը: Առավել կարևոր մեթոդը նրանց համեմատումն է հնագիտական հուշարձանների հետ: Տրոյայի, Միկենեի, Աթենքի, Կորնթոսի ու այլ վայրերի պեղումները տվեցին նյութական մշակույթի մեծ քանակությամբ ստույգ թվագրվող իրեր: Մյուս կողմից, էպոսում հաճախ հանգամանորեն նկարագրվում են տարբեր առարկաներ, պոեմների հերոսների սովորություններն ու կենցաղը: Գրական վկայությունների համեմատումը հնագիտական տվյալների հետ թույլ է տալիս բավական ճշտորեն թվագրել առաջինները: Հենց վերջերս հայտնաբերվեց Հոմերոսյան էպոսի առանձին մասերի ժամանակը որոշելու ևս մեկ չափազանց կարևոր չափանիշ: Վանկային «Բ» գրի վերծանումը 1953 թ. ցույց տվեց, որ Հոմերոսյան շատ անուններ ու տերմիններ հիշատակվում են այդ գրի հուշարձաններում: Աքայան «Բ» վանկագրի բնագրերի հետագա ուսումնասիրությունը



թույլ կտա ավելի ճշտորեն որոշելու հոմերոսյան պոեմներում  
եղած շերտերը:

Նշենք մի քանի օրինակներ, որոնք կպարզաբանեն հնագիտա-  
կան հուշարձանների կարևոր դերը հոմերոսյան էպոսի տւտւմնա-  
սիրութեան գործում: «Իլիականում» և անգամ «Ոդիսականում» բը-  
րոնգը հիշատակվում է զգալիորեն ավելի շատ, քան երկաթը: Սա-  
կայն, այնուամենայնիվ, բանաստեղծը հաճախ, հատկապես «Ոդի-  
սականում» խոսում է նաև երկաթյա խրբի մասին, երբեմն հա-  
վաքական իմաստով հիշատակվում է «չարաբաստիկ երկաթը» («Ո-  
դիսական», XVI, 294 և XIX, 13): Մինչդեռ Հունաստանում հայտ-  
նաբերված հնագույն երկաթյա սրերը հարում են միայն մ. թ. ա.  
XI դարին: Այսպիսով, բանաստեղծը, շնայած ժամանակավրեպու-  
թյունից խուսափելու իր մշտական ցանկութեանը, այնուհանդերձ  
մի շարք դեպքերում իրեն շրջապատող առարկաների նկարագրու-  
թյունը մտցնում է հնութեան ավանդութեանների մեջ:

Հակառակ օրինակ է յուրատեսակ կաշվե սաղավարտի նկա-  
րագրութեանը «Իլիականում»: Այն

...հյուսված էր ներսից բազում և ամրակոտ, պինդ փոկերով,  
Իսկ երեսից՝ նրա վրա վայելչակաղմ ու շարեշար  
Ցցված էին վայրի խողի ճերմակազույն սուր ժանիքներ,  
Մեղտեղուն և կար թաղիքյա ամուր գործված շքեղ հյուսվածք:

(«Իլիական», X, 263—266, թարգմ. Հ. Համբարձումյանի):

Բանաստեղծի նկարագրած սաղավարտները մ. թ. ա. XI—IX  
դդ. շերտերում չեն հանդիպում. դրանք գործածութեանից դուրս ե-  
կան միկենյան շրջանի վերջում: Դրա փոխարեն մ. թ. ա. XVI—  
XIV դդ. թաղումներում հաճախ գտնվում են վարագլի ժանիքներից  
պատրաստված թիթեղներ, որոնք նման են «Իլիականում» հիշա-  
տակված սաղավարտների թիթեղիկներին: Հետևապես, նման սա-  
ղավարտի հիշատակման հետ կապված միջադեպերը վերաբերում  
են արայան ավելի հին էպոսի հատվածներին, էպոս, որը պահ-  
պանվել էր միկենյան շրջանի բանավոր ավանդութեան մեջ:

Ըստ երևույթին, Տրոյական պատերազմի մասին կազմված  
պատմազրույցների ցիկլը ասացողների մի քանի սերունդների կող-  
մից վերամշակվելուց հետո դարձավ «Իլիականի» ու «Ոդիսականի»  
հիմքը: Այդ երկու պոեմները ստեղծվեցին մ. թ. ա. IX դարի երկ-  
րորդ կեսին կամ VIII դ. հենց սկզբին, մեկ կամ երկու հեղինակ-  
ների կողմից, ընդ որում «Ոդիսականը» ընդհանրապես մի քանի  
տասնյակ տարով երիտասարդ է «Իլիականից»: Պոեմների հեղի-  
նակի (հեղինակների) գործունեութունը շհանգեց առանձին աս-

քերի մեխանիկական միավորմանը. այն արտահայտվեց ժողովրդական և քաղաքական ստեղծագործական գեղարվեստական վերամշակման մեջ: Հոմերոսյան պոեմների լեզուն հունական լեզվի հոնիական ու էոլական բարբառների խառնուրդն է, ճիշտ է, առաջինի պայլի գերակշռությամբ: Այժմ արայան «Բ գրի վերծանման կապակցությամբ գտնում են, որ էպոսում եղած էոլաբանությունները առաջացել են ոչ թե փոքրասիական էոլիսի բնակչության ազդեցության հետևանքով, այլ դրանք միկենյան շրջանի հույների կողմից օգտագործված բարբառի տարրերն են: Ոսկով առատ Միկենեի թագավոր Ագամեմնոնի հղորությունը, Տրոյայի դեմ ուղղված արշավանքը, նավերի ցանկն ու նյութական մշակույթի առարկաների բավական մեծ թվով հանդիպող նկարագրությունները պետք է վերադրել արայան շրջանին: Դրա փոխարեն երկաթի վերաբերյալ եղած հիշատակումները, հասարակական հարաբերությունների մի շարք դժերը, աշխարհագրական տեղեկությունների մի մասը վերաբերում են հաջորդ շրջանին:

#### ՆԵԱՄԱՆ Մ. Թ. Ա. XI—IX ԴՍԵՐՈՒՄ

Հերոսական էպոսի վերը նշված գծերը ստիպում են մեզ մեծ պատշաճությամբ օգտագործել նրա տվյալները դորիական գաղթից հետո Հունաստանի պատմությունը չուսաբանելու համար: Այս պատճառով հատկապես արժեքավոր են մեր դարի երկրորդ քառորդից հայտնարևրված հնագիտական աղբյուրները: Որոշակի նշանակություն ունեն Աթենքի Կերամիկոս թաղամասի պեղումները, որոնք տվեցին մ. թ. ա. XI ու X դարերով թվագրվող շատ նյութեր: Մ. թ. ա. II հազարամյակի վերջի ու I հազարամյակի սկզբի հուշարձանները, ինչպես հիշատակված է վերը, իրենց բնույթով խիստ տարբերվում են միկենյան հուշարձաններից: Դրանք արդեն ոչ թե արայան շրջանի մոտամենտալ պալատներ ու գմբեթաձև դամբարաններ են, այլ գլխավորապես հասարակ տներ ու գերեզմանոցներ: Թաղումները պարունակում են զգալիորեն ավելի քիչ պերճանքի առարկաներ, գեղարվեստական ու ներմուծված իրեր: Միկենյան խեցեղենը փոխարինվում է պարզ երկրաչափական նախշեր ունեցող ամաններով, իսկ զգալիորեն ավելի ուշ՝ մարդկանց ու կենդանիների սխեմատիկ, երկրաչափական բնույթի պատկերներ ունեցող անոթներով:

Խեցեղենի մնացորդների ուսումնասիրության հիման վրա ընդունված հնագիտական պարբերացման համաձայն, ուսումնասիրվող ժամանակաշրջանը ստորաբաժանվում է հետևյալ ժամանակաշրջանների՝ ենթամիկենյան (մ. թ. ա. XII ու XI դդ. սահմանա-

գիծ), նախաերկրաչափական (մինչև մ. թ. ա. 950 թ.), վաղերկրաչափական (մինչև մ. թ. ա. 850 թ.) ու հասուն երկրաչափական (մինչև մ. թ. ա. 800 թ.): Ինթամիկենյան ժամանակաշրջանում սկսում են տարածվել երկաթից պատրաստված զարդեր, ուշ հելլադական խեցեղենը հետզհետե դառնում է ավելի հասարակ: Նախաերկրաչափական շրջանում երևան են գալիս տեղում պատրաստված զենքի առարկաներ: Ինթամիկենյան խեցեղենը գրեթե աննկատելիորեն փոխանցվում է նախաերկրաչափականի: Վաղերկրաչափական ժամանակաշրջանում արդեն հանդիպում են երկաթից պատրաստված բավականին մեծ թվով արտադրական գործիքներ, թաղման արարողություններում գերիշխում է դիակիզումը, խեցեղենի նախշաղարդումը հետզհետե բարդանում է նույն երկրաչափական մոտիվների հիման վրա: Մ. թ. ա. IX դ. երկրորդ կեսի շերտերում կրկին աճում է հանդուցյալներին առանց այրելու թաղումների թիվը: Այդ ժամանակ ողջ Հունաստանով մեկ զարգանում են երկրաչափական ոճի տեղական տարատեսակները, երկաթը տարածվում է ավելի լայնորեն, երևան են գալիս արտադրության երկաթյա գործիքներ:

Ց. Էնգելը այսպես է բնութագրում այն հեղափոխական դերը, որ պատմության մեջ խաղացին արտադրության երկաթյա գործիքները, առաջին հերթին՝ երկաթյա կացիներ և գութանը. «Երկաթը հնարավոր դարձրեց դաշտավարությունը ավելի մեծ տարածությունների վրա, լայնածավալ անտառամասերի մաքրումն ու վերածումը մշակելի տարածությունների. երկաթը արհեստավորին տվեց այնպիսի ամուր և սուր գործիքներ, որոնց չէր կարող դիմանալ ոչ մի քար, այն ժամանակ հայտնի ոչ մի այլ մետաղ: Բայց այս բոլորը միանգամից չկատարվեց. առաջին երկաթը հաճախ ավելի փափուկ էր, քան բրոնզը»<sup>4</sup>:

Մ. թ. ա. XII ու XI դդ. սահմանագծին է վերաբերում Աթենքի Կերամիկոս թաղամասի գերեզմանոցի թաղումներից մեկում հայտնաբերված երկաթյա սուրը: Հանգուցյալներին երկաթյա սրերի հետ թաղելու սովորույթը արագ տարածվեց Հելլադայում: Սրերի արտադրությունը, անշուշտ, պահանջում էր երկաթի մշակման որոշակի ունակություն, ուստի, հիմնվելով այս հայտնագործումների վրա, «երկաթի դարի» սկիզբը Հունաստանում կարելի է թվագրել մ. թ. ա. XII դ.:

Աթենքի ագորայում 1949 թ. կատարված պեղումների ժամանակ հայտնաբերվեց մ. թ. ա. X դ. կեսի թաղում, որտեղ գտան

<sup>4</sup> Կ. Մարտո և Ց. Էնգել, Ընտիր երկեր երեք հատորով, հ. 3, էջ 422:

շատ երկաթյա իրեր՝ կացին, ուրագ, հատիչ, դանակ, սանձերու Վրոկաստրոնում (Կրետե) նույն ժամանակի շերտում գտնվել են երկաթյա կացին ու դուր: Այսպիսով, մ. թ. ա. X դ. երկաթը ստացավ հետագա տարածում, ընդ որում կարևոր է, որ երկաթը օգտագործվում էր ոչ միայն զենքի արտադրության մեջ, այլ նաև աշխատանքային գործիքներ պատրաստելու համար: Հետագա դարերում երկաթը օգտագործվում է ավելի լայնորեն: Սակայն, միաժամանակ, դեռ գործածվում էին բրոնզե ու անգամ քարե գործիքներ:

#### ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հունական ցեղերը մ. թ. ա. XI—IX դդ. կանգնած էին զարգացման տարբեր մակարդակի վրա: Դորիացիների մոտ հետզհետե ձևավորվում էին հասարակական դասակարգեր, և դրա հետ մեկտեղ դեռ մեծ չափերով պահպանվում էին նախնադարյան-համայնական կարգերի հիմքերը: Դորիացիների նվաճող ցեղերի վիճակի առանձնահատկությունը նպաստեց նրանց քաղաքական կառուցվածքում հին շատ հաստատությունների պահպանմանը:

Այլ էր Հունաստանի աքայան հողերի բնակչության սոցիալական կառուցվածքը: Այստեղ պահպանվել էին բնակչության՝ դեռևս նախորդ շրջանում կազմավորված երեք հիմնական խմբեր՝ ավագանի, շարքային ազատ հողագործներ ու ստրուկներ: Սակայն ուժերի հարաբերակցությունը ազատների միջև խիստ փոխվեց, քանի որ դորիացիների դեմ մղած պայքարում կրած պարտությունները անուղղելի հարված հասցրեցին ավագանու, հատկապես նրա բարձր խավի դիրքերին: Բազմաթիվ ռազմիկ-արիստոկրատների ֆիզիկական բնաջնջումը, խոշորագույն աքայան թագավորությունների ոչնչացումն ու ռազմական ավարի ներհոսման դադարումը զրկեցին ավագանուն նրա նախկին առաջնակարգ դիրքից: Ավագանու թուլացումը նպաստեց այն բանին, որ կրկին ուժեղացան լայն ժողովրդական զանգվածների քաղաքական կյանքում հին ցեղային կարգերի վաղուց ի վեր պահպանվող շատ հաստատություններ: Այժմ հատուկ նշանակություն ձեռք բերեց համայնքը, որը գյուղական բնակչության միավորման վաղեմի ձևն էր:

#### ՀՐԻԱԿՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱԿՐԱՐԱՑՆԻ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գյուղատնտեսությունը մ. թ. ա. XI—IX դդ., ինչպես և դրանից առաջ, բնակչության հիմնական մասի գլխավոր զբաղմունքն էր: Կարելի է ենթադրել, որ հողագործությունը տարածված էր հատկապես Հոնիայի ու էոլիսի արգավանդ դաշտավայրերում, Փոքր Ասիայում և Բալկանյան Հունաստանի տարածքներում՝ Թեսալիա-

յում, Բեովտիայում, Լակոնիկայում, Մեսենիայում ու Արգոլիսում: Հուլյների գյուղատնտեսական պրակտիկան մ. թ. ա. XI—IX դարերում հիմնված էր աքայան շրջանի հողագործների հարուստ ավանդների վրա: Այն ժամանակ հողը, ինչպես այդ ցույց է տալիս նաև էպոսը, մշակում էին մեծ ինամբով: Որպես պարարտանյութ օգտագործում էին գոմաղբը: Հույն հողագործները լուրջ ուշադրություն էին հատկացնում հերկի խորությանը: Հարուստ թողած հողերը հերկում էին երեք անգամ: Տեղ-տեղ հավանաբար կիրառվում էր նաև արհեստական ոռոգում: Վարելու աշխատանքների կազմակերպումը վառ կերպով ցույց է տրված Աքիլլեսի վահանի վրա պատկերված տեսարաններից մեկում՝

Նրա վրա կերտված էր արտ՝ փափուկ. պարարտ ու նորահերկ  
 Ու եռակի գութանավար, և նրա մեջ՝ շատ մաճկայներ,  
 Արորներին եզներ լծած՝ քշում էին ետ ու առաջ:

(«Իլիական», XVIII, 541—543):

Դորիացիներից անկախություն պահպանած աքայան հողերում հասարակության գլուխ կանգնած էին բասիլևսները: Այդ հինավուրց տերմինով կոչում էին ոչ միայն թագավորներին, այլ նաև ընդհանրապես անվանի մարդկանց: Այդ խավը բազմամարդ էր: Տեակների կղզում, ուր փոթորիկը դուրս նետեց Ողիսեսին, նրան սիրալիր ընդունած բասիլևս Ալկինոզից բացի կային ևս 12 բասիլևսներ («Ողիսական», VIII, 390, թարգմ. Հ. Համբարձումյանի), բասիլևսներ կային նաև Իթակեում: Նրանց սովորական տիտղոսներն էին՝ «զևսածին» կամ «Զևսի կողմից սնեցված»: Բասիլևսների տնտեսական հզորության հիմքը կազմում էին նրանց մեծ տնտեսությունները՝ օյկոսները: Ըստ երևույթին, ուսումնասիրվող շրջանի բասիլևսների ոչ այնքան մեծ տնտեսությունները ընդհանուր գծերով կրկնում էին ավագանու՝ մ. թ. ա. XIV—XIII դդ. խոշոր տնտեսությունների կազմակերպումը: Ինչպես ցույց է տալիս էպոսը, աքայան ավագանին ոմներ լավ կարգավորված տնային տնտեսություն: «Ողիսականում» հանգամանորեն նկարագրված են պոեմի գլխավոր հերոսի ու Ալկինոզի օյկոսները: Այդ երկու տնտեսություններն ունեին շատ նման գծեր: Նրանցից յուրաքանչյուրում կային 50 վարժեցված ստրկուհի՝ ձևոքի գործ անողներ, որոնք մանում ու գործում էին, մանրում էին հացահատիկն ու կատարում էին տնային այլ աշխատանքներ: Այսպես, Ալկինոզի օյկոսի մասին բանաստեղծը հաղորդում է.

Ալկինոզի ապարանքում ստրկուհիք կային հիսուն,  
 Որոնց մի մասն աղորիքով անդ աղում էր զեղին ցորեն.  
 Իսկ մյուս մասը նստած՝ կտավ էր պատրաստում ու թել մանում,

Օրորվելով, ինչպես բարդու նուրբ տերևներն են օրորվում.

Կտավն այնքան խիտ էր գործվում, որ ձեթն անգամ չէր թափանցի:

«Ողիսական»\*

Բասիլևսներին տրամադրում էին համայնական հողերի լավագույն մասերը՝ տեմենոսներ (այսինքն հողահատվածներ): Տեմենոսների չափերը մեզ հայտնի չեն: Սակայն Լընելով թագավորական հողամասում կատարվող գյուղատնտեսական աշխատանքների նկարագրությունից, որը զետեղված էր Աքիլլեսի վահանի վրա, կարելի է եզրակացնել, որ տեմենոսները հասնում էին մեծ չափերի.

Կերտված էր անդ նաև մի արտ խիտ հասկալից ու բազմաբերք,

Ուր մշակները հնձում էին՝ սուր մանգաղները ձեռքերին.

Գետնի վրա թափվում էին հնձված հասկերը թանձրաշերտ,

Կապրարները կապում էին ամբողջ հնձածր կեմերով:

Երեք կապրար էր հետևում հնձվորներին, իսկ մանուկներն

Հասկերը անդուլ հավաքելով՝ գրկում, հանձնում էին նրանց.

Մինչդեռ արտի տերը լոփկ, լասերի մեջ, ցուպը ձեռքին,

Հետևում էր հասկաքաղին՝ սիրտն ու հոգին բերկրանքով լի...

(«Իլիական», XVIII, 550—557):

Բանաստեղծը մեծ տեղ է հատկացնում այգեգործությունն ու գինեգործությանը: Նա հանգամանորեն նկարագրում է ֆեակների թագավոր Ալկինոզի այգին («Ողիսական», VII, 112—128), Ողիսեսի հոր՝ Լայերտեսի աշխատանքը այգում, բանիմացությունը խոսում է գինեգործության մասին, մի փոքր ավելի քիչ՝ ձիթայուղի արտադրության մասին: Բասիլևսները, ըստ երևույթի, ասնեին խաղողի և պտղատու ընդարձակ այգիներ:

Զգալիորեն զարգացած էր անասնապահությունը: Արժեքները ընդհանրապես հաշվում էին եզներով: Այսպես, նշվում է, որ եոտանի հենարանը արժե 12 եզ, իսկ հմուտ ստրուկոհին՝ 4 եզ («Իլիական», XXIII, 702—705): Ողիսեսի ստրուկների հիմնական մասը զբաղված էր անասնապահության մեջ: Բասիլևսներն ունեին ոչ միայն խոշոր, այլև մանր եղջերավոր անասունների հոտեր, որոնց հսկում էին հովիվները: Վերջիններս կարող էին լինել ստրուկներ կամ ազատներ: Արտադրության այդ ասպարեզում աշխատանքի բաժանման մասին վկայում է հովիվների տարբեր խմբերը նշանակող տերմինների առատությունը էպոսում. խոզապահներ, այծ պահողներ, ոչխար պահողներ, խոշոր եղջերավոր անասունների հո-

\* Այստեղ և այսուհետև «Ողիսականից» վերցված թարգմանությունները՝ Ս. Փրբաշարյանի:

վիժվանք՝ ահա նրանց ոչ լրիվ ցանկը: Ողիսեան իր հարստութեան շահանքին ամենից առաջ համարում էր անասուններին:

Արտադրութեան ընթացքը օյկոսներում նախատեսված էր ներքին սպառման համար: Բասիլևը իր տնտեսութունը վարում էր փաստորեն շղիմելով առևտրին:

Զգալիորեն ավելի քիչ տեղեկութուններ են պահպանվել շարքային ազատ բնակչութեան դրութեան մասին: Շարքայիններն ունեին փոքրիկ հողակտորներ՝ «վիճակներ» ու մի քանի գլուխ անասուններ: Նրանց հողամասերի անվանումը խոսում է այն մասին, որ հողը համայնական սեփականութուն էր և, որ համայնքի անդամներն իրենց բաժինները ստանում էին վիճակահանութեան միջոցով: Բանաստեղծը՝ նկարագրելով Տրոյայի մոտ տեղի ունեցած ընդհարումներից մեկը, բերում է հետևյալ բնորոշ համեմատութունը՝

Ինչպես երկու հարևաններ՝ երկու արտի միջև կանգնած՝

Վիճում են թունդ, իրանց ձեռքին բռնած շահանն արտավարի,

Եվ գոգոտում են հավասար հողամասի շահի մասին...:

(«Երկրակալ», XII, 421—423):

Պոեմի այդ հատվածը հողի կանոնավոր կերպով կատարվող վերաբաժանումների համոզիչ ապացույց է: Ընդհանուր արտը սահմանագծեր անցկացնելու միջոցով բաժանվում էր վիճակահանութեամբ հատկացվող հողամասերի: Իհարկե, մ. թ. ա. XI—IX դարերում հողի համայնական սեփականութունը հասարակութեան շերտավորման ուժեղացման հետևանքով կրում էր փոփոխութուններ: Սակայն այն պահպանում էր իր ուժը: Հպոսի տվյալները թույլ են տալիս հասկանալու, թե համայնքն ինչպես էր տնօրինում իր հողը: Այդ վկայութունները հերքում են շատ բուրժուական պատմաբանների այն տեսութունը, որը, ձգտելով «ապացուցել» մասնավոր սեփականության մշտնջենական գոյութունը, ժխտում է նախնադարյան-համայնական կարգերի առկայութունը հին հույների մոտ: Սակայն այդ հասարակարգի գոյութունը, անշուշտ, բընավ չէր բացառում սուր հակասութունների առաջացումը ավագանու ու շարքային համայնականների միջև նշված հասարակարգի քայքայման շրջանում:

Դորիական նվաճումից հետո սկսված շրջանը բնութագրվում է արքայան համայնքի ներսում տեղի ունեցած խոր փոփոխութուններով: Հպոսի շատ հատվածներ ցույց են տալիս, թե ինչպես ազատ հողագործ համայնականների զանգվածից հետզհետե առաջանում են մարդկանց առանձին խմբեր, որոնք ստիպված եղան խզել իրենց կապերը համայնքի հետ: Համայնքի քայքայման մա-

սին մկառայող նման առվյալները հատկապես շատ են «Ողիսականում»։ Կարևոր է նշել այնպիսի խավերի առաջացումը, փնչպիսիք էին՝ «բազմավիճակավորները» ու «վիճակագուրկները»։ Վերջին խումբը կազմում էին հողամասերից զրկված հողագործները, որոնք դրանով իսկ փաստորեն դադարել էին իրենց համայնքի լիիրավ անդամներ լինելուց։ Հպտում հիշատակվում են նաև բատրակ թետերը, օրաբանվորներն ու վերարնակ-մետանաստները։ Դրանք բոլորը կազմում էին հողագործական բնակչության տարբեր կատեգորիաները, որոնք զրկվել էին իրենց հողաբաժիններից ու գտնվում էին տնտեսական կախման մեջ բասիլևաններից։ Այդ սոցիալական խմբերի ծանր նյութական դրուժյան մասին պատկերացում է տալիս Աքիլլեսի կողմից մեռյալների աշխարհում արված, դառնությամբ լի հայտարարությունը.

Ով Ողիոս պայծառանուն, մահն իմ առաջ մի՛ դովերդիր.

Կուզենայի ես կենդանի լինել, թեկուզ աշխատեի

Սակավազոր մարգու հողում, սահմանափակ ունեցվածքով։

(«Ողիսական», XI, 488—490)։

Այսպիսով, Հպտը օրաբանվոր-թետերի ճակատագիրը համարում էր, հավանաբար, ամենավատթարագույնը կենդանի մարդու համար։ Բայց ավելի դառն էր այն ժամանակ երևան եկած թափառաշրջիկների ու աղքատների վիճակը։ «Ողիսականի» հեղինակը ներկայացնում է մեզ մի աղքատի կերպար, ինչպիսին դառել էր Ողիսեսը աստվածուհի Աթենասի կամքով՝

Քո բարեկերտ մարմնի փափուկ մաշկը պետք է կնճապատեմ.

Պետք է քանդեմ գանգուրները քո շիկահեր ու բարձև,

Քեզ հազցենեմ պատռած մախիդ, որ բոլորը քեզից ղզվեն...

(«Ողիսական», XIII, 398—400)։

Քոլորովին առանձնահատուկ ուղիներով ընթացավ դորիացիների կողմից նվաճված հողագործական համայնքների պատմությունը։ Նվաճողները զրկեցին այդ կազմակերպությունները որևէ քաղաքական նշանակությունից։ Սակայն փրենք՝ դորիացիները, հաստատուն կերպով պահպանեցին իրենց հինավուրց կազմակերպումը՝ շատ ցեղերի ու տոհմերի։ Նրանց սոցիալական ու քաղաքական կյանքում ամրապնդվեց նաև համայնքային համակարգը։

## ԱՐՉԵՍԸ Մ. Ք. Ա. XI—IX ԴԴ.

Աքայան թագավորությունների կործանումը հանգեցրեց արհեստագործական արտադրության բնույթի վերափոխմանը։ Այժմ արհեստը ապաստարկում էր բնակչության ավելի լայն խավերին, ու



րոնք փնահատում էին ամուր ու կենցաղում օգտակար իրերը: Մ. թ. ա. I հազարամյակի սկզբից տեղի է ունենում արհեստի դանդաղ, իսկ հետո ավելի արագ վերելք: Այդ ժամանակ անգամ Հելլադայի ամենահետամնաց մասերում արհեստն անչատվում է հողագործությունից ու վեր է ածվում արտադրության ինքնուրույն ճյուղի: Դա հաստատվում է ինչպես հնագիտական, այնպես և գրքական աղբյուրներով: Հանգուցյալներին երկաթյա սերերով թաղելու վերը նշված սովորույթը նախատեսում էր երկաթի մետաղագործության զարգացման համեմատաբար բարձր մակարդակ: Աթենքում՝ Կերամիկոսում հայտնաբերված թաղումներում հանդիպում են փիբուլներ (հագուստ ամրացնող զնդասեղներ), դանակներ, դաշույններ, նիզակների ծայրեր: Այն ժամանակվա վարպետները իրեր պատրաստելիս հաճախ համակցում էին երկու տարբեր մետաղներ: Այսպես, օրինակ, զնդասեղի ծայրը պատրաստվում էր երկաթից, իսկ զնդաձև զլխիկը՝ բրոնզից: «Իլիականում» ու «Ոդիսականում» թվարկված են բավականին մեծ թվով դարբնի գործիքներ ու հարմարանքներ՝ զնդան, մուրճ, աքցան, դարբնոցի փուքսեր և անգամ կշեռք: Այդ գործիքներով աշխատում էին նաև մ. թ. ա. XI—IX դդ.:

Հատկապես արագ զարգացավ բրուտագործությունը, որը Հունաստանում խաղում էր բացառիկ դեր, քանի որ խեցեղենը (կավե անոթներ) ծառայում էր որպես ապրանքամանի հիմնական տեսակ: Սակայն թույլ էր զարգացած արհեստը՝ ամբողջությամբ վերցրած: Նրա շատ տեսակներ դուրս չէին գալիս տնային զբաղմունքի շրջանակից: Առաջին քայլերն էին ձեռնարկվում նաև արհեստավորների աշխատանքի տարբերակման բնագավառում:

Դեմիուրգներ կոչվող արհեստավորների սոցիալական դրուժյունը ավելի բարձր էր, քան հետագա ժամանակներում: Հույները դեռևս չէին արհամարհում արհեստագործական աշխատանքը, ինչպես դա խիստ հատուկ էր դասական հնադարին: Հոմերոսի մոտ անգամ բասիլևսները հակված են հպարտանալու արհեստի իմացությամբ: Ոդիսևսը հպարտությամբ վերհիշում է, թե ինչպես առանց որևէ օգնության պատրաստել էր մի մահճակալ ու ինքն էլ զարդարել էր այն ոսկով, արծաթով և փղոսկրով («Ոդիսական», XXIII, 190): Արհեստավորները ազատ մարդիկ էին:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ արհեստը մ. թ. ա. I հազարամյակի սկզբին պակաս էր տարբերացված, քան միկենյան ժամանակաշրջանում, սակայն դրա փոխարեն այն սպասարկում էր սպառողների ավելի լայն շրջաններին:

Աքայան շրջանի համեմատությամբ առևտուրը մ. թ. ա. XI—IX դդ. զգալիորեն վերափոխվեց: Համարյա լիովին դադարեց ծովային առևտուրը հեռավոր երկրների հետ: Միայն Կիպրոսի ուլաքայան թագավորությունները պահպանում էին կապեր Ասորիքի ու Փյունիկիայի ծովափի հետ: Հունաստանի առափնյա մասերում մեծ զարգացում ապրեց կիսածովահենային առևտուրը: Մովազրենացիները, մոտենալով ափին ու հանդիպելով անպաշտպան բնակչությանը, կողոպտում էին նրա ունեցվածքն ու երբեմն առևանգում մարդկանց: Նման դեպքերի մասին պատմվում է «Ողիսականում», որի շատ պատահարները վառ կերպով նկարագրում են կիսավաճառական, կիսածովահեն ծովագնացի կյանքը: Անկասկած, բավականաչափ հզոր կենտրոնական իշխանության բացակայության պայմաններում ծովահենությունը փարթամորեն ծաղկում էր հունական ջրերում: Մ. թ. ա. XI—IX դդ. երկրի բնակչությունը ծովագրնացությունը համարում էր շատ վտանգավոր զբաղմունք: Իզուր չէ, որ «Ողիսականը» կատարող-ասացողները երգում էին հեռավոր ծովերը բնակեցնող տարբեր հրեշների, ծովայիններին սպասող վտանգների մասին:

Ուսումնասիրվող շրջանի վերջում երևան են գալիս տեղեկություններ հունական ներքին առևտրի մասին: Այսպես, կորնթոսյան խեցեղենի հայտնաբերումը Կորնթոսից դուրս կարող է շատ դեպքերում վկայել հարևանների հետ Կորնթոսի կողմից առևտուր վարելու մասին: Նախաերկրաչափական ատտիկական խեցեղենը զգալի քանակությամբ հանդիպում է էգինա կղզում, Թեսալիայում ու Կիկլադներում մ. թ. ա. XI—IX դդ. շերտերում, իսկ երկրաչափական ոճի կորնթոսյան խեցեղենը մ. թ. ա. IX դ. կեսերից սկսած հասնում է Բեովտիա, Դելփիք ու Թերա կղզի: Առևտրի աստիճանական զարգացումը մեծ դեր խաղաց Հելլադայի հետագա պատմության մեջ. այն արագացրեց ստրկատիրական անտիկ հասարակության հաստատումը:

Հին կարգերի քայքայմանն ու նոր հասարակարգի ձևավորմանը նպաստեցին ոչ միայն առևտրի զարգացումը, այլև մշտական պատերազմները: Ամենօրյա երևույթներ էին դարձել հարևանների ահամահային մանր ընդհարումները, գերեվարությունը, անասունների հափշտակումը ու նման այլ իրադարձություններ: Հույների պատմական առասպելներում պահպանվել են շատ պատմաներ այդ երկպառակությունների մասին: Թուկիդիդեսը նշում է, որ Հելլադան հանդարտվեց միայն դորիացիների գաղթից շատ ժամանակ

անց, այն էլ դժվարութեամբ (I, 12, 4): Այս բոլոր պատերազմները, ծովահենութիւնը, թալանը ոչ միայն նպաստում էին նշուփական արժեքների կուտակմանը ավագանու հաջողակ ներկայացուցիչների ձեռքում, այլև վերջիններին տալիս էին ստրուկներ: Օգտագործելով ստրուկների աշխատանքը, ավագանին ավելի էր հարստանում: Մյուս կողմից այդ նույն պատերազմների հետևանքով ազատ հողագործների զանգվածը սնանկանում էր, իսկ հաճախ նաև ստրկացվում:

#### ՍՏՐԱՌԻՅՈՒՆԸ

Մ. թ. ա. XI—IX դդ. հունական հասարակութեանը հայտնի էին ստրկութեան տարբեր ձևեր: Դորիացիների կողմից նվաճված հողերում հաղթողները ստրկացրեցին գյուղական բնակչութեան հիմնական զանգվածին: Սակայն համատեղ ստրկացված այդ մարդկանց դրութիւնը տարբերվում էր իսկական ստրկական կացութիւնից, քանի որ իրավական տեսակետից պահպանվում էին նրանց նախկին ազատութեան որոշ գծեր: Այդ առանձնահատկութիւններն ավելի պարզորոշ հանդես են գալիս Կրետեի Գորտին քաղաքի օրենքներում (մ. թ. ա. VI դ.), որոնցում պահպանվել են մեծ թվով հին կանոններ: Մեկ այլ վառ օրինակ են հարաբերութեանները Սպարտայում, որտեղ հաղթողների համայնքն իրագործում էր համատեղ տիրապետութիւն ստրկացված հողագործների նկատմամբ: Հին հեղինակները հաղորդում են, որ սպարտացիները շկարողացան միանգամից ստրկացնել ենթակա բնակչութեանը. այդ պրոցեսը տևեց մինչև մ. թ. ա. IX դ. վերջը:

Ավելի դանդաղ էր զարգանում ստրկութիւնը Հունաստանի դժվարամատույց լեռնային մասերում, ուր ավելի երկար ժամանակ իրենց ուժը պահպանեցին նախնադարյան-համայնական անխախտ կարգերի դարաշրջանից ժառանգված շատ հասարակական հիմնարկներ: Տոհմային ու ընտանեկան կապերի ամրութեանը այդ հողերում նպաստեց միջին ու մանր հողագործների շերտի կայունութեանը: Ազգականների օգնութիւնը աղքատացած համայնականին հաճախ նրան հնարավորութիւն էր տալիս խուսափելու ստրկացումից: Դրսից բերված ստրուկների հոսքը դեպի այդ մեկուսացված շրջանները բավական սահմանափակ էր, այդ պատճառով էլ ստրկատիրական հարաբերութիւններն այստեղ մ. թ. ա. XI—IX դդ. շունեցան մեծ զարգացում:

Այլ կերպ էին զարգանում սոցիալական հարաբերութիւնները Հելլադայի ծովափնյա հողերում, հատկապես այնտեղ, ուր հին բր-

նակիչները կարողացան պահպանել իրենց անկախությունը: Պահպանված աքայան թագավորութուններում բասիլևսների իշխանության թուլացման մասին էր խոսում նաև այն փաստը, որ նըշված շրջանի թագավորական տնային տնտեսությունները շատ ավելի համեստ էին մ. թ. ա. XIV—XIII դդ. թագավորական օյկոսների համեմատությամբ: Թագավորներին ու նրանց մերձավոր ավագանուն պատկանող ստրուկների քանակը ավելի քիչ էր, որովհետև դադարեցին ռազմական մեծ արշավանքները, որոնցից վերադառնալիս աքայան թագավորները բերում էին շատ գերիներ: Պատահական չէ, որ «Ողիսականում» մի շարք պատահարներում խոսվում է ստրկացված մարդկանց ճակատագրի մասին, ընդ որում թագավորական ստրուկների վերաբերյալ հաճախ խոսվում էր որպես հենց թագավորի կողմից վերցված գերիների, օրինակ՝ «Եվ տերն եմ այս ստրուկների, որոնց ավար է վերցրել Ողիսուսը» («Ողիսական», I, 398):

Դժվար է որոշել ստրկական աշխատանքի օգտագործման շարժը Հունաստանի այն ժամանակվա արտագրության մեջ: Ավագանու տներում ստրուկներն ու հատկապես ստրկուհիները զբաղված էին իրենց տերերին սպասարկելով: Ստրուկների որոշ մասը զբաղված էր անասնապահության ու հողագործության մեջ: Միջին կարգի հողատերերը ստրուկներին օգտագործում էին որպես օժանդակ աշխատողներ տնտեսական գործունեության բոլոր բնագավառներում:

Ստրկատիրության դժվար նշմարելի աճը մ. թ. ա. XI—IX դդ. հունական հասարակությունում վառ արտահայտություն գտավ էպոսի ավելի ուշ ստեղծված մասում՝ «Ողիսականում»: Ժողովրդական պոեզիայի այս ստեղծագործության մեջ պատկերված են ստրկական վիճակում գտնվող շատ անձեր, ու ցույց է տրված նրանց ծանր աշխատանքը: Ողիսուսի տանն ապրող խոզապահ Եվմեոսը նկարագրված է որպես պոեմի իմաստագույն ու գրեթե ամենադրական հերոս: «Ողիսականում» մեծ տեղ է հատկացված աղքատների ու ստրուկների դժբախտություններին: Անդինը մանրամասնորեն նկարագրում են, թե հանդուգն ստրուկների նկատմամբ ինչպիսի հաշվեհարդար էին ձեռնարկում նրանց տերերը: Ուշագրավ է պատմվածքը կոպիտ ու դաժան էպիրոսյան բասիլևս Եքեոսի մասին, որը տանջում էր իր ստրուկներին ու հասցնում նրանց ծանր վնասվածքներ («Ողիսական», XVIII, 83—86): Ողիսուսի շահերին դավաճանած ստրուկները կրեցին ծանր պատիժ՝ անհավատարիմ ստրկուհիները կախաղան հանվեցին, կտրեցին Մե-

լանթիոս ստրուկի ականջներն ու քիթը, շարդեցի՛ն նրա ձեռքերն ու ոտքերը («Ողիսական», XXII, 465—478):

Դրա հետ մեկտեղ էպոսում նկարագրվում է տերերին մոտիկ կանգնած ստրուկների ավելի արտոնյալ վիճակը: Նրանք օգտվում էին որոշ փնթնուրույնությունից: Օրինակ, կանտոսի ստրուկ Դոլիոսը անգամ ուներ ստրկական կացութիւնում ծնված երեխաներ: «Ողիսականում» ստրուկների նկատմամբ ցուցաբերված ավելի մեծ ուշադրությունն արտացոլում էր այն հետաքրքրությունը, որ հույն ժողովրդի հոգեկան կյանքում առաջանում էր այդ աճող սոցիալական երևույթը: Հատկանշական է, որ էպոսի հեղինակը հստակ գիտակցում է, որ ստրկությունը որպէս այդպիսին ունի շատ բացասական կողմեր: Պատահական չէ, որ «Ողիսականում» ասվում է՝

Ստրուկներն էլ, թե որ նրանց դիտին արքա չկա կանգնած,  
Երբեք սրտանց չեն աշխատում և ոչ մի գործ չիր չեն բռնում,  
Որովհետև Ջևար մարդուն զրկում է իր շնորհներից,  
Երբ իջնում է նրա դիտին ստրկության բախտը դաժան:

(«Ողիսական», XVII, 321—324):

#### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՑԱՆՔԸ Մ. Ք. Ա. XI—IX ԴԴ.

Հելլենների հասարակական կյանքը ուսումնասիրվող շրջանում բավական բարդ պատկեր ուներ: Դասակարգերի առաջացման պրոցեսն այժմ ընդգրկել էր Հունաստանի ամբողջ տարածքը: Այն ցեղերը, որոնք մ. թ. ա. II հազարամյակում գտնվում էին քայան թագավորությունների ծայրամասերում ու պահպանում էին նախնադարյան-համայնական կարգերի հարաբերություններ, այժմ սկսեցին մասնակցել պետության գոյացման պրոցեսներին: Այս պատճառով հասարակական կազմակերպման նոր ձևերի մշակման գործում ակտիվ դերը անցավ այն ցեղերին, որոնք դեռ զբաղվում էին ռազմական դեմոկրատիայի աստիճանի վրա: Ինչպես հայտնի է, ռազմական դեմոկրատիան տոհմային հասարակությունից դասակարգային հասարակությանն անցնելու ձևն էր: Այդ աստիճանում բարձրագույն իշխանությունը պատկանում էր ամբողջ ժողովրդի հավաքին, որին մասնակցում էր մարտունակ բնակչությունը: Թագավորական իշխանությունը դեռ ժառանգական չէր, ժողովուրդը ընտրում էր տարբեր ժամկետներով մեկ կամ մի քանի առաջնորդ-գորավարներ: Ցեղի կյանքի բոլոր հիմնական հարցերը լուծվում էին ժողովրդական հավաքում: Հունական ցեղերի քաղաքական կյանքում ռազմական դեմոկրատիայի հիմքերը նը-

կատվում են դեռ մ. թ. ա. III հազարամյակում: Հասարակական կազմակերպման այդ ձևի երկարատև գոյությունը նպաստեց նրա հաստատությունների կենսունակությունը անգամ աքայան պետություններում: Ինչպես ցույց է տալիս էպոսը, յուրաքանչյուր թագավորությունում գոյություն ունեւր ժողովրդական ժողով, ուր ազատ աքայացիները երբեմն ուժգին դիմադրում էին բասիլեաներին: Ռազմիկների ժողովը շատ մեծ նշանակություն ունեւր ոազմական արշավանքների ժամանակ, ու բասիլեաները, ինչպես պատմում է «Ելիականը» (II, 50—440), մեծ ջանքեր էին գործադրում դժգոհ զորքը իրենց ենթարկելու համար: Միայն հետզհետե դառնալով ավելի զորեղ, աքայան թագավորները ճնշում են այդ հինավուրց հիմնարկների ուժը: Զարգացած ոազմական դեմոկրատիա ունեցող դորիացիների գալստյամբ հույների քաղաքական կյանքում կրկին ուժեղացան ամբողջ ցեղի անդամների ընդհանրության սկզբունքները: Այդ հանգամանքը նպաստեց դեմոկրատական ձևվերի զարգացմանը հունական հասարակությունում և դարձավ հույների մոտ պետականության բազմազանության հիմքը մ. թ. ա. I հազարամյակում:

Նշված երևույթները մ. թ. ա. XII—IX դդ. հույների ներքին կյանքի բարդացում առաջացրեցին: Անցքերով հարուստ այդ անցման շրջանի բնույթը խոր կնիք դրեց բանավոր ձևով սերնդից սերունդ փոխանցվող հին աքայան էպոսի վրա: Անկրկնելի հոգևոր հարստություն ունեցող հունական զրուցավեպերի այս ժողովածուն մի կարևորագույն աղբյուր է: Վերլուծելով հոմերոսյան պոեմները, Ֆ. Էնգելսը սպառիչ բնութագիր տվեց այն պրոցեսներին, որոնք տեղի էին ունենում հունական հասարակությունում նախնադարյան-համայնական կարգերը դասակարգային հասարակության հիմքերով փոխարինելու շրջանում: «Այսպիսով, ի դեմս հերոսական դարաշրջանի հունական կարգերի, մենք դեռ չիովին իր ուժի մեջ ենք տեսնում հին տոհմական կազմակերպությունը, բայց և միաժամանակ՝ տեսնում ենք արդեն նրա կործանման սկիզբը. տեսնում ենք հայրական իրավունք, որի համաձայն զավակներն էին ժառանգում գույքը, մի հանգամանք, որը նպաստում էր հարստության կուտակմանը ընտանիքի ներսում և ընտանիքը դարձնում էր տոհմին հակադիր մի ուժ. գույքային տարբերությունների հակադարձ ազդեցություն կառավարման կազմակերպման վրա՝ ժառանգական ազնւրվականության ու թագավորական իշխանության առաջին սաղմերի գոյացման միջոցով. սկզբում միայն ոազմագերիների ստրկացում, որը, սակայն, արդեն հեռանկարներ էր բացում սեփական

ցեղակիցների ու մինչև անգամ տոհմակիցների ստրկացման համար. ցեղերի միջև հնում մղվող պատերազմի արդեն սկսված այլապես ու վերածումը սիստեմատիկ ավազակութեան ցամաքի ու ծովի վրա՝ անասուններ, ստրուկներ ու գանձեր գրավելու նպատակով, որը և դառնում է կանոնավոր զբաղմունք, մի խոսքով՝ հարստության իբրև բարձրագույն բարիքի փառաբանումն ու երկրրպագումը, և հին տոհմական կարգերի շարաշահումը հարստութունների կողոպուտն արդարացնելու համար»<sup>5</sup>:

Աքայան ցեղերը, որոնք այդ աստիճանը անցել էին դեռ մ. թ. ա. II հազարամյակի առաջին երեք հարյուրամյակներում, ստեղծեցին անակտորների կողմից գլխավորվող վաղ ստրկատիրական պետություն: Մ. թ. ա. II հազարամյակի վերջին երեք հարյուրամյակներում այդ մակարդակը թևակոխած մյուս հելլենական ցեղերը կարողացան գտնել պետական համակարգի այլ ձև: Շնորհիվ այն բանի, որ նրանց հասարակական կարգերում հիմնական դերը, ինչպես առաջ, խաղում էին համայնական սկզբունքները, նրանք կանգնեցին պետության կազմավորման ուղու վրա՝ թևանցելով միապետական կառավարումը: Այդպես առաջ եկան պոլիսները: Նշված ուղղության զարգացման մեջ հսկայական դեր խաղաց դորիացիների ներգաղթը: Աքայան պետությունների՝ դորիական զենքով ու շրջապատված պետական համակարգերը դադարեցին լինել հասարակական հիմնարկների զարգացումը կաշկանդող կապանքներ: Ուշագրավ է, որ արքայացիների ձեռքում պահպանված հողերում տեղի ունեցավ թագավորական իշխանության կողմից երբեմնի հետ մղված ավանդական տոհմացեղային կարգերի վառ վերածնունդը: Ատտիկայի օրինակով կարելի է պարզ նկատել, թե ինչպես մ. թ. ա. XI—IX դդ. աստիճանաբար մարում էր թագավորական իշխանության նշանակությունը, ու աճում էր ցեղային հիմնարկների ուժը:

Դորիացիների կողմից բնակեցված հողերում տեղի էր ունենում զավթիչների ցեղային կազմակերպությունը պետական համակարգի վերաճելու բարդ պրոցեսը, համակարգ, որի նպատակն էր ճնշել նվաճված բնակչությունը: Դա հատկապես ակնհայտ էր Սպարտայում: Անգամ կակոնիկայի մայրաքաղաքում ապրող դորիացիները երկար ժամանակ պահպանում էին իրենց բաժանումը

<sup>5</sup> 4. Մարտ և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր երեք հատորով, հ. 3, էջ 359—360:

երեք ցեղերի՝ ֆիլաների, որոնք բնակվում էին առանձին գյուղերով: Սպարտացիների մոտ հաստատված թագավորական իշխանության նահապետական գծերը մ. թ. ա. I հազարամյակի կեսերին շատ բանով մոտ են հերոսական էպոսի թագավորների իշխանության տարրերին:

Չնայած տեղական տարբերություններին, պատմական պրոցեսի էությունը բոլոր հելլենական հողերում մ. թ. ա. XI—IX դդ. նույնն էր՝ արտադրողական ուժերի համեմատաբար բարձր հիմքի վրա, այժմ ոչ թե առանձին շրջաններում, այլ ամենուրեք, առաջանում ու զարգանում էին դասակարգային հարաբերություններ, ու ձևավորվում էին ստրկատիրական քաղաք-պետությունների՝ պոլիսների հաստատման նախադրյալները:





## Բաժին II

### ԱՐԽԱԻԿ ՀՈՒՆԱՍՏԱՆ

Գրութիւն 4. ՀՈՒՆԱՍՏԱՆԸ  
Մ. Ք. Ա. VIII—VI ԳԴ.<sup>1</sup>

Արխաիկ Հունաստանի պատմութեան աղբյուրները համեմատաբար աղքատ են: Արժեքավոր տեղեկութիւններ են պահպանվել Հերոդոտոսի, Քուկիդիդեսի, Արիստոտելի, Դիոդորոսի, Պլուտարքոսի, Պավսանիասի աշխատութիւններում, Հեսիոդոսի պոեմներում, Էսքիլեսի, Սոֆոկլեսի, Եվրիպիդեսի ողբերգութիւններում ու հատկապես VII—VI դդ. քնարական բանաստեղծների ոտանավորներում:

Աննշան քանակութեամբ վաղ արձանագրութիւններն ու նյութական մշակույթի հուշարձանները էապես լրացնում են մեր պատկերացումները մայրցամաքային ու կղզային Հունաստանի տարածքում, ինչպես և Հոնիայում անտիկ ստրկատիրական հասարակութեան հաստատման ժամանակաշրջանի մասին: Առկա բոլոր աղբյուրների արդի շրջանում ձեռնարկված մանրակրկիտ ուսումնասիրութեան շնորհիվ հնարավորութիւն ստեղծվեց հասկանալ ինչպես Հունաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացման ընդհանուր պատկերը մ. թ. ա. VIII—VI դդ. և սահմանել դրա օրինաչափութիւնները, այնպես և պարզել Հին Հունաստանի մի շարք մասերում եղած կոնկրետ տարբերութիւնները:

<sup>1</sup> Նշված շրջանում հույներն օգտագործում էին գրի երկու համակարգ՝ հին վանկային ու մ. թ. ա. IX—VIII դդ. ձևավորված նոր այբբենական գիրը: Վերջինս ստեղծվեց հույների կողմից մի շարք նշաններով լրացրած փյունիկյան այբուբենի հիման վրա:

Մ. Թ. ա. VIII դարը Հունաստանում գրեթե ամենուրեք տոհմային ավագանու տնտեսական ու քաղաքական տիրապետության շրջան էր: Ավագանու իշխանությունը հիմնված էր հողատիրության ու ստրկության պրիմիտիվ ձևերի վրա, որոնք զարգանում էին պետության հաստատման վաղ փուլերում:

Սոցիալ-տնտեսական տեսակետից, մ. Թ. ա. VIII—VI դարերը եղան տոհմային ավագանու կողմից շահագործվող պրիմիտիվ համայնքներից դեպի ստրկատիրության ավելի զարգացած ձևերը, իսկ հետո նաև ստրկատիրական քաղաք-պետությանը՝ պոլիսին անցնելու ժամանակաշրջան:

Ցեղը (ֆիլան) այդ շրջանում դեռ շարունակում էր խաղալ կարևոր դեր. այն աստիճանաբար միավորում էր բոլոր տոհմերն ու փրատրիաները մի ընդհանուր համայնքի մեջ, որը, որպես կանոն, գլխավորում էր տոհմական ավագանին: Այդ մասին են վկայում գույքը ժառանգելու վերաբերյալ եղած օրենքները՝ եթե որևէ անվանի ընտանիքում չկային տղամարդիկ, ապա տոհմապետի ավագ դստերն ամուսնացնում էին տոհմի ավագ անդամներից մեկի հետ՝ վերջինիս ժամանակավոր օգտագործմանը հանձնելով նաև ընտանիքի հողաբաժինը: Այդ ամուսնությունից ծնված ավագ որդին՝ դառնալով չափահաս, անցնում էր մոր գծով իր պապի ընտանիքն ու ստանում էր նրա անունը, իսկ հողաբաժինը հանձնվում էր նրան՝ որպես սեփականություն: Այսպես պահպանվում էր հանգչող տոհմը:

Ֆիլան, որի գլուխ նույնպես կանգնած էր տոհմակցն ավագանին, կայացնում էր ամբողջ համայնքի շահերին վերաբերող բոլոր կարևոր որոշումները: Տվյալ ֆիլային պատկանող տոհմերի (այսինքն ցեղային համայնքի) արու բնակչությունը կազմում էր այդ համայնքի հիմնական զինվորական ուժը: Այս պատճառով տղամարդկանց ռազմական կազմակերպության մարտունակության պահպանումն ունեւր հատկապես մեծ նշանակություն: Այսպես, Կրետեում երկար ժամանակ գոյություն ունեին հատուկ տներ տղամարդկանց համար, ուր նրանք գիշերում էին, ինչպես նաև ֆիլայի անդամների հասարակական ճաշկերույթները: Հունական ուրոջ համայնքներում տղամարդկանց համատեղ մնվելը պարտադիր էր: Ցեղի տղամարդկանց կոլեկտիվը իրավունք ունեւր ընդունել նոր անգամներ տոհմի, ֆրատրիայի ու ֆիլայի կազմի մեջ: Սովորաբար հայրը ներկայացնում էր զինվորական տարիքին հասած արդիներին իր ֆիլայի ու ֆրատրիայի (այսինքն «եղբայրության») ան-

դամներին, որոնք սերտորեն կապված էին տոհմային ավագանու կրոնական հավատալիքների հետ: Այդ ավագանին գլխավորում էր արենակցության վրա հիմնված տոհմը: Ընդունելութունը ֆրատրիայի, այսինքն յուրաքանչյուր համայնքի քաղաքացիական կոլեկտիվի մեջ, ուղեկցվում էր պատանիների ֆիզիկական քննությամբ, որից հետո տեղի էր ունենում ամբողջ քաղաքացիական կոլեկտիվի խնջույքը՝ քննությանը դիմացած երիտասարդների հետ միասին:

Յուրաքանչյուր ազատ մարդ, որը արենակցությամբ կապված էր տոհմային համայնական կազմակերպությունների հետ, սկզբում օգտվում էր բոլոր իրավունքներից: Տոհմային կազմակերպությունների մեջ շատնող մարդը դառնում էր «օրենքից դուրս» անձ: Համայնքի անդամի սնանկացումը, իր հողաբաժինը կորցնելը այն ժամանակ հավասարազոր էին տոհմից արտաքսվելուն:

Աստիճանաբար անվանի տոհմը զավթում էր տոհմական սեփականությունը՝ իր ձեռքում կուտակելով աղքատացած համայնականների հողերը՝ այն ժամանակվա հիմնական հարստությունը: Ավագանին հարստանում էր նաև ծովահենային արշավանքների միջոցով: Այդ արշավանքները գլխավորում էին անվանի առաջնորդները, որոնք ստանում էին գրավված ավարի առյուծի բաժինը, այդ թվում և ստրուկներ: Պատերազմը սնանկացնելով մեկին՝ հարբստացնում էր մյուսին: Տոհմական ավագանու աստիճանական հարբստացման ու աղքատացած անդամների սնանկացման հետևանքով վերջիններս ստրկացվում էին, պարտքերի դիմաց վաճառվում էին ստրկության:

Ավագանու կրոնական պաշտամունքները՝ որպես շարքային համայնականների միավորման կենտրոններ, օգնում էին հարուստ անվանի տոհմերին գաղափարապես հիմնավորելու իրենց տիրապետությունը, որովհետև միայն անվանի տոհմերի ներկայացուցիչներն էին կատարում քրմերի պարտականություններ տոհմերում, ֆրատրիաներում ու ֆիլաներում: Տոհմային միությունների աղքատացած անդամներն ու տոհմի տարածքում ապրող ազատ բրնակչությունը պարտավոր էին կոտորեն ենթարկվելու բոլոր օրենքներին, որոնք ավագանին իբրև թե ստացել էր աստվածներից՝ վերջիններիս հետ անմիջականորեն շփվելու շնորհիվ: Այդ իրավունքը թուլատրում էր գործել ցանկացած շարաշահում ի վնաս հողագործների՝ տոհմային համայնքի հիմնական աշխատավոր բրնակչության: Տոհմային ավագանու իշխանությունը հատկապես խստամտում էր սոցիալական անհավասարության աճի հետևանքով՝ հողագործական համայնքների ստորին խավերում եղած տոհմային

կապերի կազմալուծմանը, արհեստների ու առևտրի զարգացմանը զուգընթաց: Դրամական փոխանակության տարածման շնորհիվ ավելի ուժեղացավ հողագործների սնանկացումը, որովհետև հիմնական դրամական հարստությունները կուտակվում էին ավագանու ձեռքում: Դատարանը, իրավունքը նույնպես կազմում էին տոհմային ավագանու արտոնությունը: Կրոնական հավատալիքները սրբազործում էին ամեն կարգի կամայականություն՝ հողի զավթում աղքատացած ազգակիցներից, վերջիններիս վաճառքը ստրկության պարտքերի դիմաց, հողային հիպոթեկի (հողերի գրավադրում) զարգացում, անհնազանդ մարդկանց նկատմամբ դատական ու կրթական հաշվեհարդարի ձեռնարկում:

Քանի որ ընտանեկան համայնքները արևնակցությամբ կապված առանձին տնտեսական միավորներ էին, ուժի մեջ էր մտնում տոհմի պատասխանատվության օրենքը, այսինքն՝ համայնքի հետ կապված անձի անգամ ամենաշնչին հանցանքի համար պատասխանատու էին տոհմային համայնքի բոլոր անդամները՝ և ոչ միայն կենդանի, այլև մահացած: Ով կենդանի էր, նրան արտաքսում էին համայնքի սահմաններից, իսկ մահացածների ոսկորները դուրս էին նետում գերեզմաններից: Այդ սովորույթի օգտագործումը տոհմային ավագանու կողմից մի քաղաքական բռնություն էր, որի նպատակն էր հայրենիքից արտաքսել անցանկալի ընտանիքներին ու անգամ տոհմերին:

Այս պատճառով հետզհետե պակասում էր կառավարող տոհմերի քանակը: Սոցիալական շերտավորման ընթացքում աղքատացած ավագանին հեռացվում էր իշխանությունից: Տոհմային կապերը թուլանում էին: Տոհմային ավագանին զավթում էր իշխանության տոհմային մարմինները, որոնք աստիճանաբար դառնում էին բռնության գործիքներ ոչ միայն նվաճված բնակչության, այլև սեփական համայնքի անդամների նկատմամբ, մի բան, որ կասեցնում էր հասարակության արտադրողական ուժերի զարգացումը: Կառավարող անվանի տոհմերի կողմից գործադրած այդ տնտեսական ու քաղաքական բռնության խստացմանն ու շարքային հողագործների պարտքերի աճին զուգընթաց ավելի էր սաստկանում ժողովրդի ատելությունը տիրող վերնախավի հանդեպ:

Բնակչության միախառնման պրոցեսը, որը դուրս էր գալիս տոհմային ֆիլաների սահմաններից, նորաբնակների գալուստը արագացնում էին տոհմային ավանդույթների հետ շկապված նոր հարաբերությունների աճը: Աշխատանքի, արհեստների ու առևտրի բաժանման հետևանքով բնակչությունը դասակարգվում էր ոչ թե ըստ նրա տոհմային պատկանելության, այլ ըստ հիմնական ըզ-

բաղմունքների հատկանիշի: Տոհմային հաստատությունները ոչ մի օգնություն չէին տրամադրում ժողովրդին, ավելին՝ նրանք ուղղված էին ժողովրդի դեմ ու սպասարկում էին սոսկ մի քանի անվանի տոհմերի իշխող վերնախավի շահերը: Սկսվեց անցումը տոհմային կարգերից դեպի դասակարգային հասարակությունը, թեև վաղ դասակարգային կազմավորումներում դեռ երկար ժամանակ որպես վերապրուկներ շարունակում էին գոյատևել տոհմային հիմնարկները, որոնք դարձան այս կամ այն երկրի հողագործական բնակչության հիմնական զանգվածի շահագործման ու կեղեքման գործիքներ:

ԲԵՌՎՏԻԱՅԻ ՍՈՑԻԱԼ-ՏԵՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԸՍՏ ՀԵՍԻՌՈՍԻ  
«ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՕՐԵՐ» ՊՈՆՄԻ

Տոհմային ավագանուց ժողովրդի աճող դժգոհության պրոցեսը լուսաբանված է Հեսիոդոսի հիանալի ստեղծագործության մեջ: Հեսիոդոսը բեռվտիացի հողագործ էր, որը մ. թ. ա. VIII—VII դդ. սահմանագծին ստեղծեց «Աշխատանք և օրեր» էպիկական պոեմը՝ հողագործության վրա հիմնված համայնքների սոցիալ-տնտեսական կարգերի ուսումնասիրության համար մեր հիմնական աղբյուրը:

Այս պոեմը գրելու հիմնական առիթը եղավ Հեսիոդոսի գծտությունը իր եղբայր Պերսեսի հետ՝ հանուն հայրական ունեցվածքի: Հոր մահվանից հետո հողաբաժինն ու հայրական գույքը բաժանվեց երկու եղբայրների միջև: Պերսեսը, վատնելով իր ունեցվածքը, դատ սկսեց ժառանգությունը սխալ բաժանելու պատրվակով ու, շահելով պրոցեսը, զավթեց եղբոր ունեցվածքի զգալի մասը:

Պոեմը բաղկացած է երկու մասից: Առաջինում Հեսիոդոսը, քննարկելով իր եղբոր հետ ունեցած դատը որպես Բեռվտիայի համար մի սովորական երևույթ, իր անձնական դժբախտության օրինակով փորձում է սովորեցնել հողագործին, թե փնչպես պետք է ապրել չբավոր շղառնալու համար: Նրա պոեմի երկրորդ մասը հողագործական օրացույց է, գյուղատնտեսության ու ծովագնացության վերաբերյալ հողագործի համար օգտակար խորհուրդների մի ժողովածու, որը կազմված է տարվա տարբեր օրերին ու ժամանակներին համապատասխան:

Հեսիոդոսի պոեմը Բեռվտիայի հողագործական համայնքներում սոցիալական շերտավորման խորացած պրոցեսի, արտադրամիջոցների նկատմամբ մասնավոր սեփականության զարգացման մի վառ վկայություն է: Տոհմային ավագանու ձեռքում հողային սեփականության կենտրոնացման արդյունքը եղավ հողաբաժին-

Ներքի մանրատումն ու գյուղացիների աղքատացումը: Վերջիններս ստիպված էին դիմելու հարուստ ու անվանի հողատերերից փոխառություններ վերցնելու միջոցին: Անարդարացի դատավճուխ բողոք հետևանքները կրած Հեսիոդոսը կտրուկ կերպով հանդես է գալիս երկրի աշխատավոր հողագործական բնակչությանը կեղեքողներին դեմ:

Այժմ ես մի առակ կասեմ արքաներին խելամիտ,  
Քե ինչ ասաց հզոր բազեն խեղճ սոխակին խարտաշյա,  
Երբ տանում էր նա թշվառին, բարձր ամպերում թռչելով,  
Խեղճ սոխակը ճվճվում էր՝ մագիլներից խոցոտված,  
Մինչդեռ բազեն նրա գլխին մի այսպիսի ճառ ասաց—  
— «Ի՞նչ ես, անբախտ, դու ճղճղում, քեզինք ուժեղ եմ ես շատ,  
Ինչ էլ երդես՝ քեզ կտանեմ, որտեղ ինքս ուզենամ.  
Ուզենամ՝ քեզ կուտեմ իսկույն, ուզենամ՝ քեզ կարձակեմ.  
Անմիտ է նա, ով շափվում է իրենից ուժեղ մարդու հետ,  
Նա շի հաղթի, կավելացնի ստորացման լոկ տանջանք»:  
Ահա թե ինչ ասաց բազեն—երկաթաթև, սրբնթաց:

(Հեսիոդոս. «Աշխատանք և օրեր», թարգմ. Ս. Տարոնցու)

Վառ կերպով ցույց տալով հողագործների իրավազուրկ վիճակը ավագանու դատարանում, բանաստեղծը մերկացնում է «արքաների», «ընծաներ լափողների» ծախվածությունն ու կաշառակերությունը, մարդկանց, որոնք մոռացել են արդարության մասին, այն Արդարության, որը Զևսի հետ միասին պետք է կառավարեր աշխարհը: Բանաստեղծը հանդես է գալիս արդարության այդ աստվածուհու անունից ու պաշտպանում հողագործների շահերը, որոնց անխոնջ ազնվությունն ու աշխատասիրությունը նա գովերգում է իր պոեմում: Դրանում է Հեսիոդոսի ստեղծագործության հսկայական առաջադեմ նշանակությունն ու նրա պոեմի շմեռնող տւժը:

Հեսիոդոսի ժամանակ արոտավայրերն ու անտառները դեռ համայնքի սեփականությունն էին, սակայն վարելահողն արդեն դարձել էր գյուղացիների մասնավոր սեփականություն՝ այն օտարելու իրավունքով: Դրա մասին է վկայում այն փաստը, որ մինչ այդ Կումեոում (Հարավային Իտալիա) ապրող Հեսիոդոսի հայրը տեղափոխվեց Ասկրե լեռնային փոքրիկ բնակավայրն ու այստեղ ձեռք բերեց հողամաս:

Բանաստեղծի խրատները՝ ուղղված հողագործներին, քարոզում են շափավորություն ու աշխատասիրություն՝ որպես շատ թեքիչ ապահովված գոյության անհրաժեշտ պայման: Հողաբաժինների հետագա մանրատումը կանխելու համար հողագործները, հանձնարարում է Հեսիոդոսը, պետք է ունենան միայն մեկ որդի, որը և

կժառանգի ամբողջ հողամասը: Դրուեթյան բարելավման այլ ուղիները Հեխոդոսը՝ Բեովտիայի այդ միջին հողատերը, չի տեսնում:

Թեև բանաստեղծի ուշադրությունը հիմնականում կենտրոնացված է բեովտիական հողագործների կյանքի նկարագրության վրա, սակայն նա խոսում է նաև մասնագետ-արհեստավորների առկայության ու անգամ նրանց միջև եղած մրցակցության մասին:

Նախանձում է բրուտը՝ բրուտին ու հյուսնը՝ հյուսնին,  
Իսկ ազքատը աղքատի, երգիչը՝ երգչի հետ մրցում են ջանասեր:

Հողագործներն արդեն պետք է մտածեին փրենց մթերքների մի մասը իրացնելու, այն իրենց համար պետքական, առաջին անհրաժեշտության առարկաների, հատկապես աշխատանքի գործիքների հետ փոխանակելու մասին: Նրանք արդեն զգում էին մետաղի, հատկապես երկաթի և աշխատանքի երկաթյա գործիքների սուր կարիք: Սակայն այդ առարկաները կարելի էր ձեռք բերել միայն փոխանակման միջոցով: Արտադրանքի մի մասի իրացման անհրաժեշտությունը հողագործներին հաճախ հարկադրում էր դիմել ծովագնացության: Մովագնացությունն այն ժամանակ դեռ համարվում էր վտանգավոր ձեռնարկում, ու միայն ծայրահեղ կարիքը կարող էր ստիպել մարդկանց երթեկեկելու ծովով: Հեխոդոսը, հստակ պատկերելով ծովային առևտրի անհրաժեշտությունը, մանրամասնորեն նշում է նավարկության համար բարենպաստ ժամանակը, բացատրում է, թե ինչպես պետք է որոշել ուղղությունը աստղերով և այլն:

Հեխոդոսը պատմում է մի տնտեսության մասին, ուր գյուղացին ունի մեկ զույգ եզ, մի քանի էջ ու ջորի, երկու գութան, և որոշում է տարվա համար հացի ու անասնակերի անհրաժեշտ պաշարը: Այդ հողագործն տնի մասնակցի նավակ՝ ապրանքներ փոխադրելու համար ու օժանդակ բանվորական ուժ, այն է՝ զնված ստրկուհի, վարի ժամանակ օգտագործում է վարձու աշխատող, տղա-ստրուկ՝ ցանքի աշխատանքներում ու բատրակուհի՝ բերքահավաքի ժամանակ: Եվ թեև պոեմում գյուղացիների սնանկացումը ցույց է տրված բավական պարզ ձևով, ինքը՝ բանաստեղծը, սնանկության պատճառը համարում է հողագործի մոտ անգործության ու դատամուլության հանդեպ եղած հակումը: Այնուամենայնիվ բանաստեղծը ընդունում է, որ հողագործները այլևս չեն կարող «կուշտ ուտել», այսինքն՝ բերքի պաշարը չի բավականացնում մինչև զարոճ:

Հողի մասնավոր սեփականության աճը, գյուղացիների շերտավորման պրոցեսը, տնտեսական տնտեսությունների առկայությունը, տնտեսություններ, ուր կիրառվում էր ստրուկների ու բատրակների

րի աշխատանքը, հողաբաժիններ գնելու հնարավորութունը՝ այս ամենը բնութագրում է բեռվտիական հողագործների սոցիալական շերտավորման պրոցեսը: Այդ պրոցեսի ընթացքում հողագրկվում էին չբավորներն ու բատրակները: Նրանք այժմ աշխատում էին հարուստ հարևանների մոտ, աճում էին գյուղացիների պարտքերը, աճում էր վաշխառութունը, խորտակվում էին մասնավոր սեփականություն զարգացման ու հարուստ հողատերերի կամայականությունների աճի հետ անհամատեղելի հին համայնական կարգերը: Իրար հետ սերտորեն կապված այդ երևույթները պոեմում արտահայտված են հուսահատության ու հոռետեսության խոսքերով: Ոսկե դարը մնաց հեռվում: Անխուսափելիորեն վրա էր հասնում նոր դարը, երկաթի ու արյան դարը, որի ժամանակ կործանվում էր հավասարության, մարդու կողմից մարդու հանդեպ հարգանքի վրա հիմնված համայնական կարգը:

Միայն այնտեղ, ասում է Հեսիոդոսը, ուր տիրում էր արդար դատ, հասարակ ժողովուրդը բարգավաճում է, միայն այնտեղ շեն լինում պատերազմներ: Նա հույս ունի ներշնչել այդ մտքերը նախ և առաջ անօրինություններ գործող ավագանուն: Հեսիոդոսին օտար է ավելի ուշ շրջանի ստրկատիրոջ հոգեբանությունը: Պոեմում աշխատանքը ազատի համար դեռևս պատվավոր գործ է:

Աստվածներ և մարդիկ իրավամբ են զայրանում  
Նրանց վրա, ովքեր որ բոռի նման ձրիակեր  
Պարապ թրև են գալիս — աչքն ուրիշի ձեռքերին,  
Բոռ, որ սնվում է հաշվին մեղունների ջանասեր:

Թե սիրում ես աշխատել՝ դու կլինես սիրելի  
Աստվածների համար և շրջապատի մարդկանց ողջ,  
Մինչ զզվելի կդառնաս դատարկապորտ մարդկանց դու:  
Աշխատանքի մեջ չկա ոչ մի ամոթ ու պարսավ,  
Պարապությունը սակայն ամոթալի է ինքնին:

(«Աշխատանք և օրեր»)

Այս հիանալի տողերում Հեսիոդոսը ոչ միայն արդարացնում է աշխատանքն ու աշխատանքի ստեղծագործ ուժը, այլ նաև մարտահրավեր է հղում տոհմային ավագանուն, որը «ջանասեր մեղունների» հաշվին ապրող բոռի նման սնվում է ուրիշների աշխատանքով:

Հեսիոդոսի պոեմը, հստակորեն բացահայտելով տոհմային ազնվականության տնտեսական ու քաղաքական հզորացումը, չի տալիս, սակայն, Բեռվտիայի կյանքի լրիվ պատկերը: Հելիկոնի լեռներին հարող շրջանը զբաղեցված էր մանրգյուղացիական տրեստեսություններով: Բայց միաժամանակ Օրբոմենոսին ու բեռվ-



տիական Քեբեին հարևան արգավանդ հովիտների երբեմնի նվաճված հողագործական բնակչությունն արդեն ստրկացվել էր, իսկ նրա հողերը բաժանվել էին վիճակների ու զավթվել անվանի տոհմերի կողմից: Նման հարաբերություններն այն ժամանակ բնորոշ էին շատ մարզերի: Նույնպիսի վիճակում էր գտնվում Արգոլիսի տեղական հողագործական բնակչությունը՝ գիմնետները: Միկիոնում ստրկացված գյուղացիներին անվանում էին կորինտոսներ, Քեսալիայում՝ պենեստներ, արևելյան Լոկրիսում՝ օլկիտներ, Կրետետում՝ մնոիտներ և այլն: Նման տնտեսական հարաբերություններ գոյություն ունեին նաև փոքրասիական հունական քաղաքներում:

Տոհմային ազնվականության տիրապետության տակ ընկան նաև մի շարք հողագործական ու լեռնային շրջանների քիչ արգավանդ վայրերը արտամղված ցեղերը: Սպարտայում այդ կարգի մարդկանց անվանում էին պերիոլկներ, այսինքն՝ նվաճող դորիացիների կողմից այժմ գրավված բերրի հովիտների «շուրջը ապրողներ»: Պասպանելով անձնական ազատությունը, պերիոլկները, սակայն, տարբեր ձևի կախման մեջ էին գտնվում կառավարող ավագանուց, իսկ Սպարտայում նրանք ենթակա էին երկու սպարտական թագավորներին:

#### ԱՐՉԵՍՏԻ ՈՒ ԱՌԵՎՏՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ: ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԱՃԸ

Հունաստանին բնորոշ էր տարբեր մարզերի անհամաչափ զարգացման պրոցեսը: Դա պարզ նկատվում էր՝ սկսած արդեն մ. թ. ա. VIII և հատկապես VII դարից: Առաջավոր հունական համայնքների կյանքում կարևոր երևույթներ էին դարձել արհեստների հետագա առանձնացումը հողագործությունից, քաղաքների ու քաղաքային կյանքի, ինչպես և ստրկության աճը, որի հիմքն էր ստրկավաճառությունը: Վերջինս հատկապես զարգանում էր քաղաքներում:

Այս երևույթները նախապատրաստված էին նախորդ ժամանակաշրջանի զարգացումով:

Երկաթյա կացիների տարածումը թեթևացրեց անտառահատումը: Տարբեր տեսակի նոր աշխատանքային գործիքների հանդես գալու շնորհիվ ոչ միայն ընդլայնվեց արտադրությունը. այլև արմատական փոփոխություններ տեղի տվեցան աշխատանքային պրոցեսի կազմակերպման մեջ: Դա արտահայտվեց ինչպև գուղատնտեսության, այնպես էլ արհեստների բնագավառում: Աշխատանքի երկաթյա գործիքների տարածումն ու նրանց քաղմագանությունը նպաստեցին վարելահողերի ընդլայնմանը, լինչպես նաև ճահճոտ վայրերը շորացնելու նպատակով ջրանցքների անցկացմա-

նր: Հողագործները սկսեցին ավելի հաճախ կիրառել երկաթեա խոփեր ունեցող փութաններ, երկաթյա քլոմագներ, բրիչներ, մանգաղներ, բահեր: Դա լավացնում էր հողի մշակման որակը և բարձրացնում բերքատվությունը: Բացի դրանից, ձիթենու մշակման գործում, խաղողագործության մեջ սկսեցին գործածել այգու մկրատներ:

Դարբինների մոտ երևան եկան մուրճեր, երկաթյա սալեր, ունելիներ, գայլիկոներ ու դարբնոցային փուքսեր: Ատաղձագործներն օգտագործում էին տարբեր տեսակի սղոցներ, կացիններ, դուրեր, կոշկակարներ՝ սովորական դանակներից ու մկրատներից բացի հատուկ կիսակլոր դանակներ՝ մուկկերը աբազ ձևերու համար, ինչպես նաև ռսկրե ասեղներին փոխարինած կարի երկաթյա ասեղներ:

Աշխատանքի երկաթյա գործիքների օգնությամբ հնարավոր եղավ ճանապարհներ անցկացնել լեռներում, կառուցել կամուրջներ, ջրմուղ, ինչպես և համեմատաբար մեծ տարողություն ու ավելի կատարյալ ձև ունեցող նավեր: Երկաթյա տեխնիկայի դարգացումը հեշտացրեց կարծր տեսակների քարի մշակումը: Կարծր սալաքարերից սկսեցին կառուցել քաղաքների պաշտպանական պարիսպներ:

Մետաղահալ վառարանների կատարելագործման շնորհիվ հայտնագործվեց ավելի բարձր ջերմության պայմաններում ձուլվածք գողելու ու մնամեջ ձուլման եղանակ, որն իր հերթին հետագայում նպաստեց մետաղածուլության զարգացմանն ու միաժամանակ բրոնզե քանդակագործության ծաղկմանը:

Երկաթյա զենքի արտադրությունը (սրերի, դաշույնների, նիզակների ու նետերի ծայրապանակների, երկաթյա զրահների և սաղավարտների) հեղաշրջում առաջացրեց ռազմական տեխնիկայում: Մ. թ. ա. VII և հատկապես VI դարում ռազմի դաշտում վրճերող ուժ է դառնում ծանր զինված մարտիկների (հուպիտների) հետեակը: Ավագանու մենամարտերն ու ձիակառքերով մարտերը կորցրեցին իրենց նշանակությունը:

Համայնքի ներսում տնային արհեստի զարգացման պայմաններում ազատ գրուղացիությունը ստիպված էր զուգակցել գյուղատնտեսական զբաղմունքները ոչ բարդ արհեստավորական իրեր տանը պատրաստելու հետ: Տոհմային ավագանու կողմից համայնական հողերը գրավելու, պարտքերի դիմաց գրուղացիներին ստրկացնելու պրոցեսի հետևանքով շինականների մի մասը փախչում էր քաղաքներ ու այստեղ զբաղվում արհեստով:

Արհեստի անջատումը հողագործությունից նշանակում էր ան-

ցում դեպի ավելի լայն փոխանակումը, դեպի շուկայի համար գործող արտադրության զարգացումը: Մ. թ. ա. VI դարում արդեն զարգացել էր աշխատանքի հասարակական բաժանումը արհեստավորմետաղագործների միջև. նրանք մասնագիտանում էին շինվածքի մի որևէ տեսակի պատրաստման ուղղությամբ: Առանձնանում են մանգաղներ, դանակներ, սաղավարտներ, սրեր, զրահներ, նետեր, նիզակներ պատրաստող վարպետներ, մեխ արտադրող վարպետներ, ոսկերիչներ և այլն:

Աշխատանքի երկաթյա գործիքների տարածումը նպաստեց արտադրվող ապրանքների ընդհանուր քանակի ավելացմանը և թույլ տվեց ավելցուկը ապրանքային փոխանակման կարգով արտահանել երկրից: Այդ կապակցությամբ աճում էր արհեստով՝ որպես հիմնական գոյամիջոցով զբաղվող մարդկանց թիվը: Քաղաքային արհեստավորների մոտ հանդես են գալիս ստրուկներ, որոնց վաճառականները բերում էին Հունաստանի սահմանամերձ շրջաններին:

Այսպիսով, ստրուկ-պարտապանների աշխատանքից օգտվող հողատեր ազնվականության հետ մեկտեղ, քաղաքներում աստիճանաբար առանձնանում են վաճառականներ ու արհեստավորներ, որոնք առևտրական հարաբերությունների զարգացման ընթացքում ևս ձեռք են բերում այլացեղ ստրուկներ: Ապրանքների առուծախի գործում մասնագիտացող վաճառականների ու փոքր արհեստավորական արհեստանոցների տերերի հանդես գալու հետևանքով ձևավորվում է մարդկանց մի նոր խումբ: Այդ մարդիկ չէին մասնակցում աշխատանքային պրոցեսին, միայն շահագործում էին ստրուկներին: Ձևավորվում է նաև ազատ արհեստավորների խավը: Ունեւորների այդ նոր խավի ներկայացուցիչներն ընդհարվում են ավագանու հողատեր վերնախավի հետ, վերնախավ, որը պաշտպանում էր և՛ իր հողատիրական շահերը, և՛ երկրում իր քաղաքական հիշխանությունը հաստատելու իրավունքը: Քաղաքային ստրկատերերի նոր խավը հետզհետե կուտակում էր հարստություններ. դա կապված էր արտադրամիջոցների նկատմամբ մասնավոր սեփականության ու ստրկության հետագա զարգացման հետ: Այսպիսով, քաղաքային և գյուղական տնտեսության միջև այդ ժամանակաշրջանում եղած հակասությունը ամրապնդվում էր նաև ստրկատիրության ձևերի տարբերության շնորհիվ՝ մի դեպքում ստրուկները գնվում էին, մյուս դեպքում հողագործները ստրկացվում էին ուղմական զավթումի կամ պարտքերը չվճարելու հիման վրա: Քաղաքային տնտեսության մեջ ազատ արհեստն ու ազատ արհեստավորների նախաձեռնությունը խաղում էին խոշոր դեր, ստրուկների աշ-

խատանքը քաղաքներում դեռ չէր դարձել ազատ արհեստի լուրջ մրցակիցը:

Այդ շրջանում տոհմային ավագանու ու առևտրի և արհեստի հետ կապված ստրկատերերի կազմավորվող խավի միջև տնդի ունեցող բախումների սրումը հունական համայնքներում արտահայտվեց այդ երկու խմբերի տնտեսական ու քաղաքական շահերի տարբերություն մեջ: Նոր ստրկատերերը, հենվելով քաղաքային շրջավորության օժանդակության վրա, շահագրգռված էին արհեստների, առևտրի ու դրամական տնտեսության զարգացմամբ ու այս պատճառով նաև օտար երկրներից ստրուկներ ստանալով, հաց, հումք ու անդամթերք բերելով: Քաղաքական այն իշխանությունը, որի պայմաններում բոլոր զինվորական, դատական, օրենսդրական ու կրոնական լիազորությունները կենտրոնացված էին տոհմային ազնվականության ձեռքում, այլևս ի վիճակի չէր բավարարելու բռնակշռության նոր գործարար խավերի պահանջմունքները: Այդ մարդիկ պահանջում էին իրենց մասնակից դարձնել իշխանությանն ու հաստատել կառավարման ավելի դեմոկրատական ձևեր, որոնք կապահովեին առավել բարենպաստ պայմաններ երկրի հետագա տնտեսական բարգավաճման համար:

Տոհմային ազնվականությունը թշնամաբար էր տրամադրված այդ պահանջների հանդեպ, որովհետև երկրի՝ տոհմային ֆիլենների, ֆրատրիանների ու տոհմերի վրա հին, իր դարն ապրող բաժանման պահպանումը հանդիսանում էր այդ ազնվականության իշխանության գոյատևման պայմանն ու նրա ռազմական ու կրոնական ղեկավարության հիմքը: Երկու ստրկատիրական խմբավորումների ընդհարումը թեև ատր էր, բայց չէր կրում անհաշտ քնույթ: Ըստ էության նոր տիպի ստրկատերերը ձգտում էին հավասարվել ստրկատիրական ավագանու հետ ու կանգնել նրա կողքին իշխանության ղեկի մոտ: Սակայն նրանք այդ բանին կարող էին հասնել միայն դեռևս պահպանվող և արհեստի ու առևտրի հետագա զարգացումը կաշկանդող տոհմային հիմնարկների վերացման ճանապարհով: Այլ կերպ ասած, հին ու նոր ստրկատերերը կարող էին միավորվել միայն ավագանու՝ իր տոհմային արտոնություններից հրաժարվելու դեպքում, միայն այն դեպքում, երբ հարստությունը կձանաչվեր մարդու արժանիքների, ինչպես և իշխանության նրկատմամբ նրա իրավունքի միակ ու հիմնական շահանիշը: Առաջին գծի վրա հարստության հանդես գալու հետևանքով տոհմային ավագանին վերածվեց գույքային հողատիրական ազնվականության, որը կապվեց առևտրական ու արհեստավորական վերնախավի հետ ստրկատիրական ընդհանուր շահերով:

Առևտրի ու արհեստների զարգացման մեջ հաջորդ քայլը եղավ համահունկան շուկաների առաջացումը սկզբում տաճարների տարածքում, իսկ հետո նաև՝ քաղաքներում: Այդ նույն ժամանակ հանդես է գալիս նաև դրամը: Հերոդոտոսը դրամի հայտնագործումը վերագրում է Փոքր Ասիայի լյուդիացիներին, սակայն դրա արագ զարգացումն ու տարածումը, անշուշտ, կապված էր Հունիայի հունական քաղաքների նախաձեռնությունների հետ: Լյուդիան հարուստ էր ոսկու և արծաթի բնական խառնուրդով, որը կոչվում էր էլեկտրոն: Փոքրասիական հունական դրամը հատվում էր այդ համաձուլվածքից:

Մ. թ. ա. VII դ. սկսում են դրամ հատել նաև Հունաստանի քաղաքներում: Ըստ ավանդության, Արգոսի թագավոր Ֆիդոնը Հունաստանում առաջինը սկսեց դրամ հատել ու սահմանեց չափ և կշիռներ: Սակայն, հավանաբար, դրամահատումը Ֆիդոնի օրոք սկզբում հանդես եկավ ոչ թե Արգոսում, այլ էֆինա կղզում, որն այդ ժամանակ կախում ուներ Արգոսից: Մոտավորապես նույն ժամանակ սկսեցին դրամ հատել Եվբեա կղզու քաղաքները՝ Քաղկիսն ու Երեստրիան: Դրամը հատվում էր արծաթից: Դրամի ու դրամական փոխանակության զարգացման կապակցությամբ ստրկատերերը ամեն կերպ ձգտում էին մեծացնել ազնիվ մետաղի հանույթը: Արծաթի հանքերում շահագործումը ընդունում էր հատկապես կոպիտ ու դաժան ձևեր:

Հակասությունների տեժեղացումն արտահայտվում էր նախ և առաջ դասակարգային պայքարի սրման մեջ: Այդ պայքարի հիմնական շարժիչ ուժը դառնում է գյուղացիությունը, որն այսուհետև չէր կարող հաշտվել ավագանու բռնությունների ու կամայականությունների հետ: Հին արիստոկրատիայի դեմ ուղղված պայքարը գլխավորեց քաղաքային նոր ստրկատիրական ազնվականությունը, գլխավորեցին «նոր հարուստները», ինչպես նրանց անվանում են հին հեղինակները: Արտադրամիջոցներից զրկված քաղաքային շքավորությունը ձգտում էր մերտադարձնել իր հողաբաժինները, որոնք մի ժամանակ զավթել էր ավագանին, ու ակտիվորեն օգնում էր գյուղացիներին:

Ժողովրդի (դեմոսի) պայքարն ավագանու դեմ սերտորեն կապված էր հունական քաղաք-պետությունների (պոլիսների) ձևավորման և Միջերկրական ու Էգեյան ծովերի կղզիների և ծովափի, մի փոքր ավելի ուշ նաև Սև ծովի ափի գաղութարևակեցման հետ:

Փոքր Ասիայում հատկապես աչքի էին ընկնում այնպիսի տրեստեական կենտրոններ, ինչպիսիք էին՝ Միլետոսը, Եփեսոսն ու Կոլոփոնը, Հունաստանում՝ Քաղկիսն ու Երեստրիան (Եվբեա կղզ-

գում), էգինա կղզին, Աիկիոնը, իսկ Կորնթոսյան պարանոցում՝ Կորնթոսն ու Մեգարան: Արգոսի հզորությունը երկարատև չէր: Տիրոն թագավորի մահից հետո Սպարտան սահմանափակեց Արգոսի տիրույթները Պելոպոնեսում՝ թողնելով Արգոսին միայն Արգոլիսը: Մ. թ. ա. VI դ. սկզբից գնալով ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում Աթենքը:

#### Մ. թ. ա. VIII—VI դդ. ՀՈՒՆԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԱՑՈՒՄԸ

Գուլքային ու սոցիալական անհավասարության աճը, շքավորների հողազրկումը ուղեկցվում էին քաղաքներում դրափց բերված ստրուկների քանակի ռճով ու աբհետի մեջ նրանց դերի մեծացումով: Դա սահմանափակում էր հողազուրկ շքավորության աշխատանքի կիրառման հնարավորությունները, որովհետև պոլիսն արդեն ի վիճակի չէր տրամադրել աշխատանք ու կյանքի միջոցներ քնակչության աճող զանգվածին: Արտաքին առևտուրն ու քաղաքների կողմից զաղութարնակեցման նպատակով ձեռնարկված էքսպանսիան զգալի չափով փոխհատուցում էին արտադրության թույլ աճը տեխնիկայի դանդաղ զարգացման պայմաններում:

Կ. Մարքսը, քննարկելով հունական զաղութարնակեցման հարցը, գրում է. «Հին պետություններում՝ Հունաստանում ու Հռոմում, հարկադրյալ արտագաղթը, որը պարբերաբար ընդունում էր գաղթօջախներ հիմնելու բնույթ, կազմում էր հասարակական կյանքի մշտական օղակը: Այդ պետությունների ամբողջ համակարգը հիմնված էր բնակչության քանակի որոշակի սահմանափակման վրա: Նրա սահմաններից չէր կարելի անցնել՝ վտանգի շեղթարկելով անտիկ քաղաքակրթության գոյության պայմանները իսկ: Սակայն ինչո՞ւ էր դա այդպես: Որովհետև այդ պետություններին լիովին անհայտ էր գիտության կիրառումը նյութական արտադրության ասպարեզում: Դրանց քաղաքացիները իրենց քաղաքակրթությունը պահպանելու համար չպետք է լինեին քաղմաքանակ: Հակառակ դեպքում նրանց սպառնում էր հյուժիչ ֆիզիկական աշխատանքի լծին ենթարկվելու վտանգը, այն աշխատանքի, որն այդ ժամանակ ազատ քաղաքացուն դարձնում էր ստրուկ: Արտադրողական ուժերի անբավարար զարգացման հետևանքով քաղաքացիական իրավունքները կախման մեջ էին դրվում որոշակի քանակական հարաբերակցությունից, որը խախտել չէր կարելի: Միակ վերկությունը հարկադրյալ արտագաղթն էր»<sup>2</sup>:

Արտագաղթի տնտեսական պատճառներին ավելանում էին

<sup>2</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 8, стр. 567—568.



նաև քաղաքական պատճառները: Շատ դեպքերում հայրենիքից հեռանում էին սրվող դասակարգային պայքարում պարտութուն կրած մարդիկ: Երբեմն դրանք տոհմական ավագանու ներկայացուցիչներն էին, երբեմն էլ՝ քաղաքային ստրկատերեր: Վերջին դեպքում վաճառականների ու արհեստավորների հետ միասին պոլիսից մեկնում էր նաև շքավորութունը, որը ակտիվորեն մասնակցել էր հարուստների կողմից զավթած հողի համար մղված պայքարին:

Փոքրասիական հունական քաղաքների աշխարհագրական հարմարավետ դիրքը, դեպի ծով տանող առևտրական ցամաքային ճանապարհների ելքի մոտ նրանց գտնվելը նպաստեցին այդ քաղաքների համեմատաբար արագ տնտեսական զարգացմանը: Դրանց կապը Արևելքի ու Հարավային Հունաստանի մայրցամաքային կենտրոնների հետ նպաստեց այն բանին, որ այդ քաղաքները ըսկըսեցին խաղալ միջնորդների դեր արևելքի երկրների ու Հունաստանի միջև եղած թե՛ առևտրական և թե՛ մշակութային հարաբերություններում: Հետագայում փոքրասիական քաղաքների զարգացումը նկատելիորեն տարբերվեց Հունաստանի մայրցամաքային քաղաքների զարգացումից: Արևմուտքի դեմ ուղղված կյուդիայի թագավորության մ. թ. ա. VII դ. կեսից սկսված էքսպանսիայի արդյունքը եղավ լյուդիացիների տիրապետության հաստատումը փոքրասիական ծովափում ապրող հույների վրա: Միլետոսը եղավ այն վերջին քաղաքը, որը համառ, տասնամյակներ տևող պայքարից հետո ճանաչեց կյուդիայի գերիշխանությունը: Սակայն անգամ լյուդիացիների տիրապետության տակ Միլետոսը պահպանեց իր ներքին ինքնավարությունն ու ինքնուրույն զաղութաբանկեցման իր իրավունքը:

Ավելի հանդարտ էր ընթանում հույների կյանքը Բալկանյան թերակղզում ու մոտակա կղզիներում: Մ. թ. ա. VIII դ. Հունաստանի առաջավոր տնտեսական կենտրոններն էին Եվբեա կղզու քաղաքները՝ Քադկիսն ու Երետրիան: Դրանց զարգացմանը նպաստում էին նաև կղզու բնական հարստությունները՝ նրա բերրիությունը, պղնձյա հանքերի ու լավորակ մարմարի առկայությունը, ինչպես և նրա հարմար աշխարհագրական դիրքը: Եվրիպոս նեղուցը, որը կղզին անջատում էր մայր ցամաքից, այն ժամանակ հունական ծովագնացների հիմնական ուղին էր: Այնտեղ, ուր կղզու արևմտյան առափնյա գիծը առավել մոտենում էր Բեովտիային, գտնվում էր Քադկիս քաղաքը: Քադկիսցիների ձեռքում էր գտնվում նաև դեպի մայր ցամաք տանող անցումը, այն է՝ Կանեթոս ամրացված բնակավայրը, որը հարևան էր Բեովտիայի գլխավոր նավահանգիստ Ավլիսին: Տնտեսապես զարգացած Եվբեյան Քադկիս ու Ե-



րետրիա քաղաքները սկիզբ դրեցին հունական գաղութաբնակեցմանը: Էգեյան ծովի թրակիական ափում հունիական առաջին գաղութաբնակների երևարուց դեռ շատ առաջ, մ. թ. ա. VIII դ., Քաղկիսն ու Երեստրիան համատեղ հիմնեցին բնակավայր մի թերակղզում, որը Քաղկիսի անունով կոչվեց Քաղկիդիկե: Երեստրիան տիրեց դեպի արևմուտք տանող ճանապարհը, որն անցնում էր հետագայում Կորնթոսի կողմից զավթած Կերկիրա կղզու վրայով: Մ. թ. ա. VIII դ. եվբեյան քաղաքները գաղութաբնակներ դուրս բերեցին Հարավային Իտալիա ու Սիկիլիա: Մ. թ. ա. 750 թ. մոտ Քաղկիսի կողմից հիմնված Կումե գաղութը (Հարավային Իտալիա) էտրուրիայից ստացվող երկաթի հանքաքարի մատակարարողն էր, իսկ սիկիլիական գաղթավայրերը կապված էին Իբերիական թերակղզու հետ, որտեղից Սիկիլիան ստանում էր արծաթ:

Քաղկիսն ու Երեստրիան ունեին այն ժամանակ ամենամեծ նավատորմիղը Հունաստանում: Երեստրացիների հզորության մասին պատմում է Ստրաբոնը, հաղորդելով նվիրաբերական մի արձանագրության բովանդակությունը՝ գրված Եվբեա կղզում, Արտեմիսի տաճարում երեստրացիների կողմից դրված մարմարե սալի վրա: Ըստ այդ արձանագրության, աստվածուհուն նվիրված տոնի ժամանակ Երեստրիայի քաղաքացիներին հանդիսավոր թափորում ներկայացնում էին 5000 հետիոտն տղամարդիկ, 600 հեծյալներ ու 50 ձիակառքեր: Երեստրացիների իշխանությունը տարածվում էր նաև Կիկլադյան մի շարք կղզիների վրա<sup>3</sup>: Մեկ քաղաքի բնակիչներից հավաքագրված նման մեծ զորքն ու հատկապես մեծ թիվ կազմող հեծյալները վկայում են ձիակառքեր ունեցող հարուստ հողատիրական ավագանու գոյության մասին: Ե՛վ Երեստրիայում, և՛ Քաղկիսում իշխանությունը պատկանում էր հողատեր հիպոթրոտներին (այսինքն՝ ձիեր սնուցողներին): Արտեմիսի տոնին մասնակցած 5000 հետևակայիները հաստատում են հողաբաժիններ ունեցող ազատ հողագործ բնակչության գոյությունը:

Երկու քաղաքներն էլ՝ թե՛ Քաղկիսը և թե՛ Երեստրիան հավանաբար հիմնադրվել էին նախկին (գուցե թեբեական) բնակավայրերի տեղում: Այդ քաղաքները մ. թ. ա. VIII դ. Հունաստանի առաջավոր կենտրոններն էին: Մեկ հայտնի է Ապոլլոն աստծու պատվին խմբերգեր՝ պեաններ կազմող բանաստեղծների գոյությունը: Խրմբերգային քնարերգությունը Եվբեայից տարածվեց նաև արևմտյան գաղութներում: Քաղկիսյան այբուբենը փոխանցվեց Իտալիա ու հետագայում կազմեց լատինական գրի հիմքը:

<sup>3</sup> S<sup>6</sup> u Страбон, География, М., 1964 (X. §§ 10, 11):

Մ. թ. ա. VIII դ. վերջում Քաղկիսի ու Երեստրիայի միջև բորբոքվեց երկարատև Լեւանտյան պատերազմը՝ այդ քաղաքներին հարակից արգավանդ Լեւանտական դաշտավայրին տիրելու համար: Թուրքիդեսն այդ պատերազմը անվանում է Տրոյականից հետո եղած ամենամեծ պատերազմը: Այն վերածվեց համահունակական պատերազմի: Քաղկիսին ռազմական օգնութիւն ցույց տվեցին Սամոսն ու Կորնթոսը, ավելի ուշ՝ թեսալացիներն ու թրակիացիները. Երեստրիայի կողմում կռվում էին Միլետոսի ու Մեգարայի զորքերը: Պատերազմին մասնակցեցին նաև երկու իտալական քաղաքներ՝ Կրոտոնը ու Սիրբարիսը: Արդեն այդ օրինակից կարելի է եզրակացնել, թե որքան մեծ էր եվրեյան քաղաքների նշանակութիւնն այն ժամանակվա Հելլադայի տնտեսական կյանքում: Գրեթե բոլոր առաջավոր քաղաքների մասնակցութիւնը պատերազմին (կամ Երեստրիայի, կամ Քաղկիսի կողմից) հնարավոր չէ բացատրել միայն եվրեյան քաղաքներից մեկի հետ ունեցած նրանց առևտրական կապերով: Այստեղ հստակորեն հանդես են գալիս առևտրական մրցակցութեան հողի վրա Միլետոսի ու Սամոսի, Կորնթոսի ու Մեգարայի միջև արդեն ծագած հակասութիւնները: Լեւանտական դաշտավայրի համար սկսված վեճին միացած քաղաքների քաղաքական պայքարը յուրաքանչյուր առանձին վերցրած պոլիսի էքսպանսիայի ու մրցակցութեան արդյունք էր: Պատահական չէ, որ այդ ժամանակ «հարևանը» սովորաբար նշանակում էր նաև «թշնամի»:

Սկսած մ. թ. ա. VIII դ. վերջից Կորնթոսն ու Մեգարան դառնում են խոշոր առևտրական ու արհեստավորական կենտրոններ: Մեգարան պայքարի է բռնվում Աթենքի հետ Սալամիս կղզու համար, իսկ կորնթացիները, համագործակցելով քաղկիսյան հիպպորտների հետ, թափանցում են արևմուտք: Մովալին առևտրական ուղիներում մինչ այդ խշխող փյունիկեցիների թուլացումը նպաստեց հույների արտաքին ծովային առևտրի զարգացմանը: Եգիպտոսի ազատագրումը Ասորեստանի լծից մ. թ. ա. VII դ. երկրորդ քառորդին ու հույն վարձկաններին իր մոտ հրավիրելու նրա շահագրգռվածութիւնը նպաստեցին անմիջական առևտրական կապերի հաստատմանը Եգիպտոսի ու հունական քաղաքների միջև:

Հունական գաղութացումն իրականացվում էր երեք հիմնական տեղութիւններով՝ դեպի արևմուտք, դեպի հյուսիս ու հյուսիս-արևելք և դեպի հարավ-արևելք:

Գաղութաբնակեցումը հատկապես մեծ ծավալ ընդունեց մ. թ. ա. VII դ., երբ Եվրեայի քաղաքների, Կորնթոսի, Մեգարայի ու երեք հոտրոսյան քաղաքների կողմից և՛ Հարավային Իտալիայում,

և՛ Միկիլիա կղզու արևելյան մասում հիմնվեցին հունական գաղութներ: Սկսած մ. թ. ա. VIII դ. վերջից գաղութներ առաջանում են նաև էգեյան ծովի Թրակիական ծովափում: Քաղկիդիկե թերակղզում եվբեյան գաղութներից բացի հիմնվեցին նաև այլ հունական քաղաքների գաղութներ, մասնավորապես Կորնթոսի գաղութ Պոտիդեա քաղաքը: Հելլենսպոնտոսի ու Բոսֆորի նեղուցի ափերին գաղթօջախներ հիմնելու գործում մեծ եռանդ ցուցաբերեց Մեգարան: Մեգարայի ծաղկող գաղութներից մեկը դարձավ Բոսֆորի նեղուցի ափին, Սև ծովի մուտքից ոչ հեռու գտնվող Բյուզանդիոնը:

Նգիստոսում մ. թ. ա. VIII դ. երկրորդ կեսին Պսամետիքոս փարավոնի մոտ ծառայության ընդունված հույն վարձկանները հիմնեցին Դափնե նոր բնակավայրը: Մ. թ. ա. VII դ. վերջում Նեղոսի գետաբերանում առաջանում է Նավկրատիսը, հունական գաղութավայր, որը հիմնադրեցին տասներկու հունական քաղաքներ միլետոյան նախկին ֆակտորիայի (առևտրակետի) — թարզմ.) տեղում:

Սև ծովի հարավային ափի երկաթահանքերի մոտ գտնվող առաջին հունական գաղութավայր Մինոպեն հիմնվեց մ. թ. ա. VIII դ.: Մ. թ. ա. VII դ. վերջում Բուզ-Դենեպրյան գետախորշի շրջանում, Բերեզան կղզու վրա, հանդես եկավ առաջին հունական բրնձակավայրը հյուսիսային մերձսևծովյան երկրամասում: Այն հիմնեցին Միլետոսից ու հոդոսյան քաղաքներից եկած հույները: Մ. թ. ա. VII—VI դդ. սահմանագծին Մեգարան Սև ծովի հարավային ափին հիմնեց Պոնտոսյան Հերակլեա, իսկ փոկեացիները՝ Ամիսոս գաղութները:

Սև ծովի ափերի գաղութացման գործում հատկապես ակտիվ դեր խաղացին հոնիական հույները, նախ և առաջ՝ Միլետոսից եկածները: Մ. թ. ա. VII դ. վերջին ու VI դ. սկզբին Միլետոսը մի շարք գաղութներ հաստատեց Սև ծովի արևմտյան ու հյուսիսային ափերին: Արևմտյան ծովափում, թրակիացիներով բնակեցված վայրերում, ծագում են Իստրիա, Ապոլլոնիա, Օդեսոս ու Տոմիս միլետոսյան գաղութները, հյուսիսային ծովափում՝ Օլվիան (Բուզ գետի աջ ափին), Տիրասը (Դենեսոսյան գետախորշի ափին), Թեոդոսիան՝ Ղրիմում, Պանտիկապոնը՝ Կերչի թերակղզում (ժամանակակից Կերչը):

Միլետոսյան գաղութաբնակները հաստատվեցին նաև Սև ծովի արևմտյան ու հարավային ափերում: Կովկասյան ծովափում հատկապես հայտնի են նրանց երկու գաղութները՝ Դիոսկուրիասը

(այժմյան Սուխումիի շրջանում) ու Փասիսը (այժմյան Փոթիի շրջանում):

Միաժամանակ հունների, հատկապես փոկեացիների գաղութարնակեցման էքսպանսիան հասավ մինչև Միջերկրական ծովի արևմտյան ափերը: Մ. թ. ա. մոտ 600 թ. Փոկեան այժմյան Ֆրանսիայի հարավային ծովափին հիմնում է Մասսալիա գաղութը՝ (այժմյան Մարսելը): Մ. թ. ա. VI դ. Փոկեայի մի շարք գաղութներ առաջացան նաև Իսպանիայում: —

Հունական գաղթօջախները, հատկապես սկզբում, մեծ մասամբ հողագործական և առևտրական բնակավայրեր էին: Գաղութ հիմնադրելու համար պահանջվում էր ոչ միայն քաղաքի առևտրաարհեստավորական շրջանների նախաձեռնությունը, այլև բավարար թվով գաղութարնակների առկայությունը. այդ գաղութարնակները պետք է ընդունակ լինեին զավթելու գաղութին անհրաժեշտ արգավանդ հողեր: Սովորաբար գաղութի հիմնումը ուղեկցվում էր գրավված հողերից շեռուցած տեղական բնակչության ստրկացումով: Հողագործական տնտեսության հետ գաղութարնակների կապը ստեղծված գաղթօջախի կայունության ու կենսունակության երաշխիքն էր:

Գաղութ հաստատելու համար նախապես ընտրում էին իր բնական տվյալներով լավ ամրացված մի շրջան: Երկրորդ՝ ընտրվում էր ապրելու համար հարմար վայր, այսինքն՝ խմելու ու ոռոգման ջրի լավ աղբյուրներ, օգտակար հանածոների պաշարներ ունեցող արգավանդ դաշտավայր: Այն պետք է տեղադրված լիներ ցամաքային ճանապարհների հետ միացված նավահանգստի մոտ. դա կհեշտացներ տեղական բնակչության հետ կապեր հաստատելու գործը: Հենց այդ պատճառով ծագեց Դելփյան պատգամախոսի խորհրդին դիմելու անհրաժեշտությունը: Նրա քրմերը, որպես կանոն, լավատեղյակ էին գաղութներ հիմնելու հարմար պայմաններին ու վայրերին: Սովորաբար դրանք այն շրջաններն էին, ուր մինչև գաղութացումը այցելել էին հունական կամ փյունիկյան վաճառականներն ու ծովագնացները:

Առաջին գաղութները բնակեցնելու հիմնական պայմաններից մեկը հունական պոլիսների սակավահող կամ հողազուրկ բնակչությանը գաղութացմանը մասնակից դարձնելն էր: Բնական է, որ սկզբում գաղութացումը իրագործում էին միայն այն քաղաքները, որոնք բացի քաղաքային բնակավայրից, ունեին շատ թե քիչ լայնածավալ հողային տիրույթներ ու միաժամանակ՝ հողազուրկ կամ սակավահող հողագործներ: Այն ժամանակ հենց այդպիսի քաղաքներ էին Քաղկիսը և Երեստիան, Կորնթոսը, Մեգարան, իսկ

Փոքր Ասիայում՝ Միլետոսն ու Փոկեան, կղզիներից՝ Հոսդոսը, Կրետեն, Սամոսն ու Թեսսալիա:

Գաղութաբնակեցման նախապատրաստական շրջանում մետրոպոլիսները դառնում էին «վերաբնակեցման» յուրօրինակ կենտրոններ, որոնք ընդունում և ուղարկում էին ոչ միայն իրենց, այլև ուրիշ քաղաքների գաղութաբնակներին: Սակայն տվյալ մետրոպոլիսի գաղութաբնակների քանակական գերակշռությունը պարտադիր էր: Երբեմն մի գաղութ հիմնելու համար միանում էին երկու կամ երեք քաղաքներ:

Գաղութաբնակների կազմը միատարր չէր: Սովորույթ էր դարձել գաղութներ փոխադրել մետրոպոլիսի պոլիսային աստվածների հիմնական պաշտամունքների հետ կապված բրմեր և քաղաքի կրակարանից վերցրած սուրբ կրակը: Մետրոպոլիսի ու գաղութի միջև կար սերտ կապ: Գաղութաբնակներն առաջվա նման մասնակցում էին մետրոպոլիսի կրոնական տոներին՝ այնտեղ ուղարկելով իրենց դեսպաններին: Գաղութը չպետք է թշնամանար մետրոպոլիսի հետ: Դա կարևոր էր մետրոպոլիսի կողմից գաղութի հետ ամուր առևտրական կապեր հաստատելու համար, սակայն ավելի ուշ շրջանում գաղութի ու մետրոպոլիսի միջև եղած հարաբերությունները երբեմն սրվում էին (օրինակ, Կոլոսոսի հարաբերությունները Կերկիրայի հետ): Մետրոպոլիսի կրոնական պաշտամունքների փոխադրումը գաղութ կարևոր քաղաքական ակտ էր: Գաղութի ու մետրոպոլիսի կրոնական միասնությունը գաղութաբնակներին իրավունք էր տալիս վերադառնալու հայրենիք ու վերականգնելու իրենց նախկին քաղաքացիությունը: Բացի այդ, դրանով ամրապնդվում էր կապը քաղաքների միջև, քանի որ գաղութում հաստատվում էր մետրոպոլիսին նմանվող քաղաքական կարգ, սահմանվում էին նույն ֆիլաները, նույն օրենքները, նույն աստվածների պաշտամունքները, և համայնքի օջախում վառվում էր նույն կրակը:

Այն ժամանակ դա կապի միակ հնարավոր ձևն էր: Մետրոպոլիսից հաճախ զգալի հեռավորության վրա փոխվող գաղութները ի վիճակի չէին իրար հետ մշտական կապ պահպանելու: Ձմռան ամիսներին, երբ դադարում էր ծովային հաղորդակցությունը, ընդհատվում էր նաև գաղութների կապը մետրոպոլիսի հետ:

Այս պատճառով Հունաստանի սահմաններից դուրս առաջացող գաղութները, որպես կանոն, դառնում էին անկախ պոլիսներ, որոնք վարում էին ինքնուրույն ներքին ու արտաքին քաղաքականություն: Մետրոպոլիսները դրան չէին առարկում, որովհետև հիմնական նպատակը, որը առաջադրվել էր քաղաքների կողմից՝ առևա-

րական կապերի ամրապնդումն ու քաղաքների ազատագրումը բնակչության ավելցուկից, արդեն իրագործվել էր:

Նոր հիմնադրված գաղութի առաջնահերթ խնդիրներից մեկն էր՝ հաստատել առևտրական կապեր ու նվերներ փոխանակել հարեւանների, նրանց առաջնորդների ու ցեղային ավագանու հետ: Միայն առանձին դեպքերում, փոխանակման մեջ շահագրգռված տեղական ցեղային ավագանին ինքն էր տրամադրում հողեր գաղութ հիմնելու համար: Սովորաբար գաղութաբնակները հզոր ռազմական ուժի միջոցով զավթում էին նաև ցեղերին պատկանող հողերը:

Այլ էր ճգնաժամում փարավունի թուլլտվության մեջ հիմնված գաղութների վիճակը: Այստեղ գաղութաբնակները, տնտեսական կապեր հաստատելով տեղի բնակչության հետ, մշտապես գտնվում էին եգիպտական պաշտոնյաների ու զինվորական հրամանատարների հսկողության տակ: Հույները, Նավկրատիսում բնակեցնելով իրենց հատկացված մի հատուկ քաղաքամաս, անվերապահորեն ընդունում էին իրենց գործունեության նկատմամբ եգիպտական իշխանությունների գերագույն հսկողությունը, որովհետև ուղղակի առևտրական կապերի հաստատումը ճգնաժամում հետ շատ շահավետ էր:

Սկսած մ. թ. ա. VIII դ. երկրորդ կեսից ու հատկապես մ. թ. ա. VII—VI դդ. Ասորեստանի հզորության անկումից հետո, հույները տիրեցին Արևելյան Միջերկրականի հիմնական առևտրական ճանապարհներին: Միջերկրական ծովում փյունիկյան ու հունական ազդեցության հիմնական ջրբաժանը դարձավ Սփկիլիայի շրջանը, որի արևելյան հատվածը բնակեցված էր հույների, իսկ արևմտյան հատվածը՝ Կարթագենից եկած փյունիկեցիների կողմից:

Մ. թ. ա. VII—VI դդ. շատ հոծնական գաղութներ հասան տնտեսական բարձր ծաղկման: Դրանք էին՝ Սիրակուզան՝ Սփկիլիայում, Տարասը՝ Հարավային Իտալիայում, Նավկրատիսը՝ ճգնաժամում, Բյուզանդիոնը՝ Բոսֆորում, Սինոպեն, Պոնտոսյան Հերակլեան ու Ամիսոսը՝ Սև ծովի հարավային ափին, Օդեսոսն ու Իստրիան՝ նրա արևմտյան ափին, Բուզ գետի վրա Օլվիան՝ հյուսիսային ափին, Թեոդոսիան՝ Արիաի հարավային ափին, Պանտիկապոնոն ու Տանագորիան՝ Կերչի նեղուցի ափերին, Փասիսը՝ Կողքիսում:

Հունական գաղութաբնակեցման արդյունքը եղավ նախ և առաջ հույների առևտրական կապերի ընդարձակումը բուն հունական աշխարհի սահմաններից շատ հեռու: Ըստ հին աշխարհի մասշտաբների, հունական առևտուրն արդեն մ. թ. ա. VI դ. ձեռք բե-

րեց միջազգային բնույթ, հունական արհեստի առարկաները լայնորեն սպառվում էին թե՛ արևմտյան, և թե՛ արևելյան շուկաներում: Միաժամանակ Հունաստան էր բերվում հացահատիկ, անհրաժեշտ հումք, սննդամթերք ու պերճանքի առարկաներ: Այդ շրջանում լայնորեն տարածվում էր ստրկավաճառությունը: Հունական պոլիսները դառնում են «կենդանի ապրանքի» հիմնական սպառողներ:

Քաղաքային շուկաներ էժան հացի ներմուծումն ու երկաթի մշակման տեխնիկայի զարգացումը դրդում էին մանր հողագործներին անցնելու խաղողի ու ձիթենու՝ որպես ավելի եկամտաբեր կուլտուրաների մշակմանը: Տեղի էր ունենում աշխատանքի հետագա բաժանում ու մասնագիտացում ոչ միայն յուրաքանչյուր արհեստի ներսում՝ ըստ արտադրվող իրերի տեսակի, այլև առանձին քաղաքների միջև: Ստրկության զարգացումը քաղաքներում հանգեցրեց արհեստի ու առևտրի հետ կապված հարուստ խավերի ուժեղացմանը, շարժական հարստությունը դարձավ ոչ պակաս պատվավոր, ինչ և անշարժ գույքը: Տոհմային ավագանու դիրքերը էլ ավելի թուլացան, իսկ նրա հզորության տնտեսական հիմքը՝ հողի տոհմային սեփականությունը, խորտակվում էր ամրապնդվող մասնավոր սեփականատիրական հարաբերությունների ու ապրանքային տնտեսության ճնշման հետևանքով:

#### ՎԱՂ ՀՈՒՆԱԿԱՆ ՏՈՐԱՆԵԱՆ

Հունաստանի տնտեսապես առաջավոր կենտրոններում դասակարգային պայքարը ընդունեց հատկապես սուր բնույթ մ. թ. ա. VIII—VI դդ., գաղութացման սկզբնական շրջանում, հետո դրա ծաղկման ժամանակ: Այդ լարված պայքարի հետևանքով մի շարք հունական պոլիսներում ընկավ տոհմային ավագանու տիրապետությունը, և իշխանության գլուխ անցան դեմոսի առաջնորդները, որոնք հաճախ հաստատում էին իրենց միահեծան կառավարումը: Հույները նրանց անվանում էին տիրաններ: Տիրանիան քաղաքական բռնության վրա հիմնված իշխանության ձև էր:

Հստակորեն տարբերվում են վաղ հունական տիրանիայի երկու հիմնական ձևերը՝ տիրանիա, որը հաստատվեց տոհմական ավագանու դեմ ժողովրդական զանգվածների՝ դեմոսի պայքարի հետևանքով, և Պարսկաստանի հույն դրածոների տիրանիան Փոքր Ասիայի հունական քաղաքային ու կղզային պոլիսներում, որը հաստատվեց դրանք Պարսկաստանին ենթարկվելուց հետո: Անկախ հունական քաղաքների տիրանները սովորաբար հենվում էին ավագանու իշխանության դեմ շքավորների շարժման վրա: Զբավո-

րությանը պաշտպանում էին առևտրականներն ու արհեստավորները: Պարսիկների դրածո տիրանները նշանակվում էին պարսկական աստիճանավորների կողմից՝ հունական օլիգարխիական (օլիգարխիա՝ քչերի իշխանություն) շրջանների ներկայացուցիչներից: Վերջիններս սովորաբար պարսկական պաշտոնյաների ու զորահրամանատարների օժանդակությամբ վայելող խոշոր հողագործներ ու վաճառականներ էին: Մենք այստեղ նպատակ ունենք քննարկելու միայն այն հունական տիրանիան, որը հաստատվեց Պարսկաստանից անկախ քաղաքներում և իշխանություն համար մղված պայքարում հենվում էր ռազմական ջոկատների, ինչպես նաև սակավահող ու հողագուրկ շրավորության վրա:

Վաղ հունական տիրանիան բնորոշ էր մ. թ. ա. VII—VI դարերի, այսինքն դեմոսի կողմից տոհմական ավագանու դեմ մղված պայքարի ծայրահեղ սրման ժամանակաշրջանին: Այն բնորոշ էր և՛ մայրցամաքային Հունաստանին (Միկիոն, Կորնթոս, Մեգարա, ավելի ուշ՝ Աթենք), և՛ Փոքր Ասիայի հունիական քաղաքներին (Միլետոս, Եփեսոս, Սամոս):

Միլետոսում մ. թ. ա. VII դ. վերջում տիրան Թրասիբուլոսի՝ իշխանությունը գլուխ անցնելը կապված էր դեմոկրատական ռեֆորմների, ինչպես և քաղաքի կողմից սեփական դրամ հատելու հետ:

Տիրանիայի հաստատումը Եփեսոսում ուղեկցվեց Բասիլյանների կառավարող անվանի տոհմի բռնի տապալումով: Սամոսում իշխանությունը զավթեց Պոլլուկրատեսը (մ. թ. ա. մոտ 540 թ.), որի օրոք կատարվեց կղզու քաղաքական միավորումը, հին ֆիլյաները վերացվեցին, ու դրանց փոխարեն ստեղծվեցին տերիտորիալ օկրուգներ, կառուցվեց ռազմական մեծ նավատորմ, Սամոս քաղաքի շուրջը կառուցվեցին բերդապարիսպներ, հարմար նավահանգիստ, և անցկացվեց ջրմուղ:

Սամոսի նավատորմի ղր բաղկացած էր ոչ միայն 50 թիականոց մեծ նավերից, այլև զգալի թիվ կազմող ամենաարագընթաց նավերից՝ տրիերաներից: Հատկանշական է, որ Պոլլուկրատեսը, ձգտելով զավթել Եգիպտոսն ու Հունաստանը Փոքր Ասիայի և Սև ծովի հետ կապող գլխավոր առևտրական ճանապարհները, փորձում էր իր իշխանությունը հաստատել էգեյան ծովում գտնվող Կիկլադյան կղզիների վրա: Քաղաքացիներին զինաթափեցին, միջնաբերդը ամրացվեց, մանր հողագործներին ու արհեստավորներին տրամադրեցին գոյություն միջոցներ: Մ. թ. ա. մոտ 523 թ. Պոլլուկրատեսը ի պատիվ Ապոլլոն աստծու սահմանեց համահունչ աստուակատարություններ Դելոս կղզում գտնվող նրա տաճարին կից: Դը-



րանից մի փոքր ժամանակ անց Պոլլուկրատեսը պարտութուն կրեց պարսիկներից ու ենթարկվեց տանջալից մահվան:

Մ. թ. ա. VI դ. առաջին երեսնամյակում Օրփագորյանների տոհմի գլուխ անցավ տիրան Կլիսթենեսը, որը կառավարում էր Սիկիոնում: Նրա քաղաքականությունը ակներևաբար ուղղված էր դորիացիների դեմ: Դորիացիների կողմից Աքայայում հողերը զավթելու ժամանակ սահմանված ֆիլաները վերանվանվեցին ու կոչվեցին «խոզաբարոների», «խոճկորաբարոների», «իշաբարոների» ֆիլաներ, իսկ շորրոդը, ոչ դորիական ֆիլան ստացավ «Արքելայոս» պատվավոր անունը: Նա արգելեց Արգոսն ու արգոսցիներին գովերգող ռապսոդների մրցություններն ու վերացրեց Ադրաստոսի պաշտամունքը, որին արգոսցիները հարգում էին որպես Սիկիոնի առաջին թագավորի: Ադրաստոսին մատուցվող զոհաբերություններն ու այդ հերոսի պատվին կազմակերպվող տոները նա «տրամադրեց» այլ հերոսի՝ Մելանիպպոսին, որը Ադրաստոսի կատաղի թշնամին էր (առասպելներում): Ադրաստոսի պատվին կատարվող երգախմբային ողբերգական երգերը հատկացվեցին Դիոնիսոսին: Այդ ռեֆորմներն ուղղված էին դորիական ավագանու դեմ, այն էլ ոչ միայն նրա բուն երկրում, այլև նրա սահմաններից դուրս:

Տիրանիան զգալի զարգացում ապրեց նաև Կորնթոսում մ. թ. ա. VII—VI դդ.: Այստեղ տիրանների իշխանությունը պահպանվեց 70 տարուց ավելի (մ. թ. ա. մոտ 657—580 թթ.): Առաջին տիրան Կիպսելոսի՝ Կիպսելոսյանների նոր հարստության հիմնադրի՝ իշխանության գլուխ անցնելը կապված էր Բակքիյանների անվանի տոհմի տապալման հետ: Կիպսելոսի ժամանակ Կորնթոսը ձեռնարկեց գաղութաբնակեցման ակտիվ գործունեություն Հունաստանի արևմտյան ծովափում (Ամբրակիկոս ծոցի շրջանում): Կիպսելոսը գաղութների կառավարիչներ էր նշանակում իր որդիներին: Այդ նոր քաղաքականությունն իսկույն ևեթ նոր բարդություններ առաջ բերեց Կերկիրայի քնակչության հետ, որը պաշտպանելով իր քաղաքական անկախությունը, պայքար սկսեց Կորնթոսի դեմ:

Կորնթոսի տնտեսական ու քաղաքական էքսպանսիան հատկապես ուժեղացավ Կիպսելոսի ժառանգ տիրան Պերիանդրոսի օրոք (մ. թ. ա. 627—585 թթ.): Կերկիրայի պայքարը ավարտվեց Կորնթոսին նրա ենթարկումով: Կախման հարաբերությունների վրա էր հիմնված Պոտիդեա գաղութը Քաղկիդիկե թերակղզում, ուր դեռ մ. թ. ա. V դ. կորնթոսցիներն ուղարկում էին հարմոստեսին. դա պաշտոնյա անձ էր, որը պաշտպանում էր իր քաղաքի շահերը: Կորնթոսի գաղութաբնակեցման էքսպանսիան հետապնդում էր երկու նպատակ՝ հասնել Կորնթոսի գերակշռությանը արևմտյան շրջ-

ջանների հետ վարած առևտրում՝ Հունաստանից դեպի Հարավային Իտալիա ու Սիկիլիա գնացող ծովագին ճանապարհի վրա ռազմական կայաններ ստեղծելու միջոցով, և ապահովել մշտական կայեր Իլլիրիայի հետ, որտեղից Կորնթոս էր ներմուծվում առաջին հերթին դրամահատման համար անհրաժեշտ արծաթը: Պոտիդեայից, հացից բացի, Կորնթոս էր բերվում ծովագնացության ու առևտրի համար անհրաժեշտ անտառանյութ:

Կորնթոսը տիրանիայի դարաշրջանում արդեն մեծ քաղաք էր. նրա տարածքի շրջագիծը կազմում էր 10 կմ:

Կորնթոսում կատարված պեղումների ժամանակ, քաղաքի կենտրոնից մոտավորապես մեկ կմ դեպի հարավ, առավալի մոտ, հայտնաբերվեց բրուտագործական մի թաղամաս (կերամիկոս), որը գտնվում էր որակյալ կավի շերտերի կողքին: Գտնված առարկաների մեջ գերակշռում են մ. թ. ա. VIII դ. վերջի ու հատկապես VII դ. ամանեղենի բեկորները (այսպես կոչված պրոտոկորնթոսյան ու կորնթոսյան խեցեղեն): Հնագետները հայտնաբերեցին բրուտագործական արհեստանոցներ, վառարաններ ու բրուտի դուրգեր:

Կորնթոսի առևտրական կապերի մասին վկայում են կորնթոսյան խեցեղենի հայտնագործումը Հարավային Իտալիայում, էտրուրիայում ու Սիկիլիայում, իսկ մ. թ. ա. VI դ. համար՝ նաև Իսպանիայում, ինչպես և Քաղկիդիկեում, էգեյան ծովի կղզիներում ու մերձսևծովյան շրջաններում: Կորնթոսի երկու նավահանգիստներից մեկի մոտ, Հերա աստվածուհու փոքր սրբարանում, որը գրտնրվում էր հյուսիսարևմտյան ծովափին, հայտնաբերվել են Եգիպտոսի, Ասորիքի ու Կիպրոսի հետ Կորնթոսի ունեցած առևտրական կապերը հաստատող շատ առարկաներ:

Տիրանիայի դարաշրջանում Կորնթոսը դարձավ ոչ միայն խոշոր բրուտագործական, այլ նաև մետաղամշակման (զրահներ, սաղավարտներ, սրեր, տաճարները զարդարելու համար օգտագործվող բռնդե բարձրաքանդակներ, մետաղյա ամանեղեն և այլն), նավաշինության ու մանածագործության կենտրոն: Կորնթոսին է վերագրվում տրիերայի՝ 50—60 ա տարողություն ունեցող արագընթաց ռազմական նավի գյուտը: Կորնթոսում մ. թ. ա. VII դ., ըստ ավանդության, հայտնագործվեց խարխսիը:

Կորնթոսյան պարանոցի նեղ հատվածում (ընդամենը 6 կմ) անցկացվեց փայտյա ճանապարհ՝ ապրանքները արևելյան նավահանգստից արևմտյան նավահանգիստը ու հակառակ ուղղությամբ տեղափոխելու համար:

Տիրանների կենտրոնացված միանձնյա իշխանության ուժեղացման հետ միասին Կորնթոսում ու նրա գաղութներում ընդուն-

վեցին օրենքներ, որոնց նպատակն էր թուլացնել տոհմական ավագանու ազդեցությունը: Ավագանու դատարանները փոխարինվեցին տարածքային օկրուգների դատարաններով, հաստատվեց օրենք պարապուլթյան դեմ, տոհմային ֆիլաները վերացվեցին, ու նրանց փոխարեն կազմվեցին ութ տարածքային ֆիլաներ: Միաժամանակ ձեռնարկվեցին քաղաքի քարեկարգման աշխատանքները: Սնանկացած հողագործների կուտակումը քաղաքում կանխելու նպատակով նրանց արգելվեց բնակվել քաղաքային սահմանագծում: Այնքան էլ պարզ չէ, թե ինչպիսի նպատակներ էր հետապնդում այն օրենքը, տրև արգելում էր ունենալ մեծ թվով ստրուկներ: Ոմանց կարծիքով դա ճոխություն դեմ ուղղված օրենք էր, մյուսները ենթադրում են, որ օրենքի նպատակն էր աշխատանք հայթայթել քաղաքային ու գյուղական շքավորության համար ստրուկների թվի կրճատման միջոցով:

Պերիանդրոսին է վերագրվում հասարակական ճաշկերույթներին, այսինքն, ըստ երևույթին, տոհմային ավագանու ներկայացուցիչների համատեղ սնվելու կարգի ոչնչացումը: Ըստ ավանդության, վերացվեց նաև պատանիների հասարակական դաստիարակության հին համակարգը, որը հետապնդում էր սոսկ ռազմական նպատակներ: Պերիանդրոսի օրոք Կորնթոսը սկսեց սեփական դրամ հատել: Առաջին անգամ սկսեցին մաքս գանձել Կորնթոսի նավահանգիստներով ապրանքներ փոխադրելու ու մեկ նավահանգստից մյուսը դրանք տանելու համար:

Տիրանիան տոհմային ավագանու դեմ էր ուղղված նաև Մեգարայում, ուր մ. թ. ա. VII դ. երկրորդ կեսին տիրան դարձավ Քեագենեսը: Ըստ ավանդության, գուցեև ոչ արժանահավատ, Քեագենեսը ժողովրդայնություն ձեռք բերեց այն բանի շնորհիվ, որ գրեթե ամբողջով շքավորներին, կոտորեց տոհմային ավագանուն պատկանող հոտերը: Երևի այդ ակտով նա փորձում էր հողագործներին վերադարձնել համայնքային արոտատեղերը, որոնք, զավթել էր ավագանին:

Տիրանների միանձնյա իշխանությունը ծնում էր տոհմային ավագանու ատելությունը, իսկ դեմոսի մոտ, քանի դեռ նա չէր ամրապնդվել ու զգում էր տոհմական ավագանուց պաշտպանվելու վարիքը, տիրաններն առաջացնում էին համակրանք: Սակայն դա ժամանակավոր երևույթ էր: Տոհմական ավագանու անկումը չէր ուղեկցվում հողերի վերաբաժանումով ու դրանցից գյուղացիական բաժինների առանձնացումով: Եթե անգամ Քեագենեսի ժամանակ իրոք կոտորվեցին համայնական արոտատեղերում արածող անասունները, ապա դա լուրջ դատաստանի ակտ էր. դրան չհետևեց հողի

հանձնումը գյուղացիներին: Հողի մասնավոր սեփականության ա-  
ճը առաջ բերեց հողի գրավադրման զարգացում, գյուղացիների  
սնանկացման պատճառները չվերացվեցին ու շէին էլ կարող վերաց-  
վել: Հարստություն ունեցող ավագանու նոր խավերը երախտա-  
պարտ էին տիրաններին արհեստների ու առևտրի զարգացման  
հանդեպ նրանց ցուցաբերած հոգատարության համար, սակայն  
այդ խավերը ձգտում էին ձեռք բերել քաղաքական իշխանություն:  
Տիրանիան նրանց համար անհրաժեշտ էր որպես կառավարող տոհ-  
մը տապալելու սոսկ մի միջոց, և ոչ ավելին:

Այսպիսով, տիրանիան բռնությամբ ճնշեց տոհմական ավա-  
գանու դիմադրությունը, զրկեց նրան նախկին իշխանությունից ու,  
ելնելով քաղաքային ստրկատերերի շահերից, վերակառուցեց տըն-  
տեսական և սոցիալական կարգերը: Երբ տոհմային ավագանու իշ-  
խանությունը տապալվեց, տիրանիան դադարեց գոյություն ունե-  
նալուց: Հույներն հետո իրենք ևս հասկացան, որ տիրանիային վի-  
ճակված է կարճատև կյանք: Ըստ ավանդության, Կիպսելոսը դի-  
մեց Դելփյան պատգամախոսին՝ Կորնթոսում իր տոհմի կառավար-  
ման երկարատևության վերաբերյալ հարցումով, ու պատգամախո-  
սը պատասխանեց՝ «Կկառավարես դու և քո զավակները, բայց ոչ  
քո դավակների զավակները»:

Տոհմային ավագանու դեմ մղած պայքարի հիմնական ուժը  
հողագուրկ ու սակավահող գյուղացիներն էին: Իսկ հենց նրանց  
շահերի հետ հաշվի չնստեցին տիրանները, մի բան, որ արագացրեց  
տիրանիայի տապալումը ամրապնդված դեմոսի հարվածների տակ:  
Նորի հանդեպ ատելությունը վերաբերվող տոհմական ավագանու  
համար այն ամենը, ինչ կատարվում էր շուրջը, նշանավորում էր  
միայն «բարի հին ժամանակների վերջ»: Խորտակվում էին հին  
բարքերը, անվանի տոհմերի հին խիզախությունը և հենց ավագա-  
նու «ազնվացեղ» լինելու վերաբերյալ հինավուրց պատկերացումը,  
որը և տալիս էր նրան իշխանության իրավունք: Նրանք, ովքեր ե-  
րեկ իշխանություն ունեին, այսօր արտաքսվում էին: Ով երեկ ստո-  
րացված ու փոքր էր, այսօր իր ձեռքն էր վերցնում իշխանությունը:  
Այդ պրոցեսը արտացոլվել է տոհմային ավագանու շահերը արտա-  
հայտող մեգարացի բանաստեղծ Թեոգոնիսի ոտանավորներում.

...նրանք, ովքեր երեկ շքիտեին իրավունք, օրենք ու դատարան,  
Նա, ով թավամազ ուսերը ծածկում էր այծի մորթիով  
Ու թափառում դաշտերում, գազանի նման վարանելով պարիսպներից քաղաքի,  
Բարի համբավ ունի այժմ... իսկ արիությունը հին  
Արհամարհված է այսօր...»

• Տողացի թարգմ. Գ. Հարությունյանի:

Տոհմային ավագանու արտաքսման հետ մեկտեղ կատարվում էր նաև ունեցվածքի վերաբաժանում:

Օ, վիշտ իմ: Ուրիշն է տիրում փարթամ իմ արտին:  
Եվ իմ ջորիները արգեն շին քայլում առջևից ծանր գութանի,  
Փախստականի նավի հետ փոխանակեցի ես տունն իմ շքեղ\*:

Սուր բնույթ ուներ դասակարգային պայքարը նաև Մխիթար-սում, որտեղ կառավարում էին նեւելյանների արքայական տոհմին փոխարինած մի քանի տիրաններ: Թրասիբուլուսի տիրանիայից հետո (մ. թ. ա. VII դ. վերջ) վերսկսվեց դաժան պայքար երկու կուսակցությունների՝ հարուստ ավագանու (Պլուտոս) ու դեմոսի (Քեյրոմաքա, այսինքն՝ «ձեռքբերով կռվողներ») միջև: «Քեյրոմաքային» հարողներից շատերը, հավանաբար, պատկանում էին գերգիթնների ավտոխթոն (տեղական) ցեղին:

Ըստ Պլուտարքոսի, հարուստները կոչվում էին «հավերժական ծովայիններ», որովհետև ունեին նավեր ու կապված էին ծովային առևտրի հետ: Պայքարը ընթանում էր փոփոխական հաջողություններ՝ ուղեկցվելով երկկողմանի դաժան հաշվհարդարներով: Սկզբում իշխանությունը գրավեց դեմոսը՝ հարուստները արտաքսվեցին, իսկ նրանց երեխաներին կալում կոխոտեցին ցուլերը: Հետո իշխանությունն անցավ հարուստների ձեռքը, ու նրանք այրեցին իրենց թշամիներին՝ նրանց երեխաների հետ միասին: Շուրջ 60 տարի տեղը պայքարի հետևանքը եղավ փշխանության հանձնումը «ընտրված տիրանին»՝ միջին կարողության ստրկատերերի ներկայացուցիչ էսխիանտեսին: Էսխիանտեսները սովորաբար ընտրվում էին կուսակցական պայքարի թուլացման ու փոխադարձ գիշումների հասնելու որոշակի ձգտումների դրսևորման ժամանակ:

Թշնամի կողմերին հաշտեցնողների դերում հաճախ հանդես էին գալիս օրենսդիրները: Մ. թ. ա. VII դ. կեսին են վերաբերում Զալևկոսի օրենքները կոկրեքում (Հարավային Իտալիա, ըստ ավանդությունների, Զալևկոսը առաջինը գրի առավ այդ օրենքները), Քարոնդասի օրենքները սիկիլիական Կատանե քաղաքում մ. թ. ա. VI դ. (°), Դրակիոնի օրենքները Աթենքում (մ. թ. ա. մոտ 624 թ.): Գրավոր իրավունքի ստեղծումն արդեն իսկ դեմոսին արված գիշում էր, որովհետև տոհմային ավագանին մեկնաբանում էր բանավոր օրենքները փր սեփական շահերին համապատասխան: Չնայած դրան, օրենսդիրները փորձում էին պահպանել ավագանու ազդե-

\* Տողացի թարգմ. Գ. Հարությունյանի:

ցութջունը և հաճախ հրապարակում էին սոսկ սովորութային իրավունքի նորմերը:

Մեզարայում ավագանու կողմից Թեագենեսի արտաքսումից հետո ժողովուրդը, ըստ ավանդության, ևս մեկ անգամ իր ձեռքը վերցրեց իշխանությունն ու որոշ ժամանակ քաղաքի տերն էր: Տոհմային ավագանու հողերը բռնագրավվեցին, վերացվեցին պարտքերից գոյացած տոկոսները: Սակայն Մեզարայի ստրկատերերի ունևոր խավերը, ահաբեկված դեմոսի գործողություններից, միավորվեցին նրա դեմ ու հաստատեցին Մեզարայում օլիգարխիական կարգեր:

Կորնթոսում, Պերիանդրոսին փոխարինած Պսամմետիքոսի իշխանության տապալումից հետո, հաղթեցին խոշոր վաճառականներն ու հողատերերը, և հաստատվեց առևտրական օլիգարխիայի տիրապետությունը: Իշխանությունը մասնակցելու իրավունքը որոշվում էր գույքային ցենզով:

Հատկապես լիակատար էր ժողովրդի հաղթանակը Աթենքում, որտեղ տիրանիայի տապալումից հետո մ. թ. ա. VI դ. հաստատվեցին կառավարման առավել դեմոկրատական ձևեր (տե՛ս գլուխ 8):

Սակայն ինչպիսին էլ լինեին տիրանիայի անկումից հետո հաստատված իշխանության ձևերը, մի բան ընդհանուր էր՝ բոլոր պոլիսներում տոհմական ավագանին դադարեց օգտվել հատուկ արտոնություններից: Իշխանությունը զավթեց գույքային ստրկատեր ավագանին, որը հզոր էր իր և՛ շարժական, և՛ անշարժ հարստությամբ: Այդ ժամանակաշրջանի վերջում արտադրության տիրապետող եղանակն է դառնում ստրկատիրությունը, իսկ ստրուկներն ու ստրկատերերը վեր են ածվում հասարակության երկու հիմնական հակամարտ դասակարգերի: Անցումը դեպի ստրկատիրության ավելի զարգացած ձևերը հանգեցրեց նոր հասարակական կարգերի, ստրկատիրական պոլիսի ստեղծմանը:

#### ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՊՈԼԻՍ

Սովորաբար «պոլիս» քառը թարգմանում են որպես «քաղաք-պետություն»: Այդ սահմանումն, այնուամենայնիվ, լիովին ճշգրիտ չէ:

Պոլիսը տվյալ քաղաք-պետության բոլոր քաղաքային ու գյուղական բնակավայրերում ապրող համայն քաղաքացիների ամբողջությունն էր. նրա մեջ էին մտնում բոլոր վարելահողերն ու այգիները, բոլոր հանքերն ու քարհանքերը: Միևնույն ժամանակ հույնները պոլիս էին անվանում տվյալ երկրի ամբողջ բնակչության քա-

ղաքական, տնտեսական ու կրոնական կյանքի կենտրոնը, տվյալ պետության բոլոր քաղաքացիների միազորման կենտրոնը: Ստրուկը ևս պոլիսի սեփականությունն էր, սակայն ի տարբերություն այն բանի, որ քաղաքացիներին անվանում էին քաղաքի անունով, ստրուկներն, օրինակ՝ Աթենքում, կոչվում էին «ատտիկա», այսինքն՝ Ատտիկայի հողին պատկանողներ: Պոլիսի տարածքը երբեմն բավականին մեծ էր, երբեմն էլ՝ շատ փոքր: Այսպես, Մեսսենիայի նվաճումից հետո Հունաստանում ամենամեծ տարածքը ուներ Սպարտան, մոտ 8400 քառ. կմ: Ատտիկայի տարածքը մոտավորապես կազմում էր 2550 քառ. կմ, Արգոսիը՝ 1400 քառ. կմ: Եվբեա կղզում վեց պոլիսներ բաժանել էին իրար մեջ 3770 քառ. կմ տարածություն: Փոկիսի 22-ից ոչ պակաս պոլիսներ տեղավորված էին 1650 քառ. կմ տարածության վրա, այսինքն նրանցից յուրաքանչյուրը միջին հաշվով տներ 70-ից մինչև 75 քառ. կմ տարածք:

Տվյալ պետության բոլոր քաղաքացիները, որոնք ապրում էին բուն քաղաքում կամ իրենց հողային տիրույթներում ու քաղաքի գյուղական տարածքում գտնվող ավաններում, պոլիսի բնակիչներ էին և կոչվում էին նրա անունով՝ սպարտացիներ, աթենացիներ, կոռնթացիներ, մեգարացիներ, միլետացիներ և այլն:

Հույների պատկերացմամբ միևնույն ցամաքի քաղաքացիները «երվում էին մեկ նախնիից, այսինքն բոլորը համարվում էին միմյանց հետ արենակցությամբ կապվածներ: Այդ ազգակցական կապերն արտահայտվում էին նրանում, որ քաղաքացիները պատկանում էին միևնույն ֆիլաներին, ֆրատրիաներին ու տոհմերին, մասնակցում էին միևնույն կրոնական ծեսերին ու պաշտամունքներին: Ժամանակի ընթացքում քաղաքներում հայտնվեցին մեծ թվով մարդիկ, որոնք տվյալ համայնքի արենակցային կապերից դուրս էին գտնվում. նրանք օտարականներն էին և Աթենքում, օրինակ, կոչվում էին մետոյկներ (այսինքն Ատտիկայի սահմաններից դուրս գտնվող քաղաքներից եկած վերարենակներ), Սպարտայում՝ պերիոյկներ (սպարտացիների քաղաքական իրավունքները չստացած տեղական ազատ բնակչությունը):

Աթենքում պոլիսային կարգերի հետագա զարգացման ընթացքում քաղաքացիների պարտադիր պատկանելությունը ավագանու տոհմային ֆիլաներին վերացվեց, Մ. թ. ա. VI դ. վերջում Աթենքում տոհմական ֆիլաների փոխարեն ստեղծվեցին նոր տերիտորիալ օկրուգներ (ֆիլաներ), որոնց կազմի մեջ մտան նաև տոհմական ավագանու դեմ մղած պայքարին ակտիվորեն մասնակցելու համար քաղաքացիական իրավունքներ ստացած փոքր թվով մետոյկներ: Նորաստեղծ տերիտորիալ ֆիլաները պահպանեցին ֆիլաներին

պատկանող քաղաքացիների ու պետութեան մնացյալ ազատ բնակչութեան՝ մետոյկների միջև եղած պատենշը: Առավել ևս դա վերաբերում էր ստրուկներին: Տիլայի ցուցակների մեջ գրանցվում էին միայն քաղաքացիները:

Անկախ այն բանից, թե ինչպիսին էր պոլիսների կառուցվածքը՝ օլիգարխիական թե դեմոկրատական, պոլիսի էութունը, ինչպես նաև դրա հիմնական պետական ինստիտուտները, չէին փոխվում: Ամենուրեք պահպանվում էին ֆիլաներ ու ֆրատրիաներ, ժողովրդական ժողովներ (եկկլեսիա, ապելլա) և խորհուրդ (բուլե, գերուսիա), թեև այդ մարմինները արտաքինով իրար նմանվելով՝ օլիգարխիական ու դեմոկրատական պոլիսներում կատարում էին տարբեր դեր: Հնդհանուրը նրանց մոտ այն էր, որ և՛ օլիգարխիական, և՛ դեմոկրատական պոլիսը ստրկատիրական էր: Պոլիսի այդ ստրկատիրական հիմքը անսասան էր մնում նաև այն դեպքում, երբ քաղաքացիութեան շնորհումը սահմանափակվում էր գուլքային ցենզի սահմանումով, ինչպես և քաղաքացի ծնողներից սերվելով:

Պոլիսի տնտեսական հիմքն էր ստրուկների հարկադիր աշխատանքը: Հենց ստրուկների աշխատանքի հարկադիր բնույթն էր, որ կյանքի կոչեց մի միասնական քաղաքացիական կոլեկտիվի մեջ ստրկատերերի միավորման անհրաժեշտութունը: Սակայն ստրկատերերի թիվը յուրաքանչյուր պոլիսում չէր կարող մեծ լինել, ուստի անհրաժեշտ էր պոլիսի մեջ ընդգրկել նաև մանր ազատ արտադրողներին, առաջին հերթին գյուղացիներին՝ որպես պոլիսի հիմնական զինվորական ուժ: Մի քանի ավելի դեմոկրատական քաղաքներում գյուղացիներին միանում էին նաև արհեստավորները: Մանր ազատ արտադրողների ընդգրկումը պոլիսի կազմի մեջ նրանց քաղաքացիական իրավունքներ տրամադրելու ճանապարհով՝ պետութեան ռազմական ուժի մեծացման հիմքն էր: Այդ ուժը անհրաժեշտ էր թե՛ հարձակումներից պաշտպանվելու, և թե՛ հարեանների նկատմամբ ագրեսիվ քաղաքականութուն վարելու համար: Ստրկութեան գոյութունը հնարավորութուն տվեց ստրուկների ուսերին դնել կոպիտ ֆիզիկական աշխատանքի ամբողջ ծանրութունը՝ դրանից ազատելով քաղաքացիական շքավորութեանը, որը, այսպիսով, ձեռք բերեց արտոնյալ դիրք ստրուկների համեմատութեամբ: Մանր արտադրողները կազմեցին պոլիսի աշխարհագորը՝ ծանր զինված ռազմիկներ (հոպլիտներ) ու թեթև զինված ռազմիկներ, որոնք անգամ պատերազմի ժամանակ հանդերձավորվում էին սեփական հաշվին:

Մանր ազատ արտադրողները գրավում էին միջանկյալ դիրք պոլիսների երկու հիմնական հակադիր դասակարգերի՝ ստրկատե-



քերի ու ստրուկների միջև: Հունական հասարակության զարգացման տարբեր շրջաններում նրանց դրուժյունն էապես փոխվում էր:

Մանր ազատ արտադրողների տնտեսական անկայունությունը բացատրվում էր նախ ստրկության զարգացումով: Ստրուկների աշխատանքը աստիճանաբար դուրս էր մղում ազատ աշխատանքը: Ազատ արտադրողը միշտ չէ, որ կարող էր դիմանալ ստրուկների ավելի էժան աշխատանքի մրցակցությանը: Դա բացատրվում էր նաև գյուղացիների հետզհետե հողազրկմամբ՝ վաշխառության ու հողային գրավադրման աճի, ժառանգների միջև հողը մանր բաժինների տրոհելու հետևանքով: Պոլիսների միջև ընթացող անընդհատ պատերազմները ևս արագացնում էին գյուղացիական տնտեսությունների սնանկացումը:

Սակայն քանի դեռ պոլիսային կարգերը բավարարում էին զարգացող ստրկատիրական տնտեսության պահանջները, ստրկատերերը շահագրգռված էին ազատ քաղաքացիներից կազմված ժողովրդական աշխարհազոր ունենալու մեջ՝ պոլիսի ամբողջականությունը պահպանելու համար: Այս պատճառով պոլիսային կազմակերպության վրա դրվեց քաղաքացիների, այսինքն՝ քաղաքացիական կոլեկտիվի բոլոր անդամների նյութական ապահովման մասին հոգալու և առաջին հերթին՝ գյուղացիներին հողաբաժիններով ապահովելու պարտականությունը: Կ. Մարքսը պոլիսն անվանում էր հին հասարակության ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական կազմակերպություն: Պոլիսի ներքին տնտեսական քաղաքականության նպատակն էր հարթել քաղաքացիական կոլեկտիվում եղած սուր սոցիալ-գույքային հակասությունները: Պոլիսի բաժանումը երկու թըշնամի խմբերի անխուսափելիորեն կհանգեցներ պոլիսի թուլացմանը, դրա տրոհմանը, հետևաբար և դրա կործանմանը, որովհետև պոլիսին դիմակայում էին թվով հավասար, իսկ որոշ դեպքերում քաղաքացիական կոլեկտիվը գերազանցող ստրուկներ:

Ցուրաքանչյուր պոլիսի բնորոշ էր սեփականության երկակի ձևի գոյությունը՝ ստրկատերերի մասնավոր սեփականությունը շարժական և անշարժ գույքի նկատմամբ և սեփականության համապոլիսային ձևը՝ որպես պոլիսում միավորված ամբողջ քաղաքացիական կոլեկտիվի գերագույն սեփականություն: Սեփականության երկակի ձևը պոլիսի սոցիալական կազմի արտահայտությունն էր. նրա մեջ մտնում էին՝ հող, դրամ, շարժական գույք, արտադրության միջոցներ ու գործիքներ, ստրուկներ ունեցող ստրկատերերի դասակարգն ու մանր ազատ արտադրողները. վերջիններս հիմնականում ապրում էին սեփական աշխատանքով: Ազատներն ունեին արտադրության միջոցներ ու աշխատանքի պարզ գործիքներ, սակայն պետք է աշ-

խատեին, որպեսզի կերակրեին իրենց ու ընտանիքի անդամներին: Նրանց շահերն էր ապահովում համայնական-պետական սեփականությունը, որը խանգարում էր ստրկատերերի՝ որպես մասնավոր սեփականատերերի անսահման հարստացմանը: Դա հիմնականում արտահայտվում էր պոլիսի անդամների մասնավոր սեփականության վրա քաղաքացիական կոլեկտիվի հսկողությունը սահմանելու ձևով:

Ամեն մի պոլիսում քաղաքացին ուներ հողամասի տիրելու իրավունք: Յուրաքանչյուր հողատեր ուներ հողի առուծախի իրավունք, բայց միայն պոլիսի սահմաններում, այսինքն հողաբաժինների շրջանառությունը կատարվում էր միայն քաղաքացիների միջև:

Հարուստ հողատերերը պետք է կատարեին հասարակական պարտույթներ, այսպես կոչված լիտուրգիաներ (պատարագներ) պոլիսի համայնքի օգտին: Նրանց վրա էր դրվում համապոլիսյան տոներ, մրցություններ կազմակերպելու, ռազմական նավեր (տրիերաներ) սարքավորելու պարտականությունը և այլն: Երբեմն այդ ծախսերը կազմում էին նշանակալից գումարներ: Պետությունը սահման էր դնում հարուստների կուտակումներին, որոշում ու հսկում էր հողային տիրույթների առավելագույն շահերը:

Նման միջոցներով պետությունը ձգտում էր կանխել համախորձված քաղաքացիական կոլեկտիվի թուլացումն ու դրանով պահպանել ազատ արտադրողներին, որովհետև միայն նրանք կարող էին կազմել քաղաքացիների աշխարհագորը:

Գոյություն ունեին հունական պոլիսների տեղական տարբերակներ: Մենք կանգ կառնենք պոլիսային կազմակերպության միայն երկու ձևերի վրա, ձևեր, որոնք առավել հստակորեն են արտահայտում ստրկատիրության վրա հիմնված դեմոկրատական ու օլիգարխիական պոլիսների բնույթը: Ե՛վ մեկ, և՛ մյուս պոլիսում առկա էր բավականին ստվար թիվ կազմող ոչ քաղաքացիական բնակչություն, որը տարբեր աստիճանի կախման մեջ էր գտնվում պոլիսի քաղաքացիական կոլեկտիվից, սակայն նրանցից յուրաքանչյուրում հաստատվեց ստրուկների շահագործման սեփական համակարգը:

Օլիգարխիական պոլիսում (Սպարտա) հիմնական հողագործական աշխատանքը դրվեց դորիացիների կողմից նվաճված տեղական հողագործ բնակչության սերունդների վրա: Այդ հողագործ-ստրուկները (հելոտները) կարող էին պատկանել կամ ամբողջ պոլիսին, կամ առանձին անվանի տոհմերին, կամ էլ անվանի ընտանիքներին: Թուրք գեպքերում, պոլիսի քաղաքացիները ստրուկների միջոցով մշակվող հողաբաժինների տերերն էին: Այդ ստրուկները Սպար-

տայում պատկանում էին մեկ ցեղի. նրանք Հակոնիայի ու Մեսսե-  
նիայի հինավուրց բնակիչներն էին:

Դեմոկրատական պոլիսում (Աթենք) հողագործական աշխա-  
տանքը տոհմային ավագանու դեմ մղած պայքարում գյուղացիների  
ու քաղաքաբնակների կողմից ձեռք բերված հաղթանակի շնորհիվ  
դարձավ ազատ քաղաքացիների արտոնություն: Ստրուկները շահա-  
գործվում էին գերազանցապես արհեստի ու առևտրի բնագավա-  
ռում: Ստրուկության այդ համակարգի հիմքը կազմում էր ստրուկների  
գնումը: Գնված ստրուկները ամեն տարի բերվում էին տարբեր  
գաղթավայրերից ու երկրներից:

Օլիգարխիական պետությունում մանր հողագործի սնանկացու-  
մը ու նրա կողմից իր ընտանիքի ու ստրուկների աշխատանքի մի-  
ջոցով մշակվող հողի կորուստը կապված էր քաղաքացիական իրա-  
վունքների կորստյան հետ:

Դեմոկրատական պոլիսում գյուղացիների մանր հողատիրու-  
թյունն ու տնայնագործ-արհեստավորի մանր արհեստը կազմում էին  
դեմոկրատական կարգերի հիմքը: Մանր ազատ արտադրողները  
հավելյալ արդյունքի մի մասը ստանում էին ստրուկի աշխատան-  
քից՝ լիտուրգիաների ձևով, որը հարուստ քաղաքացիների կողմից  
(եբրեմն նաև հարուստ մետոյկների կողմից) ստրուկների աշխա-  
տանքից ստացված հավելյալ արդյունքի մի մասը աղքատ քաղա-  
քացիների օգտին հատկացնելու կոնկրետ ձևն էր:

Հույների մոտ պոլիսային համակարգի զարգացման ընթաց-  
քում (չնայած առանձին պոլիսների միջև տեղի ունեցող բազմաթիվ  
պառակտիչ պատերազմների) լեզվի, գրականության, պաշտամունք-  
ների, տնտեսական ու քաղաքական կարգերի եղած միասնությունը  
նպաստեց բոլոր հելլենների միասնության վերաբերյալ պատկերա-  
ցումների զարգացմանը մանավանդ ոչ հունական պետությունների  
ու ցեղերի թշնամական աշխարհի առկայության պայմաններում:

Ներմուծված գնովի կամ ռազմագերի ստրուկների թվի աճին  
զուգընթաց ամրապնդվող այդ միասնությունը գիտակցվեց որպես  
«բարբարոսների» դեմ ուղղված հելլենների միասնություն, իսկ բար-  
բարոսների շարքին հույները դասում էին արևելյան ու արևմտյան  
երկրների ժողովուրդներին:

Միջպոլիսային ու միջազգային կապերի ընդլայնման շնորհիվ  
աճում էր համահունկան սրբավայրերի ու աստվածների մեծա-  
րումը: Այդ աստվածների տաճարները սովորաբար տեղադրվում էին  
ինչպես մայրցամաքային, այնպես և կղզային ու փոքրասիական  
հույների համար մատչելի բոլոր վայրերում:

Տաճարների տարածքը հայտարարվում էր սուրբ ու անձեռնմխե-

լի: Գեպի տաճարները տանող «սուրբ ճանապարհները» բաց էին անգամ պառակտիչ պատերազմների ժամանակ, ու տաճար ուղևորվող ամեն մի հույնի անձեռնմխելիությունը ապահովված էր, քանի որ հարձակումը նրա վրա համարվում էր սրբապղծություն: Տաճարային բոլոր տոները, որոնք հավաքում էին ժողովրդի մեծ բազմություն, միաժամանակ համահունական տոնավաճառներ էին: Գրանից բացի, տաճարը այն անվտանգ տեղն էր, ուր հույները պահ էին տալիս իրենց հարստությունները, հաճախ՝ դրամական, դրա դիմաց ձեռք բերելով տոկոսներով տաճարային փոխառություն ստանալու իրավունք: Հատկապես մեծ համբավ ունեին Օլիմպիա (էլիսում) ու Գելիփք (Միջին Հունաստան) համահունական սրբավայրերը, ինչպես նաև Պոսելդոնի տաճարը Կորնթոսում, որտեղ տարվա որոշակի օրերին կազմակերպվում էին «պանեգիրիսներ», այսինքն բոլոր մետրոպոլիսների ու գաղթավայրերի հույների հավաքներ: «Պանեգիրիսները» ուղեկցվում էին համահունական խաղերով ու մրցություններով:

Բացի այդ, ստեղծվում են նաև մի որևէ խոշոր ու հարուստ տաճարի հարևան համայնքների միություններ: Տաճարի շրջապատում կազմակերպված միության անդամները կոչվում էին ամփիկտիոններ (ամփիկտիոնիա նշանակում էր «տաճարի շրջակայքում հող ունեցողներ»): Նշանավոր էր Գելիփյան տաճարի ամփիկտիոնիան: Ամփիկտիոնները պիտի պաշտպանեին տաճարը արտաքին հարձակումներից: Ամփիկտիոններն իրար հետ կնքում էին պայմանագրեր՝ պարտավորվելով չպատերազմել միմյանց դեմ: Տաճարի տարածքում խաղերի անցկացումն ու համահունական տոնավաճառներից ստացված եկամուտները մեծ օգուտներ էին տալիս ամփիկտիոններին:

Հունական ավանդույթի համաձայն, առաջին համահունական խաղերն անցկացվեցին օլիմպիադայում, Զևսի տաճարի մոտ, մ. թ. ա. 776 թ.: Քանի որ այդ՝ օլիմպիական կոչված խաղերը անցկացվում էին շորս տարին մեկ անգամ, ապա հետագայում հույները նաև օրացուցային հաշվարկը վարեցին ըստ օլիմպիադաների՝ սկսելով առաջին օլիմպիադայից: Մ. թ. ա. VIII դ. օլիմպիական խաղերը հունական մետրոպոլիսների համար դարձան համահելլենական, իսկ մ. թ. ա. VII դ. կեսից դրանք բաց հայտարարվեցին բոլոր հույների, ինչպես արևելյան, այնպես և արևմտյան գաղթավայրերի քաղաքացիների համար: Այդ խաղերի քաղաքական նշանակությունը այն էր, որ սկզբում լինելով սոսկ դորիացիների ուժի ու արիության մրցություններ, դրանք հետո վերածվեցին տոների, որոնք նշանա-

վորում էին հույների գերազանցությունը ոչ հույների նկատմամբ ֆիզիկական, հոգեկան ու ռազմական տեսակետից:

Պոլիսային կյանքի զարգացման արդյունքը եղավ առևտրական կապերի ամրապնդումը ինչպես բուն Հունաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս և ստրկատերերի պոլիսային գաղափարախոսության ձևավորումը: Գոյացավ այլոց, այսինքն՝ «բարբարոսների» կարգերի նկատմամբ հունական քաղաքական կարգի առավելության համոզմունքը: Հույներն իրենց բարոյական իրավունքն էին համարում օգտագործել բոլոր ոչ հույներին իբրև ստրուկներ: Պոլիսի ստրկատիրական գաղափարախոսության այդ սաղմերը հետագա զարգացում ստացան Արիստոտելի «բնությունից ստրուկներ» ուսմունքի մեջ:

### Գլուխ 5. ՍՊԱՐՏԱՆ Մ. Ք. Ա. VIII—VI ԴԴ.

Արիստիկ Սպարտայի պատմության աղբյուրներ քիչ են պահպանվել: Սպարտացիների հասարակական հարաբերությունների, պետական կարգի, դաստիարակության համեմատաբար մանրամասն ընդհանուր ականարկներ գտնում ենք ուշ շրջանի հեղինակների մոտ: Նրանք համակրում էին օլիգարխիային ու ավել կամ պակաս շափով իդեալականացնում էին սպարտական կարգերը: Դա հատկապես բնորոշ է Քսենոֆոնին ու Պլուտարքոսին, որոշ չափով՝ Արիստոտելին: Բացի այդ, նշված հեղինակները սպարտացիներ չէին ու լրիվ տեղյակ չէին Սպարտայի վաղ պատմությանը:

Ուշագրավ են արիստիկ Սպարտայի մասին եղած առանձին տեղեկությունները, որոնք պահպանվել են Հերոդոտոսի ու Թուկիդիդեսի աշխատություններում, ինչպես նաև Պավսանիասի «Հելլագայի նկարագրությունում»:

Սպարտական սովորույթների մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում սպարտացիների համար ստեղծագործող քանաստեղծների, հատկապես մ. թ. ա. VII դ. ապրած Տյուրտայոսի ոտանավորները: Սպարտական արձանագրություններ քիչ են պահպանվել, բացի այդ դրանք հակիրճ ու պատառիկային են: Սպարտայում XX դ. կատարված պեղումների ժամանակ հայտնաբերվեցին խեցեղեն, կապարից, բրոնզից, փղոսկրից ու ալլ նյութերից պատրաստված իրեր: Դա հնարավորություն տվեց ավելի լավ հասկանալ գրավոր աղբյուրները, ինչպես և պատկերացում կազմել արիստիկ Սպարտայի մշակույթի զարգացման մասին:

Դորիական վերաբնակիչների վերջին գաղթօջախներից մեկը հաստատվեց Լակոնիայում, Եվրոտաս գետի հովտում: Այն ժամանակ Լակոնիան բոլորից քիչ էր բնակեցված: Սակայն տեղացի աքայացիներն այստեղ ևս համառ դիմադրություն ցույց տվեցին դորիացիներին: Հատկապես եռանդուն դիմադրեց Ամիկլեք քաղաքը, որի հետ նվաճողները ստիպված էին համաձայնության գալ ու միավորվել:

Պելոպոնեսի հարավարևելյան մասը՝ Լակոնիան, արևելքում ծովափից անջատված է Պարնոն լեռնաշղթայով: Արևմուտքում Պելոպոնեսի այլ մարզերից նա անջատված է Տայգետոս լեռնաշղթայով ու նրա ճյուղավորումներով: Եվրոտասի արգավանդ հովտի հյուսիսային մասում, ինչպես դա ցույց են տալիս հնագիտական պեղումները, մ. թ. ա. X դ. ծագեց Սպարտա քաղաքը: Ավելի հին ժամանակաշրջանում նրա տեղում չի եղել շատ թե քիչ նշանակալից բնակավայր:

Եկվորների հին բաժանումը ֆիլաների զուգակցվում էր գրաված վայրերում ըստ օբաների\* ծագած նոր տերիտորիալ բաժանման հետ: Սկզբում կային շորս օբաներ, հինգերորդը դարձավ Ամիկլեքի օբան: Դորիական ցեղի դասակարգային շերտավորման պրոցեսը արագացավ նրա կողմից Լակոնիայի բնակչության ստրկացման հետևանքով: Հին Սպարտայում պետությունը առաջ եկավ «որպես անմիջական հետևանք լայնածավալ օտար տերիտորիաների նվաճման, որոնց տիրապետության համար տոհմային հասարակարգը ոչ մի միջոց չէր ընձեռում»<sup>4</sup>:

Մի փոքր հովտում վարվող էքստենսիվ գյուղատնտեսության պայմաններում սպարտացիների մոտ արագորեն զգացվեց հողի պակաս: Այն ուժեղանում էր նրանց միջավայրում ընթացող շերտավորման հետևանքով: Սպարտան, ինչպես և այն ժամանակի մյուս հունական պոլիսները, ստիպված էր բռնել Մելոս ու Թերա կղզիների գաղութները աղքատացած քաղաքացիներ դուրս բերելու ուղին: Իսկ հետո, մ. թ. ա. VIII դ. վերջում, սպարտացիների մի մեծ խումբ, պարտություն կրելով դասակարգային ու քաղաքական պայքարում, գաղթեց Իտալիայի հարավը՝ այնտեղ հիմնելով Տարաս գաղութը: Հողի պակասը ու սոցիալական շերտավորումը հարկադրում էին սպարտացիներին նվաճել Տայգետոսի արևմտյան լանջե-

\* Օբա—տոհմային ստորաբաժանում դորիացիների մոտ. համապատասխանում էր ատտիկյան ֆրատրիային:

<sup>4</sup> Կ. Մաբլե և Ց. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 3, էջ 430—431:

րի այն կողմում՝ Մեսսենիայում գտնվող տարածքները: Մանր պատերազմը սպարտացիների մեսսենյան դորիացի ցեղակիցների դեմ՝ 1-ին մեսսենյան պատերազմը, ավարտվեց սպարտացիների հաղթանակով: Սպարտացիները պարտադրեցին նվաճված մեսսենյան բնակչությանը տալ հաղթողներին բերքի կեսը:

Մ. թ. ա. VII դ. կեսին դաժանորեն շահագործվող մեսսենիացիները ապստամբեցին: Այդ ապստամբությունը հայտնի է որպես երկրորդ մեսսենյան պատերազմ: Թեև ապստամբներին օժանդակեցին նաև Պելոպոնեսի այլ շրջաններ, սպարտացիները կրկին հաղթեցին, ճիշտ է, ուժերի մեծ լարումով ու երկար տարիներ պատերազմելուց հետո: Ոչ բոլոր մեսսենիացիները ստրկացվեցին. նրանց առավել ակտիվորեն դիմադրող մասը արտագաղթեց հայրենիքից:

Սպարտացիների գրաված ու հին հունական մասշտաբներով լայնատարած համարվող հողերի ներգրավումը շրջանառության մեջ և նվաճած բնակչության դաժան շահագործումը որոշ ժամանակով թուլացրեցին սոցիալական պայքարը Սպարտայում: Վերացավ աղքատացած քաղաքացիներին գաղթավայրեր դուրս բերելու անհրաժեշտությունը, դադարեց գաղութաբնակեցումը:

Առաջին և երկրորդ մեսսենյան պատերազմների ժամանակ, մ. թ. ա. VIII—VII դդ., վերջնականապես ձևավորվեց սպարտական պետությունը՝ որպես ստրկատեր արիստոկրատիայի պետություն: Այն կազմակերպված էր ռազմական սկզբունքով՝ լակոնիայի ու Մեսսենիայի նվաճված բնակչության շահագործումը ապահովելու համար:

#### ՍՊԱՐՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԱՑՆԵ ԿԱԶՄԸ

Նվաճելով հողագործ բնակչությանը սկզբում լակոնիայում՝ հիմնականում աքայացիներին, իսկ հետո Մեսսենիայում՝ դորիացիներին, սպարտացիները թողեցին նրանց իրենց հողերում, սակայն հարկադրեցին վճարել բավական բարձր բնատուրք ու սպասարկել իրենց տերերին՝ սպարտացիներին: Նվաճված հողագործ բնակչությունը դեռևս լակոնիայի գրավման ժամանակ ստացավ հելոտներ անունը: Այդ տերմինի ծագումն այնքան էլ պարզ չէր անգամ իրենց՝ հների համար: Բայց դրա ծագման վերաբերյալ եղած ավանդությունները կապված են լակոնիայի նվաճման անցքերի հետ: Պատմում էին, օրինակ, որ դորիացիներին հատկապես դիմադրեց Պելոպոնեսի հարավում գտնվող Հելոս քաղաքը, որի բնակիչները, սակայն, վերջիվերջո ստրկացվեցին ու իրենց անունը տվեցին սպարտացիների կողմից ստրկացված ամբողջ բնակչությանը:

Ըստ ավանդույթյան, սպարտացիները նվաճված Լակոնիայի ու Մեսսենիայի արգավանդ տարածքներից իրենց համար «բաժին հանեցին» 10 կամ 9 հազար հողակտորներ (կլերներ): Այսպիսով, նրանք վերացրեցին իրենց միջավայրում ծայր առած գույքային անհավասարությունը:

Յուրաքանչյուր կլերոս (վիճակ) դառնում էր սպարտական ընտանիքի ժառանգական տիրույթ: Այդ հողամասում ապրող հելոտները պարտավոր էին իրենց աշխատանքով ապահովել կլերոսի տեր սպարտացուն ու նրա ընտանիքին: Սպարտացիներին էր պատկանում հելոտներին շահագործելու բացառիկ իրավունքը: Ընդ որում, հելոտները ձևականորեն համարվում էին ռազմիկ-հաղթողների ամբողջ կազմակերպության սեփականությունը: Այդ կազմակերպությունը նախկինում ըստ կառավարման ձևի ռազմական դեմոկրատիա էր, իսկ այժմ՝ վաղ ստրկատիրական դասակարգային հասարակության պայմաններում, վերածվեց արիստոկրատական մի միավորման՝ «հավասարների համայնքի», ինչպես սպարտացիները անվանում էին իրենց կազմակերպությունը:

Սպարտացիները ստացան բերրի հողերի լավագույն մասերը: Բացի այդ հողակտորներից, առանձնացվեցին նաև 30 հազար հողաբաժիններ պերիոյկների, այսինքն «շրջապատում ապրողների» համար: Պերիոյկները զբաղվում էին արհեստներով ու առևտրով: Սպարտացի պետեր-հարմոստների կողմից կառավարվող նրանց ավանները ցրված էին երկրով մեկ, սահմանին ավելի մոտ գտնվող լեռնային շրջաններում: Պերիոյկները պատրաստում էին կավե ու մետաղյա ամանեղեն, այդ թվում և գեղարվեստական, արտադրում էին բրդյա գործվածքներ ու հագուստ, ինչպես նաև պողպատյա զենք: Հին Հունաստանում Լակոնիայի պողպատը համարվում էր լավագույններից մեկը: Լակոնական պողպատից պերիոյկների ձեռքով պատրաստված զենքը բավականաչափ նպաստեց Սպարտայի ռազմական հզորության աճին: Սակայն սպարտական հասարակության տնտեսական հետամնացության հետևանքով պերիոյկները ի վիճակի չէին շատ թե քիչ նշանակալից շահով զարգացնել արհեստներն ու առևտուրը:

Ըստ ավանդույթյան, պերիոյկները կազմում էին նվաճված քնակչության փոքր մասը: Պերիոյկները չէին ստրկացվել հաղթողների կողմից. վերջիններս բավարարվեցին նրանով, որ հելոտների վերածեցին ավելի արգավանդ հովիտների բնակիչներին: Լինելով ազատ, պերիոյկները զրկվեցին քաղաքական իրավունքներից և տուրք էին վճարում սպարտացիներին: Սեփական ուժերով ու միջոցներով նրանք մշակում էին քիչ արգավանդ հողերում ունեցած



իրենց հողաբաժինները: Պերիոյկները պարտավոր էին ծառայել սպարտական զորքում՝ կազմելով օժանդակ ջոկատներ:

Ժամանակակից բուրժուական հետադեմ պատմաբանները, իղեալականացնելով Սպարտան, ընդգծում են «սպարտական մշակույթի նվաճումները»: Սակայն նախ անհրաժեշտ է սահմանափակել այդ նվաճումների շահերը և երկրորդ՝ շպետք է մոռանալ, որ այդ մշակույթը գլխավորապես ստեղծվում էր ճնշված պերիոյկների ու հելոտների աշխատանքի հիման վրա:

Սպարտացիները, պերիոյկներն ու հելոտները արխաիկ շրջանում ձևավորված դասակարգեր-դասեր էին: Նվաճումը չէր կարող դրեց նրանց իրավական վիճակի վրա:

Շահագործողները՝ սպարտացիները, կազմում էին տիրապետող դասակարգ-դասը, որի կառավարող մարմինն էր իր կազմակերպման մեջ ռազմական դեմոկրատիայի վերապրուկները պահպանած սպարտական պետությունը: Սպարտացիներն օգտագործեցին նախորդ հասարակարգի այդ վերապրուկները բնակչության մյուս մասի վրա իրենց տիրապետությունն ամրապնդելու համար:

Սպարտական հասարակությունը ինչ-որ բացառիկ երևույթ չէր Հին Հունաստանում: Այն ընդհանուր գծեր ուներ կրետական, թեսալական ու Հին Հունաստանի այլ հետամնաց շրջաններում եղած հասարակությունների հետ: Իրենք՝ սպարտացիներն, ընդգծում էին սեփական կապերը Կրետի ու Դելփիքի՝ կրետական ծագում ունեցող սրբավայրի հետ: Տեղական ստրկացված բնակչության զանգվածի մեծությունը սարսափեցնում էր փոքրաթիվ սպարտացիներին, Իսկ քանի որ հելոտների շահագործումը կատարվում էր «անմիջապես դեպի սպառման միջոցների արտադրությունը ուղղված նահապետական ստրկատիրական մի սխտեմի»<sup>5</sup> հիմքի վրա, սխտեմ, որը միայն մի փոքր ինտենսիֆիկացվել էր դասակարգային հասարակության պայմաններում, ու քանի որ սպարտացիները հոժարակամ հրաժարվել էին արտադրության մեջ որևէ մասնակցություն ունենալուց, ապա նրանց մոտ բացակայում էր հելոտներից հնարավոր կարճ ժամկետում առավելագույն աշխատանք քամելու ձգտումը: Սակայն տեղի էին ունենում հելոտների դաժան ջարդեր ու անգամ սպանություններ՝ կենդանի մնացածներին ահաբեկելու համար: Դրանք սպարտական պետությունում պաշտոնապես օրինականացվել էին «կրիպտեաներ» անունով: Հունական հեղինակներից մեկը վկայում է, որ սպարտացիները երկյուղ էին կրում իրենց հելոտներից, որոնց ընդհանրապես արգելվում էր զենք կրել: Սպար-

<sup>5</sup> Կ. Մաբլո, Կապիտալ, հ. 3, 1 մաս, 111 դիրք, Երևան, 1947, էջ 319:

տացիները երբեք չէին բաժանվում զենքից. ճաշում էին զինված, բնում էին՝ իրենց մոտ ունենալով զենք, բնակարաններում դնում էին խորամանկ փականներ: Հելոտների նկատմամբ կիրառվող ահարկման համակարգը ապահովում էր նրանց կոլեկտիվ սեփականատիրոջ դերում հանդես եկող սպարտացիների փոքրաթիվ դասակարգ-դասի իշխող դիրքը:

Երկու հակամարտ դասակարգ-դասերից առաջինը՝ սպարտացիները, կարող էին բնութագրվել Կ. Մարքսի խոսքերով իբրև պետության քաղաքացիներ, որոնք «միայն համատեղ են տիրում իրենց աշխատող ստրուկներին և արդեն այդ իսկ պատճառով կապված են համայնքային սեփականության ձևով»<sup>6</sup>: Երկրորդ դասակարգ-դասը՝ հելոտները, ստրկական կախման մեջ էին գտնվում նվաճման իրավունքի հիման վրա, սակայն տնտեսության ցածր մակարդակի հետևանքով նվաճողները թողեցին հելոտներին նրանց նախկին հողակտորները՝ նվաճողներին պահելու պարտավորությամբ: Երրորդ դասակարգ-դասը՝ պերիոլկները, անմիջական ազատ արտադրողների դասակարգ էր: Այդպիսի դասակարգի գոյությունը բնորոշ էր բոլոր հին ստրկատիրական հասարակարգերին: Ստրկատիրական հասարակության զարգացման ընթացքում այդ դասակարգը սովորաբար շերտավորվում էր, ընդ որում նրա մի մասը աղքատանում էր, ընկնում էր շատ թե քիչ կախյալ վիճակի մեջ, պարտային ստրկության մեջ, իսկ հետագայում դառնում էր լյումպենպրոլետարիատ: Սակայն սպարտական լճացած հասարակության պայմաններում պերիոլկների, ինչպես նաև մյուս երկու հիմնական դասակարգերի վիճակը երկար ժամանակ զգալիորեն չէր փոխվում:

#### ՍՊԱՐՏԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Սպարտացիները հիմնեցին իրենց դասակարգային տիրապետութունը ստրկատիրական հասարակարգի հաստատման վաղ շրջանում ու հետզհետե ստեղծեցին Հին Հունաստանի պայմաններում ուժեղ, սակայն իր կառուցվածքով պրիմիտիվ, ռազմականացված արիստոկրատական ստրկատիրական պետութուն:

Հետագա սերունդները, փորձելով բացատրել այն ամենը, ինչ անհասկանալի էր իրենց համար, սպարտական հասարակության ու սպարտական պետության կազմակերպումը վերագրեցին մեկ անձի գործունեության: Այդպես ծագեց առասպելը սպարտական պատմության վաղ շրջանում՝ մ. թ. ա. IX կամ VIII դ. ապրած թագավորական խնամակալ Լիկուրգոսի կողմից անցկացված ռեֆորմի մասին:

<sup>6</sup> Կ. Մարքս և Ֆ. էնգելս, Ընտիր երկեր, հ. 1, Երևան, 1972, էջ 13:

Պահպանվել է ավանդույթուն Հոմերոսի հետ կիկուրգոսի հանդիպման մասին: Կիկուրգոսի առասպելական կամ կիսաառասպելական կերպարը ուշագրավ է նրանով, որ առաջին հիշատակումը նրա մասին վերաբերում է զգալիորեն ավելի ուշ ժամանակաշրջանի: Այդ ժամանակը մի քանի դարով անջատված է այն շրջանից, որին առասպելը վերագրում է կիկուրգոսի կյանքն ու գործունեությունը: Ընդ որում, ժամանակի առումով մեզ ավելի մոտ կանգնած անտիկ հեղինակները ավելի շատ մանրամասնություններ են հաղորդում կիկուրգոսի մասին:

Սպարտացիները երկյուղ էին կրում ամեն կարգի փոփոխություններից, քանի որ այդ փոփոխությունները կարող էին կործանել իրենց պրիմիտիվ ստրկատիրական համակարգը: Սպարտական պետության կազմակերպումն ու պատմությունը ցուցադրում են մեզ այն բանի օրինակը, թե ինչպես վերնաշենքը կարող է արգելակել հասարակական զարգացումը տիրապետող դասակարգին պատկանող ու իշխանության ղեկի մոտ գտնվող հետադիմական խմբի շահերին համապատասխան: Տնտեսական զարգացմանը դիմադրում էր ամբողջ սպարտական քաղաքական համակարգը: Ստրկատիրական հասարակարգի զարգացած անտիկ ձևերը վախ էին առաջացնում սպարտացիների մոտ: Այստեղից էլ բխում էր հին Սպարտայի ողջ ներքին ու արտաքին քաղաքականության ժայրահեղ հետադիմականությունը:

Սպարտացիների դասակարգային ռազմական կազմակերպությունը գլխավորում էին երկու զորահրամանատար-թագավորներ, որոնք պահպանեցին բասիլևս հին անվանումը: Սպարտացիները նրանց կոչում էին նաև արքագետներ: Երկու թագավորական հարստություններից մեկը համարվում էր դորիական, մյուսը՝ աքայական: Դա, հավանաբար, արտացոլում էր հնագույն ժամանակներում իրար դեմ մարտնչած ցեղերի արիստոկրատական խավերի միավորման մասին եղած հիշողությունը: Թագավորները պահպանել էին քրմական ու մասամբ դատական պարտականություններ, մի բան, որ նրանց հարազատ էր դարձնում հոմերոսյան ժամանակաշրջանի բասիլևսներին: Իբրև թագավոր-քրմեր նրանք չպետք է ունենային մարմնական թերություններ: Յուրաքանչյուր իննամյակ թագավորները ենթարկվում էին կրոնական փորձություն: Միայն հաջողությամբ դիմանալով քննությանը, նրանք ստանում էին հաջորդ իննամյակում թագավորելու իրավունք: Պատերազմի ժամանակ թագավորները գլխավորում էին զորքը:

Սակայն Սպարտայում թագավորները համարյա չունեին իրական իշխանություն՝ սահմանափակված լինելով արիստոկրատիայի

կողմից: Նրանք մտնում էին գերուսիայի՝ ավագների խորհրդի մեջ, որը կազմված էր 60 տարեկանից ոչ պակաս տարիք ունեցող 28 ցմահ ընտրվող ծերունիներից՝ գերուններից և 30 տարեկանից բարձր տարիք ունեցող թագավորներից կամ նրանց խնամակալներից (սպարտացիներն մինչև 30 տարեկան հասակը համարվում էր անշահաս և ուներ խնամակալներ): Բարձրագույն իշխանությունը՝ Սպարտայում ձևականորեն պատկանում էր 30 տարեկանից ոչ պակաս տարիք ունեցող սպարտացի-նազմիկների ժողովրդական հավաքին՝ ապելլալին: Սակայն ապելլան իրավունք չունի քննարկելու գերուսիայի կողմից նախապատրաստված հարցերը. նա միայն կարող էր քվեարկել կողմ կամ դեմ: Չայների մեծամասնությունը որոշվում էր աղաղակներով և ընդհանրապես աղմուկով: Երբ քվեարկվում էին այնպիսի հարցեր, որոնք պահանջում էին ավելի ստույգ որոշել մեծամասնությունը, ապա թերի կամ դեմի կողմնակիցներն անցնում էին ժողովատեղ դաշտի տարբեր հատվածները: Երկու դեպքում էլ ժողովը գլխավորող թագավորը՝ հրնագույն ժամանակներում, կամ էֆորոսը՝ հետագայում, ձայների մեծամասնությունը կամ փոքրամասնությունը որոշում էր աչքաշափով կամ լսողություն: Պետական գործերի լուծման նման ձևը ժառանգված էր ռազմական դեմոկրատիայի ժամանակաշրջանից, սակայն սպարտական դասակարգային հասարակարգի պայմաններում դա մի տեղի ժամանակավրեպություն էր, որը կառավարող վերնախավին տալիս էր իր սեփական քաղաքականությունը վարելու հնարավորություն:

«Հավասարների համայնքում» շարունակվող շերտավորման մասին են վկայում հին սպարտական ռետրաները (օրենսդրական ասուլիսները), որոնք վերագրվում են Լիկուրգոսին ու հին թագավորներ Թեոպոմպոսին ու Պոլիդորոսին: Ըստ ավանդության, ռետրաները շորսն էին՝ մեկը մեծ, համեմատաբար արժանահավատ, ու երեքը փոքր՝ ոչ արժանահավատ: Դրանք բոլորն էլ արտացոլում էին տեխնիկայի ցածր մակարդակն ու պրիմիտիվ հարաբերությունները, որոնք, սակայն, գոյություն ունեին արդեն հակամարտ դասակարգային հասարակարգում: Փոքր (ոչ արժանահավատ) ռետրաներից մեկը անգամ արգելում էր հրատարակել գրավոր օրենքներ: Այս վերջին հանգամանքը վկայում է այն մասին, որ սպարտական արիստոկրատական պետությունը դիմադրում էր գրված օրենքների հրատարակմանը այն ժամանակ, երբ դրանք արդեն հրապարակվում էին մյուս պետություններում: Օրենքների գրանցումը ամենուրեք սոցիալ-տնտեսական զարգացման արդյունք էր: Այդ զարգացման շնորհիվ առաջ էին քաշվում ստրկատերերի գա-

սակարգի նոր խմբեր, որոնք տարբերվում էին արիստոկրատիայից: Այդ նոր խմբերը այս կամ այն չափով սահմանափակում էին արիստոկրատիայի տիրապետությունը կամ ձգտում էին հավասարվել նրան իրենց իրավունքներով, մի բան, որը և հաստատվում էր օրենքների գրանցման ժամանակ: Բնական է, որ կառավարող սպարտական արիստոկրատիան դեմ էր օրենքները գրանցելու հրահարվոր պահանջին, մյուս կողմից զարգացման մեջ հետ մնացած սպարտական հասարակությունում դեռ չէր զգացվում դրա առանձին կարիքը: Բայց այդ հասարակությունում սկսված սոցիալական շերտավորումն արդեն իր արտահայտումն ունեցավ՝ ի դեմս հնագույն «մեծ ռետրայում» մ. թ. ա. VIII դ. արված լրացման: Այստեղ ասվում էր, որ եթե ժողովուրդն ապելլայում ընդունի սրխալ որոշում, ապա թագավորներն ու գերոնները պետք է արձակեն ժողովրդական ժողովն ու բեկանեն այդ որոշումը: Դա նշանակում էր, որ արդեն բավականին վաղ շրջանում հակասություն առաջացավ սպարտացիների առանձնացող, առավել հարուստ փոքրաթիվ խմբի ու նրանց մնացյալ զանգվածի միջև:

Մեծ ռետրայից ավելի ուշ, սակայն դեռևս սպարտական պետության գոյության հին ժամանակաշրջանում ծագած հինգ էֆորոսների բարձրագույն կառավարական կոլեգիան կյանքի կոչվեց «հավասարների համայնքի» ներսում ծայր առած սոցիալական հակասությունների աճի հետևանքով: Հանդես գալով, հավանաբար, որպես գերուսիայի ու թագավորների նկատմամբ հսկիչ մարմին, հնարավոր է նաև՝ որպես Սպարտա քաղաքը կազմող հինգ գյուղերի՝ կոմերի կամ օբաների (որոնց վրա թաժանվում էր սպարտական պոլիսը) ներկայացուցչություն, էֆորոսների կոլեգիան որոշ ժամանակ անց վերածվեց սպարտական արիստոկրատական օլիգարխիայի իշխանության բարձրագույն մարմնի: էֆորոսներն ընտրվում էին բոլոր սպարտացիների կազմից մեկ տարի ժամանակով և ունեին գերագույն վերահսկողության իրավունք. կարող էին պատասխանատվության ենթարկել ու դատել բոլոր սպարտացիներին, այդ թվում նաև գերոններին ու թագավորներին: Նրանք հետեվում էին սպարտական կենսաձևի կանոնների ճշգրիտ կատարմանը, ղեկավարում էին ներքին ու արտաքին քաղաքականությունն ու հելոսների դեմ ուղղված տեռորիստական միջոցառումները:

էֆորոսների, ինչպես և գերոնների ընտրության ձևը Արիստոտելն անվանում էր «մանկական», քայց նկարագրում է միայն գերոնների ընտրությունները: Գերոնի մահից հետո գերուսիայի ադամ ընտրվելու իրենց ցանկության մասին հայտնում էին 60 տարեկանից ոչ պակաս տարիք ունեցող մի քանի ծերունի սպարտացի-

ներ: Մեկը մյուսի ետևից նրանք անցնում էին ապեղայի մոտով, որն այդ պահին աղաղակում էր, իսկ հատուկ հանձնաժողովը՝ նստելով փակ սրահում ու շտեմնելով անցնող ծերունիներին, որոշում էր, թե աղաղակները ե՞րբ էին ավելի ուժգին, և այսպիսով, ո՞ր ծերունին էր համարվում ընտրված: Հավանաբար, նույն կարգով ընտրում էին նաև էֆորոսներին: Ընտրութան նման կարգի արձատները գալիս էին դեռևս խոր հնությունից, սակայն այն իր մեջ պարունակում էր մեծ շարաշահումների հնարավորություններ ու սովորաբար ապահովում էր արիստոկրատական վերնախավի համար ցանկալի անձանց ընտրությունը:

Սպարտական հասարակության ցածր տնտեսական մակարդակը արտահայտվեց նաև արծաթյա դրամի երկարատև բացակայութեամբ: Երկար ժամանակ Սպարտայում պաշտոնապես դրամ էին համարվում երկաթյա ձողերը, որոնք լեբլե փոխանակության միջոց Պելոպոնեսում պահպանվել էին նախորդ ժամանակներից, թեև մյուս հունական պետություններն արդեն հրաժարվել էին դրանից: Սպարտացիների պետությունը արհեստականորեն պահպանում էր տնտեսության ու հասարակական հարաբերությունների հետամնացությունը: Դա նախ և առաջ արվում էր Լակոնիան ու Մեսսենիան Հունաստանի տնտեսապես առաջատար շրջաններից հարաբերական փնթնամեկուսացման ենթարկելու միջոցով: Այլ հունական պոլիսներից եկած հույներին արգելվում էր բնակվել սպարտական պետությունում, իսկ սպարտացիներն իրավունք չունեին փնթնակամորեն հեռանալու իրենց երկրից:

#### ՍՊԱՐՏԱՑԻՆԵՐԻ ԴԱՍՏԻՈՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախնադարյան կարգերի վերապրուկները, որոնք ալլանդակորեն աղավաղվել էին դասակարգային հասարակության պայմաններում, ցցուն ձևով հանդես էին գալիս սպարտացիների դաստիարակության համակարգի ու նրանց կենցաղի մեջ:

Կենսամիջոցների սահմանափակ լինելը երբեմն ստիպում էր նախնադարյան մարդկանց սպանել իրենց նորածիններին: Սպարտացիները նույնպես սպանում էին այն նորածիններին, որոնք թրվում էին տկար: Սակայն դասակարգային հասարակության ու պետության պայմաններում նորածինն սպանելու համար անհրաժեշտ էր կայացնել հատուկ հանձնաժողովի որոշում. հայրը պարտավոր էր այդ հանձնաժողովին ներկայացնել իր մանուկին: Որոշման կատարումը ևս հանձնարարվում էր հորը: Սպարտացիներին անհրաժեշտ էին, որպես իրենց փոքրաթիվ դասակարգ-դասի անդամ-

ներ, ֆիզիկապես առողջ մարդիկ. ահա ինչու նրանք կենդանի էին թողնում միայն այն նորածիններին, որոնց համարում էին լիովին առողջ ու ամուր: Տղաներին յոթ տարեկանից սկսած ենթարկում էին դաժան դաստիարակության հատուկ դպրոց-գիմնասիոններում՝ պետության կողմից նշանակված ուսուցիչ-դաստիարակների ղեկավարությամբ: Տղաները բաժանված լինելով տարիքային խումբերի՝ «հոտերի» (ազելա), իրենց ժամանակը նվիրում էին ֆիզիկական ու ուղղմական վարժություններին: Երեխաներին անզամ սովորեցնում էին գողություն անել, գտնելով, որ դա զարգացնում է ճարպկություն ու հնարամտություն: Դասավանդում էին նաև երաժշտություն ու երգեցողություն՝ իբրև ուղղմական անհրաժեշտ առարկաներ: Դաստիարակության նպատակն էր՝ աճեցնել ձեռնամարտի համար ֆիզիկապես ամուր ու ճարպիկ մարտիկ, որն ընդունակ չէր լինի մտածելու և սովոր կլինեք ենթարկվելու: Յուրացնելով միայն գրելու ու հաշվելու սկզբնական տարրերը, սպարտացիներն ի վիճակի չէին արտահայտվել բարդ ֆրազներով: Այդ կապակցությամբ սպարտացիներին դեռևս հին ժամանակներում ծաղրում էին նրանց հարևան ու մրցակից աթենացիք: Հակիրճ խոսելու սովորույթի՝ ասույթ, դարձած սպարտական հայտնի լակոնականության հիմքը կազմեց ուղղմականացված դաստիարակությունը: Սպարտացիներին մանկությունից սովորեցնում էին տալ հակիրճ ու հստակ հրամաններ ու բանիմացորեն կրկնել հրամայվածը: Բայց հետագայում սպարտական լակոնականությունը իդեալականացվեց, հորինվեցին շատ, իբրև թե սպարտական ասույթներ, որոնք իրականում էրբեք չէին պատկանում սպարտացիներին: Դա, իհարկե, չի նշանակում, որ բոլոր լակոնիզմներն իրական չեն: Առանձին հակիրճ սրամիտ արտահայտություններն իրոք կարող էին ծագել նաև Սպարտայում:

Նախնադարյան մարդիկ իրենց մատաղ սերնդին, մի տարիքային խմբից մյուսին անցնելու ժամանակ, ենթարկում էին ծանր ֆիզիկական փորձությունների, ընդ որում պատանիները պետք է ցուցադրեին իրենց դիմացկունությունը, համբերությունը, ուժը, որոշակի հմտությունը: Գոյության ծանր պայմանները, շրջապատի երևույթները չհասկանալը հատուկ սովորություններ մշակեցին նախնադարյան մարդկանց մոտ: Նման կարգի խոշտանգումներ, օրինակ, տղաների ու երիտասարդների հանդիսավոր ծեծ՝ նրանց դիմացկունությունը որոշելու համար, կիրառվում էին Սպարտայում սպարտացիների պաշտպան համարվող աստվածուհի Արտեմիս-Օրթիայի զոհարանում: Խոշտանգվողների արյունը թափվում էր զոհարանի վրա ու հազեցնում արյունոտ լուրջ աստվածուհու ծարա-

վր: Ավելի հին ժամանակներում այդ աստվածուհուն զոհաբերում էին մարդկանց:

Անտիկ հեղինակները նշում են, որ սպարտական աղջիկների դաստիարակութունը քիչ բանով էր տարբերվում տղաների դաստիարակութունից: Աղջիկներին կոփում էին, որպեսզի հետագայում նրանք դառնան առողջ մայրեր ու ծննդաբերեն առողջ երեխաներ:

Իսկ կարգապահ մարտիկ-հետևակայիններ (այդ մարտիկները կոչվում էին ոչ թե միայնակ, այլ անպայման ջոկատներով) դարձող տղաների դաստիարակութունը ավարտվում էր մարդկանց սպանելու հրեշավոր յուրօրինակ «պրակտիկայով»: Էֆորոսների կողմից յուրաքանչյուր տարի անգեն հելոտների դեմ հայտարարվող գաղտնի «սորբազան» պատերազմի (կրիպտեաների) ժամանակ երիտասարդ ստարտացիների ջոկատները ցրվում էին երկրով մեկ ու սպանում ստրուկներին:

Տղաների կոլեկտիվ ու մեկուսացված դաստիարակութունը (մանրամասն տեղեկութուններ պահպանվել են միայն տղաների դաստիարակության մասին) ու հետագայում տղամարդկանց մեկուսացված կյանքը հիշեցնում են նախնադարյան հասարակարգում տղամարդկանց տների կյանքը: Նման տներում տղամարդիկ անցկացնում էին իրենց ժամանակի մեծ մասը: Տղամարդկանց՝ իրենց ընտանիքներից մեկուսացված կյանքը շարունակվում էր նաև գիմնասիոններից դուրս գալուց հետո: Չափահաս սպարտացիներն ամբողջ օրը գտնվում էին իրենց զորամասերում և տուն գալիս էին միայն գիշերելու: Սպարտացիների ընտանեկան հարաբերությունները հիշեցնում էին զուգամուսնությունը, որը մե սվերապրուկ էր դասակարգային հասարակարգի համար:

#### ՍՊԱՐՏԱՑԻՆԵՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Սպարտացիները զինվորական ստորաբաժանումներում միավորվում էին փոքր խմբերով, որոնք պարտադիր կարգով պետք է ճաշեին միասին: Սպարտացիների ընդհանուր ճաշկերույթները կոչվում էին փիդիտիաներ, իսկ մյուս հույները դրանք անվանում էին սիսիտիաներ: Սպարտական փիդիտիաների օրինակը հատկապես վառ է ցուցադրում դրանց նախնադարյան հիմքի աղավաղումը դասակարգային հասարակությունում: Փիդիտիաների անդամներ կարող էին ընկնել միայն այն սպարտացիները, որոնք համատեղ անվողների ընդհանուր կաթսայի համար ամեն ամիս կատարում էին բնամթերային, իսկ մ. թ. ա. VI դ. վերջից նաև՝ փոքր դրամական վճարումներ: Գոյություն ունեւր վճարումների որոշակի



չափ: Այն սպարտացիները, որոնք շունեին միջոցներ բնավճարումներ կատարելու համար, չէին կարող մասնակցել փիղիտիաներին: Իսկ եթե սպարտացին աղքատանում էր և ի վիճակի չէր լինում կատարելու վճարումներ, ապա նրան հեռացնում էին փիղիտիաներից, որպես կյանքի հատակը «սուզված անձի»: Այնինչ «հավասարների համայնքի» անդամներ կարող էին լինել ու հետևաբար կարող էին օգտվել քաղաքական իրավունքներից միայն փիղիտիաների անդամները: Այսպիսով, նախնադարյան կարգերից ժառանգված ընդհանուր ճաշկերույթները սպարտական պետությանում դարձան քաղաքական իրավունքներ ստանալու համար նախատեսված գույքային ցենզը կենսագործելու միջոց: Ինչպես նշվել է, Սպարտայում թույլատրված էին միայն ձողի ձև ունեցող երկաթյա դրամներ: Միայն մ. թ. ա. VI դ. սկզբում Սպարտայում՝ տնտեսության զարգացման կապակցությամբ սկսեցին օգտագործել հզիչյան արծաթյա դրամներ, մասնավորապես փիղիտիաներին մասնակցելու նպատակով լրացուցիչ ամենամայա մուծումներ կատարելու համար: Այսպես տնտեսական զարգացման օրենքը ստիպում էր սպարտացիներին դիմելու ինչ-որ նորամուծությունների:

Սպարտացիների աշխարհագրից կազմվում էր ծանրագին ռազմիկների՝ հուպլիտների սովորական հունական փաղանգը: Այդ աշխարհագրը լավ մարզված էր ու աչքի էր ընկնում իր կարգապահությամբ և գործողությունների համաձայնեցվածությամբ: Ռազմիկի գլխավոր պարտականությունն էր մարտի ժամանակ առանց հրամանատարության կարգադրության չլքել այն տեղը, ուր նա կռվում էր իր ընկերների հետ միասին: Ինքնակամ նահանջը ընդհանրապես համարվում էր վախկոտության արտահայտություն: «Վախկոտը» հեռացվում էր փիղիտիաներից ու, կարծես թե, դրվում էր օրենքից դուրս: «Վախկոտների» վիճակը այնքան ծանր էր, որ այդ դժբախտությանը ենթարկված եզակի ռազմիկներն իրեն կանոն ինքնասպանություն էին գործում:

### ՊԵՆՏԵՄԵՐԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Մասնեկան նվաճելուց ու ստրկացնելուց հետո սպարտացիները փորձեցին կատարել նոր զավթումներ, սակայն դա նրանց չհաջողվեց: Այդ ժամանակ նրանք ստիպեցին Պելոպոնեսի բոլոր պետություններին, քացի Արգոսից ու հյուսիսի մի քանի շրջաններից, իրենց հետ դաշինք կնքել: Փանի որ սպարտացիները ռազմական տեսակետից գերազանցում էին իրենց հարևաններին, մ. թ. ա. VI դ. կեսին Սպարտայի գլխավորությամբ ստեղծվեց այդպիսի

մի միություն, որը կոչվեց Պելոպոնեսյան: Ձևականորեն նրա անդամները կազմեցին ռազմական միություն (սիմմաքիա), սակայն Սպարտան մշտապես միջամտում էր իր դաշնակիցների ներքին գործերին ու հետևում էր, որպեսզի դաշնակից պետութուններում իշխանության ղեկի մոտ կանգնած լինեին արիստոկրատները կամ օլիգարխները:

Պելոպոնեսյան միության գերագույն մարմինն էր համարվում միության ժողովը, որն ամեն տարի գումարվում էր Սպարտայում՝ սպարտական էֆորոսների նախագահությամբ: Հարցերը լուծվում էին ձայների մեծամասնությամբ, բայց փաստորեն հօգուտ Սպարտայի: Դա կատարվում էր հետևյալ կերպ: Պելոպոնեսյան միության յուրաքանչյուր անդամ, անկախ իր ուժից ու նշանակությունից, ուներ մեկ ձայն: Սպարտան ցանկալի մեծամասնությունը ձեռք բերելու համար սովորաբար օգտագործում էր թույլ պետությունների ներկայացուցիչների ձայները՝ թելադրելով նրանց իր կամքը: Միութենական գանձարան Պելոպոնեսյան միությունում չկար:

Սպարտան տնօրինում էր այն վճարումները, որոնք անհրաժեշտության դեպքում կամ պատերազմի ժամանակ մուծում էին դաշնակիցները:

Հենվելով իր ռազմական ջոկատների ու Պելոպոնեսյան միության ուժերի վրա, Սպարտան մ. թ. ա. VI դ. կեսին դարձավ Հունաստանի գերիշխող ու սկսեց ակտիվորեն միջամտել անգամ Միջին Հունաստանի գործերին: Հենց սկզբից էլ այդ միջամտությունը կրում էր վառ արտահայտված հետադիմական բնույթ: Սպարտական արիստոկրատիան հատուկ եռանդով՝ ընդհուպ մինչև Աթենք ձեռնարկած իր ռազմական ներխուժումը մ. թ. ա. VI դ. վերջին՝ ակտիվորեն մասնակցում էր աթենական ստրկատերերի դեմոկրատական ու արիստոկրատական խմբավորումների միջև տեղի ունեցող պայքարին:

## Գլուխ 6. ԱՏՏԻԿԱՆ Մ. Թ. Ա. VIII—VI ԴԴ.

Արիստիկ շրջանի Ատտիկայի պատմության աղբյուրները համեմատաբար ավելի բազմազան են, քան Հին Հունաստանի մյուս մարզերի պատմության աղբյուրները: Շատ արժեքավոր տվյալներ են պարունակում Արիստոտելի, Պլուտարքոսի, Թուկիդդեսի գործերը: Սոլոնի ոտանավորներից մեզ հասած հատվածները անմիջականորեն պատկերում են մ. թ. ա. VI դ. անցքերի ընթացքը: Առանձին արձանագրություններն ու ընդարձակ հնադիտական նյու-

Քերը լրացնում ու ճշտում են մեր գիտելիքները: Բոլոր տեսակի աղբյուրների համեմատական քննությունը հնարավորություն է տալիս բավականին մանրամասն ու կանոնավոր ձևով ուսումնասիրել Ատտիկայի պատմությունը՝ սկսած մ. թ. ա. VII դ. երկրորդ կեսից ընդհուպ մինչև արխաիկ շրջանի վերջը:

Հունաստանի բոլոր քաղաք-պետությունների մեջ Աթենքը հասավ տնտեսական, քաղաքական ու մշակութային զարգացման ամենաբարձր մակարդակի: Այս պատճառով նրա արխաիկ ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրությունը ներկայացնում է հատկապես մեծ հետաքրքրություն:

#### ԱՍՏԻԿԱՅԻ ԲՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Ատտիկան լեռնային երկիր է, որն արևմուտքից ողողում են Սարոնիկոս ծոցի ջրերը, իսկ հյուսիս-արևելքից այն անջատված է Եվբեա կղզուց Եվրիպոս նեղուցով: Աթենքը այդ երկրի կենտրոնն էր: Սարոնիկոս ծոցի ափին կան մի քանի հարմար ծովախորշեր՝ Պիրեևս, Փալերոն, Մունիքիա: Իսկ Ատտիկայի արևելյան ափը զանդեր է ու քիչ հարմար՝ նավերի մոտենալու համար: Մի քանի լեռնաշղթաներ կտրում են Ատտիկան, իրարից անջատելով երկրի արգավանդ հովիտները՝ հյուսիս-արևելքում՝ Մարաթոնյան, կենտրոնում՝ Մեսոգիոնյան և հարավ-արևմուտքում՝ Ելևսիյան: Հովիտները հարմար են հացահատիկի մշակության, այգեգործության, բանջարանոցային կուլտուրաների մշակման համար, իսկ լեռների լանջերը լավ արոտավայրեր են մանր եղջերավոր անասունների համար: Ատտիկայի լեռներում կան արծաթի ու կապարի հանքաքարի (Լավրիոնի լեռներ), ինչպես նաև մարմարի պաշարներ. ամբողջ երկրի տարածքում կային հիանալի կավի շերտեր:

Երկրի բնական հարստությունները՝ նրա հովիտների համեմատաբար սակավ բերրիության պայմաններում, հարմար ծոցերի ու ծովախորշերի առկայությունը, որի շնորհիվ հույները դեռևս մ. թ. ա. II հազարամյակի վերջերից սկսեցին հարաբերություններ հաստատել փոքրասիական ծովափի հետ, պայմանավորեցին հետագայում Ատտիկայում արհեստների ու առևտրի ավելի արագ զարգացումը, քան Հունաստանի այլ մասերում:

Ատտիկայի բնակչությունը, ինչպես հաստատում են Հերոդոտոսն ու Քուկիդիդեսը, ավտոխթոն (քնիկ) էր ու պատկանում էր հոնիական ցեղին: Սակայն, ինչպես հետևում է նույն Հերոդոտոսի պատմածից, Ատտիկայում հոնիացիների հետ մեկտեղ հնադարյն ժամանակներում ապրել են պելասգներ: Անվանի աթենական ընտանիքների (օրինակ՝ Պիսիստրատոսի, Հարմոգիոսի, Արիստոգի-

տոնի, Իսազորասի և ուրիշների) տոհմաբանությունը վկայում է այն մասին, որ Ատտիկայի բնակչության կազմի մեջ թափանցեւ էին նաև այլ հունական ցեղեր, առաջին հերթին՝ աքայացիներ, ինչպես և ոչ հույներ՝ կարիացիներ և այլն: Պատմական զարգացման ընթացքում այդ բոլոր տարրերից կազմավորվեց Ատտիկայի միասնական բնակչությունը, որը Ատտիկայի գլխավոր քաղաք Աթենքի անունով ստացավ աթենացիներ անվանումը:

#### ԱՏՏԻԿԱՆ Մ. Թ. Ա. XI—IX ԴԴ.

Ատտիկայի պատմությունը մ. թ. ա. XI—IX դդ. քիչ է հայտնի: Հավանաբար, այստեղ ևս, ինչպես Հունաստանի այլ մասերում, դորիական արշավանքից հետո տեղի ունեցավ զգալի ապակենտրոնացում: Կրկին գերակշռեցին Ատտիկայի վաղդասակարգային աքայական թագավորությունում գոյություն ունեցած տոհմային կազմակերպությունները՝ դրանց հատուկ հասարակական կառուցվածքով: Թուկիդիդեսը, խոսելով Ատտիկայի անցյալի մասին, նըշում է, որ «Ատտիկայի բնակչությունը մշտապես ապրում էր առանձին քաղաքներով, որոնք ունեին սեփական պրիտանիոններ<sup>7</sup> ու կառավարիչներ: Երբ ոչ մի վտանգ չէր զգացվում, քաղաքի բնակիչները չէին հավաքվում թագավորի մոտ ընդհանուր խորհրդակցությունների, այլ կառավարում ու խորհրդակցում էին առանձին, իրենք իրենց համար» (II, 15, 1): Հունական ավանդությունը խոսում է այդ շրջանում Աթենքում բասիլեսների պահպանված իշխանության մասին: Սակայն բասիլեսների իշխանությունը, հավանաբար, աննշան էր: Առանձին համայնքներն ու քաղաքները պահպանել էին անկախություն. նրանցից ոմանք, օրինակ, Ելեվսիսը, անգամ ավելի ուշ շրջանում հատում էին սեփական դրամ: Քաղաքները կոչվում էին իրար դեմ: Ավանդությունը մեզ է հասցրել, օրինակ, տեղեկություններ Ելեվսիսի ու Աթենքի միջև եղած պատերազմների մասին: Ինչպես ցույց են տալիս հնագիտական պեղումները, Աթենքը փոքր, բայց ամրացված բնակավայր է եղել: Աթենական Ակրոպոլիսը, տեղադրված լինելով զառիվեր բարձր բլրի վրա, իշխում էր շրջապատող դաշտավայրին: Բուն բնակավայրը գրավում էր Ակրոպոլիսի հարավային լանջը: Այստեղ ավելի ուշ ժամանակ ևս, դասական շրջանում, գտնվում էին աստվածների առավել հին ու հարգված տաճարները:

Սոցիալ-տնտեսական տեսակետից Ատտիկան չէր տարբերվում մ. թ. ա. XI—IX դդ. Հունաստանի այլ մարզերից: Երկրի բնակչու-

<sup>7</sup> Պրիտանիոն՝ սրահ կառավարող խորհրդի նիստերի համար:

թյունը բաժանվում էր շորս ֆիլաների (ցեղերի), որոնք իրենց հերթին բաժանված էին ֆրատրիաների ու տոհմերի: Արդեն այդ ժամանակ Ատտիկայում առանձնանում էր տոհմային ավագանին՝ եվպատրիդները (այսինքն ազնվացեղ ծնողներից սերվածները), որոնց հակադրվում էր հասարակ ժողովուրդ-դեմոսը:

Աթենքը զարգանում էր ավելի արագ, քան այլ ատտիկական համայնքները: Դա էլ կանխորոշեց Աթենքի քաղաքական գերակշռությունը Ատտիկայում: Մինոյկիսմոսի (այսինքն միավորման) ընթացքում Ատտիկայի բոլոր քաղաքներն ու համայնքներն ընկան Աթենքի տիրապետության տակ: Միավորման պրոցեսը, ըստ երեվույթին, երկարատև էր ու միշտ չէ, որ կրում էր խաղաղ բնույթ: Որոշ դեպքերում Աթենքը բռնի ուժով էր իրեն ենթարկում քաղաքները: Այդպես միացվեցին Նլեվսիսն ու Բրավրոնը: Թուկիդիդեսի հաղորդած հունական ավանդույթը Ատտիկայի միավորումը վերագրում է աթենական բասիլև Թեսեսին՝ միկենյան շրջանին հարող բազմաթիվ առասպելների հերոսին, որը «ընդհանրապես կարգավորեց երկիրը, ի միջի այլոց վերացրեց այլ քաղաքների խորհուրդներն ու պաշտոնյա անձանց և սինոյկիսմոսի միջոցով միավորեց բոլոր բնակիչներին այժմյան քաղաքի շուրջը՝ սահմանելով մեկ խորհուրդ և մեկ պրիտանիոն» (II, 15): Աթենացիները, հաստատելով Ատտիկայում իրենց քաղաքական տիրապետությունը, Աթենք քաղաքի պաշտպան Աթենաս աստվածուհու պաշտամունքը դարձրեցին համաատտիկական՝ սահմանելով հատուկ համաաթենական տոն այդ աստվածուհու պատվին: Այդ տոնը նշանավորում էր ողջ Ատտիկայի միավորումն ու ուղեկցվում էր հանդիսավոր արարողություններով, երաժշտական և մարմնամարզական մրցումներով:

Ատտիկայի միավորումը նպաստեց երկրի արտադրողական ուժերի արագ զարգացմանը, արհեստների անշատմանը հողագործությունից, քաղաքային բնակավայրերում, և առաջին հերթին Աթենքում, արհեստավորների կենտրոնացմանը, առևտրի զարգացմանը: Ինչպես վկայում են նյութական մշակույթի հուշարձանները, արդեն այդ ժամանակից սկսվում է աթենական արհեստի արտադրանքի արտահանումը: Սկզբում արևմուտք ուղարկվող ապրանքները անցնում էին Հունաստանի ամենազարգացած առևտրական քաղաքներով՝ Մեգարայով, Կորնթոսով և այլն:

Առևտրադրամական հարաբերություններն ավելի ու ավելի էին քայքայում հին տոհմատիրական կարգերը: Հասարակության հին տոհմական բաժանման հետ մեկտեղ Աթենքում հանդես եկավ այլ, պրոֆեսիոնալ սկզբունքի վրա հիմնված նոր բաժանում, որը

հետզհետե դուրս էր մղում հին դասակարգումը: Առասպելը նույն թեսեսին է վերագրում Աթենքի ամբողջ բնակչության բաժանումը մանր ու միջին հողատերերի՝ գեոմորների և արհեստավորների՝ դեմիուրգների, ինչպես և տոհմային ավագանուց բաղկացած հատուկ արտոնյալ խավի՝ եվպատրիդների առանձնացումը: Աթենական քաղաքացիական համայնքը կազմող այդ սոցիալական խմբավորումներից դուրս էին գտնվում մետոյկները՝ ազատ մարդիկ, որոնք գերազանցապես Աթենք էին տեղափոխվել Հունաստանի այլ մասերից: Մետոյկները զբաղվում էին արհեստներով ու առևտրով, սակայն զրկված էին հող ունենալու իրավունքից և միայն կարող էին տիրել շարժական գույքի. նրանք չէին օգտվում քաղաքական իրավունքներից: Աթենական քաղաքացիական համայնքից դուրս էին կանգնած նաև ստրուկները, որոնց թիվը անընդհատ աճում էր:

#### ԱՏՏԻԿԱՆ Մ. Թ. Ա. VIII—VII ԴԴ.

Ըստ երևույթին, արդեն մ. թ. ա. VII դ. սկզբին (ճշգրիտ դա հաստատված չէ) գոյություն ուներ Ատտիկայի բաժանումը տասներկու նավկրարիաների՝ մասերի, որոնցից յուրաքանչյուրը պետք է տրամադրեր մեկ ռազմանավ: Նման բաժանման առաջացումը վկայում էր տոհմային կարգի անկման ու պետության կազմավորման մասին:

Աթենքում կառավարման գերագույն մարմինն էր ժողովրդական ժողովը: Նրա դերը տոհմական հարաբերությունների տրոհման շրջանի հասարակական կյանքում մեծ չէր: Անհամեմատ ավելի խոշոր նշանակություն ուներ արեոպագոսը՝ խորհուրդ, որը հնագույն ժամանակներում բաղկացած էր տոհմային ավագներից: Ավելի ուշ շրջանում այն վերածվեց տոհմական ավագանու խորհրդի: Իր անունը արեոպագոսը ստացել էր, ըստ երևույթին, պատերազմի աստված Արեսի անունից, քանի որ վերջինիս էր նվիրված այն բըլլուրը, որի վրա տեղի էին ունենում այդ խորհրդի նիստերը: Արեոպագոսը բարձրագույն հսկիչ ու դատական մարմին էր: Բասիլևսի իշխանության վերացումից հետո, հավանաբար մ. թ. ա. VIII դարում, աթենական համայնքի ամբողջ կառավարումը փաստորեն կենտրոնացավ արեոպագոսի ձեռքում:

Պարզ չէ, թե ինչպես ոչնչացվեց բասիլևսի իշխանությունը: Հայտնի է, որ դրա վերացումից հետո Աթենքում եվպատրիդների միջավայրից սկսեցին ընտրել արքունիներ՝ բարձրագույն աստիճանավորներ, որոնք իրենց ձեռքում կենտրոնացրեցին ամբողջ գործադիր իշխանությունը: Սկզբում արքունիների իշխանությունը

ցմահ էր, հետո նրանց սկսեցին ընտրել տաս տարով, և վերջապես, մեկ տարով:

Սկզբում ընտրվում էր մեկ արքունտ, հետո նրանց թիվը հասավ իննի: Ամենամեծ իշխանությունն ուներ առաջին արքունտը՝ եպոնիմոսը, սակայն հետագայում նրա ֆունկցիաները բավականին սահմանափակվեցին: Երկրորդ արքունտը՝ թագավորը (բասիլևս), կատարում էր քրմի պարտականություններ ու դատում էր պաշտամունքի հետ կապված գործերը: Երրորդ արքունտը՝ պոլեմարքոսը, աթենական աշխարհագրորի հրամանատարն էր ու զբաղվում էր մյուս երկրների հետ Աթենքի հարաբերություններով: Վերջին վեց արքունտները՝ թեսմոթետները, օրենքների պահպաններն էին ու նախագահում էին տարբեր դատական հանձնաժողովներում: Արեոպագոսը համալրվում էր իրենց ժամկետը ծառայած արքունտներից: Արքունտների պաշտոնները մատչելի էին միայն Լվպատրիդների համար. վերջիններս իրենց տնտեսական հզորության աճի շնորհիվ հետզհետե զավթում էին իշխանությունը Աթենքում:

Ստրկության ու առևտրադրամական հարաբերությունների զարգացման արդյունքը եղավ գուլջբային անհավասարության ուժեղացումը տոհմի ներսում ու տոհմական հարաբերությունների քայքայումը: Եվպատրիդների մի մասը ներգրավվեց առևտրադրամական հարաբերությունների մեջ: Նրանց տնտեսություններն ավելի էին կապվում շուկայի հետ: Դա հատկապես վերաբերում էր այն տնտեսություններին, ուր հացահատիկի մշակման հետ մեկտեղ զբաղվում էին նաև խաղողի ու ձիթենու ծառերի մշակմամբ: Եվպատրիդները սկսում են մեծ շահերով զբաղվել վաշխառությամբ, վարկեր տալով պարտապանի անձը գրավ դնելու դիմաց, մի բան, որ հնարավորություններ էր ստեղծում նրանց ձեռքում մեծ քանակությամբ հողակտորներ կուտակելու համար ու միաժամանակ ապահովում էր նրանց տնտեսությունները ստրուկ-պարտապանների աշխատանքով:

Սակայն դրամական տնտեսության աճը հանգեցրեց նաև տոհմական ավագանու շերտավորմանը: Որոշ եվպատրիդ ընտանիքներ սնանկանում էին, կորցնում էին տոհմային տիրույթները:

Ամենավատ վիճակում էր աթենական համայնքի մեծամասնությունը կազմող մանր ու միջին գյուղացիությունը: Քանի որ վաշխառուները գյուղացիներին վարկեր էին տալիս միայն հողի ու պարտապանի անձի գրավի դիմաց, ապա պարտքը ժամկետին չվճարելու դեպքում հողը անցնում էր վարկատուի տրամադրության տակ, և նախկին տերն այժմ աշխատում էր այդ հողի վրա որպես

բերքի վեցերորդ մասը ստացող վարձակալ: Պարտատերն իրավունք ունի ստրկացնելու վարկը չվերադարձրած պարտապանին ու անգամ վաճառելու նրան Ատտիկայի սահմաններից դուրս: \*

Այդ ժամանակաշրջանի աթենական պատմության մեր գլխավոր աղբյուրը՝ Արիստոտելը, բնութագրելով իրադրությունը Աթենքում մ. թ. ա. VII դ. վերջին, նշում է. «Ժողովրդի մեծամասնությունը ստրկացված էր քչերի կողմից»: «Աղքատները ոչ միայն իրենք էին ստրկացված, այլ նաև ստրկացված էին նրանց երեխաներն ու կանայք: Նրանք կոչվում էին պելատներ կամ վեցերորդ մաս ստացողներ, որովհետև այդպիսի վարձակալական պայմանով էին մշակում հարուստների դաշտերը: Իսկ ամբողջ հողը գտնվում էր քչերի ձեռքում: Ընդ որում, եթե այդ չքավորները չէին մուծում վարձակալության վճարը, ապա կարելի էր ստրկացնել նրանց, և՛ նրանց երեխաներին» («Աթենական պոլիտես», IV, 5):\* Գյուղացիության նկատմամբ գործադրվող տնտեսական ճնշումը խորացվում էր նրա փաստական իրավագրկությանը: Քաղաքական ու դատական իշխանությունը գտնվում էր եվպատրիդների ձեռքում:

Աթենական բնակչության մյուս լայն խավը, որը ևս տուժում էր եվպատրիդների տիրապետությունից, Ատտիկայի քաղաքական կենտրոնների, գլխավորապես Աթենքի, ազատ արհեստավորներն էին: Ինչպես վկայում են հնագիտական պեղումները, մ. թ. ա. VII դ. վերջին Աթենքը վերածվեց խոշոր արհեստագործական կենտրոնի, որտեղ հատկապես զարգացավ բրուտագործությունը. դրա արտադրանքն այժմ ոչ միայն սպառվում էր ներքին շուկայում, այլև արտահանվում էր:

Եվպատրիդներին՝ հակադրվող երկու մեծ խավերից՝ գյուղացիությունից ու այդ շրջանում հողագործության հետ կապերը դեռևս չիզգած քաղաքային արհեստավորական բնակչությունից բացի, դեմոսի կազմի մեջ մտնում էր նաև հարուստ, բայց ոչ անվանի մարդկանց խավը: Այն բաղկացած էր տոհմական ավագանուն չպատկանող միջին ու խոշոր հողատերերից, արհեստանոցների տերերից, վաճառականներից, արտաքին առևտրով զբաղվող նավատերերից և այլն: Հարուստ մարդկանց այդ խավը իր տնտեսությունում, հատկապես քաղաքներում, օգտագործում էր ստրուկների աշխատանքը, սակայն աշխատեցնում էին ոչ այնքան պարտապան, որքան որ ներմուծված, գնված ստրուկներին: Հենց այդպիսի տնտեսություններում սկսեց զարգանալ ստրկությունն իր դասական ձևով:

Աթենական համայնքից դուրս գտնվող մետոյկները իրենց

\* Տրվում է ըստ ուսական հրատարակության (թարգմ.):



նյութական դրուժյամբ միատարր չէին: Մետոյկների մեծ մասը՝ մանր կամ միջին արհեստավորները, աշխատում էին ընտանիքի անդամների կամ փոքրաթիվ ստրուկների հետ միասին: Սակայն կային նաև ունևոր մետոյկներ՝ արհեստանոցների տերեր, առևտրականներ, նավատերեր: Մետոյկների թվի մեջ, քացի Աթենք տեղափոխվածներից, համարյա մինչև մ. թ. ա. VI դ. վերջը մտնում էին նաև շատ տեղաբնիկ աթենացիներ: Դրանք այն մարդիկ էին, որոնք կորցրել էին իրենց կապերը տոհմի ու ֆիլայի հետ և որևէ պատճառով անցել էին մետոյկների շարքը՝ իր ֆիլայի տարածքից քաղաք կամ օտար ֆիլա տեղափոխվելու, երբեմն էլ քաղաքացիների ցուցակները կազմելու ժամանակ տոհմական ավագների կողմից թույլ տրված շարաշահումների հետևանքով և այլն:

#### ԿԻՆՆԵ ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԴԻԱԿՈՆԵ ՕՐԵՆՔՆԵՐԸ

Աթենական համայնքի ներսում գոյացած բոլոր հասարակական խմբավորումները դժգոհ էին տոհմական ազնվականության տիրապետությունից: Այդ դժգոհությունը հանգեցրեց եվպատրիդների դեմ ուղղված հեղափոխական լայն շարժմանը մ. թ. ա. VII դ. վերջին: Շարժմանը մասնակցեցին աթենական հասարակության տարբեր խմբավորումները: Նրանց շահերն ու պահանջները փրբեմն հակասական էին, բայց մ. թ. ա. VII դ. վերջում նրանց բոլորին միավորում էր եվպատրիդների հանդեպ տածած ատելությունը:

Եվպատրիդների քաղաքական տիրապետությունը տապալելու առաջին փորձը ձեռնարկեցին հենց տոհմային արիստոկրատիայի ներկայացուցիչները: Այն հայտնի է Կիլոնյան խռովություն անունով: Կիլոնը, որ պատկանում էր հարուստ ու անվանի ընտանիքի, Մեգարայի տիրան Թեագենեսի փեսան էր և հայտնի էր որպես օլիմպիական խաղերի հաղթող, մ. թ. ա. VII դ. 30-ական թվականներին փորձեց մի խումբ կողմնակիցների հետ զավթել բարձրագույն իշխանությունը Աթենքում: Օգտվելով նրանից, որ Զևսին նվիրված տոնախմբության առթիվ քաղաքում հավաքվել էր մարդկանց հոծ բազմություն, Կիլոնը գրավեց Ակրոպոլիսը: Բայց ժողովրդի օժանդակության վերաբերյալ նրա հույսը շարդարացվեց: Կիլոնը շառաչադրեց սոցիալական բարեփոխումների ոչ մի ծրագիր, ու ժողովուրդը ոչ միայն չօգնեց նրան, այլ անգամ մասնակցեց Ակրոպոլիսի պաշարմանը, որը կազմակերպեցին արքոնտները: Սակայն քանի որ պաշարումը ձգձգվեց, աթենացիների մեծ մասը, պաշարումից հոգնած, հեռացավ՝ թողնելով ինը արքոնտներին՝ հսկելու Կիլոնին ու տալով նրանց անսահմանափակ լիա-

գորութիւններ իրենց հայեցողութեամբ այլ ամեն բան ձեռնարկելու համար» (Թուկիդիդես, I, 128):

Կիլոնի հաջողվեց փախչել: Նրա կողմնակիցները, որոնք սովի հետևանքով հասան ծայրահեղ վատ վիճակի, անձնատուր եղան արքոնտներին՝ նրանցից ստանալով ամբողջ ազատ դուրս գալու խոստում: Սակայն արքոնտները չկատարեցին այդ պայմանն ու հարձակվեցին Կիլոնի՝ Ակրոպոլիսից դուրս եկող կողմնակիցների վրա: Անձնատուր եղածները սպանվեցին, ընդ որում նրանցից ոմանք խողխողվեցին աստվածների զոհասեղանների մոտ, ուր փրկութիւն էին փնտրում: Պաշարողներին գլխավորում էին Ալկմեոնյանների անվանի տոհմի ներկայացուցիչները: Կիլոնի կողմնակիցների սպանութիւնը զոհասեղանների մոտ «Կիլոնյան պղծութեան» խայտառակ բիծ գցեց ամբողջ այդ տոհմի վրա: Աթենքի հետագա պատմութեան ընթացքում Ալկմեոնյանների թշնամիները միշտ օգտագործում էին «Կիլոնյան պղծութեան» այդ տոհմի ներկայացուցիչների դեմ քաղաքական պայքար մղելու նպատակով:

Մ. թ. ա. 621 թ. Աթենքում առաջին անգամ կատարվեց գործող օրենքների գրանցում: Օրենքների կողիֆիկացումը (համակարգումը—թարգմ.) պետք է դիտել որպես եվպատրիդների կողմից դեմոսի օգտին արված լուրջ զիջում: Դեմոսը մինչ այդ խիստ տառապում էր չգրված սովորութային իրավունքի հիման վրա դատ կատարող արքոնտների կամայականութիւններից: Ավանդութիւնն ասում է, որ արքոնտ Դրակոնին հանձնարարվեց վերանայել ու գրի առնել Աթենքում գործող օրենքները: Այդ արքոնտի կողմից գրի առնված օրենքները նրա անունով կոչվեցին «դրակոնյան օրենքներ»: Դրանք մեզ լրիվ չեն հասել: Պահպանված հատվածները վրկայում են, որ գրանցվեցին ոչ միայն սովորութային իրավունքի կանոնները, այլև հոգվածներ, որոնք մշակվել էին դասակարգային հասարակութեան զարգացման ընթացքում: Արգելվեց արյան վրեժը: Դրակոնի օրենքները հաստատում էին մասնավոր սեփականութիւնը տոհմայինի փոխարեն: Զգտելով պահպանել մասնավոր սեփականութիւնն ու մարդկանց գիտակցութեան մեջ արմատավորել օրինականութեան և մասնավոր սեփականատերերի իրավունքների անձեռնմխելիութեան գաղափարը, օրենքը մահապատիժ էր սահմանում անգամ այնպիսի մանր հանցանքների համար, ինչպիսին էր բանջարեղեն գողանալը և այլն: Հունական ավանդութիւնն ասում է, որ Դրակոնի օրենքները կարծես գրված էին արյամբ՝ այնքան որ նրանք դաժան էին:

Ներքին քաղաքական կացությունը Ատտիկայում մ. թ. ա. VII դ. վերջին երկու տասնամյակներում խիստ լարված էր։ Գեոգոհությունը եվպատրիդների տիրապետությունից ի վերջո վերածվեց նրանց դեմ բացահայտ ապստամբության։ Բնութագրելով այդ ժամանակ Աթենքում տիրող դրությունը, Արիստոտելը նշում է. «Ինչպես ասվել էր, վարկերը երաշխավորում էին անձի ստրկացումով, ու հողը գտնվում էր քչերի ձեռքում։ Այն պատճառով, որ գոյություն ունեւր նման պետական կարգ ու ժողովրդի մեծամասնությունը ստրկացված էր քչերի կողմից, ժողովուրդն ապստամբեց թնվանիների դեմ» («Աթենական պոլիտեա», IV, 5)։

Եվպատրիդների դեմ ուղղված ապստամբությունն արագացրին արտաքին քաղաքական անցքերը։ Նախորդ տարիներին Աթենքը համառ պայքար էր մղում հարևան Մեգարա քաղաքի դեմ Սառոնիկյան ծոցում գտնվող Սալամիս կղզու համար։ Սալամիսին փոշելու մեջ շահագրգռված էին աթենական հասարակության բոլոր այն խավերը, որոնք կապված էին առևտրի ու նավագնացության, հնչպես նաև զարգացում ապրող ստրկատիրական հարաբերությունների հետ, քանի որ Սալամիսը փակում էր ելքը աթենական նավահանգիստներից դեպի բաց ծով։ Աթենքը պարտություններ էր կրում, վերջապես ուժանկան գործողությունները դադարեցին և, ըստ ավանդության, անգամ արգելվեց խոսել դրանք վերսկսելու մասին։ Սալամիսը ձեռք բերելու նպատակով պատերազմը շարունակելու հարցը բարձրացրեց Սոլոնը։ Իբրև արքոնտ, նա մ. թ. ա. 594 թ. գլխավորեց Մեգարայի դեմ ուղղված նոր արշավանքը, որը պսակվեց աթենացիների հաղթանակով։ Այդ հաղթանակը Սոլոնին դարձրեց ամենահեղինակավոր մարդը Աթենքում։ Նրա անվան հետ են կապված ռեֆորմներ, որոնք էնգելը որակում է որպես առհմաաիրական հասարակարգին խորտակիչ հարված հասցրած «քաղաքական հեղափոխություն»<sup>8</sup>։ Դրա արդյունքը եղավ նաև պետության ձևավորումն Աթենքում։

Անտիկ պատմագրությունը նկարագրում է Սոլոնին իբրև մի իդեալական օրենսդրի, որը վեր էր կանգնած դասակարգերից ու դասերից և հետապնդում էր նրանց հաշտեցնելու նպատակ։ Սոլոնի անձի ու գործունեության նման գնահատականը բացատրվում է նախ և առաջ հենց անտիկ պատմագրության ռահմանափակվածու-

<sup>8</sup> Կ. Մաբու և Ց. էնգել, Հնտիր երկեր, հ. 3, էջ 367։

թյամբ, ինչպես նաև այն ազդեցությամբ, որ գործեցին նրա վրա Սոլունի եղերերգերը.

Իր երգերից մեկում Սոլունը ասում է.

Այո, ժողովրդին ես պատիվ տրամադրեցի, ինչպիսին անհրաժեշտ էր նրան,  
Զկրճատեցի իրավունքները նրա, սակայն շովեցի և ավելին:  
Մտածեցի ես նաև նրանց մասին, ով ուժ ուներ ու հարստությամբ  
Փառաբանված էր՝ որպեսզի ոչ ոք չվիրավորի նրանց:  
Մտացա ես, իմ հզոր վահանով և՛ նրանց, և՛ սրանց պատսպարեցի  
Եվ ոչ մեկին չթույլատրեցի՝ անօրեն հաղթել մյուսներին\*:

Սոլունին տրված նման փնհաստականն ընդունելի չէ: Սոլունը սրողակի հասարակական խմբավորումների շահերի արտահայտիչ էր, ու նրա դասակարգային դիրքը հստակորեն երևան է գալիս նրա ձեռնարկած բարեփոխումների վերլուծության ժամանակ:

Եվ պատրիդներին դեմ սկսված շարժման գլխավոր ուժը պարտային ստրկության, հողազրկման, քաղաքական իրավազրկության դեմ պայքարող գյուղացիությունն էր: Տոհմական ավագանու դեմ հանդես եկան նաև քաղաքների ազատ արտադրողները՝ արհեստավորները, որոնք դեռ սերտորեն կապված էին գյուղատնտեսության հետ: Այդ շրջանում քաղաքացիություն ունեցող շարքային քաղաքային բնակիչների քաղաքական ու տնտեսական պահանջները համընկնում էին գյուղացիության պահանջներին: Շարժմանը մասնակցում էին նաև հին տոհմային ավագանու հետ իր կապերը խզած եվպատրիդների ձախ թևը, ինչպես և այն հարուստ, բայց ոչ անվանի մարդիկ, որոնք կազմում էին քաղաքային բնակչության վերին խավերը: Ըստ էության, նրանք արդեն իրենցից ներկայացնում էին ստրկատերերի դասակարգ և ձգտում էին մասնակցել Աթենքի կառավարմանը, հասնել քաղաքական կարգերի ու տնտեսության մեջ տոհմային կարգերի այն տարրերի վերացմանը, որոնք խանգարում էին ստրկատիրական հարաբերությունների զարգացմանը: Այդ խմբավորման գլուխ կանգնած էր Սոլունը:

Հենվելով ժողովրդական ժողովի վրա, Սոլունը իրականացրեց մի շարք տնտեսական ու քաղաքական բարեփոխումներ: Սոլունի ամենակարևոր տնտեսական բարեփոխումը սիսաքթեան էր՝ «ծանրության թոթափումը»: Դա շքավորության գրավ դրած հողակտորների մաքրումն էր դրանցում տեղադրված պարտքային քարերից: Սոլունի խոսքերով՝ սիսաքթեայի մասին

Կարող էր ասել օլիմպիացիներից բարձրագույնը՝  
Մայր սև Հողը, որի վրայից այնժամ ես հանեցի

\* Տողացի թարգմանությունը Գ. Հարությունյանի:

Կանգնեցված շատ սյուներ պարտքային,  
Ստրկուհի էր նա առաջ, իսկ այժմ աղատ է:\*

Պարտքերի վերացումը ազատագրեց ստրուկ-պարտապանների գանգվածին ու թեթևացրեց գյուղացիության վիճակը: Պարտքերի ոչնչացման հետ միասին արգելվեց պարտքի երաշխավորումը պարտապանի անձով ու պարտքերի դիմաց նրա վաճառքը ստրուկության: Այն քաղաքացիներին, որոնց վաճառել էին Աթենքի սահմաններից դուրս, փրկագնում ու վերադարձնում էին հայրենիք: Սուլոնը իր եղբերգներում ասում էր, որ նա հայրենիք վերադարձրեց անգամ նրանց, ովքեր արդեն մոռացել էին աստիակական բարբարոս:

Սուլոնը նաև հրապարակեց օրենք կտակի ազատության վերաբերյալ: Այն հաստատում էր մասնավոր սեփականությունն ու թուլատրում էր տոհմական տիրույթների մանրատում, այն ժամանակ, երբ առաջ հողը ժառանգվում էր տոհմի կողմից ու հնթակա չէր օտարման: Այդ բոլոր օրենքներն ուղղված էին տոհմատիրական կարգերի տնտեսական հիմքերի դեմ ու առավել ուժգին հարվածեցին տոհմային սեփականության տերերին՝ եվպատրիդներին, որոնք մեծ չափերով զբաղվում էին վաշխառությանը ու իրենց տնտեսություններում օգտագործում էին ստրկացրած պարտապանների աշխատանքը: Ատտիկայի պայմաններում պարտային ստրուկությունը եկամտի շատ նվազ աղբյուր էր. այն չէր կարող երկար ժամանակ բավարարել ստրկատիրական տնտեսության աճող պահանջներն ու մշտապես հղի էր սոցիալական ցնցումներով:

Սուլոնի ռեֆորմների հետևանքով Ատտիկայում հանդես եկավ մանր ու միջին ազատ հողային սեփականատերերի խավը, որ կազմում էր անտիկ շրջանի ամեն մի քաղաք-պետության անբաժանելի մասը, դրա սոցիալական հիմքը:

Սուլոնի ձեռնարկած տնտեսական միջոցառումներից անհրաժեշտ է հիշատակել Ատտիկայից հացի արտահանումն արգելող ու ձիթայուղի արտահանումը խրախուսող օրենքը: Այդ օրենքը ևս ուղղված էր տոհմական ավագանու դեմ, քանի որ տիրելով վարելահողին ու հաց արտահանելով Ատտիկայի սահմաններից դուրս, ավագանին կամայականորեն սահմանում էր հացի գները ներքին շուկայում: Խրախուսելով փնտեսսիվ կուլտուրաների՝ ձիթենու, խաղողի և այլնի մշակումը, Սուլոնը հրատարակեց օրենքներ, որոնք կարգավորում էին ծառատնկումը, ոռոգումը, սահմանեց նախկինում առանձին տոհմերին կամ ընտանիքներին պատկանող ջրհոր-

\* Տողացի թարգմանությունը Գ. Հարությունյանի:

ների համատեղ օգտագործման կանոններ և այլն: Ինտենսիվ կուլտուրաների մշակումը մատչելի էր ոչ միայն խոշոր հողատերերի, այլև դեմոսի միջին խավերի համար: Վերջիններիս օգտին էլ իրականացվում էին այդ օրենքները: Սոլոնին են վերագրում նաև հողային մաքսիմումի վերաբերյալ օրենքի ընդունումը, թեև դա վիճելի է:

Սոլոնի միջոցառումները նպաստեցին Ատտիկայի վերածմանը հացագործության երկրից մի այնպիսի երկրի, որի տնտեսութունում գլխավոր տեղը գրավեցին զգալի պարանբային արտադրանք տվող ինտենսիվ այգեգործական-բանջարանոցային կուլտուրաները:

Արհեստներն ու արհեստագործական արտադրութունը խրախուսելու և զարգացնելու նպատակով Սոլոնը սահմանեց օրենք, որի համաձայն որդին կարող էր հրաժարվել զառամյալ հորն օգնելուց, եթե վերջինս նրան արհեստ չէր սովորեցրել: Սոլոնի օրոք Աթենքում կիրառվեց շափ ու կշռի միավորների միասնականացում: Ոչնչացվեցին արտաքին աշխարհի հետ փոխանակումն ու անգամ ներքին ատտիկական առևտուրը դժվարացնող տեղական ու տոհմական շափերն ու կշիռները: Արտաքին առևտրին նպաստելու նպատակով, մինչև Սոլոնի ռեֆորմները շրջանառության մեջ գրտնըվող էգինյան դրամական համակարգը փոխարինվեց հունական աշխարհում լայնորեն տարածված եվբեյան համակարգով: Գրամական ռեֆորմն ունեցավ նաև քաղաքական մեծ նշանակություն՝ եվբեյան համակարգին անցնելու արդյունքը եղավ գույքային ցենզի փաստական իջեցումը, քանի որ եվբեյան տաղանդը էգինյանից թեթև էր, այսպիսով ընդլայնվում էր աթենական քաղաքացիների թիվը քիչ ունևոր անձանց հաշվին:

Աթենքի հետագա զարգացման համար հսկայական նշանակություն ունեցան Սոլոնի քաղաքական միջոցառումները: Սոլոնը ոչնչացրեց եվպատրիդների քաղաքական արտոնությունները՝ սահմանելով գույքային ցենզ: Ատտիկայի ամբողջ բնակչութունը նա բաժանեց չորս կարգի: Ցենզի հիմք ընդունվեց հողից ստացվող եկամուտը: Առաջին կարգը կազմեցին 500 մեդիմնոսից ոչ պակաս (մեկ մեդիմնոսի շափը տարբեր ժամանակ տատանվում էր 41-ից մինչև 52 լիտր) եկամուտ՝ հացահատիկ, յուղ կամ գինի ստացողները: Նրանք կոչվում էին պենտակոսիոմեդիմնականներ՝ հինգ հարյուր շափ ունեցողներ: Երկրորդ կարգին պատկանում էին 300 մեդիմնոսից ոչ պակաս եկամուտ ստացող քաղաքացիները: Նրանք կոչվում էին հեծյալներ, որովհետև պետք է ծառայեին հեծելազորում: Երրորդ կարգը՝ զևգիտները, այն քաղաքացիներն էին, որոնց

եկամուտը 200 մեդիմնոսից պակաս չէր (սեփական եզների լծասարք ունեցողներ): Դա աթենական քաղաքացիների ամենաբազմամարդ խումբն էր, որին պատկանում էին միջին հողասեփականատերերը: Բոլոր մյուս քաղաքացիները, որոնց եկամուտը 200 մեդիմնոսից ցածր էր, պատկանում էին վերջին, շորորդ կարգին՝ թետերին:

Այժմ քաղաքացիների քաղաքական իրավունքներն ու արտոնությունները կախված չէին տոհմական պատկանելիությունից, այլ որոշվում էին նրանց մասնավոր սեփականության շահով: «Այդպիսով,— ասում է էնգելսը,— այստեղ կառավարման կազմակերպման մեջ մտցվում է բոլորովին մի նոր տարր՝ մասնավոր սեփականությունը»<sup>9</sup>: Նոր սահմանադրությունը կարգավորեց նաև աթենական աշխարհագրի կազմավորման գործը: Յուրաքանչյուր կարգին պատկանող քաղաքացիները պարտավոր էին ներկայանալ զինվորական ծառայության, իրենց հետ ունենալով որոշակի զենք, ինչպես և իրենք պիտի հոգային սեփական կարիքները արշավանքի ժամանակ: Առաջին երկու կարգերից կազմվում էր հեծելազորը, երրորդից՝ ծանրազեն հետևակը (հուպլիտներ), շորորդ կարգից՝ թեթևազեն հետևակը:

Ուժի մեջ թողնելով իշխանության հին մարմինները, Սոլոնը սահմանեց նաև նոր դեմոկրատական խորհուրդ՝ բուլե: Այն բաղկացած էր տոհմային ֆիլաներից ընտրվող 400 ներկայացուցիչներից, յուրաքանչյուր ֆիլան ուղարկում էր 100 ներկայացուցիչ: Զորահարյուրի խորհուրդը դարձավ ժողովրդական հավաքի որոշումները նախապատրաստող գլխավոր խորհրդակցական մարմին: Ժողովրդական ժողովի՝ էկլեսիայի նշանակությունը Սոլոնի ժամանակից խիստ մեծացավ: էկլեսիան քննում էր Աթենքի քաղաքական կյանքի կարևոր հարցերը, ընտրում էր բարձր պաշտոնատար անձանց ու լսում էր նրանց հաշվետվությունները: Արեոպագոսն ու արքոնտների կոլեգիան, այդ ժամանակից սկսած, կորցնում են իրենց նախկին իրազորությունները:

Կարևոր նշանակություն ունեցավ Սոլոնի կողմից նոր դատական մարմնի՝ ատենակալների դատարանի՝ հելիեայի ստեղծումը: Դատավորներն ընտրվում էին ըստ ֆիլանների, բոլոր շորս կարգերի քաղաքացիներից, այդ թվում նաև՝ թետերից: Այսպիսով, հելիեան սոլոնյան սահմանադրության ամենադեմոկրատական մարմինն էր: Հելիեայի ֆունկցիաները չէին սահմանափակվում քաղաքացիական ու քրեական դործերի հետ կապված վեճերի քննարկումով: Նը-

<sup>9</sup> Կ. Մարքս և Ֆ. էնգելս, Ընտիր երկեր, հ. 3, էջ 369:

րան էր պատկանում նաև պաշտոնյա անձանց գործունեության հրակողությունը:

Սուլունի ձեռնարկած միջոցառումները, սակայն, վերջ չդրեցին քաղաքական պայքարին Աթենքում: Արտոնյալ դիրքը, լիփրավ իշխանությունն ու հարստությունների մի մասը կորցրած հին տոհմական ավագանուց բացի, Սուլունի ռեֆորմներից դժգոհ մնացին նաև մանր հողատերերն ու արհեստավորները: Թեև նրանք ազատվեցին պարտքերից, սակայն շատացան այն քաղաքական իրավունքները, որոնք տրվեցին բարձր կարգերին պատկանող քաղաքացիներին: Սուլունի օրենքների համաձայն բարձրագույն պաշտոններ կարող էին զբաղեցնել միայն պենտակոսիոմեդիմնականներն ու հեծյալները: Այսպիսով, ամբողջ իշխանությունը կենտրոնանում էր մեծահարուստ մարդկանց ձեռքում:

Անտիկ պատմագրությունը ի վիճակի չլինելով հասկանալ, թե ինչու՞ Սուլունի ռեֆորմները խաղաղություն չբերեցին աթենական հասարակությանը, վերսկսված ներքին պայքարը բացատրում էր Աթենքից Սուլունի մեկնումով ու նրա կողմից սահմանված օրենքների խախտումներով: Այդ պայքարի իսկական պատճառները պիտի փնտրել սուլոնյան օրենսդրության փոխզիջողական բնույթի մեջ, աթենական հասարակությունում եղած խորը սոցիալական հակասությունների մեջ:

Սուլունի ռեֆորմների նշանակությունը այն էր, որ դրանք լայն ճանապարհ բացեցին ստրկատիրական հարաբերությունների զարգացման համար, ձևավորեցին Աթենքի՝ որպես ստրկատիրական պոլիսի՝ քաղաք-պետության պետական կարգն ու ստեղծեցին աթենական դեմոկրատիայի հիմքերը:

Մ. թ. ա. VI դ. 80-ական թվականներին քաղաքական պայքարն ընդունեց չափազանց սուր բնույթ: Նղավ այնպիսի տարի, երբ անկարգությունների հետևանքով անգամ չհաջողվեց ընտրել արքոնտներ: Այդ տարին ցուցակներում նշված է որպես անիշխանություն՝ առանց արքոնտների տարի: Այդ շրջանում Աթենքում ձևավորվում են երեք կայուն սոցիալ-քաղաքական խմբավորումներ (աղբյուրները նրանց անվանում են կուսակցություններ), որոնց միջև սկսված պայքարը կազմում է աթենական հասարակության ներքին կյանքի բովանդակությունը մ. թ. ա. VI դ. առաջին կեսին: Ըստ Արիստոտելի, այդ կուսակցությունները համապատասխանում էին Ատտիկայի աշխարհագրական մարզերին, որոնց անուններն էլ նրանք կրում էին: Բայց նույն Արիստոտելի հաղորդած տեղեկությունները նյութ են տալիս յուրաքանչյուր խմբավորման սոցիալական նկարագրի բնութագրման համար. նրանցից մեկը կազմում



էին պեղիկաները (դաշտավայրի բնակիչները): Դրանք խոշոր հողատիրութեան ներկայացուցիչներն էին ու գերազանցապես պատկանում էին հին տոհմական ավագանուն, որը ձգտում էր հասնել սուլոնյան օրենքների վերացմանն ու օլիգարխիայի հաստատմանը: Երկրորդ կուսակցութունը կազմում էին պարալիները (մերձծովյան շերտի բնակիչները)՝ քաղաքի ստրկատիրական խմբավորումները, արհեստավորները, վաճառականները, Սուլոնի օրենքների պահպանման կողմնակից հանդիսացող միջին գյուղացիութունը և վերջապես՝ դիակրիները (լեռնային մարզերի բնակիչները)՝ մանր հողատերերը, քաղաքային շքավորութունը, թետերը, որոնք պահանջում էին քաղաքական իրավունքներ ու հողի վերաբաժանում: Պեղիկաներին գլխավորում էր Լիկուրգոսը, պարալիներին՝ Մեղակլես Ալկմեոնյանը, դիակրիներին՝ Պիսիստրատոսը:

Այդ տասնամյակներում տեղի ունեցող քաղաքական պայքարի հատկանշական գիծն էր պարալիների անցումը տոհմային արիստոկրատիայի հետ ունեցած դաշինքից դիակրիների՝ արմատական, դեմոկրատական խմբավորման հետ դաշինքին: Ըստ երևույթին, դիակրիների հետ դաշինքի հաստատմանը պարալիները դիմում էին այն ժամանակ, երբ սպառնալիք էր առաջանում գոյութուն ունեցող սուլոնյան սահմանադրութեան համար, իսկ տնտեսական հարցերում պարալիներն ընդհանուր լեզու էին գտնում պեղիկաների հետ:

#### ՊԻՍԻՍՏՐԱՏՈՒ ՏԻՐԱՆԻԱՆ

Կատաղի պայքարի պայմաններում, երբ տոհմական ավագանին արդեն այնքան էր թուլացել, որ ի վիճակի չէր վերականգնել իր նախկին տիրապետութունը, իսկ դեմոկրատական տարրերը դեռ այնքան համախմբված և ուժեղ չէին, տրպեսզի վերջնականապես ճնշեին ավագանուն, գերագույն իշխանութունն Աթենքում մ. թ. ա. 560 թ. զավթեց Պիսիստրատոսը: Բողոքելով, որ իր քաղաքական հակառակորդների կողմից իրեն վտանգ է սպառնում, Պիսիստրատոսը հասավ այն բանին, որ ժողովրդական ժողովի որոշմամբ նրան թուլատրվեց հավաքագրել թիկնապահներ: Հավաքելով ջոկատ, Պիսիստրատոսը վերցրեց Ակրոպոլիսն ու զավթեց պետական իշխանութունը: Սակայն, ինչպես գրում է Արիստոտելը, «Մեղակլեսի ու Լիկուրգոսի կողմնակիցները, համաձայնութեան գալով, արտաքսեցին Պիսիստրատոսին՝ նրա կողմից իշխանութունը առաջին անգամ գրավելու վեցերորդ տարում» (այսինքն մ. թ. ա. 555 թ.):

Մեղակլեսի դաշինքը Լիկուրգոսի կողմնակիցների հետ կարճատև էր: Այդ խմբավորումների միջև ծագած հակասությունները շուտով հանգեցրին այն բանին, որ Մեղակլեսը նպաստեց Պիսիստրատոսի վերադարձին Աթենք: Բայց Պիսիստրատոսն այս անգամ նույնպես չկարողացավ պահպանել իշխանությունը: Իր վերադարձից յոթ տարի անց նա կրկին արտաքսվեց: Գտնելով, որ հենվելով միայն աթենական հասարակությունում եղած իր կողմնակիցների վրա նա չի պահպանի իշխանությունը, Պիսիստրատոսը իր սեփական միջոցներով հավաքագրեց զինվորական ջոկատ ու դիմեց աթենացիներին թշնամի թեբեսացիների ու եվբեյական Նրեստրիա քաղաքի արիստոկրատիայի ռազմական օգնությունը: Բացի դրանից, Պիսիստրատոսին օգնեց նաքսոսյան տիրան Լիզոամիդոսը: Ջախջախելով աթենական աշխարհագորը, Պիսիստրատոսը կրկին զավթեց գերագույն իշխանությունն Աթենքում, ուր նա կառավարեց իբրև տիրան մինչև իր մահը՝ մ. թ. ա. 527 թ.:

Սոլոնի սահմանադրությունը Պիսիստրատոսի օրոք շարունակում էր իր գոյությունը, բայց դրանից վեր էր կանգնած և անկախ ու միանձնյա ձևով կառավարում էր տիրանը:

Պիսիստրատոսի, ինչպես և վաղ տիրանիայի այլ ներկայացուցիչների, սոցիալական հենարանն էին դիակրիներն ու անձնական զինված պահակային ջոկատները: Նրան օժանդակում էր նաև պարալիների մի մասը:

Պիսիստրատոսի սոցիալական քաղաքականությունը մասամբ բավարարում էր ատտիկական գյուղացիության պահանջները: Մյուս վաղ տիրանների նման, Պիսիստրատոսը բռնագրավեց իր քաղաքական հակառակորդների, առաջին հերթին՝ եվպատրիդների հողային տիրույթները: Նրանց հողերը բաժանվեցին ամենաչքավոր գյուղացիների միջև: Պիսիստրատոսի խոշորագույն ձեռնարկումը եղավ պետական վարկի սահմանումը: Թեև Սոլոնը արգելեց պարտային ստրկությունը, սակայն վարկային տոկոսները շատ բարձր էին, ու վաշխառուները շարունակում էին շահագործել վարկի կարիք ունեցող գյուղացիներին: Ավելի էժան պետական վարկի սահմանումը թեթևացնում էր գյուղացիների վիճակը և ձեռնտու չէր տոհմային ավագանուն: Պիսիստրատոսը նշանակեց «չրջագայող դատավորներ», որոնք մեկնում էին տեղերը դատական գործեր քննելու համար: Դա ազատում էր գյուղացիներին դատին մասնակցելու համար քաղաք մեկնելու անհրաժեշտությունից: Պիսիստրատոսի օրոք պետությունը դարձավ ավելի կենտրոնացված, առաջացավ մշտական բանակ՝

ի դեմս տիրանի անձնական թիկնազորի: Բացի դրանից, սահմանվեց մշտական եկամտահարկ, որը հավասար էր բերքի 1/10 չափին: Այն գանձվում էր մեծ խստությամբ:

Իր արտաքին քաղաքականության մեջ Պիսիստրատոսը, ելնելով Աթենքի զարգացող ստրկատիրական տնտեսության շահերից, ձգտում էր գրավել հենակետեր կարևոր միջազգային առևտրական ճանապարհների վրա, գտնել նոր շուկաներ, հաստատել քաղաքական ու տնտեսական կապեր այն ժամանակվա հունական աշխարհի առավել զարգացած կենտրոնների հետ: Նա դաշինք կնքեց Նաքսոս կղզու տիրանի հետ: Մ. թ. ա. 6-րդ դ. Նաքսոսով էին անցնում Հունաստանից Փոքր Ասիայի քաղաքները գնացող գլխավոր ուղիները: Պիսիստրատոսը դաշնակցեց նաև Սամոսի տիրան Պոլլուկրատեսի հետ: Զգտելով տիրել Սև ծովը տանող նեղուցների մոտքին, Պիսիստրատոսը գավթեց Սիդեյոն քաղաքը Տրոասում, որը իշխող դիրք էր գրավում Հելլեսպոնտոսի մուտքի մոտ ու միաժամանակ ուներ արգավանդ հովիտ: Այդ նույն ժամանակ Հելլեսպոնտոսի հակադիր ափին հիմնադրվեց աթենական գաղութ, որի գլուխ կանգնած էր Պիսիստրատոսի քաղաքական հակառակորդ Միլտիադեսը: Թեև Միլտիադեսը վարում էր անկախ քաղաքականություն ու կառավարում էր գաղութը որպես ինքնակալ, նա չէր խզում կապերը Աթենքի հետ: Նրա օգնությամբ Աթենքին հաջողվեց իր հսկողությունը հաստատել Հելլեսպոնտոսի վրա:

Բուն Բալկանյան Հունաստանում Պիսիստրատոսը սերտ կապեր էր պահպանում Արգոսի հետ: Արգոսը այն ժամանակ Սպարտայի թշնամին էր, իսկ վերջինս հարում էր Լյուդիայի հետ սերտորեն կապված ու Փոքր Ասիայի և էգեյան ծովի կղզիների ամենազարգացած հունական քաղաքներին (Միլետոս, Նաքսոս, Սամոս և այլն) հակադրվող հունական քաղաքների բլուկին:

Պիսիստրատոսի օրոք Աթենքը դարձավ Միջին Հունաստանի խոշոր տնտեսական կենտրոն: Զգալիորեն աճեց բնակչությունը, առաջացան արհեստավորական նոր թաղամասեր, մեծացավ տարբեր արհեստանոցների քանակը: Պիսիստրատոսի կառավարման ժամանակը Աթենքում մանր ազատ արհեստի ծաղկման շրջանն էր: Ինչպես ցույց տվեցին հնագիտական հայտնադործումները, Աթենքում այդ ժամանակ գերակշռում էր ոչ թե երգաստերիոնը, այլ ազատ արհեստավորի արհեստանոցը: Աթենական շքեղ խեցեղենը, կարմրապատկեր, սև լաքած անոթները մեծ պահանջարկ առաջացրեցին արտաքին շուկաներում:

Արտաքին առևտրի հետ մեկտեղ զարգանում էր նաև ներքին առևտուրը: Աթենքը դառնում է առևտրական կենտրոն Միջին Հու-

նաստանի համար և միաժամանակ՝ գյուղատնտեսական արտադրանքի սպառման շուկա: Բացի արհեստագործական արտադրության շինվածքներից, Աթենքը սկսում է երկրից արտահանել գինի ու ձիթայուղ: Աթենական նավահանգիստը լայն, բայց ծանծաղ Փալերոնից փոխադրվեց Պիրեևսի խոր ծովախորշը: Քաղաքի տնտեսական ծաղկումը փոխեց նաև նրա արտաքին տեսքը: Քաղաքը ոչ միայն աճում էր, այլ նաև ծածկվում էր նոր, գեղեցիկ շենքերով: Պիսիստրատոսի ժամանակ Ակրոպոլիսում կառուցվեցին Աթենաս Պալասի, Ելեվսիսում՝ Դեմետրայի շքեղ տաճարներն, ու հիմնադրվեց Օլիմպիական Զևսի տաճարը:

Կրոնական քաղաքականության ասպարեզում Պիսիստրատոսը՝ ի հակակշիռ հին տոհմային պաշտամունքների, հենվում էր դեմոկրատական բնույթ ունեցող համապետական պաշտամունքների վրա: Պիսիստրատոսի օրոք մեծ շքեղությամբ սկսեց տոնվել Համաաթենականքը, և մտցվեց նոր համաժողովրդական տոն՝ ի պատիվ գինու ու գինեգործության աստված Դիոնիսոսի: Այդ պաշտամունքի տարածումն անմիջականորեն կապված էր Ատտիկայում խաղողագործության զարգացման հետ: Դիոնիսոսի պատվին կազմակերպվող տոնակատարությունների ժամանակ տեղի էին ունենում հանդիսավոր արարողություններ ու թատերական ներկայացումներ:

Աթենքի տնտեսական զարգացումը Պիսիստրատոսի ժամանակ հանգեցրեց դեմոկրատական տարրերի աճին. այդ տարրերը սկսեցին նեղվել տիրանիայից և ձգտում էին տապալել այն: Տիրանիայի դեմ ուղղված բացահայտ ելույթները սկսվեցին Պիսիստրատոսի մահից հետո, երբ կառավարում էին նրա որդիներ Հիպպիասն ու Հիպպարքոսը: Պիսիստրատոսյանները ստեղծեցին շքեղ արքունիք: Տիրանների ճոխ կյանքը առաջացրեց աթենացիների ատելությունը: Արտաքին քաղաքական իրադրությունը այդ ժամանակ փոխվեց ի վնաս աթենական տիրանների: Փոքր Ասիան ընկավ Պարսկաստանի տիրապետության տակ, ու աթենացիք կորցրեցին Սիգյոնը, տիրույթներ թրակիական Քերսոնեսոսում, ինչպես նաև հսկողությունը Հելլեսպոնտոսի վրա:

Տիրաններին տապալելու առաջին փորձը ձեռնարկեցին արիստոկրատական շրջանները. այն կրում էր դավադրության բնույթ: Դավադիրներ Հարմոդիտոսին ու Արիստոգիտոնին հաջողվեց սպանել Հիպպարքոսին: Իշխանության ղեկի մոտ մնացած Հիպպիասը մահապատժի ենթարկեց Արիստոգիտոնին (Հարմոդիտոս սպանվեց տիրանների վրա գործած հարձակման ժամանակ), արտաքսեց բոլոր նրանց, ում կասկածում էր դավադիրներին համակրելու մեջ, սկսեց ամրապնդել Պիրեևսի մի մասը՝ Մունիքիան, ձգտելով վերա-

ծել այն ամբողջի: Վտարանդիները սկսեցին պայքար տիրանի դեմ Ատտիկայի հյուսիսում, բայց ջախջախվեցին Հիպպիասի զորքերի կողմից (Արիստոտել, Աթենական պոլիտեա, VII, 19):

Տիրանիայի դեմ ուղղված շարժումն ընդլայնվում էր: Այն գըլխավորեց Կլիսթենեսը՝ Ալկմեոնյանների տոհմից, որը առաջ քաշեց Աթենքի պետական կարգի դեմոկրատական ոգով լայն վերափոխումների ծրագիր: Արիստոտելը ասում է, որ Կլիսթենեսը իր կողմը գրավեց ժողովրդին՝ խոստանալով տրամադրել նրան քաղաքական իրավունքներ: Կլիսթենեսը նաև հաջողությամբ օգտագործեց Հիպպիասի արտաքին քաղաքական դժվարությունները՝ դաշնակցելով սպարտացիների հետ, իսկ վերջիններս թշնամաբար էին տրամադրված Հիպպիասի դաշնակիցներ Արգոսի ու Թեսալիայի նկատմամբ: Սպարտայի զորքերը Կլեոմենես թագավորի գլխավորությամբ օգնութայն եկան աթենացիներին, որոնք պաշարել էին տիրանին Ակրոպոլիսում: Հիպպիասը հանձնեց ամբողջն ու փախավ Պարսկաստան (մ. թ. ա. 510 թ.):

ՆՈՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԱԹԵՆՔՈՒՄ  
ԿԼԻՍԹԵՆԵՍԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հիպպիասի արտաքսումից հետո Աթենքում կրկին բորբոքվեց քաղաքական պայքար: Դեմոկրատների դեմ միավորվեցին բոլոր պահպանողական տարրերը, հին արիստոկրատիան ու պիսիստրատոսյանների կողմնակիցները: Նրանց գլխավորում էր Իսագորասը: Սպարտացիներն օգնելով Կլիսթենեսին, նպատակ ունեին արտաքսել Հիպպիասին Աթենքից ու հաստատել վերջինիս վրա իրենց քաղաքական իշխանութունը, սակայն տեսնելով, որ այդ հաշիվները չեն արդարանում, անցան Իսագորասի կողմը: Կլիսթենեսը ստիպված էր փախչել Աթենքից, դեմոկրատական հոսանքին հարող յոթ հարյուր աթենական ընտանիքներ արտաքսվեցին քաղաքից: Հավանաբար, ինչպես դա երևում է Արիստոտելի հաղորդումից, աթենական օլիգարխներն ու Կլեոմենես թագավորը փորձեցին վերացնել սոլոնյան պետական կառուցվածքն ու հաստատել Աթենքում օլիգարխիա: Արիստոտելը գրում է՝ «Նա (Կլեոմենեսը) փորձում էր տապալել խորհուրդը ու հանձնել քաղաքը Իսագորասին ու նրա 300 կողմնակիցներին» (Աթենական պոլիտեա, VIII, 20): Աթենացիներն ապստամբեցին Իսագորասի դեմ ու Աթենքից արտաքսեցին նրան ու նրա 300 կողմնակիցներին, ինչպես և սպարտական կայսրը, որը գրավել էր Ակրոպոլիսը:

Սկսած մ. թ. ա. 509 թ., Կլիսթենեսն անցկացրեց մի շարք ռեֆորմներ, որոնք ոչնչացրեցին տոհմական կարգերի մնացուկներն

Աթենքում ու վերջնականապես հաստատեցին ստրկատիրական դեմոկրատական հանրապետության ձև ունեցող պետությունը:

Նախ Կլիսթենեսը ոչնչացրեց շորս հին տոհմային ֆիլաներն ու սահմանեց նոր բաժանում ըստ տարածքային հատկանիշի: Ամբողջ Ատտիկան բաժանվեց երեք մարզերի՝ առափնյա շրջան, Աթենքը՝ իր արվարձաններով ու ներքին մասը: Յուրաքանչյուր մարզ իր հերթին բաժանվում էր տաս մասերի՝ տրիտիսների: Երեք տրիտիսներ՝ մեկական ամեն մի մարզից՝ կազմում էին մեկ նոր ֆիլա: Կային այդպիսի տաս ֆիլաներ: Այդ նոր ֆիլաները շունեին ընդհանուր սահմաններ: Դրանցից յուրաքանչյուրի տարածքը գտնվում էր Ատտիկայի տարբեր մասերում: Դրանց քաղաքացիները հավաքվում էին Աթենքի որոշակի հրապարակներում, ուր սովորաբար դրված էր այն ֆիլայի հերոս-պաշտպանի պատկերը, որի անունը նա կրում էր: Այդ ռեֆորմով Կլիսթենեսը իրարից անջատեց տոհմերն ու խառնեց ամբողջ բնակչությունը՝ դրանով ոչնչացնելով եվպատրիդների ազդեցությունը շարքային քաղաքացիների զանգվածի վրա:

Տոհմային սեփականությունը վերջնականապես վերածվեց ընտանեկան սեփականության: Հին տոհմային ֆիլաները պահպանվեցին սոսկ իբրև պաշտամունքային միավորումներ: Սկզբնային վարչական միավոր դարձավ դեմը՝ գյուղական շրջանը: Մ. թ. ա. VI դ. վերջին Ատտիկայում կային 100 դեմեր: Տոհմական կազմակերպություններից դեմին անցավ նոր ծնված աթենացիներին քաղաքացիական ցուցակներում գրանցելու լիազորությունը: Դեմի գրչուխ կանգնած էր ընտրովի դեմարքոսը: Աշխարհազորի հավաքագրումը, դատարանի ու խորհրդի վիճակահանությունը կատարվող ընտրությունները տեղի էին ունենում ըստ դեմերի:

Տոհմային ֆիլաների կողմից ընտրվող շորսհարյուրի սոլոնյան խորհուրդը փոխարինվեց հինգհարյուրի նոր խորհրդով, որն ընտրվում էր նոր տերիտորիալ ֆիլաներում՝ յուրաքանչյուրից 50 մարդ: Ֆիլայի ներսում ձայները բաժանվում էին դեմերի միջև՝ նրանց բնակչության թվին համապատասխան:

Կլիսթենեսի օրոք աթենական քաղաքացիության կազմի մեջ ներգրավվեցին շատ մետոյկներ: Հավանաբար, նրանց մեծ մասը բնածին աթենացիներ էին, որոնք տարբեր պատճառներով չէին մտցվել քաղաքացիների ցուցակների մեջ ու աջպիսով հայտնվել էին մետոյկների շարքում:

Վերակառուցվեց նաև զինվորական հրամանատարությունը: Կլիսթենեսի ժամանակից աթենական աշխարհազորը գլխավորեց տաս ստրատեգոսների կոլեգիան, ամեն մի ֆիլայից ընտրվում էր մեկ ստրատեգոս: Թույլատրվում էր բազմիցս վերընտրել ստրա-

տեգոսին իր պաշտոնում: Այդ ուեֆորմի շնորհիվ հրամանատարությունը արքունտ-պոլեմարքոսից անցավ ավելի դեմոկրատական մարմնի ձեռքը, մի բան, որ համապատասխանում էր աթենական սահմանադրության ընդհանուր ոգուն ու աթենական արտաքին քաղաքականության նոր խնդիրներին:

Դեմոկրատիայի քաղաքական հակառակորդների, առաջին հերթին, տիրանիան վերականգնելու փորձերի դեմ հաջող պայքար մղելու նպատակով Կլիսթենեսը սահմանեց այսպես կոչված խեցիկների դատարանը՝ օստրակիսմը: Օստրակիսմի էությունը հետևյալն էր: Ամեն տարի գարնանը հատուկ ժողովը որոշում էր, թե պե՞տք է արդյոք կատարել օստրակիսմ, այսինքն կա՞ն քաղաքացիների մեջ գոյություն ունեցող կարգերի համար վտանգավոր անձեր, թե ոչ: Եթե այդպիսիք հայտնաբերվում էին, ապա գումարվում էր երկրորդային ժողովը՝ բաղկացած ոչ պակաս 6000 քաղաքացիներից: Ժողովում յուրաքանչյուր քաղաքացի գրում էր խեցու (օստրակոնի) վրա այն անձի անունը, որը վտանգավոր էր պետության համար: Չայնների մեծամասնությամբ դատապարտված մարդը արտաքսվում էր Ատտիկայից տաս տարի ժամկետով: Օստրակիսմը՝ ծագելով որպես տիրանիայի կողմնակիցների դեմ պայքարի միջոց, հետագայում լայնորեն կիրառվում էր իբրև քաղաքական պայքարի զենք:

Կլիսթենեսի ուեֆորմներն ազդեցություն ունեցան նաև այլ հունական համայնքների վրա: Շուտով դեմոկրատական շարժում ծագեց մյուս քաղաքներում:

Սպարտան չէր կարող հաշտվել Աթենքում տեղի ունեցած փոփոխությունների հետ, նա վախենում էր Պելոպոնեսյան միություն քաղաքների վրա աթենական դեմոկրատիայի ազդեցության ուժեղացումից: Նրան հաջողվեց կազմակերպել Աթենքի դեմ ուղղված միություն՝ կազմված Կորնթոսից, Բեովտիայից ու եվբեյական քաղաքներից: Սպարտայի դաշնակիցների գորքերը հարձակում ձեռնարկեցին Ատտիկայի վրա: Հյուսիսից շարժվում էին բեովտացիները, արևելքից՝ Ատտիկայում ափ իջած քաղկիսցիները: Սպարտական զորքը Խթմոսով շարժվեց դեպի Ելեվսիս: Աթենքը ընկավ շատ ծանր դրություն մեջ: Սակայն Սպարտայի դաշնակիցները, ինչպես գրում է Հերոդոտոսը, որոշելով, որ «գործում են անարդարացիորեն, հետ վերադարձան» (V, 75):

Կորնթոսցիները շահագրգռված չէին Սպարտայի հետագա քաղաքական ուժեղացման մեջ, մի բան, որ ակներև կլիներ, եթե աթենացիք չախջախվեին: Կորնթացիներից հետո Սպարտայից սկսեցին հեռանալ նաև նրա պելոպոնեսյան մյուս դաշնակիցները: Դրա առիթը եղան հենց իսկ սպարտական թագավորներ Դեմարատոսի ու

Վլետմենեսի միջև գերագույն հրամանատարութեան համար ծագած երկպառակությունները, որոնց հետեանքով Դեմարատսը վերադարձավ Սպարտա:

Տեսնելով, որ գլխավոր թշնամու ճամբարում տիրում է բարոյալքում, աթենացիներն իրենց ուժերը սկզբում ուղղեցին բեռվտացիների դեմ և ջախջախելով նրանց, անցան Եվրիպոսը ու հաղթեցին քաղկիսիցիներին: Քաղկիսյան խոշոր հողատերերից՝ հիպպոբոտոներից խլված հողերում Վլիսթենեսը բնակեցրեց 4000 աթենական գաղութաբնակներ (կլերուքներ): Այդ միջոցառումը սկիզբ դրեց Աթենքի գաղութաբնակեցման քաղաքականութեանը, որը զարգացում ապրեց հատկապես մ. թ. ա. V դ.:

Սպարտացիները շհրաժարվեցին Աթենքի վրա նոր հարձակում գործելու մտքից ու իրենց մոտ հրավիրեցին Հիպպիասին: Սպարտայի պելոպոնեսյան դաշնակիցները հրաժարվեցին օժանդակել Սպարտայի այդ ձեռնարկմանն ու Հիպպիասը, վերադառնալով Փոքր Ասիա, փորձեց ձեռք բերել պարսկական թագավորի օժանդակութունը: Աթենացիք մերժեցին Հիպպիասին վերստին ընդունելու պարսկական առաջարկը: Հերոդոտոսը դիտում է Աթենքի այդ մերժումը որպես Պարսկաստանի դեմ բացահայտ պայքար սկսելու վրձիռ:

Այսպիսով, աթենական դեմոկրատիային հաջողվեց ոչ միայն հաղթել իր ներքին հակառակորդներին, այլև պաշտպանել իր քաղաքական անկախությունը:

## Գլուխ 7. Մ. Թ. Ա. VIII—VI ԴԴ. ՀՈՒՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Մ. թ. ա. VIII—VI դդ. հունական մշակույթը այնպիսի հասարակութեան մշակույթն էր, ուր առաջատար դեր ունեւր ատրկական աշխատանքը, թեև արտադրողների բարձր որակավորում պահանջող առանձին ճյուղերում, ինչպես, օրինակ, գեղարվեստական արհեստում, լայնորեն կիրառվում էր ազատ աշխատանքը:

### ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՆԵԿԱ

Տեխնիկական շատ տեսակետներից մնում էր բավական պարզունակ: Դա հատկապես նկատվում էր գյուղատնտեսութեան մեջ, ուր գլխավոր տեղը գրավում էր հացահատիկի մշակումը: Աշխատանքի հիմնական գործիքներն էին փայտե գութանն ու բրիչը, կիրառվում էր երկդաշտային համակարգը, և միայն մ. թ. ա. IV դ. սկսեցին անցնել եռադաշտային համակարգին: Ամենատարածված նյութտուրաներն էին ցորենն ու գարին: Մեծ նշանակութիւն ձեռք բե-



րեց ձիթենու և խաղողի մշակումը, որի հետ կապված էր յուղագործությունն ու գինեգործությունը:

Անասնապահության մեջ, հատկապես լեռնային շրջաններում, առավելապես պահում էին ոչխարներ ու այծեր: Խոշոր եղջերավոր անասուններն օգտագործվում էին որպես հիմնական քանող անասուններ: Ավելի քիչ էր զարգացած ձիաբուծությունը, որովհետև ձիերն օգտագործվում էին միայն ռազմական ու սպորտային նպատակների համար: Ձիաբուծությունը մեծ նշանակություն ձեռք բերեց Բեռվտիայում ու Քեսալիայում:

Որոշ դեր էր խաղում մեղվաբուծությունը, մեղրը հնում միակ քաղցր մթերքն էր, իսկ մեղրամոմը կարևոր հումք էր արհեստի համար:

Զբաղմունքներից հատկապես պետք է նշել ձկնորսությունն ու ծովային զանազան ուտելիքի հավաքումը, որը ուսումնասիրվող շրջանում հասավ զգալի զարգացման:

Արհեստում զլխավոր տեղը պատկանում էր մետաղագործությանը: Արդյունահանվում էին երկաթի, պղնձի ու արծաթ-կապարային հանքաքարեր: Դրանց մշակումը կատարվում էր բաց քարհանքերում ու շատ թե քիչ խոր հանքահորերում և բովանցքերում: Հանքաքարը ջարդում էին հանքահատ մուրճով, սեպով կամ կոցավոր մուրճերով ու դուրս էին բերում պարկերի կամ զամբյուղների մեջ: Մետաղի ձուլումը սովորաբար կատարվում էր հանույթի վայրում: Երկաթը ձուլվում էր հանքափշման եղանակով, իսկ երկաթյա իրերը պատրաստվում էին կոման միջոցով: Հատկապես քարձր որակ ունեին Սպարտայի դարբնոցային շինվածքները: Պղինձն ու բրոնզը մշակում էին կոելու և հատկապես ձուլման միջոցով: Ոսկին և արծաթը օգտագործվում էին ոսկերչության մեջ, արծաթից սովորաբար հատում էին դրամ:

Զգալիորեն զարգացած էր ատաղձագործական արհեստը: Նրա հատուկ ճյուղը դարձավ բարձր մակարդակի հասած նավաշինությունը: Մ. թ. ա. VIII դ. կորնթոսցիները ստեղծեցին տրիբրան՝ երեք շարք թիավարներ ունեցող արագընթաց ռազմական նավի նոր տեսակը, որը փոխադրինեց նախկին մեծ նավակին:

Զգալի նշանակություն ունեի նաև կաշեգործությունը: Երկաթի, բրոնզի, փայտի ու կաշվի մշակումը կազմում էր հունական արտադրության կարևոր ճյուղի՝ զինագործության հիմքը: Նիզակների ծայրապանակներն ու թրերը կոում էին երկաթից, սաղավարտները, զրահներն ու զանգապանները պատրաստում էին բրոնզից, իսկ վահանները՝ կաշվից (փայտյա հիմքի վրա)՝ պղնձե երեսպատումով:

Մեծ զարգացման հասավ խեցեղենի արտադրությունը՝ կղմինդ-

քի, գինու և յուղի համար տարա հանդիսացող և տնային տարբեր կարիքներին ծառայող ամանեղենի, կանթեղների, տեռակոտե արձանփկների, կախիչների, սուզագնդիկների և այլնի պատրաստումը: Ամանեղենը կաղապարվում էր բրուտի դուրգի վրա, որը շարժման մեջ էր դրվում ձեռքով, շորացվում էր ու հետո թրծվում հատուկ մեծ վառարաններում, որոնք ունեին երկու բաժանմունք. ներքևի՝ հնոցային ու վերևի՝ թրծվող արտադրանքը դնելու համար:

Արհեստի կարևոր ճյուղ էր նաև քարտաշտութունը, տարբեր տեսակի քարերի՝ կրաքարի, ավազաքարի, մարմարի և այլնի կլորումն ու հղկումը:

Վերջապես անհրաժեշտ է հիշատակել մանածագործութունը, որն, ըստ էության, շառանձնացավ իբրև արհեստի հատուկ ճյուղ: Այն մնաց որպես կանանց տնային զբաղմունք: Հումքը բուրդն էր, աշխատանքի գործիքը՝ շատ պարզ, ուղղահայաց դազգահը:

### ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրվող շրջանում հունական պոլիսների գլխավոր բնակավայրերը միատեսակ չէին: Այսպես, Կակեդեմոնի կենտրոն Ապարտան մի միասնական քաղաք չէր. այն բաղկացած էր առանձին շամրացված ավաններից: Ուրիշ պոլիսներում սովորաբար կար գլխավոր քաղաք: Նման քաղաքը հաճախ կազմված էր երկու մասից՝ ստորին ու վերին: Ստորին քաղաքում ապրում էին արհեստավորներ, վաճառականներ ու մասամբ՝ հողագործներ: Քաղաքի կենտրոնում գտնվող ագորան՝ հրապարակը, շուկա էր ու ժողովրդական ժողովներ անցկացնելու վայր: Բլրի վրա տեղադրված վերին քաղաքում՝ ակրոպոլիսում, սովորաբար կառուցվում էին զբլխավոր տաճարները. այն ամրացված էր ու ռազմական վտանգի դեպքում դառնում էր ապաստարան:

Պարիսպները ստորին քաղաքի շուրջը հանդես եկան ակրոպոլիսի ամրություններից ավելի ուշ: Վաղ շրջանում քաղաքի բնակելի թաղամասերի տեղադրությունն անկանոն էր. դրանք աճում էին տարերայնորեն: Սակայն արդեն մ. թ. ա. VI դ. երևան է գալիս քաղաքների հատակագծումը. այդպիսի քաղաքների բնակելի թաղամասերն ունեին ուղղանկյուն ձև:

Հունական քաղաքներում արդեն վաղ ժամանակներում ձեռք բերվեց բարեկարգության որոշակի մակարդակ: Ամենաառաջավոր պոլիսներում կառուցվում էր ջրմուղ՝ ջրաման սյունազարդ նախասրահներով: Նման բազմասյուն նախասրահներ կառուցեց տիրան Քեագենեսը Մեգարայում մ. թ. ա. VII դ. կեսին: Նույն դարի վերջին են վերաբերում Կորնթոսի ջրմուղային կառույցները: Սամոս

կղզում, Պոլլուկրատեսի տիրանիայի ժամանակ, Եվպոլիսի դեկավարությամբ կառուցվեց մեծ ջրատար. լեռան (Կաստրո) տակ փորվեց մեկ կմ երկարութուն ունեցող թունել, ընդ որում աշխատանքները սկսվեցին միաժամանակ երկու կողմից:

Այս շրջանի բնակելի շենքերը համեմատաբար քիչ են հայտնի, դրանք մեզ ծանոթ են գլխավորապես Միլետոսի պեղումների շրջանորհիվ (Ղալաբակ-Քեփե բլրում): Դրանք փոքր շինութուններ էին՝ բաղկացած մի քանի, մեծ մասամբ ուղղանկյուն սենյակներից: Խիստ տարբերութուն ավելի կամ պակաս ունեւոր քաղաքացիների բնակարանների միջև այդ ժամանակ, ըստ ամենայնի, չէր նկատվում:

Շենքերի հիմք էին ծառայում քարե գետնախարխիսները, փսկ պատերը սովորաբար շարվում էին հում աղյուսից, հորիզոնական փայտե միջնադիրներով: Փայտից պատրաստում էին նաև սյուներ, դռներ, ծածկի հեծաններ: Տանիքը ծածկում էին կավե կղմինդրով:

Հասարակական շենքերի առաջատար տեսակը տվյալ շրջանում տաճարն էր: Տաճարները նվիրվում էին պոլիսի պաշտպան աստվածներին. դրանք սերտորեն կապված էին պոլիսի քաղաքական ու տնտեսական կյանքի հետ: Որոշ տաճարներ, օրինակ, Ապոլլոն աստծու տաճարը Դելոսում, ունեին մեծ տնտեսութուն:

Կրոնական արարողությանը ներկա գտնվողները չէին հավաքվում հունական պոլիսների տաճարներում: Հույների ընկալմամբ տաճարը աստծու բակարանն էր. այնտեղ պահվում էր պաշտամունքային արձանը: Ուստի և հունական տաճարները, անգամ ամենամեծերը, ունեին համեմատաբար սահմանափակ շափսերի ներքին սրահներ: Իսկ հիմնական ծեսերը, այդ թվում կենդանիների մսեղիքի այրումով ուղեկցվող զոհաբերութունները, կատարվում էին դրսի հրապարակում, տաճարի առջև դրված զոհասեղանի մոտ:

Հունական տաճարի տիպը ծագել է մեգարոնից՝ աքայան շրջանի բնակելի տնից, որի առանձնահատուկ գծերը դեռ պահպանվում էին մ. թ. ա. VIII դ. տաճարային ճարտարապետության մեջ Քերա ու Կրետե կղզիներում: Իսկ Սպարտայում մ. թ. ա. IX—VIII դդ. հայտնի էր մի տաճար, որը արդեն հրաժարում էր բնակելի շենքի ավանդույթներից: Հետագայում նման տաճարը գերակշռեց նաև այլ պոլիսներում:

Հետզհետե մշակվում է նոր տիպի տաճար, որը բավարարում էր պոլիսի պաշտպան-աստվածների պաշտամունքի պահանջներին: Մեգարոնի հետ նմանութունը պահպանվում է միայն ներքին սրահների ընդհանուր ուրվագծի մեջ. այդ սրահներն այժմ ծածկվում էին երկթեք տանիքով ու բոլոր կողմերից շրջապատվում

սյունաշարով: Վերջինս շենքին հաղորդելով վե՛հ տեսք, տաճարը խիստ առանձնացնում էր պուլիսի քաղաքացիների համեստ, զարդարանքներից զուրկ տներից: Այդպիսի տաճարը կոչվում է պերիպտերոս (հունարեն՝ բոլոր կողմերից փետրավորված):

Տաճարների կառուցման ժամանակ սկզբում օգտագործում էին նույն շինանյութերը, ինչ և բնակելի շենքերի համար: Ավելի ուշ սկսեցին օգտագործել քարի տարբեր տեսակներ, գլխավորապես՝ կրաքար, իսկ Հոնիայում՝ նաև մարմար:

Հունական ճարտարապետության, հատկապես տաճարային ճարտարապետության բնորոշ առանձնահատկությունը օրդերների (սյունակարգերի) կիրառումն էր: Կառուցման հատուկ համակարգը կազմող օրդերները տարբերում ու արտահայտիչ են դարձնում կրող ու կրման ենթակա մասերը՝ ընդգծելով նրանց ֆունկցիաները: Օրդերներ ունեցող շենքերին սովորաբար հատուկ է աստիճանաձև, կամ ավելի սակավ՝ ուղղահայաց պատերով հիմք: Հիմքի վրա դրվում է ուղղահայաց հենարան-սյունների շարքը, սյուները պահում են կրող մասերը՝ անտաբլեմենտը (ախավեղազեսը): այն արտացոլում է առաստաղի ու տանիքի հեծաններից կազմված ծածկի կառուցվածքը:

Հելլենական տարբեր ցեղերը ստեղծեցին իրենց օրդերները: Հնագույն օրդերը դորիականն էր: Խոշոր շինարարական անտառանյութից ստեղծված նրա առաջին նմուշները շարունակում էին աքայան ճարտարապետության ավանդույթները: Դորիական ճարտարապետության քարե նմուշների բնորոշ առանձնահատկություններն էին՝ սյունը, որը բաղկացած էր երկու մասից՝ մատնեքած փողից ու ձևով շատ հասարակ խոյակից, ինչպես նաև ախավեղազեսը, որը բաժանվում էր երեք մասի: Ներքևինն ուներ հարթ հեծանի՝ քովթարի ձև, միջինը ծոփորն էր (կազմված էր տրիգլիփոններից՝ նեղ, կտրատումով իրարից անջատված ուղղանկյուններից ու մետոպոններից՝ համարյա քառակուսի, երբեմն բարձրաքանդակներով զարդարված սալերից): վերջին մասը քիվն էր:

Քիվի ու տանիքի միջև եղած եռանկյունի տարածությունը շենքի կարճ ճակատային կողմերում կոչվում էր ֆրոնտոն (վերնաճակատ): այն հաճախ զարդարվում էր բարձրաքանդակով կամ քանդակազարդ խմբերով:

Դորիական օրդերից մի փոքր ուշ ստեղծվեցին էոլական ճարտարապետության գործերը, որոնց բնորոշ էին հարթափող սյուններն ու շուշանանման խոյակները: Այդ գործերը հետագայում մեծ զարգացում չունեցան: Ավելի ուշ գոյացավ հոնիական օրդերը, որն իրենից ներկայացնում էր դորիական, էոլական, ինչպես և փոքրասիա-

կան ճարտարապետութեան ավանդույթների յուրօրինակ վերամշակում: Հոնիական օրդերի բնորոշ առանձնահատկութիւններն էին սյուները, որոնք բաղկացած էին երեք մասից՝ խարիսխից (հիմք), մատնեքած փողից ու խոպոպներով (վայլուտաներով) զարդարված խոյակից: Փոքր շէնքերում սյունները երբեմն փոխարինվում էին կարիատիդներով (կանանց կերպարներ ունեցող արձանասյուններով): Հոնիական օրդերի անտարլեմնետում միշտ չէ, որ կիրառվում էր ծոփորը, իսկ այն դեպքում, երբ ծոփորը կառուցվում էր, այն հաճախ զարդարվում էր բարձրաքանդակներով. քովթարը ուներ հորիզոնական հողավորում:

Օրդերային կառույցների վերին մասերը ճոխ ներկվում էին, զարդանկարվում էին նաև դրանք գեղեցկացնող քանդակները:

#### ՔԱՆԿԱԿՊՐՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

Ճարտարապետութեան նման, հունական քանդակագործութիւնը ևս ծագել է Կրետեում պահպանված էգեյան ավանդույթների հիման վրա: Այդ ավանդույթները Կրետեից փոխանցվեցին Պելոպոնես, ուր հետագա զարգացում ապրեցին: Հնագույն հունական քանդակները փայտից կոպիտ կտրված սյունանման կերպարներ էին, աստվածների կուռքեր, քստանոններ, որոնք երբեմն երեսապատվում էին մետաղյա թիթեղով ու դրվագաղարգվում փղոսկրով: Այդ քանդակները մեզ չեն հասել, և մենք նրանց մասին կարող ենք դատել սկահակների վրա եղած նկարներից, ինչպես նաև մ. թ. ա. VIII—VII դդ. փոքրիկ փղոսկրյա իրերից, որոնք զգալի քանակությամբ զբտնրվել են Սպարտայում կատարված պեղումների ժամանակ: Նրման քանդակները Հունաստանում արժանանում էին հատուկ մեծարանքի ու միշտ էլ զգալի դեր էին խաղում պաշտամունքի մեջ:

Մ. թ. ա. VII—VI դդ. քանդակագործութեան մեջ լայն կիրառում գտան քարի փափուկ տեսակները, ինչպես և մարմարը: Փայտյա արձանները բրոնզե թիթեղով երեսապատելու արդյունքը եղավ բրոնզե արձանների երևան գալը: Դրանք կոռում էին թերթավոր մետաղից, մաս-մաս ու միացնում հատուկ ամրակներով: Պավսանիասի վկայությամբ այդպիսի քանդակները առաջին անգամ երեվացին Սպարտայում: Հետագայում սկսեց կիրառվել նաև բրոնզե արձանների ձուլման տեխնիկան, որը, հավանորեն, մտցրեցին սամոսյան վարպետներ Ռոյկոսն ու Թեոդորոսը: Քարե արձանները սովորաբար պայծառացնում էին դրանք գունազարդելու միջոցով, բրոնզե արձանների առանձին մասերը ոսկեգօծում կամ արծաթագօծում էին, իսկ աչքերը դրվագազարդում:

Մ. թ. ա. VII—VI դդ. հանդես են գալիս բնականին ավելի մո-

տիկ քանդակած պատկերներ: Այդ ժամանակ էլ ուրվագծվում են հետագա շրջանի հունական քանդակագործութեան երկու հիմնական տիպերը՝ տղամարդու մերկ ու կանանց վարագուրված կերպարները:

Քննարկվող շրջանում դորիական պոլիսների քանդակագործութունը հասավ զգալի բարձրության: Հենց այնտեղ զգալի տարածում ունեցավ մերկ պատանու (կուրոսի)՝ ատլետի, մրցումներում հաղթողի, ըստ հին հույների պատկերացման՝ «հիանալի ու արի» քաղաքացու կերպարը: Ատլետ-հաղթողների արձանների նմուշով պատրաստում էին նաև դամբարանային արձաններ, հավասարապես նաև՝ աստվածների քանդակներ: Պատանիների բոլոր քանդակապատկերները ներկայացված են ուղիղ կանգնած՝ մի փոքր առաջ մղած ձախ ոտքով և ետ քաշված աջ ոտքով, ուղղաձիգ իրանով և վերջինիս երկարութեամբ տարածված ու նրան հավասար ձևերով: Քանդակապատկերի նման համաշափ ու անշարժ դիրքն ընդունված է անվանել ճակատային: Մ. թ. ա. VI դ. այդպիսի արձաններ կերտող դորիական վարպետներից հատկապես հայտնի է արգոսյան քանդակագործ Պոլիմեդասը:

Տվյալ շրջանի քանդակագործության մեջ մյուս տարածված թեման հարուստ զարդարած զգեստով վարագուրված աղջկա քանդակապատկերն էր. այն հատուկ տարածում ունեցավ Հոնիայի ու Ատտիկայի արվեստի մեջ: Փոքր Ասիայի հոնիական քանդակներից պետք է նշել գահի վրա նստած կառավարիչների մի քանի մոնումենտալ կերպարներ, որոնք դրվել էին դեպի Ապոլլոնի՝ Դիդիմայում գտնվող (Միլետոսի մոտ) տաճարը տանող ճանապարհի եզրին:

Մենք արդեն հիշատակեցինք հունական տաճարների վերնաճակատները, մետոպոններն ու քիվերը զարդարող քանդակները: Դրանք սովորաբար բավականին բարդ, հաճախ բազմակերպար խմբապատկերներ էին, որոնց սյուժեները վերցված էին աստվածների կամ հերոսների մասին եղած առասպելներից:

Հունական նկարչությունը, որի մասին պահպանվել են հիշատակումներ հին հեղինակների մոտ, ավելի վատ է հայտնի, քան ճարտարապետությունն ու քանդակագործությունը: Մեզ են հասել կավե նկարազարդված մեծ տախտակներ: Այդպիսիք են Ապոլլոնի՝ Քերմում գտնվող տաճարի մ. թ. ա. VII դ. վերջին կերտված մետոպոնները: Այդ մետոպոնների վրա մի քանի գույնով արված պարզունակ տափակ նկարները պատկերում են առասպելաբանական թովանդակություն ունեցող տեսարաններ:

Ավելի չափ են հայտնի մ. թ. ա. VII—VI դդ. նկարազարդ սկահակները: Անտիկ քաղաքների ու դամբարանադաշտերի պեղումները Միջերկրականում ու մերձսևծովյան շրջաններում մեզ տվեցին

հսկայական քանակութեամբ նուրբ նկարներով հարստորեն զարդարված կավե սկահակներ:

Մ. թ. ա. VII—VI դ. սկզբին գերակշռում էին գորգային ոճի երկինքաճագ նկարազարդումներով ծածկված կորնթոսյան ու հոտոսյան սկահակները: Դրանց վրա սովորաբար պատկերվում էին բուսական զարդանախշեր ու շարքով տեղադրված տարբեր կենդանիներ, ինչպես և ֆանտաստիկ էակներ, որոնց միջև եղած տարածութունը լցվում էր նախշերով:

Ակսած մ. թ. ա. VI դ. երկրորդ քառորդից մինչև նույն հարյուրամյակի վերջը, սկահակահարդարման մեջ գերակշռում էր սևակերպար ոճը: Այդպիսի սկահակներ պատրաստվում էին Կորնթոսում, Լակոնիկայում, Քաղկիսում, Հոնիայում ու հատկապես Ատտիկայում: Այդ ոճի սկահակների վրա սովորաբար պատկերվում էին դիցաբանական սյուժեներ: Կերպարների սև ստվերանկարները հստակորեն արտահայտվում էին կավի կարմրավուն ֆոնի վրա: Լրացնող զարդանախշի տեղը զրավեցին արձանագրութունները. դրանք գերազանցապես սկահակի վրա պատկերված անձանց, սկահակը նախշողների ու բրուտագործական արհեստանոցների տերերի անուններն են:

Քացի սկահակների նկարազարդումից, մ. թ. ա. VII—VI դդ. զգալիորեն զարգացան գեղարվեստական արհեստի այլ ճյուղեր՝ զանազան արձանիկների պատրաստումը տեռակոտից (կորոպլաստիկա), փղոսկրի վրա փորագրումը, ոսկերչական առարկաների ու հարստորեն զարդարված տնային մետաղյա իրեղենի արտադրումը (տորևտիկա):

#### ԱՇԽԱՐՀԱՅԱՅՔԸ

Ուսումնասիրվող շրջանի հունական հասարակության լայն զանգվածների աշխարհայացքում հիմնականում պահպանվեցին դեռևս մ. թ. ա. II հազարամյակում եղած պատկերացումները: Ինչպես առաջ, բնությունը հույնի համար բնակեցված էր ու կառավարվում էր տարբեր էակներով, որոնց մասին ժողովրդական երևակայութունը հորինում էր գունեղ բանաստեղծական առասպելներ: Այդ էակներին հիմնականում կարելի է միավորել երեք ցիկլերի մեջ՝ գեթագույն օլիմպոսյան աստվածներ, երկնաբնակներ, որոնց գլխավորում էր Զևսը, լեռների, անտառների, առվակների և այլնի բազմաթիվ երկրորդական աստվածներ (գերազանցապես նյումփաներ) և, վերջապես, հերոսներ՝ համայնքների նախահայրեր ու պաշտպաններ:

Ըստ հեղինակական պատկերացումների, օլիմպիական աստված-

ների իշխանութունը ոչ նախասկզբնական էր, ոչ էլ անսահման: Օլիմպոսցիների նախորդն էր աստվածների ավագ սերունդը, որին տապալեցին վերջինի ժառանգները: Հույները ենթադրում էին, որ նախասկզբում գոյութուն ունեին Քաոսն ու Հողը (Գեան), ստորերկրյա աշխարհ-Տարտարոսն ու էրոսը՝ կյանքի սկզբնավորումը, սերը: Գեան՝ Հողը, ծնեց աստղային երկինք Ուրանոսին, որը դարձավ աշխարհի առաջին տիրակալն ու Հողի աստվածուհի Գեայի ամուսինը: Ուրանոսն ու Գեան ծնեցին աստվածների երկրորդ սերունդին՝ տիտաններին: Ուրանոսը տապալվեց իր որդի տիտան Կրոնոսի՝ հողագործութան աստվածի կողմից: Կրոնոսի զավակներն էին՝ Հադեսը, Պոսիդոնը, Զևսը, Հեստիան, Գեմետրան ու Հերան: Կրոնոսի զավակները, նրա կրտսեր որդի Զևսի գլխավորությամբ տապալելով հորը, զավթեցին իշխանութունը տիեզերքի վրա: Հավանական է, որ աստվածների՝ աշխարհի տիրակալների փոփոխմանը վերաբերող այդ ասքերը մասամբ արտացոլում են գերագույն աստվածների պաշտամունքի փոփոխումը:

Աշխարհի վրա իշխանութունը գրաված օլիմպոսյան աստվածները հետևյալ կերպ բաժանեցին իրար միջև տիեզերքը: Գլխավոր աստված դարձավ Զևսը՝ երկնքի, երկնային երևույթների ու հատկապես ամպրոպի ու կայծակի տիրակալը: Պոսիդոնը երկիրը ոռոգող ջրի աստվածն էր, ծովի, քամիների ու դրա հետ մեկտեղ՝ երկրաշարժերի տիրակալը: Հադեսը կամ Պլուտոնը դժոխքի՝ ստորերկրյա աշխարհի տերն էր. այնտեղ փղձուկ գոյութունն էին քարշտալիս մեռյալների ստվերները:

Զևսի կին Հերան համարվում էր ամուսնութան հովանավորուհի: Հեստիան տնային կրակարանի աստվածուհին էր և կրում էր նրա անունը (Հեստիա—հունարեն՝ օջախ): Նրան էին նվիրված նաև կրակարաններ յուրաքանչյուր պոլիսի պրիտանիոնում. այստեղից կրակ էին վերցնում երկրից մեկնող վերաբնակները:

Գեմետրան հողագործութան աստվածուհին էր: Նրա դուստր Կորեն, որին երբեմնի առևանգել էր Հադեսը, դարձավ վերջինիս կինը Պերսեփոնե անունով: Ձմռան ամիսներին Պերսեփոնեն պետք է լիներ Հադեսի հետ դժոխքում, իսկ գարնանը վերադառնար երկիր իր մոր՝ Գեմետրայի մոտ: Այդ ասքը առասպելական կերպարների միջոցով արտացոլում է բնութան անկենդանացումը ձմռանը և զարթոնքը գարնանը:

Զևսի և Հերայի զավակներն էին. Հերեն՝ պատանեկությունը մարմնավորող աստվածուհին, Արեսը՝ պատերազմի, կատաղի ձեռնամարտի աստվածն ու Հեփեստոսը (որը, ըստ որոշ առասպելների, համարվում էր միայն Հերայի որդին): Կաղ Հեփեստոսը մարմ-



նավորում էր երկրի ջնդերքում թաքնված հրաբխային կրակը, միա-  
ժամանակ նա համարվում էր աստվածային հմտագույն դարբին ու  
զինագործ: Հեփեստոսը նկարիչների ու արհեստավորների պաշտ-  
պանն էր: Հին Հունաստանում մարդու գործունեության այդ աս-  
պարեզներն այնքան խիստ շէին սահմանազատվում, ինչպես մեր  
ժամանակներում: Ե՛վ նկարիչը, և՛ արհեստավորը կոչվում էին միև-  
նուրն անունով՝ տեքնիտես: Զևսի ժառանգների մեջ աչքի էր ընկե-  
նում Ապոլլոնը՝ բնության պայծառ սկզբնավորման աստվածը, ու-  
րին հաճախ անվանում էին Փեթոս (շողացող): Առասպելի համա-  
ձայն, Ապոլլոնը մահացու հարված հասցրեց Դելֆյան կիրճում ապ-  
րող հրեշավոր վիշապ Պյութոնին: Ապոլլոնին համարում էին մահ,  
մասնավորապես, համաճարակներ բերող աստված, միաժամանակ  
և՛ բուժող աստված: Որպես այդպիսին նա Ասկլեպիոսի՝ աստված-  
դարմանողի հայրն էր: Ապոլլոնը նաև գուշակող աստված էր ու ար-  
վեստի հովանավոր, որի շնորհիվ նա մուսաների՝ պոեզիայի, երա-  
ժըշտության, պարի, դրամայի ու, բացի այդ, պատմության ու աստ-  
ղաբաշխության աստվածուհիների առաջնորդն էր:

Դասակարգային հասարակության առաջացումով ու պոլիսների  
հաստատումով մի շարք աստվածներ, հատկապես Ապոլլոնը,  
դառնում են պետությունների խնամակալներ: Ապոլլոնի նշանակու-  
թյունը էլ ավելի աճեց մեծ թվով նոր քաղաքների հիմնադրման  
կապակցությամբ: Դրա հետևանքով Ապոլլոնի պաշտամունքը սկը-  
սեց ես մղել Զևսի պաշտամունքին: Նա հատկապես ընդունված էր  
հունական արիստոկրատների միջավայրում: Ապոլլոնի քույրն էր  
Արտեմիսը՝ որսի աստվածուհին, երիտասարդության, ինչպես նաև  
գազանների ձագերի հովանավորուհին: Արտեմիսի մշտական ուղեկ-  
ցուհիներն էին նյումփաները:

Արտակարգ բազմապիսի էր Զևսի որդի Հերմեսի «գործունեու-  
թյունը»: Նախ և առաջ նա նյութական բարեկեցության ու տարբեր  
տեսակի շահույթների մեծացման աստվածն էր: Տնտեսական ու  
սոցիալական պայմանների փոփոխման հետ մի փոքր փոխվում ու  
բարդանում էին նաև Հերմեսի ֆունկցիաները, չէ՞ որ այդ ձեռնե-  
րեց աստծու հետևորդների առաջ բացվում էին հարստանալու նոր  
հնարավորություններ: Սկզբում, դեռ նախնադարյան ժամանակնե-  
րում, Հերմեսը անասնապահության հովանավորն էր, անասունների  
աճին նպաստող աստվածը: Հետագայում, փոխանակության զար-  
գացման շրջանում, նա «զբաղվում էր» նաև հարստացմանը բավա-  
կանաչափ նպաստող առևտրով ու շահի և հաջողության բոլոր ձե-  
վերով: Այս պատճառով Հերմեսը դարձավ խաբեբանների, խտրդախ-  
ների, ինչպես և գողերի խնամակալ: Բացի այդ, Հերմեսը տարբեր

պետութիւնների միջև դիվանագիտական հարաբերութիւններ պահպանող լրաբերների աստված-հովանավորն էր: Այդ բանի շնորհիվ նա դարձավ աստվածային սուրհանդակ, որը կատարում էր Զևսի զանազան հանձնարարութիւնները: Հերմեսը նաև պարտավոր էր մեռյալների ոգիները տանել ստորերկրյա աշխարհ: Պոլիսային կյանքի զարգացման ընթացքում Հերմեսը դարձավ հոետորների աստված ու պալեստրաներում մրցող ատլետների հովանավոր:

Զևսի որդի Դիոնիսոսը կամ Բաքոսը բնութիւն արտադրող ուժերի, խաղողագործութիւնն ու դիւնգործութիւնն աստվածն էր: Դիոնիսոսին ուղեկցում էր խրախճասեր ու կենսուրախ շքախումբ: Նրա մեջ էին մտնում ծեր սիլենները՝ ձիու ականջներով, ոտքերով ու պոչերով, և երիտասարդ սատիրները՝ փոքր եղջուրիկներով, այծի ականջներով, ոտքերով ու պոչերով, ինչպես նաև Բաքոսի մոլեգին սպասուհիները՝ կին-մենաղները: Դիոնիսոսի պաշտամունքը տարածվեց այլ աստվածների պաշտամունքից ավելի ուշ: Դիոնիսոսին հատկապես հարգում էին գյուղական վայրերում: Զևսի դուստրն էր Աթենասը՝ պատերազմի ու փմաստութիւնն աստվածուհին, որը ծնվեց գերագույն աստծու զլխից: Աթենասի, ինչպես և հենց իր՝ Զևսի մշտական ուղեկցուհին էր հաղթանակի աստվածուհի Նիկեն:

Այլ աստվածներից պետք է հիշատակել սիրո ու գեղեցկութիւնն աստվածուհի Աֆրոդիտին ու նրա որդի, սիրո աստված էրոսին: Հոտերի ու հովիվների աստվածն էր այծոտն Պանը, որին հատկապես հարգում էին Արկադիայում: Արդեն նշվել է, որ հելլենների պատկերացմամբ օրիմպոսյան աստվածները շատ հզոր էին, տակայն նրանց իշխանութիւնը անսահման չէր: Անգամ ինքը՝ Զևսը, ենթարկվում էր ճակատագրի՝ Անանկեի հրամաններին: Եթե աստվածները պատկերվում էին որպես կոնկրետ էակներ, ապա «ճակատագիրը» ընդհանրացված կերպարն էր այն ամենի, ինչ անհասկանալի, անբացատրելի ու անխուսափելի էր:

Բնութիւն, ինչպես և մարդու կյանքի ու նրա հասարակական հարաբերութիւնների առավել նշանակալից երևույթները մարմնավորող գլխավոր աստվածներից բացի շրջապատող ամբողջ աշխարհը հույնին ներկայանում էր որպես բազմաթիւ աստվածային էակներով խիտ բնակեցված աշխարհ: Նրանք ապրում էին հովիտներում, լեռներում, անտառակներում, լճերում ու ծովերում: Սրանք նյումփաներն էին՝ մշտապես պատանի, գեղեցիկ աղջիկներ, որոնք վարում էին առանց վշտի կյանք, երկարակյաց էին, բայց ոչ անմահ: Եթե շորանում էր գետակը կամ կտրում էին ծառերը, ապա կործանվում էին նաև այնտեղ ապրող նյումփաները: Այլ առասպելական էակներից հատկապես հայտնի են կիսամարդ-կիսաձի կեն-

տավրոսները, սֆինքսը՝ թևավոր առյուծ՝ կանացի գլխով ու կրծքով և կիսակին-կիսաթռչուն սիրենները: Այսպիսին են առավել հատկանշական (բայց ոչ բոլոր) հելլենական աստվածները: Ընդ որում, ինչպես արդեն նշվել է, հույները բոլոր գլխավոր աստվածներին պատկերում էին մարդակերպ, օժտված մարդկային զգացմունքներով ու կրքերով, բայց մարդկանց գերազանցող իրենց հասակով, գեղեցկութամբ և ուժով: Ինչ վերաբերում է երկրորդական աստվածներին, ապա նրանց մեջ հաճախ հանդիպում են կիսամարդ, կիսագազան էակներ: Կենդանիների պաշտամունքի արձագանքն էր հանդիսանում ոչ միայն այն, որ աստվածներն ինչ-որ բանով նմանվում էին նրանց, այլև այն, որ յուրաքանչյուր աստվածության նըվիրված էր մի որևէ կենդանի: Այսպես, Զևսին նվիրված էր արծիվը, Պոսիդոնին՝ ձին, Հերային՝ սիրամարգը, Դեմետրային՝ խոզը, Արտեմիսին՝ եզնիկը, Աթենասին՝ օձը և բուն, Աֆրոդիտեին՝ աղավ-  
նին:

Մարդկանց առաջացման մասին հելլենների մոտ կար մի առասպել, ըստ որի, տիտաններից մեկը՝ Պրոմեթևսը, կավից ծեփեց առաջին մարդուն, իսկ Աթենասը նրան կյանք տվեց: Պրոմեթևսը մարդկային տոհմի հովանավորն ու դաստիարակն էր վերջինիս գոյության առաջին շրջանում: Բարբարոսություն անելով մարդկանց, Պրոմեթևսը հափշտակեց երկնքից ու նրանց բերեց կրակը: Դրա համար Պրոմեթևսը դաժանորեն պատժվեց Զևսի կողմից. վերջինս հրամայեց գամել նրան Կովկասյան մի լեռան, ուր արծիվն ամեն օր ծվատում էր նրա լյարդը, մինչև որ նրան ազատեց հերոս Հերակլեսը:

Հելլենական դիցաբանության մեջ զգալի տեղ են գրավում ասքերը մահկանացու կանանց հետ աստվածների միացումից ծնված հերոսների մասին: Նրանցից հատկապես հարգված էր Հերակլեսը, որը դորիական ցեղի նախնին էր համարվում: Զևսի որդի Հերակլեսն իր ամբողջ կյանքը անց էր կացնում անդադար աշխատանքներում՝ մաքրելով երկիրը զանազան հրեշներից ու բռնադատիչներից: Առյուծի մորթի հագած, մահակով ու թունավոր նետերով գինված այդ հզոր հերոսի կերպարում պահպանվել էին հեռավոր անցյալի պատկերացումները, այն ժամանակի, երբ դեռ հայտնի չէին մետաղյա գործիքները, արտացոլվել էր մարդկանց երկարամյա պայքարը բնության ուժերի դեմ: Հերակլեսը սեփական աշխատանքով բնությունը նվաճող մարդու անձնավորումն է:

Լույսի հին աստվածներին պաշտում էին Զևսի որդիներ Դիոսկուրներ եղբայրների անունով: Նրանք պետության խնամակալներն ու մարմնամարդության հովանավորներն էին: Նրանցից Կաստորը

համարվում էր ձիերի հովանավոր, իսկ Պոլիդեկեսը թոնցքամարտիկ էր:

Այլ հերոսներից պետք է նշել Զևսի որդի, արգոսյան հերոս Պերսևսին (նա գլխատեց հրեշավոր Գորգոնես Մեդուսային, որն ընդունակ էր իր հայացքով քար դարձնել այն ամենը, ինչ կենդանի էր) և Քեսևսին՝ աստիկյան հերոսին, որի առասպելը ծագեց Հերակլեսի առասպելից զգալիորեն ավելի ուշ: Հատկանշական է, որ Քեսևսը հորից ժառանգեց մուշկեր ու թուր, այսինքն մետաղի դարաշրջանի զենքի առարկաներ:

Գոյություն ունեին ոչ միայն առասպելներ առանձին հերոսների սխրագործությունների մասին, այլև ասքեր այնպիսի գործերի վերաբերյալ, որոնց մասնակցում էին մեծ թվով դուրացազուններ: Այդպիսին է արգոնավորդների կողմից դեպի Կողքիս՝ ոսկե գեղձին տիրելու նպատակով ձեռնարկած արշավանքի մասին ասքը, արգոսյան հերոսների կողմից Քերեի դեմ մղված պատերազմների, Տրոյայի գրավման մասին ասքերը: Այդ ասքերում քանաստեղծական ձևով արտացոլվել են պատմական անցքեր:

Հելլենական աստվածների պաշտամունքի վայրերն էին՝ տաճարները, զոհասեղանները, սրբազան անտառակները, գետակներն ու գետերը: Հույների պաշտամունքային ծեսերը կապված էին հասարակական ու մասնավոր կյանքի հետ: Պոլիսների աստված-հովանավորների մեծարումն ուղեկցվում էր կենդանիների զոհաբերություններով, որոնք մատուցվում էին տաճարների առաջ դրված զոհասեղանների վրա, ինչպես և աստվածներին ուղղված աղոթքներով:

Հասարակական կրոնական արարողություններից բացի պաշտամունքային գործողությունները կատարվում էին նաև ամեն մի ընտանիքում, մեծ մասամբ՝ զոհասեղանի դեր խաղացող տնային օջախի մոտ: Հատուկ ծեսերով նշում էին երեխա ծնվելը, հարսանիքը, թաղումը: Յուրաքանչյուր ընտանիքում մեծ դեր էր խաղում նախնիների հոգու հանգստության պաշտամունքը:

Հունաստանում կային աստվածների անունից գուշակումներ անող հատուկ քրմեր: Նրանք դիմում էին պատգամախոսին, որը պատասխաններ էր տալիս և՛ պետություններին, և՛ մասնավոր անձանց: Պատասխանը սովորաբար տրվում էր մշուշային ձևով, մի բան, որ սխալ գուշակումների դեպքում քրմերին ազատում էր պատասխանատվությունից: Հնագույն ժամանակներում մեծ համբավ ձեռք բերեց Զևսի պատգամախոսը Դոդոնեում, որը գուշակում էր սուրբ կաղնու տերևների սոսափյունով, իսկ քննարկվող շրջանում գե-

բակշռող նշանակութիւն ունեւր Ապոլլոնի գուշակը Գերփիքում (այստեղ գուշակումները բարբառում էր քրմուհի Պիթիան)։

Հունական կրոնում հատուկ տեղ էին գրավում խորհրդապաշտական (գաղտնի) պաշտամունքները, որոնք հաճախ կապված էին Գեմետրայի մեծարման հետ։ Գեմետրան՝ հողագործութեան աստվածուհին, միաժամանակ խոշոր դեր էր կատարում թաղման ծեսերում։ Լայնորեն հայտնի էին գաղտնածիսութիւնները (միստերիաները) Ելեփսոսում։ Հավատացյալ-միստերը դերերում ներկայացնում էին իրենց աստծու դիցաբանական պատմութիւնը, ընդ որում, ձգտում էին հասնել զմայլվածութեան վիճակին՝ նման վիճակը համարելով անմիջական շփում աստծու հետ։ Աստվածների մեծարումը ուղեկցվում էր հանդիսավոր երթերով, ատլետների, իսկ երբեմն և երաժիշտների, մրցումներով։ Հատկապես մեծ նշանակութիւն ունեին ատլետների մրցումները. դա կապված էր զինվորական գործի հետ, քանի որ զորքը իրենից ներկայացնում էր պոլիսի լիիրավ քաղաքացիների աշխարհազոր։ Հունաստանում մարզումների հիմնական ձևերն էին՝ վազքը (հասարակ՝ կարճ տարածութեան վրա ու երկարատև՝ մեծ տարածութեան վրա), ցատկումը, սկավառակի ու նիզակի նետումը, ըմբշամարտը, բռնցքամարտը և պանկրատիոնը (բռնցքամարտի ու ըմբշամարտի միացում)։ Ատլետների մարզումների համար գոյութիւն ունեին հատուկ շինութիւններ՝ գիմնասիոններ։ Յուրաքանչյուր պոլիսում կազմակերպվում էին ատլետների մրցումներ, բացի այդ հայտնի էին մեծ համահելլենական մրցցութիւններ Օլիմպիայում (օլիմպիական խաղեր), Գերփիքում (պիթիական), Նեմեայում և Կորնթոսի մոտ (իսթմիական խաղեր)։ Ամենից նշանավոր էին շորս տարին մեկ տեղի ունեցող օլիմպիական խաղերը։ Այդ խաղերի տևողութեան ընթացքում հայտարարվում էր զինադադար պատերազմող պոլիսների միջև։

Ատլետների մրցումներից բացի, մեծ խաղերի ժամանակ կազմակերպվում էին նաև ձիակառքերի մրցումներ։ Հնագույն ժամանակներում հաղթողները ստանում էին արժեքավոր մրցանակներ, ավելի ուշ նրանց պարգևում էին պսակներ, արմավենու ճյուղեր ու արծան կառուցելու իրավունք։ Հաղթողների անունները գրանցվում էին հատուկ ցուցակներում։

#### ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՍԿԻՉԲԸ

Աշխարհի ու հին հույներին շրջապատող իրականութեան ծագման ու զարգացման կրոնադիցաբանական բացատրութիւնը հետըզհետեւ բախվում էր կուտակված առարկայական փորձի հետ։ Դանդաղորեն, բայց շեշտակի ձևով իր առաջին քայլերն էր անում գի-

տությունը: Այն դեռ պարզունակ էր, բայց իր բնական անմիջականության մեջ ուներ տարերային մատերիալիստական բնույթ: Նոր գաղափարները ծագեցին այդ ժամանակ տնտեսապես ու սոցիալապես առավել զարգացած փոքրասիական Հոնիայում:

Մ. թ. ա. VII դ. երկրորդ կեսին Միլետոսում վաճառականների, արհեստավորների ու այլ գործարար մարդկանց միջավայրում ծագեց հելլենական փիլիսոփայությունը: Հին հունական փիլիսոփայության ու գիտության հիմնադիրն է համարվում Քալեսը (մ. թ. ա. 625—547 թթ.), իսկ նրա շարունակողներն էին Անաքսիմանդրոսը (մ. թ. ա. մոտ 610—546 թթ.) ու Անաքսիմենեսը (մ. թ. ա. մոտ 585—525 թթ.): Միլետոսյան փիլիսոփաները տարերային մատերիալիստներ էին:

Քալեսը ամեն ինչի սկիզբը համարում էր մշտական շարժման մեջ գտնվող ջուրը, որի փոխարկումներն էլ ստեղծել ու ստեղծում են բոլոր իրերը, որոնք վերջին հաշվով կրկին վերածվում են ջրի: Ասավածների համար տեղ չկար հավերժական ջրի կացության այս շրջապտույտի մեջ: Երկիրը Քալեսը պատկերում էր իբրև սկզբնային ջրի մակերեսի վրա լողացող մի տափակ սկավառակ: Երկրաշարժերի պատճառը այդ ջրերի տատանումներն են: Քալեսը քաղաքական գործիչ էր ու վաճառական. գործի հետ կապված իր ճանապարհորդությունների ժամանակ նա ծանոթացավ եգիպտական ու բաբելական մշակույթներին: Վերջիններս այն ժամանակ ավելի զարգացած էին, քան երիտասարդ հունական մշակույթը: Քալեսին համարում էին նաև հին հունական մաթեմատիկայի, աստղաբաշխությունն ու ընդհանրապես բնության վերաբերյալ գիտությունների հիմնադիր: Նրան են վերագրում նաև մի շարք կոնկրետ գիտական հաշվումները: Օրինակ, նա համադրելով արևի հետևողականորեն տեղի ունեցած խավարումների գրանցումները, ճշտորեն գուշակեց մ. թ. ա. 597 կամ 585 թ. արևի խավարումն ու թացատրեց, որ խավարումը եղավ այն պատճառով, որ լուսինը ծածկեց արևը: Եգիպտոսում գտնվելիս Քալեսը առաջինը որոշեց քուրզերի բարձրությունը՝ չափելով նրանց ստվերը օրվա այն պահին, երբ ստվերի երկարությունը հավասար էր այն առաջացնող առարկաների բարձրությանը:

Անաքսիմանդրոսը գնալով փորձի հետագա ընդհանրացման ուղիով, հանգեց այն մտքին, որ սկզբնական մատերիան ապելյոնն է՝ անորոշ, մշտնջենական ու անսահման, մշտական շարժման մեջ գտնվող մատերիան: Շարժման ընթացքում ապելյոնից առանձնանում են նրան հատուկ հակադրությունները՝ տաքն ու սառը, թացն ու չորը: Դրանց փոխազդեցության հետևանքով ծնվում ու կործան-

վում են բոլոր իրերն ու երևույթները, որոնք ըստ անհրաժեշտության գոյանում են ապելյոնից ու վերադառնում նրա մեջ: Անաքսիմանդրոսին համարում են առաջին աշխարհագրական քարտեզի ու երկնակամարի առաջին սխեմայի (աստղերով կողմնորոշվելու համար) կազմող. նա երկիրը պատկերում էր որպես մի պտտվող գլան, որը ճախրում է օդում:

Անաքսիմենեսը գտնում էր, որ ամեն ինչի սկիզբը օդն է: Օդը, նոսրանալով կամ խտանալով, ծնում է իրերի ամբողջ բազմազանությունը: Նոսրանալով, օդը վերածվում է կրակի, իսկ խտանալով՝ սկզբում դառնում է քամի, հետո՝ ամպ, այնուհետև՝ հող ու քար: Ամեն ինչ գոյանում է ու վերադառնում է մշտապես շարժվող օդի մեջ, այդ թվում և աստվածները, որոնք բոլոր այլ իրերի նման օդի որոշակի կացություններ են:

Մատերիալիստական փիլիսոփայությունն առաջացավ ստրկատերերի երիտասարդ դասակարգի առաջավոր խմբերի միջավայրում, այն պայքարում, որն ընթանում էր անցյալից ժառանգված կրոնադիցարանական գաղափարախոսության դեմ: Ստրկատիրական արիստոկրատիայի ներկայացուցիչները պայքարելով այդ գաղափարախոսության դեմ, մատերիալիստական փիլիսոփայությանը հակադրեցին փիլիսոփայական իդեալիզմը: Հին Հունաստանում նրա առաջին քարոզիչը եղավ Պյութագորասը (մ. թ. ա. մոտ 580—500 թթ.)՝ Սամոս կղզուց: Սամոսում տիրանիայի հաստատումից հետո Պյութագորասը գաղթեց հարավային Իտալիա, Կրոտոն քաղաք, ուր մ. թ. ա. VI դ. երկրորդ կեսին ստեղծեց տեղական արիստոկրատիայի ներկայացուցիչներից «պյութագորասական» անունով հայտնի հետադիմական կրոնաքաղաքական միությունը:

Պյութագորասականների փիլիսոփայության համաձայն ոչ թե որակը, այլ քանակը, ոչ թե նյութը, այլ ձևն է որոշում իրերի էությունը: Ամեն ինչ կարելի է հաշվել ու այսպիսով սահմանել բնության քանակական հատկություններն ու օրինաչափությունները: Աշխարհը բաղկացած է քանակական, միշտ անփոփոխ հակադրություններից՝ վերջնական ու անվերջ, զույգ ու կենտ և այլն: Դրանց զուգորդումը իրագործվում է աշխարհին հատուկ ներդաշնակության մեջ:

Պյութագորասն ու պյութագորասականները մաթեմատիկոսներ էին. նրանց արժանիքն էր իրերի ու բնության երևույթների քանակական կողմի դիտումները: Լայնորեն հայտնի են Եգիպտոսից փոխառված թեորեմի ապացույցի նրանց մշակումը, թեորեմ այն մասին, որ ներքնաձիգի վրա կառուցած քառակուսին հավասար է ուղղաձիգների վրա կառուցած քառակուսիների գումարին (այսպես

կողմած, Պյութագորասի թեորեմ) ու մի քանի այլ թեորեմներ: Պյութագորասականները ստեղծեցին երաժշտության տեսություն, որը կառուցված էր թվական հարաբերությունների վրա: Նրանք հայտնաբերեցին, որ հնչող լարի տոնի (ձայնաստիճանի) բարձրությունը կախված է լարի երկարությունից: Այս պատճառով նրանք գրտնում էին, որ երաժշտական շարքը պետք է խստիվ համապատասխանի միջակայքերի մաթեմատիկական հարաբերակցություններին: Պյութագորասականներն այն ժամանակի համար բեղմնավոր ձևով զբաղվում էին աստղագաղափարությամբ: Նրանց պատկերացմամբ Երկիրը, Արևն ու այլ լուսատուները պտտվում են կենտրոնական կրրակի (կրակարանի) շուրջը: Ժամանակի ընթացքում պյութագորասականների աշխարհայացքում գիտության տարրերը սկսեցին իրենց տեղը գիշել կրոնին: Նրանք սկսեցին փրբրը նույնացնել թվերի՝ որպես այդպիսիների հետ, դրանք զրկելով նյութական բովանդակությունից: Ըստ նրանց, թվերը ամեն ինչի հիմքն են: Բացարձակի փոխարկված վերացական թիվը սկսեց պատկերվել իբրև աշխարհի ոչ նյութական, աստվածային էության հիմք. այդ կեղծ գիտական դրույթը ամրապնդում էր մատերիալիստական աշխարհայացքի դեմ պայքարող կրոնի դիրքերը:

Պյութագորասի իդեալիստական փիլիսոփայության դեմ մղած պայքարում կատարելագործվում էր միլետոսյան դպրոցի մատերիալիստական փիլիսոփայությունը: Մ. թ. ա. VI դ. վերջին V դ. սկզբին հանդես եկավ այդ ժամանակաշրջանի խոշորագույն փիլիսոփա Հերակլիտոս Եփեսացին (մ. թ. ա. մոտ 530—4700 թթ.)՝ որպես տարերային-դիալեկտիկական մատերիալիստ: Նրա աշխատություններում ամփոփվեցին Թալեսի, Անաքսիմանդրոսի ու Անաքսիմենեսի որոնումները:

Իր ծագումով ու քաղաքական համոզմունքներով Հերակլիտոսը արիստոկրատիայի կողմնակից էր: Նա սուր կերպով հարձակվում էր «խաժամուժի» վրա: Հերակլիտոսի հոռետեսական վերաբերմունքը իրեն շրջապատող իրականության հանդեպ կապված էր իր հայրենիքում ստրկատիրական դեմոկրատիայի հաղթանակի հետ: Հանդես գալով հաղթանակած դեմոկրատիայի դեմ, նա ցանկանում էր ցույց տալ դրա անցողիկ բնույթը: Սակայն իր փիլիսոփայական կառուցվածքներում Հերակլիտոսը դուրս եկավ այդ նպատակի շրջանակներից: Ըստ Հերակլիտոսի, բնության բարձրագույն օրենքն է շարժման ու փոփոխման մշտնջենական պրոցեսը: Այն տարերբը, որից գոյանում է ամեն ինչ, կրակն է, որը այրման մերթ օրինաչափորեն բորբոքվող, մերթ օրինաչափորեն հանգչող պրոցես է: Բնության մեջ ամեն ինչ բաղկացած է հակադրություններից,



որոնք ծնվում են կրակից, պայքարի ընթացքում իրար են փոխարկվում ու վերադառնում են կրակի մեջ: Հերակլիտոսը առաջինը հանգեց նյութական աշխարհի դիալեկտիկական զարգացման գաղափարին, զարգացում, որը մատերիայի համար անհրաժեշտ ու նրբան հատուկ օրինաչափություն է: Այդ մտքի համար Վ. Ի. Լենինը բարձր էր գնահատում Հերակլիտոսի փիլիսոփայությունը: Օրինաչափ անհրաժեշտությունը Հերակլիտոսը արտահայտեց հունական «լոգոս» բառով, որը փիլիսոփայական առումով նշանակում էր «օրենք»: Հայտնի է Հերակլիտոսին վերագրվող ասույթը՝ «Պանտարեի»՝ «ամեն ինչ հոսում է, ամեն ինչ փոփոխվում է»։ այն հակիրճ շարադրում է նրա փիլիսոփայության էությունը: Հակադրությունների դիալեկտիկական միասնությունը Հերակլիտոսը ձևակերպում է որպես փոխադարձաբար իրար լրացնող ու պայքարող հակադրությունների մշտապես առաջացող ներդաշնակություն: Կրակի ինքնազարգացման պրոցեսը շեն ստեղծել ոչ աստվածները, ոչ էլ մարդիկ, այն եղել է, կա ու միշտ կլինի: Հերակլիտոսը ծաղրում էր իր հայրենակիցների կրոնադիցաբանական աշխարհայացքը:

Հերակլիտոսի մատերիալիստական դիալեկտիկայի դեմ պայքար ձեռնարկեցին փիլիսոփա Քսենոփանը (մ. թ. ա. մոտ 580—490 թթ.) ու նրա աշակերտները: Արտաքսվելով իր հայրենի փոքրասիական Կոլոփոն քաղաքից (Սփեսոսի մոտ), Քսենոփանը քնակություն հաստատեց Իտալիայում, ուր վարում էր թափառաշրջիկ երգիչ-նափսողի կյանք: Իր երգերում նա հանդես էր գալիս հելլենական կրոնի մարդակերպ բազմաստվածությունից դեմ: Քսենոփանը պնդում էր, որ հիմքեր չկան աստվածներին մարդկային կերպար վերագրելու համար, և եթե ձիերն ու ցուլերը կարողանային ստեղծել աստվածների պատկերներ, ապա կներկայացնեին նրանց իրենց տեսքով:

Համաձայն Քսենոփանի հիմնադրած էլեացիների (Հարավային Իտալիայում էլեա քաղաքի անունից) փիլիսոփայական դպրոցի ուսմունքի, իրականում գոյություն ունի միայն միասնական, հավերժորեն անփոփոխ կեցությունը, իսկ այն ամենը, ինչ փոփոխվում է, ունի սոսկ կեղծ, թվացող, այլ ոչ իսկական կեցություն: Այն ամենը, ինչ գոյություն ունի, միասնական է, ու այդ միասնականը աստվածն է:

Այսպիսով, թեև Քսենոփանն ու նրա աշակերտները խստորեն քննադատում էին ավանդական հունական կրոնը, նրանք իրենք որոշ շափով ամրապնդում էին կրոնական աշխարհայացքը նոր փիլիսոփայական ընդհանրացումներով:

Այսպիսին էին հին կրոնափիլիսոփայական աշխարհայացքի

դեմ մղված պայքարում առաջացած ու զարգացող անտիկ հունական փիլիսոփայութեան առաջին քայլերը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նախորդ շրջանում ստեղծված էպիկական պոեմները մ. թ. ա. VII—VI դարերում առաջվա նման մեծ ժողովրդականություն էին վայելում և միշտ կատարվում էին ռափսոդների կողմից: Պոլիսների հաստատումով էպիկական ստեղծագործությունը սկսեց փոխարինվել քնարերգությամբ, որն ավելի մեծ շահով, քան լեպոսը, արտացոլում էր մարդկանց ապրումները:

Գորիական համայնքներում տարածվեց քաղաքացիական կուլիտիվի շահերը հատկապես հստակորեն արտահայտող հանդիսավոր խմբերգային քնարերգությունը՝ պոլիսի պահպան աստվածներին ու համայնքի անցյալի պանծալի անցքերը գովերգող հիմները:

Մ. թ. ա. VII դ. սկզբին Քալետաս Գորտինցին կազմակերպում էր հանդիսավոր կրոնական տոնակատարություններ Սպարտայում, որոնց համար գրում էր պեաններ (հիմներ), ստեղծելով նոր, ավելի ճկուն, քան հին հեկսամետրը, ութմետր: Քալետասի ժամանակակիցն էր Ալկմանը: Նա գրում էր պարթենիաներ՝ քնարական պոեմներ, որոնք տոների ժամանակ կատարում էին սպարտական աղջիկների երգչախմբերը:

Այլ բնույթ ունի Տյուրտայոսի՝ 2-րդ մեսսենական պատերազմի ժամանակաշրջանի (մ. թ. ա. 685—668 թթ.) սպարտական քանաստեղծի ստեղծագործությունը: Նրա գործերի բովանդակությունը զուտ ռազմական կամ քաղաքական է: Դրանք խրատական գործեր են, որոնք կոչ էին անում սպարտացիներին պաշտպանել օրենքները, լինել արի ու քաջ: Գովերգելով ռազմական սխրագործությունները, Տյուրտայոսը վառ գույներով նկարագրում է իր համայնքի կողմից մերժված, թափառական դարձած վախկոտի խղճուկ վիճակը: Տյուրտայոսի ստեղծագործությունը աչքի է ընկնում պարզությամբ ու բնականությամբ. նրա ստեղծած կերպարները համոզիչ են ու կենդանի: Բանաստեղծը դրվատում է իրեն շրջապատող իրականությունը՝ շղիմելով ավանդական դիցաբանությունը: Նա գրեց հմբատերիոս՝ մարտական քայլերգ, որը երգելով, սրնգափողերի նվագակցությամբ, սպարտացիները գրոհում էին թշնամուն.

Ելեք արիությամբ փառաբանված  
Սպարտայի քաղաքացի հայրերի որդիներ,  
Շույցով (ձախով)՝ առաջ շարժեք վահանի օգը

Քափահարեք խիզախորեն նիզակը:  
Մի խնայեք ուրեմն կյանքերը ձեր,  
Դա Սպարտայի հայրերի սովորութիւնը չէ բնավ\*:

Մեկ դար ուշ ապրած Քեոզնիս Մեգարացին գրում էր եղբրեր-  
գէր, որոնք քարոզում էին բարեպաշտութեան, մեծերի հանդեպ հար-  
գանքի ու շափավորութեան ավանդական բարոյականութուն: Նրա  
ստեղծագործութեան բնույթը խիստ տարբերվում է դորիական այլ  
բանաստեղծների ստեղծագործութիւնից: Կինելով դեմոկրատների  
կողմից հայրենի քաղաքից արտաքսված արիստոկրատ, նա ներ-  
մուծում էր իր գործերի մեջ քաղաքական պայքարի կիրք: Նա խիստ  
հարձակվում է խաժամուժի վրա, լի է վրեժի ծարավով, վշտանում  
է կորցրած հարստութիւնների կապակցութեամբ, ցավում է, որ  
արիստոկրատիան աղքատանում է, իսկ աղքատութիւնը նա հա-  
մարում է մեծ բեռ, երբեմն կասկածում է աստվածների արգարա-  
դատութեան վրա և հուսահատութիւն ապրելով՝ դիմում է մահվան:

Մ. թ. ա. VII դարին է վերաբերում Պարոս կղզում ծնված հո-  
նիական բանաստեղծ Արքիլոքոսի ստեղծագործութիւնը: Այն վառ  
կերպով արտացոլեց բանաստեղծի՝ ձախորդութիւններով ու հուսա-  
խաբութիւններով լի թափառական կյանքը: Արքիլոքոսը նկարա-  
գրում է իր՝ վարձկանի ծառայութեան դրվագները, մասնակցութիւ-  
նը թրակիացիների դեմ վարած պատերազմին, արտահայտում է թա-  
խիծ մտտ մարդու կորստի կապակցութեամբ, երգում է իր սերը. կամ  
անզուսպ ատելութեամբ լի հարձակվում է իր ոսոխների վրա: Նոս  
յտանավորները լեցուն են կրքով, մեծ եռանդով և ուժով:

Մյուս հոնիական բանաստեղծները՝ Միմներմոս Կոլոփոնցին,  
որը ապրում էր մ. թ. ա. VII դ., ու մեկ դար ուշ ապրած Անակրեոն  
Տեոսցին (սամոսյան ու աթենական տիրանների պալատական բա-  
նաստեղծ) իրենց ստեղծագործութիւնը նվիրեցին կյանքի ու սիրո  
վայելքներին:

Բոլորովին այլ բնույթ ունեւ Հիպպոնաքս Եփեսացու պոեզիան.  
նա արտահայտեց ծայրը ծայրին հազիվ հասցնող հունական շքա-  
վորութեան շահերը: Իր յամբական ոտանավորներում բանաստեղծը  
գանգատվում էր իր կրած ծայրահեղ կարիքից:

Հելլենական քնարերգութեան երրորդ մեծ ճյուղը՝ էոլիսյան  
պոեզիան, ներկայացված է Լեսբոս կղզու բնակիչներ, բանաստեղծ-  
ներ Ալկեոսով ու Սապփոյով: Ալկեոսի ստեղծագործութիւնում ար-  
տացոլվեցին նրա հայրենիքում տեղի ունեցող բուռն անցքերը, ար-  
իստոկրատների պայքարը տիրանների, այդ թվում՝ Պիտտակոսի


\* Տողացի թարգմանութիւնը Գ. Հարութիւնյանի:

դեմ: Նա գովերգում էր նաև Բաքելոնում՝ իբրև վարձկան ծառայող իր եղբայր Անտիմենիդասի զինվորական արիությանը: Վերջապես նրա ստեղծագործությունում արձագանք գտան նաև անձնական ապրումների մոտիվներն ու խնջուլքների տեսարանները:

Սապփոն նուրբ, մտերիմ ոտանավորներում նկարագրեց էոզիսյան աղջկա վյանքը, նրա խաղերը ընկերուհիների հետ, բարեկամությունն ու խանդ, սեր ու հարսանիք: Դրա հետ մեկտեղ Սապփոն մի քանի բանաստեղծական տողերում նուրբ դիտողականությամբ նրկարագրում է բնությունը:

Քննարկվող շրջանում ծագեց գեղարվեստական արձակը: Դրա ներկայացուցիչներն էին լոգոգրաֆները՝ հին ծագումնաբանությունը շարադրող առաջին պատմիչները: Նրանց թվին էր պատկանում Հեկատոնոս Միլետացին, որն ապրում էր մ. թ. ա. VI դ. վերջին: Նա «ծագումնաբանությունների» ու արևելյան Միջերկրականի և մերձ-սևծովյան շրջանների վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ պարունակող աշխարհագրական աշխատության հեղինակն էր:

Մ. թ. ա. VI դ. հունական ողբերգության առաջացման շրջանն էր: Դրա սկիզբը կապված է հողագործական պաշտամունքի հետ, գեղջուկների կողմից աստված Դիոնիսոսի պատվին կատարվող խանդավառ երգերի՝ դիթյուրամների հետ: Ագրարային մոգության հետ կապված այդ երգեցողությունը կատարում էին Դիոնիսոսի ուղեկիցներին՝ կիսամարդ, կիսաայծ սատիրներին ներկայացնող դիմակավորների երգչախմբերը: Այստեղ է առաջացել ողբերգության՝ տրագեդիայի անվանումը (տրագոս՝ այծ, օդե՝ երգ): Երգչախմբի՝ պարերով ուղեկցվող երգերը հերթագայում էին նախերգչի դերերգերի հետ. դա կազմեց դրամատիկական ներկայացումների սկզբնական կորիզը: Հունական թատերական ներկայացումները հետագա ժամանակներում նույնպես պահպանեցին կապը Դիոնիսոսի պաշտամունքի հետ:



## Բաժին III

### ԴԱՍԱԿԱՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

Գրուխ 8. ՀՈՒՅՆ-ՊԱՐՍԿԱԿԱՆ  
ՊԱՏԵՐԱԶՄԵՆԵՐԸ ԵՎ ԱԹԵՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ  
ՇՈՎԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Մ. թ. ա. VI դ. բուռն իրադարձություններից մի փոքր անց, իրադարձություններ, որոնք ավարտվեցին ստրկատիրական դեմոկրատիայի հաղթանակով Ատտիկայում ու որոնց հետևանքով Հունաստանի մեծ մասում վերջնականապես ձևավորվեցին ստրկատիրական պոլիսները, աթենացիները մյուս հույների հետ միասին ստիպված եղան պաշտպանելու իրենց անկախությունը հսկայական պարսկական տերության դեմ մղած ծանր պայքարում: Այդ ժամանակաշրջանը՝ մ. թ. ա. V դ. առաջին կեսը, միաժամանակ եվրոպական Հունաստանի մի շարք մարզերում, և առաջին հերթին Ատտիկայում, ստրկատիրական հարաբերությունների զարգացման կարևոր փուլերից մեկն էր:

Հույն-պարսկական պատերազմներն արագացրին ստրկատիրության նահապետական համակարգից ստրուկների շահագործման ավելի զարգացած՝ «դասական» համակարգին անցնելու ավարտը: Այդ դասական համակարգի գլխավոր նպատակն էր ստանալ վաճառքի համար նախատեսված հավելյալ արդյունք:

Հույն-պարսկական պատերազմների պատմության գլխավոր աղբյուրն է Հերոդոտոսի աշխատությունը, որը պարունակում է տեղեկություններ մինչև մ. թ. ա. 478 թ. ներառյալ եղած անցքերի մասին: Մ. թ. ա. V դ. կեսին տեղի ունեցած պատերազմական գործողությունների մասին հակիրճ խոսում է Թուկիդիդեսը: Ողբերգակ էսքիլեսի գործերում ու Արիստոտելի «Աթենական պոլիտեայում»

Հանդիպում են պատումներ պատերազմի առանձին պարագաների մասին: Ավելի ուշ շրջանի պատմիչներից հույների կողմից պարսիկների դեմ մղած պատերազմի ժամանակաշրջանի մասին պատմում են Դիոդորոս Սիկիլիացին, ինչպես և Պլուտարքոսը, որը գրեց այն ժամանակի մի քանի քաղաքական ու ռազմական գործիչների (Քեմիստոկլեսի, Արիստիդեսի, Կիմոնի) կենսագրությունները: Հետաքրքիր նյութ են պարունակում մ. թ. ա. V դ. վերաբերող սակավաթիվ արձանագրությունները: Վերջապես, արժեքավոր տեղեկություններ տվեցին 1938—1939 թթ. Քերմոպիլիի ճակատամարտի դաշտում կատարված հնագիտական պեղումները: Բավական արդյունավետ են Մարաթոնյան դաշտում՝ Ատտիկայում գտնվող գերեզմանաբլրի պեղումները (XX դ. 40-ական թվականներ):

ՊԱՐՍԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈՒՅՆՔԻ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ  
ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ՀԵՏ Մ. Ք. Ա. VI ԴԱՐՈՒՄ

Պարսկական մեծ տերության հիմնադիր Կյուրոս II-ը վարում էր անզուսպ զավթողական քաղաքականություն: Զախջախելով Մարաստանը, մ. թ. ա. 546 թ. նա հարձակվեց լյուդիական թագավորության հարուստ կառավարիչ, թագավոր Կրեսոսի վրա: Լյուդիայի իշխանության տակ գտնվող փոքրասիական հունական քաղաքները հաշտվեցին քաղաքական անկախության կորստի հետ, որովհետև Լյուդիայի կառավարիչները չէին միջամտում նրանց ներքին գործերին, իսկ առևտրական կապերի հաստատումը Փոքր Ասիայի կենտրոնական մարզերի հետ նպաստում էր արհեստավորական արտադրության զարգացմանը: Նրանք հավատարիմ մնացին Կրեսոսին վերջինիս կողմից պարսիկների դեմ վարած պատերազմի ժամանակ ու անգամ մերժեցին Կյուրոսի անունից իրենց առաջարկված օգնությունը, որը կտրամադրվեր այն դեպքում, եթե հունական քաղաքները ապստամբեին լյուդիական կառավարչի դեմ:

Պարսիկների կողմից լյուդիական թագավորության ջախջախումից (մ. թ. ա. 546 թ.) հետո, Փոքր Ասիայի արևմտյան ծովափի հունական քաղաքները դեսպանություն ուղարկեցին Կյուրոսի մոտ՝ Սարդես, առաջարկելով ենթարկվել նրան այն նույն պայմաններով, որոնցով նրանք մինչ այդ ենթարկվում էին լյուդիական կառավարիչներին: Սակայն Կյուրոսը հրաժարվեց որևէ բանակցություն վարել հունական քաղաքների հետ: Բացառություն արվեց միայն Միլետոսի համար՝ Կյուրոսը համաձայնվեց պահպանել նրա նախկին վիճակը, բայց որոշ ժամանակ անց պարսկական կառավարիչները միջամտեցին Միլետոսի քաղաքական կյանքին ու այնտեղ նշանակեցին իրենց ենթակա տիրանին:

Մերժում ստանալով, հոնիացիները փորձեցին համատեղ դիմադրել Կյուրոսին: Քաղաքների դեսպանները հավաքվեցին հոնիացիների ընդհանուր սրբավայրում՝ Պանիրոնիոնում, Միկալե հրվանդանում: Օգնութեան խնդրանքով դեսպան ուղարկվեց Սպարտա, որը մինչ այդ Կրեսոսի դաշնակիցն էր: Դաշինք կնքվեց էոլական քաղաքների հետ, սկսեցին նորոգել քաղաքային ամրությունները:

Սպարտական կառավարիչները գտնում էին, որ ելնելով Սպարտայի՝ որպես Հելլադայի ամենաուժեղ ու հզոր պոլիսի, հեղինակությունից, նրանք չպետք է մերժեն հոնիացիների խնդրանքը: Նրանք դեսպաններ ուղարկեցին Կյուրոսի մոտ՝ սպառնալով միջամտել, եթե նա հարձակվի փոքրասիական հունական քաղաքների վրա: Ի պատասխան, Կյուրոսը, ինչպես հաղորդում է Հերոդոտոսը, սպառնաց, որ եթե ինքը ապրի բավականաչափ երկար ժամանակ, ապա սպարտացիները ստիպված կլինեն խոսել ոչ թե հոնիացիների, այլ սեփական դժբախտությունների մասին: Դրանից հետո պարսկական զորքերը ջախջախեցին Մագնեսիա ու Պրիենե քաղաքները, որոնց բնակիչները վաճառվեցին ստրկության, իսկ հետո գրավեցին նաև Փոքր Ասիայի արևմտյան ծովափի հունական մյուս քաղաքները: Նրանք անցան նեղուցներն ու զավթեցին Քիոս ու Լեսբոս կղզիները: Միայն Փոկեայի ու Տեոսի բնակիչները խուսափեցին ստրկությունից: Չսպասելով պարսիկների հարձակմանը, նրանք թողեցին հայրենիքը. փոկեացիք գաղթեցին հեռավոր արևմուտք, սկզբում՝ Կորսիկա, այնտեղից՝ Ելեա (Հարավային Իտալիա) ու Գալլիայի հարավային ծովափ (Մասսալիա), տեոսցիները գաղթեցին Քրակիա, ուր հիմնեցին Աբդերա քաղաքը: Նույն կերպ վարվեցին նաև հոնիական այլ քաղաքների բնակիչները, որոնք փախուստը համարում էին պարսկական լծից փրկվելու միջոց: Հոնիացիները գաղթած էին բուն Հունաստան կամ հունական տարբեր գաղութներ: Այսպես, սովետական պատմաբանների ենթադրությամբ, Պանտիկապոնում մ. թ. ա. V դարում կառավարող Արքեանակտյանները, հավանաբար, ծագումով Միլետոսից էին ու գլխավորեցին այստեղ գաղթած հոնիական վտարանդիներին:

Պարսիկները ծանր տուրք դրեցին փոքրասիական հունական քաղաքների վրա: Բացի այդ, վերջիններիս բնակչությունը պարտավոր էր պարսիկների պահանջով ռազմիկներ տրամադրել ու տալ բանվորներ: Հունական քաղաքներում կառավարիչներ նշանակվեցին տիրանները (ինչպես նրանց անվանում էին հույները): Վերացվեց ամեն տեսակի ինքնավարությունը:

Զբաղված լինելով իր վիթխարի պետության հյուսիսարևելյան սահմաններում տեղի ունեցող իրադարձություններով, Կյուրոսը չկա-

րողացավ հարձակվել եվրոպական Հունաստանի վրա, այնուհանդերձ, հույների ջնդհարումները պարսիկների հետ չէին դադարում: Մ. թ. ա. 522 թ., Փոքր Ասիան կառավարող պարսկական սատրապը խաբեությամբ գերեց Պոլլուկրատեսին՝ Սամոս կղզու տիրանին, որը իր հզորությամբ երկյուղ էր ներշնչում պարսիկներին: Թեև Պոլլուկրատեսը ճանաչեց պարսկական արքայի գերագույն իշխանությունը, սատրապը խաչեց նրան (Հերոդոտոս, III, 122—125): Որոշ ժամանակ անց պարսկական զորքերը գրավեցին ու ավերեցին Սամոս կղզին:

#### ԳԱՐԵՆԻ ՍԿՅՈՒԹԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ

Կյուրոսի մահից հետո պարսկական տերության ներսում ըսկրսված երկպառակություններն ու նվաճված մարզերում բռնկված ապստամբությունները ժամանակավորապես սահմանափակեցին պարսկական քաղաքականության ակտիվությունը: Սակայն Դարեհ I-ի գահ բարձրանալուց ու Պարսկական պետության միասնականությունը վերականգնելուց հետո սկսվեց նրա առավել ուժեղացման ու ընդարձակման ժամանակաշրջանը:

Ունենալով ուժեղ ցամաքային բանակ ու ռազմական մեծ նավատորմիղ, Դարեհ I-ը վերսկսեց նվաճողական պատերազմները: Արևմուտքում պարսկական զորքերը առաջ ընթացան Եգիպտոսից Միջերկրականի ծովափով ու Պարսկաստանի իշխանությունը տարածեցին Կիբենե ու Բարկե հյուսիսաֆրիկյան հունական գաղութների վրա:

Մ. թ. ա. VII դ. Հյուսիսային Իրան ներխուժած սկյութներից վրեժ լուծելու պատրվակով Դարեհը մ. թ. ա. 512 թ. անձամբ արշավեց Սկյութիա: Պարսկական թագավորը մեծ զորքով ու նավատորմիղով, որոնց կազմում կային նաև հունական նավեր ու փոքրասիական հույների ջոկատներ, հարձակվեց Բալկանյան թերակղզու արևելյան մասի վրա ու, նվաճելով թրակիացիներին, Սև ծովի արևմտյան ափով անցավ դեպի Իստրոս գետը (այժմյան Դանուբը): Գետի վրա կամուրջ կառուցելով, Դարեհը անցավ Դանուբի հյուսիսային ափը: Կամուրջը պաշտպանելու համար նա թողեց զլխավորապես պարսիկներից կախյալ հունական տիրանների զորքերը, իսկ ինքը շարժվեց սյութական տափաստանների խորքը:

Սակայն հարձակման օբյեկտներ հանդիսացող մշտական բնակավայրերի բացակայությունն ու պարսիկների զլխավոր ուժերի հետ վճռական ճակատամարտից խուսափող սկյութների նահանջը դեպի երկրի խորքը դժվարին կացություն ստեղծեցին թագավորի համար: Սկյութները հարձակումներ էին գործում պարսիկների փոքր ջո-



կատների վրա: Զիամարտում ավելի հմուտ քոչվոր սկյուֆները ծանր հարվածներ էին հասցնում պարսկական հեծելազորին: Դարեհի բոլոր փորձերը՝ ստիպել թշնամուն ընդունել վճռական ճակատամարտ, անհաջողության մատնվեցին, իսկ պարսիկ սուր պակասն ու ցրտերի մոտենալը հարկադրեցին թագավորին սկսել նահանջը:

Սկյուֆները հռանդուն հետապնդում էին պարսիկներին՝ նըրանց պատճառելով ծանր կորուստներ: Ավելին, սկյուֆական ջոկատներից մեկը առաջ անցավ նահանջող պարսկական զորքերից ու մոտեցավ Իստրոսի վրայով գցած լողացող կամրջին:

Սկյուֆների զորապետը առաջարկեց հույներին քանդել կամուրջը և դրանով կործանել պարսիկներին: Տիրաններից ոմանք, մասնավորապես, թրակիական Քերտոնեսոսի կառավարիչ Պիսիստորատոսի կողմից արտաքսված աթենական փիլալայանների արիստոկրատական տոհմին պատկանող Միլտիադեսը պաշտպանեց սկյուֆացիների առաջարկը, ասելով, որ Դարեհի ու նրա զորքի կործանումը կազատի փոքրասիական հույներին, սակայն միլետյան տիրան Հիստիեոսը վճռականորեն առարկեց դրան: Նա, ինչպես հազորդում է Հերոդոտոսը, նշում էր, որ «ներկայումս, շնորհիվ Դարեհի, նրանցից յուրաքանչյուրը քաղաքի տիրակալ է: Ընդհակառակը, եթե Դարեհի հզորությունը խորտակվի, ոչ ինքը և ոչ էլ տիրաններից որևէ մեկը չի թագավորի ոչ Միլետոսում, ոչ էլ այլ քաղաքում, որովհետև ամեն մի քաղաք տիրանի ինքնակալությունից կգերադասի դեմոկրատիան»: (IV, 134): Հիստիեոսի կարծիքը պաշտպանեցին այլ տիրաններ: Դարեհն ու նրա բանակը փրկվեցին:

Դարեհի անհաջող արշավանքը սկյուֆների դեմ խարխիւց պարսիկների անհաղթելիության վերաբերյալ պատրանքը: Մյուս կողմից, պարսկական տիրապետության հաստատումը Բոսֆորի ու Հելլեսպոնտոս նեղուցների վրա, ինչպես նաև թրակիական ծովափի գրավումը անխուսափելի էին դարձնում պարսիկների ընդհարումը հույների հետ ապագայում, քանի որ պարսիկները կտրեցին այն ջրային ուղիները, որոնցով անցնում էին սևծովյան գաղութներից հացով քեռնված նավերը, ու իրենց հսկողության տակ դրեցին այն շրջանները, որտեղից հույները անտառանյութ էին ստանում:

#### ՀՈՆԱԿԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Դարեհի կողմից սկյուֆների դեմ ձեռնարկված անհաջող արշավանքից հետո պարսիկների դեմ ապստամբեցին Պրոպոնտիսի ասիերին գտնվող մի քանի հունական քաղաքներ (Քյուգանդիոն, Քադկեդոն), քայց պարսկական թագավորի կուսակալները դաժա-

նորին ճնշեցին արդ ապստամբությունը, իսկ հետո պարսիկներից կախման մեջ դրեցին Թրակիան ու Մակեդոնիան:

Մ. թ. ա. 500 թ. մոտ պարսիկները Հիստիեոսի ազգական ու փոխանորդ Արիստագորասի խորհրդով (վերջինիս դրդով էին Նաքսոս կղզուց փախած արիստոկրատները) կազմակերպեցին մեծ արշավանք Նաքսոսը նվաճելու համար: Արիստագորասի ղեկավարած պարսկական նավատորմը անհաջողություն կրեց: Վախենալով պարսկական թագավորի վրիժառությունից, Արիստագորասը որոշեց պարսիկների դեմ ապստամբություն բարձրացնելու կոչով դիմել փոքրասիական հունական քաղաքներին: Արիստագորասի կողմից խորհրդակցության հրավիրված հունական ավագների մեծ մասը ոգևորությամբ ընդունեց նրա առաջարկը, որովհետև հույները նեղություն էին կրում պարսկական կուսակալների ու պարսիկների նշանակած տիրանները: կրկնակի լծից:

Արիստագորասի կողմնակիցները գրավեցին Նաքսոսի դեմ ուղղված արշավանքից վերադարձած նավատորմիդը: Դրանից հետո Հոնիայի շատ քաղաքներում տապալվեցին տիրաններն, ու վերականգնվեց ինքնավարությունը: Ինքը՝ Արիստագորասը, հրաժարվեց իշխանութունից ու Միլետոսի բնակիչներին հայտնեց համայնական ինքնավարության վերականգնման մասին: Զորապետների ընտրությունից հետո Արիստագորասը օգնություն խնդրելու նպատակով մեկնեց Եվրոպական Հունաստան: Նախ նա այցելեց Սպարտա (մ. թ. ա. 499 թ.): Սակայն նրա բոլոր փորձերը՝ զրդել սպարտացիներին՝ օգնելու ապստամբներին, ապարդյուն էին: Սպարտայի կառավարիչները, որոնք մինչ այդ դաշինք էին կնքել լյուդիական թագավոր Կրեսոսի հետ և միաքն շէին հասցրել նրան օգնություն տրամադրել, վճռականորեն հրաժարվեցին ապստամբած ու տիրաններին տապալած հոնիական քաղաքների հետ միասին հանդես գալ պարսիկների դեմ:

Այլ էր Աթենքի ժողովրդական ժողովի կարծիքը. այն որոշում կայացրեց՝ ապստամբներին օգնության ուղարկել քսան տրիբրաններից կազմված նավախումբ: Ապստամբներին օժանդակեցին նաև Երեստրիա քաղաքի բնակիչները:

Աթենացիները որոշեցին պայքարել պարսիկների դեմ նախ այն պատճառով, որ հասկանում էին նրանց հետ ուղղակի ընդհարման անխուսափելիությունը և երկրորդ՝ պարսիկների կողմից Եգիպտոսի, Պոնտոսը և Գեյան ծովի հետ միացնող նեղուցների ու Թրակիայի գրավումը աթենացիներին զրկում էր հաց ու անտառանյութ ազատ ներմուծելու հնարավորությունից:

Մ. թ. ա. 499 թ. ամռանը ապստամբած հույների զորքերը

շարժվեցին Լյուդիայի նախկին մայրաքաղաք Սարդեսի վրա, ուր գտնվում էր պարսկական կուսակալը: Նրանք գրավեցին ու այրեցին քաղաքը, բայց չկարողացան տիրել բերդին, ուր իր զինվորներով պատսպարվել էր պարսկական սատրապը: Սարդեսի հրկիզումը հույների տակտիկական սխալն էր, որովհետև դա առաջացրեց Լյուդացիների դժգոհությունը:

Պարսիկները Լյուդացիների հետ համատեղ ստիպեցին հոնիացիներին նահանջել Սարդեսից, իսկ հետո, հասնելով ապստամբների զորքին Սփինոսի մոտ, պարտության մատնեցին նրանց: Չնայած դրան, պարսիկների դեմ ուղղված ապստամբությունը շարունակում էր ընդլայնվել: Ապստամբներին միացան Պրոպոնտիսի բոլոր հունական քաղաքները Բյուզանդիոնի գլխավորությամբ, Կարիայի ու Կիպրոսի կղզու բնակչությունը:

Ապստամբությունը ճնշելու նպատակով խոշոր ուժեր բերվեցին պարսկական տերության խորքից: Փյունիկեցիները, կիլիկիացիներն ու եգիպտացիները նավեր ուղարկեցին: Սկզբում պարսիկները հարձակվեցին Կիպրոսի ապստամբած բնակչության վրա: Չնայած հունական նավատորմի հաջող գործողություններին, պարսիկները, այնուամենայնիվ, կարողացան անցնել Կիպրոս, իսկ որոշ քաղաքների տիրանների դավաճանության հետևանքով գործը հասավ վախճանին: Ապստամբությունը Կիպրոսում ճնշվեց: Դրանից հետո պարսկական զորքերը խեղդեցին ապստամբությունը նաև Պրոպոնտիսի ու Հելլեսպոնտոսի ափերին գտնվող հունական քաղաքներում: Գրբավեցին ու ջախջախվեցին Աբյուդոսը, Լամփսակոսը, Կյուսենն ու հոնիական Կլազոմենն քաղաքը: Միայն Հոնիայի բնակչությունը Միլետոսի գլխավորությամբ դեռ շարունակում էր պայքարը: Սակայն հոնիացիների միջև սկսվեցին երկպառակություններ: Արիստագորասը, կորցնելով պայքարի հաջող ելքի հույսը, մեկնեց Թրակիա, ուր և շուտով զրկվեց կյանքից: Նույն տարում հոնիացիները կրկին հավաքեցին ուժեղ ռազմական նավատորմիղ, քայքայեցին մոտ չկար միաբանությունն ու կարգապահությունը: Պարսկական գործակալները, թափանցելով ապստամբների ճամբարը, ահաբեկման ու խոստումների միջոցով ուժեղացնում էին կազմալուծումը: Երբ մ. թ. ա. 497 թ. աշնանը պարսկական նավատորմը Լադա կղզու մոտ գրոհեց ապստամբների ծովափին ուժերը, վերջիններս ջախջախվեցին: Դրանից հետո պարսիկները պաշարեցին հարուստ ու բազմամարդ Միլետոսը: Քաղաքի բնակչությունը մոտ մեկ տարի հերոսաբար պաշտպանվում էր: Մ. թ. ա. 495 թ. պարսիկները պարիսպների տակ ական փորելով ու քանդելով դրանք, ներխուժեցին քաղաք, որը հրկիզվեց ու մատնվեց ավարառության: Քաղաքացիների մեծ

մասը զոհվեց մարտում, մնացածներին տարան հեռու արևելք, հազարավոր կանայք ու երեխաներ ստրկության վաճառվեցին: Քաղաքի հողերը բաժանվեցին պարսկական զորականների միջև:

Պարսիկները հեշտությամբ գրավեցին Հոնիայի մյուս քաղաքները, ինչպես և Լեսբոս, Քիոս, Տենեդոս կղզիները: Նրանք թշուժ էին հույներին անասունների պես հատուկ հավաքակետեր, որտեղ ստրկատերերն իրենց համար ընտրում էին կենդանի ապրանք: Հոնիական քաղաքների տնտեսական զարգացմանն ու բարեկեցությանը հասցվեց ծանրագույն հարված, որից նրանք սթափվեցին միայն շատ տարիներ անց: Հոնիայի, որպես Հելլադայի առաջավոր, մշակութային տեսակետից առաջատար մարզի դիրքը ընդմիշտ վերացավ:

#### ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀՈՆԱՍՏԱՆԻ ԴԵՄ

Իշխանության զլուխ կանգնած պարսկական ավագանին ձգտում էր ձեռք բերել նոր տարածքներ, որոնցից հնարավոր կլիներ հավաքել տուրքեր: Թվում էր, թե հարուստ, խիտ բնակեցված, սակայն իր տարածքով փոքր Հունաստանի գրավումով հնարավոր կլիներ առանց մեծ ջանքեր գործադրելու ավարտել պարսկական տիրույթները արևմուտքում: Այս պատճառով Դարեհը, դատաստան տեսնելով հոնիական ապստամբության հետ, որոշեց ռազմական ուժի միջոցով իրեն ենթարկել Հունաստանի եվրոպական մասը: Հարձակման պատրվակը դարձավ այն օգնությունը, որ ապստամբներին ցույց տվեցին աթենացիներն ու երեսորիացիները:

Մ. թ. ա. 493 թ. թագավորի փեսա Մարդոնիոսը մեծ զորքով ու նավատորմով անցավ Հելլեսպոնտոսը: Քերսոնեսոսի տիրան աթենացի Միլտիադեսը փախավ հայրենիք, իսկ պարսկական զորքերը, ջախջախելով Կարդիա հունական քաղաքը, էգեյան ծովի հյուսիսային ափով շարժվեցին արևմուտք՝ ճանապարհին նվաճելով հույների ծովափնյա գաղութներն ու ծովափի մոտ ապրող թրակիական ցեղերին: Պարսկական նավատորմի ղր գրավեց Թասոս կղզին: Մակեդոնական թագավորը, չսպասելով ներխուժման, կրկին հայտարարեց, որ ենթարկվում է պարսիկներին: Սակայն ուժեղ փոթորիկը ոչնչացրեց պարսկական նավերի մեծ մասը, որոնք փշրվեցին, խրվելով Ակտե (ժամանակակից Աթոն) հրվանդանի ժայռերին, իսկ ցամաքային զորքը ծանր կորուստներ կրեց թրակիացիների դեմ մղած մարտերում: Վիրավորվեց նաև ինքը՝ Մարդոնիոսը: Այդ հանդամանքները ստիպեցին պարսիկներին նահանջել Ասիա, բայց նրանք

կառուցեցին մի շարք նոր ամրոցներ ու նվաճված քաղաքներում թողեցին ուժեղ կայազոր:

Մ. թ. ա. 492 թ. Դարեհը հրամայեց բոլոր ենթակա առափնյա երկրներին կառուցել նոր մարտական ու փոխադրական նավեր և ուղարկել դրանք Փոքր Ասիայի ափերը: Նա եվրոպական Հունաստանի տարբեր քաղաքներ ուղարկեց դեսպաններ «հողի ու ջրի» պահանջով, այսինքն պահանջեց ընդունել Պարսկաստանի իշխանությունը: Երբ մ. թ. ա. 491 թ. պարսկական դեսպանները եկան հունական պոլիսները, ապա ոչ միայն կղզիների բնակիչները, այդ թվում նաև հարուստ էգինայի, այլև մայրցամաքային Հունաստանի քաղաքներից շատերը ճանաչեցին պարսից բռնապետի իշխանությունը: Միայն Աթենքն ու Սպարտան հրաժարվեցին հնազանդվել:

Աթենքում, Միլտիադեսի ու Թեմփստոկլեսի առաջարկով, արքայի պահանջը վերավորական համարվեց, ու դեսպաններին ժայռից ցած գլորեցին: Սպարտայում դեսպաններին նետեցին ջրհորը, ասելով, որ թող նրանք այնտեղ «իրենք վերցնեն հողը ու ջուրը»: Սակայն շուտով սպարտացիները որոշեցին մի փոքր մեղմացնել այն տպավորությունը, որ գործեց նրանց հաշվհարդարը և դեսպանություն ուղարկեցին պարսկական թագավորի մոտ: Դեսպանների հետ Պարսկաստան ուղևորվեցին անվանի սպարտացիներ, որոնք կամովին համաձայնվեցին զոհվել՝ հանուն դեսպանների սպանության մեղքի հատուցման: Սակայն Դարեհը դեսպաններին չընդունեց:

Մ. թ. ա. 490 թ. պարսիկները նոր հարձակում սկսեցին եվրոպական Հունաստանի վրա: Այս անգամ պարսկական զորքերն առաջնորդում էին փորձառու հրամանատար Դատիսն ու արքայի մերձավոր ազգական Արտափեռնեսը: Որպես ուղեկցող ու խորհրդական նրանց հետ արշավանքի գնաց նախկին աթենական տիրան Հիպպիասը, որը հույս ուներ պարսկական օգնությամբ վերագրավել իշխանությունը: Պարսիկները գրավեցին Նաքսոս կղզին, ջախջախեցին քաղաքն ու ստրկության վաճառեցին իրենց ձեռքն ընկած կղզու բոլոր բնակիչներին: Կիկլադյան մյուս կղզիները առանց դիմադրության ենթարկվեցին նրանց: Հետո պարսկական նավատորմը մտանցավ Եվբեա կղզուն: Իրենց ենթարկելով Կարիստոսի բնակիչներին, պարսկական զորքերը շարժվեցին դեպի Երեսոբիա: Այդ քաղաքի բնակիչները միջև տարածանություններ ծագեցին, դեմոկրատական տարրերը պահանջում էին վճռական պաշտպանություն, իսկ արիստոկրատները դիմադրությունը համարում էին անօգուտ ու նախապատրաստվում էին Երեսոբիան հանձնել պարսիկներին: Տեսնելով այդ, 4000 աթենական զինվորական վերաբնակներ՝ կլե-

րուքներ թողեցին Եվբեան ու հեռացան Ատտիկա: Պարսիկները հարձակվեցին Երեսրիայի վրա ու այն գրոհով վերցրեցին: Քաղաքը ավերվեց ու հրկիզվեց, իսկ նրա ողջ մնացած բնակիչների մեծ մասը վաճառվեց ստրկության: Դրանից հետո պարսիկները Հիպպիասի խորհրդով անցան նեղուցն ու ափ իջան հարթավայրում, Մարաթոն գյուղի մոտ: Այստեղից նրանք սկսեցին ավերել Ատտիկայի հարևան շրջանները:

Երբ կատարվածի լուրը հասավ Աթենք, քաղաքացիների ճնշող մեծամամուլությունը արտահայտվեց պայքարը մինչև վերջ շարունակելու օգտին: Չնայած ոչ հեռավոր անցյալում եղած թշնամական հարաբերություններին, ստրատեգոսների խորհուրդը արագազնաց սուրհանդակ ուղարկեց Սպարտա: Այդ սուրհանդակը անցավ 200 կիլոմետրից ավելի տարածությունը երկու օրում: Բայց իզուր: Հին կրոնական ծեսերի կատարման պատրվակով էֆորոսները խոստացան զորքեր ուղարկել միայն տաս օր հետո:

Աննպաստ պատասխան ստանալով Սպարտայից, աթենական ստրատեգոսները ստիպված եղան որոշում կայացնել հետագա գործողությունների մասին: Նրանք միմյանց համամիտ չեղան: Այն ժամանակ, երբ նախկին քերսոնեսոսյան տիրան Միլտիադեսը, որը ընտրվել էր ստրատեգոս, իբրև փորձառու զորական ու պարսիկների անհաշտ թշնամի պնդում էր, որ անհրաժեշտ է անհապաղ հարձակվել թշնամու վրա, և նրա կարծիքը պաշտպանում էին Արիստիդեսն ու ևս երեք ստրատեգոսներ, Թեմիստոկլեսն ու շորս այլ զորապետներ առաջարկում էին սպասել: Այս պայմաններում վճռող պետք է լինեք արքունտ-պոլեմարքոս Կալլիմաքոսի՝ փորձառու զորահրամանատարի կարծիքը: Կալլիմաքոսը արտահայտվեց դեպի Մարաթոն շարժվելու առաջարկի օգտին, ու ժողովրդական ժողովը հաստատեց այդ որոշումը:

Մ. թ. ա. 490 թ. սեպտեմբերին տաս հազար հուպրիտներից ու թեթևագեն մարտիկների որոշ թվից բաղկացած աթենական զորքը, անցնելով սարերը, տեղավորվեց պարսկական ճամբարի առջև: Աթենական ստրատեգոսները, որոնք պետք է հերթով, յուրաքանչյուրը մեկ օր, գլխավորեին զորքը, զիջեցին ղեկավարությունը պարսկական ռազմական արվեստը լսվ իմացող Միլտիադեսին, սակայն վերջինս որոշեց ճակատամարտ տալ միայն իր հերթական հրամանատարության օրը:

Այն պահին, երբ աթենական զորքը մարտակարգ էր ընդունում, հարևան քեովտիական Պլատեա փոքր քաղաքից օգնության եկավ 1000 հոգուց բաղկացած աշխարհագորք: Սակայն անգամ այդ օգնական ուժով հանդերձ, հույները քանակապես զգալիորեն գի-

շում էին պարսիկներին: Այս պատճառով Միլտիադեսը շրջապատումից խուսափելու նպատակով երկարացրեց իր զորքի ճակատային գիծը: Ճիշտ է, կենտրոնը թուլացավ, բայց ուժեղացան երկու թևերը: Նա նաև հրամայեց իր մարտիկներին հարձակվել արագ քայլերով, որպեսզի պարսիկները չկարողանան նետերի տարափ տեղալ նրանց վրա:

Հոպլիտները արագ քայլերով անցան զգալի տարածություն ու գրոհեցին թշնամու շարքերը: Կենտրոնում, որտեղ հույների շարքը նոսր էր, պարսիկներն ու սակերը ճեղքեցին նրանց մարտաշարքերը: Բայց երկու թևերում պարսկական զորքերը ջախջախվեցին, ու դա վճռեց ճակատամարտի ելքը: Պարսիկները նետվեցին դեպի նավերն ու սկսեցին դրանք ծով իջեցնել: Աթենացիները հետապնդում էին թշնամուն: Նավերի մոտ կատաղի կռիվ բորբոքվեց: Այստեղ սպանվեցին ստրատեգոսներից մեկն ու արքունի Կալլիմաքոսը: Աթենացիներին հաջողվեց զավթել յոթ պարսկական նավեր: Մարտի դաշտում մնացին 6400 պարսկական զինվորներ ու 192 հունական հոպլիտներ:

Հաղթողների ուրախությունն այնքան մեծ էր, որ աթենական ռազմիկներից մեկը մարտի դաշտից լեռնային արահետներով վազեց Աթենք՝ տանելով հաղթանակի լուրը: Վազելով 42 կիլոմետրից ավելի, նա հասավ աթենական ագորա ու բացականչելով՝ «Ուրախացե՛ք, աթենացիք, մենք հաղթեցինք», ընկավ մեռած: Հետագայում օլիմպիական խաղերում սահմանվեց վազքի մրցույթուն այն տարածության շափով, որը հավասար է Մարաթոնի մարտի դաշտից մինչև աթենական ագորա եղած տարածությանը:

Հոգին հանձնելով իրենց ընկերներին ու կառուցելով մինչև մեր օրերը պահպանված գերեզմանաբլուր (սորոս), աթենացիներն արագորեն շարժվեցին ետ դեպի քաղաք, քանի որ Միլտիադեսը չենթադրում էր, որ պարսիկները կձեռնարկեն Աթենքը գրոհելու փորձ: Եվ իրոք, հազիվ էր աթենական աշխարհագրորդ հասել ափ, երբ այնտեղ հայտնվեց պարսկական նավատորմը: Սակայն պարսիկները, տեսնելով հունական հոպլիտներին, շհամարձակվեցին ափ իջեցնել իրենց զորքերը ու մեկնեցին Ասիա: Մարաթոնյան ճակատամարտից մի փոքր անց Ատտիկա եկավ սպարտացիների օժանդակ ջոկատը, սակայն թշնամին արդեն չկար:

#### ՀԱՎԱՌԱՎՈՐՊԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՎՃՌԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՄԱՆ

Պարսկական հարձակումը ետ մղելուց հետո աթենական ավագանին Միլտիադեսի գլխավորությամբ փր հերթին կազմակերպեց պատժիչ արշավանք պարսիկներին օգնություն ցույց տված կղզի-

ների բնակիչների դեմ (մ. թ. ա. 489 թ.): Սակայն Պարոս կղզու վրա հարձակում գործելու ժամանակ ծանր կորուստներ կրելով, արշավախումբը վերադարձավ Աթենք: Միլտիադեսը պարտվելու համար հանձնվեց դատի: Բայց արշավանքի ժամանակ ծանր վիրավորված լինելով, նա շուտով մահացավ:

Միլտիադեսի մահից հետո Աթենքում ազդեցիկ քաղաքական գործիչ դարձավ Թեմիստոկլեսը: Նա ծագում էր միջին ընտանիքից ու օժտված էր ակնառու ռազմական ու դիվանագիտական ընդունակություներով: Թուկիդիդեսը գտնում է, որ Թեմիստոկլեսը ընդունակ էր արագորեն խորանալ գործի էություն մեջ, որի շնորհիվ կարող էր դատել ներկայի մասին ու կանխատեսել դեպքերի զարգացման ընթացքը: Թեմիստոկլեսը անխուսափելի էր համարում Պարսկաստանի հետ պատերազմի վերսկսումը մոտ ապագայում: Նա հասկանում էր, որ պայքարելով դեպի Եվքսինյան Պոնտոս տանող առևտրական ուղիների համար, հետապնդելով ստրուկներ ու նյութական արժեքներ զավթելու նպատակներ, պարսիկները վաղ թե ուշ կրկին կհարձակվեն Աթենքի վրա:

Ելնելով մ. թ. ա. 490 թ. դեպքերի զարգացման փորձից, Թեմիստոկլեսը պնդում էր, որ Աթենքում անհրաժեշտ է ստեղծել հզոր ռազմական նավատորմիչ: Նրա կարծիքով նավատորմը անհրաժեշտ էր աթենացիներին ինչպես էգինայի դեմ մղած պայքարն ավարտելու, այնպես և պարսիկների հնարավոր հարձակումից պաշտպանվելու համար: Ռազմանավերի կառուցման համար անհրաժեշտ միջոցները Թեմիստոկլեսը առաջարկում էր վերցնել այն եկամուտներից, որոնք ստացվում էին Լավրիոնի արծաթի հանքերի շահագործումից և նախկինում բաժանվում էին քաղաքացիների միջև: Այդ հարցում Թեմիստոկլեսի դեմ հանդես եկավ հողատեր ավագանու և աթենական քաղաքացիության հետամնաց գյուղական խավերի կարծիքն արտահայտող Արիստիդեսը: Արիստիդեսը նշում էր, որ նավատորմի շինարարությունը կթուլացնի հողատերերի ազդեցությունը, որոնք, նրա կարծիքով, Աթենական պետության հենարանն էին, կուժեղացնի քաղաքացիության ստորին, աժենաանապահով խավերի ազդեցությունը, կնպաստի Հունաստանի այլ մարզերից Աթենք եկող վերաբնակների հոսքի ուժեղացմանը, մի բան, որն իր հերթին կհանգեցնի նախնիներից ժառանգած քաղաքական կարգերի աստիճանական թուլացմանը: Մատնանշելով Մարաթոնի ճակատամարտի ելքը, նա պահանջում էր ուժեղացնել ցամաքային զինված ուժերը:

Այդ հակառակորդների ու քաղաքացիության նրանց պաշտպանող խավերի միջև սկսվեց լարված քաղաքական պայքար, որն ա-



վարտվեց մ. թ. ա. 483 թ. Թեմիստոկլեսի ու նրան պաշտպանող աթենական քաղաքացիների առևտրաարհեստավորական խմբերի հաղթանակով: Արիստիդեսը արտաքսվեց Աթենքից օստրակիզմի միջոցով և, ռազմական նավատորմիչը սկսեց կառուցվել արագ թափով: Երեք տարի անց, Հունաստանի վրա պարսիկների հարձակման պահին, Աթենքն ուներ 200 տրիերաներ: Տրիերայի անձնակազմը բաղկացած էր 180 թիավարներից ու նավաստիներից և 20—30 ռազմիկներից ու նետաձիգներից: Որպես թիավարներ ու նավաստիներ տրիերաներում ծառայում էին ձկնորսներ, մանր վաճառականներ ու արհեստավորներ, մետոյկներ և այլք: Հրամանատարներ՝ տրիերարքոսներ էին պենտակոսիոմեդիմնականները: Նրանք ստանում էին նախի կմախքը և իրենց միջոցներով սարքավորում նավը:

Նավատորմի կառուցումը ու մինչ այդ զորքի կազմից փաստորեն հեռացված աթենական քաղաքացիություն ստորին խավերի ծառայությունը նավատորմիչում ընդարձակեցին զինված ուժերի սոցիալական հիմքը ու ստեղծեցին անմիջական նախադրյալներ Աթենքում ստրկատիրական դեմոկրատիայի հաղթանակի համար, որովհետև քաղաքացիների բոլոր խմբերի մասնակցությունը պաշտպանության գործին ոչնչացնում էր հողատերերի գերակշռությունը քաղաքային մանր առևտրականների ու արհեստավորների նկատմամբ: Այդ ժամանակից սկսած ազատ աթենական քաղաքացիները ոչ միայն մասնակցում էին ժողովրդական ժողովներին, այլև ճանաչվեցին իրավահավասար նաև պետության պաշտպանության գործում:

Եթե Աթենքում առավել հեռատես քաղաքական գործիչները (Թեմիստոկլես և ուրիշներ) հաշվի էին առնում պարսիկների նոր հարձակման հնարավորությունը, ապա Հունաստանի այլ քաղաքներում ո՛չ բնակչությունը, ո՛չ էլ ավագներն ու զորապետները չէին ցուցաբերում անհանգստություն այդ կապակցությունը՝ իրենց ուշադրությունը նվիրելով սոսկ հարևանների հետ ունեցած փոխհարաբերություններին: Հաճախ այդ հարաբերությունները թշնամական էին ու փոխարկվում էին բացահայտ պատերազմների: Հույների ներքին միասնության բացակայությունը թուլացնում էր նրանց ու անշուշտ նպաստում այն բանին, որ պարսիկները մոտ նոր առջավանք կազմակերպելու ծրագիր առաջանա:

Մարաթոնյան ճակատամարտից հետո անցած տարիների ընթացքում թվում էր, թե պարսիկները չեն կրկնի իրենց ներխուժումը Հունաստան: Նրանք ուշադրության մատնեցին աթենացիների հարձակումը Պարոսի վրա: Մ. թ. ա. 486 թ. Եգիպտոսում կրկին ապստամբություն բռնկվեց: Իրանից հետո մեռավ ժեր թագավոր Դարեհ I-ը՝ ժառանգորդ նշանակելով իր որդիներից մեկին՝ Քսերքսես-

սին (մ. թ. ա. 485—465 թթ.): Անցավ որոշ ժամանակ, մինչև որ պարսկական տերութւյան նոր կառավարիչը ամրապնդեց իր իշխանութունը ու ճնշեց ապստամբութիւնը Եգիպտոսում (մ. թ. ա. 484 թ.): Միայն դրանից հետո նա կարողացավ վերադառնալ հույների դեմ պատերազմը շարունակելու ինդոսին:

Քսերքսեսը սկսեց այն ժամանակի համար վիթխարի ռազմական նախապատրաստումներ: Փյունիկեցիները, եգիպտացիները, կիլիկիացիները, Կիպրոսի բնակիչները, փոքրասիական հույները ստացան նավեր կառուցելու հրաման: Կառուցվում էին կամուրջներ Հելլեսպոնտոսի ու Ստրիմոն գետի վրա: Թրակիայում ու Մակեդոնիայում ամենուրեք ստեղծվում էին պարենի ու անասնակերի պահեստներ, հավաքվում էին անասունների հսկայական հոտեր: Մ. թ. ա. 483 թ. մինչև 481 թ. Ակտե հրվանդանի միջով անցկացվեց ջրահեղ, որպեսզի պարսկական նավատորմը չենթարկվի կործանման վտանգի: Ենթակա ժողովուրդներից պահանջեցին օժանդակ աշխարհազորներ: Քսերքսեսը այնչափ համոզված էր իր հաջողութւյան մեջ, որ անգամ չէր թաքցնում հույների վրա հարձակվելու իր նախապատրաստութիւնները: Երբ մ. թ. ա. 481 թ. Սարդեսում բռնվեցին աթենական լրտեսները, Քսերքսեսը ոչ միայն ազատ արձակեց նրանց, այլև կարգադրեց ցույց տալ նրանց իր հավաքած բոլոր զորքերը: Մ. թ. ա. 480 թ. գարնանը Քսերքսեսը շարժեց իր բանակը Հելլեսպոնտոսի ու Թրակիայի վրայով դեպի Հունաստան:

#### ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՀՈՆԱՍՏԱՆ

Քսերքսեսը դանդաղորեն շարժվելով դեպի Հելլեսպոնտոսի կողմերը, Հունաստան ուղարկեց սուրհանդակներ «հողի ու ջրի» պահանջով: Ուղարկելով դեսպաններին, Քսերքսեսը կարգադրեց նրանց շմտնել Աթենք ու Սպարտա:

Պարսկական թագավորի կողմից Հունաստան բերվող հսկայական ռազմական ուժերի մասին տարածվող լուրերը ահաբեկեցին շատ հույների: Երբ պարսկական դեսպանները գնացին հունական մարզերը, շատ պոլիսներ սկսեցին տատանվել: Պարսիկներին բացահայտորեն ենթարկվեցին թեսալացիները, տատանվում էին թեբացիները, արգոսցիներն ու աքայացիները:

Այդ տատանումներն ու տարածայնութիւնները խիստ դժգոհեցրանում էին հույների պաշտպանութւյան կազմակերպման գործը: Դեռևս մ. թ. ա. 481 թ. աշնանը Իսթմոսում Թեմիստոկլեսի առաջարկութւյամբ կայացավ խորհրդակցութիւն, որի նպատակն էր կազմակերպել համահունական միութիւն, սակայն շատ պոլիսներ չէին ուղարկել Վրենց ներկայացուցիչներին: Ատտիկայում հայտ-

նաբերվեց արհեստակրատների դավադրություն. նրանք նախապատ-  
րաստում էին պետական հեղաշրջում ու կապիտուլյացիա պարսիկ-  
ների առաջ: Բացի այդ, դելիյան պատգամախոսը, արտահայտելով  
հույների մոտ եղած տատանումներն ու տարածայնությունները,  
խորհուրդ տվեց կրեոացիներին շմասնակցել Հունաստանի պաշտ-  
պանությունը: Նա սպառնում էր սպարտացիներին ու խորհուրդ էր  
տալիս աթենացիներին փրկություն գտնել փախուստի մեջ: Միայն  
կրկնակի դիմումից հետո նա պատասխանեց աթենացիներին՝

Պալլասն անզոր է Օլիմպյան Ջևսի զայրույթը մեղմե-  
լի պաղատագին խոսքերով և իր խելք խորհրդով:  
Իմ նոր պատգամը կլինի ամուր, ինչպես ադամանդ:  
Արդ, եթե անդամ Կեկրոպսի ժայռի և Կիթերոնի՝  
Միջև գտնվող հողը թշնամին ամբողջ նվաճի,  
Տրիտոզենեի փայտե պարխպը Ջևսն ամենատես՞  
Կանդուն կպահի հանուն քո որդվոց և քո փրկության...

Այն ժամանակ, երբ շատ աթենացիներ գուշակի այս ասույթը  
բացատրում էին որպես Աթենքի շուրջը փայտե պատեր կառուցե-  
լու պատվեր, Թեմիստոկլեսն առաջարկեց մեկնաբանել ասույթը այն  
իմաստով, որ անհրաժեշտ է ամրապնդել և ուժեղացնել մարտական  
նավատորմիդը, որ «փայտե պատեր» խոսքերը պետք է հասկանալ  
որպես նավեզրեր: Նրա կարծիքը հաղթանակեց: Թեմիստոկլեսի մի  
այլ առաջարկով աթենացիները համաձայնվեցին, որպեսզի պար-  
սիկների դեմ մղած պատերազմում դաշնակից ուժերի գերագույն  
հրամանատարությունը իրագործեն սպարտացիները:

Մ. թ. ա. 480 թ. գարնանը աթենացիներն ու սպարտացիները  
սպարտացի էվենեստոսի ու Թեմիստոկլեսի հրամանատարությամբ  
թեսալացիներին օգնության ուղարկեցին 10000 հոպլիտներ՝ Մա-  
կեդոնիայից Թեսալիա տանող լեռնանցքները պաշտպանելու հա-  
մար: Սակայն իմանալով այն մասին, որ թեսալացիները ենթարկ-  
վել են Քսերքսեսին, այդ զորքերը ետ վերադարձան: Այդ նույն ժա-  
մանակ պարսկական զորքերի վիթխարի բազմազգ զանգվածը գալ-  
նան ու ամռան ընթացքում առաջ շարժվեց էգեյան ծովի հյուսիսա-  
յին ափով: Քսերքսեսի իշխանությունն ընդունած ու թագավորա-  
կան հորդաները ամեն ինչով ապահովելու պարտավորությունը  
ստանձնած ծովափնյա հունական քաղաքների բնակչությունը լիո-  
վին թալանվեց: Մակեդոնական թագավորը հարկադրված էր իր զոր-  
քերը միացնել Քսերքսեսի բանակին ու դառնալ նրա ուղեկիցն ու

<sup>1</sup> Վարբեր Ատտիկայում:

<sup>2</sup> Տրիտոզենեյա՝ եռակի ծնված, Աթենաս աստվածուհու մականորդ:

զինվորական խորհրդականը: Մ. թ. ա. 480 թ. ամռան վերջին պար-  
սիկները սարերով անցան Թեսալիա, իսկ նրանց նավատորմը, անց-  
նելով ջրանցքը Ակտե հրվանդանում, կենտրոնացավ Թերմեսյան ծո-  
ցում:

Այն պահին, երբ պարսկական զորքերը մուտք գործեցին Թեսա-  
լիա, հույները, որոնք վճռել էին կովել մինչև վերջ, անպատրաստ  
գտնվեցին: Սպարտացիները կրոնական տոնակատարության պա-  
տրովակով իրենց լավագույն զորքերը պահեցին Լակոնիկայում, իսկ  
դեպի հյուսիս, պարսիկներին ընդառաջ, ուղարկեցին թագավոր  
Լեոնիդասին, նրան տալով 300 փորձառու սպարտացի զինվորներ,  
1000 պերիոլյաներ ու պելոպոնեսյան դաշնակիցների փոքր ջոկատ-  
ներ, ընդամենը՝ 4000 մարդ: Լեոնիդասը թշնամուն ընդառաջ շարժ-  
վելով հայտարարում էր, որ իր ջոկատը մեծ դաշնակից զորքի սոսկ  
առաջամասն է ու ճանապարհին իրեն էր միացնում նոր ջոկատներ:  
Երբ Լեոնիդասը մոտեցավ Թերմոպիլյան կիրճին, որի միջով, Օյ-  
տալի ժայռոտ լեռների ու ծոցի անանցանելի ճահճակալած ափի  
միջով ձգվում էր Թեսալիայից Միջին Հունաստան տանող քանուկ  
ճանապարհը, նրա զորքերում կար 7200 մարդ: Ուղարկելով Փոկի-  
սից բերված զինվորներին՝ պաշտպանելու լեռնանցքների վրայով  
դեպի Թերմոպիլյան կիրճի թիկունքը տանող լեռնային արահետնե-  
րը, Լեոնիդասը ամրացրեց իր դիրքերը՝ կառուցելով քարե աշտա-  
րակ ու պարիսպ (այդ ամրությունների մնացորդները հնագետները  
հայտնաբերեցին 1938—1939 թթ.):

Այդ նույն ժամանակ 271 տրիբարներից կազմված դաշնակցա-  
յին հունական նավատորմը մոտեցավ Եվբեա կղզու հյուսիսային  
մասին ու դիրքեր գրավեց Թեսալիայի ափից կղզիների միջով դեպի  
ծովի խորքը ձգվող նեղուցները պաշտպանելու համար: Այդ նեղուց-  
ներով էին անցնում Միջին Հունաստան ու Պելոպոնես տանող ա-  
ռափնյա ուղիները: Հունական նավատորմի հիմնական մասը կազ-  
մում էին աթենական նավերը, բայց նրանց հրամանատարն էր  
սպարտացի Եվրիբիադեսը, որին աթենական նավախումբը գլխա-  
վորած Թեմիստոկլեսը զիջեց ղեկավարությունը՝ հանուն դաշնա-  
կիցների միասնության պահպանման:

Երբ պարսկական նավատորմը մոտեցավ հույների դիրքերին,  
նրանք սկզբում նահանջեցին Եվբեյան նեղուց, սակայն հետո, երբ  
ճայթած փոթորիկը ոչնչացրեց պարսկական շատ նավեր, հույները  
կրկին գրավեցին իրենց դիրքերը Արտեմիսիոն հրվանդանի մոտ ու  
համառ մարտ սկսեցին հարավային ուղղությամբ առաջանալու  
անհաջող փորձեր ձեռնարկած պարսկական նավերի դեմ:

Քսերքսեսի անձամբ գլխավորած պարսկական ցամաքային

բանակը մոտեցավ Թերմոպիլին: Ըստ ավանդության, ծոցի մյուս ափից տեմնելով Լեոնիդասի փոքրաթիվ զինվորներին, պարսկական թագավորը հույների մոտ ուղարկեց լրաբերին՝ զենքը հանձնելու առաջարկությամբ: Լեոնիդասը պատասխանեց թագավորին՝ «եկ ու վերցրու»: Երբ պարսկական սուրհանդակը ասաց սպառնալիքով, որ թագավորի ռազմիկներն այնչափ շատ են, որ կարող են նետերի տարափով ծածկել արևը, մեկ այլ սպարտացի նկատեց՝ «Ավելի լավ: Մենք կմարտնչենք ստվերում»:

Քսերքսեսը շորս օր սպասելով հույների նահանջին, հրամայեց սկսել գրոհը: Երկու օր շարունակ հույները հաջողությամբ հտ էին մղում պարսիկներին՝ Թերմոպիլեն ճեղքումով անցնելու փորձերը: Լեոնիդասը իր մարտիկներին բաժանեց երեք ջոկատների, որոնց հերթականությամբ ուղարկում էր հակազդուհի: Հենց որ պարսիկները մուտք էին գործում նեղ ճանապարհը, սպարտացիները հարձակվում էին նրանց վրա ու ետ էին մղում՝ պարսիկներին հասցնելով ծանր հարվածներ: Քսերքսեսը մոլեգնում էր, նրա զորապետները մտրակների հարվածներով քշում էին պարսիկներին մարտի, սակայն դա չէր ընկճում Լեոնիդասի իրար փոխարինող ռազմիկներին:

Ճակատամարտի երկրորդ օրվա վերջում Քսերքսեսի մոտ եկավ մի թեսալացի ու առաջարկեց վարձատրության դիմաց ցույց տալ շրջանցիկ լեռնային արահետները: Քսերքսեսը գիշերը շարժեց իր լավագույն ջոկատները լեռնային արահետներով ու թևանցեց Լեոնիդասի դիրքերը: Լեռնանցքները հսկող հունական ջոկատը հանկարծակիի բերվեց ու փախավ՝ ճանապարհ բացելով Թերմոպիլյան դիրքը շրջանցելու համար: Իմանալով այդ մասին, Լեոնիդասը գիշերը արձակեց քոլոր դաշնակիցներին ու լուր ուղարկեց Սպարտա՝ Միդիեն Հունաստան պարսիկների ներխուժման մասին: Նա մահը նահանջից գերադասող սպարտացի մարտիկների ու այլ ջոկատների պատկանող փոքրաթիվ կամավորների հետ մնաց իր տեղում:

Առավոտյան, երբ պարսիկները վերսկսեցին զգոհները, հույները սկսեցին անհուսալի մարտը: Լեոնիդասը զոհվեց ճակատամարտի սկզբում: Երբ պարսիկները շրջանցեցին հույներին, վերջիններս նահանջեցին բլրի վրա և կռվեցին մինչև վերջ: «Նրանք պաշտպանվում էին, գրում է Հերոդոտոսը, — սրբորով՝ ում մոտ սրերը դեռ պահպանվել էին, փնչպես և ձեռքերով ու ոտքերով, մինչև որ... ևըրանց լթաղեցին նետերի տարափի տակ...» (XII, 225): Գազազած Քսերքսեսը հրամայեց սպանվածների մեջ գտնել Լեոնիդասի դիակն ու խաչել այն: Հետագայում հույները հավաքեցին Թերմոպիլի պաշտպանների ոսկորներն ու թաղեցին նրանց մի ընդհանուր գե-

րեզմանում: Գերեզմանի վրա դրվեց առյուծ պատկերող հուշարձան, քարի վրա փորագրվեցին Միմոնիդես բանաստեղծի հետևյալ խոսքերը. «Անցորդ, լուր հաղորդիր Լակեդեմոնին, որ մենք պառկած ենք այստեղ, հավատարիմ օրենքին»:

Ներխուժելով Միջին Հունաստան, պարսիկները ջախջախեցին ու ավերեցին Փոկիսը. քաղաքի բնակիչները փախան լեռները: Թեբեն կառավարող արիստոկրատներն անցան Քսերքսեսի կողմն ու դրանով պարսիկների համար ճանապարհ բացեցին դեպի Ատտիկա: Թեսպես ու Պլատեա քաղաքները հանձնվեցին կրակին այն բանի համար, որ նրանց բնակիչները կռվել էին պարսիկների դեմ:

Հունական նավատորմը, ստանալով Թերմոպիլի մոտ ճակատամարտի ելքի լուրը, նահանջեց դեպի Ատտիկայի ափերը ու կենտրոնացավ Սալամիս կղզու մոտ: Երբ թշնամին մոտեցավ Ատտիկային, նրա բնակչությունը Թեմիստոկլեսի առաջարկով հեռացավ հայրենիքից ու նավերով փոխադրվեց մասամբ Սալամիս ու էգինա կղզիներ, մասամբ էլ՝ պելոպոնեսյան Տրոյզենե քաղաքը: Պարսիկները գրավեցին Ատտիկան, թալանեցին ու հրկիզեցին Աթենքը՝ հեշտությամբ հաղթահարելով Ակրոպոլիսը պաշտպանելու փորձ ձեռնարկած մի բուռ կամավորների դիմադրությունը: Նրանց նավատորմի դը շարժվեց Միջին Հունաստանի ափերի մոտով ու կենտրոնացավ Փալերոնի ծոցում: Քսերքսեսը Պարսկաստան ուղարկեց հաղթանակի լուրը, ու Սուսայում (Շոշ) կազմակերպվեց տոնահանդես՝ ի պատիվ Աթենքի գրավման:

Այն ժամանակ, երբ պարսիկները ջախջախում էին Ատտիկան, սպարտացիներն ու նրանց պելոպոնեսյան դաշնակիցները զորքեր կենտրոնացնելով Իսթմոսում, եռանդուն ամրացում էին պարանոցը: Նրանք նաև պահանջում էին դաշնակցային նավատորմը Սալամիսից շարժել դեպի Իսթմոս՝ դրանով փակ կործանման մատնելով կղզի տեղափոխված աթենական բնակչությանը:

Թեմիստոկլեսը զուր պնդում էր, որ նոր ծովային ճակատամարտը պետք է տրվի Նեղ, ստորջրյա քարերով ու ծանծաղուտներով հռչակված Սալամիսի նեղուցում, որը լավ ծանոթ էր հույն նավավարներին ու անհայտ էր պարսկական նավերի հրամանատարներին: Պելոպոնեսցիները հայտնեցին, որ իրենք մտադիր են նահանջելու: Այն ժամանակ Թեմիստոկլեսը Քսերքսեսի մոտ ուղարկեց իր ստրուկին, որն իրեն դավաճան ձևացնելով, հաղորդեց հույների Իսթմոս փախչելու մտադրության մասին: Նա խորհուրդ տվեց պարսից արքային շրջապատել հունական նավատորմը Սալամիսի ծովախորշում: Հաջողությունից արբեցած Քսերքսեսը, որը ձգտում էր շուտափույթ ավարտել պայքարը, անմիջապես գիշերը շարժեց

իր նավատորմիդը ու փակեց հունական նավախումբը Սալամիսի ծովախորշում: Մարտը Սալամիսի անձուկ նեղուցում դարձավ անխուսափելի: Թագավորն այնչափ համոզված էր հաղթանակի մեջ, որ կարգադրեց ոչ հեռու գտնվող քլրի վրա դնել գահ, որի վրա նրստած նա կարող էր հետևել կովի լնթացքին:

Մ. թ. ա. 480 թ. սեպտեմբերի 20-ին 370 տրիերաներից բաղկացած հունական նավատորմիդը Սալամիսի նեղուցում գրոհ ձեռնարկեց այն շրջափակած պարսկական նավերի վրա: Ծակատամարտի մասնակից, հռչակավոր աթենական ողբերգակ էսքիլեսը իր «Պարսիկներ» ողբերգութունում այսպես է նկարագրում մարտի սկիզբը.

Հանկարծ տարածվեց հելլենների աղմկալի ճիչը,  
Որպես երգի ձայն ու միաժամանակ ուժգին  
Նրանց ժայռերի արձագանքն ի պատասխան ձայնակցեց:  
Ու սարսափը պատեց բարբարոսներին բոլոր,  
Որոնք հուսախար եղան. ոչ թե փախուստի  
Պատրաստվելով երգում էին հելլենները պեանը  
Սրբադան, այլ խիղախորեն ճակատամարտ տենչալով,  
Շեփորը նրանց մոտ ամեն ինչ մարտի արթնացրեց:  
Ու միաբանած, նրանք հանկարծակի ալիքները ծովի  
Փրփրեցրին հարվածներով իրենց թիակների:  
Օվ շուտով նրանց բոլորին մենք կարող էինք տեսնել:  
Նրանց թևն աջ<sup>3</sup> ընթանում էր առջևից,  
Կարգը պահպանելով, իսկ հետևից նրա  
Ողջ նավատորմն էր շտապում, ու լսվում էր նույն պահին  
Ճիչը բարձր՝ «Առաջ, Հելլադայի որդիք,  
Փրկեք հայրենիքը, փրկեք կանանց,  
Երեխաներին ձեր, տաճարները հայրական աստվածների,  
Դամբարանները նախնիների՝ այժմ մարտի հանուն ամենի»:

(«Պարսիկներ», ոտանավորներ 389—406)<sup>4</sup>:

Դեմ առնելով քարերին ու ավազներին, պարսկական ծանր նավերը կործանվում էին թեթևորեն խուսանավող հունական տրիերաների հարվածներից: Իրիկնադեմփն պարսկական նավերը կամ ջրասույզ արվեցին, կամ փախան մարտի վայրից: Պարսկական նավատորմի պարտութունը լիակատար էր: Վախենալով դեպքերի հետագա անբարենպաստ զարգացումից, հատկապես աշնանային վատ եղանակները սկսվելու պատճառով, Քսերքսեսը վերադարձավ Ասիա՝ Հունաստանում պարսկական բանակի հրամանատար թողնելով Մարգոնիոսին:

<sup>3</sup> Աջ թևը կազմում էին աթենական նավերը:

<sup>4</sup> Տողացի թարգմ. Գ. Հարությունյանի:

Սալամիսյան ճակատամարտը վճռական նշանակութիւն ունեցավ հուլն-պարսկական պատերազմների հաջորդ տարվա ամբողջ ընթացքի համար: Պարսկական նավատորմը ջախջախվեց բաց ճակատամարտում: Հուլնները վստահութիւն ձեռք բերեցին իրենց ուժերի հանդեպ: Քսերքսեսի մեկնումը Ասիա ու պարսկական ցամաքային ուժերի դրան հաջորդած նահանջը՝ Թեսալիայում ձմեռելու համար, կարծես հաստատում էին, որ իրադարձութիւնների ընթացքում բեկում է սկսվել: Պարսիկների նահանջից հետո աթենացիները վերադարձան Ատտիկա ու սկսեցին վերականգնել Աթենքն ու այլ բնակավայրեր: Սպարտացիները Իսթմոսից հեռացրեցին իրենց զորքերն ու արձակեցին դաշնակիցների աշխարհագորք:

Պատերազմական գործողութիւնները վերսկսվեցին մ. թ. ա. 479 թ. գարնանը: Մարդոնիոսի՝ թեսալյան ու թերեյան ջոկատներով ուժեղացրած բանակը կրկին գրավեց Ատտիկան: Աթենացիները նորից ստիպված էին փախուստի դիմել Սալամիս կղզի, բայց սպարտացիներն ու նրանց պելոպոնեսյան դաշնակիցները հանգիստ նստած էին Իսթմոսի ամրութիւնների հետևում:

Պելոպոնեսցիների ուխտադրժութիւնից վրդովված աթենացիները Պլատեայի ու Մեգարայի բնակիչների հետ միասին դեսպանութիւն ուղարկեցին Սպարտա ու պահանջեցին սպարտացիներից անհապաղ զորքեր ուղարկել Միջին Հունաստան, սպառնալով, որ հակառակ դեպքում հաշտութիւն կկնքեն պարսիկների հետ: Հակապարսկական միութիւնից Աթենքի դուրս գալու վտանգը միայն ստիպեց սպարտական զորքերին արշավանք սկսել: Նրանց երևալը Միջին Հունաստանում հարկադրեց Մարդոնիոսին մաքրել Ատտիկան ու նահանջել Բեոպտիա: Սակայն սպարտական զորահրամանատար Պալսանդիասը վճռական ճակատամարտի չէր ձգտում: Նա մի քանի անգամ փոխեց դիրքերը՝ ցանկանալով ամեն կերպ խուսափել ավելորդ կորուստներից:

Մարդոնիոսը, տեսնելով սպարտական զորապետի տատանումները, մ. թ. ա. 479 թ. հարձակվեց հոնական զորքերի վրա Պլատեայի ավերակների մոտ, սակայն ջախջախվեց ու սպանվեց մարտի դաշտում: Հուլնները գրավեցին պարսկական ճամբարը՝ վերցնելով հսկայական ավար ու մեծ թվով ռազմագերիներ: Պարսկական զորքերի մնացորդները փախան Հունաստանից:

Պլատեայի ճակատամարտի հետ համարյա միաժամանակ դաշնակցային հունական նավատորմը՝ սպարտական թագավոր Լեոտիքիդեսի ու աթենացի Քսանթիպոսի գլխավորութիւնով մոտեցավ Միկալե հրվանդանին ու հարձակվեց պարսկական նավատորմի վրա: Հոնիական ցեղակիցների՝ հուլնների կողմը անցնելու շնորհիվ ճա-



կատամարտը Միկալեի մոտ ավարտվեց պարսկական նավատորմի ու զորքի ըհակատար ջախջախումով: Եթե Պլատեայի ճակատամարտի արդյունքը եղավ Եվրոպական Հունաստանի ազատագրումը, ապա Միկալեի ճակատամարտը նպաստեց Փոքր Ասիայի ծովափնյա քաղաքների ազատագրմանը պարսկական լծից: Հույները ամենուրեք հարձակման անցան ու նեղում էին պարսիկներին: Քսերքսեսի փորձը՝ նվաճելու Եվրոպական Հունաստանը, լիովին ձախողվեց:

#### ԴԵԼՈՍՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀՈՒՅՆ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆԸ

Մ. թ. ա. 479 թ. վերջում հունական նավատորմը Քսանթիպոսի հրամանատարությամբ շարունակում էր փր հարձակողական գործողությունները: Հույները վերցրեցին Մեստոսը Հելլեսպոնտոսի ափին ու մաքրեցին պարսիկներից Եվբսիդյան Պոնտոս տանող ծովային ուղիները: Գրավվեցին նաև Թրակիայի ափին գտնվող պարսկական հենակետերը:

Երբ կղզիների ու փոքրասիական քաղաքների հույները պատերազմի ընթացքում հարում էին հակապարսկական միությանը, սպարտական հրամանատարները վիրավորում էին նրանց ու ամեն կերպ հիշեցնում էին այն մասին, որ նրանք ենթարկվել էին պարսիկներին: Վերջիվերջո կղզային ու փոքրասիական հունական պոլիսների ներկայացուցիչները սկսեցին դիմել աթենական զորապետներին, խնդրելով, որ նրանք իրենց վրա վերցնեն հույների միացյալ ուժերի հրամանատարությունը: Մ. թ. ա. 478 թ. սպարտական էֆորոսները ետ կանչեցին իրենց հրամանատարներին, որից հետո Աթենքի ու պարսկական լծից ազատագրված կղզային և փոքրասիական քաղաքների միջև կնքվեց ռազմական դաշինք (սիմամաքիա), որի կենտրոնը հայտարարվեց Ապոլլոնի սուրբ կղզին՝ Դելոսը: Այդ միությունը հայտնի է Դելոսյան կամ Աթենական Առաջին ծովային միություն անունով:

Բոլոր դաշնակից համայնքները պարտավորվեցին պարսիկների դեմ պայքարելու համար ունենալ 100 տրիեդրաններից բաղկացած դաշնակցային նավատորմիղ ու 10000 հետևակներից և 1000 հեծյալներից կազմված ցամաքային բանակ: Միության գանձարանը գտնվում էր Դելոսում, ու այնտեղ պետք է հավաքվեր դաշնակիցների խորհուրդը: Միութենական զորքի ու նավատորմի հրամանատարությունը հանձնվեց աթենացիներին:

Ավելի խոշոր միութենական պոլիսները տրամադրում էին զինվորներ ու նավեր, իսկ մանր քաղաքները միայն դրամական միջոցներ էին մուծում միութենական գանձատուն:

Աթենական ստրատեգոս Արիստիդեսը, որին պատերազմի ժամանակ թույլատրվեց ժամկետից շուտ վերադառնալ աքսորից, դաշնակիցների հանձնարարություններ կատարեց դաշնակցային վճարումների (դրանք կոչվում էին փորոս) բաշխումը: Հստ երևույթին, նա դաշնակիցներից պահանջեց վճարել այն գումարները, որ նրանք առաջ վճարում էին պարսիկներին՝ իբրև տուրք: Սկզբում Արիստիդեսի այդ որոշումը արժանացավ դաշնակիցների լրիվ հավանությունը:

Հենվելով դաշնակիցների ուժերի վրա, աթենացիները եռանդուն հարձակում ձեռնարկեցին պարսիկների դեմ: Նրանք ազատագրեցին Բյուզանդիոնը: Միլտիադեսի որդի, տաղանդավոր զորավար Կիմոնը մ. թ. ա. V դ. 60-ական թվականների սկզբին ջախջախեց պարսկական նավատորմն ու ցամաքային զորքը Փոքր Ասիայի հարավային ափին, էվրիմեդոն գետի վրա:

Իրենց պայքարի սկզբնական շրջանում հույները մարտնչում էին հանուն սեփական ազատության ու անկախության: Այդ հանգամանքը հանդիսացավ նվաճված երկրների ռազմիկներից հարկադրանքի միջոցով հավաքագրված պարսկական բանակի նկատմամբ հույների հաղթանակի գլխավոր պատճառը: Մեծ նշանակություն ունեցավ նաև այն հանգամանքը, որ պարսկական արշավանքի նախօրյակին արդեն ավարտվել էր հունական ստրկատիրական պոլիսների ձևավորման ընթացքում տեղի ունեցած սոցիալական պայքարի սուր փուլը, և նրանք կարողացան դիմավորել ագրեսորին՝ տնտեսական ու քաղաքական տեսակետից լինելով ավելի ամուր: Սակայն երբ Քսերքսեսի հարձակումը ետ մղելուց ու պարսկական լծից փոքրասիական քաղաքները ազատագրելուց հետո հունական ստրկատերերն փրենք անցան հարձակման, ապա նրանք հաճախ ռազմական գործողություններ էին վարում ավար ու ստրուկներ զավթելու նպատակով, իսկ դա չէր կարող չփոխել հույն-պարսկական պատերազմների բնույթը դրանց եզրափակիչ փուլում: Այդ շրջանում դրանք վերածվեցին շահագործողների երկու խմբերի պայքարի՝ հանուն տիրապետության Միջերկրականի արևելյան մասում:

Հույն-պարսկական պատերազմները մեծ ազդեցություն գործեցին Եվրոպական Հունաստանի մի շարք մարզերի ներքին զարգացման վրա, առաջին հերթին, Ատտիկայում հասարակական հարաբերությունների դասական ստրկատիրական համակարգի վերջնական ձևավորման վրա: Այստեղ մեծ ռազմավար ու ստրուկների խոշոր զանգվածներ գրավելու, ինչպես և զորքերի ու նավատորմիղի հանդերձավորման համար անհրաժեշտ տարբեր արհեստագործական ի-

րերի նկատմամբ եղած մշտական պահանջարկի շնորհիվ բարենը-պաստ պայմաններ ստեղծվեցին տնտեսական գործունեության տարբեր բնագավառներում ստրկական աշխատանքի լայն շահագործման համար:

Վերջապես, հուլյն-պարսկական պատերազմները արմատական փոփոխություններ առաջացրեցին էգեյան ծովի մթողջ ավազանում տիրող քաղաքական իրադրության մեջ: Սպարտայի արտաքին քաղաքականության տատանումների հետևանքով խախտվեց նրա ու Պելոպոնեսյան միության միջև այդ գոյություն ունեցող քաղաքական գերակշռությունը: Աթենքը ոչ միայն գրավեց Սպարտային համահավասար դիրք հունական քաղաք-պետությունների համակարգում, այլև մ. թ. ա. V դ. կեսին ու երկրորդ կեսի ընթացքում ձգտում էր հաստատել իր գերիշխանությունը ամբողջ Հունաստանում:

### Կլուխ 9. ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ Մ. թ. Ա. V դ.

Մ. թ. ա. V դ. Հունաստանի տնտեսական կյանքի վերաբերյալ մեր տրամադրության տակ կան սոսկ կցկտուր, այդ շրջանի տնտեսական հարաբերություններն անհավասարաչափ լուսաբանող նյութեր: Հատկապես քիչ են դարի կեսերին վերաբերող աղբյուրները. դրանք փոքրաթիվ արձանագրություններ են: Հիմնական տեղեկությունները հաղորդում են մ. թ. ա. V դ. վերջին քառորդին ու ավելի ուշ շրջանին պատկանող աղբյուրները: Նրանցից պետք է նշել Կեղծքսենոֆոնյան «Աթենական պոլիտեան», Թուկիդիդեսի «Պատմությունը» (օր. Պելոպոնեսյան պատերազմում զոհված առաջին աթենական ռազմիկների թաղման ժամանակ Պերիկլեսի կողմից արտասանած ճառի վերապատումը), Քսենոֆոնի, Պլատոնի, Արիստոտելի գործերը, հեռորդների, հատկապես Կիսիասի ճառերը, Արիստոփանեսի կատակերգությունները և այլն, ինչպես նաև արձանագրություններն ու դրամները: Կարևոր տեղեկություններ կան ուշ հեղինակների՝ Ստրաբոնի, Պլուտարքոսի, Աթենայոսի մոտ: Միջերկրական ծովի տարբեր շրջաններում հայտնաբերված կարմրապատկեր սկահակների վրա արված նկարները, աշխատանքի գործիքների, շինությունների ու նյութական մշակույթի այլ հուշարձանների մնացորդները լրացնում ու կոնկրետացնում են գրավոր աղբյուրների տվյալները:

Պահպանված նյութերի համեմատական ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել հռչակավոր «հիստոնամյակի» (մ. թ. ա. 479—431 թթ.) դասական Հունաստանի ժողովման շրջանի ու նրան անմիջականորեն հաջորդող տարիներ-

րի տնտեսութեան մասին: Մեզ հատկապես լավ է հայտնի Աթենքի տնտեսութեանը, որը ամենաառաջավորն էր դասական Հունաստանում, ու նրա լուսի ներքո՝ Աթենական ծովային միութեան մեջ մշտնոգ պոլիսների տնտեսական կյանքը: Բավարար շահով մենք տեղյակ ենք նաև Սպարտայի ու Պելոպոնեսյան միութեան մյուս անդամների տնտեսութեանը, Թեսալիայի, Կրետեի, Իւլչպես և Սիկիլիայի ու Մերձսևծովյան երկրամասի տնտեսութեանը:

«Հիսունամյակի» շրջանում Հունաստանի տարբեր մարզերը առաջվա նման զարգանում էին անհամաչափորեն: Պահպանվում էին մեծ թվով զուտ հողագործական մարզեր: Սակայն դրա հետ մեկտեղ հողագործական հիմքի վրա արագ զարգանում էին առևտրաարհեստավորական պոլիսները, որոնցից Բալկանյան Հունաստանում գլխավորներն էին Աթենքն ու Կորնթոսը:

\* \*

Հուլյն-պարսկական պատերազմների ընթացքում ու անմիջականորեն դրանց ավարտից հետո կատարվեց հունական աշխարհի տնտեսական կենտրոնների դերերի փոփոխումը: Ավերվեց Միլետոսը, անկում ապրեցին այլ փոքրասիական հունական պոլիսները: Հուլյների համար որոշ ժամանակով փակվեց մերձավոր արևելյան պարսկական շուկան: Դրա հետևանքով ընկավ հնուց Լյուդիայի ու Փոքր Ասիայի այլ շրջանների հետ առևտուր անող փոքրասիական հունական կենտրոնների տնտեսական նշանակութեանը:

Հունաստանին մեծ աղետներ բերած հուլյն-պարսկական պատերազմների առաջին շրջանից հետո Բալկանյան Հունաստանի տնտեսութեանը, այնուամենայնիվ, ստացավ հետագա զարգացման լիցք: Ստրկատիրական տնտեսութեան աճը հատկապես ակնհայտ էր Աթենքում, Կորնթոսում, Մեգարայում, էգինա կղզում ու էգեյան ծովի այլ կղզիներում: Փոքրասիական շուկայի կորուստը հատուցվեց Հյուսիսային Մերձսևծովյան շրջանի հունական քաղաքների զարգացումով. այստեղ գաղթեցին փախստականներ Փոքր Ասիայից, մասնավորապես՝ Միլետոսից: Մ. թ. ա. V դ. վերջին Պանտիկասոսը վերածվեց հելլենական աշխարհի հյուսիսարևելյան մասի խոշորագույն տնտեսական կենտրոնի: Աթենքը ղեկավար դիրք գրավեց Հելլադայի տնտեսութեան մեջ ու փորձում էր ամրապնդել իր առևտրական կապերը Հյուսիսային Մերձսևծովյան մարզի հետ: Կորնթոսը ուժեղացող տնտեսական ազդեցութեան էր գործում արևմուտքում՝ հարավիտալական հունական գաղութներում ու Սիկիլիայում: Հյուսիսաֆրիկյան փյունիկյան տերութեան՝ Կարթագենի հարձակումը հաջողութեամբ ետ մղած Մեծ Հունաստանի ու Սիկիլիայի

քաղաքների տնտեսական զարգացումը հանգեցրեց խոշոր տնտեսական կենտրոնի առաջացմանը Սիրակուզայում:

Ստրկատիրական տնտեսության աճին Հին Հունաստանում մ. թ. ա. V դ. կեսին նպաստում էր ստրուկների թվի մեծացումն ու նրանց հարաբերական էժանությունը, մի հանգամանք, որը կապված էր հույն-պարսկական պատերազմների երկրորդ շրջանում ռազմագերիներ ձեռք բերելու հետ: Միայն Եվրիմեդոնի մոտ Կիմոնի՝ պարսկական նավատորմի նկատմամբ տարած հաղթանակից հետո ստրկական շուկաներ բերվեցին ավելի քան 20000 գերիներ: Հույների ձեռքն ընկան ոչ միայն ստրուկներ, այլև պարսիկներից՝ Բալկանյան Հունաստանից ու Քրակիայից նրանց նահանջի ժամանակ, ինչպես նաև Փոքր Ասիայում խլված շատ մեծ ավար: Այդ ավարի շնորհիվ մասամբ հատուցվեցին պատերազմի ժամանակ կրած կորուստներն, ու շատ քաղաքացիներ ու մետոյկներ ստացան ստրուկներ գնելու և ստրկական արհեստավորական արհեստանոցներ կազմակերպելու միջոցներ: Սակավահող աթենացիների ու այլ պոլիսների բնակիչների մի մասը, որոնց տնտեսությունները սնանկացել էին պարսկական արշավանքի ժամանակ, համալրեց ազատ արհեստավորների շարքերը:

Մ. թ. ա. V դ. Ատտիկան ու Աթենքը դարձան ոչ միայն Բալկանյան Հունաստանի, այլև ամբողջ հին հունական աշխարհի ամենակարևոր առևտրաարհեստավորական կենտրոնները: Դրանք միաժամանակ առավել զարգացած ստրկատիրական տնտեսության կենտրոններ էին՝ դրանց հատուկ բոլոր բնորոշ գծերով: «Հիսունամյակի» ժամանակափուլի Ատտիկային ու Աթենքին, ստրուկների անընդհատ աճող շահագործման հետ մեկտեղ, հատուկ էր ազատ աշխատանքի գերակշռությունը գյուղատնտեսության մեջ ու ստրկական ու ազատ աշխատանքի գոյակցությունը արհեստի մեջ: Ատտիկական արտադրությունում դեռևս մեծ նշանակություն ունեւ մետոյկների աշխատանքը: Միայն ստորգետնյա հանքերում ու քարահանքերում գրեթե բացառապես օգտագործվում էր ստրուկների աշխատանքը: Ամփոփելով հին հասարակության տնտեսությանը վերաբերող աղբյուրների նյութերը, Կ. Մարքսը գրում է. «Ինչպես մանր գյուղացիական տնտեսությունը, այնպես էլ անկախ արհեստային արտադրությունը... կազմում են կլասիկ հասարակության տնտեսական հիմքը նրա գոյության ամենածաղկուն շրջանում, երբ նախաավերջական արևելյան համայնական սեփականությունը քայքայվել էր արդեն, իսկ ստրկությունը դեռ չէր կարողացել քիչ թե շատ զգալի շահեկրով տիրանալ արտադրությունը»<sup>4</sup>: Սակայն քանի որ արտադր-

<sup>4</sup> Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, գիրք առաջին, 1954, էջ 352:

րության ստրկատիրական եղանակի զարգացման պրոցեսը Հունաստանի առաջավոր ատևտրաարհեստավորական կենտրոններում ընթանում էր արագ, ապա դասական հասարակության ծաղկումն էլ կարճատև եղավ:

ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴՐՈՒԹՅՈՒՆ ՈՒ  
ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Ստրուկներ ձեռք բերելու աղբյուրներ էին հաջող պատերազմները: Գերիներին վաճառում էին միանգամից, մեծաքանակ, անմիջապես: Ճակատամարտից հետո, զորքերի դասավորության գոտում: Նրանց գնում էին վաճառականները, որոնք գումակում հատկապես գնում էին զորքի հետևից: Դրանից հետո գերիներին բերում էին ստրկական շուկաներ, որպիսիք շատ կային հունական քաղաքներում: Կ. Մարքսը գրում էր՝ «Ստրուկը իր աշխատանքային ուժը չի վաճառում իր ստրկատիրոջը, ինչպես որ եզր իր աշխատանքը չի ծախում գյուղացուն: Ստրուկը իր աշխատանքային ուժի հետ միասին միանգամայն ընդմիջտ վաճառված է իր տիրոջը: Նա՝ ապրանք է, որը կարող է մի սեփականատիրոջից անցնել մյուսի ձեռքը»<sup>5</sup>:

Մ. թ. ա. V դարում ու հետագա ժամանակներում ստրուկների համահունական նշանակություն ունեցող գլխավոր շուկաները գրտնրվում էին Աթենքում, Քիոս ու Դելոս կղզիներում: Վաճառականները ստրուկներին վաճառելու համար սովորաբար նրանց ցուցադրում էին մերկ վիճակում, գովաբանում էին իրենց, հույն ստրկատերերի արտահայտությամբ, «մարդոտն» ապրանքը (անդրապոգա): Գնորդները զննում էին ստրուկներին ինչպես անասունների կամ ցանկացած այլ վաճառվող իր: Մ. թ. ա. V դ. կեսերին ստրկական վիճակի մեջ էին ընկնում սովորաբար ոչ թե հույները, այլ նրանց հարևան ժողովուրդների ու ցեղերի ներկայացուցիչները՝ թրակիացիներ, իլլիրացիներ, սկյութներ, Փոքր Ասիայի տարբեր շրջանների բնակիչներ: Դարասկզբին ոազմագերի հույներին փոխանակում էին թշնամու գերված զինվորականների հետ կամ նրանց փրկագնում էին հայրենի պոլիսները: Սակայն ժամանակի ընթացքում ստրուկ-հույների թիվը մեծացավ, հատկապես սկսած մ. թ. ա. V դ. երկրորդ կեսից, Պելոպոնեսյան պատերազմի շրջանից (տե՛ս էջ 283): Հայտնի են դեպքեր, երբ նվաճված քաղաքի բոլոր տղամարդկանց ոչնչացնում էին, իսկ կանանց ու երեխաներին դարձնում էին ստրուկներ: Աթենական զորքի պարտությունից հետո Սիկիլիայում (մ. թ. ա. 413 թ.) մի քանի հազար ոազմագերի աթենացիներ

<sup>5</sup> Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտրի երկեր, հ. 1, էջ 202:

հաղթողների կողմից օգտագործվեցին որպես ստրուկներ քարհանքերում, աթենացիների մյուս մասը վաճառվեց ստրկական շուկաներում տեղական հույներին ու անգամ կարթագենցիներին:

Հունական շատ պոլիսներում պարտային ստրկությունը մ. թ. ա. V դ. արդեն վերացվել էր, սակայն այն շարունակում էր գոյատևել հետամնաց գյուղատնտեսական շրջաններում: Ստրկուհիների երեխաները տերերի գույքի մեջ համարվում էին «անասունների բերք»: Մարդկանց դարձնում էին ստրուկ նաև դատական վճռի համաձայն, իբրև պատիժ: Աթենքում ընդունված էր ստրկության վաճառել նրանց, ում քաղաքացիական իրավունքները ստուգող հատուկ հանձնաժողովը ճանաչում էր աթենական քաղաքացիությունը ապօրինաբար լուրացրած անձինք:

Հունարեն լեզվում կալին ստրկական կացությունն արտահայտող մի քանի տերմիններ: Դրանք արտահայտում էին այն տարբերությունները, որոնք կային ստրուկների ձեռք բերման եղանակների ու արտագրությունում, կենցաղում և պետական ծառայությունում նրանց օգտագործելու մեթոդների մեջ: Բացի «ստրուկ», հունարեն՝ «դուլոս» ընդհանուր տերմինից, հույները տարբերում էին տնային ստրուկներին, գյուղատնտեսության մեջ զբաղված ստրուկներին, արհեստավորական աշխատանոցներում ու լեռնային գործում շահագործվող ստրուկներին: Վերջիններիս կյանքը հատկապես ծանր էր: Ատտիկայում ու Լավրիոնի լեռներում անտիկ ժամանակներից արծաթի ու կապարի պահպանված հանքերի բովանդեքներն ու խավանցքները փացահայտում են ստրկական աշխատանքի հրեշավոր շահագործման պատկերը: Ստրուկ-հանքափորները, մշտապես գլտնրվելով գետնի տակ, աշխատում էին կավե միացող կանթեղների աղոտ լույսի ներքո ծոված կամ պառկած վիճակում, քանի որ ստորերկրյա անցքերը ցածր ու նեղ էին: Աշխատանքի գործիքներն էին մուրճը, սեպը, բրիչն ու բահը: Զարդած հանքաքարը ստրուկ-բռնակիրները պարկերով ու զամբյուղներով հանում էին գետնի երեսը 35-ից մինչև 119 մետրի հասնող խորությունից, մազլցելով նեղ հանքահորերի պատերի մեջ փորած փոսե աստիճաններով: Հանքանյութով լցված զամբյուղներն ու պարկերը բարձրացնելու համար օգտագործվում էին նաև ճուպաններ: Գետնի վրա, հանքահորերի մոտ, հատուկ նախատեսված տեղերում ստրուկները առանձնացնում էին ապարի առավել շատ հանքաքար պարունակող կտորները: Հետո հանքաքարի կտորները մանրացնում ու աղում էին քարե հավանգներում ու աղորիքներում: Աղորիքները ևս շարժման մեջ էին դնում ստրուկները, երբեմն՝ էջերը: Դրանից հետո հանքաքարը լը-

վանում էին ու ձուլում: Ստրուկներին դաժանորեն պատժում էին ամենաչնչին անճշտության համար:

Լավրիտնի հանքերը պատկանում էին Աթենական պետությանը: Նա հանքերը առանձին հատվածներով վարձակալության էր հանձնում աթենական քաղաքացիություն ունեցող ձեռնարկատերերին: Ընդունված այդ կարգից բացառությունները հազվադեպ էին: Առանձին ձեռնարկատերեր իրենց ստրուկներին վարձակալության էին հանձնում հանքերում աշխատելու համար. դա նրանց տալիս էր զգալի եկամուտ: Աթենացի հայտնի հարուստ Նիկիասը սիստեմատիկաբար վարձակալության էր տալիս իր 1000 ստրուկներին (մ. թ. ա. V դ. երկրորդ կես): Հանքերի տարածքի մի մասը շահագործվում էր անմիջականորեն պետության կողմից: Այստեղ գերազանցապես աշխատում էին պետական ստրուկները:

Ստրուկները լայնորեն շահագործվում էին արհեստի մեջ: Ատտիկայում ու Աթենքում, Կորնթոսում, Մեգարայում, Պանտիկապոնում, Սիրակուզայում ու այլ ստրկական և արհեստավորական պոլիսներում կային ստրկական աշխատանքի վրա հիմնված շատ արհեստանոցներ—երգաստերիոններ: Այստեղ վերակացուների կամ իր իսկ տերերի խիստ հսկողության ներքո, գրեթե առանց հանգստի աշխատում էին ստրուկները: Նրանց տալիս էին ձեռքի աշխատանքի կոպիտ, պրիմիտիվ գործիքներ, քանի որ միանգամայն շահագրգռված չլինելով սեփական աշխատանքի արդյունքների մեջ, ստրուկները չէին ցանկանում յուրացնել շատ թե քիչ բարդ գործիքների օգտագործման մեթոդները: Երգաստերիոններում աշխատանքի պրոցեսների բաժանում այդ ժամանակ համարյա չկար: Հունական աշխարհում առավել զարգացած էին փոքր արհեստանոցները, ուր աշխատում էին տերը և երկու-երեք ստրուկներ: Սակայն հանդիպում էին նաև ավելի մեծ երգաստերիոններ, որտեղ աշխատում էին 10 և ավելի ստրուկներ: Մ. թ. ա. V դ. վերջում առանձին երգաստերիոնների շափերը մեծացան: Օրինակ, այն ժամանակի համար շափազանց մեծ էր վահաններ արտադրող արհեստանոցը, որը պատկանում էր հոետոր Լիսիասին ու նրա եղբորը: Ըստ երևույթին, այնտեղ աշխատում էին 120 ստրուկներ: Սակայն տեղեկություններ չեն պահպանվել նման շափեր ունեցող այլ երգաստերիոնների մասին: Հավանաբար դրանք խիստ հազվադեպ էին:

Ստրուկների շահագործումը Աթենքում պայմանավորված էր աթենական ստրկատերերի որոշակի տնտեսական շահերով, որոնք Մարքսը բնութագրել է հետևյալ կերպ. «Այն երկրներում, ուր ըստրուկներ են ներմուծվում, ստրկատիրական տնտեսության կանոնը հետևյալն է. ամենաիրական տնտեսումն այն է, որ մարդ-անասու-



նից (human cattle) ըստ հնարավորին քիչ ժամանակում աշխատանքի որքան կարելի է մեծ մասսա քամվի»<sup>6</sup>: Այդ տեսակետից նպատակահարմար չէր սոսկ ծեծել ստրուկին, քանի որ այդ դեպքում կիջներ նրա աշխատունակությունը: Այս պատճառով աթենական ստրկատերերը, պատժելով ստրուկներին նրանց անհրաժեշտ շահով ոչ եռանդուն աշխատանքի համար, շղթայակապում էին նրանց, նստեցնում բանտ, այլ ոչ թե պարզապես ենթարկում ծեծի: Դրա հիման վրա դեռևս անտիկ ժամանակներում ծագեց առասպել «դեմոկրատական» Աթենքում Հին Հունաստանի այլ պոռթիսների համեմատությամբ ստրուկների ավելի բարվոք վիճակի մասին: Դա, անշուշտ, չէր համապատասխանում իրականությանը: Ստրուկների կանխամտածված սպանության արգելքը Ատտիկայում արդեն մ. թ. ա. V դ. նույնպես պայմանավորված էր Աթենքի ստրկատիրական հասարակության տնտեսական զարգացման բարձր մակարդակով: Իսկ ծեծի հետևանքով ստրուկի ոչ կանխամտածված սպանությունը ընդհանրապես չէր համարվում հանցագործություն: Ծեծի ժամանակ ստրուկին տանջամահ արած տերը փաստորեն պատասխանատվություն չէր կրում: Իսկ եթե սպանվում էր այլ անձին պատկանող ստրուկ, ապա միայն հարուցվում էր սպանված ստրուկի տիրոջը՝ նրա կողմից կրած կորստի համար նյութապես հատուցելու հարցը: Ստրկատիրական հարաբերությունների տիրապետության պայմաններում ստրկատերը դատարանում ստրուկի կանխամտածված սպանությունը հեշտությամբ կարող էր ներկայացնել իբրև ոչ կանխամտածված սպանություն: Համարվելով առարկաներ, իրեր, այլ ոչ մարդիկ, ստրուկները իրավական անձեր չէին. նրանք իրավունքի օբյեկտներ էին, այլ ոչ սուբյեկտներ: Նրանք չէին կարող ինքնուրույն ելույթ ունենալ դատարանում: Եթե ծագում էր ստրուկի՝ իբրև վկայի ցուցմունքները լսելու անհրաժեշտությունը, ապա անպայման պահանջվում էր ենթարկել նրան խոշտանգումների: Ստրուկի այն վկայությունները, որոնք ձեռք էին բերվել առանց նրան խոշտանգելու, համարվում էին անվավեր: Ստրուկները, որպես կանոն, չունեին որևէ սեփականություն, զրկված էին ամուսնանալու, ընտանիք կազմելու իրավունքից: Ստրուկը սովորաբար չունեի անուն, այլ ավելի հաճախ կրում էր տիրոջից ստացած մականունը: Ստրուկներին հաճախ կոչում էին այն ժողովուրդների անունով, որոնց նրանք պատկանում էին, օրինակ, թրակիացի, կամ՝ ըստ նրանց կատարած աշխատանքի, օրինակ՝ կոշկակար, խոհարար և այլն:

<sup>6</sup> Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 280:

Գլուղատնտեսական ստրուկների դրուժյունը քիչ բանով էր տարբերվում արհեստում շահագործվող ստրուկների վիճակից: Հատկապես դաժան էր ստրուկների շահագործումը խոշոր տնտեսություններում, որոնք կանոնավոր կերպով արտադրում էին շուկայում վաճառելու համար նախատեսված մթերքներ: Ստրուկներին վարձակալության էին հանձնում կավրիոնի հանքերում, Ակրոպոլիսի տաճարների շինարարության վրա, նավերում՝ որպես թիավարներ, և այլ տեղերում աշխատելու համար:

Արտադրությունում ու առևտրում օգտագործվող ստրուկների մեջ կար մի խումբ, որը մյուսների համեմատությամբ գտնվում էր ավելի տանելի պայմաններում: Դրանք այն ստրուկներն էին, որոնք ապրում էին տերերից անջատ և ինքնուրույն զբաղվում արհեստներով և մանր առևտրով: Տիրոջ կամքով, եթե նա հարմար էր գրտնում, այդպիսի ստրուկներին թույլատրվում էր ունենալ սեփական փոքր գույք, անգամ ընտանիք: Դրա համար նրանք տիրոջը վճարում էին վերջինիս կողմից սահմանված որոշակի գումար, որը հունարեն կոչվում էր «ապոֆորա»: Սակայն փրավաբանորեն ստրուկը, նրա ընտանիքն ու ունեցվածքը կազմում էին ստրկատիրոջ սեփականությունը, և վերջինս ցանկացած պահին կարող էր խլել այդ ամենն ու ապոֆորա վճարող ստրուկին ուղարկել երգաստերիոն կամ որևէ այլ աշխատանքի՝ ըստ իր հայեցողության: Ապոֆորայի ձևին պատկանող ստրուկների առաջացումը կարելի էր դիտել որպես դասական ստրկատիրական պոլիսի պայմաններում ստրուկների շահագործման գոյություն ունեցող համակարգի ճգնաժամի առաջին ախտանշաններ:

Շատ ստրուկներ աշխատում էին իբրև տնային ծառաներ: Շատ թե քիչ կարողություն ունեցող ազատ աթենացիներն իրենց կյանքը չէին պատկերացնում առանց ստրուկ-ծառաների: Ամենահարուստ աթենացիներն ունեին մինչև 50 տնային ստրուկ-ծառաներ, միջին կարողության տեր մարդիկ՝ մի քանի ստրուկներ: Չպետք է մոռանալ, որ ստրուկները սովորաբար թանկ չէին: Մեծ գումարներ վրձարում էին միայն հատուկ վարժեցված կամ հատուկ շնորհք ունեցող ստրուկների համար:

Աթենքում առանձնակի դիրք էին գրավում պետական ստրուկները՝ ստորին պաշտոնյաները, բանտապահները, ոստիկանները: Ստրուկ-ոստիկանները, օրինակ, կոչվում էին սկյութներ և կրում էին սկյութական տարագույն «Սկյութներ» անունը, հավանաբար, ծագեց այն պատճառով, որ սկզբում ոստիկանները հավաքագրվում էին սկյութացի ստրուկներից: Աթենացիները գոհ էին, որ ստրուկ-ոստիկանները հստակորեն կատարում էին իրենց պարտականու-

թյունները: Ոստիկանների ծառայական եռանդը դժվար չէր հասկանալ: Չէ՞ որ նրանք կարող էին օրինական հիմքի վրա գործադրել ֆիզիկական ուժ՝ կարգը խախտող ազատների նկատմամբ: Ստրուկոստիկաններն ունեին մտրակներ և փրավասու էին օգտագործել դրանք: Այդպիսի պետական ստրուկներն ապրում էին ինքնուրույն ու պետութունից ստանում էին փոքր ուճիկ: Սակայն մասնավոր սեփականատիրական ստրուկների թվի համեմատ պետական ըստրուկները շատ քիչ էին, ու միայն նրանց մի մասն ուներ արտոնյալ դիրք: Հանքերում ու քարհանքերում, շինարարության վրա, նավերում որպես թիավարներ աշխատող պետական ստրուկների վիճակը ոչնչով չէր տարբերվում մասնավոր սեփականատիրական ըստրուկների ծանր դրությունից:

Անհնադին է ստույգ որոշել ստրուկների ընդհանուր թիվը Հունաստանում մ. թ. ա. V դ., քանի որ այն ժամանակ նման հաշվումներ չէին կատարվում: Ուշ շրջանի հեղինակ Աթենայոսը, վկայակոչելով մ. թ. ա. III դ. վերջի—II դ. սկզբի գրող Կտեսիլլեսին, հաղորդում է, որ ըստ մ. թ. ա. 309 թ. անցկացրած մարդահամարի, Ատտիկայում կային 400000 ստրուկներ, 21000 քաղաքացիներ ու 100000 մետոյկներ: Ժամանակակից գիտնականների ընդհանուր կարծիքով ստրուկների թիվն իրականում ավելի նվազ էր, իսկ մ. թ. ա. V դարում պետք է լիներ ավելի քիչ: Այդպիսի հետևություն կարելի է հանգել նաև Թուկիդդեսի այն հաղորդումից, որ մ. թ. ա. 411 թ. Ատտիկայից 20000 ստրուկների, գլխավորապես արհեստավորների՝ սպարտացիների մոտ փախչելու հետևանքով կանգնեց գրեթե ամբողջ աթենական արհեստավորական արտադրությունը: Համենայն դեպս, ելնելով տարբեր կողմնակի տվյալներից, վստահութամբ կարելի է ասել, որ Ատտիկայում մ. թ. ա. V դ. ստրուկների քանակությունը զգալիորեն գերազանցում էր ազատների թվին:

Ստրուկների ազատ արձակումը Հունաստանում քիչ էր տարածված: Ազատումը ձևակերպվում էր ստրուկին աստծուն ֆիկտիվ վաճառելու միջոցով: Սակայն ազատ արձակյալը պարտավոր էր ամբողջ կյանքի ընթացքում իր տիրոջը որոշակի ծառայություններ մատուցել: Ընդ որում, եթե տերը գտներ, որ ազատ արձակվածը անհրաժեշտ չափով լավ չէր կատարում իր պարտականությունները, ապա կարող էր նրան կրկին դարձնել ստրուկ: Որպեսզի ազատ արձակվածը կարողանար լրիվ ազատվել իր նախկին տիրոջ խնամակալութունից, կիրառվում էր հատուկ դատական արարողություն: Ազատ արձակվածը պետք է մեղադրեր տիրոջը իր հանդեպ գործած շարաշահումների մեջ ու ապացուցեր այդ մեղադրանքը դատախո-

սուձյան ժամանակ: Երբեմն նախկին տերն ու ազատ արձակվածը իրենք էին պայմանավորվում վերջինիս լիակատար անկախությունն ապահովելու նպատակով նման դատավարություն անցկացնելու մասին: Ընդ որում, պայմանավորվածության համաձայն, տերը կարող էր փր նախկին ստրուկից լրացուցիչ կաշառք ստանալ: Պահպանվել են մակագրություններ արծաթյա անոթների վրա, որոնք նվիրաբերել էին իրենց նախկին տերերի հանդեպ դատական պրոցեսը շահած ազատ արձակվածները: Հին հունական պատկերացումների համաձայն ստրուկը չէր կարող դառնալ լիիրավ ազատ քաղաքացի: Ազատ արձակվածները դասվում էին մետոյկների շարքը:

Ստրկատիրական տնտեսության վերը նկարագրված պատկերը բնորոշ էր Հին Հունաստանի տնտեսապես զարգացած պոլիսներին, Աթենքին, Կորնթոսին ու դրանց նմաններին, բայց մ. թ. ա. V դ. Հունաստանի մի շարք շրջաններում դեռ պահպանվում էին սպարտական հելոտիայի տիպին պատկանող ավելի թույլ զարգացած ստրկատիրական հարաբերություններ: Նման շրջաններում փոքր թիվ էին կազմում գնված ստրուկները, քանի որ ստրկացված վիճակում էր գտնվում տեղական գյուղական բնակչությունը, որը շահագործվում էր հին մեթոդներով: Հելոտներին առաջվա պես ենթարկում էին խիստ ու դաժան հսկողության, ենթարկում կրիպտենների, մի բան, որ այդ շրջաններում առաջացնում էր մասսայական ապստամբություններ: Ապրանքային հարաբերությունները թեև դանդաղորեն, սակայն թափանցում էին նաև այդ շրջանները: Ինչպես արդեն նշվեց, սպարտական կառավարությունը ստիպված էր թույլատրել սպարտացիներին փիտիդիաների համար սովորական բնավճարումներից բացի, կատարել նաև դրամական մուծումներ էգիսյան արծաթյա դրամներով:

Սպարտացիները նոր ստրուկներ չէին գնում հունական շուկաներում վաճառվող ռազմագերիներից, սակայն հույն-պարսկական պատերազմների երկրորդ շրջանում պերիոյկների տնտեսություններում տեղի էր ունենում ստրկատիրական հարաբերությունների որոշ զարգացում՝ գնված ստրուկների շահագործման հիման վրա:

Հունաստանի սոցիալական տեսակետից ամենահետամնաց շրջաններում՝ էտոլիայում, Ակարնանիայում և այլուր, դեռևս գերակշռում էր նահապետական ստրկությունը:

#### ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մ. թ. ա. V դ. երկրորդ կեսին ատտիկական ու առավել ևս բեոլտական ու արգոսյան գյուղացիների տնտեսությունը հիմնա-

կանում դեռ նատուրալ էր: Գյուղացիները ժառանգություն ստացած իրենց հողամասերը գրավ չէին դնում ու չէին վաճառում ընդհուպ մինչև Պելոպոնեսյան պատերազմի ժամանակաշրջանը: Մեզ բոլորից լավ հայտնի Ատտիկայում գյուղացիները մշակում էին խաղող, ձիթապտուղ, թուզ, աճեցնում էին բանջարեղեն, ցանում էին բակլա, գարի, ցորեն (հատկապես ընդարձակ էին ցորենի ցանքերը բերքաշատ Բեոլիտիայում), ունեին փոքր թվով ոչխարներ, խոզեր, բանող եղջերավոր անասուններ: Նրանք զբաղվում էին նաև որսորդությամբ: Ինչպես հիշատակվել էր, գյուղացիներից շատերը մանր ստրկատերեր էին, իրենց տնտեսութուններում ունեին մեկ-երկու ստրուկներ, որոնց հետ աշխատում էին դաշտում, այգում, բանջարանոցում: Դա երևում է, օրինակ, Արիստոփանեսի կատակերգություններից. նա լավ գիտեր ատտիկական գյուղացիների կյանքի պայմանները: Քանի որ հացահատիկը վաղուց էր ներմուծվում քարքարոտ Ատտիկա, ապա գյուղացիներն այն քիչ էին ցանում, քսկ ալյուրի պակասը լրացնում էին շուկայից գնելով. այդ մասին և՛ հաղորդում է Արիստոփանեսը: Գյուղացիները մշտապես Աթենքի շուկա էին բերում խաղող, մրգեր, բանջարեղեն, միս ու այլ մթերքներ, բայց իրենք աշխատում էին քիչ բան գնել: Հաճախ տեղական շուկայում մանր առևտուրը կատարվում էր ոչ թե գրամով, այլ պարզ ապրանքափոխանակությամբ: Ատտիկայում կային և ավելի խոշոր տնտեսութուններ: Սովորաբար ավելի մեծ հողակրտորների սեփականատերերն էին հին ավագանու հետնորդները, սակայն այդպիսի սեփականատերերի թվում կարող էին լինել նաև անդրծովյան առևտրի, վաշխառության շնորհիվ և արհեստանոցերգաստերիոններում աշխատող ստրուկների շահագործման միջոցով հարստացած քաղաքային դեմոսի առանձին ներկայացուցիչներ: Նոր հարուստները միշտ ձգտում էին կուտակված գրամներով ձեռք բերել հող՝ իրքև հարստության հիմնական ու ամենաապահով տեսակը: Դրանում ևս արտահայտվեց ստրկատիրական հասարակութայն նատուրալ բնույթը: Անգամ մ. թ. ա. V դ. վերջին նոր հարուստներ դեռ քիչ կային:

4. Մարքսը գրում է. «Ինքնուրույնորեն իրենց տնտեսութունը վարող գյուղացիների ազատ պարզելային սեփականութայն... ձևն իբրև իշխող, նորմալ ձև... կազմում է հասարակութայն տնտեսական հիմքը դասական հնագրի լավագույն ժամանակաշրջաններում»<sup>7</sup>:

<sup>7</sup> Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, II մաս, III գիրք, Երևան, 1949, էջ 345.

Դրամական հարաբերությունների դանդաղ թափանցումը գյուղ ու շատ գյուղական տնտեսների սնանկացումը մ. թ. ա. V դ. վերջին Պելուպոնեսյան պատերազմի ժամանակ ունեցավ այն հետևանքը, որ նրանք սկսեցին վաճառել իրենց հողակտորները: Հողի սեփականության անտիկ ձևը, որի համաձայն հողի սեփականատերեր կարող էին լինել միայն տվյալ քաղաք-պետության քաղաքացիները, սահմանափակում էր հողի առուծախը համաքաղաքացիների համեմատաբար ոչ մեծ շրջանակով: Հին հույներ, որպես կանոն, չէր կարող ձեռք բերել լիակատար հողային սեփականություն իր քաղաք-պետության սահմաններից դուրս: Մետոյկները սովորաբար կարող էին լինել միայն հողի վարձակալներ: Այդ փաստը ևս վկայում էր ստրկատիրական հասարակության նատուրալ հիմքի մասին, երևույթ, որը բնորոշ էր Հին Հունաստանին: Բայց քանի որ աղքատացող գյուղացիները, այնուամենայնիվ, վաճառում էին հողը, իսկ նրանց հարուստ համաքաղաքացիները գնում էին այն, ապա առաջացան ու հետզհետե բազմացան մի կողմից հողագուրկները, մյուս կողմից՝ միանգամից մի քանի հողակտորներ ունեցող հարուստ հողային սեփականատերերը: Հարուստների տիրույթներում աշխատում էին ստրուկներ, որոնց թիվը գնալով աճում էր: Եվ միայն աշխատանքի եռուն պահին տերերը այդ հիմնական աշխատուժը լրացնում էին ազատավարձու բատրակներով: Այսպիսով, մ. թ. ա. V դ. վերջին հողագործության մեջ ուժեղացավ ստրկատիրական տնտեսությունը, աճեց նաև դրա՝ որպես ձիթայուղի, խաղողի, գինու ու այլ մթերքների արհեստավորական վերամշակման համար հումք արտադրողի ապրանքայնությունը: Բացի այդ, խոշոր հողատերերը իրենց հողերի մի մասը առանձին կտորներով վարձակալության էին հանձնում: Արդեն մ. թ. ա. V դ. երկրորդ կեսին հողի սպեկուլյացիան դարձավ շահավետ գործ. այդ մասին հիշատակում է Քսենոֆոնը:

Անհրաժեշտ է նշել, որ զխավորապես շուկայի համար մթերքներ արտադրող խոշոր հողագործական տնտեսությունները Ատտիկայում հանդես եկան դեռ մ. թ. ա. V դ. կեսին: Այդպիսին էր, օրինակ, Աթենական պետության ղեկավար Պերիկլեսի ժառանգական կալվածքը: Սակայն Պլուտարքոսը պատմում է այդ կալվածքի մասին՝ որպես բացառություն կազմող ընդհանուր օրենքից: Պերիկլեսը, զբաղված լինելով պետական գործերով, ի վիճակի չէր անհրաժեշտ ուղադրություն նվիրել իր կալվածքին ու վերջինիս կառավարումը վստահեց հատուկ այդ նպատակով պատրաստված ստրուկ Եվանդեիտին, որը պարտավոր էր վաճառել կալվածքի ամբողջ արտադրանքը:

Աթենական Առաջին ծովային միութեան գոյութեան ժամանակ սնանկացած ու իրենց հողաբաժինները կորցրած ատտիկական շատ գյուղացիներ պետութեան ստանում էին կլերներ դաշնակիցների հողերում՝ այնտեղ կազմելով գյուղեր-կլերուքիաներ: Աթենական կլերուքիաների՝ դաշնակիցների հողերում աթենացիների այդ հենակետերի ռազմաքաղաքական նշանակութեան հանկախ, դրանց առաջացումը կապված էր այն բանի հետ, որ անգամ ստրկատիրական տնտեսութեան ծաղկման շրջանում ու անգամ այնպիսի մեծ ու տնտեսապես զարգացած պոռիսում, ինչպիսին էր Աթենքը, արտադրողական ուժերի ըստ էութեան ցածր մակարդակը մշտապես պահանջում էր Աթենքից արտաբնակեցնել ռազմատացած քաղաքացիներին: Օգտագործելով ծովային միութեան ղեկավարի իր դիրքը, Աթենքը գրավում էր դաշնակիցների տարածքի մի մասը, այնտեղ գաղութաբնակներ տեղավորելու համար: Դա ընդհարումներ էր առաջացնում աթենացիների ու դաշնակիցների միջև: Ապրանքային հարաբերութեան զարգացումը արտահայտվում էր նաև նրանում, որ կլերուքների մեջ հանդիպում էին հարուստ մարդիկ, որոնք շնորհակցում էին Աթենքից, վերցնում էին կլերներ՝ դրանք վաճակալութեան հանձնելու համար: Գաղութաբնակ-կլերուքների հողային տիրույթները երկարաժամկետ չէին: Նրանց դրութեանը պաշտպանվում էր սոսկ աթենական զենքի ուժով: Պելոպոնեսյան պատերազմի վերջում, Աթենական Առաջին ծովային միութեան թուլացման ու տրոհման շրջանում, կլերուքների ճնշող մասը պետք է վերադառնար Ատտիկա՝ ավելացնելով հողագուրկ ու սակավահող քաղաքացիների քանակը:

Ատտիկայում, ինչպես և մյուս հունական քաղաք-պետութեաններում, մասնավոր հողային տիրույթներից բացի, կային որոշ քանակութեամբ պետական հանդակներ՝ անտառներ, մարգագետիններ, վարելահողեր և այլն: Մ. թ. ա. V դարում գյուղատնտեսութեան մեջ տեղի ունեցող տնտեսական զարգացման այդ պրոցեսը, որը նկարագրվեց Ատտիկայի օրինակով, բնորոշ էր Հունաստանի սոցիալ-տնտեսական տեսակետից առաջավոր մարզերին: Տնտեսապես հետամնաց շրջաններում՝ Պելոպոնեսի մեծ մասում, Միջին Հունաստանի հյուսիսում՝ էտոլիայում, Հյուսիսային Հունաստանի արևելքում՝ Թեսալիայում մ. թ. ա. V դ. ևս հողի հիմնական մասը շարունակում էր մնալ ավագանու ձեռքում: Այստեղ մանր հողատերերը գտնվում էին ավել կամ պակաս կախման մեջ տեղական օլիգարխիաներից, որոնք օգտագործում էին նախնադարյան-համայնական նահապետական հարաբերութեան վերապրուկները իրենց տիրապետութեանը ամրապնդելու համար:

Արհեստավորական արտադրությունն Ատտիկայում, Կորնթոսում, Մեգարայում ու Հունաստանի այլ առևտրաարհեստավորական կենտրոններում մ. թ. ա. V դ. հասավ զգալի զարգացման ու խիստ տարբերակված էր: Պահպանում էր իր մեծ նշանակությունը գյուղատնտեսական հումքի տարբեր տեսակների վերամշակումը: Հաճախ հողատերն ինքը կամ մեկ-երկու ստրուկների օգնությամբ ճմլում էր իր խաղողը (գինի պատրաստելու համար) կամ տնային պայմաններում արտադրում էր յուղ իր մշակած ձիթապտուղներից: Եթե նա հարուստ մարդ էր, ապա ուներ իր երգաստեղծները, որտեղ աշխատում էին մի քանի ստրուկներ: Տեղում հավաքված ու մշակված գյուղատնտեսական արտադրանքը բերվում էր մոտակա շուկա: Ամփոփելով արտադրության այդ առանձնահատկությունները, Կ. Մարքսը գրում էր. «Անտիկ ու ֆեոդալական հասարակությունում, ինքը արդյունաբերությունը, դրա կազմակերպումն ու դրան համապատասխանող սեփականության ձևերը շատ թե քիչ չափով ունեն հողատիրական բնույթ»<sup>8</sup>:

Մանածագործությունը ևս Երկար ժամանակ պահպանում էր տնային արհեստի ձևերը. վերջինս մ. թ. ա. V դ. գոյակցում էր տարածում ստացած արհեստանոցների հետ: Մթերքների պահպանման ու փոխադրման համար անհրաժեշտ էր տարա: Հին Հունաստանում այն սովորաբար պատրաստում էին ամենաէժան ու տարածված նյութից՝ կավից: Կավե ամանեղենը միշտ պիտանի էր նաև տնային տնտեսությունում: Բրուտագործությունը, որը հնուց ի վեր ամենազարգացած արտադրություններից մեկն էր անտիկ աշխարհում, բարձր մակարդակի հասավ մ. թ. ա. V դ.: Սկահակներ պատրաստում էին Աթենքում, Կորնթոսում, էգեյան ծովի կղզիներում և Կրետեում, Պելոպոնեսում, Թեսալիայում, մերձսևծովյան ավազանի քաղաքներում, Սիկիլիայում ու Հարավային Իտալիայում: Ամենաթանկ, գեղարվեստորեն կատարած սկահակները պատրաստում էին ազատ վարպետները, քաղաքացիներն ու մետոյկները: Սակայն խեցեղենի նկատմամբ եղած պահանջարկը, որը մեծ էր անտիկ ժամանակների համար, հանգեցրեց այն բանին, որ մ. թ. ա. V դ. վերջին բառորդին հանդես եկավ սկահակների ստանդարտ նկարազարդումը՝ շտամպներ կիրառելու միջոցով: Ստանդարտային արտադրանքի պատրաստումը սովորաբար հանձնարարում էին ստրուկներին: Մ. թ. ա. V դ. գերակշռում են, այսպես կոչված, կարմրապատ-

<sup>8</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 12, стр. 733.



կեր ոճի սկահակները, որոնց արտադրման կարևորագույն կենտրոնն էր Ատտիկան:

Արտադրութեան պարզ, հիմնականում ձեռքի գործիքները՝ դանակներ, մանգաղներ և այլն, կամ կենդանիների մկանային ուժով գործարկվող գործիքները, օրինակ, գուլանների խոփերը, արտադրվում էին՝ ըստ անհրաժեշտութեան յուրաքանչյուր տնտեսութունում կամ պատվերով՝ մոտակա դարբնոցում կամ որևէ նման արհեստանոցում: Այդպիսի արհեստանոցների ու դրանցում տեղի ունեցող աշխատանքային պրոցեսների պատկերները պահպանվել են սկահակների վրա եղած նկարազարդումներում: Դարբնոցային, ձուլման, փականագործային, խառատագործական ու կաշեգործական արհեստները, բացի այդ, անմիջական կապ ունեին զենքի արտադրութեան հետ: Դարբինները կոում էին սրեր, այլ վարպետներ հըղկում ու զարդարում էին դրանք, կաշեգործները պատրաստում էին վահաններ, իսկ ատաղձագործ արհեստավորները՝ կահույք, սայլեր ու կենցաղում անհրաժեշտ այլ առարկաներ. վերջիններս սերտորեն կապված էին նաև ռազմական ու առևտրական նավաշինութեան հետ: Հունական մետրոպոլիսի ու նրա գաղթօջախների առևտրաարհեստավորական կենտրոններում լայնորեն տարածված էին մետաղի, փայտի, կաշվի մշակումով զբաղվող արհեստանոցները:

Հին հեղինակների վկայությունները, արձանագրություններն ու նյութական մշակույթի հուշարձանները մեզ հնարավորություն են տալիս հստակորեն պատկերել արհեստների մեծ բազմազանությունը, փորձառու վարպետների մասնագիտական ձեռնհասությունը: Այդ նույն աղբյուրները միաժամանակ նկարագրում են աշխատավոր արհեստավոր մարդկանց աննախանձելի կյանքը: Արիստոփանեսը այսպես է նկարագրում աթենական արհեստավորների աշխատանքային օրվա սկիզբը. լսելով աքաղաղների առավոտյան կանչը, «վեր են կենում աշխատելու ջուհակները, բրուտները, դարբինները, կաշվի մթերիչները, ալյուր աղացողները, դերձակները, քնար լարողները, բուրդ նրանք, ուլբեր սրում, շաղափում ու ծակում են՝ արագ հագնում են կոշիկները, թեև դրսում դեռ գիշեր է ու վազում են...» («Քոչուններ»)\*: Վազում են շուկա, արհեստանոցներ, շենքերի, նավերի շինարարութեան վրա և այլն: Սակայն ազատ արհեստավորների, քաղաքացիների ու մետոյկների կողքին մ. թ. ա. V դ., ինչպես հիշատակված էր վերը, աճող քանակությամբ աշխատում էին ստրուկները: Այդ հանգամանքը վատթարացնում էր ա-

\* Ըստ ռուսական հրատարակության, էջ 490—492 (թարգմ.):

զատ վարպետների թե՛ նյութական և թե՛ սոցիալական վիճակը: Ավելի էժան ու ստրկատերերի գերադասած ստրկական աշխատանքի մրցակցությունից բացի, մրցակցություն, որը բացասաբար էր ազդում ազատ արհեստավորների եկամուտների ու զբաղվածության վրա, նշանակութուն ուներ նաև այն հանգամանքը, որ տիրող դասակարգի ներկայացուցիչները հետզհետև սկսում էին վերևից նայել նրանց՝ դիտելով ազատ արհեստավորներին որպես ստրկական, արհամարհված գործով զբաղվող անձինք:

Պերիկլեսը ակտիվորեն հետևողականորեն ձգտում էր մրշտական եկամուտով ապահովել Ատտիկայի ազատ մարդկանց ու բարելավել նրանց սոցիալական դրությունը: Նա կազմակերպեց պետական միջոցներով տաճարների այլ հասարակական շենքերի կառուցման մեծ բազմամյա աշխատանքներ, կանգնեցրեց արձաններ, կառուցեց երկարաձիգ միջնապատ, որը ավելի հարմարավետ ձևով, քան առաջ, կապեց Աթենքը Պիրեևսի հետ: Ինչպես գրում է Պլուտարքոսը, Պերիկլեսը այդ անում էր այն պատճառով, որ «էլքր ցանկանում, որպեսզի շարքում չպատերազմող ու արհեստով զբաղվող ամբոխը մնար առանց պետական աջակցության: Ահա ինչու նա շտապ կարգով իրար հետևից ժողովրդական ժողովի քրննարկմանը հանձնեց մեծ կառուցումների նախագծեր: Նրա կողմից ներկայացված ծրագրերը պահանջում էին ամենատարբեր արհեստավորների աշխատանքի օգտագործում, այն էլ երկար ժամանակի ընթացքում: Դրա շնորհիվ հայրենիքում մնացող քաղաքացիները ստացան պետական միջոցներից օգտվելու ոչ պակաս իրավունք, քան նավերում ծառայող, կայագործներում գտնվող կամ ռազմական արշավանքներին մասնակցող անձինք: Այնտեղ, ուր նյութ էր ծառայում քարը, պղինձը, փղոսկրը, ոսկին, սև փայտը, նոճին, գործում էին այն մասնագիտությունների ներկայացուցիչները, որոնք մշակում ու կաղապարում են այդ նյութերը. դրանք էին՝ ատաղձագործները, քանդակագործները, պղնձագործները, քարտաշները, ոսկերիչները, փղոսկր փահկացնողները, նկարիչները, արծաթագործները, դրվագողները, հետո նրանք, ովքեր փոխադրում մատուցում են այդ նյութերը. ծովով՝ վաճառականները, նավագնացները, ղեկավարները, ցամաքով՝ սալլապանները, սալլորդությամբ զբաղվող ձեռնարկատերերը, կառապանները, ճոպանագործները, վուշի գործվածք արտադրողները, կաշեգործները, ճանապարհային բանվորները, հանքափորները: Այս արհեստներից յուրաքանչյուրը գորավարի նման իր ղեկավարության ներքո ուներ սեփական բանակ, որը միավորում էր հասարակ ժողովրդի թվին պատկանող վարձու սևագործ բանվորներին, ընդ որում, այդ մարդիկ նշված

արհեստների համար հանդիսանում էին կարծես թե գործիք կամ մարմին: Այդ աշխատանքները բարեկեցութուն էին բաշխում ու տարածում ամենատարբեր տարիք ու շնորհք ունեցող մարդկանց մեջ» (Պլուտարքոս. Պերիկլես, 12)\*:

Բանն այն էր, որ աստվածների ու հերոսների արձանների ըստեղծումը, տաճարների ու նման այլ շինությունների կառուցումը՝ ի փառս աստվածների ու աթենական պոլիսի, ըստ սկզբունքի չպետք է նվաստացնեին ազատ արհեստավորներին: Այդ աշխատանքների անցկացման համար անհրաժեշտ հիմնական միջոցները Աթենքը ստանում էր վաճառականների կողմից Պիրեևս բերված, ապրանքներից գանձվող մաքսերից, արտադրությունում ստրկական աշխատանքի անընդհատ աճող շահագործումից, վերջապես, դաշնակիցներից գանձվող ֆորոսի գումարներից կատարվող հատկացումներից: Այդ շինարարությունը չէր հետապնդում արտադրողական նրպատակներ ու չէր կարող լինել մշտական: Ստրկական աշխատանքի կողմից ազատ աշխատանքի արտամղումը արհեստագործական արտադրության ոլորտից շարունակվում էր, սակայն ավելի դանդաղ տեմպերով:

Իսկ այն օլիգարխիական առևտրաարհեստավորական պոլիսներում, ուր ազատ արհեստավորները պետությունից օգնություն չէին ստանում, նրանց սնանկացման ու ստրկական աշխատանքի կողմից նրանց աշխատանքի արտամղման պրոցեսը ընթանում էր ավելի հիվանդագին, քան Աթենքում:

Հունաստանի տնտեսապես հետամնաց շրջաններում, որոնք հարում էին Բալկանյան թերակղզու արևմտյան ծովափին, Պելոպոնեսի խորքում գտնվող վայրերում, Լակոնիայում ու Մեսենիայում, Քեսալիայում ու Կրետեում ազատ արհեստավորների աշխատանքի արտամղումը ստրկական աշխատանքի կողմից մ. թ. ա. V դ. դեռ նկատելի չէր, թեև այստեղ ևս անշեղորեն աճում էր ստրուկների թիվը, հատկապես դարի երկրորդ կեսին, Պելոպոնեսյան պատերազմը սկսվելուց հետո:

#### ԱՌԵՎՏՈՒՐԸ, ԱՆՏԻԿ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հունական քաղաքների շուկաներում տեղի էր ունենում տարբեր մթերքների, հագուստի, կոշկեղենի, զենքի, խեցեղենի ու սպառման այլ ապրանքների աշխույժ առևտուր: Առևտուրը վարում էին իրենք՝ գեղջուկներն ու արհեստավորները կամ նրանցից ապրանքները վերափոխած մանր առևտրականները: Հավաքագնորդները ապ-

\* Հստ ուսուական հրատարակություն, թարգմ.:

րանքների զգալի մասը գնում էին տերերից գլխավորապես արտահանելու, այլ ոչ ներքին շուկայում վաճառելու համար:

Մ. թ. ա. V դ. աթենական Պիրեևս նավահանգիստն ու Իսթմոսյան պարանոցի երկու կողմերում գտնվող երկու կորնթոսյան նավահանգիստները առևտրի ամենաաշխույժ կենտրոններն էին Բալկանյան Հունաստանում: Այստեղ բերում էին, այստեղից արտահանում էին, կամ այստեղ վերաբարձում էին տրանզիտային ապրանքներ: Պիրեևսում վաճառականներից գանձվող երկու տոկոսանոց առևտրական մաքսը պատկառելի եկամուտ էր տալիս Աթենական պետությանը: Վաճառականները նույնպիսի մաքսեր վճարում էին երկու կորնթոսյան ու հին աշխարհի այլ նավահանգիստներում:

Ստրկատիրական հասարակությունում զարգացող ապրանքային տնտեսությունը դեմ առավ անխուսափելիորեն առաջացած դժվարությունը՝ տեղական պոլիսային շուկայի նեղությունը: Բանն այն էր, որ անմիջական արտադրողների՝ ստրուկների հիմնական զանգվածը ոչինչ չէր փնում, իսկ ազատ արհեստավորների սնանկացումը, որը կապված էր արհեստի մեջ ստրկական աշխատանքի կիրառման հետ, սահմանափակում էր նաև վերջինների գնողունակությունը: Ինչ վերաբերում է գյուղացիներին, ապա նրանք, ինչպես վերը նշվել էր, ձգտում էին գնել ըստ հնարավորին քիչ բան: Նման պայմաններում արտաքին առևտրական կապերը ձեռք բերեցին առաջնակարգ նշանակություն: Արտաքին առևտրական մրցակցության հիման վրա տեղի էին ունենում ընդհարումներ Աթենքի ու Կորնթոսի, Աթենքի ու Մեգարայի և այլ առևտրաարհեստագործական պոլիսների միջև: Զարգանում էր ծովային առևտուրը, որը թեև խոստանում էր մեծ եկամուտներ, սակայն միաժամանակ կապված էր վտանգի հետ: Մոլեզնող տարերքն ու ծովահենները մշտապես սպառնում էին վաճառականներին ու ծովագնացներին:

Արտաքին առևտուրը հիմնված էր Միջերկրականի տարբեր շրջաններում միևնույն ապրանքների գների միջև եղած տարբերության վրա: Այդ տարբերությունները բացատրվում էին նրանով, որ առևտրով զբաղվող երկրների միջև չէին հաստատվել անհրաժեշտ չափով ամուր տնտեսական կապեր. դա նաև նրանց հասարակական-տնտեսական անհամաչափ զարգացման հետևանք էր: Արտահանվում էին այլ վայրերում չարտադրվող տեղական շինվածքներ և պերճանքի առարկաներ: Զարգանում էր ծովային առևտուրը, քանի որ ապրանքների փոխադրումը ցամաքով, գրաստներով, ալիելի դժվար էր ու թանկ էր նստում:

Աթենական Առաջին Մովային միությունը մի այնպիսի միավորում էր, որի շնորհիվ մասնակիորեն հաղթահարվում էր պոլիսի

տնտեսական սահմանափակվածությունը: Պարսկաստանի դեմ պատերազմը հաղթանակով ավարտելու նպատակով ստեղծված այս միությունը փաստորեն իր ձեռքը վերցրեց էգեյան ծովի ավազանում ու նեղուցների վրայով կատարվող առևտրի նկատմամբ հրսկողությունը, ուժեղացրեց առևտրական կապերը մերձսևծովյան շրջանների պոլիսների հետ: Աթենքի դաշնակիցները որոշակի տնտեսական օգուտ էին քաղում միության մեջ իրենց անդամությունից: Նրանք օգտագործում էին աթենացիների առևտրական նավատորմն ու կարող էին անարգել առևտուր վարել միության ազդեցության ամբողջ գոտում: «Աթենական պոլիտեսյա» անհայտ հեղինակը ուղղակի նշում է, որ Աթենական ծովային միության անդամ մասը պետությունները ենթարկվում էին Աթենքին՝ զրգված լինելով անհրաժեշտությունից, «չէ՞» որ չկա այնպիսի պետություն, որը շունենար որևէ իր ներմուծելու և արտահանելու կարիք, ուստի նա շի ունենա ոչ մեկը, ոչ էլ մյուսը, եթե չենթարկվի ծովի տերերին» (II, 3)\*:

Հունաստանում Աթենքի տնտեսական ու քաղաքական գերիշխումը մ. թ. ա. V դ. հանգեցրեց աթենական արծաթե դրամի՝ իբրև առավել ապահով վալյուտայի տարածմանը: Հունական պոլիսների մեծ մասը հոժարակամ ընդունում էր աթենական դրամները: Աթենքը պարտադրեց Աթենական Առաջին ծովային միության անդամներին տեղական դրամի հետ համահավասար ընդունել աթենական «բուերին»: Հույները նման կրճատ ձևով անվանում էին աթենական դրամները, որոնց երեսի կողմում պատկերված էր աստվածուհի Աթենասի գլուխը, իսկ հակառակ կողմում՝ քուն: Իսկ ընդհանրապես, քանի որ հունական պոլիսները միշտ ձգտում էին թողարկել սեփական դրամ, ապա շրջանառության մեջ մշտապես գտնվում էին դրամահատման տարբեր տեսակների պատկանող ու տարբեր կշիռներ ունեցող դրամներ: Վաճառականները գալով մի որևէ պոլիս, ստիպված էին իրենց մոտ եղած դրամը փոխանակել տեղական դրամի հետ: Դրա հիման վրա ծագեց դրամափոխների զբաղմունքը, դրամափոխները լավատեղյակ էին տարբեր համակարգերի դրամների արժեքների հարաբերակցությանը: Շուկաներում դրամափոխները յուրաքանչյուր անձի ցանկությամբ փոխանակում էին նրա մոտ եղած դրամը տեղական կամ որևէ այլ դրամով: Փոխանակության համար նրանք վերցնում էին փոքրիկ վարձ: Դրամափոխները նստում էին շուկայում սեղանների մոտ ու այս պատճառով կոչվեցին տրապեզականներ («տրապեզա» հին հունարենում նշանակում էր սեղան):

\* Հստ ուսական հրատարակության (թարգմ.):

Տարբեր պոլիսներում ապրող ու միմյանց ճանաչող տրապեզականները կատարում էին պարզ ֆինանսական գործողություններ: Օրինակ, նրանք սկսեցին կատարել դրամական գումարների փոխանցումներ իրենց հաշվից ուրիշ դրամափոխի հաշվի վրա, առանց դրամի անմիջական փոխադրման: Այս կապակցությամբ Մարքսը գրում է. «Մուրհակային գործը, որչափով որ հանգում էր մի երկրի դրամափոխի կողմից ճանապարհորդին սոսկ վճարման հավաստագիր տալուն մի տրիշ երկրի դրամափոխի վրա՝ բուն դրամափոխության գործից առաջ գալով, զարգացած էր արդեն շոտում ու շունաստանում»<sup>9</sup>:

Դրամափոխները միշտ ունենալով միջոցներ, զբաղվում էին վաշխառության: Հատկապես շահավետ էր բարձր «ծովային տոկոսներով» գումարներ տրամադրելը վտանգավոր ծովային առևտրով զբաղվող վաճառականներին: Բարձր տոկոսները դիտվում էին իբրև վճար այն վտանգի համար, որին ենթարկվում էր վաշխառուն, քանի որ նա վարող էր կորցնել վարկով տրված ամբողջ դրամագույնը, եթե պարտապանը զոհվեր առևտրական էքսպեդիցիայի ժամանակ: Վաշխառուները տոկոսներով վարկերը տալիս էին հողի, տների ու այլ ունեցվածքի գրավով: Վաշխառությունը մեծ զարգացում ստացավ մ. թ. ա. V դ., դրան նպաստում էր գործարար մարդկանց մոտ անհրաժեշտության դեպքում բավարար քանակությամբ շրջանառու միջոցների հաճախակի բացակայությունը, երևույթ, որը բնորոշ էր իր հիմքում նատուրալ մնացող ստրկատիրական հասարակության պայմաններին: Դրամի ու այլ հարստությունների վրստահելի պահպանման տեղերը, ինչպես և առաջ, համարվում էին տաճարները: Դրանք դրամափոխների նման կատարում էին նաև ֆինանսական վաշխառուական գործարքներ:

Անտիկ տնտեսությունը կրում էր սպառողական բնույթ, և դա այդպես էլ ընկալում էին փրենք՝ հին հույները: Դա պարզ երևում է, օրինակ, Պելոպոնեսյան պատերազմում ընկած մարտիկների թաղման ժամանակ Պերիկլեսի արտասանած ճառից: Թուկիդիդեսի խոսքերով, Պերիկլեսը ասաց. «Ողջ աշխարհից հոսում, մեզ մոտ հավաքվում է ամեն ինչ, այնպես որ մենք վայելում ենք բոլոր ուրիշ ժողովուրդների բարիքները այնպիսի հարմարավետությամբ, որ կարծես թե նրանք մեր սեփական հողի պտուղներն են» (Թուկիդիդես, II, 38, 2):

Հերմիպոսի մի կատակերգության (գրված էր մ. թ. ա. V դ. վերջին քառորդին) մինչև մեր օրերը պահպանված հատվածում (Ա-

<sup>9</sup> Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, I մաս, III գիրք, էջ 304:

թեանայոս, I, 21, 27, Ե—28, Ա) թվարկվում են ծովով Պիրեևս բերվող ապրանքները: Դրանք էին՝ Կիրեններից՝ եզան կաշի ու սրերի բրունակներ, Հելլեսպոնտոսի ափից՝ աղ դրած միս ու թյունիկ, Իտալիայից՝ եղջերավոր անասուններ ու ցորեն, Սիրակուզայից՝ խոզեր ու պանիր, Եգիպտոսից՝ վուշե առագաստներ ու պապիրուս, Ասորիքից՝ խունկ, Կրետեից՝ նոճու փայտ, Լիբիայից՝ փղոսկր, Հոտոսից՝ շամիչ ու թուզ, Եվբեայից՝ ոչխարներ ու տանձ, Պափլագոնիայից՝ քաղցր շագանակ ու նուշ, Փյունիկիայից՝ արմավ ու ալյուր, Կարթագենից՝ փորգեր ու բարձեր, Մերձսևծովյան շրջաններից՝ հաց ու ստրուկներ, Թրակիայից՝ ստրուկներ: Այս ամենը, բացառությամբ միայն ստրուկների, որոնց կարելի էր շահագործել արտադրությունում, սոսկ սպառողական ապրանքներ էին: «Աթենական պոլիտեայի» անհայտ հեղինակը, իր քաղաքական հակառակորդ Պերիկլեսի նման, այլ օրինակների միջոցով բնութագրում է հին հունական տնտեսության սպառողական բնույթն ու ձևակերպում է իր նույնանման տեսակետը դրա նպատակների վերաբերյալ, ընդ որում ընդգծում է ծովային առևտրի կարևոր նշանակությունը հունական պոլիսների համար. «Իսկ եթե խոսենք հույների ու բարբարոսների հարստության մասին, ապա միայն աթենացիները կարող են ունենալ այն: Հիրավի, եթե մի որևէ քաղաք հարուստ է նավաշինական անտառանյութով, ապա մի՞թե նա կարող է որևէ տեղ վաճառահանել այն, եթե ձեռք չբերի ծովում տիրողների համաձայնությունը: Եվ եթե որևէ քաղաք հարուստ է երկաթով, պղնձով կամ վուշով, ո՞ր նա կվաճառահանի, եթե ձեռք չբերի ծովում իշխողի համաձայնությունը: Իսկ չէ՞ որ այդ ամենից և ստեղծվում են ինձ մոտ նավերը. մեկից ստացվում է անտառանյութ, մյուսից՝ երկաթ, երրորդից՝ պղինձ, չորրորդից՝ վուշ, հինգերորդից՝ մոմ... Եվ ահա ես առանց որևէ դժվարության ստանում եմ աշխարհի՝ ծովով բերված այդ արտադրանքը»:

Աթենքից արտահանվում էին գլխավորապես ձիթայուղ, խաղողի գինի, կարմրանկար ու սևաքապատ սկահակներն ու պարենային և արհեստավորական այլ ապրանքներ: Ապրանքների արտահանման մեջ ըստ առանձին շրջանների սկսված մասնագիտացումը կապված էր տեղական արհեստավորական ավանդույթների ու բնական պայմանների հետ: Օրինակ, բրդյա նախշած գործվածքներն արտահանվում էին Միլետոսից, խեցիներից պատրաստվող ծիրանի ներկը՝ Փյունիկիայից ու Փոքր Ասիայի ծովափնյա քաղաքներից (այդ խեցիներն արդյունահանում էին Փոքր Ասիայի ծովափի մոտ). պղինձը՝ Եվբեա ու Կիպրոս կղզիներից, մետաղյա իրերը՝ Կորնթոսից, Արգոսից ու Քաղկիսից (Եվբեա կղզի), խաղողի լավագույն գի-

նինները՝ Քիոս, Սամոս, Նաքսոս կղզիներից, պապիրուսը արտահանվում էր նավկրատիսի վրայով Եգիպտոսից, «սիլփիոն» դեղաբույսը՝ Կիրեններից և այլն:

Հունական քաղաք-պետությունների իշխանությունները, որպես կանոն, միջամտում էին տեղական տնտեսական կյանքին, հատկապես հոգ տանելով շուկան հացով անխափան մատակարարելու մասին: Տեղի էր ունենում պայքար սպեկուլյացիայի դեմ: Աթենքի շուկայում կարգին ու առևտրին հետևում էին հատուկ ընտրված վերակացուները՝ ագորանոմներն ու սիթոֆիլակները. արտաքին առևտրին հսկում էին առևտրական նավահանգստի հոգաբարձուները (եմպորիոնի եպիմելետես), որոնք ընտրվում էին այդ նպատակով:

\*

Հին աշխարհի տնտեսական զարգացումը բնութագրելիս մշտ պետք է հիշել հետևյալ ընդհանրացումը: Կ. Մարքսը գրում էր. «Արտադրության ինչ նոր եղանակ է հնի տեղը բռնում, այս կախված է ոչ թե առևտրից, այլ արտադրության բուն իսկ հին եղանակի բրնույթից: Անտիկ աշխարհում առևտրի ներգործության ու վաճառականական կապիտալի զարգացման հետևանքը լինում է միշտ ստրկատիրական տնտեսությունը. նայած ելակետին՝ երբեմն էլ հետևանքը լինում է լոկ այն, որ անմիջապես դեպի սպառման միջոցների արտադրությունն ուղղված նահապետական ստրկատիրական մի սիստեմ փոխարկվում է դեպի հավելյալ արժեքի արտադրությունն ուղղված ստրկատիրական սիստեմի: Արդի աշխարհում, ընդհակառակը, այն հանգում է արտադրության կապիտալիստական եղանակին: Սրանից հետևում է, որ իրենք այս հետևանքները դեռ բոլորովին այլ հանգամանքներով են պայմանավորված, քան առևտրային կապիտալի զարգացումն է»<sup>10</sup>:

## Պլուխ 10. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ Մ. Թ. Ա. V Դ. ԿԵՍԻՆ

Պատմական գրականության մեջ Սալամիսի ու Պլատեայի մոտ տեղի ունեցած ճակատամարտերից հետո մինչև Պելոպոնեսյան պատերազմի սկիզբն ընկած ժամանակաշրջանը (մ. թ. ա. 479—431

<sup>10</sup> Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, I մաս, III գիրք, Երևան, 1947, էջ 319:



թթ.), ինչպես արդեն նշվել էր, ընդունված է անվանել «Հիսունամյակ» (հունարեն՝ պենտեկոնտատիա)։

Դժբախտաբար, Հունաստանի պատմության այդ շրջանը անբավարար է լուսաբանված աղբյուրներում։ Հերոդոտոսի պատմությունը ավարտվում է մ. թ. ա. 478 թվականով։ Պերոպոնեսյան պատերազմի պատմությանը նվիրված իր աշխատության մեջ Քուկիդիդեսը միայն մի փոքր խորանում է անցյալի մեջ։ Բայց նրա այդ էքսկուրսը Աթենական ծովային հզորության ու Աթենքում վերջինիս առավելագույն ծաղկման շրջանում ծավալված ներքաղաքական պայքարի պատմությունը վարպետորեն լուսաբանած ժամանակակցի արժեքավոր վկայություն է։ Քուկիդիդեսը կարևոր տեղեկություններ է հաղորդում նաև մ. թ. ա. V դ. կեսի Սպարտայի մասին։ Այդ ժամանակաշրջանի Հունաստանում տեղի ունեցած ներքին քաղաքական պայքարին են նվիրված Արիստոտելի «Աթենական պոլիտեայի» որոշ էջերը։ Այս աշխատությունում մենք գտնում ենք նաև դասական շրջանի Աթենքի պետական կառուցվածքի հիմնավոր նկարագիրը։ Արիստոտելի «Պոլիտեայում» պարունակվում են հակիրճ տեղեկություններ սպարտական պետության մասին։

«Հիսունամյակի» մասին տեղեկություններ հաղորդած դասական ու հելլենիստական շրջանի պատմաբանների աշխատություններից պահպանվել են հատվածներ ավելի ուշ ժամանակի հեղինակների՝ Դիոդորոս Սիլիկիացու և Պլուտարքոսի գործերում։ Ճիշտ է, Դիոդորոսի տեղեկությունները միշտ չէ, որ արժանահավատ են, դրանք հաճախ միտումնավոր են, քանի որ դրանց հիմքը կազմում են այն աղբյուրները, որոնք տալիս են անցքերի օլիգարխիական մեկնությունը։ Պլուտարքոսի կողմից գրված կենսագրություններից առավել մեծ նշանակություն ունեն Կիմոնի ու Պերիկլեսի կյանքի նկարագրությունները։ Այստեղ զետեղված արժեքավոր նյութերը հնարավորություն են տալիս բնութագրելու ինչպես այն ժամանակի աչքի ընկնող մարդկանց, այնպես և այն դարաշրջանը, որին նրանք պատկանում էին։

Մ. թ. ա. V դ. կեսի Աթենքի պատմության համար մեծ նշանակություն ունեն հունական մեծագույն բանաստեղծ-ողբերգականեր էսքիլեսի, Սոֆոկլեսի ու Եվրիպիդեսի գործերը, որոնք արտացոլում են այն ժամանակի քաղաքական անցքերը։

Որոշ տվյալներ են տալիս արձանագրությունների նյութերը։ Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում, օրինակ, այն արձանագրությունները, որոնք պարունակում են դաշնակիցների կողմից աթենական գանձարան մուծվող ֆորոսի ցուցակները կամ դաշնակից քաղաքների հետ Աթենքի կնքած պայմանագրերը և այլն։

ԱՔԵՆՔԻ ՊԱՅՔԱՐԸ ՍՊԱՐՏԱՅԻ ԳԵՄ՝ ՀԱՆՈՒՆ ԳԻՐԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՆԱՍԱՆՈՒՄ:  
ԱՔԵՆՔՈՒՄ ԱՐԻՍՏՈՎԱՏԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՎԵՐԱԴԱՐՁԸ  
ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՂՈՒՆ

Մ. թ. ա. 478 թ., երբ կղզիների ու փոքրասիական քաղաքների՝ պարսկական լծից ազատագրված հույները ստիպեցին դաշնակցային նավատորմը գլխավորող սպարտացիներին հեռանալ և դաշինք կնքեցին Աթենքի հետ, էգեյան ծովի ամբողջ ավազանում ստեղծվեց քաղաքական նոր իրադրություն: Վերացավ ռազմական տեսակետից ուժեղ Պելոպոնեսյան միությունը գլխավորած ու գաղափարախոսական ռեակցիայի պատվարի՝ Դերփյան քրմության հետ սերտ կապեր պահպանած արիստոկրատական Սպարտայի երկարամյա քաղաքական գերիշխանությունը:

Աթենական դեմոկրատական հանրապետության գլխավորած կղզային ու առափնյա պոլիսների ռազմաքաղաքական միավորումը առաջացրեց սպարտական քաղաքական ղեկավարների թշնամական ակտիվությունը: Վերջիններս ցանկանում էին Սպարտայից կախման մեջ դնել Աթենական հանրապետությունը:

Սպարտական գերուսիան դեսպաններ ուղարկեց պարսիկների կողմից ավերված բոլոր քաղաքները, այդ թվում և Աթենք: Այդ դեսպաններն առաջարկեցին հույներին քաղաքների վերականգնման ժամանակ չկառուցել դրանք պաշտպանող բերդապարիսպներ: Ընդ որում նրանք առաջ էին քաշում հետևյալ նկատառումները: Քանի որ պարսիկները դուրս մղվեցին Հունաստանից հակապարսկական միության մեջ մտնող բոլոր հունական քաղաքների ջանքերի շնորհիվ և այդ թվում՝ Սպարտայի ու Պելոպոնեսյան միության զորքերի օգնությամբ, ապա բերդապարիսպների կառուցումը անվստահություն կլիներ պարսիկների դեմ մղված պայքարին մասնակցած դաշնակիցների հանդեպ:

Արտաքուստ բարեկամական թվացող առաջարկը ըստ էության արտահայտում էր Սպարտայի ձգտումը իր քաղաքական հսկողության տակ դնել Աթենքը, որովհետև ունենալով ամենահզոր ցամաքային բանակը Հունաստանում, սպարտացիները ցանկացած պահին կարող էին միջամտել Աթենական հանրապետության քաղաքական կյանքին: Աթենացիները, որոնց գլխավոր ռազմական ուժերը դեռ շարունակում էին պայքարել պարսիկների դեմ, չէին կարող դիմակայել սպարտացիներին այն դեպքում, եթե աթենացիների մերժումը առաջացներ նրանց ընդհարումը Պելոպոնեսյան միության հետ:

Այդ դժվարին պահին սպարտացիների հետ բանակցություններ վարելու գործը իր վրա վերցրեց Թեմիստոկլեսը: Մեկնելով Սպարտա որպես աթենական դեսպանության ղեկավար, նա տարբեր պա-

տրբվակներով ձգձգում էր բանակցությունները՝ անհրաժեշտ ժամանակ շահելով բերդապարիսպները կառուցելու համար: Իսկ երբ սպարտացիները լուրեր ստացան Աթենքում ամբուսությունների կառուցման մասին, Քեմիստոկլեսը սպարտացիներին առաջարկեց պատասխան դեսպանություն ուղարկել այդ լուրը ստուգելու համար: Աթենք ժամանած սպարտական դեսպանները գերվեցին աթենացիների կողմից՝ իբրև պատանդներ Սպարտայում գտնվող Քեմիստոկլեսի ու նրա ընկերների անձեռնմխելիությունն ապահովելու համար: Երբ կառուցվեցին պարիսպներ Աթենքի շուրջն ու դեպի ծով տանող երկար պարիսպներ, որոնք այժմ կարող էին պաշտպանել քաղաքը, Քեմիստոկլեսը ընդհատեց բանակցությունները՝ վճռականորեն հրաժարվելով կատարել սպարտացիների առաջարկները: Այդ ժամանակից էլ Աթենքի ու Սպարտայի միջև վերսկսվում է հին թշնամությունը:

Սակայն շուտով փշխանությունն Աթենքում անցավ արիստոկրատիայի ձեռքը: Քեմիստոկլեսը ենթարկվեց օստրակիզմի: Արիստոկրատների առաջնորդն էր Կլեմոնը, իսկ նրանց տիրապետության գլխավոր պատվարն էր արեոպագոսը: Արեոպագոսի ուժեղացումը սկսվեց դեռևս մ. թ. ա. V դ. 70-ական թվականներին ու այն ամրապնդվում էր արմատական դեմոկրատիայի քաղաքական ազդեցության անկմանը զուգընթաց: Դա պետք է բացատրել նրանով, որ 70-ական թվականներին աթենական քաղաքացիության մի մասը, առաջին հերթին գյուղացիությունը, հեռացավ դեմոկրատիայից: Եթե Սալամիսի ճակատամարտի ժամանակ ու նրանից անմիջապես հետո Ատտիկայի գրեթե ամբողջ բնակչությունն ու անգամ Արիստիդեսը պաշտպանում էին Քեմիստոկլեսի քաղաքականությունը, ապա պարսիկներին հաղթելուց հետո քաղաքական իրավիճակը փոխվեց: Գյուղացիությունը դժգոհ էր Քեմիստոկլեսի ռազմական ծրագրերից, որոնց համաձայն անհրաժեշտ էր զավթել նեղուցներն ու կտրել պարսկական զորքի՝ Հունաստանից Փոքր Ասիա նահանջի ուղիները: Պատերազմի այդ ծրագիրը սպառնում էր ռազմական գործողությունների շարունակումով, այսինքն գյուղացիների սեփական հողերի ու տնտեսությունների ավերումով և սնանկացումով: Այս պատճառով գյուղացիությունը դադարեց օգնել Քեմիստոկլեսին:

Արիստոկրատական կուսակցության ազդեցության աճին նպաստեց նաև այն հաղթական ազրեսիվ արտաքին քաղաքականությունը, որի ղեկավարությունը պատկանում էր արիստոկրատիայի առաջնորդ Կլեմոնին: Կլեմոնի հաղթանակները պարսիկների հանդեպ Աթենքին տալիս էին ռազմական ավար, ստրուկներ և ընդարձակում

էին աթենացիների քաղաքական ու տնտեսական ազդեցութեան ուժը: Այսպես կոչված Կիմոնյան հաշտութիւնը, որը ստիպեց պարսիկներին Եվրոմեդոնի մոտ եղած ճակատամարտից հետո հրաժարվել փոքրասիական ծովափից ու դեպի էգեյան ծովը տանող ճանապարհներից, ստեղծեց աթենական նավատորմի տիրապետութեան հիմքերը այդ ծովի ջրերում: Այդ ամենը նպաստեց Կիմոնի ու նրա կողմնակիցների ժողովրդայնութեան աճին ոչ միայն Աթենքի ստրկատիրական դասակարգի վերին խավերում, այլև շարքային քաղաքացիների մօտ:

Սակայն պահպանողական արիստոկրատիայի տիրապետութիւնը երկարատև լինել չէր կարող: Արեոպագոսի դերի ուժեղացման ու հողագործական Սպարտայի հետ դաշինք կնքելու ուղղութեամբ կողմնորոշվող արիստոկրատների արտաքին քաղաքականութեան արդյունքը եղավ դժգոհութեան աճը աթենական հասարակութեան բոլոր խավերում: Դժգոհների թվին նախ և առաջ պատկանում էին չորրորդ կարգի քաղաքացիները՝ թետերը: Ինչպես նշվել էր, նավաշինութեան զարգացումը Աթենքում ու հզոր ռազմական նավատորմի ստեղծումը, նավատորմ, որը կառուցվում ու սպասարկվում էր գլխավորապես այդ կարգին պատկանող քաղաքացիների կողմից, վերածեցին նրանց մի նշանակալից քաղաքական ուժի, որը հակադրվում էր պահպանողական ավագանուն ու ձգտում էր աթենական պետական կարգերի դեմոկրատացմանը:

Արիստոկրատիայի պրոսպարտական քաղաքականութիւնը լիովին հակասում էր աթենական ստրկատերերի զգալի մասի՝ արհեստավորական արհեստանոցների տերերի, նավատերերի, վաճառականների, հացի, յուղի, գինու, ստրուկների առևտրով զբաղվողների շահերին: Մովազնացութեան ու արտաքին առևտրի հետ կապված աթենական այդ խավերը զգում էին Աթենքի քաղաքական ազդեցութեան ընդլայնելու, նոր շուկաներ ձեռք բերելու, ստրուկների նոր համալրումներ ստանալու մշտական պահանջը: Այդ շահերի շրջանակի մեջ աստիճանաբար ներգրավվում էր նաև գյուղացիութեան ունևոր մասը՝ խաղողի այգիների, ձիթենու տնկարկների տերերը և այլք:

Իսկ Սպարտան պաշտպանում էր Աթենքի գլխավոր առևտրական մրցակիցներին՝ Կորնթոսին ու էգինային, ամեն կերպ խանգարում էր Աթենքի ազդեցութեան հաստատմանը Միջին Հունաստանում: Նա անգամ դաշինք կնքեց մակեդոնական թագավորի հետ՝ ուղղված Աթենքի դեմ: Մակեդոնիան անհանգստացած էր այն բանից, որ Աթենքը հողեր էր զավթում Թրակիայի ծովափում ու Քաղկիդիկեում: Սպարտացիների օգնութեամբ Թասոս կղզում բռնկվեց աթենացիների գերիշխանութեան դեմ ուղղված ապստամբութիւնը:

ՀԱՆՏՆԵՐԻ ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՍՍԵՆԱՅՈՒՄ ՈՒ ԱԹԵՆԱԿԱՆ  
ԱՐԻՄՏՈԿՐԱՏԻԱՅԻ ՊՐՈՍՊԱՐՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արիստոկրատների դեմ առաջին բացահայտ ելույթը Աթենքում կապված էր հելոտների՝ մ. թ. ա. 465 թ. ծագած ապստամբության ճնշման գործում Սպարտային օգնություն ցույց տալու հարցի լուծման հետ: Թուկիդիդեսը ասում էր, որ սպարտացիները ստիպված էին դիմելու աթենացիների օգնությանը, քանի որ իրենց տեխնիկական հետամնացության հետևանքով անկարող էին վերցնել իթոմե լեռան վրա գտնվող բերդը, ուր ամրացել էին ապստամբները: Դեմոկրատները վճռականորեն հանդես եկան Կիմոնի՝ օգնություն ուղարկելու առաջարկի դեմ: Սակայն սուր վիճաբանություններից հետո ժողովը որոշեց օգնություն ցույց տալ Սպարտային: Այդ որոշումն զգալի շահով պայմանավորված էր ստրկատերերի դասակարգային համերաշխությանը՝ սպարտացիները կոչում էին ոչ թե որևէ հունական համայնքի դեմ, այլ ապստամբած ստրուկ հելոտների դեմ: Կիմոնի գլխավորությամբ Սպարտա ուղարկվեց հոպլիտների 4000-անոց մի ջոկատ: Սակայն շուտով պարզվեց, որ Կիմոնի արշավանքը Մեսսենիա շարժարացրեց այն հույսերը, որ կապում էին դրա հետ Սպարտայի աթենական կողմնակիցները: Իթոմեն գրեթե անմատչելի ամրոց էր, որի հանդեպ անզոր գտնվեցին անգամ քաղաքների պաշարման գործում փորձ ունեցող աթենացիները: Իթոմեի պաշարումը ձգձգվեց, և շուտով սպարտացիները հրաժարվեցին Աթենքի օգնությունից, աթենական ռազմիկներին կասկածելով իթոմեում պաշարված հելոտների հետ կապեր ունենալու մեջ: Սպարտայի բոլոր դաշնակիցներից, որոնք օգնում էին նրան պայքարելու ապստամբների դեմ, միայն Աթենքին հայտարարվեց այն մասին, որ սպարտացիներն այլևս չեն զգում նրա օգնության կարիքը: Կիմոնը պետք է իր ջոկատը դուրս բերեր Պելոպոնեսից: Դա նշանակում էր աթենական արիստոկրատիայի արտաքին քաղաքականության լրիվ ձախողում: Աթենքում իշխանության գլուխ նորից անցան դեմոկրատական ուղղության կողմնակիցները: Վերջիններս կապված էին աթենական քաղաքացիությանը պատկանող առևտրական ու արհեստավորական խավերի հետ, որոնց գլխավորում էին Եփիալտեսն ու Պերիկլեսը: Արիստոկրատիայի քաղաքական հակառակորդներին հաջողվեց հպանել Աթենքի արտաքին քաղաքականության լրիվ փոփոխմանը՝ աթենացիք խզեցին դաշինքը Սպարտայի հետ ու դաշնակցային հարաբերություններ հաստատեցին նրա հինավուրց թշնամի Արգոսի հետ: Իսկ արգոսցիները, հենվելով Աթենքի քարեկամության ու օգնության վրա,

պատերազմ սկսեցին Սպարտայի դաշնակից Միկենեի դեմ: Մ. թ. ա. 460 թ. պելոպոնեսյան օլիգարխիայի այդ պատվարը վերցվեց արգոսցիների կողմից ու ավերվեց: Դրանով իսկ թուլացան Սպարտայի դիրքերը Պելոպոնեսում: Հետո աթենացիներն ու արգոսցիները դաշինք կնքեցին թեսալացիների հետ: Այսպիսով, Հունաստանում հանդես եկավ ուժեղ հակասպարտական կռալիցիա, մի բան, որ հետագայում Աթենքին թույլ տվեց պայքար սկսել հանուն իր գերիշխանության հաստատման հունական աշխարհի այս մասում: Կիմոնը և նրա քաղաքական համախոհները փորձեցին դեմոկրատների արտաքին քաղաքականությանը հակադրել Պարսկաստանի դեմ պատերազմը վերսկսելու ծրագիրը՝ հույս ունենալով դրանով վերականգնել իրենց թուլացած հեղինակությունը: Դրան առիթ ծառայեց Պարսկաստանի դեմ ապստամբած եգիպտացիների խնդրանքը օգնություն տրամադրելու մասին: Կիմոնը, գլխավորելով Աթենքի ու նրա դաշնակիցների մեծ նավատորմի (200 նավ), շարժվեց դեպի Եգիպտոսի ափերը: Ինքը՝ Կիմոնը, նավատորմի մի մասի հետ կովեց պարսիկների դեմ Կիպրոսում: Այդ նույն պահին աթենացիների գլխավոր ուժերը ափ իջան Նեղոսի գետաբերանում ու պաշարեցին Մեմփիսը: Պատերազմը Եգիպտոսում երկարեց, ու Կիմոնի հաշվարկները՝ նոր հաղթանակի միջոցով վերականգնել իր նախկին դիրքը պետություն մեջ, շարդարացան: Շուտով նա արտաքսվեց Աթենքից օստրակիզմի միջոցով՝ իբրև սպարտացիների բարեկամ ու դեմոսի թշնամի»:

ԱԹԵՆԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:  
ՀՈՒՅՆ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԱՎԱՐՏԸ

Ինչպես ասվեց, արտաքին քաղաքականության ասպարեզում Աթենքը գլխավոր խնդիր էր համարում իր քաղաքական ու տնտեսական ազդեցության ոլորտի ընդարձակումը: Բուն մայրցամաքային Հունաստանում Աթենքը նախ ձգտում էր ձեռք բերել գերիշխանություն Միջին Հունաստանում, հասնել հեգեմոնիայի Սարոնիկոսի ծոցում ու ճնշել իր գլխավոր առևտրական մրցակիցներին՝ Կորնթոսին ու էգինային: Իրենց նպատակներին հասնելու համար աթենացիները գործադրում էին ամենատարբեր միջոցներ՝ և՛ դիվանագիտական, և՛ ռազմական: Շարունակելով իր հակասպարտական քաղաքականությունը, Աթենքը օգնեց Իթոմեյում կապիտուլացված ու ազատ ելքի իրավունք ստացած մեսսենյան հելոտներին հաստատվել Նավպակտոս քաղաքում: Նավպակտոսը դարձավ Աթենքի հենակետը Կորնթոսյան ծոցում, մի բան, որ սպառնում էր ոչ միայն Սպարտայի, այլև մինչև այդ ժոցի ջրերում լիովին տիրող

ու արևմուտք տանող ճանապարհներն իր ձեռքում պահող Կորնթոսի շահերին:

Միջամտելով Կորնթոսի ու Մեգարայի միջև ընթացող պատերազմին վերջինիս կողմում, աթենացիք հասան այն բանին, որ Մեգարան դուրս եկավ Պելոպոնեսյան միության կազմից և դաշնակցեց Աթենքի հետ: Նրանք օգնեցին մեգարացիներին կառուցել ամրություններ, որոնք միացրեցին Մեգարան Սարոնիկոսի ծոցում գտնվող նրա նավահանգստի՝ Նիսեայի հետ: Դրա շնորհիվ Մեգարան անմատչելի դարձավ ցամաքից: Նույն ժամանակ աթենացիներն իրենց կայազորները տեղավորեցին ինչպես Մեգարայում, այնպես և Կորնթոսյան ծոցի նրա մյուս նավահանգստում՝ Պագեում: Դա նրանց դարձնում էր Իսթմոսի տեր ու դժվարացնում էր Սպարտայի հարաբերությունները նրա դաշնակիցների հետ Միջին Հունաստանում: Պատերազմելով Իսթմոսում, աթենացիները միաժամանակ վերսկսեցին պայքարը նաև Սարոնիկոսի ծոցում իրենց հինավուրց հակառակորդի՝ էգինայի հետ: Նրանք ափ իջան կղզում ու պաշարեցին քաղաքը: Կորնթացիների փորձը՝ օգնել էգինացիներին Մեգարայի վրա հարձակվելու միջոցով, անհաջողություն մատնվեց:

Սպարտան տագնապով լի հետևում էր Աթենքի ազդեցության աճին, սակայն կաշկանդված լինելով ապստամբ մեսսենացիների դեմ մղած պայքարով, նա ի վիճակի չէր դիմադրել Աթենքին: Միայն մ. թ. ա. 457 թ. Սպարտան, օգտագործելով մի շնչին առիթ, Միջին Հունաստան ուղարկեց մի մեծ զորք՝ նիկոմեդես թագավորի գլխավորությամբ: Բեովտիայում Սպարտայի կողմը անցավ Թեբեն, որտեղ իշխանության գլուխ կանգնած էին օլիգարխները, ինչպես նաև աթենացիների հանդեպ թշնամաբար տրամադրված մի շարք այլ քաղաքներ: Սակայն Աթենքը վճռեց զենքի ուժով հաստատել իր տիրապետությունը Միջին Հունաստանում: Նա զորակոչեց աշխարհազոր ու ստանալով օժանդակ ջոկատներ իր դաշնակիցներ Արգոսից, Թեսալիայից ու Աթենական ծովային միության որոշ քաղաքներից, ներխուժեց Բեովտիա: Այդ պատերազմը հաջողություն չբերեց Աթենքին. նա պարտություն կրեց Տանագրայի մոտ մղված ճակատամարտում: Սակայն նրա հակառակորդները ևս ունեցան այնքան մեծ կորուստներ, որ հրաժարվեցին Ատտիկայի վրա հարձակում գործելու մտադրությունից ու նահանջեցին Պելոպոնես:

Աթենացիներն, օգտվելով Տանագրայի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո կնքված զինադադարից, արագորեն ամրացան ու ջախջախելով թշնամու բանակը Ենոփիտի մոտ, վերականգնեցին իրենց ազդեցությունը բեովտական քաղաքներում: Բեովտիայում սպարտացիներին հավատարիմ մնաց միայն Թեբեն:

Այսպիսով, Աթենքին հաջողվեց հաստատել իր տիրապետութիւնը Միջին Հունաստանում: Ավելին, ավարտելով ռազմական գործողութիւնները Ատտիկայի սահմանների մոտ, աթենացիները հարձակվեցին բուն Պելոպոնեսի վրա: Նրանք ավերեցին սպարտական ծովափը որոշ տեղերում և գրավեցին Տրոյզեն մեծ քաղաքը: Այդ ժամանակ հանձնվեց նաև աթենացիների կողմից պաշարված էգիւնան:

Աթենական կառավարութեան առաջադրած նպատակներն իրագործվեցին: Աթենացիները ջախջախեցին իրենց գլխավոր առևտրական հակառակորդներից մեկին՝ էգիւնային, հաստատեցին իրենց տիրապետութիւնը Սարոնիկոսի ծոցում ազդեցութիւնը Իսթմոսում, Միջին Հունաստանում և անգամ Պելոպոնեսի որոշ քաղաքներում:

Մ. թ. ա. 455 թ. Եվրոպական Հունաստանի, ինչպես նաև հույներով բնակեցված արշիպելագի կղզիների մեծ մասը, Պրոպոնտիսի, Թրակիայի ու փոքրասիական ծովափի (մինչև Կարիան ու Լյուկիան ներառյալ) առափնյա քաղաքները մտնում էին Աթենական ծովային միութեան կազմի մեջ: Աթենական ռազմական նավատորմի ղեկը տիրում էր Եվքսինյան Պոնտոսի, էգեյան, Հոնիական ծովերի ջրերում ու Միջերկրական ծովի արևելյան մասում:

Սակայն Աթենքի ռազմաքաղաքական հզորութիւնը բավականաչափ ամուր չէր: Աթենացիները ջլատեցին իրենց ուժերը՝ միաժամանակ պայքարելով շատ հակառակորդների դեմ: Մ. թ. ա. 454 թ. Եգիպտոսում աղետ տեղի ունեցավ, որտեղ պարսիկների դեմ ապստամբած ներքին Եգիպտոսի մի մասի կառավարչին օգնութեան էր ուղարկվել աթենական մեծ նավախումբ: Փոխելով Նեղոսի գետաբազուկներից մեկի հունը, պարսիկները ծանծաղուտների վրա նստեցրին, իսկ հետո և շրջապատեցին ու ոչնչացրեցին աթենական նավերը: Դրանից հետո ծուղակի մեջ ընկավ ու նույնպես կործանվեց աթենական մյուս նավախումբը, որը ուղարկվել էր առաջին խմբին օգնելու:

Եգիպտոսում կրած պարտութեան լուրը խուճապ առաջացրեց Աթենքում: Շատ աթենացիներ սպասում էին, որ կսկսվի պարսկական նոր արշավանք Հունաստանի վրա: Իրականում նման վտանգը քիչ էր հավանական, սակայն աթենական կառավարիչներն օգտագործեցին այդ տրամադրութիւնները ծովային միութիւնում Աթենքի ազդեցութիւնը ուժեղացնելու համար: Պերիկլեսը առաջարկեց Աթենական ծովային միութեան գանձարանը Դելոսից փոխադրել Աթենքի ակրոպոլիս: Երբ դա արվեց, դաշնակիցներից գանձվող



դրամական միջոցները դրվեցին աթենացիների լրիվ տնօրինութան ներքո:

Արևելյան Միջերկրականում իր ազդեցությունը վերականգնելու նպատակով, Աթենքը Կիպրոս ուղարկեց մեծ ռազմածովային նավատորմի՝ փորձառու ծովակալ, Միլտիադեսի որդի, գառամյալ Կիմոնի գլխավորությամբ: Մինչ այդ, Կիմոնը ժամկետից շուտ վերադարձել էր աքսորից: Մ. թ. ա. 449 թ. Սալամիսից ոչ հեռու տեղի ունեցած ծովային ճակատամարտում Կիմոնը ջախջախեց պարսկական նավատորմը, սակայն ինքը վիրավորվեց ու շուտով մահացավ: Աթենացիների փայլուն հաղթանակը ապացուցեց, որ շնայած նախորդ անհաջողություններ, նրանց ուժերը առաջվա պես մեծ են: Հետագա ռազմական գործողությունները բնավ գերակշռություն չէին խոստանում կողմերից որևէ մեկին: Երկարատև հույն-պարսկական պատերազմները պաշտոնապես ավարտվեցին Կալլիասյան հաշտությամբ մ. թ. ա. 449 թ. (Կալլիասը աթենական ներկայացուցիչ էր, որը պարսկական մայրաքաղաք Սուսայում տեղի ունեցած բանակցությունների ժամանակ հանդես եկավ հույների անունից): Պարսիկները ճանաչեցին Փոքր Ասիայի ափերին գտնվող հունական քաղաքների ազատությունը ու դադարեցրին հույների դեմ ուղղված թշնամական գործողությունները:

Հաշտության կնքումից հետո Պերիկլեսը մ. թ. ա. 448 թ. ձեռնարկեց Աթենքի շուրջը հնարավորին չափ շատ հունական քաղաքներ միավորելու նոր փորձ: Նա ներկայացուցիչներ ուղարկեց Եվրոպական Հունաստանի բոլոր քաղաքները, առաջարկելով նրանց դեսպաններ ուղարկել Աթենք՝ պարսիկների կողմից ավերված համահունական սրբավայրերի վերականգնման շուրջը խորհրդակցելու համար: Սակայն սպարտացիները կոահեցին Պերիկլեսի փսկական մտադրություններն ու խանգարեցին այդ խորհրդակցության գումարմանը և շուտով վերսկսեցին թշնամական գործողությունները աթենացիների դեմ:

Բեռլտիայում արիստոկրատները սպարտացիներին օգնությամբ զավթեցին իշխանությունն ու ռազմական գործողություններ սկսեցին Աթենքի դեմ: Մ. թ. ա. 447 թ. նրանք Քերոնեսյի մոտ ոչնչացրեցին բեռլտական դեմոկրատներին օգնության ուղարկված աթենական ջոկատը: Դրա արդյունքը եղավ Բեռլտիայի, Փոկիսի ու Լոկրիսի մի շարք քաղաքների անջատումը Աթենական միությունից: Արիստոկրատական ապստամբություններ տեղի ունեցան նաև Մեգարայում ու Եվբեա կղզում: Սպարտացիները ներխուժեցին Ատտիկա ու մոտեցան Ելեվսիսին (մ. թ. ա. 446 թ.): Սակայն Պերիկլեսին հաջողվեց կաշառել զորքը գլխավորող սպարտական թագավորին,

ու վերջինս առանց ճակատամարտ տալու իր բանակը տարավ Պելոպոնես: Դրանից հետո Պերիկլեսը աթենական զորքերով անցավ Սվբեա կղզի, եվբյան քաղաքների մեծ մասից արտաքսեց տեղական արիստոկրատներին ու նրանց հողերում կազմակերպեց աթենական կլերուքների բնակավայրեր:

Երկու թշնամի կողմերը խիստ հոգնել էին երկարատև պայքարից, որն ընթանում էր փոփոխական հաջողությամբ, ու նրանք համաձայնվեցին կնքել հաշտության (մ. թ. ա. 445 թ.) երեսուն տարի ժամկետով: Այդ համաձայնությամբ ճանաչվում էր երկու՝ Պելոպոնեսյան ու Աթենական միությանների իրավահավասարությունը: Երկու կողմերը պարտավորվեցին ապրել խաղաղության մեջ ու չձգտել ընդարձակվելու ոչ մյուս միության քաղաքների հաշվին, ոչ էլ մինչ այդ թշնամական միավորումների մեջ չմտած քաղաքները իրենց միության մեջ ներգրավելու միջոցով:

Մ. թ. ա. 445 թ. հաշտությամբ ավարտվեց հունական ստրկատերերի՝ Աթենքի ու Սպարտայի կողմից գլխավորած երկու մեծ քաղաքական խմբավորումների սահմանազատումը, խմբավորումներ, որոնք պայքարում էին Հունաստանում տիրապետելու համար: Ընդհատելով պայքարը, նրանք սկսեցին ուժեր հավաքել նոր վճռական գոտեմարտի համար:

ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՉԱԶՈՂ ՊԱՅՔԱՐԸ  
ՉԱՆՈՒՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԹՆԵՐՈՒՄ

Արիստոկրատիայի ուժեղացումը, որը տեղի ունեցավ Թեմիստոկլեսին օստրակիզմի ենթարկելուց հետո, ինչպես հիշատակվել էր, հանգեցրեց այն բանին, որ Աթենքում, Արիստոտելի խոսքերով, «մարտական պատերազմներից»<sup>11</sup> հետո պետությունը ամենաքիչը 17 տարի գլխավորվում էր արեոպագոսի խորհրդի կողմից»: Նա, ընդհանրապես պաշտպանելու պարտականություններից, որոնք սահմանվել էին Սոլոնի ռեֆորմով, յուրացրեց նոր, լայն լիազորություններ: Ժողովրդական ժողովի և դեմոկրատական այլ հիմնարկների դերը այդ տարիներին փոքր էր, ու դրանց գործունեությունը գտնվում էր արեոպագոսի հսկողության տակ: Քանի որ արեոպագոսը դարձավ պահպանողական ավանդույթների պաշտպան ու պետության փաստական կառավարիչ, ապա դեմոկրատների գլխավոր խնդիրը եղավ նրա հզորությունը կոտրելը: Դեմոկրատները դիմեցին դատավարություններին, իբրև քաղաքական պայքարի միջոցի,

<sup>11</sup> Արիստոտելը մարտական պատերազմներ է անվանում Հուն-պարսկական պատերազմը՝ նրա սկզբից մինչև Պլատեայի մոտ տեղի ունեցած ճակատամարտը:

ու արեոպագոսի առանձին անդամների հանձնեցին դատի՝ մեղադրելով նրանց պաշտոնի հետ կապված տարբեր հանցագործությունների՝ պետական գումարների յուրացման, իշխանությունը շարաշահելու, կաշառվածություն և այլնի մեջ: Նման մեղադրանքները լինում էին հիմնավոր, և արեոպագոսի շատ անդամների հեղինակությունն ընկավ, ինքը՝ խորհուրդը, վարկաբեկվեց:

Աթենական դեմոկրատներին այդ ժամանակ գլխավորում էր Եփիալտեսը: Մեր տեղեկություններն այդ քաղաքական գործչի մասին շատ աղքատիկ են: Արիստոտելը նրան անվանում էր դեմոսի դեկավար, որն «ուներ անկաշառ ու պետական գործերում արդարամիտ մարդու համբավ: Եփիալտեսը ճարտար հոետոր էր ու մեծ հեղինակություն էր վայելում հասարակ ժողովրդի մոտ: Իր քաղաքական գործունեության մեջ Եփիալտեսը Քեմիստոկլեսի գործի շարունակողն էր ու, Պլատոնի խոսքերով, նա «դեմոսին արբեցրեց շափից ավելի ազատություն»:

Արեոպագոսի անդամների անբարեխղճության հաջող մերկացումները Եփիալտեսին թույլ տվեցին դեռ մ. թ. ա. 462 թ. գարնանը ժողովրդական ժողովին ներկայացնել մի օրենք, որով արեոպագոսը զրկվում էր կարևորագույն պետական մարմնի նշանակությունից: Նրա պարտականությունները տրվում էին մասամբ ժողովրդական ժողովին, մասամբ էլ հինգհարյուրի խորհրդին ու հելիայային: Այդ ժամանակից սկսած արեոպագոսը վերածվեց սոսկ կանխամտածված սպանությունների ու կրոնական հանցագործությունների գործերով զբաղվող դատարանի: Եփիալտեսի ռեֆորմը եզրափակեց քաղաքական վերափոխումների մի ամբողջ շարք, վերափոխումներ, որոնք Աթենքում ոչնչացրեցին ինչպես տոհմատիրական կարգերի մնացուկները, այնպես և հին արիստոկրատիայի տիրապետությունը: Մ. թ. ա. 457 թ. Եփիալտեսը դավաճանաբար սպանվեց: Սակայն դա չփոխեց իրավիճակը: Իշխանությունը Աթենքում անցավ դեմոկրատական հիմնարկների ձեռքն, ու ժողովրդական ժողովի մեծ մասը գնում էր Եփիալտեսի կողմնակիցների հետևից:

Անհնարին է ճշտորեն որոշել մ. թ. ա. 462 թ. հետո անցկացված ու աթենական պետական կարգերի հետագա դեմոկրատացման նպատակին ուղղված միջոցառումների հաջորդականությունը: Ըստ Արիստոտելի, որը դեմոկրատիայի կողմնակից չէր ու այդ նորամուծությունների մասին խոսում էր շատ հակիրճ (Աթենական պոլիտեա, X, 2), արքոնտների պաշտոնը մ. թ. ա. 457 թ. մատչելի դարձավ զևգիտների համար, իսկ հետո, մ. թ. ա. 453 թ. վերականգնվեց նաև Պիսիստրատոսի ժամանակ գոյություն ունեցած շրջիկ դատավորների, այսպես կոչված, «ըստ դեմերի դատավորների»

պաշտոնը: Նրանք թվով երեսունն էին, հավանաբար, յուրաքանչ-յուր տրիտեաչի համար նշանակվում էր մեկական դատավոր: 50-ական թվականներին աթենական դեմոկրատիայի կարևոր միջոցառումը եղավ «գրաֆե պարանոմոն» (բողոք անօրինակության դեմ) հաստատության սահմանումը. այն կոչված էր պաշտպանելու Աթենքի շքոված սահմանադրության հիմնական սկզբունքները: Այդ նորամուծության էությունը հետևյալն էր. յուրաքանչյուր քաղաքացի ուներ «գրաֆե պարանոմոնի» իրավունք, այսինքն կարող էր բողոքարկել ժողովրդական ժողով մտցված ամեն մի առաջարկ կամ արդեն ընդունված որոշում, եթե գտնում էր, որ դրանք հակասում են գոյություն ունեցող օրենքներին կամ վնաս են հասցնում պետությանը: «Գրաֆե պարանոմոն» հաստատության սահմանումը սերտորեն կապված էր Եփիալտեսի ռեֆորմի հետ: Որոշ հետազոտողներ անգամ գտնում են, որ այն ընդունվել էր դեռ նրա կյանքի ժամանակ: «Գրաֆե պարանոմոն» հաստատության մեջ իրագործվեցին արեոպագոսից ժողովրդական ժողովին ու դատարանին անցած օրենքների ու պետության պաշտպանի հսկիչ ֆունկցիաները: Դեմոկրատիայի համար «գրաֆե պարանոմոնը» դեմոկրատական սահմանադրության թշնամիներին՝ նրա սկզբունքները փոխելու փորձերը վիժեցնելու հուսալի միջոց էր և իրագործվում էր նման փորձերը անօրինական հայտարարելու միջոցով: Այն սահմանվեց սուր քաղաքական պայքարի ժամանակ, պայքար, որի արձագանքները հասել են մեզ էսքիլեսի «Եվմենիդներ» ողբերգությունում, որը բեմադրվեց Մեծ Դիոնիսիականների կրոնական տոների ժամանակ, մ. թ. ա. 458 թ.: Այս ողբերգությունում Աթենաս աստվածուհին հայտարարում է, որ սահմանում է արեոպագոսը՝ իբրև իր տերության «պահապան» ու հրամայում է. «Քող իմ կանոնը անպետք խառնուրդով շնորոգեն քաղաքացիները» (էսքիլես, «Եվմենիդներ», 696)\*: Այդ ողբերգությունում արտացոլում գտան Եփիալտեսի հակառակորդների բողոքները՝ ուղղված ինչպես արեոպագոսի անդամների դեմ դատական պրոցեսների, այնպես էլ իր իսկ արեոպագոսի ռեֆորմի ու նրա կազմում երրորդ կարգին պատկանող քաղաքացիներ ներգրավելու դեմ:

Եփիալտեսի մահից հետո աթենական դեմոկրատիայի ղեկավարների շրջանում գնալով մեծ ազդեցություն է սկսում ձեռք բերել Պերիկլեսը՝ Միկալեսի մոտ պարսիկներին հաղթած Քսանթիպոսի որդին: Մայրական գծով նա ազգակից էր Ալկմեոնյաններին. նրա մայրը Կլիսթենեսի մերձավոր ազգականուհին էր: Պերիկլեսը

\* Հստ ուսերեն հրատարակության (Քարգմ.):

ստացել էր հիանալի կրթություն: Նրա ուսուցիչներից մեկն էր Անաքսագորասը: Հասարակական գործունեությունը Պերիկլեսը սկսեց զանազան ռազմական արշավանքների մասնակցելուց և միայն 50-ական թվականների վերջերից ներգրավվեց Աթենքում ընթացող քաղաքական պայքարին, ընդ որում նա հենց սկզբից հարեց դեմոկրատական կուսակցությանը: «Չքավորների շահերը,— նշում էր Պլուտարքոսը,— նա դասում էր փոքրաթիվ հարուստների շահերից վեր» (Պերիկլես, 7):

Արևմտամերոպական պատմագրության մեջ մ. թ. ա. V դ. կեսի պատմության վերաբերյալ ներկայումս տարածված է այն կարծիքը, որ դա «Պերիկլեսի պրինցիպատի», այսինքն այդ քաղաքական գործչի անբաժան տիրապետության շրջանն էր: Դա, սակայն, չի համապատասխանում իրականությանը:

#### ԱԹՆՆԱԿԱՆ ԱՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՊԵՐԻԿԼԵՍԻ ՕՐՈՔ

Պերիկլեսը անտիկ աշխարհի ականավոր քաղաքական գործիչ էր: Բնությունից ընդունակություններով շուրջորեն օժտված, նա նաև փայլուն հոստոր էր: Ժողովրդական ժողովում արտասանած նրա ճառերը համեմատում էին Զևսի կողմից նետված ամպրոպի ու կայծակների հետ, այդ պատճառով էլ Պերիկլեսին անվանեցին «Օլիմպիոսի» (Պլուտարքոս, Պերիկլես, 7): Իր աշխարհայացքով Պերիկլեսը հարում էր այն ժամանակի առաջավոր մարդկանց: Նրա շուրջը համախմբվեցին տաղանդավոր գիտնականներ, փիլիսոփաներ, նկարիչներ ու քանդակագործներ՝ պատմաբան Հերոդոտոսը, փիլիսոփաներ Պրոտագորասը, Անաքսագորասը, մեծ քանդակագործ Տիդիասը: Պերիկլեսը ընդունակ զորավար ու նուրբ դիվանագետ էր, ուներ քաղաքական լայն մտահորիզոն. դա մի մարդ էր, որը հասկանում էր Աթենքի ստրկատիրական հասարակության ամենաառաջավոր մասի ու լայն դեմոկրատական խավերի կենսական շահերն ու կարիքները: Սակայն Պերիկլեսը սոսկ ամենատաղանդավոր ու փայլուն գործիչն էր մ. թ. ա. V դ. կեսին Աթենքում դեմոկրատական շարժումը գլխավորած այլ գործիչների ու զորավարների շարքում: Նրա հեղինակությունն ու ազդեցությունն աճում էին աստիճանաբար, դեմոկրատիայի զարգացմանը զուգընթաց ու սերտորեն կապված էին պատմության այն շրջանի հետ, որը Մարքսը բնութագրել է որպես Հունաստանի մեծագույն ներքին ծաղկում:

Աթենական պետության դեմոկրատական վերափոխման նպատակին ուղղված բոլոր հետագա միջոցառումները մ. թ. ա. V դ.

կապված են Պերիկլեսի անվան հետ: Նրա ներքին քաղաքականությունը Եփիալտեսի ձեռնարկումների ուղղակի շարունակությունը և հետագա զարգացումն էր: Այդ միջոցառումներից կարևորագույնն էր քաղաքացիների կողմից հասարակական պարտականություններ կատարելու համար նրանց վարձատրելու համակարգի սահմանումը: Հնարավոր չէ ճիշտ թվագրել, թե տարբեր պաշտոնների վարձատրումը ե՞րբ սահմանվեց: Սկզբում Պերիկլեսի օրենքով վարձատրվեցին հելիալայի՝ աթենական գերագույն դատարանի երդվյալ դատավորները: Վարձը մեծ չէր: Յուրաքանչյուր դատական նիստի համար հելիալայի անդամը ստանում էր 2 օբոլ: Այդ գումարը մոտավորապես հավասար էր շարքային աթենացու օրական վաստակին: Եթե վերհիշենք, որ հելիալայի բաղկացած էր 6000 երդվյալ ատենակալներից, որոնք ամեն տարի ընտրվում էին քաղաքացիների՝ Սուլոնի կողմից սահմանված բոլոր շորս կարգերից, ապա պարզ կդառնա այդ միջոցառման սոցիալական էությունը: Չքավոր գյուղացիությունն ու թեսերը այժմ կարող էին մասնակցել հայրենի քաղաքի հասարակական կյանքին՝ վտանգի շենթարկելով օրվա իրենց վաստակը:

Դրանից հետո սահմանվեց գանձատան կողմից փոքր գումարների վճարում չքավոր քաղաքացիներին՝ թատերական տոմսեր գրելու համար: Հայտնի է, որ Աթենքում բոլոր մեծ տոնակատարություններն ուղեկցվում էին թատերական ներկայացումներով: Այդ տոնակատարությունները կրում էին հասարակական բնույթ, իսկ մասնակցությունը այդ տոներին դիտվում էր որպես քաղաքացիական պարտքի կատարում: «Թատերական դրամների», հունարեն «թեորիկոնի», վճարումը ապահովում էր աշխատավոր աթենական քաղաքացիության մասնակցությունը այդ տոնակատարություններին, մի բան, որը ուներ մեծ քաղաքական նշանակություն:

Հետո սահմանվեց վարձատրություն հինգհարյուրի խորհրդի անգամներին, արքունիներին, որոշ հանձնաժողովների անդամներին ու այն անձանց, ովքեր ուղարկվում էին կառավարելու Ատտիկայի սահմաններից դուրս գտնվող աթենական տիրույթները: Վարձատրությունների համակարգը տարածվեց նաև աշխարհագրորում, կայազորներում, նավատորմիդում, զինվորական ծառայության մեջ եղող քաղաքացիների վրա:

Վարձատրումների համակարգի սահմանման հետ մեկտեղ փոփոխության ենթարկվեց նաև բարձր պաշտոններ ընտրելու կարգը: այժմ պաշտոնյա անձանց չէին ընտրում քվերակությամբ, գրեթե բոլոր պաշտոններն զբաղեցվում էին վիճակահանությամբ: Միայն այն պաշտոնները, որոնք վարելու համար անհրաժեշտ էին հատուկ

գիտելիքներ (ստրատեգոսներ, գանձապետներ և այլն), առաջվա  
պես զբաղեցվում էին ընտրությամբ:

Այդ բոլոր նորամուծություններն առաջացնում էին դեմոկրա-  
տիայի հակառակորդների շարամիտ բողոքները: Նրանք մեղադրում  
էին Պերիկլեսին այն բանում, որ սահմանելով պաշտոնների վար-  
ձատրում, նա մտադիր էր կաշառել ժողովրդին ու ձեռք բերել ավելի  
մեծ հեղինակություն, մտադիր էր «բարոյապես քայքայել ժո-  
ղովրդին» (Արիստոտել, «Աթենական պոլիտեա», 27): Դե-  
մոկրատիայի թշնամիների այդ սուր ելույթները հասկանալի կլի-  
նեն, եթե հաշվի առնենք, որ պետական պաշտոնների վարձատրու-  
մը շարքային քաղաքացիներին հնարավորություն տվեց մասնակ-  
ցել հասարակական գործերին և իրապես օգտվել այն իրավունքնե-  
րից, որոնք տալիս էր Աթենքի քաղաքացի լինելը:

Պերիկլեսի կողմից ձեռնարկված միջոցառումների շնորհիվ Ա-  
թենքում վերջնականապես ձևավորվեց այն դեմոկրատական կա-  
ռուցվածքը, որը ստրկատիրական հասարակարգի պայմաններում  
պետական կարգի ամենաառաջավոր ձևն էր: Այդ կարգի նկարագր-  
ություն մենք հանդիպում ենք Արիստոտելի «Աթենական պոլիտեա-  
յում»: Արիստոտելը նկարագրում է իր ժամանակակից Աթենքի, այ-  
սինքն, մ. թ. ա. IV դ. երկրորդ կեսի պետական կառուցվածքը:  
Բայց այդ նկարագիրը իրական է նաև մ. թ. ա. V դ. կեսի համար,  
քանի որ մ. թ. ա. IV դարում այդ կառուցվածքում ոչ մի էական  
փոփոխություն տեղի չէր ունեցել: Աթենքի մ. թ. ա. V դ. պետա-  
կան կարգերում պահպանվեցին հին կրիսթենեսյան կազմակերպ-  
ման բոլոր հիմնական սկզբունքները, սակայն նրանք ապրեցին հե-  
տագա զարգացում:

Պետության գերագույն մարմին էր ճանաչվում ժողովրդական  
ժողովը՝ եկլեսիան, որին մասնակցում էին բոլոր շափահաս (20  
տարին լրացրած) աթենական քաղաքացիները, առանց ցենզային  
սահմանափակումների: Ամեն մի քաղաքացի իրավունք ուներ ցան-  
կացած առաջարկ կամ օրինագիծ մտցնել ժողովրդական ժողով և  
անգամ հարուցել ցանկացած հարց: Ժողովրդական ժողովը հա-  
վաքվում էր նիստի մոտավորապես յուրաքանչյուր տաս օրը մեկ:  
Սովորաբար այն տեղի էր ունենում Ակրոպոլիսի ստորոտում, Պըն-  
յուկս հարթ բլրի վրա: Միայն հետագայում նրա նիստերը փոխա-  
դրվեցին Դիոնիսոսի թատրոն: Ժողովրդական ժողովը լուծում էր  
պետության կարևորագույն հարցերը՝ պատերազմի ու խաղաղության  
հարցերը, լսում էր դեսպանություններին ու կնքում էր դաշնակցա-  
յին պայմանագրեր, ընտրում էր բարձրագույն պաշտոնյաներին և  
ընդունում էր հաշվետվություններ նրանց գործունեության մասին,

քննում էր կարևոր դատական գործերը, պարգևատրում էր առանձին անձանց կամ զբկում էր նրանց քաղաքացիությունից: Վերջապես, նա լուծում էր ընթացիկ քաղաքական կյանքի ամենատարբեր հարցերը: Ժողովրդական ժողովը սկսեց ակտիվորեն ներգործել պետական կառավարման ընթացքի վրա:

Ըստ նշանակություն, կառավարման երկրորդ մարմինն էր հինգհարյուրի խորհուրդը, որը, ինչպես հնում, կազմվում էր 10 ֆիրանների ներկայացուցիչներից, յուրաքանչյուրից 50-ական հոգի: Մ. թ. ա. 462 թ. ռեֆորմը ընդլայնեց այդ խորհրդի լիազորությունները, սակայն սկզբունքորեն այն մնաց իբրև խորհրդակցական մարմին ու զբաղվում էր ժողովրդական ժողովի քննարկմանը ներկայացվող գործերի (ինչպես երկրի ներքին կյանքին, այնպես և արտաքին քաղաքականությանը վերաբերող) նախնական ուսումնասիրությունը: Հետո հինգհարյուրի խորհրդի վրա դրվեցին վարչական պարտականություններ և երկրորդական հարցերի լուծումը ժողովրդական ժողովների միջև ընկած ժամանակամիջոցում: Նա տնօրինում էր ֆինանսները, պետական ունեցվածքը, հսկողություն էր սահմանել դրամահատման գործի, նավատորմի, նավաշինարարների, զինանոցների, քաղաքի բարեկարգման, նավահանգստի, շուկաների վրա, հետևում էր պաշտոնյաների աշխատանքին: Հինգհարյուրի խորհուրդը մշտապես գործող մարմին էր: Այն բաժանվում էր 10 մասի՝ համապատասխան ֆիլանների ներկայացուցչությանը: Յուրաքանչյուր այդպիսի բաժին՝ պրիտանեան, վարչական մարմին էր տարվա մեկ տասներորդ մասի ընթացքում: Նրա նախագահի մոտ էին գտնվում Աթենքի գանձատան բանախիներն ու պետական կնիքը: Հերթապահ պրիտանեան էր գումարում ժողովրդական ժողովները, իսկ նրա նախագահը նախագահում էր ժողովում:

Ողջ գործադիր իշխանությունը պատկանում էր ամեն տարի վերընտրվող ժողովրդական ժողովին և խորհրդին ենթարկվող տարբեր կոլեգիաներին: Աթենքի պետական կարգը դասական շրջանում աչքի էր ընկնում դրանում բյուրոկրատական ապարատի գրեթե լրրիվ բացակայությամբ: Ամբողջ կառավարումը իրականացվում էր ընտրված պաշտոնատար անձանց ու կոլեգիաների կողմից: Վարձու աշխատողներ էին միայն գրագիրները, այն էլ այդ պարտականությունները հաճախ կատարում էին պետական ստրուկները:

Ամենակարևոր կոլեգիան տասը ստրատեգոսների կոլեգիան էր. այն ընտրվում էր ամեն տարի, քվեարկությամբ՝ ժողովրդական ժողովում ձեռքերը վեր բարձրացնելու միջոցով: Դա միակ կոլեգիան էր, որի անդամները կարող էին վերընտրվել անսահմանա-



փակ անգամ: Նման բացառությունը պայմանավորված էր պատե-  
րազմի ընթացքում բանակի հրամանատարությունը միևնույն մարդ-  
կանց ձեռքում պահելու անհրաժեշտությունը: Այդ կոլեգիայի հա-  
մար գոյություն չունեի նաև ամենամյա հաշվետվություն: Ստրա-  
տեգոսների գործունեությունը քննարկվում էր միայն ռազմական  
անհաջողությունների, պարտությունների, դավաճանության մեջ  
կասկածելու, պետական միջոցները հափշտակելու և նման այլ դեպ-  
քերում: Այդպիսի դեպքում ստրատեգոսներին դատում էր ժողովըր-  
դական ժողովը, և մեղավորները ենթարկվում էին տարբեր պատիժ-  
ների՝ ընդհուպ մինչև մահապատիժը: Ստրատեգոսների դերը Աթեն-  
քի քաղաքական կյանքում մ. թ. ա. V դ. կեսից գնալով աճում էր:  
Նրանց ձեռքն էր անցնում արտաքին քաղաքականության ու ֆինանս-  
ական գործերի ղեկավարությունը. ստրատեգոսները անմիջական  
կապ էին հաստատում ժողովրդական ժողովի հետ ու ներազդում  
Աթենքում բոլոր պետական գործերի լուծման վրա: Սկսած մ. թ. ա.  
444 թ., առաջին ստրատեգոսի պաշտոնը զբաղեցնում էր ինքը՝ Պե-  
րիկլեսը:

Ստրատեգոսներից բացի, Աթենքում ընտրվում էին նաև շատ  
այլ կոլեգիաներ, որոնք մեծ մասամբ բաղկացած էին 10 հոգուց:  
Կոլեգիաների տնօրինության տակ էին գտնվում Աթենասի տաճա-  
րի գանձարանը, հարկերի գանձումը, պետական ունեցվածքի (հան-  
քեր, հողեր և այլն) վարձակալության հանձնումը և այլն: Ընտրու-  
վում էին շուկաների, նավահանգստի հսկիչների, հացի հսկիչների  
կոլեգիաներ: Պետական ապարատի բոլոր ֆունկցիաների կատա-  
րումը ընտրվի կոլեգիաների կողմից Աթենքի դեմոկրատական կա-  
ռուցվածքի ևս մեկ և հույժ էական գիծն էր:

Աթենքում ամենադեմոկրատական հիմնարկներից մեկն էր երդ-  
վյալների դատարանը, որն ընտրվում էր վիճակահանությունով: Երդ-  
վյալների դատարանը բաղկացած էր 6000 հոգուց ու բաժանված էր  
10 մասի՝ դիկաստերիոնների, չուրաքանչյուրում՝ 500 հոգի: Դա-  
տարանի մյուս անդամները պահեստային էին: Դատավոր կարող  
էին լինել 30 տարին լրացած բոլոր աթենական քաղաքացիները,  
եթե նրանք պետական պարտապաններ չէին: Դատավորների կա-  
շառումը կանխելու նպատակով գործերն առանձին հանձնաժողով-  
ների միջև բաշխվում էին վիճակահանությամբ: Աթենական դատա-  
րանը չգիտեր ոչ դատախազություն, ոչ փաստաբաններ: Ինչպես  
հայցվորը, այնպես և դատակիրը պետք է իրենք պաշտպանեին սե-  
փական շահերը: Միևնույն ժամանակ լայնորեն տարածված էր մաս-  
նագետ-պրոֆեսիոնալների կողմից և՛ մեղադրական, և՛ պաշտպա-  
նական դատական ճառեր կազմելու սովորույթը: Պատվիրատուները

անգիր սովորում էին ճառերն ու դրանք արտասանում դատարանում: Դատավարությունը հրապարակային էր. այն հիմնված էր կողմերի մրցության վրա ու թույլատրում էր հրավիրել վկաներ և ներկայացնել իրեղեն ապացույցներ: Իր դեմոկրատիզմով հանդերձ, աթենական հելիալայի դասակարգային բնույթը պարզորեն հանդես էր գալիս դատավորների կողմից ստրուկների հանդեպ ունեցած վերաբերմունքում: Ինչպես նշվեց, օրենքը իրական էր համարում ստրուկ-վկայի միայն այն ցուցմունքը, որը տրված էր վերջինիս խոշտանգումների ենթարկելու ժամանակ, քանի որ ստրուկը իր մտավոր ու հոգեկան հատկանիշներով լիարժեք մարդ չէր համարվում, և վկայութուն կարող էր տալ միայն նրա մարմինը: Ստրուկին հարցաքննելու համար պահանջվում էր նրա տիրոջ համաձայնությունը: Եթե ստրուկը մեռնում էր խոշտանգումներից, ապա գանձարանը տիրոջը հատուցում էր նրա կրած վնասները:

Դատական ֆունկցիաներից բացի հելիալային էր պատկանում նաև մեկ կարևոր ֆունկցիա ևս՝ օրենքները հաստատելու իրավունքը: Ըստ աթենական սովորության, ժողովրդական ժողովում ընդունված օրենքը իրավական ուժ չէր ստանում մինչև խորհրդի կողմից նրա վերջնական խմբագրումն ու հելիալայի կողմից դրա հաստատումը: Միայն դրանից հետո այն համարվում էր օրենք (հունարեն՝ նոմոս) ու գրվելով տախտակի վրա, ցուցադրվում ի գիտություն բոլորի: Նոր օրենքների ընդունման նման բարդ կարգը սահմանվել էր լավ շմտածված որոշումներից խուսափելու համար:

Նոր պետական մարմինների հետ մեկտեղ Աթենքում շարունակում էր գոյատևել արեոպագոսն ու, ինչպես հնում, ամեն տարի ընտրվում էին արքոնտներ: Սակայն նրանք արդեն համարյա ոչ մի դեր չէին խաղում պետության կառավարման գործում:

Այսպիսին էր Աթենքի պետական կարգը գասական շրջանում: Թուկիդիդեսը այսպես է բնութագրում այն Պերիկլեսի խոսքերով. «Մեր պետական կարգը չի ընդօրինակում ուրիշ հաստատությունների, ավելի շուտ, մենք ինքներս ենք ոմանց համար օրինակ հանգիսանում, քան թե նմանվում ուրիշներին: Այդ կարգը կոչվում է դեմոկրատական, որովհետև այն հիմնված է ոչ թե փոքրամասնության, այլ նրանց (այսինքն քաղաքացիների) մեծամասնության վրա: Մասնավոր անձանց վերաբերյալ օրենքներն ընձեռում են հավասարություն բոլորին: Ինչ վերաբերում է քաղաքական նշանակությունը, ապա մեզ մոտ պետական կյանքում ամեն ոք օգտվում է նրանից ավելի, քան մյուսները, ոչ թե այն պատճառով, որ նրան օժանդակում է այս կամ այն քաղաքական կուսակցությունը, այլ նրա արիության շնորհիվ... կոչման համեստությունը արգելք չէ չը-

քաղորդի գործունեության համար, եթե միայն նա կարող է որևէ ծառայություն մատուցել պետությանը» (II, 37, 1):

ԱՔԵՆԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԴԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ  
ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Թուկիդդեսի, իսկ նրա հետ մեկտեղ նաև նրա բոլոր ժամանակակիցների պատկերացմամբ, դեմոկրատական կարգը հիմնված էր կառավարմանը ժողովրդի՝ դեմոսի մեծամասնության մասնակցության վրա: Այն օրինականորեն հակադրվում էր օլիգարխիական կամ արիստոկրատական կարգերին, որոնք տիրապետում էին մի շարք հունական քաղաք-պետություններում: Սակայն չպետք է մոռանալ, որ Աթենքում թուկիդդեսյան այդ «մեծամասնությունը» ընդգրկում էր բնակչության հազիվ 20 տոկոսից ավելին: Նրա մեջ մտնում էին միայն լիիրավ քաղաքացիները՝ քսան տարին լրացած տղամարդիկ: Ո՛չ կանայք՝ աթենական քաղաքացուհիները, ո՛չ մետոյկները (այլ հունական և ոչ հունական համայնքներից Աթենք տեղափոխված ազատ մարդիկ) ու առավել ևս ստրուկները չէին մտնում այդ մեծամասնության կազմի մեջ և շունչին ոչ մի քաղաքական իրավունք: Այսպիսով, Աթենքի, ինչպես նաև Հունաստանի այլ քաղաքների դեմոկրատական սահմանադրությունը դասակարգային տեսակետից սահմանափակ էր. այն դեմոկրատական էր սոսկ փոքր թիվ կազմող լիիրավ քաղաքացիների համար: Աթենական դեմոկրատիայի սահմանափակ բնույթը պարզորոշ երևան է գալիս մ. թ. ա. 451 թ. օրենքի տեսմանսիրությունից: Այդ օրենքը պատժում էր բոլոր նրանց, ովքեր համարձակվում էին իրենց վերագրել աթենական քաղաքացիություն: Այն արտոնություններն ու իրավունքները, որոնցից օգտվում էին աթենական քաղաքացիները, ինչպես նաև Աթենքի վերածվելը Հունաստանի խոշորագույն տրնտեսական կենտրոնի, հրապուրիչ էին դարձնում աթենական քաղաքացիության ձեռք բերումը: Մեծացավ բնակչության հոսքը այլ քաղաքներից Աթենք, ուժեղացավ ազգակցական կապերի միջոցով կամ այլ ճանապարհով աթենական քաղաքացիություն ստանալու ձգտումը: Բոլոր նման նկրտումները սպառնում էին քաղաքացիների արտոնություններին: Աթենական համայնքի ֆինանսական հնարավորություններն ու հողային ֆոնդը սահմանափակ էին (հայտնի է, որ քաղաքացիությունը կապված էր հողատիրական փրավունքի հետ), և քաղաքացիների թվի արտակարգ մեծացումը կարող էր բացասաբար անդրադառնալ նրանց բարեկեցության վրա: Քաղաքացիների շահերը պաշտպանելու նպատակով Պերիկլեսը մ. թ. ա. 451 թ. մտցրեց օրենք, որի համաձայն աթենական քաղաքացի կարող էր

դառնալ միայն այն անձը, որի հայրն ու մայրը եղել էին աթենական քաղաքացիներ: Այսպիսով, այդ օրենքը չէր ընդունում բոլոր մարդկանց իրավահավասարության սկզբունքը, այլ սահմանափակում էր այդ հասկացությունը «բնածին» աթենական քաղաքացիների նեղ շրջանակով:

Պերիկլեսի այդ օրենքն առաջացրեց ապօրինի ձևով քաղաքացիության իրավունքներ ստանալու հետ կապված դատավարությունների մի ամբողջ շարք, ծագեցին դատավեճեր, տեղացին մատնություններ ապօրինածինների մասին և այլն: Այդ օրենքը վնասեց շատ արիստոկրատական ընտանիքների շահերին, քանի որ, հակառակ աթենական սովորության, արիստոկրատիայի բազմաթիվ ներկայացուցիչներ ամուսնանում էին ոչ թե աթենուհիների, այլ ուրիշ քաղաքների հարուստ ու անվանի կանանց հետ: Հենց իր՝ Պերիկլեսի գավակները, որոնք ծնվել էին միլետուհի Ասպասիայի հետ նրա երկրորդ ամուսնությունից, չէին կարող համարվել աթենական քաղաքացիներ:

Մ. թ. ա. 451 թ. օրենքն ու այլ միջոցառումները Պերիկլեսը անցկացրեց՝ հենվելով ժողովրդական ժողովում ունեցած մեծամասնության վրա: Դա ապարդյուն էր դարձնում դեմոկրատիայի թըշնամիներին բոլոր բողոքները: Այդ տարիներին արիստոկրատիային գլխավորեց նոր առաջնորդ ալոպեկցի Մելեսիոսի որդի Քուկիդիդեսը, որը տաղանդավոր հոետոր էր և կարողացավ իր շուրջը համախմբել դեմոկրատիային թշնամի տարրերին ու նրանց հակադրել դեմոկրատներին: Սակայն դեմոկրատիայի թշնամիները ոչ մի հաջողություն չունեցան: Նրանք կատարյալ պարտություն կրեցին: Քուկիդիդեսը ենթարկվեց օստրակիզմի:

Պերիկլեսի դեմ հանդես եկող արիստոկրատական օպոզիցիայի թուլությունը բացատրվում էր նրանով, որ մ. թ. ա. V դ. կեսին աթենական ստրկատիրական հասարակության դեմոկրատական խավերը դարձան տնտեսության առաջատար ճյուղերի տերեր: Ստրկատիրական արիստոկրատիայի զգալի մասը համաձայն էր այն արտաքին քաղաքականությանը, որը վարում էր Աթենքի դեմոկրատական կառավարությունը, որովհետև այդ քաղաքականությունը շահավետ էր նրա համար:

#### ԱԹԵՆԱԿԱՆ ԱՐԽԵՆ

Աթենքի արտաքին քաղաքականությունը չէր սահմանափակվում մայրցամաքային Հունաստանում քաղաքական գերակշռության հասնելու ցանկությամբ: Պերիկլեսը ձգտում էր տարածել Աթենքի հեգեմոնիան նաև Աթենական ծովային միությունում: Իր դաշնա-

կիցները նկատմամբ Աթենքի վարած մեծապետական քաղաքականությունը նպաստեց դելոսյան սիմմաքիայի հետզհետե վերածմանը աթենական արխեի՝ Աթենքի կողմից գլխավորած քաղաքների ռազմաքաղաքական միությունը, որտեղ դաշնակից քաղաքները փաստորեն դարձան Աթենքի հպատակներ:

Հունական քաղաքների միության ստեղծման հենց սկզբից Աթենքը իր ռազմական նավատորմի շնորհիվ միության մեջ ձեռք բերեց գերակշռություն: Հետագայում Աթենքի ազդեցությունը շարունակում էր անշեղորեն աճել: Աթենքի տնտեսական զարգացումը, նրա վերածումը Հունաստանի խոշորագույն կենտրոնի ստեղծեցին դաշնակիցների նկատմամբ Աթենքի տիրապետության տնտեսական նախադրյալները:

Աթենքը լայնորեն օգտագործեց դաշնակից քաղաքների կողմից նավերով ու զինվորական ջոկատներով կատարվող մատակարարումները Ֆորոսի վճարումներով փոխարինելու տարածված պրակտիկան: Հետզհետե աթենացիները սկսեցին իրենք որոշել ֆորոսի շահերը՝ ելնելով յուրաքանչյուր քաղաքի բարեկեցության աստիճանից: Աթենքը լիովին տնօրինում էր հավաքված գումարները, և դրանցով Աթենքում ստեղծվում էին նոր նավաշինարաններ, կառուցվում էին նոր նավեր, որոնք հզորացնում էին Աթենքի ռազմական նավատորմիդր: Դրանով աթենացիների ռազմական առավելությունը իրենց դաշնակիցների նկատմամբ ավելի ևս մեծանում էր: Թասոսի և Նաքսոսի ապստամբությունների ճնշումից հետո սեփական նավատորմ ու սեփական զինված ուժեր պահում էին միայն խոշոր կղզային քաղաքներ Միտիլենեն՝ Լեսբոսում, Քիոսն ու Սամոսը: Բոլոր մյուս դաշնակիցները պետք է ենթարկվեին Աթենքին ու վճարեին ֆորոս: Հնարավոր չէ ճշգրիտ որոշել Աթենական Արխեի մեջ մտնող քաղաքների ցուցակը. մեր տրամադրության տակ կան ոչ լրիվ ու հաճախ խիստ վնասված արձանագրություններ: Մ. թ. ա. V դ. կեսերին միության մեջ մտնում էին՝ էգեյան ծովի մոտ գտնվող կղզային ու առափնյա պոլիսների մեծ մասը, Եվբեան, Հելլեսպոնտոսի ու Պրոպոնտիսի ափերին գտնվող քաղաքների զգալի մասը, Փոքր Ասիայի հոնիական ու էոլական քաղաքները, ինչպես նաև Կարիայի ու Լյուկիայի որոշ քաղաքներ: Հիմքեր կան ենթադրելու, որ միության մեջ մտան նաև մերձսևծովյան քաղաքները, մասնավորապես՝ Նիմփեոնը Ղրիմի թերակղզում: Արխեի մեջ մտնող քաղաքների ընդհանուր թիվը մոտավորապես 250 էր: Սակայն այդ թիվը փոխվում էր առանձին քաղաքների միացման կամ անջատման հետևանքով:

Աթենացիները միության ողջ տարածքը բաժանեցին հինգ

(մինչև մ. թ. ա. 443 թ. դրանք երեքն էին) հարկային օկրուզների՝ Հոնիական, Հելլեսպոնտոսյան, Թրակիական, Կարիական ու Կըղզային: Յուրաքանչյուր օկրուզի գլուխն աթենացիները նշանակեցին իրենց լիազորներին՝ եպիսկոպոսներին\*, որոնք հսկում էին քաղաքների կողմից ֆորոսի վճարմանն ու հետևում էին քաղաքների վարքագծին ու նրանց վերաբերմունքին Աթենքի նկատմամբ: Ֆորոսի բաշխումը վերանայվում էր յուրաքանչյուր շորս տարին մեկ: Աթենական ժողովրդական ժողովի կողմից ընտրված հատուկ լիազորները, երկուսը ամեն մի օկրուզի համար, պարզում էին յուրաքանչյուր քաղաքի բարեկեցությունը ու սահմանում էին նրա կողմից վճարվելիք ֆորոսի գումարի չափը: Հետո այդ գումարը հաստատվում էր աթենական հելիայայում: Իրենք՝ քաղաքները միայն կարող էին դիմել աթենական երդվյալ դատավորներին ու խնդրել նրանցից նվազեցնել սահմանված գումարը, սակայն նման խնդրանքները միշտ չէ, որ հաշվի էին առնում:

Ինչպես արդեն հիշատակվել է, մ. թ. ա. 454 թ. պարսիկների կողմից Նեղոսի գետաբերանում աթենական նավատորմի ու զորքի ոչնչացումից հետո աթենացիները պարսիկների նոր արշավանքի հնարավորության պատրվակով պահանջեցին միության ընդհանուր գանձատունը Դելոսից փոխադրել Աթենք: Գանձատան փոխադրումը նշանավորեց դելոսյան միության վերջնական վերածումը արխեի՝ Աթենական ժողային տերություն: Սկսած այդ թվականից, տարեկան մուծումների ընդհանուր գումարի 1/60 մասը, ինչպես այդ մասին վկայում են աթենական արձանագրությունները, աթենացիք հատկացնում էին Աթենաս աստվածուհու տաճարի գանձարանին: Փաստորեն այդ ժամանակից աթենացիները լիովին տնօրինում էին դաշնակիցներից հավաքվող միջոցները: Թեև առաջվա պես ընտրվում էին միութենական գանձատան կառավարիչներ՝ հելլենոտամիասներ, բայց նրանք, հավանաբար, շունչին ոչ մի ազդեցություն: Աստիճանաբար ֆորոսը սկսեցին ծախսել ոչ միայն նավեր կառուցելու ու ռազմական պետքերի համար, այլև Աթենքում հասարակական շենքեր, տաճարներ կառուցելու, քաղաքը արձաններով զարդարելու համար: Հավանաբար ֆորոսի գումարներից կատարվում էին նաև վճարումներ քաղաքացիներին՝ նրանց կատարած հասարակական պարտականությունների համար:

Դաշնակից քաղաքների վրա Աթենքի իշխանությունն ամրապնդելու մյուս միջոցը նրանց դատական լիազորությունների սահմանափակումն էր: Աթենացիները հասան այն բանին, որ դաշնա-

\* Եպիսկոպոս՝ բառացի նշանակում է վերատեսուչ (ծան. խմբ.):

կիցների բոլոր առավել խոշոր քաղաքացիական դատավարությունները, ինչպես նաև Արխեի տարբեր քաղաքների միջև ծագող բոլոր գործերը հանձնվեցին աթենական հելիսյայի քննարկմանը:

Հետո Աթենքը սկսեց միջամտել դաշնակիցների ներքին գործերին: Նա ամեն կերպ ձգտում էր զրկել նրանց ինքնուրույնությունից, անգամ ներքին գործերում: Օգտագործելով ամեն տեսակի առիթները և հատկապես Աթենքից անջատվելու փորձերը, աթենացիները փոխում էին դաշնակից քաղաքներում դրանց պետական կարգերը, հաճախ պարտադրում էին աթենական սահմանադրությանը նմանվող հիմքեր: Պետք է նշել, որ քաղաքների բնակչության դեմոկրատական խավերը պաշտպանում էին Աթենքի այդպիսի միջոցառումները: Աթենքի այսպիսի քաղաքականությունը դաշնակից քաղաքներում, բնական է, առաջացնում էր օլիգարխիաների խիստ բողոքները, նրանց միջավայրում հետզհետե աճում էին պրոսպարտական տրամադրությունները: Պելոպոնեսյան միության օգնությամբ օլիգարխիները հույս ունեին վերականգնելու քաղաքներում իրենց կորցրած իշխանությունը:

Աթենացիները դաշնակիցների վրա իրենց տիրապետությունը ամրապնդելու նպատակով նրանց հողերում ստեղծում էին կլերուքիաներ: Գրավելով որևէ քաղաքի հողի մի մասը, աթենացիները բաժանում էին այն կտորների՝ կլերների ու հանձնում աթենական քաղաքացիներին: Կլերուքիաները դաշնակից քաղաքի տարածքում կատարում էին աթենական կայսզորի դեր: Պերիկլեսի օրոք որպես կլերուքներ դուրս բերվեցին ավելի քան 10000 աթենական քաղաքացիներ:

Դաշնակիցներին հպատակեցնում էին նաև տնտեսական միջոցներով: Դաշնակից քաղաքներում լայն տարածում ունեցան աթենական դրամը, աթենական չափն ու կշիռը: Մ. թ. ա. 434 թ. Աթենքը անգամ պաշտոնապես փորձեց արգելել դաշնակից քաղաքներին հատել սեփական դրամ, սակայն գործնականում չհաջողվեց իրականացնել այդ արգելքը: Հետո աթենացիները որոշ հսկողություն սահմանեցին դաշնակիցների առևտրի վրա, կիրառում էին անհավասար առևտրական համաձայնություններ կնքելու պրակտիկան, նման համաձայնությունների միջոցով հարկադրում էին տրվյալ քաղաքին ներմուծել առանձին ապրանքներ, օրինակ՝ երկաթ միայն Աթենքից և այլն: Սահմանվեց կարգ, որի համաձայն Սևծովյան հացը բաշխվում էր դաշնակից քաղաքների միջև միայն աթենական Պիրեոս նավահանգստի միջոցով: Այդպիսի քաղաքականությունը առաջացնում էր դժգոհություն աթենական հեգեմոնիայի գեմ նաև միութենական դեմոսի շրջանում:

Չնայած աթենական տիրապետութեան ծանրութեանը, աթենական արխեին պատկանելը քաղաքներին տալիս էր մի շարք առավելութիւններ: Աթենացիների տիրապետութիւնը ծովում ապահովում էր ծովագնացութեան ու ծովային առևտրի անվտանգութիւնն ու թեթևացնում էր հարաբերութիւնները մյուս քաղաքների միջև: Արխեին պատկանելը նպաստում էր ավելի սերտ տնտեսական կապերի հաստատմանը տարբեր քաղաքների միջև, մատչելի էր դարձնում նաև հեռավոր շուկաները:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՍՐՈՒՄԸ ԱԹԵՆԱԿԱՆ ԱՐԽԵՈՒՄ

Միութունից ստացվող օգուտները չէին կարող կասեցնել Աթենքի քաղաքականութեան հետևանքով առաջացած դժգոհութեան աճը, ինչպես նաև վիժեցնել քաղաքների ձգտումը՝ վերականգնելու իրենց անկախութիւնը: Հաճախ այդ դժգոհութիւնը արտահայտվում էր Աթենքի դեմ ուղղված ապստամբութիւնների ձևով: Սովորաբար Աթենքը նավատորմի օգնութեամբ համեմատաբար հեշտ էր ճնշում այդ ապստամբութիւնները: Ըմբոստ քաղաքը զրկվում էր իր պարիսպներից, վճարում ռազմատուգանք, հաճախ այստեղ մտցվում էր աթենական կայազոր, և քաղաքի հողի մի մասը գրավվում էր աթենական կրեուքիայի համար:

Աթենքի դեմ ուղղված խոշորագույն ապստամբութիւնն էր մ. թ. ա. 440—439 թթ. ապստամբութիւնը: Այն սկսվեց Սամոսում ու համարյա միաժամանակ՝ Բյուզանդիոնում: Հետևանքը եղավ Կարիական և որոշ փոքրասիական քաղաքների անջատումը: Ապստամբութիւնը ճնշելու նպատակով ուղարկված աթենական նավատորմը ջախջախվեց Սամոսի մոտ: Դրութիւնը այնքան լուրջ էր, որ ինքը՝ Պերիկլեսը գլխավորեց ապստամբների դեմ ուղղված նոր արշավանքը: Սամոսցիները ցույց տվեցին համառ դիմադրութիւն: Միայն ութամսյա պաշարումից հետո նրանք ցած դրեցին զենքը ու անձնատուր եղան հաղթողին: Սամոսցիները զրկվեցին նավատորմից, քաղաքային ամրութիւնները քանդվեցին, իսկ քաղաքացիները Աթենքին վճարեցին մեծ ռազմատուգանք:

Սամոսում ապստամբութեան հետ սերտորեն կապված էր Պերիկլեսի գլխավորութեամբ դեպի Սև ծով աթենական նավատորմի արշավանքը: Այդ արշավանքի նպատակն էր ցուցադրել դաշնակից քաղաքներին ու սևծովյան ափերի բնակչութեանը Աթենքի ռազմական հզորութիւնը, ամրապնդել Աթենքի ազդեցութիւնը Էգեյան ու Մարմարա ծովերից Սև ծով տանող նեղուցներում, հաստատել



առևտրական ու քաղաքական կապեր սեծովյան քաղաքների հետ: Մերձսեծովյան շրջանների հետ կապերի ամրապնդումը հատկապես կարևոր էր այն պատճառով, որ 30-ական թվականների սկզբներին Բոսպորյան թագավորությունում, ի դեմս Սպարտոկի, իշխանության գլուխ անցավ նոր արքայատոհմ, որը սկսեց վարել բավականին անկախ արտաքին քաղաքականություն: Իսկ Աթենքը ավելի ու ավելի էր զգում սեծովյան հացի կարիքը: Աթենացիների արշավանքը ավարտվեց մերձսեծովյան քաղաքներում մի շարք հենակետերի ստեղծումով: Աստակոս (Մարմարա ծովի ափերին), Սինոպե ու Ամիսոս դուրս բերվեցին աթենական փառաբանականեր: Հյուսիսային մերձսեծովյան շրջաններում աթենական ազդեցության գլխավոր հենակետը Նիմփեոնն էր, որը դարձավ մեծ առևտրական քաղաք: Հավանաբար, աթենացիներին հաջողվեց առևտրական կապեր հաստատել նաև Թամանյան թերակղզում ապրող սինդերի հետ: Այդ մասին են վկայում մ. թ. ա. V դ. վերջին քառորդի սինդական դրամները, որոնց վրա պատկերված է Աթենքի խորհրդանիշը՝ բուն:

Պերիկլեսի արտաքին քաղաքականությունը շահավետ էր ոչ միայն աթենական հասարակության ստրկատիրական վերնախավին. այն համապատասխանում էր նաև շարքային քաղաքացիության լայն շրջանների շահերին: Բանը այն է, որ ստրկական աշխատանքի լայն կիրառման ու դրամաապրանքային հարաբերությունների զարգացման հետևանքով տեղի ունեցավ աթենական քաղաքացիության զգալի շերտավորում. սկսվեց շարքային քաղաքացիների աղքատացման պրոցեսը, աճեց հողի պահանջարկը: Աթենքի մեծապետական քաղաքականությունը՝ ֆորոսի, առևտրական մաքսերի, տուգանքների գանձումների, բռնագրավումների ձևով, և եկամուտների այլ աղբյուրները տալիս էին հսկայական միջոցներ: Այդ եկամուտները հնարավորություն տվեցին Պերիկլեսին, ինչպես նշվել էր, Աթենքում զարգացնել եռանդուն շինարարություն, որտեղ զբաղված էին ու որի շնորհիվ գոյամիջոցներ էին ձեռք բերում մեծ քանակությամբ մարդիկ: Աթենքի տիրապետությունը դաշնակիցների վրա թույլ էր տալիս նրան առաջվա պես իր կլերուքներին դուրս բերել դաշնակից քաղաքների հողերը: Աթենքը դուրս բերեց կլերուքիաներ Լեմնոս, Իմբրոս, Սվրեա, Անդրոս, Նաքսոս կղզիները, Թրակիական ծովափ (Քրեյա) և այլն: 443 թ. Իտալիայում, Սիբարիսի տեղում Աթենքը ստեղծեց իր Թուրիա գաղութը, որի հիմնադրմանը մասնակցեց պատմիչ Հերոդոտոսը: Կլերուքիաների դուրս բերումը որոշ չափով լուծում էր այն սոցիալական հակասությունները, որոնք կուտակվել էին աթենական հասարակությունում:

Սակայն մ. թ. ա. V դ. 30-ական թվականներին օպոզիցիոն տրամադրությունները Աթենքում ուժեղացան: Օլիգարխիական օպոզիցիայից բացի, Պերիկլեսը ընդհարվեց օպոզիցիոն հոսանքների հետ նաև իր իսկ դեմոկրատիայի ներսում: Եթե օլիգարխները հանդես էին գալիս Աթենքի պետական կարգերի դեմոկրատացման նպատակին ուղղված պերիկլեսյան միջոցառումների դեմ, ինչպես նաև հարձակումներ էին գործում դաշնակիցների նկատմամբ Պերիկլեսի քաղաքականության վրա, հայտարարելով, որ «ներանցից (քաղաքներից) պատերազմ վարելու նպատակով հարկադրանքով գանձվող միջոցները մենք ծախսում ենք այն քանի համար, որպեսզի մեր քաղաքը... կարողանա ոսկեզօծել ու զարդարել իրեն» (Պլուտարքոս, Պերիկլես, 12), ապա դեմոկրատական միջավայրին պատկանող դժգոհները Պերիկլեսի ամբողջ քաղաքականությունը համարում էին անբավարար: Վերջիններս ներկայացնում էին աթենական հասարակության առևտրաարհեստավորական հատվածի, այսինքն երգաստեղծիչների ու առևտրական ձեռնարկությունների հարուստ տերերի, քաղաքային բնակչության դեմոկրատական զանգվածների շահերը: Նրանց գլխավորեց կաշեգործական արհեստանոցի տեր Կլեոնը: Այդ խմբավորումը պահանջում էր էլ սվելի ակտիվացնել Աթենքի արտաքին քաղաքականությունը:

Օպոզիցիոն տրամադրությունները հանգեցրին մի շարք դատավարությունների, որոնք հարուցվեցին Պերիկլեսի ազգականների ու բարեկամների դեմ: Ըստ երևույթին, անձամբ Պերիկլեսի դեմ նրա հակառակորդները այդ ժամանակ դեռ չէին համարձակվում ելույթ ունենալ: Պերիկլեսի բարեկամ, քանդակագործ Յիդիասին մեղադրեցին այն բանում, որ աստվածուհի Աթենասի արձանը ըստեղծելու ժամանակ նա հափշտակել էր ոսկի: Թեև Յիդիասին հաջողվեց ապացուցել իր անմեղ լինելը, բայց նա մահացավ բանտում, սրբապղծության համար կրկին հանձնված լինելով դատի: Փիլիսոփա Անաքսագորասը, որ պատկանում էր Պերիկլեսի խմբակին, նույնպես մեղադրվեց անաստվածություն մեջ ու հագիվ փրկվեց դատից: Վերջապես Պերիկլեսի կին Ասպասիան մեղադրվեց աստծուն անարգելու մեջ, ու նրան արդարացրեցին միայն Պերիկլեսի նվաստացուցիչ խնդրանքների շնորհիվ: 30-ական թվականների այս քաղաքական պայքարը արտացոլվել է Եվրիպիդեսի վաղ ողբերգություններում:

Հենց դեմոկրատիայի ներսում եղած օպոզիցիոն տրամադրությունները արագացրեցին Աթենական արխեի ռազմական ընդհարումը Պելոպոնեսյան միության հետ:

Աղբյուրները համեմատաբար մեծ քանակությամբ նյութ են տալիս նաև մ. թ. ա. V դ. Կրետեի, Թեսալիայի, Բեովտիայի քաղաքների սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքին ծանոթանալու համար: Այդ մարզերի համար ևս հատուկ նշանակություն ունեն պատմիչ-ժամանակակիցների՝ Հերոդոտոսի ու Թուկիդիդեսի աշխատություններում պահպանված նյութերը, որոնք պարունակում են թեև կցկտուր, սակայն վստահելի վկայություններ: Կրետեի, Թեսալիայի ու Բեովտիայի պատմությունը ուսումնասիրելու ժամանակ չպետք է շրջանցել ավելի ուշ շրջանի, հատկապես մ. թ. ա. IV դ. գրողների գործերը: Այդ շրջանում Հունաստանում մեծ չափով աճեց հետաքրքրությունը այնպիսի մարզերի նկատմամբ, ինչպիսիք էին Կրետեն, Սպարտան, Թեսալիան: Այդ աղբյուրների մեջ առաջին տեղը, ըստ հաղորդվող նյութի հարստության, գրավում են Կրետեի հասարակական ու պետական կարգերին վերաբերող ակնարկները, որոնք տվել է Արիստոտելը «Պոլիտիկայում»: Մեծ նշանակություն ունեն Եփորոսի չպահպանված գրքի հատվածները, որոնք օգտագործել են Ստրաբոնն ու Պոլիբիոսը: Մ. թ. ա. V դ. Բեովտիայի պատմության համար առաջնակարգ աղբյուրներ են այսպես կոչված Օբսիրինքյան պատմիչի գործերից պահպանված հատվածները, ինչպես և Քսենոֆոնի «Հունական պատմությունը»: Սակայն մ. թ. ա. IV դ. գրական աղբյուրների ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ նրանց հեղինակների միտումը, քանի որ այդ ժամանակ բավականին տարածված էին լակոնաֆիլ գաղափարները: Լակոնաֆիլությամբ տոգորված են Քսենոֆոնի, Պլատոնի, Եփորոսի, մասամբ Արիստոտելի գործերը: Արիստոտելը քննարկում էր Սպարտայի ու Կրետեի հասարակական կարգը իր մշակած «լավագույն» պետական կառուցվածքի նախագրծին համապատասխանելու կամ չհամապատասխանելու տեսանկյունից:

Պահպանվել են ոչ միայն անտիկ հեղինակների գործերը, այլև զգալի թվով վիմագիր աղբյուրներ, որոնց մեջ հատուկ տեղ է գրավում կրետական խոշոր պոլիսներից մեկի՝ Գորտինի քաղաքացիական օրենքների ժողովածուն: Այն տեղեկություններ է պարունակում Կրետեում սոցիալական կարգերի, ստրկատիրության, պետական կառուցվածքի, ընտանեկան ու ժառանգական իրավունքի մասին: Այդ հուշարձանի վերջին խմբագրումը վերաբերում է մ. թ. ա. V դ. սկզբին, թեև պահպանվել են նաև ավելի վաղ հատվածներ:

Որոշ տեղեկություններ կարելի է քաղել դրամների ուսումնասիրությունից: Դրանց առաջացումն ու արագ տարածումը Կրետեի,

Թեսալիայի ու Բեովտիայի քաղաքներում վերաբերում է հենց մ. թ. ա. V դ.: Հնագիտական պեղումները տալիս են տեխնիկայի, արհեստի ու արվեստի զարգացման պատկերը:

Կրետեին ու Թեսալիային նման մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման մեջ կային շատ ընդհանրություններ Սպարտայի հետ: Այդ մարզերում անտիկ հասարակության բնական հիմքը՝ ստրկությունն ու հողատիրությունը մեր առջև ծառանում են իրենց դեռևս չզարգացած, պարզունակ տեսքով, մի բան, որ իր կնիքը դրեց ամբողջ հասարակական կարգի վրա: Այդ տեսակետից ամենամեծ հետաքրքրությունը ներկայացնում են Կրետեի քաղաքները, որոնց սոցիալ-տնտեսական կառուցվածքը կարելի է լավ ուսումնասիրել պատմական աղբյուրների հարուստ նյութի միջոցով:

#### ԿՐԵՏԵ

Հերոդոտոսի ու Թուկիդիդեսի աշխատությունների հիման վրա կարելի է եզրակացնել, որ հույն-պարսկական պատերազմների ու հատկապես Պելոպոնեսյան պատերազմի շրջանի քաղաքական պայքարին Կրետեն ակտիվորեն չէր մասնակցել: Հայտնի է միայն, որ կրետական վարձկան զորքերը երկու պատերազմների ժամանակ կռվում էին տարբեր պետությունների ու քաղաքական խմբավորումների կողմում: Սակայն տնտեսական տեսակետից, մ. թ. ա. V դ. կրետական շատ քաղաքներ բավականին սերտորեն կապված էին Աթենքի հետ: Այդ ժամանակ նախորդ շրջանի համեմատությամբ մեծանում է կղզու առևտրական նշանակությունը: Փեստոս, Կնոսոս, Գորտին, Ելեֆտերնա քաղաքները հատում էին սեփական դրամ արծաթից ու պղնձից՝ ըստ էգինյան կշռային համակարգի: Գա վրկայում է այդ քաղաքների ինչպես ներքին (կղզու ներսում), այնպես և արտաքին զգալի առևտրական կապերի մասին: Քաղաքներում ապրում էին մեծ թվով ոչ կրետացիներ, որոնք ժամանել էին կղզի առևտրական գործերով: Կրետեի սոցիալ-տնտեսական կարգերում երկար ժամանակ պահպանվում էին արխաիկ գծեր: Աղբյուրները վկայում են, որ բոլոր ազատ քաղաքացիները մտնում էին մի քանի ինչպես դորիական, այնպես և ոչ դորիական ֆիլաների մեջ: Ֆիլաները պահպանում էին իրենց տնտեսական, վարչական ու ռազմական նշանակությունը. նրանք բաժանվում էին հետերիաների, որոնք կազմված էին առանձին տոհմերից: Հետերիաներում էր կենտրոնացված կրետացիների ողջ հասարակական կյանքը: Ազատի պատկանելը հետերիային պայմանավորում էր նրա քաղաքական իրավունքների առկայությունը: Արդեն Գորտինի օրենսդր-

րությունը արտացոլում է նշանակալից գույքային շերտավորման գոյություն:

Հետերիայի լիիրավ անդամներից բացի, կրետական պոլիսներում կային մեծ թվով, այսպես կոչված, ապետայրներ: Նրանց թրվին էին պատկանում աղքատացած ու այս կամ այն պատճառով քաղաքական իրավունքները կորցրած քաղաքացիները, ինչպես նաև ոչ կրետացիները և աղատ արձակվածները: Այդ կարգի մարդիկ անձնապես ազատ էին, բայց շունեին քաղաքացիական ու քաղաքական իրավունքներ: Կրետեում մեծ դեր էր խաղում ռազմատու՝ մային միավորումը՝ ստրատոսը, որը կազմված էր զինվորական ծառայություն կրելու ընդունակ որոշակի թվով քաղաքացիներից: Ազատ բնակչությունը իր հիմնական ժամանակը տրամադրում էր զինվորական վարժություններին ու մարմնամարզական մրցումներին, ապետայրները զբաղվում էին արհեստով ու առևտրով: Հիմնական արտադրողական ուժը կազմում էին տարբեր կարգերի ըստրուկները:

Կրետական լիիրավ քաղաքացիների, հետերիայի անդամների գոյության նյութական հիմքը կազմում էր հողային սեփականությունը: Մինչև մ. թ. ա. V դ. վերջը հողը ամբողջ կոլեկտիվի սեփականությունն էր և միայն գտնվում էր նրա առանձին անդամների տնօրինության ներքո: Մ. թ. ա. V դ. վերջից հողը դառնում է առանձին քաղաքացիների մասնավոր սեփականություն: Դա ուղեկցվում էր հողերի համակենտրոնացման աճով, զբավ դնելով, պարտային ստրկության տարածումով ու նշանավորում էր կրետական «հավասարների համայնքի» փլուզումը, համայնք, որը հիմնված էր կոլեկտիվ հողատիրության վրա:

Ստրկատիրությունը կրետական քաղաքներում մ. թ. ա. V դ. հասնում է զգալի չափերի ու բնորոշվում է ստրկության տարբեր ձևերի գոյակցությամբ: Բավականին տարածված էր սպարտական հելոտիային մոտեցող ձևը, որը պայմանավորված էր կոլեկտիվ հողատիրության մնացուկների պահպանումով: Կախման ալդ ձևի պայմաններում ստրուկը՝ հելոտը՝ Սպարտայում, ոչկեոսը, կլարոտեսը՝ Կրետեում, պենեստեսը՝ Թեսալիայում ամրացված էր ստրկատիրոջ կլերոսին, ու ստրկատերը իրավունք չուներ տեղաշարժել ստրուկին կամ վաճառել նրան պետության սահմաններից դուրս: Դա բացատրվում էր նրանով, որ կլարոտեսը (ոչկեոսը) ու կլերոսը, որ մշակվում էր կլարոտեսի կողմից, կազմում էին մեկ ամբողջություն և քաղաքացու մասնավոր սեփականություն չէին: Կլարոտեսին օգտվում էին որոշ արտոնություններից. նրանք կարող էին ունենալ քիչ գույք, օրինական ընտանիք ու անգամ, ըստ գոր-

տինյան օրենքների, կարող էին ամուսնանալ ազատ կնոջ հետ: Կրետական կլարոտների (ոյկեյների) վիճակի այս բոլոր առանձնահատկությունները բացատրվում են կրետական հասարակարգի պրիմիտիվությամբ, մասնավորապես ստրկական կախման այդ ձևի պրիմիտիվությամբ: Գրական աղբյուրները հիշատակում են նաև մնոիտներին, որոնք, հավանաբար, պետական ստրուկներ էին ու մշակում էին պետական հողերը: Հին գրողները հելլոտներին, կլարոտներին ու պենեստներին համարում էին ստրուկներ, իսկ կախման այդ ձևը բնորոշում էին որպես ստրկություն: Նրանցից շատերը նշում են, որ կլարոտներ ու պենեստներ էին դարձել նվաճողների՝ դորիացիների կողմից հպատակեցված տեղական քնակիչները: Իրավական տեսակետից ոյկեյները ոչնչով չէին տարբերվում սովորական ստրուկներից. նրանք նույնպես իրավազուրկ էին ու իրավունքի սոսկ օբյեկտներ, տիրոջ լիիրավ սեփականությունը, այն միակ տարբերությունով, որ սովյալ դեպքում տիրոջ դերում հանդես էր գալիս ստրկատերերի համայնքը՝ ամբողջությամբ վերցրած: Գոյություն ունի և այլ տեսակետ, որի համաձայն կրետական ոյկեյները տիրոջ «մեծ ընտանիքի» հետ կապված տնային ստրուկներն էին:

Կրետեի քաղաքացիները կարող էին գնել ստրուկներ: Այդպիսի ստրուկները կոչվում էին քրիսոնետներ, այսինքն՝ ոսկով գնվածներ: Մ. թ. ա. V դ. Կրետեում մեծապես զարգանում է պարտային ստրկությունը, որը աչքի էր ընկնում հատուկ խստությամբ և գրեթե սահմանափակված չէր օրենսդրության կողմից: Ստրկության առանձին տեսակը, նրա քողարկված ձևն էր որդեգրումը, որը հիմնված էր ընտանիքի անդամների նկատմամբ հոր ունեցած նահապետական իշխանության վրա:

Կրետական պոլիսների հասարակական կարգերի պրիմիտիվ ռազմարիստոկրատական բնույթի ու համայնական հողատիրության մնացուկների հետ էր կապված երկար ժամանակի ընթացքում այնպիսի արխաիկ հիմնարկների պահպանումը, ինչպիսիք էին տղամարդկանց միությունները (անդրիաները) և տարիքային ստորաբաժանումները: Անդրիաները կազմակերպված էին տոհմային սկզբունքով՝ պոլիսի ամբողջ շահահաս արական բնակչությունը պարտավոր էր ներկա լինել հասարակական ճաշկերույթներին իրենց հետերիաներում: Համատեղ ճաշկերույթները Կրետեում կազմակերպվում էին պետության հաշվին. դա տարբերում էր դրանք սպարտական սիսսիտիաներից: Կրետական անդրիաները տոհմային արիստոկրատիայի կազմակերպություններ էին, ռազմիկների հավաքներ:

Տոհմային կարգերին առնչվող մյուս վերապրուկն էր ամբողջ

ազատ բնակչութեան բաժանումը երեք տարիքային կարգերի՝ անոր-  
 ների, ապողորմների ու դրոմէսների. դա համապատասխանում էր  
 բաժանմանը մանուկների, պատանիների ու տղամարդկանց: Չա-  
 փահաս տղամարդիկ՝ դրոմէսները (վազորդներ) ստանում էին զենք  
 կրելու, հեռու տարածութիւնների վազքի մրցումներին մասնակցե-  
 լու իրավունք ու դառնում էին ռազմիկներ: Անցնելով դրոմէսների  
 շարքերը, կրետական պատանին ստանում էր նաև քաղաքական ի-  
 րավունքներ: Մանուկներն ու պատանիներն իրենց ողջ ազատ ժա-  
 մանակը անց էին կացնում ագելներում (հոտերում), զբաղվելով  
 սպորտային ու գինվորական վարժութիւններով: Կրետական հա-  
 սարակութեան ռազմաարիստոկրատական բնույթը վառ կերպով ար-  
 տահայտված է կրետացի Գիբրիասի խնջույքի երգում՝

Կա ինձ մոտ հարստութիւն՝ դա նիզակն է ու սուրը,  
 Եվ վահանը հիասքանչ, թեթև, որպեսզի մարմինը պաշտպանի,  
 Նրանցով ես հողն եմ վարում, նրանցով եմ հնձում  
 Ես ստանում եմ անուշ գինին վազից:  
 Ստրուկների տեր եմ կոչում ինձ դրա համար:  
 Իսկ նրանք, ովքեր շեն համարձակվում սուր ունենալ նիզակի հետ  
 Եվ վահան հիասքանչ, թեթև, որպեսզի մարմինը պաշտպանի՝  
 Իմ ծնկի առաջ բոլորը խոնարհվելով ցած,  
 Թող տեր ու արքա կոչեն ինձ:

(Աթենայոս, XV, 639)\*:

Կրետական ընտանեկան հարաբերութիւնները ևս պահպանում  
 էին հեռավոր անցյալին հարող շատ գծեր: Օրինակ, մինչև մ. թ. ա.  
 V դ. գոյութիւն ունեւր ապահարզանի անսահմանափակ իրավունք-  
 ապահարզանի նախաձեռնող կարող էր լինել ինչպես ամուսինը,  
 այնպես և կինը: Կրետացի կինն ունեւր զգալի գույքային իրավունք-  
 ներ ու բարձր հասարակական դիրք: Այն դեպքում, երբ ամուսինը  
 չքում էր իր կնոջը երեխաների հետ, նրա ամբողջ գույքը անցնում  
 էր երեխաներին, իսկ կինը հետ էր ստանում իր օժիտը, ամուսնու  
 հետ ձեռք բերված ունեցվածքի, ինչպես և դրանից ստացած եկա-  
 մրտի կեսը: Գորտինի օրենսդրութիւնը հատուկ ուշադրութիւն էր  
 նվիրում դուստր-ժառանգուհիների դրութեանը. դա կապված էր  
 տոհմի ներսում ունեցվածքի պահպանման անհրաժեշտութեան հետ:  
 Եպիկլեդներին (ժառանգուհիներին) հրահանգվում էր ամուսնանալ  
 միայն իր ֆիլայի անդամների հետ ու առաջին հերթին՝ հոր մեր-  
 ձավոր ազգականների հետ՝ ըստ նրանց ավագութեան:

Կրետական պոլիսների պետական կառուցվածքը մ. թ. ա. V դ.  
 կրեց մի շարք էական փոփոխութիւններ: Բասիլեւսների իշխանու-

\* Տողացի թարգմանութիւնը Գ. Հարութեանյանի:

թյունը, որոնց գոյություն մասին ավելի վաղ շրջանում խոսում է Արիստոտելը, ոչնչացվեց: Կրետական պոլիսնները օլիգարխիական տիպի արիստոկրատական հանրապետություններ էին: Արիստոտելը հրետական քաղաքական կարգը անվանում է «դինաստիա» ու այն համարում օլիգարխիայի տարատեսակ: Իսկ օլիգարխիան «Պոլիտիկայի» հեղինակը բնութագրում է որպես մի «կարգ, որի պայմաններում իշխանությունը գտնվում է հարուստ ու ծագման ազնվությունամբ աչքի ընկնող անձանց ձեռքում, որոնք կազմում էին փոքրամասնություն» (Պոլիտիկա, IV, 3, 8): Թագավորական իշխանության ֆունկցիաները մասամբ անցան կոմսերի կոլեգիային, որը իր ձեռքում կենտրոնացրեց բարձրագույն ռազմական կառավարումն ու բարձրագույն քաղաքական իշխանությունը: Կոմսերը վերընտրվում էին ամեն տարի, բայց ընտրվել կարող էին ոչ բոլոր ազատները, այլ միայն անվանի տոհմերի ներկայացուցիչները: Իրենց պաշտոնավարության ժամկետը ավարտած կոմսերը լրացնում էին գերուսիայի կամ բուլեի կազմը. այն իր ֆունկցիաներով հիշեցնում էր արիստիկ շրջանի աթենական արեոպագոսին: Կրետական բուլեն պահպանում էր պրիմիտիվ գերոնտոկրատիայի (ծերերի իշխանություն) գծեր ու կազմված էր 60 տարեկանը անց մարդկանցից: Ժողովրդական ժողովը (ագորան) համարյա շունք քաղաքական իշխանություն, բանի որ օրենսդրական նախաձեռնությունը պատկանում էր կոմսերի կոլեգիային ու գերուսիային:

Մ. թ. ա. VIII—VII դդ. ծագած կրետական պետությունները գոյություն ունեցան առանց որևէ էական փոփոխությունների մինչև մ. թ. ա. IV—III դդ.: Դա դորիական ցեղերի համեմատաբար մեկուսացված սոցիալ-տնտեսական զարգացման արդյունք էր, ցեղեր, որոնց մոտ տոհմացեղային հարաբերությունների քայքայումը առաջացավ նվաճման գործոնի ազդեցության շնորհիվ: Կղզու նվաճված բազմամարդ բնակչությունը հնազանդության մեջ պահելու անհրաժեշտությունն ու ստրուկների հուզումների վտանգը պայմանավորեցին այդ հասարակության հետամնաց ռազմաարիստոկրատական բնույթը:

#### ԹԵՍԱԼՅԱ

Թեսալիան իր սոցիալ-տնտեսական կարգերով հիշեցնում էր Կրետեն: Թեսալիայի բնական պայմանները նպաստեցին հողագործության ու անասնապահության և հատկապես ձիաբուծության զարգացմանը: Թեսալիայի, որը երկար ժամանակ միասնական պետություն չէր, հասարակական կարգերում պահպանվում էին տոհմային հասարակարգի՝ Կրետեի համեմատությամբ ավելի մեծ թվով



վերապրուկներ: Թեսալիայում հողը երկար ժամանակ համայնական սեփականություն էր բաժանվում էր առանձին տոհմերի միջև: Թեսալիայի պոլիսներում մ. թ. ա. V դ. քաղաքական ամբողջ իշխանությունը պատկանում էր խոշոր արիստոկրատական տոհմերի ներկայացուցիչներին, որոնցից ամենահարուստն էր Ալեվադդյանների տոհմը՝ կարիսա քաղաքում ու Սկոպադյանների տոհմը՝ Կրաննոնում: Կարիսայում հայտնաբերված մի արձանագրությունում նշվում են Թեսալիայի 30 անվանի տոհմեր, որոնք ունեին մեծ հողակտորներ: Յուրաքանչյուր հողակտորից (կլերոսից) պատերազմական գործողությունների ժամանակ պետք է տրվեին 40 հեծյալներ ու 80 հոպլիտներ: Թեսալական զորքի հիմնական կորիզը հեծելազորն էր:

Ստրկատիրությունը Թեսալիայում զարգացած էր ավելի թույլ, քան Կրետեում, սակայն նրա ձևերը շատ նման էին կրետականին: Հատկապես տարածված էր հելոտիային մոտ եղող կախման ձևը: Ստրուկները՝ պենեստները մշակում էին արիստոկրատիայի հողերն ու կարող էին ունենալ որոշ սեփականություն: Տերը նրանց նկատմամբ շուներ մասնավոր սեփականության իրավունք:

Թեսալիայի քաղաքական կառուցվածքը օլիգարխիական էր ընդհուպ մինչև մ. թ. ա. IV դ., երբ այն, ինչպես Կրետեում, որոշ չափով դեմոկրատացվեց: Թեսալիայում գոյություն ուներ հատուկ պաշտոն՝ տագոս: Տագոսը ընտրովի անձ էր, նա վարում էր ֆրատրիայի գործերը: Մ. թ. ա. IV դ. տագոսը դարձավ քաղաքների թեսալական միության կառավարիչ, ստանալով ռազմական առաջնորդի լիազորություններ:

#### ԲԵՈՎՏԻՍ

Բեովտիան մ. թ. ա. VI—V դարերում, ի տարբերություն Կրետեի ու Թեսալիայի, միութենական պետություն էր, որը ստեղծված էր ֆեդերացիայի հիմունքներով: Այդ ֆեդերացիան նախատեսում էր նրա կազմի մեջ մտնող պոլիսների ձևական իրավահավասարությունը: Միության մեջ ընդգրկվել էին մարզի բոլոր խոշոր քաղաքները՝ Օրքոմենոսը, Տանագրան, Օրոպոսը, Թեսպիան, Պլատեան, հատուկ տեղ էր գրավում Թեբեն, որը ավելի հզոր էր տնտեսական տեսակետից: Արգամանդ Բեովտիայի բնակչության գլխավոր զբաղմունքը հացագործությունն էր, ձիթենու մշակումը, այգեգործությունը, ինչպես նաև անասնապահությունը:

Բեովտիական պոլիսների տոհմային ավագանին պահպանել էր իր քաղաքական իշխանությունը: Սոցիալական կյանքը ուղեկցվում էր տոհմային արիստոկրատիայի երկու խմբերը ներկայացուց-

նող երկու կուսակցությունների սուր պայքարով: Կինը Բեովտիայի պոլիսներում գտնվում էր արտոնյալ վիճակում: Նա կարող էր ձեռք բերել գույք, վարձակալել հող, ազատ արձակել ստրուկներին, բայց նա չուներ քաղաքական իրավունքներ: Բեովտիական միության բնույթն ու քաղաքական կառուցվածքը փոխվեց ժամանակի ընթացքում: Մ. թ. ա. VI դ. գոյություն ունեւ բեովտիական քաղաքների կրոնական միություն (ամփիկտիոնիա), որի նըպատակն էր պաշտպանել սրբավայրերը: Հույն-պարսկական պատերազմի նախօրյակին այն վերածվեց ռազմական սիմմաքիայի: Տնտեսապես ավելի հզոր Թեբեն ձեռք բերեց գերիշխող դիրք միությունում, թեև ձևականորեն դաշնակից քաղաքները օգտվում էին հավասար իրավունքներից ու ինքնուրույն էին: Մ. թ. ա. 446 թ. բեովտիական միությունը ընդունեց նոր սահմանադրություն, որն ապահովում էր պոլիսների ինքնավարությունը: Թեբեն իրավական տեսակետից շտապեցավ ոչ մի արտոնություն: Միության մեջ մըտնող բոլոր պետությունները պետք է պահպանեին կառավարման օլիգարխիական ձևը: Բեովտիական միությունն ունեւ ընդհանուր դաշնակցային զորք, միության գլուխ կանգնած էին պաշտոնյան ձիք՝ բեովտարքները, թվով 11, ընտրված տարբեր քաղաքներից: Յուրաքանչյուր բեովտարքոսի հաշվով քաղաքը ուղարկում էր 60 ներկայացուցիչներ՝ միության խորհրդի համար, ինչպես և 1000 հուպիտներ, 100 հեծյալներ՝ միության զորքի համար:

Միության կառավարությունը տնօրինում էր միջազգային հարցերը, դրամի հատումը, որոշ ընդհանուր միութենական նշանակություն ունեցող դատական գործերը: Անդամությունը միությունում պահպանվում էր հարկադրանքի միջոցով:

\* \* \*

Թեև Կրետի, Թեսալիայի ու Բեովտիայի պոլիսներն իրենց սոցիալ-տնտեսական զարգացմամբ հետ էին մնում Հունաստանի առևտրաարհեստավորական կենտրոններից, սակայն նրանց հասարակական կյանքում հետզհետե հաղթանակում էին ստրկատիրության նոր ձևերը, վերանում էին արեստիկ վերապրուկները:

### Գլուխ 11. ՊԵՂՊՈՆԵՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Պելոպոնեսյան պատերազմի պատմության հիմնական աղբյուրներն են այդ ժամանակի անցքերի ականատեսների ու մասնակիցների՝ աթենացիներ Թուկիդիդեսի ու Քսենոֆոնի պատմական աշխատությունները: Թուկիդիդեսը՝ Պերիկլեսի կողմնակիցներից մեկը, նկարագրել է Պելոպոնեսյան պատերազմը մինչև մ. թ. ա. 410 թ.: Քսենոփոնը՝ ռազմական գործիչ ու գրող, իր «Հունա-

կան պատմութիւն» աշխատութիւնում շարունակեց ու ավարտեց Պելոպոնեսյան պատերազմի ու հետագա իրադարձութիւններին նկարագրութիւնը:

Այդ դարաշրջանի աթենական հանրապետութեան քաղաքական պատմութեան մասին տվյալներ կարելի է քաղել Արիստոտելի «Աթենական պոլիտեա», Դիոդորոսի «Պատմական գրադարան» գործերից ու Պլուտարքոսի աշխատութիւններից, որոնք պարունակում են Պերիկլեսի, Նիկիասի, Ալքիբիադեսի, Լիսանդրոսի կենսագրութիւնները: Այդ ժամանակի գաղափարական պայքարի շատ հետաքրքիր հուշարձաններ են Արիստոփանեսի «Հեծյալներ», «Ամպեր», «Նաղաղութիւն», «Թուղուններ» քաղաքական կատակերգութիւնները: Աթենական հասարակութիւնում տեղի ունեցող քաղաքական պայքարն իր արտացոլումը գտավ մի փոքրիկ պամֆլետում, որը գրված էր Աթենքի դեմոկրատական կարգերի շարամիտ թշնամու կողմից. այն գիտութեան մեջ հայտնի է «Կեղծ քսենոփոնյան աթենական պոլիտեա» անունով: Այդ պայքարն արտահայտվեց նաև որոշ աթենական հոետորների՝ Անդոկիդեսի, Լիսիասի դատական ճառերի գրառումներում: Որոշակի նշանակութիւն ունեն նաև արձանագրութիւնները:

#### ՊԵՆՏԱՆԵՍԻԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ,

#### ԱՌԻՔՆԵՐԸ ԵՎ ԲՆՈՒՅԹԸ

Աթենացիներն ու սպարտացիները պատրաստվում էին վերսկսելու պատերազմը ավելի մեծ ծավալով: Աթենքում Պերիկլեսի առաջարկութեամբ ավարտվում է Աթենքը նրա ծովային նավահանգիստ Պիրեևսի հետ միացնող Երկար պարիսպների շինարարութիւնը: Պատի երկարութիւնը Աթենքի ու Պիրեևսի միջև կազմում էր 7 կմ. իսկ ամրութիւնների ամբողջ գծի երկարութիւնը հավասար էր 26 կմ:

Վերցնել կամ ճեղքել ամրութիւնների այդ գիծը այն ժամանակի տեխնիկայի պայմաններում գրեթե անհնար էր, իսկ քանի որ սպարտացիները ընդհանրապես չէին կարող վարել պաշարողական աշխատանքներ, ապա Աթենքի ամրացված շրջանը, որն ընդգրկում էր Աթենքը, Պիրեևսն ու Փալերոն գյուղը, դարձավ ապաստարան Ատտիկայի բնակչութեան համար. վերջինս կարող էր պաշտպանվել այնտեղ, եթե Ատտիկա ներխուժեին թշնամու գերազանցող ուժերը: Ցամաքային օղակումը սարսափելի չէր աթենացիների համար, որովհետև ունենալով ուժեղագույն մարտական նավատորմիչ, նրանք հեշտութեամբ կարող էին բերել մթերքներ

ու արհեստավորական արտադրութեան համար անհրաժեշտ հումք, պահպանել հսկողութիւնը դաշնակիցներէ վրա ու ծովից հարվածներ հասցնել հակառակորդին:

Պերիկլեսի առաջարկով՝ Աթենքը Պիրեևսի հետ միացնող պարսպի երկայնքով, նրա ներսի կողմից, կառուցվեց երկրորդ պարիսպն ու դրանով պիրեևսյան ճանապարհը կարծես թէ վերցվեց բերդ-միջանցքի մեջ: Բացի այդ, շարունակվում էր ռազմանավերի կառուցումը, աթենական գանձարանում կուտակվում էր պահեստային ֆոնդ, որը մ. թ. ա. 431 թ. հասավ պատկառելի գումարի՝ 9700 տաղանդի: Այդ գումարը գոյանում էր մետոյկներից գանձվող հարկային մաքսերից, պիրեևսյան նավահանգստի շրջանառութիւնից հավաքվող մաքսերից, ստրուկների համար գանձվող գլխահարկից, Աթենքից կախյալ դաշնակիցների կողմից մուծվող ֆորոսից և վերջապես Լավրիոնի արծաթի հանքերի ու աթենացիների կողմից Թրակիայում նոր հիմնված Ամփիպոլիս քաղաքի մոտ գտնվող ոսկու ցրոնների շահագործումից ստացվող եկամուտներից:

Հարավային Իտալիայում, հին Սիբարիսի տեղում, Աթենական Թուրիա գաղութի հիմնումը սրեց Միջերկրականի այդ շրջանում Աթենքի մրցակցութիւնը նրա հարևան առևտրական պոլիսների՝ Կորնթոսի ու Մեգարայի հետ: Աթենքի դեմ ատելութիւն էին բորբոքում նաև էգինայից ու Սամոսից արտաքսված արիստոկրատները: Միաժամանակ Սպարտայում ուժեղացավ պատերազմի ճրգտող խմբավորումը:

Մ. թ. ա. 435 թ. էպիդամնոս քաղաքում (այն գտնվում էր այժմյան ալբանական Դուրես նավահանգստի տեղում) բռնկվեց պայքար արիստոկրատների ու դեմոկրատների միջև: Թշնամի կողմերը դիմեցին Կերկիրային ու Կորնթոսին, որոնք իրար հետ մրցակցելով Հունաստանի արևմտյան ափերի մոտ կատարվող առևտրում, սկզբում միջամտեցին էպիդամնոսում ընթացող ներկուսակցական պայքարին, իսկ հետո ընդհարվեցին իրար հետ: Առաջին ծովային մարտերից հետո, որոնք շահեց կերկիրյան նավատորմը, կորնթացիները սկսեցին նախապատրաստել մեծ հարձակում Կերկիրայի դեմ: Ահաբեկված կերկիրացիները, որոնք մինչ այդ չէին մտնում երկու հակամարտ միութիւններից և ոչ մեկի մեջ, դեսպանութիւն ուղարկեցին Աթենք, խնդրելով ընդունել իրենց Աթենական ծովային միութեան մեջ և ցույց տալ ռազմական օգնութիւն: Աթենք ժամանեցին նաև Կորնթոսի ներկայացուցիչները, որոնք մատնանշում էին, որ Կերկիրային Աթենական միութեան մեջ ընդունելը Կորնթոսի կողմից կդիտվի որպես մ. թ. ա.

445 թ. հաշտութեան պայմանագրի խախտում: Այդ հարցի քննարկման ժամանակ աթենական ժողովրդական ժողովում եղած տատանումներին վերջ դրեց Պերիկլեսի ելույթը: Ըստ Թուկիդիդեսի, Պերիկլեսը նշեց Սպարտայի ու Պելոպոնեսյան միութեան հետ նոր ընդհարման անխուսափելիութունը, ինչպես և ուժեղ ռազմական նավատորմի ունեցող Կերկիրայի հետ դաշինքի կարևորութունը: Աթենացիները Կերկիրայի ափերի մոտ ուղարկեցին օժանդակ նավախումբ, որի միջամտութեան շնորհիվ ետ մղվեց կորնթոսյան նավատորմի հարձակումը Կերկիրայի վրա:

Բախումը Աթենքի և Կորնթոսի միջև սրվեց այն բանի հետևանքով, որ Աթենքը ցանկացավ իրեն ենթարկել կորնթոսյան Պոտիդեա գաղութը Քաղկիդիկե թերակղզում: Այդ թերակղզու մոտով էին անցնում Թրակիա տանող ծովային ուղիները: Վերջապես, ծայրահեղորեն սրվեցին հարաբերութունները հարևան Մեգարայի հետ այն բանից հետո, երբ աթենական ժողովրդական ժողովը, մեղադրելով մեգարացիներին Աթենքից փախած ստրուկներին ապաստան տալու մեջ, որոշում կայացրեց (այսպես կոչված մեգարյան պսեֆիսմա), որն արգելում էր մեգարյան վաճառականներին առևտուր անել Աթենքում ու աթենական միութեան բոլոր այլ քաղաքներում:

Պելոպոնեսյան միութեան անդամների խորհրդակցութունում, որը կայացավ Սպարտայում, Մեգարան ու Կորնթոսը բողոք ներկայացրեցին աթենացիների դեմ ու ստացան պատերազմի սպարտական կողմնակիցների օժանդակութունը: Սակայն սպարտացիները իսկույն ևեթ չհարձակվեցին աթենացիների վրա, այլ ցանկանալով իրենց վրայից հանել պատերազմը սկսելու պատասխանատվութունը, նրանք Աթենք ուղարկեցին դեսպաններ, որոնք պահանջեցին վերացնել մեգարյան պսեֆիսման, տրամադրել դաշնակիցներին Աթենական ծովային միութեանից ազատ դուրս գալու իրավունք ու քողարկված ձևով՝ արտաքսել Պերիկլեսին: Աթենական ժողովրդական ժողովը մերժեց սպարտացիների պահանջները, և սկսվեց Աթենքի պատերազմը Սպարտայի և նրա դաշնակիցների դեմ: Այդ պատերազմը, որը ընդհատումներով շարունակվեց մ. թ. ա. 431 թ. մինչև 404 թ., մտավ պատմութեան մեջ Պելոպոնեսյան պատերազմ անունով: Թուկիդիդեսը, խոսելով Պելոպոնեսյան պատերազմի սկզբի մասին, նշում էր. «Լակեդոմոնացիները ընդունեցին, որ խաղաղութունը խախտվել է ու պատերազմը դարձել անհրաժեշտութուն ոչ այնքան դաշնակիցների ճատերի ազդեցութեան շնորհիվ, որքան ելնելով աթենացիների նկատմամբ իրենց ունեցած վախից, երկյուղ կրելով, որ աթենացիների հզորութունը կա-

րող է աճել: Նրանք տեսնում էին, որ Հելլադայի մեծ մասը արդեն ենթարկվել է նրանց...» (I, 88):

Պելոպոնեսյան պատերազմը հույն ստրկատերերի երկու մըր-ցակցող խմբերի պայքարն էր հանուն Եվրոպական Հունաստանում իրենց գերիշխանության հաստատման, ինչպես նաև Ադրիական ու Հոնիական ծովերի ափերին ազդեցության ոլորտներն ընդլայնելու համար: Երկու հակառակորդներն էլ ոչ թե պաշտպանվում էին, այլ հարձակվում, այն տարբերությամբ, որ նրանցից յուրաքանչյուրը դա անում էր ելնելով իր հնարավորություններից:

Աթենքը պատերազմի սկզբում ուներ Հունաստանում ամենա-ուժեղ ռազմական նավատորմիդը՝ բաղկացած 300 տրիևրաններից ու դաշնակիցների որոշ թվով նավերից, բայց աթենացիների ցա-մաքային զորքերի կազմում կային ընդամենը շուրջ 29 հազար հոպլիտներ ու 2800 հեծյալներ: Ճիշտ է, այդ թվին պետք էր ավել-լացնել դաշնակիցների ջոկատները:

Սպարտացիներն իրենց դաշնակիցների հետ միասին ի վիճա-կի էին առաջադրել աթենացիների ուժերը ավելի քան երկու ան-գամ գերազանցող ցամաքային բանակ, բայց նրանք համարյա թե չունեին մարտական նավեր, իսկ նրանց դաշնակիցների (Կորնթոս, Մեգարա) ծովային ուժերը զգալիորեն գիշում էին աթենական նա-վատորմին:

Պերիկլեսը, ելնելով եղած ուժերից ու միջոցներից, կազմեց պատերազմի յուրատեսակ ծրագիր: Նա առաջարկեց աթենական ստրատեգոսներին խուսափել ցամաքային ռազմական ընդհարում-ներից, գտնելով, որ ծովափն օղակելու ու ավերելու միջոցով կհա-ջողվի ստիպել սպարտացիներին հաշտություն կնքել:

ՊԵՆՊՈՆԵՍԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԸ:

«ԱՐՔԻՂԱՄՈՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ» (Մ. Թ. Ա. 431—421 ԹԹ.)

Պատերազմական գործողությունները սկսեցին թեբեսացիները, որոնք գիշերը հանկարծակի հարձակվեցին աթենացիների դաշնա-կից Պլատեա քաղաքի վրա (մ. թ. ա. 431 թ.): Հարձակվողները հույս ունեին ստանալու տեղական արիստոկրատների օժանդակու-թյունը, բայց նրանք սխալվեցին իրենց հաշիվներում: Պլատեացի-ները շրջապատեցին ու ամբողջովին ոչնչացրեցին նրանց: Դա իս-կույն ևեթ պատերազմին կատաղի բնույթ հաղորդեց:

Որոշ ժամանակ անց սպարտական թագավոր Արքիդամոսը, դաշնակցային մեծ աշխարհագորի (մինչև 60 հազար) զուլխ ան-ցած, ներխուժեց Ատտիկա ու ոչնչացնելով աթենացիների մրգա-տու ու խաղողի այգիները, այրելով բնակավայրերը, փորձեց ստի-

պել Բեթնաքիներին տալ վճռական ճակատամարտ: Պերիկլեսին մեծ դժվարությամբ հաջողվեց համոզել համաքաղաքացիներին ու Ատտիկայի այստեղ ապաստանած գյուղական բնակչությանը դուրս չգալ Աթենքի ամրութիւններից: Պելոպոնեսացիների հեռանալուց հետո Պերիկլեսը ուղարկեց մի քանի նավախմբեր, որոնք ավերեցին թշնամու տարածքի ծովափնյա մարզերը: Այդ նույն ժամանակ Բեթնական ցամաքային ուժերը կողոպտեցին Մեգարայի տիրույթները: Պերիկլեսը հույս ուներ, որ տնտեսապես հետամնաց Սպարտան ու նրա դաշնակիցները շուտով կսպառեն իրենց ուժերն ու ստիպված կլինեն հաշտութիւն խնդրել:

Հաջորդ, մ. թ. ա. 430 թ., երբ պելոպոնեսյան զորքերը Արքիդամոսի գլխավորությամբ կրկին ներխուժեցին Ատտիկա, իսկ վերջինիս գյուղական բնակչութիւնը պատսպարվեց ամրացված շրջանում, Աթենքում, ըստ Թուկիդիդեսի պատմածի, բռնկվեց ժանտախտի համաճարակ<sup>12</sup>: Մի կերպ ապաստանած գյուղական բնակչության մեծ զանգվածի կուտակումը Աթենքում նպաստեց հիվանդութիւնների տարածմանը: Մասսայական մահացութիւնը առաջ բերեց հուսահատութիւն ու Պերիկլեսի դեմ ուղղված վրդովմունք, քանի որ շարքային Բեթնացիները, բնավ ոչ առանց հիմքերի, Պերիկլեսին համարում էին պատերազմի ու նրա հետ կապված աղետների գլխավոր մեղավորներից մեկը: Երկար տարիների ընթացքում Պերիկլեսը առաջին անգամ չընտրվեց ստրատեգոս: Թեև հաջորդ տարին Պերիկլեսին հաջողվեց իր կողմնակիցների օգնությամբ վերադառնալ այդ պաշտոնին, սակայն նա շուտով հիվանդացավ ու մահացավ (մ. թ. ա. 429 թ.): Համաճարակը Բեթնացիներին ահալոր կորուստներ պատճառեց:

Իր բնակչության զգալի մասը, այդ թվում և շատ ուզմիկներ կորցրած Աթենքի խիստ թուլացումը նպաստեց հակաաթենական տրամադրութիւնների աճին Աթենական արիստի մեջ մտնող շատ քաղաքներում: Մ. թ. ա. 428 թ. Միտիլենե քաղաքի (Լեսբոս կղզի) արիստոկրատները ձեռնարկեցին իշխանութիւնը գրավելու ու Սպարտայի կողմն անցնելու փորձ: Միայն միտիլենյան դեմոկրատների օգնությամբ Բեթնացիներին մեծ դժվարությամբ հաջողվեց ճնշել այդ ապստամբութիւնը, որի բոլոր մասնակիցները բերվեցին Աթենք ու ենթարկվեցին մահապատժի:

Աթենացիները շարունակեցին պաշտպանել իրենց վաղեմի հավատարիմ դաշնակիցներին՝ Պլատեա քաղաքի բնակիչներին: Եր-

<sup>12</sup> Քանի որ համաճարակը կրում էր տեղային բնույթ ու շամայացրեց Աթենքը, ժամանակակից գիտութիւնն մեջ արտահայտվեց այն ենթադրութիւնը, որ պաշարված Աթենքում մոլեգնում էր տիֆի տեսակներից մեկը (խմբ.):



Ապու ների դարպասը Միկենեում Մ ք. XIV դ.




Վիրխուրի անոթ (պիրոս)  
Կենսաստից




Պոլյակ (բիտոն) Կենսաստի պալատից:





Սկստեղ Կիմիկից: Թեալիա:  
Մ ք. ա. 3000 2500 թթ.:



Գմբերափոր  
զամբարան  
Միկենեամ





Ոսկա դիմակ դամբարանից: Միկենն:

Պաշտի Կրեան կղզուց.



Պաշտի Կրեանի Լեզեր (գետալներ)  
Միկենն Մ. ք. — XVI դ.






Կնոստի պառույկը՝ Եզոսի երի ներևի ետևից

Կամուրջի ստիպակներ՝ Փետառ  
Բ՝ ք.՝ XIX դ.

Էրեբունի արքայի սրահի ստիպակներ  
ԳԼ՝ Բ՝ ք.՝ XVI դ.



Պատանու արձան: Ատտիկա.  
Մ. թ. մտ 600 թ.:



Սփիլբուրգի ճեմ Աթենք:  
Մ. թ. մտ 570 թ.

Թագմիկ՝ էգինա կրգում Աթենքի  
տանուրի արևմտյան վերնանակառից:





Հունական կլիկներ (զավարներ)



Մի հատված հարմանկար սկանսկի գորդ մակախի



Սյասի ինքնապատկերումը: Անփութալի գորդանկրի դեպք:  
Մ. թ. ա. VI դ.:



Կաստուր ու Իկա: Պետղ ամփոռայի  
գաղղանկարից: Խ ք. ա. ՎԷ դ.:

Սիլիկի ներսի կողմի գաղղանկար: Պանխատը նավակում:





Պատուհի տանարների մաս գտն յոյ  
նին հունական դամբարանների  
զարդանկարներ






Արձաթե անփռա Չեռոմիկի  
զամբաւանար լից.




Ասկա անոթ Կոլ-օրա  
զամբաւանար լից

Տաճարներ Պեռտոմոս:








Ըմբշամարտող պատանիներ:  
Սկահակ-արծառի բարձրահանգակ Արևել:



Սկավառակահեռ:  
Քանդա Կոն Միրանի  
աշխատանքը: Օլիմպիա:



Սեբեյոսի ու Հեռակիսի պայտերը՝ Սկանակի գաղղանկար:



Թաւրոն նախավերսում:

Մենտոր





Սոֆոկլես:



Տեսարան ողբեգությունից:  
Իտալական սկանսկի զառյանկառ:  
Մ. թ. ա. V դ.:

Հունական բառուն:





Միջնադարի երգչուհի Սիմոնի Բարձրաբանի




Անիկոս և Պրիմա  
Կրտսերի զարդանկարի  
զեմալ. Մ. ք. ա. Ն դ.

Սպիտակ ֆոնով բազմագույն լեկիփոս




Կառապան: Բրոնզե արձան: Օլիմպիա:

Հողբոցի ոսկե պսակը:




Մարտկարգի մանրատխար:  
Մեկնաճախին շնճերը օրնախաղայում:





Հին հույնի  
կեն բոցի առաճակներ:

Խննդի մասնակիցներ:  
Կարթոսյան կրտսերի զորդանկարի  
դետալ:





Քեմիստոկլեսի ու Արիստիդեսի  
անուններով օստրակներ  
Աթենք Ագորա



Պոսիդոն:  
Բրոնզ: Ատտիկա:  
Մ. թ. ա. V դ.

Պարուհի




Զոհարեություն: Բարձրահոգակ:






Մրթիաղեսի՝ Օլիմպիայում գտնված սաղավարտը:

Արևնական սահմանային բերդ: ժամանակակից տեսքը:




Մանանային ամրություն  
և առիկայում:



Մեծահասակները վերականգնում





Հունական նավ Վերականգնում:



Սմոսթնների հրամարտի  
Պեղվածքից անյունապատի  
բարձրանդակ: Մ. թ. ա. IV դ.

Պերիկլես:




Տաճարի մնացորդներ Կոռնթոսում:




Աբխազի Մակեդոնացի:



Նրբբեյոն:



Ատոյան Պանոսիկայունից



Քոնգամարտիկի գլուխ Բրնգ  
Օխյայիս

Ուրդի ամրություններ Մակևո








Արևնասի արձանի գլուխը

Արևնասի հաս յաճ  
Օրինակաբոյ






Պարկան

Մալսուրսի արձանը Մ թ. ա. IV դ.:




Աֆրոդիտե. Միլոս կղզուց.




Լակոնի խումբը: Հողոս:


Տգայի դիմանկար Փայունից




Տղամարդու դիմանկար  
Փայունից



Ոչ համական նախօր տներն  
Մեծսեծովյան Երկամասից Տեսվառ:



Արարատի քաղաքի շատ գեղեցիկից



Գրամեր

կարատե հերոսական պաշարումից հետո Պլատեան վերցվեց, նրա պաշտպանները սպանվեցին, պլատեացիների կանայք ու երեխաները վաճառվեցին ստրկութեան, իսկ քաղաքը հիմնովին քարուքանդ արվեց:

Մ. թ. ա. 427—425 թթ. Կերկիրայում բռնկվեց դաժան քաղաքացիական պատերազմ: Սպարտացիների կողմից հրահրվող արիստոկրատները ապստամբութիւն բարձրացրեցին ու ժամանակավորապես զավթելով իշխանութիւնը, հայտարարեցին պելոպոնեսացիների կողմն անցնելու իրենց մտադրութեան մասին, սակայն դեմոկրատները շղաղարեցին պայքարելուց: Երկու կողմերն էլ օգտագործեցին իրենց տրամադրութեան տակ գտնվող բոլոր միջոցները, այդ թվում նաև ստրուկներին՝ խոստանալով նրանց ազատութիւն օգնութեան դիմաց: Յոթ օր շարունակ քաղաքի փողոցներում, հրդեհների բոցերի մեջ տեղի էր ունենում կատաղի մարտ: Կռվում էին անգամ կանայք, տների տանիքներից թշնամու վրա նետելով քարեր ու կղմինդր: Վրա հասած աթենական նավախմբի օգնութեամբ դեմոկրատները նվաճեցին լիակատար հաղթանակ: Հաջորդ տարում նրանք գերի վերցրին ու ոչնչացրեցին իրենց հակառակորդների մնացորդները:

Մ. թ. ա. 425 թ. աթենական էսկադրայի ստրատեգոս Դեմոսթենեսը գրավեց սպարտացիների կողմից անպաշտպան թողած Պիլոս նավահանգիստը Պելոպոնեսյան ծովափի արևմտյան մասում ու մեսսենյան հելոտներին կոչ արեց ապստամբել սպարտացիների դեմ: Սպարտական զորքերը, որոնք փորձեցին գրոհել Պիլոսի վրա, հետ մղվեցին: Այն ժամանակ սպարտացիները, ցանկանալով շրջապատել Պիլոսը, գրավեցին նավահանգստի մուտքի մոտ գտնվող Սփակտերիա կղզին: Իր հերթին աթենական նավատորմիչը շրջափակեց կղզում ափ իջած սպարտացիներին: Զանալով ազատել իրենց ռազմիկներին, որոնց մեջ կային շատ անվանի սպարտացիներ, սպարտացի կառավարիչները դեսպաններ ուղարկեցին Աթենք, առաջարկելով նրան հաշտութիւն այն պայմանով, որ թըշնամի կողմերից չուրաքանչյուրը կպահպանի իր հին տիրութեանն ու դաշնակիցներին:

Սպարտական առաջարկների քննարկման ընթացքում աթենացիների մոտ առաջացան երկու կուսակցութիւններ: Դրանցից մեկը՝ կազմված երգաստերիոնների տերերից ու ծովայիններից, կաշեգործական երգաստերիոնի տեր Կլեոնի ղեկավարութեամբ պընդում էր, որ անհրաժեշտ է շարունակել պատերազմը մինչև Սպարտայի վերջնական ջախջախումը: Մյուս կուսակցութիւնը, որի մեջ մտնում էին աթենական քաղաքացիութեան՝ պատերազմից առավել



տուժած գյուղական զանգվածի, ինչպես և խոշոր հողագործների ներկայացուցիչները հարուստ նիկիասի գլխավորությամբ, գտնում էր, որ անհրաժեշտ է շուտափույթ հաշտություն կնքել ու պահանջում էր ընդունել սպարտական առաջարկները: Խաղաղության կուսակցությանն էր պատկանում նաև հիանալի աթենական դրամատուրգ Արիստոփանեսը, որն իր կատակերգություններում («Խաղաղություն», «Ակառնանացիները», «Հեծյալները») ծաղրում էր պատերազմը շարունակելու կողմնակիցներին ու նրանց առաջնորդ Կլեոնին: Լարված վեճերից հետո Կլեոնը ստացավ նավատորմի դում ծառայող աթենական շքավորների օժանդակությունն ու հասավ այն բանին, որ ընդունվեց սպարտացիների առաջարկը մերժելու ու պատերազմը շարունակելու մասին որոշում: Հաշտության կողմնակիցների առաջարկությամբ, մինչ այդ երբեք զորքեր չղեկավարած Կլեոնը ստիպված էր ստանձնել հրամանատարությունը Պիլոսի շրջանում: Նա խոստացավ ժողովրդական ժողովին կոտրել Սփակտերիա կղզում պաշարված սպարտացիների դիմադրությունը: Իր քաղաքական հակառակորդների սպասելիքներին հակառակ, Կլեոնը Գեմոսթենեսի օգնությամբ կատարեց իր խոստումը: Աթենացիները ափ հանեցին Սփակտերիայում հուլիոսներից ու թեթեվազեն մարտիկներից, այսպես կոչված պելտասներից կազմված ջոկատ: Զոկատին հրահանգված էր ձեռնամարտի չբռնվել սպարտացիների հետ, այլ դադար չտալով նրանց, ուղղել նրանց վրա նետերի, պարսատիկներից նետված քարերի ու նիզակների տարափ: Մի քանի օրից հետո 120 հոգուց բաղկացած սպարտական ջոկատի մնացորդները ցած դրեցին զենքը: Գերիներին ուղարկեցին Աթենք: Աթենական ղեկավարները հայտարարեցին, որ եթե սպարտացիները նորից ներխուժեն Ատտիկա, ապա գերված սպարտացիները կհանձնվեն մահվան:

Այսուհետև հնարավորություն չունենալով բացեիքաց հարձակվել Ատտիկայի վրա, սպարտացիները, այնուհանդերձ, աթենացիներին հասցրեցին դաժան պատասխան հարված: Երիտասարդ, եռանդուն սպարտական զորավար Բրասիդասի առաջարկով հավաքագրվեց 2000 հելտոսներից ու պերիոկյներից բաղկացած մի կամավորական ջոկատ: Բրասիդասը գիշերով շարժվելով, այդ ջոկատով անցավ-կտրեց ողջ Հունաստանը հարավից հյուսիս ու աթենացիների համար անսպասելիորեն հարձակվեց աթենական դաշնակցային քաղաքների վրա Քաղկիդիկե թերակղզում ու Թրակիայում:

Էգեյան ծովի այդ մասում գտնվող աթենական նավախմբի հրամանատար ստրատեգոս Թուկիդիդեսը՝ ապագա հռչակավոր

պատմագիրը, չկարողացավ կանխել մի շարք քաղաքների, այդ թրվում թրակիական ծովափում կարևոր հենակետ հանդիսացող Ամփիպոլիսի գրավումը սպարտացիների կողմից: Ամփիպոլիսի շրջանից Աթենք էր արտահանվում անտառանյութ նավերի շինարարության համար, այստեղ էին գտնվում ոսկու ցրոններ, ու նրա մոտից էին անցնում Պոնտոսից դուրս եկող ծովային ճանապարհները: Կլեոնի առաջարկով Թուկիդդեսը հեռացվեց հրամանատարությանից ու դատապարտվեց արտաքսման: Ինքը՝ Կլեոնը անձամբ գլխավորեց աթենական զորքերը Թրակիայում՝ նպատակ ունենալով վերադարձնել կորցրածը: Նա սկսեց հաջող գործել, սակայն մոտենալով Ամփիպոլիսին, հանկարծակի ենթարկվեց գրոհի ու ջախջախվեց Բրասիդասի ջոկատի կողմից: Ամփիպոլիսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում (մ. թ. ա. 422 թ.) երկու զորավարներն էլ՝ և՛ հաղթված Կլեոնը, և՛ հաղթած Բրասիդասը զոհվեցին:

Կլեոնի ու Բրասիդասի մահով թե՛ Աթենքում և թե՛ Սպարտայում գերակշռեց երկարատև, դաժան պատերազմին վերջ դնելու տեսակետը, պատերազմ, որը տևում էր արդեն տասը տարի ու կովող կողմերից և ոչ մեկին չէր տվել վճռական առավելություն: Նիկիասը գլխավորեց աթենական դեսպանությունն, ու նրա անունով Աթենքի ու Սպարտայի միջև մ. թ. ա. 421 թ. կնքված հաշտությունը կոչվեց Նիկիասյան հաշտություն:

#### ՆԻԿԻԱՍԻ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՍԻԿԻԼԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ

Նիկիասի կողմից կնքված հաշտության պայմանների համաձայն, աթենացիներն ու սպարտացիները պարտավորվում էին միմյանց վերադարձնել ռազմագերիներին ու գրաված բնակավայրերը: Ավելին, Աթենքը պարտավորվեց օգնել Սպարտային ճնշելու ըստրուկների ապստամբությունները: Կատարելով այդ պայմանը, աթենացիները բախտի քմահաճույթին հանձնեցին Պիլոսի շրջանում նրանց միացած մեսսենյան հելոտներին: Այսպես արտահայտվեց Աթենքի ստրկատերերի դասակարգային համերաշխությունը սպարտական ստրկատերերի հետ: Նիկիասի առաջարկությամբ, գերված սպարտացիները վերադարձվեցին Սպարտա ավելի վաղ, քան կատարվեց գրաված քաղաքների մասին եղած պայմանը: Ստանալով ռազմագերիներին, սպարտացիները չկատարեցին կարևոր պայմանը, աթենացիներին չվերադարձրեցին Ամփիպոլիսը, իսկ ի պատասխան դրան վերջիններս չհեռացան Պիլոսից: Սակայն այժմ, իբր աթենացիները դադարեցին ապստամբած մեսսենյան հելոտներին օգնելուց, Պիլոսը կորցրեց իր ռազմական նշանակությունը: Այսպիսով, Նիկիասի կողմից կնքված հաշտությունը չլուծեց մի

շարք վիճելի հարցեր: Ավելին, սպարտական դաշնակիցներ Կորընթոսը, Մեգարան ու Թեբեն հայտարարեցին, որ համաձայն չեն Աթենքի հետ հաշտություն կնքելու:

Այդ ամենը առաջ բերեց Աթենքի բնակչության մեծ դժգոհությունը: Պատերազմի կողմնակիցները, որոնք պատկանում էին առևտրականների, արհեստավորների, ծովագնացների խավերին, կրկին միավորվեցին մեկ խմբավորման մեջ և պահանջեցին վերսկսել պայքարը Սպարտայի դեմ: Այդ խմբավորումը զլխավորեց Պերիկլեսի հեռավոր ազգական ու սան Ալկիբիադեսը: Նա կրթված, ընդունակ ու վճռական մարդ էր, խիզախ ուղղմիկ ու սրամիտ հոնտոր: Ալկիբիադեսը իշխանության իր տենչը բավարարելու համար ընդունակ էր անել ամեն ինչ: Երազելով գրավել Պերիկլեսի տեղը Աթենքում, նա չէր խորշում և ոչ մի միջոցից, այդ թվում նաև դավաճանությունից ու մատնությունից: Ալկիբիադեսի պես պետական գործիչների հանդես գալը չի կարելի համարել պատահականություն: Դա արտահայտում էր աթենական ստրկատիրական դեմոկրատիայի՝ պատերազմի ընթացքում սկսված ճգնաժամը:

Ալկիբիադեսը մ. թ. ա. 420 թ. ընտրվելով ստրատեգոս, փորձեց սպարտացիների դեմ հանել Արգոսին ու Արկադիայի քաղաքներին, իսկ երբ արգոսցիներն ու նրանց դաշնակիցները ջախջախվեցին սպարտացիների կողմից, նա սկսեց համոզել աթենացիներին ձեռնարկել նվաճողական մեծ արշավանք դեպի Իտալիա ու Սիկիլիա՝ իտալական հունական քաղաքները զավթելու ու պելոպոնեսացիների դաշնակից Կորնթոսը հացով մատակարարող խոշոր սիկիլիական կենտրոն Սիրակուզան ջախջախելու նպատակով: Ըստ Թուկիդիդեսի, նա ասում էր՝ «Հզորության այն բարձրությունում, որի վրա մենք գտնվում ենք, անհրաժեշտ է հնարներ նյութել ու մանց դեմ ու ազատություն շտալ մյուսներին, որովհետև մեզ սպառնում է թշնամուն ենթարկվելու վտանգը, եթե մենք ինքներս չիշխենք նրա վրա: Եվ այսպես, դատենք այն մասին, որ այդ ժողովուրդների դեմ ուղղված արշավով մենք կմեծացնենք մեր հզորությունը այստեղ, ուստի եկեք ձեռնարկենք արշավանք, որպեսզի սաստենք պելոպոնեսացիների հպարտությունը...» (VI, 18):

Ալկիբիադեսը արշավանք նախապատրաստելով դեպի արևմուտք, մտադրվել էր նվաճել Սիկիլիան ու անգամ հարուստ Կարթագենը: Այդ, զգալի շահով բախտախնդրական ծրագրերը պաշտպանում էին արհեստավորները, մանր վաճառականները, պատերազմի հետևանքով սնանկացած մանր գյուղական տնատերերի զանգվածը: Այդ խավերը ձգտում էին ուղղմական ավար զավթելու միջոցով հատուցել նախորդ տարիներին կրած իրենց վնասներն

ու բնավ չէին կասկածում արշավանքի հաջողության վերաբերյալ: Սակայն աթենացիներին հայտնի չէին սիկիլիական հույների ուժերն ու հնարավորությունները:

Մ. թ. ա. 415 թ. գարնանը այդ արշավանքին մասնակցելու համար ստեղծվեց 200 տրիերաներից ու փոխադրանավերից բաղկացած նավատորմիդ՝ 38 հազար մարտիկներ ու թիավարներ ունեցող անձնակազմով: Հրամանատարներ նշանակվեցին Ալկիբիադեսը, Նիկիասն ու Լամաքոսը: Բայց նավատորմիդ բաց ծով դուրս գալուց մի քանի օր առաջ անհայտ մարդիկ կոտրեցին ու մասամբ վայր գցեցին հերմերը՝ առևտրի աստված ու ճանապարհորդների հովանավոր Հերմեսի պատկերները կրող սյուները, որոնք դրված էին աթենական շատ փողոցների անկյուններում: Դրանից հետո, երբ սկսվեցին մեղավորների որոնումները, քաղաքում տարածվեցին լուրեր այն մասին, որ այդ սրբապղծության մեջ մեղավոր են Ալկիբիադեսն ու նրա բարեկամները: Ալկիբիադեսը պահանջեց քննել այդ մեղադրանքները դատարանում: Սակայն նրա քաղաքական հակառակորդները պահանջում էին հետաձգել դատական քննությունը, գտնելով, որ Ալկիբիադեսին՝ ծովագնացների ու զինվորականների մոտ նրա ունեցած ժողովրդականության հետևանքով հնարավոր չի լինի մեղադրել իր կողմնակիցների ներկայությամբ:

Ալկիբիադեսը ստիպված էր մեկնելու արշավանքի՝ չհասնելով դատական արդարացման: Աթենական նավատորմը բարեհաջող հասավ Հարավային Իտալիայի ափերը, բայց ռազմաքաղաքական իրադրությունը Մեծ Հունաստանում բնավ այն չէր, ինչպես նախատեսում էր Ալկիբիադեսը: Սիկիլիական հույների մեծ մասը անբարյացակամությամբ դիմավորեց աթենական նավախումբը: Այդ պահին այստեղ ժամանեց Աթենքից ուղարկված պետական նավը: Նավում գտնվող պատգամաբերները պահանջեցին, որպեսզի Ալկիբիադեսը վերադառնա Աթենք՝ դատարան ներկայանալու համար: Ալկիբիադեսը հասկանալով, որ իր հակառակորդները պատրաստում են դատական հաշվեհարդար, Ատտիկա վերադառնալու ճանապարհին փախավ ու ապաստան գտավ Սպարտայում: Ալկիբիադեսը իմանալով, որ ինքը հեռակա կարգով դատապարտված է մահվան, հաղորդեց սպարտացիներին սիկիլիական արշավանքի բոլոր ռազմական ծրագրերն ու ցույց տվեց, թե ինչպես կարելի է խանգարել դրանց իրագործումը: Նա խորհուրդ տվեց սպարտացիներին անհապաղ տրամադրել ռազմական օգնություն Սիրակուզային, իսկ բուն Հունաստանում գրավել մի որևէ կետ ու այնտեղից միշտ սպառնալ աթենացիներին:

Ալկիբիադեսի մեկնելուց հետո ասթենական նավատորմի գլուխ անցավ պատերազմի հակառակորդ Նիկիասը: Հուսալով, որ Աթենքից կստանա վերադառնալու հրաման, նա շատ դանդաղ ու թույլ էր վարում ռազմական գործողությունները՝ դրանով Սիրակուզայի բնակիչների համար ստեղծելով պաշտպանությունը լավ նախապատրաստվելու հնարավորություն: Այնուամենայնիվ քաղաքի պաշարման սկզբում ասթենացիներին հաջողվեց գրավել կարևոր դիրքեր: Այն բանից հետո, երբ Սիրակուզա ժամանեց սպարտական օժանդակ ջոկատը Գիլիպպոսի գլխավորությամբ, պատերազմական գործողությունների ընթացքը փոխվեց ի վնաս ասթենացիների: Նիկիասն ու Լամաքոսը, փորձելով ստանալ նահանջի իրավունք, հաղորդեցին Աթենքին այն մասին, որ իրենց ուժերը բավարար չեն, սակայն վերադառնալու հրամանի փոխարեն ստացան օգնական ուժ Դեմոսթենեսի գլխավորությամբ՝ կազմված 75 տրիբրաններից ու 5 հազար զինվորներից:

Ռազմական գործողությունները ասթենացիների համար հետըզհետե ընդունեցին աղետալի բնույթ: Աթենական նավատորմի ջախջախվեց Սիրակուզայի նավահանգստում տեղի ունեցած ծովային ճակատամարտում, իսկ հետո այն լրիվ ոչնչացվեց հանկարծակի հարձակման հետևանքով: Լամաքոսը զոհվեց: Անժանոթ տեղանքում նահանջ սկսած ասթենական ցամաքային բանակը մասամբ ոչնչացվեց, մասամբ էլ գերի ընկավ: Նիկիասն ու Դեմոսթենեսը ենթարկվեցին մահապատժի, հազարավոր գերի ասթենացիներ ուղարկվեցին աշխատանքի քարհանքերում (մ. թ. ա. 413 թ.): Սիկիլիական արկածախնդրությունը, թուլացնելով ասթենացիների ֆինանսական ու ռազմական ուժերը, կանխորոշեց պատերազմական ու քաղաքական իրադարձությունների հետագա ընթացքը:

ԵԻԿԿԵԼԵՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ՝ ՍՊԱՐՏԱՅԻ ՈՒ ԱԹԵՆՔԻ ՄԻՋԵՎ  
ԸՆԹԱՅՈՂ ՊԱՏՔԱՐԻ ԽՁՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԸ (Մ. Թ. Ա. 413—404 ԹԹ.)

Քանի դեռ Սիկիլիա կղզում շարունակվում էր պայքարը, սպարտացիները Ալկիբիադեսի խորհրդով ներխուժեցին Ատտիկա ու գրավեցին Դեկելեյա լեռնային ամրոցը՝ կտրելով Աթենքի ցամաքային հաղորդակցությունը Եվբեա կղզու հետ: Նրանք հայտարարեցին, որ կազատեն բոլոր այն ասթենական ստրուկներին, որոնք կանցնեն իրենց կողմը: 20 հազարից ավելի ստրուկներ Աթենքից փախան սպարտական ճամբար: Ստրուկների փախուստի հետևանքով Աթենքում ընդհատվեց աշխատանքը երգաստերի ունե-րում ու Լավրիոնի հանքերում: Աթենական ստրկատիրական տընտեսությանն ու ֆինանսներին հասցվեց ծանր հարված: Իսկ երբ

Աթենքից անջատվեց ապստամբած Եվբեան, Աթենքում զգացվեց պարենի խիստ պակաս: Աթենքի թուլացումը չէր կարող շանդրահառնալ նաև Աթենական արխեի վիճակի վրա: Աթենացիները միջոցների կարիք զգալով, խիստ բարձրացրեցին դաշնակիցներից գանձվող ֆորոսը, իսկ դա իր հերթին ուժեղացրեց վերջիններիս դժգոհությունը ասենական տիրապետությունից: Երբ ստացվեց Սիրակուզայի մոտ ասենական նավատորմի կործանման լուրը, և հատկապես Փոքր Ասիայի ափերի մոտ սպարտական նավատորմի ու սիրակուզացիների ուղարկած օժանդակ նավերի հայտնվելուց հետո, մի շարք դաշնակից քաղաքներ անջատվեցին Աթենքից ու անցան Սպարտայի կողմը: Դրությունը ավելի վատացավ այն բանից հետո, երբ սպարտացիները, Ալկիբիադեսի խորհրդով, գաղտնի համաձայնություն կնքեցին Պարսկաստանի հետ (մ. թ. ա. 412—410 թթ.), որով Պարսկաստանը պարտավորվեց վարկավորել Սպարտային Աթենքի դեմ մղվող պատերազմում դրամով, անտառանյութով ու այլ նյութերով՝ նավեր կառուցելու համար: Իր հերթին Սպարտան, որի զորավարները բազմիցս հայտարարել էին, որ իրենք պատերազմում են Աթենքի դեմ հանուն ասենացիների կողմից կեղեքված հույների ազատագրման, պարտավորվեց կրկին պարսկական թագավորի իշխանությանը հանձնել բոլոր փոքրասիական հունական քաղաքները:

Սպարտական ռազմանավերը ձգտում էին կտրել այն ծովային ուղիները, որոնցով հացը Պոնտոսից փոխադրվում էր Աթենք: Մի շարք հունական փոքրասիական քաղաքներում արիստոկրատները սպարտացիների օգնությամբ կատարեցին հեղաշրջումներ: Մ. թ. ա. 411 թ. դեմոկրատիայի հակառակորդները հանդես եկան նաև Աթենքում: Մեղադրելով բոլոր դժբախտությունների մեջ դեմոկրատական կարգերը, դեմոկրատիայի հինավուրց թշնամիները՝ արիստոկրատները, միավորվելով հարուստ վաճառականների հետ, սկրսեցին մեծ աշխուժություն ցուցաբերել իրենց փոքր քաղաքական միավորումներում՝ հետերիաներում (ընկերություններում), ուր քննարկվում էին քաղաքական հարցեր: Շուտով հետերիաները առաջադրեցին Աթենքում գործող դեմոկրատական սահմանադրությունը վերանայելու պահանջը: Նախնիների ժամանակ եղած կարգերին կամ իսկական դեմոկրատիային վերադառնալու պատրվակով, դեմոկրատական կառուցվածքի հակառակորդներն առաջարկեցին սահմանափակել ժողովրդական ժողովի մասնակիցների թիվըն ու նրա իշխանությունը և այդ իշխանությունը հանձնել լավագույններին, այսինքն առավել հարուստ քաղաքացիներից հավաքավելիք փոքր խորհուրդի ձևով: Նրանք ցանկանում էին Ա-

թենքում հաստատել քչերի տիրապետութիւնը՝ օլիգարխիա: Ահա-բեկելով, իսկ հետո խաբելով ժողովրդին սահմանադրութիւնը վերանայելու համար հատուկ խորհուրդ ստեղծելու առաջարկով, օլիգարխիայի կողմնակիցները, որոնց գլխավորում էին Անտիփոնը, Կրիտիասն ու Թերամենեսը, օգտվելով պատերազմի կապակցութեամբ դեմոկրատների մի մասի բացակայութիւնից, անցկացրին այդ որոշումը ժողովրդական ժողովում: Դրանից հետո նրանք զինված հրոսակախմբի օգնութեամբ ցրեցին հինգհարյուրի խորհուրդն ու զավթեցին իշխանութիւնը:

Օլիգարխները սկսեցին հետապնդել դեմոկրատների ղեկավարներին ու հաշտութիւն առաջարկեցին Սպարտային: Սակայն սպարտացիները չէին հավատում, որ դեմոկրատիայի թշնամիների տիրապետութիւնը Աթենքում ամուր է, մանավանդ, որ հենց օլիգարխների շրջանում կային երկու թշնամի խմբավորումներ՝ ծայրահեղներ ու շափավորներ: Սպարտացիները ոչ միայն դանդաղում էին հաշտութիւն կնքելու հարցում, այլև պատերազմի ընթացքում առաջին անգամ փորձեցին գրոհ ձեռնարկել Աթենքը Պիրեոսի հետ կապող «Նրկար պատերի» վրա:

Այդ պահին Սամոսի մոտ կանգնած նավատորմիղում բռնկվեց ապստամբութիւն: Մարտիկներն ու թիավարները հայտարարեցին, որ նրանք չեն ճանաչում օլիգարխների իշխանութիւնն Աթենքում ու պահանջեցին վերականգնել դեմոկրատական սահմանադրութիւնը: Նրանք ընտրեցին նոր ստրատեգոսներ՝ Թրասիբուլոսին, Թրասիլլոսին, ինչպես և Ալկիբիադեսին, որը Սպարտայից մեկնել էր պարսկական տիրույթները: Ալկիբիադեսը ձգտելով վերադառնալ Աթենք՝ իբրև առաջատար քաղաքական գործիչ, ապրում էր պարսկական սատրապի արքունիքում ու հյուսում էր քաղաքական խարդավանքների բարդ ցանց: Նա հրավեր ստանալով աթենական զորքից ու նավատորմից, իսկույն ևեթ գլխավորեց աթենական զինված ուժերը: Ալիբիադեսը ուղղեց նավատորմիղը Պրոպոնտիս ու ջախջախելով այս շրջաններում գործող պելոպոնեսյան նավախրմբերը, վերականգնեց աթենացիների տիրապետութիւնը Պոնտոսից էգեյան ծով տանող ջրային ուղիների վրա: Դա ապահովեց հացի անխափան ներմուծումը Աթենք: Միայն դրանից հետո նա նավատորմը շարժեց դեպի Աթենք:

Սակայն դեռևս մինչև նավատորմի վերադառնալը, աթենական բնակչութիւնը տապալեց օլիգարխների տիրապետութիւնն ու վերականգնեց դեմոկրատական կարգը (մ. թ. ա. 410 թ.): Ալկիբիադեսը հանդիսավոր մուտք գործեց Աթենք, լրիվ արդարացվեց ու ընտրվեց ստրատեգոս-ավտոկրատոր (աթենական բոլոր ծովային

ու ցամաքային զինված ուժերի՝ հատուկ լիազորութիւններով օժտրված զորահրամանատար)։ Աթենքի շրջակայքում հաստատվեց որոշ հանգստութիւն։

Սակայն սպարտացիների գտնվելը Դեկելեսյում անհնարին էր դարձնում տնտեսական կյանքի նորմալ ընթացքը Ատտիկայում, իսկ Աթենքից Եվբեայի անջատման հետևանքով լիովին ընդհատվեց պարենի ներմուծումը քաղաք ցամաքով, քանի որ ծովափնյա ճանապարհը հարվածի էր ենթարկվում մայրցամաքին մոտ գտնվող կղզուց։ Սպարտացիները պարսիկների ֆինանսական օգնութեան շնորհիվ արագ վերականգնեցին իրենց նավատորմիդը ու վերսկսեցին պայքարը աթենացիների դեմ Փոքր Ասիայի ափերի մոտ, իրենց կողմը գրավեցին մի շարք փոքրասիական պոլիսներ։

Ալկիբիադեսը հմտորեն ղեկավարում էր աթենական նավատորմիդը, սակայն նա չկարողացավ հասնել վճռական հաղթանակի։ Մ. թ. ա. 407 թ., Աթենք մեկնելու պահին, նրա տեղակալը իր նավատորմիդով անզգուշորեն մոտեցավ սպարտական նավախմբի կայանին ու ենթարկվեց սպարտացիների անսպասելի հարձակմանը և ջախջախվեց նոտիոն հրվանդանի մոտ։ Աթենական նավատորմի մնացորդները փրկութիւն գտան Միտիլենեի նավահանգրստում, որտեղ նրանք շրջափակվեցին սպարտացիների կողմից։

Այդ պարտութիւնն առաջացրեց վրդովմունքի փոթորիկ Աթենքում։ Պարտութեան համար մեղավոր ճանաչվեց Ալկիբիադեսը, թեև ճակատամարտը սկսվեց հակառակ նրա հրամանի։ Նա զրկվեց ստրատեգոսի կոչումից ու արտաքսվեց թրակիական Քերսոնեսոս։

Միտիլենեում շրջափակված նավատորմի մնացորդներն ազատելու նպատակով աթենացիները լարեցին իրենց վերջին ուժերը։ Օգտագործվեցին բոլոր առկա դրամական միջոցները, Աթենասի տաճարի գանձերը, անտառանյութի ողջ պաշարը, հավաքվեցին լրացուցիչ գումարներ դեռևս հավատարիմ մնացած դաշնակիցներից, մոբիլիզացվեցին կովելու ընդունակ բոլոր քաղաքացիները։ Ստեղծվեց նոր, հզոր նավատորմիդ, որը գլխավորեցին տասը ստրատեգոսներ, որոնց թվում էր նաև Պերիկլեսի որդին։

Մ. թ. ա. 406 թ. աթենական նավատորմիդը հանդիպեց սպարտական նավատորմին Փոքր Ասիայի ափերի մոտ, Արգինուսյան կղզիների շրջանում, ու կործանիչ պարտութեան մատնեց սպարտացիներին։ Մարտում ընկավ սպարտական նավաբոսն, ու ոչընչացվեց նրա նավերի մեծ մասը։ Սակայն աթենական ժողովրդական ժողովը մոլորութեան մեջ ընկավ տրիերարքներից (նավապետներից) մեկի կեղծ զեկուցագրի հետևանքով։ Այդ նավապետը, չկատարելով կործանվող նավաստիներին օգնութիւն ցույց տալու



մասին տրված հրամանը, մեկնեց Աթենք ու մեղադրեց ստրատեգոսներին այն բանում, որ նրանք ժամանակին միջոցներ չձեռնարկեցին սպանվածներին թաղելու համար, այսինքն մեղադրեց նրանց սրբապղծության մեջ: Ժողովը սկզբում որոշեց հաղթանակած ստրատեգոսներին հեռացնել հրամանատարությունից, իսկ հետո որոշեց մահապատժի ենթարկել նրանց: Ժողովը դական ժողովի այս շնորհած վճիռը պատահական չէր. այն արտահայտում էր իրար դեմ պայքարող քաղաքական խմբավորումների այն մոլուցքը, որն արտահայտվեց աթենացիների համար դժբախտ Պելոպոնեսյան պատերազմի վերջում: Սրվեց աթենական ստրկատիրական դեմոկրատիայի ճգնաժամը:

Ստրատեգոսների դատավարությունից ու մահապատժից հետո աթենացիներն արդեն չկարողացան ամրապնդել իրենց հաջողությունը: Շուտով սպարտացիները պարսիկների օգնությամբ վերականգնեցին իրենց նավատորմի զըր, որի հրամանատար նշանակվեց խորամանկ ու փորձառու նավարքոս Լիսանդրոսը: Նա խուսափում էր աթենացիների հետ վճռական ճակատամարտից, բայց ձգտում էր կտրել կարևոր ջրային ուղիները, որոնցով Պոնտոսը նեղուցներով միացվում էր Էգեյան ծովին:

Մ. թ. ա. 405 թ. ամռանը Լիսանդրոսը ճամբար ստեղծեց Հելլեսպոնտոսի ասիական ափին: Աթենական նավատորմի զըրը տեղավորվեց նեղուցի հակադիր, եվրոպական ափի մոտ, մի բաց, անհարմար տեղում, «այժի» ծանծաղ գետակից (էգոս Պոտամոս) ոչ հեռու: Ուշադիր հետևելով աթենացիներին, Լիսանդրոսը նախապատրաստեց անսպասելի հարձակում: Հանկարծակի բերված աթենական նավատորմը համարյա լիովին ոչնչացվեց: Լիսանդրոսը, ծովում տիրապետութուն հաստատելով, փակեց Աթենքի պարենավորման ուղիներն ու դանդաղորեն շարժվեց դեպի Ատտիկա՝ ճանապարհին գրավելով աթենացիներին դաշնակից համայնքները, որտեղ խսկույն կեթ ոչնչացվում էին դեմոկրատական կարգերն ու հաստատվում էր օլիգարխիների տիրապետութունը: Մ. թ. ա. 405 թ. աշնանը սպարտացիներն ու նրանց դաշնակիցները պաշարեցին Աթենքը ցամաքից ու ծովից և քաղաքը մատնեցին սովի: Մ. թ. ա. 404 թ. գարնանամուտին սովը Աթենքում հասավ ծայրահեղ աստիճանի: Մ. թ. ա. 411 թ. օլիգարխիական դավադրության դեկավարներից մեկը՝ Թերամենեսը, առաջարկեց սկսել հաշտության բանակցություններ, բայց գալով թշնամու ճամբարը, դիտավորյալ երկարաձգեց սպարտացիների մոտ իր մնալու ժամկետը, որպեսզի ստիպի իր համաքաղաքացիներին անվերապահորեն անձնատուր լինել:

Սովի հետևանքով ծայրահեղության հասցված աթենացիները հանձնվեցին ու ընդունեցին Սպարտայի թելադրած բոլոր պայմանները (մ. թ. ա. 404 թ.):

Հաշտության պայմանների համաձայն Աթենական ժողային միությունը արձակվում էր, ինքը՝ Աթենքը մտնում էր Պելոպոնեսյան միության կազմի մեջ: Աթենացիները պարտավորվեցին շունենալ ուղղակի նավատորմի՞ տասներկու նավերից բացի: Երկար պարիսպները քանդվեցին սպարտացիների կողմից: Բացի այդ, աթենացիները պետք է վճարեին Սպարտային մեծ ուղղամատուցանք ու դեմոկրատիայի փոխարեն պետք է հաստատեին օլիգարխիա: Բարվոք չէր նաև հունական այլ պոլիսների վիճակը: Սպարտացիները ամենուրեք ուժեղացնում էին օլիգարխիայի տիրապետությունն ու տեղավորում էին իրենց զորքերը, դաժան հաշվեհարդար էին տեսնում բոլոր դժգոհների նկատմամբ:

Պելոպոնեսյան պատերազմը (մ. թ. ա. 431—404 թթ.) ավարտվեց Սպարտայի լիակատար հաղթանակով: Սակայն հաղթողը ևս հյուծվել էր երկարատև պատերազմի հետևանքով գրեթե նույն շահով, որքան պարտված Աթենքը: Միակ շահած կողմը եղավ պարսկական պետությունը, որը վերսկսեց հունական քաղաքների ներքին գործերին միջամտելու իր քաղաքականությունն ու ձգտում էր իրեն ենթարկել Փոքր Ասիայի արևմտյան ժողովին գտնվող հունական քաղաքները:

«ԵՐԵՍՈՒՆԵՒ» ՏԻՐԱՆԻԱՆ ԱԹԵՆՔՈՒՄ:

ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ Մ. Թ. Ա. 403 Թ.

Հաշտություն կնքելուց հետո Աթենքում, պայմանագրի համաձայն, շուտով մտցվեց օլիգարխիական կառավարում: Օլիգարխիական խորհրդի անդամները ընտրեցին պահակազորի հինգ պետերին, որոնք դատաստան տեսան դեմոկրատիայի կողմնակիցների առաջնորդների հետ: Հետո գումարվեց ժողովրդական ժողով: Ահաբեկված քաղաքացիներին առաջարկեցին ընտրել հանձնաժողով՝ կազմված երեսուն օլիգարխներից, որոնք պետք է նախապատրաստեին Աթենքի նոր սահմանադրությունն ու կառավարեին Աթենքում մինչև սահմանադրության ուժի մեջ մտելը: Ժողովուրդը փորձեց բողոքել, բայց ժողովին ներկա գտնվող սպարտական նավարքոս լիսանդրոսը սպառնաց, որ եթե աթենացիները չհամաձայնվեն սահմանելու օլիգարխիա, ապա աթենական պետությունը կոչնչացվի: Աթենացիների մի մասը հեռացավ ժողովից, իսկ մնացածները պասսիվորեն համաձայնվեցին Թերամենեսի ներկայացրած երեսուն հոգուց կազմված հանձնաժողովի ցուցակի հետ. այդ հանձ-

նաժողովը ստացավ «երեսուն տիրաններ» անունը: Աթենքում իշխանութիւնը զավթած օլիգարխների խումբը զխավորում էին Կրիտիասն ու Թերամենեսը: Կրիտիասը՝ փիլիսոփա Սոկրատեսի մերձավոր աշակերտներից մեկը, դեմոկրատներին ատող ու նրանց դաժանորեն հետապնդող ծայրահեղ օլիգարխների կողմնակիցն էր: Թերամենեսը պատկանում էր դեմոկրատական կարգերի շափավոր հակառակորդների թվին: Այդ մարդիկ ձգտում էին Աթենքում հաստատել հարուստ հողատերերի ու ստրկատերերի տիրապետութիւնը: «Երեսունը», նշանակելով խորհրդի անդամներ իրենց կողմնակիցներից ու բանտերի և քաղաքի պահպանութիւնը հանձնարարելով իրենց բարեկամներին, չէին շտապում մշակելու նոր սահմանադրութիւն: Նրանք խնդրեցին Լիսանդրոսին ռազմական օգնութիւն տրամադրել իրենց: Սպարտական ջոկատը զրավեց Ակրոպոլիսը, իսկ նրա պետը հայտարարվեց Աթենք քաղաքի հարմոստես: Հենվելով սպարտական կայազորի վրա, տիրանները դատաստան էին տեսնում կասկածելի թվացող աթենական քաղաքացիների ու հարուստ մետոյկների հետ: Խլելով քաղաքացիներից զենքը, «Երեսունը» դադարեցին հաշվի նստել որևէ օրենքի հետ: «Նրանք մահապատժի ենթարկեցին շատ մարդկանց,— գրում էր Քսենոֆոնը,— ոմանց՝ իրենց ատելութիւնը բավարարելու համար, իսկ մյուսներին՝ հանուն նրանց գուլթին տիրելու ցանկութիւն: Իրենց թիկնապահներին վարձատրելու համար նրանք վճռեցին, որ նրանցից յուրաքանչյուրը կընտրի մի հարուստ մետոյկոսի, կկարգադրի սպանել նրան ու կվերցնի նրա ունեցվածքը»: Երբ Թերամենեսը սկսեց առարկել նման գործողութիւնների դեմ, Կրիտիասն ու նրա կողմնակիցները հայտարարեցին Թերամենեսին դավաճան, վտարեցին նրան «Երեսունի» կազմից ու մահապատժի ենթարկեցին: Ընդամենը իրենց տիրապետութիւն ութ ամսվա ընթացքում «Երեսունը» առանց դատի սպանեց 1500 աթենական քաղաքացիների: Շատ աթենացիներ, իրենց կյանքը փրկելով նրանց մոլեգնութիւնից, փախան հարևան քաղաքները՝ Մեգարա, Թեբե, Արգոս:

Թեև սպարտացիները «Երեսունի» խնդրանքով արգելեցին իրենց դաշնակիցներին ապաստան տալ աթենական փախստականներին, սակայն հետագայում այդ պահանջները չկատարվեցին: Դրա պատճառը սպարտական կառավարիչների ու զորապետերի մեծամտութիւնն և կոպիտ վարքի հետևանքով ուժեղացող դժգոհութիւնն էր: Թեբեացիները ոչ միայն թույլատրեցին աթենական դեմոկրատիայի կողմնակիցներին պատսպարվել իրենց տարածքում, այլև անգամ օգնեցին նրանց կազմակերպել ջոկատ ու գրավել Փիլեն՝ սահմանային աթենական ամրութիւնը: Աթենքից ու

Ատտիկայի մյուս մասերից այստեղ արագորեն սկսեցին հավաքվել դեմոկրատական կարգերի վերականգնման կողմնակիցները: Դեմոկրատներին զլխավորում էր ստրատեգոս Քրասիբուլոսը: Նա հետ մղելով սպարտական ջոկատի ու օլիգարխների կողմից ուղարկված հեծյալների հարձակումը, հանկարծակի գիշերային գող-հով նրանց մատնեց դաժան պարտության: Կրիտիասը անհաջողությունից անհանգստացած, դավաճանորեն զավթեց Ելեվսիսը ու սպանեց 300 Ելեվսիսցիներին:

Դաժան հաշվահարդարը շվախեցրեց դեմոկրատներին: Անցնելով հարձակման, Քրասիբուլոսի զորքը գրավեց Պիրեևսը: Պիրեևսի մոտ տեղի ունեցած մարտում զոհվեց Կրիտիասը, իսկ «Երեսունի» հանձնաժողովի կենդանի մնացած անդամները փախան Ելեվսիս ու այնտեղից սպարտացիներին խնդրեցին օգնել իրենց: Իսկ Աթենքում իշխանությունը գրավեցին շափավոր օլիգարխիայի կողմնակիցները:

Լիսանդրոսը սպարտական զորքով շարժվեց Ելեվսիս, սակայն Սպարտայում սկսեցին կասկածել, որ նա ձգտում է զավթել գերագույն իշխանությունը: Էֆորները Ատտիկա ուղարկեցին մի այլ սպարտական զորք Լիսանդրոսի թշնամի՝ Թագավոր Պավսանիասի զլխավորությամբ: Կորնթոսի ու Թեբեի բնակիչները հրաժարվեցին օգնություն տրամադրել Լիսանդրոսին: Դա հնարավորություն տվեց Պավսանիասին առաջարկել աթենացիներին հաստատելու իրենց մոտ քաղաքացիական խաղաղություն (մ. թ. ա. 403 թ.):

Ըստ համաձայնության պայմանների, սպարտացիները հրաժարվեցին միջամտել Աթենական հանրապետության ներքին գործերին: «Երեսուն բռնապետներն» ու նրանց հանցագործությունների մեղսակիցները ենթարկվեցին պատժի: Աթենքը վերականգնեց իր դեմոկրատական սահմանադրությունը, բայց առժամանակ ստիպված էր մնալ Պելոպոնեսյան միության կազմում: Դրանից հետո հանդիսավոր ձևով հռչակվեց ընդհանուր ներում, և ընդունվեցին օրենքներ՝ Արեոպագոսին օրինավոր կարգը հսկելու լիազորություն շնորհելու մասին: Այսպես, մ. թ. ա. 403 թ., Եվկլիդեսի արքունտության տարում Աթենքում վերականգնվեց դեմոկրատական սահմանադրությունը: Եվկլիդեսի արքունտությունը հետագա սերունդները համարեցին բեկման պահ Աթենքի պատմության մեջ:

## Գլուխ 12. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ ՀՈՒՆԱԿԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԸ ԴԱՍԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Արևմտյան Միջերկրականի, հատկապես Մեծ Հունաստանի (այսինքն Իտալիայի հարավի ու Սիկիլիա կղզու) հունական քա-

ղաքների պատմությունը արտացոլված է դասական ու հելլենիստական շրջանների հույն պատմիչների մի շարք գործերում: Այլ աշխատությունների մեծ մասը մեզ չի հասել, ու արևմտյան քաղաքների պատմությունը հայտնի է ավելի ուշ ժամանակի հեղինակների գործերից, որտեղ օգտագործված են նախորդների աշխատությունները: Աղբյուրների մեջ կարևորագույն տեղ է գրավում Քուկիդիդեսի գործը: Քուկիդիդեսը խոսում է արևմուտքի հունական քաղաքների մասին մ. թ. ա. 415 թ. Սիրակուզայի դեմ ձեռնարկած աթենական արշավանքի կապակցությամբ ու իր պատմածին կցում է ակնարկ հույների կողմից Սիկիլիայի գաղութացման մասին: Դիոդոր Սիկիլիացին, լայնորեն օգտագործելով մ. թ. ա. IV դ. պատմիչների՝ Քեոպոմպոսի, Եփորոսի ու գլխավորապես Տիմայոս Տավրոմենացու գործերը, շարադրում է արևմտյան հելլենության պատմությունը: Մեծ Հունաստանի պատմության վերաբերյալ որոշ տվյալներ է հաղորդում Պլուտարքոսը սիկիլական քաղաքական գործիչներ Դիոնի ու Քիմոնի կենսագրություններում: Տեղեկություններ արևմտյան քաղաքների պատմության վերաբերյալ մենք գտնում ենք Կորնելիոս Նեպոտի, Հուստինոսի (ըստ Պոմպեոս Տրոգոսի), Ստրաբոնի և ուրիշների աշխատություններում:

ՍԻԿԻԼԻԱՅԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ:  
ԿԱՐԹԱԳԵՆԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՍԿԻՋՐԸ

Արևմտյան Միջերկրականի քաղաքների տնտեսական զարգացման համար բնորոշ էր հողային սեփականության վաղ համակենտրոնացումն ու գյուղատնտեսության, գլխավորապես հացաբույսերի մշակման մեջ ստրուկների, իսկ որոշ պոլիսներում նաև կախյալ բնակչության աշխատանքի լայն օգտագործումը: Այստեղ ավելի վաղ, քան Բալկանյան Հունաստանի քաղաքներում, հանդես եկավ պարզ ապրանքային արտադրությունն, ու զարգացան դասական ձև ունեցող ստրկատիրական հարաբերությունները: Արևմուտքում ավելի արագ էր ընթանում գյուղացիության ու ազատ արհեստավորների սնանկացումը: Ավելի սուր ձև ընդունեց նաև սոցիալական պայքարը:

Ներքին երկպառակությունները, որոնք վերաճում էին բացահայտ քաղաքացիական պատերազմների, իշխանության գլուխկանգնեցնում էին այս կամ այն քաղաքական խմբավորմանն ու երբեմն ճանապարհ էին հարթում տիրանիայի համար: Այստեղ քոնապետության հաստատմանը նպաստում էր նաև արտաքին քաղաքական իրադրությունը: Արևմուտքի հունական քաղաքները

ստիպված էին անընդհատ պատերազմներ վարել մի կողմից տեղական ցեղերի դեմ, որոնք չէին կարողանում հաշտվել իրենց հողերի շարունակվող զավթումների հետ, և մյուս կողմից՝ Կարթագենի դեմ՝ Սիկիլիային տիրելու ու Միջերկրականի արևմտյան մասում տնտեսական ազդեցութուն հաստատելու համար: Այդ մշտական պատերազմների պայմաններում մեծ դեր էին խաղում գին՝ վտրական հրամանատարներն ու նրանց վարձկան բանակները: Զինվորական հրամանատարներն էլ սովորաբար դառնում էին բռնապետներ:

Տիրանիայի առաջացումն արևմուտքում վերաբերում է դեռևս մ. թ. ա. VI դ. սկզբին: Ինչպես և մայրցամաքային Հունաստանում, այստեղի վաղ տիրանիաներն իրենց բնույթով տարբերվում էին մ. թ. ա. V և IV դդ. տիրանիաներից: Նրանք հանդես եկան այն ժամանակ, երբ քաղաքները պահպանում էին հին, զուտ ագրարային կառուցվածք, գույքային շերտավորումն արդեն հանգեցրել էր հողերի ու հարստութունների կուտակմանը փոքրաթիվ հողատեր արիստոկրատիայի ձեռքում: Ավագանուն հակադրվում էին շարքային քաղաքացիութունը, իր հողաբաժինները կորցրած գյուղացիութունն ու կախյալ տեղական բնակչութունը: Վաղ տիրանիաները հանդես եկան արիստոկրատիայի դեմ քաղաքների դեմոկրատական տարրերի մղած կատաղի պայքարի պայմաններում: Սովորաբար տիրանիայի հաստատմամբ տապալվում էր արիստոկրատիայի իշխանութունը: Սոցիալական տեսակետից տիրանների քաղաքականութունն աչքի էր ընկնում շատ թե քիչ դեմոկրատիզմով, իսկ նրանց արտաքին քաղաքականութունն ագրեսիվ էր: Նրանք ձգտում էին զավթել հարևան քաղաքներն ու նվաճել դեռևս անկախ տեղական ցեղերին: Նման ճանապարհով ձեռք բերված հողի մի մասը, որպես կանոն, բաժանվում էր քաղաքացիների միջև: Այսպես, օրինակ, մ. թ. ա. V դ. առաջին քառորդում Հոնգիոն քաղաքի տիրան Անաքսիլաոսը գրավեց նեղուցի վրա գտնվող Զանկլե քաղաքը, բնակեցրեց այն նոր քաղաքացիներով ու անվանեց Մեսսենե:

Մ. թ. ա. V դ. սկզբում զգալի հզորության հասավ Գելան: Նրա տիրան Հիպոկրատեսը նվաճեց սիկուլներ հարավսիկիլիական ցեղն ու հետո իրեն ենթարկեց հարավային հունական համայնքները: Նվաճողական քաղաքականության հետագա զարգացման արդյունքը եղավ Հիպոկրատեսի ընդհարումը Սիրակուզայի հետ: Սիրակուզյան բանակը ջախջախվեց, սիրակուզիները պետք է հրաժարվեին Գելայի օգտին իրենց հողերի մի մասից ու իրենց տիրապետության տակ գտնվող Կամարինայից, ուր Հիպոկրատեսը դուրս

բերեց գաղութաբնակներ Գելաշից: Սիրակուզայի պարտութիւնը ազդանշան եղավ խոշոր հողատեր արհեստկրատների՝ գեոմորների իշխանութեան դեմ ուղղված ժողովրդական ապստամբութիւն սկըսելու համար: Գեոմորների դեմ ելած քաղաքային դեմոսին միացավ գեոմորների կախյալ գլուղական բնակչութիւնը, այսպես կոչված կիլիկիները, որոնց դրութիւնը մոտենում էր սպարտական հելոտների վիճակին: Գեոմորների իշխանութիւնը տապալվեց, նրանք փախան Սիրակուզայից: Քաղաքում հաստատվեց դեմոկրատական կարգ, ընդ որում կիլիկիները ստացան քաղաքացիական բոլոր իրավունքները: Սակայն դեմոկրատների տիրապետութիւնը երկարատև չէր: Գելաշում՝ սիկուլների դեմ մղած պատերազմում զոհված Հիպոկրատեսի փոխարեն իշխանութեան գլուխ անցավ տաղանդավոր զորավար ու քաղաքական գործիչ Գելոնը: Նա վերսկսեց պատերազմը Սիրակուզայի դեմ ու իրեն ենթարկեց այդ քաղաքը: Գելոնը թուլլատրեց սիրակուզյան գեոմորներին վերադառնալ Սիրակուզա, սակայն նրանց տիրապետութիւնը չվերականգնվեց: Կիլիկիները պահպանեցին ազատութիւնն ու քաղաքական իրավունքները: Գելոնը օգտվելով հարևան Մեգարա քաղաքում տեղի ունեցող ներքին պայքարից, զավթեց ու քանդեց Մեգարան: Գեոմորներին նա բնակեցրեց Սիրակուզայում, մնացած բնակչութիւնը վաճառեց ստրկութեան:

Գելոնի տիրանիան սկսեց ընդունել ավելի բռնապետական ձևվեր: Նա Սիրակուզա փոխադրեց Գելաշի ու Կամարինայի քաղաքացիներին ու Սիրակուզան դարձրեց իր նստավայրը և սիրակուզյան նոր տերութեան մայրաքաղաք:

Նման արտաքին քաղաքականութիւն էր վարում նաև Ակրագասի տիրան Քերոնը: Նա իրեն ենթարկեց հարևան հունական քաղաքները, այդ թվում նաև Հիմերեն ու զավթեց տեղական ցեղերի հողերը: Նրա տիրութիւնը տարածվում էին Լիբիական ծովից մինչև Տիրոսիան ծով: Այսպիսով, Սիկիլիայում կազմավորվեցին երկու համեմատաբար մեծ հունական պետութիւններ, որոնց կառավարիչները հաստատեցին բարեկամական հարաբերութիւններ:

Հուլների ուժեղացումը Սիկիլիայում անհանգստացրեց Կարթագենին: Վտանգ ստեղծվեց կղզու արևմուտքում գտնվող նրա տիրույթների համար: Իրենք հուլները առիթ տվեցին Կարթագենին միջամտելու սիկիլիական գործերին: Քերոնի կողմից Հիմերից արտաքսված տիրանը օգնութիւն խնդրեց կարթագենիներից: Վերջիններս Պանոբոսի մոտ ափ հանեցին քաղաքացիական աշխարհագորից ու վարձկաններից կազմված մեծ զորք՝ կարթագենի Համիլկարի գլխավորութեամբ: Որպես Կարթագենի դաշնակից-

ներ հանդես եկան Հոնգիոնն ու Սելինունար, որոնց անկախությանը սպառնում էր Քերոնը: Համիլկարը մոտեցրեց իր բանակը Հիմերին ու սկսեց քաղաքի պաշարումը: Քերոնին ու Հիմերին օգնելու եկավ սիրակուզյան բանակը Գելոնի գլխավորությամբ: Մ. թ. ա. 480 թ. կարթագենցիները գլխովին ջախջախվեցին Հիմերի պատերի տակ: Հերոդոտոսը հաղորդում է, որ Հիմերի մոտ ճակատամարտը տեղի ունեցավ այն նույն օրը, ինչ և պարսիկների հետ ճակատամարտը Սալամիսի մոտ: Դա, հավանաբար, հետագայի հնարանքի արդյունք է: Սակայն կարևոր է նշել, որ և՛ արեվելքում, և՛ արևմուտքում հույները միաժամանակ կարողացան պաշտպանել իրենց անկախությունը:

Գելոնի (նա մահացավ մ. թ. ա. 478 թ.) ժառանգորդ Հիերոնի օրոք Սիրակուզյան պետությունը հասավ ավելի մեծ արտաքին քաղաքական հզորության: Սելինունտն ու Հոնգիոնը ստիպված էին Սիրակուզայի հետ դաշինք կնքել, որը պարտավորեցնում էր նրանց սիրակուզցիներին զորք տրամադրել վերջիններիս առաջին իսկ պահանջով: Սիրակուզյան տիրանների իշխանությունը այժմ տարածվեց Սիկիլիայի մեծ մասի վրա. արևմուտքում ափի միայն նեղ շերտը կարթագենյան էր: Հիերոնի օրոք Սիրակուզայի քաղաքական ազդեցությունը տարածվեց նաև Հարավային Իտալիայի վրա:

#### ՀԱՐԱՎԱՅԻՆ ԻՏԱԼԻԱՅԻ ՀՈՒՆԱԿԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հարավիտալական հունական քաղաքները, որոնցից ամենախոշորն էր Տարասը, շունեին այնպիսի վտանգավոր հակառակորդ, ինչպիսին Կարթագենն էր: Դեռևս մ. թ. ա. VIII դ. Միջին Իտալիայում հանդես եկած Հռոմեական պետությունը զբաղված էր հարևան ցեղերի դեմ պայքարով ու անմիջական սահմաններ չունեի հունական գաղութների հետ: Դրա փոխարեն հույները մշտապես պատերազմում էին տեղական ցեղերի դեմ: Այդ ցեղերը ձուլվում էին հույների հետ ավելի քիչ չափով, քան սիկուլները Սիկիլիայում: Խիստ սակավահողությունը և յուրաքանչյուր հարավիտալական քաղաքի ձգտումը՝ վարելու անկախ քաղաքականություն, նույնպես առաջացնում էին մշտական զինված ընդհարումներ նրանց միջև: Քաղաքի ներսում բորբոքվում էր ժողովրդի քաղաքական պայքարը ավագանու դեմ, անընդհատ փոխվում էին կառավարման ձևերը:

Պետք է նշել, որ Իտալիայի հարավի քաղաքներում հանրապետական կարգն ավելի ամուր էր, ու տիրանիան կարճատև երևույթ էր: Այն անգամ լրիվ անհայտ էր Լոկրիում: Մ. թ. ա. VI դ. կեսին արքայան Կրոտոն, Սիբարիս ու Մետապոնտիոն քաղաքները ստեղ-



ծեցին ռազմաքաղաքական միություն: Սակայն շուտով դաշնակից քաղաքները ջախջախվեցին լոբբիցիների կողմից, որից հետո միությունը կազմալուծվեց, ու նախկին դաշնակիցների հարաբերությունները խիստ վատացան: Կրոտոնը, որտեղ իշխանությունն անցավ արիստոկրատիայի ձեռքը, պատերազմ սկսեց հարուստ Սիբարիսի դեմ՝ նպատակ ունենալով զավթել Սիբարիսի լայնատարած ու արգավանդ հողերը: Մ. թ. ա. 510 թ. Սիբարիսը լիակատար պարտություն կրեց ու ջնջվեց երկրի երեսից: Նրա տեղում, շատ տասնամյակներ անց նոր բնակավայր հիմնադրվեց Պերիկլեսի կողմից ու այն կոչվեց Թուրիք:

Ըստ անտիկ ավանդության, Սիբարիսը ընկավ այն պատճառով, որ նրա քաղաքացիները՝ ճոխության ու պարապության հետևանքով դառնալով փափկակյաց մարդիկ, չկարողացան դիմադրել թշնամիներին: Զախջախումից փրկված ու Տարասի ծովախորշի ափերին գտնվող իրենց գաղութները փախած սիբարիսցիների օգնության խնդրանքները առիթ տվեցին Հիերոնին միջամտելու հարավիտալական քաղաքների ներքին գործերին և հաստատելու այնտեղ իր տիրապետությունը:

ՍԻՐԱԿՈՒՋԱՅԻ ԲԱՐՁՐԱՅՈՒՄԸ: ՏԵՏՏՈՒԹՅՈՒՆԸ: ՍՈՑԻԱԿԱՆ ՌԻՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՄԵՍ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ Մ. թ. ա. VI դ.

Կարթագենցիների վաղեմի դաշնակից, Միջին ու Հյուսիսային Իտալիայում ապրող ժողովրդի՝ էտրուսկների մրցակցությունը արևմտյան ծովերում վերացնելու ձգտումը ստիպեց Հիերոնին օգնություն տրամադրել էտրուսկների դեմ պայքարող հունական գաղութ Կումսին (Միջին Իտալիա): Հիերոնի նավատորմիղը մ. թ. ա. 474 թ. Կումսի մոտ պարտության մատնեց էտրուսկներին, դավերջիններիս ստիպեց հրաժարվել Կամպանիայի նկատմամբ իրենց ոտնձգություններից ու թուլացրեց նրանց ազդեցությունը Արևմտյան Միջերկրականում: Ձեռք բերած հարուստ ավարը Հիերոնին միջոցներ տվեց Սիրակուզայում շքեղ շենքեր կառուցելու ու փայլուն տոնակատարություններ կազմակերպելու համար: Հիերոնի օրոք Սիրակուզայում կառուցվեց զինանոց, վերափոխվեց նավահանգիստը, սկսվեց ռազմական նավատորմիղի կառուցումը: Հիերոնը իրեն շրջապատեց փայլուն շքախմբով, նրա արքունիքում տարբեր ժամանակ ապրել էին ականավոր հույն գրողներ Սիմոնիդեսը, Պինդարոսը, Բակքիլիդեսը, էսքիլեսը, Քսենոփանեսը և ուրիշներ:

Սիրակուզյան բռնակալների կողմից թե՛ իրենց ցեղակիցների՝ հունական քաղաքների, և թե՛ արտաքին հակառակորդների դեմ մղած հաղթական պատերազմների ընթացքում Սիրակուզայում սկը-

սեց ձևավորվել վարձու բանակների վրա հենվող ռազմական միապետություն: Այդ բանակները, որոնց պահպանումը որպես ծանր բեռ ընկնում էր քաղաքացիության ուսերին, դառնում էին տիրանների հզորության հիմքը: Տիրանները պարզևատրում էին վարձկաններին քաղաքացիական իրավունքներով ու հողակտորներով՝ բռնագրավելով այդ նպատակով երբեմն մի քաղաքի, օրինակ, Կատանեի բոլոր տիրույթները:

Զգալի նյութական արժեքներն ու ստրուկների մեծ բազմությունը, որոնք հունական քաղաքները ստացան մ. թ. ա. VI դ. վերջին V դ. սկզբին տեղի ունեցած հաջող պատերազմների շնորհիվ, նախադրյալներ ստեղծեցին այդ քաղաքների տնտեսական զարգացման համար: Ինչպես և առաջ, գյուղատնտեսությունը արևմտյան քաղաքների բարեկեցության հիմքն էր: Գլխավոր տեղը զբաղեցնում էին հացաբույսերի, հատկապես ցորենի ցանքերը: Սելինոնտը, օրինակ, ամբողջ հունական աշխարհում հռչակվել էր ցորենի իր տեսակով: Արևմտյան Միջերկրականի հունական քաղաքները ոչ միայն բավարարում էին հացահատիկի իրենց պահանջները, այլև անգամ հաց էին արտահանում արտաքին շուկաները: Սիկիլիան դարձավ հունական աշխարհի գլխավոր շտեմարաններից մեկը: Այդ հանգամանքը, ի միջի այլոց, Սիկիլիան դարձնում էր մշտական ոտնձգությունների օբյեկտ սկզբում Կարթագենի, հետո Աթենքի, իսկ ավելի ուշ՝ հզորացած Հռոմի համար: Սիկիլիայում լայնորեն տարածված էր խաղողագործությունը, ձիթենու, մրգատու ծառերի մշակումը: Ոչ պակաս տեղ էր զբաղում, հատկապես Իտալիայի հարավում, անասնապահությունը: Բացի մանր ու խոշոր եղջերավոր անասուններից, արևմտյան հույները բուծում էին խոզեր, ամենուրեք զարգանում էր ձիաբուծությունը:

Սիկիլիան հարուստ էր մետաղներով՝ արծաթով, պղնձով, երկաթով, ինչպես և լավ շինարարական քարով: Հույները Իտալիայի հարավից ստանում էին հիանալի անտառանյութ նաև նավաշինության համար: Այդ մարզերի հարստությունները նպաստեցին տարբեր արհեստների զարգացմանը: Սիրակուզան, նրա մշտական մրցակիցներ Լեոնտինեն, Ակրագասը, Հոեգիոնն ու Տարասը դարձան նավաշինության կենտրոններ: Խեցեղենի արտադրությունը, որի շինվածքները գնում էին արտաքին շուկա, հատկապես ծաղկում էր Իտալիայի հարավում, գերազանցապես՝ Տարասում: Արևմտյան քաղաքները աչքի էին ընկնում իրենց բրդյա երփներանգ գործվածքներով: Որպես ներկ օգտագործվում էր ծիրանին: Սիրակուզայում արտադրում էին վառ գույներով ներկված գործվածքներ. դրանք մեծ պահանջարկ ունեին քաղաքի սահմաններից հեռու: Սիրակուզան դա-

սական շրջանում դարձավ սայլերի, թանկարժեք վահույքի ու պերճանքի առարկաների արտադրության կենտրոն:

Արհեստավորական արտադրության զարգացումը, ապրանքային հացի ու գյուղատնտեսական ալյ մթերքների, գինու, յուղի առատությունը նպաստեցին արևմուտքի հունական քաղաքների առևտրի աճին: Զգալի չափերի էր հասնում հունական քաղաքների առևտուրը տեղական ցեղերի հետ, որոնք առաջին հերթին ստանում էին արհեստագործության առարկաներ: Արևմտյան քաղաքները զբաղվում էին ոչ միայն սեփական արտադրության առարկաների առևտրով. դրանք բոլորը այս կամ այն չափով ներգրավվել էին տարանցիկ առևտրի մեջ: Դրան նպաստում էր այդ քաղաքների աշխարհագրական դիրքը՝ դրանք տեղադրված էին Բալկանյան շունաստանից Միջերկրական ծովի արևմտյան մասը տանող գլխավոր ճանապարհի երկայնքով: Առևտրի լայն զարգացումը հաստատվում է հնագիտական տվյալներով՝ հունական աշխարհի տարբեր մասերում հայտնաբերվում են Սիկիլիայում հատած դրամներ:

Ապրանքադրամային հարաբերությունների զարգացման ու ստրուկների աշխատանքի լայն կիրառման շնորհիվ արագորեն աճեց խոշոր հողատիրությունը: Սիկիլիայում այն հասավ ավելի մեծ չափերի, քան Միջին Հունաստանում: Գյուղացիների ու քաղաքի մանր ազատ արհեստավորների սնանկացման պրոցեսը այստեղ մ. թ. ա. V դ. ընթանում էր ավելի արագ, քան մայրցամաքային Հունաստանում և ուղեկցվում էր սոցիալական պայքարի սրումով: Ինչպես և ամբողջ հունական աշխարհում, այդ պայքարի լոզունգն էր հողի վերաբաժանումն ու պարտքերի վերացումը: Այդ պրոցեսի հետևանքը եղավ արևմտահելլենական դեմոկրատիայի՝ իր ինքնուրույն քաղաքական դերից ավելի վաղ զրկվելը, նրա՝ սովորաբար վարձկանների ջոկատների վրա հենվող տիրանների իշխանությունից ազատվելու բոլոր փորձերի անհաջողությունը: Սոցիալական պայքարն անկայուն էր դարձնում ինքն իսկ տիրանիան, դրա արդյունքն էր հաճախ մի կառավարչի փոխարինումը մյուսով: Քաղաքական հեղաշրջումներն ուղեկցվում էին մահապատիժներով ու քաղաքական հակառակորդների արտաքսումով, գույքի բռնագրավումներով, հողերի վերաբաժանումով. դրանք վերջին հաշվով վատթարացնում էին քաղաքների շարքային քաղաքացիության ծանրը դրությունը:

Երկու սիկիլիական պետությունների ծաղկումը երկարատև չէր: Թերոնի մահից հետո Ակրագասի ու Հիմերի բնակչությունը շուտով ապստամբեց նրա հաջորդի դեմ, արտաքսեց նրան ու վերականգնեց այդ շրջաններում հանրապետական կարգը, թեև ստիպ-

ված էր ճանաչել իր կախումը Սիրակուզայից: Շուտով Սիրակուզայում ևս քաղաքի բնակչությունը, օգտվելով Հիերոնի ժառանգների միջև իշխանության համար ծագած պայքարից, ապստամբեց ու օգնության կանչեց հարևան քաղաքների աշխարհագորհին: Սիրակուզացիները, հաղթանակ տանելով ցամաքում ու ծովում, արտաքսեցին Հիերոնի ժառանգ Քրասիբուլոսին (մ. թ. ա. 466 թ.): Քաղաքի բուն բնակչությունը պայքարի մեջ մտավ վեստերանների՝ տիրանների վարձկանների դեմ ու հաղթելով նրանց, վերջիններիս արտաքսեց Սիրակուզայից ու Կատանեից, ուր վերադարձան ներանց նախկին բնակիչները: Հիերոնի սիրակուզյան պետությունը տրոհվեց, նրա կազմի մեջ մտնող քաղաքները ստացան անկախություն: Բոլոր այդ քաղաքներում վերականգնվեց դեմոկրատիան: Տիրանիան վերահաստատելու նոր փորձերը կանխելու նրպատակով սիրակուզյան դեմոկրատիան ընդունեց կլիսթենեսյան օստրակիսմին համանման մի օրենք, որը այստեղ կոչվում էր պենտալիսմոս, քանի որ քվեարկությունը կատարվում էր ձիթենու տերևների օգնությամբ:

Դեմոկրատական շարժումն ընդգրկեց նաև հարավիտալական քաղաքները: Հոնգիոնում ու Մեսսենեում տապալվեցին տիրանները, և հաստատվեց կառավարման հանրապետական ձև: Քաղաքական հեղաշրջում տեղի ունեցավ նաև Տարասում. միապետական իշխանությունն այստեղ վերացվեց: Իտալիայի հարավի աքայական քաղաքներում, որտեղ իշխանությունը պատկանում էր օլիգարխներին, տեղի ունեցան դրամատիզմով լի անցքեր: Ժողովուրդը սպանեց կամ արտաքսեց ոչ միայն կառավարող օլիգարխներին, այլև պյութագորասականների բոլոր հետևորդներին:

ՅԵՂԱՔԵՆԿ ՅԵՂԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՀՈՒՑՆԵՐԻ ԳԵՄ:  
ԿԱՐՔԱԳԵՆԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ

Քաղաքներում ընթացող սոցիալական պայքարը ակտիվացրեց տեղաբնիկ ցեղերին: Լուկանները Հարավային Իտալիայում հարձակում սկսեցին Տարենտյան ծովախորշի քաղաքների վրա, սամնիտները ներխուժեցին Կամպանիա: Սիկիլիայում սկսվեց հույների կողմից կղզու խորքը մղված սիկուլների շարժումը: Նրանց գլուխ կանգնեց Դուկետիոսը՝ սիկուլական Մեն քաղաքի կառավարիչը: Նա միավորեց իր ցեղակիցների ջլատված ուժերը, գրավեց Մարգանտիա կարևոր ամրոցն ու Կատանեից ոչ հեռու հիմնեց սիկուլների Պալակե քաղաքը՝ այն դարձնելով նոր սիկուլյան պետության մայրաքաղաք: Դուկետիոսը ազատագրական պատերազմ վարեց հունական քաղաքների դեմ: Մի քանի հաջող ճակատամարտն-

րից հետո նա այնուամենայնիվ ջախջախվեց սիրակուզցիների կողմից, ու նրա պետութունը փլուզվեց: Ինքը՝ Դուկեստիոսը աքսորվեց Կորնթոս:

Արևմտյան հելլենականության պատմության մեջ մ. թ. ա. V դ. ամբողջ վերջին քառորդը լի էր առանձին քաղաքների միջև տեղի ունեցած պատերազմներով ու սոցիալական շարժումներով, որոնց գլխավոր պահանջը հողի վերաբաժանումն էր: Այդ ներքին պայքարն էր, որ Աթենքի համար առիթ ստեղծեց Պելլոպոնեսյան պատերազմի տարիներին ռազմական արշավանք ձեռնարկել Սիրակուզայի դեմ: Աթենական ստրկատերերը հույս ունեին իրենց շահի համար օգտագործել այստեղ ստեղծված իրադրությունը: Հաղթանակը աթենացիների նկատմամբ, որի համար Սիրակուզան պարտական էր գլխավորապես իր նավատորմին, ուժեղացրեց դեմոկրատական տարրերի ազդեցությունը քաղաքում: Նրանք պահանջում էին ընդլայնել ժողովրդի քաղաքական իրավունքները: Դեմոկրատիայի գլուխ կանգնեց Դիոկլեսը: Նա անցկացրեց սիրակուզյան սահմանադրության արմատական դեմոկրատական ռեֆորմ, որը շատ տարրերով, ըստ երևույթին, նման էր աթենականին: Մասնավորապես պաշտոնյա անձանց ընտրության համար սահմանվեց վիճակահանություն:

Սիրակուզայի դրությունը, չնայած աթենացիների նկատմամբ նրա հաղթանակին, ծանր էր: Նա հյուծվել էր պաշարման հետևանքով, ստիպված էր շարունակել պայքարը աթենացիների կողմնակիցների դեմ կղզում, իսկ նրա նավատորմիչը Հերմոկրատեսի գլխավորությամբ պատերազմում էր Աթենքի դեմ էգեյան ծովում: Այդ ամենից օգտվեց Կարթագենը: Մ. թ. ա. 408 թ. զարնանը կարթագենյան բանակն ափ իջավ Լիլիբեոնում ու շարժվեց դեպի Սելինունտ: Քաղաքը վերցվեց, նրա բնակիչները համարյա գլխովին սրի բաշվեցին: Ըստ ավանդության, 16 հազար մարդ սպանվեց, ու միայն 5 հազարը գերվեց և վաճառվեց ստրկության: Կարթագենցիները շարժվեցին գեպի Հիմերե: Սիրակուզցիները հետ կանչեցին իրենց նավատորմը արևելյան ջրերից, դաշինք կնքեցին որոշ քաղաքների հետ ու շտապեցին Հիմերե: Սակայն Հիմերեն ընկավ: Կարթագենյան զորավորը զոհաբերեց գերի վերցրած բնակիչներին Համիլկարի ոգուն ու իր բանակով անցավ Աֆրիկա:

Ռազմական անհաջողությունները թուլացրեցին դեմոկրատական կուսակցության ազդեցությունը, առավել ևս, որ նրա առաջնորդ Դիոկլեսն ինքն էր զեկավարում հունական բանակը Հիմերեի մոտ: Հերմոկրատեսը փորձեց զավթել իշխանությունը Սիրակուզայում, բայց անհաջողություն կրեց: Իսկ կարթագենցիները, հա-

վաքելով մեծ զորք, կրկին ափ իջան Սիկիլիայում: Կզզու բոլոր հունական քաղաքները բարձրացան կարթագենցիների դեմ: Հույներին գլխավորում էր Սիրակուզան: Պատերազմը երկարեց, ու հույները սկսեցին պարտություններ կրել: Մ. թ. ա. 406—405 թթ. ձմռանը նրանք որոշեցին թողնել Ակրագասը: Դա առաջացրեց վերդովմունքի փոթորիկ՝ ուղղված դեմոկրատիայի դեմ, աշխուժացան նրա բոլոր հակառակորդները: Դեմոկրատ-ստրատեգոսները պաշտոնազրկվեցին, ու գերագույն հրամանատարությունը հանձնվեց Երիտասարդ, սակայն մարտերում արդեն աչքի ընկած Դիոնիսիոսին:

#### ԴԻՈՆԻՍԻՈՍԻ ՍԻՐԱԿՈՒԶՅԱՆ ՏԵՐՈՒՔՅՈՒՆԸ

Դիոնիսիոսը հավաքեց վարձկանների ջոկատներ ու կազմեց անձնական թիկնապահների զորախումբ 1000 հոգուց, որոնց օգնությամբ, հենվելով ժողովրդական զանգվածների վրա, գրավեց զինանոցն ու զավթեց գերագույն իշխանությունը քաղաքում: Նա ականավոր կազմակերպիչ ու զորավար էր: Ռազմական անհաջողությունների հետևանքով փոքրացավ արմատական դեմոկրատիայի կողմնակիցների թիվը: Այժմ հանձին Դիոնիսիոսի տեսնում էին մի մարդու, որն ընդունակ էր հաղթանակով ավարտել պայքարը քաղաքը պաշարած կարթագենցիների դեմ: Դիոնիսիոսը հասավ նրան, որ ժողովրդական ժողովը մահվան դատապարտեց դեմոկրատիայի առաջնորդներին: Սիրակուզյան օլիգարխների փորձերը՝ տապալել Դիոնիսիոսի բռնատիրությունը, արդյունք չունեցան:

Կարթագենյան զորքերում սկսված ժանտախտը ստիպեց կարթագենցիներին դադարեցնել Սիրակուզայի պաշարումն ու կնքել հաշտություն Դիոնիսիոսի հետ (մ. թ. ա. 405 թ.): Այդ պայմանագրով կարթագենցիների գրաված քաղաքները մնացին նրանց ձեռքում:

Ստրատեգոս-ավտոկրատորի կոչում ստացած Դիոնիսիոսը քառասուն տարի, սկսած մ. թ. ա. 406 թվականից, կանգնած էր Սիրակուզայի գլուխ: Նա էր քանակի ու նավատորմի գերագույն հրամանատարը, նա իրավունք ուներ նշանակել ու հեռացնել պաշտոնյաներին, նշանակել հարկեր, վարել Սիրակուզայի արտաքին քաղաքականությունը: Ժողովրդական ժողովն ու խորհուրդը դեռ գոյություն ունեին ու գումարվում էին, բայց նրանց դերը քաղաքական կյանքում շնչին էր: Բոլոր ընտրովի պաշտոններին նշանակվում էին Դիոնիսիոսի ազգականներն ու դրածոները: Դիոնիսիոսի սոցիալական հենարանը բավական լայն էր: Բացի վարձկան բանակից, նրան պաշտպանում էր նոր, նրա տիրանիայի հետ միա-

սին ծագած ու նրա բարեբարութիւններին օգտվող ստրկատիրական ավագանին, հետո՝ առևտրաարհեստավորական խավերը և վերջապես՝ քաղաքի շքավոր բնակչութեան մի մասը: Իշխանութեան գլուխ անցնելով, Դիոնիսիոսը բռնագրավեց իրեն թշնամի արիստոկրատիայի հողերը, բաժանեց դրանք մասերի ու տվեց իր վարձէաներին, շքավոր քաղաքացիներին ու անգամ որոշ ազատ արձակված ստրուկների, որոնց Դիոնիսիոսը մտցրեց քաղաքացիների կազմի մեջ: Այդ նույն քաղաքականութիւնը Դիոնիսիոսը վարում էր իր նվաճած հունական քաղաքներում:

Դիոնիսիոսը ձգտում էր կենտրոնացնել իշխանութիւնը: Նա ստեղծեց պետական աստիճանավորների ապարատ, այդ շինովնիկները փոխարինեցին հին, ընտրովի մագիստրատուրաներին: Հատուկ ուշադրութիւն հատկացվեց հարկերի հավաքման համակարգին. հարկերը բաղկացած էին ուղղակի տուրքից՝ տասնորդից ու մաքսերից: Դիոնիսիոսը մտցրեց Սիկիլիայում կապալային սիստեմ, որը հետագայում ժառանգեցին հռոմայեցիները: Նրա պետութեան կազմի մեջ մտած հունական քաղաքների իրավունքները խիստ սահմանափակվեցին: Բուն Սիրակուզայի տարածքում Դիոնիսիոսը ստեղծեց հզոր ամրութիւններ, պարսպապատեց Օրտիգիա կղզին, որտեղ կառուցեց զինանոց, զորանոցներ՝ վարձկանների ու տներ՝ իր բարեկամների համար: Կղզին քաղաքի հետ միացնող պարանոցի վրա կառուցվեց ամրոց, որը դարձավ բռնապետի գահանիստը: Շինարարութիւնը, վարձկան բանակի ու մեծ նավատորմի ղեկ վրա կատարվող ծախսերը ծանր բեռ դարձան շարքային բնակչութեան համար: Բայց նա հաշտվում էր Դիոնիսիոսի տիրանիայի հետ հանուն վերջինիս կողմից անցկացվող հաջող արտաքին քաղաքականութեան:

Դիոնիսիոսը վերսկսեց պատերազմը Կարթագենի դեմ: Այդ պատերազմի նախապատրաստութիւններն ընդունեցին վիթխարի չափեր: Սիրակուզան վերածվեց մեծ զինանոցի՝ ամենուրեք փողոցներում, սրահներում, անգամ տաճարներում կոում էին զենք ու կառուցում էին ռազմական մեքենաներ: Նավահանգստում սկըսեցին 200 նոր մարտական նավերի կառուցումը: Սիրակուզայի նոր պաշարումը ցամաքից կանխելու նպատակով, քաղաքի վրա տիրող բարձունքում կառուցվեց ամրութիւն ու այն երկար պարիսպներով միացվեց բուն Սիրակուզայի հետ:

Ռազմական գործողութիւնները սկսվեցին մ. թ. ա. 397 թ. գարնանը: Դրանք ընթանում էին փոփոխական հաջողութեամբ: Դիոնիսիոսը կարողացավ գրավել կարթագենացիների կարեւոր Սոտիս ամրոցը՝ կղզու արեւմուտքում, սակայն հեռու կորցրեց Գելան

ու Կամարանինան, ու շուտով կարթագենցիները պաշարեցին Սիրակուզան: Կարթագենի դեմ մղվող պայքարը թեթևացավ շնորհիվ Լիբլայում մոլեգնող ժանտախտի, ինչպես և այնտեղ բռնկված ապստամբության: Սակայն, մյուս կողմից, այն բարդանում էր հենց իսկ Սիկիլիայի ու Հարավային Իտալիայի հունական քաղաքների՝ Դիոնիսիոսի դեմ ուղղված մշտական ելույթներով: Վերջապես, մ. թ. ա. 392 թ. Դիոնիսիոսը հաշտություն կնքեց Կարթագենի հետ, որի պայմանների համաձայն Կարթագենը պահպանեց իր տիրապետությունը Սիկիլիայի արևմտյան, իսկ Դիոնիսիոսը՝ արևելյան մասի վրա:

Ավարտելով պատերազմը Կարթագենի դեմ, Դիոնիսիոսն անցավ հարավային Իտալիա ու այնտեղ իրեն ենթարկեց Հռեգիոնը, Կրոտոնն ու այլ քաղաքներ: Այդ արշավանքների շնորհիվ Սիրակուզան վերածվեց մեծ ծովային պետության, որի նավատորմիչն իշխում էր Հոնիական ու Ադրիատիկ ծովերում, իսկ Դիոնիսիոսը ձեռք բերեց արևմտյան հելլեններին միավորողի հռչակ: Նա բարեկամական կապեր հաստատեց Սպարտայի հետ ու օգնություն տրամադրեց նրան Բեովտիական միության դեմ մղված պատերազմում: Մ. թ. ա. 368 թ. նրա ու Աթենքի միջև կնքվեց փոխօգնության պաշտոնական պայմանագիր: Աթենական փաստաթղթերում Դիոնիսիոսն արգեն մ. թ. ա. 399 թ. կոչվում էր «Սիկիլիայի արքուն»: Նա պայմանագիր կնքեց էպիրոսում բնակվող մոլոսքների թագավորի ու մի շարք իտալական ցեղերի հետ:

Սիրակուզան Դիոնիսիոսի օրոք դարձավ հունական արևմուտքի գլխավոր քաղաքական ու առևտրական կենտրոնը: Ռազմական ավարի ու նոր ձեռք բերված հողերի շնորհիվ նա ապրեց մեծ տրնտեսական ու մշակութային ծաղկում: Սիրակուզայի արտաքին փառն ուժեղանում էր տիրանի արքունիքի շնորհիվ. այստեղ հավաքվում էին բանաստեղծներ, նկարիչներ, փիլիսոփաներ, գիտնականներ Հունաստանից: Ինքը՝ Դիոնիսիոսը գրում էր ողբերգություններ: Դիոնիսիոսին որպես պետական գործչի իդեալականացնում էր Պլատոնը, թեև Պլատոնի ու Դիոնիսիոսի քաղաքական իդեալները խիստ տարբեր էին:

Դիոնիսիոսի տերությունն ամուր չէր: Սիրակուզայի գերիշխանությունը առաջացնում էր Սիկիլիայի և Իտալիայի հունական քաղաքների դժգոհությունը, իսկ սիրակուզյան հասարակության ներսում՝ հին արիստոկրատիայի, հարկերի և ռազմական տուրքերի ժանքության տակ հեծող շարքային քաղաքացիության շրջանում ուժեղանում էր տիրանի դեմ ուղղված օպոզիցիան: Այդ դժգոհությունը բացահայտորեն արտահայտվեց արդեն Դիոնիսիոսի հա-



ջորդի՝ նրա որդի, ապաշնորհ ու թուլակամ Դիոնիսիոս II-ի օրոք: Վերջինիս իշխանությունը վիճարկեց նրա հորեղբայր Դիոնը, որը հավաքագրելով 3 հազար վարձկաններ, գրավեց Սիրակուզան՝ օգտուելով Դիոնիսիոսի բացակայությունից: Վերջինս գնացել էր արշավանքի Իտալիա: Դիոնը փորձեց հենվել տիրանի դեմ հանդես եկած օպոզիցիոն ուժերի վրա. այս պատճառով նա դիմեց ժողովրդական ժողովին: Ժողովը նշանակեց Դիոնին պետության կառավարող 20 ստրատեգոսներից մեկը: Սակայն երբ Դիոնիսիոսը վերադարձավ, նրա կողմն անցան գյուղացիության շքավոր զանգվածները, նրան հավատարիմ մնացին նաև վարձկան զորքերը: Սկսվեց քաղաքացիական պատերազմ: Օլիգարխիան վերականգնած Դիոնը ստիպված էր պայքարել և՛ Դիոնիսիոսի, և՛ ժողովրդի, իսկ հետո նաև մյուս հավակնորդների դեմ, հավակնորդներ, որոնք ձգտում էին զավթել իշխանությունը պետության մեջ: Ինքը՝ Դիոնը սպանվեց նրա մոտ ուղարկած մարդասպանի ձեռքով (մ. թ. ա. 354 թ.), իսկ քաղաքացիական պատերազմը շարունակվեց: Կարթագենն օգտվեց Սիրակուզայում ստեղծված իրավիճակից ու հարձակվեց հունական քաղաքների վրա:

Մայրահեղության հասցված սիրակուզցիները օգնության խնդրանքով դիմեցին սկզբում Լեոնտինիին, հետո՝ Կորնթոսին: Կորնթոսցիները, վախենալով, որ կարթագենցիները կզավթեն Կորնթոսի համար կարևոր նշանակություն ունեցող արևմտյան շուկաները, Սիրակուզային օգնության ուղարկեցին զինվորական ջոկատ Թիմոլեոնի գլխավորությամբ: Թիմոլեոնը ստիպեց Դիոնիսիոս II-ին հեռանալ Սիրակուզայից, միավորեց հունական քաղաքների ուժերը և հաջողությամբ ետ մղեց կարթագենցիների հարձակումը: Նա վերականգնեց ավերված քաղաքները (Գելան, Ակրագասը), հավաքեց նրանց բնակիչներին ու որոշ ժամանակով վերականգնեց դեմոկրատական կարգերը: Քաղաքները կազմեցին միություն, որը գլխավորեց Սիրակուզան: Բայց այս բոլոր հաջողությունները կարճատև էին: Իր կամքով իշխանությունից հրաժարված Թիմոլեոնի մեկնելուց հետո կրկին ծագեցին երկպառակություններ: Սիրակուզան այլևս դրության տերը չէր: Դառնալով անկախ, որոշ քաղաքներ օգնություն խնդրեցին Կարթագենից: Հետևեց նոր պատերազմը Կարթագենի հետ: Այդ պատերազմը վերջացավ մ. թ. ա. 340 թ. կնքված հաշտությունով, ըստ որի հարավարևմտյան Սիկիլիայում գտնվող Հալիկ գետը երկար ժամանակով սահման դարձավ կարթագենցիների ու հույների միջև Սիկիլիայում:

### Պլուխ 13. ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԵՐՉՍԵՎՇՈՎՅԱՆ ԵՐԿՐԱՄԱՍԸ ԴԱՍԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հյուսիսային մերձսևծովյան երկրամասի ժողովուրդների ու ցեղերի մ. թ. ա. V դ. պատմության համար աղբյուր է հանդիսանում Հերոդոտոսի «Պատմության» շորրորդ գիրքը: «Պատմահայրն» այն մասամբ գրել է դեպի Օլվիա ու նրա շրջակայքը ձեռնարկած ճանապարհորդությունների ժամանակ արած դիտումների հիման վրա: Մի շարք հունական գրողների մոտ կան կցկտուր տեղեկություններ Հյուսիսային մերձսևծովյան շրջանների գաղութացման ու այստեղ ծագած հունական պոլիսների պատմության վերաբերյալ: Բոսպորյան պետության պատմության մասին հետաքրքիր տվյալներ են պահպանվել Դիոդորոսի մոտ: Մ. թ. ա. IV դ. քաղաքական գործիչներ Իսոկրատեսի ու Դեմոսթենեսի ճառերում կան տեղեկություններ հացի՝ Բոսպորոսից Աթենք կատարվող արտահանման վերաբերյալ: Հյուսիսային մերձսևծովյան երկրամասի անտիկ պատմության կարևոր աղբյուրներ են արձանագրությունները, նյութական մշակույթի հուշարձաններն ու հնագիտական պեղումների ընթացքում հայտնաբերված դրամները: Ներկայումս, ինչպես հայտնի է, պեղված են Բոսպորյան պետության կազմի մեջ մտած անտիկ քաղաքների, ինչպես և Օլվիայի, Քերսոնեսոսի զգալի մասերը: Կատարվում են գյուղատեղերի և այլ պեղումներ: Արձանագրությունների, գրական ու հնագիտական հուշարձանների համեմատական ուսումնասիրությունը հնարավոր դարձրեց ընդհանուր գծերով վերականգնել Հյուսիսային մերձսևծովյան շրջանների անտիկ ժամանակների պատմությունը:

#### ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԵՐՉՍԵՎՇՈՎՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՍՎՅՈՒԹՆԵՐԸ

Մ. թ. ա. I հազարամյակում հյուսիսային մերձսևծովյան շրջանի հիմնական բնակչությունը սկյուրներն էին: Սկյուրներ անվանումը հավաքական տերմին է: Սկյուրներ ասելով հույները հասկանում էին մի շարք ցեղեր, որոնք ապրում էին ներքին Իսուրոսից (Դանուբ) մինչև Տանաիսն (Դոն) ընկած հողերում, հնարավոր է, որ սկյուրները որոշ մարզերում շփոթվում էին հնագույն տեղական բնակչության հետ: Անհրաժեշտ է նշել, որ Հերոդոտոսը խիստ տարբերում է ոչ սկյութական ցեղերը բուն սկյութներից:

Տնտեսական ու սոցիալական տեսակետից սկյութական տարբեր ցեղերն ունեին տարբեր զարգացում: Հերոդոտոսը սկյութներին բաժանում է ըստ նրանց տնտեսական կենցաղի չորս խմբի՝ հերկ անող սկյութներ, որոնք բնակվում էին Հիպանիսի (այժմ՝ Բուզ)

ստորին հոսանքում, ցանում էին հացահատիկ ոչ միայն սեփական պետքերի, այլև վաճառելու համար. երկրագործ սկյութներ, որոնց բնակեցման շրջանները գտնվում էին Բորիսթենեսից (այժմ՝ Դնեպըր) արևելք. նրանց հարևաններն էին քոչվոր սկյութները, որոնք ծանոթ չէին հողագործությանը ու հիմնականում զբաղվում էին անասնապահությամբ: Սկյութական բնակչության շորրորդ խումբը Հերոդոտոսի կողմից բնութագրվում է արդեն ոչ թե ըստ տնտեսական գործունեության հատկանիշի, այլ ըստ նրա քաղաքական տիրապետության մյուս բոլոր սկյութների վրա: Հերոդոտոսն այդ խումբն անվանում է «արքայական սկյութներ»: Սկյութների հերոդոտյան այս անվանումները սոսկ ցեղային անվանումներ չեն. դրանք բնութագրում են նախ և առաջ սկյութների տնտեսական կարգերի հիմնական գծերը, այսինքն այն, ինչ Հերոդոտոսի ժամանակ առավել կարող էր հետաքրքրել հույն գաղութաբնակներին, վաճառականներին ու ծովագնացներին: Հերոդոտյան հերկ անող սկյութներ, երկրագործ սկյութներ ու «արքայական սկյութներ» տերմինները մեկնաբանելու կապակցությամբ ստեղծվել է մեծ գրականություն: Հետազոտողների մեծ մասը, վերլուծելով Հերոդոտոսի բնագիրը, հանգում է այն եզրակացության, որ տարբերելով հերկ անող սկյութներին ու երկրագործ սկյութներին, Հերոդոտոսը նախ և առաջ ձգտում է ընդգծել այն, որ գութանային հողագործությունը (հենց իսկ հացագործությունը) Սկյութիայի այդ մասի բնակչության հիմնական զբաղմունքն էր, իսկ երկրագործ սկյութները հողը մշակում էին ոչ միայն հացահատիկ, այլև ուրիշ կուլտուրաներ ցանելու համար: Բացի այդ, Հերոդոտոսը, գործածելով Սկյութիայի այդ մասի բնակչության համար «երկրագործ անվանումը, պարզորեն ցանկանում էր հակադրել նրան քոչվոր սկյութներին, որոնք չէին վարում ու չէին ցանում:

Սկյութներից դեպի արևելք, Մեոտիսի (Ազովի ծով) ափերին ապրում էին բազմաթիվ ցեղեր, որոնց անտիկ հեղինակներն անվանում էին մեոտներ: Մեոտիսից ու Տանաիսից այն կողմ բռնակվում էին սարմատները (կամ սավրոմատները)՝ սկյութներին ազգակից ցեղեր, որոնք խոսում էին, ըստ Հերոդոտոսի վկայության. նաև սկյութերեն, թեև ոչ այնքան մաքուր: Նրանց գլխավոր զբաղմունքը անասնապահությունն էր: Սարմատները՝ հասարակական կարգերում երկար ժամանակ պահպանվում էին մայրիշխանության տարրեր: Դեռևս մ. թ. ա. IV դ. հեղինակները նշում էին, որ սարմատներին կառավարում են կանայք:

Հունական քաղաքների այս բոլոր հարևաններից ավելի արագորեն զարգանում էին սկյութական ցեղերը: Մ. թ. ա. VII դ. սկզբ-

բից Հյուսիսային ու Հյուսիսարևելյան մերձսևծովյան շրջանների զգալի մասում նկատվում էր բավականին կտրուկ թռիչք սկյութների սոցիալ-տնտեսական զարգացման մեջ: Այն նշանավորվում էր լայն չափով քոչվոր անասնապահությանը անցնելով, մետաղների լայն տարածումով, ինչպես այդ մասին վկայում են հնագիտության տվյալները, միջցեղային փոխանակման զարգացումով, վերջապես ցեղային ավագանու առանձնացումով ու նահապետական ստրկության առաջացումով: Այդ ժամանակ ստեղծվում են ցեղային մեծ միություններ, որոնք կոչված էին ձևոնարկելու համատեղ խոշոր ռազմական գործեր: Այսպես, Հերոդոտոսը պատմում է սկյութների՝ Բալկանյան թերակղզի ներխուժման մասին. այստեղ նրանք հասան մինչև թրակիական Քերսոնեսոս, այդ մասին են վրկայում նաև հնագիտական տվյալները: Սկյութները, ինչպես նշվել էր, դեռ դրանից առաջ, նեղելով կիմերներին, ներխուժեցին Փոքր Ասիա, իսկ մ. թ. ա. VI դ. վերջին սկյութական ցեղերի միությունը տափաստանների խորքը մղեց սկյութների դեմ արշաված պարսկական թագավոր Գարեհին ու հետո ստիպեց նրան թողնել Սկյութիայի տարածքը: Պարսիկները ունեցան մեծ կորուստներ:

Սկյութների սոցիալական ու գույքային շերտավորման, ցեղային ավագանու հարստությունների ու քաղաքական ազդեցության աճի պրոցեսը, որը հատկապես բնորոշ էր մ. թ. ա. VI և V դդ., առավել պարզորոշ կարելի է ուսումնասիրել նյութական մշակույթի հուշարձանների միջոցով, հենց իսկ ցեղային առաջնորդների ու ավագանու դամբարանաբլրային թաղումներով: Սկյութական ավագանին հոժարություններ են ցուցաբերում էր առևտրական հարաբերությունների մեջ մերձսևծովյան ափերը ժամանող օտարերկրյա վաճառականների հետ, պահանջ էր ներկայացնում վերջիններիս կողմից բերված ապրանքների նկատմամբ:

#### ՀՈՒՅՆՆԵՐԻ ԿՈՂՄԵՑ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԵՐՁՍԻՎՍՈՎՅԱՆ ԵՐԱՐԱՄԱՍԻ ԳԱՂՈՒՔԱՑՈՒՐԸ

Մ. թ. ա. VII դ. վերջերից սկսած, մերձսևծովյան շրջանները ավելի ու ավելի են վերածվում հունական մետրոպոլիայի համար կարևոր շուկայի:

Հույների՝ մերձսևծովյան շրջանները թափանցելու համար հրակայական նշանակություն ունեցավ նրանց կողմից Միջերկրական ծովից Սև ծովը տանող նեղուցների զավթումն ու այստեղ գաղութների, առաջին հերթին Բյուզանդիոնի, Քաղկեդոնի, ավելի ուշ՝ Թրակիական Քերսոնեսոսի ու, վերջապես, հարավային ծովափում՝ Պոնտական Հերակլեայի հիմնումը. վերջինս շուտով դարձավ ա-

մենախոշոր հունական քաղաքներից մեկը մերձսևծովյան շրջանում: Այնուամենայնիվ հույները դանդաղ էին յուրացնում Սև ծովի ավազանը, հետզհետե ծանոթանալով նրա ափերի մոտ նավագնացության պայմանների ու այստեղ ապրող ժողովուրդների հետ: Սկզբում հույները Սև ծովն անվանում էին «անհյուրընկալ ծով» և միայն ավելի ուշ, շահավետ առևտրի զարգացման ընթացքում նա ստացավ Եվքսինյան, այսինքն «հյուրընկալ» կամ ուղղակի «Պոնտոս» (ծով) անունը:

Հույն վաճառականները Սև ծովում հայտնաբերում էին ափին մոտենալու համար հարմար խորշեր կամ մեծ գետաբերաններ, երբեմն նրանք խարիսխ էին գցում ափից ոչ հեռու գտնվող փոքր կղզիների մոտ: Այստեղ նրանք սկսում էին առևտրական փոխանակում կատարել բնիկների հետ: Հույները բերում էին բրուտագործական առարկաներ, մետաղյա անոթներ, զենք, թանկարժեք գործվածքներ ու զարդարանք, այստեղից արտահանում էին շորացրած ու ապխտած ձուկ, կաշի, բուրդ և վերջապես՝ հաց: Ափին մոտենալու տեղերը հետզհետե դառնում էին մշտական առևտրական կետեր, որտեղ հույները ստեղծում էին պահեստներ, երբեմն՝ ժամանակավոր ձկնորսական կայաններ: Մի շարք դեպքերում նման վայրերում ծագում էին ավաններ, որոնք հույները կոչում էին եմպորիոն: Սակայն այդ բնակավայրերը դեռ քաղաք-պոլիսներ չէին:

Վաճառական-ծովագնացների կողմից նշված ուղիներով շարժվում էին նաև հույն գաղութարնակները: Ինչպես ցույց են տալիս հնագիտական պեղումները, հունական շատ գաղութներ ծագել էին արդեն գոյություն ունեցած բնակավայրերի կամ նախկին եմպորիոնների (դրանք հաճախ համընկնում էին) տեղում: Գաղութ հիմնելու համարյա պարտադիր պայմանն էր տվյալ վայրում հարմար նավահանգստի ու բերրի հողերի առկայությունը:

Հույների բնակեցումը Սև ծովի հյուսիսային ափերին սկսվեց այն բանից հետո, երբ նրանք յուրացրեցին նրա արևմտյան ու հարավային ափերը: Հարավային ափը հույները գաղութացրեցին ավելի վաղ: Ըստ ավանդության, դեռևս մ. թ. ա. 812 թ. հույները հիմնեցին այստեղ իրենց առաջին գաղութը՝ Սինոպեն, որի վրայով Փոքր Ասիայի արևելյան մասից հունական աշխարհ էին արտահանում մետաղներ: Այդ բնակավայրը ոչնչացվեց մ. թ. ա. VII դ. 70-ական թվականներին, կիմերների արշավանքի ժամանակ, բայց մի քանի տասնյակ տարի անց այն կրկին բնակեցվեց Միլետոսից եկած հույներով: Սինոպեից հետո հարավային ափում ծագեցին Տրապեզունտը, Կերասունտը, Ամիսոսն ու այլ քաղաքներ:

Մերձսևծովյան շրջանների գաղութացման գործում գլխավոր

դերը խաղում էին հոնիական քաղաքներն ու առաջին հերթին Միլետոսը՝ մ. թ. ա. VII դարում հունական աշխարհի տնտեսապես ամենազարգացած կենտրոնը։ Հոնիայի բնակչութունը, հավանաբար, պահպանում էր առևտրական կապեր մերձսևծովյան շրջանների հետ դեռևս ուշ հելլադական ժամանակից։ Մ. թ. ա. VII դ. սկսվում է արևմտյան ու հյուսիսային մերձսևծովյան շրջանների գաղութաբնակեցումը։ Նույն միլետացիները եղան Սև ծովի արևմտյան ափում հույների խոշորագույն գաղութներ Դիոսկուրիասի (ժամանակակից Սուխումիից մի փոքր հարավ) ու Փասիսի (Փոթիի շրջան) հիմնողները։ Մ. թ. ա. VII դ. միլետացիք հիմնեցին Սև ծովի արևմտյան ափին նաև Ապոլլոնիան ու Իստրիան։ Վերջինս գտնվում էր ջրաշատ Իստրոս (Դանուբ) գետի դելտայի հարավային մասում։ Այս երկու բնակավայրերն էլ սկզբում առաջացան ափին մոտ գտնվող փոքր կղզիներում՝ իբրև տեղական թրակիական ցեղերի հետ կատարվող փոխանակային առևտրի կետեր ու միայն հետագայում վերածվեցին մեծ առևտրական քաղաքների։ Մ. թ. ա. VI դ. առաջին քառորդին արևմտյան մերձսևծովյան երկրամասում նույնպես Միլետոսից եկած հույների կողմից հիմնվեցին նոր գաղութներ Տիրասը, Օդեսոսը (ժամանակակից Վառնան) և Թոմիսը (ժամանակակից Կոնստանցան)։

Հոնիացիներից հետո արևմտյան մերձսևծովյան շրջանները եկան դորիացիները. հերակլեացիներն այստեղ հիմնեցին Կալլատիան (ժամանակակից Մանգալիան), իսկ մեգարացիները քաղկեդոնացիների հետ միասին՝ Մեսսեմբրիան։ Վերջին երկու քաղաքները ծագեցին մ. թ. ա. VI դ. ամենավերջում։ Բոլոր այդ գաղութները կայաններ էին դեպի Հյուսիսային մերձսևծովյան երկրամասը նավարկող հույների ծովային ճանապարհի վրա։ Հատկապես կարևոր էր Թյուրան. այստեղից հույն ծովագնացներն ուղևորվում էին արևելք՝ դեպի առաջին հյուսիսսևծովյան քաղաք Օլվիան։

Միլետոսի գաղութ Օլվիան առաջացավ մ. թ. ա. VI դ. առաջին կեսին։ Քաղաքը գտնվում էր Հիպանիսի (Բուզ) աջ ափին, այնտեղ, որտեղ Հիպանիսը թափվում էր Բուզ—Դնեպրյան գետախորշը։ Դեռ մ. թ. ա. VII դ. վերջում այդ գետախորշի կղզիներից մեկում (ժամ. Բերեզան կ.) հույները կաղմակերպեցին իրենց եմպոռիոնը։ Շուտով, պարզելով տեղական սկյութական ցեղերի հետ լայն առևտուր վարելու հնարավորությունները, հույներն իրենց բնակավայրը տեղափոխեցին ափ ու հիմնեցին այստեղ քաղաք, որը դարձավ հյուսիսային մերձսևծովյան երկրամասի խոշորագույն քաղաքներից մեկը։ Օլվիայի ամենամոտ հարևանն էր Տավրիկյան Քերսոնեսոսը, որը գտնվում էր ժամանակակից Սևաստո-

պուլի մոտ: Քերտոնեսուր հիմնեցին Պոնտական Հերակլեայից եկածները. այն հիմնվեց Ղրիմի թերակղզում առաջացած այլ հունական քաղաքներից ավելի ուշ՝ միայն մ. թ. ա. V դ., այստեղ երկար ժամանակ գոյութուն ունեցած հոնիական, այն է թեոսպիան էմպորիոնի վայրում:

Հույները հատկապես խիտ բնակեցրին Ղրիմի արևելյան ափն ու արևելքից նեղուցով (Կիմերական Բոսպորոս) նրանից անջատված Թամանյան թերակղզին: Այստեղ գլխավոր դերը գաղութացման մեջ նույնպես պատկանում էր Միլետոսին: Ղրիմի այս մասում խոշորագույն քաղաքներն էին մ. թ. ա. VI դ. հիմնված Թեոդոսիան ու Պանտիկապեոնը (ժամանակակից Կերչը): Պանտիկապեոնի դիմաց, նեղուցի մյուս ափին, Տեոսից եկածները հիմնադրեցին Ֆանագորիան: Բացի այս մեծ քաղաքներից, որոնք իշխում էին Սև ծովն Ազովյանի հետ միացնող նեղուցի վրա, մ. թ. ա. VI դ. Ղրիմի արևելյան ափին ու Թամանյան թերակղզում ծագեցին մի շարք մանր հունական բնակավայրեր: Վերջապես, Տանախս (Դոն) գետի բերանում, ավելի վաղ գոյութուն ունեցած բնակավայրի տեղում, հույները հիմնեցին Տանախս քաղաքը: Դա ամենահեռավոր կետն էր հյուսիս-արևելքում, ուր թափանցեց հունական քաղաքակրթությունը:

#### ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԵՐՁՍԵՎՍՈՎՅԱՆ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՀՈՒՆԱԿԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Մերձսևծովյան հունական քաղաքներն իրենց գոյության առաջին շրջանում իրարից անկախ սովորական ստրկատիրական պուլիսներ էին: Սոցիալ-տնտեսական հարաբերությունները հյուսիսսևծովյան քաղաքներում ու նրանց քաղաքական կառուցվածքը տկզբունքորեն նույնն էին, ինչ և Հունաստանի քաղաքներում: Դրբանցից ոմանք երկար ժամանակ պահպանում էին սերտ հարաբերություններ մետրոպոլիայի հետ: Այդ մասին է վկայում, օրինակ, 1903 թ. հին Միլետոսի պեղումների ժամանակ հայտնաբերված մի ալձանագրություն, որն իրենից ներկայացնում է պայմանագիր Օլիվիայի ու Միլետոսի միջև՝ մետրոպոլիայի ու գաղութի քաղաքացիներին հավասար քաղաքական իրավունքներ (խոսպուլիտեա) շնորհելու մասին: Հյուսիսսևծովյան քաղաքների տնտեսական կյանքում էական դեր էր խաղում հողագործությունը: Հողագործության նշանակությունը հունական քաղաքների տնտեսական կյանքում հաստատվում է աստվածուհի Դեմետրայի պաշտամունքի տարածումով մերձսևծովյան երկրամասում: Սակայն հունական քաղաքներում հողագործության, մասնավորապես հացահատիկի մշակման զարգացման աստիճանը տարբեր էր: Մերձսևծով-

յան քաղաքներում զգալի զարգացում ապրեց նաև այլ գյուղատնտեսական կուլտուրաների մշակումը: Ավելի ուշ, սկսած մ. թ. ա. III դ., Քերսոնեսոսում ու Բոսպորոսում լայնորեն տարածվեց խաղողագործութունը: Տեղական ծագում ունեցող սրահատակ ամփոփաների մասսայական հայտնաբերումները խոսում են սեփական գինեգործության զարգացման մասին: Հյուսիսային մերձսևծովյան երկրամասի բոլոր հունական քաղաքներն արհեստավորական արտադրության ու լայն տարանցիկ առևտրի կենտրոններ էին: Նրանց հատուկ էր ոչ միայն արհեստի տարբեր ճյուղերի՝ խեցեղենի արտադրության, մետաղների, կաշիների մշակման և այլնի զարգացումը (որոնք բնորոշ էին ամեն մի հունական պոլիսի համար), այլև նավաշինության զարգացումը:

Մերձսևծովյան հույները վարում էին գյուղատնտեսական ապրանքների, հատկապես հացի, ինչպես և շորացրած ու ապխտած ձկան լայն առևտուր: Կերչի թերակղզու փոքր քաղաքները դարձան ձուկն աղ դնելու արտադրության կենտրոններ: Մետրոպոլիաներից Կերչի թերակղզու քաղաքների վրայով տափաստան էր ուղղվում շքեղազարդ կավե ամանների, գործվածքների, թանկարժեք գնեքի, պերճանքի առարկաների ու գինիների հոսքը: Պետք է հաշվի առնել, որ հյուսիսսևծովյան քաղաքները իրենք ևս իրենց գոյության առաջին դարերում մետրոպոլիայից արտահանվող մի շարք ապրանքների, օրինակ, կղմիւղրի, ձիթայուղի և այլնի սպառողներ էին:

Իրենց քաղաքական կարգերով Հյուսիսային մերձսևծովյան երկրամասի քաղաքները ստրկատիրական հանրապետություններ էին: Օրվիան ու Քերսոնեսոսը դասական շրջանի համարյա ամբողջ ընթացքում պահպանեցին դեմոկրատական կառուցվածք: Օլվիայում գերագույն մարմինն էր ժողովրդական ժողովը: Նա վճռում էր քաղաքի կյանքի բոլոր կարևոր հարցերն ու ընտրում էր պաշտոնատար անձանց: Օլվիական արձանագրություններից մեզ հայտնի է, որ քաղաքում ընտրվում էին հինգ արքուններ, վեց ստրատեգոսներ և այլն: Քաղաքի ներքին կյանքի ընթացիկ գործերը որոշում էր խորհուրդը, որը, հավանաբար, նախապատրաստում էր նաև ժողովրդական ժողովի քննարկմանը հանձնված բոլոր հարցերը: Օլվիական սահմանադրությունն ուներ որոշ յուրահատկություն՝ այն լրիվ իրավունքներ էր տալիս ոչ միայն բուն Օլվիայի քաղաքացիներին, այլև Միլետոսի՝ Օլվիայի մետրոպոլիայի քաղաքացիներին: Իրենց հերթին օլվիացիները դիտվում էին որպես լիիրավ քաղաքացիներ Միլետոսում: Քաղաքի անիրավահավասար բնակիչների թվում, բացի այն կատեգորիաներից, որոնք բնորոշ էին բոլոր հու-



նական պոլիսներին, աղբյուրները նշում են միկսհելլեններին: Դրանք տեղական բնակչության հետ խառը ամուսնություններից սերված անձիք էին:

Օլվիան մեծ առևտրական քաղաք էր. այն շրջապատված էր հզոր պաշտպանական պարսպով: Քաղաքի շուրջը, Բուզի ու Լիմանի ափերին, հնագետները հայտնաբերել են մի շարք հույն-սկյութական բնակավայրեր: Օլվիան վարում էր լայն առևտուր, վաճառելով ինչպես սեփական արտադրության առարկաներ, այնպես և տարանցիկ ապրանքներ: Փոքր Ասիայի հունական քաղաքներից, էգեյան ծովի կղզիներից, Աթենքից, Կորնթոսից այստեղ բերում էին խեցեղեն, գործվածքներ, պերճանքի առարկաներ ու ձիթայուղ: Այդ ապրանքների մի մասը վերավաճառվում էր տեղական ցեղերին: Այդ մասին են վկայում հույն վարպետների պատրաստած գեղարվեստական իրերը, որոնք գտնվել են սկյութական դամբարանաբլուրներում: Տեղական բնակչությունից Օլվիան ստանում էր հացահատիկ, որը օլվիացիներն արտահանում էին մայրցամաքային Հունաստանի քաղաքները: Հարևան ցեղերի հետ կատարվող փոխանակության լայն զարգացման շնորհիվ Օլվիայում ավելի վաղ, քան մերձսևծովյան երկրամասի հունական այլ քաղաքներում, սկսեցին հատել դրամ, այստեղ մասնավորապես հանդես եկան պղնձից ձուլված, դելֆինաձև յուրահատուկ դրամներ: Օլվիայի քաղաքական պատմությունը դասական ու հելլենիստական ժամանակաշրջաններում մեզ համարյա անհայտ է: Համենայնդեպս, քաղաքն ուներ քաղաքական անկախություն ու մետոյկներին քաղաքացիական իրավունքներ շնորհելու, պարտային պարտավորությունները վերացնելու և բանակի շարքերը մտած ստրուկներին ազատագրելու զնով պահպանում էր իր ազատությունը ընդհուպ մինչև մ. թ. ա. III դ.:

Քերսոնեսոսը, ինչպես և Օլվիան, ստրկատիրական դեմոկրատական հանրապետություն էր, սակայն հիմնված լինելով Պոնտական Հերակլեա դորիական պոլիսի կողմից, ուներ յուրահատուկ պետական կարգեր: Ինչպես և մյուս հունական քաղաքներում, Քերսոնեսոսում գերագույն մարմինն էր լիիրավ քաղաքացիների ժողովրդական ժողովը: Ընթացիկ գործերը վարում էին ամեն տարի փոխվող խորհուրդն ու պաշտոնատար մարդիկ: Դրանց հետ մեկտեղ Քերսոնեսոսում գործում էր բարձրագույն կառավարական վերահսկիչ մարմին՝ նոմոփիլաքսների՝ ռորենքի պահապանների՝ կռելգիան, որն օժտված էր շատ լայն լիազորություններով:

Քերսոնեսոսի բնակչությունը համեմատաբար քիչ էր համարվում տեղական ցեղերի ներկայացուցիչների հաշվին. այս պատ-

Ճառով քաղաքը մյուսների համեմատությամբ ավելի երկար ժամանակ պահպանեց իր հունական դիմագիծն ու դորիական բարբառի մաքրությունը: Դա բացատրվում էր Քերսոնեսոսը շրջապատող բնիկ ցեղերի զարգացման առանձնահատկություններով: Քերսոնեսոսցիների հարավարևելյան հարևաններն էին տավրերը: Հետո դոսոսը նկարագրում է նրանց իբրև բիրտ ու դաժան մի ցեղ, որն ապրում էր ավազակությամբ ու պատերազմով և կատարում էր մարդկային զոհաբերություններ (IV, 103): Հավանաբար, տավրերն ապրում էին տոհմային կարգերով, հողագործությունն ու անասնապահությունը նրանց մոտ քիչ էր զարգացած, գլխավոր զբաղմունքը որսորդությունն ու ձկնորսությունն էր: Նրանք զբաղվում էին նաև ծովահենությամբ: Իրենց տարածքը ընդլայնելու ձգտող քերսոնեսոսցիների հարձակումը տավրերի պապենական հողերի վրա, ինչպես և տավրերի հաճախակի ասպատակումները Քերսոնեսոսի տիրույթների վրա, մշտապես առաջացնում էին թշնամական հարաբերություններ հույների ու տավրերի միջև:

Քերսոնեսոսի մյուս հարևաններն էին Ղրիմի սկյութները, որոնք իրենց զարգացումով առաջ էին անցել բնիկ ցեղերից: Հողագործությունն ու արհեստագործական արտադրությունը Ղրիմի սկյութների մոտ հասավ զարգացման բարձր մակարդակի: Նրանց մոտ երևան եկան խանդակներով ու պարիսպներով ամրացված քաղաքատիպ բնակավայրեր: Քերսոնեսոսի տնտեսական ու մշակութային կապերը սկյութների հետ ամուր չէին ու հաճախ խախտվում էին նրանց միջև ծագած ավերիչ պատերազմների հետևանքով, պատերազմներ, որոնք մղվում էին Ղրիմի թերակղզու հարավարևմտյան մասը տիրելու համար: Տնտեսապես սկյութներն ավելի շատ կապված էին Օլվիայի, քան Քերսոնեսոսի հետ: Քերսոնեսոսցիներն իրենց տիրույթները պաշտպանելու համար կառուցում էին ամրացված բնակավայրեր, որտեղ պահում էին կայազորներ: Հերակլյան թերակղզում կատարված հնագիտական ուսումնասիրությունների շնորհիվ այստեղ հայտնաբերվեցին հարյուրից ավելի դաստակերտներ, որոնք միաժամանակ նաև ամրացված կետեր էին: Ինքը՝ քաղաքը շրջապատված էր զանգվածային պարիսպներով, որոնք ունեին պահակային աշտարակներ:

Քերսոնեսոսցիներն արգավանդ հողերում զարգացնում էին հողագործություն ու այգեգործություն: Այստեղ ավելի վաղ, քան մերձսևծովյան երկրամասի այլ քաղաքներում, ծագեց խաղողագործությունն ու գինեգործությունը: Գինին քերսոնեսոսյան արտահանման գլխավոր առարկաներից մեկն էր: Գինու հետ մեկտեղ Քերսոնեսոսն արտահանում էր նաև հաց, բայց, ըստ երևույթին,

պակաս քանակությամբ, քան Օլվիան ու բոսպորյան քաղաքները: Դա բացատրվում էր նրանով, որ հացը սկյութներից ստացվում էր անկանոն ձևով, անընդհատ ծագող պատերազմները խախտում էին առևտուրը: Իսկ սեփական հացը շատ չէր: Քերսոնեսոսյան քաղաքացիների մեզ հասած երդում-արձանագրությունում ասվում է, որ քաղաքացիներից և ոչ ոք հացը չպետք է վաճառի կամ արտահանի Քերսոնեսոսից բացի որևէ այլ տեղ:

Արհեստավորական արտադրությունը Քերսոնեսոսում հասավ բավականին բարձր զարգացման: Զարգացած էր խեցեղենի արտադրությունը: Քերսոնեսոսյան ամփոքաներ, որոնց մեջ փոխադրում էին գինի, հնագետները գտել են սկյութական բնակավայրերում ու դամբարանաբլուրներում և հյուսիսային մերձսևծովյան երկրամասի շատ քաղաքներում:

Քերսոնեսոսն առևտուր էր վարում հունական աշխարհի շատ կենտրոնների հետ: Ավելի սերտորեն այն կապված էր իր մետրոպոլիսի՝ Պոնտական Հերակլեայի ու Սև ծովի հարավային ափի քաղաքների՝ Սինոպեի, Ամիսոսի հետ: Որոշ գիտնականներ ենթադրում են, որ արդեն մ. թ. ա. IV դ. Քերսոնեսոսից դեպի այդ քաղաքները Սև ծովով գնում էր ուղիղ ծովային ճանապարհ: Հենց այդ տեղում Ղրիմի ծովափն ու ծովի հարավային ափը առավելագույն չափով մոտենում են իրար, և ծովագնացներն օգտվելով ուղենպաստ քամիներից, կարճ ժամկետում հասնում էին այդ ափին: Այդպիսի ուղիղ նավարկության բացումը մ. թ. ա. VI դարում զգալի չափով պայմանավորեց Քերսոնեսոսի ծաղկումը: Հարավային ծովափի քաղաքներից, ինչպես և Փոքր Ասիայից, Հոռոտից, Աթենքից այստեղ էին բերում գործվածքներ, պերճանքի առարկաներ, նախշազարդ սկահակներ ու ձիթայուղ:

Քերսոնեսոսը կապված էր նաև Դելոսի հետ. քերսոնեսոսցիները զոհաբերություններ էին կատարում Ապոլլոնի դելոսյան տաճարում ու Դելոսում էին կատարում նաև իրենց հատուկ տոները՝ քերսոնեսիաները: Քերսոնեսոսի քաղաքական պատմությունը վատ է հայտնի:

#### ԲՈՍՊՈՐՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Մ. թ. ա. V դ. սկզբին Ղրիմի թերակղզու արևելյան մասի մի քանի քաղաքներ միավորվեցին մեկ ընդհանուր պետության մեջ, որը գլխավորեց Պանտիկապոնը: Այդ միավորումը սկիզբ դրեց Հյուսիսային մերձսևծովյան երկրամասում Բոսպորյան պետության գոյությանը:

Պանտիկապոնը զարգանում էր Հյուսիսային մերձսևծովյան

երկրամասի մյուս քաղաքներից ավելի արագ ու մ. թ. ա. VI դ. վերջին գրավեց առաջին տեղը նրանց մեջ: Այն գտնվում էր մի ընդարձակ ծովածոցի ափին, որտեղ կարելի էր տեղավորել բավական խոշոր առևտրական ու ռազմական նավատորմիդ: Քաղաքը շրջապատում էին, հատկապես արևմուտքից, հացաբույսերի, այգեգործության, ինչպես և բանջարանոցային կուլտուրաների մշակման համար պիտանի արգավանդ հողեր: Այստեղ հատվում էին կարևոր առևտրական ուղիները: Հնում Կերչի նեղուցն էր թափվում իր թևերից մեկով Կուբան գետը (հին Հիպանիսը)<sup>13</sup>, ու նեղուցի վրայով բացվում էր ուղիղ ճանապարհ դեպի մերձկուբանյան երկրամասի ու Հյուսիսային Կովկասի լայնատարած տափաստանները: Ինքը նեղուցը տանում էր Ազովի ծով, իսկ վերջինիս վրայով ճանապարհներ էին գնում դեպի Տանաիսի գետաբերանը, մերձդոնյան շրջաններն ու հետո՝ արևելք: Պանտիկապեոնը դարձավ այն գլխավոր տարանցիկ կետը, որի վրայով տափաստան էին ուղարկվում ծովով բերված ապրանքները: Պանտիկապեոնի վաղ տնտեսական ծաղկման ու քաղաքական աճի մասին էր վկայում այստեղ ավելի վաղ, քան Ղրիմի թերակղզու մյուս քաղաքներում հանդես եկած դրամահատումը: Արդեն մ. թ. ա. VI դ. կեսից Պանտիկապեոնը հատում է իր արծաթյա դրամը, որի երևսի կողմում պատկերված էր առյուծի գլուխը:

Պանտիկապեոնի բարձրացմանը նպաստեց այն հանգամանքը, որ նա ավելի զարգացած ու բազմաթիվ ցեղերի՝ արևմուտքում «արքայական սկյութների» ու արևելքում՝ մեոտների հարևանն էր: Հատկապես սերտ էին Պանտիկապեոնի կապերը «արքայական սկյութների» հետ: Ըստ ավանդության, հետագայում քաղաք դարձած բնակավայրի հողամասը հույները ստացան սկյութական թագավորից: Սկյութները Պանտիկապեոնի մշտական դաշնակիցներն էին մ. թ. ա. V—VI դդ. ընթացքում: Պանտիկապեոնի առաջավոր տնտեսական դիրքն ու նրա քաղաքական գերակշռությունը նպաստեցին նրա շուրջը մյուս հունական քաղաքների միավորմանը: Հայտնի չէ, թե ինչպես էր ընթացել այդ միավորման պրոցեսը: Միայն գիտենք Դիոդորոսից, որ մ. թ. ա. մոտ 480 թ. ստեղծվեց նոր պետություն՝ Պանտիկապեոն մայրաքաղաքով:

Մերձսևծովյան երկրամասի հունական քաղաքների միավորումը մի քաղաքական ամբողջության մեջ թելադրվում էր և՛ տրեստեսական, և՛ ռազմաքաղաքական շարժառիթներով: Տնտեսական

<sup>13</sup> Հնում հույները Հիպանիս անունով կոչում էին երկու տարբեր գետեր՝ Բուգն ու Կուբանը:

զարգացման միասնությունը, սերտ տնտեսական կապերը, ընդհանուր տնտեսական շահերը եղան այն տնտեսական պատճառները, որոնք և պայմանավորեցին քաղաքական միասնության ստեղծման հնարավորությունը: Հատուկ նշանակություն ունեցավ վարելահողերի տարածությունների ընդլայնման անհրաժեշտությունը, որը կապված էր հացահատիկի նկատմամբ հենց իրենց՝ քաղաքների պահանջի աճի ու արտաքին շուկաներում դրա պահանջարկի ավելացման հետ: Ինչ վերաբերում է ռազմաստրատեգիական շարժառիթներին, ապա դրանք զգալի չափով կապված էին Պարսկաստանի ազդեցության աճի հետ: Թեև Դարեհի՝ սկյութների դեմ ուղղված արշավանքը չառնչվեց Ղրիմի հունական քաղաքներին, սակայն վերջիններս հասկանում էին, որ իրենց անկախությանը վտանգ է սպառնում Սև ծովի հարավային ափերին ամուր հաստատված պարսկական պետության կողմից: Մ. թ. ա. 494 թ. Միլետոսի՝ Պանտիկապեոնի մետրոպոլիսի ու մի շարք հոնիական քաղաքների ջախջախումը պարսիկների կողմից և նրանց բնակիչներին ստրկության վաճառելն անշուշտ արագացրեցին Ղրիմի քաղաքների քաղաքական միավորման պրոցեսը: Միավորման ոչ պակաս կարևոր պատճառը եղավ քաղաքը շրջապատող տեղական բնակչության, առաջին հերթին «արքայական սկյութների» դեմ համատեղ պաշտպանական ու հարձակողական գործողություններ ձեռնարկելու անհրաժեշտությունը: Ժամանակակից հետազոտողների մեծ մասի կարծիքով «արքայական սկյութների» մոտ դասակարգերի գոյացման պրոցեսը հենց այդ ժամանակ հանգեցրեց վաղ ստրկատիրական պետության առաջացմանը: Այդ կարծիքը բավականաչափ հաստատվում է մերձդնեպրյան շրջաններում սկյութական դամբարանաբլուրների ու բնակավայրերի հնագիտական պեղումներով:

Բոսպորյան թագավորների առաջին դինաստիայի՝ Արքեանակոյանների ներկայացուցիչները, հավանաբար, մեծ դեր խաղացին մեկ միասնական պետության մեջ քաղաքների քաղաքական միավորման գործում: Նրանց մասին եղած մեր տվյալները շատ աղքատիկ են: Դիոդորոս Սիկիլիացին հաղորդում է, որ մ. թ. ա. 438—437 թթ. լրացավ 42 տարի այն պահից, երբ Բոսպորոսում սկսեցին իշխել Արքեանակոյաններ կոչվող կիմերական թագավորները: Արքեանակոյանների ծագման հարցը դեռևս բավարար չափով պարզված չէ: Սակայն մ. թ. ա. VI դ. միլետյան մագիստրատների ցուցակներում հիշատակված է մի քաղաքացի, որի հայրը կրում էր Արքեանակոյան անունը: Հնարավոր է, որ Արքեանակոյան Պանտիկապեոնը հիմնած միլետյան գաղութաբնակների պարա-

զլուխն (օբլիստես) էր, ու նրա տոհմի ներկայացուցիչները առաջատար դեր էին խաղում քաղաքի հետագա քաղաքական կյանքում:

Սկզբում Բոսպորյան պետութունը միավորում էր միայն հույներին: Նրա կազմի մեջ մտան Ֆանագորիան, Հերմոնասան ու Կեպին (Ալգիններ): Հետագայում բոսպորյան կառավարիչների իշխանութունը տարածվեց Բոսպորոսի եվրոպական ու ասիական կողմերում գտնվող փոքր քաղաքների ու շրջապատի բնիկ ցեղերի վրա: Բացի այդ, իրենք՝ բոսպորյան կառավարիչները նոր քաղաքների էին վերածում տեղական բնակավայրերը ու հետզհետե այնտեղ բնակեցնում հույներին:

Բոսպորյան պետության կազմի մեջ ներգրավված քաղաքները պահպանում էին իրենց քաղաքացիական համայնքն ու պոլիսային կառավարումը: Նրանցից յուրաքանչյուրում շարունակում էին գոյություն ունենալ ժողովրդական ժողովը, խորհուրդը (բուլե) և ընտրվող ու ամեն տարի փոփոխվող մագիստրատները, որոնց ձեռքում էր կենտրոնանում գործադիր իշխանութունը: Սակայն պետական իշխանության պոլիսային մարմինների լիազորությունները սահմանափակվում էին ներքին ինքնավարության հարցերով: Քաղաքները զրկված էին ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու իրավունքից: Քաղաքների ռազմական ուժերն այժմ մտան համապետական զորքի կազմի մեջ. այդ զորքը գտնվում էր թագավորի տնօրինության ներքո: Բոսպորյան թագավորության տարածքում, ինչպես և նրա սահմանների վրա գտնվող բոլոր պաշտպանական ամրությունները ենթակա էին թագավորին ու նրա զորապետներին: Քաղաքները պահպանում էին իրենց հողային տիրույթները, որոնք ինչպես հնում, տնօրինում էին ինքնուրույն ձևով, սակայն դա չէր բացառում թագավորների միջամրտությունը: Թագավորները հողեր էին տալիս առանձին քաղաքներին կամ ընդհակառակը՝ դրանք խլում նրանցից:

Քաղաքների վիճակը Բոսպորյան թագավորությունում բնավ միօրինակ չէր: Դրանցից ոմանք օգտվում էին մեծ արտոնություններից: Այսպես, օրինակ, հատուկ էր Ֆանագորիայի վիճակը. այն երկար ժամանակ օգտվում էր սեփական դրամ հատելու իրավունքից, այն դեպքում, երբ մյուս քաղաքները զրկված էին դրանից: Հատուկ էր հենց իսկ Պանտիկապոնոսի դրությունը. այն ուներ ինքնավարության մեծ իրավունքներ, ազատված էր նաև հարկերի ու թագավորական կայազորներ տեղավորելու պարտույթից:

Բոսպորոսի թագավորները կրում էին երկակի տիտղոս՝ կոչվելով ոչ միայն Բոսպորոսի ու Թեոդոսիայի թագավորներ, այլև

արքոնտներ: Այդ երկակիութունը բացատրվում էր նրանով, որ Բոսպորոսում կային և՛ հույներ, և՛ ռաբարբարոսներ»: Արքեանակտյանները, ինչպես արդեն ասվեց, տիրում էին Բոսպորոսում 42 տարի: Ընդունված է այդ կառավարիչների խոշոր գործը համարել առաջին, այսպես կոչված, Տիրիտակյան պաշտպանական պատնեջի ու խանդակի ստեղծումը Կերչի թերակղզում: Պանտիկապեոնից դեպի արևմուտք գտնվող պատնեջն ու խանդակը հատում էին թերակղզին դրա ամբողջ լայնությամբ՝ սկսած Տիրիտակե հին քաղաքից մինչև Ազովի ծովը: Դրանք կոչված էին պաշտպանելու Բոսպորոսի տարածքները քոչվորների հարձակումներից:

Արքեանակտյանների օրոք ընդլայնվում ու ամրապնդվում են Բոսպորյան թագավորության տնտեսական կապերը հունական աշխարհի հետ: Այդ կապերի զարգացումը պայմանավորված էր մի կողմից քաղաքների քաղաքական համախմբումով մեկ միասնական Բոսպորյան թագավորության մեջ, իսկ մյուս կողմից՝ Աթենական ժովային միության կազմակերպումով ու Աթենքի ձեռքը նեղուցների անցումով: Աթենական ապրանքները գերակշռող տեղ գրավեցին Հյուսիսային մերձսևծովյան երկրամասի շուկաներում՝ այստեղից դուրս մղելով անգամ հոնիական ապրանքները: Աթենքը արտահանում էր Բոսպորոսի շրջանը կարմրակար սկահակներ, սևալաք ամանեղեն, ոսկերչական իրեր, բրոնզե առարկաներ, գեներ ու գինի: Օկյութական ցեղային ավագանու հարուստ գերեզմաններում հաճախ հանդիպում են աթենական ծագում ունեցող իրեր: Իսկ Բոսպորոսից Հունաստան էին տանում հացահատիկ, աղը դրած ու ապխտած ձուկ, անասնապահական մթերքներ: Աթենքի տիրապետությունը էգեյան ծովում ու նրա տնտեսական ազդեցությունը Հարավային մերձսևծովյան շրջանի քաղաքների (Սինոպե և Ամիսոս) վրա, որն ուժեղացավ հատկապես Պերիկլեսի արշավանքից հետո, խանգարում էին Բոսպորոսին հաստատելու ինքնուրույն տնտեսական կապեր Արևելյան Միջերկրականի հետ: Իսկ Ղրիմի ծովափում աթենացիները հաստատվեցին Նյումփայնում, որը, հավանաբար, մտավ Աթենական արխեի կազմի մեջ:

ՐՈՍՊՈՐՏԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՊԱՐՏՈՎԱՆԱՆՆԵՐԻ ՕՐՈՔ.

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Մ. թ. ա. 438—437 թթ. Բոսպորոսում տեղի ունեցավ կառավարող հարստության փոփոխում՝ իշխանության գլուխ անցած Սպարտոկը հիմնեց Սպարտոկյանների նոր հարստություն (Դիոդորոս, XII, 31): Մեզ հայտնի չեն այդ փոփոխության հանգամանքները: Անհնարին է պարզել, թե հասարակական ո՞ր խավին

էր պատկանում նոր հարստութեան հիմնադիրը: Հենց իսկ Սպարտոկ անունը, ինչպես և նրա ժառանգորդների անունները հունական շեն, այլ թրակիական:

Սպարտոկյանների իշխանութեան գլուխ անցնելով ուժեղացավ Բոսպորյան թագավորութեան արտաքին քաղաքական ակտիվութունը: Մի կողմից, բոսպորյան թագավորները ձգտում էին իրենց ենթարկել ծովափի՝ դեռևս անկախութունը պահպանած հունական քաղաքները, որոնք իրենց մրցակիցներն էին ինչպես հունական աշխարհի, այնպես և հարևան ցեղերի հետ կատարվող առևտրում: Մյուս կողմից, հացի նկատմամբ եղած պահանջարկի աճը դրդում էր թագավորներին զավթելու հարևան ցեղերի բերրի հողերը: Ստրկատիրական հարաբերութունների զարգացումը Բոսպորյան թագավորութեան քաղաքներում պահանջում էր ստրուկների շուկայի համալրում, իսկ արհեստի բնագավառում ապրանքային արտադրութեան ընդարձակումը պահանջում էր զավթել նաև Բոսպորյան թագավորութեան սահմաններից դուրս՝ դեպի ավելի հեռավոր մարզերը տանող առևտրական ճանապարհները: Սպարտոկյանները փորձում էին հաղթահարել աթենական ազդեցութունը Սև ծովում, ու նրանց ամբողջ արտաքին քաղաքականութունը մ. թ. ա. V դ. կրում էր հակաաթենական բնույթ: Աթենքի ու Բոսպորոսի քաղաքական մերձեցումը տեղի է ունենում Աթենական արխեի անկումից հետո:

Բոսպորոսի էքսպանսիան առաջին հերթին ուղղված էր նրա լուրջ առևտրական մրցակից Թեոդոսիայի դեմ, որը ուներ հողային մեծ տարածք ու հարմար ծովախորշ: Թեոդոսիան համառորեն դիմադրում էր՝ հենվելով Պոնտական Հերակլեայի հետ ունեցած իր ռազմական դաշինքի վրա: Հերակլեան, որի հետ Թեոդոսիան պահպանում էր սերտ տնտեսական կապեր, օգնեց նրան իր նավատորմիղով: Բոսպորոսի թագավոր, Սպարտոկի որդի Սատի:ոսը (մ. թ. ա. 407—388 թթ.) սկսեց Թեոդոսիայի պաշարումը, բայց մահացավ, չհասնելով հաջողութեան: Թեոդոսիան ընկավ միայնակն 1-ի (մ. թ. ա. 388—348 թթ.) ժամանակ: Հենց իսկ այդ ժամանակաշրջանից բոսպորյան թագավորները սկսեցին կոչվել «Բոսպորոսի ու Թեոդոսիայի արքունիներ»: Այդ տիտղոսի ընդունումը ցույց է տալիս, թե որքան մեծ էր Թեոդոսիայի նշանակութունը: Թեոդոսիայի միացման հետևանքով Ղրիմի տարածքի զգալի մասը, որն ընկած էր Թեոդոսիայից դեպի արևելք, մտավ Բոսպորյան թագավորութեան կազմի մեջ: Թեոդոսիայի դեմ վարած երկարաթև ու ծանր պայքարը ստիպեց բոսպորյան թագավորներին միառժամանակ հրաժարվել Բոսպորոսի ասիական ափում իրենց



տիրույթներն ընդլայնելու փորձերից: Ավելին, բոսպորյան թագավորները ձգտելով ապահովել իրենց թիկունքը արևելքից, դաշինք կնքեցին տեղական ցեղերի կառավարիչների հետ: Որոշ դեպքերում այդ դաշինքները բնիկ ցեղերին կախման մեջ դրեցին Բոսպորյան թագավորությունից: Նման դաշինքների, դինաստիական ամուսնությունների շնորհիվ, այս կամ այն կառավարիչներին՝ ընդդեմ մյուսների օգնություն ցույց տալու միջոցով, Բոսպորոսի թագավորներն իրենց պետությանը միացրեցին Հյուսիսկովկասյան ծովափում գտնվող Սինդիկեն: Միացմանը նախորդեց Սինդիկեի հետ սերտ առևտրական կապերի հաստատումը: Դրանում հատկապես շահագրգռված էր առևտրի միջոցով հարստացող ու զգալի շահով հելլենականացված սինդական արիստոկրատիան:

Բոսպորոսի թագավորները ձգտում էին թափանցել նաև մերձագոլյան շրջան: Ազովի ծովի երկայնությամբ ապրում էին հողագործությամբ ու ձկնորսական արհեստներով զբաղվող բազմաթիվ մեծտական ցեղեր: Նրանք քոչվոր-սարմատների հարևաններն էին: Մեծտները հենվելով այդ քոչվորների օգնության վրա, համառորեն դիմադրում էին բոսպորյան թագավորներին, հաճախ պաշտպանությունից անցնում էին հարձակման, ներխուժում ու ավերում էին Սինդիկեն ու բոսպորյան քաղաքների տարածքները: Քանի դեռ Բոսպորոսը զբաղված էր Թեոդոսիայի պաշարումով, նրա թագավորներն ստիպված էին փրկագնվել մեծտներից հարուստ նվերներով: Միացնելով Թեոդոսիան, բոսպորյան թագավորները ակտիվ հարձակումներ սկսեցին մեծտների դեմ: Հետզհետե Բոսպորոսին հաջողվեց իրեն ենթարկել բոլոր մեծտական ցեղերին ու իր կազմի մեջ առնել Մերձագոլյան շրջանը: Բոսպորյան թագավորությունը Պերիսադես 1-ին թագավորի օրոք (մ. թ. ա. 343—310 թթ.) տարածվում էր տավրերի մարզից՝ Ղրիմում մինչև Տանաիսի (Դոն) գետաբերանը:

Բոսպորյան թագավորները ռազմագիտական ու տնտեսական տեսակետից առավել կարևոր մի շարք մարզերում նշանակում էին իրենց կուսակալներին: Առաջին հերթին դա վերաբերում էր Սինդիկեին: Այստեղի կուսակալներն էին թագավորական ընտանիքի անդամները, այդ ընտանիքի մեջ այժմ մտան տեղական սինդական հարստության ներկայացուցիչները: Բոսպորոսի կազմի մեջ մտած որոշ ցեղային միավորումներում մնացին տեղական կառավարիչներ: Այսպես, օրինակ, փատեյներին շարունակում էին գրլխավորել նրանց սեփական ցեղային առաջնորդները: Տեղական կառավարիչները իրենց ցեղի շրջանակներում ունեին ներքին կառավարման իրավունքներ, անգամ սեփական զինված ուժեր, բայց

բոսպորյան թագավորների պահանջով նրանք պարտավոր էին տրամադրել այդ զորքերը Բոսպորոսի ընդհանուր ռազմական ձեռնարկումներին մասնակցելու համար: Նրանք ճանաչում էին իրենց կախումը բոսպորյան թագավորներից, վճարում էին վերջիններիս բնատուրք ու բոսպորյան վաճառականներին և ձեռնարկատերերին տրամադրում էին ազատ գործելու իրավունք իրենց ցեղերի տա-րածքում:

### ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Բոսպորյան թագավորության սոցիալական կառուցվածքն ու-ներ բավականին բարդ պատկեր: Նրա բնակչությունը բաղկացած էր տեղական ցեղերից ու եկվոր հույներից, ընդ որում բնիկները քանակական տեսակետից մեծապես գերազանցում էին հույներին: Այդ երկու խմբերի երկարամյա տնտեսական ու մշակութային փոխ-ազդեցության ընթացքում կազմավորվեցին բոսպորյան հասարակության որոշակի խավերը: Բոսպորյան թագավորությունում տիրող դասակարգը ու Սպարտոկյանների սոցիալական հենարանը հունական քաղաքների հարուստ հողատերեր-ստրկատերերն էին: Այդ խավի քաղաքական ազդեցության հիմքն էին կազմում նրա սեփականությունը հանդիսացող մեծ հողաբաժինները, որոնք մը-շակվում էին ստրկատիրական տնտեսության բոլոր կանոնների համապատասխան: Այդպիսի տնտեսություններ կային ոչ միայն Բոսպորյան թագավորությունում, այլև Հյուսիսային մերձսևծովյան երկրամասի մի շարք մեծ քաղաք-պետություններում, որոնք չէին մտել թագավորության կազմի մեջ: Հերակլյան թերակղզում, Քեր-սոնեսոսի մոտ կատարված հնագիտական հայտնագործումները մեզ պատկերացում են տալիս այդ տիպի տնտեսության բնույթի մասին, տնտեսություն, որտեղ կիրառվում էր բերովի ստրուկների աշխատանքը: Բոսպորոսի տիրող դասակարգին էին պատկանում նաև վաճառականները, նավատերերը, արհեստանոց-երգաստե-րիոնների տերերը: Բոսպորյան առևտրականների, որպես քաղա-քական ուժի դերը պարզ երևում է Պոլիենոսի պատմածից, որտեղ իրոպում է թագավոր Լեկոնի դեմ ուղղված դավադրության վերաց-ման մասին: Իմանալով դավադրության մասին, Լեկոնը հավաքեց վաճառականներին, որոնք նրան տվեցին դրամ և բացի այդ, զին-վելով, օգնեցին ոչնչացնել դավադիրներին:

Բոսպորյան թագավորությունում իշխող դասակարգը մշտա-պես համալրվում էր տեղական ավագանու ներկայացուցիչներով: Հունական քաղաքների տիրող խավի հետ մերձենալու հետևանքով տեղի էր ունենում այդ ավագանու արագ հելլենականացումը: Տե-

ղական, հատկապես սինդական, ավագանու միջավայրում տարածված էին հունական անունները, ինչպես և խառը ամուսնությունները: Այսպես, Բոսպորյան թագավոր Սատիրոսն իր աղջկան կնության տվեց սինդական կառավարիչ Հեկատեոսին: Աթենական հեռուոր Դեմոսթենեսի պապը, որը տեղափոխվել էր Բոսպորոս, ամուսնացավ սկյութուհու հետ: Բերված օրինակները խոսում են հունական ու տեղական բնակչության վերնախավի ձուլման սկսված պրոցեսի մասին: Եթե ընդունելի է, որ հունական ավագանու խոշոր հողային տիրույթների որոշ մասը գտնվում էր ծովափնյա շրջաններում, քաղաքներին պատկանող տարածքում, ապա տեղական ավագանու ու Բոսպորոսում կառավարող արքայատոհմի տիրույթները գտնվում էին առափնյա գծից այն կողմ, տեղական բնակչության հողերում: Այդ հողատիրության բնույթի մասին մեզ քիչ քան է հայտնի, բայց նրա գոյությունը կասկածից վեր է:

Խոշոր հողատիրության հետ մեկտեղ Բոսպորյան թագավորությունում պահպանվում էր միջին ու մանր հողային սեփականությունը: Հողակտորների տերերը՝ հունական բնակավայրերի քաղաքացիները, հողը մշակում էին սեփական աշխատանքի միջոցով: Ինչպես և մետրոպոլիայի քաղաքներում, այդ ազատ մարդկանց տնտեսություններում հաճախ օգտագործվում էր ստրուկների աշխատանքը: Բոսպորյան թագավորությունում գերակշռում էր տեղական հողատեր բնակչությունը, որն ապրում էր գյուղական ավաններում, պահպանում էր ցեղային տարբերություններն ու հավանաբար՝ համայնքը: Այդ բնակչությունը կախման մեջ էր գտնվում սեփական ցեղային ավագանուց ու բացի այդ պարտավոր էր հարկեր վճարել բոսպորյան թագավորներին: Կախյալ գյուղական բնակչության վիճակը տարբերվում էր ստրուկների դրությունից, որոնց թիվն ու աշխատանքի կիրառման չափերը Բոսպորյան թագավորությունում անընդհատ աճում էին: Շատ հավանական է, որ տեղական ցեղերի հողերի մի մասը այդ ցեղերի տարածքի նվաճումից հետո դարձավ բոսպորյան թագավորների սեփականություն: Այդ հողերի վրա նստած տեղական հողատերերը մտան կախյալ բնակչության կազմի մեջ: Այդպիսի հողային տիրույթների առկայությունը բոսպորյան թագավորների մոտ նրանց ու թագավորական ընտանիքի անդամներին հացի խոշորագույն վաճառողներ դարձրեց Բոսպորոսում:

#### ԱՌԵՎՏՈՒՐՆ ՈՒ ԱՐԷՅՍԸ

Բոսպորոսի թագավորությանը մերձկուրանյան երկրամասը ու Արևելյան Ղրիմի արգավանդ հովիտները միացնելու շնորհիվ զգա-

լիորեն ընդլայնվեց նրա հացի առևտուրը: Դրան նպաստեց նաև մ. թ. ա. IV դ. սկզբին Միջերկրականում գոյացած իրավիճակը: Աթենքի անհաջող փորձը՝ զավթելու արևմուտքի հացի շուկաները, Պելոպոնեսյան պատերազմի ժամանակաշրջանից գյուղացիության սկսված զանգվածային սնանկացումը, Հունաստանում հացագործության դուրս մղումը ավելի ինտենսիվ կուլտուրաներով՝ այդ ամենը ստեղծում էր հացի մեծ պահանջարկ ու առաջին պլանի վրա էր դնում հյուսիսսևծովյան շուկան: Հատկապես աճեց բոսպորյան հացի ներմուծումը Աթենք: Բոսպորոսից հաց արտահանող աթենական վաճառականները թագավորներից ստանում էին զանազան արտոնություններ: Դեմոսթենեսի ճառերից մեկում (XX, 3), որը նա արտասանել է մ. թ. ա. 355—354 թթ., նշվում է, որ ամեն տարի Բոսպորոսից Աթենք էր ներմուծվում 400 հազար մեդիմնոս (մոտ 1 մլն փուֆ) հաց:

Վերջապես, աթենացիներն ունեին հացը Բոսպորոսից առանց մաքսերի արտահանելու իրավունք: Բոսպորոսի ու Աթենքի միջև կնքված առևտրական պայմանագրի հիման վրա բոսպորյան թագավորներն Աթենքի հետ հացի առևտրի բնագավառում ստացան այն նույն արտոնությունները, ինչպիսիք աթենացիներն ունեին Բոսպորոսում: Այդ պայմանագրի բնագիրը ցուցադրված էր Պիրեևսում, Պանտիկապեոնում, Թրակիական Բոսպորոսի մուտքի մոտ գտնվող սրբարանում: Աթենքը հացով մատակարարելու գործում Բոսպորոսի ունեցած նշանակության մասին կարելի է դատել մեզ հասած աթենական մի դեկրետից, որը հրատարակվել էր մ. թ. ա. 347—346 թթ. ի պատիվ Լեկոն I-ի որդիներ Սպարտոկ II-ի, Պերիսադեսի ու Ապոլլոնիոսի: Այդ դեկրետում խոսվում է այն մասին, որ բոսպորյան նոր թագավորները պատրաստ են հոգ տանել Աթենք հաց ուղարկելու մասին ճիշտ այնպես, ինչպես այդ անում էր նրանց հայրը: Երաշխավորվեցին աթենացիների նախկին արտոնությունները, իսկ վերջիններն իրենց հերթին օգնություն ցույց տվեցին բոսպորյան թագավորներին, թույլատրելով նրանց Աթենքում հավաքագրել նավաստիներ բոսպորյան նավատորմիղի համար:

Մ. թ. ա. IV դ. Բոսպորոսի հետ Աթենքի առևտրի ամենաբարձր զարգացման շրջանն էր: Միևնույն ժամանակ այն Բոսպորոսի տնտեսական ու մշակութային վերելքի բարձրագույն շրջանն էր, հատկապես Լեկոն I-ի ու Պերիսադես I-ի (մ. թ. ա. 344—343 և 310—309 թթ.) կառավարման օրոք: Այդ շրջանը նշանավորվեց ստրուկների աշխատանքի օգտագործման աճով բոսպորյան թագավորության մեջ մտնող հունական քաղաքներում ու ստրուկության

զարգացումով սինդական, մետաղական և սկյութական ցեղերի մոտ: Ստրուկների աշխատանքը հատկապես լայն տարածում ունեցավ արհեստի ասպարեզում. դա կապված էր արհեստագործական արտադրության ընդհանուր վերելքի ու բոսպորյան թագավորության քաղաքների աճի հետ: Քաղաքներում կարևոր տեղ է գրավում մետաղների մշակումը: Այստեղ պատրաստվում էին մեծ թվով աշխատանքի գործիքներ, հատկապես՝ գյուղատնտեսական, զենք, նավաշինարանների համար պիտանի մետաղյա իրեր, ինչպես և ռազմական մեքենաներ:

Հնագիտական հայտնագործումները համոզում են հետազոտողներին այն բանում, որ Բոսպորոսի մետաղամշակման արհեստում օգտագործվում էր Կրիվոյ Ռոզի հանքանյութը, որը կամ մետաղի, կամ հանքաքարի ձևով ներմուծվում էր Սկյութիայի մերձդնեպրյան մարզերից: Դա թույլ է տալիս խոսելու մերձդնեպրյան սկյութների հետ՝ աշխույժ ու Բոսպորոսի համար խիստ կարևոր առևտրական կապերի մասին: Մյուս կողմից բոսպորյան քաղաքներն ստանում էին մետաղ՝ պղինձ, արծաթ ու երկաթ Փոքր Ասիայից, խալուբներից՝ հարավպոնտական քաղաքներ Սինոպեի ու Ամիսոսի միջոցով:

Բոսպորյան քաղաքներում զարգանում էր նաև թանկարժեք մետաղների՝ ոսկու ու արծաթի մշակումը: Այդ մասին են վկայում թաղումներում ու հենց իսկ քաղաքներում կատարված հայտնագործումները: Ոսկին Բոսպորոս էր բերվում Ալթայից, Ուրալից, Կոզքիսից, ինչպես և Թրակիայից, որը տալիս էր նաև արծաթ: Մերձսևծովյան քաղաքները Աթենքի հետ ունեցած իրենց առևտրական կապերի ամենաբարձր զարգացման շրջանում ստանում էին նաև լավրիոնյան արծաթը: Մ. թ. ա. 370 թ. Բոսպորոսը սկսեց հատել սեփական ոսկյա դրամ: Ըստ երևույթին, Բոսպորոսի հունական ոսկերիչները պատրաստում էին իրեր հատուկ սկյութական ավագանու համար և զարդարում էին դրանք նախշերով՝ սկյութների շաշակի համապատասխան: Բոսպորյան վարպետների արտադրանքի աչքի ընկնող նմուշներ են հռչակավոր անոթը Կուլ-Օբա դամբարանաբլրից, շերտովիկյան արծաթյա ամփորան, ոսկյա սանրն ու գորիտը Սոլոխա դամբարանաբլրից:

Լայն զարգացման հասավ նաև խեցեղենի արտադրությունը: Բոսպորյան քաղաքների արհեստավորները սկսած մ. թ. ա. IV դարից արտադրում էին նրբորեն նկարազարդած, այդ թվում բազմաներկ սկահակներ: Տեղական սկյութա-սարմատական ցեղերի ազդեցությունը նկատվում է ինչպես անոթների ձևի, այնպես և նրանց զարդարանքի մեջ: Բոսպորոսում այդ ժամանակ մեծ շա-

փերի է հասնում կղմինդրի արտադրութիւնը: Խեցեղենի արտադրութիւնի զարգացման մասին բոսպորյան քաղաքներում վկայում են հնագետների կողմից հայտնաբերված բազմաթիվ բրոնզադրածական արհեստանոցներն ու թրծման վառարանները, որոնք սովորաբար կառուցվում էին քաղաքների ծայրամասերում: Մերձսևծովյան քաղաքների արհեստավորների պատրաստած խեցեղենի առարկաները հետզհետե դուրս էին մղում մետրոպոլիսայից ներմուծված ապրանքները և ոչ միայն ներքին, այլև արտաքին շուկաներից:

Աճում ու զարգանում էին նաև արհեստի մյուս ճյուղերը՝ քարի մշակումը, մանածագործութիւնը և այլն: Ընդ որում, գործվածքները ներկում կամ ասեղնագործում էին, հանդես է գալիս հումքի նոր տեսակ՝ վուշը, որը Բոսպորոս ներմուծվում էր Կողքիսից: Բոսպորյան արհեստավորները սովորեցին արտադրել հյուսված նախշերով գործվածքներ:

Բոսպորոսի քաղաքների տնտեսական վերելքն արտահայտվեց նավաշինութիւնի ու քաղաքաշինութիւնի զարգացման մեջ: Մերձսևծովյան քաղաքներն այդ ժամանակ զարդարվում են շքեղ հասարակական շէնքերով, տաճարներով, անվանի մարդկանց ու հարուստ քաղաքացիների տներով: Քաղաքները մասնակիորեն վերահատակագծվում են, դրանց շուրջը բարձրանում են պաշտպանական կառույցներ: Հատկապես ուշագրավ էր նավահանգիստների վերակառուցումը, դրանք ի վիճակի էին ընդունել մեծ առևտրական ու ռազմական նավատորմի: Բոսպորյան մի շարք քաղաքների ծաղկումը կապված էր ձուկը աղը դնելու գործի ու աղը դրած ու ապխտած ձկնեղենի արտահանման զարգացման հետ, իսկ որոշ ժամանակ անց (մ. թ. ա. III դարից)՝ նաև սեփական գինեգործութիւնի զարգացման հետ: Տիրիտակեի, Միրմեկիոնի պես քաղաքների պեղումների ժամանակ հայտնաբերվել են գինու պատրաստման ձեռնարկութիւնների ավերակներ: Որքան կարելի է դատել այդ ձեռնարկութիւնների չափերից, դրանց արտադրանքը նախատեսվում էր արտահանելու համար: Հնագետները գտել են նաև ձուկը աղ դնելու համար կառույցներ: Այդ հանգամանքը՝ հին հեղինակների գրական վկայութիւնների հետ միասին խոսում է Ազովի ծովում մեծ չափերով կատարվող ձկան որսի ու ձկնեղենն աղ դնելու մասին:

Արհեստավորական արտադրութիւնի ծաղկումը բոսպորյան քաղաքներում ընդարձակեց առևտուրը: Բոսպորոսն ուներ առևտրական կապեր Արևմտյան, Արևելյան ու Հարավային մերձսևծովյան Երկրամասերի, բալկանյան կղզային ու փոքրասիական հունական

քաղաքների և պետությունների հետ: Հյուսիսում Բոսպորոսը տընտեսապես սերտորեն կապված էր տեղական ցեղերի հետ, և այստեղ նրա առևտրական շահերը տարածվում էին վիթխարի տարածքների վրա, հնարավոր է, ընդգրկելով անգամ Ուրալը:

Բոսպորոսն այդ ժամանակ, հավանաբար, զբաղվում էր նաև ստրկավաճառությամբ: Բոսպորոսից Հունաստան արտահանվող ստրուկների քանակի հարցը դեռևս վիճելի է, սակայն գիտնականների մեծ մասը գտնում է, որ այն աննշան էր:

#### Գլուխ 14. ՀՈՒՆԱՍՏԱՆԸ Մ. Ք. Ա. IV Դ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Մ. թ. ա. IV դ. առաջին կեսի Հունաստանի պատմության վերաբերյալ մենք ունենք զգալի թվով աղբյուրներ: Անգամ գոյություն ունի «Հունաստանի պատմություն» ընդհանուր աշխատությունը, որը գրել է անցքերի ժամանակակից Քսենոֆոնը: Այն ավարտվում է մ. թ. ա. 362 թ.: Ճիշտ է, Քսենոֆոնն ուներ սպարտական կողմնորոշում, և դա արտահայտվել է նրա երկում: Քսենոֆոնի փիլիսոփայական, տնտեսական ու քաղաքական աշխատությունները ևս պարունակում են այն ժամանակվա Հունաստանի կյանքի տարբեր կողմերը լուսաբանող հարուստ նյութեր: Վերջապես Քսենոֆոնը հուշագրերի ձևով մանրամասնորեն նկարագրել է հույն վարձկանների միջամտությունը Պարսկաստանում մ. թ. ա. V—IV դարերի սահմանագծին տեղի ունեցած դինաստիական պայքարին: Այդ միջամտությունը հետագայում մեծ դեր խաղաց Պարսկաստանի դեմ ուղղված հունական ագրեսիայի գաղափարական նախապատրաստման գործում, ագրեսիա, որը, ճիշտ է, իրագործվեց Մակեդոնիայի գերիշխանության ներքո: Կարևոր տեղեկություններ, հատկապես Բեովտիայի պատմության վերաբերյալ, պարունակվում են մեզ անհայտ պատմիչի աշխատության հատվածում, որը հայտնաբերվել է Եգիպտոսում, Օքսիրիինքոս քաղաքի ավերակներում: Խոշորագույն փիլիսոփա Արիստոտելը, որն զբաղվում էր նաև պատմությամբ, փիլիսոփա Պլատոնը, հրապարակախոս ու ճարտասանության ուսուցիչ Իսկրատեսը, քաղաքական ու դատական հոետորներ Լիսիասը, մասամբ և Դեմոսթենեսը հաղորդում են կարևոր տեղեկություններ այդ շրջանի մասին: Արժեքավոր նյութեր են ընձեռում Արիստոփանեսի կատակերգություններն ու գեղարվեստական գրականության այլ գործեր, որոնք հնարավորություն են տալիս ավելի խորը թափանցել ոստամնասիրվող ժամանակաշրջանի հարաբերությունների մեջ:

Ավելի ուշ ժամանակի հեղինակներից պետք է հիշատակել Դիոդորոսին ու Պլուտարքոսին: Այժմ բավականին մեծ թիվ կազ-

մող արձանագրութիւնները, որոնցից կարելի է նշել Աթենական Երկրորդ ծովային միութեան կազմակերպման ու կառուցվածքի վերաբերյալ պայմանագիրը, օգնում են մեզ ճշտելու, ստուգելու ու լրացնելու մեր տեղեկութիւններն այդ շրջանի մասին: Վերջապես այդ ժամանակ հատված դրամները, որոնք հայտնաբերվել են Արեւելեյան Միջերկրականի տարբեր տեղերում, խեցեղենն ու հին հունական արհեստի այլ կերտվածքները և հնագիտական ուրիշ հուշարձանները լրացնում են հին հույների կյանքի ու գործունեության պատկերը մ. թ. ա. IV դ. առաջին կեսին:

ՀԻՆ ՀՈՒՆԱԿԱՆ ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԻ ՍՈՅԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ: ՍՈՅԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ  
ԸՆԳՉԱՆՈՒՐ ԳԾԵՐԸ

Պելոպոնեսյան պատերազմն արագացրեց դեռևս մ. թ. ա. V դ. նկատելի դարձած պրոցեսները, այն է՝ ավելացավ արհեստագործական արտադրութեան, առևտրի ու ծովագնացութեան մեջ շահագործվող ստրուկների թիվը, ավելի լայնորեն սկսեց կիրառվել ստրուկների աշխատանքը գյուղատնտեսութեան մեջ: Այդ պրոցեսներն ամենավատթարագույն ազդեցութիւնն էին գործում ազատ բնակչութեանը պատկանող գյուղացիների, արհեստավորների, մանր առևտրականների, բռնակիրների, բատրակների և մյուսների դրութեան վրա: Նրանց համար ավելի ու ավելի դժվար էր մրցել էժան ստրկական աշխատանքի հետ: Նրանք աղքատանում էին, մանր ստրկատերերից կամ անմիջական արտադրողներից վեր էին ածվում լյումպենպրուլետարների, որոնք ապրում էին պատահական վաստակով կամ ստրկատիրական պետութեան կողմից տրվող աննշան ողորմութիւնով. այն տրամադրվում էր առաջին հերթին ստրուկների շահագործումից ստացվող միջոցներից: Լյումպենպրուլետարներից ոմանք դառնում էին մուրացկաններ: Աղքատացման հողի վրա շատացան գողութեան ու կողոպուտի դեպքերը: Արտադրողական աշխատանքի՝ իբրև ստրկական զբաղմունքի հանդեպ արհամարհանքը հատկապես լայնորեն տարածվեց հենց մ. թ. ա. IV դ.: Այն ավելի վատթարացրեց չբավորների վիճակը, նրանք հաճախ դադարում էին որոնել ազնիվ վաստակ: Ինչպես պատմում է մի անտիկ հեղինակ, այն ժամանակ քաղաքի փողոցներում կարելի էր հանդիպել աղքատ, սնանկացած ստրկատիրոջ, որը ողորմութիւն էր խնդրում իր վերջին ստրուկի հետ միասին:

Պելոպոնեսյան պատերազմի ժամանակից սկսած հունական ստրկատերերի մոտ հանդես եկան մեծ քանակությամբ ստրուկներ ռազմագերի հույներից: Միևնույն ժամանակ, բազմամյա ավերիչ



պատերազմական գործողութիւնները ու զորքերում մեծ թվով գյուղացիների ու արհեստավորների մասնակցութեան հետեանքով, արդեն Պելլոպոնեսյան պատերազմի վերջում երևան եկան անժառանգ լքված հողակտորներ: Դրանք զավթում կամ սնանկացած գյուղացիներից էժան գներով ձեռք էին բերում ավելի հաջողակ ստրկատերերը: Տեղի էր ունենում հողային սեփականութեան ու ստրուկների մասնակի վերաբաժանում և կենտրոնացում քչերի ձեռքում: Սակայն չպետք է գերազնահատել այդ պրոցեսի նշանակութիւնը: Խոշոր հողային սեփականատերերի կողմից այդպիսի ճանապարհով ձեռք բերված տիրույթները ցրված էին տարբեր տեղերում, այդ հողերում եղած տնտեսութիւնները առաջվա պես մասնը էին:

Ավելի մեծ չափեր ընդունեց առևտրավաշխատական կապիտալի համակենտրոնացումը. ընդ որում, վաճառականներն ու վաշխառուները միաժամանակ ձգտում էին ձեռք բերել հող: Դրանում նույնպես արտահայտվեց ստրկատիրական հասարակարգի նատուրալ բնույթը. այն այդպիսին էր անգամ ապրանքային արտադրութեան ամենաբարձր զարգացման շրջանում: Առավել հարուստ ստրկատեր-պլուտոկրատները (այսինքն «հարստութեամբ ուժեղները». պլուտոս՝ հարստութիւն, կրատոս՝ իշխանութիւն, ուժ բռնից գոյացած հունական տերմին է) սովորաբար և՛ վաշխառուներ էին, և՛ առևտրականներ, և՛ հողատերեր: Նրանց միջավայրում այժմ գրեթե չկային հին տեղական արիստոկրատական տոհմերի հետնորդներ, տոհմեր, որոնք դեռևս զգալի դեր էին խաղում մ. թ. ա. V դ. տնտեսութեան ու քաղաքականութեան մեջ: Հիմնականում նրանք ստրկատիրական դեմոսի հարստացած ներկայացուցիչներն էին: Փաստորեն նրանք տոն էին տալիս տնտեսապես զարգացած հունական պոլիսների ներքին ու արտաքին քաղաքականութեանը, սակայն դեմոկրատական կարգերն Աթենքում և մյուս դեմոկրատական պոլիսներում շարունակում էին գոյութիւն ունենալ ու անգամ ձեռք էին բերում ավելի արմատական արտաքին ձեռք: Աթենքում քաղաքացիների շրջանակը համալրվեց որոշ քանակութեամբ մետոյկներով, որոնք պատկանում էին «Սրեսունի» տիրանիայի դեմ ակտիվորեն պայքարողների թվին (տես ս 299 էջը): Սահմանվեց փոքրիկ վճար ժողովրդական ժողովին մասնակցելու համար: Դա դեմոկրատական միջոցառում էր: Սակայն, մյուս կողմից, այն վրկայում էր քաղաքացիների քաղաքական ակտիվութեան անկման մասին:

Ստրկատիրական դեմոկրատիայի թուլացումը քաղաքացիների շերտավորման արդյունք էր: Նրանց մի փոքր մասը հարստացավ, իսկ մեծ մասը քայքայվեց: Մինչդեռ դասական ստրկատիրական

պոլիսի հենարանը միջին կարողութիւն ունեցող քաղաքացիներն էին, որոնք պոլիսի գաղափարախոս Արիստոտելի խոսքերով, ըստեղծեցին կառավարման լավագույն պետական ձևը՝ մանր ու միջին սեփականատերերի հանրապետութիւնը՝ պոլիտեան: Միջին ու մանր ստրկատերերը ծառայում էին նաև քաղաք-պետութեան քաղաքացիների աշխարհազորում, ու երբ դա անհրաժեշտ էր, ցուցաբերում էին մեծ տոկունութիւն և հերոսութիւն, պաշտպանելով իրենց հայրենիքը: Դա, օրինակ, վառ կերպով արտահայտվեց հույն-պարսկական պատերազմների ժամանակ: Հաղթանակի դեպքում նրանք դեմ չէին կողոպտելու ջախջախված թշնամուն: Նրանք կազմում էին բավականին համախմբված մի կուրկտիվ: Դեմոկրատական պոլիսներում ժողովրդական հավաքներն արտահայտում էին գլխավորապես ստրկատերերի այդ միջին խավի շահերը:

Մ. թ. ա. IV դ. դեմոկրատական պոլիսների ժողովրդական ժողովներում արտաքուստ էական փոփոխութիւններ տեղի չունեցան: Աթենքում, օրինակ, ընդհակառակը, անգամ ուժեղացան դեմոկրատական գծերը. այսպես՝ պետութիւնը սկսեց վարձատրել ավելի մեծ թվով ընտրովի պաշտոններ: Սակայն այդ արտաքին դեմոկրատացման քողի տակ թաքնված էր քաղաքացիների քայքայումը, ինչպես և ընտրովի պաշտոնների ու ժողովրդական հավաքների հաճախումների վերածումը եկամտի թեև փոքր, բայց մշտական աղբյուրի այն կիսաաղքատ քաղաքացիների համար, որոնք ստրուկների աշխատանքի աճող կիրառման պատճառով դուրս էին մղվել արտագրութեան ոլորտից: Պլուտոկրատները, որոնք քողարկվելով դեմոկրատական ծածկույթով հաստատապես կանգնած էին իշխանութեան դեկի մոտ, նման փղանակով մի փոքր կերակրում էին աղքատ մարդկանց: Ժողովրդական հավաքը, որի շատ անդամներ պլուտոկրատների պարտապաններն էին և նրանցից ողորմութիւն էին սպասում, մեծ մասամբ կատարում էր հարուստների կամքը: Սակայն երբեմն, սովորաբար թաքնված զայրույթը դուրս էր ժայթքում, ու աղքատ քաղաքացիները ժողովրդական ժողովում անցկացնում էին օրենք՝ հարուստներից միանվագ արտակարգ հարկ գանձելու մեկ կամ մի քանի հարուստների լրիվ կամ մասնակի ունեզրկման ենթարկելու մասին: Այսպես էր դրսևորվում օխլոկրատիան, «ամբոխի իշխանութիւնը»՝ Արիստոտելի բնորոշումով, իսկ վերջինս սոցիալական «միջինի» կողմնակից էր ու չբավորութեան իշխանութիւնը համարում էր պետութեան ամենավատթարագույն ձևը:

Մ. թ. ա. IV դ. պոլիսներում հին քաղաքային աշխարհազորը

կորցրեց իր դերը: Նախ և առաջ համարյա չկային մարդիկ այն հավաքագրելու համար: Քաղաքացիների միջին շերտը չքանում էր, այն ժամանակ, երբ այդ խավն էր կազմում մեծ մասամբ իր հաշվին սպառազինվող աշխարհազորի հիմքը: Զբաղորները միջոցներ չունեին զինվելու համար, մյուս կողմից նրանք չէին ցանկանում կռվել հանուն պլուտոկրատների շահերի: Իրենց հերթին պլուտոկրատները զենք չէին վստահում համաքաղաքացի աղքատներին: Բացի այդ, երկարատև Պելոպոնեսյան պատերազմի ընթացքում ռազմական գործը բարդացավ, ու միայն աշխարհազորի ուժերով պատերազմ վարելու մեթոդները զգալիորեն հնացան: Մ. թ. ա. V դ. վերջին—IV դ. սկզբին Հունաստանում հանդես եկան ու ռազմական ուժի հիմնական տեսակներից մեկը արագույն դարձան վճարական-ռազմիկների, այսինքն պրոֆեսիոնալ զինվորականների ջոկատները: Վարձկանությունը առաջ էլ գոյություն ունձր փոքր շափերով, սակայն այն աննշան դեր էր խաղում ու ավելի շատ կիրառվում էր Հունաստանի սահմաններից դուրս: Այժմ վարձկանությունը դարձավ զանգվածային երևույթ հենց իսկ բուն Հունաստանում:

Վարձկան-ռազմիկների շարքերը մտնելը հունական պոլիսների՝ աղքատացած քաղաքացիների զանգվածների համար դարձավ ծանր վիճակից դուրս գալու միակ միջոցը: Հատկանշական էր նաև այն, որ ստրկատերերի մոտ ոչ միայն չէր հղանում չբաղորներին իբրև վարձու աշխատողներ զանգվածաբար օգտագործելու միտքը, այլ ընդհակառակը, դարաշրջանի բնորոշ ներկայացուցիչ, բազմակողմանի գրող, տնտեսության հարցերով զբաղվող Քսենոֆոնը իրեն վերագրվող «Շահույթների մասին» քննախոսությունում խորհուրդ էր տալիս աթենական կառավարությանը զենք մեծ թվով ստրուկներ այնպիսի հաշվով, որ յուրաքանչյուր ազատ աթենացու կողքին լինի երեք ստրուկ: Առաջարկվում էր ստրուկներին օգտագործել լավրիոնի արծաթի հանքերում, վարձակալության տալով նրանց ստրկատերերին, որոնք պետությանը տրվող վարձակալական վճարի դիմաց մաս-մաս շահագործում էին այդ հանքերը: Նաև առաջարկվում էր աթենական ֆիլաներին սկսել հանքերի հասարակական մշակումը այդ նույն պետական ստրուկների միջոցով: Քննախոսության հեղինակի ենթադրությամբ, ստրուկների այդ մասսայական շահագործման շնորհիվ կաճեր բոլոր աթենական քաղաքացիների կենսամակարդակը: Մի փոքր ժամանակ անց Արիստոտելը հատկապես հստակորեն ձևակերպեց ստրկատիրական հասարակության տեսակետը ստրուկի՝ իբրև խոսող գործիքի վերաբերյալ:

Ռազմիկների նկատմամբ կարիքը Հունաստանում միշտ էլ մեծ էր, իսկ մ. թ. ա. IV դ. այն առավել աճեց պոլիսների միջև ավելի հաճախակի դարձած պատերազմների կապակցությամբ: Ծառայության համար մեծ թվով հույն մարտիկներ էին վարձում պարսկական թագավորներն ու եգիպտական փարավոնները: Որպես պարսկական թագավորի կամ եգիպտական փարավոնի վարձկաններ տարբեր ժամանակներում ծառայել են անգամ հայտնի աթենական զորահրամանատարներն ու սպարտական թագավոր Ագեսիլաոսը: Վերջիններս դառնում էին վարձկաններ բնավ ոչ աղքատ լինելու պատճառով, այլ՝ կամ օգտագործելով շահավետ իրադրությունը իբրև պրոֆեսիոնալ զորքերի խոշոր ջոկատների հրամանատարներ, կամ էլ ելնելով իրենց պոլիսների քաղաքական շահերից: Հունաստանում հանդես եկան ռազմիկ-վարձկանների հատուկ շուկաներ, որտեղ կառավարություններն ու զորահրամանատարները կնքում էին պայմանագրեր վերջիններիս բանակներում ծառայել կամեցող անձանց հետ: Կարելի էր վարձել նաև մի ամբողջ ջոկատ ու զորահրամանատար:

Մ. թ. ա. IV դ. վարձկաններն ու նրանց հրամանատարները սկսեցին բավականին նկատելի դեր խաղալ հունական պոլիսների քաղաքական կյանքում: Վարձկանների ջոկատներն ամրապնդում էին պոլիսներում կառավարող օլիգարխիաների իշխանությունը, վերջիններս աղքատացած դեմոսի դժգոհությունը ճնշելու և քանակապես աճած ստրուկներին հսկելու նպատակով օգտվում էին ռազմական ուժից: Բայց լինում էին դեպքեր, երբ վարձկանների ջոկատները տապալում էին իրենց հրավիրած կառավարությունը, իսկ իրենց պետին հռչակում էին տիրան: Քանի որ վարձկանների հիմնական մասը կազմում էին սնանկացած դեմոսի ներկայացուցիչները, ապա հաճախ նրանց կողմից իշխանության զավթումը ուղեկցվում էր օլիգարխիաների դեմ ուղղված հաշվեհարդարով, ամենաազդեցիկ օլիգարխիաների արտաքսումով ու նրանց գույքի բաժանումով: Հայտնի են նաև դեպքեր, երբ իրենք՝ օլիգարխիաները գլխավորում էին վարձկանների ջոկատներն ու հաստատում էին տիրանիա դեմոսից վրեժ լուծելու նպատակով: Այդ «ուշ տիրանիաները» (կամ «կրտսեր»), ինչպես սովորաբար նրանց անվանում են պատմական գրականության մեջ, ի տարբերություն մ. թ. ա. VII—VI դդ. «վաղ տիրանիաների» (տե՛ս էջ 136) կյանքի կոչվեցին մ. թ. ա. V դ. վերջի—IV դ. սկզբի ստրկատիրական հասարակության զարգացման նոր պայմանների շնորհիվ և հանդիսանում էին հարուստների ու աղքատների միջև ընթացող դասակարգային պայքարի

արտահայտման մի յուրօրինակ ձև: Այդ պայքարին, պատահում էր, մասնակցում էին նաև ստրուկները, որի վերաբերյալ աղբյուրներում կան նշումներ:

Մեզ հասած աղբյուրներում շկան տեղեկություններ մ. թ. ա. IV դ. Հունաստանում ստրուկների ինքնուրույն դասակարգային և լույթների մասին, բացի Սպարտական պետությունում հելոտների ապստամբությունների վերաբերյալ եղած հիշատակումներից:

Վարձկանների իշխանությունը կարճատև էր, քանի որ նրանք, ըստ էության, ապադասակարգայնացած տարրեր էին, որոնց մոտ իրենց զբաղմունքի կապակցությամբ սկսեցին կազմավորվել մեկուսախմբայնության գծեր: Նրանք հեռացան աղքատացած դեմոսի անմիջական շահերից ու հետապնդում էին հարստանալու նպատակներ, անկախ այն բանից, թե ում հաշվին էր տեղի ունենում այդ հարստացումը: Վարձկան բանակի բարոյական մակարդակը ցածր էր: Վտանգավոր էր շափից ավելի վստահել վարձկաններին: Նրանց գործած շարաշահումների հետևանքով սովորաբար ծագում էին կեղեքված քաղաքացիների ապստամբություններ, իսկ տիրաններն արտաքսվում էին: «Տիրանիա» բառի բացասական իմաստը ծնվում է հենց մ. թ. ա. IV դ.:

Այդ անցքերի ժամանակակից, ճարտասանության հայտնի աթենական ուսուցիչ ու հրապարակախոս Իսոկրատեսը այսպես էր նկարագրում Հունաստանի աղետալի վիճակը մ. թ. ա. IV դ. առաջին կեսին: «Սովալյին ավազակները տեր ու տնօրեն են ծովում, վարձկանները զավթում են քաղաքներ, իսկ քաղաքացիները՝ ուրիշների դեմ հանուն իրենց երկրի կովելու փոխարեն, մարտնչում են միմյանց դեմ իրենց քաղաքական պարիսպների ներսում... կառավարման հաճախակի փոփոխությունների պատճառով քաղաքների բնակիչները գտնվում են ավելի անհանգիստ վիճակում, քան նրանք, ովքեր պատժվել էին արտաքսումով, քանի որ առաջիններն անընդհատ պայքարում են հանուն իրենց ապագայի, իսկ վերջիններս մխիթարվում են վերադարձի հույսերով: Եվ նրանք բոլորն ւշիքան հեռու են ազատությունից ու քաղաքական անկախությունից, որ որոշ պետություններ գտնվում են տիրանների իշխանության ներքո, մյուսներին տիրում են հարմոստները (սպարտական կուսակալները), ոմանք սնանկացել են, մյուսների տերերն են բարբարոսները (այսինքն պարսիկները)» (Պանեգիրկոս, 115—117): Իսոկրատեսի ժամանակակից փիլիսոփա Պլատոնը, մշակելով իդեալական ստրկատիրական պետության նախագիծը, ափսոսանքով մատնանշում էր, որ իր ժամանակ յուրաքանչյուր հունական պոլիսում գոյություն ունեին երկու պոլիսներ՝ մեկը՝ հարուստների

պոլիսը, իսկ մյուսը՝ աղքատների պոլիսը, և նրանք կատաղի պայ-  
քար են մղում միմյանց դեմ (Պլատոն, Պետություն, 422—423ա)\*:

ԱՌՅԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄՆ ՈՒ ԱՅՆ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ  
ՈՒՂԻՆԵՐԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԸ

Առանձին հարուստներ, զբաղվելով առևտրով, վաշխառությամբ  
ու հողակտորների սպեկուլյացիայով, կուտակում էին այն ժամա-  
նակի համար հսկայական գումարներ: Նրանց մեջ աչքի էր ընկ-  
նում հայտնի աթենական տրապեզիտես՝ դրամափոխանակային  
գրասենյակի տեր, դրամական ու գույքային ավանդներ պահող ու  
վաշխառու Պասիոնը: Պատկանելով ազատ արձակվածների խա-  
վին, նա առևտրի ու հատկապես վաշխառության միջոցով կուտա-  
կեց վիթխարի դրամագլուխ՝ 50 տաղանդի շափով: Պասիոնը հատ-  
կապես հարստացավ մասնակցելով հացի այն առևտրին, որ Ա-  
թենքը վարում էր Մերձսևծովյան երկրամասի հունական քաղաք-  
ների, առաջին հերթին Բոսպորոսի թագավորության հետ: Հարուստ-  
ներն իրենց ազատ միջոցները ծախսում էին ճոխ կյանք վարելու  
համար, մի բան, որ ավելի սուր կերպով ընդգծում էր սոցիալա-  
կան անհավասարությունը և ուժեղացնում հակամարտությունը հա-  
րուստների ու աղքատների միջև: Կուտակված հարստությունների  
մի մասը երբեմն վերածվում էր գանձի, թաղվում էր հողում հնա-  
րավոր կողոպուտներից ու բռնագրավումներից ապահովելու հա-  
մար: Ներպոլիսային շուկան միշտ սահմանափակ էր. այդ էլ ար-  
դեն մ. թ. ա. V դ. կյանքի կոշեց պոլիսների համախմբումը միու-  
թյունների մեջ: Մ. թ. ա. IV դ. ազատ բնակչության սնանկացումն  
ավելի ևս, քան մ. թ. ա. V դ. իջեցրեց նրա գնողունակությունը:  
Այժմ բազմաշատ ստրուկների հիմնական մասը, ինչպես արդեն  
հիշատակվել էր, ընդհանրապես ոչինչ չէր գնում: Հարուստ հողա-  
տերերն օգտագործելով իրենց ստրուկների արտադրած ապրանք-  
ները, նույնպես գրեթե չէին գնում տեղական ապրանքներ: Հունա-  
կան ստրկատեր-ձեռնարկատերերի, ինչպես և տնտեսապես զար-  
գացած պոլիսների առևտրաարհեստավորական դեմոսի համար ա-  
վելի սուր բնույթ էր ընդունում արտաքին առևտրի պրոբլեմը հատ-  
կապես այն պատճառով, որ Հունաստանի նախկինում տնտեսա-  
պես ու սոցիալապես հետամնաց շրջանները թևակոխեցին ստրու-  
կատիրական զարգացման ուղին ու այժմ ավելի քիչ էին գնում Ա-  
թենքում, Կորնթոսում և այլ առևտրաարհեստավորական կենտրոն-  
ներում արտադրված ապրանքները: Այսպիսով, մ. թ. ա. IV դ. քա-

\* Ըստ ուսերեն հրատարակության (թարգմ.):

դաք-պետութեան (պոլիսի) շրջանակներում Հունաստանի առավել զարգացած դասական պոլիսներում ծագեց ստրկատիրական հասարակութեան սոցիալական ու քաղաքական ճգնաժամ: Այն ստրկատիրական տնտեսութեան զարգացման հետևանք էր: Դա, անշուշտ, դեռևս ամբողջ ստրկատիրական համակարգի ճգնաժամը չէր, թեև այն տարածվեց Հունաստանի մեծ մասում:

Պոլիսի նեղ շրջանակները դժվարացնում էին ստրկատիրական հասարակութեան հետագա տնտեսական զարգացումը: Ապրանքների փոխադրման ժամանակ պոլիսների սահմանների տեղի ունեցող բազմաթիվ անցումներն ուղեկցվում էին մաքսերի վճարումով, իսկ դա թանկացնում էր ապրանքներն ու կրճատում էր նրանց վաճառքի հնարավորությունները ավելի հեռավոր վայրերում: Բացի այդ, ստրկատիրական հասարակութեան ավելի վաղ փուլերում ծագած քաղաք-պետությունները (պոլիսները) այժմ, դասակարգային պայթարի սրման պայմաններում, վատ էին պաշտպանում ստրկատերերի շահերն ու գույքը, քանի որ շուկան դա համար բավարար ուժ: Քաղաք-պետությունը՝ պոլիսը, արդեն չէր համապատասխանում ստրկատիրական տնտեսութեան զարգացման մաշտաբներին, դասակարգային պայթարի մաշտաբներին, այսինքն սոցիալական ճգնաժամը լրացվեց պոլիսի՝ որպես տիրող դասակարգի շահերն ապահովող կազմակերպութեան ճգնաժամով:

Այսպիսով, մ. թ. ա. IV դ. առաջ եկավ ավելի լայնատարած ու հզոր պետություններ ստեղծելու պահանջը, պետություններ, որոնք ի վիճակի կլինեին ապահովել ինչպես ստրկատերերի անվրտանգությունն ու իշխանությունը դասակարգային պայթարի սրման պայմաններում, այնպես և նրանց տնտեսությունների հետագա գոյությունն ու զարգացումը և ապրանքների վաճառահանումն ավելի հեռավոր շուկաներում:

Քաղաքական գործիչները, փիլիսոփաներն ու հունական հասարակութեան այլ գաղափարախոսները ելք էին որոնում այն սոցիալական ու քաղաքական փակուղուց, որի մեջ այժմ գտնվում էին հունական ստրկատիրական դասական պոլիսները: Դրա համար առաջարկվում էին տարբեր ուղիներ՝ Պլատոնն ու Արիստոտելը, օրինակ, զբաղվում էին լավագույն հասարակական ու պետական կառուցվածքի տեսական մշակումով, և թեև նրանց կառուցումները տարբեր էին, սակայն նրանք շկարողացան դուրս գալ պետություն՝ որպես պոլիսի մասին պատկերացումների շրջանակներից: Ստրկատերերի շահերին համապատասխանող ամենագործնական ու իրական դիրքը գրավեց Իսկրատեսը: Իր «Պանեգիրիկոս» քննախոսությունում Իսկրատեսը հույներին դիմեց միավոր-

ման ուղղակի կոչով, քանի որ միանալով նրանք կնվաճեին ու կթալանեին Պարսկաստանի արևմտյան մասը և դրանով կբարելավեին իրենց գործերը: Երբ պարզ դարձավ, որ սեփական ուժերով հույները չեն կարող միավորվել, Իսկրատեսը պաշտպանեց նրանց, ովքեր առաջարկում էին հունական պոլիսներին ենթարկվել Հունաստանին հարևան Մակեդոնիայի թագավոր Փիլիպոս II-ի իշխանությանը: Իսկրատեսն արտահայտում էր հունական բնակչության հարուստ խավերի շահերը: Նրա հաշվարկը պարզ էր՝ Մ. թ. ա. V դ. վերջի մի շարք իրադարձություններ ցույց տվեցին, որ պարսկական բռնապետությունը խիստ թուլացել էր, ու այս պատճառով հունական ստրկատերերի առավել հեռատես ներկայացուցիչների կողմից այն դիտվում էր որպես համեղ պատահ: Այդպիսի մարդիկ գտնում էին, որ անգամ պարտության գեպքում նրանք կշահեն: Նոր հոգերի զավթումներով ուղեկցվող հաղթանակը հարուստ հույներին, ինչպես նաև աղքատացած ստրկատերերին կտրամադրեց գործելու ու հարստանալու լայն ասպարեզ: Եվ ծանր ճգնաժամը, ինչպես մտածում էին Իսկրատեսն ու նրա շատ համախոհները Հունաստանում. կհաղթահարվեր: Անհաջողության դեպքում ռազմատենչ տրամադրություններ ունեցող աղքատները կզոհվեին՝ կռվելով Փորր Ասիայում կամ կգերվեին պարսիկների կողմից: Հայրենիքում՝ Հունաստանում, նրանց թիվը կնվազեր, ու հարուստները ազատ շունչ կբաշեին: Իսկ Պարսկաստանը, ինչպես գալիսիան թեև հայտ էր, այդ ժամանակ արդեն անընդունակ էր հարձակում ձեռնարկել: Այսպիսին էր ճգնաժամից գուրս գալու ծրագրերը, որը վառ կերպով բնութագրում էր ստրկատերերի բարոյական կերպարը:

**ՅՊԱՐՏԱՅԻ ԵՆՐԻՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՒ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ Խ ԳԵՐԻՇԵԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆՈՒՆ**

Պեղուպոնեայան պատերազմի ընթացքում Սպարտան, վերջ գրեկելով արտաքին ազդեցություններից իր բնակչությունը մեկուսացնելու քաղաքականությունը, բայց գեոսես հետամնաց լինելով սոցիալ-տնտեսական ու քաղաքական տեսակետից, դարձավ Հունաստանի հեզեմենը: Մպարտական գինձորական ջոկատները, որոնց զլխավորում էին հարմոստես-զորապետները, տեղավորվելով աթենացիներին իշխանությունից պաշտոնապես բազառազրկած՝ հունական սպարտներում, եռանդուն ձևով առաջադրում էին գեմեկրատական կառավարություններն ու սահմանում էին օլիգարխիաներ: Սակայն նրանց շահողովեց հաստատել իսկական հակողություն Հու-



նաոտանի վրա: Ընդհակառակը, արհեստական մեկուսացումից վերջնականապես դուրս եկած սպարտական հասարակությունն ընկալվ շունաստանի զարգացած շրջանների ուժեղ ազդեցություն տակ: Այս կապակցությամբ մ. թ. ա. V ու IV դդ. սահմանագծին Սպարտայում ուժեղացավ գույքային շերտավորման պրոցեսը. դա իր արտահայտությունը գտավ սպարտական օրենսդրությունում: Սպարտայի պատմության մեջ առաջին անգամ էֆորոս Հեպիտադեոսի՝ սպարտացիների կտակների ու հողակտորների նվիրատվությունների ազատության վերաբերյալ օրենքի համաձայն թույլատրվում էր գնել ու վաճառել հողեր: Սպարտացիների շրջանում այլևի մեծ չափով սկսեցին տարածվել արծաթյա ու անգամ ոսկյա դրամներ: Ինքը՝ հավասարների համայնքը սկսեց փոխվել՝ նըվազում էր զտարյուն սպարտացիների թիվը: Աթենքին հաղթած Լիսանդրոսը, որը կատարում էր սպարտական ռազմական նավատորմի նավարքոս-հրամանատարի պարտականություններն ու որոշ ժամանակ Սպարտական պետության փաստական ղեկավարն էր, իր ծագումով սպարտացի չէր, այլ մոթոն էր, այսինքն սպարտացու ու հելոտուհու՝ սպարտական դաստիարակություն ստացած որդի: Լինելով միջին կարողության տեր, նա պատերազմի ավարտից հետո դարձավ շունաստանի ամենահարուստ մարդկանցից մեկը: Ստորագասները հետ չէին մնում իրենց ղեկավարից: Պլուտարքոսը գրում էր այդ ժամանակի մասին, որ բոլոր սպարտացիներին «համակել էր հարստանալու ձգտումը, կարծես թե՛ դա մղում էր դեպի ինչ-որ պատվավոր ու մեծ բան» (Պլուտարքոս, Լիսանդրոս, 17):

Պերոպոնեսյան միությունում միշտ սուր բնույթ կրող դասակարգային պայքարը Սպարտայում հասավ ծայրահեղ լարման: Մ. թ. ա. 399 թ. էֆորները հայտնաբերեցին դավադրություն, որին մասնակցում էին սպարտական «հավասարների համայնքը» տապալելու ու սպարտական հասարակարգը վերակառուցելու նպատակով միավորված հելոտները, պերիոյկներն ու հիպոմեյոնները («կյանքի հատակը իջած», այսինքն աղքատացած սպարտացիներ, որոնք կորցրել էին իրենց կլերներն ու այլևս միջոցներ չունեին մուծումներ կատարել սիսսիտիանների համար և այս պատճառով հեռացվել էին լիիրավ սպարտացիների կազմից): Ուրտեղ էլ որ այս մարդկանց մոտ խոսք է ծագում սպարտացիների մասին, ներանցից ոչ մեկը չի կարողանում թաքցնել, որ տրախությամբ անգամ հում-հում կուտեր նրանց», գրում է իր «Շունաստանի պատմությունում» Քսենոֆոնը:

Գավադրությունը գլխավորեց եռանդուն, երիտասարդ հիպո-

միյուն Կինադոնը: Դավադիրներին մատենց մի դավաճան. ու սպարտացիները վայրագ դատաստան տեսան նրանց հետ:

Բնակչության զանգվածային սնանկացումը Պելոպոնեսում ընդունեց հատկապես հիվանդագին ձևեր դարերով պահպանված հարաբերությունները փշրելու կապակցությամբ: Շատ պերպոնեսցիներ, այդ թվում սպարտացիներ, թողնում էին հայրենիքը, դառնում ռազմիկ-վարձկաններ: Պելոպոնեսի հարավում՝ Տենարոն հրվանդանում առաջացավ վարձկանների ամենանշանավոր շուկաներից մեկը, որն ուներ համահունկան և որոշ չափով միջազգային նշանակություն: Մեծ թվով պելոպոնեսցիներ ծառայում էին հունական տարբեր պոլիսներում Սպարտայի գերիշխանությունը իրականացնող սպարտական կուսակալների՝ հարմոստների ջոկատներում: Սև ծովը տանող ուղու վրա գտնվող խոշորագույն առևտրատրհեստավորական կենտրոնը՝ Բյուզանդիոնը ենթակա էր սպարտական հարմոստես Կլեարքոսին, որը կապեր ուներ պարսկական արիստոկրատիայի հետ Փոքր Ասիայում:

**ՊԱՅՔԱՐ ԳԱՀԻ ՀԱՄԱՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ: 10000 ՀՈՒՅՆՆԵՐԻ ՆԱՀԱՆՋԸ:**

**ՊԱՏԵՐԱԶՄ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՈՒ ՍՊԱՐՏԱՅԻ ՄԻՋԵԿ**

Դառնալով գերիշխող Հունաստանում, Սպարտան ձգձգում էր Պարսկաստանին փոքրասիական հունական պոլիսները զիջելու վերաբերյալ Պելոպոնեսյան պատերազմի ժամանակ իր վրա վերցրած պարտավորության կատարումը, որով Սպարտան վարձահատույց էր լինելու պարսկական կառավարությանը, նրա կողմից Սպարտային՝ Աթենքի դեմ մղած պայքարում տրամադրած նյութական օգնության համար: Այս հանգամանքը, բնականաբար, վատացրեց Սպարտայի հարաբերությունները Պարսկաստանի հետ: Այդ ժամանակ Պարսկաստանում մահացավ Դարեհ II թագավորը, ու բռնկվեց դինաստիական պայքար գահի համար նրա հետնորդ Արտաքսերքեսի ու կրտսեր որդի Կյուրոսի միջև. վերջինս Փոքր Ասիայի արևմտյան մասի սատրապն էր: Կյուրոսը դիմեց Բյուզանդիոնի հարմոստես Կլեարքոսին, խնդրելով նրան հավաքագրել իր համար հույն ռազմիկների մեծ ջոկատ: Սպարտական կառավարությունը չէր խոչընդոտում Կյուրոսի ձեռնարկմանը, քանի որ Կյուրոսի հաղթանակը օրակարգից կհաներ փոքրասիական հունական պոլիսները Պարսկաստանին զիջելու վերաբերյալ պայմանագիրը Սպարտայի կողմից չկատարելու խնդիրը:

Կլեարքոսը հավաքագրեց 10000 վարձկաններ, գլխավորապես՝ պելոպոնեսցիներ: Արշավանքի նպատակի մասին նրանք ոչինչ չգիտեին: Կես տարի անց, երբ Կյուրոսի զորքը մոտեցավ ծովին Կի-

լիկիայում, հուլյնները սկսեցին հրաժարվել արշավանքին իրենց յ՝ տագա մասնակցությունից և համաձայնվեցին ծառայել առաջիկայում ևս այն պայմանով, որ Կյուրոսը մեկ ու կես անգամ ավելացնի նրանց ռոճիկը: Մ. թ. ա. 401 թ. Բաբելոնից մի քանի տասրեյակ կիլոմետր հեռավորության վրա գտնվող Կունաքսա գյուղի մոտ կայացած ճակատամարտում հուլյնները հաղթեցին Արտաքսերքսես II-ի զորքերին, բայց ճակատամարտում սպանվեց Կյուրոսը, ու հուլյն վարձկանները մնացին առանց տիրոջ: Դրանից հետո տեղի ունեցած բանակցությունների ժամանակ պարսկական զորահրամանատարի հրամանով սպանվեցին վարձկանների առաջնորդները, որպեսզի հետո հեշտությամբ ոչնչացվեր պարսիկների համար վտանգավոր ջոկատը: Սակայն վարձկանները շփոթվեցին՝ սպանվածների փոխարեն նրանք ընտրեցին նոր հրամանատարներ, որոնց թվում էր նաև ապագայում հռչակավոր դարձած գրող ու պատմիչ Քսենոֆոնը: Հետագայում իր «Անաբասիս» աշխատությունում նա նկարագրեց այդ արշավանքը: Թշնամիների դեմ մղած մարտերում հուլյն վարձկանների նոսրացած ջոկատը մ. թ. ա. 400 թ. հասավ սեծովյան ափ ու վերադարձավ Հունաստան, թեև պարսիկները փորձում էին ոչնչացնել վարձկաններին: 10000 հուլյնների նահանջը ցույց տվեց, թե որքան են թուլացել Պարսկաստանի ուժերը մ. թ. ա. IV դարի նախաշեմին:

Քանի որ Կլեարքոսը սպարտական հարմոստես էր, իսկ Կյուրոսի վարձկանների ջոկատում կային շատ պելոպոնեսցիներ, ապա Պարսկաստանի ու Սպարտայի հարաբերությունները 10000 հուլյների նահանջից հետո ավելի վատացան: Սակայն հունական ստորկատներն այդ նահանջից եզրակացության եկան Պարսկաստանի թուլության մասին: Այս կապակցությամբ Իսոկրատեսը գրում էր. «Չպետք է վախենալ ոչ թագավորին ուղեկցող ընտրյալ զորքից, ոչ պարսիկների արիությունից, որովհետև Կյուրոսի հետ արշավանքի զնացած հուլյների կողմից պարզորեն բացահայտվեց այն, որ նրանք՝ պարսիկները, բոլորովին էլ չեն գերազանցում պարսկական ռազմածովային նավատորմիդին (այստեղ Իսոկրատեսը հիշեցնում է պարսիկների ծովային պարտությունները մ. թ. ա. V դ. սկզբի հուլյն-պարսկական պատերազմների ժամանակ)... Երբ Կյուրոսի մահից հետո համախմբվեցին Ասիայի բոլոր բնակիչները, ապա այս բարենպաստ պայմաններում նրանք պատերազմում էին այնպիսի խայտառակ ձևով, որ ոչ մեկը և ոչ մի հիմք չունեցավ գովաբանելու պարսիկների արիությունը... Ինձ թվում է, անշուշտ, որ ապացուցված է պարսիկների թուլությունը... Պետք չէ ձեռքից բաց թողնել ներկա հարմար պահը... Երբ մենք այնտեղ (Ասիա) կփո-

խաղրենք թագավորի զորքից ավելի ուժեղ զորք (մի բան, որ ցանկության դեպքում կարող ենք հեշտությամբ անել), ապա հավանաբար պտուղներ կբաղենք ողջ Ասիայից» (Պանեգիրիկոս):

Պարսկական կառավարությունն իր հերթին ևս դաս քաղեց 10000 հույների՝ պարսկական բանակի համար անհաջող հետապնդումից: Ավելի մեծ շափով, քան առաջ, նա սկսեց միջամտել պոլիսների միջև հարաբերություններին՝ օգտագործելով նրանց վաղեմի ներքին երկպառակությունները: Պարսիկները հասկանում էին, որ Հունաստանի ուժեղացած ուժերի միավորումը վտանգավոր է իրենց համար ու ամեն կերպ ձգտում էին խանգարել դրան, ինչպես նաև առանձին հունական պետությունների, առաջին հերթին Սպարտայի ու Աթենքի ուժեղացմանը: Պարսկաստանի համար հատկապես վտանգավոր էր համաձայնությունը նրանց միջև: Պարսկաստանը մի ժամանակ օգնեց Սպարտային՝ ջախջախելու շափից ավելի ուժեղացած Աթենքին: Այժմ, սպարտական գերիշխանության հաստատումից հետո Պարսկաստանը քայլեր ձեռնարկեց իր երեկվա դաշնակից Սպարտային թուլացնելու համար ու սկսեց օգնել թուլացած Աթենքին:

Կյուրոսի մահից հետո փոքրասիական սատրապ նշանակվեց Տրսսափենոնսը: Սպարտան գժտվեց նրա հետ այն բանի հետևանքով, որ նա տուրք էր պահանջում փոքրասիական հունական բազմաքանակից ու ձգտում էր դրանք ամուր կապել Պարսկաստանի հետ: Այդ ընդհարումը վերածվեց պատերազմի Սպարտայի ու Պարսկաստանի միջև, որը տևեց մ. թ. ա. 399 թ. մինչև 394 թ.: Երկու կողմերն էլ բավականին պասսիվ էին վարում այդ պատերազմը: Միայն պատերազմի վերջում սպարտական զորքերի գլուխ կարգվեց Ագեսիլաոս թագավորը: Նա լուրջ պարտության մատնեց պարսկական ջոկատին Սարդեսի մոտ մղած ճակատամարտում: Սակայն պարսկական դիվանագիտությունը տարավ ավելի խոշոր հաղթանակ Սպարտայի նկատմամբ՝ նպաստելով հունական պոլիսների՝ Սպարտայի դեմ ուղղված դաշինքի ստեղծմանը:

#### ԿՈՐՆԹՈՍՅԱՆ ԱՍՏԵՐՈՋՄԵՆ ՈՒ ԱՆՏԱԿԻՒԱՍՅԱՆ ՉԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Հունական քաղաքների՝ Սպարտայի դեմ ուղղված կռալիցիայի ստեղծման առիթ ծառայեց Սպարտայի անհաջող միջամտությունը Միջին Հունաստանի գործերին: Սպարտական ջոկատը պարտություն կրեց, նրա հրամանատար, հուշակավոր Լիսանդրոսը սպանվեց: Միջին Հունաստանի պոլիսների գործերին միջամտելն անմիջականորեն դիպավ Թեբեի շահերին, և նա միավորվեց Աթենքի, Կորնթոսի, Մեգարայի, Արգոսի, Միջին Հունաստանի, Պելոպոնեսի

որոշ կղզիների մի շարք այլ պետութիւնների, ինչպես նաև Քեսա-  
լիայի (Հյուսիսային Հունաստան) հետ: Կազմավորվեց հակասպար-  
տական պատկառելի դաշինք, որը պատերազմական գործողու-  
թյուններ սկսեց Սպարտայի դեմ մ. թ. ա. 395 թ.: Պարսկաստանը  
դրամական օգնութիւն ցույց տվեց կռալիցիային: Դաշնակից զոր-  
քերը հաստատվեցին Իսթմոսում: Ազեսիլաոսը ստիպված էր դա-  
դարեցնել պատերազմը Ասիայում ու ցամաքային շրջանցիկ ճա-  
նապարհով վերադառնալ Պելոպոնես, որովհետև էգեյան ծովը  
գտնվում էր պարսկական ռազմական նավատորմի դի հսկողութիւն  
ներքո. նրա հրամանատարն էր պարսկական ծառայութիւն մեջ մը-  
տած նախկին աթենական ստրատեգոս Կոնոնը: Ազեսիլաոսը չճա-  
մարձակվեց ճեղքումով անցնել Իսթմոսն ու իր զորքերը Միջին  
Հունաստանից Պելոպոնես փոխադրեց Կորնթոսյան ծոցով: Այդ  
նույն ժամանակ Կոնոնը ջախջախեց սպարտական ռազմածովային  
նավատորմի դը Կնիդոսի մոտ, փոքրասիական ծովափի շրջանում:  
«Այդ ժամանակվանից լակեդեմոնացիները կորցրեցին իրենց տի-  
րապետութիւնը ծովում» (Դիոդորոս, XIV, 84, 3—4)\*: Սպարտա-  
ցիները, զրկված լինելով Պարսկաստանի ֆինանսական օգնութիւն-  
ներից, շկարողացան կառուցել նոր նավատորմիդ: Այդ օգնութիւնը  
ստացավ Աթենքը: Կոնոնը ժամանեց Աթենք ու բերեց 50 տաղանդ՝  
իբրև պարսկական նպաստ Պելոպոնեսյան պատերազմից հետո  
սպարտացիների կողմից քանդված աթենական «Ծրկար պարիսպ-  
ներն» ու Աթենքի և Պիրեևսի այլ ամրութիւնները վերականգնելու  
համար: Պառիսպներն ու ամրութիւնները վերականգնվեցին: Քա-  
նի որ հակասպարտական միութիւն ձեռնարկած հիմնական ռազ-  
մական գործողութիւնները տեղի էին ունենում Իսթմոսում և ընդ-  
հանրապես Կորնթոսի մոտ, իսկ վերջինս ինքը ակտիվորեն մաս-  
նակցեց այդ գործողութիւններին, ապա պատերազմը ստացավ  
Կորնթոսյան պատերազմ անունը (մ. թ. ա. 395—387 թթ.):

Սպարտացիների մասնակի հաջողութիւնները ավարտվեցին ա-  
թենական պելտաստների ջոկատի փայլուն հաղթանակով սպարտա-  
կան հօպլիտների նկատմամբ, մ. թ. ա. 390 թ. Կորնթոսից ոչ հե-  
ռու տեղի ունեցած ճակատամարտում: Աթենական զինվորների  
առաջնորդն էր ստրատեգոս Հիփիկրատեսը: Այդ ճակատամարտում  
ի հայտ եկան օտրատեգոս Հիփիկրատեսի կողմից կիրառված ռազ-  
մական նոր տակտիկայի առավելութիւնները: Պելտաստների ջո-  
կատները կազմված էին կոպիտ քաթանից պատրաստված զրահ  
էրոզ մարտիկներից. նրանք ունեին համեմատաբար թեթև, կաշվե

\* Հառ ուսուկան հրատարակութեան (թարգմ.):

վահաններ, զինված էին երկար նիզակներով, տեգերով ու սրերով: Հիփիկրատեսի կազմակերպած աթենական թեթև հետևակը արագաշարժ էր, կարող էր օգտագործել նետող ու հարվածող զենք: Դա ապահովեց Հիփիկրատեսի հաղթանակը սպարտական հոպլիտների ծանրազեն ու դժվարաշարժ աշխարհազորի նկատմամբ:

Աթենացիք կառուցեցին ռազմածովային նոր նավատորմ ու վերականգնեցին իրենց հսկողությունը Սև ծովը տանող նեղուցների վրա:

Սպարտայի պարտությունն ու հակասպարտական միության ուժեղացումը չէին մտնում Պարսկաստանի հաշիվների մեջ. և Պարսկաստանն այժմ նպաստներից զրկեց Սպարտայի թշնամիներին: Երբ թուլացած Սպարտան փորձեց մերձենալ Պարսկաստանի հետ ու նրան միջնորդության համար առաջարկեց մի շարք զիջումներ այլ հունական պետությունների հաշիվին, ապա Պարսկաստանը օժանդակություն ցույց տվեց Սպարտային հաշտություն կնքելու գործում: Պարսկաստանի ճնշման հետևանքով Կորնթոսյան պատերազմը գաղափարեց, ու մ. թ. ա. 387 թ. Պարսկաստանի մայրաքաղաք Սուսայում կնքվեց հաշտություն, որը բանակցություններին մասնակցող սպարտական դեսպանության ղեկավար Անտալկիդասի անունով կոչվեց անտալկիդասյան:

Քանի որ սպարտական դեսպանության հետ համաձայնեցված հաշտության պայմանները պարսկական թագավորի կողմից թելադրվեցին հունական այլ պետություններին, ապա այդ հաշտությունն ստացավ նաև «թագավորական» բնորոշ անվանումը, այն եղավ հունական ուժերի թուլացմանը ու ջլատմանը ձգտող պարսկական գիվանազիտության հաղթանակը:

Համահունական հեգեմոն Սպարտան բոլոր հույների անունից հրաժարվեց Պարսկաստանի օգտին հույն-պարսկական պատերազմների բոլոր նվաճումներից: Ժամանակին պարսկական լծից ազատագրված փոքրասիական հունական քաղաքները կրկին անցան Պարսկաստանի իշխանության տակ: Պարսկական ռազմական նավատորմի դը պաշտոնապես իրավունք ստացավ մուտք դործել էգեյան ծով: Այդ ճանապարհով սպարտացիները ջանում էին ապահովագրել իրենց Աթենական ծովային միության վերականգնման հնարավորությունից: Անգամ եթե այդ միությունը վերստեղծվեր, ապա այժմ, փոքրասիական հունական պետությունները Պարսկաստանին զիջելուց հետո, այն նախկինից շատ ավելի թույլ կլիներ: Անտալկիդասյան հաշտության մեջ լրացուցիչ հրաշխիքի կարգով մտցվեց մի հատուկ վերապահում, որի համաձայն Հունաստանում չէր կարող լինել որևէ միություն, Պելլոպոնեսյան միություն:

նից բացի: Այդ հաշտութեամբ աղղարարվում ու ամրապնդվում էր Հունաստանի մասնատվածութիւնը:


ԹԵՐԵԻ ԲԱՐՁՐԱՅՈՒՄԸ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԱԹԵՆԱԿԱՆ  
ՍՈՎԱՅԻՆ ՄԵՌՈՒԹՅԱՆ ԱՍԵՂՍՈՒՄԸ

Սպարտան, հենվելով «թագավորական հաշտության» կետերի վրա, փորձում էր հետևողականորեն անցկացնել բոլոր կարգի միութիւնների վերայնման քաղաքականութիւն, որպեսզի ինքը մնա միակ նշանակալից տերութիւնը Բալկանյան Հունաստանում: Սկզբնական շրջանում դա Սպարտային հաջողվեց: Սպարտայի հարձակողական քաղաքականութեան վերջին ժամանակավոր հաջողութիւնը եղավ Թերեի զավթումը մ. թ. ա. 382 թ.: Այստեղ տապալվեց դեմոկրատական կառավարումն ու հաստատվեց օլիգարխիա, ընդ որում Թերեական Կադմեա ամրոցում թողնվեց սպարտական կայազոր: Սպարտայի ուժեղացումն առաջացրեց Աթենքի դիմադրութիւնը. վերջինս օգնեց Թերեից փախած դեմոկրատներին հեղաշրջում նախապատրաստել Թերեում: Դավադիրները հեղինակավոր թերեական քաղաքացի Պելլոպիդասի գլխավորութեամբ դիշուր թափանցեցին Թերե, սրի քաշեցին օլիգարխներին, իսկ սպարտական ջոկատին ստիպեցին կապիտուլացվել ու հեռանալ Սպարտա: Օլիգարխներից ու սպարտացիներից նեղութիւններ կրած թերեական դեմոկրատների մեծ մասը պաշտպանեց դավադիրներին: Մ. թ. ա. 379 թ. կրկին անկախ դարձած Թերեում վերականգնվեցին դեմոկրատիան ու ժողովրդական ժողովի իրավունքները: Շուտով Թերեն վերականգնեց բնովտական պոլիսների միութիւնը: Թերեի ու Բեովտական միութեան գլուխ կանգնած էր բեովտարչների ընտրովի խորհուրդը: Նրանցից ամենաազդեցիկներն էին Պելլոպիդասն ու նրա բարեկամ Եպամենոնդասը, որոնք Թերեի ներքին ու արտաքին քաղաքականութեան փաստական ղեկավարներն էին: Սպարտայի հեղինակութիւնը Հունաստանում խախտվեց: Սպարտան սկսեց նախապատրաստել Թերեի նոր զավթումը:

Թերեական դեմոկրատների հաջողութիւնը, ինչպես նաև սպարտացիների կողմից Պիրեոսը զավթելու ապարդիուն փորձը Աթենքին առիթ տվեցին ամրապնդելու իր դիրքերը՝ օգտագործելով դեմոկրատական Թերեի օժանդակութիւնը: Աթենքը դիմեց նախկին դաշնակիցներին ծովային միութիւնը վերականգնելու կոչով: Նման փորձեր աթենացիները ձեռնարկում էին նաև անցյալում, սակայն սպարտա-պարսկական քաղաքականութեան կապակցութեամբ հաջողութիւն չունեցան:

Քանի որ Սպարտայի տիրապետութիւնը Թերեում խախտվել

ՀՈՒՆԱՍՏԱՆԸ մ.թ ա IV - րդ դ : ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԸ 362 թ. դրությամբ





էր, Աթենքին հաջողվեց մ. թ. ա. 378 թ. ստեղծել, ի խախտումն Անտալիկիդասյան հաշտության, II Աթենական ժովային միությունը: Այն զգալիորեն փոքր էր I միությունից, նրա մեջ չկարողացան մտնել փոքրասիական հունական քաղաքները, որոնք Սպարտան կանխամտածված ձևով զիջել էր Պարսկաստանին: I Աթենական ժովային միության նախկին անդամները, կրելով սպարտական լծի դառնությունը, կրկին միավորվեցին Աթենքի շուրջը: Ոչ Սպարտան, ոչ էլ Պարսկաստանը չկարողացան խանգարել դրան: Մ. թ. ա. 377 թվականի սկզբից մեզ է հասել փոքր-ինչ եղծված արձանագրություն, որը պարունակում է II Աթենական ժովային միության ըստնդժման պայմանագիրն ու դաշնակիցների ցուցակը: Դաշնակիցները չէին մոռացել, որ Աթենքն անցյալում ձգտում էր կախման մեջ դնել իրենց, բայց պոլիսների զարգացող ստրկատիրական տրեստեսության շահերը պահանջում էին ստեղծել նման միություն: II Աթենական ժովային միության կազմակերպման ժամանակ դաշնակիցները պահանջեցին, որպեսզի Աթենքը տա որոշակի երաշխիքներ այն բանի վերաբերյալ, որ I միության ներսում Աթենքի վարած մեծապետական քաղաքականությունը այլևս չի կրկնվի: Թուլացած Աթենքը ստիպված էր համաձայնվել այդ պահանջին: Աթենացիները հրաժարվեցին կլերուքիաներ դուրս բերելու քաղաքականությունից: Ավելին, աթենական քաղաքացիներին արգելվեց դաշնակիցների տարածքներում ձեռք բերել անշարժ գույք: Աթենացիները հրաժարվեցին ֆորոս գանձելու կարգից ու դաշնակիցների ներքին գործերին միջամտելուց: Դաշնակիցները պահպանում էին ինքնավարություն: Աթենքում հավաքվում էր սինեդրիոնը՝ դաշնակիցների ներկայացուցիչների խորհուրդը, որի կազմի մեջ աթենական պատվիրակները չէին մտնում: Այն քննարկում ու նախնական կարգով հաստատում էր բոլոր կարևոր դաշնակցային գործերը: Դրանից հետո սինեդրիոնի որոշումները քննարկվում ու հաստատվում էին աթենական ժողովրդական ժողովում: Ֆինանսական հարցերը, մասնավորապես «միութենական կարիքների» համար հավաքվող վճարումների հարցը սինեդրիոնում քննարկվում էին վերջնականապես: Սինեդրիոնը սահմանում էր միութենական տարբեր կարիքների համար կատարվող մուծումների չափերը. այդ մուծումները ստացան «համատեղ միջոցներ» անունը: II Աթենական ժովային միության անդամների թիվը նրա գոյության առաջին երեք տարիների ընթացքում աճում էր ու հասավ ավելի քան յոթանասուներեք: Աթենքը կառուցեց ռազմածովային նավատորմիդ, ծովում տարազ մի շարք հաղթանակներ սպարտացիների նկատմամբ: վերջինները ձգտում էին խափանել Աթենքի ու Թեբեի ուժեղացու-

թյունը: Եպամենոնդասի ու Պելոպիդասի կողմից ղեկավարվող Թեբեն ձգտում էր դառնալ Հունաստանի հեգեմոն, բայց դա նրան լիովին իրագործել չհաջողվեց: Եպամենոնդասի փորձը՝ Թեբեն վերածել ծովային պետության, նորակառույց նավատորմիդի համար իբրև նավահանգիստ օգտագործել Աթենքից անջատված փոքր ծովափնյա Օրոպոս քաղաքը, անհաջողություն կրեց: Բեովտիան ըստ էության բավական սահմանափակ ռեսուրսներ ունեցող գյուղատնտեսական երկիր էր: Ակտիվ արտաքին քաղաքականությունը խախտում էր բեովտական գյուղացիների բարեկեցությունը: Արհեստներն ու առևտուրը Բեովտիայում ավելի թույլ էին զարգացած, քան Աթենքում, Կորնթոսում, Մեգարայում ու այլ տնտեսապես զարգացած պոլիսներում և ավելի քիչ նշանակություն ունեին երկրի տնտեսության համար:

Սպարտայի նկատմամբ Թեբեի հաղթանակից ու Պելոպոնեսյան միության տրոհումից հետո Աթենքը դադարեց Թեբեի հետ բարեկամական հարաբերություններ ունենալուց ու մերձեցավ պարտված Սպարտայի հետ: Հզորացած Թեբեի դեմ Պելոպոնեսում հանդես եկան Աքայան, Արկադիայի մի մասը և էլիսը: Տեղի էր ունենում մ. թ. ա. IV դ. Հունաստանին բնորոշ երևույթ՝ մի շարք հունական պետությունների միավորում հեգեմոնի դերին ձգտող ուժեղագույն պետության դեմ: Մ. թ. ա. 363—362 թթ. Եպամենոնդասը Թեբեի հեղինակությունը բարձրացնելու նպատակով կրկին ներխուժեց Պելոպոնես: Մ. թ. ա. 362 թ. Լակոնիայի սահմանների մոտ գրտնրվող Մանտինեայի շրջակայքում տեղի ունեցած ճակատամարտում թեբեացիները նորից հաղթեցին սպարտացիներին, բայց Եպամենոնդասը մահացու վիրավորվեց ու ընկավ մարտի դաշտում:

Գերիշխանության համար մղած պայքարում հյուծված Թեբեն կորցրեց իր ղեկավար դիրքը Հունաստանում: Նշանակալից միություն էր դեռևս միայն II Աթենական ծովային միությունը: Եվ Աթենքը շտապեց օգտագործել իր քաղաքական գործիչների տեսակետով բարենպաստ իրավիճակը իր երբեմնի հզորությունը վերականգնելու համար:

#### ԵՐԿՐՈՐԴ ԱԹԵՆԱԿԱՆ ԾՈՎԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

Աթենական ռազմածովային նավատորմիդը ձեռնարկեց ակտիվ պատերազմական գործողություններ դաշնակիցների վրա իր տիրապետությունն ամրապնդելու համար: Աթենացիները զավթեցին պարսիկներից կախյալ թրակիական Քերսոնեսոսը, Պոտիդեան ու Սամոսը և նրանց տարածքներում հիմնեցին կլերուքիաներ: Թեև կլերուքիաները դուրս բերվեցին այն շրջանները, որոնք դեռևս չէին

մտնում II Աթենական ծովաչին միության կազմի մեջ, սակայն կլերութիւնների քաղաքականության վերածնման փաստն իսկ հարվածեց այդ միության ամրությանը: Աթենքը փորձեց վերսկսել դաշնակիցներից գանձումների կանոնավոր հավաքումը, հաշվի չնստելով պոլիսների շահերի հետ: Դա հանգեցրեց II ծովաչին միության հետզհետե քայքայմանը: Սկզբում միությունից դուրս եկան առավել նշանավոր պոլիսները՝ Կերկիրան՝ արևմուտքում ու Բյուզանդիոնը՝ արևելքում: Աթենքը ի վիճակի չէր ստիպել նրանց վերադառնալու միության կազմի մեջ: Սպառնալիքների փորձերը հանգեցրին միայն հարաբերությունների էլ ավելի սրմանը միության ներսում ու նրա անդամների կողմից Աթենքի դեմ ուղղված կռաւիցիայի ստեղծմանը: Դաշնակիցները հրաժարվեցին օգնել Աթենքին՝ վերջինիս կողմից Մակեդոնիայի դեմ մղած պայքարում, որի նպատակն էր տիրել Ամփիպոլիսին: Տեղի ունեցավ այսպես կոչված դաշնակցային պատերազմ (մ. թ. ա. 357—355 թթ.): Աթենական նավատորմը պարտություն կրեց: Այդ պատերազմում դաշնակիցներին պաշտպանում էին տեղական փոքրասիական կառավարիչները՝ դինաստները: Աթենքի դեմ դաշնակիցներին պաշտպանելու հայտարարութեամբ հանդես եկավ պարսից թագավորը: Այս բոլոր հանգամանքները ստիպեցին Աթենքին ընդունել իր պարտությունն ու դադարեցնել պատերազմը: II Աթենական ծովաչին միությունը դադարեց գոյութիւն ունենալ իր ծագումից 22 տարի անց:

Այսպիսով, սոցիալական ճգնաժամի հետևանքը եղան երկպառակտիչ պատերազմները, որոնց ընթացքում յուրաքանչյուր պոլիս կամ պոլիսների խումբ հույս ուներ ուրիշների հաշվին բարեկամել իր դրությունը: Պոլիսների ներսում կատաղի պայքար էր ընթանում հարուստների ու աղքատների միջև: Այդ պայքարում ստրկատերերը փորձում էին օգտագործել ստրուկներին: Յուրաքանչյուր կողմ ազատութիւն էր խոստանում իրեն միացած ստրուկներին: Սուր բռնուլթ ստացած դասակարգային ու քաղաքական պայքարը, ստրկատերերի վիճակի անկայունութիւնը հեշտացրին Հունաստանի նշվածումը Մակեդոնիայի կողմից մ. թ. ա. IV դ. երկրորդ կեսին: Ավելի երիտասարդ ու ավելի հզոր ստրկատիրական պետութիւնը՝ Մակեդոնիան, Հունաստանի դեմ ուղղված ագրեսիայում պաշտպանութիւն գտավ հունական խոշոր ստրկատերերի կողմից. վերջիններս ցանկանում էին քաղաքական անկախության կորստի գնով ձեռք բերել իրենց գույքի ու կյանքի պաշտպանութիւնը: Հարուստները հույս ունեին, որ հունական ուժերի հետ մակեդոնական ուժերի բռնի միավորման դեպքում, անկում ապրող պարսկական դեսպոտիայի արևմտյան մասի համատեղ նվաճման ու կողոպտման մի-

չոցով կհաջողվի պոլիսների շրջանակներում լուծել հունական ստոր-  
կատիրական հասարակարգի ճգնաժամը:

## Գլուխ 15. ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԳԵՐԻՇԵԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

Մինչև մ. թ. ա. IV դ. Մակեդոնիայի պատմության վերաբեր-  
յալ հատկապես գրական աղբյուրներ քիչ են պահպանվել: Հնա-  
գիտական պեղումները տվել են հետաքրքիր, բայց ցրիվ եկած  
նյութ: Մակեդոնիայի մասին, գլխավորապես հույն-պարսկական  
պատերազմների ժամանակաշրջանին վերաբերող տեղեկություն-  
ներ կան Հերոդոտոսի «Պատմության» մեջ: Մակեդոնական պատ-  
մության ավելի կանոնավոր, բայց հակիրճ ակնարկ, որն ընդգըր-  
կում է նաև Պելոպոնեսյան պատերազմի ժամանակաշրջանը, թո-  
ղել է Թուկիդիդեսը: Մակեդոնիայի մասին, սկսած հնագույն ժա-  
մանակներից, կարճ, բացթողումներով պատում կա Հուստինոսի  
մոտ:

Մակեդոնիայի պատմությունը մ. թ. ա. IV դարից ավելի լավ  
է հայտնի: Մենք հատկապես լավ գիտենք Հունաստանի հետ նրա  
պայքարի շրջանը, պայքար, որի հետևանքով Մակեդոնիան դարձավ  
համահունական հեգեմոն: Մ. թ. ա. V դ. վերջից սկսված իրադար-  
ձությունների մասին տեղեկություններ մենք գտնում ենք Դիոդո-  
րոսի մոտ, որն օգտագործել է մ. թ. ա. IV դ. պատմիչներ, մակե-  
դոնական տերության հզորության արագ աճի ժամանակակիցներ  
Քեոպոմպոսի ու Նփորոսի կորած աշխատությունները: Արժեքավոր  
աղբյուրներ են աթենական պետական գործիչներ Դեմոսթենեսի ու  
Փոկիոնի կենսագրությունները, որոնք կաղմել է Պլուտարքոսը:

Մինչև մեր օրերը պահպանվել են այն ժամանակի աթենական  
պետական գործիչների՝ Իստկրատեսի, Էսքիեսի, Դեմոսթենեսի,  
ինչպես նաև Դինարքոսի ու Հիպերիդասի քաղաքական հրապարա-  
կախոսությունն ու ճառերը: Նրանք ուղղակիորեն, թեև կողմնակալ  
ձևով, տանում են մեզ Աթենքում, ինչպես նաև Հելլադայի ու Մա-  
կեդոնիայի այլ քաղաքներում տեղի ունեցող լարված անցքերի խոր-  
քը: Արժեքավոր տեղեկություններ կան արձանագրություններում:  
Որպես այդ շրջանի Մակեդոնիայի պատմության աղբյուրներ կարե-  
վոր են նաև դրամները:

### ՄԱԿԵԴՈՆԻԱՏԻ ԲԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ԲԱԿՂՈՒԹՅՈՒՆԸ

Մակեդոնիան գտնվում է Թեսալիայից ու Քաղկիդիկե թերա-  
կզուց դեպի հյուսիս: Արևմուտքում այն սահմանամերձ էր Իլլի-

րիային, իսկ արևելքում՝ Թրակիային: Իր բնական պայմաններով Մակեդոնիան բաժանվում էր երկու անհավասար մասերի՝ Վերին, որը լայնատարած, բայց դժվարամատչելի լեռնային ու անտառային շրջան էր, որտեղ ապրում էր մակեդոնացիների հիմնական մասը, ու Ստորին՝ Հալիակմոն ու Արսիոս գետերի ստորին հոսանքում գտնվող, էգեյան ծովին մոտեցող մի փոքրիկ հովիտ: Մակեդոնիայի կլիման Միջին Հունաստանի կլիմայից մի փոքր ավելի խիստ է: Լեռնաշղթաները մշտապես կամ տարվա մեծ մասը ծածկված են ձյունով: Սարալանջերին մակեդոնացիներն արածացնում էին ոչխարներ ու այծեր, իսկ բարձրավանդակների ավելի լայնատարած արոտներում բուծում էին խոշոր եղջերավոր անասուններ ու ձիեր: Ամենուրեք տարածված էին անտառային զբաղմունքները: Հովտափոսերում, հովիտներում ու մերձծովյան դաշտավայրում, որտեղ պայմանները նպաստավոր էին հողագործության համար, բրնակուլթյունն զբաղվում էր հացաբույսերի մշակմամբ:

Մակեդոնացիների էթնիկական պատկանելիությունը մինչև այժմ բավականաչափ պարզ չէ: Ըստ Լրևուլթին նրանք ազգակցություն ունեին իլլիրիացիների, թրակիացիների ու հույների հետ: Մակեդոնական բառերի մեղ հայտնի աննշան քանակությունը մատնանշում է հյուսիսային հունական բարբառներին: մակեդոնյան լեզվի մոտիկ լինելը: Միաժամանակ մենք հայտնաբերում ենք մակեդոնական բառերում թրակիական, իլլիրիական ու բալկանյան ծագում ունեցող այլ արմատներ: Հավանաբար, սկզբում բազմացեղ բնակչությունը հետզհետե կազմավորվել էր որպես մի ազգություն (մ. թ. ա. V դ. նախաշեմին): Դիցաբանական տվյալները վկայում են հույների հետ մակեդոնացիների, հատկապես երկրի հարավային մասի բնակիչների հնագույն կապերի մասին: Թեսալիային սահմանամերձ ամենաբարձր մակեդոնական գագաթը՝ (2918 մ) Օլիմպոս լեռը, ինչպես հայտնի է, հին հույների պատկերացմամբ, նրբանց գլխավոր աստվածների բնակության վայրն էր: Տարբեր ժամանակներում Բալկանյան թերակղզու հարավը գաղթած հունական ցեղերի մի մասը, հավանաբար, որոշ չափով ազգակից էր Մակեդոնիան բնակեցնող ցեղերին, քանի որ նրանց առանձին արիստոկրատական տոհմերն ունեին միևնույն առասպելական նախնինները: Նման կապ մասնավորապես դիտվում է Թեսալիայի ու Պելոպոնեսի հետ: Հույների աչքում մակեդոնացիները, եթե դատենք պահպանված աղբյուրներից, թեև չէին համարվում հելլեններ, սակայն նաև լրիվ չափով այլալեզու բարբարոսներ չէին:

Մակեդոնացիներն իրենց սոցիալական զարգացման մեջ խիստ հետ էին մնացել Հին Հունաստանի առաջավոր շրջանների բնակիչ-

ներից: Սակայն նրանք շատ ընդհանուր բան ունեին Քեսալիայի, էտոլիայի, հին հունական աշխարհի գյուղատնտեսական այլ մարզերի առավել թույլ զարգացած հունական ցեղերի հետ:

ՄԱԿԵՂՈՆԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉԵՎ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՐԻՇԵԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՂԱՍ ՊԱՅՔԱՐԻ ՍԿԻՋՐԸ

Միջցեղային պայքարի ընթացքում, որը սրվեց սոցիալական շերտավորման, նախնադարյան-համայնական կարգերի քայքայման հետևանքով, տեղի էր ունենում Մակեդոնիայի միավորումը մեկ արիստոկրատական տոհմի իշխանության ներքո: Այդ տոհմի ներկայացուցիչները՝ թագավորները ունեին բավական սահմանափակ իշխանություն: Զգալի չափով մեծ էր իր անկախությունը պահպանած ու լեռնային շրջաններում իշխող տեղական տոհմային արիստոկրատիայի դերը: Մ. թ. ա. VI դ. երկրորդ կեսին մակեդոնական թագավորների իշխանությունը տարածվեց երկրի մեծ մասի վրա: Մ. թ. ա. VI դ. վերջին, պարսից տերության ամենաբարձր հզորության շրջանում Մակեդոնիան որոշ ժամանակ ստիպված էր ճանաչել իր կախվածությունը պարսից թագավորից ու անգամ օգտագործեց այդ վիճակը իր տիրույթների տարածքը Քրակիայի ու Հունաստանի հյուսիսային շրջանների հաշվին կտրացնելու համար: Քսերքսեսի արշավանքի ժամանակ Մակեդոնիան համաձայնվեց, որպեսզի Հունաստան ուղևորվող պարսկական ջոկատներն անցնեն իր տարածքով ու անգամ պարտավորվեց մակեդոնական ռազմիկների զորախմբեր տրամադրել այդ ջոկատները համալրելու համար: Միաժամանակ, ինչպես այդ մասին հաղորդում է Հերոդոտոսը, մակեդոնական թագավոր Ալեքսանդր I-ը, ըստ հնարավորին, ծառայություն էր մատուցում հուններին այն պայքարում, որ վերջիններս մղում էին պարսիկների դեմ:

Առաջին Աթենական ծովային միության կազմավորումից հետո ուժեղանում են կապերը Մակեդոնիայի ու Աթենքի միջև, սակայն էգեյան ծովափի հյուսիսային մասում ամրանալ ձգտող Աթենքի շահերը բախվեցին Մակեդոնիայի շահերի հետ, քանի որ վերջինս Բալկանյան թերակղզու խորքում գտնվող շրջաններից ըսկրսեց հետզհետե շարժվել դեպի ծով: Մակեդոնիան, լինելով տրեսեսապես հետամնաց երկիր, գերադասեց մի որոշ ժամանակով մտնել I Աթենական ծովային միության կազմի մեջ: Աթենքը գրեթե չէր Մակեդոնիայում հրա արտահանման հիմնական ապրանքը՝ անտառանյութ նավաշինության համար: Պելոպոնեսյան պատերազմի նախօրյակին և դրա ընթացքում Մակեդոնիան վարում էր երկակի քաղաքականություն, մերթ օգնելով աթենացիներին, մերթ էլ

նպաստելով աթենացիների պարտութեանը Քրակիայում ու նրանց կողմից Ամփիպոլիսի կորստին:

Մ. թ. ա. V դ. երկրորդ կեսին ու հատկապես դարի վերջին Մակեդոնիան արդեն նշանակալից, բայց թույլ կենտրոնացված պետություն էր: Մակեդոնիայի կառավարող շրջաններն արտաքուստ յուրացնում էին հելլենական մշակույթը: Հունական բանաստեղծները, փիլիսոփաները, գիտնականները այցելում էին Մակեդոնիայի լեոնային մայրաքաղաք Հզին, երկար ժամանակ ապրում էին այնտեղ թագավորի արքունիքում: Աթենքի պարտությունը սիկիլիական արշավանքի ժամանակ ու I Աթենական ծովային միութեան քայքայումը առաջացրեցին Մակեդոնիայի արտաքին քաղաքականության ակտիվացում: Այդ ժամանակ նրա թագավոր Արքելաոսը (մ. թ. ա. 419—399 թթ.) մայրաքաղաքը փոխադրեց Պելլա, որը տեղավորված էր երկրի հարթավայրաչին մասում: Նրա օրոք ավելի մեծ շահերով, քան առաջ, կառուցվում էին ճանապարհներ. դա հեշտացնում էր ներքին կապերի հաստատումը Մակեդոնիայի լեոնային շրջանների միջև ու նպաստում երկրի կենտրոնացմանը: Արքելաոսը նաև հզորացրեց բանակը: Մակեդոնական ազդեցությունն աճեց Քաղկիդիկեում ու Թեսալիայում: Արքելաոսի հրավերով Պելլա էին գալիս հելլենական մշակույթի նշանավոր գործիչները: Թուլացած Աթենքը ձգտում էր ձեռք բերել նրա բարեկամությունը:

Արքելաոսի մահից հետո Մակեդոնիան, հակառակ երկպառակություններին, փորձում էր, ինչպես առաջ, ուժեղացնել իր ազդեցությունը Հզեյան ծովի հյուսիսարևմտյան ծովափում ու Թեսալիայում: Մակեդոնիայի սոցիալ-տնտեսական զարգացումը մ. թ. ա. IV դ. անխուսափելիորեն դրդում էր նրան ավելի սերտ կապեր հաստատել Հունաստանի հետ և ուժեղացնել պայքարը Հզեյան ծովափին տիրելու համար: Զևավորվող մակեդոնական ստրկատիրական պետությանը նպաստում էր այն հանգամանքը, որ առաջավոր հունական պոլիսներում հաստատված զարգացած ստրկատիրական հասարակարգն այդ ժամանակ ճգնաժամ էր ապրում: Մ. թ. ա. IV դ. առաջին տասնամյակներին, երկպառակությունների ընթացքում ու հարևանների հետ մղած պատերազմների ժամանակ մակեդոնական կառավարիչները փոփոխակիորեն օգտագործում էին իրար դեմ պայքարող Սպարտայի, Աթենքի ու Թեբեի հետ կնքած դաշինքները: Աթենքը պատերազմելով Մակեդոնիային կաշկանդող հունական քաղկիդական քաղաքների միութեան դեմ, որը գլխավորում էր Օլյոնթոս քաղաքը, փորձեց կրկին ձեռք բերել Ամփիպոլիսը, բայց այդ փորձը մատնվեց անհաջողության: Դա խիստ վատացրեց մակեդոնյան-աթենական հարաբերությունները:

Մակեդոնիան որպես բավականաչափ կենտրոնացված ու հզոր պետություն ձևավորվեց թագավոր Փիլիպոս II-ի կառավարման ժամանակ (մ. թ. ա. 359—336 թթ.): Փիլիպոսը պատանեկության տարիներին իբրև պատանդ երեք տարի ապրեց Թեբեում, որն այդ շրջանում Հունաստանի փաստական հեգեմոնն էր ու ծանոթացավ հունական պոլիսների ներքին վիճակին ու նրանց միջև եղած փոխհարաբերություններին: Փիլիպոսը վերադառնալով հայրենիք, սկզբում եղավ մանկահասակ թագավորի խնամակալ, իսկ հետո հասավ նրան, որ բանակը թագավոր հռչակեց իրեն: Բանակի դերը գահի ժառանգման հարցում Մակեդոնիայում ընդհանրապես մեծ էր: Դա խոր հնություն (ռազմական դեմոկրատիայի) վերապրուկներից մեկն էր, որը կայուն ձևով պահպանվում էր երկրի քաղաքական կյանքում: Հրամանատարական պաշտոնները բանակում գրավում էին արիստոկրատիայի ներկայացուցիչները: Արիստոկրատիայի կազմից հավաքագրվում էին նաև հեծելազորի ջոկատները, իսկ հեծելազորը մակեդոնական բանակում ուներ մի շարք արտոնություններ: Մակեդոնական արիստոկրատիայի ներկայացուցիչներից կազմված խորհուրդը համարյա միշտ գործում էր թագավորին կից:

Փիլիպոսը զուգակցելով մակեդոնական ու հունական փորձը, ռազմական վերակառուցում անցկացրեց, որը բացառիկ նշանակություն ունեցավ Արևելյան Միջերկրականի հին պետությունների պատմության մեջ: Այդ վերակառուցման գաղափարը՝ պայմաններ ստեղծել հիմնական հարվածի ուղղությամբ ուժերը համակենտրոնացնելու և հետևակի ու հեծելազորի տարբեր տեսակների միջև համագործակցությունն ապահովելու համար, Փիլիպոսը փոխ էր առել թեբեական նշանավոր զորավար ու քաղաքական գործիչ Եպամենոնդասից: Փիլիպոսը կատարելագործեց զորքի այն տեսակները, որոնք պատմականորեն կազմավորվել էին Մակեդոնիայում: Փիլիպոսի կողմից վերակառուցված բանակում զլխավոր հարվածող ուժը դարձավ ծանր հետևակի զորախումբը՝ մակեդոնական փաղանգը: Այն կազմված էր մի քանի հազար ծանրազեն մարտիկներից, որոնք խիտ դասավորված էին 8-ից—24 շարք ունեցող ուղղանկյունու ձևով: Փաղանգի տարածումը ճակատով մեկ կրճատվում էր, եթե աճում էր շարքերի քանակը խորությամբ: Փաղանգի մարտիկները զինված էին սրերով ու մեծ ուղղանկյուն վահաններով: Ռազմիկների առաջին վեց շարքերը, բացի այդ, զինված էին նիզակ-սարիսաներով: Առաջին շարքի մարտիկների սարիսանները մոտ 2 մ սովորական երկարության նիզակներ էին, իսկ հաջորդ շարքերի զինվորների նիզակները աստիճանաբար երկարում էին, հասնելով, ինչպես ենթադրում են, 6 մետրի: Շնորհիվ այն բանի, որ նիզակներն



ունեին տարբեր երկարութիւն, առաջին մի քանի շարքերի մարտիկները կարող էին գործել միաժամանակ, նիզակները անցկացնելով առջևում կանգնած զինվորների շարքերի միջով: Խիտ դասավորված փաղանգի ճակատը դառնում էր մեծ քանակութեամբ նիզակներով փշավորված ու խոշոր վահաններով պաշտպանված ահարկու հարվածող զորախումբ: Այդ դարաշրջանի ուղիղ մակերեսի մակարդակի պայմաններում փաղանգի ճակատի ճեղքումը համարյա անհնարին էր, բայց քանի որ հետևից ընթացող մարտիկների նիզակներն անցնում էին առաջին շարքերում քայլող ուղիղ մակերեսների արանքով, ապա փաղանգի համար մարտի ժամանակ շրջվելը շատ դժվար էր: Եթե թշնամին գրոհում էր փաղանգը կողքերից կամ անցնում էր նրա թիկունքը, ապա վերջինս հեշտ խոցելի էր դառնում: Փիլիպոսը կանխատեսեց այդ ու պաշտպանեց փաղանգը թևերից և թիկունքից հեծելազորով ու թեթև հետևակով: Զորքի այդ բոլոր երեք տեսակները համագործակցում էին իրար հետ մարտի ժամանակ: Մակեդոնական բանակում հեծելազորն ու հետևակը ստորաբաժանվում էին ծանրի, միջինի ու թեթևի. զորքի յուրաքանչյուր տեսակն անցնում էր լուրջ շարային ու մարտական նախապատրաստութիւն: Բանակի վերակառուցման հետևանքով թուլացավ մակեդոնական արիստոկրատիայի դերը. առաջ այդ արիստոկրատիան ծառայում էր մակեդոնական բանակի գլխավոր ուժը կազմող ծանր հեծելազորում: Այժմ հիմնական ուժ դարձավ ծանրազեն հետևակայինների փաղանգը, որը հավաքագրվում էր մակեդոնյան գյուղացիներից: Բանակի կոմպլեկտավորման կարգն ըստ տերիտորիալ սկզբունքի իր հերթին ևս ուժեղացնում էր կենտրոնական իշխանութիւնը: Մակեդոնական արիստոկրատներն իրենց մարզերի կիսաանկախ կառավարիչներից վերածվում էին թագավորի դրանիկների, նրա հետալրոսների (բարեկամների), որոնք մշտապես ապրում էին արքունիքում ու կազմում էին ծանր հեծելազորի արտոնյալ ջոկատը:

Մակեդոնացիներն սկսեցին լայնորեն կիրառել պաշարողական տեխնիկա: Հիմնական մակեդոնական բանակից բացի, Փիլիպոսը ստեղծեց նաև վարձկանների օժանդակ ջոկատներ ու դրեց ուղիղ շարային նավատորմի հիմքերը:

Արդեն իր գահակալութեան առաջին տարիներին Փիլիպոսը հաջող պատերազմ մղեց Մակեդոնիայի հյուսիսարևմտյան ու հյուսիսարևելյան հարևանների հետ, իսկ հետո նվաճեց Ամփիպոլիսը, որը դեռ կարևոր նավահանգիստ էր էգեյան ծովի հյուսիսային մասում, ինչպես և Պանգոն լեռնային շրջանը՝ ոսկու հանքերով հանդերձ: Հետո նա Թրակիայի հաշվին ընդարձակեց էգեյան ծովափի նվաճված

մասը: Մակեդոնիայի սոցիալ-տնտեսական ու քաղաքական աճը, նրա ծով դուրս գալն ու էգեյան ծովի ավազանում ձեռնարկված առևտրական և ռազմական միջոցառումների մեջ ավելի մեծ շահերով ներգրավվելը առաջ բերեցին դրամական շրջանառության ծավալի աճի պահանջ ու մեծապես ավելացրին Փիլիպոսի կառավարության ծախսերը: Այդ կապակցությամբ նա մեծացրեց պանգեյան ոսկու հանույթն ու ավելացրեց ոսկյա դրամի հատումը: Եվ քանի որ բոլոր հունական պետությունները բաց էին թողնում արծաթյա դրամ, իսկ էգեյան ծովի ավազանում շրջանառության մեջ գրտնրվող գրեթե ողջ ոսկյա դրամը պարսկական էր, ապա ոսկյա դրամի թողարկումը Փիլիպոսի կողմից քայքայում էր այդ շրջանում Պարսկաստանի տնտեսական դիրքերը: Բացի այդ, Փիլիպոսի ոսկյա դրամը թուլացնում էր ամենատարածված հունական արծաթյա դրամական համակարգերի, մասնավորապես աթենականի նշանակությունը: Այն բանի հետևանքով, որ մակեդոնական տնտեսությունն այնուամենայնիվ դեռ բավականաչափ հետամնաց էր, ոսկյա դրամի ամբողջ զանգվածը մտնում էր հենց իսկ միջազգային շրջանառության մեջ, և միայն դրա փոքր մասն էր մնում Մակեդոնիայում: Դա վնաս չէր հասցնում Մակեդոնիային: Փիլիպոսը նաև հատում էր սովորական լիարժեք արծաթյա դրամ, որը կարելի էր փոխանակել ոսկյա դրամի հետ:

Հունական ստրկատիրական պոլիսների ճգնաժամային վիճակը պայմաններ էր ստեղծում նրանց՝ ավելի հետամնաց, մոտավորապես արխաիկ շրջանի սոցիալ-տնտեսական մակարդակին հասած, բայց ռազմական տեսակետից ավելի հզոր Մակեդոնիային ենթարկվելու համար: Տնտեսապես զարգացած ու խիտ բնակեցված հունական պոլիսները դարձան Փիլիպոսի ու նրա հետևում կանգնած մակեդոնական ավազանու իղձերի օբյեկտ: Երիտասարդ ստրկատիրական մակեդոնական տերության հարձակողական պատերազմներն ուղեկցվում էին կողոպուտով ու նվաճած բնակչությանը ստրկության վաճառելով: Փիլիպոսը՝ այդ բազմակողմանի ռազմական ու քաղաքական գործիչը, պատերազմական գործողություններ վարելու հետ մեկտեղ դիմում էր զանազան դիվանագիտական խարդավանքների ու կաշառքների: Իր ազդեցիվ քաղաքականությունն անցկացնելիս նա միջոցների մեջ խտրություն չէր դնում:

ՀՈՒՆԱՍՏԱՆԸ Մ. Ք. Ա. IV Դ. ԿԵՍԻՆ:  
ՍՐԱՍՋԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Փիլիպոս II-ի հաջողությունները Թրակիայում մեծ շահով բացատրվում էին նրանով, որ այդ ժամանակ տրոհվեց II Աթենական

ծովային միութիւնը, և դա կաշկանդեց Աթենքի ուժերը: Այն բանից հետո, երբ Աթենքը կորցրեց իր գերիշխանութիւնը, Քեբեկն կրկին փորձեց ընդարձակել իր ազդեցութիւնը Միջին Հունաստանում: Այդ նպատակով նա օգտագործեց Դելփյան ամփիկտիոնիան, որտեղ Քեբեկն դեռ ուներ մեծ ազդեցութիւն: Քեբեկացիները մեղադրեցին հարևան Փոկիսին այն բանում, որ վերջինս հերկել է Դելփյան տաճարին պատկանող սրբազան դաշտը: Փոկիսցիներին առաջարկվեց դաշտը վերադարձնել Դելփիքին ու վճարել մեծ տուգանք: Միաժամանակ Քեբեկն փորձեց նաև մաքրել Սպարտայի հետ ունեցած իր հին հաշիվները, որոշում կայացնելով, որի համաձայն Սպարտան տուգանվում էր Քեբեկի միջնաբերդը՝ Կաղմեան անցյալում ժամանակավորապես զավթելու համար: Քեբեկի այդ գործողութիւններին հետևանքը եղավ տևական երկպառակտիչ պատերազմի ծագումը Միջին Հունաստանում: Փոկիսցիներն, ի վիճակի չլինելով վճարել տուգանքը, բռնագրավեցին դելփյան տաճարի գանձերը, վարձեցին Հին Հունաստանի շափանիշներով շատ մեծ զորք ու հանդես եկան Քեբեկի դեմ:

Փոկիսցիներին գլխավորում էին երկու արիստոկրատներ՝ Փիլոմելոսն ու Օնոմարքոսը, որոնց ղեկավարութեամբ էլ փաստորեն կատարվեց Դելփիքի կողոպտումը: Ապոլլոն աստծու Դելփյան տաճարի գանձերի բռնագրավման փաստը ոչ միայն դարձավ երկպառակտիչ կատաղի պատերազմի անմիջական առիթը, պատերազմ, որն էլ ավելի թուլացրեց Հունաստանը, այլև դա նաև հունական պոլիսների կրոնական գաղափարախոսութեան ճգնաժամի նշան էր: Համահունկն ավելորդ սրբավայրը ոչ միայն թալանվեց փոկիսյան արիստոկրատների կողմից, որոնք չվախեցան Ապոլլոն աստծու պատժից, այլև ավելին. այդ միջոցներից, որոնք հնրի տեսակետից ձեռք էին բերվել սրբապղծութեան միջոցով, չվախեցան ոռճիկ ստանալ Փիլոմելոսի ու Օնոմարքոսի կողմից ամբողջ Հունաստանում հավաքագրված տասնյակ հազարավոր շարքային վարձկան զինվորները: Սրբապղծութիւն գործածներին դիվանագիտական օժանդակութիւն ցույց տվեցին Սպարտան ու Աթենքը, որոնք երկյուղ էին կրում Քեբեկի հզորացումից: Հետագայում նրանք բացահայտորեն մասնակցեցին պատերազմին՝ օգնելով «սրբութիւնները թալանող» Օնոմարքոսին:

Քեբեկն սրբազան պատերազմ հայտարարեց Փոկիսին: Քեբեկի դաշնակիցներն էին թեսալացիները: Պատերազմը փոփոխական հաջողութեամբ շարունակվեց շուրջ տաս տարի: Այդ ընթացքում թեսալացիները դիմեցին Փիլիպոս Մակեդոնացուն, նրանից օգնութիւն խնդրելով, սակայն վերջինս ևս ջախջախվեց փոկիսցիների

կողմից: Մ. թ. ա. 352 թ. Փիլիպոսն արդեն սեփական նախաձեռնությամբ մեծ ուժերով միջամտեց Սրբազան պատերազմին ընդդեմ «սրբապիղծ» փոկիսցիների ու լիակատար հաղթանակ տարավ: Կրոնական պարտքը կատարելու՝ սրբապիղծներին պատժելու անհրաժեշտությամբ քողարկելով իր մտադրությունները, Փիլիպոսը դատաստան ձեռնարկեց պարտվածների նկատմամբ ու վերջնականապես հաստատվեց Քեսալիայում: Հռչակավոր թեսալական հեծելազորը մտավ մակեդոնական բանակի կազմի մեջ:

Փիլիպոսն օգտագործելով այն հանգամանքը, որ հունական պետությունների գլխավոր ուշադրությունը կլանված էր Սրբազան պատերազմով, նվաճեց էգեյան ծովի հյուսիսային ափերը, կործանեց հունական քաղաքների ուժեղ միությունը Քաղկիդիկեում: Այդ միությունը գլխավորում էր խոշոր առևտրական Օլյունթոս քաղաքը, որը լայն կապեր ուներ էգեյան ծովի ափերին ու կղզիներում գտնվող պոլիսների հետ: Օլյունթոսը նա հիմնովին քանդեց, իսկ բնակչությանը մասամբ ոչնչացրեց, մասամբ էլ արտաքսեց կամ ստրկացրեց: Նա ավերեց ամբողջ երկիրը: Այսպիսով, վերջին հզոր հակառակորդը, որը խանգարում էր Մակեդոնիայի ամրապնդմանը էգեյան ծովի հյուսիսային մասում, վերացվեց: Օլյունթոսում ընթացող սուր գույքային շերտավորումը (մի բան, որ հաստատվում է XX դ. կատարված հնագիտական պեղումներով) թուլացրեց քաղաքն ու հեշտացրեց Փիլիպոսի հաղթանակը:

Աթենքը օգնություն խոստացավ Օլյունթոսին, սակայն զբաղված լինելով «Սրբազան պատերազմով» ու ներքին քաղաքական պայքարի հետևանքով քայքայում ապրելով, չափազանց ուշ որոշեց ուղարկել անհրաժեշտ ուժեր: «Սրբազան պատերազմի» վերջում Աթենքը կորցրեց համարյա իր բոլոր հենակետերը էգեյան ծովի հյուսիսային մասում ու անգամ անցյալում իր հետ սերտորեն կապված Եվբեա կղզին, որը ևս կախման մեջ ընկավ Մակեդոնիայից:

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ՈՒ ՀԱՎԱՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱԹԵՆՔՈՒՄ: ՓԻՆՈՒՐԱՏԵՍՅԱՆ  
ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Մ. թ. ա. IV դարում Հունաստանը ցնցող սոցիալական սուր հակասությունները հատուկ ուժով դրսևորվեցին Աթենքում: Աթենական շատ չքավորներ առաջվա պես ապրում էին աթենական ստրկատիրական դեմոկրատիայի լայն ճյուղավորված պետական համակարգում՝ զանազան հասարակական պարտականությունների կատարման համար գանձարանից տրվող ռոճիկի հաշվին, կամ էլ

մեկնում էին օտարության իբրև ուղղակի-վարձկաններ: II Աթենական ժողային միության տրոհումն ու աթենական նախկին կլերուքիաներից արտաքսվող գյուղացի կլերուքների վերադարձը էլ ավելի սրեցին սոցիալական հակասությունները Աթենքում: Աթենական կառավարությունը փորձում էր հայթայթել ու շունետր քաղաքացիների միջև բաժանել պետական միջոցներ: Այդ ժամանակի համար բընորոշ էր Աթենքի հայտնի քաղաքական գործիչներից մեկի՝ հարուստ քաղաքացիների թվին պատկանող Եվբուլոսի գործունեությունը: Նա կազմակերպեց ու մի քանի տարի գլխավորեց հատուկ գանձարանը, որի միջոցները գոյանում էին պետական անհրաժեշտ սովորական ծախսումներից հետո մնացած գումարներից: Այդ գանձարանի բոլոր միջոցները տրվում էին քաղաքացիներին որպես թեորիկոնի դրամ ներկայացումներ հաճախելու համար: Այդ նպաստները մեծացնելու նպատակով Եվբուլոսը գանձարանի հսկողությունը հանձնեց Աթենքի ֆինանսական գերատեսչությունների մեծ մասը: Եվբուլոսի ֆինանսական քաղաքականությունը հարուստներին ազատում էր հասարակական կարիքների (լիտուրգիաների) համար կատարվող վճարումների հիմնական մասից, նրա նպատակն էր նաև նվազեցնել գույքի բռնագրավում նախատեսող դատավճիռների քանակն ու կաշառել դեմոսին: Սակայն Փիլիպոս Մակեդոնացու դեմ մղած պատերազմի ժամանակ բոլոր կարիքների համար կատարվող ծախսումների սահմանափակումը, բացի թեորիկոնից, թուլացնում էր բանակը:

Եվբուլոսը պրոմակեդոնական կողմնորոշում ունեցող հարուստ աթենական ստրկատերերի պարագլուխներից մեկն էր: Այդ մարդիկ մ. թ. ա. IV դ. կեսին կազմեցին տիրող ազդեցիկ խմբավորում: Ժամանակակից պատմական գիտություն մեջ այն պայմանականորեն անվանում են «մակեդոնական կուսակցություն»: Այդ կուսակցությունը հարեց ու նրա գաղափարական ղեկավարը դարձավ ճարտասան Իսոկրատեսը (տե՛ս էջ 406): Մտավորապես այդ շրջանից սկսած, Իսոկրատեսն իր ճառերում կոչ էր անում Փիլիպոսին շունաստանում հաստատել ուղղակական գերիշխանություն ու իր հրամանատարության ներքո միավորելով մակեդոնահունական զորքը, նվաճողական արշավանք ձեռնարկել դեպի Պարսկաստան՝ այնտեղ հողեր ու դրանք մշակելու համար ստրուկներ ձեռք բերելու նպատակով: Իսոկրատեսի խոսքերով, անհրաժեշտ էր «բարբարոսներին վերածել հելոտների»: «Մակեդոնական կուսակցության» Աթենքում պատկանում էին նաև հոետոր էսքինեսն ու քաղաքական գործիչ և ստրատեգոս Փոկիոնը: «Մակեդոնական կուսակցությունը» արտահայտում էր առավել հարուստ աթենական ստրկատերեր-

րի, մեծ հողակտորների, արհեստանոցների, տրապեզանների սեփականատերերի շահերը, սեփականատերեր, որոնք զբաղվում էին, ըստ հնության շահանիշների, խոշոր ծովային առևտրով: Բնակչության այդ ազդեցիկ, իշխող խավը դժվարություններ էր կրում իր ձեռնարկատիրական գործունեության մեջ՝ անթանակապես պետական տարածքը սահմանափակ լինելու ու ատտիկական շուկայի փոքր տարողության հետևանքով: Բացի այդ, նա որոշ շահով կախված էր ժողովրդական ժողովի տրամադրություններից, քանի որ վերջինս ժամանակ առ ժամանակ որոշումներ էր կայացնում առանձին հարուստ մարդկանց տուգանելու ու նրանց գույքը բռնագրավելու մասին: Զբաղորների ու ստրուկների զգալի կուտակումը պահանջում էր ուժեղացնել բանակն ու ոստիկանությունը՝ ստրկատերերի կառավարող խմբի հարստություններն ու արտոնյալ դիրքի անձեռնմխելիությունն ապահովելու համար:

«Մակեդոնական կուսակցությունը» գաղտնի ու բացահայտ հարաբերությունների մեջ մտավ Փիլիպոսի հետ և փաստորեն ձրգտում էր Աթենքը ենթարկել Մակեդոնիային՝ Փիլիպոսի ռազմական դիկտատուրան հաստատելու դիմաց: Հարուստ ստրկատերերը սպասում էին, որ այդ դիկտատուրան կամրապնդի իրենց սոցիալական ու տնտեսական դիրքը, կապահովի իրենց գույքը աղքատացած դեմոսի ոտնձգություններից, կտա իրենց Փոքր Ասիայում, նրա նվաճումից հետո, լայնատարած տարածքներ ու ստրուկներ և ավելի լայն արտաքին շուկաներ այն տարածքներում, որոնք ենթակա էին Փիլիպոսին: Հարուստների պրոմակեդոնական քաղաքական խմբավորումներ ծագեցին նաև Միջին Հունաստանի մի շարք այլ պոլիսներում ու Պելոպոնեսում: Փիլիպոսը քաղաքական ու ֆինանսական օգնություն էր ցույց տալիս իր կողմնակիցներին Հունաստանում:

Սակայն Աթենքում ու հունական մյուս պոլիսներում ձևավորվեցին նաև ուժեղ հակամակեդոնական խմբավորումներ: Աթենքում հակամակեդոնական կուսակցությունը զրկավորեց բոցաշունչ հայրենասեր, Հին Հունաստանի խոշորագույն հոետոր Դեմոսթենեսը (մ. թ. ա. 384—332թթ.): Հակամակեդոնական կուսակցության պարագլուխներն էին հոետորներ ու քաղաքական գործիչներ Հիպերիդասն ու Լիկուրգոսը: Հակամակեդոնական խմբավորումների մեջ էին մտնում բնակչության տարբեր խավերի ներկայացուցիչները: Մեզ ավելի լավ է հայտնի Աթենքի հակամակեդոնական կուսակցության սոցիալական կազմն ու գործունեությունը: Մակեդոնիայի ուժեղացումից երկյուղ էր կրում ստրկատերերի մի մասը, հատկապես մեծածախ առևտուր անող վաճառականները, որոնք առևտրական կապեր ունեին Հյուսիսային մերձսևծովյան երկրամասի քա-

դաքնների հետ: Առևտուրը այդ շրջանների հետ, հատկապես սևծովյան հացի ներմուծումը, առաջվա պես վիթխարի կենսական նշանակություն ունեն Ատտիկայի համար: Մերձսևծովյան երկրամասի հետ կատարվող առևտրում շահագրգռված էին հացի վաճառքով զբաղվող բազմաթիվ միջին ու մանր առևտրականներ, ռազմական ու առևտրական նավերի նավաստիներ: Հաց մատակարարելու գործում հնարավոր խափանումները կարող էին Ատտիկան մատնել սովի: Աթենական ժողովրդական ժողովի մի շարք որոշումները, որոնք պահպանվել են մեզ հասած արձանագրություններում, և հացի առևտրի վերաբերյալ հոետորների ճառերում եղած հիշատակումները վկայում են հացի պրոբլեմի կարևոր ու հրատապ լինելու մասին: Էգեյան ծովի Նյուսիսային հատվածում ու դեպի Սև ծովը տանող նեղուցներում աթենական տիրույթները վերացրած Փիլիպոսի քաղաքականությունը սպառնում էր Աթենքի՝ Հյուսիսային մերձսևծովյան երկրամասի հետ ունեցած կապերին: Բացի այդ, Փիլիպոսի միապետական գերիշխանության հաստատումը սպառնում էր դեմոկրատիայի սահմանափակումով Աթենքում, քաղաքացիների վարձատրվող հասարակական պարտականությունների կրճատումով կամ անգամ դրանց լրիվ վերացումով, այնինչ այդ պարտականությունների պահպանման մեջ գրխավորապես շահագրգռված էր աղքատացած դեմոսը: Փիլիպոսի դեմ հանդես էին գալիս նաև զենքի արհեստանոցների հարուստ տերերն ու մանր վարպետ-զինագործները: Նրանք վախենում էին, որ կղաղարեն անընդհատ տեղի ունեցող պատերազմներն, ու հետևապես կրնկնի զենքի պահանջարկը: Հակամակեդոնական կուսակցության տարասեռ կազմը խանգարում էր նրա պայքարին Մակեդոնիայի կողմնակիցների դեմ, որոնք իրենց սոցիալական դրուձյամբ ավելի կուռ էին, սակայն մակեդոնական կուսակցության դավաճանական գծի համեմատությամբ առաջինի գործունեության հայրենասիրական բնույթը նպաստում էր Փիլիպոսի հակառակորդների հեղինակության աճին անգամ Ատտիկայի սահմաններից դուրս: Այդ հանգամանքն ընդգծում էր Դեմոսթենեսը մակեդոնական թագավորի դեմ ուղղված իր ճառերում՝ «փիլիպիկաներում»: Դեմոսթենեսի քաղաքական իդեալն էր այն ժամանակաշրջանի աթենական դեմոկրատիան, երբ ուժեղ Աթենքը գլխավորում էր մի շարք դեմոկրատական պետությունների: Դրանում էր Դեմոսթենեսի, որպես քաղաքական գործչի, դատապարտվածությունն ու նրա քաղաքական դիրքի թուլությունը: Դեմոսթենեսն ու նրա համախոհները փորձում էին բուժել իրենց ժամանակակից ստրկատիրական հասարակարգի հիվանդություններն անցյալին վերադառնալու միջոցով: Բայց այդ վերադարձը անհնար էր:

Աթենական դեմոկրատիան անցյալում արդարացնում էր իրեն՝ իբրև դեռ ոչ բավականաչափ շերտավորված տիրող դասակարգի իշխանության մարմին, բայց մ. թ. ա. IV դ. այն ճգնաժամ էր ապրում և ի վիճակի չէր հաջողութամբ պաշտպանել ստրկատիրական սեփականությունը նրա դեմ քայքայված զանգվածների գործած հարձակումներից:

Մակեդոնական կուսակցությունը բացահայտորեն կոչ էր անում նվաճողական պատերազմներ մղել Պարսկաստանի դեմ, որը Անտալկիդասյան հաշտության շնորհիվ ամրապնդել էր իր դիրքերը էգեյան ծովում ու միշտ միջամտում էր Հունաստանում տեղի ունեցող քաղաքական պայքարին: Ահա թե ինչու պարսկական կառավարությունը սկսեց նյութական օգնություն ցույց տալ Դեմոսթենեսին ու նրա կողմնակիցներին, որոնք հույներին կոչ էին անում օգտագործել հզոր աթենական ժովային նավատորմիցը Մակեդոնիայի դեմ համատեղ պատերազմ վարելու համար: Հունաստանում գոյություն ունեցող երկու քաղաքական խմբավորումների պարագրուխները փոխադարձաբար մեղադրում էին միմյանց հայրենիքին դավաճանելու և այդ հաշվով դրամներ ստանալու մեջ, մեկը՝ Փիլիպոս Մակեդոնացուց, մյուսը՝ պարսկական թագավորից: Աթենքի համար անհաջող Սրբազան պատերազմի ժամանակ մակեդոնական ու հակամակեդոնական կուսակցությունների փոխհարաբերությունները արտակարգ սրվեցին, սակայն նրանք ստիպված էին ձեռնարկել պատերազմին վերջ դնելու համատեղ փորձ, քանի որ այդ պատերազմը Դեմոսթենեսի ծագած տեղական ընդհարումից վերածվեց Փիլիպոսի դեմ պատերազմի: Մ. թ. ա. 346 թ. ժողովրդական ժողովը եմբուլոսի պնդումով վճռեց սկսել հաշտության բանակցություններ: Փիլիպոսը նույնպես պատրաստ էր վարելու նման բանակցություններ իր նվաճումներին իրավական ուժ տալու համար: Դրան համաձայն էր նաև Դեմոսթենեսը, որը հաշվի առավ Աթենքի ծանր վիճակը: Աթենացիների դեսպանությունը մեկնեց Պելլա: Նրա կազմում էին էսքինեսն ու Դեմոսթենեսը: Ժողովրդական ժողովի որոշմամբ դեսպանությունը գլխավորեց ժողովի բարտուղար Փիլոկրատեսը: Փիլիպոսը, ըստ էության, աթենացիներին ներկայացրեց վերջնագիր, առաջարկելով նրանց ճանաչել այն բոլոր տարածական ու քաղաքական փոփոխությունները, որոնք տեղի էին ունեցել Սրբազան պատերազմի ժամանակ: Աթենքը էգեյան ծովի հյուսիսային մասում իր ձեռքում պահպանեց միայն Թրակիական Քերսոնեսոսը: Մ. թ. ա. 346 թ. կնքված հաշտությունն աթենական դեսպանության ղեկավարի անունով կոչվեց Փիլոկրատեսյան: Աթենքը ստիպված էր նաև դաշինք կնքել Փիլիպոսի հետ:



Փիլիպոսը, շնայած այն բանին, որ Աթենքի հետ կնքված էր հաշտություն, շարունակեց ռազմական գործողությունները դաշնակիցների կողմից լքված Փոկկիսի դեմ և դրանով օգնեց Թեբեին: Նա անցավ Թերմոպիլեով, ընդունեց փոկիսցիների կապիտուլյացիան, ավերեց նրանց ամբողջ մարզն ու պարտադրեց նրանց Դելփյան տաճարին վճարել տարեկան 60 տաղանդ՝ անցյալում նրա գանձերը բռնագրավելու դիմաց: Փոկիսցիները վտարվեցին Դելփյան ամփիկտիոնայի կազմից, իսկ նրանց տեղը գրավեց Մակեդոնիան: Այսպիսով, Փիլիպոսը տիրեց Թերմոպիլյան կիրճին ու իրավաբանորեն ձևակերպեց իր թափանցումը Միջին Հունաստան:

#### ՄԱԿԵՌՈՆԱԿԱՆ ԳԵՐԻՇԵԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

Հետագա տարիներին Փիլիպոսը սահմանափակեց իր տիրույթները Թրակիայում և Բյուզանդիոնը գրավելու անհաջող փորձեր կատարեց: Թեև նեղուցներում տեղի ունեցած պատերազմն ավարտվեց մակեդոնական նավատորմի դի պարտությունով, բայց ընդհանուր իրադրությունը բարենպաստ էր Փիլիպոսի համար: Օգտագործելով դիվանագիտական միջոցներ, նա սկսեց ազդեցություն գործել Պելոպոնեսի պետությունների վրա: Մակեդոնիայի ազդեցիվ քաղաքականությունն աշխուժացրեց Դեմոսթենեսի հակամակեդոնական գործունեությունը. նա նորից հանդես էր գալիս բոցաշունչ փիլիպիկաներով ու կոչ էր անում պայքարել մակեդոնական «բարբարոսի» դեմ: Դեմոսթենեսը սկսեց եռանդուն միջոցներ ձեռնարկել Աթենքի գլխավորությունով հակամակեդոնական ռազմական դաշինք կազմակերպելու ուղղությամբ: Դա նրան հաջողվեց հակամակեդոնական տրամադրությունների աճի շնորհիվ: Կազմավորվեց միություն, որի մեջ մտան Աթենքը, Կորնթոսը, Արգոսը և ուրիշ պոլիսներ: Դեմոսթենեսը ժողովրդական ժողովում անցկացրեց մի որոշում, որի համաձայն թույլատրվում էր ռազմական նպատակներով օգտագործել Թեոբիկոնի գանձարանը: Դրա հետ մեկտեղ, ռազմածովային նավատորմը հանդերձավորելու համար նախկինում ամենահարուստ քաղաքացիներից գանձվող հատուկ գումարների հավաքումն այժմ տարածվեց բնակչության ավելի լայն զանգվածների վրա:

Երկու կուսակցությունները ակտիվ դեր խաղացին նաև հետագա անցքերում: Դելփյան ամփիկտիոնիայի հերթական հավաքում Աթենքի ներկայացուցիչն էր էսքինեսը: Նա առաջարկեց սրբազան պատերազմ սկսել Դելփիքի հարևան Ամփիսա քաղաքի դեմ, որովհետև վերջինիս բնակիչները հերկել էին սրբազան դաշտի մի մասը: Վճռվեց Փիլիպոսին հանձնարարել վարել այդ պատերազմը: Վեր-

ջինս իր զորքերը արագորեն մտցրեց Միջին Հունաստան: Ստեղծվեց անմիջական ռազմական վտանգ Թերեի ու Աթենքի համար: Այդ պայմաններում Թերեն համաձայնվեց դաշնակցել Աթենքի հետ Փիլիպոսի բանակին դիմակայելու համար: Ավելի քան 30 հազար մարտիկներ ունեցող դաշնակից զորքը, կազմված աթենացիներից, թերեացիներից, կորնթացիներից, մեգարացիներից և ուրիշներից, հանդես եկավ Փոկլիսում դիրքավորված ու մոտավորապես նույնպիսի քանակությու՜ն ունեցող մակեդոնական բանակի դեմ: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ մ. թ. ա. 338 թ. օգոստոսի վերջին Քերոնեայի՝ Բեովտիայի մի փոքր բնակավայրի մոտ: Հուլյները, թեև մարտում ցուցաբերեցին արտակարգ համառություն, կրեցին ծանր պարտություն ավելի լավ կազմակերպված մակեդոնական բանակից, որը գլխավորում էին Փիլիպոսն ու նրա պատանի որդին՝ Ալեքսանդրը:

Հակամակեդոնական միությունը կազմալուծվեց: Փիլիպոսը արձակեց բեովտական միությունը, իսկ թերեական ակրոպոլիսում՝ Կադմեայում տեղավորեց մակեդոնական կայազոր: Այսպիսով Թերեն կախման մեջ ընկավ Մակեդոնիայից:

Աթենացիները Քերոնեայի մոտ կրած պարտությունից հետո, սպասելով Փիլիպոսի հետագա հարձակմանը, մոբիլիզացրեցին բոլոր մարտունակ քաղաքացիներին, խոստացան քաղաքացիություն տալ մետոյկներին ու ստրուկներին և նախապատրաստվեցին համառ պայքարի: Քաղաքացիները նվիրաբերում էին միջոցներ պաշտպանության գործի համար: Դեմոսթենեսին ուղարկեցին Աթենքի հետ դեռևս դաշնակցություն պահպանած պոլիսները՝ նրանցից հարկ հավաքելու:

Փիլիպոսը հաշվի առնելով այն, որ Աթենքը ավելի նշանակալից ուժեր ուներ, քան մյուս պոլիսները, հատկապես նկատի ունենալով նրա հեղինակությունը հունական աշխարհում, առաջարկեց աթենացիներին հաշտության համեմատաբար թեթև պայմաններ: Աթենքը պահպանում էր իր անկախությունն ու իրեն պատկանող կրղզիների մի մասը, բայց զիջում էր Փիլիպոսին դեռ իր ձեռքում գրտնրվող հենակետերը Քաղկիդիկեում, ինչպես նաև Թրակիական Քերսոնեսոսը: Այսպիսով, Աթենքը լիովին կորցրեց իր հսկողությունը Սև ծովը տանող նեղուցների վրա, որոնցով Հյուսիսային Մերձսևծովյան երկրամասից հաց էր բերվում Աթենք: Այդ կորուստը կարծես փոխհատուցելու նպատակով Փիլիպոսը համաձայնվեց ճանաչել փրբև Աթենքի տիրույթ Ատտիկայի ու Բեովտիայի միջև գրտնրվող սահմանամերձ Օրոպոս քաղաքը, որը մինչ այդ մտնում էր Բեովտական միության կազմի մեջ: Դա Փիլիպոսի դիվանագիտա-

կան քայլն էր: Օրոպոսի գիշումը Աթենքին սրում էր նրա հարաբերությունները Բեռլտիայի հետ ու դժվարացնում էր ապագայում Աթենքի նոր միավորումը Թեբեի հետ Մակեդոնիայի դեմ պատերազմելու համար: Բացի այդ, այժմ Աթենքը ծովային ուղիները պետք է պաշտպաներ Մակեդոնիայի հետ միասին, այսինքն մակեդոնական նավատորմի զորքերն զառնում էր էգեյան ծովի տիրակալը: Փիլիպոսը առանց փրկագնի ազատ արձակեց գերի աթենացիներին ու հողին հանձնելու համար Աթենք ուղարկեց Քերոնեայի ճակատամարտում սպանված մարտիկների դիակները: Աթենացիները ստիպված էին համաձայնվել այս պայմանների հետ ու դադարեցնել պատերազմը: Մակեդոնական կուսակցութունը ողջունեց այդ համաձայնությունն, ու անգամ Դեմոսթենեսը, հասկանալով հետագա դիմադրության անիմաստ լինելը, չէր առարկում հաշտության պայմանագրի դեմ:

Փիլիպոսը հաշտություն կնքելով, իր զորքերի գլուխն անցած մտավ Պելոպոնես: Հաշվի առնելով առանձին պոլիսների միջև եղած թշնամությունը, նա իր ուժերը միավորեց Արգոսի, Մեսսենիայի ու այլ պետությունների ջոկատների հետ նրանց ավանդական թշնամի՝ թուլացած Սպարտայի դեմ պայքարելու նպատակով: Սպարտան զրկվեց իր բոլոր արտաքին տիրույթներից, ու անգամ նրա տարածքը սահմանափակվեց Լակոնյայի հովտով:

Փիլիպոսը, փաստորեն նվաճելով հունական տարածքի մեծ մասը և Հունաստանում հաստատելով Մակեդոնիայի գերիշխանությունը, մ. թ. ա. 337 թ. Կորնթոսում գումարեց բոլոր հունական պետությունների ներկայացուցիչներից կազմված համաժողով, որին հրաժարվեց մասնակցել միայն Սպարտան: Փիլիպոսը հավատարիմ մնալով առանց անհրաժեշտության իրադրությունը շարելու իր դիվանագիտական սկզբունքին, շպնդեց, որպեսզի արդեն խիստ թուլացած Սպարտական պետության պատվիրակները ներկա գտնվեն համաժողովում:

Կորնթոսի ժողովում ստեղծվեց հելլենական միություն մակեդոնական թափավորի գերիշխանության ներքո: Փիլիպոսը, այսպիսով, հաշվի առնելով հունական քաղաքական ավանդույթները, իրավական առումով ձևակերպեց իր հաղթանակները հելլենական պոլիսների նկատմամբ: Համահունական միության հիմնումը պետք է վերջ դներ երկպառակտիչ պատերազմներին: Հռչակվեց ընդհանուր խաղաղություն. պոլիսներին արգելվում էր միջամտել միմյանց ներքին գործերին ու փոխել այն քաղաքական կարգը, որ գոյություն ուներ նրանցից յուրաքանչյուրի մոտ համաժողովի ժամանակ: Երաշխավորվեց ծովագնացության ազատությունը: Միա-

ժամանակ արգելվեցին հողի վերաբաժանումներն ու գույքի բռնագրավումը, այսինքն ամրապնդվում էր մասնավոր սեփականությունը: Արգելվեցին պարտքերի վճարեկումները: Վերջապես խըստորեն արգելվեց ազատել ստրուկներին քաղաքական հեղաշրջումներում օգտագործելը: Այդ արգելքը հատկապես հստակորեն ընդգծում էր ստրկատիրական կարգերն ամրապնդելու նպատակները: Համահունական արտաքին քաղաքականություն վարելու գործը համաժողովը հանձնարարեց Փիլիպոսին: Համահելլենական միության կառավարումը հանձնվեց բոլոր հունական պետությունների ներկայացուցիչներից կազմված ժողովին: Ժողովը պետք է գտնվեր Կորնթոսում: Ամբողջ Հունաստանի ու Մակեդոնիայի անունից հայտարարվեց սրբազան պատերազմ Պարսկաստանին՝ ի հատուցումն մ. թ. ա. V դ. պարսիկների ձեռնարկած ագրեսիայի ու հույների տառապանքների:

Քանի որ կազմավորվեց համահունական միություն Մակեդոնիայի գլխավորությամբ, ապա հույներին արգելվեց դառնալ վարձկաններ այն բանակներում, որոնք կարող էին օգտագործվել Հունաստանի կամ Մակեդոնիայի դեմ: Այդ որոշումը նպատակ ուներ թուլացնել պարսկական բանակը, որտեղ ծառայում էին շատ հույն վարձկաններ: Փիլիպոսը առաջարկեց պարսկական կառավարությանը ազատել Փոքր Ասիայի հունական քաղաքները: Պարսկաստանը հրաժարվեց: Դրանից հետո տաս հազարանոց մակեդոնական բանակը փորձառու մակեդոնական զորավարներ Պարմենիոնի ու Ատտալոսի հրամանատարությամբ մ. թ. ա. 336 թ. անցավ Հելլեսպոնտոսն ու համակրանքով ընդունվելով հույների կողմից, սկսեց սահմանափակ ուղիղ գործողություններ Փոքր Ասիայում: Սակայն պատերազմը շուտով դադարեց:

Մ. թ. ա. 336 թ. Մակեդոնիայի հին լեոնային մայրաքաղաք էգիում Փիլիպոսը սպանվեց թիկնապահներից մեկի կողմից իր աղջկա հարսանիքի ժամանակ: Փիլիպոսի սպանությունը պատճառները շքաքահայտվեցին: Ըստ պաշտոնական տեսակետի, սպանության մեջ խառն էր պարսկական կառավարությունը: Սակայն մյուս կողմից, Փիլիպոսի ներքին քաղաքականությունից դժգոհ էին շատ մակեդոնական արիստոկրատներ, որոնց նա զրկել էր իրական իշխանությունից ու դարձրել պալատականներ: Նրան սպանողը ետիտասարդ արիստոկրատ էր: Դժվար է որոշել Փիլիպոսի սպանության գլխավոր պատճառը: Հավանաբար այստեղ միահյուսվեցին արտաքին ու ներքին քաղաքական պատճառները: Մակեդոնական արիստոկրատիան այդ ժամանակ արդեն միասնական չէր թե՛ իր կացությունում և թե՛ իր շահերի տեսակետից: Հյուսիսային Մակե-

դոնիայի անմատչելի լեռնային շրջաններից սերված Կարիստոկրատներին խումբը, որը թշնամաբար էր տրամադրված Փիլիպոսի քաղաքականության միահեծան միտումների հանդեպ, կազմում էր փոքրամասնություն: Ավագանու կամայականության դեմ հանդես եկող մակեդոնական գյուղացիությունը պաշտպանում էր Փիլիպոսի կողմից անցկացվող երկրի կենտրոնացման քաղաքականությունը: Պալատականների՝ հետալրնների մեծ մասը օժանդակեց գահաժառանգ Ալեքսանդրին (մ. թ. ա. 336—323 թթ.), որը և հռչակվեց թագավոր: Նա այդ ժամանակ 20 տարեկան էր: Ալեքսանդրը շարունակելով իր հոր քաղաքականությունը, խստորեն պատժեց սկսվող հուզումները: Նրա քաղաքական հսկառակորդներն ու անգամ վտանգավոր համարվող ազգականները բռնվեցին ու ենթարկվեցին մահապատժի:

Փիլիպոսի մահվան լուրն ալեկոծեց Հունաստանը: Աթենքում վերակենդանացավ հակամակեդոնական կուսակցությունը Դեմոսթենեսի գլխավորությամբ. վերջինս շնորհակալական զոհ մատուցեց աստվածներին: Ալեքսանդրի երիտասարդ լինելը հույների մոտ ծնեց մակեդոնական գերիշխանությունից ազատագրվելու հույսեր: Սակայն Ալեքսանդրը առաջնորդելով իր զորքերին, անցավ Թեսալիան, Թերմոպիլեն ու ներխուժեց Բեոլիտիա: Աթենքը ոչ միայն շրջկրսեց պատերազմական գործողություններ, այլև անգամ Ալեքսանդրի մոտ ուղարկեց դեսպանություն իր շնորհավորանքը հայտնելու համար: Կորնթոսում կրկին հաստատվեց, որ համահելլենական միությունը պահպանվում է՝ այժմ Ալեքսանդրի գլխավորությամբ:

Ալեքսանդրը, վերականգնելով իր դիրքերը Հունաստանում, ճնշեց ապստամբությունները Իլլիրիայում ու Թրակիայում: Երբ Ալեքսանդրը գտնվում էր հյուսիսում, Հունաստանում լուր տարածվեց այն մասին, որ նա սպանվել է ճակատամարտերից մեկում: Պարսկական կառավարությունը ծավալեց տենդագին դիվանագիտական գործունեություն, միաժամանակ զգալի գումարներ տալով հակամակեդոնական խմբավորումներին: Պարսիկները կոչ էին անում հունական պոլիսներին ապստամբել Մակեդոնիայի դեմ: Սկզբում ապստամբեց Թեբեն, որը ոչ հեռավոր անցյալում հետևում էր մակեդոնական քաղաքականությանը: Աթենքը բանակ էր պատրաստում Թեբեին օգնելու համար:

Սակայն այդ ժամանակ Ալեքսանդրն արդեն ջախջախել էր թրակիացիներին ու իլլիրիացիներին: Նա արտակարգ արագությամբ իր զորքը փոխադրեց Թեբեի շրջակայքը: Քաղաքը վերցվեց ու ավերվեց մինչև հիմքը, իսկ բնակիչներին ոչնչացրեցին, վաճառեցին ստրկության կամ վերաբնակեցրեցին: Ահաբեկված Աթենքը

ոչ միայն թերեացիներին շտրամադրեց խոստացած օգնութիւնը, այլև անգամ կրկին շնորհավորեց Ալեքսանդրին ու ստացավ ներում: Աթենքի նկատմամբ Ալեքսանդրը գործում էր՝ էլնելով նույն այն նկատառումներից, ինչ և Փիլիպոսը: Խաղաղեցնելով Հունաստանը, Ալեքսանդրը անմիջապես սկսեց նախապատրաստել մեծ նվաճողական արշավանք Պարսկական տերութիւնի դեմ:

Իրավիճակը Հունաստանում անորոշ էր: Մի կողմից հույները դեմ չէին օգտակելու Մերձավոր Արևելքի հարստութիւններից, մյուս կողմից նրանք համոզված չէին, որ Ալեքսանդրն ունի այդ արշավանքի համար անհրաժեշտ ուժեր, և նրանց մեծ մասը ճնշվում էր Եակեդոնիայի փաստական ռազմական դիկտատուրայից:

## Գլուխ 16. ԳԱՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀՈՒՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Մ. թ. ա. V դԱՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ:

ԳՅՈՒՂԱՏՆՏՆՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱՐՇԵՍԸ

Մ. թ. ա. V դարը հունական պոլիսի ամենամեծ վերելքի ու հելլենական մշակույթի բարձրագույն ծաղկման շրջանն էր:

Գյուղատնտեսութիւնն ու արհեստագործական արտադրութիւնը մ. թ. ա. V դ. նախորդ շրջանի համեմատութիւնով քիչ էին փոխվել, որովհետև ստրկական աշխատանքի ավելի լայն զարգացումը կաշկանդում էր արտադրութիւնի տեխնիկական կատարելագործումները: Հետագա զարգացում ապրեցին գլխավորապես գեղարվեստական գործունեութիւնը հետ կապված արհեստի ճյուղերը, որտեղ գերազանցապես կիրառվում էր ազատ աշխատանքը: Բարձր մակարդակի հասավ քարի, մասնավորապես մարմարյա սալերի մշակումը: Այդ սալերից կառուցվում էին առավել նշանավոր տաճարների պատերը: Չոր շարվածքը (այսինքն առանց շինարարական շաղախի) պահանջում էր հատկապես խնամքով աշխատանք: Զգալիորեն կատարելագործվեցին բրոնզե արձանների ձուլումն ու մարմարյա քանդակների կերտումը: Մ. թ. ա. V դարին բնորոշ էր քրիսոնելիֆանտինյան (ոսկի-փղոսկրյա) տեխնիկան: Արձաններն ունեին փայտե բարդ հիմնակմախք, մերկ մարմինն արտահայտող մասերը երեսպատվում էին փղոսկրյա սալիկներով, որոնք շատ խիտ ձևով հարմարադրվում էին մեկը մյուսին: Մազերն ու հագուստը կոում էին ոսկյա թիթեղներից, աչքերը պատրաստվում էին թանկարժեք քարերից: Նման արձանները երբեմն ունեին տաս և ավելի մետր բարձրութիւն:

Մ. թ. ա. V դ. զգալի դեր էր խաղում գեղարվեստական արհեստը՝ արձանիկների պատրաստումը բրոնզից ու տեռակոտից, շքեղ

զարդարված մետաղյա կահ-կարասու, փորագրած քարերի պատ-  
րաստումը և այլն:

#### ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Վեքաշինվող ու նոր ստեղծվող քաղաքներն իրենց բնակելի թա-  
ղամասերի ճիշտ հատակագծումով տարբերվում էին հին, տարե-  
րախորեն աճած, քառասյին տեղադրում ունեցող քաղաքներից: Թա-  
ղամասերն իրարից բաժանվում էին ուղղահայաց, ուղիղ անկյան  
տակ հասվող փողոցներով: Այդպիսին էր պարսկական ավերումից  
վերականգնված Միլետոսի ու այն ժամանակ հիմնված Օլյոնթոսի  
հատակագիծը:

Փողոցները լայն չէին (4—7 մետր): Սալարկը սովորաբար բա-  
ցակայում էր: Որոշ քաղաքներում կառուցվում էին ջրմուղ (Օլյոն-  
թոս) կամ կոյուղի (Ակրագաս): Թաղամասերի հատակագծերն ու-  
նեին շատ թե քիչ ձգված ուղղանկյունիների ձև:

Մ. թ. ա. V դ. հասարակական շենքերի մեջ առաջվա պես գըլ-  
խավոր տեղը գրավում էր տաճարը: Դարի առաջին կեսին ստեղծ-  
վեցին դորիական ճարտարապետության ամենանշանավոր գործե-  
րը՝ վեհ, հանդիսավոր մոնումենտալ տաճարներ Պոսիդոնիայում  
(հոմեռական անունը՝ Պեստոս)՝ Հարավային Իտալիայում ու Ջևսի  
տաճարը՝ Օլիմպիայում: Այդ տաճարները պատկանում էին դորիա-  
կան պերիպտերոսի կանոնական տեսակին. դրանք ունեին վեց  
սյուն ճակատային կողմում, 13—14 սյուն՝ երկայնակի կողմերում,  
երեք մասերից բաղկացած ներքին սրահ, այդ մասերն էին՝ գալիթ-  
պրոնաոսը, հիմնական դահլիճ-նաոսն ու հետին սենյակ-օպիսթո-  
դոմը, որը օգտագործվում էր որպես տաճարական իրերի պահես-  
տարան:

Ջևսի տաճարը, որը Օլիմպիայում մ. թ. ա. 468—456 թթ. կա-  
ռուցեց տեղական ճարտարապետ Լիբոնը, հելլենական ամենափա-  
ռաբանված սրբարանն էր: Շենքը կառուցված էր կարծր կրաքա-  
րից, ծածկված էր ձեփով, որոշ չափով նկարագարդված: Տաճարը  
ծածկող կղմինդրն ու դեկորատիվ (գեղագարդ) քանդակները կա-  
տարված էին մարմարից: Տաճարում գտնվում էր գահի վրա նստած  
Ջևսի վիթխարի արձանը, որը ոսկուց ու փղոսկրից կերտել էր աս-  
տիկական քանդակագործ Ֆիդիասը:

Շինարարական գործունեությունը Հունաստանում մ. թ. ա. V դ.  
ամենամեծ չափերի հասավ Աթենքում: Դաշնակիցների կողմից ա-  
թենացիներին վճարվող ֆորոսի հսկայական գումարները, առևտ-  
րական մաքսերը և այլն հնարավորություն տվեցին կառուցել հիա-

նալի շենքեր, դրանք զարդարել ականավոր վարպետների կողմից կերտված քանդակներով ու նկարներով: Շինարարական գործունեությանը գլխավորապես կենտրոնացավ աթենական Ակրոպոլիսում: Պարսիկների կողմից մ. թ. ա. 480 թ. ավերված Ակրոպոլիսը կրկին կառուցվեց մ. թ. ա. V դ. ընթացքում: Կիմոնի օրոք կառուցվեցին հենապատերը, որոնց շնորհիվ Ակրոպոլիսի տարածությունը զգալիորեն ընդարձակվեց: Ընդ որում, որպես թմբի խճաքար օգտագործվեցին նաև պարսիկների քանդած շենքերի ու արձանների բեկորները:

Մ. թ. ա. V դ. երկրորդ կեսին կառուցվեց աթենական Ակրոպոլիսի համալիրը՝ ճարտարապետության պատմության մեջ ամենախոշոր ստեղծագործություններից մեկը: Ճանապարհը դեպի Ակրոպոլիս ընթանում էր բլրի արևմտյան, ավելի շատ թեքություն ունեցող կողմով: Մուտքը՝ Պրոպիլեոնը, շքադարպասներն էին, որոնք կառուցել էր ճարտարապետ Մենսիկլեսը մ. թ. ա. 437—432 թթ.: Մարմարից կառուցված այդ շինությունում կիրառվեցին երկու տեսակի օրդերներ: Դրսի սյունաշարերը կերտված էին վեհ դորիական օրդերով, իսկ շենքի ներսում կանգնած էին ավելի թեթև ու նրբագեղ հոնիական սյունները: Պրոպիլեոնի շենքը համաչափ չէր՝ նրա հյուսիսային թևը հարավայինից մեծ էր, իսկ վերջինս հավասարակշռված էր Նիկե Ապտերոսի (Անթև Հաղթանակի) փոքրիկ տաճարով, որը կանգնած էր Ակրոպոլիսի պատերի ելուստի վրա: Նիկեի տաճարը կառուցվել էր ճարտարապետ Կալլիկրատեսի նախագծով, որը հաստատվել էր աթենական ժողովրդական ժողովրդի կողմից մ. թ. ա. 449 թ.: Հոնիական օրդերով կառուցված այդ շենքը ճակատային կողմերում ունի շորսական սյուններ: Մ. թ. ա. II դ. հունական ճանապարհորդ Պալսանիասը հաղորդում է, որ այդ տաճարում գտնվող Նիկեի պաշտամունքային արձանը աստվածուհուն պատկերում էր ոչ թե ըստ սովորականի՝ թևավոր, այլ անթև, որպեսզի նա չկարողանա թռչել, հեռանալ Ակրոպոլիսից: Դա աթենացիների պաշտամունքներում պրիմիտիվ մոգական հնարանքների պահպանման (անգամ իրենց պետության ծաղկման շրջանում) օրինակ է:

Ակրոպոլիսի գլխավոր տաճարը Պարթենոնն էր. այն նվիրված էր Աթենաս Կուլյոն (Պարթենոսին) (ավարտվել է մ. թ. ա. 438 թ.): Տաճարը կառուցել են ճարտարապետներ Իկտինոսն ու Կալլիկրատեսը: Դա դորիական օրդերի վիթխարի պերիպտերոս էր, արտաքինից հարուստ զարդարված բազմաթիվ մարմարյա քանդակներով: Պարթենոնի վերնաճակատներում կանգնած էին քանդակախմբեր,



որոնք արևելյան վերնաճակատում պատկերում էին իմաստության աստվածուհի Աթենասի ծնունդը գերագույն աստված Զևսի զլխից, իսկ արևմտյան վերնաճակատում՝ Աթենասի վեճը Պոսիդոնի հետ Ատտիկան տիրելու համար, որն ավարտվեց աստվածուհու հաղթանակով: Այդ առասպելը Պարթենոնի կառուցման ժամանակ ձեռք բերեց սուր քաղաքական նշանակություն, քանի որ Աթենասը համարվում էր ստրկատիրական դեմոկրատիայի հովանավորուհի, իսկ ձիուն յտեղծած Պոսիդոն աստվածը հեծյալների՝ արիստոկրատների խնամակալն էր:

Տաճարի արտաքին սյունաշարի հետևում, ներքին սրահի պատերի վերին մասում գտնվում էր բարձրաքանդակ ծոփորը (Ֆրիզը), որը պատկերում էր մի հանդիսավոր թափոր մեծ Համաաթենականքի՝ աթենական տոնի ժամանակ. այդ թափորի զգալի մասը կազմում էին ատտիկական հեծյալները: Այդ տոնակատարությանը, աթենացիներից բացի, պարտավոր էին մասնակցել նաև դաշնակիցները, որոնք բերում էին կենդանիներ զոհաբերությունների համար, ինչպես և քաղաքացիներին ծառայող մետոյկներ: Տաճարի ներսում գտնվում էր Աթենաս-Պարթենոսի վիթխարի արձանը, որը ոսկուց ու փղոսկրից կերտել էր Ֆիդիասը: Այդ արձանը շի պահպանվել: Նրա մասին մենք կարող ենք դատել բազմաթիվ պատճեններից ու նկարագրություններից:

Պարթենոնի դիմաց կանգնած էր իր շափերով նրան զդալիորեն զիջող, բարդ հատակագիծ ունեցող, հոնիական օրդերի մի տաճար՝ Երեքթեոնը: Այն կառուցվել էր մ. թ. ա. V դ. վերջում: Այդ տաճարում պատերի հարթ մակերեսը զուգակցվում էր շատ թե քիչ խորը սյունաշարեր ունեցող սյունասրահի հետ, իսկ սյունասրահներից մեկում սյուները փոխարինված էին ախավեղազեսը (անտաբլեմենտը) պահող աղջիկների Ֆիգուրներով («կարիատիդների պորտիկ»): Ի տարբերություն Պարթենոնի, որը նախատեսված էր Աթենասի՝ ատտիկական ծովային «միության» խնամակալուհու պաշտամունքի համար, Երեքթեոնը տեղական աթենական պաշտամունքների, գլխավորապես Պոսիդոն-Երեքթևսի ու Աթենաս Պոլիասի կենտրոնն էր:

Մ. թ. ա. V դ. աթենական Ակրոպոլիսի ճարտարապետական համալիրում արտահայտվեց դորիական ու հոնիական ճարտարապետությանը բնորոշ տարրերի զուգակցման միջոցով համահելլենական ոճ ստեղծելու ձգտումը: Դա հանդես եկավ ոչ միայն այդ օրդերները կիրառելու, այլև հելլենական ճարտարապետության այդ գլխավոր ճյուղավորումներին հատուկ ոճական առանձնահատկությունները զուգակցելու մեջ:

Ակրոպոլիսի գեղարվեստական համալիրի մեջ մտնում էին մեծ քանակությամբ տարբեր քանդակներ, որոնց վրա իշխում էր Աթենաս Պրոմաքոսի (առաջամարտիկի) հսկայական բրոնզե արձանը, որը քանդակել էր Ֆիդիասը:

Մ. թ. ա. VII—VI դդ. արվեստում գերիշխում էին առանձին դպրոցներին կամ ուղղութիւններին հատուկ գծերը: Մ. թ. ա. V դ., հավասարապես նաև հետագա դարերի, հելլենական արվեստի, հատկապես քանդակագործութեան ու նկարչութեան մեջ պարզորեն երևան եկան առանձին վարպետների անհատական առանձնահատկութիւնները:

Մ. թ. ա. V դ. հունական քանդակագործութեան հիմնական թեմաները նույնն էին, ինչ առաջ՝ պատկերվում էին աստվածներ ու հերոսներ՝ պոլիսի պաշտպաններ, «հիասքանչ ու խիզախ» քաղաքացիներ ու հաղթող ատլետներ: Սակայն այդ կերպարներում շկասառած քարացում, հաղթահարվում է արխաիկ քանդակների սխեմատիզմը: Մարդկային կերպարներն ավելի մոտ են բնութայանն ու, դրա հետ մեկտեղ, նրանց մեջ ներգրվում է ավելի հարուստ գաղափարական բովանդակություն:

Մ. թ. ա. V դ. առաջին տասնամյակներում լաջնորեն հայտնի դարձան էգինյան վարպետները. նրանք հռչակվեցին բրոնզից ձուլած իրենց քանդակներով. ստեղծեցին Աթենաս Ափայայի տաճարի վերնաճակատները էգինա կղզում: Հույների պայքարը տրոյացիների դեմ պատկերող այդ քանդակներում ձեռնարկվել էր արխաիկ կերպարների անշարժությունը հաղթահարելու, կենդանի շարժումը հաղորդելու փորձ, որը, ճիշտ է, միշտ չէ, որ հաջող էր: Դա ավելի շատ հաջողվեց քանդակագործ Միրոն Ելեվթերեցուն (Միջին Հունաստան), որը իր «Սկավառակ նետող»-ում ներկայացրեց ատլետի մարմինը բարդ դիրքում՝ սկավառակ նետելու պահին:

Դասական քանդակագործութեան ստեղծումը կապված էր Պոլիկլիտոսի՝ մ. թ. ա. V դ. կեսերի ու երկրորդ հատվածի պելոպոնեսցի վարպետի անվան հետ: Պոլիկլիտոսը գերազանցապես կերտում էր հաղթող ատլետների արձաններ. նա ձգտում էր ստեղծել ատլետ-քաղաքացու բնորոշ կերպարը՝ մի կողմ նետելով այն ամենը, ինչ մասնակի ու պատահական էր, ինչպես, օրինակ, փոքր անհամաշարժությունը մարմնի կազմվածքում: Իր խնդիրը Պոլիկլիտոսը պատկերացնում էր ուղիղ կանոն, այսինքն՝ որոշակի մասթեմատիկական հարաբերությունների ստեղծում, այդ հարաբերությունների հիման վրա պետք է կառուցվեր մարդկային մարմինը: Պոլիկլիտոսի ստեղծագործություններից հատկապես հայտնի են

Դորքուփորոսի նիզակ կրող հզոր ամրակազմ ատլետի ու Դիադոմենոսի՝ հաղթական վարսակալով իրեն պսակող բարեկազմ պատանու արձանները:

Երբ Եփեսոսը հայտարարեց մրցանակաբաշխություն ամազոնուհու արձան ստեղծելու համար, Պոլիկլիտոսը հաղթեց լավագույն հելլենական վարպետներին: Ատլետիկ մարմին ունեցող ամազոնուհուն նա պատկերեց վիրավոր վիճակում:

Մ. թ. ա. V դ. կեսերի ու երկրորդ հատվածի խոշորագույն ատտիկական քանդակագործն էր Ֆիդիասը՝ մի շարք վիթխարի պաշտամունքային արձանների հեղինակը. այդ արձանները հաճախ կերտվում էին ոսկուց ու փղոսկրից: Հատկապես մեծ հռչակ ձեռք բերեց Զևսի հսկայական արձանը Օլիմպիայում, որը հնում համարվում էր աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը: Դրա բարձրությունը պատվանդանի հետ միասին կազմում էր 14 մ: Այդ արձանը, ինչպես և մեծ հունական վարպետների գործերի մեծ մասը, մեզ չի հասել, և մենք կարող ենք դատել նրա մասին միայն հին հեղինակների նկարագրություններից ու դրամների վրա եղած պատկերներից: Զևսը ներկայացված էր շքեղորեն զարդարված գահի վրա նստած: Հանդիսավոր վեհությունը, անմատչելիությունը, անջատումը շրջապատից կազմում էին այդ քանդակի, ինչպես նաև Ֆիդիասի մյուս քանդակների բնորոշ հատկությունը:

Մ. թ. ա. V դ. վերջում ու հատկապես հաջորդ դարում արդեն նկատվում էր աստվածների կերպարների մի փոքր աջ մեկնաբանություն. նրանց օժտում էին որոշ մարդկային փոփոխություններով:

Մ. թ. ա. V դարը հունական նկարչության մեջ մեծ բեկման ժամանակաշրջան էր: Այդ դարի սկզբին գեղանկարչության մեջ ու սկահակների վրա եղած նկարներում դեռ իշխում էին կարծես թե կաշկանդված, հարթ պատկերները: Արխայիկ արվեստի այդ ժառանգությունը հաղթահարեց մեծ նկարիչ Պոլիգնոտոսը՝ Թասոս կղզուց, որի գործունեությունը ծաղկում ապրեց մ. թ. ա. V դ. երկրորդ քառորդում: Պոլիգնոտոսը ստեղծում էր գերազանցապես դիցաբանական բովանդակություն ունեցող նկարներ: Այդպիսին էր, օրինակ, Տրոյայի անկումը պատկերող նկարը, որը գտնվում էր Դելփիքում: Պոլիգնոտոսի նկարները բազմաֆիգուր կոմպոզիցիաներ էին: Նա ձգտում էր հաղորդել պատկերվող հերոսների հոգեկան խառնվածքի հիմնական գծերը: Բնապատկերի տարրերը գրավում էին երկրորդական տեղ: Կերպարներն ունեին ծավալային բնույթ, նրանք տեղավորված էին մի քանի շարքերով, մեկը մյուսի վրա, այնպես որ վերևի շարքերում երբեմն պատկերվում էին հողի անհարթություններով մասնակիորեն քողարկված ֆիգուրաներ: Այսպիսով,

ստեղծվում էր տարածութեան խորութեան պատրանք: Պոլիգնոտոսի նկարները, ըստ երևույթին, բառի ժամանակակից լմաստով գեղանկարչական գործեր չէին, այլ ավելի շուտ՝ գունազարդած մոնումենտալ նկարներ, ուր ֆիգուրները մոդելավորվում էին գծերի միջոցով, իսկ այդ ֆիգուրների առանձին մասերը ներկվում էին միևնույն գույնով: Պոլիգնոտոսի ներկատախտակում գերիշխում էին տաք երանգները: Հին հեղինակների վկայութեամբ, նա նկարում էր սպիտակ, դեղին, կարմիր ու սև գույներով:

Մ. թ. ա. V դ. սկահականկարչութեան մեջ գերիշխում էին այսպես կոչված կարմրապատկեր նկարազարդումները: Ֆոնը (հետնախորքը) այս նկարներում լիովին ծածկվում էր փայլուն սև լաքով, իսկ ֆիգուրները չէին ներկվում. դրանք պահպանում էին կարմրավուն կավի գույները: Պոլիգնոտոսի ժամանակաշրջանում գործող որոշ սկահականկարիչներ կրեցին այդ վարպետի ազդեցությունն, ու նրանց նկարազարդումները որոշ չափով թույլ են տալիս դատելու թասոսյան նկարչի գործերի ոճի մասին:

Մ. թ. ա. V դ. վերջին է վերաբերում Ապոլլոդորոս Աթենացու գործունեությունը. նա սկսեց կիրառել լուսաստվերի էֆեկտները, դրանով իսկ սկիզբ դնելով գեղանկարչութեանը բառի ժամանակակից իմաստով:

#### ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Մ. թ. ա. V դարը առաջվա պես իրար հետ սերտորեն շաղկապված հունական գիտության ու փիլիսոփայութեան հետագա զարգացման ժամանակաշրջանն էր: Անտիկ հասարակութեան ու պետության հետագա զարգացման այդ փուլում, զարգացում, որը տեղի էր ունենում կատաղի դասակարգային ու քաղաքական պայքարի պայմաններում, առաջանում են նաև քաղաքական տեսություններ և հրապարակախոսություն:

Միլետոսյան ճարտարապետ ու քաղաքաշինարար Հիպպոդամոսը (մ. թ. ա. V դ.) զբաղվում էր օդերևութաբանությամբ ու դրա հետ մեկտեղ, Արիստոտելի խոսքերով, նա առաջին մասնավոր անձն էր, որը փորձեց գրել «լավագույն պետական կառուցվածքի» մասին: Պատմիչ Թուկիդիդեսը հաղորդում է տեղեկություններ այն ժամանակի խոշոր պետական գործիչների քաղաքական ծրագրերի մասին: Նա շարադրում է Պերիկլեսի ծրագիրը՝ մ. թ. ա. 430 թ. Աթենքում արտասանած դամբանական ճառի ձևով:

Պելոպոնեսյան պատերազմի առաջին տարիներին (մ. թ. ա. 431—425 թթ.) գրվեց «Աթենական պոլիտես» քննախոսությունը, որը հայտնի է Կեղծ Քսենոֆոնյան պոլիտես անունով: Այդ քննա-

խոսուելու հեղինակը, որը աթենական օլիգարխների կողմնակից ու ստրկատիրական դեմոկրատիայի թշնամի էր, տալիս է աթենական դեմոկրատիայի ոչ միայն թույլ, այլև ուժեղ կողմերի, մասնավորապես դրա հիմնարկների նպատակահարմարության, ու դրա հետ՝ Աթենքի ծովային հզորության աճի սերտ կապի նուրբ վերլուծությունը:

Մ. թ. ա. V դ. երկրորդ կեսին ու IV դ. առաջին կեսին է վերաբերում կոսյան բժիշկ, ռացիոնալիստական բժշկության հիմնադիր, մի շարք գիտական աշխատությունների հեղինակ Հիպոկրատեսի գործունեությունը: Հիպոկրատեսի բժշկական տեսությունն ու պրակտիկ գործունեությունը հիմնված էին մարդկային հիվանդությունները դիտելու վրա: Նա դրեց թերապիայի ու վիրաբուժության հիմքերը:

Մատերիալիզմը: Դեմոկրիտոս: Մ. թ. ա. V դ. մատերիալիստական փիլիսոփայությունը Հին Հունաստանում զարգանում էր բացառիկ արդյունավետությամբ: Այսպես, ստրկատիրական դեմոկրատիայի ներկայացուցիչ, փիլիսոփա Ծմպեդոկլեսը (մ. թ. ա. մոտ 483—423 թթ.)՝ սիկիլիական Ակրագաս քաղաքից, առաջադրեց դրույթ այն մասին, որ ամեն ինչ բաղկացած է որակապես տարբեր ու քանակապես բաժանվող տարրերից կամ, ինչպես նա դրանք անվանում էր՝ «արմատներից»: Այդ «արմատներն» են՝ կրակը, օդը, ջուրն ու հողը: Նրա ժամանակակից Անաքսագորաս կլազոմենցին (մ. թ. ա. 500—428 թթ.), որը երկար ժամանակ ապրում էր Աթենքում ու Պերիկլեսի բարեկամն էր, գտնում էր, որ բոլոր գոյություն ունեցող մարմինները բաղկացած են որակապես իրենց նրմանվող մանրագույն մասնիկներից: Ոսկորը կազմված է մանրագույն ոսկրիկներից, միսը՝ մսի մանրագույն մասնիկներից, օդը՝ օդի մանրագույն մասնիկներից և այլն:

Այսպիսով, Ծմպեդոկլեսը ու հատկապես Անաքսագորասը, խորացնելով մատերիայի զարգացումը ընդհանուր ձևով ընկալող իրենց նախորդների տարերային մատերիալիզմը, փորձեցին ուսումնասիրել մատերիայի կառուցվածքը: Նրանք բաղձակողմանիորեն զարգացած գիտնականներ էին՝ մաթեմատիկոսներ, աստղաբաշխներ, ֆիզիկոսներ: Ծմպեդոկլեսը նաև բժիշկ էր: Անաքսագորասը արևը համարում էր շիկացած, Պելոպոնեսից մի փոքր ավելի մեծություն ունեցող քար: Դա հին հույների կրոնական պատկերացումների դեմ ուղղված մարտահրավեր էր: Անաքսագորասին մեղադրեցին անաստվածության մեջ, նրան սպառնում էր մահապատիժը: Պերիկլեսին հաջողվեց կազմակերպել Անաքսագորասի փախուստը: Զատամյալ փիլիսոփան ապաստան գտավ երկրի սահմաններից

դուրս, որտեղ և շուտով մահացավ: Անաքսագորասի նկատմամբ ունեցած վերաբերմունքը ինչ-որ շափով օգնում էր ճշտել նաև աթենական ստրկատիրական դեմոկրատիայի առաջնորդ Պերիկլեսի՝ ժամանակի համար առաջավոր հայացքները:

Եմպեդոկլեսի ու Անաքսագորասի մեխանիստական մատերիալիզմը, որը զարգացավ նրանց նախորդների տարերային մատերիալիզմից, հետևողական չէր: Եմպեդոկլեսը բոլոր իրերի միացման ու տրոհման պատճառը համարում էր «սերը» և «թշնամությունը», իսկ Անաքսագորասը այդպիսին համարում էր «նուսը»՝ համաշխարհային բանականութունը: Սակայն Եմպեդոկլեսի ու Անաքսագորասի փիլիսոփայական կառուցվածքների անգամ այս ավելի թույլ մասում կարելի է նկատել առաջադիմութուն նախորդ ժամանակների տեսութունների համեմատությամբ: Նրանք փորձում էին պարզել շարժման առաջացման պատճառը, մինչդեռ նրանց նախորդները միայն հաստատում էին շարժման առկայությունը:

Դասական շրջանում մեխանիստական մատերիալիզմը իր բարձրագույն զարգացմանը հասավ Լևկիպոս (մ. թ. ա. մոտ 500—440 թթ.) Միլետոսցու ու Դեմոկրիտոս (մ. թ. ա. 460—370 թթ.) Աբդերացու ուսմունքի մեջ: Երկու փիլիսոփաներն էլ ստրկատիրական դեմոկրատիայի գաղափարախոսներ ու իրենց ժամանակի ազնվավոր գիտնականներ էին: Դեմոկրիտոսի գիտելիքները, հին գիտնականների կարծիքով, հանրագիտական էին: Ըստ Լևկիպոսի, ոչինչ տեղի չի ունենում առանց պատճառի, ու ամեն ինչ կյանքի է կոչվում անհրաժեշտության շնորհիվ:

Լևկիպոսը դրեց ատոմիստական տեսության հիմքերը. այդ տեսությունը հետագայում հաջողությամբ զարգացրեց Դեմոկրիտոսը: Ըստ այդ տեսության, ամեն ինչ բաղկացած է դատարկությունից ու շարժվող ատոմներից՝ անսահման փոքր, ձևով ու չափերով իրարից տարբերվող անբաժան նյութական մասնիկներից: Այսպիսով, Դեմոկրիտոսը գտնում էր, որ շարժումը մատերիայի նախատկգրանական, մշտական հատկությունն է: Ատոմները միօրինակ են ըստ նյութի ու ընդունակ չեն ենթարկվելու որակական փոփոխությունների: Իրերի ամեն մի առաջացում մինչ այդ անջատված ատոմների միացում է, ամեն մի անհետացում՝ մինչ այդ շաղկապված մասնիկների բաժանում: Իրերի տարբեր հատկությունները պայմանավորված են դրանք կազմող ատոմների դասավորությամբ, զուգակցումներով, ձևով ու մեծությամբ: Ատոմները սյանում են դատարկության մեջ, ընդ որում ավելի խոշորները իրենց շարժման ընթացքում դիպչում են մանրերին ու դրանց վեր են մղում: Այդ շարժումներից գոյանում է ատոմների պտույտը, դրա հետևանքով ծագում

են բազմաթիվ աշխարհներ, որոնցից մեկն է մեր աշխարհը, ու որակական առումով տարբեր բոլոր իրերը: Երկրագունդը, ըստ Դեմոկրիտոսի, օդում սլացող տափակ սկավառակ է, որի շուրջը պրտրտվում են լուսատուները: Օրգանական էակներն առաջացել են տիզմից: Ամբողջ օրգանական ու հոգեկան կյանքը Դեմոկրիտոսը բացատրում էր զուտ նյութական պրոցեսներով: Նա չէր ժխտում ոգու գոյությունը, բայց ոգին պատկերացնում էր իբրև ինչ-որ նյութական բան՝ կրակի պես. այն բաղկացած է բարակ, կլոթ ու տափակ ատոմներից, որոնք տարածվում են ամբողջ մարմնով մեկ, իսկ մարդու մահից հետո ցրվում են: Աստվածները ևս, ըստ Դեմոկրիտոսի, ինչպես և բոլոր իրերը, առաջանում են գերազանցապես կլոթ ատոմների մրրիկներից: Զևսը օդում պարունակվող նուրբ դյուրաշարժ հրե ատոմների միակցություն էր: Դեմոկրիտոսը հատուկ ուշադրություն նվիրեց բարոյագիտության հարցերին. նա ուսուցանում էր, որ մարդու վերջնական նպատակը պետք է լինի ոչ թե բավականությունը, այլ լավ տրամադրությունը: Նա առաջ քաշեց դուրեկանից միանգամայն տարբերվող միասնական բարիքի, բոլոր մարդկանց համար ընդհանուր բարիքի ու ընդհանուր ճշմարտության վերաբերյալ դրույթը: Ըստ նրա կարծիքի, բարությունը անարդարություն չգործելու ցանկություն է:

Լեկիպոսի ու Դեմոկրիտոսի ատոմիստական մատերիալիզմը հսկայական ու բարերար ազդեցություն գործեց հետագա ժամանակների գիտափիլիսոփայական մտքի վրա:

**Սոփեստներն ու Սոկրատեսը:** Ստրկատիրության արագ զարգացման ու ազատների սոցիալական շերտավորման հետևանքով հասարակական հարաբերությունների տեղի ունեցող բարդացումը ստիպեց մի շարք փիլիսոփաների, սկսած մ. թ. ա. V դ. կեսերից, ուշադրություն դարձնել մարդու գործոններին ու սոմանասիտության վրա: Մյուս կողմից, բազմապիսի գիտելիքների կուտակումը պահանջում էր համակարգել դրանք: Այդ հարցերով մոտիկից ըզբաղվեցին փիլիսոփա-սոփեստները (այդպես էին կոչվում վարձատրությունով ճարտասանություն ու տարբեր գիտություններ սովորեցնող թափառաշրջիկ ուսուցիչները): Նրանց հանդես գալը զգալի չափով կապված էր դեմոկրատական պոլիտեսների քաղաքական զարգացման հետ, այն բանի հետ, որ քաղաքացիները պետք է տիրապետեին հոետորական արվեստին: Դա անհրաժեշտ էր ինչպես ժողովրդական ժողովներում ելույթ ունեցող հոետորներին ու դեմագոգներին, այնպես և դատավարությունների մասնակիցներին: Սոփեստներին բնորոշ էր քննադատական մոտեցումը գոյություն ու-

նեցող ավանդույթներին: Պոլիսային գաղափարախոսության (քաղաքացիների ամբողջ կոլեկտիվի համար դրա պարտադիր նորմերով հանդերձ) այդ ժամանակ սկսված ճգնաժամը, կյանքի, իրավունքների ու պարտականությունների հանդեպ անհատական վերաբերմունքի աճը իր արտահայտությունը գտավ սոփեստների փիլիսոփայության մեջ: Ցանկացողներին սովորեցնելով արդեն կոտակված բոլոր գիտելիքները, նրանք դրեցին ճշմարտության չափանիշի հարցը, այսինքն հարց այն մասին, թե արդյո՞ք կարելի է վրստահել մարդկային գիտելիքներին, փնչպե՞ս ստուգել՝ ճշմարիտ են նրանք, թե ոչ: Այս հարցադրումը, անշուշտ, սոփեստների վաստակն է: Սակայն նրանք չկարողացան ճիշտ պատասխան տալ իրենց հարցադրմանը:

Սոփեստների մեջ ամենից հայտնի էր Պրոտագորաս Աբդերացին (մ. թ. ա. մոտ 480—411 թթ.): Նա առաջադրեց դրույթ բոլոր երևույթների ու ընկալումների հարաբերականության և դրանց անխուսափելի սուբյեկտիվության մասին: Համաձայն Պրոտագորասի «մարդը չափանիշն է բոլոր փրերի, որոնց գոյությունը գոյություն ունենալու մեջ է, ու գոյություն չունենալը՝ գոյություն չունենալու մեջ»: Աստվածների գոյության վերաբերյալ Պրոտագորասի արտահայտած կասկածը դարձավ Աթենքում նրան անաստվածության համար դատապարտելու պատճառը, որը և կործանեց սոփեստին: Փախչելով Աթենքից, նա խեղդվեց նավի խորտակման ժամանակ: Մյուս սոփեստը՝ Գորգիաս Լեոնտինեցին, կանգնեց սկեպտիցիզմի ուղու վրա, պնդելով, որ ամեն կարծիք կեղծ է, որ ոչինչ գոյություն չունի, իսկ եթե անգամ գոյություն ունենար, ապա միևնույն է, մատչելի չէր լինի մարդու ճանաչողության համար: Իսկ իր քաղմակողմանի զարգացումով հայտնի Հիպիաս էլիսեցին իր ուսմունքում մարդկանց ստեղծած անցողիկ օրենքները հակադրում էր բնության անսասան սահմանումներին:

Սոփեստները հունական փիլիսոփայության մտքի մեջ որևէ միասնական ուղղություն չէին ներկայացնում: Հաճախ ունենալով լայն ու բազմակողմանի իրազեկություն գիտելիքների տարբեր բնագավառների մասին, նրանք երբեմն շարաշահում էին սոսկ արտաքին էֆեկտի նպատակ հետապնդող ու լսողին խճճող կեղծ մրտահանգումները: Նրանց փիլիսոփայական կառուցվածքներին բռնորոշ էր բացասական վերաբերմունքը ճանաչողության մեջ ընդհանուր պարտադիրի հանդեպ:

Եթե սոփեստները հանգեցին այն եզրակացություն, որ անհրճարին է դրական պատասխան տալ ճշմարտության չափանիշի վե-



բաբերյալ փրենց կողմից առաջ քաշած հարցադրմանը, ապա նրանց ժամանակակիցը՝ աթենական օլիգարխիական ու արխիստոկրատական շրջանների գաղափարախոս, փիլիսոփա-իդեալիստ Սոկրատեսը (մ. թ. ա. 471—399 թթ.) դա համարում էր հնարավոր ու անգամ գտնուած էր, որ նա հայտնաբերել է ճշմարտութեան շահանիշը: Արտացոլելով աթենական ժողովրդական ժողովում, դատարանում և այլուր եղած քաղաքական պրակտիկան, նա ուսուցանում էր, որ ճշմարտութեանը ճանաչում է վեճերում: Հայտնի է վիճաբանութեանը վարելու «սոկրատեսյան» մեթոդը, երբ իմաստունը հուշող հարցերի միջոցով աննկատելի կերպով ներշնչում է վիճողներին իր գաղափարը: Իսկ իմաստուն մարդը հանգում է ճշմարտութեանը ինքնաճանաչման, այսինքն, սեփական հոգեկան սկզբնավորման իմացութեան, իսկ հետո նաև օբյեկտիվորեն գոյութեան ունեցող ոգու, որը և ընդհանուր պարտադիր ճշմարտութեանն է, ճանաչման միջոցով: Զգտելով սահմանել ընդհանուր հասկացութեաններ, Սոկրատեսը դիմում էր մի շարք մասնավոր դեպքերի ուսումնասիրութեանը: Սոկրատեսի կարծիքով, մարդ պետք է ձգտի լինել առաքինի, առաքինութեանը հարկավոր է գիտակցել: Հնարավոր չէ գործել արդարամտորեն, պնդում էր նա, ստույգ շիմանալով, թե ինչն է արդարացի, ու դրա հետ մեկտեղ չի կարելի չլինել արդարամիտ, երբ իմանում ես, թե ինչն է արդարացի: Այսպիսով, նա բացարձականացում էր օլիգարխիստների բարոյագիտական հայացքները, քանի որ փաստորեն միայն նրանց էր համարում առաքինի մարդիկ: Սոկրատեսը քաղաքական գործունեութեան իրավունք ճանաչում էր միայն նրանց համար, ովքեր հասկանում էին այդ գործը, ու ելնելով դրանից, առարկում էր վիճակահանութեամբ կամ ընտրելու միջոցով պաշտոններ գրավելու դեմ, իսկ մասսայի տիրապետութեանը վնասակար էր համարում պետութեան համար: Այսպիսով նա բացահայտորեն հանդես եկավ օլիգարխիայի կողմում՝ ընդդեմ ստրկատիրական դեմոկրատիայի:

Թրասիբուլոսի ժամանակ, երբ իշխանութեանը նորից անցավ ստրկատիրական դեմոկրատիային, Սոկրատեսին ներկայացվեց պաշտոնապես հարգվող աստվածներին չճանաչելու ու իր գաղափարներով երիտասարդութեանը բարոյալքելու մեղադրանքը, որի հիման վրա նա ենթարկվեց մահապատժի: Այդ հակաօլիգարխիական դատավարութեանն ուներ վառ արտահայտված քաղաքական գունավորում: Ինչպես հետագայում ասաց աթենական օլիգարխիական գործիչ ու հռետոր էսքիմեսը (մ. թ. ա. IV դ.), Սոկրատեսին սպանեցին, որովհետև նա դաստիարակեց Կրիտիասին՝ երեսուն տիրաններից մեկին:

Սովորաբար ուսուցանում էր բանավոր: Նրա փիլիսոփայությունը հասել է մեզ նրա աշակերտների, գլխավորապես Քսենոֆոնի ու Պլատոնի շարադրանքի միջոցով:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխարհի դիցաբանական ըմբռնումը, որը որոշ չափով բարդացավ փիլիսոփայական նոր, հատկապես բարոյագիտական պատկերացումների ներգործությամբ, իր արտահայտումը գտավ մ. թ. ա. V դ. գրականության մեջ: Խոշորագույն քնարական բանաստեղծ էր Պինդարոսը՝ ծագումով դորիացի, ծնված Թեբեում (մ. թ. ա. 522—442 թթ.): Պինդարոսը հորինում էր հանդիսավոր հիմներ ի պատիվ համահելլենական մրցումներում՝ օլիմպիական, պյութիական, նեմեական, իսթմիական խաղերում հաղթողների: Հաղթանակը տոնելիս այդ հիմները կատարում էին երգչախմբերը: Սովորաբար Պինդարոսը փառաբանում էր հաղթող ատլետներին ոչ թե որպես առանձին անհատների, այլ փբբև պոլիսի լավագույն ներկայացուցիչների, այն պոլիսի, որի քաղաքացիներն էին նրանք: Պետության կողմից սահմանված օրենքները, քաղաքացիական կարգապահությունը այն իդեալներն էին, որոնք Պինդարոսը համարում էր անսասան: Այս տեսակետից Պինդարոսի ստեղծագործությունը կարծես թե արձագանքում էր հաղթանակած ատլետներին կերտող քանդակագործ Պոլիպիտոսի գործունեությանը: Հաճախ իր եպինիկիաներում բանաստեղծը շարադրում էր հաղթողի հայրենիքի հետ կապված առասպելներ: Հաղթողների կյանքի մասին Պինդարոսը պատմում էր աշնպես, որ ինքը հաղթանակը ներկայանում էր որպես նրանց ամբողջ գործունեության փառավոր ավարտում: Պինդարոսի եպինիկիաներում հիմնական միտքը հաճախ ընդհատվում էր ընդարձակ նահանջներով: Բանաստեղծի կողմից ստեղծված կերպարները հանդիսավոր ու վեհ են: Նա օգտագործում էր Հոմերոսի էպիկական պոեմների լեզուն, լայնորեն կիրառում էր դորիական ու էոլական բարբառների խոսքերը:

Դրամատիկական պոեզիան ու թատրոնը: Ատտիկական դրաման իր ակունքներով կապված էր Դիոնիսոսի պատվին կաղմակերպվող գյուղական տոնակատարությունների հետ (տե՛ս էջ 195): Հունական դրաման ներկայացված էր ողբերգություններով, որոնց սյուժեներն էին սովորաբար հերոսների ու աստվածների մասին առասպելները, սատիրական դրամաներով, որոնք անպայման ուղեկցվում էին Դիոնիսոսի ընկերակիցների՝ սատիրոսների երգչախմբով ու կենցաղաջին կամ քաղաքական կատակերգություններով: Թեև ողբերգությունների սյուժեն կազմում էին հերոսների ու

աստվածների մասին առասպելները, սակայն նրանց մեկնաբանու-  
մը քանաստեղծների կողմից թուրքովյին նոր էր: Մ. թ. ա. V դ. հու-  
նական ողբերգությունն արտացոլում էր նոր պատկերացումներ, ո-  
րոնք կապված էին աշխարհայացքի, բարոյականության, քաղա-  
քականության զարգացման հետ ու առաջացել էին անտիկ հասա-  
րակության կյանքի ավելի բարդ պայմանների ներգործմամբ: Եր-  
բեմն ողբերգությունների սյուժեներ էին հանդիսանում ոչ հեռավոր  
անցյալում տեղի ունեցած խոշոր պատմական անցքերը, ինչպես,  
օրինակ, Միլետոսի անկումը (մ. թ. ա. 494 թ.):

Ողբերգության՝ իբրև հատուկ գրական ժանրի ստեղծողն էր  
էսքիլես Ելեսիսցին (մ. թ. ա. 525/4—457 թթ.)՝ հույն-պարսկական  
պատերազմների ժամանակակիցն ու մասնակիցը, «Պարսիկներ»  
ողբերգության հեղինակը: Այդ ողբերգությունում մեծ հայրենատի-  
րությունը նկարագրված է Սալամիսի ճակատամարտը (մ. թ. ա.  
480 թ.): Նրա ստեղծագործությունները լի են վեհության և ուժով,  
ներծծված են մարդասիրական խոր զգացմունքով, մարդկային բա-  
նականության հաղթանակի հանդեպ համոզմունքով: Ցուցադրա-  
կան է այդ տեսակետից «Օրեստես» եռերգությունը: Այստեղ շա-  
րադրվում են Տրոյական պատերազմից հետո Ատրևյանների տանը  
տեղի ունեցած դրամատիկ, արյունահեղ անցքերը, երբ արշավան-  
քից վերադարձած բասիլես Ագամեմնոնին սպանեց նրա կին Կլի-  
տեմեստրան՝ իր տիրեկան էգիսթոսի օգնությամբ: Տասը տարի անց  
Օրեստեսը՝ Կլիտեմեստրայի՝ օտարության մեջ մեծացած որդին,  
Ապոլլոնից հրաման ստացավ լուծել իր հոր վրեժը: Օրեստեսը սպա-  
նեց Կլիտեմեստրային ու էգիսթոսին: Օրեստեսին սկսեցին հե-  
տապնդել էրինիաները՝ վրեժխնդրության ահավոր աստվածուհի-  
ները, որոնցից նա ի փիճակի չէր ազատվել անգամ Ապոլլոնի սրբ-  
բարանում գտնվելիս, մինչև որ նրան շարդարացներ աթենական  
արեոպագոսի դատարանը՝ փրկելով անողոք հետապնդումներից:  
Այդ առասպելը վերաբերում էր խոր հնությանը, այն ժամանակնե-  
րին, երբ մայրիշխանությանը փոխարինելու եկավ հայրիշխանու-  
թյունը, բայց դրա մեկնաբանության մեջ ներմուծված են բոլորո-  
վին նոր գծեր՝ քանաստեղծը մեծ տեղ է հատկացնում արեապագո-  
սի դատարանին, աթենական արիստոկրատիայի այդ հիմնարկու-  
թյանը, որի որոշումները դրվում են հելլենական դիցաբանության  
աստվածների կանխագծումներից վեր: Պետք է նշել, որ այդ ող-  
բերգությունը բեմադրվեց Եփիալտեսի ռեֆորմից հետո, այն ռեֆոր-  
մի, որով արեապագոսը զրկվեց քաղաքական իշխանությունից:  
էսքիլեսն իր այս ողբերգությունում հանդես եկավ որպես դեմոկ-  
րատական ռեֆորմի հակառակորդ:

Բավականին համարձակ էր ավանդական դիցարանության կերպարների մեկնաբանումը նաև էսքիլեսի «Պրոմեթևսը շղթայված» ողբերգությունում: Այստեղ գերագույն աստված Զևսը ներկայացված է իբրև դաժան տիրան, որն անգթորեն պատժում է տիտան Պրոմեթևսին այն բարերարությունների համար, որ նա գործեց մարդկանց օգտին, իսկ Պրոմեթևսը ցույց է տրված որպես կամայականության, տիրանիայի դեմ բողոքող տոկուն, անճողողոզ մարտիկ:

Այսպիսով, էսքիլեսի ստեղծագործության մեջ հին դիցարանական սյուժեները ստացան փրիլիսոփայական ու քաղաքական պատկերացումների հետ կապված նոր բովանդակություն: Բայց, բոտ էսքիլեսի, ամեն ինչ աշխարհում, այդ թվում և աստվածները, ստիպված են ենթարկվել ճակատագրի (Անանկե) ուժի որ անհնարին է հաղթահարել:

Երկրորդ մեծ հելլենական ողբերգակ բանաստեղծն էր Սոֆոկլեսը (մ. թ. ա. 497—405 թթ. որը ծնվել ո Աթենքի մոտ գտնվող Կոլոնոսում: Նրա ստեղծագործությանը շուներ էսքիլեսի համարձակ հանդգնությունը և ուժը: Սոֆոկլեսը ավելի մոտ է ժողովրդական կրոնի պատկերացումներին. նրա մոտ նկատելիորեն դրսևորվում են աստվածների «զգրված օրենքների» ու անհաղթահարելի ճակատագրի (Անանկե) գաղափարները: Սոֆոկլեսի կերպարներն այնքան վեհ ու հզոր չեն, ինչպես էսքիլեսիներ. նրանք ավելի մեղմ են ու ներշնչված են անմիջական կենդանի զգացմունքով: էսքիլեսի քաղաքացիական բարոյականությանը Սոֆոկլեսը հակադրում է «աստվածների կառավարչակիցը հանդիսացող մարդկային ճշմարտությունը: «Անտիգոնեն» ողբերգությունում Սոֆոկլեսը ստեղծեց հերոսական ինքնազոհաբերության ընդունակ երիտասարդ աղջկա հուզիչ կերպարը: Անտիգոնեն հետևելով «զգրված օրենքին», հակառակ կառավարչի արգելքին, թաղում է իր եղբոր աճյունը, որի համար և հատուցում է իր կյանքով: Սոֆոկլեսը այդ ողբերգությունում փառաբանում է մարդուն երգչախմբի հետևյալ հուշակավոր խոսքերով՝ «Շատ մեծ ուժեր կան աշխարհում, բայց մարդուց ուժեղ չկա և ոչ որ աշխարհում՝ Ողբերգությունում դատապարտվում է տիրանի կամաականությունը

Մյուս ողբերգութունում՝ «Հիպոս արքայում», ցույց է տրված ճակատագրին «ակազգելու մարդու ձգտումը Հիպոսը պատանեկության տարիներին հակառակ ճակատագիրը հաղթահարելու իր փորձերին ճակատագրի կամքով կատարում է սարսափելի հանցագործություն: Շատ ժամանակ անց, արդեն ծերացած, երբ Հիպոսը փորձեց գտնել այդ հանցագործության անհայտ մե-

դավորին, հայտնաբերեց, որ մեղավորը ինքն է և, ելնելով փր քարոյական համոզմունքներից, դաժան պատժի ենթարկեց իրեն:

Երրորդ ողբերգակ բանաստեղծը՝ Եվրիպիդեսը (մ. թ. ա. 480—406 թթ.), ծնված Սալամիս կղզում, իր նախորդների նման օգտագործում էր ողբերգության հին ձևերը, բեմ դուրս բերելով հերոսներին ու աստվածներին, սակայն դիցաբանական սյուժեները նրա համար սոսկ արտաքին ձև էին: Եվրիպիդեսի ուշադրությունն ուղղված էր մարդկային բնությունը բացահայտելու, զգացմունքներն ու կրքերը ցույց տալու խնդրի վրա: Բացառիկ վարպետությամբ նա նկարագրում է հզոր կրքին անձնատուր եղած կնոջ հոգեկան պայքարը: Այսպիսիք են սիրահարված Ֆեդրայի ու խանդ ապրող Մեդեայի կերպարները: Մեդեան, վրեժ լուծելով իրեն դավաճանած ամուսնուց, կանգ չի առնում իր երեխաների սպանության առաջ: Եվրիպիդեսի շատ ողբերգությունների հիմքը կազմում է ընդհարումը պոլիսային բարոյականության կանոնների ու առանձին անհատի շահերի միջև: Նրա Մեդեան սոսկ սովորականի պես դաժան խանդ ապրող էակ չէ, նա տառապող ու վիրավորված կին է: Կնոջ ծանր վիճակի մասին նրա մենախոսությունը բարձրացնում է այդ կերպարը մեծ սոցիալական ընդհանրացման աստիճանի:

Մ. թ. ա. V դ. դարգացում ապրեց սատիրոսյան դրաման: Սատիրոսների երգչախմբի գոյությունը դրամայի այդ տեսակը ավելի ամուր էր կապում Դիոնիսոսի պաշտամունքի հետ ու հաղորդում նրան վենդանի, անմիջական բնույթ:

Դրամատիկ ստեղծագործությունների երրորդ ժանրն էր կատակերգությունը: Նա ծագեց այն մերկացուցիչ երգերից, որ կատարում էին դիմակավորվածների թափորները Դիոնիսոսի տոնախմբությունների ժամանակ: Կատակերգությունը ծնվեց Մեգարայում դեռ մ. թ. ա. VI դ.: Կատակերգություններ էր գրում էսքիլեսի ժամանակակից, խոշոր բանաստեղծ Եպիքարմոսը, որն ապրում էր Սիկիլիայում: Եպիքարմոսի կատակերգությունները պարզ վախճան ունեցող կենցաղային տեսարաններ էին:

Հունական կատակերգության մյուս ժանրի ներկայացուցիչն էր քաղաքական կատակերգությունների հեղինակ, Ատտիկայի պահպանողական հողագործական խավերի շահերի արտահայտիչ, ատտիկական բանաստեղծ Արիստոփանեսը (մ. թ. ա. 450—338 թթ.): Նա անողոք քննադատության էր ենթարկում ժողովրդայնություն վայելող դեմագոգներին, քաղաքային դեմոսի ներկայացուցիչներին (Կլեոնին, Հեպերոլոսին և ուրիշների), հանդես էր գալիս ողբերգակ-բանաստեղծ Եվրիպիդեսի դեմ, ծաղրում նոր դրույթներ առաջադրող փիլիսոփա-սոփեստներին ու Սոկրատեսին, օրինակ, «Ամ-

պեր» կատակերգությունում: Արիստոփանեսը հատուկ համակրանքով էր վերաբերվում Ատտիկայի գյուղական բնակչությանը: Արիստոփանեսի կատակերգությունների սյուժեները աչքի են ընկնում բացառիկ ստեղծագործական երևակայությամբ: Իր կատակերգություններում, երգչախմբի դերում նա դուրս է բերում ոչ միայն ճարգկանց, այլև թռչուններին, պիծակներին ու անգամ ամպերին: Արիստոփանեսի կատակերգություններում շոշափվում էին օրվա ամենահրատապ հարցերը, ինչպիսիք էին Պելոպոնեսյան պատերազմի ժամանակաշրջանում ամենայն սրբությամբ հանդես եկած խաղաղության հարցը, երեխաների դաստիարակության, կանանց քաղաքական իրավունքների հարցերը: Բանաստեղծը իր ստեղծագործություններում եռանդուն կերպով պայքարում էր խաղաղության համար:

Նրա կատակերգությունների լեզուն շատ գունեղ է, պատկերավոր, լի սրամիտ ու ծաղրական համեմատություններով:

Հունական դրամայի բոլոր տեսակների բնորոշ առանձնահատկությունն էր երգչախմբի առկայությունը: Դրամայում երգեցողությունը ուղեկցվում էր պարերով: Ողբերգություններում երգչախումբը կազմված էր 12 կամ 15, կատակերգություններում՝ 24 հոգուց: Սովորաբար խաղում էին երեքից ոչ ավելի դերասաններ, հազվագյուտ դեպքերում թույլատրվում էր շորթորդ դերասանի մասնակցությունը: Յուրաքանչյուր դերասան կատարում էր մի քանի դեր: Բոլոր դերերը, այդ թվում կանանց, կատարում էին տղամարդիկ: Դերասանները հանդես էին գալիս հատուկ դիմակներով, որոնց դիմագծերն ու արտահայտությունները համապատասխանում էին տվյալ գործող անձի բնավորությանը: Ողբերգության հերոսների զգեստները շքեղ ու հանդիսավոր էին, կոշիկներն ունեին կոթորեններ, որը բարձրացնում էր դերասանների հասակը: Կատակերգությունում գործող դեմքերը հանդես էին գալիս ծաղրածուի հագուստով, որը միտումնավոր տգեղ ձևեր էր հաղորդում ֆիզյուրային:

Մ. թ. ա. V—IV դդ. հունական թատերական կառույցները սովորաբար տեղավորվում էին բլրի ստորոտում: Դրանք բաղկացած էին կլոր, փոքր հրապարակից՝ օրթեստրայից, որի վրա տեղավորվում էր երգչախումբը, հանդիսականների տեղերի վեր բարձրացող կիսաօղակից ու հակառակ կողմում գտնվող ցածր բեմական շինությունից՝ սկենեից, որտեղից դուրս էին ելնում ու որի ֆոնի վրա խաղում էին դերասանները: Այդպիսին էր Սիրակուզայում մ. թ. ա. V դ. վերջին կառուցված հունական հնագույն թատրոններից մեկը: Հունական թատրոններում տեղավորվում էին հսկայական թվով հանդիսատեսներ:

Բեմական սարքավորումը բավական հասարակ էր: Բոլոր ներկայացումները տեղի էին ունենում ցերեկը, և լուսավորում չէր պահանջվում: Վարագույրներ չկային: Գեկորացիաները նկարվում էին շարժական տախտակների վրա: Թատերական մեքենաները բավական պրիմիտիվ էին: Դրանք էին՝ ամբարձիչը, որի միջոցով օդում հանդես էին գալիս աստվածների կերպարները, առաջ մղվող հատուկ հարթակը, որը հանդիսականներին հնարավորություն էր տալիս տեսնելու պալատի ներքին սրահը, որտեղ կատարվել էր ողբերգության հերոսի սպանությունը, ամպրոպի հարվածները վերարտադրող հատուկ մեքենան:

Արձակը: Մ. թ. ա. V դարը հելլենական արձակի հետագա զարգացման ժամանակաշրջանն էր: Դորիական Հալիկաոնասում ծնված Հերոդոտոսը (մ. թ. ա. մոտ 485—425 թթ.) գրում էր հունական բարբառով: Նրա կենդանի պատմությունը լի է մանրամասնություններով ու բազմաթիվ նահանջներով, այդ թվում տարբեր ժողովուրդների սովորությունների ու բարքերի նկարագրությունով: Գասական Հունաստանի խոշորագույն պատմիչն էր Ատտիկայում ծնված Թուկիդիդեսը (մ. թ. ա. մոտ 460—396 թթ.). նրա «Պատմությունը» բավականին նշանակալից գեղարվեստական գործ է: Աշխատության կոմպոզիցիան խիստ նախամտածված է, շարադրանքում շատ չեն նահանջները, որոնք այդքան հաճախ են հանդիպում Հերոդոտոսի մոտ: Թուկիդիդեսի պատմությունը հստակ, նրպատակասլաց, հասարակ է, բայց միաժամանակ արտահայտիչ և որոշ դեպքերում պաթետիկ:

Հունական արձակը ավելի բազմակողմանի զարգացում ապրեց հաջորդ՝ մ. թ. ա. IV դարում:

#### Մ. Թ. Ա. IV Դ. ՄՇԱԿՈՒՑԹԸ

Ինչպես արդեն նշվեց, մ. թ. ա. IV դարը մի ժամանակաշրջան էր, երբ պոլիսային համակարգը հակասության մեջ մտավ հելլենական հասարակության զարգացման հետ: Պոլիսային կյանքի նեղ շրջանակները սկսեցին խանգարել տնտեսական կապերի աճին: Զգալիորեն ընդարձակվեցին հունական պոլիսների արտաքին կապերը: Այդ պայմաններում տնտեսական ու մշակութային մեծ զարգացում ապրեցին անտիկ աշխարհի ծայրամասերում գտնվող որոշ պետություններ (Սիկիլիան, Բոսպորոսը, Կարիան), որտեղ հույները սերտորեն շփվում էին այլ ժողովուրդների հետ:

Գուլքային անհավասարության ուժեղացումը, օլիգարխիական վերին խավերի շահից ավելի հարստացումն ու ազատ բնակչության ծայրահեղ աղքատացումը կործանում էին մինչ այդ միաս-

նական պոլիսի ամբողջականութիւնը: Դա նպաստում էր անհատականութեան անհիմնականութեան անհրաժեշտ անջատում տիրապետող քաղաքացիական կոլեկտիվի զգացմունքին:

#### ԱՐՏԱԿՐՈՒԹՅՈՒՆԸ

Նյութական արտադրութեան տեխնիկայի ընդհանուր մակարդակը հիմնականում մնում էր ցածր: Հաջողութիւնների հասաւ գեղարվեստական արհեստը: Տարածվեցին տեռակոտից, բրոնզից, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերն ու փորագրված քարերը: Այդ ժամանակ բարձր մակարդակի հասան Պանտիկապոնի ոսկերչական արհեստանոցները: Թանկարժեք քարերի փորագրիչներից աչքի ընկաւ Ալեքսանդր Մակեդոնացու պալատական դիմանկարիչ Պիրգոտելեսը:

Բարձր զարգացման հասաւ գեղարվեստական տեխնիկան, մասնավորապես բրոնզե քանդակների ձուլումը: Այսպես, քանդակագործ Լիսիպոսը կերտեց Ջեսի 18 մ բարձրութիւն ունեցող արձանը Տարասում: Այդ արձանի հաւասարակշռութեան հաշվարկն այնպես էր կատարված, որ ընդամենը մեկ մարդ կարող էր շրջել այն, ու միևնույն ժամանակ անգամ ուժեղ փոթորիկը չէր կարող գետին գլորել արձանը:

Որոշ առաջընթաց նկատվեց հողագործութեան բնագավառում՝ մտցվեց եռադաշտային համակարգը, օգտագործվում էին բնական պարարտանյութերը: Հերկած հողը փոցխելու համար սկսեցին կիրառել տափան: Մ. թ. ա. V դ. վերջի—մ. թ. ա. IV դ. առաջին կեսի ատտիկական պատմիչ Քսենոֆոնը իր «Տնարարութիւն» աշխատութեան մեջ հատուկ ուշադրութիւն է նվիրում հողագործութեան հարցերին, հողագործներին տալիս է մի շարք խորհուրդներ այն մասին, թե ինչպես կազմակերպել կալվածքը, ձեռնարկել գլուղատնտեսական աշխատանքներ ու վարել անասնապահութիւն:

Մ. թ. ա. IV դ. սկզբին տեխնիկական զգալի կատարելագործումներ նկատվեցին նավաշինութեան մեջ: Դիոնիսիոս Սիրակուզացին Կարթագենի դեմ պայքարելու նպատակով կառուցեց նավատորմի, որը բաղկացած էր ոչ թե տրիբրաններից, այլ տետրերներից ու պենտերներից, այսինքն, շորս ու հինգ շարք թիակներ ունեցող նավերից: Դիոնիսիոսի կողմից տարբեր տեղերից հրավիրված մեխանիկները կառուցեցին հզոր նետողական մեքենաներ, որոնք հաջողութեամբ գործադրվեցին կարթագենյան նավատորմի դեմ:

Մեխանիկայի գործնական հարցերի լուծման համար կարևոր նշանակութիւն ունեցող տեսական հիմքեր ստեղծելու գործում, համալսարան, զգալի դեր խաղաց Արքիտաս Տարասցին: Նա բազ-



մակողմանի ընդունակություններով օժտված մարդ էր՝ փիլիսոփա, անալիտիկ մեթոդը կիրառած ու մի շարք երկրաչափական խնդիրներ, այդ թվում խորանարդի կրկնապատկումը լուծած մաթեմատիկոս, ինչպես նաև բավականին բարդ մեխանիզմներ կառուցող մեխանիկ: Այսպես, նա պատրաստեց աղավաղ փոքրիկ մանրատիպար, որն իր մեջ տեղադրված պնևմատիկ (օդամղիչ) մեխանիզմի միջոցով կարող էր թափահարել թևերը ու վեր ճախրել: Արթիտասը իր բազմազան գիտական ու տեխնիկական գործունեության հետ մեկտեղ մասնակցում էր քաղաքական կյանքին. նա յոթ անգամ ընտրվեց ստրատեգոս ու ոչ մի անգամ չկրեց պարտութուն:

#### ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Մ. թ. ա. IV դ. հանդես են գալիս ռազմական գործի տեսությանը նվիրված աշխատություններ: Հենաս Ստյումփալիսցին գրեց քննախոսություն քաղաքները թշնամիներից պաշտպանելու մասին, որտեղ վառ արտացոլվեց հունական պոլիսների վիճակը մ. թ. ա. IV դ. առաջին կեսին, օլիգարխիսների ու աղքատացած դեմոսի միջև ընթացող սուր պայքարի ժամանակաշրջանում: Քսենոֆոնը երկու աշխատություն նվիրեց աթենական հեծալազորին: Ռազմական գործի հանդեպ ուշադրության ուժեղանալն այդ ժամանակ մասամբ բացատրվում էր նրանով, որ վարձկան զորքի դերի բարձրացման հետ միասին զգալիորեն բարդացավ նաև ռազմական արվեստը: Միասնական շմամնատված փաղանգի հին տակտիկային փոխարինելու եկավ զորքի ավելի բարդ դասավորումը, որի պայմաններում բանակի առանձին մասերը կատարում էին ինքնուրույն խընդիրներ, ընդ որում ավելի մեծ դեր են սկսում խաղալ հեծելազորն ու պելտաստները (հուպիստների համեմատությամբ ավելի թեթև զենք կրող հետևակ):

#### ԿԼԵՊՍԻԴՐԱ

Մ. թ. ա. IV դ. տեխնիկական կատարելագործումները թափանցեցին կյանքի տարբեր բնագավառներ: Այսպես, առօրյա կենցաղում հույները ժամանակը սովորաբար որոշում էին մարդու սովերի երկարությամբ, այն չափում էին նրա ոտնաթաթով: Այդ պրիմիտիվ ձևը փոխարինվեց ավելի ճշգրիտ արեզակնային ժամացույցով՝ օրը բաժանվեց տասներկու մասերի, որոնց տևողությունը փոխվում էր տարվա եղանակներին համապատասխան: Մ. թ. ա. IV դ., ժողովներում ելույթ ունեցողներին տրամադրվող ժամանակը որոշելու նպատակով լայնորեն կիրառում էին ջրային ժամացույցը՝ կլեպսիդրան: Դա փոքր խողովակ ունեցող անոթ էր, ջուրը դուրս

էր թափվում խողովակի միջից: Կլեպսիդրայի մեջ լցվում էր ջրի այս կամ այն քանակութիւն՝ նայած գործի կարեւորութեանը: Բանակում կլեպսիդրան օգտագործում էին գիշերային պահակների հերթափոխումը որոշելու համար: Այդպիսի հերթափոխումները միշտ շորան էին, իսկ նրանց տեղութիւնը փոփոխվում էր ըստ տարվա եղանակների: Կլեպսիդրան հերթափոխի տեղութեան փոփոխմանը հարմարեցնելու նպատակով, այն ներսից պատում էին մեղրամոմի շատ թեքիչ հաստ շերտով:

Մ. թ. ա. IV դ. առաջին կեսին հիդրավիկայի (ջրաբաշխութեան) մեջ առաջին անգամ կիրառվեց ինքնանշատչի սկզբունքը: Այն օգտագործեց փիլիսոփա Պլատոնը՝ զարթուցիչ պատրաստելու համար:

Ճարտարապետութիւնը: Մ. թ. ա. IV դ. Հելլադայի գեղարվեստական մշակույթի կենտրոններ դարձան Պելոպոնեսն ու Փոքր Ասիայի արևմտյան ծովափի քաղաքները. գեղարվեստական գործունեութիւնը զարգանում էր Սիկիլիայում ու Մերձպոնտոսյան քաղաքներում: Այդ ժամանակ տաճարները սկսում են կորցնել իրենց նշանակութիւնը որպէս շինութիւնների առաջատար տեսակ: Դրանց փոխարինելու եկան հասարակական ժողովների համար նախատեսված, ինչպէս նաև կառավարիչների հիշատակը հավերժացնող կառուցաները:

Մ. թ. ա. մոտ 380—330 թթ. կառուցվեց Ասկլեպիոսի սրբարանի ճարտարապետական համալիրը Եպիդավրոսում: Մարմնական ու հոգեկան հիվանդութիւնները դարմանող այդ աստծու պաշտամունքը լայնորեն տարածվեց մ. թ. ա. IV դ., այն ժամանակ, երբ պոլիսի հովանավոր աստվածների հին պաշտամունքներն արդեն նախկին շափով շէին համապատասխանում հասարակութեան տրամադրութիւններին: Գեղատեսիլ հովտում գտնվող Եպիդավրոսի սրբարանը խիստ տարբերվում էր Օլիմպիայից, Դելփիքից ու հունական այլ պաշտամունքային կենտրոններից: Ասկլեպիոսի տաճարը Եպիդավրոսում գրավում էր բավական համեստ տեղ միշտ քայնպիսի շինութիւնների մեջ, ինչպիսիք՝ ուլիսավորների համար կառուցած իջևանը, բուժարանը, գիմնասիոնը, ստադիոնն ու թատրոնը: Վերջինս մի վիթխարի կառույց էր, որն ուներ 55 շարքեր հանդիսականների համար. նրա տրամագիծը կազմում էր 120 մետր. թատրոնն աչքի էր ընկնում իր հիասքանչ ակուստիկայով: Թատրոնը կառուցել էր Պոլիկլիտոս Կրտսերը (360—330 թթ.):

Նշանակալից շինարարութիւն ծավալվեց մ. թ. ա. 370 թ. նորից հիմնված Մեգալոպոլիս քաղաքում՝ Արկադյան միութեան կենտրոնում: Մ. թ. ա. մոտ IV դ. կեսին այնտեղ կառուցվեց շուրջ 145 մ

տրամագիծ ունեցող թատրոն, որտեղ կարող էին տեղավորվել 44 հազար հանդիսականներ: Այդ թատրոնի կողքին գտնվում էր մի փակ շինություն՝ Թերսիլիոնը, որն օգտագործվում էր որպես Արկադյան միություն ներկայացուցիչների հավաքատեղ: Այդ շենքի առաստաղը հենվում էր վաթսուների ավելի ճառագայթաձև տեղադրված սյուների վրա. դա թույլ էր տալիս ցանկացած տեղից լավ տեսնել ամբիոնը:

Մ. թ. ա. IV դ. երկրորդ քառորդում Փոքր Ասիայի հարավարևմտյան ծովափին վերաշինվեց Կարիայի մայրաքաղաք Հալիկաոնասոսը: Գլխավոր կառույցները՝ աստվածների տաճարները, կառավարչի պալատն ու դամբարանը կազմում էին քաղաքի կոմպոզիցիայի հիմքը: Այդ շինություններից ամենաճանաչվորն էր Կարիայի կառավարիչ Մավզոլոսի դամբարանը, որը կառուցեցին ճարտարապետներ Պիթեասն ու Սատիրոսը: Այն կոչվեց մավզոլեոն ու հին ժամանակներում համարվում էր աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը: Այդ երկհարկանի կառույցի առաջին հարկը դամբարան էր, որը խուլ պատով վերցվել էր շրջանակի մեջ: Հանգուցյալի հերոսականացված պաշտամունքի համար նախատեսած երկրորդ հարկը շրջապատված էր հոնիական օրդերի սյունաշարով, իսկ վերջինիս վրա բարձրանում էր սանդուղքավոր մի բուրգ, որը պսակում էր շորս ձի լծած մարտակառքի վրա կանգնած Մավզոլոսի ու նրա կնոջ քանդակը: Մավզոլեոնը զարդարված էր քանդակներով, որոնց ստեղծմանը մասնակցել էին այն ժամանակի հույկավոր քանդակագործներ Սկոպասը, Լեոքարեսը, Բրիյաքսիան ու Տիմոթեոսը: Մավզոլեոնի ճարտարապետական ձևերի մեջ զուգակցվում էին երկու ժարեր՝ հելլենական, որն արտահայտված էր հոնիական սյունաշարով, և արևելյան, որը ներկայացված էր սանդուղքավոր բուրգով: Դրա հետ մեկտեղ, մավզոլեոնը, ի տարբերություն պոլիսի պահանջների հետ կապված կառուցումների, ծառայում էր կառավարչի հիշատակը հավերժացնելու նպատակին: Այդպիսին էր նաև Փիլիպոնը, որը կառուցել էր Փիլիպոս Մակեդոնացին՝ ի նշանավորումն Քրոնեայի մոտ տարած իր հաղթանակի (մ. թ. ա. 338 թ.): Դա հոնիական օրդերի սյունաշարով շրջակալված կլոր շենք էր: Ներսից Փիլիպոնի պատերը զարդարված էին կորնթոսյան օրդերի կիսասյուներով<sup>14</sup>: Փիլիպոնում դրված էին մակեդոնական թագավորների արձանները, որոնք ստեղծել էր քանդակագործ Լեոքարես-

<sup>14</sup> Կորնթոսյան օրդերի սյուները մոտ էին հոնիական սյուներին, տարբերվելով նրանցից խոյակի զարդով: Այն զարդարված էր ականթայի տերևներով (տասակափշին նմանվող բույս):

սը: Այդ արձանները կերտված էին ոսկուց ու փղոսկրից՝ մեծարանք, որին մինչ այդ արժանանում էին միայն աստվածները:

Քանդակագործութունը: Անհատականության աճը հստակորեն արտահայտվեց այն ժամանակի քանդակագործության մեջ: Մ. թ. ա. V դ. վերջին տասնամյակներում և մ. թ. ա. IV դ. առաջին տասնամյակներում ապրած քանդակագործ Դեմետրիոս Ալոպեկցին վճռականորեն հրաժարվեց իր նախորդների քանդակագործութունում տիրապետող ավանդական կերպարներից: Նա ստեղծում էր մարդկանց դիմանկարներ, դրանց ջանասիրաբար հաղորդելով մարդկանց բնորոշ հատկությունները. նա անգամ չէր վարանում ծերունական մարմնի տգեղությունից:

Այլ էր Պարոս կղզում ծնված մեծ քանդակագործ Սկոպասի ստեղծագործությունը: Նա ստեղծում էր տիպական կերպարներ, ու նրա քանդակները սովորաբար ունեին դիցաբանական բնույթ: Բայց ի տարբերություն մ. թ. ա. V դ. անտարբեր ֆիգուրների, այդ կերտվածքներն օժտված էին բուռն հոգեկան ապրումներով: Այսպիսիք են բաքոսյան մոլուցքով բռնված խելացնոր Մենագան կամ Աթենաս Ալեալի տաճարի (Տեգեայում) խիստ վնասված ճակատային քանդակախմբում տեղադրված վիրավոր մարտիկների տառապանքի լարված արտահայտությամբ լի դեմքերը: Այդ տաճարի կառուցողն էր Սկոպասը: Սկոպասի ժամանակակից քանդակագործ Պրաքսիտելեսը արվեստի նկատմամբ հեղոնիստական (վայելքային) վերաբերմունքի վառ ներկայացուցիչն էր: Պրաքսիտելեսը գլխավորապես կերտում էր գինու աստված Դիոնիսոսի ու սիրո և գեղեցկության աստվածուհի Աֆրոդիտեի շրջապատին պատկանող աստվածների արձաններ: Այդ քանդակները լի էին ծուլ անդորրությամբ, քաղցր խոնջանքով ու դրա հետ մեկտեղ աչքի էին ընկնում կատարողական բարձր տեխնիկայով: Հնությունում հատկապես հայտնի էր Աֆրոդիտեի՝ Կնիդոսում գտնվող արձանը:

Մ. թ. ա. IV դ. երկրորդ կեսին ստեղծագործում էր Լիսիպոս Սիկիոնեցին: Նոր պատմական պայմանները խիստ ազդեցություն գործեցին այդ վարպետի սոցիալական վիճակի վրա: Նա դարձավ Ալեքսանդր Մակեդոնացու պալատական նկարիչն ու պատկերադիրը: Լիսիպոսը բավականին բեղմնավոր վարպետ էր. նա ստեղծեց Ալեքսանդր Մակեդոնացու մի քանի դիմանկարներ, Գրանիկոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտին մասնակցած մակեդոնական հետալքների վիթխարի խումբը, սիրանքներ գործող Հերակլեսի քանդակը և այլն: Լիսիպոսի ստեղծագործությունների հերոսները լի են կորովով, համակված են եռուն գործունեությամբ, լարված պայքարով: Նրանք պատկերված են թշնամիների հետ մարտնչելիս, վայրի

կենդանիների հետ պայքարելիս կամ սխրագործութուններից հետո հանգստանալիս, բայց այդ հանգիստը բնավ էլ ալարկոտ խոնջանք չէ, այլ կարճատև դադար նոր գործերից առաջ:

Կիսիպոսի ժամանակակիցն էր աթենական քանդակագործ Լեոքարեսը: Այդ վարպետի գործերից մեզ հասել է Ապոլլոնի արձանը՝ հոռոմեական պատճենի ձևով, որը լայնորեն հայտնի է Բելվեդերյան Ապոլլոն անունով:

Նկարչություն: Մ. թ. ա. IV դ. նկարչությունը շարունակեց այն գիծը, որին սկիզբ դրեց աթենական նկարիչ Ապոլլոգորոսը: Այս ժամանակաշրջանի նկարիչներից աչքի ընկավ Պավսոն Սիկիոնցին, որը հայտնագործեց մոմաներկով կատարվող նկարչությունը (էնկաուստիկան): Այդ ներկերը վառ ու թարմ էին և միաժամանակ շատ կայուն: Էնկաուստիկայի տեխնիկան թույլ տվեց Պավսոնին լուծել բարդ նկարչական խնդիրներ, օրինակ, պատկերել առաջամասով դեպի հանդիսատեսը շրջված սև ցուլին:

Մ. թ. ա. IV դ. երկրորդ կեսի խոշորագույն նկարիչը Ապելլեսն էր, որը սովորել էր Սիկիոնում: Ապելլեսը Ալեքսանդր Մակեդոնացու պալատական նկարիչն ու պատկերագիրն էր: Նրա գործերը, ըստ երևույթին, աչքի էին ընկնում մեծ ոեալականությամբ: Ապելլեսի նկարների մեջ հատուկ հռչակ էր վայելում Աֆրոդիտեի Անագիոմենեն: Նկարիչը պատկերեց աստվածուհուն ծովից դուրս գալու պահին. կիսով շափ ալիքներում սուզված նրա մարմինը շոշողում էր ջրի մեջ:

#### ՓԻԼՍՈՓՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Մ. թ. ա. IV դ. հունական փիլիսոփայության հետագա զարգացման ժամանակաշրջանն էր: Դարի առաջին կեսին իր ուսումնասիրությունները շարունակեց մեծ մատերիալիստ Դեմոկրիտոսը:

Իդեալիստական փիլիսոփայությունը ներկայացված էր Սոկրատեսի աշակերտներով: Նրանցից ամենանշանավորն էր Պլատոնը (մ. թ. ա. 427—347 թթ.), որը Աթենքում հիմնեց դպրոց՝ հերոս Ակադեմոսի գիմնասիոնի մոտ, և այս կապակցությամբ դպրոցը ստացավ Ակադեմիա անունը: Իր բարոյագիտական հայացքներով Պլատոնը շատ բանով հետևում էր աթենական օլիգարխիների գաղափարների արտահայտիչ Սոկրատեսին: Բայց ստրկատիրական պոլիսների համակարգի ու աթենական ստրկատիրական դեմոկրատիայի ուժեղացող ճգնաժամի պայմաններում Պլատոնը ավելի կրտուկ էր ընդգծում, որ հիմնական բարեմասնությունները՝ իմաստությունը, արիությունը ու շափավորությունը, որոնք ենթարկվում են բարձրագույն առաքինությանը՝ արդարությանը, հատուկ են

միայն արիստոկրատիային: Պլատոնը գտնում էր, որ առաքինութ-  
յունը ոգու առողջ վիճակն է: Այս պատճառով առաքինի, ազնիվ  
մարդը ինքնին երջանիկ է, իսկ արատավոր, անազնիվ մարդը ան-  
խուսափելիորեն պիտի լինի դժբախտ:

Պլատոնը պնդում էր, որ իմացությունը միշտ ճշմարիտ է և որ  
այն ոչ ընկալում է, որը փրբերը մեզ ցույց չի տալիս այնպես, ինչ-  
պես նրանք կան, ոչ էլ պատկերացում, որը սոսկ կանգնած է իմա-  
ցության ու շիմացության միջև: Իմացությունը հուշ է, որը պահպան-  
վել է ոգու մեջ այն ժամանակներից, երբ ոգին գտնվում էր գաղա-  
փասրների աշխարհում, այսինքն մինչև մարդու ծնվելը: Ըստ Պլա-  
տոնի, իսկական օբյեկտիվ կեցությունը հատուկ է միայն հասկա-  
ցություններում մտածվողին. գաղափարների ռեալականությունը  
նա դիտում էր իբրև գիտական մտածողության անհրաժեշտ պայ-  
ման: Պլատոնն իրերի էությունը տեսնում էր դրանց ձևի (կամ գա-  
ղափարի) մեջ, այն բանում, ինչ ընդհանուր էր մի շարք իրերի և  
ինչ կազմում էր դրանց ընդհանուր հասկացությունը: Եզակի իրը  
գաղափար լինել չի կարող: Գաղափարը միասնական է, հավերժ  
ու անփոփոխ, իսկ դրան համապատասխանող իրերը բազմապիսի  
են, անցողական, միշտ ենթակա փոփոխությունների ու տատան-  
վում են լինելության ու ոչ լինելության միջև: Պլատոնը գոյություն  
ունեցող իրական աշխարհը համարում էր գաղափարների իդեա-  
լական աշխարհի արտացոլում, ստվեր: Նա հետևյալ կերպ էր շա-  
րադրում իրական աշխարհի իր ըմբռնումը՝ պատկերացրեք, որ կա-  
լանավոր մարդիկ նստած են մութ քարանձավում, մեջքով դեպի  
ելքը, շունեն շուռ գալու հնարավորություն և ահա դիմացի պատի  
վրա նրանք տեսնում են անցորդների ու առարկաների արտացո-  
լումը, այն առարկաների, որոնք անցորդները տանում են, գնալով  
քարանձավի մոտով. այդ ստվերները մեր աշխարհն են: Պլատոնը  
պայքարում էր Դեմոկրիտոսի մատերիալիստական փիլիսոփայու-  
թյան դեմ ու անգամ, ըստ գոյություն ունեցող զրույցի, փորձեց  
օչնչացնել մեծ մատերիալիստի երկերը:

Պլատոնը, ապրելով հին հունական պետականության ճգնաժա-  
մի ժամանակաշրջանում, խորհրդածում էր իդեալական պետու-  
թյան ձևերի մասին: Նրա՝ պահպանողականի, արիստոկրատիայի  
կողմնակցի ու լակոնաֆիլի (Սպարտան սիրողի) քաղաքական պատ-  
կերացումները վառ արտահայտվեցին պետության մասին իր տա-  
մունքում: Պետությունը, ըստ Պլատոնի, չպետք է լինի սովորա-  
կան պոլիսից մեծ, այն պետք է կառավարեն զինված ուժի՝ ռազ-  
միկների դասի վրա հենվող փիլիսոփաները: Հասարակության այդ  
արտոնյալ մասը պետք է ապրի համայնական կյանքով, շունե-

նալով մասնավոր սեփականություն, ընդ որում կանայք պետք է հավասարեցվեն տղամարդկանց իրենց իրավունքներով ու պարտականություններով: Ռազմիկների ու փիլիսոփաների գոյության համար անհրաժեշտ միջոցները պետք է տրամադրեն նրանց կողմից շահագործվող ու քաղաքական գործունեությունից հեռացված հողագործները և արհեստավորները: Ոչ միայն արտոնյալները, այլև քաղաքական իրավունքներ չունեցող հողագործներն ու արհեստավորները ապրում են ստրուկների անողոք շահագործման հաշվին:

Սոկրատեսի մյուս աշակերտներից հատկապես հայտնի են Անտիսթենեսն ու Արիստիպոսը: Անտիսթենեսը կինիկոսների (այդ անվանումը առաջացել է «կին» բառից, հունարեն՝ շուն) դպրոցի հիմնադիրն էր: Նա ժխտում էր գիտության անհրաժեշտությունը: Կինիկոս էր Անտիսթենեսի աշակերտ Դիոգենես Սինոպցին (մահացել է մ. թ. ա. 323 թ.): Նա ապրում էր աղքատի կյանքով՝ զրկանքներ կրելը համարելով առաքինության ապացույց: Դիոգենեսը կարևորություն չէր տալիս ազատության ու ստրկության մեջ եղած տարբերությանը, պնդելով, որ ստրկական վիճակին հասած իմաստունն ազատ է ու անգամ տիրակալ: Կինիկոսները գտնում էին, որ իմաստունի համար պետական կյանքն ավելորդություն է, իսկ լավագույն հասարակական կյանք համարում էին բնական վիճակը, երբ ամբողջ մարդկությունը կապրի ինչպես մի միասնական հոտ: Նման հայացքներն արտահայտում էին ընչազուրկների յուրահատուկ բողոքն ընդդեմ ստրկատիրական հասարակությունում իշխող անհավասարության:

Գորգիասի ու Սոկրատեսի մոտ ուսանած Արիստիպոս Կիրենացին հիմնեց, այսպես կոչված, կիրենյան դպրոցը: Անտիսթենեսի պես, Արիստիպոսը գիտելիքը գնահատում էր սոսկ գործնական օգուտի տեսանկյունից, գտնելով, որ Ֆիզիկական հետազոտությունները լիովին աննպատակ են: Արիստիպոսը պնդում էր, որ մեր ընկալումները խոսում են միայն մեր զգացումների և բնավ ոչ իրերի որակի մասին: Ամեն տեսակի զգացողությունը ամփոփվում է շարժման մեջ. եթե վերջինս համաչափ է, ապա գոյանում է քավականության զգացմունք, եթե այն կոպիտ ու ընդհատվող է, գոյանում է անբավարարության զգացում, եթե թույլ է, ապա այն անկատելի է մեզ համար: Այսպիսով, քավականությունը մեր մարմնում կանոնավոր կատարվող պրոցեսների արդյունք է: Ըստ Արիստիպոսի, մեր արարքները պետք է հետապնդեն մի նպատակ, այն է՝ հոգեկան հավասարակշռություն կազմող քավականության ստացում: Ընդամիկն, բոլոր դեպքերում պետք է լինել սեփական անձի տեր, այսինքն լինել համբերատար: Այսպիսով, կիրենյան դպրոցը

ևս ճգնաժամ ապրող պոլիսի ծնունդ էր. այդ դպրոցի ներկայացուցիչները փաստորեն ելք չէին գտնում ստեղծված վիճակից:

Մ. թ. ա. IV դ. երկրորդ կեսի խոշորագույն հունական փիլիսոփա ու գիտնական էր Արիստոտել (մ. թ. ա. 384—322 թթ.) Ստագիրացին: Նա մի ժամանակ սովորում էր Պլատոնի մոտ, սակայն հետո տարակարծիք եղավ նրա հետ: Արիստոտելը Ալեքսանդր Մակեդոնացու դաստիարակն էր: Հետագայում, մ. թ. ա. 335 թ. Արիստոտելը կիկեոնում (Աթենք) հիմնեց դպրոց, որտեղ սովորեցնում էր փիլիսոփայություն ու ճարտասանութիւն: (Արիստոտելի դրպրոցը նաև կոչվում է «պերիպատետիկյան», «ճեմական», այսինքն այստեղ սովորեցնում էին զբոսնելու ժամանակ: Արիստոտելը սովորեցնում էր իր աշակերտներին նրանց հետ ճեմելով կիկեոնում): Բազմակողմանի գիտելիքներ ունեցող Արիստոտելը ստեղծեց Հունաստանում առաջին ընդարձակ գրադարանը:

Իր փիլիսոփայական հայացքներով Արիստոտելը տատանվում էր իդեալիզմի ու մատերիալիզմի, այսինքն, «Պլատոնի գծի» ու «Դեմոկրիտոսի գծի» միջև: Նա մեծ նշանակություն էր տալիս փորձնական գիտությունը, բայց փիլիսոփայության խնդիրն էր համարում իրերի էություն ճանաչումը. այդ էությունը նա տեսնում էր հասկացության բովանդակությունը կազմող ձևերի մեջ: Ձևերը, ըստ Արիստոտելի, կազմում են եզակի իրերի ներքին էությունը, բայց եզակին պետք է հանգի ընդհանուր հասկացություններին:

Արիստոտելը ստեղծեց տրամաբանություն՝ որպես ինքնուրույն գիտություն, մշակելով դեդուկտիվ ու ինդուկտիվ մեթոդները: Արիստոտելը հատուկ նշանակություն էր տալիս գոյի հիմքերի ուսումնասիրությանը: Ըստ Արիստոտելի, գոյ կարող է լինել միայն եզակին: Քննադատելով Պլատոնի ուսմունքը գաղափարների մասին, Արիստոտելը պնդում էր, որ գոյը չի կարող գտնվել իրերից դուրս, և որ գաղափարները զուրկ են շարժիչ ուժից: Յուրաքանչյուր փոփոխություն ունի նախադրյալներ. դրանք սուբստրատը (հիմքը) և հատկություններն են, որոնց փոխազդեցությունը ծնում է փոփոխություն: Արիստոտելը սուբստրատ էր համարում մատերիան, իսկ հատկություններ՝ գաղափարները կամ ձևերը: Լինելության նպատակը իրագործվում է, երբ մատերիան ձեռք է բերում իր ձևը, հետևաբար ձևի ու դրա սուբստրատի՝ մատերիայի միջև եղած դիալեկտիկական փոխազդեցությունը իրի ռեալությունն է: Ձև շունեցող մատերիան՝ «նախամատերիան», հանդիսանում է սուբստրատ բոլոր որոշակի մատերիաների համար: Ձևի ու մատերիայի հարաբերությունից ծագում է շարժումը: Շարժողը իրենից ներկայացնում



է ակտուալ սկզբնավորումը՝ ձևը, իսկ շարժման մեջ դրվողը պոտենցիալ է, այսինքն՝ մատերիա: Չեն ու մատերիան իրար նկատմամբ մշտապես գտնվում են դիալեկտիկական միասնության պրոցեսի մեջ: Բայց քանի որ աշխարհը միասնական, լավ կազմակերպված ամբողջություն է, ապա, ըստ Արիստոտելի, պետք է ընդունել նաև միասնական, առաջին մղումը հաղորդող, ոչ մարմնական էություն ունեցող բանականության (անուս) գոյությունը:

Ըստ Արիստոտելի, ֆիզիկայի առարկան է հանդիսանում շարժվողը և մարմնականը: Շարժում ասելով նա հասկանում էր բնությունում կատարվող ամեն մի փոփոխություն. այդպիսիք կարող են լինել փոփոխությունները տարածության, որակի ու քանակության մեջ: Ֆ. էնգելսը, Արիստոտելի փիլիսոփայական մեթոդը բնութագրելով, նշում էր, որ նա «արդեն հետազոտել էր դիալեկտիկական մտածողության ամենաէական ձևերը»<sup>15</sup>: Արիստոտելը իր հետաքրքրությունների շրջանակի մեջ էր առնում նաև օրգանական բնությունը՝ բույսերին, կենդանիներին, մարդկանց: Մատերիան, ըստ Արիստոտելի, մարմին է, իսկ ձևը՝ կենդանի էակի ոգին. այս պատճառով ոգին չի կարող լինել առանց մարմնի, բայց ինքը որևէ մարմնական բան չէ: Բնությունում ոգիները զարգանում են ցածր աստիճանից դեպի բարձրը: Այդպիսիք են՝ թուսական կամ վեգետատիվ ոգին՝ կյանքի, սնվելու ու բազմանալու սկզբունքը, կենդանական ոգին, որը զգացող ու ցանկացող ոգին է և, վերջապես, մարդկային կամ բանական ոգին: Արիստոտելը հավաքեց ու դասակարգեց մի շարք հոգեբանական փաստեր. նա դարձավ հոգեբանության հիմնադիրը:

Արիստոտելի բարոյագիտությունն ուղղված էր մարդու համար հասանելի բարիքի հետազոտման նպատակին. այդ բարիքը, ըստ նրա, տարբեր է տարբեր սեռ ու սոցիալական դիրք ունեցող անձանց մոտ: Արիստոտելը մարդկանց նպատակը համարում էր ոչ թե ճանաչումը, այլ գործունեությունը:

Արիստոտելը, ապրելով ինքնուրույն ստրկատիրական պոլիսների կործանման ու Ալեքսանդր Մակեդոնացու վիթխարի միապետության ստեղծման ժամանակաշրջանում, մշակեց պետության մասին ուսմունք, որով նա հանդես եկավ իբրև պոլիսի հին պետական ձևի պաշտպան: Նա ելնում էր այն դրույթից, որ մարդն իր բնությամբ դեպի հասարակական կյանքը հակված էակ է: Հաղորդակցման սկզբնական ձևը Արիստոտելը համարում էր ընտանիքը, դրան հաջորդում էր գյուղական համայնքը («կոմե»): Մի քանի

<sup>15</sup> Ֆրիդրիխ էնգելս, Անտի-Գյուրինգ, Երևան, 1967, էջ 24:

գյուղական համայնքների միավորման շնորհիվ հանդես է գալիս մարդկանց հաղորդակցության ամենակատարյալ ձևը՝ պոլիսը: Ըստ Արիստոտելի, պետական կառուցվածքը պետք է համապատասխանի ժողովուրդների բնավորությանն ու պահանջներին: Պետական կառուցվածքի հիմնական տարբերիչ հատկանիշը նա համարում էր կառավարողների քանակը ու ելնելով դրանից նշում էր կառավարման վեց հիմնական տեսակներ: Դրանք են՝ միապետությունը, արիստոկրատիան ու ցենզային հանրապետությունը կամ տիմոկրատիան, որոնք, Արիստոտելի կարծիքով, լավ կառավարումներ են, և դեմոկրատիան, օլիգարխիան ու տիրանիան, որոնց նա դասում էր վատերի շարքը: Արիստոտելը շատ չափավոր, օլիգարխիային մոտեցող հանրապետության կողմնակից էր: Լավագույն պետությունում քաղաքացիներ պետք է լինեն նրանք, ովքեր ընդունակ են կառավարելու ինչպես իրենց դիրքով, այնպես և կրթությամբ: Տիգրիկական աշխատանքը պետք է դնել մետոյկների ու ստրուկների վրա, քանի դեռ չեն ստեղծվել նրանց փոխարինող մեխանիզմները: Արիստոտելը, լինելով ստրկատիրական հասարակության գաղափարախոս, արդարացնում էր ստրկությունը, ասելով, որ կան մարդիկ, որոնք ընդունակ են կատարելու միայն ֆիզիկական աշխատանք և այս պատճառով նրանք պետք է կառավարվեն ուրիշ մարդկանց կողմից:

Իր բազմակողմանի գործունեության ընթացքում Արիստոտելը շոշափեց նաև արվեստի, գրականության ու թատրոնի տեսության հարցերը: Նա գեղարվեստական ստեղծագործությունը հանգեցնում էր նմանվելու այն հակամանը, որն առկա է մարդու մոտ, բայց դասվորական ընդօրինակման հակում չէ, ընդօրինակում, որի ժամանակ ամեն ինչ պատկերվում է այնպես, ինչպես այն կա, այլ ընդհակառակը, դա ձգտում է ներկայացնել իրերն այնպես, ինչպիսիք նրանք պիտի լինեն:

Արիստոտելի հանրագիտական գիտելիքներն արտացոլում էին անտիկ գիտության այն հսկայական առաջընթացը, որ տեղի ունեցավ դասական շրջանի վերջում, ու միաժամանակ ցույց տվեցին գիտության ամենահիմնական բնագավառներում եղած մի շարք էական բացերը: Վ. Ի. Լենինը «Փիլիսոփայական տետրերում» գրում էր, որ Արիստոտելի մոտ «իմացության օբյեկտիվության նկատմամբ կասկած չկա: Նախիվ հավատ կա բանականության ուժի, իմացության ուժի, հզորության, օբյեկտիվ ճշմարտացիության նրկատմամբ: Եվ նախիվ խնճավածություն, անօգնական-խղճալի խճճվածություն կա ընդհանուրի և առանձինի դիալեկտիկայում՝ հասկա-

ցության և առանձին առարկայի, իրի, երևույթի զգայաբար ընկալվող ռեալության դիալեկտիկայում»<sup>16</sup>։

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մ. Թ. ա. IV դ. հունական գրականության մեջ զգալի տեղ էր գրավում Քսենոֆոնը՝ ատտիկական արձակի խոշորագույն ներկայացուցիչներից մեկը։ Նա բեղմնավոր հեղինակ էր, գրում էր պարզ, հասարակ լեզվով, փիլիսոփայության, պատմության, տնտեսության, ռազմական գործի մասին։

Այլ բնույթ ունեւր Պլատոնի գրական գործունեությունը։ Տրամախոսության ձևով զարգացնելով իր մտքերը, Պլատոնը ստեղծեց այն ժամանակի աթենական կյանքը արտացոլող գունեղ բանաստեղծական կերպարներ։ Հաճախ դիմելով աթենական դիցաբանությունը, նա հաղորդում էր նրան նոր փիլիսոփայական բովանդակություն։

Ատտիկական դրաման մեծ վերելք ապրելով մ. թ. ա. V դ., հաջորդ՝ մ. թ. ա. IV դարում շունեւր էական նշանակություն։ Դա «հին կատակերգության» հիմնական հատկությունները կորցրած «միջին ատտիկական կատակերգության» ժամանակաշրջանն էր։ «Միջին կատակերգությունը» ուշադրություն չէր նվիրում քաղաքական անցքերին, պետական ու հասարակական կյանքին, դրան օտար էր նաև Արիստոփանեսի համարձակ երևակայությունը։ «Միջին կատակերգությունն» ավելի մոտեցավ առօրյա կյանքին. այդ են վկայում կատակերգությունների անվանումները՝ «Շինական», «Սրնգահար», «Բեովտուհին», «Կառապան», «Երկվորյակներ», «Խորթ եղբայրներ»։ Հաճախ «միջին կատակերգությունը» արտացոլում էր Աթենքի ոսկյա երիտասարդության կյանքը, նրա խնջույքներն ու սիրային արկածները։ Այս բոլոր փոփոխությունների հետևանքով երգչախումբը կորցրեց կատակերգություններում ունեցած իր նախկին նշանակությունը. նա չվերացավ, բայց նրա դերը համարյա սահմանափակվեց պարերի կատարումով։

Մ. թ. ա. IV դ. վերջին երեքհարյուրամյակի սկզբին ձևավորվում է «նոր կատակերգություն», որտեղ վառ արտահայտում ունեցավ շարքային քաղաքացիների առօրյան։ Իր բովանդակությամբ դա խարդավանքների կատակերգություն էր, որտեղ էական դեր էր խաղում սերը։ Սովորաբար գործող անձերն էին՝ սիրահարված պատանին, նրա սիրած աղջիկը, հայրը կամ խնամակալն ու ճարպիկ,

<sup>16</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 38, Երևան, 1962, էջ 466—467։

ձեռներեց ստրուկը, որն իր հնարներով միշտ օգնութեան էր հասնում իր երիտասարդ տիրոջը:

Մ. թ. ա. IV դարը ատտիկական հոետորական արվեստի կամ ճարտասանութեան ծաղկման ժամանակաշրջան էր: Ճարտասանութիւնը, ինչպէս դա նշվում էր դեռևս հնում, չէր հետապնդում որևէ ճշմարտութիւն ապացուցելու նպատակ. նրա խնդիրն էր համոզել լսողներին այն բանում, որ այս կամ այն պնդումը արդարացի է: Ճարտարաբանութիւնը հատկապէս զարգացավ Աթենքում: Մ. թ. ա. IV դ. աթենացիների՝ դատամտութեան հանդէպ խիստ զարգացած հակումը ստիպում էր քիչ փորձառու մեղադրյալներին դիմել ավելի հմուտ հոետորներին. դրա հետևանքով հանդես եկան վարձատրութեան դիմաց «իրենց կիներտներին» համար ճառեր կազմող պրոֆեսիոնալները՝ «լոգոգրաֆները»: Մ. թ. ա. V դ. վերջին—մ. թ. ա. IV դ. սկզբին է վերաբերում Սիրակուզայում ծնված ու աթենական մետոյկոս դարձած կիսիասի գործունեութիւնը: կիսիասը ճառեր էր կազմում դատավարութիւնների համար, որոնք բավականին տարբերվում էին իրենց բնույթով ու բովանդակութեամբ: Այդ ճառերին բնորոշ էին վառ գույներ ու համոզիչ փաստարկումներ, դրանցում արտահայտվեցին այն ժամանակի ատտիկական հասարակութեան կենցաղն ու բարքերը:

կիսիասի մերձավոր հաջորդն էր Իսելյոսը, որի գործունեութիւնը ծավալվեց մ. թ. ա. IV դ. առաջին կեսին: Հիմնականում ժառանգական հարցերի հետ կապված դատավարութիւնների համար կազմված նրա ճառերը աչքի էին ընկնում հմուտ կառուցվածքով ու ապացույցների հստակութեամբ, բայց նրա մոտ բացակայում էին կիսիասին հատուկ գունեղ նկարագրութիւնները: Դատական ճառեր կազմող ու ճարտասանութեան ուսուցիչ Իսոկրատեսը (մ. թ. ա. 436—337 թթ.) արժանացավ հատուկ ճանաչման որպէս հանդիսավոր ճարտասանութեան հիմնադիր: Նա կազմում էր այսպէս կոչված պանեգիրիկներ, այսինքն՝ տոնական ժողովներում արտասանվող ճառեր: Այդ ճառերն աչքի էին ընկնում նրբին ու ճոռոմ ոճով: Մ. թ. ա. IV դ. աթենական հոետորների համաստեղութիւնը եզրափակում են Դեմոսթենեսը, էսքինեսն ու Հիպերիդասը: Նրանցից ամենանշանավորը՝ Դեմոսթենեսը (մ. թ. ա. 384—322 թթ.), երիտասարդ տարիներին դատական ճառեր կազմող էր, իսկ հետո զբաղվեց քաղաքական գործունեութեամբ ու դարձավ հակամակեդոնական կուսակցութեան պարագլուխ: Նրա ճառերին հատուկ էին բարձր զարգացած հոետորական տեխնիկան ու ուժեղ պաթոսը: Դրանք նախատեսված էին ոչ թե կարգալու, այլ ունկնդրի վրա անմիջականորեն ներգործելու համար ու հաճախ հետապնդում էին

եռանդ բորբոքելու, ունկնդիրներին հուզելու նպատակ: Միաժամանակ նրա ճառերը միշտ վաղօրոք նախապատրաստվում էին, նրանց կառուցվածքն ու փաստարկները մտածված էին մինչև վերջին մանրուքը: Էսքիներ՝ Դեմոսթենեսի հակառակորդն ու մրցակիցը, վերջինիս զիջում էր հոետորական տաղանդի տեսակետից: Էսքիներ ճառերը աչքի էին ընկնում կառուցվածքի հստակությամբ, պլանի պարզությամբ, նրբագեղությամբ, լսողի մոտ կենդանի հետաքրքրություն առաջացնելու ունակությամբ ու հաճախ՝ թեթև հեզնանքով: Ինչպես Դեմոսթենեսը, պատկանելով հակամակեդոնական կուսակցությանը, Հիպերդիասը նույնպես կազմում էր քաղաքացիական ու քաղաքական ճառեր:

#### ՀԱՎԵՆԱԿԱՆ ԿՆՑԱՂԸ

Բնակաբան, կանույժ, ամանեղեն, հագուստեղեն: Հունական ստրկատերի քաղաքային տունը, որտեղ նա բնակվում էր իր ընտանիքի ու սովորաբար փոքրաթիվ տնային ստրուկների հետ, դրոսից ինքնապարփակ, մեծ մասամբ մեկ հարկանի շինություն էր: Մի քանի սենյակներ տեղադրված էին ներքին փոքր բակի շուրջը, այդ բակին հարում էին ծածկ ունեցող սյունազարդ նախասրահներ, որոնց պահում էին սյունաշարերը: Պատուհանները, հատկապես առաջին հարկում, բացակայում էին, ու լույսը սենյակներ էր թափանցում դեպի բակը բացվող դռների միջով: Հունական տունը բաժանվում էր երկու մասի: Մեկը զբաղեցնում էր տան տերը. դրա գլխավոր սրահն էր անդրոնը (սենյակ տղամարդկանց համար), որտեղ կազմակերպվում էին խնջույքներ՝ սիմպոսիոններ: Շենքի մյուս մասը՝ գինեկեռնը, նախատեսված էր կանանց համար: Քարից, իսկ ավելի հաճախ շթրծած աղյուսից շինված տների պատերը ծեփում ու ներկում էին: Հարուստ տներում շքասենյակների հատակը զարդարվում էր տարբեր գույնի գետաքարերից հավաքած խճանկարներով: Մուտքի դռները սովորաբար ունեին բավական մեծ չափերի կողպեքներ:

Հունական տների կահավորանքը բավականին հասարակ էր: Գերակշռում էր ոչ բարձր կահույքը՝ մահիճներ (կլիններ), որոնցում ոչ միայն քնում էին, այլ նաև ընկողմանում էին խնջույքների ժամանակ, փոքրիկ ու ցածր ճաշասեղաններ (տրապեզաներ), արկղեր, աթոռակներ, բազկաթոռներ: Լուսավորության համար օգտագործում էին տափակ, սովորաբար կավից պատրաստած աշտանակներ, որոնք դրվում էին բրոնզե բարձր նրբագեղ պատվանդանների վրա: Աշտանակների համար վառելիք էր ծառայում ձիթայուղը:

Կենցաղում զգալի դեր էր խաղում կապե ամանեղենը: Գինին ու ձիթայուղը պահելու համար օգտագործում էին մեծ, երկունկանի, սուր հատակ ունեցող սահորներ՝ ամփորաներ: Փոխադրումների ժամանակ դրանք սովորաբար խցանվում էին կապե խցաններով ու ծածկվում էին ձյութով: Սեղանի ամանեղենը նույնպես կավից էր, այն հաճախ զարդարված էր գեղարվեստական նախշանրկարներով: Հույների սնունդը բաղկացած էր հացից (ավելի հարուստների մոտ ցորենի հացից, իսկ շքավորների ու ստրուկների մոտ՝ գարու), բանջարեղենից, ձկնեղենից, մրգերից: Միս ուտում էին հազվադեպ, գլխավորապես՝ զոհաբերությունների կապակցությամբ: Ուտելիքի հետ միշտ խմում էին շրախառն գինի: Տարածված էր արդուզարդի սպասքը, հատկապես բուսական: յուղի համար անոթները: Բուրավետ յուղերը փոխարինում էին ժամանակակից օծանելիքին, հույն մարզիկները ըմբշամարտից առաջ յուղ էին քսում իրենց մարմիններին:

Հունական հագուստեղենն աչքի էր ընկնում պարզությամբ, այն սովորաբար պատրաստվում էր բրդից: Տղամարդու հագուստը բաղկացած էր մինչև ծնկները հասնող շապիկից՝ խիտոնից ու երկար թիկնոցից՝ հիմատիոնից, որը հույները փաթաթում էին իրենց վրա՝ ազատ թողնելով աչք ձեռքը: Հիմատիոնը ուղղանկյան ձև ունեցող գործվածքի կտոր էր, որի անկյուններում կարում էին փոքրիկ ծանրաքարեր. մարմնի վրա թիկնոցը մնում էր մասամբ այն բանի շնորհիվ, որ ծանրաքարերը ներքև էին ձգում նրա եզրերը, բայց գլխավորապես այն պահվում էր մշտապես ֆիզիկական կուլտուրայով զբաղվելու միջոցով ձեռք բերված տոկունության, առանց ավելորդ ժեստերի ու շարժումների մարմինը հանգիստ պահելու ունակության շնորհիվ:

Կանանց խիտոնը ավելի երկար էր, այն հասնում էր մինչև ոտքի կոճը: Տղամարդկանց համեմատությամբ կանայք հիմատիոնը կրում էին ավելի բազմազան ձևերով: Հույն կանայք երբեմն հիմատիոնի ծայրը գցում էին գրիսի վրա, այլ դեպքում նրանով ծածկում էին դեմքի մի մասը: Պատահում էր նաև, որ կանայք հիմատիոնը մեջքի վրայից գցում էին ձեռքից ձեռք, այն կրելով շալի պես:

Արհեստավորները հագնում էին աչ ուսը շծածկող կարճ խիտոններ ու կրում էին կոնաձև գլխարկներ: Իրենց քաղաքում հույները սովորաբար շրջում էին առանց գլխարկի, իսկ ճանապարհ գնալիս հագնում էին լայնեզր գլխարկներ ու կարճ թիկնոցներ: Ունամանի դեր էին կատարում մույկերը՝ կաշվե ներքաններ, որոնք փոկերով կապվում էին ոտքերին:

**Դաստիարակութիւն:** Դաստիարակութիւնը դորիական որոշ պոլիսներում կրում էր հասարակական բնույթ, բայց ամենուրեք գերիշխում էր տնային դաստիարակութիւնը: Ազատների երեխաների հսկողութիւնը սովորաբար հանձնարարվում էր ստրուկին. այդպիսի ստրուկը կոչվում էր «պեդագոգոս» (այսինքն այն անձը, որն ուղեկցում էր երեխաներին, մանկավարժ): Տղաները պատանեկան տարիներին հաճախում էին դպրոց, որտեղ սովորում էին գրագիտութիւն, գրականութիւն նախագիտելիքներ, երաժշտութիւն ու հաշվել: Միաժամանակ նրանք զբաղվում էին ֆիզիկական կուլտուրայով ու մասնակցում էին հատուկ մրցութիւնների:

Դպրոց հաճախումը դադարում էր, երբ տղաները հասնում էին երիտասարդական տարիքի: Պարմանիները մտնում էին եփեքների միավորման մեջ. եփեքները շարունակում էին զբաղվել ֆիզիկական կուլտուրայով, ծանոթանում էին ռազմական գործի հետ, հրսկում էին պետութիւն սահմանները: Հետագա ուսուցումը, որը սփեաստների կամ փիլիսոփաների մոտ դասախոսութիւնների ունկընդրում էր, այս կամ այն հելլենի անձնական նախաձեռնութիւն գործ էր, բայց մատչելի էր միայն շատ սահմանափակ թվով մարդկանց:

Աղջիկների դաստիարակութիւնը նրանց տնային տնտեսութիւն վարելու ու ձեռքի աշխատանք սովորեցնելու մեջ էր: Աղջիկներին սովորեցնում էին երգել ու պարել, որպեսզի նրանք կրոնական տոնախմբութիւնների ժամանակ մասնակցեին շուրջպարերին: Կանանց պարտականութիւնների մեջ էր մտնում նաև տնային բժշկութիւն իմացութիւնը, բոլոր տնեցիների բուժումը:

Հույների ընտանեկան կյանքում եղած գլխավոր իրադարձութիւնները ուղեկցվում էին պաշտամունքային արարողութիւններով, որոնք սովորաբար կատարվում էին առանց քրմերի մասնակցութիւն (նրանք գլխավորապես տնօրինում էին հասարակական պաշտամունքները): Ընտանեկան միջավայրում հատուկ հարգանք էր վայելում օջախի աստվածուհի Հեստիան: Միսակատարութիւններ կատարվում էին երեխա ծնվելու կապակցութեամբ, գլխավորապես անվանակոչման ժամանակ, ամենամյա տարբեր տոների, ամուսնութեան, թաղման ժամանակ:

**Գիրք:** Գիրք Հին Հունաստանում ունեցավ շատ լայն տարածում: Կիրառվում էր տառային գիրը: Մ. թ. ա. V դ. մարմարե տախտակների վրա առավել խնամքով կատարված արձանագրութիւններում հայտնաբերվեց գրի համակարգ, որը կոչվում էր «ստոյքեդոն»: Այս համակարգում երկրորդ ու հաջորդ տողերի բոլոր տառերը դասավորվում էին առաջին տողի տառերի տակ՝ խիստ հա-

մապատասխանելով վերջիններին: Հնում հույները գրում էին, շօգտագործելով մեծատառերը և իրարից շանջատելով բառերը: Գրքերը գրվում էին Ծգիպտոսից բերվող պապիրուսի նեղ, երկար շերտակտորների վրա: Բնագիրը տեղավորվում էր փոքր սյունների մեջ, դրանց բարձրությունը համապատասխանում էր պապիրուսի լայնությանը: Այդպիսի գրքերը (հունարեն կոչվում էին բիբլոն) ոլորվում էին ու փաթեթների ձևով պահվում հատուկ գլանաձև տուփերի մեջ, որոնց վրա ամրացնում էին համապատասխան պիտակներ:

Առօրյա կենցաղում ու դպրոցական ուսուցման համար հույներն օգտագործում էին դիպտիքներ: Դրանք մի եզրից ամրակներով իրար միացված երկու փոքրիկ տախտակներ էին, որոնք կարելի էր բացել ու փակել: Տախտակների եզրերը դուրս էին գալիս նրանց լայն մակերեսից, վերջինս ամբողջովին ծածկվում էր մոմով: Այդ մակերեսի վրա էլ հույները գրում էին, խազելով տառերը սրածայր ոսկյա կամ մետաղյա փայտիկով՝ ստիլոսով: Ստիլոսի մյուս լայն ծայրով ջնջում էին սխալմամբ գրված բառերը կամ տառերը: Դիպտիքներն օգտագործում էին նաև նամակագրության համար: Նման դեպքում դրանք կարելի էր կապել քուղով և փակել կրնիքով, որպեսզի սուրհանդակը չկարողանա կարդալ նամակը: Երբեմն նամակներ և հատկապես ամեն կարգի մոզական հմայություններ գրելու համար օգտագործում էին կապարե թիթեղիկներ: Գրելու համար ամենաէժան նյութը ամանների խեցիներն էին («օստրակոն»), որոնց վրա խազվում էին գրերը:

Տարբեր տեսակի պետական ակտերը՝ խորհուրդների ու ժողովրդական ժողովների որոշումները, օրենքները, հատուկ արտոնություններ շնորհելու մասին որոշումները, պատվավոր դեկրետները, պետական ու տաճարային տնտեսական հանձնաժողովների հաշվետվություններն ու նման վավերագրերը սովորաբար փորագրվում էին մարմարե տախտակների վրա: Այդ աշխատանքը կատարում էին հատուկ փորագրիչները. նրանք երբեմն սիրապետում էին գեղագիտական բացառիկ վարպետության, բայց միշտ չէ, որ անհրաժեշտ չափով գրագետ էին: Մարմարի վրա արձանագրություններ փորագրելը համեմատաբար թանկ էր նստում, ավելի էժան էին փայտե տախտակների վրա ներկերով կատարված մակագրությունները:





## Քաճիկ IV

### ՀԵԼԼԵՆԻՉՄԻ ՇՐՋԱՆ

Գլուխ 17. ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՅՈՒ  
ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ: ՆՐԱ ՏԵՐՈՒԹՅԱՆ  
ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՓԼՈՒՉՈՒՄԸ

Հելլենիզմի դարաշրջան են կոչում Հունաստանի ու Արևելյան Իջերկրականի և նրան հարող Իրանի ու Միջին Ասիայի մյուս ժողովուրդների ու ցեղերի պատմության մի շրջանը, որը սկսվելով թ. ա. IV դ. վերջին երեքհարյուրամյակից տևեց մինչև մ. թ. ա. դ. երկրորդ կեսը (այդ ժամանակաշրջանի ավարտի ավանդական արեթիվն է համարվում մ. թ. ա. 30 թ.): Այդ անվանումը առասրկեց գերմանացի պատմաբան Յ. Դրոյզենը, որը այդ բառը գերանական գրականության կանոնների համաձայն կազմեց «նմանում են հույներին» իմաստը նշանակող հին հունական բայից (տե՛ս 547): Նա ենթադրում էր, որ Հին Արևելքի ժողովուրդներն ու ցեղերը մակեդոնացիների ու հույների կողմից նվաճվելուց հետո լիոն ենթարկվեցին հունական կամ հելլենական մշակույթի ազդեցությանը: Այս պատճառով էլ նա այդ ամբողջ շրջանի մշակույթը նվանեց հելլենիստական: Հելլենիզմի դարաշրջանի այսպիսի ատկերացումը հիմնովին սխալ էր: Սակայն մարդիկ ընտելացել են հելլենիզմի շրջան, կամ դարաշրջան» տերմինին ու գիտության եջ այն օգտագործում են մինչև այժմ, դրան տալով այլ նշանաւթյուն:

Սովետական պատմաբանների՝ վերջին տարիներին կատարած շխատանքի շնորհիվ հնարավոր է ճշտել հելլենիզմի շրջանի նութագիրը. այն պետք է համարել արևելյան Միջերկրականում յուրթյուն ունեցած ստրկատիրական հասարակարգի զարգացման

բարձր փուլի սկիզբ, փուլ, որը իրեն ամբողջովին սպառեց ավելի ուշ, արդեն հոռմեական տիրապետության ժամանակ: Հելլենիզմի դարաշրջանին հատուկ էր դասակարգային պայքարի բացառիկ սրբումբ, որն արտահայտվեց իրենց բնակություն վայրերից ու աշխատանքից գյուղացիների և արհեստավորների մասսայաբար հեռանալու մեջ, գյուղացիների, արհեստավորների ու ստրուկների ապրտամբությունների մեջ, ապստամբություններ, որոնք մինչև հիմքերը ցնցեցին հելլենիստական պետությունները:

!\* \*

Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքի մասին շատ են գրել նրա զինակիցներն ու ժամանակակիցները, ինչպես նաև հետագա սերունդներին պատկանող պատմաբանները, փիլիսոփաներն ու գրողները: Ալեքսանդր Մակեդոնացու վիթխարի նվաճումները, երիտասարդ տարիքում նրա հանկարծակի մահը, որը տեղի ունեցավ հաջողության գագաթնակետին, ինչպես նաև նրա տերության արագ փլուզումը մշտապես ուշադրություն են գրավել ու պահանջել բացատրություն:

Դժբախտաբար Ալեքսանդրի ժամանակակիցների աշխատությունները գրեթե չեն պահպանվել: Նրա բազմաթիվ նամակների ու կարգադրությունների, հատուկ նշանակված անձերի կողմից գրված թագավորական օրագրի՝ Ծփեմերիսի, ինչպես նաև Ալեքսանդրի առաջին կենսագրությունների հեղինակների ու նրանց աշխատությունների բնույթի մասին տեղեկություններ են հաղորդում միայն ուշ ժամանակաշրջանի հեղինակները: Այդ աշխատություններից երբեմն արվում են մեջբերումներ: Իսկ անմիջականորեն այն ժամանակից, երբ ապրել էր նվաճողը, պահպանվել են միայն փոքր թվով արձանագրություններ, որոնք պարունակում են նրա անունից կազմված կամ նրա գործունեության հետ կապված որոշումներ ու վավերագրեր, ինչպես նաև պահպանվել են մեծ քանակությամբ դրամներ: Հունաստանում Ալեքսանդրի ձեռնադրած միջոցառումներին նվիրված է մի ամբողջ ճառ, որը տեղադրված է Դեմոսթենեսի երկերում 17 համարի տակ, բայց հավանաբար այն պատկանում է նրա ժամանակակից մեկ այլ հոետորի:

Այժմյան գիտության տեսանկյունից ամենալավորակ գործերը Արիանոսի աշխատություններն են: Նրանց հեղինակն անվանի փոքրասիական հույն էր, հոռմեական Բիթանիա պրովինցիայից: Հոռմեական ծառայության մեջ նա ունեցավ փայլուն զինվորական ու վարչական պաշտոնավարություն, իսկ իր կյանքի երկրորդ շրջանում զբաղվեց գրական գործունեությամբ: Արիանոսը ստեղծա-

գործել է մ. թ. II դ. կեսին: Իր աշխարհայացքով նա ստոիկ էր, իսկ նրա համար գրական օրինակ էր Քսենոֆոնը: Արիանոսը շատ աշխատությունների հեղինակ էր, սակայն դրանցից պահպանվել են միայն մի քանիսը: Դրանց մեջ գլխավորն է «Ալեքսանդրի անաբասիսը» յոթ գրքերում, որտեղ նկարագրված է հիմնականում ռազմական պատմությունը: Արիանոսն օգտագործեց Ալեքսանդրի ժամանակակիցների ու զինակիցների՝ Պտղոմեոսի, Արիստոբուլոսի գործերից թաղած տեղեկությունները: Նա ձգտում էր ճշգրիտ նկարագրել անցքերը: «Ալեքսանդրի անաբասիսի» շարունակությունն է Արիանոսի մյուս աշխատությունը՝ «Հինդիկեն»: Այստեղ նկարագրվում են սկզբում երկիրն ու բնակչությունը, իսկ հետո՝ մակեդոնական բանակի մի մասի վերադարձը Հնդկաստանից: Այդ բանակը փոխադրող նավերն ընթանում էին օվկիանոսի ափի երկայնությունամբ դեպի Եփրատի գետաբերանը:

Մ. թ. II դ. սկզբում Պլուտարքոսը գրեց «Ալեքսանդրի կենսագրությունը»: Հավատարիմ մնալով փիլիսոփա-բարոյախոսի իր հետաքրքրություններին, նա գրխավորապես ձգտում էր տալ Ալեքսանդրի վառ կերպարը, պատկերել նրա բնավորությունը, նկարագրել նրա կենսագրությունը: Թեմայի հանդեպ նման վերաբերմունքը իջեցնում է այդ աշխատության արժեքը պատմաբանի համար, բայց մյուս կողմից Պլուտարքոսը հաղորդում է այնպիսի փաստեր, որոնք չկան Արիանոսի մոտ: Կենսագրությունից բացի Պլուտարքոսը գրեց նաև մի փոքրիկ աշխատություն, որը կոչվում էր «Ալեքսանդր Մեծի ճակատագրի մասին». այստեղ նա փորձում էր պարզել Ալեքսանդրի հաջողությունների պատճառները: Երկու աշխատություններն էլ նպատակ ունեն փառաբանել Ալեքսանդր Մակեդոնացուն: Այդ դրական ավանդույթին է հարում Ալեքսանդրի նվաճումների ու նրա հսկայական միապետության առաջացման նկարագրությունը, որը տրված է Դիոդորոսի «Պատմական գրադարանի» XVII գրքում:

Սակայն Ալեքսանդրի գործունեության վերաբերյալ գոյություն ունի նաև բացասական ավանդույթ, որի արմատները, ըստ երեււյթին, հասնում են հույն-մակեդոնական օպոզիցիային պատկանող նրա ժամանակակիցներին: Այդ օպոզիցիան մերթ ընդ մերթ արտահայտվում էր բավական սուր ինչպես Հունաստանում ու Մակեդոնիայում, այնպես և Ալեքսանդրի գործող բանակում: Մ. թ. ա. I դ. հռոմեական պատմիչ Կլիստոս Կուրտիոս Ռուֆոսը ուշադրություն է ցուցաբերում նվաճողի գործունեության ստվերոտ կողմերի՝ կողոպուտների, գազանությունների և այլնի նկատմամբ: Նրա տաս հատորանոց «Ալեքսանդր Մեծի պատմությունը» հասել է մեզ

առանց առաջին երկու գրքերի ու մի քանի բացթողումներով՝ աշխատության միջին մասում: Կուրտիոս Ռուֆոսին բնորոշ են շարադրանքի ճարտասանական ոճաձևերը: Ալեքսանդրի ու նրա գործունեության վերաբերյալ նույն բացասական գիծը նկատվում է Պոմպեոս Տրոգոսի «Փիլիպոսի պատմության» 11—12-րդ գրքերում, որոնք պահպանվել են Հուստինոսի կրճատ շարադրանքի ձևով:

Ալեքսանդրի գործունեության վերաբերյալ մի շարք հետաքրքիր տեղեկություններ կան Ստրաբոնի «Աշխարհագրության» 11—14, 15—16 գրքերում: Անտիկ աղբյուրների շարքում փոքր-ինչ յուրահատուկ տեղ է գրավում Կեղծ Կալիսթենեսի, այսինքն, Ալեքսանդրի ուղեկիցներից մեկին՝ Կալիսթենեսին սխալմամբ վերագրվող «Վեպ Ալեքսանդրի մասին» երկը: Այդ վեպը, հավանաբար, ծագել է Եգիպտոսում, մոտ մ. թ. I դարում: Այն մեզ է հասել մի քանի հունական տարբերակներով ու լատիներեն, ասորերեն և այլ լեզուներով արված բազմաթիվ մշակումներով ու թարգմանություններով: Այդ ստեղծագործության մեջ Ալեքսանդրի կենսագրությունը միախառնված է բացահայտ ֆանտաստիկայի ու գիտակցաբար կատարված կեղծումների հետ:

ՊԱՐՍՎԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵՐՈՆԱՅՈՒ  
ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Պարսկական տերությունը մ. թ. ա. IV դ. երկրորդ կեսին ավելի ու ավելի էր թուլանում: Պարսից թագավոր Արտաքսերքսես III Օթոսը անընդհատ ճնշում էր երկրի տարբեր մասերում ծագած ապստամբություններն ու փորձում էր ամրապնդել կենտրոնական իշխանությունը: Գլխավոր զինվորական ուժը, որի միջոցով նա իրագործում էր իր քաղաքականությունը, ոչ թե տեղական զորքերն էին, այլ հույն ռազմիկ-վարձկանները: Դա նույնպես վկայում է այն մասին, որ կենտրոնական իշխանությունն իրապես թուլացել էր:

Մ. թ. ա. 338 թ. Արտաքսերքսես III Օթոսին սպանեցին պալատականները: Հնարավոր է, որ այդ սպանությունը տեղի ունեցավ հենց այն պատճառով, որ թագավորը, ցանկանալով ամրապնդել պարսից տերությունը, ձգտում էր սահմանափակել սատրապների խիստ աճած ինքնուրույնությունը: Երկու տարի շարունակվող խռովություններից հետո, երբ պետությունը էլ ավելի թուլացավ, պալատական խմբավորումը գահին նստեցրեց արքայական ընտանիքի հեռավոր ազգական Կողոմանոսին, որը դառնալով թագավոր, ընդունեց Դարեհ անունը: Դարեհ III Կողոմանոսը (մ. թ. ա. 336—330 թթ.) թուլակամ, անգործունյա մարդ էր: Այդ էր պատճառը, որ հզոր պալատականներն ու իրենց փաստական անկախու-

թյունը պաշտպանող սատրապները բարձրացրեցին նրան գահին: Զենքի ուժով ընդարձակ տարածքներ միավորած պարսից տերությունը նախկինում ապահովում էր ստրկատիրական տնտեսության համեմատաբար հանգիստ զարգացումը իր սահմանների ներսում: Արևելքը՝ արևմուտքի ու հյուսիսային շրջանները՝ հարավայինների հետ կապող ապահով առևտրական ուղիները զգալի օգուտներ էին բերում հողատերերից, առևտրականներից, քրմերից, պաշտոնյաներից ու զինվորականներից կազմված տիրող ստրկատիրական դասակարգի լայն խավերին: Նման պայմաններում սատրապությունները ենթարկվում էին մեծ հարկերի ու պարսկական բռնապետական կառավարության շարաշահումների, բայց երբ Պարսկաստանի ռազմական հզորությունը թուլացավ, մի բան, որ կապված էր հենց իսկ բուն Պարսքում տեղի ունեցած դասակարգային շերտավորման հետ, ապա տնտեսապես ավելի զարգացած սատրապետություններն ավելի մեծ շահով, քան առաջ, սկսեցին ձգտել անկախություն: Իսկ քանի որ պարսկական բանակը ավելի ու ավելի թույլ էր ապահովում նրանց ներքին ու արտաքին անվտանգությունը, ապա կենտրոնական կառավարության հարկերն ու շարաշահումները դիտվում էին որպես անընդհատ աճող շարիք: Միջին Ասիայի ցեղերի միավորումները երբեք ամբողջովին չէին նվաճվել պարսից տերության կողմից ու այժմ սոսկ անունով էին մտնում նրա կազմի մեջ, նրանց կախումը հաճախ սահմանափակվում էր թագավորին ծառայելու համար ռազմական ջոկատներ ուղարկելով:

Այսպիսի պայմաններում դրսից հասցված մի բանի հաջորդական հզոր հարվածները բավական կլինեին, որպեսզի պարսից տերությունը դադարեր գոյություն ունենալուց: Այդ հարվածները նրան հասցրեցին հենց Ալեքսանդր Մակեդոնացու գործերը:

**ՊԱՐՍԵՑ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԻՎՄՏՅԱՆ ՄԱՍԻ. ՊԱՐՍԻ ԱՌ ՄԱՐԱՍՏԱՆԻ  
ՆԱԿՏՈՒՄԸ ԱԼԵՔՍԱՆԻՐ ՄԱԿԵՊՈՆԱՏՈՒ ԿՈՂՄԵՑ**


Փիրիպոսի անսպասելի սպանությունը երկու տարով հետաձգեց պարսից տերության դեմ ուղղված հույն-մակեդոնական ագրեսիայի իրագործումը, սակայն պարսկական կառավարությունը չկարողացավ անհրաժեշտ չափով օգտագործել այդ ժամանակը պատերազմին նախապատրաստվելու համար: Պարսից տերության ներքին դժվարություններից բացի, այստեղ դեր խաղաց նաև այն հանգամանքը, որ պարսկական սատրապները բավարար չափով տեղյակ չէին Մակեդոնիայի ու նրան ենթակա հունական պետությունների իրական ռազմական ուժերի, ինչպես և հույն-մակեդոնական աշ-

խարհի ներքին վիճակի մասին: Հարուստ ու միջին հունական խավերը թեև երբեմն այտահարաբար էին խիստ թշնամական վերաբերմունք մակեդոնացիների տիրապետության նկատմամբ, այնուամենայնիվ համակրում էին Պարսկաստանի դեմ ուղղված նվաճողական արշավանքի գաղափարին: Փոքրասիական հողեր ու ըստրուկներ զավթելու նպատակին ուղղված այդ գաղափարը ծագեց հենց իսկ հույների մոտ, ու Փիլիպոսը և Ալեքսանդրը այն փոխ առան նրանցից: Արշավանքը գաղափարապես ու քաղաքականապես ներկայացվեց որպես սրբազան վրիժառության պարսիկներից՝ Հույնպարսկական պատերազմների շրջանում, Քսերքսեսի արշավանքի ժամանակ նրանց կողմից Հունաստանն ավերելու ու հունական սրբություններն անարգելու համար: Այդ հիմնական գաղափարին Ալեքսանդրը ավելացրեց նաև վրեժխնդրություն իր հոր՝ Փիլիպոսի սպանության համար, որը ըստ պաշտոնական մակեդոնական տեսակետի, կազմակերպվեց պարսից թագավորի կողմից:


Ձեռնարկելով արևելյան արշավանքը, Ալեքսանդրը ոչնչացրեց իր ազգականներից ու պալատականներից իր համար վտանգավոր անձանց ու Մակեդոնիայում և Հունաստանում ամուր թիկունք ապահովելու նպատակով այստեղ թողեց իրեն նվիրված փորձառու զորահրամանատար Անտիպատրոսին՝ տալով նրան կուսակալի իրավունքներ:

Ավելի քան 30000 լավ վարժեցված հետևակայինների ու 5000 հեծյալների գլուխ կանգնելով, Ալեքսանդրը մ. թ. ա. 334 թ. գարնանը անցավ Հելլեսպոնտոսն ու մտավ պարսկական տարածքը: Պարսկական նավատորմից, որը Անտալիդասյան հաշտությունից հետո հենակետեր ուներ էգեյան ծովում, չխոչընդոտեց Ալեքսանդրի զորքերի անցումը: Դա պարսիկների առաջին լուրջ ստրատեգիական սխալն էր: Պարսկական բանակի թույլ կողմերն էին միասնական կենտրոնական հրամանատարության, ինչպես և զորքի կազմակերպման գործում ու ռազմաձևերում միասնության փաստական բացակայությունը, բանակի տարացեղությունը: Բացի այդ, ինչպես ասված էր, պարսկական զորքի կարևոր մասը կազմում էին վարձկանները, գլխավորապես՝ հույները: Պարսիկների մոտ ծառայող հույն վարձկաններին գլխավորում էր տաղանդավոր հույն զորահրամանատար Սեմնոն Հոռոսոսին: Նա պարսկական թագավորին առաջարկեց Ալեքսանդրին դիմադրություն ցույց տալու ամենամտածված ծրագիրը, խորհուրդ տվեց նահանջել Փոքր Ասիայի արևելյան մասը, երկրի խորքը ներքաշել Ալեքսանդր Մակեդոնացու բանակը, կտրել նրան Հունաստանից ու Մակեդոնիայից և ոչնչացնել: Սակայն այդ ծրագիրը մերժվեց փոքրասիական սատ-

# ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՅՈՒ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ



- |  |   |   |
|--|---|---|
| Մակեդոնիան Ալեքսանդր Մակեդոնացու գահակալության սկզբին (336 թ.) | Ալեքսանդրի բանակների արշավանքը թրակիական ու իլլիրիական ցեղերի դեմ | Կարևոր ճակատամարտերի վայրերը ու տարեթվերը               |
| Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումները                              | Ալեքսանդրի բանակների արշավանքը հունական քաղաքների դեմ             | Միջին Ասիայում ազգային-ազատագրական ապստամբության շրջանը |
| Ալեքսանդրի հետ դաշնակցած պետությունները                        | Արշավանք Պարսկաստանի դեմ  |   |
| Ալեքսանդրից անկախ պետությունները                               | Նեարքոսի նավատորմի ուղին  |   |



լապանների կողմից, որոնք չէին ցանկանում կորցնել իրենց տիրույթները: Նրանք պահանջեցին միավորել Փոքր Ասիայում եղած զգալի ռազմական ուժերը այն հաշվով, որ տրվի ճակատամարտ, քանի դեռ հույն-մակեդոնական զորքերը շատ առաջ չէին շարժվել նեղուցն անցնելու վայրից:

Պարսկական բանակը՝ կազմված մոտ 40000 մարտիկներից, որոնց կեսը հույն վարձկաններ էին, գրավեց Պրոպոնտիս թափվող Գրանիկոս փոքր գետի բարձր աջ ափը: Հույն-մակեդոնական զորքերը, Ալեքսանդրի ու Պարմենիոնի հրամանատարությամբ, մոտեցան դիմացի ափին, ու շնայած պարսիկների եռանդուն դիմադրությանը, անցան գետը: Մարտը սկսվեց գետամիջում: Ալեքսանդրը գլխավորելով մակեդոնական հեծելազորը, սկզբում ջախջախեց պարսկական բանակի ձախ թևը, իսկ հետո փաղանգի ու մյուս բոլոր զորքերի օգնությամբ ջախջախեց պարսից զորքի առաջին գիծը: Պարսկական հրամանատարության թույլ օպերատիվության ու վատ կապի հետևանքով երկրորդ գծի վրա կանգնած հույն վարձկանների ուժեղ ջոկատն այնպես էլ չմասնակցեց ճակատամարտին այն պահին, երբ մակեդոնացիները ճեղքում էին պարսիկների առաջին գիծը: Հետո հույն վարձկանները շրջապատվեցին Ալեքսանդրի զորքերի կողմից ու ոչնչացվեցին: Կենդանի մնացած 2000 վարձկաններ գերի վերցվեցին: Ալեքսանդրը, հիմնվելով Կորնթոսյան համաժողովի որոշման վրա, որով հույներին ու մակեդոնացիներին արգելվում էր ծառայել պարսկական բանակում, գերի վարձկաններին հայտարարեց դավաճաններ և ուղարկեց Մակեդոնիա որպես ստրուկներ:

Գրանիկոսի մոտ տարած հաղթանակից հետո Ալեքսանդր Մակեդոնացին էգեյան ծովի փոքրասիական ափով շարժվեց դեպի հարավ: Հունական քաղաքները ողջունում էին նրան որպես ազատարարի: Ալեքսանդրը, որ Բալկանյան թերակղզում պաշտպանում էր օլիգարխիային, այժմ Փոքր Ասիայում սկսեց տապալել պարսիկների կողմից այստեղ հաստատված օլիգարխիան ու տիրանիան և վերականգնել դեմոկրատիան: Փոքրասիական հույների ազատագրումը պարսից լծից ու պարսկական դրածոների իշխանությունից արշավանքի գաղափարական ու քաղաքական կարևոր հիմնավորումներից մեկն էր:

Փոքրասիական ծովափի կորուստը պարսկական նավատորմին զրկեց էգեյան ծովի շատ հենակետերից ու, հետևաբար, թեթևացրեց Բալկանյան թերակղզու հետ ծովային կապերի օգտագործումը: Ալեքսանդրի կողմից և ամրապնդեց նրա դիրքերը Բալկաններում: Մակեդոնացիներին դիմադրություն ցույց տվեցին միայն երկու հու-



նական քաղաքները՝ Միլետոսն ու Հալիկաոնասոսը: Այնտեղ կային պարսիկների մոտ ծառայող հույն վարձկանների ուժեղ ջոկատներ, իսկ ոչ հեռու կանգնած էր պարսից նավատորմը՝ նոր պարսկական գլխավոր զորապետ հույն Մեմնոնի հրամանատարությամբ: Բայց Մեմնոնը հանկարծամահ եղավ: Մակեդոնացիների ձեռնարկած կատաղի գրոհից հետո այդ երկու քաղաքները վերցվեցին ու պատժվեցին: Դրանից հետո Ալեքսանդրը, շահնդիպելով լուրջ դիմադրության, գրավեց Փոքր Ասիայի վարչական ու առևտրական կենտրոններն ու իր հսկողության տակ վերցրեց բոլոր ճանապարհները: Որոշ աղբյուրներից դատելով, Ալեքսանդրին բնորոշ էին գործողությունների արագությունն ու հնարամտությունը, գծեր, որոնք դրսևորվում էին անգամ անսպասելի իրավիճակում: Փոյուգիայի հին մայրաքաղաք Գորդիոնում Ալեքսանդրին ցույց տվեցին տեղական առասպելական թագավորի ձիակառքը, որին ամրացված էր մի շատ խճճված հանգույց: Գոյություն ունեցող հին հավատալիքի համաձայն, նա, ով կարձակեր այդ հանգույցը, կդառնար Ասիայի տերը: Ալեքսանդրը ժողովրդի ու իր զինվորների բազմության առաջ շարժված հանգույցը: Գոյություն ունեցող հին հավատալիքի համաձայն, նա, ով կարձակեր այդ հանգույցը, կդառնար Ասիայի տերը: Ալեքսանդրը ժողովրդի ու իր զինվորների բազմության առաջ շարժված հանգույցը: Այդ ժամանակ նա հանեց սուրը ու կտրեց գորդյան հանգույցը:

Մ. թ. ա. 334 թ. վերջին ու մ. թ. ա. 333 թ. սկզբին Ալեքսանդրն արդեն տիրեց Փոքր Ասիայի մեծ մասին կամ հսկողություն սահմանեց նրա վրա: Նա վարում էր զգույշ քաղաքականություն՝ ընդգծված հարգանք էր ցուցաբերում տեղական սովորությունների հանդեպ, չէր ավելացնում տեղական բնակիչների կողմից վաղուց վրձարվող հարկերը, հունական մարզերում չիփխեց սովորական տեղական կառավարումը, որը միայն դրվեց մակեդոնական ռազմական կուսակալների հսկողության ներքո: Մակեդոնական կայսրորդները տեղավորվեցին ռազմական ու քաղաքական կարեորություն ունեցող բոլոր կետերում: Ալեքսանդրը անցավ Տավրոս լեռնաշղթան ու գրավեց Տարսոս քաղաքը ասորական սահմանի մոտ:

Այդ նույն ժամանակ Դարեհ III-ը Միջագետքում հավաքում ու վարժեցնում էր մեծ բանակ: Մ. թ. ա. 333 թ. կեսին նա բանակը շարժեց Հյուսիսային Ասորիք՝ այնտեղ Ալեքսանդրի հետ հանդիպելու համար: Մակեդոնական բանակն իր հերթին մոտեցավ Փյունիկիային: Սակայն պարսիկները հարևան լեռնանցքով անցան մակեդոնացիների թիկունքը: Ալեքսանդրը ստիպված էր ետ դառնալ Դարեհի զորքերին հանդիպելու համար: Այդ հանդիպումը տեղի ունեցավ մ. թ. ա. 333 թ. աշնանը Իսոսո քաղաքի մոտ: Հակառակորդներին բաժանում էր Պինարոս փոքր գետը: Պարսիկները գրավեցին իրենց համար հարմար զառիվեր ափը: Մակեդոնացիները

պետք է մարտով անցնենին գետը: Սակայն լեռնային հովտում սեղմված պարսիկները շկարողացան միանգամից մարտի մեջ մտցնել իրենց ուժերը, որոնք թշնամուն գերազանցում էին ավելի քան երեք անգամ: Համառ ճակատամարտն ավարտվեց Ալեքսանդրի հաղթանակով: Պարսկական բանակի մնացորդները փախան Դարեհի հետ միասին: Ալեքսանդրի ձեռքը ընկավ հսկայական ավար՝ պարսկական ամբողջ հարուստ ճամբարը Դարեհի շարժական պալատով: Գերիների թվում էր Դարեհի ընտանիքը՝ նրա մայրը, կինն ու երկու դուստրերը: Իսսոսի մոտ Ալեքսանդրի տարած հաղթանակը ունեցավ ռազմական ու քաղաքական վիթխարի հետևանքներ: Փյունիկյան քաղաքներն առանց դիմադրության սկսեցին հանձնվել Ալեքսանդրին: Միայն նրանցից ամենահզորը՝ ծովափին ու ժայռոտ կղզու վրա տեղադրված Տյուրոսը հայտարարեց իր շեղորոթյան մասին և դարպասները չբացեց մակեդոնական բանակի առջև: Սկսվեց քաղաքի վեցամսյա պաշարումը ցամաքից ու ծովից, որի ընթացքում գործադրվեցին պաշարման աշտարակներ՝ հելեպոլիսներ ու այն ժամանակի պաշարողական տեխնիկայի այլ միջոցներ: Պաշարման ընթացքում մակեդոնացիները կառուցեցին Տյուրոսը մայրցամաքի հետ միացնող հողաթումբ: Մի քանի գրոհներից հետո Տյուրոսը մ. թ. ա. 332 թ. վերջվեց ու մատնվեց ավարի, իսկ նրա բնակիչները վերածվեցին ստրուկների: Իսսոսի մոտ ձեռք բերած հաղթանակն ու փյունիկյան ծովափի մեծ մասի գրավումը դրժվարին կացության մեջ դրեցին պարսկական միջերկրածովյան նավատորմը, ուր գլխավորապես ծառայում էին փյունիկյան նավաստիները: Նավերը սկսեցին հանձնվել մակեդոնացիներին: Անառիկ համարվող Տյուրոսի գրավումը հսկայական տպավորություն գործեց արևելքում ու բարձրացրեց Ալեքսանդրի հեղինակությունը: Իսսոսի մոտ ձեռք բերած հաղթանակի ու Փյունիկիայի նվաճման մասին տեղեկություններ ստանալուց հետո Հունաստանում իսկույն մարեց ժամանակավորապես ուժեղացած հակամակեդոնական շարժումը:

Դարեհն իր պարտությունից ու ընտանիքը կորցնելուց հետո երկու անգամ փորձեց բանակցություններ սկսել Ալեքսանդրի հետ, բայց մերժում ստացավ: Դարեհի առաջադրած հաշտության պայմանների քննարկման ժամանակ առաջին անգամ ի հայտ եկան տարածայնություններ Ալեքսանդրի ու մակեդոնական ավագանու միջև. վերջինիս անունից հանդես եկավ Պարմենիոնը: Պարսից թագավորը պատրաստ էր Ալեքսանդրին զիջել ամբողջ պարսկական տարածքը մինչև Եփրատ գետը, խոստանում էր վճարել հսկայական ռազմատուգանք, առաջարկում էր հավերժ դաշինք Ալեքսանդ-

րի հետ ու այն ամրապնդելու համար առաջարկում էր նրան իր դուստրերից մեկի ձեռքը: Պարմենիոնը խորհուրդ էր տալիս ընդունել այդ պայմաններն ու հրաժարվել հետագա արշավանքից դեպի արևելք, որը կապված էր մեծ ռիսկի հետ: Ասում են, որ բանակցությունների ժամանակ նա բացականչեց՝ «Եթե ես լինեի Ալեքսանդր, ապա կընդունեի այդ առաջարկները», իսկ Ալեքսանդրը դրան պատասխանեց՝ «Եթե ես լինեի Պարմենիոն, ապա նույնպես կընդունեի այդ առաջարկները»: Հետո նա հայտարարեց, որ հաշտություն կկնքի միայն այն դեպքում, եթե Գարեհը իրեն հանձնի իր ամբողջ թագավորությունն ու ճանաչի իրեն Ալեքսանդրի հպատակ: Ինչ վերաբերում էր Գարեհի աղջկա ձեռքը առաջարկելուն, Ալեքսանդրը հրամայեց հաղորդել պարսկական թագավորին, որ նրա դուստրը գտնվում է գերությունում, և ուստի, եթե նա՝ Ալեքսանդրը կամենա ամուսնանալ նրա հետ, ապա կանի այդ, Գարեհից շահարցնելով թույլտվություն: Բանակցությունների ժամանակ Ալեքսանդրն առաջին անգամ հայտնեց ամբողջ պարսկական տերությունը նվաճելու իր մտադրությունը: Մինչ այդ հույների ու մակեդոնացիների տարածքային հավակնությունները հստակորեն ձևակերպված չէին, բայց սովորաբար նրանց բաղձանքները սահմանափակվում էին Փոքր Ասիայով: Նվաճված տարածքներն անհամեմատ ավելի մեծ էին, քան Մակեդոնիան ու Հունաստանը միասին վերցրած: Հետագա շարժումը դեպի արևելք այն պայմաններում, երբ բացակայում էին հստակ պատկերացումները Պարսկական պետության արևելյան մասի հզորության մասին, կարող էր շատ վրտանալով լինել: Բայց հաջողությունը կարող էր նաև վտանգավոր լինել մակեդոնական ավագանու համար՝ ստիպելով նրան իր տիրապետող դիրքը կիսել նվաճված տարածքների ավագանու հետ, քանի որ Ալեքսանդրի նոր արևելյան միապետության մեջ Մակեդոնիայի տեղը չէր լինի առանձնապես նշանակալից: Դրանում էր, ըստ երևույթին, Պարմենիոնի ու նրա կողմնակիցների խաղաղասիրության արմատը: Նրանք առարկում էին պատերազմը շարունակելու պահանջի դեմ ու խորհուրդ էին տալիս բավարարվել ձեռք բերածով: Իսկ Ալեքսանդրը հենվում էր բանակի վրա, որը շահագրգռված էր շարունակելու հաջող, շահավետ և իր համար դեռևս ոչ այնքան ծանր պատերազմը:

Տյուրոսը վերցնելուց հետո Ալեքսանդրը գրավեց Միջերկրականի ամբողջ արևելյան ծովափը և ուղևորվեց Եգիպտոս, որտեղ ընդամենը մի քանի տարի առաջ, արյունահեղ պայքարից հետո վերականգնվել էր պարսիկների իշխանությունը: Եգիպտոսի պարսկական սատրապը, հաշվի առնելով բնակչության տրամադրություն-

ները, մ. թ. ա. 332 թ. հանդիսավորապես դիմավորեց Ալեքսանդրին ու նրան հանձնեց իշխանութիւնը և գանձարանը: Եգիպտական քրքրմերը Ալեքսանդրին հուշակեցին փարավոն: Հավատարիմ մնալով դիմադրողների հետ դաժան դատաստան տեսնելու, իսկ իր կողմը անցնողների նկատմամբ շափավոր ու քարեհաճ լինելու իր քաղաքականությանը, Ալեքսանդրը հարգեց եգիպտական սովորույթները ու անգամ ուխտագնացութիւն կատարեց Սիվա օազիսը՝ Ամոն աստծո պատգամախոսի մոտ: Այդ ճանապարհորդութիւնն ուներ քաղաքական նպատակ: Ամոնի պատգամախոսին հարգում էին ոչ միայն եգիպտացիները, այլև Ասիայի ժողովուրդները, ինչպես նաև հույներն ու մակեդոնացիները, որոնք Ամոնին նույնացնում էին Զևսի հետ: Ալեքսանդրը հարցրեց պատգամախոսին. արդո՞ք նա կնվաճի ողջ Ասիան, ու ստացավ դրական պատասխան: Մտադրվելով ձեռնարկել վտանգավոր արշավանք ամբողջ Պարսկաստանը նվաճելու համար և ընդսմին հանդիպելով մակեդոնական ավագանու դիմադրությանը, Ալեքսանդրը հավանաբար ենթադրում էր, որ բոլորի կողմից հարգված պատգամախոսի բարենպաստ պատասխանը կօգնի նրա քաղաքականության իրականացմանը: Նույն նպատակով Ալեքսանդրը հարցրեց այն մասին, թե ո՞վ է սպանել իր հորը՝ Փիլիպոսին: Նա ցանկանում էր լսել, որ նրան սպանել են պարսից թագավորի հրամանով: Բայց պատգամախոսի պատասխանը գերազանցեց Ալեքսանդրի սպասելիքները: Ամոնը քրմերի շուրթերով անվանեց նրան իր որդի: Դա բնական էր միայն փարավոնի համար, որը համարվում էր Ամոնի որդի: Ալեքսանդրն օգտագործեց իր իշխանության ամրապնդման համար եգիպտական քրմերի այդ գործողութիւնը և կարգադրեց իրեն անվանել Ամոնի զավակ: Դրանից նրա իշխանութիւնն ու հեղինակութիւնը աճեցին, թեև դա առաջացրեց մակեդոնական ու հունական մերձավորների դժգոհութիւնը: Թագավորական իշխանության կրոնական ձևակերպումը Ալեքսանդրին դարձնում էր լայնածավալ տարածքների վրա իշխող ավանդական արևելյան բռնապետ:

Ամոնի պատգամախոսի մոտ գնալուց քիչ առաջ Ալեքսանդրը Եգիպտոսում ու նրան հարող մարզերում իր իշխանութիւնն ամրապնդելու նպատակով մ. թ. ա. 332 թ. Նեղոսի դելտայում հիմնադրեց Ալեքսանդրիա քաղաքը, որը հետագայում դարձավ արևելյան Միջերկրականի խոշորագույն տնտեսական, մշակութային ու քաղաքական կենտրոնը:

Մակեդոնացիների կողմից Եգիպտոսի գրավումով ողջ Միջերկրական ծովը կտրվեց Պարսկաստանից: Պարսիկների մեծ ռազմածովային նավատորմիչը, որը թեև զգալիորեն թուլացել էր Իսսոսի

մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո, բայց այնուամենայնիվ խանգարում էր Ալեքսանդրի բանակին կանոնավոր կապեր հաստատել Հունաստանի ու Մակեդոնիայի հետ, այժմ լրիվ կապիտուլացվեց: Դա հույն-մակեդոնական բանակին հնարավորութուն տվեց օգտագործել այդ նավատորմիդն ու ամրապնդել իր հաղորդակցության ուղիները:

Մ. թ. ա. 331 թ. գարնանը սկսվեց նվաճողական արշավանքի երկրորդ փուլը: Ալեքսանդրը դուրս եկավ Եգիպտոսից ու շարժվեց դեպի հյուսիս-արևելք, Ասիա՝ Հյուսիսային Միջագետքի ուղղությամբ: Ամուսն վերջին մակեդոնական զորքերը, հաղթահարելով պարսիկների աննշան դիմադրությունը, անցան Եփրատը, իսկ հետո և Տիգրիսը: Այստեղ մեծ հարթավայրում, Գավգամելա գյուղից ոչ հեռու, մ. թ. ա. 331 թ. աշնանը տեղի ունեցավ ամենամեծ ճակատամարտը հունա-մակեդոնացիների ու պարսից թագավորի զորքի միջև: Դարեհը հավաքեց հին մասշտաբներով մի հսկայական բանակ, որը թվով գերազանցում էր Ալեքսանդրի բանակին: Առաջին անգամ վճռական ճակատամարտը կայանալու էր լայն հովտում, որտեղ պարսիկները կարող էին ամբողջ ճակատով մեկ դասավորել իրենց հզոր մեծաթիվ հեծելազորն ու անգամ շրջապատել իունա-մակեդոնական բանակը: Դրա հետ մեկտեղ պարսկական բանակն այժմ ուներ 15 մարտական փղեր ու մեծ քանակությամբ մարտակառքեր, որոնց սունիներին ամրացված էին երկար ու սուր մանգաղներ: Նախատեսվում էր ուղղել մանգաղակիր ձիակառքերը խիստ խտացված մակեդոնական փաղանգի դեմ ու դրանով նրան մեծ վնասներ պատճառել: Բայց մարտակառքերի գրոհի պահին մակեդոնական նետաձիգները սպանեցին կառապանների մեծ մասին, որի հետևանքով ձիերը զրկվեցին հսկողությունից: Փաղանգը ճամփա տվեց սլացող մարտակառքերին, որոնց հետո թիկունքում կանգնեցրեցին ձիապանները: Զիակառքերի անհաջող արշավից հետո սկսվեց ընդհանուր ճակատամարտը, որը փոփոխակի հաջողությամբ տևեց համարյա ամբողջ օրը ու ավարտվեց ավելի շարժունակ ու կարգապահ հունա-մակեդոնական բանակի հաղթանակով: Ալեքսանդրը հաշվի առնելով տեղական պայմանները, բանակի կազմում ուժեղացրել էր հեծելազորը: Դարեհը իր զորքերի մնացորդներով կրկին դիմեց փախուստի: Մակեդոնական հեծելազորը գիշերվա ընթացքում անցավ մոտ 80 կիլոմետր, բայց հասնել փախուստականներին չկարողացավ:

Գավգամելայի ճակատամարտում պարսից տերությունը կորցրեց իր հիմնական ռազմական ուժերը: Երրորդ վիթխարի այս պարտությունն ունեցավ հեռուն գնացող քաղաքական հետևանքներ:

Հետևելով Եգիպտոսին, Բաբելոնիան ողջունեց Ալեքսանդր Մակեդոնացուն: Բաբելոնյան քրմերը հռչակեցին նրան Բաբելոնի թագավոր: Ալեքսանդրը կարգադրեց վերականգնել Մարդուկի՝ պարսիկների կողմից քանդված տաճարը: Պարսկական սատրապին թույլատրվեց կառավարել Բաբելոնիան Ալեքսանդրի անունից, բայց նրան զրկեցին զորքերի հրամանատարությունից ու ֆինանսները տնօրինելու իրավունքից: Այդ իրավունքները հանձնվեցին մակեդոնացիներից նշանակված հատուկ ստրատեգոսներին: Բաբելոնում հանգստամնալուց հետո Ալեքսանդրը գրավեց Սուսան, որտեղ ձեռք բերեց հսկայական գանձեր ու պարսից թագավորի գանձարանի մի մասը:

Սուսայից դեպի արևելք սկսվում էր Պարսկական տերություն բուն տարածքը՝ Պարսքը: Եթե մինչ այդ Ալեքսանդրը գրավում էր պարսիկների կողմից երբեմնի նվաճված երկրներն, ու եթե նրան շատ տեղերում դիմավորում էին իբրև ծանր պարսկական լծից ազատագրողի, ապա Պարսքում նա հանդիպեց լուրջ դիմադրություն: Սակայն պարսկական բանակի մնացորդները չախչախվեցին հին պարսկական մայրաքաղաք Պերսեպոլիսի մատույցներում: Պերսեպոլիսը ենթարկվեց կողոպուտի մակեդոնական բանակի կողմից, Ալեքսանդրի հրամանով հրդեհվեց Քսերքսեսի շքեղ պալատը՝ ի հատուցումն Աթենքի ավերմանը հույն-պարսկական պատերազմների ժամանակ: Դարեհի՝ Պերսեպոլիսում գտնվող վիթխարի գանձարանն ընկավ Ալեքսանդրի ձեռքը: Մակեդոնացիները ձմեռեցին պարսկական մայրաքաղաքում ու միաժամանակ ամրացան Պարսկաստանի այլ կետերում:

Այդ ժամանակ Անտիպատրոսը ճնշեց Պերպոնեսում՝ Ալեքսանդրի կենդանության օրոք տեղի ունեցած հույների վերջին հակամակեդոնական ապստամբությունը, որը գլխավորում էր Սպարտան:

Մ. թ. ա. 330 թ. սկզբին մակեդոնական բանակը Պարսքից շարժվեց Մարաստան: Այդ ժամանակ Մարաստանի հին մայրաքաղաք Եկրատանալում էր գտնվում Դարեհ III-ը: Տեղեկանալով Ալեքսանդրի մոտենալու մասին, նա իրեն հավատարիմ մնադած զորքերով նորից նահանջեց դեպի Արևելք:

Գրավելով Եկրատանան, Ալեքսանդրն այնտեղ որպես կուսակալ թողեց Պարմենիոնին՝ նրան տալով մակեդոնական բանակի թիկունքի գլխավոր զորապետի լիազորություններ: Եկրատանում թողնվեց նաև հսկայական ռազմական ավարն ու պարսկական թագավորների ավելի վաղ գրաված գանձարանը: Վերջինիս հսկողու-

թյունը ևս հանձնվեց Պարմենիոնին: Գանձարանի հատուկ վարիչ նշանակվեց Ալեքսանդրի բարեկամներից մեկը՝ Հարպալոսը:

Ալեքսանդրը Եկեքատանափյից սկսեց Դարեհի եռանդուն հետապնդումը: Վերջինս շարունակում էր փախչել դեպի արևելք: Փախուստի ժամանակ Դարեհը գրկվեց իշխանությունից ու կալանավորվեց միջինասիական սատրապների կողմից, որոնց գլխավորում էր Բակտրիայի սատրապ Բեսը: Երբ Ալեքսանդրի հեծյալ ջոկատը սկսեց մոտենալ այն սալլին, որտեղ նստած էր իշխանությունից հեռացված Դարեհը, Բեսն ու նրա հանցակիցները սպանեցին նրան և փախան արագավազ ձիերով: Ալեքսանդրի ձեռքն ընկավ միայն թագավորի դիակը:

ՄԵԶԻՆ ԱՍԻԱՅԻ ՈՒ ՀՆԻԿԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍԻ  
ՆՎԱՃՈՒՄԸ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵՊՈՆԱՑՈՒ ԿՈՂՄԵՑ:  
ԱՐՇԱՎԱՆՔԻ ԱՎԱՐՏԸ

Մ. թ. ա. 330 թ., Դարեհի մահից հետո, իր նվաճողական արշավանքի սկզբին Ալեքսանդրի ազդարարած ամբողջ ծրագիրը իրականացվեց: Բայց Ալեքսանդրը շղաղարեցրեց պատերազմը: Այժմ նա լրացրեց այդ ծրագիրը, հռչակելով իրեն նվաճման իրավունքով սպանված պարսկական թագավորի օրինական ժառանգորդ ու դրա հիման վրա՝ նրա մահվան վրեժը լուծող: Իսկ քանի որ Դարեհ III-ին սպանողը՝ բակտրիական սատրապ Բեսը փախել էր Միջին Ասիա, ապա Ալեքսանդրը սկսեց հետապնդել նրան:

Ալեքսանդրը իրեն պարսից թագավորների ժառանգորդ հայտարարելով, սրեց մակեդոնական ավագանու հետ ունեցած բախումը. այն սկսվեց դեռևս Փյունիկիայում, Դարեհի դեսպանների հետ կայացած բանակցությունների ժամանակ, իսկ հետո և Եգիպտոսում՝ եգիպտական քրմերի կողմից Ալեքսանդրին Ամոն աստծո որդի հռչակելուց հետո: Այժմ, գտնվելով Միջին Ասիայում, Ալեքսանդրը ավելի ակտիվորեն էր ձգտում իր կողմը գրավել պարսկական ու այլ տեղական ավագանուն, նրան տրամադրելով մակեդոնացիներին համահավասար բարձր պաշտոններ: Նա իր շարժական արքունիքում սկսեց մտցնել պարսկական արքայական ծիսակարգի տարրեր: Դա առաջացրեց մակեդոնական ավագանու ավելի խիստ թշնամական վերաբերմունքը, քանի որ նա չէր ցանկանում կիսել իր առաջնակարգ դիրքը նվաճված երկրների ավագանու հետ:

Մ. թ. ա. 330 թ. Ալեքսանդրին հաղորդեցին հետալրների միջավայրում նրա դեմ նյութված դավադրություն մասին, որը գլխավորում էր Դիմոսոսը: Կասկած հարուցեց նաև Պարմենիոնի որդի Փիլոտասը, որն իբր թե գիտեր դավադրություն մասին, բայց ոչինչ

չհայտնեց դրա վերաբերյալ: Ըստ մակեդոնական սովորութեան կայացած գործի դատը: Կասկածելիները հանձնվեցին մահվան: Դրանից հետո Ալեքսանդրը մարդասպաններ ուղարկեց Պարմենիոնի մոտ Եկբատան՝ որպեսզի ապահովագրի իրեն որդու համար հոր հնարավոր վրիժառութունից: Հավանաբար, դա արված էր նաև հեղինակութուն վայելող գորավարից ազատվելու նպատակով: Պարմենիոնը դեռ անցյալում շէր համաձայնվում Ալեքսանդրի հետ, իսկ այժմ դարձել էր ավելի վտանգավոր՝ քանակի հրամանատարական կազմի մոտ ուժեղացած ընդդիմադրութեան կապակցութեամբ: Ալեքսանդրը հենվում էր գործի վրա, որը շարունակում էր վարել շահավետ պատերազմ ու կրկին պաշտպանեց Ալեքսանդրին: Բանակի նոր համալրումներն առավել ևս ցանկանում էին շարունակել հաջող ռազմական գործողութունները:

Միջին Ասիայի նվաճումը սկզբում թելադրված էր ստրատեգիական նկատառումներով: Դա պարսկական տերութեան հյուսիսարևելյան մասն էր, ընդարձակ ու հարուստ: Այնտեղ էին փախել կամ նահանջել պարսկական բանակի մնացորդները: Իսկ այդ պահին Դարեհին սպանող բակտրիական սատրապ Բեսը իրեն հռչակեց նոր պարսկական թագավոր Արտաքսերքսես IV: Նոր թագավորի հանդես գալը խոստում էր այն մասին, որ պարսից տերութեան արևելյան մասի սատրապները փորձում էին կազմակերպել հետագա դիմադրութուն: Անհրաժեշտ էր ապահովել արդեն նվաճված տարածքները արևելքից սպասվող հարձակումից ու վերացնել դիմադրութեան վերջին հենակետը նախկին պարսից տերութեան արևելյան մասում:

Արտաքսերքսես IV Բեսն ինքը թեթևացրեց Ալեքսանդրի կողմից իր դեմ ուղղված պայքարի խնդիրը: Նա հայտարարեց իրեն թագավոր, կարծես թե դառնալով Աքեմենյանների հարստութեան շարունակող: Դրանով նա լուրջ բաղաբական սխալ գործեց: Քանի որ միջինասիական ազգութունների մեծ մասը շատ թույլ կախման մեջ էր գտնվում պարսից թագավորից և պարսից տերութեան կործանումը նրանց առջև բացում էր լիակատար անկախութեան հասնելու հեռանկար, ապա Բեսը Միջին Ասիայի տարածքում իրեն հռչակելով նոր պարսկական թագավոր, շէր կարող այստեղ ձեռք բերել շատ թե քիչ նշանակալից հենարան: Սակայն Միջին Ասիայում ևս Ալեքսանդրին շէր դիտում իբրև պարսկական լծից ազատարարի: Այստեղ նա համարվում էր լոկ նվաճող: Ահա թե ինչու դիմադրութունը Միջին Ասիայում ավելի լուրջ էր, քան այլ տեղերում: Միջինասիական դժվարամատչելի վայրերի քնակիչները պարտիզանական ու կանոնավոր պատերազմ էին մղում ընդդեմ ներ-



խուժած մակեդոնական զորքերի: Ստրատեգիական խնդրի կատարումը, այսինքն, հակառակորդի զորքերի ոչնչացումն ու նվաճված տարածքներում ամրանալը վերածվեց ծանր, տևական պատերազմի, որը լի էր առանձին մակեդոնական ջոկատների հաճախակի պարտություններով ու ապստամբություններով, որոնք տեղի էին ունենում լուրջ արտաքուստ խաղաղեցված թիկունքում: Վերջինների ճնշումը ուղեկցվում էր շարժուն դատաստանով:

Դեպի արևելք ուղղված առաջխաղացմանը զուգընթաց Ալեքսանդրը կառուցում էր քաղաք-ամրոցներ, ուր թողնում էր մակեդոնական կայազորներ: Միաժամանակ նա ակտիվացրեց տեղական ավագանու հետ մերձենալու իր քաղաքականությունն ու ավելի մեծ շահով ձգտում էր արտաքուստ յուրացնել տեղական սովորույթները: Այդ վերջին միտումը նոր բախումներ էր առաջացնում մակեդոնական ավագանու հետ:

Դուրս գալով Եկբատանայից ու շարժվելով դեպի արևելքի խորքը, Ալեքսանդրի գլխավոր ուժերն անցան «Վրկանից (Կասպից) դարպասներով»՝ Մարաստանը Միջին Ասիայի հետ միացնող այդ գլխավոր լեռնանցքով: Ղունա-մակեդոնական նվաճողների զորքերը գրավեցին Վրկանից աշխարհը, Պարթևաստանը, Արիան, Դրանգիանան ու Արախոսիան: Մ. թ. ա. 329 թ. գարնանը Ալեքսանդրը, անցնելով Հինդուկուշը, սկսեց Բակտրիայի ու Սողդիանայի նվաճումը: Դրանք ամենաուժեղ ու փաստորեն անկախ, թափառակյացների մարդերին զրացի՝ արևելյան սատրապիաներ էին: Թափառակյացներն օգնում էին դրանց Ալեքսանդրի դեմ մղած պայքարում:

Այստեղ, Բակտրիայում, իր համախոհների կողմից լքված Արտաքսերքսես IV Բեսն ընկավ Ալեքսանդրի ձեռքը, ենթարկվեց խոշտանգումների, հետո ուղարկվեց Եկբատանա ու մահապատժի ենթարկվեց: Տեղական սողդիական ու բակտրիական ավագանին բռնակշիռության հետ միասին շարունակում էր վճռական դիմադրություն ցույց տալ Ալեքսանդրին: Ղունա-մակեդոնական զավթիչների դեմ ուղղված մասսայական ապստամբությունը գլխավորեց սողդիական մեծատոհմիկ Սպիտամենեսը: Նրան օգնում էին Սողդիանային սահմանակից թափառակյացները: Այնուամենայնիվ Ալեքսանդրին հաջողվեց գրավել բակտրիական մայրաքաղաք Բալխն ու Սողդիանայի մայրաքաղաք Մարականդը<sup>1</sup>: Սակայն ապստամբությունների հրդեհն ընդգրկել էր ամբողջ երկիրը: Մակեդոնացիները կրթում էին մեծ կորուստներ: Ալեքսանդրը ազատագրական պայքար

<sup>1</sup> Ժամանակակից Սամարղանդի մոտ:

մղող այդ երկրում իր դիրքերն ամրապնդելու նպատակով կառուցեց մի քանի քաղաք-բերդեր՝ Ալեքսանդրիաներ ու մակեդոնական կայա-  
զորներ տեղավորեց մի շարք ամրացված կետերում: Միայն մ. թ.  
ա. 328 թ. վերջին, համառ պայքարից հետո մակեդոնացիների  
կողմից ջախջախված Սպիտամենեսը փախավ թափառակյացների  
մոտ՝ վերջիններիս առաջնորդները, ըստ երևույթին, երկյուղ կրե-  
լով, որ ռազմական գործողությունները կտարածվեն իրենց թափա-  
ռած վայրերի վրա, սպանեցին Սպիտամենեսին ու նրա գլուխը  
ուղարկեցին Ալեքսանդրին:

Ալեքսանդրի հարաբերությունները մակեդոնական հետայրների  
հետ ժամանակ առ ժամանակ խիստ սրվում էին: Մարականդայում,  
մ. թ. ա. 328/327 թթ. Ալեքսանդրը խնջույթի ժամանակ անգամ  
սպանեց իր մերձավոր բարեկամ Կլիտոսին, որը սկսել էր կշտամ-  
բել նրան այն բանի համար, որ թագավորն անտեսում է մակեդո-  
նացիների շահերը հօգուտ պարսիկների ու այլ նվաճված ժողո-  
վուրդների: Դրանից հետո Ալեքսանդրը իր մեծատոհմիկների օժան-  
դակությամբ որոշեց իր արքունիքում մտցնել թագավորի առաջ  
խոնարհվելու պարսկական սովորույթը: Հունարեն դա կոչվում էր  
«պրոսկինեսիս»: Մինչ այդ պրոսկինեսիս կատարում էին միայն  
արևելյան ծագում ունեցող մեծատոհմիկները: Ալեքսանդրը որո-  
շեց տարածել այն մակեդոնացիների ու հույների վրա: Նման նո-  
րամոծությունը թագավորի անձնական պահակազորում ծառայող  
մակեդոնական երիտասարդության մի մասին դրդեց կազմակեր-  
պել նոր դավադրություն: Դավադիրները միայն պատահաբար շկա-  
րողացան իրագործել իրենց ծրագիրը. նրանք սպասում էին թագա-  
վորին ննջարանում, իսկ Ալեքսանդրն այդ գիշեր խնջույթի մեջ էր  
ու շմտավ ննջարան: Դավադիրներից մեկը շուտով բերանից թոցը-  
րեց իրենց մտադրությունը: Դրան հետևեց դավադիրների կալան-  
քը, դատն ու մահապատիժը: Նրանց ջարդեցին քարերով: «Դրա-  
նիկների դավադրության», ինչպես այն սովորաբար անվանում են,  
կապակցությամբ շնորհազրկման ենթարկվեց ու բանտում սպան-  
վեց Ալեքսանդրի արքունական պատմագիր Կալլիսթենեսը, որը դա-  
վադրությունից քիչ առաջ հրաժարվել էր կատարել պրոսկինեսիսը՝  
համարելով այն ազատ հույնին ստորացնող գործողություն: Այդ  
դեպքերից հետո Ալեքսանդրն էլ ավելի ձգտեց բարելավել հարաբե-  
րությունները տեղական ավագանու հետ: Մ. թ. ա. 327 թ. նա ամուս-  
նացավ բակտրիական կառավարիչներից ամենահզորի՝ Օքսիար-  
տեսի դուստր Ռոքսանայի հետ:

Միջին Ասիայի երեք տարուց ավելի տևող նվաճումը մի ինքնու-  
րույն ու ավելի ծանր պատերազմ էր, քան Պարսկական տերության

արևմտյան հատվածի գրավումը: Ալեքսանդրի բանակը, որի հետ նա դուրս եկավ Մակեդոնիայից, կրեց մեծ կորուստներ ու թուլացավ: Ալեքսանդրը ստիպված էր բազմիցս համալրել բանակը բնակչության ստորին ազատ խավերին պատկանող տեղական ռազմիկներով: Բանակի հոգնածությունն ու նրա անձնակազմի փոփոխումն անդրադարձան արշավանքի հետագա ընթացքի վրա:

Ալեքսանդրը, մոտենալով Հնդկաստանի հյուսիսարևմտյան սահմանին ու տեղեկանալով այդ երկրամասի հարստությունների մասին, մտադրվեց սկսել Հնդկաստանի նվաճումը: Այդ որոշումը թելադրված էր ոչ միայն հաջող նվաճումները շարունակելու հրապուրանքով, այն բացահայտում էր նաև հին հույների սահմանափակ աշխարհագրական մտահորիզոնը: Արշավանքին մասնակցող գիտնականները, որոնց Ալեքսանդրը վերցրել էր իբրև խորհրդականներ, ինչպես և նվաճված հողերը ուսումնասիրելու և այդ հողերը արագ յուրացնելու նպատակով, համարում էին, որ Հնդկաստանը սահմանամերձ է համաաշխարհային օվկիանոսին: Հնդկաստանի իսկական շափերը նրանք չէին պատկերացնում: Այս պատճառով էլ Ալեքսանդրը և նրա մերձավորները ենթադրում էին, որ հնդկական արշավանքը կտանի նրանց համաաշխարհային օվկիանոսի ափը ու դրա շնորհիվ Ալեքսանդրի տիրապետությունը կտարածվի օվկիանոսի, այսինքն բնակչության համար պիտանի աշխարհի ամբողջ արևելյան հատվածի վրա: Բայց ոչ բոլոր մերձավորներն էին, որ ընդունում էին նրա նվաճողական պլանները: Բանակում արդեն նկատվում էր հոգնածություն: Նորակոչիկ զինվորները պակաս կարգապահ էին, շունեին մակեդոնացիների ռազմական ուսումնավարժությունը: Բայց Ալեքսանդրի տիրույթներին այժմ սահմանամերձ հնդկական պետությունների միջև տեղի ունեցող երկպառակությունները հեշտացրեցին Ալեքսանդրի բանակի ներխուժումը Հնդկաստան մ. թ. ա. 327 թ. սկզբին:

Երկու ջոկատներով հաղթահարելով լեռնային ցեղերի կատաղի դիմադրությունը, մակեդոնական բանակը մոտեցավ Ինդոս գետին ու անցնելով այն նախապես կառուցված կամրջով, մուտք գործեց Ալեքսանդրի հետ դաշինք կնքած Տաքսիլի փոքր տերությունը: Տաքսիլը տրամադրեց Ալեքսանդրին հնդկական մարտիկներից կազմված հինգ հազարանոց ջոկատ, դրա դիմաց, ի նշան երախտագիտության, ստացավ մի շարք հարևան տարածքներ: Տաքսիլի պետությունից դեպի արևելք, Հյուդասպ գետից այն կողմ, սկսվում էին նրա թշնամի թագավոր Պորոսի տիրույթները: Պորոսը դուրս բերեց Ալեքսանդրի բանակը թվով գերազանցող զորք: Բացի այդ, Պորոսը ուներ 100 մարտական փղեր: Մակեդոնական բանակի հա-

մար շատ դժվարին գործ էր գետն անցնելը, քանի որ Պորոսը խիստ հսկողություն սահմանեց գետի վրա: Բայց Ալեքսանդրը վերջ ի վերջո կարողացավ խարել նրան ու անցնել գետի մյուս ափը: Սկզբում բախվեցին երկու թշնամի հեծելազորները: Հնդկական հեծելազորի պարտությունից հետո սկսվեց մակեդոնական սիպտակապի ճակատամարտը փղերի հետ: Մակեդոնացիներին հաջողվեց նեղել փղերին: Վերջիններս սկսեցին ճզմել յուրալիններին: Մակեդոնացիները նետահարում էին փղերին ու հասան այն բանին, որ նրանք սկսեցին նահանջել: Պորոսի մյուս ստորաբաժանումները նույնպես կրեցին պարտություն, իսկ նա ինքը գերի ընկավ: Ալեքսանդրը Պորոսին թողեց նրա թագավորութունը՝ նվաճողի հետ դաշնակցելու ու նրա գերագույն իշխանութունը ճանաչելու պայմանով: Հյուդասպ գետի մոտ Ալեքսանդրը հիմնեց երկու քաղաք-ամրոցներ՝ Նիկեան (հաղթանակի քաղաք) ու Բուկեփալիան (քաղաքն այսպես կոչվեց ի պատիվ Ալեքսանդրի Բուկեփալոս ձիու) և շարունակեց իր երթը դեպի արևելք:

Բանակը մոտեցավ Հիփասիս գետին, որը Հնգագետքի (Փենջաբի—Յարգ.) ամենարևելյան գետն էր: Այստեղ Ալեքսանդրի զինվորները խռովություն բարձրացրեցին ու հրաժարվեցին առաջ շարժվել: Տեղական քնակչութունից ստացած նոր տեղեկությունների համաձայն, առջևում կար մի մեծ անապատ, որի մյուս կողմում գտնվում էին հզոր պետություններ: Օյկումենեի արևելյան եզրը դեռ շատ հեռու էր, և Ալեքսանդրը չկարողացավ ստիպել իր զինվորներին շարժվել առաջ: Նա հարկադրված էր մ. թ. ա. 326 թ. դադարեցնել ութ տարուց ավելի տևած արշավանքը:

Բանակը վերադարձավ Հյուդասպ գետի մոտ: Այստեղ կառուցվեց մեծ նավատորմ: Զորքի մի մասը նստեց նավերը, իսկ մնացած զինվորները հետիոտն շարժվեցին ափեզրով, սկզբում Հյուդասպի հոսանքով ներքև, իսկ հետո՝ Ինդոսի հոսանքով ներքև: Հաղթահարելով տեղական ցեղերի դիմադրությունը, զորքը հասավ օվկիանոսի ափը մ. թ. ա. 325 թ.: Ինդոսի դելտայում բանակը քաժանվեց, նավատորմը Ալեքսանդրի մերձավոր զինակիցներից մեկի՝ Նեարքոսի հրամանատարությամբ Արաբական ծոցի ափերի մոտով նավեց դեպի արևմուտք, մտադրվելով այդ ճանապարհով հասնել Պարսկական ծոց և Եփրատ ու Տիգրիս գետերի գետաբերանը: Բանակի մյուս մասը երկու մեծ ջոկատներով Ալեքսանդրի ու Կրատերոսի զխսավորությամբ շարժվեց ցամաքային ճանապարհով: Գլխավոր ջոկատը Ալեքսանդրի հրամանատարությամբ ընթանում էր դեպի արևմուտք Գեդրոզիայի ջրազուրկ անապատով և ունեցավ մեծ կորուստներ:

Արշավանքի ժամանակ բանակի լիակատար բարոյալքումը, որը նկարագրել են հին հեղինակները, պարզորոշ բացահայտեց Հիփասիս գետի մոտ նվաճումները դադարեցնելու պատճառները:

Վերադարձող բանակը հաղթահարում էր տեղական ցեղերի դիմադրությունը, ճնշում մինչ այդ նվաճված տեղական բնակչության լուրջ ապստամբությունները: Մ. թ. ա. 324 թ. սկզբին ցամաքային բանակն ու նավատորմը հասան Միջագետք: Ընդ որում նավատորմը հայտնագործեց հույների համար կարևոր՝ Հնդկաստանից դեպի Բարելոնիա ծովային ճանապարհը:

#### ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑՈՒ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Մ. թ. ա. 324 թ. առաջին կեսը Ալեքսանդրն անցկացրեց Սուսայում: Այստեղ նա զբաղվեց իր միապետության կազմակերպման ու ամրապնդման գործով: Միջինասիական ու հնդկական արշավանքների ժամանակ նրա նվաճած երկրների արևմտյան մասը առանց վերահսկողության կառավարում էին մակեդոնացիներից ու տեղական ավագանուց հապճեպ նշանակված սատրապները: Նրանք շարաշահում էին իրենց դիրքն ու հաճախ վարում անջատողական քաղաքականություն: Մարաստանում բռնկվեց ապստամբություն: Ալեքսանդրի վստահությունը վայելող արքունի գանձապետ Հարպալուսը գանձարանից հափշտակեց հսկայական գումար ու փախավ Հունաստան՝ հույներին կոչելով ապստամբության Ալեքսանդրի դեմ: Հարպալուսի հետ կապեր ունենալու մեջ կասկած հարուցած հռետոր Դեմոսթենեսը ստիպված էր փախչել Աթենքից:

Նվաճված վիթխարի երկիրը տարածվում էր Բալկանյան թերակղզու արևմտյան ափերից մինչև Հնդկաստան, ներառյալ նաև Հընդագետքը: Հյուսիսում այն մասնակիորեն մոտենում էր Դանուբին ու սահմանամերձ էր Սև ծովին, հարավում հասնում էր մինչև Հնդկական օվկիանոսը, Ասիայում՝ մինչև Արաբիա թերակղզին, իսկ Աֆրիկայում ընդգրկում էր Եգիպտոսը, Լիբիան ու Կիրենաիկան: Իր շահերով այն գերազանցում էր Պարսից տերությանը: Նրա բնակչությունը տարացեղ ու տարալեզու էր և գտնվում էր սոցիալ-տրնտեսական զարգացման տարբեր աստիճաններում: Հունաստանի, Ասորիքի, Փյունիկիայի, Եգիպտոսի ու Բարելոնիայի պես բարձր զարգացում ունեցող ստրկատիրական երկրների հետ մեկտեղ Ալեքսանդր Մակեդոնացու տերության մեջ մտնում էին այնպիսի վիթխարի տարածքներ, որոնց բնակչությունը դեռ նոր էր թևակոխել նախնադարյան-համայնական կարգերի քայքայման փուլը: Տնտեսական ու մշակութային կապերն առանձին մարզերի միջև ամուր

չէին: Ամբողջ տերութիւնը հնազանդութեան մեջ էր պահւում լուրջ կենքի ուժով:

Ալեքսանդրը շէր փոխում կառավարման՝ բնակչութեան համար սովորական տեղական ձևերը: Նա պահպանեց նաև պարսկական վարչական բաժանումը սատրապութիւնների, բայց սովորաբար սահմանափակում էր սատրապներին, զրկելով նրանց զորքերի հրամանատար լինելու ու ֆինանսները տնօրինելու իրավունքից:

Ալեքսանդրի իրական հենարանը բանակն էր, որի սոցիալական ու էթնիկական կազմը արևելյան արշավանքների ժամանակ զգալիորեն փոխվեց: Բանակում քիչ էին ռազմիկ-մակեդոնացիները, բայց դրա փոխարեն խիստ աճեց հույն ու բնիկ ասիացի վարձկանների թիվը: Ալեքսանդրը պարսիկ պատանիներից կազմակերպեց երեսուն հազարանոց հատուկ ջոկատ՝ նրանց մակեդոնական ռազմական արվեստ սովորեցնելու նպատակով:

Ալեքսանդրը հատուկ միջոցներ էր ձեռնարկում իր մակեդոնացի ու հույն զինվորներին տեղական բնակչութեան հետ մերձեցնելու համար: Սուսայում կազմակերպվեց շքեղ հարսանյաց հանդես, որի ժամանակ կատարվեցին մակեդոնական զինվորների ու պարսկուհիների և տեղական այլ ազգութիւնների պատկանող կանանց 10000 հարսանիքներ: Ալեքսանդրը առատ ընծաներ տվեց նորապսակներին: Նա ինքը ամուսնացավ միաժամանակ երկու պարսկական արքայադուստրերի՝ Դարեհ III-ի աղջկա և Դարեհի նախորդ՝ Արտաքսերքսես III Օթոսի աղջկա հետ: Նախորդ երկու պարսկական թագավորների դուստրերի հետ ամուսնանալը պետք է լրացուցիչ կերպով ամրապնդեր Ալեքսանդրի՝ որպես նրանց ժառանգորդի իրավունքները: Ալեքսանդրի կինը՝ բակտրուհի Ռոքսանան ևս շարունակում էր մնալ թագուհի: Այսպիսով Ալեքսանդրը պաշտոնապես ունեցավ երեք կին:

Նա կարգադրեց իր աստիճանավորներին ու զորավարներին ամուսնանալ մեծատոհմիկ պարսկուհիների, բակտրուհիների, սողողուհիների հետ: Ընդամենը մեկ օրում կատարվեց 80 հարսանիք: Նման միամիտ միջոցներով Ալեքսանդրը փորձում էր միաձուլել նվաճողներին ու նվաճվածներին: Չպետք է մոռանալ, որ Հունաստանում ու Մակեդոնիայում տիրող դասակարգի շատ ներկայացուցիչներին՝ Ալեքսանդրի ժամանակակիցների, այդ թվում նաև նրա հռչակավոր ուսուցիչ Արիստոտելի համար Ալեքսանդրի կողմից նրվաճված բոլոր ժողովուրդները քարբարոսներ էին, ի ծնե ստրուկներ և այլն: Պետք է ընդունել, որ Ալեքսանդրը՝ Արիստոտելի սանը, կանգնելով իր անժայրածիր ու տարացեղ տերութեան ամրապնդ-

ման խնդրի առաջ, կարողացավ հաղթահարել այդ գաղափարական սահմանափակությունը:

Առևտրական ու ստրատեգիական ճանապարհների վրա Ալեքսանդրը հիմնում էր նոր քաղաքներ ու ամրոցներ, որոնք ունեին խառը հունա-մակեդոնական ու տեղական բնակչություն: Նա այդ քաղաքների բնակիչներին տալիս էր որոշ արտոնություններ: Դրանք նվաճված տարածքներում նրա իշխանության հենակետերն էին: Հայտնի են դեպքեր, երբ Ալեքսանդրը քաղաքներին տալիս էր հողեր տեղական գյուղական բնակչությանը՝ շահագործելու համար: Նրա տերության մեջ բարձր պաշտոններ էին գրավում ինչպես մակեդոնական, այնպես էլ տեղական ավագանու ներկայացուցիչները: Նորաստեղծ քաղաքներում ապրում էին շատ թե քիչ արտոնություններ ունեցող քաղաքային բնակիչներ: Ալեքսանդրի միապետությունը պաշտպանում էին տարբեր կրոնների քրմերը, թագավորը շատ բարեհաճ էր տրամադրված այդ կրոնների հանդեպ: Նրա արքունիքում երկրպագվում էին ինչպես հունական, այնպես և բազմաթիվ տեղական աստվածներ: Ինքը՝ Ալեքսանդրը, որը ժամանակին եգիպտական քրմերի կողմից հռչակվել էր Ամոնի որդի, ձգտելով ամրապնդել իր տերությունը ընդգծում էր, որ ինքն աստված է: Նա հույներին այդ հաղորդեց Կորնթոսում գտնվող Հելլենական միության խորհրդի միջոցով: Նա կամենում էր, որ հույները ևս պաշտոնապես իրեն աստված ճանաչեին: Հունական պոլիսները կատարեցին նրա ցանկությունը: Աթենքում այդ ակտի դեմ հեզնանքով անզոր բողոք արտահայտեց այդ պահին քաղաք վերադարձած Դեմոսթենեսը. նա խորհուրդ տվեց ժողովրդական ժողովին Ալեքսանդրին համարել «եթե նա այդ կամենում է, Զևսի կամ նաև Պոսիդոնի որդի»:

Ալեքսանդրի կայսրության ընդարձակ տարածքներում կատարվեց ու կատարվում էր գույքի վիթխարի վերաբաշխում: Պարսկական գանձատան՝ նախկինում գանձերի ձևով պահպանվող կամ ռազմական ու վարչական պետքերի համար օգտագործվող միջոցների մեծ մասը դրվեց առևտրատնտեսական շրջանառության մեջ: Ուժեղացան առևտրական կապերը, աշխուժացավ քաղաքային կյանքը: Ալեքսանդրը կենտրոնացրեց ոսկյա ու արծաթյա դրամի թողարկման գործն ու դրամը հատում էր հսկայական քանակությամբ, հիմք ընդունելով աթենական դրամական համակարգը: Ալեքսանդրի տերության մեջ գուգակցվում էր արևելյան ու հունա-մակեդոնական փորձը: Բայց Հունաստանն ու Մակեդոնիան կազմում էին նոր միապետության շնչին մասը: Իսոկրատեսի նախկինում քարոզած «երջանկությունը Ասիայից Հունաստան փոխադրելու» թեզի իրակա-

նացման փոխարեն, Արևելքի մակեդոնական-հունական նվաճումը սոսկ հանգեցրեց դեպի նվաճված տարածքները բուն հունական բրնակչության արտագաղթի ուժեղացմանը: Իսկ իրենք՝ Հունաստանն ու Մակեդոնիան կանգնեցին նոր արևելյան միապետության ծայրամասի վերածվելու վտանգի առաջ:

Ալեքսանդրի քաղաքականության դեմ դիմադրություն էր հասունանում նաև նրա բանակի մակեդոնական զանգվածի շարքային կազմի շրջանում: Տիգրիս գետից դեպի արևելք գտնվող փոքր Օպիս քաղաքում բռնկվեց ապստամբություն: Երբ Ալեքսանդրը մ. թ. ա. 324 թ. ժամանեց այդ քաղաքը այնտեղ տեղավորված մակեդոնական բանակին հայտնելու համար, որ նա ծերացած ու հիվանդ վետերաններին ու ընդհանրապես բոլոր ցանկացողներին հարուստ նվերներով արձակում է տուն՝ Մակեդոնիա, զինվորները բարձրացրին խռովություն: Նրանք գոռում էին, թե բոլորը կմեկնեն Մակեդոնիա, իսկ թագավորը թող միայնակ կռվի իր «հոր»՝ Ամոնի օգնությամբ: Ալեքսանդրը մահապատժի ենթարկեց մի քանի, հատկապես ակտիվ ապստամբ զինվորների: Կայացած բանակցությունների հետևանքով նա ստիպված էր 10000 ռազմիկների բաց թողնել հայրենիք ու սկսեց ավելի մեծ շահով օգտվել պարսիկների ծառայություններից:

Մ. թ. ա. 323 թ. Ալեքսանդրը ժամանեց Բաբելոն, որը գտնվում էր նրա տերության մոտավորապես կենտրոնում, առևտրական ու ստրատեգիական ճանապարհների խաչման կետում: Այդ խոշորագույն հին արևելյան քաղաքը նա դարձրեց իր մայրաքաղաքը: Այստեղ, մ. թ. ա. 323 թ. ամռանը, խնջույքի ժամանակ, Ալեքսանդրն իրեն վատ զգաց ու մի քանի օրվա հիվանդությունից հետո մահացավ, հավանաբար շարորակ տենդից, կամ, հնարավոր է և թունավորումից, մոտ 33 տարեկան հասակում:

## Գլուխ 18. ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՈՒ ԶԱՐԿԱՑՈՒՄԸ

Ալեքսանդրի հաջորդների, հունական դիադոքների ու եպիգոնների պայքարի վերաբերյալ մեզ հայտնի գլխավոր պատմական աղբյուրներն են անցքերի ժամանակակիցների նկարագրությունները օգտագործած հին հունական ու հռոմեական պատմիչների գործերը: Անցքերի բավականին մանրամասն ակնարկ՝ սկսած Ալեքսանդրի մահից մինչև մ. թ. ա. 302 թ. թողել է մեզ Դիոդորոսը: Հելլենիզմի ամբողջ շրջանի հակիրճ, բայց կապակցված ակնարկ է պահպանվել Պոմպեոս Տրոգոսի պատմության համառոտագրության մեջ, որ կազմել էր Հուստինոսը դիադոքների ու եպիգոնների պայ-



քարից մոտ 450 տարի անց: Ուշագրավ տեղեկություններ են պարունակվում Պլուտարքոսի կենսագրություններում ու այլ, մեծ մասամբ պատառիկային բնույթ կրող գրական հուշարձաններում: Նման տեղեկությունները, որոնց թիվն աստիճանաբար աճում է, մեծ նշանակություն ունեն մեր գիտելիքները ճշտելու ու լրացնելու գործում:

Պատմական աղբյուրների ամբողջությունը բնավ հավասարաչափորեն չի լուսաբանում դիագոքների ու եպիգոնների պայքարի ժամանակաշրջանի պատմությունը: Գրական աղբյուրները նկարագրում են ռազմական գործողություններն ու զորավարների կենսագրությունները: Սոցիալ-տնտեսական հարաբերություններին վերաբերող տեղայնացված անջատ տվյալներ գրեթե բացառապես կարելի է քաղել արձանագրություններից:

#### ՊԱՅՔԱՐ ԱԼԵՔՍԱՆԳՐԻ ԺԱՌԱՆԳՈՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Զենքի ուժով ստեղծված Ալեքսանդր Մակեդոնացու կայսրությունը սկսեց տրոհվել նվաճողի մահից անմիջապես հետո: Առաջին զինված ընդհարումը նրա զորավարների միջև տեղի ունեցավ պալատում՝ Բաբելոնում, թագավորի դեռ հողին շահնձնված դիակի մոտ: Ալեքսանդրը շուներ ուղղակի օրինական ժառանգներ: Զորքը, որ Մակեդոնիայում խաղում էր քաղաքական դեր, միջամտեց գահաժառանգման հարցին ու թագավոր հռչակեց Ալեքսանդրի խորթ եղբայր, տկարամիտ Փիլիպոս Արրիդեյոսին: Ռոքսանայի որդի, մանուկ Ալեքսանդրը, որը ծնվեց այդ արարողությունից մի փոքր ժամանակ անց, նույնպես հռչակվեց թագավոր: Իրական իշխանությունն անցավ ազդեցիկ զորավարների ձեռքը, նրանք իրար միջև բաժանեցին Ալեքսանդրի կայսրության մեջ մտնող սատրապությունների կառավարումը: Պետության փաստական ղեկավար ժամանակավորապես դարձավ Ալեքսանդրի թիկնապահներից մեկը՝ հեղինակավոր զորավար Պերդիկկասը: Նա կատարում էր երկու թագավորների խնամակալի պարտականություններ: Թագավորների կուսակալ Մակեդոնիայում ու Հունաստանում առաջվա պես մնում էր Անտիպատրոսը:

Երբ Ալեքսանդրի մահվան լուրը հասավ Հունաստան ու Միջին Ասիա, այնտեղ ծագեցին ապստամբություններ: Հունական մի շարք պոլիսներ ու մարզեր սկսեցին պատերազմական գործողություններ մակեդոնական փոխարքա Անտիպատրոսի դեմ: Ապստամբները պաշարեցին նրան Լամիա ամրոցում (այս պատճառով մ. թ. ա. 323—322 թթ. հուլյն-մակեդոնական պատերազմը ստացավ Լամիական անունը), սակայն Անտիպատրոսը շուտով ստացավ օգ-

նություն, ու մակեդոնական տիրապետութիւնը Հունաստանում վերականգնվեց: Դեմոսթենեսը փախավ Աթենքից ու ստիպված ինքնասպանութեամբ վերջ տվեց իր կյանքին: Միայն Հռոդոս կղզին կարողացավ պահպանել Ալեքսանդրի մահվան լուրը ստանալուց հետո հռչակած իր անկախութիւնը:

Մակեդոնացիները բավական արագորեն ճնշեցին հույն վարձկանների ապստամբութիւնը նաև Միջին Ասիայում: Հակամակեդոնական ապստամբութիւնների ճնշման շրջանում սկսվեցին երկպառակտիչ պատերազմները Ալեքսանդրի զորավարների՝ դիադոքների, իսկ հետո նաև նրանց ժառանգների՝ եպիգոնների միջև: Այդ պատերազմները տևեցին քառասուն տարուց ավելի:

Պերդիկասը՝ որպես երկու թագավորների խնամակալ, փորձեց իրեն վեր դասել մյուս դիադոքներից, բայց վերջիններս, հենվելով փրենց բանակների վրա, վատ էին կատարում նրա հրամանները: Եգիպտական սատրապ Պտղոմեոսն իր մոտ թողեց Ալեքսանդրի մարմինը, որը Բաբելոնից տանում էին Մակեդոնիա, ու այն թաղեց Եգիպտոսում: Հետո նա գրավեց Կիրենեն: Պերդիկասը մ. թ. ա. 321 թ. գարնանը սկսեց ռազմական գործողութիւններ ինքնուրույն քաղաքականութիւն վարող սատրապի դեմ, բայց չկարողացավ անցնել Նեղոսի ձախ գետաբաղուկը. պատերազմը երկարեց: Պտղոմեոսը սկսեց իր կողմը գրավել Պերդիկասի դինվորներին, նրանց խոստանալով ավելի լավ պայմաններ: Մ. թ. ա. 321 թ. ամռանը Պերդիկասը սպանվեց իր սևիական ճամբարում՝ իրեն ենթակա զորահրամանատարների կողմից: Դա պատահականութիւն չէր: Վարձկան զորքերը չէին ցանկանում, որպեսզի պատերազմը ձգձգվի: Բացի այդ, երկու կողմերից էլ կովում էին հույն ու մակեդոնացի դինվորներ, որոնք առաջ հաճախ միասին էին ծառայել: Դա հեշտադրեց նրանց անցումը Պտղոմեոսի կողմը: Վերջինս Պերդիկասի թշնամին էր, բայց ճանաչված զորահրամանատար էր հունա-մակեդոնական բանակում, և անցյալում նրա մոտ էր ծառայել Պերդիկասի զորքում այժմ գտնվող մարտիկների մի մասը:

Պերդիկասի սպանութիւնից հետո դիադոքները նորից իրար մեջ բաժանեցին սատրապութիւնների կառավարումը, սակայն խաղաղութիւն չհաստատվեց, ընդհակառակը, նրանց միջև բորբոքվեց երկպառակտիչ պատերազմ: Առավել հզոր դիադոքները պայքարում էին իրար դեմ ու իշխանութիւնից զրկում էին ավելի թուլերին, հայտարարելով, որ փրենք ձգտում են պահպանել Ալեքսանդրի կայսրութեան միասնութիւնը: Այդ ժամանակ Մակեդոնիայում մահացավ Անտիպատրոսը: Նրա կտակով Մակեդոնիայում թագավորական խնամակալ նշանակված ծեր զորավար Պոլիսպերքոնն ընկավ

ժանր կացութեան մեջ, քանի որ նրա դեմ ելավ մահացածի որդի Կասսանդրոսը. վերջինս նույնպես հավակնութիւն ուներ խնամակալ դառնալու: Այդ երկպառակտիչ պայքարում պարզ երևաց մի կողմից Հելլադայի փաստական թուլութիւնն ու ենթակա վիճակը, իսկ մյուս կողմից՝ նրա քաղաքական նշանակութիւնն ու ավանդական հեղինակութիւնը Մերձավոր Արևելքով մեկ ցրված հույների ու մակեդոնացիների մոտ: Դիադոքների համար շատ կարևոր էր ազդեցութիւն ունենալ Հունաստանում ու տիրել թեկուզ նրա մի մասին, քանի որ Հունաստանը առաջվա պես տալիս էր ռազմիկ-վարձկաններ, այն էլ հույն վարձկաններ: Իսկ հույները մակեդոնացիների հետ համահավասար կազմում էին նրանց տարացեղ բանակների կորիզը: Դիադոքները, օգտագործելով հունական պոլիսներում օլիգարխիաների ու դեմոկրատիաների միջև ընթացող պայքարը, իրենց հայտարարում էին մեկի կամ մյուսի կողմնակից: Քանի որ նտիպատրոսը, իսկ հետո նաև Կասսանդրոսը, օժանդակում էին օլիգարխիաներին, ապա խնամակալ Պոլիսպերքոսը, պաշտպանվելով Կասսանդրոսի հավակնութիւններից, սկսեց օգնել դեմոկրատիաներին:

Ալեքսանդրի կայսրութեան ասիական հատվածում Պերդիկկասի մահից հետո շուտով ամենահզոր դեմքը դարձավ դիադոքների կողմից «Ասիայի պետի» պաշտոնում ընտրված Անտիգոնոս Միակահին: Փոքր Ասիայի արևմտյան մասում առաջատար դիրք գրավելու հավակնութիւն էր հայտնում Քրակիայի սատրապ Լիսիմաքոսը, Միջագետքում հաստատվեց դիադոքոս Սելևկոսը: Պտղոմեոսը ամրանալով Եգիպտոսում, մյուսներից ավելի շուտ սկսեց վարել տեղական անկախ կառավարչի քաղաքականութիւն. նա միջամտում էր մյուս դիադոքների երկպառակտիչ պայքարին գլխավորապես այն դեպքերում, երբ վախենում էր զրկվել եգիպտական սատրապիայից:

Երկպառակտիչ պատերազմների ընթացքում Մակեդոնիայում ու Հունաստանում ուժեղացավ Կասսանդրոսը: Նրա ազդեցութեան տակ ընկավ նաև Աթենքը, որտեղ դրա հետևանքով հաստատվեց շափավոր օլիգարխիա՝ Դեմետրիոս Փալերացու գլխավորութեամբ, որը իշխանութեան գլուխ մնաց 10 տարի: Արևելքում Անտիգոնոսը իրեն ենթարկեց Փոքր Ասիայի, Ասորիքի ու Միջագետքի մեծ մասը: Այն ժամանակ մյուս դիադոքները երկյուղ կրելով Անտիգոնոսից, դաշինք կնքեցին նրա դեմ: Դրանք էին Լիսիմաքոսը, Սելևկոսը, Պտղոմեոսն ու Կասսանդրոսը: Պայքարելով վերջինիս դեմ, Անտիգոնոսն օգնութիւն ուղարկեց Պոլիսպերքոսին ու ազդարարեց «ազատութիւն» Հունաստանում: Դա նշանակում էր, որ նա հայ-

տարարեց իրեն դեմոկրատիայի կողմնակից ու օլիգարխիայի հակառակորդ:

Մ. թ. ա. 311 թ. դիադոքների միջև երկպառակություններն ավարտվեցին հաշտությամբ, սակայն այդ նույն թվին Կասսանդրոսի հրամանով սպանվեցին Ռոքսանան ու մանկահասակ թագավոր Ալեքսանդրը: Մակեդոնական թագավորների արքայատոհմն ընդհատվեց: Փաստորեն Մակեդոնիայի կառավարիչն էր Կասսանդրոսը (նրա կողմից սկզբում Պելոպոնես, հետո Լոկրիս արտաքսված Պոլիսպերբոնը շուտով մահացավ): Դիադոքները ձևականորեն հռչակում էին հունական պոլիսների ինքնավարությունը: Սակայն Հունաստանի «ազատությունն» ազգարարած Անտիգոնոսի զորքերն այնպես էլ մնացին այստեղ: Կասսանդրոսի մակեդոնական կայսրը գտնվում էր Աթենքում ու նրանից կախյալ այլ քաղաքներում: Պտղոմեոսը՝ Եգիպտոսի հզոր սատրապը «աղատագրեց», այսինքն զավթեց մի շարք կղզիներ Էգեյան ծովում ու առանձին կետեր Պելոպոնեսում:

Այսպիսով, դիադոքների ու հունական պոլիսների քաղաքական գործիչների հասկացությամբ «ազատությունը» պոլիսներին՝ դիադոքներից մեկի հովանավորությամբ կամ անգամ գերագույն իշխանության ներքո ինքնավարություն տրամադրելն էր: Դրանում արտահայտվեց պոլիսի քաղաքական ձևի անկումը, որի պատճառները պարզաբանվեցին վերևում (տե՛ս գլ. 16): Հելլենիստական խոշոր պետությունների առաջացման պայմաններում հունական պոլիսները գնալով ավելի էին կորցնում իրենց ինքնուրույնությունը, ինքնուրույն միավորների իրենց նշանակությունը, ինչպես տնտեսական, այնպես և քաղաքական տեսակետից: Դիմադրելով դրան, նրանք կրկին սկսեցին կազմել միություններ:

Մ. թ. ա. 307 թ. Անտիգոնոսի որդի Դեմետրիոսը Աթենքը «ազատագրեց» Կասսանդրոսի զորքերից: Չափավոր օլիգարխիան տապալվեց, ու հռչակվեց դեմոկրատիա: Աթենքը Անտիգոնոսին ու Դեմետրիոսին անվանեց «աստված-փրկիչներ», սակայն փաստորեն ընկավ այդ «աստվածների» ազդեցության տակ, որոնք ձգտում էին իրենց իշխանության ներքո միավորել Ալեքսանդրի նախկին կայսրությունը: Հետապնդելով այդ նպատակը, Դեմետրիոսը ծանր պարտության մատնեց Պտղոմեոսին ու մ. թ. ա. 306 թ. գրավեց Կիպրոսը, որն ուներ տնտեսական ու ռազմաստրատեգիական կարեւոր նշանակություն Միջերկրական ծովի արևելյան մասում: Կիպրոսում Սալամիս քաղաքի գրավման ժամանակ պաշարողական մեքենաների հաջող կիրառումը Դեմետրիոսին շնորհեց «Պոլիորկետես», այսինքն «քաղաքներ պաշարողի» անունը: Դրանից հետո

Անտիգոնոսն ու Դեմետրիոսն իրենց հռչակեցին թագավորներ, որովհետև նրանց ձեռքում կենտրոնացավ Ալեքսանդրի տիրույթների զգալի մասը, իսկ Մակեդոնական արքայատոհմի և ոչ մի ներկայացուցիչ այդ ժամանակ կենդանի չէր: Հռչակելով իրենց թագավորներ, Անտիգոնոսն ու Դեմետրիոսը հենվում էին բանակի վրա: Սակայն, իմանալով Անտիգոնոսի այդ ակտի մասին, ամենաազդեցիկ դիադոքները, նրա հակառակորդները, իրենց նույնպես հրոշակեցին թագավորներ: Նրանց թվում էին պարտութուն կրած, բայց Եգիպտոսը իր ձեռքում ամուր պահող Պտղոմեոսը, Սելևկոսը, որը մ. թ. ա. 312 թ. կրկին հաստատվեց Բաբելոնում ու Արևելքում գտնվող այլ հողերում, Քրակիայում իշխող Լիսիմաքոսն ու Մակեդոնիայում կառավարող Կասսանդրոսը: Նրանք նույնպես հենվում էին իրենց ուժեղ բանակների վրա: Այսպիսով, Ալեքսանդրի նախկին կայսրության տարածքում, նրա մահից 17 տարի անց հանդես եկան վեց մրցակից թագավոր-զորապետներ, որոնցից միայն Անտիգոնոսն էր իր որդի Դեմետրիոսի հետ միասին առաջվա պես փորձում տիրել ամբողջ կայսրությանը: Մյուս թագավորներն այդ ժամանակ հետապնդում էին ավելի նեղ նպատակներ: Նրանք իրենց կողմից կառավարվող տարածքները ցանկանում էին վերածել շատ թե քիչ կայուն պետութունների:

Դեմետրիոսը մ. թ. ա. 305—304 թթ. փորձում էր զավթել Հռոդոսը՝ կարևոր առևտրաարհեստավորական ու ռազմաստրատեգիական կենտրոնը, որը հսկում էր ծովային ճանապարհները Միջերկրական ու Էգեյան ծովերի արևելյան մասում: Բայց այդ կղզու երկարատև պաշարումը, որի ժամանակ կիրառվեցին հատուկ մեքենաներ, ավարտվեց անհաջողությամբ: Հռոդոսին զգալի օգնություն, գլխավորապես պարենով, ցույց տվեց Պտղոմեոսը: Հռոդոսին օգնում էին նաև Կասսանդրոսն ու Լիսիմաքոսը: Մտվում տիրող դիրք գրավելու Անտիգոնոսի ու Դեմետրիոսի փորձը հաջողություն չունեցավ: Դրա փոխարեն Դեմետրիոսը հզոր նավատորմի ու բանակի օգնությամբ տիրեց Հունաստանին: Մ. թ. ա. 303 թ. նա ստիպեց Կորնթոսյան համաժողովին հռչակել իրեն շելլագայի գերիշխող: Անտիգոնոսի ու Դեմետրիոսի շարունակվող հարձակողական քաղաքականությունը (նրանք միշտ գործում էին միասին) նորից առաջ բերեց մյուս թագավորների՝ Կասսանդրոսի, Լիսիմաքոսի, Սելևկոսի ու Պտղոմեոսի ելույթը նրանց դեմ: Մ. թ. ա. 301 թ. ամռանը Փոքր Ասիայի կենտրոնական մասում, Իպսոս քաղաքի մոտ, տեղի ունեցավ կատաղի ճակատամարտ մի կողմից Անտիգոնոսի ու Դեմետրոսի, մյուս կողմից՝ Սելևկոսի, Կասսանդրոսի ու Լիսիմաքոսի միջև (Պտղոմեոսը զգուշավորությունից չմասնակցեց ճակատա-

մարտին): Սեւեկոսը մարտում օգտագործեց 500 մարտական փղեր, որոնք նա ստացել էր Ջանդրագուպտա թագավորից այն պայմանով, որ կվերադարձնի Ալեքսանդրի երբեմնի նվաճած հնդկական տերիտորիաները: Անտիգոնոսն ու Դեմետրիոսը լիակատար պարտություն կրեցին, Անտիգոնոսը սպանվեց, իսկ Դեմետրիոսը փրկվեց, դիմելով փախուստի:

Անտիգոնոս Միակնանու մահից հետո կայսրությունը վերականգնելու փորձերը երկար ժամանակ դադարեցին: Այն տրոհվեց մի քանի պետությունների, որոնցից աչքի էին ընկնում չորսը՝ Մակեդոնիան, Լիսիմաքոսի պետությունը Թրակիայում ու Փոքր Ասիայի արևմտյան մասում, Սեւեկյանների պետությունը, որը Փոքր Ասիայի արևելյան շրջաններից մինչև Հնդկաստանի սահմանները տարածվող ու տարբեր ժողովուրդներով և ցեղերով բնակեցված մի վիթխարի տարածք էր, ու Պտղոմեոսի պետությունը. այն ընդգրկում էր Եգիպտոսը՝ Հարավային Ասորիքով ու Կիրենաիկայով հանդերձ: Այդ պետությունների բնորոշ գիծն էր տարացեղ ու սոցիալա-տնտեսական տեսակետից խայտաբղետ կազմը: Անգամ Մակեդոնիան ուներ ընդարձակ սահմաններ, որովհետև նրան ենթակա էին մի շարք բալկանյան ցեղեր ու հունական հողեր: Բոլոր այդ պետությունների համար ընդհանուր էր զարգացած ստրկատիրական հարաբերությունների զուգակցումը ավելի թույլ զարգացած ստրկատիրական հարաբերությունների ու նախնադարյան-համայնական կարգերի քայքայման աստիճանին հատուկ հասարակական ձևերի հետ: Դրանց կառավարությունները, բացառությամբ Եգիպտոսի, դեռևս անհրաժեշտ չափով կայուն չէին: Մ. թ. ա. III դ. սկզբին, Կասսանդրոսի մահից մի փոքր ժամանակ անց, Դեմետրիոսին (չնայած Իպսոսի ճակատամարտում նրա կրած պարտությանը) հաջողվեց զավթել Մակեդոնիայի գահն ու հաստատել իր բացառիկ ազդեցությունը Հունաստանի մեծ մասում: Կղզիներին տիրելով, նա մեծացրեց բանակն ու նավատորմը և չհրաժարվեց իր հոր հարձակողական քաղաքականությունը շարունակելու ու Ասիայում կրկին հաստատվելու հույսից: Դեմետրիոսի ուղղմական պատրաստություններից անհանգստացած նրա հարևանները՝ արևմուտքում էպիրոսի թագավոր Պյուրոսը, իսկ Արևելքում Լիսիմաքոսը, սկսեցին պատերազմական գործողություններ ու մ. թ. ա. 288—287 թթ. Դեմետրիոսին դուրս մղեցին Մակեդոնիայից: Նրա պարտությունը արդյունք էր նաև այն բանի, որ տարբեր շարաշահումների հետևվանքով նա կորցրեց իր հեղինակությունը մակեդոնական բանակում: Դեմետրիոսն իրեն հավատարիմ մնացած վարձկանների հետ միասին շարունակեց պատերազմը Հունաստանում, իսկ հետո ափ

իջալ Փոքր Ասիայում: Պատերազմի ընթացքում Դեմետրիոսը վերածվեց առանց պետութւան մի թագավորի, որն ուներ միայն վարձու բանակ ու նավատորմ: Այդ վճռական պահին նա հիվանդացավ, իսկ նրա բանակը բարոյալքվեց: Աննշան ուժերով մնալով թշնամաբար տրամադրված բնակչութւան շրջապատում, նա անձնատուր եղավ իր դեմ ելած Սելևկոսին ու որոշ ժամանակ անց մահացավ գերութւան մեջ:

Դեմետրիոսի քաղաքական կարիերայի ավարտից հետո Լիսիմաքոսը դարձավ Մակեդոնիայից, Թրակիայից ու Փոքր Ասիայի մեծ մասից կազմված մի ընդարձակ պետութւան տիրակալ: Այժմ նրա մերձավոր մրցակիցն էր Սելևկոսը, որը տիրում էր դեպի արևմելք տարածվող հսկայական հողերին: Մ. թ. ա. 281 թ. նորից բորբոքվեց վերջին կարճատև պայքարը երկու դեռևս կենդանի մնացած դիադոքների միջև (Պտղոմեոսը՝ Եգիպտոսի արքան, մահացավ մ. թ. ա. 283 թ.)՝ Ալեքսանդրի ամբողջ ժառանգութւանը տիրելու համար: Կորուպեդիոնում (աղջկա հովտում), Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան մասում, տեղի ունեցած կատաղի ճակատամարտում Լիսիմաքոսը ջախջախվեց ու սպանվեց: Նրա պետութւունը տրոհվեց: Հաղթանակից հետո Սելևկոսը Մակեդոնիան գրավելու նպատակով արշավանք սկսեց դեպի Եվրոպա, բայց սպանվեց մ. թ. ա. 280 թ. Պտղոմեոս Կերավնոսի, եգիպտական թագավորի՝ Եգիպտոսից փախած որդու կողմից: Պտղոմեոս Կերավնոսին աջակցութւուն ցույց տվեց Լիսիմաքոսի մակեդոնական բանակը, որը հանդես եկավ մակեդոնական գահի նկատմամբ Սելևկոսի հավակնութւունների ու Մակեդոնիան նրա հսկայական արևելյան տերութւան փոքրիկ կցորդը դարձնելու մտադրութւան դեմ: Պտղոմեոս Կերավնոսը բանակի կողմից հռչակվեց մակեդոնական թագավոր: Լիսիմաքոսի թագավորութւան տրոհումից հետո մնացին միայն երեք խոշոր հելլենիստական պետութւուններ՝ Պտղոմեոսների ու Սելևկյանների պետութւունները և Մակեդոնիան:

Մ. թ. ա. 279 թ. Բալկանյան թերակղզու հյուսիսային շրջաններից Մակեդոնիայի դեմ հզոր հարձակում գործեցին կելտ-գալատների ցեղերը: Մակեդոնական բանակը ջախջախվեց, Պտղոմեոս Կերավնոսը սպանվեց: Գալատները Մակեդոնիայից թափանցեցին Հյուսիսային ու Միջին Հունաստան, սակայն կանգնեցվեցին էտոլական միութւան ու Աթենքի դիմադրութւան շնորհիվ: Մ. թ. ա. 278 թ. գալատները ներխուժեցին Թրակիա ու Փոքր Ասիա: Գալատների դեմ մղած պայքարի ընթացքում առաջ քաշվեց մի բանի հունական քաղաքների՝ Դեմետրիոսի տերութւան մնացորդների կառավարիչ, Դեմետրիոսի որդի Անտիգոնոս Գոնատոսը: Նա պայմա-

նագիր կնքեց Սելեկոսի որդի Անտիոքոսի հետ՝ ազդեցության ու յորտնների սահմանադատման մասին: Անտիոքոսը հրաժարվեց Մակեդոնիայի ու Հունաստանի նկատմամբ իր հոր հավակնություններից, իսկ Անտիգոնոս Գոնատասը՝ Դեմետրիոսի հավակնություններից Թրակիայի ու Ասիայի նկատմամբ: Դրանով ավելի որոշակիորեն ընդգծվեց Ալեքսանդրի կայսրության վերջնական տրոհումը:

Մ. թ. ա. 277 թ. Անտիգոնոս Գոնատասին հաջողվեց ջարդել գալատներին ու գրավել Մակեդոնիան: Մ. թ. ա. 276 թ. բանակը նրան հռչակեց մակեդոնական թագավոր: Այդ անցքերով հիմնականում ավարտվեց հելլենիստական մակեդոնական պետության կազմավորման բուռն դարաշրջանը: Մակեդոնիայում սկսված ավելի կայուն շրջանի արտաքին դրսևորումը հադիսացավ, մասնավորապես, Անտիգոնյանների հարստության հաստատումը այստեղ:

Գալատների դեմ պայքարը Փոքր Ասիայում տևեց ավելի քան երկու տարի: Ասիայում ամենանշանակալից ուժեր ունեցող Անտիոքոս I Սելեկյանը պատերազմում էր Ասորիքում Եգիպտոսի թագավոր Պտղոմեոս II-ի դեմ: Դա հեշտացրեց գալատների թափանցումը մինչև Փոքր Ասիայի արևելյան սահմանները Պտղոմեոսի դեմ մղած պայքարում ձեռք բերելով միայն ժամանակավոր հաջողություններ, Անտիոքոսը շարժվեց գալատների դեմ ու նրանց ջախջախեց մ. թ. ա. 275 թ.:

Գալատների արշավանքի ժամանակ իրենց անկախությունը ամրապնդեցին Փոքր Ասիայի մանր պետությունները՝ Մարմարա և Սև ծովերի հարավային ափին հարող Բիթանիան, դեպի հարավ-արևմուտք գտնվող Պերգամոսը, Բիթանիայից դեպի արևելք տեղադրված Պոնտոսը և այլն: Գալատները, թեև նրանք ջախջախվել էին Անտիոքոսի կողմից, մնացին Փոքր Ասիայում ու նրա կենտրոնական մասում նույնպես ստեղծեցին իրենց պետությունը՝ Գալատիան: Նրանց աջակցեցին Բիթանիան ու Պոնտոսը, քանի որ Անտիոքոս Սելեկյանը ձգտում էր ղավթել ողջ Փոքր Ասիան ու այս պատճառով պոտենցիալ թշնամի էր բոլոր տեղական դինաստիաների համար: Գալատիան սոցիալ-տնտեսական տեսակետից ավելի հետամնաց էր, քան հարևան երկրները: Սակայն այստեղ ուժեղանում էր գուլքային շերտավորումը: Այդ պատճառով մեծ թվով գալատներ լքում էին հայրենիքն ու իբրև վարձկաններ ծառայության էին անցնում հելլենիստական պետությունների բանակներում: Հելլենիստական թագավորները հույներից ու մակեդոնացիներից բացի հոժարությամբ զինվորական ծառայության էին ընդունում թրակիացիներին ու հելլենիստական աշխարհի այլ, ոչ հունական ազգությունների ներկայացուցիչներին:



Այսպիսով, համարյա կես դար տևած կատաղի պատերազմներից հետո, մ. թ. ա. մոտ 270 թ. վերջնականապես որոշվեցին ու ձևավորվեցին գլխավոր հելլենիստական պետություններն ու դրանց ավելի կայուն սահմանները: Նախորդ զարգացումով կանխորոշվեց նաև արտաքին հակասությունների հանգույցների առաջացումը ամրապնդված պետությունների միջև՝ Ասորիքում, Փոքր Ասիայում, Միջերկրական ու էգեյան ծովերում, Սելևկյանների պետության հյուսիսարևելյան ու արևելյան սահմաններում:

#### ՊՏՂՈՄԵՆՈՍՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հելլենիստական Եգիպտոսը Արևելքի ամենահզոր պետություններից մեկն էր, իսկ նրա մայրաքաղաք Ալեքսանդրիան՝ արևելյան միջերկրականի խոշորագույն նավահանգիստն ու առևտրաարհեստավորական և մշակութային կենտրոնը: Եգիպտոսում մինչև մեր օրերը (տե՛ս էջ 20) պահպանվել են պապիրուսների վրա գրված հսկայական քանակությամբ գործնական, պաշտոնական ու մասնավոր բնույթի վավերագրեր: Դրանք հնարավորություն են տալիս բավական մանրամասնորեն ու անմիջական տվյալների հիման վրա ուսումնասիրել հելլենիստական Եգիպտոսի սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարաբերությունները, վարչական համակարգն ու հասարակության, պետության կյանքի այլ կողմերը: Նման տեղեկություններ մենք չունենք անտիկ ու հելլենիստական աշխարհի որևէ այլ երկրի վերաբերյալ: Հելլենիստական Եգիպտոսի ներքին պատմության ուսումնասիրությունը լրացուցիչ լույս է սփռում նաև Սելևկյանների պետության ու նրան ժամանակակից մյուս հելլենիստական երկրների ներքին պատմության վրա, երկրներ, որոնց մասին մեզ հասած տեղեկությունները կրում են կցկտուր բնույթ: Եգիպտոսի քաղաքական պատմության, հատկապես մ. թ. ա. III դ. երկրորդ կեսի համար կարևոր աղբյուր է Պոլիբիոսի «Ընդհանուր պատմությունը»:

#### ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Պտղոմեոսների թագավորության հիմնական տարածքում՝ դելտայում ու Նեղոսի հովտում պահպանվել էր հին եգիպտական բաժանումը նոմերի, որոնց գլուխ այժմ կանգնեցին թագավորների կողմից նշանակված ստրատեգոսները: Ստրատեգոսի գրասենյակի պետը, որը վարում էր գործնական գրագրությունն ու միաժամանակ նոմի արխիվի վերակացուն էր, կոչվում էր բասիլիկոգրամատես (արքայադպիր): Յուրաքանչյուր նոմում բնակչությունից գանձվող հարկերն ու տուրքերը տնօրինող ֆինանսական վարչության ղե-

կավարն էր օյկոնոմոսը: Նրան նշանակում էր ամբողջ ֆինանսական գերատեսչության ղեկավար դիոյկետեսը (կառավարիչը): վերջինս թագավորի աջ ձեռքն էր երկրի կառավարման գործում: Վարչական տեսակետից նոմերը բաժանվում էին տոպարքիաների (տոպոս—տեղ բառից), իսկ տոպարքիաները՝ կոմերի (գյուղերի): Եզրիպտացիները կարող էին ղբաղեցնել միայն ամենաստորին պաշտոնները: Կոմում գյուղի ավագը՝ կոմարքոսն ու գյուղական գրագիրը՝ կոմեգրամմատեսը եզրիպտացիներ էին: Նոմերի բաժանված ամբողջ եզրիպտական տարածքը կոչվում էր խորա՝ գյուղական վայր: Եզրիպտոսի հիմնական տարածքում կային երեք հունական քաղաքներ՝ Ալեքսանդրիան, Պտղոմայիսն ու Նավկրատիսը: Սրանցից յուրաքանչյուրն ուներ արտոնյալ, խորայի կաղմի մեջ շմտնող քաղաքային տարածք, որտեղ քաղաքացիներն ունեին սեփական հողակտորներ:

Վիթխարի ու շքեղ մայրաքաղաք Ալեքսանդրիան կենտրոնական թաղամասերի փայլը զուգակցում էր հետնախորշերի գոյություն հետ. վերջիններում ապրում էր արտոնյալ փոքրամասնությունը՝ ալեքսանդրյան բնակիչներին (որպես կանոն, նրանք մակեդոնացիներ ու հույներ էին) սպասարկող տարացեղ շքավորությունը: Հունական պապիրոսներում պահպանվել են Ալեքսանդրիա քաղաքի օրենքները, որոնք նման են հունական պոլիսների օրենքներին: Քաղաքաբնականների հասարակական կյանքի կենտրոն էր հունական գիմնասիոնը. այն կառավարում էր ալեքսանդրյան քաղաքացիության պատվավոր պարագլուխ գիմնասիարքոսը: Քաղաքային կառավարումը ենթակա էր թագավորական աստիճանավորներին:

Ալեքսանդրիայում էր գտնվում արքունիքը, որի գլուխ կանգնած էին աստվածացված թագավորն ու թագուհին: Արքունիքին պատկանող մեծատոհմիկները թագավորի խորհրդականներն էին. նրանք կրում էին «թագավորի ազգականների», բարեկամների և այլ պատվավոր տիտղոսներ: Թագավորը նրանց միջավայրից էր նշանակում պետական կառավարումն իրագործող բարձր պաշտոնյաներ՝ արդեն հիշատակված դիոյկետեսին, թագավորական երկու գլխավոր գրասենյակների պետերին: Կառավարման կենտրոնական մարմինների կազմը հելլենիստական Եզրիպտոսում ճշգրիտ հայտնի չէ:

Իր նշանակությամբ երկրորդ հունական քաղաք Պտղոմայիսը գտնվում էր հեռու հարավում, Նեղոսի հոսանքն ի վեր, Ալեքսանդրիայից մոտավորապես 650 կիլոմետր հեռավորության վրա: Իր կաղմակերպությամբ Պտղոմայիսը նույնպես հիշեցնում էր հունական պոլիսին: Դա փաստորեն Պտղոմեոսների ռազմավարչական, առևտրաարհեստավորական ու մշակութային կենտրոնն էր երկրի

հարավում: Այն նսեմացնում էր հին եգիպտական մայրաքաղաք Քեբեի նշանակությունը, հսկում էր դեպի Կարմիր ծով տանող քարավանային ճանապարհն ու Նեղոսով ընթացող գետային ուղին:

Եգիպտոսի հունական քաղաքներում ու խորայի առանձին կետերում կային արհեստանոցներ (եղգաստերիոններ), որտեղ աշխատում էին անտիկ տիպի ստրուկներ, որոնք շահագործվում էին նույն այն մեթոդներով, որ կիրառվում էին Աթենքում, Կորնթոսում ու Հելլադայի մյուս արհեստավորական կենտրոններում:

Պտղոմեոսների պետությունը տիրում էր Եգիպտոսի սահմաններից դուրս մի շարք տարածքների՝ Դրանք էին՝ Կիպրոս կղզին և առանձին կետեր Կրետեում, Աֆրիկայում՝ Եգիպտոսից դեպի արևմուտք՝ Կիրենաիկան, Ասիայում՝ Հարավային Ասորիքն ու Փյունիկիան, որոնք կազմում էին ծովափի ղգալի հատվածները Փոքր Ասիայի հարավում ու արևմուտքում՝ այնտեղ գտնվող հունական քաղաքներով, կղզիներ էգեյան ծովում ու առանձին կետեր Բալկանյան Հունաստանում՝ էգեյան ծովը Սև ծովի հետ միացնող նեղուցների շրջանում:

Բուն Եգիպտոսի սահմաններից դուրս գտնվող բոլոր տիրույթները սովորաբար պահպանում էին իրենց տեղական կառավարումը, որը, սակայն, սահմանափակ էր ու հսկվում էր պտղոմեոսյան պաշտոնյաների կողմից: Պտղոմեոսներն ունեին ծովային ու գետային մեծ նավատորմիղ ու հսկում էին, հատկապես մ. թ. ա. III դ., ծովային ճանապարհները Միջերկրական ծովի արևելյան մասում ու իրենց ձեռքում էին պահում դեպի արևելք՝ Կարմիր ծով տանող ծովային ուղին: Կարմիր ծովի ափին գտնվում էին եգիպտական նավահանգիստները, որոնք դելտայի հետ միացվում էին ջրանցքով, իսկ Նեղոսի հովտի հետ՝ քարավանային ուղիներով: Նեղոսով ու Կարմիր ծովով կատարվող արևելյան առևտուրը մեծ նշանակություն ուներ Եգիպտոսի համար: Պտղոմեոսների պետությունն իր հզորության շրջանում «նիզակով նվաճված» տարածքների բարդ միավորում էր: Բայց հիմնական տարածքն՝ ըստ Պտղոմեոս I-ին վերագրվող արտահայտությունն՝ նույնպես «նիզակով նվաճված» Եգիպտոսը, միշտ գերիշխում էր այդ պետությունում ու վերջինիս հզորության և համեմատական ամրության աղբյուրն էր: Պտղոմեոսների պետությունը նախ և առաջ եգիպտական էր, թեև եգիպտական բնակչության ամբողջությունը սոցիալական տեսակետից գտնվում էր նվաստացած վիճակում: Եգիպտական հազարամյա մշակույթը մեծ ազդեցություն գործեց նվաճողների ու Հունաստանից եկածների զանգվածի վրա:

Ըստ հին եգիպտական ավանդույթի և նվաճման իրավունքով Պտղոմեոսները ամբողջ եգիպտական հողի սեփականատերեր էին, ուստի այդ հողը կոչվում էր թագավորական, Նրա իսկական տերերը համարվում էին հողը օգտագործողներ ու որպես այդպիսիք վճարում էին զանազան հարկեր, տուրքեր և կատարում պարհակներ: Հարկերը, տուրքերն ու պարտույթները լինում էին մեծ ու փոքր՝ ըստ վճարողների սոցիալական դիրքի: Բնակչության արտոնյալ խավերը վճարում էին ավելի քիչ հարկեր, իսկ պարտույթներից կարող էին ազատվել՝ վճարելով փրկագին: Հարկերի, տուրքերի ու պարտույթների հիմնական մասն ընկնում էր գյուղացիների վրա:

Թագավորական հողը բաժանվում էր մի շարք կատեգորիաների՝ ըստ այդ հողը պահողների սոցիալական դիրքի: Եգիպտական հողի զգալի մասը մշակվում էր գյուղացիների կողմից թագավորական ֆինանսական վարչության պաշտոնյաների անմիջական հսկողության ներքո, փաստաթղթերում այն միշտ կոչվում էր «թագավորական» հող: Հողի մյուս մասը թագավորը տրամադրում էր ռազմիկներին, քրմերին, մեծատոհմիկներին և այլոց: Մ. թ. ա. III դ. շատ թե քիչ արտոնյալ տերերի հողերի նշված կատեգորիաները համապատասխանորեն կոչվում էին կլերուքների հողեր, տաճարային հողեր, ընծայված հողեր, իսկ մ. թ. ա. II դ. դրանք ստացան նաև «դիջված հողեր» ընդհանուր անունը:

Բնակչության ընդհանուր զանգվածը կազմող եգիպտական գյուղացիները վավերագրերում կոչվում են «լաոյ» (մարդիկ, ժողովուրդ կամ թագավորական հողագործներ): Նրանք ապրում էին գյուղերում ու ձևականորեն պահպանում էին համայնական կազմակերպումը: Համայնք-գյուղը, որտեղ ծնվել էր գյուղացին, վերջինիս մշտական բնակատեղն էր: Գյուղացին գրանցված էր իր համայնքի ցուցակում ու համաձայն ավանդույթի և ըստ օրենքի տառի՝ իբրև համայնական իրավունք շուներ ինքնակամ կերպով հեռանալու համայնքից: Համայնական կազմակերպությունը շատ հարմար էր թագավորական գանձատան համար, որովհետև այն հեշտացնում էր հարկերի հավաքումն ու գյուղացիների ներգրավումը զանազան բնապարտույթների կատարման մեջ: Իսկ գյուղացիներին այդպիսի կազմակերպությունն արդեն պատճառում էր նեղություն: Շատ գյուղացիներ լքում էին իրենց գյուղերն ու ապրում և աշխատում էին այլ վայրերում: Կառավարությունը որոշ չափով հաշտվեց դրա հետ, և որպեսզի չզրկվի հարկերի մի մասից, պահում էր երկու կարգի հարկահավաքներ: Մի կարգի հարկահավաքները

հարկ էին գանձում բուն տեղական բնակչությունից, մյուսները՝ այլ գյուղերից եկած ու նոր հողերում բնակություն հաստատած շինականներից: Արքունական հողագործների մեծ մասը հողը մշակում էր իր համայնքներում, որտեղ հնուց ի վեր աշխատել էին շինականների նախնիները: Բայց քանի որ հողը թագավորական էր, իսկ գյուղացիները միայն օգտագործում էին հողակտորները, ապա ներանց ստիպում էին որոշակի ժամկետով պայմանագրեր կնքել թագավորի հողերին տիրելու վերաբերյալ: Թագավորական ֆինանսական վարչությունը միակողմանիորեն թելադրում էր համաձայնության պայմանները: Գյուղացիները սովորաբար շփտեին անգամ պայմանագրերի ստույգ բովանդակությունը, այդ պայմանագրերը պարբերաբար վերակնքվում էին, ընդ որում դա արվում էր մասսայական կարգով: Պայմանագրերը կնքում էին գյուղում ապրող շինականների հետ, ու այսպիսով օրինականացվում էին գյուղացիների տեղափոխումները մի գյուղ-համայնքից մյուսը: Թագավորական հողում կատարվող բոլոր գյուղատնտեսական աշխատանքները ենթակա էին արքունական ֆինանսական վարչության խիստ հսկողությունը: Դրանք կատարվում էին ըստ հատուկ նոմային օջանքի կարգացուցակի»: Սակայն այդ փաստաթուղթը կաղմվում էր բասիլիկոնում՝ դիոչկետեսի ֆինանսական վարչությունում բոլոր թագավորական հողերի համար, իրենց իսկ գյուղացիների հայտերի հիման վրա: Գյուղատնտեսական աշխատանքների կաղմակերպումն արքունական հողերում կաղմում էր թագավորական մեծ ու բարդ տնտեսության մի մասը, հելլենիստական Եգիպտոսում այդ տնտեսությունն ընդգրկում էր խորայի տարածքի ղգալի հատվածը:

Շինականները թագավորական հողում ցանում էին գլխավորապես ցորեն, բացի այդ վուշ, որն օգտագործվում էր քաթան ու ձեթ պատրաստելու համար, տարբեր այլ ձիթաբույսեր և գյուղատնտեսական կուլտուրաներ: Ցանքի համար սերմացուն փոխարինաբար տալիս էր գանձատունը: Ցանքը, ծիլերի խնամքն ու բերքահավաքը կատարվում էին ֆինանսական վարչության և ոստիկանության խիստ հսկողության ներքո: Հավաքելով բերքը, արքունական հողագործներն այն պիտի բերեին մոտակա թագավորական կալը, որտեղ նույնպես հսկողության ներքո նրանք կալում էին բերքը և այստեղ էլ վճարում էին բաղմաթիվ բնահարկեր ու, առաջին հերթին, գլխավոր հարկը՝ եկփորիոնը, որը հողամասի օգտագործման համար սահմանված հարկ էր: Թագավորական հողագործները պարտավոր էին վերադարձնել ստացած սերմավարկն ու վճարել թագավորին պատկանող բանող անասուններն օգտագործելու համար, որովհետև թագավորական հողագործների մեծ մասը շուներ սեփա-

կան բանող անասուններ: Այդ վճարումները կատարելուց հետո բերքի մնացորդը պաշտոնապես «ազատագրվում էր»: Ըստ պաշտոնական տերմինաբանության այդ «մաքուր եկամուտ» կոչեցյալը գյուղացին թագավորական կալից կարող էր տանել տուն: Դա չնչին կենսական միջիմուռ էր, որը թագավորական հողագործին դատապարտում էր կիսաքաղց գոյություն: Այս պատճառով թագավորական հողագործների զանգվածը շահագրգռված չէր իր տնտեսությունը վարելու մեջ ու պասսիվ դիմադրություն էր ցույց տալիս թագավորական վարչությունը: Շատ շինականներ հեռանում էին իրենց գյուղերից ու պաշտպանություն փնտրում տաճարներում: Այստեղից նրանք բերքահավաքի ժամանակ բանակցություններ էին սկսում աստիճանավորների հետ ու հասնում էին մանր դիջումների, քանի որ չհավաքված հացահատիկը թափվում էր, իսկ բավարար բանակությամբ այլ բանավորական ձևեր, բացի թագավորական հողագործներից, չկային: Կառավարությունը վերադարձնում էր փախստական շինականներին կամ ուժի միջոցով, կամ էլ բանակցությունների, ամնիստիանների ու ապառքները ներելու ճանապարհով: Մ. թ. ա. III դ. վերջին թագավորական հողագործների ծանր վիճակի վառ պատկերն է տալիս պաշտոնական մի փաստաթուղթ՝ «Հրահանգ օյկոնոմոսին», որը կազմվել էր դիոյկետեսի գրասենյակում և ուղարկվել էր ի ղեկավարություն երկրի բոլոր նոմային օյկոնոմոսներին:

«Ստուգիչ շրջագայության ժամանակ,— գրում էր դիոյկետեսը օյկոնոմոսին,— աշխատիր այցելել բոլորին (գյուղացիներին— խմբ.) առանձին-առանձին, ոգեշնչիր նրանց, բարձրացրու նրանց տրամադրությունը: Եվ կատարիր այդ ոչ միայն խոսքերով, այլև եթե նրանցից որևէ մեկը գանգատվում է կոմոզրամատեսից կամ կոմարքոսից հողագործության հետ առնչվող հարցերի կապակցությամբ՝ ստուգիր այդ ու ըստ հնարավորության կանխիր: Երբ ցանքն ավարտվում է, վատ չի լինի, եթե դու ուշադիր զննես այն՝ նման միջոցով դու կհամոզվես այն բանում, թե ինչն է աճել, ստույգ կիմանաս, թե ինչն է վատ ցանվել կամ ընդհանրապես չի ցանվել: Դրանից դու կիմանաս, թե ով է անփութորեն վերաբերվում գործին ու քեզ հայտնի կդառնա, թե որևէ մեկը արդյոք չի օգտագործել սերմերն այլ բանի համար, ոչ ըստ նպատակի: Հատուկ ուշադրություն դարձրու այն բանի վրա, որ նոմը ցանվի ըստ ցանքակարգացուցակի: Անուշադրության մի մատնիր, եթե որևէ մեկը չափից ափելի ծանրաբեռնված է հարկերով կամ լրիվ սնանկացել է: Կազմիր հողագործական աշխատանքում օգտագործվող ինչպես թագավորական, այնպես և մասնավոր անասունների ցուցակը... Հոգա, որ-

պեսղի նորմերում եղած հացահատիկը, բացի նրանից, ինչ օգտագործվում է որպես սերմացու և նրանից, ինչ չի կարելի փոխադրել ջրային ճանապարհով, ուղարկվի հոսանքով ներքև (Ալեքսանդրիա կամ դեպի Նեղոս)»<sup>2</sup>։

Թագավորին պատկանող հացահատիկը, որ ստացվել էր թագավորական հողից, արտահանվում էր երկրից։ Հացի վաճառքից էր գոյանում թագավորական գանձատան գլխավոր եկամուտը, այն կազմում էր Պտղոմեոսների վիթխարի հարստությունների հիմքը, հարստություններ, որոնք ձեռք էին բերվում գյուղացիների հիմնական ղանգվածի սնանկացման գնով։ Թագավորական հողագործների կողմից մշակվող հողից բացի կար նաև կլերուքների, այսինքն զինվոր-գաղութաբնակների հողը։ Նրանք իրենց ծառայության դիմաց արքունական գանձարանից ստանում էին տարբեր շափեր ունեցող հողակտորներ՝ համապատասխան զորքի տեսակի ու դրադեցրած պաշտոնի։ Հողաբաժինները ժառանգական չէին, բայց փաստորեն փոխանցվում էին հայր զինվորից՝ որդի զինվորին։ Կլերուքները չէին վճարում ամենածանր հարկը՝ եկփորիոնն ու իրավունք ունեին իրենց հողամասերի մեծ մասում ցանել իրենց ցանկացած բույսերը։ Կլերուքները ցանում էին ոչ միայն ցորեն ու ձիթաբույսեր, նրանք ունեին խաղողի տնկիներ, այգիներ ու բանջարանոցներ։ Կլերուքների հողերում աշխատում էին շինականներ ու ստրուկներ, ինքը կլերուքոսը կամ քիչ էր աշխատում կամ ընդհանրապես չէր մասնակցում իր կլերոսի մշակմանը։

Տաճարներն իբրև հողատերեր գտնվում էին ավելի արտոնյալ վիճակում։ Եգիպտական քրմությունը հնուց ի վեր ուներ հսկայական ազդեցություն ու տիրում էր ընդարձակ հողերի։ Մի փոքր նեղվելով պարսկական տիրապետության ժամանակ, նա այժմ աջակցում էր Պտղոմեոսներին։ Վերջիններս մի կողմից ձգտում էին սահմանափակել տեղական բնակչության այդ ազդեցիկ վերնախավին, քայց մյուս կողմից հենվում էին նրա հավատարմության ու հաճախ նաև ուղղակի օգնության վրա։ Տաճարային հողից գանձվող հարկերը դրվում էին քրմերի տրամադրության տակ։ Իսկ նրանք այդ հարկերի մի որոշակի մասը մուծում էին արքայի գանձատուն։ Տաճարային հողերում աշխատում էին թագավորական հողագործներ ու տարբեր կարգի տաճարային ստրուկներ։ Հին ժամանակներից զարգացող տաճարային տնտեսությունը զգալի շափով օրինակ հանդիսացավ Պտղոմեոսյան արքունական տնտեսության կազմակերպման համար։

<sup>2</sup> P. Tebt., 703. S6\* Хрестоматия по истории древнего мира, т. II, 1951, էջ 271—272։

Հողերի սոցիալական բարձրագույն կարգը ընծայված հողն էր, որի տերերը ազատված էին հարկերի մեծ մասի վճարումից: Ընծայված հողը խոշոր կտորներով (մինչև 10000 արուր)<sup>3</sup> տրվում էր մեծատոհմիկներին օգտագործման: Դիոյկեսես Ապոլլոնիոսին ընծայված կալվածքի կառավարիչ Ջլենտի արխիվիլին պատկանող բազմաթիվ պապիրուսների շնորհիվ մենք լավ տեղյակ ենք ընծայված հողերում մ. թ. ա. III դ. կեսին տնտեսություն ունենալու և այն վարելու պայմաններին: Ապոլլոնիոսի բարդ տնտեսությունում աշխատում էին վարձու բատրակներ՝ թագավորական հողագործներից ու տարբեր արհեստավորներ: Դրանից բացի գյուղատնտեսության մեջ ու արհեստում տարածված էր նաև ստրուկների աշխատանքը: Ապոլլոնիոսն ուներ նաև երկրորդ ընծայված կալվածք Մեմփիսի մոտ, որտեղ մահուղագործական արհեստանոցում աշխատում էին ստրկուհի-ջուլհակուհիները:

Արտոնյալ հողերի տերերը պարտավոր էին զանձատանը վճարել ձիթաբույսերի բերքն ու կատարել թագավորի միանվագ հանձնարարականները, մյուս բոլոր հարցերում նրանք կապված չէին թագավորական տնտեսության հետ:

Թագավորական տնտեսությունն ընդգրկում էր ոչ միայն հողագործությունը, այլև մյուս կարևոր բնագավառները՝ հողի ընդերքի մշակում, արհեստի որոշ տեսակներ, ներքին ու արտաքին առևտուր: Տնտեսության այդ ճյուղերն ամբողջովին կամ մասամբ Պտղոմեոսյան կառավարության մենաշնորհն էին: Պտղոմեոս II Փիլադելփոսի Հարկային կոմիտեայից ու որոշ այլ պապիրուսների շնորհիվ մեզ լավ հայտնի է ձեթի արտադրության մենաշնորհի կազմակերպումը: Այն սկսվում էր արքունի հողում թագավորական հողագործների կողմից ձիթաբույսերի կարգադրված քանակի ցանքից: Հողերի այլ տեսակներում իրենց հողակտորներում ձիթաբույսեր ցանող անձինք պետք է ստացված ամբողջ բերքը պետական զներով վաճառեին զանձատանը. բացառություն էր արվում միայն տաճարների համար. վերջիններս կարող էին տարվա մեջ երեք ամիս արտադրել հատուկ տեսակի ձեթ պաշտամունքի պետքերի համար:

Թագավորական հողագործները ձիթաբույսերի ամբողջ բերքը պետական զներով օլյոնոմոսի ներկայությամբ վաճառում էին յուղային մենաշնորհի կապալառուներին: Կապալառուները օլյոնոմոսի հսկողությամբ կազմակերպում էին ձեթի արտադրությունը արքունական ձիթհաններում: Դրանից հետո կառավարությունը կա-

<sup>3</sup> Մեկ արուրը հավասար էր 0,2756 հեկտարի:



պալով խանութպաններին էր հանձնում երկրի ներսում ձեթի առևտուր վարելու իրավունքը: Իրենց ծառայությունների դիմաց կապալառուները պետությունից ստանում էին ձեթի վաճառքից գոյացած եկամտի 5 տոկոսը: Կապալառուները բոլոր վնասները պետք է հատուցեին սեփական միջոցներից, իսկ եթե այդ միջոցները բավական չէին, ապա նյութական պատասխանատվությունը կրում էին նրանց երաշխավորողները:

Չնայած ճյուղավորված բյուրոկրատական համակարգի առկայությանը, Պտղոմեոսները գերադասում էին հարկերի ու մենաշնորհների մեծ մասը հանձնել կապալով որոշակի ժամկետով. դա կատարվում էր աճուրդի միջոցով: Մի խումբ հարուստ մարդիկ ձեռք էին բերում այդ իրավունքը՝ գանձատանը առաջարկելով հավաքել առավել շատ հարկեր կամ ստանալ մեծ եկամուտ ապրանքների մենաշնորհ արտադրությունից ու վաճառքից: Իրենց պարտականությունները կատարելու ընթացքում կապալառուները օգտվում էին թագավորական վարչության կողմից նրանց տրամադրվող տեխնիկական ապարատից: Պտղոմեոսների պետությունում գոյություն ունեցող կապալային համակարգը վկայում էր ծանրաշարժ ֆինանսական վարչության անկատարության մասին, առանց կապալառուների օգնության այդ վարչությունն ի վիճակի չէր հավաքել հարկերը:

Մենաշնորհացված բազմաթիվ արհեստներով զբաղվում էին կախյալ արհեստավորները (հիպոթեկեյս), որոնք իրենց սոցիալական դիրքով շատ բանով նմանվում էին արքունական հողագործներին:

Պտղոմեոսները, փաստորեն ստրկատիրական մեթոդներով շահագործելով նվաճված տեղական գյուղացիությունն ու արհեստավորական բնակչությանը, գնովի ստրուկներ ունենալու ավելի քիչ կարիք էին զգում. վերջիններիս թիվը Եգիպտոսում ավելի փոքր էր, քան, օրինակ, Հունաստանում, Պերգամոսում, Փյունիկիայում, Ասորիքում: Դա Պտղոմեոսների պետությունում հաստատված ստրկատիրական հասարակության տեղական առանձնահատկությունն էր:

#### ՍԵԼԵՎԿՅԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Իր շափերով ամենամեծ պետությունը, որը մ. թ. ա. III դ. տնօրինում էր հելլենիստական աշխարհի խոշորագույն մասը, Սելևկյանների պետությունն էր: Ծագելով ավելի քան 40-ամյա կատաղի պատերազմների ընթացքում, այն հաստատվեց համեմատաբար կայուն սահմաններում, Պտղոմեոսների պետությունից մի փո-

քրքր ավելի ուշ և ի տարբերութիւն վերջինիս շուներ բնակչութեան էթնիկապես միատարր դանգված անգամ երկրի հիմնական տարածքում:

Հելլենիստական Եգիպտոսի պատմութեան հուշարձանների համեմատութեամբ մենք ավելի քիչ աղբյուրներ ունենք Սելևկյանների պետութեան պատմութեան վերաբերյալ: Դրանք գլխավորապես հունական ու սեպագիր արձանագրութիւններն են, հին հունական ու հռոմեական հեղինակների, հատկապես Պոլիբիոսի, գործերից պահպանված մասեր ու հատվածներ, նյութական մշակույթի այն մնացորդները, որոնք հայտնաբերվել են հնագիտական պեղումների ժամանակ: Սելևկյանների պետութեան պատմութեան վերաբերյալ որոշ տվյալներ են պարունակում Դուրա-Յվրոպոսում՝ Եփրատի վրա ու Եգիպտոսում հայտնաբերված հունական պապիրուսները: Հելլենիստական Եգիպտոսի սոցիալ-տնտեսական հարաբերութիւնների մասին տեղեկութիւնները, որոնք բավական մանրամասնորեն ներկայացված են պապիրուսներում, օգնում են մեզ հասկանալու համապատասխան հարաբերութիւնները նաև Սելևկյանների պետութեան որոշ մարզերում:

Սելևկյանների պետութիւնը բաժանվում էր երեք մեծ հիմնական մարզերի: Նրանցից ամենակայունը եղավ Հյուսիսային Ասորիքը: Այստեղ էր գտնվում Սելևկյանների մայրաքաղաք Անտիոքը՝ Օրոնտես գետի վրա, որը Ալեքսանդրիայից հետո Արևելյան Միջերկրականի երկրորդ առևտրաարհեստավորակած ու նշանավոր մշակութային կենտրոնն էր: Երկրորդ հիմնական մարզը Բաբելոնիան էր՝ Տիգրիսի վրա գտնվող իր գլխավոր քաղաք Սելևկիայով: Պետութեան երկրորդ մայրաքաղաքը հանդիսացող այդ հելլենիստական քաղաքը դարձավ Միջագետքի կարևորագույն կենտրոն: Սելևկյանների թագավորութեան երրորդ մարզի՝ Փոքր Ասիայի, ավելի ստույգ՝ Էգեյան ծովից դեպի Հյուսիսային Ասորիք տարածվող նրա հարավարևմտյան ու կենտրոնական մասի կորիզը Սարդեսն էր, որը հեռավոր անցյալում եղել էր Լյուդիայի մայրաքաղաքը:

Ամբողջ սելևկյան Փոքր Ասիայի վրայով անցնում էր պարսից արքայական ճանապարհը. սկսվելով Էգեյան ծովի ափերից, այն հասնում էր Բաբելոնիա ու էլամ: Բաբելոնիա զնացող մյուս քաղաքականային ուղիները սկսվում էին Հյուսիսային Ասորիքի նավահանգստային քաղաքներից: Սելևկյան Բաբելոնիայից ու ամբողջ Միջագետքից քաղաքականային ճանապարհները գնում էին Միջին ու Կենտրոնական Ասիա, ինչպես և Հնդկաստան: Գետային ճանապարհները տանում էին դեպի Պարսից ծոց, որտեղից ծովով կարելի էր հասնել Արաբիա ու Հնդկաստան: Այսպիսով, Սելևկյաններն

իշխում էին Միջերկրականը Միջին Արևելքի երկրների հետ, իսկ կենտրոնական Ասիայի ու Հնդկաստանի վրայով՝ անգամ Չինաստանի հետ միացնող քարավանային ու ջրային ճանապարհների վրա: Այդ առևտրում Սելևկյանների մրցակիցներն էին Պտղոմեոսները, որոնք իրենց ձեռքում էին պահում առևտրական ուղիները Հարավային Ասորիքում ու Կարմիր ծովում: Սելևկյաններին հետաքրքրում էին նաև դեպի Սև ու Կասպից ծովերը տանող առևտրական ճանապարհները. դա առաջացնում էր ընդհարումներ նրանց թագավորության հյուսիսային սահմաններին հարող պետությունների հետ:

Սելևկյանները տիրում էին ոչ միայն այդ երեք հիմնական մարզերին, այլև Միջագետքից դեպի արևելք՝ Իրանում ու Միջին Ասիայում գտնվող ընդարձակ տարածքներին, որոնք ձգվում էին մինչև Հնդկաստան: Սելևկյանների պետությունը ցեղերի ու ժողովուրդների բարդ և բուռի միավորում էր. այն շունչով մի որևէ հիմնական ազգություն, որի անունով կարող էր կոչվել ու այս պատճառով պատմության մեջ մտավ Սելևկյանների թագավորության, այսինքն, իշխող հարստության հիմնադիր Սելևկոս I-ի ժառանգների պետություն անունով<sup>4</sup>:

Պետական կառուցվածքում Սելևկյանները, ինչպես և Պտղոմեոսները, օգտագործում էին տեղական ու հույն-մակեդոնական փորձը: Նրանք պահպանեցին պարսկական վարչական բաժանումը սատրապությունների, բայց դրանց գլուխ այժմ կանգնած էին թագավորի կուսակալները՝ ստրատեգոսները: Սատրապությունները բաժանվում էին հիպպարքիաների, որոնք գլխավորում էին հիպպարքոսները: Հելլենիստական Եգիպտոսի պես ամբողջ երկիրը բաժանված էր հունական քաղաքների ու խորայի: Հստ սկզբունքի խորայի բովանդակ հողը արքունական էր: Հունական քաղաքների ու խորայի կազմը ավելի բարդ էր, քան Պտղոմեոսների պետությունում: Ամրապնդելով իրենց պետությունը, Սելևկյանները կազմակերպում ու կառուցում էին շատ հունատիպ քաղաք-ամրոցներ առևտրական ու ստրատեգիական ճանապարհների վրա: Մասամբ դրանք վերանվանված քաղաքներ էին, որոնք ստացան նոր կաղամակերպություն ու համալրեցին իրենց բնակչությունը հույն-մակեդոնացի զինվորներով, մասամբ՝ դեռևս Ալեքսանդրի կողմից հիմնած կենտրոններ, մասամբ էլ նոր կառուցված քաղաքներ: Հաճախ դր-

<sup>4</sup> Հետագայում Սելևկյանների պետությունը նրա տարածքի մեծ մասի անջատման հետևանքով սկսեցին ավելի հաճախ նրա առավել կայուն մասի անունով կոչել Ասորական:

րանք ծագում էին սելևկյան զորքերի ռազմական բնակավայրերի՝ կատոլիկիաների տեղում: Իրենց կազմակերպումով քաղաքները հիշեցնում էին հռոմեական պոլիսներ, բայց վերջին հաշվով նրանք կախված էին թագավորից: Քաղաքներն իշխում էին կախյալ գյուղական բնակչություն ունեցող ընդարձակ տարածքների վրա, այդ բնակչությունն ապրում էր համայնքներով, շուներ քաղաքացիական իրավունքներ ու հարկեր էր վճարում թագավորին: Վերջինիս ուղղակիորեն ենթակա քաղաքները է: չ: ք: մ: Ըստ հանձնում էին արքունի գանձատուն, ընդ որում պատահում էր, որ թագավորական ու քաղաքային գանձապետների միջև տեղի էին ունենում ընդհարումներ:

Խոշոր պոլիսներն իրենց էին ենթարկում թույլ ու ընդհանրապես ավելի մանր հունական քաղաքները: Հելլենիստական պոլիսները՝ ի տարբերություն դասական շրջանի պոլիսների, հարկերը ուղղակի գանձում էին բոլոր տեսակի, այդ թվում նաև քաղաքացիներին պատկանող հողերից: Շատ քաղաքներում սահմանվեց գույքային ցենզ: Պոլիսի քաղաքացիական կոլեկտիվը գնալով ավելի էր վերածվում ստրկատեր-հարուստների, որպես կանոն, հողատերերի համեմատաբար փոքր խմբի:

XIX դ. 20-ական թվականներից սկսված պեղումների շնորհիվ մենք բավականին հանգամանորեն ծանոթ ենք սելևկյան շարքային քաղաքներից՝ կոտոլիկիաներից մեկի, Եփրատի վրա գտնվող Դուրա-Եվրոպոսի կառուցվածքի հետ: Այդ քաղաք-ամրոցի տրտոնյալ բնակչությունը կազմված էր հունա-մակեդոնական կայազորի զինվորներից: Նրանք ունեին հողակտորներ՝ կլերներ և կարող էին այդ հողամասերը թողնել իբրև ժառանգություն իրենց որդիներին, եթե վերջիններս ցանկանային շարունակել հայրերի զինվորական ծառայությունը: Քաղաքն ուներ հունական պոլիսի տիպի ինքնավարություն, սակայն քաղաքային խորհրդի՝ «բուլեի» հետ մեկտեղ քաղաքում գտնվում էր ստրատեգոսը, հավանաբար կայազորի պետը, որը քաղաքացի-ազդեցիկների հրամանատարն էր: Քաղաքին հսկում էր թագավորական եպիստատեսը: Դուրա-Եվրոպոս քաղաքը կանգնած էր Եփրատով անցնող կարևոր առևտրական ճանապարհի վրա, պաշտպանում էր այդ ճանապարհն ու թագավորի օգտին մաքսեր էր գանձում վաճառականների կողմից բերվող ապրանքներից: Տեղական բնակչությունը չէր մտնում քաղաքացիության կազմի մեջ, նա մշակում էր կատոլիկներին պատկանող հողամասերն ու կախյալ վիճակում էր գտնվում քաղաքից:

Հունական առանձին քաղաքներ նշանակալից առևտրաարհեստավորական ու մշակութային կենտրոններ էին: Խորան Սելևկյան-

Ների թագավորութունում բաղկացած էր բուն արքունական հողից, որը մշակում էին կախյալ գյուղացի-համայնականները (լաոյ)։ Նրանք աշխատում էին իրենց հողամասերում թագավորական ֆինանսական վարչության պաշտոնյաների հսկողության ներքո ու թագավորին բերքից վճարում էին տասանորդ։ Դա նրանց կողմից պետությանը տրվող հիմնական վճարումն էր։ Այն պտղոմեոսյան եկփորիտնից քիչ էր, որովհետև Սելևկյաններն ի վիճակի չէին նույն չափով յուրացնել իրենց հսկայական տարածքը, ինչպես դա հաջողվել էր անել Պտղոմեոսներին, նրանք ստիպված էին ավելի մեծ չափով հաշվի նստել բնակչության հիմնական զանգվածի հետ։ Եզրիպտական արքունական հողագործների համեմատությամբ լաոսներն ավելի քիչ էին լքում իրենց գյուղերը, ավելի սերտորեն էին կապված իրենց համայնքների հետ։ Ինչպես և հելլենիստական Եզրիպտոսում, Սելևկյանների պետությունում գոյություն ունեին զիջված հողերի տարբեր կատեգորիաներ։ Դրանց տերերը ավելի ինքնուրույն էին, քան հողատերերը Պտղոմեոսյան պետությունում։ Ամենից ծանր էր կախյալ համայնականների վիճակը թագավորական մեծամեծների «զիջված հողերում»։

Հատուկ նշանակություն ունեին տաճարային տիրույթները. որոնք կառավարվում էին տեղական հեղինակավոր քրմերի կողմից։ Այդ տիրույթներից շատերը փաստորեն ինքնավար փոքրիկ պետություններ էին Սելևկյանների ընդարձակ թագավորությունում։ Սելևկյանները ձգտում էին հենվել այդ տաճարների քրմության վրա ու նրանց տալիս էին զանազան արտոնություններ։ Ընդարձակ տաճարային տնտեսություններում աշխատում էին լաոյն ու տաճարային ստրուկները։ Տաճարային պետություններից բացի Սելևկյանների թագավորությունում կարևոր դեր էին խաղում տեղական դինաստիաների կողմից գլխավորվող ցեղային ու պետական միավորումները։ Սելևկյանների կառավարությունը նրանցից ևս օգնություն էր սպասում։

Ամբողջ երկիրը կառավարում էին թագավորն ու Օրոնտեսի Անտիոքում գտնվող թագավորական արքունիքը։ Ինչպես Եզրիպտոսում, Սելևկյանների հարստությանը պատկանող թագավորներն ու թագուհիները աստվածացվում էին։ Թագավորի օգնականն էր «գործերի կառավարիչ» տիտղոսը կրող մեծատոհմիկը։ Թագավորական գորասենյակը իր իսկ թագավորի մասնակցությամբ վարում էր վիթխարի բյուրոկրատական գրագրություն տեղերում գտնվող տարբեր հիմնարկությունների հետ։ Թագավորական գրասենյակի վարիչն էր եպիստոլոգրաֆոսը։ Սելևկյան թագավորներից մեկին են վերագրում այն ասույթը, որ եթե թագավորական ապարոշի հավակնորդները

հստակ տեղյակ լինեին այն բանին, թե որքան թղթեր է ստիպված լինում ստորագրել թագավորը, ապա շէին ձգտի զավթել թագավորական իշխանությունը: Երրորդ կարևոր գերագույն պաշտոնյան էր «եկամուտների կառավարիչը», որի ֆունկցիաները նման էին պրոզոմեոսյան դիոկետեսի պարտականություններին: Նա տնօրինում էր երկրի ֆինանսներն ու ֆինանսական վարչությունը: Տիգրիսի վրա գտնվող Սելևկիայում բնակվում էր Արևելքի կուսակալը, Սարգեստում՝ Ասիայի կուսակալը: Մենք քիչ բան գիտենք Սելևկյանների պետությունում կենտրոնական ու տեղական կառավարման մասին:

Սելևկյանների գլխավոր հենարանը միշտ էլ եղել էր մակեդոնացիներից, հույներից ու տարբեր հելլենականացված տարրերից կազմված բանակը: Բացի հունական քաղաքների արտոնյալ քաղաքացիներից ու ուզմական բնակավայրերում՝ կատոլկիաներում ապրող քաղաքացիներից, Սելևկյանները հենվում էին հելլենականացված պաշտոնյաների ճյուղավորված բանակի, տեղական հողային ու առևտրական արիստոկրատիայի ու քրմության վրա: Բրնակչության այդ բոլոր խավերը կազմում էին ստրկատերերի տիրապետող դասակարգը, որը երկրի տարբեր մասերում ուներ իր առանձնահատկությունները: Հունական ու ասորա-փյոմնիկյան և Միջագետքի քաղաքներում դարգանում էին գերազանցապես անտիկ ստրկության ձևերը: Անտիկ ստրկությունը զարգանում էր նաև կատոլկիաներում կլերոսների հողերում: Տաճարային տնտեսություններում հինավուրց տաճարային ստրուկների հետ միաժամանակ օգտագործվում էին նաև զնովի ստրուկներ: Հայտնի էին ստրուկների աշխույժ շուկաներ Փոքր Ասիայում, Ասորիքում, Միջագետքում: Այդ երկրամասերում հատկապես աճում էր ստրկական աշխատանքն օգտագործող արհեստանոցների թիվը, սրանք արտադրում էին ապրանքներ ներքին ու արտաքին շուկայի համար: Զարգանում էր ներքին առևտուրը, ավելի մեծ նշանակություն էր ձեռք բերում դրամաշրջանառությունը: Սելևկյանները գերադասում էին հարկերը հավաքել դրամով, բայց ամենակարևոր հարկերը, օրինակ՝ հողայինը, բնահարկեր էին: Հարկային համակարգը Սելևկյանների պետությունում հավանաբար նման էր Պտղոմեոսների պետության հարկային համակարգին: Ստրկատերերը անտիկ ստրուկներից ու հին արևելյան տիպի ստրուկներից բացի շահագործում էին տեղական գյուղացիական բնակչությանը, որի վիճակը ինչպես և Եգիպտոսում, էլ ավելի ծանրանում էր նվաճման իրավունքի գործադրման հետևանքով: Գյուղացիները ապրելով զարգացող ապրանքային տնտեսության պայմաններում, ինչպես և Եգիպտոսում, ավելի ու ավելի էին աղքատանում: Հետզհետե նրանց ա-

վելի խոշոր զանգվածները թագավորական ֆինանսական վարչու-  
թյունից ունեցած անմիջական կախումից ընկնում էին կախման  
մեջ մեծամեծներից՝ ընծայված կալվածքների տերերից, տաճար-  
ներից, կատոլիկաններից, հունական պոլիսներից, քանի որ արքու-  
նական հողերի բաժանման ու նոր քաղաքների հիմնադրման հետև-  
վանքով արքունի հողը գնալով կրճատվում էր: Համեմատաբար լավ  
պայմաններ էին ստեղծվել հունական պոլիսներին կցագրված ավե-  
լի ունևոր գյուղացիների համար. դա կապված էր այլ պոլիսների  
տարածքներում սեփականության անտիկ ձևի ինտենսիվ զարգաց-  
ման հետ: Սելևկյանները, ըստ Լրևույթին, չէին կիրառում հարկե-  
րի կապալային սիստեմը: Արքունի մենաշնորհների թիվը սահմա-  
նափակ էր: Ինչպես Պտղոմեոսների թագավորությունում, հարկերի  
հավաքման, պարտույթների կատարման ժամանակ հաշվի էր առ-  
նըվում հարկատուի սոցիալական վիճակը: Դատարանները գործե-  
րը քննելիս նույնպես նկատի ունեին կողմերի սոցիալական կացու-  
թյունը:

Սելևկյանների վիթխարի պետությունը սկսեց տրոհվել արդեն  
իր առաջացման շրջանում: Այդ պրոցեսը տևեց ավելի քան 200 տա-  
րի: Սելևկյանների պետության սահմանները միշտ անկայուն էին:  
Մ. թ. ա. III դ. կեսին Սելևկյանները կորցրեցին Իրանն ու Միջին  
Ասիան:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ, ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՊՏՂՈՄԵՈՍՅԱՆ, ԵԳԻՊՏՈՍԻ ՈՒ  
ՍԵԼԵՎԿՅԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սելևկյանների ու Պտղոմեոսների պետությունները մրցակցում  
էին իրար հետ իրենց տիրապետությունը Միջերկրական ծովի արևել-  
յան մասում հաստատելու համար ու ձղտում էին ակտիվ դեր խա-  
ղալ Հունաստանում: Ընդսմին նրանք ժամանակ առ ժամանակ բարդ  
հարաբերությունների մեջ էին մտնում երրորդ մեծ հելլենիստական  
տերության՝ Մակեդոնիայի հետ, որը անմիջականորեն շահագր-  
գրված էր մշտապես իր հսկողության ներքո պահել էգեյան աշ-  
խարհը:

Սելևկյանները հատկապես համառորեն էին կռվում Պտղոմեոս-  
ների դեմ Կոյլեսիրիայի (այսինքն, Հարավային Ասորիքի, Խորա-  
գույն Ասորիքի) համար, որովհետև Միջերկրական ծովի արևելյան  
ափի մոտ էին վերջանում Հնդկաստանից ու Արևելքի այլ երկրներից  
եկող առևտրական ճանապարհները, իսկ Սելևկյաններն իշխում էին  
միայն Ասորիքի հյուսիսային մասում: Պտղոմեոսները, իրենց հեր-  
թին, ձգտում էին Կոյլեսիրիայից շարժվել հյուսիս: Մ. թ. ա. III դ.  
80-ական թվականներին բռնկված սիրիական պատերազմը, ինչպես

հետագայում սկսեցին անվանել Պտղոմեոսների ու Սելևկյանների այդ ընդհարումը, ընթանում էր փոփոխական հաջողությամբ ու ավարտվեց Եգիպտացիների որոշ առավելությամբ, որովհետև, ինչպես պարզվեց, Եգիպտական նավատորմն ուժեղ էր սելևկյան նավատորմից: Սակայն այդ նույն ժամանակ Անտիոքոս I Սելևկյանի աջակցությամբ Աֆրիկայում Կիրենական անջատվեց Եգիպտոսից ու դարձավ անկախ:

Եգիպտոսը Միլետոսին, Կիլիզայան կղզիներին ու Էդեսիում այլ հենակետերի տիրելով, օժանդակում էր հույներին՝ Մակեդոնիայի դեմ ուղղված Ելույթներին: Բայց Եգիպտոսը սիրիական I պատերազմից մի փոքր անց Մակեդոնիայի, Սելևկյանների ու Հռոդոս կղզու միացյալ ուժերով ժամանակավորապես դուրս մղվեց էգեյան ծովի շրջանից: Մակեդոնիան ձևոնարկեց անգամ Կիրենականի հետ մերձենալու անհաջող փորձ, նպատակ ունենալով օգտագործել վերջինիս՝ Աֆրիկայում պտղոմեոսների վրա հարձակվելու համար:

Մ. թ. ա. III դ. 60-ական թթ. Անտիոքոս I-ի ժառանգորդ Անտիոքոս II-ը սկսեց Մակեդոնիայի հետ տեղի ունեցած պատերազմի հետևանքով թուլացած Եգիպտոսի դեմ նոր, այսպես կոչված, սիրիական II պատերազմը: Թեև Ասորիքում Սելևկյանները ձեռք բերեցին որոշ հաջողություններ, բայց նրանք շուտով հարկադրված եղան հաշտություն կնքել, որովհետև այդ ժամանակ ապստամբեցին ու իրենց պետությունից անջատվեցին Կասպից ծովից դեպի արևելք գտնվող երկրները, որտեղ առաջացան Պարթևաստան և Բակտրիա անկախ պետությունները:

Ուժերի անկայուն հավասարակշռությունը, որ ստեղծվեց երեք գլխավոր հելլենիստական պետությունների միջև եղած ընդհարումներում, պայմանավորված էր նրանց ներքին կացությամբ: Ավելի սուր բնույթ ընդունող դասակարգային պայքարի պայմաններում նրանք միշտ մտահոգված էին նվաճված ու շահագործվող բնակչությանը ճնշելու խնդրով:

Մ. թ. ա. III դ. կեսին արտաքին ամենամեծ հզորությանը հասավ Եգիպտոսը: Պտղոմեոս III Եվերգետեսը դինաստիական ամուսնության միջոցով Եգիպտոսին կրկին միացրեց Կիրենական, իսկ Սելևկյանների հետ սկսված պատերազմի (սիրիական III պատերազմը) ժամանակ զավթեց ամբողջ Փյունիկիան ու Ասորիքը և գրավեց Սելևկյանների մայրաքաղաք Անտիոքը Օրոնտեսի վրա: Աղբյուրները պնդում են, որ հետո նա նվաճեց Միջագետքն ու շարժվեց առաջ՝ դեպի արևելք: Սակայն այս հաղթանակների ամենաթեժ պահին Եգիպտոսում Պտղոմեոսների իշխանության դեմ ապստամբու-



թշուն բռնկվեց: Դա ստիպեց Եվերգեստեսին շտապ վերադառնալ Եգիպտոս: Ապստամբութեան ծավալն ու տևողութիւնը մեզ հայտնի չեն, բայց Եվերգեստեսի արագ նահանջի փաստը վկայում է ապստամբութեան լրջութեան մասին: Ապստամբութիւնը ցույց տվեց այդ խոշոր հելլենիստական պետութեան ներքին անկայունութիւնն անգամ նրա մեծ հաջողութիւնների շրջանում: Իր գահակալութեան հաջորդ տարիներին Եվերգեստեսն այլևս չվարեց նշանակալից պատերազմներ:

Սելևկյանների պետութիւնը սիրիական III պատերազմում կրած պարտութիւնների ու դրան հաջորդած ներքին երկպառակութիւնների և ապստամբութիւնների հետևանքով թուլացավ: Դրանից օգտվեց Պերգամոնն ու նվաճեց Սելևկյանների տիրույթների մի մասը Փոքր Ասիայում: Միայն մ. թ. ա. III դ. 30-ական թվականների վերջում, Անտիոքոս III-ի գահ բարձրանալուց հետո, Սելևկյանների պետութիւնը կրկին սկսեց ուժեղանալ: Անտիոքոս III-ը փորձեց ոչ միայն վերագրծնել սիրիական III պատերազմից հետո Սելևկյան Ասորիքի ու Փյունիկիայի՝ Պտղոմեոսների ձեռքում դեռևս մնացած մարզերը, այլև դուրս մղել Եգիպտոսին վերջինիս պատկանող Կոլլեսիրիայից: Մ. թ. ա. մոտ 219 թ. սկսված սիրիական IV պատերազմը ավարտվեց մ. թ. ա. 217 թ. Անտիոքոս III-ի բանակի լիակատար պարտութեամբ՝ Ռաֆիայի մոտ տեղի ունեցած կատաղի ճակատամարտում: Այդ մարտը եղավ հելլենիստական Եգիպտոսի վերջին ռազմական հաջողութիւնը: Ընդ որում, այդ հաղթանակը նվաճեցին եգիպտական զինվորները, որոնց Եգիպտոսում ավելի քան հարյուր տարի տևող հունա-մակեդոնական տիրապետութեան ընթացքում առաջին անգամ որոշեց մեծ թվով բանակ զորակոչել ու մակեդոնական փաղանգի արվեստին վարժեցնել դրանից մի փոքր առաջ գահ բարձրացած Պտղոմեոս IV Փիլոպատոսը: Ռաֆիայի մոտ նվաճած հաղթանակից մի որոշ ժամանակ անց, բանակ զորակոչված եգիպտական գյուղացիների զինումը հանգեցրեց ապստամբութիւնների բուռն պոռթկմանը Եգիպտոսում: Այս պատճառով Պտղոմեոս IV-ը ստիպված էր դադարեցնել ռազմական գործողութիւններն Ասորիքում ու հաշտութիւն կնքել Անտիոքոս III-ի հետ. նա շկարողացավ լրիվ օգտագործել իր հաղթանակի պետուղները: Սակայն Եգիպտոսին համարյա մինչև մ. թ. ա. III դ. վերջը հաջողվեց իր ձեռքում պահել Կոլլեսիրիան ու պահպանել իր նավատորմի գերիշխանութիւնը Միջերկրական ծովի արևելյան մասում:

Սելևկյանների պետութիւնը մինչև մ. թ. ա. III դ. վերջը պահպանում էր իր տիրույթները Փոքր Ասիայի հարավային մասում, իր

ազդեցությունն էր փորձում վերականգնել անջատված Պարթևաստանում ու Բակտրիայում և շարունակում էր պայքարը Կոյլեսիրիայի համար՝ նախապատրաստվելով սիրիական V պատերազմին:

#### ՀՈՒՆԱ-ԲԱԿՏՐԻԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հունա-բակտրիական թագավորության պատմության աղբյուրները խիստ սակավաթիվ ու կցկտուր են, որը դժվարեցնում է դրա շատ թե քիչ մանրամասն ուսումնասիրությունը: Այդ երկրի մասին տեղեկություններ կան հին հունական աշխարհագետների, հնդկական ու շինական գրողների մոտ: Հունա-Բակտրիայի պատմության ուսումնասիրության ընթացքում մեծ դեր են խաղում հնագիտական նյութերը, մասնավորապես՝ դրամները:

Մ. թ. ա. III դ. կեսին, ինչպես արդեն հիշատակվել է, Միջին Ասիայում գոյացավ անկախ հունա-բակտրիական հելլենիստական թագավորությունը: Այն ծագեց հունա-մակեդոնական զորքի ապստամբության հետևանքով, ապստամբություն, որին օժանդակեց տեղական արիստոկրատիան: Համարյա միաժամանակ Բակտրիայից դեպի արևմուտք, Կասպից ծովի ու Պարսկական ծոցի միջև ընկած Իրանի տարածքում բռնկվեց տեղական ցեղերի ապստամբություն հելլենիստական նվաճողների դեմ: Տեղական բնակչության ազատագրական հակահելլենիստական պայքարի հետևանքով առաջացավ անկախ Պարթևական թագավորությունը: Հավանաբար այդ հակահելլենիստական ապստամբությունը զորեց Բակտրիայի սելևկյան կուսակալ Դիոդոտոսին ապստամբել հռոմ, Հյուսիսային Ասորիքում գտնվող իր տիրակալի դեմ ու ստեղծելով տեղական անկախ կառավարություն, ամրապնդել իշխող դասակարգի հունամակեդոնական խավի դիրքը հելլենիստական աշխարհի այդ հեռավոր արևելքում: Մասամբ դա հետաքրքրություն էր ներկայացնում նաև տեղական արիստոկրատիայի համար, որն օժանդակեց Դիոդոտոսին: Սելևկյանների կառավարությունն անզոր էր խանգարելու Բակտրիայի անջատմանը, որովհետև զբաղված էր Պտղոմեոսների թագավորության դեմ մղած պատերազմով ու երկրի ներսում ծագած ապստամբությունների ճնշումով:

Հունա-բակտրիական թագավորության սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարաբերությունների մասին շատ քիչ բան է հայտնի: Հավանաբար դրանք նման էին այն հարաբերություններին, որոնք գոյություն ունեին Սելևկյան պետության այն շրջաններում (Փոքր ու Առաջավոր Ասիայում), որտեղ առավել մեծ չափով պահպանվել էին նախնադարյան-համայնական կարգերի տարրերը: Դիոդոտոսը, հետևելով մյուս հելլենիստական թագավորներին, հենվում էր բա-

նակի վրա: Բայց հունա-մակեդոնական նվաճողների դրուժյունն այնքան էլ հաստատուն չէր: Դա ստիպեց նրա ժառանգորդ Դիոդոտոս II-ին հենարան փնտրել տեղական ավագանու մոտ ու դաշինք՝ պարթևների հետ: Այդ փորձերը առաջացրեցին պայատական հեղաշրջում, որի հետևանքով Դիոդոտոս II-ը հեռացվեց, թագավորական գահն անցավ սելևկյան, այսինքն հելլենիստական կողմնորոշում ունեցող մեծատոհմիկ Եվթիդեմոսին: Ճիշտ է, դա Բակտրիային չփրկեց Անտիոքոս III Սելևկյանի արշավանքից. վերջինս մ. թ. ա. III դ. վերջին փորձեց վերականգնել Սելևկյանների պետության արևելյան սահմանները: Անտիոքոս III-ը խոշոր հաջողություն ունեցավ Միջին Ասիայում: Բայց Բակտրիայի մայրաքաղաքի տեական պաշարման ժամանակ կրելով մեծ կորուստներ, նա հաշտություն կնքեց Եվթիդեմոսի հետ:

#### ՊԵՐԳԱՄՈՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Դեռ Սելևկյանների պետության առաջացման ժամանակ արևմուտքում նրանից անջատվեցին կամ իրենց անկախությունն ամբարայնեցին մի քանի փոքր պետություններ: Դրանց շարքում հատկապես նկատելի դեր սկսեց խաղալ հելլենիստական Պերգամոս պետությունը:

Պատմական աղբյուրները, որոնք թույլ են տալիս մեզ ընդհանուր գծերով վերականգնել նրա պատմությունը, կցկտուր են: Դրանք հատվածներ են հին հունական ու հռոմեական պատմագիրների գործերից, Պերգամոս քաղաքի պեղումների ժամանակ գտնված վիճագրություններ ու նյութական մշակույթի հուշարձաններ, որոնք արվեստի առանձնապես հրաշալի ստեղծագործություններ են:

Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան մասում՝ Բալկանյան Ղուկաստանի, հյուսիսում՝ Մերձսեծովյան շրջանների ու արևելքում՝ Սելևկյան պետության միջև գտնվող Պերգամոսի թագավորությունը հելլենիստական աշխարհի նշանակալից առևտրաարհեստավորական ու մշակութային մարզն էր: Արգավանդ հողերը հնարավորություն էին տալիս զարգացնել գյուղատնտեսությունն ու ստանալ մեծ եկամուտներ: Պերգամոսի սոցիալ-տնտեսական հարաբերություններն ու քաղաքական կառուցվածքը շատ գծերով նման էին հելլենիստական Եգիպտոսին: Մայրաքաղաքը՝ Պերգամոս քաղաքը, ինչպես և Ալեքսանդրիան, պաշտոնապես համարվում էր հունական պոլիս ու ձևականորեն ընդօրինակում էր դրա հիմնարկներին: Պերգամոս քաղաքի բնակչության արտոնյալ հատվածը կազմում էին Պերգամոսի քաղաքացիները: Մնացած երկիրը, մի քանի հունական քաղաքներից բացի, գյուղական տարածք էր՝ խորա: Դրա մեծ մասը

կազմում էր արքունական հողը, որտեղ աշխատում էին Եգիպտոսի թագավորական հողագործներին հիշեցնող կախյալ գյուղացի-շինականները: Պերգամոսի թագավորությունը, ի տարբերություն Պաղոմեոսների, փորձում էր մի շարք մարզերում գլխահարկը գանձել դրամով. դրա հետևանքը եղավ ապառքների արագ աճն ու գյուղացիների հեռանալը հողից: Պերգամոսի բազմաթիվ թագավորական արհեստանոցներում աշխատում էին ստրուկներ: Դա նրան տարբերում էր Եգիպտոսից: Ընդհանրապես Պերգամոսում հատուկ զարգացում ապրեց ստրկական աշխատանքի կիրառումը արտադրության մեջ:

Մ. թ. ա. III դ. առաջին կեսին Պերգամոսում հաստատվեց Ատտալյանների տեղական հունական դինաստիան, որն ակտիվ մասնակցություն ունեցավ այն ժամանակաշրջանի միջազգային հարաբերություններին: Պերգամոսն ուներ ռազմական բնակավայրերում՝ կատոլկիաներում ապրող (ինչպես Սելեկյանների պետությունում) զինվոր-կատոլկներից ու հասարակ վարձկաններից կազմված հզոր բանակ: Իբրև հելլենիստական աշխարհի մշակութային կենտրոն, Պերգամոսը զիջում էր միայն Ալեքսանդրիային:

Պերգամոսի տարածքում մի քանի տասնյակ տարիներ կատարվել են պեղումներ, որոնք ցույց տվեցին, որ այն ժամանակի համար օրինակելիորեն կառուցված, հզոր ամրոց ունեցող հելլենիստական քաղաք էր:

Հելլենիստական պետություններին հատուկ սոցիալ-տնտեսական հարաբերությունների, նրանց պետական կառուցվածքի ու արտաքին քաղաքականության հակիրճ ակնարկը վկայում է այն մասին, որ շնայած տեղական պայմանների զգալի խայտաբղետությանը, հելլենիստական աշխարհում մ. թ. ա. III դ. առկա էին իրենց հիմնական գծերով միօրինակ պրոցեսներ:

## Գլուխ 19. ՄԱԿԵԳՈՆԻԱՆ ԵՎ ՀՈՒՆԱՍՏԱՆԸ Մ. թ. Ա. III ԳԱՐՈՒՄ

Մ. թ. ա. III դ. Մակեդոնիայի ու Հունաստանի պատմության աղբյուրները համեմատաբար սակավաթիվ են, իսկ մեզ հայտնի հուշարձանները շեն տալիս անցքերի հաջորդական շարադրանք: Այդ պատմության առանձին հատվածները լուսաբանված են Պոլիբիոսի «Ընդհանուր պատմության» մեջ ու Գիոդորոսի «Պատմական գրադարանում», ինչպես նաև հռոմեական պատմիչ Տիտոս Լիվիոսի «Հռոմի պատմությունում»: Քաղաքական գործիչների առանձին կենսագրությունները, որոնք կազմել է Պլուտարքոսը, նույնպես պարունակում են որոշ տվյալներ: Այս ամբողջ շրջանի հակիրճ ակ-

նարկը, ինչպես արդեն հիշատակվել է, կա Հուստինոսի մոտ: Մակեդոնիայի և Հունաստանի մ. թ. ա. III դ. պատմության ուսումնասիրության համար մեծ նշանակություն ունեն բազմաթիվ արձանագրությունները, քանի որ դրանք երկրի ներքին զարգացման պատմության գրեթե միակ աղբյուրն են:

#### ՄԱԿԵՏՈՆԻԱ

Ոչ հեռավոր անցյալի ավերիչ պատերազմներն անդրադարձան Մակեդոնիայի սոցիալական ու քաղաքական զարգացման վրա: Երկիրը նախ և առաջ թուլացել էր բնակչության՝ դեպի Արևելք ուղղված արտահոսքի հետևանքով, արտահոսք, որը սկսվել էր Ալեքսանդրի արշավանքների ժամանակ: Մակեդոնիայի տարածքում տեղի ունեցող երկպառակտիչ պատերազմներն ու գալատների արշավանքը քայքայում էին երկրում մնացած մակեդոնացիներին ու Ալեքսանդրի և դիագոքների այն վետերաններին, որոնք տուն վերադարձան, բերելով կողոպտված ավար: Մակեդոնական արիստոկրատիայի դրությունն ու կազմի մեջ նույնպես տեղի ունեցան փոփոխություններ:

Ագրարային հարաբերությունները Մակեդոնիայում, ի տարբերություն արևելյան հելլենիստական պետությունների, զարգանում էին սեփականության անտիկ ձևի հիման վրա: Սակայն Մակեդոնիայում ևս գոյություն ուներ արքունի հող: Թագավորն ամենախոշոր հողատերն էր երկրում, նրա տիրույթներն աճում էին անժառանգ հողերի հաշվին. դա նախորդ շրջանի բուռն անցքերի հետեւյալն էր: Այդ հողի մի մասը թագավորը զիջում էր օգտագործման համար զինվորներին ու ծառայող արիստոկրատիային, այսպես կոչված «թագավորի բարեկամներին», ինչպիսին այժմ դարձան հին մակեդոնական հետապրները: Մակեդոնական մեծատոհմիկները ոչ միայն բաժին ունեին արքունական հողից, նրանք ունեին նաև մասնավոր սեփականատիրական հողեր. այս հանգամանքը նրանց թույլատրում էր որոշ չափով անկախ դիրք գրավել թագավորի նըկատմամբ: Դա մասնավորապես անդրադարձավ քանակի նշանակության վրա: Այսպես, զորապետներն ազդեցություն էին գործում գահաժառանգման հարցերի լուծման վրա: Որոշ անկախություն ունեւր նաև մակեդոնական բանակի շարքային կազմի կորիզը՝ մակեդոնական փաղանգը: Դա նույնպես բացատրվում էր նրանով, որ փաղանգում ծառայող գյուղացիները տիրում էին հողակտորների ոչ միայն արքունական հողերում, այլև սեփականության անտիկ իրավունքի համաձայն հանդես էին գալիս իբրև մասնավոր հողատերեր իրենց համայնքի շրջանակներում: Մակեդոնացիների զանգվածի

ձրեւելք մեկնելու կապակցութեամբ բանակում բուն մակեդոնյան ռազմիկներին՝ մանր ու միջին հողատերերի հետ մեկտեղ աճեց թագավորից հողաբաժիններ ստացած զինվոր-կլերուքների, ինչպես և սովորական վարձկանների՝ հույների, թրակիացիների, իլլիրիացիների ու այլոց թիվը: Այս պատճառով բանակի անկախ դերը երկրի քաղաքական կյանքում սկսեց նվազել:

Արքունական տիրույթները չէին սահմանափակվում վարելահողով: Մակեդոնիայի զգալի մասը ծածկող անտառներն ու օգտակար հանածոները նույնպես կազմում էին թագավորի սեփականութունը: Դա ուժեղացնում էր թագավորի իշխանութունը հատկապես հելլենիստական դարաշրջանում, երբ զարգանում էին արհեստները, ապրանքային արտադրութունն ու դրամաշրջանառութունը: Մակեդոնական թագավորին ենթակա տարածքի ընդերքում եղած ու հետևապես նրան պատկանող ոսկու ու արծաթի պաշարներն ամրապնդում էին թագավորական իշխանության նյութական հիմքը:

Երկրի կառավարումը, ինչպես և մյուս հելլենիստական պետութուններում, կենտրոնանում էր թագավորի ձեռքում: Վերջինս զուգակցում էր զորապետի ու կառավարողի ֆունկցիաները: Նրա խորհրդականներն էին «բարեկամները»՝ թագավորական արքունիքը կազմող մեծատոհմիկները: Թագավորը հանձնարարում էր նրանց տնօրինելու կառավարման տարբեր բնագավառներ, նշանակում էր կուսակալներ նվաճված երկրամասերում, տալիս էր նրանց պատասխանատու զիվանագիտական հանձնարարութուններ: Մակեդոնիայում չկար թագավորի աստվածացում ու դրա հետ կապված թագավորի պաշտամունք: Արքունիքն այնքան մեծաշուք ու մեծածավալ չէր, ինչպես արևելյան հելլենիստական երկրներում: Թեև Անտիգոնոսյանները հաստատվեցին շնորհիվ գալատների դեմ տարած հաղթանակի, բուն Մակեդոնիայում նրանց իշխանութունը հիմնված չէր նվաճման իրավունքի վրա, թեև այն պահպանում էր իր ռազմական բնույթը: Մակեդոնական թագավորն օժտված չէր երկրի ամբողջ տարածքի նկատմամբ սեփականութեան գերագույն իրավունքով: Դա հնարավոր չէր Մակեդոնիայում՝ սեփականութեան անտիկ ձևի զգալի զարգացման պայմաններում ու այն դեպքում, երբ բուն Հունաստանի մի մասը մտնում էր մակեդոնական թագավորութեան մեջ և տարածքային տեսակետից նրա հետ մեկտեղ մի ամբողջութուն էր կազմում:

Արևմուտքը՝ արևելքի, Ադրիատիկան՝ էգեյիսի հետ միացնող ճանապարհների վրա գտնվող Մակեդոնիան էգեյան ծովում ուներ նավահանգիստներ, հսկում էր Սև ու Միջերկրական ծովերը տանող

ջրային ուղիները: Մակեդոնիայում գյուղատնտեսութեան հետ մեկտեղ ավելի արագ, քան նախկինում, զարգանում էին առևտուրն ու արհեստը: Նրա ինչպես քաղաքային, այնպես և գյուղական բնակչության մեջ մ. թ. ա. III դ. տեղի ունեցավ զգալի սոցիալական շերտավորում: Անտիկ ստրկատիրական տնտեսությունը գերազանցապես զարգանում էր քաղաքներում: Գնովի ստրուկների թիվն աճում էր հատկապես Մակեդոնիայի կողմից Հունաստանում մ. թ. ա. III դ. տեղական նշանակություն ունեցող հաջող պատերազմներ վարելու հետևանքով: Հանդես գալով իբրև Հունաստանի նվաճող, ձեռք բերելով ստրուկ-հույներ, ծառայության ընդունելով հույն զինվոր-վարձկաններին, իրեն ենթարկելով հունական պոլիսները, Մակեդոնիան իր հերթին ավելի մեծ չափերով ենթարկվում էր հունական տնտեսական ու մշակութային ազդեցությանը: Հատկապես հելլենականանում էին մակեդոնական հասարակության բարձր խավերը: Մակեդոնական լեզվին մոտ կանգնած հունարենը նրանց միջավայրում հետզհետե դարձավ խոսակցական լեզու:

Մակեդոնական արտաքին քաղաքականության գլխավոր ուղղությունն էր Հունաստանում ու էգեյան ծովում գերիշխանություն հաստատելու ձգտումը: Այդ քաղաքականությունը ծնում էր բախումներ համարյա բոլոր մյուս հելլենիստական պետությունների ու առաջին հերթին Պտղոմեոսների թագավորության, Պերգամոսի և Սելևկյանների թագավորության հետ: Մ. թ. ա. III դ. Մակեդոնիան սովորաբար թշնամի էր մնում ծովում բոլորից ուժեղ Սեյպտոսին և շատ թե քիչ բարեկամական հարաբերություններ էր պահպանում Սելևկյանների հետ: Իր անմիջական ասիական հարևանի՝ Պերգամոսի հետ Մակեդոնիան ուներ լարված հարաբերություններ:

#### ՀՈՒՆԱՍՏԱՆ

Հունաստանը, ինչպես և Մակեդոնիան, ծանր էր տանում իր տարածքում տեղի ունեցող երկարատև պատերազմների ու հեղաշրջումների հետևանքները: Հունաստանը բավական յուրովի էր հաղթահարում սոցիալական ճգնաժամը. դա արվում էր երկրի աստիճանական ամայացման ճանապարհով: Ճգնաժամը հաղթահարելու այդ ուղին բխում էր հելլենիստական աշխարհի ստրկատիրական հասարակության զարգացման կոնկրետ պայմաններից:

Ստրկատիրական արհեստավորական արտադրությունն ու առևտրա-վաճառուական տարրերի աճը առաջվա պես քայքայում էին հունական պոլիսների ազատ արտադրողներին, ստիպում էին նրանց մեծ մասամբ բախտ որոնել օտար երկրներում: Հեռանալով հայրենիքից, նրանցից ոմանք արևելյան հելլենիստական պե-

ստույգուններում դառնում էին վարձկան զինվորներ, պաշտոնյաներ, ոստիկաններ, մյուսները նոր պայմաններում էլ արևելքում շարունակում էին զբաղվել արհեստով ու առևտրով, կազմելով մանր և միջին ձևերի կատարողները խավ: Սեփականություն կենտրոնացումը փոքրաթիվ ստրկատերերի ձեռքում Հունաստանում շարունակվում էր նաև մ. թ. ա. III դ.: Պատերազմները նպաստում էին ոմանց հարստանալուն ու մյուսների սնանկացմանը: Թշնամանքն ու անողորմությունը հարուստների ու աղքատների միջև եղած հարաբերություններում այդ ժամանակ հասանալիկինում շտեմնաված շահերի: Ուժեղացավ ստրուկների դասակարգային պայքարը: Հունաստանի քաղաքական կյանքի կենտրոնները մասամբ փոխադրվեցին նախկինում հետամնաց շրջանները: Փոքր ու մեծ դաշինքների մեջ պոլիսների ու ցեղային տարածքների միավորման պրոցեսները, որոնք տեղի էին ունենում մ. թ. ա. IV դարում, շարունակվեցին նաև մ. թ. ա. ամբողջ III դ. ընթացքում: Էտոլիական միությունից բացի, որի մասին առաջին հիշատակումն ըստ վիմագրական տրվյալների վերաբերում է մ. թ. ա. 367 թ., մ. թ. ա. մոտ 280 թ. կազմավորվեց Աքայան միությունը. այն նույնպես ստեղծվեց Մակեդոնիայի՝ Հունաստանում տիրապետելու հավակնությունների դեմ մղված պայքարում: Այդ միության հիմնական տարածքը կազմեց Պելոպոնեսի հյուսիսային մասում գտնվող, նախկինում հետամնաց Աքայան մարզը: Էտոլիական ու Աքայան միությունները կարևոր դեր խաղացին Հունաստանի մ. թ. ա. III ու II դդ. պատմության մեջ:

Ինչպես և մ. թ. ա. IV դ., հելլենների միջավայրում Մակեդոնիայի սոցիալական հենարանը կազմում էին բնակչության ունևոր ու հարուստ խավերը. նրանք գրում էին մակեդոնական թագավորի ուժեղ իշխանության հաստատման կարիքը՝ իրենց դիրքն ու հարստությունները պաշտպանելու համար: Անտիգոնոս Գոնատասը ստիպված էր հաշվի նստել հունական պոլիսների քաղաքական կյանքի ու կառավարման ավանդական ձևերի հետ, պոլիսներ, որոնք ձգտում էին այս կամ այն չափով պահպանել իրենց անկախությունը կամ թեկուզ դրա երևութականությունը: Թագավորը մի շարք քաղաքներում նշանակեց մակեդոնացի կուսակալներ, մյուսներում պաշտպանում էր տեղական տիրաններին, այլ քաղաքներին, ինչպես, օրինակ, Աթենքին, թույլ տվեց պահպանել ինքնավարություն, բայց մակեդոնական կայազոր տեղավորեց Պիրեևոսում: Պոլիսների՝ Մակեդոնիային ենթարկվելու ձևերից մեկը «դաշինքն» էր նրա հետ:

Էտոլիական ու Աքայան միությունները մղում էին մշտական, բայց չհամաձայնեցված պայքար Մակեդոնիայի դեմ: Այդ միու-



Քյունններից Հունաստանում մ. թ. ա. III դ. առաջին կեսին հատկապես հեղինակավոր ու ազդեցիկ էր առաջինը. դա կապված էր գալատների դեմ նրա մղած հաջող պայքարի հետ: Էտոլիական միութիւնը իր հզորութիւնը պահպանեց գրեթէ մինչև մ. թ. ա. III դ. վերջը:

Էտոլիական միութիւնը (մ. թ. ա. մոտ 367 թ.—մ. թ. ա. 168 թ.): Միութեան հիմնական մարզը Միջին Հունաստանի արևմտյան մասում գտնվող աղքատ ու հետամնաց էտոլիան էր: Իրապես, էտոլիական ցեղերի միութիւնը վաղուց գոյութիւն ունէր: Սակայն դիագոքների պայքարի շրջանում, մշտական ներխուժումների վըտանգի առկայութեան կապակցութեամբ այն վերակառուցվեց և ուժեղացավ նրան միացած հարևանների հաշվին: Ի տարբերութիւն Պելոպոնեսյան, Աթենական ու այլ ավելի վաղ գոյութիւն ունեցած միութիւնների, էտոլիական միութիւնը ֆեդերացիա էր, այսինքն այն ստեղծված էր նրա կազմի մեջ մտնող ցեղային տարածքների ու պոլիսների իրավահավասարութեան հիման վրա: Էտոլիայի կենտրոնն էր Թերմէ քաղաքը, որը դարձավ նաև էտոլիական միութեան կենտրոն: Մ. թ. ա. IV դ. վերջում ու մ. թ. ա. III դարում էտոլիական միութեան կազմի մեջ մտնում էր Միջին Հունաստանի մեծ մասը, ներառյալ Դելփիքը: Հյուսիսում միութեան մեջ մտավ Թեսալիայի մի մասը, հարավում՝ Պելոպոնեսի մի հատվածը: Նրա կազմում էին նաև մի քանի կղզիներ:

Չի կարելի ասել, որ էտոլիական միութեան մեջ մտնող պետութիւնների մեծ մասի տնտեսական զարգացումը նպաստում էր նըրանց միավորմանը: Այստեղ դրա հիմքում ընկած էին քաղաքական նկատառումները, որոնք հանդես եկան Հունաստանի առաջավոր ստրկատիրական պոլիսների ու Մերձավոր Արևելքի երկրների սոցիալ-տնտեսական զարգացման հետևանքով: Ստրկատիրական հասարակութեան զարգացումն առաջ բերեց ստրուկների ընդհանուր պահանջարկի նոր աճ: Կենդանի ապրանքը՝ ստրուկներին, կարելի էր վաճառել Միջերկրականի քաղմաթիվ շուկաներում: Շահավետ էր փրկագին ստանալ ունեւոր կամ հարուստ ճանապարհորդներից, վաճառականներից ու այլ ազատ ծնվածներից, որոնց գերել էին ստրուկ դարձնելու նպատակով: Մովահենութիւնը, մարդկանց որսը՝ նրանց ստրկութեան վաճառելու համար մեծ թէ փոքր շահերով միշտ էլ հատուկ է եղել ստրկատիրական հասարակութեանը:

Հելլենիզմի դարաշրջանում էտոլիացիները մշտապես պայքարել են Մակեդոնիայի դեմ հանուն իրենց ու Հելլադայի անկախութեան: Այդ պայքարը նպաստեց միութեան ամրապնդմանն ու նրա կազմի մեջ Հելլադայի շատ ցեղերի ու քաղաքների ներգրավմանը:

Մյուս կողմից, զարգացած ստրկատիրական տնտեսության պայմաններում էտոլիացիները գտան իրենց տեղը՝ իբրև հելլենիստական աշխարհի տնտեսապես ավելի զարգացած շրջաններին սպասարկող եռանդուն ծովահեն-ստրկավաճառներ: Կողոպտիչ պատերազմներն ու ստրկավաճառությունը նպաստեցին էտոլիական տարածքների բնակչության սոցիալական շերտավորման արագացմանը: էտոլիական միության քաղաքական հակառակորդ ու թշնամի Պոլիբիոսից սկիզբ առած հին հունական գրական ավանդույթը ձրգտում էր բացասական գնահատական տալ միության ձեռնարկումների մեծ մասին: Սակայն այժմ մեր տրամագրությունն տակ կան բավարար քանակությամբ վիժագրություններ, որոնք մատնանշում են էտոլիական միության կարևոր դերը Հելլագայի ներքին ու միջազգային հարաբերություններում մ. թ. ա. III և II դդ.:

էտոլիական միության բոլոր անդամները պաշտոնապես կոչվում էին էտոլիացիներ. նրանք ինքնավար էին և, ինչպես արդեն հիշատակվել է, ունեին հավասար իրավունքներ: Որոշ չափով ենթակա վիճակում էին գտնվում միայն բռնությամբ միացված, այսպես կոչված «ղաշնակցային» համայնքները: Կառավարման րարձրագույն մարմին հանդիսացող ժողովրդական ժողովը՝ սինոդոսը, հավաքվում էր տարին երկու անգամ Թերմեոմ: Աշնանային ժողովում, գիշերահավասարից հետո, ընտրվում էին միության բարձրագույն պաշտոնյաները: Ժողովրդական ժողովն անհրաժեշտության դեպքում կարող էր գումարվել ցանկացած ժամանակ: Այն կարող էր հավաքվել ոչ միայն Թերմեոմ, այլև էտոլիական միության ցանկացած նշանավոր քաղաքում: Տեսականորեն ժողովրդական ժողովը բաղկացած էր բոլոր միութենական քաղաքացիներից, բայց գործնականում նրան ներկա էին լինում միայն ժողովի գումարման վայրին մոտ ապրող քաղաքացիներն ու միութենական քաղաքականության: ուղղությունը որոշելու մեջ շահագրգռված անձինք: Այսպիսով, պետական մեծ կազմավորումների պրակտիկայում հին հունական ժողովրդաիշխանությունը սոսկ քողարկում էր կառավարող փոքրաթիվ խմբի անկախ գործունեությունը: Դրանով են բացատրվում առանձին էտոլիական ղեկավարների կողմից հաճախ թույլ տրված շարաշահումները. այդ ղեկավարները արտաքին քաղաքականության հարցերում հաճախ գործում էին ըստ իրենց հայեցողության: Միայն պատասխանատու դեպքերում նրանք սովորաբար սպասում էին արտակարգ ժողովրդական ժողովի որոշումներին: Միության գործադիր իշխանության ղեկավարը՝ ստրատեգոսը, որը ընտրվում էր ժողովրդական ժողովի կողմից մեկ տարի ժամկետով, իրավունք չունեի ներկա լինել ժողովին, երբ այնտեղ քննարկվում

էր պատերազմ հայտարարելու հարցը: Երկու ժողովրդական ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում գերագույն մարմին էր սինդրիոնը՝ միութեան քաղաքների ու բնակավայրերի ներկայացուցիչներից կազմված խորհուրդը: Ապոկլիետների մշտական ընտրովի մարմինը, որի կազմում կային մի քանի տասնյակ մարդիկ, տնօրինում էր ընդհանուր միութենական ընթացիկ գործերը: Ստրատեգոսին կրկին կարելի էր ընտրել միայն նրա լիազորությունների ավարտից մեկ տարի անց: Այդ կարգը նպատակ ուներ կանխելու գործադիր իշխանութեան ուժեղացումը: Ստրատեգոսի օգնականն էր հեծելազորի հրամանատարը: Միութենական գործավարութեամբ զբաղվում էր քարտուղարը: Միութեան անդամների մուծումներից ու ռազմական ավարի մի մասից կազմված միութենական գանձատունը տնօրինում էին յոթ գանձապետներ: Բացի այդ, կար նաև տոնակատարությունների նախապատրաստումով զբաղվող հատուկ պաշտոնյա:

Աֆայական միությունը (մ. թ. ա. մոտ 280—146 թթ.): Պելոպոնեսի հյուսիսում 12 փոքր աքայան բնակավայրեր վաղուց ի վեր կազմել էին միություն, որը կազմալուծվեց Հունաստանում մ. թ. ա. IV դ. վերջին երեսնամյակում մակեդոնական գերիշխանության հաստատման շրջանում: Գալատների դեմ մղված պայքարի ժամանակ, երբ Մակեդոնիան ենթարկվեց դաժան ավերման, Աքայան միությունը վերածնվեց իբրև հակամակեդոնական միավորում: Այն, ինչպես և էտոլիական միությունը, կազմակերպված էր նրա բոլոր անդամների ինքնավարութեան ու իրավահավասարութեան սկզբունքների հիման վրա ու շատ շուտով ընդարձակվեց՝ վերածվելով հզոր ֆեդերացիայի: Միութեան կենտրոնն էր աքայան էգիոն քաղաքը: Մ. թ. ա. III դ. երկրորդ կեսին Աքայան միութեան մեջ ներգրավվեց Պելոպոնեսի մեծ մասը: Նրա վերաբերյալ մանրամասն, բայց կանխակալ ու կցկտուր տեղեկություններ է հաղորդում Պոլիբիոսը: Այդ տեղեկությունները ճշտվում են մեր տրամադրութեան տակ գրտնրվող արձանագրությունների օգնությամբ: Աքայան միութեան կազմն ու նրա սոցիալական հենարանը մի փոքր այլ էին, քան էտոլիականինը, թեև երկու միությունների բուն տարածքները պատկանում էին Հունաստանի հետամնաց մարզերի թվին: Աքայան միությունը նախ և առաջ պոլիսների միավորում էր, ընդ որում ներանց մեջ գլխավոր դերը խաղում էին ոչ թե աքայան, այլ միավորված ու միացված պոլիսները: Վերջիններիս մեջ հետագայում առաջին տեղը գրավեց Կորնթոսը: Միությունը կազմավորվում էր աստիճանաբար, միաժամանակ ստեղծվում էին կենտրոնական կառավարման մարմինները, որոնք ընդհանուր առմամբ նման էին էտո-

լիական միութեան մարմիններին: Ֆեդերացիայի գլուխ կանգնած էր միութենական ժողովը (սինդոդոսը), որը հավաքվում էր, ըստ երևույթին, նույնպես տարին երկու անգամ: Ժողովին կարող էին ներկա լինել 30 տարին լրացած բոլոր քաղաքացիները, որոնք էգիտն էին գալիս իրենց պոլիսներէից: Սակայն քանի որ այդ կարող էին անել գլխավորապես հարուստ կամ ունևոր մարդիկ, ապա ժողովը փաստորեն բաղկացած էր նյութապես ապահով անձերէից: Միութեան երկրորդ բարձրագույն մարմինն էր սինկլիտոսը՝ արտակարգ ժողովրդական ժողովը, որը կարող էր գումարվել ցանկացած ժամանակ, միութեան ցանկացած քաղաքում: Միութեան անդամ յուրաքանչյուր պոլիս ժողովրդական ժողովներում ուներ մեկ ձայն: Սինդոդներում ու սինկլիտներում տեղի ունեցող քննարկումների մանրամասնութիւնները մեզ բավարար չափով հայտնի չեն: Գործադիր իշխանութիւնը գլխավորում էին ստրատեգոսը, որը կարող էր վերընտրվել միայն իր լիազորութիւնների ավարտից մեկ տարի անց, նրա օգնականները՝ հեծելագորի պետը, նավատորմի պետը, քարտուղարը և ստրատեգոսին կից գործող 10 դեմիուրգներից բաղկացած խորհրդակցական մարմինը: Աքայան միութիւնում հարուստ և ունևոր խավերի ազդեցութիւնը իր կնիքը դրեց նրա ամբողջ քաղաքականութեան վրա, որը ըստ էութեան հակադեմոկրատական էր: Այդ խավերը՝ օլիգարխիաների ներկայացուցիչներ լինելով ստրկատիրական պոլիսներում և սոցիալական շարժումներից երկյուղ կրելով, մի կողմից ձգտում էին պահպանել իրենց անկախութիւնը Մակեդոնիայից, իսկ մյուս կողմից զգում էին մակեդոնական թագավորի օժանդակութեան կարիքը՝ չքավորութեան ու ստրուկների ելույթները ճնշելու համար:

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՊԱՅՔԱՐԸ ՄԱԿԵՌՈՆԻԱՅԻ ԴԵՄ Մ. Թ. Ա. III Գ. ԿԵՍԻՆ

Մ. թ. ա. 267 թ. Սպարտան ու Աթենքը դաշինքի մեջ մտան Ծգիպտոսի թագավոր Պտղոմեոս II Փիլադելփոսի հետ ու իրենց կողմը գրավեցին Պելոպոնեսի մի շարք պոլիսները Մակեդոնիայի դեմ պայքարելու համար: Մ. թ. ա. 266-ից մինչև 262 թ. կատաղի պայքար էր տեղի ունենում Անտիգոնոս Գոնատասի տիրապետութեան դեմ, որը հայտնի է Քրեմոնիդեսյան պատերազմ անունով (Աթենքի ղեկավար գործիչ Քրեմոնիդեսի անունով): Պատերազմը անհաջող էր Աթենքի համար: Ծանապարհներն Աթենքի ու Պելոպոնեսի միջև գտնվում էին Անտիգոնոս Գոնատասի ձեռքում: Մակեդոնական կայազորը գրավել էր Ակրոկորնթոս ամրոցը, որը հսկում էր Իսթմոսի վրայով անցնող ճանապարհը: Աթենացիներին օգնութեան եկած պելոպոնեսյան զորքերը գլխավորող սպարտական թա-

գավորը շկարողացավ անցնել Իսթմոսն ու գոհվեց արշավանքի ժամանակ: Պտղոմեոսի օգնությունը պասսիվ էր: Եգիպտական նավատորմիդը Պատրոկլոս նավարքոսի գլխավորությամբ գտնվում էր Ատտիկայի ափերից ոչ հեռու, հենակետ ունենալով մոտակա կղզիներին մեկը, բայց աթենացիներին որևէ իրական օգնություն այն ցույց չտվեց: Եգիպտական նավատորմի այդ հենակետային կղզին աթենացիները դառնությամբ անվանեցին Պատրոկլոսի կղզի: Նրանք երկարատև պաշարման ենթարկվելով, ստիպված եղան հանձնվել Անտիգոնոսին, որը քաղաքում տեղավորեց մակեդոնական կայսգորև հսկում էր ղեկավար պաշտոնների ընտրությունները: Քրեմոնիդեսը ապաստան գտավ Եգիպտոսում: Անտիգոնոս Գոնատասը իր իշխանությունը հաստատեց նաև Պելոպոնեսի մի շարք պոլիսների վրա:

Սակայն Աքայան միության զարգացման շնորհիվ մակեդոնական կայսգորները շուտով արտաքսվեցին Պելոպոնեսի քաղաքներից: Պոլիսները մտնում էին միության մեջ՝ տապալելով Մակեդոնիայի օգնությամբ կառավարող տիրաններին: Աքայացիներն իրենց հիմնական հաջողություններին հասան նշանավոր քաղաքական գործիչ Արատոսի ղեկավարությամբ: Արատոսը սիկիոնյան հարուստ քաղաքացիների հետնորդ էր. նրա ծնողներն արտաքսվել էին հայրենի քաղաքից այնտեղ տիրանիա հաստատվելուց հետո: Մի քանի տարի անց Արատոսին հաջողվեց տապալել սիկիոնյան տիրանին, որից հետո նա, վախենալով Մակեդոնիայի միջամտությունից, պայմանավորվեց Աքայան միության մեջ Միկիոնի մըտնելու մասին: Մ. թ. ա. 245 թ. Արատոսը ընտրվեց միության ւտրատեգոս: Մ. թ. ա. 243 թ. նա աքայան զորքերի մի ջոկատով արտաքսեց մակեդոնացիներին Կորնթոսից ու վերջինիս լեռնային ամբողջ Ակրոկորնթոսից, որն իշխում էր Միջին Հունաստանից Պելոպոնես տանող ճանապարհի վրա: Այդ հաջողությունները ժամանակավորապես թուլացրեցին Մակեդոնիայի դիրքերը Հունաստանում: Ընդհակառակը, Աքայան միությունն ապրում էր վերելքի ու հզորության շրջան: Այն հեղինակություն ձեռք բերեց ամբողջ Հունաստանում:

#### ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՊԱՐՏԱՅՈՒՄ: ԱԳԻՍԻ ՈՒ ԿԼԵՈՄԵՆԵՍԻ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԸ

Ինչպես Աթենքը, Սպարտան ևս մ. թ. ա. III դ. շէր մտնում հունական քաղաքների ու ցեղերի միությունների մեջ: Ներքին կացությունն այժմ փոքրացած սպարտական պետությունում ծանր էր: Մ. թ. ա. IV դարում շատ սուր արտահայտված սոցիալական ճրգ-

նաժամի հետևանքը եղավ մ. թ. ա. III դարում հողի շափից ավելի կենտրոնացումը սպարտացիների ընդամենը հարյուր ընտանիքների ձեռքում: Մյուսները հողագուրկ էին: Սպարտայից ու Լակոնիայից Եկածները Պտղոմեոսների ու Սելևկյանների պետություններում և այլ արևելյան հելլենիստական երկրներում կազմում էին զինվորավարձականների ու զինվոր-գաղութարնականների՝ կլերուքների և կատոյկների մեծ մասը: Հայրենիքից նրանց բշտում էր աղքատությունը: Սպարտական ավագանու ընդարձակ հողային տիրույթներում աշխատում էին ոչ միայն հելլոտներ, այլև գնված ստրուկներ: Պերիոյկների ու հելլոտների մի մասը իր սոցիալական վիճակով դեռևս մ. թ. ա. IV դ. փաստորեն հավասարվեց աղքատացած սպարտացիներին: Մ. թ. ա. IV դ. ու մ. թ. ա. III դ. առաջին կեսին Սպարտայի կրած ռազմական պարտությունների հետևանքով ընկավ նրա արտաքին քաղաքական ազդեցությունը: Սպարտայի բանակը մ. թ. ա. III դ. քիչ բանով էր նմանվում հին սպարտացիների փաղանգին, որովհետև այն մեծ մասամբ նույնպես բաղկացած էր վարձկաններից: Սպարտական մեծատունները չէին վստահում սնանկացած համաքաղաքացիներին, իսկ չբավորները երազում էին հողերի, այլ հարստությունների վերաբաժանման ու պարտքերի բեկանման մասին: Սպարտական պետության հետագա թուլացումը կանխելու համար անհրաժեշտ էին սոցիալական ու քաղաքական բարեփոխումներ: Այդ էին պահանջում կյանքի հատակ «իջած» սպարտացիները, պերիոյկներն ու հելլոտները: Բարեփոխումների անցկացման անհրաժեշտությունը գիտակցեց նաև սպարտական ավագանու մի մասը: Այս բարդ սոցիալական շարժումը գլխավորեց Սպարտայի երիտասարդ թագավոր Ագիս IV-ը (մ. թ. ա. 245—241 թթ.), որը խոշորագույն հողատեր էր Լակոնիայում: Ագիսը ողեշնչվել էր ստոիկների փիլիսոփայական դպրոցի ուսմունքով, որը հորդորում էր վարել խելացի շափավոր կյանք և մասնավորապես կոչ էր անում հանդուրժողական վերաբերմունք ցույց տալ բնակչության ստորին խավերի նկատմամբ: Սպարտական հողում այդ դադափարները միախառնվում էին Լիկուրգոսի ու լիկուրգոսյան կարգերի մասին եղած առասպելների հետ: Ըստ այդ առասպելների, Լիկուրգոսը իբրև թե խորը հնությունում վերացրեց անհավասարությունը սպարտացիների միջև ու երկար ժամանակով ստեղծեց Սպարտայի հռչակավոր ռազմական առաջնությունը Բալկանյան Հունաստանում: «Վերածնել լիկուրգոսյան կարգերը, վերականգնել սպարտական հին խիզախությունն ու նրա հետ կապված ռազմական ուժը» կոչով Ագիսը դիմեց գերուսիային մ. թ. ա. 243 թ.: Սկզբում այդ կոչը գերուսիային հաղորդվեց Ագիսի կողմնակից Եֆորոս Լիսանդրոսի միջնորդությամբ: Սա-

կայն գերուսիան դեմ արտահայտվեց, որովհետև լիկուրգոսյան կարգերի վերածնունդ գործնականում պիտի ուղեկցվեր հողերի վերաբաժանումով ու պարտքերի վերացումով: Այդ ժամանակ Ագիան անձամբ դիմեց ժողովրդական ժողովին՝ ապելլացիոն ու առաջարկեց խլել հողը 100 խոշոր հողատեր-սպարտացիներից ու բաժանել այն Լակոնիայում 4500 մասերի՝ սպարտացիների համար ու Լակոնիայի սահմաններից դուրս՝ 15000 հողակտորները՝ պերիոյկների համար՝ միաժամանակ վերջիններին տրամադրելով քաղաքացիական իրավունքներ: Հենց այստեղ, ապելլացիոն Ագիսը, նրա մայրը, տատն ու մի քանի ազգականներ հօգուտ ժողովրդի հրաժարվեցին իրենց ամբողջ կարողությունից, այդ թվում և հսկայական հողային տիրույթներից: Բացի այդ հայտարարվեց պարտքերի բեկանում: Բարեփոխումների թշնամի երկրորդ թագավոր Լեոնիդասը գրկվեց դահից ու արտաքսվեց, իսկ Ագիսին դիմադրող եֆորները փոխարինվեցին ուրիշներով: Ագիսի հորեղբայր Եֆորոս Ագեսիլաոսը, խոշոր հողատեր, որը, սակայն, խճճվել էր պարտքերի մեջ, եռանդուն կերպով իրագործեց պարտքերի բեկանումը: Պարտային փաստաթղթերն այրվեցին: Սակայն հենց նույն Ագեսիլաոսը, պարտքերից ազատվելով, ամեն կերպ խանգարում էր հողի փաստական վերաբաժանմանը, քանի որ շէր ցանկանում կորցնել իր տիրույթները: Հողային բարեփոխումների անցկացման հետ կապված քաջբունակները հեղինակազրկեցին երիտասարդ թագավորին հողազուրկ քաղաքացիների միջավայրում, քաղաքացիներ, որոնց հետ ինքը՝ Ագիսը անմիջականորեն կապված չէր ու ոտոնց ակտիվությունն, ըստ էության, հաշվի չէր առնում իր՝ վերեից անցկացրած բարեփոխումների իրականացման ընթացքում:

Այդ ժամանակ Լակոնիայի վրա հարձակվեցին էտոլիացիները, որոնք նպատակ ունեին կողոպտելու երկիրն ու ստրկությանը քշելու նրա բնակչությանը: Ագիսը պիտի գնար պատերազմի, գլխավորելով սպարտացիների ջոկատը: Նրա բացակայությամբ բարեփոխության հակառակորդները՝ խոշոր հողատերերը, արսորից վերադարձրեցին թագավոր Լեոնիդասին: Այդպես էլ հող շատացած ժողովրդի դժգոհությունից օգտվելով, նրանք ապելլացիոն հասան բարեփոխության վերացմանը: Երբ Ագիսը վերադարձավ արշավանքից, եֆորները դատապարտեցին նրան մահվան. խաբեությանմբ դուրս հրավիրեցին տաճարից ու կախեցին իր քաղաքական ու սոցյալական գործունեությունը պաշտպանող մոր ու տատի հետ միասին:

էտոլիացիների արշավանքը վերջնականապես հաջողվեց ետ մղել Աքայան միության ուժերով միայն մ. թ. ա. 240 թ. (այդ ու-

ժերը գլխավորում էր Արատոսը), բայց մինչ այդ էտոլիացիներին հաջողվել էր ստրկության քշել մոտ 50000 լակոնացիների: Աքայան միության ազդեցությունը Հունաստանում էլ ավելի աճեց, բայց երկպառակտիչ պատերազմների փաստն իսկ վերջին հաշվով բարենպաստ էր Մակեդոնիայի համար, քանի որ վերջինս շարունակում էր վարել իր ազդեցությունը Հունաստանում ուժեղացնելու քաղաքականություն: Այդ ժամանակ մահացած Անտիգոնոս Գոնատասի հաջորդը՝ Իևմետրիոս II-ը փորձեց օգտագործել ստեղծված իրավիճակը սկսեց ռազմական գործողություններ նոր հունական տարածքներ զավթելու նպատակով: Այս պայմաններում էտոլիական ու Աքայան միությունները կնքեցին հաշտություն: Մ. թ. ա. III դ. 40-ական թվականները եղան ինչպես Աքայան, այնպես և էտոլիական միությունների խիստ ընդարձակման ու հզորության աճի ժամանակաշրջան: Իսկ Մակեդոնիան իր հյուսիսային սահմանում բալկանյան ցեղերի գործած ճնշման հետևանքով ստիպված էր վարել պասսիվ քաղաքականություն Հունաստանում:

Միջին Հունաստանում էտոլիացիների ուժեղացման, ինչպես և Աթենքից մակեդոնական կայսրորդ հեռացնելու ուղղությամբ Աքայան միության (որն այդ ժամանակ իր կազմի մեջ ընդունեց Մեգարային ու էգինային) ձեռնարկած փորձերի հետևանքով մակեդոնական զորահրամանատարը, կաշառք ստանալով, կամավոր թողեց Աթենքը: Վերջինս, չեզոքություն պահպանելով, դրանից հետո երկար տարիներ օգտվում էր անկախությունից, որի հետ ստիպված էին հաշտվել նրա հզոր հարևանները՝ Աքայան ու էտոլիական միությունները և Մակեդոնիան: Պելոպոնեսում շարունակում էր անկախ դիրք պահպանել Սպարտան: Սակայն նրա ներքին կացությունը մնում էր շատ լարված, որովհետև խոշոր հողատերերի կառավարող խմբի կողմից Ագիսի նկատմամբ ձեռնարկած հաշվեհարդարից հետո հողերի վերաբաժանման հարցն ավելի սրվեց:

Ագիս IV-ի բարեփոխումների շարունակողը եղավ Ագիսի քաղաքական հակառակորդ, թագավոր Լեոնիդասի որդի, երիտասարդ Կլեոմենես III-ը (մ. թ. ա. 235—221 թթ.): Այսպիսով, բարեփոխումների երկրորդ փորձը նույնպես սկիզբ առավ կառավարող վերնախավից: Կլեոմենեսը իր գաղափարները փոխ առավ Ագիսի այրուց, որի հետ նրան ամուսնացրեցին, ու ստիկ փիլիսոփա Սփերոսից (Քորիսթենեսից), որն իր ժամանակին եղել էր Ագիսի ոգեշնչողը: Կլեոմենեսը հաշվի առավ իր նախորդի անհաջողությունը, այն, որ նա հիմնականում գործում էր խաղաղ մեթոդներով ու որոշեց նախապատրաստել ռազմական հեղաշրջում, դրա համար օգտագործելով վարձկաններին, որովհետև նրա բանակի սպարտա-



կան մասը մեծ շահով կախված էր հարուստներից ու կարող էր ցուցաբերել անվճռականություն:

Քանի որ Աքայան միությունը, որը տիրեց Պելոպոնեսի մեծ մասին, ձգտում էր իր կազմի մեջ ներառել նաև Սպարտական պետությունը, ապա Կլեոմենեսը հանդես եկավ աքայան զորքերի դեմ ու հաղթանակ տարավ: Հետո Կլեոմենեսը վարձկանների ջոկատով անսպասելիորեն վերադարձավ Սպարտա ու հարձակվեց նիստի հավաքված եֆորների վրա: Դիմադրություն ցույց տված եֆորները սպանվեցին: Փախուստի միջոցով փրկվեց միայն մեկը: Կլեոմենեսը վերացրեց եֆորների կոլեգիան, քանի որ այն ծագել էր լիկուրգոսյան կարգերի հաստատումից ավելի ուշ: Հետո նա փաստորեն վերացրեց նաև գերուսիան, որովհետև վերջինս վերածվել էր օլիգարխիայի պատվարի: 80 օլիգարխներ արտաքսվեցին: Կլեոմենեսը օժանդակություն ձեռք բերեց ժողովրդական ժողովում՝ ապելլայում: Կրկին անցկացվեց պարտքերի բեկանում: Բայց Կլեոմենեսը իրագործեց նաև հողերի վերաբաժանում: Նա հող տվեց հողագուրկ սպարտացիներին, ինչպես նաև պերիոյկներին, որոնց շնորհիվ նրանք քաղաքացիական իրավունքներ: Կլեոմենեսի բարեփոխումով քաղաքացիների թիվը մեծացվեց ու հասցվեց մինչև 4000-ի: Կլեոմենեսը երկրորդ թագավոր նշանակեց իր եղբորը, որը լիովին ենթարկվում էր իրեն ու փաստորեն իր ձեռքում կենտրոնացրեց գրեթե անսահմանափակ իշխանություն: Սպարտայում պարտքերի վերացման, հողերի վերաբաժանման ու օլիգարխների իշխանության տապալման լուրերը սոցիալական շարժման աճ առաջ բերեցին Պելոպոնեսում: Կլեոմենեսը, որը ռեֆորմի շնորհիվ կանգնեց փաստորեն զինվոր-կլերուքներից բաղկացած մարտունակ բանակի գլուխ, սկսեց հարձակողական գործողություններ Պելոպոնեսը նվաճելու համար: Սկզբում նա ունեցավ հաջողություն: Մի շարք քաղաքների բնակչությունը ինքն էր հրավիրում սպարտացիներին՝ նրանցից սպասելով պարտքերի բեկանում ու հողերի վերաբաժանում: Կլեոմենեսի դեմ ելած աքայան զորքերը պարտություն կրեցին: Կլեոմենեսը ձգտում էր հաստատել իր գերիշխանությունը Աքայան միությունում: Նրա հաղթանակները առաջացրեցին լայն դեմոկրատական շարժում Պելոպոնեսում ու սպառնում էին Աքայան միությունում կառավարող ստրկատիրական օլիգարխիային: Այդ միության փաստական ղեկավար Արատոսը կտրուկ փոխեց իր քաղաքական կողմնորոշումը: Աքայան միությունը մինչ այդ միշտ վարում էր հակամակեդոնյան քաղաքականություն ու հետզհետե Մակեդոնիային դուրս էր մղում Հունաստանից: Նման քաղաքականության ղեկավարը նախ և առաջ Արատոսն էր: Այժմ նա ռազմական օգնություն խնդրեց մա-

կեդոնական թագավոր Անտիգոնոս Դոսոնից ընդդեմ Կլեոմենեսի: Անտիգոնոսը օգնութիւն խոստացավ Ակրոկորնթոսը Մակեդոնիային վերադարձնելու պայմանով: Եվ Արատոսը, որը մ. թ. ա. 243 թ. արտաքսեց մակեդոնական կայսրը Ակրոկորնթոսից, այժմ համաձայնվեց վերադարձնել այդ միանգամայն անմատչելի ամրոցը Մակեդոնիայի իշխանութիւնը՝ իբրև հատուցում ռազմական օգնութիւն համար: Այսպիսով, Աքայան միութիւնի կառավարող օլիգարխիայի դասակարգային շահերն ավելի ուժեղ գտնվեցին նրա հայրենասիրական զգացմունքներից:

Կլեոմենեսը, նախապատրաստվելով մեծ պատերազմի ընդդեմ Մակեդոնիայի ու Աքայան միութիւնի միավորված ուժերի, շարունակում էր իր բարեփոխումները: Նա առաջարկեց սպարտական հելոտներին փրկագնել իրենց ազատութիւնը՝ 5 ատտիկական մնա վճարելով յուրաքանչյուր մարդու համար ու մտնել սպարտական բանակի շարքերը: Ընդամենը փրկագնվեցին 6000 հելոտներ, որոնցից 2000-ը դարձան սպարտական զինվորներ: Փրկավճարի կարգով ստացված գումարներն օգտագործվեցին նոր վարձկաններ հավաքելու ու բանակի մի մասը մակեդոնական օրինակով զինելու համար: Սակայն Սպարտայի ուժերը զգալիորեն զիջում էին նրա հակաակորոնների միավորված ուժերին: Մ. թ. ա. 221 թ. Լակոնիայի Նյուսիսային մասում, Սելասիայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Կլեոմենեսի համարյա ամբողջ բանակը ընկավ մարտում: Ինքը՝ Կլեոմենեսը իր կենդանի մնացած հետևորդների մի փոքր խմբի հետ փախավ Եգիպտոս, ուր Պտղոմեոս III-ը նրան օգնութիւն խոստացավ Մակեդոնիայի ու Աքայան միութիւնի դեմ պատերազմը վերսկսելու նպատակով: Սակայն Եգիպտոսը ուժ չունեւ Բալկանյան թերակղզում պատերազմ վարելու համար: Պտղոմեոս III-ը մահացավ, իսկ նրա հաջորդ Պտղոմեոս IV-ը հետաձգում էր օգնութիւն տրամադրումը Կլեոմենեսին, որը անհրաժեշտ էր Հունաստանի վրա արշավանք կազմակերպելու համար: Այն ժամանակ Կլեոմենեսն ու նրա ուղեկիցները փորձեցին ապստամբութիւն քարձրացնել Ալեքսանդրիայում Պտղոմեոս IV-ի դեմ. նրանք հույս ունեին հենարան գտնել նրա վարձկանների մոտ, որոնց շարքերում կային շատ պելոպոնեսցիներ: Այդ փորձը ձախողվեց, ու Կլեոմենեսն ու նրա համախոհները ինքնասպանութիւն գործեցին:

Սպարտայում, որն իր պատմութիւնի մեջ առաջին անգամ գրորավեց Անտիգոնոս Դոսոնի թշնամական զորքերի կողմից, վերացվեցին Կլեոմենեսի բարեփոխումները, և վերականգնվեց օլիգարխիան, բայց առանց թագավորական իշխանութիւն: Սպարտան պիտի մտնէր Աքայան միութիւնի կազմի մեջ: Սակայն վերջինս ին-

քը ստիպված էր դառնալ մակեդոնական թագավորի գերիշխանության ներքո հիմնված հելլենական միության մի մասը: Այժմ Հունաստանը, էտոլիական միությունից ու Աթենքից բացի, անմիջական կախման մեջ ընկավ Մակեդոնիայից: Այդ հանգամանքը ուժեղացրեց հակամակեդոնական տրամադրությունները: Աքալյան միության դեմ հանդես եկավ էտոլիական միությունը, որն ավերեց Պելոպոնեսի մի մասը: Ի պատասխան այդ գործողությունների, մ. թ. ա. 220 թ. սկսվեց Հելլենական միության ու Մակեդոնիայի դաշնակցային պատերազմը էտոլիայի դեմ: Վերջինիս պաշտպանեց Աքալյան միության կազմի մեջ բռնի ներգրավված Սպարտան: Մ. թ. ա. 219 թ. Կլեոմենեսի կողմնակից սպարտացիները տապալեցին օլիգարխիան, որը Սպարտայում վերականգնվել էր Կլեոմենեսի պարտությունից հետո, դուրս եկան Աքալյան միությունից կարճ ժամանակով հաստատեցին թագավորական իշխանություն: էտոլիային աջակցեց նաև Հոդոսը, որը նստում էր ծովային ճանապարհներն ու Աքալյան միության և Մակեդոնիայի բնական հակառակորդն էր ծովում: Երկու կողմերն էլ պատերազմը մղում էին մեծ կատաղությունով: Թեև Սպարտան ու էտոլիան վերջ ի վերջո պարտություն կրեցին, բայց մակեդոնացիների հաղթանակը վճռական չէր, ու մ. թ. ա. 217 թ. երկու կողմերը կնքեցին հաշտություն, որը մոտավորապես վերականգնում էր նախապատերազմյան վիճակը:

էտոլիացիները Մակեդոնիայի դեմ մղած հետագա պայքարի ընթացքում Միջևերկրականում ավելի ընդարձակվող միջազգային կապերի պայմաններում դաշնակցային պայմանագիր կնքեցին իրենց հզոր արևմտյան հարևանի՝ Հռոմի հետ. վերջինս այդ ժամանակ իր ձեռքն էր առել ամբողջ Իտալիան ու Միլիթիայի Կարթագենյան մասը: Սպարտան ու նրա հարևան պոլիսները նույնպես սկսեցին հույսեր կապել Հռոմի օգնության հետ ընդդեմ Մակեդոնիայի ու Աքալյան միության: Հռոմն այդ ժամանակ վարում էր ծանր պատերազմ Աֆրիկայի հյուսիսային մասում գտնվող հզոր փյունիկյան պետության՝ Կարթագենի դեմ: Կարթագենի հաղթական զորավար Հաննիբալը մի քանի խորտակիչ պարտությունների մատնեց հռոմայեցիներին ու ժամանակավորապես զրավեց Իտալիայի մի մասը: Միջազգային նման իրադրության մեջ մակեդոնական թագավոր Փիլիպոս V-ը դաշինք կնքեց Հաննիբալի հետ ու պատերազմ հայտարարեց Հռոմին: Նա ցանկանում էր օգտվել հռոմեացիների դժվարին վիճակից ու խլել Բալկանյան թերակղզում նրանց կողմից նոր նվաճված Իլլիրիան, որը հարում էր Մակեդոնիայի հյուսիսարևմտյան սահմանին: Առաջին մակեդոնական պա-

տերազմը հոռմայեցիների հետ տեւց մ. թ. ա. 215 թ. մինչև 205 թ. ու ավարտվեց առանց որևէ լուրջ արդյունքի: Հոռմայեցիները պատերազմի ընթացքում հանդես էին գալիս մակեդոնացիների դեմ իբրև հունական անկախութեան պաշտպաններ, մի բան, որի շնորհիվ նրանք ժողովրդականութիւնը ձեռք բերեցին հույն բնակչութեան շրջանում:

## ՀՌՈԴՈՍ

Մ. թ. ա. III դ. իբրև կարևորագույն առևտրական կենտրոն մեծ նշանակութիւնը ձեռք բերեց հունական օլիգարխիական պետութիւնը Հոռոդոսում: Հոռոդոսի բարգաւաճումը բացատրվում էր միջագագային տնտեսական կապերի, հատկապես Արևելքի, Մերձսևծովյան շրջանների ու Սիկիլիայի հետ նրա բնեցած ծովային առևտրի աճով: Հոռոդոս կղզին հարմարավետ դիրք ունէր Փոքր Ասիայի հարավարևմտյան ծովափին, էգեյան ու Միջերկրական ծովերի միացման շրջանում ու դրա շնորհիվ այն մի տարանցիկ կայան էր բավական բանուկ ծովային առևտրական ուղիների հատման կետում: Հոռոդոսյան պետութիւնը ստանում էր հսկայական եկամուտներ Ձտկոսանոց մարսից, որը գանձվում էր այն սպրանքներից, որոնցով բեռնված էին նրա բարեկարգ նավահանգիստները այցելող նավերը: Բուն կղզում ու Փոքր Ասիայի հարավարևմտյան ծովափում հոռոդոսցիների զավթած տարածքում դարգանում էր ստրկատիրական տնտեսութիւնը: Դրանից բացի հոռոդոսցիները նվաճման իրավունքի համար վրա շահագործում էին տեղական գյուղական բնակչութեանը, բաղաճներից վերցնում էին տուրք: Մայրցամաքային տարածքը կառավարվում էր նույն ձևով, ինչպես և հելլենիստական միապետութիւնների տարածքը, կառավարումն իրագործում էին հատուկ կուսակալներ՝ եպիստատները:

Հոռոդոսցիները զբաղվում էին տարանցիկ ապրանքների, գրխավորապես հացի վաճառքով, մեծ քանակութեամբ սեփական գինի էին արտահանում միջերկրածովյան մերձսևծովյան քաղաքները: Հոռոդոսյան ռազմական առևտրական նավատորմից, որը հին աշխարհի սպիանիշներով նկայահան էր, հսկողութիւն էր սահմանել էգեյան: ճովի դգալի մասի ու Միջերկրական ծովի՝ առաջինիս հարող լայնարձակ տարածութիւնների վրա: Երբ մ. թ. ա. III դ. կեսին, սիրիական երկրորդ պատերազմի ժամանակ, եգիպտական նավատորմը էգեյան ծովում պարտութիւն կրեց մակեդոնականից, հոռոդոսցիներին իրենց հսկողութեան տակ վերցրին ձեռնարկներ Եգիպտոսին պատկանող Կիկլադները: Հոռոդոսցիները եռանդուն պայքար էին մղում ծովահենութեան դեմ: Հոռոդոսյան պե-

տությանն է վերագրվում առաջին ծովային օրենսդրության ստեղծումը:

Հելլենիստական փոքր պետություն Հռոդոսը պահպանում էր իր անկախությունը, մտնում էր ժամանակավոր ռազմական դաշինքների մեջ ու անգամ վարում էր հաջող պատերազմներ: Դա բացատրվում էր նրանով, որ նրա անկախ գոյություն մեջ մի ժամանակ շահագրգռված էին համարյա բոլոր հելլենիստական պետությունները, որովհետև նրանցից և ոչ մեկը չէր կարող զավթել Հռոդոսը՝ շահագրգռված մյուսների դիմադրությունը:

Հռոդոսի միջազգային նշանակությունը մ. թ. ա. III դ. վերջին վառ կերպով լուսաբանվում է հետևյալ փաստով: Մ. թ. ա. 223 թ. Հռոդոսը քանդվեց երկրաշարժից: Նրան օգնություն ցույց տվեցին իրար նկատմամբ թշնամաբար տրամադրված հելլենիստական պետությունները՝ Մակեդոնիան, Եգիպտոսը, Սիրակուզան ու Սիկիլիան, մերձսեծովյան շրջանին հարող Բրթանիան ու Պոնտոսը, ինչպես նաև մանր փոքրասիական թագավորությունները:

Հելլենիստական պետությունների միջև եղած հակասությունների սրումը մ. թ. ա. III դ. վերջին հարկադրեց Հռոդոսին դաշինք որոնել Հռոմի հետ:

#### ՀՈՒՅՆՆԵՐԸ ՍԻԿԻԼԻԱՅՈՒՄ ՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

Հելլենիստական մեծ պետությունների առաջացումը բնորոշ էր ոչ միայն Արևելյան Միջերկրականին: Մ. թ. ա. IV դ. վերջին ու III-ի սկզբին նման պետություններ ծագում էին նաև արևմուտքում: Նրանցից մեկը կապված է սիրակուզյան տիրան Ագաթոկլեսի անվան հետ, մյուսը՝ էպիրոսի թագավոր Պյուրոսի: Սակայն այդ հունական պետությունները արևմուտքում երկարակյաց չէին, նրանց ներքին դրությունը միշտ անկայուն էր, ու նրանք չկարողացան պաշտպանել իրենց անկախությունը հզոր հարևանների՝ Կարթագենի ու Հռոմի դեմ մղած պայքարում: Իսկ վերջիններս հավանում էին իրենց տիրապետությունը հաստատելու Սիկիլիայում ու մեծ Հունաստանում և գերիշխանություն՝ Արևմտյան Միջերկրականում:

Տիրան Գիոնիսիսոսի հաջորդների ժամանակ Սիկիլիական պետությունը կորցրեց իր նախկին հզորությունը: Սիրակուզան ու Սիկիլիայի և Մեծ Հունաստանի մյուս հունական քաղաքներն ապրում էին, ինչպես և մետրոպոլիսայի քաղաքները, պոլիսային համակարգի ճգնաժամ: Ներքին հակասություններն ու սոցիալական պայքարն այստեղ, թերևս, ձեռք բերեցին ավելի մեծ սրություն, քան մետրոպոլիսայի քաղաքներում: Հատուկ ուժով նրանք դրսևորվեցին հենց

իսկ Սիրակուզայում: Հողային սեփականության համակենտրոնացումը, որն աճում էր յուրաքանչյուր տասնամյակ, ու ստրկական աշխատանքի ընդարձակումը տնտեսության բոլոր ճյուղերում հանգեցրին շարքային քաղաքացիության զանգվածային հողազրկմանն ու նրա պարտքերի աճին: Զբավոր քաղաքացիները միշտ պահանջում էին վերաբաժանել հողն ու բեկանել պարտքերը: Սիրակուզայում, ինչպես և սիկիլիական այլ քաղաքներում, այս պահանջները հաճախ պաշտպանություն էին գտնում նաև վարձկանների կողմից: Վերջիններս մեծ մասամբ քաղաքացիության պրոլետարականացված խավերն էին: Այս պատճառով սոցիալական շարժումները Սիրակուզայում ընդունում էին լայն չափեր:

#### ԱԿԱՔՈՎԵՍԻ ՍԵՎԻՒԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Մ. թ. ա. IV դ. վերջին սոցիալական խառնակությունները համընկան սիրակուզացիների կողմից Ակրագասի դեմ վարած երկարատև պատերազմի հետ: Այդ պատերազմում, մ. թ. ա. IV դ. 20-ական թվականներին առաջ քաշվեց իբրև ընդունակ զորահրամանատար Ագաթոկլեսը: Իր զբաղմունքով Ագաթոկլեսը կավագործ էր ու ծագում էր Թերմե քաղաքի ոչ հարուստ ընտանիքից: Նա օժտված էր խոշոր զորավարական ու կազմակերպչական ընդունակություններով, քաղաքական իրավիճակի ընկալումով ու վճռականությամբ: Վարձկանների մոտ ունեցած իր հեղինակությունից օգտվելով, Ագաթոկլեսը հանդես եկավ Սիրակուզայում կառավարող օլիգարխիայի դեմ: Պաշտպանելով աղքատացած քաղաքացիների պահանջները հողերի վերաբաշխման ու պարտքերի վերացման մասին, նա իր կողմը գրավեց նրանց: Վեցհարյուրի օլիգարխիական սիրակուզյան խորհուրդը հասավ Ագաթոկլեսի արտաքսմանը: Ագաթոկլեսը հավաքագրեց վարձկանների բանակ, որին միացավ օլիգարխիայից դժգոհ ու սոցիալական բարեփոխումների հույսեր տածող շարքային քաղաքացիության մասսան: Մ. թ. ա. 316 թ. Ագաթոկլեսն իր բանակով ներխուժեց Սիրակուզա ու բնակչության օգնությամբ տապալեց օլիգարխիան: Քաղաքական այս հեղաշրջումն ուղեկցվեց օլիգարխների ջարդերով ու նրանց տների ավերմամբ:

Ագաթոկլեսը դումարեց ժողովրդական ժողով, որտեղ իր ղինվորական թիկնոցը հանելով հայտարարեց, որ մարտնչում էր հանուն դեմոկրատիայի վերականգնման ու այժմ, երբ իրագործվել է իր նպատակը, նա իր վրայից ցած է դնում արտակարգ լիազորությունները: Ժողովը, որտեղ գերակշռում էին Ագաթոկլեսի վարձկաններն ու կողմնակիցները, ընտրեց նրան անսահմանափակ լիազորություններով օժտված ստրատեգոս-ավտոկրատոր ու հանձնա-

րարեց վարել բոլոր պետական գործերը: Ազաթոկլեսը փաստորեն դարձավ Սիրակուզայի միանձնյա կառավարիչ:

Նրա սոցիալական քաղաքականությունը մեզ վատ է հայտնի: Պետք է ենթադրել, որ նա մասամբ կատարեց իր խոստումները, ու նրան թշնամի ավագանուց բռնագրավված հողերը բաժանվեցին վարձկանների չքավորության միջև: Մենք ավելի տեղյակ ենք նրա արտաքին քաղաքականությանը: Ազաթոկլեսը ձգտում էր վերականգնել Սիրակուզյան տերությունն ու նրա տիրապետությունը Արևմտյան Միջերկրականում: Ազաթոկլեսը պայմանագիր կնքելով Սիկիլիայում Կարթագենի զորավար Համիլկարի հետ, հավաքագրեց մեծ ու լավ կազմակերպված զորք ու, ինչպես ասում է Հուստինոսը, հանկարծակի հարձակում գործեց հարևան քաղաքների վրա, որոնք չէին սպասում և ոչ մի թշնամական գործողությունների իրենց դեմ: Երեք տարվա ընթացքում Ազաթոկլեսին հաջողվեց Սիրակուզային ենթարկել Սիկիլիայի բոլոր հունական քաղաքներն ու տարածքային տեսակետից ոչ միայն վերականգնել Գիոնիսիոսի ժամանակաշրջանի սիրակուզյան տիրությունները, այլև ընդարձակել դրանք: Ամենաուժեղ դիմադրությունն այդ պայքարում ցույց տվեցին Ակրագասը, Մեսսենեն ու Գելան, ուր և գաղթեց սիրակուզյան տիրանի դեմ ելած սիրակուզյան ավագանու մի մասը:

Համիլկարի մահը դարձավ Սիկիլիայում ու Օոլում տիրապետություն հաստատելու նպատակով Կարթագենի դեմ Սիրակուզայի վարած պատերազմը վերսկսելու առիթ: Այդ պատերազմը շարունակվեց Ազաթոկլեսի համարյա ամողջ կառավարման ընթացքում: Սկզբում Սիրակուզան ունեցավ անհաջողություններ: Հատկապես ծանր էր նրա համար Եկինոմոս հրվանդանի մոտ կրած պարտությունը, որից հետո կարթագենցիները մոտեցան բուն քաղաքին: Բայց Ազաթոկլեսը կարողացավ կասեցնել կարթագենցիների հարձակումը Սիկիլիայում ու իր հերթին հարված հասցրեց նրանց իրենց սեփական տարածքում՝ Աֆրիկայում: Ազաթոկլեսը հավաքագրելով ու լավ վարժեցնելով տասնչորս հազարանոց բանակ, մ. թ. ա. 310 թ. ափ իջավ Հյուսիսային Աֆրիկայում: Նա գրոհով վերցրեց Հադրումետ քաղաքն ու շարժվեց երկրի խորքը: Ազաթոկլեսին մ. թ. ա. 307 թ. հաջողվեց իր զորքերը ուղղել անմիջապես Կարթագենի դեմ: Ազաթոկլեսի առաջխաղացումը կարթագենյան հողում ուղեկցվում էր թշնամու քաղաքների ու գյուղերի ահավոր ավերումով ու ավարառությամբ: Հաղթողների ձեռքն ընկավ վիթխարի ավար: Ազաթոկլեսի հաջողությունների շնորհիվ նրա կողմն անցան մի շարք կարթագենյան քաղաքներ ու լիբիական ցեղեր: Սակայն Ազաթոկլեսի ռազմական հաջողությունները նվազեցին պատերազմի երկարաձը-

գումից դժգոհ վարձկանների ապստամբությունների պատճառով, բայց գլխավորապես Սիկիլիայի մի շարք հունական քաղաքների անջատման հետևանքով: Այս վերջին հանգամանքը Ագաթոկլեսին ստիպեց վերադառնալ Սիկիլիա ու սկսել նոր պատերազմ դավաճան քաղաքների դեմ: Իսկ այդ պահին Աֆրիկայում թողած նրա բանակը կրում էր պարտություններ: Վերջ ի վերջո այն ամենը, ինչ ձեռք էր բերվել, կորավ, ու Ագաթոկլեսը ստիպված եղավ հաշտություն կնքել Կարթագենի հետ մ. թ. ա. 306 թ.: Այդ հաշտության համաձայն Կարթագենին վերադարձվեցին բոլոր այն քաղաքները, որոնք գրավել էր Ագաթոկլեսը, բայց Կարթագենը նրան ռազմատուգանք վճարեց դրամով ու հացով:

Կարթագենի հետ կնքած հաշտությունը Ագաթոկլեսին հնարավորություն տվեց ոչ միայն ճնշել հակասիրակուզյան ապստամբությունները Սիկիլիայում, այլև արշավանք ձեռնարկել դեպի Իտալիա: Պաշտոնապես Ագաթոկլեսը հանդես եկավ Տարասի պաշտպանությամբ՝ ընդդեմ քաղաքի վրա արշավող բրուտտիների ցեղերի: Ըստ էության, նա ձգտում էր իր իշխանությունը տարածել ամբողջ Հարավային Իտալիայի վրա: Այդ արշավանքը հաջողություն չունեցավ: Ինքը՝ Ագաթոկլեսը մահացավ արշավանքի ժամանակ (մ. թ. ա. 289 թ.): Կարթագենը օգտվելով դրանից, խախտեց հաշտության պայմանագիրն ու վերսկսեց պատերազմը Սիրակուզայի դեմ: Ագաթոկլեսի սիրակուզյան տերությունը երկարատև պատերազմների ու Սիկիլիայի հունական քաղաքների ապստամբությունների հետեւանքով թուլացավ ու կազմալուծվեց նրա հիմնադրի մահից մի փոքր ժամանակ անց:

Նրա գոյության կարճատև շրջանը եղավ Սիրակուզայի ոչ միայն ռազմական հզորության, այլև մշակութային ծաղկման ժամանակաշրջան: Սիրակուզան Ագաթոկլեսի օրոք (Ագաթոկլեսը մ. թ. ա. մոտ 305 թ. ընդունեց «սիկիլիացիների թագավորի» տիտղոսը) դարձավ հելլենիստական աշխարհի խոշորագույն կենտրոններից մեկը:

#### ՄԵՏ ՀՈՒՆԱՍՏԱՆՆ ՈՒ ՍԻՐԱԿՈՒԶԱՆ Մ. Թ. Ա. III ԿԱՐՈՒՄ

Մ. թ. ա. IV դ. վերջին ու III դ. սկզբին հունական գաղութները Իտալիայում հետզհետե անցան Հռոմեական հանրապետության իշխանության տակ, այդ իշխանությունը տարածվեց ամբողջ Ապենինյան թերակղզու վրա: Հռոմին վճռական դիմադրություն ցույց տվեց միայն խոշորագույն հունական գաղութ Տարասը, որն օգնության կանչեց էպիրոսի թագավոր Պյուրոսին: Պյուրոսի պատերազմները Հռոմի դեմ անհաջող էին, և մ. թ. ա. 272 թ. Տարասը նվաճվեց հռոմայեցիների կողմից:



Մի փոքր ավելի երկար պահպանվեց Սիկիլիայի հույների անկախութիւնը: Մ. թ. ա. III դ. ընթացքում միշտ գտնվելով Կարթագենից սպառնացող վտանգի տակ, նրանք միաժամանակ գործ ունեցան Հռոմի էքսպանսիայի հետ: Այստեղ առաջվա պես խոշորագույն հունական պետութիւնն էր Սիրակուզան, որն իր իշխանության ներքո միավորել էր հունական պոլիսների մեծ մասն ու գրավել էր սիկիլիական ցեղերի տարածքի մի հատվածը: Սիրակուզայի անկախության այդ վերջին շրջանում այստեղ երկար ժամանակ կառավարում էր տիրան Հիերոն II-ը, որը Կարթագենի դեմ Սիկիլիայում Պյուրոսի վարած պատերազմի ժամանակ ծառայում էր վերջինիս զորքերում: Հիերոնը տապալեց Ագաթոկլեսի մահից հետո գլուխ բարձրացրած օլիգարխիային ու կառավարելիս, իր նախորդի նման կողմնորոշվում էր դեպի բնակչության դեմոկրատական խավերն ու իր վարձկանները: Այդ ժամանակից մեզ հասել է հարկերը կապալով հանձնելու մասին օրենք, որը վերապատմել է հոմեական հոետոր Կիկերոնը: Օրենքի բովանդակությունը վկայում է, որ հարկերի հավաքման եղանակներն ու շափերը Սիրակուզայում մոտ էին Եգիպտոսում ու Սելևկյանների պետութիւնում գոյություն ունեցող պայմաններին: Հիերոնը կրում էր թագավորական տիտղոս ու որոշ կապեր էր պահպանում արևելքի հելլենիստական պետութիւնների հետ: Նրա գլխավոր հոգան էր խուսանավել երկու հզոր հարեւանների՝ Կարթագենի ու Հռոմի միջև: Առաջին Պունիկյան պատերազմի ժամանակ ու երկրորդի սկզբում (այսինքն Կարթագենի դեմ Հռոմի կողմից վարած պատերազմների ընթացքում) Սիրակուզան Հռոմի հարկադրյալ դաշնակիցն էր: Այն սոսկալի պարտութիւնից հետո, որ հոմայեցիները կրեցին Հաննիբալի կարթագենյան զորքերից Կաննայի մոտ, Հիերոնի մահից հետո (մ. թ. ա. 215 թ.) նրա հաջորդ Հիերոնիմոսի օրոք Սիրակուզան դաշինք կնքեց Կարթագենի հետ, վարվելով ճիշտ այնպես, ինչպես այն ժամանակ գործեց մակեդոնական թագավոր Փիլիպոս V-ը: Սակայն հոմայեցիները Կաննայի մոտ կրած պարտութիւնից մի փոքր ժամանակ անց, օգտւրվելով Հաննիբալի բանակի բարոյալքումից, սկսեցին հարձակողական գործողութիւններ, ու մ. թ. ա. 212 թ., երկար պաշարումից հետո, գրոհով վերցրեցին ու թալանեցին Սիրակուզան: Թալանի ու սպանութիւնների ժամանակ հոմայեցի զինվորների կողմից քաղաքում սպանվեց հին աշխարհի մեծագույն գիտնականներից մեկը՝ սիրակուզացի Արքիմեդը:

Սիրակուզան դարձավ Հռոմի նվաճած առաջին հելլենիստական պետութիւնը:

## Գլուխ 20. ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԵՐՁՍԵՎԾՈՎՅԱՆ ԵՐԿՐԱՄԱՍԸ ՀԵԼԼԵՆԻՉՄԻ ԳԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Հելլենիզմի դարաշրջանում Հյուսիսային մերձսևծովյան երկրամասի պատմությունը ուսումնասիրելիս աղբյուրներ են օգտագործվում առանձին հատվածներ Դիոգորոսի, Պոլիբիոսի, Ապպիանոսի և ուրիշների աշխատություններից: Կարևոր տեղեկություններ են պարունակում նաև արձանագրությունները: Դրանց մի մասը շատ մանրամասն է: Նյութական մշակույթի հուշարձանները նույնպես ունեն բացառիկ նշանակություն այս թեմայի ուսումնասիրության համար:

### ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԵՐՁՍԵՎԾՈՎՅԱՆ ԵՐԿՐԱՄԱՍԸ Մ. Ք. Ա. IV Դ. ՎԵՐՋԻՆ

Հյուսիսային մերձսևծովյան շրջանները դուրս մնացին Ալեքսանդր Մակեդոնացու ռազմական ագրեսիայի ոլորտից ու այս կապակցությամբ իրենց քաղաքական զարգացման ընթացքում շարժվեցին այնպիսի կտրուկ բեկում, ինչպիսին բնորոշ էր Արևելյան Միջերկրականի երկրներին: Ծիշտ է, համաշխարհային տիրապետության հաստատման տևելիս Ալեքսանդրին ստիպեց իր գորավարներից մեկին՝ Փոյուզիայի կուսակալ Զոպիրիոսին 30-հազարանոց բանակով ուղարկել կովելու Մերձսևծովյան հունական քաղաքների ու սկյութական ցեղերի դեմ (մ. թ. ա. 331—330 թթ.): Այդ արշավանքը անհաջող էր՝ Զոպիրիոսի պաշարած առաջին իսկ հունական քաղաքը՝ Օլվիան համառ դիմադրություն ցույց տվեց մակեդոնացիներին, իսկ նրանց բանակը ջախջախվեց սկյութների կողմից: Նույնպիսի անհաջողություն կրեց և Լիսիմաքոսը, որը մ. թ. ա. 292 թ. Դանուբն անցնելով փորձեց իր տերությանը միացնել Մերձսևծովյան շրջանները: Լիսիմաքոսը պարտություն կրեց գեթերի բազմաքանակ ու ռազմատենչ ցեղերից: Այլ, առավել կարևոր արտաքին քաղաքական խնդիրներն ու Ալեքսանդրի ժառանգության բաժանման համար ծագած կատաղի պայքարը ստիպեցին հրաժարվել Հյուսիսային Մերձսևծովյան երկրամասի վրա մակեդոնական տիրապետությունը տարածելու մտադրությունից, մանավանդ որ երկու արշավանքների փորձը ցույց տվեց նման ձևափոխման բարդ ու վտանգավոր լինելը:

Հյուսիսային Մերձսևծովյան երկրամասը մնաց անկախ, բայց այն չէր կարող շենթարկվել այն փոփոխություններին, որոնք տեղի ունեցան ամբողջ հունական աշխարհում: Այդ փոփոխությունները համընկան սոցիալական պայքարի սրման հետ ինչպես անկախ քաղաքներում, այնպես և Բոսպորյան թագավորությունում: Բացի այդ, Մերձսևծովյան շրջանների հունական քաղաքներում խորացավ պո-

լիսի ճգնաժամը, աճում էր շարքային քաղաքացիութեան սոցիալական շերտավորումն ու զանգվածային քայքայումը: Հյուսիսային Մերձսևծովյան երկրամասի քաղաքներում տեղի ունեցող շարժումների համար բնորոշ էին այն նույն պահանջները, որոնք առաջադրվում էին մետրոպոլիայի հունական քաղաքներում՝ պարտքերի բեկանումն ու հողի վերաբաժանումը: Այդ պահանջները հատուկ սրութեամբ հնչեցին Օլվիայում մ. թ. ա. 331 թ., երբ քաղաքը պաշարվեց Զոպիրիոնի կողմից: Օլվիական ավագանին ժողովրդական ապստամբությունը կանխելու նպատակով ստիպված եղավ բեկանել պարտքերը, քաղաքացիություն շնորհել Օլվիայում բնակվող օտարերկրացիներին ու ազատություն տալ բանակի շարքերը մտնող ստրուկներին:

#### ԲՈՍՊՈՐՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ Մ. Թ. Ա. III ԴԱՐՈՒՄ

Բոսպորյան թագավորությունում մ. թ. ա. IV դ. վերջին, Պերիսագեսի մահից հետո պայքար բռնկվեց նրա որդիներ Եվմելլոսի, Սատիրոսի ու Պրիտանիսի միջև: Եվմելլոսն ապստամբեց օրինական ժառանգ, իր ավագ եղբայր Սատիրոսի դեմ: Այդ երկպառակությանը միջամտեցին Բոսպորյան թագավորության կազմի մեջ մտնող տեղական ցեղերը: Եվմելլոսին պաշտպանեցին փատեյները: Նրանց առաջնորդ Արիփարնեսը օգնության բերեց քսան հազար հետևակից ու քսաներկու հազար հեծելազորից բաղկացած զորք: Սատիրոսի ռազմական ուժերը կազմված էին երկու հազար հույն վարձկաններից ու երկու հազար թրակիացիներից, ինչպես նաև նրան դաշնակցած սկյութների երեսուն հազարանոց բանակից: Սկսված պատերազմում Եվմելլոսի զորքը պարտություն կրեց Փատ գետի մոտ, մերձկուբանյան երկրամասում: Սատիրոսի հաղթանակում վճռական դեր խաղացին նրա սկյութ դաշնակիցները: Շուտով Սատիրոսն ընկավ մարտում: Պայքարը հանուն գահի փորձեց շարունակել Պրիտանիսը, բայց նա ստիպված էր իրեն պարտված ճանաչել ու փախչել Պանտիկապեոնից: Հետագայում նա սպանվեց Եվմելլոսի հրամանով: Բոսպորոսի թագավոր դարձավ Եվմելլոսը (մ. թ. ա. 310—304 թթ.): Զգտելով ձեռք բերել Բոսպորյան հասարակության տիրոջ խավի օժանդակությունն ու ցանկանալով հաղթահարել բուն մայրաքաղաքում եղած ընդդիմադրական տրամադրությունները, Եվմելլոսը մի շարք արտոնություններ տվեց Պանտիկապեոնի քաղաքացիներին, ազատեց նրանց ուղղակի տուրքերից, առևտրական մաքսերից ու վերականգնեց հին ինքնավարությունը:

Եվմելլոսի օրոք Բոսպորոսի արտաքին քաղաքական դրությունը կրկին ամրացավ: Նա կապեր ուներ Սինոպե ու Բյուզանդիոն հունա-

կան քաղաքների հետ: Նրա ժամանակ բոսպորյան նավատորմը զգալիորեն ուժեղացավ ու հաջող պայքար վարեց ծովահենների դեմ: Դիոգորոս Սիկիլիացին Եվմելոսին նկարագրում է որպես ընդարձակ նվաճումներ ծրագրող խոշոր քաղաքական գործչի:

Բոսպորյան թագավորության արտաքին քաղաքական ամուր կացութիւնը շարունակում էր պահպանվել նաև Եվմելոսի հաջորդ՝ Սպարտոկոս III-ի ժամանակ (մ. թ. ա. 303—283 թթ.): Բոսպորոսը նորից հաստատում է սերտ քաղաքական ու տնտեսական կապեր Աթենքի հետ՝ այդ հարաբերություններն ամրացվեցին պայմանագրի միջոցով: Պայմանագրում Սպարտոկոսը անվանվում էր «արքա», տիտղոս, որը նա (հնարավոր է, նաև Եվմելոսը) ընդունեց, ընդօրինակելով հելլենիստական կառավարիչներին: Նրան սկսեցին համարել ոչ միայն տեղական ցեղերի, այլև Բոսպորյան թագավորության կազմի մեջ մտնող հունական քաղաքների թագավոր: Պայմանագրով հաստատվում էին Աթենքի արտոնությունները, ինչպես նաև նախատեսվում էր Աթենքի կողմից ռազմական օգնություն Սպարտոկոսին այն դեպքում, եթե որևէ մեկը հարձակվեր նրա պետության վրա: Այդ պայմանագիրը վկայում է, որ Բոսպորյան պետության դրությունը վատանում էր, ու նա դաշնակիցների կարիք ուներ: Բայց Աթենքի վերաբերյալ նրա հույսերը շարդարացան, որովհետև Աթենքն ինքը սկսել էր անկում ապրել:

Սկսած մ. թ. ա. III դ. երկրորդ քառորդից Բոսպորյան պետությունը կրկին հանդիպում է դժվարությունների: Այն բանից հետո, երբ Աթենքը մ. թ. ա. III դ. կորցրեց իր նախկին քաղաքական ու տնտեսական նշանակությունը, Բոսպորոսը զրկվեց իր հացի հիմնական սպառողներից մեկից: Բոսպորյան հացի առևտրին էական վնաս հասցրեց Պտղոմեոսյան Եգիպտոսի բուռն տնտեսական զարգացումը, Եգիպտոսը դարձավ հացի գլխավոր մատակարարը Միջերկրական ծովի արևելյան մասում: Հայտնի է, որ Պերիսադես II-ը մ. թ. ա. 253 թ. դեսպանություն ուղարկեց Եգիպտոս, հավանաբար տրնտեսական ու քաղաքական բանակցություններ վարելու համար:

Վերջապես դիադոնների ավերիչ պատերազմները, իսկ հետո նաև գալատների ներխուժումը Բալկաններ ու Փոքր Ասիա խախտեցին հին կապերն ու առևտրական հարաբերությունները: Արտաքին առևտրի նեղացումը անդրադարձավ ներքին դրամաշրջանառության վրա: Պանտիկապեոնում դադարեց ոսկյա ու արծաթե դրամի հատումը, իսկ պղնձյա դրամի քաշը սկսեց պակասել: Արտաքին քաղաքական բարդությունները կապված էին ցեղերի նոր տեղաշարժերի հետ նաև բուն Հյուսիսային Մերձսևծովյան երկրամասում:

Յեղերի տեղաշարժերի համար խթան հանդիսացավ սկյուֆներին ազգակից սարմատների անցումը Տանախսով ու նրանց գաղթը դեպի արևմուտք՝ Մերձսևծովյան տափաստանները: Սարմատների այդ տեղաշարժերը կապված էին անասնապահության զարգացման, նոր արոտավայրերի պահանջի աճի հետ: Առանձնացած ցեղային ավագանին զգալի հարստություններ, հիմնականում անասուններ ունենալով, ձգտում էր ընդարձակել իր տիրությունների սահմանները, զավթել ստրուկներ, ստանալ ավար, այդ թվում՝ հունական ծագում ունեցող պերճանքի կարևոր առարկաներ: Հունական ապրանքներ ձեռք բերելու աճած ձգտումը նպաստեց սարմատների կողմից Հյուսիսային մերձսևծովյան երկրամասի քաղաքների հետ առևտրական, իսկ հետո նաև քաղաքական կապերի հաստատմանը: Հատկանշական է, որ այդ ժամանակ մեծ կարևորություն է ձեռք բերում ու հարստանում է հունական գաղութներից սարմատներին ամենից մոտ գտնվող Տանախսը:

Սարմատների տեղաշարժումը առաջ բերեց սկյուֆների կատաղի դիմադրությունը, բայց նրանք չկարողացան կանգնեցնել սարմատներին: Սարմատական առանձին ցեղեր ճեղքում էին պաշտպանությունը, ներխուժում սկյութական հողերի խորքն ու հաստատվում այնտեղ: Սկյութները մասամբ մնում էին իրենց պապենական տեղերում ու խառնվում սարմատների հետ, մասամբ էլ ստիպված էին լինում նահանջել դեպի արևմուտք ու հարավ՝ Ղրիմ: Սկյութների դրությունը բարդանում էր այն պատճառով, որ արևելքից հարձակվող սարմատների հետ միաժամանակ մ. թ. ա. III դ. արևմուտքից նրանց սկսեցին անհանգստացնել կելտական ցեղերը:

Այդ ժամանակ բուն սկյութական հասարակությունում տեղի ունեցան մեծ փոփոխություններ: Արդեն մ. թ. ա. IV դարից սկսած մի շարք վաշկատուն ցեղեր, ինչպես այդ մասին վկայում են հնագիտական հայտնագործումները, անցնում են նստակյաց կյանքի՝ հողագործությանը, գլխավորապես հացաբույսերի մշակմանը: Ընդարձակվում ու կատարելագործվում է սկյութական արհեստագործական արտադրությունը: Փոխվում են նաև սկյութների սոցիալական կարգերը՝ զարգանում է ստրկությունն ու խորանում է գույքային անհավասարությունը ազատ սկյութական բնակչության ներսում: Այդ ամենին զգալի շահով նպաստեցին սկյութների շփումն ու առևտուրը հունական քաղաքների հետ:

Դասակարգերի կազմավորման պրոցեսը հանգեցրեց Սկյութիայի ամենազարգացած մասում՝ Ղրիմում, մ. թ. ա. III դ. վերջում սկյութական մեծ պետության առաջացմանը: Հավանական է, որ

հարձակվող սարմատների դեմ մղած պատերազմը մեծացրեց ռազմական առաջնորդների քաղաքական ազդեցությունն ու նպաստեց սկյութական ավագանու համախմբմանը, արագացրեց նրա՝ ստորկատերերի դասակարգի վերածվելու պրոցեսը: Դա արագացրեց նաև Սկյութական պետության կաղամվորումը: Սկյութների Ղրիմյան պետության մայրաքաղաքն էր Նեապոլիսը, որը գտնվում էր ժամանակակից Սիմֆերոպոլի մոտ: Այն պաշտպանվում էր բերդապարսպով, որը մ. թ. ա. I դարում հասնում էր 8,5 մ լայնության: Դրանից բացի, քաղաքը պատնեշված էր մյուս, արտաքին, խրամին փոխարինող սյարսպով, որը զուգահեռ էր գլխավոր պարսպին: Մ. թ. ա. II դ. արտաքին (դրսի) պարսպի մոտ կառուցվեց դամբարան-մալդոլեյ, որտեղ թաղում էին սկյութ ազնվականներին: Ավելի ուշ ժամանակներում դամբարանի վրա կանգնեցվեց պահակային աշտարակ, իսկ դամբարանը պատնեշվեց պարիսպներով ու այսպիսով վերածվեց նախադարպասային ամրության: Սկյութական Նեապոլիսի պաշտպանական կառուցումների մնացորդները վկայում են ըսկյութների ինքնատիպ շինարարական արվեստի ու ամրաշինական տեխնիկայի բարձր մակարդակի մասին: Նեապոլիսը ոչ միայն առաջնակարգ ամրոց ու սկյութական պետության մայրաքաղաքն էր, այլ նաև Սկյութիայի կարևոր արտադրական կենտրոնը: Հնագետները չաշտնաբերել են արհեստավորական արհեստանոցների մնացորդներ. հատկապես շատ են բրուտագործական արհեստանոցները: Միևնույն ժամանակ քաղաքն ուներ նաև ագրարային բնույթ, դրա մասին են վկայում երկանքների ու հացահատիկի հորերի բազմաթիվ հայտնագործումները: Վեց հորերում հայտնաբերվել է ցորենի Քաղաքում, բացի հիմնական սկյութատավրյան բնակչությունից, բնակվում էին նաև հույներ: Վերջիններս զանազան կարգի արհեստավորներ, վարպետներ, վաճառականներ, անգամ սկյութական թագավորների մոտ ծառայող անձինք էին: Այսպես, օրինակ, մի ոմն հոռոցսի Պոսիդիոսի նվիրաբերական արձանագրությունից հետևում է, որ սկյութական թագավոր Սկիլուրոսի հանձնարարությունը նա, իբրև նավարրոս, ծովահեններից պաշտպանում էր Օլվիա տանող ծովային ճանապարհը:

Սկյութական Նեապոլիսի հնագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ սկյութները լայն առևտուր էին վարում հելլենիստական աշխարհի մի շարք հունական քաղաքների հետ: Պեղումների ժամանակ գտնված են շինվածքներ Աթենքից, Հոռոցսից, Պերգամոսից ու անգամ Պտղոմեոսյան Եգիպտոսից: Իր բարձրագույն ծաղկմանը սկյութական պետությունը հասավ մ. թ. ա. II դ. թագավոր Սկիլուրոսի օրոք: Օլվիական փողերանոցում ձեռնարկվե-

ցին սկյութական դրամներ հատելու առաջին փորձերը, թեև դրանք հատվում էին հունական նմուշներով ու հունական արձանագրութիւններով:

Սկյութական թագավորների արտաքին քաղաքականութիւնը զարգանում էր երկու ուղղութիւններով՝ դեպի հյուսիս, որտեղ այն գերազանցապէս կրում էր պաշտպանողական բնույթ ու նպատակ ուներ կանգնեցնել սարմատների առաջխաղացումը կամ վերադարձնել նրանց զավթած հողերի մի մասը և դեպի հարավ՝ ծովափ: Այստեղ սկյութները ձգտում էին զավթել մերձծովյան մարզերը՝ հունական առևտրական քաղաքներով հանդերձ: Սկյութական ստրկատիրական աճող պետութիւնի շահերը պահանջում էին գրավել դեպի բաց ծովը տանող ելքերը:

ՍԿՈՒԹՆԵՐԻ ՉԱՐՁԱԿՈՒՄԸ ՀՈՒՆԱԿԱՆ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ  
ՄԵՐՁՍԵՎՇՈՎՅԱՆ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՎՐԱ Մ. Ք. Ա. III—II ԴԴ.

Սարմատների ու այլ ցեղերի ճնշումն իրենց վրա զգացին ինչպէս Բոսպորյան թագավորութիւնը, այնպէս և Հյուսիսային մերձսևծովյան երկրամասի անկախ քաղաքները: Ցեղերի տեղաշարժերը խարխլեցին գոյացած հին առևտրական կապերը. դրա արդյունքը եղավ ոչ միայն առևտրի անկումը, այլև զգալի շափով՝ ներքին մերձսևծովյան շուկաների պահանջները սպասարկող արհեստավորական արտադրութիւնի կրճատումը: Ցեղերի տեղափոխութիւնների հետևանքը եղավ Բոսպորոսի տարածքային տիրույթների կրճատումը ու ցանքատարածութիւնների մի մասի կորուստը: Դա նվազեցրեց երկրի տնտեսական միջոցները:

Պոլիբիոսը հյուսիսսևծովյան քաղաքների առևտրի մասին խոսելիս, թվարկում է այն ապրանքները, որոնք արտահանվում էին Պոնտոսից՝ անասուններ, ստրուկներ, մորթեղեն, մոմ, աղը դրած ձուկ: Ինչ վերաբերում էր հացին, ապա այն հաճախ արտահանվում, իսկ երբեմն էլ, ընդհակառակը, ներմուծվում էր Պոնտոս (IV, 2, 4—5): Պոլիբիոսի կողմից մ. թ. ա. II դարում նկարագրված վիճակը բնորոշ էր նաև մ. թ. ա. III դ. վերջին ու այն կարելի է տարածել ոչ միայն Բոսպորյան թագավորութիւնի քաղաքների, այլև բոլոր հյուսիսսևծովյան հունական գաղութների վրա ընդհանրապէս: Բոսպորյան թագավորները մ. թ. ա. IV դարի համար ավանդական հարձակողական քաղաքականութիւնից անցնում են պաշտպանութիւն: Վերջապէս Սկյութական պետութիւնի առաջացումն իսկ Ղրիմի կենտրոնում փոխում էր քաղաքական իրադրութիւնը Մերձսևծովյան երկրամասում. դա ստիպում էր Բոսպորյան թագավորներին հաշվի նստել այդ ուժի հետ:

Մ. Թ. ա. III դ. երկրորդ կեսից սկսվում է քոչվոր ցեղերի գրոհը Օլվիայի ու Քերսոնեսոսի վրա: Սկյութներն ու որոշ սարմատական ցեղեր հարձակվելով Օլվիայի վրա, զավթում էին նրա հողերը՝ քաղաքն առնելով շրջապատման օղակի մեջ: Օլվիան ստիպված էր տուրք վճարել այդ ցեղերի առաջնորդներին տրվող «ընծաների» ձևով, սակայն դա չէր փրկում նրան նոր հարձակման վտանգից: Այդ հարձակումների հետևանքով հրեմն ընդհատվում էր քաղաքի մատակարարումը գյուղատնտեսական մթերքներով, ու Օլվիայում սկսվում էր իսկական սով, հատկապես անբերրի տարիներին: Օլվիացի Պրոտոգենոսի պատվին հրատարակված մի դեկրետից (հարուստ Պրոտոգենոսն օգնեց ժողովրդին պատերազմի ու անբերրիության ժամանակ) մենք տեղեկանում ենք այն մասին, որ այդ շրջանում Օլվիան հաճախ գտնվում էր շատ ծանր վիճակում: Օլվիացիները ստիպված էին միշտ հոգ տանել քաղաքը հացով մատակարարելու ու նրա պաշտպանական ամրությունները կարգին վիճակում պահելու մասին: Պետական միջոցների պակասը հաճախ հարկադրում էր նրանց դիմել հարուստ քաղաքացիների, այդ թվում նաև Պրոտոգենոսի օգնությանը:

Վերջապես մ. Թ. ա. II դ. կեսին Օլվիան այլևս ուժ չունենալով պայքարելու հարձակվող քոչվորների դեմ, անցավ սկյութական թագավոր Սկիլուրոսի իշխանության ներքո: Անկախությունը միայն զոհաբերելով, օլվիացիները ազատվեցին իրենց ահեղ հարևանների հարձակումների մշտական սպառնալիքից. օլվիական ավազանին անգամ որոշ օգուտներ քաղեց դրանից՝ արհեստավորական, մասնավորապես զինագործական արհեստանոցների տերերն այժմ պատվերներ էին ստանում սկյութներից, իսկ առևտրականները ձեռք էին բերում նոր, ավելի ընդարձակ շուկաներ ներքին Ղրիմում ու հավանաբար սկյութներից ստանում էին առևտրական արտոնություններ:

Սկյութական պետությունը, հսկողություն սահմանելով Օլվիայի վրա, փորձեց տիրել նաև Քերսոնեսոսին: Սակայն այստեղ այն հանդիպեց վճռական դիմադրության. քերսոնեսցիները սկսեցին համառ պայքար հանուն անկախության: Նրանք դաշնակցեցին սկյութների թշնամիներին՝ սարմատական ցեղերի հետ, և դա միառժամանակ կանգնեցրեց սկյութական հարձակումը: Քերսոնեսոսը մ. Թ. ա. II դ. սկզբին ձեռք բերեց նոր դաշնակից՝ ի դեմս պոնտական թագավոր Փառնակեսի: Մ. Թ. ա. 179 թ. Փառնակեսի ու Քերսոնեսոսի միջև կնքվեց բարեկամության ու փոխօգնության պայմանագիր: Մեզ հայտնի չէ, թե ինչում արտահայտվեց Պոնտական թագավորի Քերսոնեսոսին ցույց տված իրական օգնությունը, բայց գի-



տենք, որ սարմատները վճռականորեն պաշտպանեցին Քերտոնեսոսին Բագղեմ սկյութներին: Այդ ամենը Քերտոնեսոսին թույլ տվեց եւ մի քանի տասնամյակ պահպանել իր անկախությունը:

Ըն վերաբերում է Բոսպորյան թագավորությանը, ապա քաղաքակաւն Նարաբերական կայունացումը, որը տեղի ունեցավ հելլենիստական աշխարհում և որը խոշոր հելլենիստական միասնատությունների ծաղկման արգասիքն էր, թույլ տվեց Բոսպորյան պետությանը նորից առևտուր անել մի շարք հունական քաղաքների հետ: Բոսպորյան արտահանման գլխավոր առարկան, ինչպես նախկինում, հայն էր, թևև, հավանաբար, այն արտահանվում էր ավելի փոքր քանակությամբ, քան մ. թ. ա. IV դ.: Այդ ժամանակ գտնվեցին բոսպորյան հացի նոր գնորդներ, գլխավորապես ի դեմս հարավպոնտական քաղաքների, որոնց մեջ առաջին տեղն էր գրավում Սինոպեն. նրա վրա շուրջ մերձսևծովյան հացը ներմուծվում էր Պոնտական թագավորության ներքին շրջանները: Նույն ժամանակ Բոսպորյան թագավորությանը նշանակալից շուկա դարձավ Պոնտական Հերակլեայի, Հոռոսի համար, իսկ մ. թ. ա. II դարից սկսած՝ գնալով ավելի ընդարձակվում են նրա առևտրական կապերը Սինոպի հետ, հատկապես այն բանից հետո, երբ վերջինս դարձավ Պոնտական թագավորության մայրաքաղաք: Հյուսիսային մերձսևծովյան երկրամասի հունական քաղաքների տնտեսական կապերը Պոնտական թագավորության հետ պայմանավորեցին հետագայում նաև ներքանց քաղաքական մերձեցումը:

Սակայն հունական աշխարհի հետ առևտրական կապերի վերականգնումը չէր կարող վճռական դեր խաղալ Բոսպորյան թագավորության ճակատագրում: Հյուսիսային մերձսևծովյան երկրամասում մ. թ. ա. II դ. կեսերին լրջորեն բարդացավ ինչպես ներքին կացությունը, այնպես և արտաքին քաղաքական իրավիճակը: Դժբախտաբար մեր տեղեկությունները այդ ժամանակաշրջանի անցքերի մասին շատ աղքատիկ են: Կարելի է միայն ասել, որ Բոսպորյան թագավորությունում երկպառակտիչ պատերազմ վերսկսվեց հանուն գահի, ու ծայրահեղորեն սրվեցին սոցիալական հակասությունները: Թագավորության ֆինանսական դրությունը խիստ վատացավ, որովհետև եկամտի գլխավոր աղբյուրը՝ առևտրական մաքսերը մեծ չէին, դրանք չէին կարող ծածկել աճող ծախսերը, որոնք կատարվում էին վարձկաններին ու նավատորմը պահելու համար: Բոսպորյան թագավորության ներսում եղած երկպառակություններից ու նրա ռազմական հզորության անկումից օգտվեցին սկյութները՝ վերսկսելով իրենց հարձակումը հունական քաղաքների վրա: Պայքարը սկյութների դեմ պահանջում էր մեծ միջոցներ. այն կործանարար

ազդեցութիւնն էր գործում բոսպորյան քաղաքների տնտեսութեան վրա ու խախտում էր նրանց առևտրական կապերը: Իսկ ծովում զարգանում էր ծովահենութիւնը: Ծովահենները կողոպտում էին առևտրական նավերն ու հարձակվում էին ծովափի վրա՝ ավերելով այստեղի բնակավայրերը: Բոսպորյան թագավորները ոչ միայն ի վիճակի չէին ծովը մաքրել ծովահեններից, այլև անգամ հաճախ իրենք էին օժանդակում նրանց, հնարավորութիւն տալով ծովահենների թևին ու շարժունակ նավերին՝ «կամարաներին» մտնել բոսպորյան նավահանգիստներն ու վաճառել թալանած ավարը:

ՀՅՈՒՄԻՍՍԵՎՇՈՎՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐՆ ՈՒ ՄԻՀՐԻԱՏ VI ԵՎՊԱՏՈՐԸ:  
ԲՈՍՊՈՐՈՍԻ ՄԻԱՅՈՒՄԸ ՊՈՆՏՈՍԻՆ

Մ. թ. ա. II դ. վերջին սկյութները կրկին արշավեցին Քերսոնեստսի վրա: Նրանք գրավեցին Քերսոնեստսի՝ Ղրիմի արևմտյան ափում գտնվող բոլոր տիրույթները դրանց ամրացված կետերով հանդերձ, իսկ հետո ընդհուպ մոտեցան քաղաքի պարիսպներին: Քերսոնեստսի բնակիչները հույս չդնելով Բոսպորյան թագավորութեան օգնութեան վրա (Բոսպորոսին սպառնում էին նույն սկյութները), դիմեցին իրենց վաղեմի դաշնակից Պոնտական թագավորութեանը, որն այդ ժամանակ դարձավ խոշորագույն պետութիւն Փոքր Ասիայում: Պոնտական թագավոր Միհրդատ Եվպատորն այդ առաջարկի մեջ տեսավ Հյուսիսային մերձսևծովյան երկրամասի վրա իր քաղաքական ազդեցութիւնը տարածելու մի առիթ ու մ. թ. ա. 110 թ. քերսոնեսցիներին օգնութեան ուղարկեց մեծ բանակ զորավար Դիոփանտոսի գլխավորութեամբ:

Դիոփանտոսի կողմից սկյութների դեմ մղած պատերազմի պատմութիւնն ու բուն Բոսպորյան թագավորութիւնում տեղի ունեցած անցքերը մեզ հայտնի են Դիոփանտոսի բրոնզյա արձանի պատվանդանի վրա փորագրված ընդարձակ արձանագրութիւնից: Այդ արձանը կանգնեցվեց Դիոփանտոսին երախտապարտ քերսոնեսցիների կողմից՝ սկյութներից քաղաքը փրկելու համար: Հակիրճ տեղեկութիւններ այդ պատերազմի մասին մեզ տալիս է մ. թ. II դ. պատմագիր Ապպիանոսը: Արձանագրութիւնից հետևում է, որ Դիոփանտոսը Քերսոնեստսում ափ իջնելով, շարժվեց թագավոր Պալլակեսի գլխավորած սկյութների դեմ ու գլխովին ջախջախեց նրանց: Նա իր բանակն ուղղեց սկյութների դաշնակից տավրերի դեմ, քանդեց նրանց ամրոցներն ու տավրերին քչեց լեռները: Ամրացնելով Քերսոնեստսի՝ Ղրիմի արևմտյան ափում գտնվող բնակավայրերից մեկը, Դիոփանտոսը այն անվանեց Եվպատորիա ու պոնտական տիրապետութեան հենակետ դարձրեց Ղրիմի այդ մա-

սում: Դրանից հետո, հավանաբար, Բոսպորյան թագավոր Պերիսադեսի հրավերով (վերջինս արդեն ի վիճակի չէր պայքարել «նախկինի համեմատութեամբ ավելի մեծ շահով տուրք պահանջող» սկյութների դեմ) Դիոփանտոսը շարժվեց Բոսպորոսի վրա ու ջախջախեց Պանտիկապոնին նեղող սկյութական բանակը:

Պատերազմը սկյութների դեմ տևեց երկու տարի: Ավարտելով այն, Դիոփանտոսն իր բանակով վերադարձավ Պոնտոս: Իսկ սկյութները պարտութունից ուշքի գալով, վերսկսեցին հարձակումը Քերսոնեսոսի դեմ: Քերսոնեսցիները կրկին դիմեցին Միհրդատին, և նա նորից նրանց օգնության ուղարկեց Դիոփանտոսին: Պոնտական զորավարը քչեց սկյութներին Քերսոնեսոսի շրջակայքից ու քաղաքին վերադարձրեց նրա կորցրած ամրոցները: Այդ ժամանակ Պալլակեսը դաշինք կնքեց Դնեսպրի ու Դոնի միջև ապրող ռոկսոլանների ցեղի հետ ու հսկայական բանակով շարժվեց Քերսոնեսոսի վրա: Տեղի ունեցած մեծ ճակատամարտում սկյութները ու նրանց դաշնակիցները նորից ջախջախվեցին և նահանջեցին: Այժմ Դիոփանտոսն ու քերսոնեսյան զորքն իրենց հերթին ներխուժեցին բուն Սկյութիայի խորքն ու գրավեցին նեապոլիսը: Զախջախված սկյութները ցած գրեցին զենքը ու ճանաչեցին Միհրդատ Եվպատորի իշխանությունը:

Զարդելով սկյութներին, Դիոփանտոսը շարժվեց դեպի Բոսպորոս: Սպարտոկյանների դինաստիային պատկանող վերջին բոսպորյան թագավոր Պերիսադեսը կամովին հրաժարվեց գահից հօգուտ պոնտական թագավորի: Դրա պատճառը ոչ միայն այն էր, որ կառավարող բոսպորյան ավագանին Պերիսագեսի գլխավորութեամբ ի վիճակի չէր դիմադրել սկյութներին և սկյութական տիրապետությանը գերադասում էր հելլենիստական թագավորության իշխանությունը, որովհետև վերջինս կպահպաներ այդ ավագանու նախկին արտոնյալ դիրքը, այլև այն, որ դասակարգային հակասություններն ու սոցիալական պայքարը Բոսպորոսում հասան այնպիսի սրության, որ Բոսպորոսի տիրող դասակարգն արդեն ի վիճակի չէր սեփական ուժերով հաղթահարել դրանք:

#### ՍԱՎՄԱԿՈՍԻ ԱՊՍԱՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Դիոփանտոսը դեռ չէր հասցրել հեռանալ Պանտիկապոնից, երբ այնտեղ բռնկվեց ապստամբություն, որի գլուխ կանգնեց Սավմակոսը: Այդ ապստամբության պատմությունը լուսաբանող մեր գլխավոր աղբյուրը՝ Դիոփանտոսի պատմիչն վիճաբար արձանագրությունը, շատ լակոնիկ ու ժլատ կերպով խոսում է նրա մասին: Դրա

հետ մեկտեղ արձանագրութիւնը հենց այդ հատվածում մի փոքր վնասված է, իսկ դա դժվարեցնում է նրա ընկալումը: Արձանագրութիւնն ասում է՝ «...ստրուկները Սավմակոսի գլխավորութեամբ կատարեցին պետական հեղաշրջում» (բառացիորեն՝ բարձրացրեցին ապստամբութիւն): Վիճելի է այն հարցը, թե ո՞վ էր Սավմակոսը՝ ազատ մարդ, թե ստրուկ: Սակայն պատմական տեքստի վերլուծութիւնը խոսում է այն մասին, որ Սավմակոսը ավելի շուտ թագավորական ստրուկ էր: Մ. թ. ա. 107 թ. Բոսպորոսում ծագած ապստամբութիւնը տեղական, իր մեծամասնութեամբ սկյութական ճնշված գյուղական բնակչութեան, քաղաքային ստորին խավերի ու ստրուկների ապստամբութիւն էր: Ապստամբները սպանեցին Պերիսադեսին, գրավեցին Պանտիկապոնն ու Թեոդոսիան: Դիոփանտոսը փրկվեց՝ փախչելով քերսոնեսյան նավով:

Ապստամբութիւնն ընդգրկեց Բոսպորոսյան թագավորութեան ամբողջ եվրոպական տարածքը: Ապստամբութիւնը ճնշելու նպատակով Միհրդատը մեծ բանակ ու նավատորմիդ ուղարկեց այն ըսկըսվելուց մոտավորապէս կես տարի անց: Դրանց հրամանատարն էր նույն Դիոփանտոսը: Պոնտական վարձկանների կանոնավոր բանակին, որը, ըստ երևույթին, քանակապէս ավելի մեծ էր, քան ապստամբների ուժերը, հաջողվեց վերցնել Պանտիկապոնն ու Թեոդոսիան և ճնշել ապստամբութիւնը: Սավմակոսը գերի վերցվեց և ուղարկվեց Պոնտոս, որտեղ հավանաբար նրան ենթարկեցին մահապատժի:

Միհրդատի իշխանութիւնը Բոսպորոսում վերականգնվեց. այն այժմ տարածվեց Քերսոնեսոսի ու Օլվիայի վրա: Մերձսևծովյան տափաստաններում՝ Դոնից մինչև Դանուբ, Միհրդատի տիրույթների մոտ ապրող ցեղերը կամ ճանաչեցին նրա իշխանութիւնը, կամ էլ դարձան նրա դաշնակիցները: Պոնտական թագավորի տիրապետութիւնն այդ վայրերում պահպանվեց մինչև մ. թ. ա. I դարի 60-ական թվականների վերջը, երբ հռոմայեցիների կողմից ջախջախված Միհրդատը փախավ Բոսպորոս, հուշս ունենալով այստեղ գտնել նոր ուժեր Հոռմի դեմ պայքարը շարունակելու համար: Սակայն բոսպորոսյան քաղաքների՝ նրա դեմ ծագած ապստամբութիւնը, ինչպէս նաև հռոմեացիների կողմն անցած նրա որդի Փառնակեսի դավաճանութիւնն ու վարձկանների բանակում սկսված հուզումները անհնարին դարձրեցին հետագա պայքարը Հոռմի դեմ: Միհրդատը վախենալով, որ իրեն կհանձնեն հռոմայեցիներին, ինքնասպանութիւն գործեց: Նրա մահով տապալվեց նաև Պոնտական թագավորութեան տիրապետութիւնը Հյուսիսային մերձսևծովյան երկրամասում:

Հյուսիսային մերձսևծովյան մարզերի հետագա ճակատագիրը՝ արդեն կապված էր Արևելյան Միջերկրականում Հոռմի տիրապետության հաստատման հետ:

## Գլուխ 21. ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՃԳՆԱԺԱՄՆ ՈՒ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ Մ. Ք. Ա. II ԳԱՐՈՒՄ

Մ. թ. ա. II—I դարերում հելլենիստական աշխարհի պատմությունն ուսումնասիրելու համար կարող ենք օգտագործել մի քանի տեսակի աղբյուրներ: Ընդհանուր է, դրանք տարբեր շափով են լուսաբանում առանձին երկրների պատմությունը: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Եգիպտոսում գտնված բազմաթիվ հունական ու դեմոտական պապիրուսները, որոնք տվյալներ են պարունակում հելլենիստական Եգիպտոսի տնտեսական կյանքի, հասարակական ու պետական կառուցվածքի, ինչպես և մշակույթի մասին: Ասիայի ու Եվրոպայի հելլենիստական պետությունների պատմության համար մեծ նշանակություն ունեն վիմագրությունները: Շատ արժեքավոր են հնագիտական պեղումների նյութերը, որոնք լույս են սփռում այդ ժամանակաշրջանի մշակույթի, տեխնիկայի, գիտության, արվեստի ու կրոնի պատմության վրա:

Ասորիքից արևելք ընկած հելլենիստական երկրների պատմությունը, քոչվորների կողմից Բակտրիայի, իսկ Պարթևաստանի կողմից՝ Միջագետքի ու հարակից մարզերի նվաճման պատմությունը քիչ է ուսումնասիրված, որովհետև որևէ կապակցված պատմողական երկ այդ անցքերի վերաբերյալ մեզ չի հասել: Ավելի լավ է հայտնի այն հելլենիստական երկրների պատմությունը, որոնք անմիջականորեն հարում էին Միջերկրական ծովին ու հետագայում նվաճվեցին Հոռմի կողմից: Պատերազմներն ու դրանց հետ կապված անցքերը նկարագրել են հռոմեական պատմիչները, հատկապես՝ Տիտոս Լիվիոսը: Սելևկյանների պատմությունը համեմատաբար հանգամանորեն նկարագրում է մ. թ. II դ. հունական պատմագիր Ապպիանոսը: Գարաշրջանի ընդհանուր նկարագիրը տվել է Հուստինոսը, արժեքավոր տեղեկություններ է պահպանել Ստրաբոնը: Մ. թ. ա. II դ. պատմության վերաբերյալ մեծաքանակ նյութ կա Պոլիբիոսի «Ընդհանուր պատմության» մեջ: Նա իր նկարագրած անցքերի ժամանակակիցն էր: Նրա աշխատությունը մ. թ. ա. III դ. վերջը ու մ. թ. ա. II դ. մեծ մասը ընդգրկող ժամանակաշրջանի հելլենիստական աշխարհի պատմության կարևորագույն գրական աղբյուրն է:

Հելլենիստական պետությունների կարճատև տնտեսական վերելքը մ. թ. ա. III դարում ու դրա վրա հիմնված նրանց ռազմական ու քաղաքական հզորությունը մ. թ. ա. II դարում փոխարինվեցին նրանց սկզբում գանդաղ, իսկ հետո ավելի արագ խորացող սոցիալ-տնտեսական ու քաղաքական ճգնաժամով: Այդ ճգնաժամն անխուսափելի էր, քանի որ հելլենիստական պետությունների ծաղկումը խարսխված էր նվաճված տարածքների շահագործման ու կոդուպուտի վրա: Թեև իրավական տեսակետից այդ տարածքների բնակչության հիմնական մասը համարվում էր ազատ, իրականում այն գտնվում էր կախյալ վիճակում: Ստրկատիրական հասարակության պայմաններում նա հաճախ շահագործվում էր ստրուկների հետ համահավասար: Գյուղացիների ու արհեստավորների սնանկացումն ուղեկցվում էր դասակարգային պայքարի խիստ սրումով, այն հաճախ ընդունում էր անկախության համար մղվող պայքարի, հելլենների (այդ անունով սովորաբար նշվում էր ինչպես օտար, այնպես և տեղացի ստրկատերերից կազմված տիրող դասակարգը) դեմ ուղղված պայքարի ձև: Տեղի էին ունենում շքավորների ու ստրուկների ապստամբություններ, ամբողջ մարդեր հայտարարվում էին անկախ: Առանձին մարզերում առաջանում էին նոր պետություններ, որոնց գլուխ վերջ ի վերջո, մասսայական ժողովրդական ապստամբություններն օգտագործելով, կանգնում էր տեղական ավագանու ու քրմության այն մասը, որն այս կամ այն պատճառով խզում էր կապերը հելլենների հետ ու փորձում էր ինքնուրույն շահագործել հայրենակիցներին:

Գրությունը բուն Հունաստանում, որը գտնվում էր Մակեդոնիայի փաստական վերահսկողության ներքո, նույնպես ծանր էր: Շարունակվում էր Արևելքում բախտ որոնող բնակչության տարհոսքը: Գուլքային շերտավորման ուժեղացման ու ստրուկների քանակի աճի արդյունքը եղան շքավորների և ստրուկների համատեղ էլուլթները, ինչպես դա տեղի ունեցավ, օրինակ, Սպարտայում: Մակեդոնիայի ներքին վիճակի մասին մենք քիչ բան գիտենք: Սակայն այն նույնպես բացառություն չէր կազմում, այդ երկիրը ևս ենթարկվեց հելլենիստական աշխարհի ընդհանուր ճգնաժամի ներգործությանը:

Հելլենիստական պետություններն ավելի արագորեն թեքվում էին դեպի անկում, իսկ նույն ժամանակ նրանց արևմտյան ու արև-վելյան հարևանները՝ Հռոմեական ստրկատիրական հանրապետությունն Իտալիայում ու Պարթևական ստրկատիրական բնապետությունը Իրանի տարածքում և նրան հարող մարզերում գնալով հզորանում էին:

Հոռմը իր նվաճողական նպատակներով օգտագործեց դասակարգային ու քաղաքական հակասությունները Բալկանյան թերակղզում և տեղական կառավարությունների աճող անընդունակությունը հաջողութամբ պաշտպանելու ստրկատերերի շահերը, ինչպես նաև օգտագործեց հույների ավանդական թշնամանքը Մակեդոնիայի հանդեպ:

Պարթևաստանը, որն առաջացավ մ. թ. ա. III դ. կեսին, ցեղերի՝ Սելևկյանների տիրապետության դեմ ուղղված վիթխարի ապստամբության հետևանքով, տեղական ճնշված բնակչության զանգվածների կողմից դիտվում էր իբրև մի ուժ, որը կարող էր ազատել նրանց «Նելլեների» իշխանութունից: Պարթևական թագավորները, բարենպաստ միջազգային իրադրությունն օգտագործելով, գանդաղորեն ընդարձակում էին իրենց տերության տարածքը՝ արևելքից մոտենալով Սելևկյան Միջագետքի սահմաններին:

#### ԵԳԻՊՏՈՍԸ Մ. Թ. Ա. II ԴԱՐՈՒՄ

Եգիպտոսում ընթացող կատաղի դասակարգային պայքարն արտահայտվում էր արքունական հողագործների, արհեստավորների ու ռազմիկների, ստորին կարգին պատկանող եգիպտացիների (մաքիմոս) զանգվածային ապստամբությունների, նրանց կողմից աշխատանքը լքելու, գյուղերից փախչելու ձևերով: Ստրկատիրական կարգերի պայմաններում այդ խավերի շահագործումն ընդունեց հրեշավոր շափեր: Թագավորական հողերն արագորեն ամայանում էին: Ընդհակառակը, ուժեղանում էին մասնավոր հողատիրության տարրերը կլերուքների հողերում: Կրացուցիչ արտոնություններ էին ստանում տաճարային հողերի տերերը: Ընծայված խոշոր տիրույթների մասին մ. թ. ա. II դ. տեղեկություններ չկան, բայց արտոնյալ հողերի բոլոր տեսակները (այդ հողերը ստացան զիջված հողի ընդհանուր անվանում) հակադրվում էին աստիճանաբար կրճատվող թագավորական հողին: Մասնավոր արտադրության ու առևտրի աճի հետևանքով սկսեցին իրենց նշանակությունը կորցնել թագավորական արհեստավորական ու առևտրական մենաշնորհները, առաջին հերթին՝ մանածագործական ապրանքների համար տրվող մենաշնորհը: Ավելի կայուն էր բուսայուղի համար տրամադրված մենաշնորհը:

Պտղոմեոսյան կառավարությունն ուժեղացրեց ռազմավարական ու ֆինանսական ապարատը, 5-ից մինչև 10 տոկոս բարձրացրեց հարկերի ու մենաշնորհների կապալառուներին տրվող վարձատրության չափը, ստեղծեց նոր վարչություն, որը պետք է տնօրիներ տարբեր տեսակի արտակարգ արքունական եկամուտներն ու

մուծումները, տուգանքները, լքյալ ու անժառանգ հողերը և այլն: Բայց արդեն հնարավոր չէ կանգնեցնել երկրի անկումը, որը հյուծվել էր նրանից մի ամբողջ դարի ընթացքում անընդհատ միջոցներ կորզելու հետևանքով: Շատ լքված գյուղեր, որոնց բնակչությունը փախչում էր հարկերից ու պարտույթներից, ծածկում էր անապատի ավազը:

Մ. թ. ա. II դ. 70-ական թվականներին տեղի ունեցավ Լգիպտացի զինվորների բավական խոշոր ապստամբություն, որին օժանդակեցին խորաչի գյուղացիներն ու արհեստավորները: Ապստամբությունը սկսվեց Ալեքսանդրիայի շրջակայքում, Լգիպտական ծագում ունեցող պտղոմեոսյան մեծատոհմիկ Դիոնիսիոս Պետոսարապիսի ղեկավարությամբ: Ալեքսանդրիայի մոտակայքում կրած պարտությունից հետո Դիոնիսիոս Պետոսարապիսն իր ողջ մնացած կողմնակիցներով լողալով անցավ Նեղոսի գետաբազուկին ու ապաստան գտավ խորաչում, որտեղ ապստամբեցին ջուլհակներն ու այլ արհեստավորներ: Ապստամբության կենտրոնը դարձավ Պանոպոլիս քաղաքը: Բնակչության ծանր վիճակը, արքունական հողերի ամայանալը, անմարդաբնակ դառնալը վառ կերպով նկարագրված են մեզ հասած այն հրահանգչական նամակներում, որոնք հասցեագրված էին տեղական ֆինանսական պաշտոնյաներին: Եգիպտոսի այն ժամանակվա ֆինանսական վարչության պետ գիոլյետես Զերոգեսի կողմից այդ նամակները թվագրված են մ. թ. ա. 164 թվականով: Կառավարությունը փորձում էր ելք գտնել ծանր տնտեսական կացությունից՝ սահմանելով արքունական հողերի պարտադիր վարձակալությունը, մի բան, որ առաջացրեց ապստամբությունների նոր ալիք:

Եռանդուն կառավարիչ Պտղոմեոս VII-ը, որը գործում էր մ. թ. ա. II դ. կեսերին ու երկրորդ կեսին, ավելի մեծ շահով, քան նրա նախորդները, փորձում էր հենվել տեղական ծագում ունեցող տիրող դասակարգի ներկայացուցիչների՝ բրմության, պաշտոնյաների, զինվորականների վրա (այս կապակցությամբ հունական ավանդությունը վերագրում է նրան սոսկ բացասական գծեր): Դա մի համարձակ խուսանավում էր, որի նպատակը հելլենիստական պետության ամրապնդումն էր Եգիպտոսում, սակայն այն նույնպես չունեցավ ակնկալվող արդյունքը, որովհետև երկիրն այդ ժամանակ արդեն լիովին հյուծվել էր: Այժմ հունա-մակեդոնական ու տեղական ստրկատերերին ավելի մեծ շահով, քան առաջ, միավորում էին իրենց սեփականության պաշտպանության շահերը, սեփականություն, որն ամրապնդվում ու ընդարձակվում էր ի վնաս թագավորականի: Իսկ Պտղոմեոսները բանակի թուլացման ու ամբողջ



երկրում դասակարգային պայքարի սրման հետևանքով արդեն ի վիճակի չէին երաշխավորել ստրկատիրական սեփականության վրաստահելի պաշտպանությունը:

Ամբողջ Եգիպտոսում տիրող ծանր տնտեսական ու քաղաքական իրավիճակը, սուր դասակարգային պայքարն ու միաժամանակ մասնավոր սեփականատիրական հարաբերությունների զարգացումը՝ թագավորական տնտեսության կրճատմամբ հանդերձ լավ լուսաբանված են այսպես կոչված «Թագավոր Պտղոմեոսի ու երկու Կլեոպատրա թագուհիների՝ բրոջ ու կնոջ մարդասիրության դեկրետներում» (մ. թ. ա. 118 թ.): «Մարդասիրության դեկրետների» պապիրուսի վրա գրված պատճենները հասել են մեզ, որոնք ծանոթացնում են Պտղոմեոսների ներքին քաղաքականության մեթոդներին մ. թ. ա. II դ.: Այդ քաղաքականությունն անփոփոխ էր՝ սկզբում ուժի գործադրում, դաժան հալածանքներ, իսկ հետագայում, այդ միջոցառումների անհաջողությունից հետո, երբ երկիրն էլ ավելի ամայանում էր՝ «Մարդասիրության դեկրետներ», այսինքն ներում ապրստամբներին, ապառքների հանում (այդ ապառքները կառավարությունը փաստորեն ստանալ չէր կարող), գանգատներ ու սպառնալիքներ շարաշահումներում մեղավոր պաշտոնյաների հասցեով և աղքատացած շինականներին ու արհեստավորներին ուղղված կոչեր, ուր նրանց առաջարկվում էր վերսկսել իրենց պարտությունների կատարումը:

ՍԵԼԵՎԿՅԱՆՆԵՐԻ ՊՆՏՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՄԻՋԱՋԿԱՅԻՆ ԻՐԱԿՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՄԵՐՋԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ Մ. Թ. Ա. II ԴԱՐՈՒՄ

Սելևկյանների պետության ներքին դրությունը, ըստ էության, նմանվում էր Եգիպտոսի վիճակին: Իր տարածքով լինելով ավելի մեծ ու իր կազմով ավելի խայտաբղետ, քան Եգիպտոսը, այդ պետությունը, սակայն, ի տարբերություն Եգիպտոսի, ոչ միանգամից ու իր տարբեր մարզերի համար՝ ոչ միևնույն շափով ենթարկվեց ճգնաժամի հարվածներին:

Սելևկյանների պետությունը, շնայած այն պարտությանը, որ կրեց Եգիպտոսից Կոյլեսիբիայի համար մղած պատերազմում, անգամ որոշ շափով կայունացավ: Անտիոքոս III-ին հաջողվեց ճընշել Փոքր Ասիայում ծագած ապստամբությունը, իսկ Պարթևաստանի ու Բակտրիայի դեմ ուղղված արշավանքից հետո նա վերականգնեց հսկողությունը դեպի Արևելք տանող առևտրական ուղիների վրա, ընդլայնեց ու ամրապնդեց իր պետության արևելյան սահմանները: Սելևկյանների պետության միջազգային հեղինակությունը մ. թ. ա.

III դ. վերջին բարձր էր: Սելևկյան ավագանին Անտիոքոսին շնորհեց «Մեծ» պատվանունը:

Եգիպտական արքա Պտղոմեոս IV Փիլոպատորի մահից (մ. թ. ա. 203 թ.) հետո Եգիպտոսում գահի ժառանգորդի մանկության տարիներին սկսվեցին պալատական խառնակություններ: Անտիոքոս III-ը որոշեց օգտվել զրանից ու վերջնականապես նվաճել Կոլչեսի-րիան ու եգիպտական տիրույթները Փոքր Ասիայի հարավային մասում: Նրան միացավ Մակեդոնիայի թագավոր Փիլիպոս V-ը, որը ձգտում էր զավթել եգիպտական տիրույթները Թրակիայում ու Փոքր Ասիայի արևմտյան մասում, էգեյան ծովի մոտ: Անտիոքոս III-ը հաջող պատերազմ մղեց Եգիպտոսի դեմ: Մ. թ. ա. 200 թ. Պանիոնի մոտ տեղի ունեցած ճակատամարտում եգիպտական զորքերը գրլ-խովին ջախջախվեցին, ու Կոլչեսիրիան վերջնականապես միացվեց Սելևկյանների պետությանը:

Իր հաջողությունը զարգացնելով, Անտիոքոս III-ը միջամտեց Հունաստանի գործերին, քանի որ մ. թ. ա. II դ. սկզբին Հոմեր, Հելլադան Մակեդոնիայի իշխանությունից ազատելու պատրվակով, իր զորքերը մտցրել էր Հունաստան: Հունական բնակչության դեմոկրատական խավերն ամենուրեք դժգոհություն էին հայտնում հոմեական քաղաքականությունից: Դա Անտիոքոս III-ին հիմք տվեց Ասիայում Պտղոմեոսների տիրույթները զավթելուց հետո ձեռնարկել նաև Հունաստանը հոմալեզուներից «ազատագրելու» փորձ: Ըստ էության, Անտիոքոս III-ը պարզապես շարունակեց պայքարը Հունաստանի համար. նախորդ դարերում նման պայքարը բնորոշ էր հելլենիստական պետությունների արտաքին քաղաքականությանը: Հոմալեզուների դեմ մղված պայքարում նա պարտություն կրեց Թերմոպիլիի մոտ, նահանջեց Հունաստանից ու լիովին ջախջախվեց Փոքր Ասիայում, Մագնեսիայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում (մ. թ. ա. 190 թ.): Ամենախոշոր հելլենիստական պետությունը ստիպված եղավ մաքրել ամբողջ Փոքր Ասիան: Սելևկյանների արևմրտյան սահմանը դարձան Տալլոսի լեռները: Հոմալեզուները փոքրասիական տարածքները հանձնեցին իրենց ղաշնակից Պերգամոսին, ինչպես նաև իրենց օժանդակած Հոդոսին:

Սելևկյանների պետության հեղինակությունը, որ բարձրացել էր նրա արևելյան արշավանքից ու Պտղոմեոսների ասիական տիրույթները նվաճելուց հետո, կրկին ընկավ: Հաճախակի դարձան ապստամբությունները նրա արևելյան մարզերում: Անտիոքոսը ըստիպված եղավ վճարել հսկայական ռազմատուգանք հոմալեզուներին և իր գանձարանը լրացնելու նպատակով փորձեց կողոպտել Բելի տաճարը Ելիմախում ու սպանվեց այդ կողոպտուտի ժամա-

նակ: Սակայն Սելևկյանների պետութունը դեռևս ուներ մեծ տարածք, նրա ուժերը բնավ չէին սպառվել:

Անտիոքոս IV Եպիփանեսի կառավարման շրջանում (մ. թ. ա. 175—163 թթ.) թուլացած Եգիպտոսի վրա սելևկյան վերահսկողություն հաստատելու փորձ ձեռնարկվեց: Մ. թ. ա. 169 թ. Անտիոքոս IV-ը գրավեց Պելուսիոնը, որը Ասիայից դեպի Եգիպտոս տանող դարպասն էր, իսկ հետո վերցրեց նաև Մեմփիսը: Մանկահասակ Եգիպտական թագավոր Պտղոմեոս VI Փիլոմետորը գերի վերցվեց Անտիոքոսի կողմից: Եգիպտոսի մայրաքաղաք Ալեքսանդրիայում թագավոր հռչակվեց Պտղոմեոս VII Կրտսերը: Այն ժամանակ Անտիոքոսը մ. թ. ա. 168 թ. կրկին ներխուժեց Եգիպտոս ու պաշարեց Ալեքսանդրիան: Եգիպտական կառավարությունն օգնություն խընդրեց Հռոմից: Մակեդոնիայի նվաճումով զբաղված Հռոմը չկարողացավ գործուն օգնություն ցույց տալ Եգիպտոսին. նա սահմանափակվեց հատուկ դեսպանության առաքումով, դրանով ցանկանալով դիվանագիտական ճնշում գործադրել Սելևկյանների թագավորության վրա: Հռոմեական դեսպանը տեսակցություն ունեցավ Անտիոքոս IV-ի հետ ոչ միանգամից, այլ միայն Մակեդոնիային հաղթելու լուրը ստանալուց հետո: Այդ հաղթանակը նոր միջազգային իրավիճակ էր ստեղծում հօգուտ Հռոմի, ահա ինչու հռոմեական դեսպանն անսպասելիորեն լկտի վերջնագիր ներկայացրեց թագավորին: Նա վանեց Անտիոքոսի իրեն մեկնած ձեռքը (Անտիոքոսի հետ նա անձամբ ծանոթ էր Հռոմից), փայտի ծայրով գծեց շրջանակ թագավորի շուրջն ու հայտարարեց, որ վերջինս դուրս չի գա այդ շրջանակից, եթե չպարտավորվի նահանջել Եգիպտոսից: Անտիոքոս IV-ը ըստիպված էր համաձայնվել, որովհետև հռոմայեցիների հաղթանակը Մակեդոնիայի նկատմամբ և որպես դրա հետևանք՝ նրանց ազդեցության ուժեղացումը Հունաստանում ու Փոքր Ասիայում, զրկում էին իրեն հաջողության հեռանկարից Հռոմի դեմ պատերազմ ծագելու դեպքում: Այսպիսով, Եգիպտոսը ստացավ Հռոմի վճռական օժանդակությունը, բայց ուժեղ քաղաքական կախման մեջ ընկավ իր հոր դաշնակցից ու հովանավորից:

Երկու ամենանշանավոր հելլենիստական պետությունները վարում էին տարբեր քաղաքականություն Հռոմի հանդեպ: Սելևկյանները գրավում էին սովորաբար հակահռոմեական դիրք, Պտղոմեոսները հանդես էին գալիս Հռոմի կողմում:

Անտիոքոս IV-ը ստիպված նահանջեց Եգիպտոսից՝ իր զորքերով անցնելով Պաղեստինի վրայով: Հաշվի առնելով Հռոմի դեմ ապագայում պայքար մղելու անհրաժեշտությունը, Անտիոքոս IV-ը ձգտում էր կայունացնել իր բազմացեղ տերությունն ու այդ նպա-

տակով ավելի մեծ եռանդով արմատավորում էր հելլենական սովորույթները: Մ. թ. ա. 168 թ. նա գրավեց Երուսաղեմն ու փորձեց արգելել հրեական կրոնը: Դա այն կաթիլն էր, որ լցրեց հելլենիստական սարկատերերի կողմից Պաղեստինի շահագործվող ժողովրդական զանգվածների համբերության բաժակը: Նախորդ տարիներին Անտիոքոս IV-ի դորքերը երկու անգամ ջախջախեցին Երուսաղեմը: Տնտեսապես հետամնաց Հուդա երկիրը (Հրեաստանը—խմբ.) տառապում էր հելլենականացումից, որն ուղեկցվում էր ստրկատիրության, ինչպես նաև առևտրական ու վաշխառուական կապիտալի արագ զարգացումով: Նման զարգացումը բնորոշ էր նաև Պաղեստինի հարևանների՝ Սելևկյանների պետության կարևոր մասը կազմող Ասորիքի ու Փյունիկիայի տնտեսությանը:

Մ. թ. ա. II դ. 60-ական թվականներին Հուդա երկրում համառ պայքար սկսվեց հանուն անկախության, որը գլխավորեցին միջին բրմությանը պատկանող հասմոնեացի եղբայրները: Այդ պայքարին, որը սկզբում կրում էր պարտիզանական բնույթ, Հոռմը դիվանագիտական օժանդակություն ցույց տվեց: Եղբայրներից գլխավորը՝ Հուդան, կոչվեց «Մակաբե», այսինքն «Մուրճ»: Հետագայում այդ մականունը տարածվեց նրա ամբողջ տոհմի վրա: Այդ ողբերգական պայքարի բանաստեղծական նկարագիրը պահպանվել է մակաբացիների հին հրեական սուրբ գրքերում: Մ. թ. ա. I դ. հրեական պատմիչ Հովսեպոս Փլավիոսը, որը գրում էր հունարեն, նույնպես նկարագրեց այդ անցքերը: Անտիոքոս IV-ը զոհվեց դեպի իր պետության արևելյան մարզերը ձեռնարկած արշավանքի ժամանակ: Նրա ժառանգների օրոք տեղի էր ունենում սուր զահակալական կռիվ, ազատության համար փոփոխական հաջողությամբ մարտնչող մակաբացիներին այն հնարավորություն տվեց ծանր կորուստների գնով հասնել անկախության փաստական իրականացմանը:

ԲԱԿՏՐԻԱՅԻ ԱՆԿՈՒՄԸ: ՍԵԼԵՎԿՅԱՆ ՄԻՋԱԳԵՏՔԻ ՆՎԱՃՈՒՄԸ  
ՊԱՐԹԵՎԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Սելևկյանների պետությունը մ. թ. ա. II դ. սկսեց ճնշման ենթարկվել իր երկու հզոր թշնամի հարևանների կողմից: Արևմուտքից վճռական հարձակման անցավ Հոռմը, որը դիմում էր ռազմական, քաղաքական ու տնտեսական միջոցների, իսկ արևելքից հարձակվում էր Պարթևաստանը: Հելլենիստական արևելքի ծայրամասում, Միջին Ասիայում, Պարթևաստանի ու Հնդկաստանի միջև սեղմված լինելով, իր վերջին տարիներն էր ապրում Հունա-Բակտրիան: Մ. թ. ա. II դ. առաջին կեսին բակտրիական թագավոր Եվթիդեմոսի որդի Դեմետրիոս I-ը (մ. թ. ա. 189—167 թթ.) մեծ նվաճումներ կատա-

րեց Միջին Ասիայում ու Հնդկաստանում: Սակայն այդ թագավորը ղեռ իր կենդանության ժամանակ հարկադրված եղավ բաժանել իր անկալուն պետությունը որդիների ու ամենավստահելի զորավարների միջև, որոնք ճանաչեցին նրա զերագույն իշխանությունը: Դեմետրիոս I-ի արշավանքներից մեկի ժամանակ նրա գա՛լը Բակտրիայում զավթեց սելևկյան սատրապություններից մեկի կուսակալ Եվկրատիդասը: Դեմետրիոսի պետությունը տրոհվեց: Պետության հունա-հնդկական մասում որոշ ժամանակ իբրև անկախ արքա կառավարում էր Դեմետրիոս I-ի նախկին զորավար Մենանդրոսը, որին հունական ավանդությունը զնահատել է զրականորեն: Նրա կառավարման վերաբերյալ տեղեկություններ են պահպանվել «Միլինդա-պանխա» կոչվող փիլիսոփայական երկխոսությունում, որը գրվել է սանսկրիտերեն մ. թ. ա. II դ. և մեղ է հասել պալի լեզվով կատարած թարգմանությամբ: Միջին Ասիայի ու Հնդկաստանի դգալի տարածքները միավորվեցին Եվկրատիդասի իշխանության ներքո, բայց միայն մի քանի տարով:

Մ. թ. ա. 140 ու 130 թվականների միջև ընկած ժամանակաշրջանում հյուսիս-արևելքից Միջին Ասիա շարժվեցին ու Բակտրիան նվաճեցին բաղամաթիվ ցեղերի միություններ. այդ ցեղերը յայտնի են «թոխարներ» ընդհանուր անունով. շինական աղբյուրներով նրանց անվանում են յուեշժի: Այդ ցեղերին նրանց պապենական հողերից դուրս մղեցին հոների վաչկատուն ցեղերը: Հելլենիստական ճճեռավոր արևելքի» պետությունը, որը գտնվում էր Պերթևաստանի արևելյան սահմանի մոտ, դադարեց գոյություն ունենալուց:

Նույն Պարթևաստանը մ. թ. ա. 141 թ. նվաճեց Սելևկյանների պետության երկրորդ մայրաքաղաքը՝ Սելևկիան Տիդրիսի վրա ու միաժամանակ գրավեց ամբողջ Միջագետքը: Նրա հետագա առաջխաղացումը ղեպի Արևմուտք դադարեց, որովհետև Բակտրիայի նվաճումը վաչկատուն ցեղերի կողմից վտանգ ստեղծեց Պարթևաստանի համար նրա արևելյան սահմաններում:

Պարթևաստանը որևէ լուրջ միջամտություն չունեցավ Ասորիքում ընթացող գահակալական կատաղի պայքարին: Ընդհակառակը, եգիպտական թագավոր Պտղոմեոս VI Փիլոմետորը, ձգտելով ետ գրավել Կոյլեսիդիան (այդ փորձերը ապարդյուն եղան), միջամտեց Ասորիքի ներքին գործերին: Սելևկյանների հարստության վերջին աչքի ընկնող ներկայացուցիչ Անտիոքոս VII Սիդետեսը (մ. թ. ա. 139/38—129 թթ.)<sup>5</sup> ձեռնարկեց Բաբելոնիան պարթևներից խլելու ու Սելևկյանների ամբողջ պետությունն ամրապնդելու հուսահատական

<sup>5</sup> «Սիդետես» մականունը նշանակում է Պամփիլիայի Սիդե քաղաքի բնակիչ:

մի փորձ: Սկզբում նրան հաջողվեց ջախջախել մակաբանցիներին ու գրավել ամբողջ Հուդան: Հետո նա վարձկանների մեծ բանակի օգնությամբ նվաճեց ամբողջ Միջագետքն ու թափանցեց Մարաստան: Սակայն նրա զորքի վարքը Մարաստանում հանգեցրեց տեղական բնակչության մեծ ապստամբությանը: Պարթևական թագավորի հետ արդեն սկսված հաշտության բանակցություններն ընդհատվեցին: Պարթևական բանակի անակնկալ հարձակման հետևանքով Անտիոքոս V II Սիդետեսը ջախջախվեց ու ղոհվեց: Նրա բոլոր նվաճումները կրկին ու այս անգամ անվերադարձորեն վերացան, այդ թվում կորավ նաև Հուդան, որը վերականգնեց իր անկախությունը: Սեյլեկյանների պետությունն այժմ սահմանափակվում էր Ասորիքով ու նրան հարող մարդով: Այն բացահայտորեն ի վիճակի չէր իր տարածքում գտնվող ու Մերձավոր Արևելքում ամենախոշոր հելլենիստական առևտրաարհեստավորական կենտրոնները համարվող քաղաքների շահերի պաշտպանը լինելու: Տիրող դասակարգի ներկայացուցիչներն այժմ ստիպված էին պաշտպանվել տեղական ուժերի օգնությամբ, իսկ դրա հետևանքով Անտիոքի կառավարության հեղինակությունը էլ ավելի ընկավ: Պետության աղետալի քայքայման արտաքին արտահայտությունը եղավ Ասորիքի գահի հավակնորդների միջև ընթացող պայքարի սաստկացումը. այդ հավակնորդները հենվում էին իրենց փոքր երկրի տարբեր մարզերի վրա ու լայնորեն օգտագործում էին մերթ հոռմեական, մերթ պարթևական օգնությունը:

Պարթևական արևելյան մեծ պետության սահմաններն այժմ հաստատորեն անցնում էին Եփրատով: Մարաստանն ու այդ ժամանակ ավելի ու ավելի ուժեղացող Հայաստանը գտնվում էին պարթևական ազդեցության ներքո: Ասորիքի հանդեպ հավակնություն ունեւր միջերկրածովյան մեծ տերությունը՝ Հոռմը: Վերջինս իր ղավթողական քաղաքականության իրագործման ընթացքում հենվում էր այն համակրանքի վրա, որ նրա հանդեպ տածում էր Սեյլեկյանների պետության հունա-ասորական հատվածի հելլենիստական վերնախավը:

#### ՀՈՒՆԱՍՏԱՆՆ ՌԻ ՄԱԿԵՂՈՒԿԱՆ Մ. Թ. Ա. II Գ.

Հունաստանն ու Մակեդոնիան մ. թ. ա. III դ. վերջին—մ. թ. ա. II դ. սկզբին ապրում էին խիստ լարված ժամանակաշրջան: Աքայան միության ստրատեգոս Արատոսը, որը ղեկավարեց միությունն ավելի քան 30 տարի և Կլեոմենես III-ի դեմ մղած պատերազմի հետևանքով միության վրա հաստատեց Մակեդոնիայի գերիշխանությունը, վախճանվեց մ. թ. ա. 213 թ.: Գոյություն ունի զրույց,

ըստ որի, նա թունավորվել է մակեդոնական թագավոր Փիլիպոս V-ի կողմից: Մակեդոնա-աքայական միությունը, շնայած դաշնակիցներին կառավարող խմբավորումների շահերի ընդհանրությունը, բնավ կայուն չէր:

էտոլիացիք մշտական պայքար էին մղում Մակեդոնիայի դեմ. այդ պայքարի ընթացքում նրանք դաշինք կնքեցին Հոռմի հետ, վերջինս շարունակեց պատերազմը Մակեդոնիայի դեմ: Հոռմի հակամակեդոնական դիրքավորումը նրան ժողովրդականություն բերեց Հունաստանում, թեև հոռմեական զորքերի առաջխաղացումն ուղեկցվում էր բնակչության կողոպուտով, ստրկացումով:

Սպարտայում մ. թ. ա. 207 թ. իշխանությունը զավթեց տիրան Նաբիսը (մ. թ. ա. 207—192 թթ.), որն ի տարբերություն Ագիսի ու Կլեոմենեսի, ձգտում էր հենվել ճնշված խավերի վրա: Նաբիսի գործունեության մասին մենք որոշ տեղեկություններ ենք գտնում նրա քաղաքական հակառակորդ ու դասակարգային թշնամի Պոլիբիոսի աշխատությունում: Նաբիսը վերացրեց պարտերը, բաժանեց հողերը, վերացրեց հելոտիան. նա ազատում էր ստրուկներին ու նրանց ամուսնացնում իրենց նախկին տերերի դուստրերի հետ: Նաբիսի գործունեությունը Սպարտայում ազդեց Պելոպոնեսի հասարակական շարժման վրա: Նրա օգնությամբ Արգոսում կատարվեց հեղաշրջում, վերաբաժանվեցին հողերը: Նաբիսը Մակեդոնիայի ու Աքայան միության դեմ պայքարելով, երկար ժամանակ պահպանում էր բարեկամական հարաբերություններ Հոռմի հետ:

Ջբավորության պայքարը հարուստ ստրկատերերի դեմ այդ ժամանակ ընթանում էր և՛ էտոլիայում, և՛ Բեոլիտիայում, և՛ Բալկանյան Հունաստանի մյուս շրջաններում, նաև (ինչպես դա հիշատակվել էր) Մերձսևծովյան երկրամասի պոլիսներում, էգեյան ծովի կղզիներում ու փոքրասիական ափի պոլիսներում: Հոռմեական նրվաճողներն օգտագործեցին այդ պայքարը. Մակեդոնիայի դեմ կրուվելով նրանք զգալի շահով հենվում էին ստրկատիրական Հունաստանի դեմոկրատական ուժերի վրա:

Փիլիպոս V-ը պարտություն կրելով Հոռմի դեմ մղած ոչ վաղուցվա պատերազմում, փորձեց իր կորուստները փոխհատուցել ավելի թույլ հակառակորդների դեմ վարած պատերազմի միջոցով: Նա նվաճեց Պտղոմեոսների տիրույթները Թրակիայում ու Կարիայում և դրա հետ միասին զավթեց այլ հունական պոլիսներ: Փոքր Ասիայում նա հանդիպեց Պերգամոսի ու Հոռոզոսի դիմադրությանը: Աթենքը անհանգստացավ նեղուցների վրա մակեդոնական հսկողության հաստատումից ու մի շարք տարիների ընթացքում անցկացվող շեղոք քաղաքականությունից հետո նույնպես հանգես եկավ

Փիլիպոս V-ի դեմ: Բոլոր այս պետությունները դիմեցին Հոռմի օգնությանը. վերջինս հաջողությամբ ավարտելով երկրորդ պատերազմը Կարթագենի դեմ, միայն հարմար առիթի էր սպասում մերձարևելյան գործերին միջամտելու համար: Այժմ Հոռմի ուժեղագույն հարևանն, անշուշտ, Մակեդոնիան էր, ու մ. թ. ա. III դ. վերջում Հոռմի ագրեսիվ արտաքին քաղաքականության խնդիրներից մեկը դարձավ հասնել Մակեդոնիայի թուլացմանը: Հոռմայեցիներն առանց հապաղելու պատերազմ հայտարարեցին Փիլիպոս V-ին: Երկրորդ հոռմեա-մակեդոնական պատերազմը տևեց մ. թ. ա. 200 թ. մինչև 197 թ.: Այդ պատերազմում Հոռմի կողմում էին էտոլիական ու Աքայան միությունները:

Միառժամանակ պատերազմն ընթանում էր փոփոխական հաջողությամբ, բայց մ. թ. ա. 197 թ. Քեսալիայում, Կինոսկեփալեի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Փիլիպոս V-ի բանակը ջախջախվեց, մասնավորապես այն պատճառով, որ հոռմեական զորքին վճռական օգնություն ցույց տվեց էտոլիական առաջնակարգ հեծելազորը: Այդ ճակատամարտի ժամանակ ի հայտ եկավ նաև մակեդոնական փաղանդի ավելի քիչ շարժունակությունը հոռմեական լեզնոնի համեմատությամբ: Փիլիպոս V-ը պետք է հրաժարվեր մոտիկ անցյալում կատարած իր բոլոր նվաճումներից ու ընդհանրապես իր երկրի սահմաններից դուրս ունեցած բոլոր տիրույթներից. նա ստիպված եղավ Հոռմին հանձնել իր ուղղաձիգային նավատորմը, մի քանի նավերից բացի, ու վճարեց մեծ ուղղաձիգանք: Բացի այդ, հոռմայեցիները հիմնովին թալանեցին Բալկանյան թերակղզում իրենց գրաված տարածքներն ու տեր և տնօրեն դարձան հունական պոլիսներում: Ու թեև մ. թ. ա. 196 թվականի Իսթմեական խաղերում հոռմայեցիներն հռչակեցին «հելլենների ազատությունը», և այնտեղ ներկա եղած հույներն արտահայտեցին իրենց «հրճվանքը», իրականում ամբողջ Հունաստանով մեկ արագորեն աճում էր դժգոհությունը «հոռմեական ազատարարների» նկատմամբ: Դրա հետ մեկտեղ հոռմայեցիները հաղթելով Մակեդոնիային, սկսեցին ավելի որոշակիորեն հենվել բնակչության օլիգարխիական խավերի վրա: Աքայան միության օլիգարխիական կառավարիչներն այժմ հոռմայեցիների հետ միասին հանդես եկան սպարտական տիրան Նաբիսի դեմ, որը հետևողականորեն իրագործում էր դեմոկրատական քաղաքականություն: Մ. թ. ա. 195 թ. Նաբիսը պարտություն կրեց միության զորքերից, բայց հոռմայեցիների որոշմամբ իր իշխանության ներքո պահեց բուն սպարտական տարածքները: Մ. թ. ա. 192 թ. նա ետ մղեց աքայան զորքերի նոր հարձակումը, բայց շուտով դավաճանի կողմից սպանվեց Սպար-



տայում: Սպարտական պետութիւնը կրկին ստիպված եղավ դառնալ Աքայան միութեան անդամ:

Քայքայված բնակչութեան զանգվածային շարժումները հետըզհետեռ ուժեղացնում էին հարուստ ստրկատերերի համակրանքը Մակեդոնիայի համեմատութեամբ ավելի հզոր Հռոմեական ստրկատիրական տերութեան հանդեպ, սակայն հռոմեական տիրապետութեան դաժան դրսևորումները զանգաղեցնում էին Հռոմի վերջնական հաստատումը Հունաստանում ու Մակեդոնիայում:

Մակեդոնիայի ուժեղացումը Փիլիպոս V-ի կառավարման վերջին շրջանում ու նրա հաջորդ Պերսևսի օրոք (մ. թ. ա. 179—168 թթ.) հանգեցրեց Հռոմի նոր՝ 3-րդ հռոմեա-մակեդոնական աղբսիվ պատերազմին (մ. թ. ա. 171—168 թթ.): Պատերազմի առաջին շրջանում Պերսևսը տարավ մի շարք մասնակի հաղթանակներ: Հունաստանի ու Մակեդոնիայի բնակչութեան լայն խավերի մոտ տիրող տրամադրութիւնները հակահռոմեական էին. դա դժվարութիւններ էր ստեղծում հռոմայեցիների համար «պատերազմը վարելու գործում: Սակայն Մակեդոնիայի հետ բացահայտ դաշնակցեցին միայն էպիրոսը, Թրակիան ու Հռոմի կողմից մինչ այդ նվաճված Իլլիրիան: Մ. թ. ա. 168 թ. Մակեդոնիայում, Պիդնայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Պերսևսի զորքերը ջախջախվեցին, իսկ ինքը գերի ընկավ հռոմայեցիներին: Մակեդոնիան բաժանվեց շրտիրարից մեկուսացված մարզերի, որոնք փաստորեն դրվեցին հռոմայեցիների հսկողութեան ներքո: Գազանաբար ավերվեց էպիրոսն, ու ստրկութեան վաճառվեցին 150000 էպիրոսցիներ: Հաշվահարգար կատարվեց նաև էտոլիական միութիւնում, որը դադարեց գոյութիւն ունենալուց: Անգամ օլիգարխիական Աքայան միութիւնում հռոմայեցիները հսկայական թվով պատանդներ վերցրին ամենաաղեցիկ ընտանիքներից, այդ թվում նաև ապագա հռչակավոր պատմագիր Պուլիբիոսին, որը Աքայան միութեան ստրատեգոսի որդին էր: Պերսևսին հաղթելուց հետո հռոմայեցիները կամայականորեն էին գործում Հունաստանում ու էգեյան ծովում:

Հռոմայեցիների նախկին դաշնակից Հռոդոսը նույնպես ենթարկվեց պատժի այն պատրվակով, որ Պերսևսի պարտութիւնից հետո Հռոմին առաջարկեց իր միջնորդութիւնը Մակեդոնիայի հետ խաղաղ բանակցութիւններ վարելու գործում: Հռոմայեցիները Հռոդոսից խլեցին նրա ասիական տիրույթների մեծ մասը, այդ թվում և այն տարածքները, որոնք Հռոմն ինքն էր նվիրել Հռոդոսին վերջինիս կողմից պրոհռոմեական քաղաքականութիւն վարելու համար: Հռոմեական վաճառականներն ու վաշխատուները ձգտում էին սահմանափակել հռոդոսյան առևտուրը՝ Հռոդոսն արգարացիորեն

համարելով իրենց ամենագլխավոր մրցակիցներից մեկը: Այդ պատճառով հոռմեական կառավարութունը Դելուս կղզին հայտարարեց բոլոր նավերի համար բաց նավահանգիստ, որն ուներ առանց մաքսերի ներմուծում ու արտահանում կատարելու իրավունք, այսինքն՝ պորտոֆրանկու: Այժմ առևտրական նավերը գերադասում էին կանգ առնել Դելուսում, այլ ոչ Ղոզդոսում: Ղոզդոսի դերը իբրև միջազգային առևտրական միջնորդի ընկավ: Ղոռմայեցիները ճնշում էին գործադրում անգամ իրենց մշտական դաշնակից Պերգամոսի վրա, ցանկանալով թուլացնել նրա նշանակութունը Փոքր Ասիայում:

Ղոռմեական տիրապետութունը Մակեդոնիայում Պիդնայի ճակատամարտից 20 տարի անց հանգեցրեց ապստամբության ու հակահոռմեական պատերազմի ծագման: Այդ ապստամբութունը ճընշվեց, ու մ. թ. ա. 148 թ. Մակեդոնիան վերածվեց հոռմեական նահանգի: Մակեդոնիայից հետո Ղոռմի դեմ պատերազմ սկսեց Աքբայան միութունը, քանի որ հոռմեական վաճառականներն ու վաշխառուներն ավելի մեծ չափով, քան առաջ, կազմալուծում էին աքբայան տնտեսութունը, վնասներ պատճառում տեղական ստրկատերերին, այն տերերին, որոնք առաջ, սեփական դեմոսից երկյուղ կրելով, հանդես էին գալիս Ղոռմի կողմում: Ղոռմայեցիների դեմ ելած Աքբայան միութունն օժանդակութուն ստացավ նաև Ղունաստանի քնակչության դեմոկրատական խավերից: Սակայն ուժերն անհավասար էին: Աքբայան միութունը ջախջախվեց: Ղունաստանի այն ժամանակի ամենանշանավոր առևտրարհեստավորական կենտրոնն ու Աքբայան միության առավել աչքի ընկնող քաղաքը՝ Կորնթոսը մատնվեց թալանի, ավերվեց ու հրդեհվեց մ. թ. ա. 146 թ.: Նրա բնակիչները վաճառվեցին ստրկության:

Մ. թ. ա. 146 թիվը ավանդաբար համարվում է Ղունաստանի անկախության անկման ու այստեղ հոռմեական տիրապետության հաստատման տարեթիվ:

ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ՈՒ ԶՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՊՍԱՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՐԳԱՄՈՍԻՄ  
ԱՐԻՍՏՈՆԻԿՈՍԻ ՎԵՍԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ: ՊԵՐԳԱՄՈՍԻ ՄԵՒՅՈՒՄԸ ՀՈՐՄԵՆ

Մակեդոնիայի ու Ղունաստանի անկումից հետո, հոռմայեցիներից կախյալ Դելուս կղզու վրայով կատարվող հոռմեական միջնորդային ծովային առևտրի զարգացման շնորհիվ, ուժեղացավ նրանց տնտեսական թափանցումը նաև Փոքր Ասիա: Ղոռմեական ազդեցությանը հատկապես ենթարկվեց Պերգամոսը: Հելլենիստական Պերգամոսի ստրկատիրական հասարակության զարգացման ներքին պայմաններն ու տնտեսական կախումը հոռմայեցիներից (ինչպես և Բալկանյան թերակղզում) ստիպեցին պերգամյան ստրկատերե-

րին պաշտպանութիւնն որոնել ավելի հզոր Հոռմի մոտ: Ինչպես հաղորդում են պատմական աղբյուրները, Պերգամոսի թագավոր Ատտալոս III-ը մ. թ. ա. 133 թ., մահանալիս իր թագավորութիւնը պարտքերի դիմաց կտակեց Հոռմին: Սակայն նրա մահից հետո Պերգամոսում սկսվեց ստրուկների վիթխարի ապստամբութիւն, որը գլխավորեց մահացած թագավորի խորթ եղբայր, թագավորական ստրուկուհու որդի Արիստոնիկոսը:

Ապստամբութիւնն օժանդակեցին ազատ շքավորութիւնն ու կախյալ գյուղացիները: Վիմագրական աղբյուրները ցույց են տալիս, որ ապստամբութիւնը բռնկվել էր գյուղական տարածքում: Ապստամբները ցանկանում էին կազմակերպել «Արևի պետութիւն», որտեղ չէր լինի անհավասարութիւն: Նրանք իրենց անվանում էին «հելիոպոլիտներ», այսինքն «Արևի պետութիւն քաղաքացիներ»: Ապստամբները մի քանի պարտութիւններ հասցրեցին հռոմեական բանակին: Միայն մ. թ. ա. 130 թ., մեծ ջանքեր գործադրելով, հռոմայեցիները հաղթեցին ու դաժան դատաստան տեսան ապստամբների հետ: Արիստոնիկոսը գերի ընկավ ու մահապատժի ենթարկվեց Հոռմում: Պերգամոսը դարձավ հռոմեական Ասիա նահանգ: Այսպես Հոռմն աստիճանաբար մոտեցավ Սելևկյանների պետութիւն արևմտյան սահմաններին: Բացի այդ, այն դարձավ այս կամ այն շափով հելլենականացված ասիական թագավորութիւնների անմիջական հարևան: Այդ թագավորութիւններն առաջ բարդ հարաբերութիւններ ունեին Սելևկյանների պետութիւն հետ, անգամ ժամանակ առ ժամանակ մասնակի կախման մեջ էին ընկնում նրանից, իսկ այժմ, Սելևկյանների թուլացման ու Պերգամոսի անկման հետ կապված զգալիորեն ուժեղացան: Առաջավոր Ասիայում առաջատար դեր ունենալու հավակնութիւններ էին հատկապես զրսևորում այդ ժամանակ ավելի ու ավելի հզորացող պետութիւնները՝ Պոնտոսն ու Հայաստանը:

ԱՍՈՐՐՔԻ ՌԵ ԻԿԻՊՏՈՍԻ ԵՎԱՃՈՒՄԸ ՀՌՈՄԱՅՆՅԵՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ Մ. Թ. Ա. 1 Դ.

Մ. թ. ա. 1 Դ. 90—80-ական թվականներին Առաջավոր Ասիայում բարձրացավ Տիգրան II-ի Հայկական մեծ թագավորութիւնը: Տիգրան II-ը հաջող պատերազմելով հարևանների դեմ ու ժամանակավորապես հաղթելով անգամ պարթևական թագավորին, ընդարձակեց իր տերութիւնը, որը տարածվում էր հյուսիսում Սև ու Կասպից ծովերից և Անդրկովկասից մինչև Միջերկրական ծովը հարավում: Նա պարթևներին դուրս մղեց Հյուսիսային Միջագետքից ու անգամ նվաճեց Ասորիքը: Հռոմայեցիներն այդ ժամանակ զբաղված էին քաղաքացիական (դաշնակցային) պատերազմով Իտալիայում:

յում և ոչ միայն հնարավորություն շունեցան խանգարելու Հայկական մեծ տերութեան ստեղծմանը, այլև իրենք արտաքսվեցին Փոքր Ասիայից ու մասամբ անգամ Հունաստանից Տիգրան II-ի դաշնակից Միհրդատ VI Եվպատորի կողմից: Վերջինս իր Պոնտական մեծ պետությունը ստեղծելու համար օգտագործեց փոքրասիական և հելլենական բնակչության լայն խավերի դժգոհությունը հռոմեական նվաճողների դաժան տիրապետությունից: Ընդարձակված Հայաստանն ու Պոնտոսն իրենցից ներկայացնում էին փխրուն պետական միավորումներ, իրենց կառուցվածքով նրանք նմանվում էին Սելևկյանների հելլենիստական պետությանը: Պատահական չէ, որ Տիգրան II-ը իրեն հռչակեց Սելևկյանների ժառանգորդ:

Տիգրանը Հյուսիսային Միջագետքում, իր պետության մոտավորապես կենտրոնական մասում կառուցեց Տիգրանակերտ հայկական նոր մայրաքաղաքը: Տիգրանակերտը հսկում էր հյուսիսից դեպի Միջերկրական ծովն ու Պարսկական ծոցը գնացող առևտրական ու ստրատեգիական ճանապարհները, ինչպես նաև դեպի արևելք գնացող քարավանային ուղիների մի մասը: Բռնությամբ նոր մայրաքաղաք տեղափոխվեցին այլ քաղաքների բնակիչներ:

Սակայն Հունաստանի ու Փոքր Ասիայի հելլենիստական ստրկատերերի հարուստ խավերը հռոմեական տիրապետության ժամանակ բավականին հետևողականորեն աջակցում էին Հռոմին՝ իբրև ստրկատիրական սեփականության հզոր պաշտպանի: Բացի այդ, աշխատավոր բնակչության զանգվածները թեթևություն չզգացին անցնելով Պոնտոսի թագավոր Միհրդատ VI-ի իշխանության տակ: Այս պատճառով էլ հռոմայեցիներին հաջողվեց Իտալիայում քաղաքացիական պատերազմի սուր փուլի ավարտից հետո ետ գրավել իրենց կորցրած տիրույթները Հունաստանում ու Փոքր Ասիայում: Հռոմայեցիների կողմից Միհրդատի դեմ մղած պատերազմների ընթացքում իր անկախությունը մասամբ կորցրած Բիթանիայի թագավորությունը, թագավոր Նիկոմեդես III-ի կտակի համաձայն, անցավ Հռոմին: Այսպիսով, Սև ծովից էգեյան ծովը տանող նեղուցներն անցան հռոմայեցիների ձեռքը: Դա տնտեսական հարված հասցրեց Պոնտական թագավորությանը:

Հռոմի դեմ մղած պայքարի ընթացքում Միհրդատ VI-ը, որ իր վարած քաղաքականության մեջ սովորաբար հենվում էր բնակչության հարուստ և ունևոր խավերի վրա, օգտագործեց դասակարգային պայքարի սրումը՝ շքավորությանն իր կողմը դրավելու նպատակով: Նա հունական սովորության համաձայն ձեռնարկեց պարտքերի բեկանում, հողերի մասնակի վերաբաժանում ու այլ միջոցառումներ, որոնցով և իրենից վանեց տեղական ստրկատերերին: Տի-

րող դասակարգը Հունաստանում ու Փոքր Ասիայում ի վերջո վճռականորեն պաշտպանեց ստրկատիրական Հռոմին: Բուն Պոնտական տարածքում մ. թ. ա. I դ. 60-ական թվականներին կատաղի պայքարից հետո Պոնտոսը վերածվեց հռոմեական նահանգի: Տիգրան Հայր նույնպես անհաջողություն կրեց Հռոմի դեմ մղած պայքարում ու հարկադրված եղավ հրաժարվել իր նվաճումների մեծ մասից: Ասորիքը՝ մեծ թիվ կազմող հելլենիստական քաղաքներով հանդերձ ենթարկվեց Հռոմին մ. թ. ա. 64—63 թթ.:

Իր թուլացման ժամանակաշրջանում հելլենիստական Եգիպտոսը հետևողականորեն ու համառ կերպով ձգտում էր դաշինքի Հռոմի հետ, որը մշտական օգնություն էր ցույց տալիս Պտղոմեոսներին: Սակայն Պտղոմեոսների դաշինքը Հռոմի հետ հետզհետե ուժեղացնում էր առաջինների քաղաքական կախումը հռոմեական սենատից ու տնտեսական կախումը՝ հռոմեական նոբիլներից և հեծյալներից: Մ. թ. ա. I դ. 80-ական թվականներին Եգիպտոսի հարավում, Թերեի մարզում, տեղի ունեցավ հզոր ապստամբություն, որը թուլացրեց Պտղոմեոսներին ու ամրապնդեց Հռոմի բաղմամբիվ կողմնակիցների դիրքերը ստրկատերերի տիրող դասակարգի ներսում: Բայց Եգիպտոսում ընթացող դասակարգային պայքարի ծայրահեղ սրման հետևվանքով ստրկատիրական Հռոմի (որն ինքն այն ժամանակ ցնցվում էր ստրուկների վիթխարի ապստամբություններից) կառավարող խմբավորումները երկար ժամանակ չէին համարձակվում Եգիպտոսը ուղղակիորեն միացնել իրենց տերությունը:

Ասորիքի անկումից հետո Եգիպտոսը եղավ այն վերջին հելլենիստական պետությունը, որը ձևականորեն պահպանում էր անկախություն: Հռոմեական դրածո Պտղոմեոս XI Ավլետեսի (Սրնգահարի) երկարատև կառավարման օրոք Եգիպտոսն ավելի ու ավելի էր ներգրավվում Հռոմի քաղաքական ու տնտեսական շահերի ոլորտի մեջ: Ավլետեսը, որը պահպանում էր իր գահը իրենից հակառակ կաշառքներ ստացող ազդեցիկ հռոմեական քաղաքական գործիչների օգնության շնորհիվ, խճճվել էր պարտքերի մեջ ու այդ պարտքերը վճարելու նպատակով ֆինանսական գերատեսչության տնօրենի՝ դիոչկետեսի պաշտոնը տրամադրեց իր վարկատուին՝ հռոմեական վաշխառու Ռաբիրիոսին: Դա առաջացրեց նոր ապստամբություն:

Հելլենիստական Եգիպտոսի պատմության վերջին փուլը սերտորեն կապված էր Հռոմում տեղի ունեցող քաղաքական ու սոցիալական պայքարի հետ: Այստեղ միայն անհրաժեշտ է նշել վերջին Եգիպտական թագուհի Կլեոպատրա VII-ի բախտախնդիր քաղաքականությունը: Նա բոլոր միջոցներով, անգամ օգտագործելով

հոմեական դորավարների վրա ունեցած իր անձնական ազդեցությունը, ձգտում էր պահպանել հելլենիստական Եգիպտոսի անկախությունը: Կլեոպատրա VII-ի քաղաքականությունը անգամ տիրող դասակարգի մեծ մասից եգիպտական վերջին կառավարության լրիվ մեկուսանալու վառ վկայությունն էր: Այդ դասակարգի շահերը, ինչպես պարզվեց, ավելի լավ պաշտպանում էին նվաճող հոմեայեցիները: Եգիպտոսը միացվեց Հռոմեական պետությանը մ. թ. ա. 30 թ.: Դա հելլենիզմի դարաշրջանի ավարտի ավանդական տառիկն է:

Հելլենիստական աշխարհն իր գոյությունը երեք հարյուրամյակների ընթացքում սպառեց ստրկատիրական հասարակության հետագա դարդացման հնարավորությունները հելլենիստական պետությունների համակարգի շրջանակներում:

Սոցիալ-տնտեսական դարդացումը, որ տեղի էր ունենում հունա-մակեդոնական նվաճողների ու տեղական ստրկատերերի կողմից գյուղացիների ու արհեստավորների հրեշավոր շահագործման պայմաններում, ստրկատիրության աճը և որպես դրա հետևանք աշխատավորների սոցիալական դրության ընդհանուր վատացումը հանգեցրին դասակարգային պայքարի շտեմնված սրմանը և հելլենիստական ստրկատերերի դիրքերի թուլացմանը: Այս պատճառով հելլենիստական աշխարհը հետզհետե նվաճվեց հյուսիսում Պարթևաստանի, իսկ արևմուտքում՝ Հռոմի կողմից: Հռոմը նվաճած տարածքներում ապահովեց ստրկատիրական հասարակարգի հետագա դարդացումը, իսկ ղեպի արևելք ընկած, հոմեական սահմաններից դուրս մնալից տարածքներում ստրկատիրությունը մնաց այն մակարդակի վրա, որ ձևով էր բերվել հելլենիստական դարաշրջանում: Դա արագացրեց այստեղ ֆեոդալիզմի տարրերի առաջացումը՝ դրացիական համայնքների կախյալ հողագործական բնակչության շահագործման հիմքի վրա:

## Գլուխ 22. ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՆ (Մ. թ. ա. III—I ԳԿ.)

Հելլենիստական աշխարհի մշակույթը հունական մշակույթի սինթեզումն էր Մերձավոր, մասամբ և Միջին Արևելքի ժողովուրդների մշակույթի հետ: Հելլենիզմի դարաշրջանը դարձավ դարերի ու հազարամյակների ընթացքում կուտակված գիտելիքների համակարգման ու մշակույթի շատ բնագավառներում ձևով բերված նոր նվաճումների ժամանակաշրջան:

Հելլենիզմի դարաշրջանում ուժեղացան փոխադարձ կապերն առանձին երկրների միջև, հանդես եկավ մշակութային արժեքները

մշտապես փոխանակելու հնարավորություն: Հեռավոր ուղիների արշավանքները, առևտրական ճանապարհորդությունները, բնակեցումը մերձարևելյան երկրներում՝ այս ամենը ընդարձակեց հին հույների ու մակեդոնացիների մտահորիզոնը, նրանք ավելի մեծ շահով, քան առաջ, ծանոթացան հին արևելյան մշակույթի հետ: Մյուս կողմից, Ալեքսանդր Մակեդոնացու նվաճած երկրների, ինչպես նաև հելլենիստական աշխարհի սահմաններին հարող շրջանների բնակչության զգալի զանգվածներն անմիջականորեն ընկալեցին բարձր զարգացման հասած հունական մշակույթը:

Հելլենիստական մշակույթին բնորոշ էր նրա հունական ձևը: Տիրող դասակարգի մեջ, որը հիմնականում գոյացավ հույներից, մակեդոնացիներից ու տեղական հելլենականացվող հողային և առևտրական արիստոկրատիայից, աստիճանավորներից, մասամբ քրմությունից, լայն տարածում ստացավ համահունական կոյնե լեզուն (կոյնե նշանակում է «ընդհանուր»): Այն առաջացավ ու զարգանում էր գրական ատտիկական լեզվի հիմքի վրա: Կոյնեով խոսում էին, վարում էին պաշտոնական գրագրություն և ընթացիկ գործեր, կոյնեն գրականության ու գիտության լեզուն էր: Սակայն պետք չէ գերազնահատել ամենօրյա կյանքի մեջ կոյնեի ներթափանցման աստիճանը: Կոյնեի հետ զուգահեռ Եգիպտոսից մինչև Միջին Ասիա իբրև պետական, գրական ու դիվանագիտական միջազգային լեզու լայնորեն տարածված էր արևելյան արամեական լեզուն: Կոյնեի հետ մեկտեղ իրենց գոյությունն էին պահպանում նաև հին հունական բարբառները, մասնավորապես տարածում գտավ դորիական բարբառը, իսկ արամեականի հետ միասին ապրում ու զարգանում էին տեղական լեզուները՝ ուշեգիպտական լեզուն (ղեմոտական արձանագրությունների ու պապիրուսների լեզուն), Սելեկյանների պետությունում եղած զանազան լեզուները: Հունական կոյնեն համալրվում էր տեղական բառերով՝ եգիպտական, բարելական և այլն: Բակտրիայում հունարեն լեզուն տեղական բնակչության լեզվի ազդեցության հետևանքով կրեց զգալի հնչյունաբանային փոփոխություններ: Հունական ու արամեական գրականության հետ մեկտեղ զարգանում էր նաև տեղական լեզուներով ըստ տեղծվող գրականությունը: Սակայն հունական կոյնե լեզուն հելլենիստական աշխարհում, այնուամենայնիվ, հանդիսանում էր հելլենականորեն կրթված մարդկանց, վարչության ու բանակի հրամանատարական կազմի ընդհանուր լեզուն:

Մ. Թ. ա. IV դ. հույների միջավայրում ծնվեց մի նոր աշխարհայացք, որը հելլենիզմի շրջանում ստացավ լայն տարածում ու ձևավորվեց փիլիսոփայորեն. այն հայտնի է «կոսմոպոլիտություն»

անունով: Հունական «կոսմոպոլիտես» բառը նշանակում է «աշխարհի քաղաքացի»: Նախորդող դասական շրջանում յուրաքանչյուր հույն իրեն համարում էր սոսկ իր քաղաքի քաղաքացի (պոլիտես), նրա մտահորիզոնը սահմանափակված էր հայրենի պոլիսի շահերով: Դրուժյունը փոխվեց ստրկատիրական պոլիսի ճգնաժամի ընթացքում, որը տեղի ունեցավ մ. թ. ա. IV դարում: Այդ ժամանակ հույն չքավորական զանգվածները դարձան վարձկաններ օտար երկրներում, նրանք ծառայում էին ոչ միայն ուրիշ հունական պոլիսների բանակներում, այլև պարսկական թագավորի կամ եգիպտական փարավոնի զորքերում: Միևնույն ջոկատում ծառայում էին տարբեր պոլիսներից (հաճախ իրար նկատմամբ թշնամի) եկած զինավորականներ, որոնք խոսում էին զանազան բարբառներով: Բայց այժմ, օտարութունում, նրանք բոլորն էլ հանդիսանում էին սոսկ հելլեններ, նրանք պաշտպանում էին իրար, հաղթահարում մինչ այդ եղած խորթությունը: Բուն Հելլագայում նույնպես, ինչպես նշվեց, ձևավորվեցին հզոր ֆեոդերացիաներ՝ էտոլիական ու Աքայան միությունները, յուրաքանչյուրն իր սեփական քաղաքացիությամբ: Արևելքում առաջացան խոշոր հելլենիստական պետություններ, ու թեև հույները այստեղ դրավեցին տիրապետող դիրք, սակայն տեղական բնակչության կողմից շփրված օտարածին տարր էին: Այդ պայմանները բարենպաստ հեռանկարներ ստեղծեցին կոսմոպոլիտության գաղափարների տարածման համար: Կոսմոպոլիտիզմը, այսպիսով, վերջին հաշվով Հելլագայի սոցիալ-տնտեսական զարգացման գաղափարական արտացոլումն էր: Հելլենիստական աշխարհի ընդարձակ տարածքներով մեկ ցրված հույն ռազմիկները, աստիճանավորները, արհեստավորները, վաճառականները իրենց զգացին այդ աշխարհի քաղաքացիներ, հաղթահարեցին իրենց հայացքների պոլիսային սահմանափակվածությունը: Այդ տեսակետից կոսմոպոլիտությունն արտացոլում էր հելլենիստական աշխարհի առաջընթացը դասական Հունաստանի համեմատությամբ: Միևնույն ժամանակ կոսմոպոլիտիզմը դարձավ հելլենիստական պետությունների գաղափարախոսության կարևոր գիծ: Այն ամրապնդում էր ամբողջ հելլենիստական աշխարհով մեկ ցրված ու համեմատաբար փոքր թիվ կազմող հելլենների կամ հելլենականացած շահագործողների փոխադարձ կապերը:

Պոլիսների անկումը, քաղաքացիական կոլեկտիվի պետքերին անհատի ենթարկման նրանց հինավուրց ավանդույթներով հանդերձ, հանգեցրեց անհատականության (ինդիվիդուալիզմի) զարգացմանը: Դրան նպաստում էին, ինչպես հիշատակվել է, ավելի աշխույժ, քան առաջ միջազգային հարաբերությունները: Իրենց հարազատ պոլիս-



ներից կամ համայնքից անջատված մարդիկ արդեն չէին կարող հույսեր կապել համաքաղաքացիների կամ ցեղակիցների օժանդակութան հետ, նրանք պետք է հույսը դնեին միայն իրենց վրա, իրենց ուժերի ու ձեռներեցութեան վրա: Հաճախակի հեղաշրջումները, պատերազմները, որոնք ուղեկցւում էին հաղթված բնակչութունը զանգվածաբար ստրկութեան վաճառելով, շատերի քայքայումով ու առանձին երջանիկ մարդկանց հարստացումով, ապագայի հանդեպ ընդհանուր անվստահութիւնը՝ այս ամենը հանգեցրեց ճակատագրապաշտութեան (ֆատալիզմի) լայն տարածմանը: Դա իր արտահայտութիւնը գտավ այն ժամանակի փիլիսոփայական համակարգերում, արտացոլվեց կրոնի մեջ՝ աստվածուհի Տյուքեին (Ճակատադիր) պաշտելու ձևով: Կոսմոպոլիտութիւնը, անհատականութիւնը, ճակատագրապաշտութիւնը հելլենիստական աշխարհի հելլենականացված բնակչութեան աշխարհայացքի էական տարրերն էին:

Տեղական բնակչութեան աշխատավոր զանգվածներն ու բավական ստվար միջին խավերը ամենուրեք չէ, որ ենթարկվեցին հելլենացման կամ շատ զեպրերում այն ընկալեցին հույժ մակերեսորեն: Նրանք ընդհանուր առմամբ պահպանեցին իրենց հին հայացքներն ու սովորութիւնները, որոնք զարգանում էին բուն հելլենիստական հայացքների ու բարքերի հետ դուգահեռաբար: Ահա թե ինչու մշակույթի զուտ հելլենիստական երևույթների հետ միասին այս ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում գոյութիւն ունեին ու զարգանում էին նաև տեղական մշակույթները, որոնք միայն փոքր չափով էին ենթարկվել հելլենիզմի ազդեցութեանը:

#### ՏԵՆԵԿԱ

Հելլենիստական մշակույթի կարևոր գիծն էր տեխնիկայի հետագա զարգացումը ստրկատիրական հասարակարգի պայմաններում: Մեծացավ վերամշակվող հումքի ու արտադրվող շինվածքների տեսականին: Ստրկատիրական տնտեսութեան զարգացման արդյունքը եղավ արտաքին առևտրի ընդարձակումը լայնածավալ արևելամիջերկրածովյան աշխարհի շրջանակներում: Աճում էին քաղաքները՝ բարձր զարգացման հասած արհեստի կենտրոնները: Առաջին անգամ բավականին ընդլայնվեց արհեստավորական ապրանքների մասսայական պատրաստման պահանջը: Հելլենիզմի դարաշրջանում արհեստի տեխնիկայում արտադրանքի մասսայական թողարկումն ապահովելու նպատակով սկսում են ավելի մեծ չափով գործածել (գեղարվեստական արհեստի հետ մեկտեղ ու այն դուրս մղելով) դրոշմահատոցներ: Բնակչութեան լայն խավերը հնարավորութիւն են ստանում ձեռք բերել էժան կահկարասի, զարդեր ու այլ ապ-

րանքներ՝ պատրաստված կավի, փայտի, քարի, մետաղի, ապակու տարբեր տեսակներից: Բարելավվում է սննդամթերքի պատրաստումը: Պատերազմների դեպքում սնունդն ապահովելու նպատակով քաղաքներում ստեղծվում էին պահածոների պաշարներ: Արևելյան ու հունական փորձի փոխադրեցությունը հատկապես նպաստեց աշխատանքի ձեռքի գործիքների ու ձեռքի արհեստավորական տեխնիկայի եղանակների կատարելագործմանը, ինչպես նաև մարդու ու կենդանիների մկանային ուժի միջոցով գործողության մեջ դրվող պարզ մեխանիզմների կատարելագործմանը: Այսպես, օրինակ, հին հունական մեծ գիտնական ու գյուտարար Արքիմեդեսը, ըստ երևույթի, բարելավեց դաշտերը ոռոգելու նպատակով եգիպտոսի գյուղատնտեսության մեջ կիրառվող ջուրը վեր բարձրացնող մեխանիզմը, որը հույների մոտ ստացավ «արքիմեդեսյան պտուտակ» անունը: Դա փողրակավոր մի գլան էր, որը շարժվում էր պտուտակի շուրջն ու այսպիսով ներմղում ջուրը: Մեխանիզմը շարժման մեջ էր դնում ստրուկը, որը քայլում էր գլանի մակերևսին ամրացրած հատուկ սանդղաձև խորշերով: Հելլենիստական արհեստավորները վատարելագործեցին նաև ջուլհակի հին եգիպտական դազգահը. դրա արդյունքը եղավ գործվածքների ավելի արագ ու լավորակ արտադրումը և այլն:

Հելլենիզմի դարաշրջանում ամենաբարձր զարգացմանը հասավ ռազմական ու շինարարական տեխնիկան: Դարաշրջանի այդ հատկանշական գիծը պայմանավորված էր այն ժամանակի սոցիալտնտեսական ու քաղաքական հարաբերություններով: Ռազմական ու ռազմածովային տեխնիկայի զարգացման կապակցությամբ որոշ շահով լավացավ մետաղյա համաձուլվածքների որակը: Դրանցից պատրաստում էին սրեր, ասպազենք, նիզակների ու նետերի ծայրապանակներ և այլն: Սկսած մ. թ. ա. IV դարից, տարբեր ժամանակներում հնարվեցին ու լայն տարածում ստացան զանազան նետող գործիքներ (հին աշխարհի հրետանին): Դրանք պատրաստվում էին փայտի կարծր տեսակներից: Այդ գործիքների տարբեր մասերն ամրություն համար երեսապատում էին մետաղով: Գործիքները մեծ տարածության վրա (մինչև 300—350 մ ու անգամ ավելի) նետում էին տարբեր տրամաչափեր ունեցող քարեր ու ծանր նետեր: Ամենաճիշտ նետումը ապահովվում էր 100—150 մ տարածության վրա: Նետողական գործիքի հիմքում դրված էր ձիգ ճոպանը, որը բաղկացած էր կենդանիների իրար հյուսված մի քանի ջլերից կամ մազերի մի քանի փնջերից: Հատկապես գնահատվում էին նետող զենքի համար օգտագործվող այն ճոպանները, որոնք պատրաստվում էին կանանց՝ յուղով օծված մազերից: Այս պատճառով կա-

նանց մագերը հանդիսանում էին կարևոր ստրատեգիական ապրանք։ Այդ են մատնանշում հին հեղինակները։ Պատերազմի ժամանակ ծագած դժվարությունների դեպքում հայրենասեր կանայք կտրում էին իրենց մագերն ու դրանք զոհաբերում պաշտպանություն կարիքների համար։ Առավել տարածված էին նևտող զենքի երկու տեսակները՝ բաբանները (կատապուլտներ) ու բալլիստները, որոնք արձակում էին նետեր ու քարեր՝ ձիգ ճոպանների երկու փնջերի միջոցով, ինչպես և էշերը, որոնք նևտում էին մեծ քարեր մեկ փունջ ձիգ ճոպանների օգնությամբ։

Պերգամոս քաղաքի ամրացված մասում պեղվեց Պերգամոսի թագավորների մեծ զինանոց, որտեղ պահվում էին տարբեր տրամաշափի հատուկ մշակված քարեր. վերջիններս նախատեսված էին նևտող գործիքներով արձակելու ու ամրոցի գաղաթից թշնամու վրա գցելու համար։ Նման զինանոցներ գտնվեցին նաև հելլենիստական այլ քաղաքների ավերակներում։

Բերդերը վերցնելու համար նախկինում հայտնի խոյերից բացի, դեռ Ալեքսանդրի ժամանակից, ինչպես արդեն նշվել է, սկսեցին կիրառել հատուկ, անիվների վրա դրված շարժական աշտարակներ՝ հելեպոլիսներ (քաղաքներ վերցնողներ)։ Դրանք պատրաստվում էին փայտից, իսկ առանձին կարևոր մասերն ամրացվում էին երկաթով։ Հելեպոլիսները պատրաստվում էին թշնամու քաղաքի բերդապարսպի բարձրությունը հավասար։ Հելեպոլիսի ներսում գտնվում էին ռազմիկներ, նևտող զենքեր՝ քարերի ու նետերի պաշարով հանդերձ։ Երբ հելեպոլիսը, նևտելով քարեր ու նետեր, մոտենում էր բերդապարսպին, նրա վերին մասում գտնվող մարտիկները կարող էին ուղղակի նևտահարել դեպի թշնամու քաղաքի խորքը, իսկ հևտ հելեպոլիսից գցած կամրջակով անցնել բերդապատի վրա։ Քաղաքի պաշտպանները սովորաբար փորձում էին այրել հելեպոլիսը կամ որևէ այլ ձևով վնասել այն, փչացնել նրա առջևի ճանապարհը։ Հելեպոլիսները շարժվում էին մարդկանց մկանային ուժի միջոցով։ Հարձակողական զենքի հզորություն մեծացումը հանգեցրեց բերդապարսպների կառուցման կատարելագործմանն ու պաշտպանության համար նախատեսված զանազան պարզ մեխանիզմների գյուտին։ Այդ գործում հատկապես հռչակվեց Արքիմեդեսը (մ. թ. ա. 287—212 թթ.). նա մեխանիկայի իր ուսումնասիրած օրենքները հիման վրա հնարեց մի շարք պարզ մեքենաներ ու դրանք գործադրեց իր հայրենի Սիրակուզա քաղաքը մ. թ. ա. 213—212 թթ. պաշարած հռոմեական բանակի ու նավատորմի հարձակումը ետ մղելու համար։

Հելլենիզմի շրջանում ծովերում նույնպես սկսեցին կիրառվել

նախկինի համեմատութեամբ ավելի խոշոր նավեր, որոնք ունեին թիավարողների հինգ ու ավելի շարքեր: Ռազմական նավերի տախտակամածի վրա տեղադրվում էին վահաններ, կառուցվում հատուկ աշտարակներ, որտեղ դտնվում էին նետող գործիքներ. դրանք գլխավորապես օգտագործվում էին ծովից բերդապարիսպները գնդակոծելու համար: Երբեմն փորձ էր արվում կառուցել շատ հարկաշարքեր ունեցող հսկայական թիանավեր, բայց ինչպես պարզվեց, այդ նավերը քիչ շարժունակ էին և դժվար կառավարվող: Հելլենիստական տիրակալներն այդ նավերն օգտագործում էին սոսկ որպես լողացող պալատներ: Դրանցից ամենախոշորն ու շքեղն էին Պտղոմեոս IV Փիլոպատրի ու Հիերոն II Սիրակուզացու բազմահարկ նավերը:

Կատարելագործման ենթարկվեցին նաև առևտրական նավատորմի նավերը: Դրանք ավելի հաճախակի էին լողում բաց ծովում ու անդամ դուրս էին գալիս օվկիանոս: Մ. թ. ա. II դ. հուլյն Հիպպալոսը Հնդկաստան ճանապարհորդելիս, առաջին անգամ հայտնաբերեց որոշակի ուղղութեամբ փչող համընթաց մուսոնային քամու օգնութեամբ բաց օվկիանոսում նավարկելու հնարավորութեանը: Մովազնացութեան զարգացումը հանգեցրեց ավելի կատարելագործված փարոսներ, պահեստներ և այլ օժանդակ կառույցներ ունեցող նավահանգիստների ու առևտրական առափների շինարարութեան անհրաժեշտութեանը: Այդ կառույցներից ոմանք ունեին վիթխարի շափեր ու այն ժամանակի շինարարական տեխնիկայի ակնառու նվաճումներ էին: Հնում հատկապես հռչակված էր Փարոսյան լուսատուն, որը ցույց էր տալիս դեպի եգիպտական Ալեքսանդրիա տանող ճանապարհը: Այն գտնվում էր փոքրիկ Փարոս կղզու վրա. այդ կղզին երկար ու ամուր պատնեշով միացված էր մայրցամաքի հետ: Փարոսն իրենից ներկայացնում էր 130 մետրից ավելի բարձրություն ունեցող բազմահարկ մի աշտարակ: Առաջին հարկում տեղադրված էր լայտերը, որի լույսը գիշերը բաց ծովում երևում էր 100 մղոն հեռավորութեան վրա: Փարոսն օգտագործվում էր նաև իբրև դիտման կետ: Ընդհանրապես հելլենիստական դարաշրջանի ճարտարապետութեան մեջ նորութեան էր կիրառական քաղաքացիական ու մասնավոր նշանակություն ունեցող կառույցների մեծ դերը: Եթե դասական Հունաստանի ճարտարապետութեան մեջ առաջատար շենքի դերը կատարում էր տաճար-պերիպտերոսը, ապա այժմ առաջատար դարձավ մասնավոր տունը՝ պերիստիլոսը: Հելլենիստական թագավորների պալատները նույնպես կառուցվում էին իբրև մեծ, հարքստորեն զարդարված պերիստիլոսներ: Առավել մեծ ուշադրություն էր հատկացվում շուկայական հրապարակների ու բուլետե-

րիոնների կառուցմանը: Հելլենիզմի դարաշրջանում շինարարական տեխնիկայի զարգացմանը նպաստեց նախկինի համեմատությամբ հսկայական թիվ կազմող նոր քաղաքների ու նոր ռազմավարական և առևտրաարհեստավորական կենտրոնների առաջացումը: Քաղաքները հաճախ կառուցվում էին հատակագծի հիման վրա, ուղիղ անկյան տակ շախմատածև հատվող փողոցներով: Ժիշտ է, այդպիսի հատակագծով դեռևս մ. թ. ա. VI դ. կառուցվեց Օլվիան, իսկ մ. թ. ա. V դ.: Պիրեևսն ու այլ քաղաքներ, սակայն դրանք լայն տարածում գտան հելլենիզմի դարաշրջանում: Դրան նպաստեց այն, որ նոր քաղաքների մի մասը կառուցվում էր գյուղերի տեղում ու նախկինում անկառուցապատ հողամասերում: Շատ հելլենիստական քաղաքներում կային ջրմուղ ու կոյուղի, ինչպես նաև հանրային պարտեզներ ու զբոսայգիներ: Հատկապես հռչակված էր եգիպտական Ալեքսանդրիայի կենտրոնում գտնվող զբոսայգին՝ Պանեյոն բլրով ու շքեղ Դափնե զբոսայգին Օրոնտեսի Անտիոքում: Սելևկյանների մայրաքաղաք Անտիոքում առաջին անգամ մտցվեց փողոցների գիշերային լուսավորումը: Փողոցների անկյուններում դնում էին ջահ-ճրպաներ: Հելլենիստական աշխարհում մեծ նշանակություն ունեին ծովային ու գետային ուղիները, ինչպես նաև քարավանային ու կատարելագործված սայլուղիները, որոնք ժառանգվել էին հին Պարսկաստանից: Ծանապարհների կառուցումն ու կատարելագործումը շարունակվում էր անընդհատ:

Ամփոփելով հելլենիստական տեխնիկայի զարգացման, նվաճումների և առանձնահատկությունների վերաբերյալ մեր տեղեկությունները, անհրաժեշտ է ընդգծել, որ դրանք հիմնված էին ձեռքով արհեստավորական արտադրության առաջընթացի վրա: Ընդ որում աճն ճյուղերում, որտեղ կիրառվում էր ազատ աշխատանքը, այդ առաջընթացը ավելի նկատելի էր: Ստրուկտուրայի ու աշխատավոր բնակչության տարբեր կախյալ խավերի աշխատուժը մնում էր էժան ու մատչելի: Այս պատճառով կատարելագործումներն արվում էին ելնելով մարդու և կենդանիների մկանային ուժի հնարավորությունից. դրանց նպատակը չէր որոնել արտադրական պրոցեսներում մեխանիկական շարժիչներ գործադրելու հնարավորություններ: Այս քանում վառ կերպով արտահայտվեց ստրկատիրական հասարակարգի սոցիալ-տնտեսական սահմանափակվածությունը:

Հելլենիզմի դարաշրջանի վերջում հրաշալի ինժեներ ու գիտնական Հերոն Ալեքսանդրիացին հնարեց մի սարք, որը հայտնի է «Հերոնի գոլորշագուռն» անունով: Այն բաղկացած էր կրակի վրա տաքացվող, ջրով լի ու կափարիչով ծածկված կաթսայից, որի մեջ մտցված էր խողովակ: Գոլորշու շիթը կաթսայից հասնում էր դա-

տարկ գնդին, իսկ հետո ելնում երկու խողովակներով, որոնք ունեին տարբեր կողմերի վրա կորացած ծայրեր: Խողովակները գտնվում էին հակադիր կիսագնդերի վրա: Գոլորշին կոր խողովակներից դուրս գալով կիսագնդերը հրում էր հակադիր ուղղությամբ ու շարժման մեջ դնում գունդը, որն սկսում էր արագ պտտվել: Այսպիսով, այստեղ Հերոնը կիրառեց մի սկզբունք, որի վրա է հիմնված շոգե-տուրբինների կառուցվածքը: Հնում շոգետուրբինի նախատիպը օգտագործվեց որպես խաղափր: Դրանից բացի, Հերոնը մշակեց շարժումն ավտոմատ եղանակով տարածության վրա հաղորդելու համակարգեր. դրանք պետք է օգտագործվեին տիկնիկային թատրոններում: Այս օրինակները ցույց են տալիս, որ ստրկատիրական կարգերի գոյության պայմաններում կարևոր գյուտերն անգամ չէին նախատեսվում արտադրության մեջ կիրառելու համար:

Հելլենիստական հասարակության ամենաբարձրագույն տեխնիկական նվաճումը, որը տեղ գտավ արտադրության մեջ, ջրաղա-ոփի կիրառումն էր Պոնտական թագավորությանում՝ մ. թ. ա. I դ. Ճիշտ է, դրա օգտագործումը կրում էր սահմանափակ բնույթ ու, ըստ էության, բացառություն էր ընդհանուր օրենքից: Ջրաղացների (որոնց քանակը մեծ չէր) հետ մեկտեղ, դրանք շարունակ տարածված ու օգտագործվում էին կենդանիների ուժով շարժման մեջ դրվող ալրաղացներ, ձեռքի աղացներ ու անգամ հասարակ երկանքներ: Ալրաղացման գործի կարևոր դերը (որ կապված էր ստրկատիրական հասարակությունում արտադրության սպառողական ուղղվածության հետ) հանգեցրեց այն բանին, որ ջրաղացն, այնուհանդերձ, երբեմն օգտագործվում էր հատիկ աղալու համար ու այն չվերածվեց սոսկ հետաքրքրաշարժ խաղալիքի:

Հելլենիզմի ժամանակաշրջանում տեխնիկայի տեսակետից ամենահետամնաց ու ամենածանր աշխատանքի տեսակն էր մնում լեռնագործությունը: Հանքերում, հնուց ժառանգված պրիմիտիվ բրիչներով, մուրճերով կատարվող, անդադար, հյուծիչ, ուժասպառ անող աշխատանքներում ղոհվում էին մեծ թվով ստրուկներ, դատապարտյալ ազատներ ու ռազմագերիներ: Գյուղատնտեսության առաջատար դերը հնում դրսևորվեց հանրաքարի մշակման տեխնիկայում. հանրաքարի կտորները մանրացվում էին երկանքների ու ձեռքի աղացների միջոցով:

Հելլենիզմի դարաշրջանի տեխնիկայի ու տեխնիկական մտքի՝ նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ զարմանալի նվաճումների հիմքում ընկած էր անողութաբար շահագործվող գյուղացիների, արհեստավորների ու ստրուկների ծանր աշխատանքը, բայց հենց այդ ստրկատիրական հիմքն իսկ, ինչպես տեսանք, սահմա-

նափակում էր տեխնիկական զարգացման հնարավորությունները թե՛ տնտեսապես և թե՛ սոցիալապես պայմանավորված բավական նեղ շրջանակներով:

#### ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Հելլենիստական պետությունների տիրակալները, ելնելով հըսկայական ռազմական ու ծովային տարածքները կառավարելու, շինարարական գործը, ինչպես նաև ռազմական ու ծովային տեխնիկական կատարելագործելու պահանջներից, հովանավորում էին գիտության զարգացումը: Հելլենիստական թագավորների մայրաքաղաքներում ստեղծվում էին գիտական կենտրոններ ու գրադարաններ: Հելլենիստական աշխարհի հատկապես հայտնի գիտական ու մշակութային կենտրոններն էին Ալեքսանդրիան Եգիպտոսում, Պերգամոսը, Օրոնտեսի Անտիոքը: Մշակութային և առաջին հերթին փիլիսոփայական կենտրոնի իր նշանակությունը պահպանեց հինավուրց Աթենքը: Նախկինի պես Միկլիդիայի կարևոր մշակութային կենտրոնն էր Սիրակուզան:

Մենք ավելի հանգամանորեն գիտենք հելլենիստական աշխարհի գլխավոր մշակութային կենտրոնի՝ Ալեքսանդրիայի մասին: Այստեղ Պտղոմեոսների հովանավորությամբ հավաքված էր այն ժամանակի համար վիթխարի մի գրադարան, որտեղ դարաշրջանի վերջում կային մինչև 700000 պապիրուսի գալարներ: Ալեքսանդրիայի գրադարանը առավել լրիվ շափով պարունակում էր հունական ու մասամբ արևելյան այն իմաստությունը, որ կուտակվել էր այն ժամանակներում: Գրադարանից բացի, թագավորի արքունիքում կազմակերպվեց Մուսեյոնը՝ գիտական հիմնարկ (որտեղ և ապրում էին գիտնականները), որը հանձնված էր մուսանների հովանավորությանը (այստեղից էլ Մուսեյոն անունը): Մուսեյոնի կազմակերպիչների թվում նշում են փիլիսոփա-պերիպատետիկոս, անցյալում Աթենքի օլիգարխիական կառավարիչ Դեմետրիոս Փալերացուն: Աթենքում իշխանությունը կորցնելուց հետո նա փախավ Եգիպտոս ու Պտղոմեոս Սոտերի հանձնարարությամբ կազմակերպեց Մուսեյոնը՝ Աթենքում եղած փիլիսոփայական դպրոցների օրինակով: Պտղոմեոսները հելլենիստական աշխարհի բոլոր երկրներից Մուսեյոն էին հրավիրում հույն գիտնականներին ու գրողներին: Այստեղ գիտնականները գտնվելով թագավորի խնամքի ներքո, զբաղվում էին գիտությամբ, փիլիսոփայությամբ, գրականությամբ:

Իհարկե, գրողներից, փիլիսոփաներից ու գիտնականներից պահանջվում էր հավատարմություն դրսևորել, փառաբանել թագավորական տոհմի անդամներին: Այն գիտնականը, որին թագավորը

հանձնարարում էր տնօրինել գրադարանը, միաժամանակ դառնում էր դահաժառանգի դաստիարակը: Ընդդիմադիր տրամադրություններ արտահայտելու հազվադեպ փորձերը դաժանորեն ճնշվում էին: Գիտություններին, գրականությանն ու արվեստին ցույց տրվող հովանավորությունը մեծացնում էր թագավորի արքունիքի շուքն ու հեղինակությունը, սակայն դա միաժամանակ արտացոլում էր նաև մշակույթի ընդհանուր աճը:

Պտղոմեոսները Ալեքսանդրիայում շուտով կազմակերպեցին երկրորդ՝ հանրամատչելի գրադարան Բրուքեոն քաղաքային թաղամասում: Ալեքսանդրյան գիտնականները հռչակվեցին բնական ու տեխնիկական գիտությունների բնագավառում ձեռք բերած իրենց նվաճումներով, ինչպես նաև իբրև մասնագետ-բանասերներ:

Հելլենիզմի դարաշրջանում ինչպես արևելյան երկրներում, այնպես և Հունաստանում տեղի էր ունենում կուտակված գիտելիքների հետագա համակարգում: Գիտության առանձին ճյուղերով գնալով ավելի շատ զբաղվում էին մասնագետները, այլ ոչ թե ունիվերսալ-փիլիսոփաները. դա հատկապես բնորոշ էր Արիստոտելի աշակերտների ու հետևորդների՝ պերիպատետիկների համար: Արիստոտելի աչքի ընկնող աշակերտ ու պերիպատետիկների փիլիսոփայական դպրոցի ղեկավարման գծով նրան անմիջականորեն փոխարինած Թեոփրաստոսը (մ. թ. ա. մոտ 370—285 թթ.) արդեն ոչ այնքան փիլիսոփա էր, որքան «բուսաբանության հայր», որը մանրազնին գիտումների հիման վրա նկարագրեց բույսերի մի վիթխարի բազմություն ու նրանց փոխհարաբերությունները շրջապատող միջավայրի հետ: Թեոփրաստոսից հետո այդ դպրոցը գլխավորեց Ստրատոնը (մ. թ. ա. III դ.), որը հնում ստացավ ֆիզիկոս անունը: Իբրև ապագա թագավոր Պտղոմեոս II Փիլադելփոսի դաստիարակ, նա սերտ կապեր ուներ թագավորի արքունիքի հետ Ալեքսանդրիայում ու Մուսելյոնի հետ: Ստրատոնն ուսումնասիրում էր բնության օրինաչափությունները, նա ապացուցում էր, որ բնությունը զարգանում է ներքին, իրեն հատուկ նյութական անհրաժեշտության հիման վրա: Ստրատոնի հատուկ ծառայությունը այն էր, որ նա ֆիզիկական երևույթների ուսումնասիրության ժամանակ ձգտում էր կիրառել փորձը: Նրա գործունեության այդ կողմը նպաստում էր բնական ու տեխնիկական գիտությունների զարգացմանը: Ստրատոնի աշակերտների մեջ էր հիանալի աստղագետ Արիստարքոսը՝ Սամոս կղզուց (մ. թ. ա. մոտ 310—230 թթ.). նա առաջ քաշեց հանճարեղ հիպոթեզ այն մասին, որ Երկիրն ու մոլորակները պտտվում են Արեգակի շուրջը, բայց այն ժամանակի գիտության զարգացման ընդհանուր մակարդակը թույլ չտվեց, որ նա կարողանա համոզիչ



կերպով ապացուցել այլ գիտնականներին իր՝ կողմից հայտնագործած արեակենտրոն համակարգի ճշտությունը:

Ալեքսանդրյան աչքի ընկնող մաթեմատիկոսներից առաջինը Եվկլիդեսն էր (մ. թ. ա. III դ.). նրա գործունեությունը առնչվում էր Մուսելյոնի գոյություն առաջին տարիների հետ: Եթե վերը նշված գիտնականները դուրս էին եկել Արիստոտելի Լիկեոնից ու պերիպատետիկների դպրոցի ներկայացուցիչներ էին, ապա Եվկլիդեսը շարունակեց ու ավարտեց Պլատոնի Ակադեմիայի մաթեմատիկական աշխատանքները: Մուսելյոնում Եվկլիդեսը դասավանդում էր երկրաչափություն ու մանկավարժական գործունեության ընթացքում համակարգեց, ընդհանրացրեց և ավարտեց իր նախորդների նվաճումները: Նրա գլխավոր աշխատությունը՝ «Սկզբնավորումները», աչքի է ընկնում երկրաչափության համակարգի ճշտությամբ, պարզությամբ, տրամաբանական ավարտվածությամբ: Ահա 2000 տարուց ավելի այն հիմք է ծառայում տարրական երկրաչափության դասագրքերի համար:

Աչքի ընկնող աշխարհագետ, աստղագետ, մաթեմատիկոս ու բանասեր էր Մուսելյոնի գրադարանի վարիչ, թագածառանգ, ապագա Պտղոմեոս IV Փիլոպատորի դաստիարակ Երատոսթենես Կիրենելին (մ. թ. ա. 275—208 թթ.): Նա բավականին ճիշտ հաշվարկեց երկրագնդի շրջագծի երկարությունն ու ստեղծեց ֆիզիկամաթեմատիկական աշխարհագրության հիմքերը: Հենց իսկ «աշխարհագրություն» («գեոգրաֆիա») տերմինն առաջին անգամ օգտագործեց Երատոսթենեսը: Լինելով պալատական գիտնական, Երատոսթենեսը նաև հորինում էր ոտանավորներ ի պատիվ իր հովանավորների:

Ալեքսանդրիան գիտության միակ կենտրոնը չէր: Թեոփրաստեսը, օրինակ, աշխատում էր Աթենքում: Հելլենիստական աշխարհի գիտնականներից ամենանշանավորը՝ Արքիմեդը, երկար ժամանակ ապրել էր Սիրակուզայում, մշտական շփման մեջ էր մյուս գիտնականների հետ ու մի քանի տարի պարապել էր Ալեքսանդրյան Մուսելյոնում: Հիանալի գյուտարար Արքիմեդը ստեղծեց տեսական մեխանիկայի, հիդրոստատիկայի, գնդային երկրաչափության ու եռանկյունաչափության հիմքերը: Նա կատարելագործեց հաշվառկամների, հատկապես մեծ թվերի հետ կապված հաշվարկների թվաբանական մեթոդներն ու առաջին քայլերը կատարեց բարձրագույն մաթեմատիկայի հաշվումների ստեղծման գործում:

Մաթեմատիկայի ու աստղագիտության զգալի զարգացումը հելլենիզմի դարաշրջանում սերտորեն կապված էր հին հունական ու հին արևելյան, հատկապես բաբելական գիտության համադրման

հետ: Բաբելյական աստղագետներից պետք է նշել ականավոր գիտնական Կիդենաս Սիպարեցուն, որը ապրել է հավանաբար մ. թ. ա. IV—III դդ. սահմանագլխին: Հունական գիտությունն լրա դեռ հնուց մեծ ազդեցություն էր գործում եգիպտական մաթեմատիկան:

Մ. թ. ա. II դ. զգալի զարգացման հասավ հելլենիստական բրժշկությունը. այն նույնպես օգտագործեց անատոմիայի ուսումնասիրություն հաջողությունները Եգիպտոսում ու հազարամյա բժշկական փորձն ու գիտելիքները, որոնք կուտակվել էին Եգիպտոսում ու Բաբելոնում: Հունական տեսությունն ու պրակտիկայի զուգակցումը հին արևելյան փորձի հետ իր վառ արտահայտությունն ունեցավ ալեքսանդրյան բժշկական դպրոցում: Այդ դպրոցի հիմնադիրն է համարվում Հերոփիլոսը (մ. թ. ա. IV դ. վերջ— III դ. առաջին կես): Նա ուսումնասիրում էր մարդկային մարմնի օրգանները՝ ցանկանալով պարզել նրանց փոխհարաբերություններն ու, այսպիսով, ստեղծեց մարդու նկարագրական անատոմիան: Լինելով հմուտ բրժիշկ-պրակտիկ, նա ճշտեց ախտորոշման մեթոդները, մեծ նշանակություն էր տալիս դեղերին: Հերոփիլոսը ձգտում էր բժշկական տեսությունը զուգակցել պրակտիկայի հետ: Մյուս ականավոր բրժիշկը Երասիստրատոսն էր, որը մասամբ աշխատել էր Ալեքսանդրիայում, մասամբ էլ Սելևկոսի պետությունում: Նա հանդես եկավ իբրև Հերոփիլոսի մրցակից, լրացրեց և ուղղեց վերջինիս մի շարք դրույթները: Նա աչքի ընկնող վիրաբույժ էր: Բժշկության հաջողություններին մ. թ. ա. III դ. սկզբին նպաստեց այն հանգամանքը, որ առաջին Պտղոմեոսները թուլլատրեցին դիահերձել մահապատժի ենթարկված հանցագործների մարմինները: Ավանդությունը պահպանել է սարսափելի տեղեկություն այն մասին, որ Պտղոմեոս II-ը դիահերձման համար բժիշկներին էր հանձնում մահվան դատապարտված կենդանի հանցագործներին: Հետագայում ալեքսանդրյան բժշկությունը, ժխտելով ամեն կարգի տեսությունը, բնաշրջվեց դեպի փորձապաշտությունը (էմպիրիզմ): Փորձապաշտական բուժումն իր ծայրահեղ զարգացմանը հասավ մ. թ. ա. II—I դդ.:

Մ. թ. ա. III դարը հելլենիստական գիտության ծաղկման ժամանակաշրջանն էր: Մ. թ. ա. II-րդ դարի գիտության միայն առանձին ճյուղերը պահպանեցին նախորդ դարում ձեռք բերած մակարդակն ու անգամ նոր զարգացում ապրեցին: Նախ և առաջ այդ ճյուղերն էին աստղագիտությունը, աշխարհագրությունը, մեխանիկան: Մ. թ. ա. II դարում նշանավոր աստղագետ ու աշխարհագետ էր Հիպպարքոս Նիկեացին: Նրա դիտումներն ու շահագրումները աչքի էին ընկնում հատուկ ճշտությամբ: Հիպպարքոսը կատարելագործեց ու հնարեց մի շարք աստղաբաշխական գործիքներ: Նրան են վերա-

գրում գիշերահավասարների նախագծման հայտնագործումը, թեև հնաքավոր է, որ այն ավելի վաղ հայտնաբերվեց Բաբելոնում: Նա կազմեց անշարժ աստղերի ցուցակ, որի մեջ տեղ գտան շուրջ 900 լուսատուներ: Իր շափերով ու կանոնավորությամբ այդ աշխատությունը գերազանցեց մինչ այդ կազմված բոլոր ցուցակները: Նա ճշտեց օրացույցը, Երկրից մինչև Լուսին հեռավորությունը, գիտելիքները Երկրի ու Արեգակի ղանգվածի (մասսայի) մասին: Սակայն Հիպպարքոսը հանդես եկավ Արիստարքոսի արևակենտրոն հիպոթեզի դեմ ու իր հեղինակությամբ ամրապնդեց գիտության մեջ երկրակենտրոն սխալ համակարգությունը: Հիպպարքոսը մշակելով աշխարհագրությունը, հասարակածը բաժանեց 360°-ի: Նա մտցրեց նաև երկայնության ու լայնության հասկացությունը: Ընդ որում, երկայնություն համարեց արևմուտքից արևելք ընկած տարածությունը, որովհետև այդ ուղղությամբ հույներին հայտնի հողային տարածքն ավելի երկար էր, քան հարավից հյուսիս ընկած տարածությունը: Հարավից հյուսիս տանող ավելի կարճ ուղղությունը նա անվանեց լայնություն:

Հելլենիստական մշակույթի սկսված անկման (որն ի հայտ եկավ մ. թ. ա. II—I դդ.) դարաշրջանի բնորոշ դեմքն էր Պոսիդոնիոս Ապամեացին: Լինելով բազմակողմանի ու աշխատասեր գիտնական, փիլիսոփա և գրող, նա գիտական ու գիտությունը մասսայականացնելու գծով տարվող գործունեության հետ մեկտեղ զբաղվում էր նաև աստղագուշակությամբ:

Հելլենիստական համակարգի ճգնաժամը, որը սկսվեց մ. թ. ա. II դ., նպաստեց միստիկական տրամադրությունների աճին:

#### ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Փիլիսոփայությունը հելլենիզմի դարաշրջանում մասամբ փոխեց իր բովանդակությունն ու հիմնական նպատակները: Այդ փոփոխությունները պայմանավորված էին զարգացող հելլենիստական հասարակությունում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական ու քաղաքական պրոցեսներով: Այդ փոփոխությունները կյանքի կոչեց նաև փիլիսոփայությունից մի շարք մասնագիտական գիտությունների անջատման բուն փաստը: Եթե անցյալի փիլիսոփաները նախ և առաջ ձգտում էին հասկանալ ու բացատրել աշխարհի, հասարակության ու պետության էությունը և օրինաչափությունները, ապա հելլենիզմի դարաշրջանի փիլիսոփաներն իրենց գլխավոր ուղադրությունը նվիրեցին բարոյագիտության ու բարոյականության պրոբլեմների լուծմանը, վիթխարի ու անհանգիստ հելլենիստական աշխարհում ապրող առանձին մարդու վարքագծի պրոբլեմի լուծմանը: Պլատոնի

ու Արիստոտելի երկու հին հեղինակավոր փիլիսոփայական դպրոց-  
ները՝ ակադեմիականն ու պերիպատետիկականը, հետզհետե կորց-  
նում էին իրենց դեմքն ու հեղինակութունը: Ճիշտ է, այդ դպրոցնե-  
րը, հատկապես պերիպատետիկականը, սովեցին մի շարք ականա-  
վոր մասնագետ-գիտնականներ: Պլատոնի ուսմունքի հետևորդները  
սկզբում փորձեցին համակարգել այն ու այդ ուսմունքին հաղորդել  
ավելի հանրամատչելի տեսք: Բայց շուտով, հելլենիզմի դարաշրջ-  
ջանում ամենատարածված փիլիսոփայական դպրոցի՝ ստոիկների  
դեմ մղած պայքարի ընթացքում նրանք անցան թերահավատության  
(սկեպտիցիզմի) դիրքերը: Արիստոտելի հետևորդներն իրենց ուսուց-  
չի ուսմունքի մեջ մտցրեցին մատերիալիզմի շատ տարրեր: Սակայն  
նրանց աշխարհայացքում շկար ամբողջականություն: Այլ փիլիսո-  
փայական համակարգերի առանձին դրույթներն օգտագործելով,  
նրանք հետզհետե վերածվեցին էկլեկտիկների:

Դասական Հունաստանի հին փիլիսոփայական դպրոցների անկ-  
մանը զուգահեռ հելլենիզմի դարաշրջանում հանդես եկան ու զար-  
գացան երկու նոր փիլիսոփայական համակարգեր՝ ստոիկների ու  
եպիկուրականների համակարգերը: Ստոիկյան փիլիսոփայության  
հիմնադիրն էր մի սնանկացած վաճառական՝ Կիպրոս կղզում ծնե-  
ված Զենոնը (մ. թ. ա. մոտ 336—264 թթ.): Նա սովորեցնում էր  
բոլոր ցանկացողներին աթենական ազորայի (կենտրոնական հրա-  
պարակում) սյունավոր նկարազարդ նախասրահում (ստոյալում),  
Աթենքի ամենաբազմամարդ տեղում: Այստեղից էլ առաջացավ այդ  
փիլիսոփայական համակարգի անվանումը: Ստոիկությունը որոշ  
չափով հունական ու արևելյան հայացքների միացում էր: Զենոնը իր  
փիլիսոփայությունը ստեղծելով, օգտագործեց հատկապես Հերակլի-  
տոսի, Արիստոտելի ուսմունքները, կինիկների ուսմունքն ու բաբե-  
լական կրոնափիլիսոփայական պատկերացումները: Ստոիկություն-  
ը ոչ միայն ամենատարածված, այլև ամենաներկարակյաց հելլե-  
նիստական փիլիսոփայական դպրոցն էր: Այն իդեալիստական ուս-  
մունք էր, բայց հատկապես հելլենիզմի սկզբնական շրջանում պա-  
րունակում էր մատերիալիզմի գոեհկացված տարրեր: Ստոիկները  
ամեն ինչ կոչում էին մարմին, այդ թվում՝ միտքը, խոսքը, կրակը:  
Ստոիկները բովանդակ աշխարհը համարում էին անընդհատ զար-  
գացող ստեղծագործ կրակ: Կրակը ծնեց տիեզերքի ամբողջ բազմա-  
զանությունը: Այդ կրակը ստոիկներն աստվածացնում էին: Աստ-  
ված հենց իսկ բնության մեջ էր, նա նույնացվում էր բնության ըս-  
տեղծագործ սկզբնավորման հետ: Տիեզերքը, ուսուցանում էին ստո-  
իկները, ծնվել է կրակից ու ապագայում, ճիշտ նշված ժամկետում,  
նա կկլանվի կրակի կողմից, իսկ հետո կրկին կվերածնվի: Բայց

վերածնված տիեզերքը ճշտորեն կրկնում է այն, ինչ եղել է նախկինում: Տիեզերքում ոչ մի նոր բան չկա: Ամեն ինչ ճշտորեն, ընդհուպ մինչև վերջին մանրամասնություններն ու առանձին մարդկանց արարքները, կար նաև անցյալում, տիեզերքի գոյության նախորդ շրջաններում: Այն ամենը, ինչ տեղի էր ունենում աշխարհում, օրինաչափ ու անհրաժեշտ էր: Այդ բարձրագույն օրինաչափությունը ստոիկներն անվանում էին ճակատագիր: Մարդը, լինելով տիեզերքի մի մասնիկը, այն ճանաչում է դրոշմների՝ զգացողությունների օգնությամբ, դրոշմներ, որոնք ծագում են ճանաչվող օբյեկտի հետ մարդու ոգու շփման շնորհիվ: Ոգին, ըստ ստոիկների, հատուկ տեսակի թեթև մարմին էր, տաք շունչ: Գրոշմների հիման վրա մարդու մոտ ծագում են «ընկալողական պատկերացումներ», որոնք նրա համար այնքան հստակ են, որ այդ պատճառով դառնում են մեր կողմից օբյեկտիվ աշխարհը ճանաչելու շափանիչ:

Ստոիկների փիլիսոփայության գլխավոր մասը, որ հատկապես մեծ ազդեցություն գործեց ժամանակակիցների մտքի վրա, նըրանց բարոյագիտությունն էր՝ ուսմունքը մարդու վարքի մասին: Ստոիկները գտնում էին, որ բոլոր մարդիկ կարող են լինել հոգեպես հավասար, այդ թվում նաև ստրուկները, բոլոր մարդիկ կարող են երջանիկ լինել, եթե հասնեն առաքինության, Ստոիկների հասարակական իդեալն էր միասնական համաշխարհային պետությունը՝ միասնական քաղաքացիությամբ: Նրանց փիլիսոփայությունն արդարացնում էր քաղաք-պետությունների ճգնաժամն ու մեծ հելլենիստական միապետությունների ստեղծումը: Ստոիկներն ուսուցանում էին, որ յուրաքանչյուր մարդ պիտի ապրի բնության համապատասխան ու կատարի բնության կողմից նրա համար նախատեսած պարտքը, այսինքն պիտի բավարարվի կյանքում իրեն հատկացված տեղով: Կատարելով իր պարտքը, մարդ հետզհետե հասնում է առաքինության ու դառնում է երջանիկ: Իսկ առաքինությունը հուլությունն է, այսինքն անխուփ վերաբերմունք կյանքում եղած ամեն բանի հանդեպ: Ծանր աշխատանքում հալումաշ եղող ստրուկը, կանխորոշվածը կատարելով, նույնպես կարող է հասնել առաքինության, այսինքրն հուլության, ու այդ վիճակում գտնվելիս կարող էր լինել երջանիկ, «հավասար թագավորներին», ինչպես ասում էին ստոիկները: Նման բարոյականությունը միանգամայն ընդունելի էր շահագործողների համար: Գործնականում որոշ ստոիկներ թագավորների խորհրդականներ էին:

Սակայն ստոիկությունը հավասարակալ էր: Պայքարելով հանուն առաքինության այն մարդկանց դեմ, որոնք չէին կամենում ընթանալ առաքինության ուղիով, առանձին ստոիկներ անգամ արմատա-

կան վերափոխումների ակտիվ մասնակիցներ էին: Այսպիսին էին, օրինակ, սպարտական թագավոր ու վերափոխիչ Կլեոմենեսի խորհրդական Սփերոս Բորիսթենեսցին և Բլոսիոսը՝ Պերգամոսում Արիստոնիկոսի գլխավորած շրավորների ու ստրուկների ապստամբության մասնակիցը: Սակայն նման կարգի ելույթները ստոիկության հետևորդների համար կանոն չէին, այլ բացառություն:

Հելլենիստական փիլիսոփայական մյուս դպրոցի՝ Եպիկուրականների դպրոցի հիմնադիրն էր Եպիկուրոսը (մ. թ. ա. 341—272 թթ), որը Սամոս կղզուց էր: Նա ուսուցչի որդի էր: Հետագայում Եպիկուրոսը տեղափոխվեց Աթենք: Ի տարբերություն իր ժամանակակից Զենոնի, նա սկզբում փոքրաթիվ իր աշակերտներին ուսուցանում էր այգու մենությունում, այս պատճառով էլ նրա դպրոցը ստացավ Եպիկուրոսի այգի անունը: Նա խոշորագույն մտածող, փիլիսոփա-մատերիալիստ էր ու բացատրում էր տիեզերքի էությունը և օրինաչափությունները, ելնելով Դեմոկրիտոսի ատոմիստական տեսությունից, որը նա էլ ավելի զարգացրեց: Տիեզերքը դիտելով որպես դատարկության մեջ շարժվող անթիվ անհամար ատոմների զուգակցություն, Եպիկուրոսը դրանց՝ ըստ ձևի ու մեծության դեմոկրիտյան տարբերակմանը ավելացրեց նաև տարբերություն ըստ կշռի, այսինքն նա առաջինը ենթադրեց ատոմային կշռի առկայությունը: Ատոմները շարժման ժամանակ մի փոքր կողմ են շեղվում: Այդ շեղումները պայմանավորված են ոչ թե արտաքին, այլ ներքին պատճառներով: Շեղումները հանգեցնում են ատոմների անհամար բախումներին, որոնք ծնում են բազմապիսի նոր զուգակցություններ ու որակներ:

Եպիկուրոսը դետերմինիզմի հակառակորդն էր ու ենթադրում էր, որ ատոմների ներքին հատկություններով ծնված պատահականությունը տիեզերքի հիմնական օրինաչափություններից մեկն է: Մարդիկ, ինչպես և այն ամենը, ինչ գոյություն ունի, ատոմների որոշակի զուգակցություններ են: Եպիկուրոսն ընդունում էր ոգու գոյությունը մարդու մոտ: Ոգին նույնպես կազմված էր շատ նուրբ մատերիայի ատոմներից ու ցրվում էր մարմնի քայքայման կամ հրկիզման ժամանակ: Տուրք տալով իր ժամանակին, Եպիկուրոսը ընդունում էր նաև աստվածների գոյությունը, բայց պարզաբանում էր, որ նրանք նույնպես կազմված են ատոմներից: Աստվածները, ըստ Եպիկուրոսի, գտնվում էին հեռու, երանելի անգործունեության վիճակում ու ոչ մի ազդեցություն չունեն տիեզերքի ու մարդկանց վրա: Եպիկուրոսը սովորեցնում էր, որ օբյեկտիվորեն գոյություն ունեցող ու անընդհատ զարգացող արտաքին աշխարհը մարդկանց կողմից ճանաչվում է գզացողությունների միջոցով, գզացողու-

թյուններ, որոնք աշխարհն ընկալում են միանգամայն ճշտորեն: Այդպիսի ղգացողությունների կուտակման հիման վրա մեզ մոտ գոյանում են ընդհանուր հասկացություններ:

Եպիկուրյան փիլիսոփայության, ինչպես և ստոիկության գլխավոր խնդիրը մարդու վարքի մասին ուսմունք մշակելն էր նրան երջանկության հասցնելու նպատակով: Այդ նպատակին էլ, ըստ էության, ծառայում էր Եպիկուրոսի ուսմունքը ատոմների ինքնաբերական շեղումների մասին: Քանի որ մարդիկ կազմված են ատոմներից, նրանք այդ հիմքի վրա, իրենց անհատական ակտիվության միջոցով կարող են հասնել երջանկության, որն ամփոփված է հաճելի զգացումների մեջ: Վերջիններս են, ըստ Եպիկուրոսի, համեստ, զուսպ ապրելակերպը, փիլիսոփայական գրույցները ընկերական շրջանում, հասարակական ու քաղաքական կյանքի անհանգստություններից հեռու լինելը: Եպիկուրոսի բարեկամների մեջ կային ոչ միայն ազատներ, այլև ստրուկներ: Նրան են վերագրում «Ապրիր աննկատելի կերպով» արտահայտությունը: Կյանքի նման ձևը ցըրում էր նախապաշարումներն ու մարդու մեջ հետզհետե դաստիարակում էր հոգեկան անդորր, անխռով վերաբերմունք այն ամենի նկատմամբ, ինչ տեղի էր ունենում աշխարհում: Այդ անխռովությունը՝ ատարակսիան, իմաստունի բարձրագույն երջանկությունն է:

Այսպիսով, եթե ստոիկներն արդարացնելով գոյություն ունեցող աշխարհը, հորդորում էին բոլոր մարդկանց ակտիվորեն կատարել ճակատագրի կողմից նրանց համար նախորոշված պարտքը, ապա Եպիկուրոսը, ընդհակառակը, ամեն կերպ ձգտելով իրագործել ազատությունը յուրաքանչյուր առանձին մարդու համար, սովորեցնում էր մարդկանց երես թեքել հասարակական գործունեությունից ու ձգտել անձնական ինքնակատարելագործման: Հետևաբար եպիկուրականությունն արտահայտում էր անտիկ հասարակության մի մասի կրավորական բողոքը հելլենիզմի դարաշրջանի փոթորկոտ հասարակական հարաբերությունների ու խրոխտ քաղաքական անցքերի դեմ: Սակայն Եպիկուրոսը, ցուցադրելով որոշ հակասություն ատարակսիայի մասին իր ուսմունքի նկատմամբ ու ելնելով մարդու երջանիկ կյանքի մասին ունեցած իր իդեալից, արտահայտեց այն միտքը, որ հասարակությունը պետք է կառուցվի որպես իրար վնաս չհասցնելու վերաբերյալ պայմանավորվող մարդկանց մի ամբողջություն: Հետագայում եպիկուրականությունը ենթարկվեց խիստ գոհակացման: Այն սկսեցին ներկայացնել իբրև մի ուսմունք, որն արդարացնում էր ամեն տեսակի շռայլություններ:

Հելլենիզմի դարաշրջանում հանդես եկած ու զարգացած փի-

լիստփայական դպրոցներին բնորոշ էր ստրուկների մարդկային ար-  
ժանապատվության ու անգամ բարձր բարոյական հասկումը յունե-  
րի և իմաստության գոյության հնարավորության ճանաչումը:

#### ԿՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հելլենիզմի դարաշրջանում հումանիտար գիտելիքների նվա-  
ճումները մաթեմատիկական, բնական ու տեխնիկական գիտու-  
թյունների հաջողությունների համեմատությամբ ավելի համեստ  
էին: Դա վերաբերում էր պատմությանը, ու ամենից առաջ, ճար-  
տասանական դպրոցի հետևորդներին: Ճիշտ է, հունական պատմա-  
գրության ուսուցողական (դիդակտիկ) ուղղության ներկայացուցիչ-  
ների թվին մ. թ. ա. II դ. պատկանում էր ամենախոշոր անտիկ  
պատմագիրներից մեկը՝ Պոլիբիոսը (տե՛ս էջ 38): Բայց Պոլիբիոսը  
ևս, իբրև հետազոտող, չկարողացավ լրիվ շահով հասնել Թուրքի-  
դեսի մակարդակին: Հելլենիստական պատմիչների աշխատություն-  
ները, գիտական վերլուծության փորձերով հանդերձ, առաջվա պես  
պարունակում էին ուսուցողականության ու անգամ անցյալի մասին  
գեղարվեստական պատմվածքի տարրեր: Պատմական գիտության  
զարգացման վրա արգելակող ազդեցություն գործեց ստոիկների  
փիլիսոփայությունը բախտի մասին՝ նրանց ճակատագրապաշտա-  
կան ուսմունքով հանդերձ: Անգամ Պոլիբիոսը՝ կոնկրետ անցքերի  
պատճառների շուրջ ուսումնասիրությունների հետ մեկտեղ, հա-  
ճախ վերլուծությունը փոխարինում էր ճակատագրի պարզ վկա-  
յակոչումներով:

Պատմագրության զարգացման համար Բաբելոնում ու Եգիպ-  
տոսում խթան հանդիսացավ արևելյան ու հունական մշակույթների  
փոխադրեցությունը: Մ. թ. ա. III դ. առաջին կեսին ստեղծվում են  
երկու հռչակավոր աշխատություններ՝ բաբելական քուրմ Բերոսոսի  
«Քաղցեայի պատմությունն» ու Եգիպտական քուրմ Մանեթոնի  
«Եգիպտոսի պատմությունը»: Երկու աշխատություններն էլ գրված  
էին հունարեն, բայց տեղական աղբյուրների հիման վրա: Դրժ-  
բախտաբար այդ «Պատմություններից» մեզ հասել են սոսկ փոքր  
հատվածներ: Հելլենիզմի ժամանակաշրջանի հին հրեական հեղի-  
նակաները գրեցին հունական ու հրեական լեզուներով մակաբանցի-  
ների գրքերը, որտեղ պարունակվում է մեծ պատմական նյութ:  
Մարգարե Գանիելի գիրքը գուշակումների ձևով փաստորեն խոսում  
է Հելլենիզմի շրջանի պատմական անցքերի մասին:

Հելլենիզմի դարաշրջանում հանդես են գալիս գրականագիտու-  
թյան՝ իբրև գիտության սաղմերը՝ բանասիրական քննադատության,  
ինչպես և դասական հեղինակների (Հոմերոսից սկսած) իսկական



տեքստերի վերականգնման և դրանց մեկնաբանման ձևով: Բանասերները մշակում են տրամաբանական հիմքերի վրա հունական քերականության համակարգը: Բանասիրության մեջ ու գրականագիտության մեջ հատուկ զբաղվող գիտնականների թվում պետք է հիշատակել Արիստարքոս Սամոթրակեցուն, որն աշխատում էր ալեքսանդրյան Մուսեյոնում մ. թ. ա. II դ. առաջին կեսին: Միաժամանակ բանասերներ ու գրողներ էին բնագիտության առանձին ներկայացուցիչները: Այսպես, հուշակավոր Քնոփրաստոսը գրեց «Բնավորություններ» գրական-բնագատական աշխատությունը, ուր փորձեց վերստեղծել բացասական անձանց՝ պարծենկոտների, շողոքորթների ու այլոց կերպարները: Նրա աշխատությունը կարող է դիտվել որպես նոր ատտիկական կատակերգությունում հանդիպող գրական տիպերի ընդհանրացում: Հայտնի մաթեմատիկոս ու աշխարհագետ Երատոսթենեսը նաև բանասեր ու բանաստեղծ էր: Հելլենիզմի դարաշրջանից մեզ են հասել նաև գիտական թեմաներով գրված ոտանավորներ: Անգամ մաթեմատիկական խնդիրները կազմվում էին ոտանավորների ձևով:

Հելլենիզմի դարաշրջանի հունական գրականության կարևոր կենտրոն էր ալեքսանդրյան Մուսեյոնը: Այստեղ զարգացող գրական ուղղությունը ստացավ ալեքսանդրյան անունը: Դա հելլենիստական արիստոկրատիայի ճաշակն արտացոլող քնարականություն էր: Եթե անցյալի դասական քնարականությունը դիմում էր անկախ անտիկ պոլիսների քաղաքացիների լայն խավերին, ապա եգիպտական Պտղոմեոսների ու այլ հելլենիստական թագավորների արքունիքներում ծաղկող ալեքսանդրյան քնարականությունը հաճախ կրում էր պալատական բնույթ: Ալեքսանդրյան բանաստեղծների ճանաչված պարագլուխն էր Մուսեյոնի գրադարանի վարիչ ու թագաժառանգի դաստիարակ Կալլիմաքոսը (մ. թ. ա. մոտ 310—240 թթ.): Նա կազմեց գրադարանի կատալոգը. գիտնական-բանասեր էր: Կալլիմաքոսը դիցաբանական, պատմական ու գրական թեմաներով գրված բազմաթիվ, ծավալով փոքր ոտանավորների ու պոեմների հեղինակ էր, գրում էր սրամիտ էպիգրամներ ու հորինում էր իրեն հովանավորող Պտղոմեոսների հանդեպ հավատարմություն արտացոլող հիմներ: Կալլիմաքոսը տաղանդավոր ու հնարամիտ բանաստեղծ էր, հիանալի տիրապետում էր բանաստեղծական ձևերին: Խանդավառության պակասը նա լրացնում էր գիտությունը ու նուրբ սրամտությամբ: Կալլիմաքոսը կյանքի վերջում շինծու անմիջականությամբ Լրգեց թագուհի Բերենիկեի մազերի երկինք համբառնալն ու դրանց վերածումը համաստեղություն: Ալեքսանդրյան դպրոցի առանձին բանաստեղծներ այնքան տարվեցին արտաքին

ձևով՝ ի վնաս բովանդակության, որ գրում էին, օրինակ, ոտանավորներ, որտեղ բոլոր բառերը սկսվում էին նույն տառով, կամ գրում էին այնպես, որ ոտանավորների տողերի շափերը կազմում էին ընդհանուր առմամբ որևէ առարկայի, օրինակ, սկահակի, ստվերապատկերը: Հին առասպելաբանական սյուժեները, որոնք մշակվում էին ալեքսանդրյան բանաստեղծների կողմից, ինչպես և նախկինում, հետաքրքրում էին իբրև պատմական-բանասիրական նյութեր, առաջացնում խաղուն-հեզնական վերաբերմունք, դիտվում որպես պարզամիտ անցյալի զվարճալի-սուր պատմվածքներ:

Փոքր ձևերի քնարականության հետ մեկտեղ ձեռնարկվեցին նաև հին էպոսը վերածնելու փորձեր: Այդ ուղղության գլխավոր ներկայացուցիչն էր Կալլիմաքոսի ժամանակակից Ապոլլոնիոս Հոդոսցին, որը գրեց «Արգոնավտիկա» երկար էպիկական պոեմը: Այս պոեմում, շնայած հնաձևությանը հետևող ոճին ու խախուտ սյուժեին, կան Մեղեայի՝ Յասոնի հանդեպ սիրո նվիրված ոչ քիչ թվով հուզիչ ոտանավորներ, առանձին անձանց հոգեբանության նուրբ ուսումնասիրություններ: Դրանում արտահայտվեցին հելլենիզմի ժամանակաշրջանի գաղափարախոսությանը բնորոշ անհատականության գծերը: Ինչպես և Կալլիմաքոսին նմանվողների պոեզիայում, աստվածները Ապոլլոնիոսի պոեմում օժտված են կենցաղային գծերով ու շեն առաջացնում և ոչ մի պատկառանք: Ալեքսանդրյան դպրոցի ամենախոշոր բանաստեղծն էր Կալլիմաքոսի ու Ապոլլոնիոսի կրտսեր ժամանակակից, սիկիլական ծագում ունեցող Քեոկրիտոսը: Սիրակուզյան տիրանի արքունիքում տեղավորվելու անհաջող փորձ ձեռնարկելուց հետո նա նուրբ քնարական շողոքորթության օգնությամբ հասավ այն բանին, որ Պտղոմեոս II-ի կողմից ընդունվեց ալեքսանդրյան Մուսեյոնի բանաստեղծների շարքը: Քեոկրիտոսը մտավ պատմության մեջ իբրև փոքրիկ քնարական-դրամատիկական պոեմ-հովվերգությունների հեղինակ. այդ գործերում նա երգում էր գյուղական ու քաղաքային կյանքի խաղաղ տեսարաններ, իդեալականացված հովիվների, ինչպես նաև քաղաքների բնակիչների ու բնակչուհիների զգայաշարժ ապրումներ: Քեոկրիտոսը նուրբ քնարերգու էր, գովերգում էր բնությունը, սերը: Նկարչի սուր աչքով նա նկատում է բազմաթիվ կենցաղային մանրուքներ, որոնք կենսունակություն ու պատկերավոր կոնկրետություն են հաղորդում նրա հովվերգություններին: Բայց բանաստեղծը չի ապրում իր հերոսների հետ մի ընդհանուր կյանքով, նա իրեն ավելի բարձր է դասում նրանցից, թույլ է տալիս հանդուրժողական հեզնանք նրանց հասցեհին: Դա «բարձր խավի» ներկայացուցչի հեզնանքն էր իր կողմից փաստորեն նվաստացված «հասարակ ժողովրդի» նկատմամբ:

Ալեքսանդրացիներին հարող բանաստեղծների թվում անհրաժեշտ է հիշատակել նաև Հերոնդասին, միմեռի՝ փոքրիկ կենցաղային դրամատիկական տեսարանների հեղինակին, որի միմերը հիշեցնում են զավեշտախաղեր (վոդևիլներ), բայց ունեն կոպիտ-բնապաշտական բովանդակություն:

Ալեքսանդրյան պոեզիայից բացի հելլենիզմի դարաշրջանում մեծ նշանակություն ունեցավ նոր ատտիկական կատակերգությունը, որի հիմնադիրն ու գլխավոր ներկայացուցիչն էր աթենացի Մենանդրոսը (մ. թ. ա. մոտ 342—292 թթ.): Նրա կատակերգությունները հայտնի են շնորհիվ XX դ. սկզբին Եգիպտոսում հայտնաբերված մի պապիրուսային գալարի, որը պարունակում էր նրա գործերի մի մասը: Մենանդրոսի կատակերգությունները ընտանեկան կենցաղային դրամաներ են: Թեթևամիտ երիտասարդը, նրա կողմից գայթակղված աղջիկը, նրանց ծնողները, հետերաները, խորամանկ հնարամիտ ստրուկները՝ ահա նրա, սյուժեի տեսակետից բարդ կատակերգությունների գործող անձինք: Կենցաղի նրբորեն նկատված գծեր, գործող անձանց վառ անհատական բնութագրեր, ձգտում՝ ընդգծելու դրական կողմեր անգամ այնպիսի ավանդաբար բացասական դեմքերի մոտ, ինչպիսիք էին հետերաները՝ ահա Մենանդրոսի կատակերգությունների բնորոշ կողմերը: Նա իր գործերում հանդես է գալիս որպես մարդկային անձի, սիրող ու տառապող, բնությունից բարի, թեև շատ վատ բաներ անող անձի պաշտպան: Մենանդրոսի կատակերգությունների վերջը երջանիկ է: Նրա գործերը հեռու են Արիստոփանեսի կատակերգությունների քաղաքական միտումնավորությունից: Մենանդրոսի հերոսներն ապրում ու գործում են իրենց փոքրիկ միջավայրերում, ընտանեկան ու սիրային ապրումների մեջ: Այստեղ կրկին արտահայտվեցին այդ դարաշրջանի գրականության սահմանափակ գծերը: Վերջին ժամանակներում հայտնաբերվել ու հրատարակվել է Մենանդրոսի մի նոր կատակերգությունը՝ «Դիսկոլոսը» («Մուսլը»), որը համարյա լրիվ պահպանվել է պապիրուսի վրա: Այն պատկանում է դրամատուրգի վաղ երկերի թվին ու պարունակում է սոցիալական անարդարության դեմ ուղղված բողոքի ակնարկումներ:

Հելլենիստական գեղարվեստական արձակի հետաքրքիր տեսակն էին հեռավոր ֆանտաստիկ երկրների, ուր իբր թե եղել էին ճանապարհորդները, նկարագրությունները: Այդպիսի ժանրի արձատները հարում էին ինչպես հունական, այնպես և արևելյան հունթյանը: Այդ ստեղծագործությունները ըստ ձևի արևելյան ու հունական մշակույթների՝ հելլենիզմի դարաշրջանում տեղի ունեցած փոխազդեցության ծնունդ էին, ըստ բովանդակության՝ ոստոպիաներ,

որոնց գաղափարները թելադրվել էին սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարաբերությունների կողմից: Ուստոպիաներում պատկերվում էին դրանց հեղինակների տեսակետից իդեալական հանդիսացող հասարակական կարգեր, որոնք իբր թև գոյություն ունեին առանձին երկրներում: Դիտորոտսի վերապատմածի միջոցով մեզ են հասել Եվհեմերոսի ու Յամբուլոսի երկու բնորոշ հելլենիստական ուստոպիաներ: Առաջինը հավանաբար գրված է մ. թ. ա. III դ. ըսկրզբին, երկրորդը՝ ավելի ուշ շրջանում: Եվհեմերոսն իր «Սուրբ ժամանակագրությունում» պատմում է ֆանտաստիկ Պանքեա կղզու սովորությունների մասին. այդ կղզում բնակիչներն ապրում են մի ընդհանուր համայնքով, քրմերի կառավարման ներքո: Քրմերը բաշխում են հողագործների ու հովիվների կողմից արտադրած մըթերքները: Այդ ուստոպիայի գլխավոր բովանդակությունն էր կազմում բանական տեսությունը աստվածների ծագման վերաբերյալ: Պարզվում է, որ Պանքեայում հասարակական կարգերի հիմնադիրն էր Զևսը, որը մի ժամանակ թագավորել էր այստեղ: Իր ծառայությունների համար նա աստվածացվեց: Ընդհանրապես բոլոր աստվածները մարդիկ են, նրանք անցյալում ապրած թագավորներ, հայտնի գործիչներ ու բարերարներ են: Այսպիսով, Եվհեմերոսի ուստոպիան արտացոլում ու արդարացնում էր հելլենիստական թագավորների աստվածացման կրոնական-քաղաքական պրակտիկան:

Բոլորովին այլ բնույթ ունեւր Յամբուլոսի ուստոպիան Արևի հեռավոր, նույնպես ֆանտաստիկ կղզու մասին: Այնտեղ հասարակածային բարերար կլիմայի պայմաններում ապրում ու համատեղ աշխատում են երջանիկ, խաղաղ մարդիկ: Նրանք չունեն պետական կազմակերպում, չկան դասեր, մասնավոր սեփականություն, չկա փոխադարձ թշնամություն: Նրանք բոլորն էլ հավասար են, նրանց մոտ ամեն ինչ ընդհանուր է: Այդ ուստոպիան սոցիալական բողոք է արտացոլում հելլենիստական ստրկատիրական հասարակարգի ծանր, դաժան իրականության դեմ:

Հելլենիզմի դարաշրջանի տեղական գրականությունը ներկայացված է հին հրեական Աստվածաշնչի առանձին գրքերով, որոնք պարունակում են բարձր քնարական պոեզիայի ու կյանքի պայմանների վերաբերյալ փիլիսոփայական մտորումների նմուշներ: Հաճախ դրանց մեջ զգացվում է անզոր բողոք սոցիալական անարդարության դեմ ու հայրենասիրական վերելք՝ Սելևկյանների ագրեսիայի դեմ մղած պայքարում: Տեղական բնակչության կողմից օտար նվաճողների հանդեպ տածած ատելությունն իր արտահայտումը գտավ մարգարեությունների գրական ձևի մեջ: Այդ կարգի հետաքրքիր հուշարձան է «Կալագործի մարգարեությունը» Եգիպտոսից. այն

պատմում է ծովափնյա քաղաքի (այսինքն՝ Ալեքսանդրիայի) ապագայում անխուսափելի կործանման ու Եգիպտոսի անկախության վերականգնման մասին:

#### ԱՐՎԵՍՏԸ

Կերպարվեստը հելլենիզմի դարաշրջանում հասավ մեծ հաջողությունների: Այդ ժամանակ ստեղծվեցին ճարտարապետության աչքի ընկնող հուշարձաններ, որոնցում զուգակցվում էին հունական ու մասամբ արևելյան ավանդույթները: Դրանցից շատերին բնորոշ էր վիթխարիության ու շքեղության, քանդակագործական զարդերով՝ պատերի, խոշակների և սյուների խարիսխների ծանրաբեռնուման, սյունակարգերի (ոճերի) խառնման ձգտումը և այլն: Հանդես են գալիս հարթ, առանց մատնեքների սյուներ ու երկհարկանի սյունաշարեր: Եթե դասական շրջանում վերջինները կիրառվում էին շենքերի ներքին ձևավորման համար, ապա այժմ դրանք սովորաբար դուրս են տարվում ու երիզում են ոչ միայն շենքերը, այլև ամբողջական ճարտարապետական համալիրները, օրինակ, հրապարակները: Տաճարների հետ մեկտեղ, որոնք դրսից գերազանցապես կառուցվում էին հոնիական օրդերի-սյունակարգի ոճաձևով, իսկ ներսից՝ կորնթոսյան օրդերի ոճաձևով, տարածվում է պաշտամունքային կառույցների այլ տեսակը՝ մոնումենտալ զոհարաններ՝ պերիստիլները: Դրանցից ամենանշանավորն էր Պերգամյան բազիլը:

Հասարակական կառույցների հսկայական բազմությունից աչքի էին ընկնում գիմնասիոններն ու պալեստրաները, մեծ շափերի հասնող թատրոնները, որոնք սակայն դասական ժամանակի համեմատությամբ ունեին ավելի փոքր օրքեստրաներ: Ստոալի՝ ծածկ ունեցող բազմաթիվ վերնասրահները հանդիսանում էին բազմամարդ քաղաքային հրապարակների պարտադիր պատկանելիքներ: Հրապարակները, քաղաքային պարտեզներն ունեին հատուկ հատակագծում ու ճոխ զարդարված էին տաղավարներով ու արձաններով: Քանդակագործական արվեստն այդ ժամանակ ապրում էր հատկապես զգալի ծաղկում, բայց նրա բովանդակությունը, չնայած ժառանգորդության, լրջորեն տարբերվում էր դասական դարաշրջանի ավանդույթներից: Հին հունական պոլիսների աստվածների, հերոսների ու «քաջարի և հիանալի» քաղաքացիների իդեալականացված ու ընդհանրացված արձանները մղվեցին հետին գծի վրա, առաջին տեղը գրավեցին բնապաշտոնեն կատարված արձաններն ու անդրիները, որոնք ընդգծում էին պատկերված անձի անհատականությունը: Քանդակագործներն ստեղծում էին տարբեր տարիքի

մարդկանց (մանուկներից մինչև զառամյալ ծերունիներ) արձաններն ու բարձրաքանդակները, մանրամասնորեն ընդգծելով էթնիկական ու ազգագրական հատկանիշները այն դեպքում, երբ պատկերվողները հույներ չէին: Այս բոլոր սյուժեները օտար էին դասական քանդակագործությանը: Հելլենիստական քանդակագործներն ստեղծում էին ֆիզիկական ու հոգեկան տառապանքներ, պայքար, հաղթանակ ու մահ պատկերող արձաններ ու արձանախմբեր: Նրանց լեմատիկան արտացոլում էր հելլենիզմի մեզ արդեն ծանոթ գծերը: Այդ ժամանակաշրջանի քանդակագործության համար նորը բնատեսարանի ու կենցաղային մանրամասնությունների պատկերման մեջ էր. դրանք դիտվում էին որպես մի ֆոն, որի վրա ծավալվում էր ստեղծագործության հիմնական սյուժեն: Նման պատկերումը անհայտ էր դասականությանը: Դրա հետ միասին հելլենիզմի զարաշրջանում քանդակագործության մեջ գոյություն ունեւր նաև պալատական թեմատիկան, որը զարգացավ հելլենիստական միապետների արքունիքների հովանու ներքո: Քանդակագործները պատկերում էին նրբագեղ ու միանգամայն երկրային Աֆրոդիտեներին ու Ապոլլոններին, որոնք զարդարում էին զոհարաններն ու տաճարները:

Այդ ժամանակի քանդակագործության մեջ կարելի է տարբերել մ. թ. ա. IV դարի մեծ վարպետներից եկող մի քանի ուղղություններ: Աթենքում ու Ալեքսանդրիայում մշակվում էին սյուժեներ ու ձևեր, որոնք հարում էին Պրակսիտելեսին. դրանք հաշվի էին առնում այն ունեւոր մարդկանց ճաշակները, որոնք ձգտում էին վայելել կյանքն ու արվեստի գործերի մեջ տեսնում էին զմայլանքի առարկաներ: Դրամատիզմով լի Պերգամյան դպրոցը ելնում էր Ակոպասից: Այդ դպրոցի աչքի ընկնող հուշարձանն էր Պերգամյան Բագինի ծոփորը (Ֆրիզը), որը պատկերում էր «գիզանտոմաքիան»՝ աստվածների պայքարը գիզանտների (հսկաների) դեմ: Այն խորհրդանշում էր Պերգամոսի ու մյուս հելլենիստական պետությունների ծանր պայքարը գալատների դեմ: Այդ դպրոցին բնորոշ էր զգացմունքների խիստ լարումը, որը արտահայտվում է հայտնի արձաններում՝ մեռնող գալլը, իր կնոջը սպանած ու գերի շրնկնելու համար իրեն դաշունահարող գալլը և այլն:

Հռոդոսյան դպրոցի, որի հիմնադիրն էր Լիսիպոսը, քանդակագործները պատկերում էին զորեղ ատլետներին, ռազմիկներին, պայքարի տեսարաններ: Մ. թ. ա. III դարում Հռոդոս քաղաքի նավահանգստի մուտքը զարդարում էր Հելիոսի բրոնզե վիթխարի արձանը, որն ունեւր 31 մ բարձրություն ու հայտնի էր Հռոդոսյան հրսկա անունով: Մի քանի տասնյակ տարի կանգուն մնալով, Հռոդոսյան հսկան վայր ընկավ ու քանդվեց երկրաշարժի հետևանքով: Նրս-

տած բարյացակամ կին-աստվածուհու՝ Տյուբեի արձանը նույնպես պատկանում է այդ դպրոցին:

Հելլենիստական դարաշրջանի վերջում հելլենիստական քանդակագործության խանդավիցությունը սկսեց այլասերվել. դա արտահայտվեց դարհուրելի սյուժեներով ու շինծուությամբ շափից ավելի տարվելու մեջ: Նման երանգը նկատելի է երկու աչքի ընկնող արձանախմբերում, դրանք են՝ «Ֆարնեզյան ցուլը» (մ. թ. ա. II դ.) ու «Լաոկոոնը» (մ. թ. ա. I դ.): Առաջին խմբում հովիվներ Զեթոսն ու Ամփիոնը վայրի ցուլի եղջուրներից կապում են դաժան թագուհի Իիրկեին, որը ցանկացել էր նույնանման մահվան հանձնել իր ստրկուհի Անտիոպեին՝ այդ հովիվների մորը: Երկրորդ խմբում, որը կերտված էր Տրոյական պատերազմի պատմության մոտիվներով, օձերը խեղդում են քուրմ Լաոկոոնին ու նրա երկու որդիներին այն բանի համար, որ աքայացիների թողած փայտե ձիու մեջ քուրմը գուշակեց ռազմական խորամանկություն ու խորհուրդ տվեց թողնել այդ ձիուն Տրոյայի պատերից դուրս: Այդ օձերին ուղարկել էր տրոյացիներին ասող աստված Պոսիդոնը: «Լաոկոոնի» հեղինակները ձգտում էին որքան կարելի է ավելի սուր կերպով արտահայտել ծեր քրմի ու նրա որդիների տանջալից մահը:

Հելլենիզմի դարաշրջանի երկրորդ կեսին քանդակագործության մեջ ուժեղացավ դասականության իդեալականացված ձևերին վերադառնալու ձգտումը: Այդ ուղղության հիանալի հուշարձան է Միլոսյան Աֆրոդիտեի արձանը, որի մեջ զուգակցվում են դասականության ձևերի իդեալականությունը աստվածուհու ֆիզուրի կատարման ու զրվածքի մեջ ձեռք բերած նոր նվաճումների հետ: Հելլենիզմի դարաշրջանում արձանագործության արվեստի շափերով փոքրիկ կերտվածքներ դարձան մասսայական գեղարվեստական արտագրության առարկաները՝ թրձակավե (տեռակոտե) արձանիկները-այդ արձանիկները պատրաստում էին հատուկ կաղապարների մեջ: Կենցաղային բնույթի այդ արձանիկներից շատերը նրբագեղ են և ունեն ինքնուրույն գեղարվեստական արժեք: Բեռլտիայում գտնվող մի փոքր քաղաքի՝ Տանագրայի անունով (այդ քաղաքի պեղումների ժամանակ հայտնաբերվեցին շատ այդպիսի արձանիկներ) դրանք կոչվում են տանագրյան:

Հելլենիզմի շրջանում հիանալի հաջողությունների հասավ գլիպտիկան՝ քարի փորագրման արվեստը: Նրա գեղեցիկ նմուշն է «Գոնգագայի կամեան», որի վրա կիսադեմ պատկերված են թագավոր Պտղոմեոս II-ի ու թագուհի Արսինոեի գլուխները:

Գրական տվյալների համաձայն հելլենիստական նկարչությունը ևս ձեռք բերեց մեծ նվաճումներ, ընդ որում նկարիչները ձգտում

էին այնպէս պատկերել բնօրինակը, որպէսզի առաջանա իրականութեան պատրանք: Նկարչութեան հոշակված վարպետ էր Ապելլե-սը: Սակայն հելլենիստական ժամանակի նկարներից, որոնք գըլ-խավորապէս գրված էին մոմե ներկերով, ու որմնանկարներից գրեթէ ոչինչ չի պահպանվել: Դրանց արտաքին տեսքը մենք վերականգ-նում ենք հոմեական պատճեններով, որոնք վերարտադրված են գլխավորապէս Պոմպեյի որմնանկարներում ու խճանկարներում: Հելլենիստական նկարչութեան հիանալի հուշարձան էր պատճենա-վորված ձեռով բավականին լավ պահպանված մի հսկայական խճա-նկար՝ Ալեքսանդրի ճակատամարտը Դարեհ III-ի հետ Իսոսոսի մոտ:

Հելլենիստական կերպարվեստի հետ մեկտեղ իր գոյութունն էր պահպանել ու դարգանում էր բաբելացիների, եգիպտացիների, ինչպէս նաև հույների և մակեդոնացիների կողմից նվաճված այլ ժողովուրդների տեղական արվեստը: Վերջինիս սյուժեներն ազդե-ցութուն գործեցին քանդակագործութեան ու քարափորագրութեան հելլենիստական ստեղծագործութունների վրա: Միջերկրական ծովի ավազանի երկրներում լայնորեն ներկայացված էր Եգիպտոսի կեր-պարվեստը, մի երևույթ, որը հատկապէս կապված էր Իսիս աստ-վածուհու պաշտամունքի հետ: Եգիպտոսում հունական նկարչու-թեան աչքի ընկնող հուշարձաններ են մահացածների դիմանկարնե-րը, որոնք կատարված են տախտակների վրա մոմե ներկերով: Այդ դիմանկարները դնում էին դագաղի մեջ հանգուցյալի դեմքի վրա:

#### ԿՐՈՆԸ

Օլիմպոսյան աստվածների նկատմամբ հավատը, որը կապված էր հունական պոլիսների կյանքի պայմանների հետ, մ. թ. ա. IV դ. ճգնաժամից ու պոլիսների անկախութեան փաստական վերացու-մից հետո հետզհետե կորցնում էր իր նշանակութունը: Քաղաքա-ցիական համայնքների հովանավոր աստվածների պաշտամունքնե-րի հետ միաժամանակ առաջ են գալիս ու հելլենիստական աշխար-հով մեկ աստիճանաբար տարածվում են արևելյան ու նոր աստված-ների պաշտամունքները, որոնցում կարծես թէ զուգակցվում էին արևելյան ու հելլենական աստվածներին հատուկ գծերը:

Նոր աստվածները հաճախ ձեռք էին բերում հելլենականացված արտաքին, բայց նրանց կրոնական բովանդակութունը մնում էր գերազանցապէս արևելյան: Կյանքի անապահովվածութունն ու ան-հանգիստ ընթացքը, մշտական պատերազմները, հեղաշրջումները, հաղթվածների ստրկացումը, արտակարգ սուր գույքային շերտավո-րումն ու դասակարգային պայքարի ուժեղացումը ստեղծեցին կրո-



նական բավարարութեան նոր ձևերի պահանջ, խավար ու խորապես տառապող մարդկանց տարաբնույթ զանգվածներում:

Նոր կրոնական ծեսերի ստեղծման տարերային պրոցեսի հետ միասին նկատվում էր նաև հունա-մակեդոնական տիրակալների լարված կրոնաքաղաքական գործունեությունը՝ նոր պետությունների համար հարմար կրոնական պաշտամունքներ ստեղծելու ուղղությամբ: Այդ բնագավառում հատուկ նշանակություն ունեցավ Պտղոմեոս I Սոտերի գործունեությունը. նրա կարգադրությամբ հունական ու եգիպտական քրմերին հաջողվեց դարգացնել ու ձևավորել Օսիրիս-Ապիսի երկրպագումը, որը ծագել էր Եգիպտոսում հույն-մակեդոնական վերաբնակների միջավայրում: Այդ հիմքի վրա հանդես եկավ հույն-եգիպտական Սարապիսի՝ բուժող աստծու և աշխարհի տիրակալի պաշտամունքը, այն լայնորեն տարածվեց Եգիպտոսում ու նրա տահմաններից դուրս: Ամենուրեք արմատավորվում էին հելլենիստական արքաների պաշտոնական պաշտամունքները, յուրաքանչյուրը՝ հատուկ քրմերի հաստիքներով ու շքեղ արարողություններով հանդերձ: Աստվածացվում էին ինչպես մահացած, այնպես և կենդանի թագավորող «աստվածային զույգերը»՝ երկրային աստվածները՝ թագավորն ու թագուհին: Նրանց երկրպագումը համարվում էր հպատակների բարեհուսուության նշան ու այն հետևաբար ուներ քաղաքական երանգ: Բայց, մյուս կողմից, թագավորների կրոնական երկրպագումը հույց ի վեր հայտնի էր արևելքում, իսկ Հունաստանում այն նույնացնում էին հերոսների հինավուրց պաշտամունքի հետ:

Հաղթանակած կառավարիչների աստվածացմանը, նրանց հանդես տաժած երկյուղից ու հաճոյանալու ցանկությունից բացի, նպաստում էր նաև հիասթափությունը հին օլիմպոսյան կրոնից՝ վերջինիս հատուկ, շատ դեպքում կոպիտ ու պարզամիտ առասպելներով: Դա որոշակիորեն զգացվում է Դեմետրիոս Պոլիորկետեսին նվիրված հիմնում: Աթենացիներն աստվածացրեցին Դեմետրիոսին այն բանից հետո, երբ նա զավթեց նրանց հինավուրց քաղաքը: Աթենացիները դիմում են նրան այնպես, կարծես թե Դեմետրիոսն իրենց առջև կանգնած կենդանի աստված էր: «Իսկ ուրիշ աստվածները մեզ չեն լսում, իսկ, գուցե, նրանք ընդհանրապես չկան» — ասվում է հիմնում:

Հույները սկսեցին պաշտել փոքրասիական Մեծ մորը՝ Կիբելիին, ինչպես նաև դավանել բաբելական ու ասորական կրոնները: Հատկապես լայնորեն տարածվեց Իսիսի հին եգիպտական պաշտամունքը, Իսիսն այժմ համարվում էր Սարապիս աստծո կինը: Բոլոր այս պաշտամունքները կրում էին սինկրետիզմի (միացման) գծեր և

ունենին միստիկական բնույթ: Հավատացյալները հատուկ կրոնական ծեսերի ու վարժությունների միջոցով (դրանք կատարվում էին գաղտնաբար ու այս պատճառով կոչվում էին «միստերիաներ») ընկղմվում էին հափշտակվածության վիճակի մեջ ու իրենց երևակայությունում հաղորդվում էին պաշտվող աստծու հետ: Իրենց երևակայություններում նրանք հաղթում էին կյանքի դառնությունները, մահը ու հարություն էին առնում նոր կյանքի համար, այսինքն ստանում էին բարոյական ինքնաբավարարման պատրանք, մոռացության էին տալիս իրական կյանքի ծախսորդությունները: Հին հեփպտական առասպելները տառապող կին ու մայր, շար ուժերի դեմ պայքարող ու նրանց հաղթող Իսիսի մասին վերստին իմաստավորվեցին հելլենիզմի դարաշրջանում: Իսիսը դարձավ բարի աստվածուհի, տառապյալների հովանավորուհի, կյանք տվող մեծ արարած ու աշխարհի տիրուհի: Մյուս կողմից միստերիաները հույներին հայտնի էին դեռ արխաիկ ժամանակներից: Դասական շրջանում Ատտիկայում միստերիաները կատարում էին Ելեվսիսում: Հելլենիզմի դարաշրջանում նրանք ունեցան ավելի մեծ տարածում ու ավելի մեծ նշանակություն ձեռք բերեցին հավատացյալների կյանքում:

Հին աստվածների հետ մեկտեղ, որոնց պաշտամունքները ստացան նոր բովանդակություն, այդ ժամանակ լայնորեն տարածվեցին նոր վերացական աստվածների՝ Արդարության, Հաջողության, Ճակատագրի և այլոց պաշտամունքները: Նրանցից հատուկ ժողովրդաչնություն էր վայելում Բախտի՝ արդեն հիշատակված աստվածուհին՝ քմահաճ ճակատագիր Տյուբեն, որը խաղում էր մարդկանց հետ: Սկսած մ. թ. ա. II դարից, հելլենիզմի երկրներում ամենուրեք տարածվում էր աստղագուշակությունը. այն նշանավորում էր կրոնական պատկերացումների հաջողությունը ի վնաս գիտության, որը այնքան բուռն զարգանում էր մ. թ. ա. III դ. ու մ. թ. ա. II դ. առաջին կեսին: Աստղագուշակությունը ծագեց Բաբելոնիայում՝ աստղերի ու մոլորակների պաշտամունքից: Նրա տարածմանը նպաստեց ստոիկների իդեալիստական փիլիսոփայությունը, քանի որ ճակատագրի վերաբերյալ նրանց ուսմունքը կարծես թե սահմանակցվում էր աստղագուշակական այն ուսմունքի հետ, որի համաձայն մարդու ճակատագիրը կախված է մոլորակների դասավորումից այն պահին, երբ մարդը ծնվում է: Աստղագուշակությունն ուսուցանում էր, որ մարդու բովանդակ կյանքը միստիկորեն կանխորոշված է: Մարդիկ ձգտելով դուրս պրծնել ճակատագրի իշխանությունից, դիմում էին կրոնական միստերիաներին, հավատալով, որ հատուկ ծեսեր կատարելուց հետո նրանք իբր թե հաղորդվում են

մեծ աստվածների հետ ու հոգեպես կամ ապագա կյանքում ազատվում են ճակատագրի իշխանությունից, այսինքն իրենց երևակայության մեջ նրանք ժամանակավորապես ազատվում էին ճնշող իրականությունից:

Հելլենիզմի դարաշրջանում տեղի ունեցած կատաղի դասակարգային պայքարն ու պայքարը օտար նաճողների դեմ իրենց կրոնական արտահայտությունն ունեցան մեսիականության մեջ: Արևելքում մերթ աշտեղ, մերթ աշտեղ ծագում էին կրոնական ուսմունքներ աստվածային պատգամաբերների՝ մեսիանների մասին, որոնք կզան իրենց երկրպագուների մոտ ու կգլխավորեն հաղթական պատերազմը հանուն անկախության կամ հանուն բնակչության լայն զանգվածների կյանքի պայմանների բարելավման: Հելլենիզմի դարաշրջանի վերջում զգալի տարածում ունեցան իրանական ու հին հրեական կրոնների հիման վրա ծագած մեսիականության գաղափարները: Մեսիայի գալստյան վերաբերյալ եղած հույսերն արտացոլում էին աշխատավորների անկազմակերպվածությունն ու փաստական թուլությունն այն իրական պայքարում, որ նրանք մղում էին շահագործողների դեմ: Ահա ինչու այդ դավանաբանություններն այս կամ այն շափով օժանդակություն ու անգամ կրոնական մշակում էին ստանում ոչ միայն հելլենիստական երկրների ստորին, այլև բարձր քրմական միաբանությունների կողմից:

Այսպիսով, հելլենիզմի կրոնական համակարգերը տարբեր միջոցներով մարդկանց շեղում էին իրական կյանքից: Բայց միևնույն ժամանակ դրանք հատուկ արտասովոր ֆանտաստիկ կերպարներով ու հնարանքներով արտացոլում էին այդ պատմական դարաշրջանին բնորոշ սոցիալ-տնտեսական քաղաքական առանձնահատկությունները:

Ինչպես արդեն տեսանք, հելլենիստական մշակույթի տարբեր ճյուղերը զարգանում էին անհամաչափորեն ոչ միաժամանակ: Նրա գլխավոր նվաճումները ձեռք բերվեցին դարաշրջանի առաջին կեսին: Հունական ու հին արևելյան մշակույթների համագործակցության շնորհիվ ստեղծվեց հելլենիստական հասարակարգի ստրուկատիրական մշակույթը: Հունական տեխնիկան ու գիտությունը հարստացան այն գիտելիքների շնորհիվ, որոնք կուտակվել էին Բաբելոնում, Եգիպտոսում, Ասորիքում ու այլ, գլխավորապես մերձարևելյան երկրներում: Հայտնի է, օրինակ, հելլենիստական աստղաբաշխության արագ առաջընթացը բաբելական աստղաբաշխների աշխատությունները հունարեն լեզվով թարգմանելուց հետո: Արքի-

մեղի գյուտարարական հանճարի վրա բարերար ազդեցութիւն գործեց եգիպտական տեխնիկական կառուցումների հետ նրա ծանոթանալը: Հռչակավոր հելլենիստական բժիշկները, գուգակցելով եգիպտական, բարելական ու հունական փորձը, զգալիորեն կատարելագործեցին բժշկութեան տեսութիւնն ու բժշկական պրակտիկան: Մյուս կողմից, տիրոջ դասակարգերի ներկայացուցիչներն Արեւելքում շատ բան յուրացրեցին դասական Հունաստանի տեսական ու կազմակերպական-գործնական նվաճումներից: Այդ մշակույթը, արտոնյալ փորրամասնութեան մշակույթ լինելով, դարգանալով աշխատավոր լայն զանգվածների շահագործման ուժեղացման հաշվին, արդեն մ. թ. ա. II դարում սկսեց դրսևորել անկման գծեր:

Թեև կրթութիւնը տարածվեց ավելի մեծ չափով, քան առաջ, կրթված մարդկանց թիւը հելլենիստական երկրներում շարունակում էր մնալ խիստ աննշան: Գրագիտութեան մասնավոր փորր զարգացման շատ քիչ գիտելիքներ էին տալիս իրենց աշակերտներին: Հունական «գիմնասիոնները» միջնակարգ ուսումնական հաստատութիւններին նմանվող այդ զարգացման, մատչելի էին միայն տեղական լիբրավ քաղաքացիների երեսանների սահմանափակ թվի համար: Սակավաթիվ բախտավորները կարող էին ավելի խորացված կրթութիւն ստանալ այլքսանդրիան Մուսեյոնում, Աթենքի ու այլ գիտական և փիլիսոփայական կենտրոնների փիլիսոփայական զարգացման կամ մի որևէ փիլիսոփայի, գիտնականի, ճարտասանի մոտ անհատական կարգով սովորելու միջոցով: Որպես կանոն դա շատ թանկ արժէր: Բնակչութեան հիմնական զանգվածը չէր օգտվում հելլենիստական մշակույթի բարիքներից:

Ժամանակակից արևմտահւրոպական պատմագրութեան մեջ տարածված է այն թելը, թէ հելլենիստական մշակույթի հաջողութիւնները մ. թ. ա. III դարում կապված էին այդ մշակույթում հելլենական ազդեցութեան դերակշռութեան հետ, իսկ մ. թ. ա. II դարից սկսած, անկումը կապված էր արեւելյան ազդեցութեան ուժեղացման հետ: Չկա ավելի սխալ բան, քան ժամանակակից բուրժուազիայի այդ, ըստ էութեան դադուրարական կոնցեպցիան: Մենք արդէն տեսանք, օրինակ, որ հելլենիստական գիտութեան ծաղկումը կապված էր նաև մ. թ. ա. III դարում արեւելյան նվաճումների օգտագործման հետ: Հետաքրքիր է, որ անգամ մ. թ. ա. II դ. երկրորդ կեսին, երբ հռչակավոր հունական աստղագետ Հիպպարքոսը հանդես եկավ մեր տիեզերքի արեակենտրոն լինելու վերաբերյալ Արիստարքոսի հանճարեղ հիպոթեզի դեմ, ապա միայն Բաբելոնիայում Սելևկոս Քաղղեացին պաշտպանեց արեակենտրոնութեան գաղափարը: Ոչ թէ արեւելյան ազդեցութիւնը, այլ հելլենիստական

հասարակության՝ մ. թ. ա. II դարում սկսված սոցիալ-տնտեսական ու քաղաքական ճգնաժամը եղավ հելլենիստական մշակույթի անկման պատճառը:

Վերջում անհրաժեշտ է ընդգծել, որ հելլենիզմի դարաշրջանի ընդհանուր մշակույթի ժառանգությունը շատ մեծ է ու կազմում է էական մասը այն նյութական հիմքի, որի վրա հազարամյակների ընթացքում հաջողությամբ զարգանում է համաշխարհային մշակույթը:

### Գլուխ 23. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՈՒ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐԵՎՄՏԱԿՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԿԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ XIX Գ. ԿԵՍԸ

Ստրկատիրական հասարակարգը ներքուստ քայքայող դաժան սոցիալական պայքարն ու թույլ դարգացած ռազմատենչ ցեղերի արշավանքները հին անտիկ մշակույթի երկրների դեմ ուղեկցվում էին բնակչության մշակութային մակարդակի անկումով: Հին Միջերկրածովյան աշխարհի ժողովուրդների, այդ թվում նաև Հին Հունաստանի պատմությամբ շարունակում էին հետաքրքրվել միայն բլերը:

Միայն մ. թ. I հազարամյակի վերջում կրկին աճեց հետաքրքրությունը հույն ժողովրդի անցյալի նկատմամբ: Այսպես, IX դարում Կոստանդնուպոլսի պատրիարք Փատր կազմեց հին հունական անունների ու անվանումների բացատրական բառարան՝ հին տերմինների բացատրություններով և բառարանում հիշատակվող անձանց մասին տեղեկություններով հանդերձ: Նույն IX դ. Գեորգ Սինկելլոսը գրեց ժամանակագրություն (մատենագրության նման գործ), որը պարունակում էր Հին Հունաստանի պատմության շարագրությունը: X դարում բյուզանդական կայսր Կոնստանդին VII Սիրանաձնի հրամանով ստեղծվեց պատմական քրեստոմատիա, որը բաղկացած էր անտիկ հեղինակների՝ հին հունական պատմությանը վերաբերող գործերի հատվածներից: XII դարում Զոնարասը գրեց նոր ժամանակագրություն ու հին հունական պատմությունը շարագրելիս լայնորեն օգտագործեց անտիկ գրողների ստեղծագործությունները, որոնց մի մասը հետագայում կորավ խաչակիրների կողմից 1204 թ. Կոստանդնուպոլսի ավերման ժամանակ:

XIV դ. Իտալիայի քաղաքներում, որպես առևտրական ու արհեստավորական կենտրոնների գրանց նշանակության աճի հետ

կապված, սկսեցին հավաքել անտիկ գրողներից պահպանված գործերը, ուսումնասիրել հին հունարեն լեզուն, կազմել անտիկ արվեստի ստեղծագործությունների հավաքածուներ: XV դարում Իտալիայի օրինակին հետևեցին արևմտակա մյուս երկրները: XVI դ. սկզբին հույն-հռոմեական հնությունների հավաքումը տարածվեց ամբողջ Եվրոպայով մեկ: Դա սերտորեն կապված էր արվեստի, գիտության ու մշակույթի վերածնության հետ<sup>6</sup>: XVI դ. ընթացքում հին հունական ու հռոմեական գրողների և պատմագիրների ստեղծագործությունները տպագրության միջոցով բազմացվելով, դարձան մարդկանց բավական լայն շրջանակի սեփականություն: 16-րդ հարյուրամյակի վերջին դրանք արդեն ուսումնասիրվում էին համալսարաններում ու հատուկ դպրոցներում՝ գիմնազիաներում, որոնք իրենց անունն ստացել էին հունական դպրոցներից: Հին հունական ու հռոմեական հեղինակների ստեղծագործությունների բնագրերի հրատարակմանը հաջորդեցին համահավաք պատմական աշխատությունների հրատարակումները սկզբում նիդերլանդներում, հետո նաև Արևմտյան Եվրոպայի մյուս երկրներում: Ծիշտ է, այդ աշխատությունները կառուցվում էին անտիկ հեղինակների պատմածի նկատմամբ ցուցաբերած չափից ավելի վստահության ու հնության հասարակական հարաբերությունների իդեալականացման հիման վրա: XVII դ. սկզբին ֆրանսիացի գիտնական, բանասեր Ժոզեֆ Յուստ Սկալիգերը (1540—1609 թթ.) ստեղծեց անտիկ պատմության գիտական ժամանակագրությունը:

XVII դարում Հունաստանի տարածքում ձեռնարկվեցին առաջին հնագիտական պեղումները. այդ ժամանակ սկսվեց նաև հին հունական արձանագրությունների հավաքումն ու ուսումնասիրությունը: Դա հնարավորություն տվեց ավելի խոր վերլուծել անտիկ գրականության մինչ այդ հայտնի ստեղծագործությունները, որոշել առանձին ձեռագրերի իսկությունը:

XVIII դ. սկզբին Իտալիայում Նեապոլի համալսարանի պրոֆեսոր Զանբատիստո Վիկոն (1670—1744 թթ.) հրատարակեց (1726 թ.) «Ազգերի ընդհանուր բնության մասին նոր գիտության հիմունքները» աշխատությունը, որտեղ առաջին անգամ փորձեց կիրառել պատմահամեմատական մեթոդը: Զ. Վիկոյի գիրքը հասարակական դարգացման պրոցեսի վերլուծության առաջին փորձն էր, պրոցես, որը Վիկոն առաջարկում էր նմանեցնել մարդկային

<sup>6</sup> Մենք չենք շոշափում վերածնության կամ Ռենեսանսի դարաշրջանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կողմերը, նրա պատմական տեղը եվրոպական հասարակության պատմության մեջ:

օրգանիզմի զարգացման պրոցեսին: Նա գտնում էր, որ առանձին ժողովուրդների, հատկապես հույների ու հռոմայացիների կյանքում կարելի է տեսնել մանկության, պատանեկության, երիտասարդության, հասուն տարիքի, ծերության փուլեր: Ժողովուրդները, առանձին մարդկանց նման, ապրում, ծերանում ու մահանում են՝ իրենց տեղը գիջելով նոր ցեղերին ու ժողովուրդներին: Խոսելով հունական պատմության հնագույն շրջանի մասին, Ջ. Վիկոն արտահայտեց այն միտքը, որ Հոմերոսի էպիկական պոեմները չեն ստեղծվել մի հեղինակի կողմից, այլ դրանք բանավոր ժողովրդական ստեղծագործության արդյունք են: Հոմերոսն իբրև պատմական անձ գոյություն չի ունեցել:

Ֆրանսիական Լուսավորության դարաշրջանի ականավոր ներկայացուցիչ Ե. Լ. Մոնտեսքյոն (1689—1755 թթ.) 1748 թ. հրատարակեց ֆեոդալական կարգերի ու բացարձակ միապետության դեմ ուղղված «Օրենքների ոգու մասին» քննախոսությունը, որտեղ մեծ տեղ և ուշադրություն հատկացրեց Հին Հունաստանի պատմությանը, նպատակ ունենալով այն հակադրել այդ ժամանակի Ֆրանսիայի արքայազնի փրկարարական վարչակարգին: Ե. Մոնտեսքյոն կանգ է առնում ստրկատիրության ձևերի տարբերությունների վրա Հին Հունաստանի ու Մակեդոնիայի առանձին մասերում, քննադատորեն վերլուծում է այն դիտողությունը, որ գոյություն ունեն ի ծնե բարոյակներ, մատնանշում է Հունաստանի ու Հին Արևելքի երկրների միջև եղած մշակութային կապերը, վերլուծում Աթենքի ու Սպարտայի պետական կառուցվածքի բնորոշ գծերը և այլն:

Անգլիայում XVIII դ. վերջին քառորդում ստեղծվեցին Հին Հունաստանի պատմությանը վերաբերող գիտական աշխատություններ, որոնք հիմնված էին նոր հայտնաբերված հնագիտական նյութերի վրա: Ժամանակակիցների մոտ ամենամեծ հաջողությունն ունեցավ գրական հիանալի լեզվով գրած Միտֆորդի աշխատությունը: Բայց այն խիստ միտումնավոր էր: Տորինների կուսակցության անդամ Միտֆորդը, վախեցած ու շարացած լինելով ֆրանսիական հեղափոխության անցքերի կապակցությամբ, խիստ իդեալականացնում էր արիստոկրատական Սպարտան. ընդհակառակը, Աթենական հանրապետությունը նրա կողմից պատկերվում էր իբրև մի ինչ-որ անիշխանական խառնամբոխ, իսկ Աթենքի քաղաքական գործիչները՝ որպես անսկզբունք ամբոխավարներ:

Գերմանիայում 1764 թ. հրատարակվեց Յ. Յ. Վինկելմանի «Հրեանդարի արվեստի պատմություն» աշխատությունը, որի մեծ մասը նվիրված էր հին հունական արվեստի պատմությանը: Այդ արվեստը հեղինակն ուսումնասիրել էր Իտալիայում՝ հռոմեական պատճեն-

ների ու գրական ավանդության հիման վրա: Զարգացնելով ֆրանսիական մեծ լուսավորիչ Վոլտերի ու մյուս ֆրանսիական հեղինակների մտքերը, Վինկելմանը ոչ միայն կանոնավոր կերպով նկարագրեց հին հունական քանդակագործության զարգացումը, այլև ցույց տվեց, որ այն, ինչպես և արվեստի անկումը, սերտորեն կապված էր հասարակության կյանքի հետ:

Մի փոքր ավելի ուշ, 1795 թ., Հալլեում լույս տեսավ դասական բանասեր Ֆրիդրիխ Ավգուստ Վոլֆի (1759—1824 թթ.) հետազոտությունը՝ նվիրված հունական էպիկական պոեզիային: Վոլֆը «Իլիականի» այդ ժամանակ հրատարակված բնագիրն օգտագործելով, ապացուցում էր, որ երկու էպիկական պոեմները շեն կարող դիտվել որպես մի բանաստեղծի ստեղծագործություն: Դրանք կազմավորվել են աստիճանաբար, առանձին էպիկական երգերի միացման հետևանքով: Ֆ. Ա. Վոլֆը չէր ժխտում, ինչպես այդ անում էր Վիկոն, Հոմերոսի՝ պատմականորեն իրավական գոյությունը, բայց գտնում էր, որ նա մեկն էր թափառական երգիչներից ու առավել հայտնի էր, այդ իսկ պատճառով նրա անունը պահպանվեց հետագա սերունդների հիշողության մեջ:

Հունական էպիկական պոեզիայի ծագման այսպիսի մեկնությունն ղեկավարեցին հին հունական գրականության շատ հետազոտողներ, այդ թվում նաև Ֆրիդրիխ Շիլլերը. նրանք ապացուցում էին «Իլիականի» ու «Ոդիսականի» գեղարվեստական միասնությունն ու պնդում էին, որ նրանց հեղինակը Հոմերոսն է: Այսպես ծաղեց երկարատև գիտական վեճը «Հոմերոսյան հարցի» շուրջը, որը շարունակվեց մինչև XX դ.: Այդ վեճը մինչև այժմ լուծված չէ:

XIX դ. սկզբում վերջնականապես ձևավորվեց գիտական պատմաքննական մեթոդը: 1810—1811 ուսումնական տարում Բեռլինի համալսարանում հոմերական պատմության դասընթացով հանդես եկավ Բարտոլդ Գեորգ Նիբուրը (1776—1831 թթ.): Իր դասընթացում Բ. Գ. Նիբուրը ոչ միայն քննական վերլուծության ենթարկեց անտիկ պատմագիրների գործերը, այլև համեմատեց տարբեր հեղինակների հաղորդած տեղեկությունները հնագիտական հայտնագործումների տվյալների, և վերջապես, սոցիալական զարգացման մեջ ետ մնացած ազգությունների կյանքն ուսումնասիրած ազգագրագետների տվյալների հետ: Բ. Գ. Նիբուրը քննադատորեն վերանայելով հայտնի փաստերը, միաժամանակ համեմատական մեթոդի հիման վրա փորձում էր վերականգնել ինչպես առանձին փաստական մանրամասնությունները, այնպես և պատմական զարգացման ընդհանուր ընթացքը: Իր կյանքի վերջին տարիներին Բ. Գ. Նիբուրը, լինելով Հելդելբերգյան համալսարանի պրոֆեսոր, կրկին և հոմերական



պատմության մասին իր դասախոսությունների շարքը, լրացնելով այն Հին Հունաստանի ու հին աշխարհի ուրիշ երկրների պատմության վերաբերյալ դասախոսություններով: Հետազոտության նրա մեթոդները լիակատար հավանության արժանացան գիտական միջավայրում ու փոխ առնվեցին եվրոպական այլ երկրների պատմաբանների կողմից: Այսպիսով, Բ. Գ. Նիբուրին կարելի է համարել պատմաբանական մեթոդի ստեղծող:

Հին Հունաստանի պատմության ուսումնասիրությանը XIX դարում նպաստեց մի կողմից նոր հնագիտական ու վիճագրական տվյալների արագ կուտակումը, մյուս կողմից՝ հետազոտության պատմաբանական մեթոդի զարգացումը:

1817 թ. Բեռլինում Ֆ. Ա. Վուլֆի աշակերտներից մեկը՝ Ավգուստ Բեկը (1785—1867 թթ.) հրատարակեց աշխատություն, որը նվիրված էր Հին Հունաստանի տնտեսական հարաբերությունների պատմությանը՝ «Աթենացիների պետական տնտեսությունը»: Հիմնականում հին հունական արձանագրությունների նյութերի հիման վրա գրված այս աշխատությունում Ա. Բեկը վերլուծում է հին Աթենքի ֆինանսական համակարգը: Միաժամանակ Ա. Բեկը որոշում է հին Ատտիկայի բնակչության թիվը, ստրուկների թիվը, մասնավոր անձանց հարստությունների, արհեստավորների վաստակի չափերը, սննդամթերքների գները, փոխառությունների տոկոսները և այլն: XIX դ. 20-ական թվականների սկզբին Ա. Բեկը առաջարկեց մի ընդհանուր կանոնավոր ժողովածուի մեջ հավաքել տարբեր հրատարակություններում ցրված հին հունական արձանագրությունները: Ա. Բեկը իր աշակերտների հետ միասին, լայնորեն ներգրավելով տարբեր եվրոպական հրկրներից, այդ թվում նաև Ռուսաստանից պատմաբանների ու բանասերների, պատրաստեց ու հրատարակեց մի վիթխարի աշխատություն՝ «Հունական արձանագրությունների ժողովածու» շորս հատորով: Այդ ժողովածուի հրատարակությունով, ըստ էության, պատմական գիտության մեջ վերջնականապես ձևավորվեց նաև մի օժանդակ բնագավառ հնության մասին՝ անտիկ վիճագրագիտությունը:

Ա. Բեկը հնագրան ուսումնասիրող մի շարք խոշոր գերմանացի պատմաբանների ուսուցիչն էր: Նրանցից մեկը՝ Յոհան Գուստավ Դրոյզենը (1808—1884 թթ.) իր աշխատություններում արտացոլեց գերմանական յունկերության ու բուրժուազիայի պահպանողական խավերի ագրեսիվ նկրտումները: 1833 թ. Յ. Գ. Դրոյզենը

հրատարակեց «Ալեքսանդր Մեծի պատմությունը», որտեղ ներբողական երանգներով մանրամասնորեն նկարագրելով Հունաստանի «միավորումը» Փիլիպոսի կողմից, պարզորոշ նմանություն էր տեսնում Մակեդոնիայի ու Պրուսիայի միջև՝ առաջինի «գինվորական դասով» ու երկրորդի յունկերությունը հանդերձ, սևացնում էր աթենական դեմոկրատիան ու Դեմոսթենեսին: Յ. Գ. Գրոյզկենը ոգևորությամբ էր նկարագրում Ալեքսանդր Մակեդոնացու նվաճողական պատերազմները, խոսքեր չէր խնայում իր հերոսի սխրագործությունները գովաբանելու համար: Հետագա տարիներին Յ. Գ. Գրոյզկենը շարունակեց իր աշխատությունը, հրատարակելով 1836 թ. «Գիագոթների պատմությունը», իսկ 1842 թ. «Սպիգոնների պատմությունը»: Այդ հատորներում նա մանրամասնորեն նկարագրեց Հունաստանի ու արևելյան Միջերկրականի երկրների ռազմաքաղաքական պատմությունը Ալեքսանդրի հետնորդների ժամանակ մինչև մ. թ. ա. 221 թ.: Նրա պատմությունը գրված է վառ արտահայտիչ լեզվով:

Յ. Գ. Գրոյզկենը գերմանական այն պատմաբաններից էր, որոնց վրա աղղկություն գործեց Գ. Վ. Հեգելի փիլիսոփայության հետադիմական կողմը: Պատմությունը, ըստ Հեգելի, «համաշխարհային ոգու» ինքնադարգացման պրոցես էր, «համաշխարհային ոգին» մարմնավորվում էր սկզբում որոշ ժողովուրդների մեջ, իսկ հետո, կատարելագործվելով, անցավ ուրիշ ժողովուրդների: Այսպես, Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումների ժամանակաշրջանում «համաշխարհային ոգին» արդեն վաղուց լքել էր Արևելքի ժողովուրդներին ու բնակություն էր հաստատել Հունաստանում: Ուրեմն, ըստ այդ իդեալիստական տեսության, հույն-մակեդոնական նվաճողները մարմնավորում էին «համաշխարհային ոգին»:

XIX դարի 70-ական թվականներին Յ. Գ. Գրոյզկենը տպագրեց «Հելլենիզմի պատմություն» ընդհանուր խորագրով իր ստեղծագործությունների երկրորդ վերամշակված հրատարակությունը: Գրանով նա նոր արհեստական տերմին մտցրեց պատմական գիտության մեջ: Հելլենիզմի դարաշրջան ասելով Յ. Գ. Գրոյզկենը հասկանում էր մ. թ. ա. IV դ. վերջից մինչև մ. թ. ա. II դ. ընկած ժամանակաշրջանը, որը, նրա կարծիքով, բնութագրվում էր «Արևելքի իրենց դարձնող սպիտակ ժողովուրդների մեջ հունական տիրապետության ու կրթվածության տարածումով»: Թեև «հելլենիզմ» տերմինն արհեստական է, այնուամենայնիվ, այն հաստատորեն մտել է գիտական տերմինաբանության մեջ՝ որպես այդ շրջանի պայմանական անվանում:

Ա. Բեկի դպրոցից ելած մյուս խոշոր գիտնական պատմաբանն

էր էննեստ Կուրցիուսը (1814—1897 թթ.): Հունաստանի թագավորի պալատականներին մեկի երևականների տնային ուսուցիչը լինելով, նա 1837—1843 թթ. ապրեց Հունաստանում ու հանգամանորեն ուսումնասիրեց երկիրը: Բեռլին վերադառնալով, նա Բեկի հետ միասին աշխատեց հունական արձանագրությունների հրատարակման ուղղութեամբ: 1857—1867 թթ. լույս տեսավ նրա հիմնական աշխատությունը՝ «Հունական պատմությունը» երեք հատորով, որտեղ տրվում է Հունաստանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև Քերոննեայի մոտ տեղի ունեցած ճակատամարտը (մ. թ. ա. 338 թ.): Առաջին հերթին հնազետ ու արվեստի պատմաբան լինելով, է. Կուրցիուսը իր հիմնական ուշադրությունը նվիրեց հին հունական հասարակության մշակութային կյանքի պատմությանը: Նա իրևալականացնում էր հին հույների կենցաղը, համարյա չէր լուսաբանում նրանց տնտեսական ու սոցիալական կյանքը: Նա լիովին շրջանցեց նաև ստրկության հարցն ու ստրուկների և ազատ բնակչության ստորին խավերի վիճակը:

Հին Հունաստանի պատմությունը նվիրված ամենամանրամասն ու լուրջ աշխատությունը հրատարակվեց Անգլիայում XIX դ. առաջին կեսին: Գրա հեղինակն էր Ջորջ Գրոտը (1794—1871 թթ.): Նա ակտիվ մասնակցություն ունեցավ պառլամենտական ռեֆորմի համար մղված պայքարին, հարեց լիբերալ կուսակցության արմատական թեկն: 40-ական թվականների սկզբից նա աշխատում էր Հին Հունաստանի պատմությանը նվիրված մեծ գրքի վրա, որը լույս տեսավ 1846—1856 թվականներին: Ջ. Գրոտի «Հունաստանի պատմությունը» բաղկացած է 12 հատորից. այն սկսվում է առասպելական ժամանակներից ու ավարտվում է մ. թ. ա. 301 թ.: Համահունական պատմության շրջանակների մեջ մտցված է նաև Իտալիայի հարավի ու Սիկիլիա կղզու հունական քաղաքների պատմությունը: Ջ. Գրոտը մեծ ուշադրություն նվիրեց մշակույթի պատմությանը՝ գրականությանը, փիլիսոփայությանը, արվեստին: Իբրև բուրժուական արմատականության կողմնակից, Ջ. Գրոտը խիստ իրևալականացնում էր աթենական դեմոկրատիան: Նա միանգամայն անուշադրության մատնեց ստրկատիրության հարցը Աթենքում, աթենական հասարակության դասակարգային կառուցվածքի հարցը: Սակայն նա տվեց Պերիկլեսի գործունեության ընդհանուր առմամբ օբյեկտիվ գնահատականը, լրջորեն գնահատեց Կլեոնի, Գեմոսթենեսի վարվելակերպն ու առանց որևէ իրևալականացման շարադրեց Ալեքսանդր Մակեդոնացու նվաճողական պատերազմների պատմությունը: Ջ. Գրոտի ստեղծագործության հաջողությանը նրա պատեցին նրա վառ, կենդանի, հանրամատչելի լեզուն, պատմա-

կան գործիչների հստակ, հիշողութեան մեջ մնացող բնութագրերը? Գրոտի «Հունաստանի պատմութիւնը» արժանիքների հետ մեկտեղ ունի նաև էական թերութիւններ: Այսպես, հեղինակը լիովին անտեսել է վիճաբարական նյութը, ցույց չի տվել քաղաքական ու մշակութային պատմութեան միջև եղած օրգանական կապը, առասպելական է համարել հնագույն պատմութեան այն բոլոր անցքերը, որոնք տեղի էին ունեցել մինչև մ. թ. ա. 776 թ.: Եվ վերջապես (դա Ջ. Գրոտի աշխատութեան ամենախոշոր թերութիւնն է), նա արդիականացրել է Հին Հունաստանի կյանքն ու հասարակական հարաբերութիւնները: Անտեսելով հին հունական հասարակութեան ստրկատիրական բնույթը, Ջ. Գրոտը, ըստ էութեան, ջնջում էր հնութեան ու իրեն ժամանակակից հասարակական կարգերի միջև եղած տարբերութիւնը: Իդուր չէ, որ Ջ. Գրոտին ժամանակակից քննադատներից մեկը նկատել էր, որ հույները Ջ. Գրոտի մոտ հունական զգեստներ հագած անգլիացիներ են:

Ջ. Գրոտի աշխատութիւնը թարգմանվեց մի շարք օտար լեզուներով ու շատ ուժեղ ազդեցութիւն գործեց պատմական գիտութեան հետագա զարգացման վրա, առաջ բերելով մի շարք ընդօրինակումներ XIX դ. երկրորդ կեսի գերմանական ու իտալական պատմաբանների աշխատութիւններում, հատկապես հնութեան հասարակական հարաբերութիւնների պատկերն արդիականացնելու առումով:

Դրան հակառակ, հնութեան պատմութեան արդիականացումն առաջ բերեց առարկումներ ֆրանսիական պատմաբանների, հատկապես նրանցից ամենահեղինակավորներից մեկի՝ Ֆլուստել դը Կուլանժի (1830—1889 թթ.) կողմից: Ֆլուստել դը Կուլանժը 1864 թ. հրատարակեց «Անտիկ աշխարհի քաղաքացիական համայնքը» իր հայտնի աշխատութիւնը: Այս գրքում նա քննում է հին աշխարհի հասարակական հարաբերութիւնների բնորոշ գծերն ու հանգում այն եզրակացութեան, որ նախնիների ընտանեկան պաշտամունքի վրա հիմնված հույն-հռոմեական հասարակական կարգերը չեն կարող համեմատվել Եվրոպայում XIX դ. գոյութիւն ունեցող հասարակական հարաբերութիւնների հետ: Բայց այլ հարցերում Ֆլուստել դը Կուլանժը պահպանողական էր, զարգացման էվոլյուցիոն տեսութեան կողմնակից:

Այսպիսով, XIX դ. կեսին եվրոպական բուրժուական գիտութիւնը դրեց հույն-հռոմեական հասարակութեան քննական պատմութեան հիմքերը, սակայն քննական պատմութիւնը դեռևս գիտութիւն չէր բառի բուն իմաստով: Քննական դպրոցը պատմագրութեան մեջ հիմնվում էր աղբյուրների մանրակրկիտ վերլուծութեան սկզբունքի, պատմական փաստերի միջև եղած փոխկախման հաս-

տատման վրա: Պատմության հետևողական փաստական շարադրանքը ստացավ «պրագմատիկ» անվանումը:

Կ. ՄԱՐՔՍԵ ՈՒ Ֆ. ԷՆԳԵԼՍԸ:

ԱՆՏԻԿ ԱՇԽԱՐՀԻ ԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՏԵՂՄՈՒՄԸ

Պատմության իսկական գիտական ըմբռնման «կիզբը դրեցին Կ. Մարքսի ու Ֆ. էնգելսի աշխատությունները: «...Մարքսը վերջ դրեց այն հայացքին, որի համաձայն հասարակությունը անհատների մի մեխանիկական ագրեգատ է... որ ծագում և փոխակերպվում է պատահականորեն, և առաջին անգամ գիտական հողի վրա դրեց սոցիոլոգիան, սահմանելով հասարակական-տնտեսական ֆորմացիայի՝ իբրև տվյալ արտադրական հարաբերությունների ամբողջության, հասկացությունը, սահմանելով, որ այդպիսի ֆորմացիաների զարգացումը բնապատմական պրոցես է»<sup>7</sup>:

Կ. Մարքսը և Ֆ. էնգելսը իրենց շատ աշխատություններում («Գերմանական գաղափարախոսություն», «Քաղաքատնտեսության քննադատության շուրջը», «Կապիտալ», «Բնության դիալեկտիկա», «Անտի-Դյուրինգ», «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» և այլն) լուսաբանեցին հույն-հռոմեական պատմության հիմնական պրոբլեմները: Նրանք բնութագրեցին միջերկրածովյան անտիկ հասարակությունների կառուցվածքը՝ իբրև ստրկատիրական ֆորմացիային պատկանող հասարակություններ: Հունական ու հռոմեական տոհմատիրական կարգերի հատկանշական գծերը առանձնացնելով, նրանք սպառիչ լրիվությամբ ուսումնասիրեցին տոհմական հարաբերությունների քայքայման պրոցեսը անտիկ աշխարհում:

Կ. Մարքսը և Ֆ. էնգելսը, վերլուծելով անտիկ քաղաք-պետության՝ «պոլիսի» հասարակական կարգը, այն բնութագրեցին որպես հողին ու ստրուկներին, պետության ակտիվ քաղաքացիներին համատեղ պատկանող մասնավոր սեփականությանը տիրող ստրկատերերի մի կոլեկտիվ, քաղաքացիներ, որոնք ստրուկներից եկող վտանգի պայմաններում ստիպված էին պահպանել միավորման այդ ձևը: Հանգամանորեն վերլուծելով ստրկատիրական տնտեսության համակարգը, Կ. Մարքսը և Ֆ. էնգելսը վճռականորեն հանդես եկան անտիկ տնտեսական ու սոցիալական հարաբերությունները արդիականացնելու դեմ, ցույց տվեցին, որ տնտեսությունը Հին Հունաստանում ու Հռոմում ուներ բնատնտեսության բնույթ՝ «...ստրկության սիստեմն էլ—որչափով որ սա երկրագործության, մանուֆակ-

<sup>7</sup> Վ. Ի. Աենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Երևան, 1974, էջ 162:

տուրայի, նավային գործի և այլոց մեջ արտադրողական աշխատանքի տիրապետող ձևն է, ինչպես որ էր Հունաստանի զարգացած պետություններում ու Հռոմում— բնատնտեսության մի տարր է պահում իր մեջ: Հենց ստրկաշուկան, ինքը իր աշխատութ-ապրանքի առաջարկվող մասսան միշտ ստանում է պատերազմի, ծովահենության և այլոց միջոցով, և այս հասկացությունն իր հերթին կատարվում է ոչ թե շրջանառության մի պրոցեսի միջոցով, այլ ուղղակի ֆիզիկական բռնությամբ ուրիշի աշխատանքը բնեղեն կերպարանքով յուրացնելով»<sup>8</sup>:

4. Մարքսը և Ֆ. էնգելսը մեծ ուշադրություն նվիրեցին հին հունական հասարակության գաղափարախոսությանը, նրա հոգևոր մշակույթի պատմությանը՝ փիլիսոփայությանը, գիտությանը, արվեստին: Նրանք զբաղվեցին նաև անտիկ պետական կազմավորումների անկման ու կործանման պրոբլեմով: «Ստրկությունը— այնտեղ, որտեղ նա արտադրության տիրապետող ձև է հանդիսանում,— աշխատանքը դարձնում է ստրկական գործունեություն, այսինքն՝ ազատ մարդկանց անպատվություն բերող զբաղմունք: Դրանով իսկ փակվում է ելքը արտադրության այդպիսի եղանակից, մինչդեռ, մյուս կողմից, ավելի զարգացած արտադրության համար ստրկությունն արգելք է հանդիսանում, և վերջինիս վերացումը հարկադրական անհրաժեշտություն է դառնում: Ստրկության վրա խարսխված ամեն մի արտադրություն և նրա վրա խարսխվող ամեն մի հասարակություն կործանվում է այդ հակասությունից: Դրա լուծումը կատարվում է մեծ մասամբ կործանվող հասարակության բռնի ստրկացմամբ ուրիշ, ավելի ուժեղ հասարակության կողմից (Հունաստանը նվաճվեց Մակեդոնիայի, իսկ հետագայում՝ Հռոմի կողմից): Մինչև այդ ժամանակը, քանի այդ վերջիններն, իրենց հերթին, իրենց հիմքում ունեն ստրկական աշխատանքը, տեղի է ունենում միայն կենտրոնի տեղաշարժ և ամբողջ պրոցեսը կրկնվում է ավելի բարձր աստիճանի վրա...»<sup>9</sup>:

ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԶՆՐԳԱՑՈՒՄԸ ՄԵՆՁԵՎ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԳ ԿԵՍԸ

Հետաքրքրությունը Հին Հունաստանի պատմության նկատմամբ դրսևորվել է տակավին Կիևյան Ռուսիայում: Կիևյան պետության հասարակության տիրապետող խավերի ու Բյուզանդական կայսրության միջև եղած սերտ տնտեսական, քաղաքական ու մշակութային կապերը զարկ տվեցին հույների պատմական անցյալի հանդեպ հե-

<sup>8</sup> Կ. Մարքս, Կապիտալ, II, Երևան, 1936, էջ 447:

<sup>9</sup> Ֆ. էնգելս, Անտի-Դյուրինգ, էջ 470:

տաքրքրության աճին: Սկսած XII դարից, անտիկ հեղինակների առանձին գործեր թարգմանվում են ռուսերեն: Գրվեց նաև մի ինքնուրույն ռուսական տարեգրություն՝ «Հելլենական ու Հռոմեական տարեգիր»:

Ռուսական իշխանությունների միավորումը մի միասնական պետության մեջ իվան III-ի (1462—1505 թթ.) օրոք նպաստեց անտիկ աշխարհի պատմության նկատմամբ հետաքրքրության աճին Մոսկովյան պետությունում: 1512 թ. Մոսկվայում գրվեց ընդհանուր պատմությանը նվիրված առաջին ռուսական աշխատությունը՝ «Խրոնոգրաֆը»<sup>10</sup>, որը պարունակում էր պատմության շարադրանքը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի առումը (1453 թ.): Հին հունական պատմության անցքերից «Խրոնոգրաֆում» հիշատակվում էին ասքեր Տրոյական պատերազմի, Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ու միապետության, վերջինիս տրոհման, Անտիոքյան (Սելևկյան միապետության) ու Եգիպտական (Պտղոմեոսների միապետության) թագավորությունների մասին:

XVII դ. 30-ական թվականներին Կիևում բացվեց «Կիև-Մոզիլյանյան կոլեգիան», որտեղ ուսումնասիրվում էին հին հունարեն ու լատիներեն լեզուները, իսկ վեց դասարաններից ամենաբարձրում՝ անտիկ գրականությունը, այդ թվում՝ պատմական ու փիլիսոփայական գործերը: Կիևյան կոլեգիայից դուրս եկան հին հունարեն ու լատիներեն լեզուների, պատմության և գրականության մի շարք ուսուցիչներ, որոնք տեղափոխվելով Մոսկվա, նպաստեցին այստեղ անտիկ աշխարհի պատմության նկատմամբ հետաքրքրության զարգացմանը:

XVII դ. վերջին Մոսկվայում հիմնվեց առաջին բարձրագույն հումանիտար ուսումնական հաստատությունը՝ Սլավոնա-հունալատինական ակադեմիան, որը դարձավ հնագրի «դասական» լեզուների, գրականության ու պատմության ուսումնասիրության կենտրոն: Ակադեմիային կից գործում էր նաև տպարան, որտեղ տպագրվում էին հույն և լատինական հեղինակների աշխատությունների թարգմանությունները, ինչպես նաև նրանց գործերի բնագրերը: 1725 թ. Պետերբուրգում հիմնվեց Գիտությունների ակադեմիան ու նրան կից գեմնազիա՝ երիտասարդ մասնագետներ պատրաստելու համար, իսկ 1755 թ. Մոսկվայում բացվեց առաջին ռուսական համալսարանը: Դրանք գիտության նոր կենտրոններ էին Ռուսաստանում, այդ թվում անտիկ գրականության ու պատմու-

<sup>10</sup> Сб<sup>у</sup> Полное собрание русских летописей, т. XXII, ч. I, СПб, 1911:

թյան ուսումնասիրության կենտրոններ: 1718 թ. Պետերբուրգում կազմակերպվեց առաջին ռուսական թանգարանը (Կունստկամբ-րան), որի մի մասը՝ հունական ու հռոմեական հնությունների հավաքածուն, XVII դ. երկրորդ կեսին դարձավ անտիկ հուշարձանների համաշխարհային ամենահարուստ հավաքածուներից մեկի՝ էրմիտաժի կոլեկցիաների ստեղծման հիմքը:

Գիտությունների ակադեմիայում, Մոսկվայի համալսարանում, էրմիտաժում և գիմնադիաներում XVIII դ. ընթացքում աշխատող պատմաբաններն ու բանասերները պատրաստեցին ու հրատարակեցին հին հունական պատմիչների (Դիոդորոս Սիկիլիացու, Պլուտարքոսի, Արրիանոսի, Կվինտոս Կուրտիոսի, Հուստինոսի և ուրիշների) աշխատությունների շատ թարգմանություններ: Դրանից բացի ռուսերեն թարգմանվեցին արևմտաեվրոպական պատմաբանների առավել հայտնի գործերը հին պատմության վերաբերյալ:

Անտիկ պատմիչների աշխատությունների ուսումնասիրությանը մեծ ուշադրություն նվիրեց Մ. Վ. Լոմոնոսովը:

XVIII դ. վերջին Ա. Ն. Ռադիշևը ռուսական ընթերցողներին տվեց հին պատմության հանրամատչելի շարադրություն սյոեմիձևով: Նրա «Ծրգ պատմական» պոեմում տրվում էին հին հունական պատմության հակիրճ բնութագիրն ու կարևորագույն անցքերը: Իդեալականացնելով Լիկուրգոսին, Ա. Ն. Ռադիշևը ամենայն զովասանքով արտահայտվեց նաև Սոլոնի մասին, փառաբանեց Պերիկլեսին, բայց դրա փոխարեն խիստ բացասաբար արտահայտվեց Փրիպոսի ու Ալեքսանդր Մակեդոնացու մասին՝ «Իր ընկերոջ սպանողն ընկավ՝ հաղթված հարբեցողությունից»:

XIX դ. սկզբից Հին Հունաստանի պատմության ուսումնասիրությունը Ռուսաստանում ընդունում է ավելի լայն շափեր: Առաջին տասնամյակը նշանավորվեց նոր համալսարանների բացումով՝ Պետերբուրգում, Կիևում, Խարկովում, Կազանում: XIX դ. 20-ական թվականներին կազմակերպվեցին լիցեյներ<sup>11</sup>: Քերսոնեսոսում, Սեվաստոպոլի մոտ ու Կերչում թանգարանների համար սկսեցին հավաքել մերձսևծովյան հունական գաղութներում հայտնաբերված հունական հնություններ: XIX դ. լույս տեսան ռուսական հեղինակների առաջին հատուկ ուսումնասիրությունները հին հունական սևծովյան գաղթավայրերի մասին: Հին Հույաստանի, մասնավորապես Ալեքսանդր Մակեդոնացու պատմությանը ուշադրություն նվիր-

<sup>11</sup> Ինչևէր հումանիտար բարձրագույն ուսումնական հաստատություն էր, որի ծրագիրը պատմական ու իրավաբանական կրթության յուրօրինակ խառնուրդ էր: Իրենց անվանումը լիցեյները ստացան Արիստոտելի կողմից (Լիկեյան Ապոլլոնի) այգիներում, Աթենքի մոտ կազմակերպված փիլիսոփայական դպրոցի անունից:



րեց Տ. Ն. Գրանովսկին՝ կատարելագործելով Բ. Նիբուրի քննադատական մեթոդը: Անտիկ շրջանն ուսումնասիրող ոռւս գիտութեան զարգացման համար մեծ նշանակութիւն ունեցավ «Պրոպիլեոն» գիտական ժողովածուն:

Ռուսաստանում XIX դ. առաջին կեսին Հին Հունաստանի պատմութիւնը ուսումնասիրեց Մ. Ս. Կուտորգան (1809—1886 թթ): Մ. Ս. Կուտորգան՝ որպէս հետազոտող իր հիմնական ուշադրութիւնը նվիրեց Աթենական հանրապետութեան պատմութեանը, մասնավորապէս՝ հին Ատտիկայի հասարակական կարգերի լուսաբանմանը: Այդ թեմաներին նվիրված են ինչպէս նրա երկու դիսերտացիաները՝ «Հնագույն ատտիկական ֆիլաների ու պետութեան մասերի հետ դրանց կապի մասին» (1832 թ.), «Ատտիկական աստիճաններն ու դասերը» (1838 թ.), այնպէս և մի շարք հետագա հետազոտութիւնները («Պատմական փորձ տրապեզիտների կամ բանկիրների մասին», «Գեմեկրատիայի պայքարն արիստոկրատիայի դեմ հին հելլենական հանրապետութիւններում», «Ստրուկների ու ազատ արձակվածների հասարակական վիճակը Աթենական հանրապետութիւնում»):

Մ. Ս. Կուտորգան ուսումնասիրեց նաև Աթենքի քաղաքական պատմութիւնը («Աթենական հանրապետութեան պատմութիւնը սկսած Հիպպարքոսի սպանութիւնից մինչև Միլտիադեսի մահը», 1848 թ., «Պարսկական պատերազմները», 1858 թ.): Նա վճռականորեն դատապարտում էր բռնապետութիւնը, մի բան, որ վառ կերպով արտահայտվեց պարսկական տերութեանը տրված նրա գնահատականում: Կուտորգան որպէս պատմաբան-հետազոտող վայելում էր մեծ հեղինակութիւն, նրա մի շարք աշխատութիւններ թարգմանվեցին ու հրատարակվեցին Արևմտյան Նվրոպայում:

Ռուսաստանում XIX դ. առաջին կեսին Հին Հունաստանի պատմութեան ուսումնասիրութեամբ զբաղվում էին նաև մայրաքաղաքի ու նահանգների գիտական կենտրոններում աշխատող ուրիշ ակադեմիկոս պատմաբաններ: Նրանք ստեղծեցին մի շարք ընդհանուր աշխատութիւններ ու հատուկ ուսումնասիրութիւններ, որոնք զբրված են աղբյուրների ու հարցի պատմագրութեան խոր յուրացման հիման վրա:

ԱՐԵՎՄՏԱԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ XIX Դ. ՎԵՐՋԻՆ  
ՔԱՌՈՐԴՈՒՄ—XX Դ. ՍՎՋՐԻՆ

● XIX դ. վերջին բուրժուական հետադիմական պատմաբաններն առաջադրում են այսպէս կոչված ցիկլային տեսութիւնը, որի համաձայն հասարակութեան զարգացումը կրկնվում է, անցնելով,

ընդհանուր առմամբ, միևնույն փուլերը: Ըստ այդ տեսության, հին պատմության փուլերը կարող են համեմատվել միջին ու նոր դարերում Եվրոպայի պատմության համապատասխան շրջանների հետ և ոչ միայն համեմատվել, այլև անգամ նույնացվել: Այսպիսով ստացվում էր, որ հին աշխարհի տնտեսական ու սոցիալական երևույթները՝ վերջիններիս բնորոշ գծերով հանդերձ, համապատասխանում են, համընկնում են եվրոպական տնտեսության ու սոցիալական հարաբերությունների երևույթների հետ XIX դարում: Պատմական պրոցեսի նման բմբունումն ստացավ «արդիականացում» (մոդեռնիզացիա) անվանումը:

Բուրժուական հետազոտողների կողմից XIX դ. վերջին ու XX դ. սկզբին հին պատմության ուսումնասիրության մյուս բնորոշ գիծն էր անտիկ հեղինակների հաղորդումների նկատմամբ ծայրահեղ անվստահության ու այդ հաղորդումները մի շարք դեպքերում կամայական վարկածային կառուցումներով փոխարինելու միտումի դարգացումը: Աղբյուրների հանդեպ այդպիսի վերաբերմունքը, որը խիստ տարածված էր գերմանական ու իտալական գիտնականների մոտ, ստացավ հիպերկրիտիկա (հունարեն՝ գերքննադատություն) անունը: Շատ բուրժուական գերքննադատ-պատմաբաններ ժխտում էին Ղուենաստանի ու Հռոմի հնագույն պատմության նախկինում միանգամայն անվիճելի համարվող մի շարք փաստերի իրական լինելը: Եվ թեև իմպերիալիզմի դարաշրջանում հնության մասին պատմական գիտության ընդհանուր ուղղությունը մոդեռնիզացիայի ուղղությունն էր, այդ գիտությունն այնուհանդերձ հետագա քայլեր կատարեց դեպի առաջ նոր փաստական նյութի կուտակման առումով: Այդ նոր նյութը գոյանում էր հնագիտական մեծ հայտնագործումների, նոր տեսակի աղբյուրների՝ Եգիպտոսի ավազներում պահպանված հունական պապիրուսների ու գրություններիով ծածկված կավե խեցիների (օստրակոն), օգտագործման շնորհիվ:

Հնագիտական արշավների մեծ շարքին սկիզբ դրեց ինքնուս հնագետ Հենրիխ Շլիմանը (1822—1890 թթ.), որը 1871—1873 ու 1878—1879 թթ., Տրոյան որոնելիս, ուսումնասիրեց ու մասամբ պեղեց, մասամբ էլ ոչնչացրեց (պեղումները վարելու մեթոդի անկատարելիության հետևանքով) Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան մասում գտնվող Հիսարիկ բլրում թաղված հին քաղաքների ավերակները: Ծիշտ որոշելով Հիսարիկն իբրև այն վայրը, որտեղ գտնվում էր Տրոյան, Շլիմանը սխալվեց հին քաղաքի ավերակները պարունակող շերտը որոշելու հարցում:

1874—1877 թթ. Հ. Շլիմանը դամբարանադաշտերի պեղումներ կատարեց Պելոպոնեսի հյուսիսարևմտյան մասում, Միկենեում, որ-

տեղ հայտնաբերեց մեծ թվով հնություններ: Շլիմանի պեղումները նպաստեցին եվրոպական հասարակության մոտ հնագույն Հունաստանի պատմության նկատմամբ հետաքրքրության ուժեղացմանը:

Այդ նույն ժամանակ գերմանական հնագիտական արշավախումբը էռնեստ Կուրցիուսի ղեկավարությամբ պեղումներ կատարեց Օլիմպիայում (1875 թ.), իսկ մի փոքր ավելի ուշ՝ Բերգամոնում (հին Պերգամոս), Փոքր Ասիայում (1879 թ.): Ֆրանսիական հնագետները պեղեցին Դելփիքը, ինչպես նաև կրոնական կենտրոններ Դելոս կղզում ու Հյուսիսային Հունաստանում, Դոդոնեում: Հույն գիտնականները մեծ աշխատանքներ էին վարում աթենական ակրոպոլիսում: XX դ. սկզբին անգլիացի հնագետ Արթուր Էվանսը (1851—1941 թթ.) ա իտալացի հետազոտողները սկսեցին հնագույն բնակավայրերի ու դամբարանների պեղումներ կրեստե կղզում: Կանդիայում Արթուր Էվանսը հայտնաբերեց մի հսկայական շինության մնացորդներ. այդ շենքը նա անվանեց «Մինոսի պալատ»: Նման կառուցումներ, բայց կղզու հաբավային ափին, գտան նաև իտալական հնագետները: Կրեստի հին բնակավայրերը վերաբերում են մ. թ. ա. III—II հազարամյակներին: XX դ. սկզբին այդպիսի բնակավայրերի մնացորդներ հայտնաբերվեցին էգեյան արշիպելագի որոշ կղզիներում ու մայրցամաքային Հունաստանի մի շարք վայրերում:

XIX դ. 80-ական թվականներին անգլիացի հնագետները, որոնք եգիպտոսն Անգլիայի կողմից զավթելուց (1882 թ.) հետո զգալի շահով իրենց մենաշնորհն էին դարձրել եգիպտական հնությունների ուսումնասիրությունը, հայտնաբերեցին սկզբում Ֆայումի օազիսում, իսկ հետո նաև հին քաղաքների այլ վայրերում հազարավոր հունական պապիրուսներ: XX դ. սկզբին պապիրուսների ուսումնասիրությունը վերածվեց մի հատուկ օժանդակ մասնագիտության՝ պապիրուսաբանություն:

XIX դ. վերջին ու XX դ. սկզբին բնորոշ էր գերմանական հետադիմական պատմագրության գերակշռությունը: Պատմական ցիկլայնություն, արդիականացման ու գերքննադատության դիրքերի վրա կանգնած հետադիմական գերմանական պատմաբանների առաջատար խմբի մեջ մտնում էին Ռոբերտ Պյոլմանը (1852—1914 թթ.), Ֆու. Բելտեր (1854—1929 թթ.) ու էդուարդ Մայերը (1855—1930 թթ.):

Ռոբերտ Պյոլմանը 1891—93 թթ. հրատարակեց մեծ աշխատություն՝ «Անտիկ կոմունիզմի ու սոցիալիզմի պատմությունը» խորագրով<sup>12</sup>: Ռ. Պյոլմանն այդ արտաքուստ պատմական, իսկ ըստ

<sup>12</sup> Երկրորդ հրատարակությունում Ռ. Պյոլմանի գիրքը կոչվեց «Հին աշխարհում սոցիալական հարցի ու սոցիալիզմի պատմություն»:

էության հետադիմական հրապարակախոսական գրքում պատմական հետազոտութեան քողի տակ բանավեճ վարեց Կ. Մարքսի, Ա. Բեբելի, Կ. Կաուցկու հետ: Նա անտիկ հեղինակների հաղորդումները մեկնաբանելու ժամանակ կանգ չառնելով փաստերի աղավաղման առաջ, ժխտում է Հնագույն Հունաստանում հողային սեփականութեան համայնական ձևերի գոյութիւնը, Հոմերոսի մոտ «գտնում է» խոշոր կալվածատիրական տնտեսութեան նկարագրութիւնը, իսկ մ. թ. ա. VII—VI դարերում տեղի ունեցած սոցիալական պայքարում հայտնագործում է «ագրարային սոցիալիզմ»: Մ. թ. ա. V դ. Հունաստանի տնտեսական կարգերում ու հասարակական հարաբերութիւններում Ռ. Պլուլմանը տեսնում էր կապիտալիստական կարգեր, իսկ ի դեմս ապագասակարգայնացված շքավորութեան՝ «սոցիալ-դեմոկրատական բնույթ ունեցող բնածին հեղափոխականներ»:

Մարքսիզմի հանդէպ տածած իր ատելութեան մեջ խորասուզվելով, Ռ. Պլուլմանը հասավ այն բանին, որ Հին Հունաստանում կարողացավ «գտնել» անգամ գերմանական սոցիալ-դեմոկրատների Գոթայի ծրագիրը: Ռ. Պլուլմանին է պատկանում նաև Հունաստանի պատմութեան ընդհանուր դասընթացը, որտեղ նա վերստին խոսում էր կապիտալիստական հարաբերութիւնների մասին, խիստ բացասականորեն էր նկարագրում մ. թ. ա. IV դ. սոցիալական պայքարի սարսափներն ու ամեն կերպ գովաբանում էր «կարգ ու կանոն վերականգնած» մակեդոնական թագավոր Փիլիպոս II-ին:

Յու. Բելոխի հիմնական աշխատութիւնն էր «Հունաստանի պատմութիւնը» (չորս հատորով)՝ նվիրված ոչ միայն էգեյան ծովի ավազանի քաղաք-պետութիւններին, այլև Իտալիայի հարավում ու Սիկիլիայում գոյութիւն ունեցած հունական գաղթավայրերի պատմական զարգացման նկարագրութեանը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև մ. թ. ա. 217 թ.: Յու. Բելոխի աշխատութիւնը պարունակում է փաստական մեծ նյութ սոցիալ-քաղաքական ու մշակութային պատմութեան գծով: Գիրքը գրված է կենդանի գրական լեզվով: Սակայն հեղինակը վճռականորեն ժխտում է պատմական ավանդույթը հնագույն ժամանակաշրջանի համար: Նա ժխտում է դորիացիների գաղթի մասին եղած առասպելների, Աթենքում Դրակոնի օրենսդրութեան, Սոլոնի կողմից 400-ի խորհրդի կազմակերպման և այլնի իրական լինելը: Չափազանցնելով տնտեսութեան մեջ ազատ վարձու բանվորների թիվն ու նշանակութիւնը և ժխտելով ստրկական աշխատանքի գերակշռութիւնը, Յու. Բելոխը Հունաստանի տնտեսութիւնը մերձեցնում է արևմտաեվրոպական կապիտալիստական տնտեսութիւնների կառուցվածքին: Բարձր գնահատելով Քեմիստոկլեսի քաղաքական գործունեութիւնը, նա դրա-

նով ձգտում է նսեմացնել Պերիկլեսի նշանակութիւնը: Իսկ մակեդոնական նվաճումը Յու. Բելոխը անվանում է Հունաստանի «ազգային միավորում» ու այդ կապակցութեամբ համեմատում է Փիլիպոս II-ին Բիսմարկի, իսկ Դեմոսթենեսին՝ գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան ղեկավար Ա. Բերեխի հետ: Նա նաև հայտարարում էր, որ հաջողութիւնը վերջնական դատավորն է այս կամ այն քաղաքական գործչին գնահատական տալու ժամանակ:

Գերմանացի պատմաբան-ալոյիականացնողներէից ամենահեղինակավորն էր էդուարդ Մայերը: Նա ուներ լայն պատմական մտահորիզոն ու բացառիկ բանասիրական պատրաստվածութիւն: Էդուարդ Մայերի հիմնական գործը, որի վրա նա աշխատեց համարյա իր ողջ կյանքի ընթացքում, հիմնարար «Հնութեան պատմութիւնն» էր: Ի տարբերութիւն նման կարգի մյուս աշխատութիւնների, այն գրված էր համաժամանակութեան (սինխրոն) սկզբունքի հիման վրա: Եթե մինչ այդ հնութեան պատմութեան գծով միաբերված աշխատութիւններ գրած պատմաբանները սկզբում հերթականութեամբ նկարագրում էին արևելյան աշխարհին պատկանող երկրների պատմական զարգացումը և դրանից հետո՝ Հունաստանի ու Հռոմի պատմութիւնը, ապա է. Մայերի «Հնութեան պատմութիւնում» այս կամ այն երկրի ճակատագրի պատմական նկարագրութիւնը տրվում է զուգահեռ կարգով, բաժանված լինելով մի շարք մասերի՝ ըստ առանձին դարաշրջանների: Օրինակ՝ «Արևելքի ժողովուրդներն ու երկրները մինչև մ. թ. ա. XVI դ.», «Հյուսիսի ու հարավի ժողովուրդները մ. թ. ա. II հազարամյակում» և այլն: 1884—1902 թթ. լույս տեսավ «Հնութեան պատմութեան» առաջին հրատարակութիւնը հինգ հատորով, սակայն Հին Արևելքի երկրների ու Հնագույն Հունաստանի պատմութեան գծով նոր աղբյուրների մեծ զանգվածի առաջացման կապակցութեամբ է. Մայերը ձեռնարկեց իր աշխատութեան առաջին հատորների վերամշակումը: Բայց նոր նյութերի կուտակումն ընթանում էր ավելի արագ, քան է. Մայերին հաջողվում էր դրանք մշակել: Այս պատճառով նա ստիպված էր առաջին հատորի երկրորդ հրատարակութիւնն իրականացնելուց հետո (1908 թ.) իսկույն սկսել դրա վերամշակումը: Նույնը տեղի ունեցավ երրորդ հրատարակութեան հետ (1913 թ.): «Հնութեան պատմութիւնը» այդպես էլ մնաց անավարտ: Դրա հինգերորդ հատորը նվիրված է Հունաստանի պատմութեանն ու հասցված է մինչև մ. թ. ա. 355 թ.:

Իր բազմաթիվ աշխատութիւններում և հատկապես «Հնութեան պատմութիւնում», կոնգրեսներում կարդացված զեկուցումներում է. Մայերը պաշտպանում էր արդիականացման տեսակետները: Նրա կարծիքով չի եղել հասարակական ձեերի միասնական

առաջադեմ զարգացում: Հնությունն ու նոր ժամանակները զարգանում էին իրարից միանգամայն անկախ ու անցնում էին տնտեսական ու հասարակական կյանքի միևնույն փուլերը: Գրանց մեջ եղած տարբերությունը ոչ թե որակական, այլ քանակական է: Այս պատճառով հին հունական ցեղերի տնտեսության ու հասարակության վիճակը մ. թ. ա. II հազարամյակում միանգամայն ազատորեն կարող է համեմատվել վաղ եվրոպական միջնադարի (VIII—IX դդ.) տնտեսության ու հասարակական կացության հետ, մ. թ. ա. VII—VI դդ. հունական հասարակությունը՝ XIV—XV դդ. Եվրոպայի հետ, մ. թ. ա. V—IV դդ. հին Հունաստանը՝ XVI—XVIII դդ. Եվրոպայի հետ, իսկ հելլենիզմի դարաշրջանը՝ պատմաբանի ժամանակի կապիտալիստական հասարակության հետ: «Հնության պատմություն»-ում, «Ստրկությունը հնադարում» ղեկուցման մեջ ու մյուս դործերում է. Մայերը փորձում էր ապացուցել, որ ստրկական աշխատանքը հնադարում այնքան շատ տարածված չէր, որքան դրա մասին գրում են առաջադեմ պատմաբանները: Նրա կարծիքով ստրկությունն այն ժամանակ խաղում էր սոսկ օժանդակ դեր: է. Մայերը անտեսում էր այն հանգամանքը, որ հնադարում ստրուկն ինքը ապրանք էր: Ժխտելով մարդկային հասարակության առաջընթաց զարգացումը, է. Մայերը ըստ էության պաշտպանում էր դասակարգային փոխհարաբերությունների, մասնավոր սեփականության, կապիտալիզմի՝ իբրև նրա տեսակետով հասարակական հարաբերությունների բարձրագույն ձևի անսասանությունը:

Պատմությունն արդիականացնելու փորձերի, հնության ու կապիտալիզմի հասարակական հարաբերությունների կառուցվածքի ըմբռնման միատեսակությունը հաստատելու ձգտման դեմ հանդես եկան մի շարք բուրժուական պատմաբաններ: Արդիականացնողների վճռական հակառակորդն էր Դորպատի (Տարտու) համալսարանի պրոֆեսոր, հետագայում Շվեյցարիա մեկնած տնտեսագետ Կառլ Բյուխերը (1847—1930 թթ.), որը բանավեճի բռնվեց է. Մայերի հետ: Իր «Փողովրդական տնտեսության պատմության ուրվագծեր» աշխատությունում Բյուխերը վճռականորեն հանդես եկավ Ռ. Պյուլմանի, Յու. Բելոխի ու հատկապես է. Մայերի այն հայացքների դեմ, որոնց համաձայն անտիկ տնտեսությունը կապիտալիստական տրեստեսություն էր, ու մշակեց տնտեսական զարգացման իր սեփական տեսությունը: Կ. Բյուխերն անթույլատրելի էր համարում հնադարի տնտեսական երևույթների նույնացումը կապիտալիզմի հետ, նշում էր անտիկ տնտեսության յուրահատկությունը, բայց վերջինիս էությունը նա ճիշտ չէր հատկանում: Եվրոպայի տնտեսական զարգացման պատմությունը Բյուխերը բաժանում էր երեք մեծ շրջան-

ների. 1) օչկոսային տնտեսութիւն (տնային կամ բնատնտեսութիւն), երբ արտադրողն ինքն էր սպառում արդյունքները, 2) քաղաքային տնտեսութիւն (պարզ փոխանակային), երբ արտադրողն իր արդյունքները տալիս էր անմիջական սպառողին, 3) ազդային տնտեսութիւն (բարդ-փոխանակային), երբ փոխանակումն արտադրողի ու սպառողի միջև կատարվում է միջնորդների միջոցով: Առաջին շրջանը, նրա կարծիքով, համապատասխանում էր հնադարին, երկրորդը՝ միջնադարին, երրորդը՝ նոր ժամանակին:

Կ. Բյուխերի սխեման խորապէս սխալ է: Դրա հիմքում ընկած է ոչ թե բուն արտադրութեան վերլուծութիւնը, այլ արդեն արտադրված արդյունքների շրջանառութիւնը: Բացի այդ, հայտարարելով, որ անտիկ աշխարհի տնտեսութիւնը զուտ բնատնտեսութիւն էր, Կ. Բյուխերը պետք է մոռացութեան մատներ պարզ ապրանքային արտադրութեան բազմաթիվ ու անվիճելի փաստերը Հին Հունաստանում ու Հռոմում: Նա փորձում էր ապացուցել, որ հնութիւնում ամբողջ առևտուրը սահմանափակվում էր սոսկ պերճանքի առարկաներով, իսկ դա հակասում է աղբյուրների տվյալներին:

Պատմութեան արդիականացումն առարկումներ առաջացրեց նաև ֆրանսիական ու անգլիական մի շարք պատմաբանների մոտ: Տյուստել զը Կուլանժի աշակերտ Պոլ Գիրոն (1850—1907), որը ուսումնասիրում էր հին հունական տնտեսութեան պատմութիւնը, իր մի շարք հիմնավոր աշխատութիւններում («Հողային սեփականութիւնը Հունաստանում մինչև հռոմեական նվաճումը» (1893 թ.), «Արդյունաբերական արհեստը հին Հունաստանում» (1900 թ.), «Տընտնասական փորձերը անտիկ շրջանում» (1905 թ.) վիճաբանում էր արդիականացնողների հետ: Գիրոն ապացուցում էր, որ հնութեան տնտեսական կյանքը համեմատելի չէ նորագույն ժամանակի տընտեսութեան հետ: Անտիկ աշխարհի տնտեսական կյանքի վերաբերյալ նույնպիսի տեսակետ էին պաշտպանում նաև ուրիշ պատմաբաններ: Անտիկ տնտեսութեան բնույթի շուրջը XIX դ. վերջից բուրժուական պատմաբանների մոտ սկսված բանավեճային պայքարը չի ավարտված մինչև օրս:

XIX դ. վերջին տասնամյակներում զգալիորեն աճեց արևմտաեվրոպական պատմաբանների հետաքրքրութիւնը նաև հելլենիստական դարաշրջանի պատմութեան նկատմամբ: Այդ շրջանին վերաբերող նոր հնագիտական, և որ գլխավորն է, արձանագրական ու պապիրուսային նյութի կուտակումը թեթևացրեց հելլենիստական ժամանակներին նվիրված ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ աշխատութիւնների ստեղծման գործը:

Հելլենիզմի պատմութեանը իրենց ստեղծագործութիւնները նը-

վիրեցին տարբեր երկրների պատմաբաններ: Պատմական գիտության զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ մ. Վիլկենի ու Լ. Միտսելյսի «Պապիրուսաբանության հիմնական դրույթներն ու քրեստոմատիան» հատուկ աշխատության հրատարակումը 1912 թ.: Այն նվիրված էր եգիպտոսի պատմությանն ու պապիրուսաբանությանը և հիմնված էր պապիրուսների վրա: Աշխատությանը կից տրվեց քրեստոմատիա, կազմված հելլենիստական, հռոմեական ու արաբական ժամանակաշրջանների եգիպտոսի տնտեսությանն ու սոցիալական հարաբերություններին վերաբերող տեքստերից, որոնք քաղվել էին հունական պապիրուսներից:

Այդ բոլոր հետազոտություններն ունեին մեծ նշանակություն որպես հնություն փաստական պատմության ձեռնարկներ: Սակայն բուրժուական պատմաբաններն անտեսեցին հասարակական դարգացման այն օրենքները, որոնք հանչառաբերել էին Մարքսը և էնգելսը, ուստի և նրանց սեփական պողիտիվ կառուցումները միանգամայն անհաջող էին: Կայն գիտական ընդհանրացումներ հնարավոր է անել միայն մարքսիստական մեթոդաբանության հիման վրա:

**ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ XIX Գ. ՎԵՐՋԻՆ ԵՐԵՔԶԱՐՅԱՆԻՐԱՎՅԱԿՆԵՐՈՒԹՅՈՒՆ XX Գ. ՍՎՋՐԻՆ**

XIX դ. վերջին XX դ. սկզբին ռուսական պատմական գիտությունը ձեռք բերեց նշանակալի հաջողություններ: Ռուս պատմաբանները զբաղվում էին Հին Հունաստանի քիչ ուսումնասիրված հարցերով, օրինակ, ագրարային հարցով, սոցիալական բախումների պատմությամբ, անտիկ աշխարհում ստրկատիրության ձևերով և այլն:

Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Ս. Վ. Եշևսկին (1829—1865 թթ.) իր աշխատություններից մեկում գրում է. «Հին աշխարհի բոլոր ազատ պետություններն իրենց բազմազան պետական ձևերը կառուցում էին ստրկության ամուր հիմքի վրա... Հնադարում պատմությանը ծանոթ չեն այնպիսի պետություններ, որոնք հիմնված չլինեին ստրկության վրա...»<sup>13</sup>: Վերլուծելով ստրկատիրության ձևվերը, Ս. Վ. Եշևսկին նշում էր, որ Արևելքում ստրկությունը դեռևս ուներ նահապետական գծեր ու աչքի էր ընկնում իրավական անորոշությամբ՝ «Որպես այդպիսին նա ավելի շուտ փաստ էր, քան օրենքներով խիստ որոշված դրույթ... Հունաստանին է պատկանում ստրկության գիտական բացատրությունը որպես մի կացության, որը

<sup>13</sup> С. В. Ешевский, Соч., т. 1, стр. 129.



և բնական էր, և անհրաժեշտ...»: «Ստրկության ընդհանուր վիճակի ներքո միատեղվում էին մտավոր ու ֆիզիկական զարգացման բոլոր աստիճանները, ու շկար արվեստի, զբաղմունքի կամ արդյունագործության մի այնպիսի բնագավառ, որը շճակվեր ստրուկների կողմից...»<sup>14</sup>:

60-ական թվականների վերջին է վերաբերում Վ. Գ. Վասիլևսկու (1838—1899 թթ.) «Քաղաքական ու սոցիալական շարժումը Հին Հունաստանում՝ նրա անկման շրջանում» (1869 թ.) աշխատության հրատարակումը: Այն պարունակում էր Սպարտայում մ. թ. ա. III դ. տեղի ունեցած քաղաքական պայքարի ու ուսմանների մանրամասն վերլուծությունը: Այդ աշխատությունում Վ. Գ. Վասիլևսկին շատ առաջ անցավ իր ժամանակակից արևմտաեվրոպական հետազոտողներից:

Հունական պատմության ժողովրդականացման համար մեծ նըշանակություն ունեցավ պատմաբան Ֆ. Գ. Միշչենկոյի (1847—1906 թթ.) գիտական գործունեությունը: Նա 1872 թ. հանդես եկավ ժամանակի համար առաջադեմ հետազոտությունով՝ «Սոֆոկլեսի ողբերգությունների առնչությունը բանաստեղծին ժամանակակից իրական կյանքի հետ Աթենքում»: Այդ աշխատությունը գրված էր Ն. Գ. Չերնիշևսկու նշանավոր դիսերտացիայի ազդեցության ներքո և առաջացրեց Կիևի համալսարանի վարչության ծայրահեղ դժգոհությունը: «Փորձ Հին Հունաստանում ուսցիոնալիզմի պատմության շուրջը» (1881 թ.) դոկտորական դիսերտացիայի հրատարակումից հետո Ֆ. Գ. Միշչենկոյին ազատեցին պաշտոնից իբրև «քաղաքականապես անվստահելի» անձի: Միայն կյանքի վերջին տարիներին նա դարձավ Կազանի համալսարանի պրոֆեսոր: Դեռ Կիևում գրտնըվելիս Ֆ. Գ. Միշչենկոն 1879 թ. հրատարակեց Ստրաբոնի «Աշխարհագրության» լրիվ թարգմանությունը, իսկ մի քանի տարի անց, 1888 թ.՝ Հերոդոտոսի ու Թուկիդիդեսի աշխատությունների թարգմանությունը: 1890 թ. նրա թարգմանությամբ լույս տեսավ Պոլիբիոսի «Պատմությունը»: Բոլոր թարգմանությունների համար նա գրեց մանրամասն մեկնաբանություններ ու ներածական հոդվածներ, որտեղ վճռականորեն հանդես էր գալիս անտիկ պատմագիրների նկատմամբ գերբնագատական վերաբերմունքի դեմ: «Չափից ավելի խիստ դատաստան Հերոդոտոսի նկատմամբ» և «Տեղեկատիվ Հելլադան ու Պոլիբիոսը» նրա հոդվածները հունական պատմությանն ու աղբյուրագիտությանը նվիրված արժեքավոր հետազոտություններ են:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 475, 482:

XIX 80-ական թվականների հետադիմության ու 90-ական թվականներին օտարերկրյա կապիտալի Ռուսաստան արագ թափանցելու շրջանում ռուսական պատմական գիտություն մեջ եղած առաջադեմ հոսանքները սկսեցին դուրս մղվել ապաքաղաքական տրամադրությունների կողմից: Այդ տրամադրությունները հատուկ էին XIX դ. վերջի և XX դ. սկզբի պատմաբաններին ու հնագետներին, մասնավորապես՝ Ֆ. Ֆ. Սոկոլովին (1841—1909 թթ.) ու Վ. Վ. Լատիշևին (1855—1921 թթ.):

Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Ֆ. Ֆ. Սոկոլովը «ակադեմիական դպրոցի» բնորոշ ներկայացուցիչն էր: Սահմանափակվելով իր գիտական մասնագիտության շրջանակներով, նա տքնաջանորեն ու խիստ զգուշաբար զբաղվում էր ինչպես Հունաստանի, այնպես էլ գլխավորապես հելլենիզմի դարաշրջանի պատմության նեղ, մասնակի հարցերի հետազոտության մը: Բայց Ֆ. Ֆ. Սոկոլովի գիտական գործունեությունն ընդհանուր առմամբ դրական նշանակություն ունեցավ ռուսական գիտության զարգացման համար: Նա պատրաստեց ականա՛յոր հետազոտողներ (Ս. Ա. Ժերեյլովին և ուրիշների) ու լայնորեն գիտական շրջանառության մեջ մտցրեց վիճաբարագիտությունն ու պապիրուսագիտությունը:

Ֆ. Ֆ. Սոկոլովի աշակերտներից մեկն էր պատմաբան ու հնագետ Վ. Վ. Լատիշևը, որն ուսումնասիրեց Սև ծովի հյուսիսային և արևելյան ափերում եղած հունական գաղութների պատմությունը: Վ. Վ. Լատիշևի ամենալուրջ գիտական աշխատություններն են մինչև մեր օրերն իրենց նշանակությունը լիովին պահպանած Երկու ժողովածուներ՝ «Եվրոսինյան Պոնտոսի հյուսիսային ծովափի հին հունական ու լատինական արձանագրությունները» (1885—1916 թթ.) և «Հին հունական ու լատինական գրողների տեղեկությունները Սկյութիայի ու Կովկասի մասին» (1893—1906 թթ.): Արձանագրությունների ու տեքստերի բնատրության, նրանց վերականգնման ու մեկնաբանման տեսակետից Վ. Վ. Լատիշևի աշխատություններն օրինակելի են:

XIX դ. վերջը բնորոշվում է ռուսական հնագիտության մեծ հաջողություններով: 90-ական թվականների վերջին ու 900-ականների սկզբին ռուսական հնագիտական կազմակերպությունները՝ «Ռուսական հնագիտական ընկերությունը», «Հնագիտական ընկերությունը», «Պատմության ու հնության Օդեսայի ընկերությունը» կա՛ռնավոր պեղումներ ձեռնարկեցին Քերսոնեսոսում (Սևաստոպոլի մոտ), Կերչում, Թամանի թերակղզում ու Բուդի գետախորշի ափին՝ Պարուտինո գյուղի մոտ, հին Օլվիայի տեղում: Բազմաթիվ արձանագրություններ ու հին հույների կենցաղի առարկաներ հայտնաբեր-

վեցին Քերստնեստսի քաղաքատեղում, որն ուսումնասիրեց ու պեղեց Կ. Կ. Կոսցյուշկո-Վալյուժինիչը: Հին Պանտիկապեոնի տեղում հիմնրված Կերշում Յու. Ա. Կուլակովսկու ղեկավարությամբ գործող արշավախումբը հետազոտեց նկարներով զարդարված ստորգետնյա մեծ դամբարան-անձավներ՝ «կատակոմբներ»: Դրանց զարդանկարները հարուստ տեղեկություններ են պարունակում Պանտիկապեոնի բնակիչների ու տեղական բնակչության հետ նրանց փոխհարաբերությունների մասին:

Հատկապես հարուստ էին ականավոր ռուս հնագետ ու արվեստագետ Բ. Վ. Ֆարմակովսկու (1870—1928 թթ.) կողմից 1900 թ. ու հետագա տարիներին հին Օլվիայի տեղում կատարած պեղումների արդյունքները: Բ. Վ. Ֆարմակովսկին ոչ միայն տվեց քաղաքի տեղագրությունը, այլև հարստացրեց ռուսական թանգարանների հավաքածուները մեծաթիվ հուշարձաններով ու արձանագրություններով:

ԱՄՆ դ. 90-ական թվականների վերջերին է վերաբերում նաև պահպանողական պատմաբան Մ. Ի. Ռոստովցևի (1870—1952 թթ.) գիտական գործունեության սկիզբը: 1899 թ. նա պաշտպանեց դիսերտացիա «Պետական կապալի պատմությունը Հռոմեական կայսրությունում» թեմայով, որի մի շարք գլուխները պարունակում էին նյութեր Աթենքի, Սիկիլիա կղզում եղած հունական գաղութների ու հելլենիստական Եգիպտոսի տնտեսական պատմության մասին: Մ. Ի. Ռոստովցևը, գերմանական հետազոտության արդիականացնողների հետևորդը լինելով, եռանդուն կերպով պրոպագանդում էր նրանց տեսությունները: «Կապիտալիզմը հին աշխարհում» հոդվածում նա փորձում էր ապացուցել հելլենիստական-հռոմեական պետությունների տնտեսական հարաբերությունների ու XIX դ. եվրոպական երկրների տնտեսության նույնությունը: 1910 թ. Մ. Ի. Ռոստովցևը Գերմանիայում հրատարակեց իր ամենանշանակալից մենագրությունը՝ «Հռոմեական կոլոնատի պատմության քննությունը», որտեղ մեծ տեղ հատկացրեց հելլենիստական Եգիպտոսի, Սիկիլիայի ու Փոքր Ասիայի տնտեսությանն ու սոցիալական հարաբերություններին: Արդիականացման դիրքերից լուսաբանելով պատմությունը, Ռոստովցևը, այնուամենայնիվ, պապիրոսային նյութերի հիման վրա ապացուցեց հողի մասնավոր սեփականության բացակայությունը հելլենիստական Եգիպտոսում: Դա այն ժամանակի բուրժուական պատմագրության լուրջ նվաճումն էր: Սակայն այդ փաստը Ռոստովցևը բացատրում էր սխալ՝ հելլենիստական Եգիպտոսում ֆեոդալիզմի տարրերի առկայությամբ: Դա համապատասխանում էր նրա կողմից ընդունված ցիկլայնության հետադիմա-

կան տեսութեանը: Մ. Ի. Ռոստովցևը մեծ ուշադրութիւն նվիրեց հյուսիսային Մերձսևծովյան երկրամասի հին հունական գաղթօջախների պատմության ու մշակույթի ուսումնասիրութեանը:

XIX դ. վերջին ու հատկապես XX դ. սկզբին պահպանողական ուղղութեան հետ միասին ցարական վարչակարգից առաջացած ընդհանուր դժգոհութեան ազդեցութեան շնորհիվ պատմական գիտութեան մեջ ծագեց առաջադեմ ազատամիտ ուղղութիւն, որը գլխավորում էին Վ. Պ. Բուզեսկուլը (1858—1931 թթ.) ու Ռ. Յու. Վիպպերը (1859—1954 թթ.):

Խարկովի համալսարանի պրոֆեսոր, իսկ 1922 թվից՝ ՍՍՀՄ Գիտութիւնների ակադեմիայի անդամ Վ. Պ. Բուզեսկուլը իր երկարատև ու բեղմնավոր գիտական գործունեութեան մեծ մասը նվիրեց Հին Հունաստանի պատմութեան ուսումնասիրութեանը: 1887 թ. «Պերիկլես» դիսերտացիայում նա հանդես եկավ որպես աթենական դեմոկրատիայի ու նրա քաղաքական առաջնորդ Պերիկլեսի գործունեութեան վերաբերյալ գերմանական հետադիմական պատմաբանների հայացքների վճռական հակառակորդ ու քննադատ: Վ. Պ. Բուզեսկուլը գտնում էր, որ Պերիկլեսը հին հունական պատմութեան ամենաաչքի ընկնող քաղաքական ու ռազմական գործիչներից մեկն էր: 1893 թ. Վ. Պ. Բուզեսկուլը տպագրեց «Ներածութիւն Հունաստանի պատմութեան» իր կապիտալ աշխատութեան առաջին հրատարակութիւնը, որը պարունակում էր աղբյուրների հույժ մանրամասն տեսութիւն ու վերլուծութիւն և պատմագրութեան բավական լրիվ ու համեմատաբար օբյեկտիվ (որքան դա հնարավոր էր անել բուրժուական ազատամտութեան դիրքերից) նկարագրութիւն: Վ. Պ. Բուզեսկուլի «Ներածութիւնը...» նման կարգի առաջին աշխատութիւններից մեկն էր ոչ միայն ռուսական, այլև միջազգային պատմագիտական գրականութեան մեջ: 1909 թ.՝ 1905 թ. հեղափոխութեան ճնշումից հետո հաստատված հետադիմութեան շրջանում, Վ. Պ. Բուզեսկուլը հրատարակեց «Աթենական դեմոկրատիայի պատմութիւնը» գործը, որտեղ բարձր գնահատական տվեց աթենական պետութեան պետական կարգերին, մի բան, որ այն ժամանակ հընչում էր որպես ցարական կառավարութեան նկատմամբ օպոզիցիոն վերաբերմունքի արտահայտութիւն: Սակայն իր գիտական ամբողջ բարեխղճութեամբ ու առաջադիմութեամբ հանդերձ Վ. Պ. Բուզեսկուլը, այնուամենայնիվ, տուրք տվեց արդիականացման տրամադրութիւններին: Նա թերագնահատեց ստրկական աշխատանքի դերը հին հունական հասարակութեան մեջ, իդեալականացրեց աթենական հանրապետութեան դեմոկրատական կառուցվածքը, իսկ «Անտիկ աշխարհն ու այժմեականութիւնը» հոդվածների ժողովածուի մեջ

(1912 թ.) կատարում էր արդիականացնող կոպիտ համեմատություններ:

Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր, 1941 թվականից ՍՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Ռ. Յու. Վիպպերը Հին Հունաստանի պատմության գծով ստեղծված մի շարք դասընթացների հեղինակ է: 1905 թ. Ռ. Յու. Վիպպերը հրատարակեց «Դասախոսություններ Հին Հունաստանի մասին», որոնք ընդգրկում էին տոհմատիրական կարգերի քայքայման շրջանից մինչև Պելոպոնեսյան պատերազմի վերջը (մ. թ. ա. 404 թ.) ընկած ժամանակաշրջանի պատմությունը: 1913 թ. Հին Արևելքի պատմությանը նվիրված իր «Հին Արևելքն ու էգեյան մշակույթը» դասախոսություններում Ռ. Յու. Վիպպերը անդրադարձավ Հունաստանի հնագույն պատմությանը: Վերջապես, 1916 թ. նա հրատարակեց իր «Հունաստանի պատմությունը դասական ժամանակաշրջանում մ. թ. ա. IX—IV դարերում» հիմնական աշխատությունը: Ռ. Յու. Վիպպերը ըստ էության շարադրեց Հին Հունաստանի ամբողջ պատմությունը մինչև հելլենիզմի շրջանը: Նա հանգամանորեն վերլուծեց աղբյուրներն ու հնագիտական հայտնագործումների տվյալները: Նա մեծ ուշադրություն էր նվիրում տնտեսության հարցերին ու հատկապես սոցիալական հարաբերություններին և սոցիալական բախումներին հին հունական հասարակությունում: Ռ. Յու. Վիպպերը, տարածված կարծիքներին հակառակ, հանդես եկավ փիլիսոփա Սոկրատեսի գործով անբնական դատարանի որոշման պաշտպանությամբ: Բայց Ռ. Յու. Վիպպերը կրում էր գերքննադատության ու արդիականացման ուժեղ ազդեցությունը և իր աշխատություններում ժխտում էր Հին Ատտիկայի սոցիալ-քաղաքական ու տնտեսական կարգերի (մինչև Սոլոնի ժամանակները) մասին Արիստոտելի, Հերոդոտոսի ու Պլուտարքոսի պատմանների ճշտությունը, փոխարինում էր դրանք սեփական հիպոթեզներով, միանգամայն կամայականորեն էր մեկնաբանում Կլիսթենեսի բարենորոգիչ գործունեության սոցիալական էությունը և այլն: Արդիականացնելով տոհմատիրական հասարակարգի քայքայման դարաշրջանի պատմական պրոցեսը, նա այդ շրջանն անվանում էր հունական միջնադար: Ռ. Յու. Վիպպերը, Վ. Պ. Բուդեսկուլի նման, գերազանահատում էր փոխանակային հարաբերությունների դարգացումն ու, «պրոլետարիատ» տերմինը կիրառելով անբնական չքավորության նկատմամբ, չէր բացատրում այն սկզբունքային տարբերությունը, որ գոյություն ունեն հնություն լյուծպեն-պրոլետարիատի ու կապիտալիզմի դարաշրջանի արդյունաբերական պրոլետարիատի միջև:

XIX դ. վերջի ու XX դ. սկզբի նշանավոր ռուս պատմաբաններ

էին Ս. Ա. Ժեբելյովը (1867—1941 թթ.), Ն. Ի. Նովոսադսկին (1859—1941 թթ.), Մ. Մ. Խվոստովը (1872—1920 թթ.):

Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Ս. Ա. Ժեբելյովի առաջին խոշոր աշխատությունն էր «Աթենքի պատմությունից՝ մ. թ. ա. 229—31 թթ.» (1898 թ.): Այն ստեղծված էր վիճաբարական նյութերի վերլուծության հիման վրա ու պարունակում էր Ատտիկայի պատմության՝ գիտությանը մինչ այդ քիչ հայտնի ժամանակաշրջանի նկարագրությունը: Ս. Ա. Ժեբելյովի երկրորդ խոշոր աշխատությունը «Աքայիկա» մենագրությունն էր (1903 թ.), որտեղ խոսվում է Հունաստանի՝ իբրև հոմեական նահանգի մասին: 1911 թ. Ս. Ա. Ժեբելյովը լույս ընծայեց Արիստոտելի «Պոլիտիկա» քննախոսության թարգմանությունը և 1915 թ. վերամշակեց Թուկիդիդեսի «Պատմության» թարգմանությունը, որը կատարել էր Ֆ. Գ. Միշչենկոն:

Ն. Ի. Նովոսադսկին՝ Մոսկվայի համալսարանի պրոֆեսորը, հրատարակեց հունական վիճաբարագիտության պատմագրության դասընթաց: Կաղանի համալսարանի պրոֆեսոր Մ. Մ. Խվոստովը պապիրուսային նյութերի ուսումնասիրության հիման վրա ստեղծեց երկու մեծ աշխատություն հելլենիստական ու հոմեական ժամանակաշրջանի եգիպտոսի տնտեսական պատմության վերաբերյալ՝ «Հույն-հոմեական եգիպտոսի արևելյան առևտրի պատմությունը» (1907 թ.) ու «Մանածագործական արդյունաբերությունը հունահոմեական եգիպտոսում» (1914 թ.): Թեև փաստական նյութն ընտրված է բացառիկ ուշադրությամբ ու տրված է աղբյուրների փայլուն վերլուծություն, Մ. Մ. Խվոստովի այդ երկու աշխատություններն էլ, ինչպես և նրա «Հունաստանի պատմություն» ընդհանուր դասընթացը, տառապում են պատմական պրոցեսը արդիականացնելու միտումով, որը որոշ չափով նվազեցնում է այդ աշխատությունների արժեքը:

Ընդհանրացնելով, կարելի է ասել, որ Հին Հունաստանի մասին XIX դ. վերջի XX դ. սկզբի ռուսական պատմագիտությունը հետազոտությունների խորությամբ ու թեմաների զանազանությամբ ոչ միայն չէր զիջում արևմտաեվրոպական գիտությանը, այլև անգամ առաջ անցավ վերջինից որոշ պրոբլեմների ուսումնասիրության հարցում:

ԱՐԻԻ ԱՐԵՎՄՏԱՆԵՎՐՈՊԱԿԱՆ ՈՒ ԱՄԵՐԻԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ  
(1917—1969 թթ.)

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունն ու նրա բարձրացրած հեղափոխությունների ալիքը, որն անցավ Արևմրտյան նվրոպայի շատ երկրներով, ուժեղացած ազատագրական

շարժումն Ասիայի ու Աֆրիկայի իմպերիալիստների կողմից գավթած Երկրներում բազմապիսի արտահանարարություն գտան արևմտաեվրոպական և ամերիկյան պատմագրություն մեջ: Մի կողմից ուժեղացան պահպանողական և ուղղակի հետադիմական հոսանքները, որոնք անգամ ձգտում էին Հին Հունաստանի ու Հռոմի պատմությունը վերածել հետադիմական հրապարակախոսություն մի որոշակի տեսակի: Բայց մյուս կողմից մարքսիզմի գաղափարները սկսեցին հետզհետև թափանցել անտիկ աշխարհի արևմտաեվրոպական պատմագրության մեջ:

Տեղաշարժվեցին նաև բուրժուական դիտական մտքի հիմնական կենտրոնները: Եթե XIX դ. վերջին—XX դ. սկզբին Արևմտյան Եվրոպայում առաջատար դիրք էր գրավում անտիկ աշխարհի՝ գերմանացի պատմաբանների խումբը, ապա առաջին համաշխարհային պատերազմի (1914—1918 թթ.) ավարտից հետո առաջին տեղը գրավեցին ֆրանսիացի ու անգլիացի, իսկ այնուհետև՝ 30-ական թվականներից, ամերիկյան պատմաբաններն ու հնագետները:

XX դ. 20—40-ական թվականներին կատարվեցին նոր կարևոր հնագիտական հայտնագործումներ: Կրկնվեց 1941 թ. շարունակում էին իրենց պեղումները Ա. Էվանսն ու նրա աշակերտները: Պիլոսում, սկսած 1919 թ., աշխատում էին հույն հնագետները, որոնք այստեղ բացեցին միկենյան դարաշրջանի մի պալատ («Նեստորի պալատը»), իսկ ավելի ուշ, 1938 թ., դրա ավերակներում ամերիկյան հնագետները գտան կավե սալիկներ գծային «Բ» վանկագրի գրերով: 1950 թ. Միկենեի հնագիտական կրկնակի հետախուզություններ անցկացնող անգլիացի հնագետները նույնպես գտան այդ գրություն հուշարձաններ:

Հին արձանագրությունների հայտնաբերումներով ուղեկցվող պեղումները շարունակվում են մինչև ներկա ժամանակը:

Ֆրանսիացի գիտնականները հետազոտեցին Դելփիքը, այստեղ նույնպես բացելով միկենյան դարաշրջանին պատկանող հնություններ, ամերիկացիները 1931 թվականից պեղումներ սկսեցին Աթենքի Ագորայում. դրանք շարունակվեցին մինչև 1941 թ. և վերսկսվեցին 50-ական թվականներին: Այդ պեղումները տվեցին հարուստ արդյունքներ: Ամերիկյան հնագետները վերստին հետազոտեցին Տրոյայի քաղաքատեղն ու էական ճշգրտումներ մտցրեցին մշակութային շերտերի հաջորդականության մասին եղած պատկերացումների մեջ:

Պեղումներ կատարվեցին նաև հին հելլենիստական պետությունների տարածքներում. 20—30-ական թվականների ընթացքում ֆրանս-ամերիկյան խառը հնագիտական արշավախումբը ձեռնարկեց Եփրատի սիրիական ափում գտնվող հին ամրոցի՝ Դուրա-Եվ-

րոպոսի ավերակների հետազոտումը: Այստեղ գտնվեցին հեղինակա-  
տական ու պարթևա-հոմեական դարաշրջանի շատ արժեքավոր  
հուշարձաններ: Նույն ամերիկյան հնագետները 1933—39 թթ. կա-  
տարեցին պեղումներ Օրոնտեսի վրայի Անտիոքում: Գերմանական,  
իսկ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ամերիկյան  
գիտնականներն ուսումնասիրեցին Տիգրիս գետի վրայի Սելևկիայի  
ավերակները և այլն: Հին հունական պատմության ուսումնասիրու-  
թյան գործում մեծ առաջաքայլ կատարվեց անգլիացի Մ. Վենտրիսի  
կողմից (բանասեր Ջ. Չադվիկի հետ միասին) 1953 թ. հին հունա-  
կան կրետե-միկենյան գծային «Բ» վանկագիրը վերծանելու շնորհիվ:

Գիտական շրջանառության մեջ նոր նյութերի ներգրավման ու  
այդ հիմքի վրա պատմաբանների ավելի նեղ մասնագիտացման  
զարգացման հետևանքը եղավ ինչպես հին, այնպես և բնդհանուր  
պատմության գծով կոլեկտիվ աշխատությունների հրատարակումը  
XX դ. արևմտավորուպական պատմագրության մեջ: Հնության պատ-  
մության գծով այդպիսի կոլեկտիվ մատենաշարով առաջին գործը  
եղավ Անրի Բերրի խմբագրությամբ 1920 թվականից հրատարակ-  
վող «Մարդկության էվոլյուցիան»: Հին Հունաստանի պատմությունն  
այստեղ շարադրված է յոթ հատորներում:

Սրբորդ, ամենալուրջ ու մանրամասն «Հին պատմությունը»  
(մաս 2-րդ: Հունական պատմություն: Գ. Գլոտցի խմբագրությամբ)  
բաղկացած է չորս հատորներից:

Ֆրանսիացի լավագույն պատմաբանների կողմից գրված այդ  
կոլեկտիվ մատենաշարի առանձին հատվածները պարունակում են  
հարուստ փաստագրական նյութ, որը շարադրված է հնագիտության  
վերջին նվաճումների, վիճաբանական ու պապիրուսաբանական նոր  
հայտնաբերված նյութերի հիման վրա: Բայց այս նյութը պատկերա-  
ցում չի տալիս պատմական պրոցեսների միասնականության մա-  
սին, որովհետև հեղինակները հասարակական զարգացումը վերլու-  
ծելիս անտեսում են մարքս-լենինյան գիտական մեթոդաբանությու-  
նը ու դրսևորում են անհատի դերի գերազանհատման հակում: Ա-  
ռանձին հատորների իրարից լրիվ անջատվածությունը նույնպես  
խանգարում է ընթերցողի մոտ պատմական պրոցեսի միասնության  
վերաբերյալ պատկերացման առաջացմանը:

Յուրահատուկ բնույթ ունի Անգլիայում 1928—1938 թթ. հրա-  
տարակված «Քեմբրիջյան հին պատմությունը»՝ գրված անգլիա-  
ցի պատմաբանների կողմից Ֆրանսիացի ու ամերիկացի առանձին  
գիտնականների հեղինակակցությամբ: «Քեմբրիջյան հին պատմու-  
թյունը» բաղկացած է 12 հատոր շարադրանքից և 5 հատոր քարտեզ-  
ներից ու նկարներից: Հունաստանի ու հեղինակատական պետություն-



ների պատմութիւնն այստեղ շարադրված է համաժամանակյա մեթոդով, այսինքն Հին Արևելքի ու արևմտյան Միջերկրականի երկրների պատմութեան հետ ղուգահեռաբար: «Քեմբրիջյան հին պատմութիւնը» արևմտանվրոպական կոլեկտիվ աշխատութիւններինց ամենամանրամասն ու հիմնավորն է: Այն ունի աղբյուրների ու գրականութեան շատ մանրամասն տեղեկատու նյութեր: Շնորհիվ այն բանի, որ աշխատութեան նյութը մանրատված (ըստ գլուխների), բաշխված է հեղինակների միջև, «Քեմբրիջյան հին պատմութիւնը» արտաքննապես ավելի միասնական է, քան ֆրանսիական կոլեկտիվ աշխատութիւնները, բայց ավելի ուշադիր վերլուծութեան ժամանակ այդ տպավորութիւնը փոխարինվում է միանգամայն հակառակ ընկալմամբ: Հատկապես հելլենիզմի դարաշրջանին վերաբերող մի շարք գլուխներ ու բաժիններ գրված են խիստ արդիականացման, մշուաները՝ բուրժուական օբյեկտիվիզմի դիրքերինց: Թեև նյութը շարադրված է մանրամասնորեն, սակայն կան էական բացթողումներ: Անգլիական «Պատմութեան» հեղինակների հսկայական կոլեկտիվին, հեղինակներ, որոնք անտեսել են Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի գիտական հետազոտութիւնը, նույնպես չհաջողվեց լրիվ ընդգրկել ու տևականորեն վերլուծել հնագրի պատմական զարգացման ընթացքը:

Արևմտանվրոպական պատմաբաններին՝ Հին Հունաստանի պատմութեանը նվիրված նորագույն կոլեկտիվ աշխատութիւններն են «Քաղաքակրթութիւնների ընդհանուր պատմութիւն» ֆրանսիական մատենաշարն ու շվեյցարական-արևմտագերմանական՝ «Աշխարհի պատմութիւնը»: Դրանք արտաքուստ լավ ձևավորված են, բայց խիստ միտումնավոր են նյութի ընտրութեան ու մեկնաբանման տեսակետինց: Երկու աշխատութիւններում էլ ժխտվում են պատմական զարգացման օրինաչափութիւնները: Ֆրանսիական հրատարակութիւնում հին աշխարհի պատմութիւնների պատմութիւնը դիտվում է որպես ինքնուրույն զարգացած ու միայն իրար հետ բախված քաղաքակրթութիւնների պատմութիւն: Հին հունական քաղաքակրթութիւնը պարզապես «հելլենական ոգու իսկական հրաշքն է»: Շվեյցարական-արևմտագերմանական հրատարակութեան առաջաբանում ուղղակիորեն հայտարարվում է, որ «Աշխարհի պատմութիւնն» ուղղված է մարքսիզմի դեմ: Այստեղ հետևողականորեն անց է կացվում այն միտքը, որ ինչպես հին, այնպես և նոր հասարակութիւնները հիմնված են մասնավոր սեփականութեան ու կրոնի վրա: Պատմութիւնը կերտում են մեծ անհատները: Հասարակութիւնը հիմնականում միշտ եղել է միատեսակ: Պատմութեան նպատակը թաքնված է մեր բանականութիւնինց: Այդ երկու աշխատութիւններ-

րը հատկապես բնորոշ են հետպատերազմյան շրջանի բուրժուական հետադիմական պատմագրությանը:

Ընդհանուր աշխատությունների հետ մեկտեղ Արևմտյան Եվրոպայում ու ԱՄՆ-ում եռանդուն կերպով մշակվում էին նաև հին հունական պատմության առանձին պրոբլեմներ՝ կրեոս-միկենյան ժամանակաշրջանը, հելլենիզմի դարաշրջանը, Հունաստանի տնտեսական պատմությունը:

Բուրժուական պատմաբանները տալիս են մ. թ. ա. V դ. Հունաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների սխալ պատկերը: Թեև այժմ մի շարք բուրժուական պատմաբաններ հրաժարվել են XX դ. I երեքհարյուրամյակների ծայրահեղ արդիականացնողների դիրքերից, այն հեղինակների դիրքերից, որոնք աթենական երգաստերիոնները նույնացնում էին կապիտալիստական ֆարրիկանների հետ, այնուամենայնիվ, արդիականացումը, այսինքն հին հունական հասարակության մեխանիկական նույնացումը ժամանակակից հասարակության հետ, շարունակվում է: Հունաստանը նրանք այժմ նույնացնում են զլխավորապես ժամանակակից հետամնաց բուրժուական-ֆեոդալական երկրների հետ: Ինչպես և առաջ, այդ կառուցումների բաղկացուցիչ մասն է կազմում անտիկ արտադրության մեջ ստրկական աշխատանքի շատ թև քիչ էական դերի ժխտումը: Այդ առումով հատկապես բնորոշ են ամերիկյան գիտնականների աշխատությունները: Նրանք հետևողականորեն դարգացնում են նման տեսակետ ու ձգտում են քողարկել ստրուկների ու ստրկատերերի միջև եղած հակասությունները: (Նման ուղղության բնորոշ ներկայացուցիչն է Վեստերմանը): Նրանք բնդգծում են, օրինակ, որ ստրուկների կյանքը, իրենց տեսակետից, միանգամայն տանելի էր: Ամերիկյան գիտնականները, հակառակ արձանադրությունների տվյալների, կամայականորեն պնդում են, որ ստրուկները Հունաստանում իբրև թև առանց մեծ դժվարությունների կարող էին ստանալ ադատություն, դառնալ ազատ արձակվածներ ու անգամ հունական պոլիսների քաղաքացիներ: Իրականում, ինչպես մենք այդ տեսանք, նման ոչ մի բան չի եղել: Քանի որ ամերիկյան պատմաբանների այդ տեսակետն ընդունված է շատ բուրժուական գիտնականների կողմից, ապա չի կարելի չնշել արդի հետադիմական բուրժուական պատմագիտության դասակարգային միտումնավորությունը. այդ գիտությունն իդեալականացնում է ստրուկների դրությունը, հրաժարվում է օբյեկտիվորեն հետազոտել աղբյուրները:

Բուրժուական պատմագրության մեջ պարզորոշ արտահայտած նման տեսակետի հետ միասին գոյություն ունի նաև մի այլ տեսակետ՝ որոշ բուրժուական պատմաբաններ ժխտում էին ու մասամբ

մինչև օրս էլ ժխտում են Աթենքի, Միլետոսի, Կորնթոսի, Պանտիկապոնոսի, Սիրակուզայի ու այլ հունական պոլիսների տնտեսական զարգացման համեմատաբար բարձր մակարդակն ու անգամ շեն տեսնում այդտեղ շատ թե քիչ զարգացած ապրանքային արտադրություն: Հին հունական տնտեսության պրոմիտիվությունը չափազանցնող պատմաբանների այդ խմբի (որի ամենանշանավոր ներկայացուցիչը կարելի է համարել գերմանացի պատմաբան Խադեբերեկին) հայացքները, ինչպես և պատմաբան-արդիականացնողների տեսակետները, հակապատմական են, որովհետև հին հունական տնտեսության փաստերն ու կատեգորիաները նրանք բացատրում են՝ ելնելով կապիտալիստական հասարակության չափանիշներից: Այդ կարգի պատմաբանները շեն տեսնում որակական այն տարբերությունը, որը զանազանում է արդյունաբերությունը, առևտուրը, վարկային տոկոսը և այլն հին հասարակությունում այդ նույն կատեգորիաներից՝ կապիտալիստական հասարակությունում:

Հին Հունաստանի պատմությամբ զբաղվող Ֆրանսիացի գիտնականներից պետք է նշել Պ. Կլոշեին, որը գրել է «Աթենական դեմոկրատիան» մեծ աշխատությունը (1931 թ.), նաև խաղաղության գործի ակտիվ մարտիկ, շվեյցարացի գիտնական Ա. Բոննարին, որը հրատարակել է «Հունական քաղաքակրթությունը» հետաքրքիր աշխատությունը՝ նվիրված հին հունական մշակույթի պատմությանը:

Ազատամիտ հետազոտողների աշխատությունների հետ մեկտեղ լույս էին տեսնում նաև բուրժուական պահպանողական պատմաբանների ու ծայրահեղ հետադիմականների աշխատությունները, որոնք վերածվում են կեղծ գիտական ուսուցիչ-հրապարակախոսական հրատարակությունների: Առաջին համաշխարհային պատերազմից հետո նման «հետազոտություններ» հատկապես հաճախակի հրատարակվում էին Գերմանիայում:

Այսպես, 1926 թ. հետադեմ գերմանացի պատմաբան Ու. Կարշտեդտը, մ. թ. ա. 149—146 թթ. Հունաստանում ու Մակեդոնիայում տեղի ունեցած բուռն քաղաքական անցքերի նկարագիրը պարունակող իր «Հռոմեական հեղափոխության հիմքերն ու նախադրյալները» հոդվածում խոսելով հակահռոմեական շարժման ճնշման մասին, գրում էր. «Հռոմը սրի ծայրով մաքրեց վարակի մակեդոնական ու պելոպոնեսյան օջախներն ու քանդեց Կորնթոսը, դասակարգային հոտառություն ունեցող հեղափոխական պրոլետարիատի այդ ամրոցը: Բրինդիզից 24 ժամվա ճանապարհի հեռավորության վրա գտնվող բոլշևիզմը Հռոմի համար տագնապի ազդանշան էր»: Նրման ձևով էին հանդես գալիս նաև ֆաշիստական գաղափարներ տարածող գերմանացի այլ «պատմաբաններ»: Նրանք հույներին

հայտարարում էին «հյուսիսային» (նորդական) ուսսա, իղևալականացնում էին Սպարտայի ու Մակեդոնիայի հասարակական կարգերը, ամեն կերպ ծաղրում ու քննադատում էին Աթենական հանրապետությունը, ձգտում էին համոզել ընթերցողներին, որ հասարակական զարգացման հիմքում ընկած է «ուսանների պայքարը» և այլն:

Ամենաակտիվ հետադիմական պատմաբաններից մեկն էր Ռուսաստանից արևմուտք գաղթած Մ. Ի. Ռոստովցեր: Սկզբում բնակություն հաստատելով Գերմանիայում, իսկ հետո ԱՄՆ տեղափոխվելով, Մ. Ի. Ռոստովցեր դարձավ հետադիմական արդիականացնող հոսանքի հանրաճանաչ պարագլուխ: 1941 թ. նա հրատարակեց անգլերեն լեզվով «Հելլենիստական աշխարհի սոցիալական ու տրնտեսական պատմություն» մեծ աշխատության 1—3-րդ հատորները: Այդ գրքում հավաքված հսկայական փաստական նյութը լուսաբանված է հետադիմական արդիականացման դիրքերից: Մ. Ի. Ռոստովցի կարծիքով, բուրժուազիան ու պրոլետարիատը հանդիսանում էին հին հունական հասարակության հիմնական հասարակական դասակարգերը, իսկ մ. թ. ա. III դարի սոցիալական շարժումները անտիկ մշակույթը կործանած սոցիալական հեղափոխություններն էին: «Ռուսայական» տեսություններն ու հետադիմական արդիականացումն ամենալայն տարածումն ունեցան ամերիկյան պատմաբանների մոտ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ու դրանից հետո կապիտալիստական երկրներում հանդես եկան մարքս-լենինյան մեթոդաբանությունը յուրացրած ու իրենց աշխատությունները նոր ձևով կառուցող առաջադեմ պատմաբաններ: Անգլիայում այդպիսի առաջավոր գիտնականներ կարելի է համարել հնագետ Վ. Գ. Չալլդին ու պատմաբան Զ. Թոմսոնին: Վերջինս դեռ 1941 թ. հանդես եկավ մարքսիստական մեթոդաբանական դիրքերից գրած «էսքիլոսն ու Աթենքը» աշխատությունով, իսկ 1949 թ. հրատարակեց «Հին հունական հասարակության ուսումնասիրությունները»: Բավական հետաքրքիր է նաև Վ. Գ. Չալլդի «Եվրոպական քաղաքակրթության արշալույսը» աշխատությունն ու այլ գործեր:

**ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՈՒ ՀԵԼԵՆԻՉՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՍՈՑԻԱԼԻՉՄԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից ու մի շարք երկրներում սոցիալիստական կարգերի հաստատումից հետո, այդ երկրներում հին մեթոդներով աշխատող պատմաբանների հետ մեկ-

տեղ սկսեցին գործել հետազոտողներ, որոնք ձգտում էին հին հունական պատմության ուսումնասիրությանը մոտենալ առաջադիմական դիրքերից:

Մեծ հաջողությունների հասան Բուլղարիայի ու Ռումինիայի հնագետները, որոնք պեղումներ կատարեցին այն տեղերում, որտեղ մի ժամանակ գտնվում էին հին հունական քաղաքները: Պլովդիվ քաղաքում (հին Փիլիպուպոլիս) ու նրա շրջակայքում բուլղարացի հնագետները հայտնաբերեցին հնության արժեքավորագույն հուշարձաններ: Մեծ ուշադրություն է նվիրվում տեղական թրակիական մշակույթի ուսումնասիրությանը, կատարվում են մ. թ. ա. IV—III դդ. թրակիական քաղաքի պեղումներ: Հայտնի բանասեր, բուլղար գիտնական, ակադեմիկոս Վլ. Գեորգիևը մեծ ավանդ ներդրեց հնագույն հունական դպրության հուշարձանները կարդալու գործում: Նա հրատարակեց «Կրետե-միկենյան արձանագրությունների մեկնության արդի վիճակը» (1954 թ.), «Կրետե-միկենյան արձանագրությունների բառարան» ու դրա երկու լրացումները (1955—1956 թթ.) և այլ աշխատություններ:

Զեխ պատմաբանների աշխատություններից անհրաժեշտ է նրշել ակադեմիկոս Պ. Օլիվայի գործերը: Նա նույնպես ուսումնասիրեց հույն ազգության ձևավորման պրոբլեմը, ինչպես նաև 1954 թ. հրատարակեց ստվար աշխատություն հին հունական տիրանիայի մասին՝ «Վաղ հունական տիրանիան»:

Վարչապետ, հնագույն լեհ գիտնականներից մեկի՝ ա-կադեմիկոս Ու. Տաուբենշլագի ղեկավարությամբ, 1947 թ. կազմակերպվեց պապիրուսագիտության ինստիտուտ, որը դարձավ հունական պապիրուսները ուսումնասիրող միջազգային առաջատար կենտրոններից մեկը: Ինստիտուտի կողմից հրատարակվող «Իրավաբանական պապիրուսաբանության տարեգրքում» տպագրվում են տարբեր երկրների գիտնականների հոդվածները մի շարք լեզուներով: 1955 թ. Վարչապետ Երկրորդ լրացված հրատարակությամբ լույս տեսավ Ու. Տաուբենշլագի՝ հույն-հռոմեական իրավունքի պատմությանը նվիրված ֆունդամենտալ ամփոփիչ աշխատությունը՝ ստեղծված պապիրուսների տվյալների հիման վրա: Ու. Տաուբենշլագի աշխատանքը շարունակում են նրա աշակերտները՝ լեհ պապիրուսագետներ Գ. Կուպիշևսկին, Ա. Սվիդերեկը և մյուսները: Հաջողությամբ աշխատում են լեհ հնագետները՝ պրոֆեսոր Կ. Միխալովսկին, Ե. Կոնիկը և ուրիշներ:

Ուշագրավ են պրոֆեսոր Յ. Վոլսկու հետազոտությունները, որոնք նվիրված են Պարթևական պետության ծագմանն ու Սելևկյանների միապետության տրոհմանը, Ի. Բեժունսկայա-Մալովիս-

տի՝ հեղինակական աշխարհում հողատիրութեան ու ստրկատիրութեան պրոբլեմին նվիրված հետազոտութիւնները:

Հունգարիայում 1950-ական թվականներին հրատարակվեցին ակադեմիկոս Ի. Տրենչենի-Վալդապֆելի արժեքավոր աշխատութիւնները՝ «Հոմերոս ու Հեսիոդոս», «Բեկլերփոն», «Տրիտոզենեա», «Առասպելաբանութիւն» և այլն, որոնցում ուսումնասիրվում են հին հունական առասպելաբանութեան ու գրականութեան ծագման և զարգացման հետ կապված պրոբլեմները:

ԳԻՀ-ում հրատարակվել են անտիկ հեղինակների նոր խմբագրութեամբ մի շարք պատմական ու գրական ստեղծագործութիւնները: Վերահրատարակվել են անցյալի առաջադեմ գերմանացի պատմաբանների մի շարք աշխատութիւններ, լույս է տեսնում պապիրուսագետների միջազգային գիտական ամսագիրը՝ «Պապիրուսաբանական հետազոտութիւնների արխիվ»: Հրատարակված են մի շարք աշխատութիւններ հունական վիճադրագիտութեան, հին հունարեն լեզվի բարբառների ուսումնասիրութեան գծով, մասնավորապես քերականութիւն Սապֆոյի ու Ալկեոսի գործերի համար: Հետաքրքիր է Գ. Լոսցեի աշխատութիւնը, որտեղ վերլուծվում է տարբեր տեսակների հելոտիան՝ իրրև ստրկութեան ձև Հին Հունաստանում և այլն:

Սոցիալիզմի բոլոր երկրներում առաջադեմ պատմաբանները բանավիճային հաջող պայքար են մղում կապիտալիստական երկրների հետադիմական ներկայացուցիչների դեմ:

#### ՍՈՎԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԿՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխութիւնը ազատ ու արդյունավետ գիտական աշխատանքի լայն հնարավորութիւններ բացեց սովետական պատմաբանների առաջ:

Սկսած 1917 թ. մինչև 1930 թ. րնթանում էր ռուսական ու արտասահմանյան պատմագրութեան թողած ժառանգութեան րնտրութիւնը: Դա գիտական նյութի համակարգման նոր ձևերի բրոնումների շրջան էր: Այդ տարիներին սովետական գիտութեան մեջ առաջատար դիրք էին գրավում այն գիտնականները, որոնք իրենց գործունեութիւնը սկսել էին ղեռ մինչև հեղափոխութիւնը, բայց իրենց գիտելիքներն ու աշխատանքը ի սպաս դրեցին սովետական իշխանութեանը: Նրանց թվին էին պատկանում Վ. Պ. Բուզեսկուլը, Ս. Ա. Ժեբելյովը, Բ. Վ. Ֆարմակովսկին, Վ. Վ. Ստրովեն, Ա. Ի. Տյումենկը: Այդ ժամանակ իրենց գիտական գործունեութիւնը սկսեցին մշուս, ղեռ երիտասարդ պատմաբաններ Ս. Ի. Կովալյովը, Վ. Ս. Սերգեևը:

20-ական թվականների սկզբին է վերաբերում մարքսիստական մեթոդաբանության դիրքերից հին հունական պատմության ընդհանուր տեսության ստեղծման առաջին, ղեկուս ոչ կատարյալ փորձը: Այն ձևոնարկեց Ա. Ի. Տյումեներ, որը 1920—1923 թթ. հրատարակեց «Ուրվագծեր Հին Հունաստանի սոցիալ-տնտեսական պատմության» աշխատությունը (մաս 1-ին: Հեղափոխություն. մաս 2-րդ: Դեմոկրատիա. մաս 3-րդ: Անկում): 1928 թ. Ա. Ի. Տյումեներ գիտական բանավեճ վարելով անտիկ աշխարհի բուրժուական արդիականացնողների հետ, հրատարակեց «Արդյո՞ք գոյություն է ունեցել կապիտալիզմ Հին Հունաստանում» հատուկ ուսումնասիրությունը: Հենվելով հին արձանագրությունների բովանդակության մանրակրկիտ ուսումնասիրության ու աթենական արտաքին առևտրի մասին հին հունական հեղինակների հաղորդումների վրա, Ա. Ի. Տյումեներ հստակորեն ցույց տվեց հին հունական հասարակության ստրկատիրական բնույթը ու նրա տնտեսության նատուրալ կառուցվածքը, լիովին հերքեց արևմտամեծրուպական պատմաբանների պնդումները Հին Հունաստանում կապիտալիզմի գոյության մասին:

Վ. Ի. Լենինի գիտական ժառանգության հրատարակումը հզոր մղում հաղորդեց պատմական պրոցեսի զարգացման մարքսիստական ըմբռնմանը: Վ. Ի. Լենինը «Պետության մասին» իր դասախոսությունում առավելագույն հստակությամբ բնութագրեց դասակարգային հասարակության զարգացման հիմնական փուլերը՝ «Մարդկային բոլոր հասարակությունների զարգացումը հազարամյակների ընթացքում, անխտիր բոլոր երկրներում, ցույց է տալիս մեզ այդ զարգացման ընդհանուր օրինաչափությունը, կանոնավորությունը, հաջորդականության այն ձևով, որ սկզբում եղել է առանց դասակարգերի հասարակություն - սկզբնական, նահապետական, նախնադարյան հասարակություն, որում ազնվականություն չի եղել. այնուհետև՝ ստրկության վրա հիմնված հասարակություն, ստրկատիրական հասարակություն: Դրա միջով է անցել ամբողջ արդի քաղաքակիրթ եվրոպան—երկու հազար տարի սրանից առաջ ստրկությունը լիովին տիրապետող է եղել... Ստրկատերեր և ստրուկներ—ահա առաջին խոշոր բաժանումը դասակարգերի»<sup>15</sup>:

Հնագրի պատմության ուսումնասիրության զարգացման համար վիթխարի խթան հանդիսացավ ՀամԿ(բ)Կ ու Սովետական կառավարության 1934 թ. մայիսի 16-ի որոշումը պատմական կրթության զրվածքի ու քաղաքացիական պատմության դասավանդման մասին:

<sup>15</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 39, էջ 585:

Սովետական գիտապատմական հասարակության առաջ կանգնած առաջնահերթ խնդիրներից մեկն էր Հին Հունաստանի պատմության գծով դպրոցական ձևերի ներքին ու համալսարանական դասընթացների ստեղծումը: 1934 թ. վ. Ս. Սերգևեր հրատարակեց Հին Հունաստանի պատմության դասընթաց: Այն պարունակում էր ամբողջ հին հունական պատմության՝ սկսած Կրետե կղզում ու Պելոպոնեսում դասակարգային ստրկատիրական հասարակության առաջին օջախների կազմավորման ժամանակաշրջանից (Կրետե-միկենյան դարաշրջան) մինչև հելլենիզմի ժամանակի բոլոր հիմնական պրոբլեմների շարադրանքը, որը տրվում է մարքսիստական մեթոդաբանության դիրքերից: Սակայն մի շարք գլուխներում, հատկապես Ալեքսանդր Մակեդոնացու ու հելլենիստական պետությունների պատերազմներին նվիրված հատվածներում, դեռ զգացվում էին արդիականացման որոշ արձագանքներ: Անհրաժեշտ հստակությամբ բնութագրված չէ նաև մակեդոնական թագավորի վարած պատերազմների նվաճողական բնույթը:

1936—37 թթ. լույս տեսավ Ս. Ի. Կովալյովի «Անտիկ ստրկատիրական հասարակությունների պատմություն» (մաս 1-ին, Հին Հունաստան, մաս 2-րդ, Հելլենիզմ, Հոմ) դասախոսությունների հանգամանալից դասընթացը. այն աչքի է ընկնում Հույն-պարսկական ու Պելոպոնեսյան պատերազմների, մ. թ. ա. IV դ. սկզբի քաղաքական պատմության ու հելլենիզմի դարաշրջանի պատմության հստակ, պարզ նկարագրությունով: Բայց Հունաստանի հնագույն պատմությանը նվիրված գլուխներում կային մասամբ ոչ ճիշտ դրույթներ:

1930 թ. հրատարակվեցին նաև հատուկ ուսումնասիրություններ: Դրանցից մեկն էր Ս. Ա. Ժեբելյովի «Վերջին Պերիսադեսն ու ապստամբությունը Բոսպորոսում» աշխատությունը, որտեղ հեղինակը Քերսոնեսոսում գտած մի արձանագրության մանրակրկիտ վերլուծման միջոցով ապացուցեց ստրուկների՝ Բոսպորոսում մ. թ. ա. 107 թ. ծագած ապստամբության փաստը: Ստրկատերերը կարողացան ճնշել այդ ապստամբությունը միայն Պոնտոսի թագավոր Միհրդատ VI-ի զորքերի օգնությամբ: Առաջին անգամ 1933 թ. լույս տեսած այս աշխատությունը երեք անգամ վերահրատարակվեց ու թարգմանվեց ֆրանսերեն: 1937 թ. լույս տեսավ Ս. Ի. Կովալյովի «Ալեքսանդր Մակեդոնացի» բավականին բովանդակալից գիտահամարմատչի մենագրությունը, որտեղ առաջին անգամ սովետական պատմագրության մեջ, մարքս-լենինյան մեթոդաբանության դիրքերից տրվեց մակեդոնական նվաճողի անձի ու ռազմաքաղաքական գործունեության պատմական բնութագիրը:



1937 թ. ՍՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտին կից սկսեց լույս տեսնել «Հին պատմության բանբեր» («Вестник Древней Истории», ВДИ) ամսագիրը: Այս պարբերականում տարբեր ժամանակներում հրատարակվեցին ու այժմ էլ հրատարակվում են բազմաթիվ հետազոտություններ, թարգմանություններ, գրախոսականներ, ժամանակագրություն նոր հնագիտական հայտնագործումների ու պեղումների մասին, ինֆորմացիա ստեղծագործական քրեաբանության մասին և այլն: Սովետական պատմաբանների հետազոտությունների հրատարակումը ВДИ-ում հայտնի դարձրեց այդ ամսագիրը մեր Հայրենիքի սահմաններից շատ հեռու:

1939 թ. լույս տեսավ Վ. Ս. Սերգեևի «Հին Հունաստանի պատմություն» դասընթացի նոր վերամշակված հրատարակությունը, ուր ռուսական ու սովետական գրականության մեջ առաջին անգամ մանրամասնորեն ու կանոնավոր ձևով շարադրվեց հելլենիզմի դարաշրջանի քաղաքական ու մշակութային պատմությունը: Բայց Վ. Ս. Սերգեևի գրքում կային նաև էական թերություններ, բացակայում էին աղբյուրների ու պատմագրության տեսություններ, որոշ շափով իդեալականացվում էր Սպարտան, չէին բերվում տեղեկություններ Աթենքում տեղի ունեցած սոցիալական պայքարի ու աթենական համայնքի ներքին գործերի մեջ սպարտական միջամտության մասին (այն ձեռնարկվեց տիրանիայի անկման ու դեմոկրատական կարգերի ամրապնդման համար մղած պայքարի պահին) և այլն: Այնուհանդերձ Վ. Ս. Սերգեևի գրքի դրական կողմերն ավելի շատ էին, քան նրա թերությունները, և դրա շնորհիվ այդ գիրքը երկար տարիներ սովետական գիտական գրականության ամենահանրամատչելի գործերից մեկն էր:

Հայն աշխատանքների ծավալեցին նաև սովետական հնագետները: Մինչև 1928 թ. Օլվիայում (Պարուտինո գյուղի մոտ, Հարավային Բուգի վրա) պեղումներ կատարեց Բ. Վ. Տարմակովսկին: Պանտիկապոնոսի ու արևելյան Ղրիմի հին հունական մյուս բնակավայրերի ավերակները հետազոտեցին Վ. Դ. Բլավատսկին, Գ. Ց. Գալդուկևիչը և ուրիշները: Հին Փանագորեայի քաղաքատեղում, Քամանի թերակղզում, պեղումներ կատարեց Մ. Մ. Կորիլինան:

1940 թ. ՍՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտում բանավեճ կազմակերպվեց հին Կրետեի հասարակական կարգերի բնույթի վերաբերյալ: Մանրամասն քննարկման շնորհիվ սխալ ճանաչվեց Բ. Ա. Քոզակևսկու նախկինում տարածված այն տեսակետը, որ հին Կրետեում գոյություն ունեւր միայն մայրիշխանություն: Սովետական պատմաբանների ճնշող մասը գտավ, որ հին կրետական հասարակությունն իր զարգացման ընթացքում դեռ մ. թ. ա. III հազարամ-

յակի վերջում հասավ դասակարգային հարաբերությունների մակարդակի: Նորագույն գիտական հայտնագործումները հաստատեցին այդ տեսակետը:

Ճաշխատական Գերմանիայի հարձակումը ՍՍՀՄ-ի վրա 1941 թվականին գրեթե շղանդաղեցրեց սովետական պատմական գիտությունը զարգացումը, թեև շատ պատմաբաններ ու հնագետներ զենքը ձեռքին պաշտպանում էին հայրենիքը: Արդեն 1943—1944 թթ. գիտական գործունեությունը լրիվ վերսկսվեց, իսկ Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո այն ընդունեց ազելի ինտենսիվ բրնույթ, քան մինչպատերազմյան շրջանում:

Ղրիմում, Սև ծովի ափերին, Հայաստանում ու Միջինասիական հանրապետություններում վերսկսեցին աշխատանքները սովետական հնագիտական արշավախմբերը: Դ. Վ. Բլավատսկու ղեկավարությամբ ձեռնարկվեցին հին Պանտիկապոնի պեղումները: Հայկական արդյունքներ տվեցին սովետական հնագետների կողմից Ալբանիայում, Ապոլլոնիա մեծ անտիկ քաղաքի տեղում կատարված աշխատանքները (1958 թ.):

50—60-ական թվականներին սովետական պատմական գրականությունը հարստացավ Հին Հունաստանի ու հելլենիզմի դարաշրջանի պատմությանը նվիրված նոր ընդհանուր դասընթացներով:

1956 թ. ՍՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտը հրատարակեց Վ. Վ. Ստրուվեի ու Դ. Պ. Կալիստովի խմբագրությամբ «Հին Հունաստան» ժողովածուն: Այն պարունակում էր ընդարձակ փաստական նյութ ու տվյալներ հին Հունաստանի պատմության բնագավառում կատարված վերջին հնագիտական հայտնագործումների մասին:

1958 թ. հրատարակվեց Կ. Մ. Կոլոբովայի ու Լ. Մ. Գլուսկինայի ձեռնարկը՝ «Ուրվագծեր Հին Հունաստանի պատմության» նախատեսված մասսայական դպրոցների ուսուցիչների համար: Այդ աշխատությունը գրված էր տվյալ բնագավառում գիտության ձեռք բերած նորագույն նվաճումների հիման վրա:

1962 թ. լույս տեսավ սույն գրքի առաջին հրատարակությունը, իսկ 1963 թ.՝ Վ. Ս. Սերգեևի «Հին Հունաստանի պատմություն» դասընթացը, որը վերամշակվել էր լենինգրադյան պատմաբաններին կոլեկտիվի կողմից՝ Վ. Վ. Ստրուվեի ու Դ. Պ. Կալիստովի խմբագրությամբ:

Ընդհանուր տեսությունների շարքին պետք է դասել նաև հին հունական պատմության ու հելլենիզմի դարաշրջանին նվիրված բաժինները «Համաշխարհային պատմության» առաջին ու երկրորդ հատորներում (հ. 1, 1953 թ., հ. 2-րդ, 1956 թ.): Հին Հունաստանի ու

հելլենիզմի պատմությունն այնտեղ շարադրված է համաժամանակյա կարգով, որպես հին աշխարհի ընդհանուր պատմության մի մաս:

Եթե նախապատերազմյան շրջանում Հին Հունաստանի պատմության վերաբերյալ հրատարակվում էին գլխավորապես ընդհանուր դասընթացներ ու ձեռնարկներ, ապա Հայրենական պատերազմից հետո, դրանց հետ մեկտեղ, սովետական պատմաբանները հրատարակեցին մի շարք հատուկ մենագրություններ, որոնք հիմնավորված էին նոր գիտական հետազոտություններով ու հայտնագործություններով, առաջին հերթին սովետական հնագետների հայտնագործություններով:

1949 թ. հրապարակվեցին երկու մեծ աշխատություններ Հյուսիսային մերձսևծովյան երկրամասի հունական գաղութացման վերաբերյալ՝ Դ. Պ. Կալիստովի «Ուրվագծեր անտիկ դարաշրջանում Հյուսիսային մերձսևծովյան երկրամասի պատմության» ու Վ. Ֆ. Գայդուկիչի «Բոսպորյան թագավորությունը»:

1950 թ. լույս տեսավ Ա. Բ. Ռանովիչի «Հելլենիզմն ու նրա պատմական դերը» մենագրությունը, որը պարունակում է հելլենիզմի դարաշրջանի պատմությանը վերաբերող մեծ փաստական նյութ: Հաջորդ՝ 1951 թ. սովետական պատմական գրականության վաղ հունական պատմության բաժինը լրացվեց Կ. Մ. Կոլբովայի «Վաղ հունական հասարակության պատմությունից» մենագրությունով:

Հետագա տարիներին հրատարակվեցին սովետական հնագետ ու արվեստի պատմաբան Վ. Դ. Բլավատսկու մի քանի հետազոտությունները («Անտիկ նկարազարդ խեցեղենի պատմությունը», 1953 թ., «Հողագործությունը Հյուսիսային մերձսևծովյան երկրամասի անտիկ պետություններում», 1953 թ., «Ուրվագծեր ռազմական գործի Հյուսիսային մերձսևծովյան երկրամասի անտիկ պետություններում», 1954 թ.): Վ. Դ. Բլավատսկու աշխատությունների շարքում ամենահիմնավոր մենագրությունը պետք է համարել 1961 թ. հրատարակված «Հյուսիսային մերձսևծովյան երկրամասի անտիկ հնագիտությունը» գործը:

Սև ծովի ափերի հին հունական գաղութացման պատմության ուսումնասիրությանը նվիրված սովետական պատմաբանների գործերի մեջ հատուկ տեղ է գրավում 50-ական թվականներին լույս տեսած մենագրությունների շարքը (Տ. Վ. Բլավատսկայայի «Արևմտաեվրոպական քաղաքները մ. թ. ա. VII—I դդ.», Դ. Բ. Շելովի «Դրամական գործը Բոսպորոսում մ. թ. ա. VI—II դդ.» և այլն):

Կրետե-միկենյան գծային «Բ» վանկագրի վերծանման արձագանքը եղավ Ս. Յա. Լուրյեի «Միկենյան Հունաստանի լեզուն ու

մշակույթը» մենագրությունը (1957 թ.), որը պարունակում է գծա-  
յին «Բ» վանկագրով ստեղծված արձանագրությունների քերական-  
ությունը, ինչպես նաև կրետե-միկենյան հասարակության ու կրե-  
տե-միկենյան պետությունների ընդհանուր պատմական բնութա-  
գիրը: 1963 թ. լույս տեսավ Յ. Ա. Լենցմանի «Ստրկությունը Մի-  
կենյան ու Հոմերոսյան Հունաստանում» մենագրությունը: 1966 թ.  
հրատարակվեց Տ. Վ. Բլավատոսկայայի հիմնարար ուսումնասիրու-  
թյունը՝ «Աքայան Հունաստանը մ. թ. ա. II հազարամյակում»:

Սովետական պատմաբանները մեծ ուշադրություն են նվիրում  
նաև հելլենիզմի դարաշրջանի պատմության ուսումնասիրությանը:  
1960 թ. հրատարակվեցին միանգամից երեք մենագրություններ, ո-  
րոնք պարունակում էին հելլենիստական դարաշրջանի պատմույթա-  
նը վերաբերող նոր նյութեր, դրանք են՝ Ա. Գ. Բոկլշանինի «Պար-  
թևաստանն ու Հոռմը» (մաս 1-ին), որտեղ մանրամասնորեն քնն-  
նարկվում է Սելևկյանների տերության ու Հույն-բակտրիական թա-  
գավորության պատմությունը մինչև պարթևների ու սակերի կողմից  
դրանց նվաճվելը, Կ. Կ. Զելինի «Ուսումնասիրություն եգիպտոսում  
մ. թ. ա. II—I դդ. եղած հողային հարաբերությունների պատմու-  
թյան վերաբերյալ» ու Ա. Ս. Շոֆմանի «Անտիկ Մակեդոնիայի պատ-  
մությունը», որը տվյալ թեմային նվիրված առաջին գիրքն է ուս-  
սական պատմական գրականության մեջ: Մակեդոնական պատմու-  
թյան հիմնավոր շարադրումը Ա. Ս. Շոֆմանն ավարտեց իր աշխա-  
տության 1963 թ. լույս տեսած երկրորդ հատորում: Սոցիալական  
հարաբերությունները հելլենիստական եգիպտոսում ուսումնասիր-  
ված են Ն. Ն. Պիկուսի «Թագավորական հողագործները (անմիջա-  
կան արտադրողները) և արհեստավորները եգիպտոսում մ. թ. ա.  
III դ.» մենագրության մեջ (1972 թ.):

60-ական թվականների վերջին—70-ական թվականների սկզբ-  
բին ՍՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտի աշխատողների կողմից  
հրատարակվեցին մենագրական բնույթի մի շարք ուսումնասիրու-  
թյուններ, որոնք նվիրված էին ստրկատիրությանը Հին Հունաստա-  
նում ու հելլենիստական պետություններում («Ստրկությունն ան-  
տիկ աշխարհի ծայրամասերում» «Նաուկա», 1968 թ., «Ստրկույթու-  
նը հելլենիստական պետություններում մ. թ. ա. III—I դդ.» «Նաու-  
կա», 1969 թ., «Կախվածության ձևերը հելլենիստական դարաշր-  
ջանի Արևելյան Միջերկրականում»— «Նաուկա», 1969 թ.):

Հին Հունաստանի պատմությանը վերաբերող սովետական  
պատմաբանների գրած ու հրատարակած գրքերի և առանձին հոդ-  
վածների ցուցակը կարելի է զգալիորեն ընդարձակել: Հին Հունաս-  
տանում ու հելլենիստական երկրներում տնտեսության ու սոցիա-

լական հարաբերությունների զարգացման կոնկրետ ուսումնասիրությունը, պատմական աղբյուրների ամբողջության հիման վրա այդ զարգացման օրինաչափությունների պարզաբանումը. դասակարգային ու քաղաքական պայքարի պատմությունը, Հին Հունաստանի ու հելլենիստական աշխարհի երկրների մշակույթի պատմությունը՝ այդպիսին են այն հիմնական թեմաները, որոնք մշակվում են սովետական պատմաբանների, Հին Հունաստանի ու հելլենիզմի դարաշրջանի պատմության մասնագետների կողմից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն (Ն. Ն. Պիկուս)	3
Հին Հունաստանի բնությունը և բնակչությունը (Լ. Ն. Կազամանով)	6
Հին հունական աշխարհի պատմության աղբյուրները (Ն. Ն. Պիկուս)	15
Քաժիե I. Հնագույն Հունաստան	45
Գլուխ 1. Դասակարգային հասարակության հաստատման ժամանակաշրջանի ու վաղ պետությունները Կրետե կղզում (Տ. Վ. Բլավատսկայա)	48
Գլուխ 2. Աքայան պետությունները (Տ. Վ. Բլավատսկայա)	71
Գլուխ 3. Հունաստանը մ. թ. ա. XI—IX դդ. (Նախապոլիսային շրջան) (Յ. Ա. Լենցման՝ Տ. Վ. Բլավատսկայայի լրացումներով)	92
Քաժիե II. Արխաիկ Հունաստան	
Գլուխ 4. Հունաստանը մ. թ. ա. VIII—VI դդ. (Կ. Մ. Կուբով)	115
Գլուխ 5. Սպարտան մ. թ. ա. VIII—VI դդ. (Ն. Ն. Պիկուս)	150
Գլուխ 6. Ատտիկան մ. թ. ա. VIII—VI դդ. (Օ. Ի. Սավոստյանով)	163
Գլուխ 7. Մ. թ. ա. VIII—VI դդ. հունական մշակույթը (Վ. Գ. Բլավատսկի և Ն. Ն. Պիկուս)	185
Քաժիե III. Դասական Հունաստան	
Գլուխ 8. Հուն-պարսկական պատերազմները և Աթենական առաջին ծովային միության կազմավորումը (Ա. Գ. Բոկչչանին)	206
Գլուխ 9. Հունաստանի տեսեսական դարգացումը մ. թ. ա. V դ. (Ն. Ն. Պիկուս)	228
Գլուխ 10. Հասարակական և քաղաքական հարաբերությունները Հունաստանում մ. թ. ա. V դ. կեսին (Օ. Ի. Սավոստյանով, Ա. Գ. Բոկչչանին և Լ. Ն. Կազամանով)	249
Գլուխ 11. Պելոպոնեսյան պատերազմը (Ա. Գ. Բոկչչանին)	283
Գլուխ 12. Արևմտյան Միջերկրականի հունական քաղաքները դասական շրջանում (Օ. Ի. Սավոստյանով)	301
Գլուխ 13. Հյուսիսային մերձսևծովյան երկրամասը դասական շրջանում (Օ. Ի. Սավոստյանով)	315
Գլուխ 14. Հունաստանը մ. թ. ա. IV դ. առաջին կեսին (Ն. Ն. Պիկուս)	336
Գլուխ 15. Մակեդոնական դերիշխանության հաստատումը Հունաստանում (Ն. Ն. Պիկուս)	358
Գլուխ 16. Դասական շրջանի հունական մշակույթը (Վ. Գ. Բլավատսկի, Ն. Ն. Պիկուս)	376
Քաժիե IV. Հելլենիզմի շրջան	
Գլուխ 17. Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումները Նրա տերության ծաղումն ու փլուղումը (Ն. Ն. Պիկուս)	411
Գլուխ 18. Հելլենիստական պետությունների համակարգի առաջացումն ու զարգացումը (Ն. Ն. Պիկուս)	433
Գլուխ 19. Մակեդոնիան ու Հունաստանը մ. թ. ա. III դարում (Ն. Ն. Պիկուս, Օ. Ի. Սավոստյանով)	461
Գլուխ 20. Հյուսիսային մերձսևծովյան երկրամասը հելլենիզմի դարաշրջանում (Օ. Ի. Սավոստյանով)	483
Գլուխ 21. Հելլենիստական համակարգի ճգնաժամն ու քայքայումը մ. թ. ա. II դարում	494
Գլուխ 22. Հելլենիստական մշակույթը (մ. թ. ա. III—I դդ.) (Ն. Ն. Պիկուս)	511
Գլուխ 23. Հին Հունաստանի ու հելլենիստական պետությունների պատմագրությունը (Ա. Գ. Բոկչչանին՝ Ս. Ի. Կովալյովի նյութի օգտագործմամբ)	542

**ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**Հրատարակության է  
ներկայացրել  
համալսարանի  
րեդիանուր պատմության  
ամբիոնը**

*Հրատարակչության խմբագիր՝  
Գ. Հ. Աղամյան*

*Գեղարվեստական խմբագիր՝  
Ն. Ա. Քովմասյան*

*Տեխնիկական խմբագիր՝  
Յ. Գ. Տոնոյան*

*Վերատուգող սրբագրիչ՝  
Ս. Ա. Ղալբախչյան*

**ԻԲ 435**

Պատվեր 901: Տպաքանակ 2000: Հանձնված է շարվածքի 14. 7. 1982 թ.: Ստորագրված է տպագրության 04.11.1982 թ.: Թուղթ № 1, չափսը՝ 60×90<sup>1</sup>/<sub>16</sub>: Տառատեսակը՝ «Սովորական»: Տպադրության եղանակը՝ «Բարձր»: Հրատարակչական 32,4 մամուլ: Տպադրական 38,5 մամուլ+3 ներդիր: Գինը՝ 1 ո. 30 կոպ.: Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Սոավյան փ. № 1:  
Издательство Ереванского университета, Ереван, ул. Мравяна № 1.

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Արովյան փ. № 52:  
Типография Ереванского университета, Ереван, ул. Абовяна № 52.